ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԲԱԳՈՒԻ ՀԱՅՈՑ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԱՍՆԱԺԻՆՂԻ № 4.
ՊԱՏՄԱԿԱՆ ԳՐՔԵՐԻ ՇԱՐ № 1.

9(47.925)1
Դ-52

ԴԻՒԱՆ
ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԳԻՐՔ Ը.

ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

(1767—1776)

ՄԻ ՆԿԱՐՈՎ

A III/2431

Հրատարակեց
ԳԻՒՏ Ա. ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
ԷԼԵԿՏՐԱՇԱՐԺ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆՑԻ ԴՕԼԻՑ. 7.
1908

«ԼՈՒՄԱՅ»-Ի Խմբագրատանը վաճառւում են՝

ԳԻՒՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑԻ

աշխատութիւնները·

1 Աղօթարան ե. տպ. 1903. . . . . — 10
2 Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպառուած) . . . . . . — 15
3 » » բ. տ. գ. տպ. 1891 . . . . . — 25
4 » » գ. տ. գ. տպ. . . . . . . — 25
5 Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. բ. տպ. 1894 . . . . . . — 50
6 Կարնոյ գաղթը· պատմական տեսութիւն. 1891 . . . . . . — 10
7 Դիւան Հայոց պատմութեան· գիրք Ա.—Բ. 1780—1834 Սահակ-Մեսրոպեան մրցանակին արժանացած 1893 . . . . 2 —
8 Նոյն. գիրք Գ. Սիմէօն կաթողիկոսի յիշատակարանը կենսագրութեամբ, յաւելուածներով ու ծանօթութիւններով, Սահակ Մեսր. մրց. արժ. 1894. . . . 7 —
9 Նոյն. գիրք Դ. Ղուկաս կաթող. 1780—1800. 1899. . . . . . 4 —
10 Նոյն. գիրք Ե. Դանիէլ կաթ. 1800—1808. 1002. . . . . . 4 —
11 Նոյն. գիրք Զ. Դաւիթ կաթ. մ. I. 1801—3. 1004 . . . . . 4 —
12 Նոյն. գիրք Է. Դաւիթ կաթ. մ. II. 1803—4 1008. . . . . . 4 —
13 Նոյն. գիրք· Ը. Սիմէօն Կաթող. մ. II. 1707—1776. 1008 . . . . 4 —
14 Կարգ աստուածպաշտութեան Հայաստանեայց ս. եկեղեցւոյ 36 նկարով, Զ. տպ. 1907 — 50
15 Հնից-նորից, հնախօս. ուղեւոր. պրակ Ա. 1900. . . . . . . — 30
16 Գառի օրացոյց 1902 ամի. ժամանակագր. ԺԴ տարի. . . . . . — 50
17 Նամակագիրք 1902 . . . . — 50
18 Ծոցի օրացոյց 1902 ամի և յաւելուած.—Առողջապահական խոհարարութիւն. . — 15
19 Զաքար Ղարդաձեանցի կտակը և Մշակի պատասխանները (սպ.). . . . — 5

Թարգմանութիւններ

20 Հաւատարմութիւնը ամեն արգելքների յաղթում է Ֆ. Հոֆմանի 1877 . . — 40
21 Խաւարից դէպի լոյս Ֆ. Հոֆմ. 1888 (սպ.) . . . . . . — 40
22 Դոն Կիշոտ լամանչեցի, Մ. Սէրվ. 1878 (սպ.) . . . . . . — 70
23 Գէորգ Ռօլլէստօն, 1870 (սպառ.) . . . . — 60
24 Երբորդ ոսկի, աստ. Լակիդէի բ. տպ. 1893 . . . . . . — 10
25 Ռօբինզօն (հրատ. Թիֆլ. ապագր. ընկերութ.) (սպ.) . . . . . — 60
26 Զէստէրսօնի ժառանգը, պատկերազարդ, 1882. (սպ.). . . . . 1 —
27 Ակտէա. ա. Սիօսեվայի. 1885 (սպառ.) . . . . . . — 50
28 Եան Էրնստ Սմօլեար. Ն. Եանչուկի, 1885 (սպ.) . . . . . — 20
29 Արծուի մտածմունքը, պրօֆ. Մ. Բողդան. 1892. . . . . . — 5
30 Դիւղի սուրբը. Սվետ. Զէլի, 1892 . . . . — 10
31 Կեանքի դպրոցը, Դիկկէնսի, 1892. . . . . 1 —
32 Դէպի Աթէնք, Հ. Սենկեվիչի բ. տպ. 1001 . . . . . . — 15
33 Մի կտոր հաց, Պոտապէնկօի բ. տպ. 1001 . . . . . . — 10
34 Որսորդ, O. Շրայների . . . . — 10
35 Մտաւոր ուեբոսկներում, O. Շրայների. . . . . . . — 10
36 Կարտ. Իրլանդական զրոյց 1004 . . . . — 5
37 Անտառապետ Ֆրեգերիկ. Էրկման Շատրիանի. 1003 . . . . . — 40
38 Տնային բժշկարան, պրակ Ա. (գրքի ամբողջ կէսը) . . . . . 1 —
30 Նոյն պրակ. Բ. գրքի ամբ. կէսը 1 60

Հրատարակութիւններ

40 Ի. Յարութիւնեան, Հայոց գիրը 1893 . . . . 1 50
41 Իշ. Կ. Բեհբուդեան, Ծուխ. 1893 . . . . — 15
42 Ռանդարէ, Էմաէ, վէպ թարգմ. Ց. Լալայեանի . . . . . . — 25
43 Ալբէր Այնօ, Բուրգի լեառն, 1804 . . . . — 20
44 Ծաղաբբէգեան Ց. Հայոց. լեզու ա. ա 1004 . . . . . . — 30
45 Խրիմեան Հայրիկ, ժամանակ 1895 . . . . — 15
48 Սալիրի, Այծարած Մօնի 1885 . . . . — 15
47 Բակ. (Բարգէն վ.) Կիլիկիա 1896 . . . . — 10

ՅԱՌԱՋԱԲԱՆ

15 տարի առաջ առաջին անգամ հրատարակութեան առինք Սիմէոն կաթուղիկոսի նշանաւոր յիշատակարանի առաջին մասը, մի ստուար հատոր, այդ ականաւոր հայրապետի ընդարձակ կենսագրութեամբ. և դեռ այն ժամանակ ցաւ յայտնեցինք, որ յիշատակարանը ներկայացնում է Սիմէոնի 18 ամեայ կաթողիկոսութեան միայն առաջին մասի պատկերը, մինչ վերջին՝ բաւական ընդարձակ մասը կորած էր համարւում։ Այն ժամանակ մեր աղբիւրները կազմում էին միմիայն մեր սեպհական մատենադարանը և մեր ճանապարհորդութեանց ժամանակ ձեռք բերած նիւթերը։

Ապացոյց այդ բանին, Սիմէոնի հատորից յետոյ մենք ձեռնարկեցինք հետագայ կաթողիկոսների դիւանական թղթերի հրատարակութեան, մինչև որ, երջ. Տ. Մկրտիչ կաթողիկոսի թոյլտուութեամբ, բացուեցան մեր առաջ էջմիածնի մատենադարանի դռները, որ պինդ փակուած էին անիշխանութեան ժամանակի իշխողների տնօրէնութեամբ։

1896 թուին առաջին անգամ ծանօթացանք մայր աթոռի մատենադարանին, ուր մեզ յաջողեց ի միջի այլոց գտնել Սիմէոն կաթողիկոսի յիշատակարանի երկրորդ և վերջին մասի ձեռագրի թերի և անաւարտ օրինակը, որ մենք շտապեցինք արտագրել՝ մեր ձեռնարկութիւնը լրացնելու նպատակով։

Հանգ. Սեդրակեան արքեպսը իւր գրուածներից մէկում մի սխալ տեղեկութիւն էր հաղորդել, որպէս թէ մենք՝ այս օրագրութեան մեր արդէն հրատարակած առաջին մասը դեռ նախկին մատենադարանապետ տ. Ներսէս արքեպիսկոպոսի օրօք ստացել ենք էջմիածնի մատենադարանից ե հրատարակութեան տուել։ Այս լուրը զուրկ է ամենայն ճշմարտութիւնից. Յիշատակարանի առաջին մասը կազմում էր 'ի հնուց մեր սեպհականութիւնը, որ տպելուց յետոյ նուիրեցինք էջմիածնի մատենադարանին. իսկ Արիստակէս ս.-ի ակնարկած օրագրութիւնն այն է, որ տ. Մկրտիչ կաթողիկոսի հրամանով արտագրել ենք էջմիածնի մատենադարանից և որի բնագիրը այժմ էլ կազմում է յիշեալ մատենադարանի սեպհականութիւնը և հէնց այդ ակնարկած հատորն է, որ հրատարակում ենք այսօր։

Դժբաղդաբար այժմ էլ չյաջողեց մեզ այդ կարևոր գործի ամբողջ երկրորդ կէսը հրատարակութեան տալ՝ նիւթական միջոցների պակասութեան պատճառով և դեռ մի հատոր էլ մնում է տպագրելի ներկայիս ծաւալով։

—

Յիշատակարանի առաջին հատորի բովանդակութիւնը առաւելապէս Սիմէոնի քաղաքական գործունէութեան է վերաբերում, իսկ ներկայ հատորը աւելի ներքին կեանքին, ուր խիստ մեծ տեղ են բռնում էջմիածնի՝ աշխարհիս շուրջ սփռուած նուիրակները, որոնք առանձին կերպով ծաղկած էին Սիմէոնի օրօք։

Յիշատակութեան արժանի է այն հանգամանքը, որ Սիմէոնի օրօք էջմիածինը մի տեսակ կենդրոնական դրամատուն է եղել և բոլոր նուիրակները, ինչպէս նաև զանազան հայաբնակ վայրերում էջմիածնի հոգևորական և աշխարհական գործակալները, ներկայացրել են այդ դրամատան բաժանմունքներ, որոնց միջոցով ամեն մի հայ թէ օտարազգի փոլիցայով (փոխանակագրով) դրամներ են տեղափոխել ցանկացած տեղեր և այսպիսով էջմիածինը, բացի իւր կատարած շատ դերերից, ժողովրդի անտեսական կեանքի համար եղել է նաև ինչպէս մի մեծ ընդհանուր բանկային հաստատութիւն։

Դրամի փոխադրութեան համար էջմիածինը սահմանած ունէր և որոշ նշանագիրներ՝ գումարների չափեր արտայայտող, որպիսի նշաններ անչափ շատ կան ներկայ հատորում, բայց մենք գէթ առ այժմ անձեռնհաս ենք պարզել դոցա բանալին, թերևս այդ կյաջողի մեզ վերջին հատորում։ Կարելի չէր բնագրում որոշել այդ նշանների իսկական ձևերը, այնքան դոքա տարբերւում էին միմեանցից։ Դիցուք, մի նշան կար, որ տեղ տեղ չափազանց նման էր ձ տառին, իսկ նոյնը մի ուրիշ տեղ 3 թուանշանի էր նման կամ վրացերէն կ տառի. մենք ստիպուած եղանք հետևել բնագրին և ամեն դէպք առանձին արտայայտել։

—

Երկրորդ՝ և մեր կարծիքով ամենից կարևոր նշանակութիւնը, որ ունի ներկայ հատորը, այդ՝ Էջմիածնի թղթագործարանի մանրապատում նկարագրութիւններն են, որ ժամանակագրական կարգով ցրուած են այս մատենի մէջ։ Սիմէոնը յափշտակուած է եղել թղթի գործարանով և իւր փայփայած գաղափարի իրագործող է հանդիսանում. Հնդկաստանի ականաւոր հայ վաճառական Գրիգոր Միքայէլեան Խոջաջանեանցը, որ հայթայթում է գործարանի ամբողջ ծախքը իւր սեպհականութիւնից։

Սկսելով գործարանի շինութիւնը՝ Սիմէոնը վարպետներ է բերել տալիս նախ Ասպահանից, բայց տեսնելով որ նոքա չեն կարողանում գործը գլուխ բերել՝ դիմում է իւր մեկենասին, որ Հնդկաստանից վարպետներ ուղարկէ։ Գրիգոր աղան վարձում է երկու ֆռանկ (ֆրանսիացի) վարպետ, որոնք պէտք է գործարանը շինէին և Էջմիածնումն էլ աղայոց սովորցնէին թղթաշինութեան արհեստը և ուղարկում է Էջմիածին։

Մեծ թղթաշէն «Մուսի Բէյսօնը» (Յովսէփ) և փոքրը՝ «Մուսի Գէյսօր» երկու թարգմաններով գալիս են Էջմիածին և ձեռնարկում գործի. բայց առհասարակ խիստ դանդաղ կերպով և աշխատում են որ ոչ ոք Էջմիածնում չսովորէ իրանց արհեստը։ Սիմէոնի բազմաթիւ գանգատները թղթաշէնների մասին ուղղած այս և այն անձանց՝ ցոյց են տալիս, թէ որքան մեծ մտահոգութիւն են պատճառել նոքա Հայրապետին և ինչքան խոշոր խոշոր ծախքեր անել տուել Էջմիածնի գանձարանին՝ մերթ մեծամեծ և հազուագիւտ գերաններ պահանջելով, որ Սիմէոնը ամեն նեղութեանց տանելով ճըտնել և բերել է տալիս Հաղարծնի անտառներից և մերթ զանազան գործիքներ պահանջելով, որ նոյնպէս ստեղծում էր նոցա համար ի սէր իւր սիրած գործի։ Վերջը երբ նոքա խոստովանում են թէ իրանց օրէնքով արգելուած է այդ արհեստը ուրիշին սովորեցնել, Սիմէոնը նախ բոլորովին հեռացնում է Էջմիածնից փոքրին և ապա սպառնալիքի ազդեցութեամբ ստիպում մեծին, որ աւելի հմուտ էր, աւարտել գործարանի շինութիւնը, իսկ հայ տղայք, ասում է Սիմէոնը իւր մի թղթում, առանց վարպետների ցոյց տալու այնպէս լաւ իւրացրին արհեստը, որ վարպետներից լաւ թուղթ սկսեցին պատրաստել։

Երբ Սիմէոնը թղթի առաջին թերթերը ստացաւ, այնպէս էր հիացած, որ նոր թղթից մի քանի թերթեր նախ իրան՝ մեկենասին ուղարկեց 'ի տես շնորհակալական գրով և ապա զանազան երկիրներ, ինչպէս նաև վրաց Հերակլ արքային. առաջին իսկ նուագ տպեց Պարտավճար գիրքը և այնուհետև Նորակազմ տօնացոյցն ու ուրիշ գրքեր։

Սիմէոնի պատրաստած թուղթը ջրաներկով հետեեալ դրոշմն ունէր.—Մի կողմից փակագրով՝ ս. Էջմիածին և Ս. Կ. (Սիմէոն կաթ.) տառերը, միւս կողմից Թ. ՌՄԻԵ (Թուին Հայոց 1225=1776) և Գ. Մ. (Գր. Միքայէլեան) տառերը։ Այս դրոշմի (Гербъ) իսկական ձեր տալիս ենք հատորումս առանձին թերթով։

—

Երրորդ և նշանակելի կէտը ներկայ հատորում այն է, ինչ որ այսօրուայ ցաւոտ տեղն է Հայութեան։

Սիմէոնի օրօք Շամիր աղան Մատրասում տպարան բանալով նորա որդի Յակովբ Շահամիրեանը տպեց այնտեղ հանրածանօթ «Յորդորակ մանկանց Հայկազունեաց» գիրքը, որով հեղինակն առաջարկում էր ամեն տեղի հայերին ձեռք մեկնել Խամսայի մելիքներին և պատրաստուել յեղափոխութիւն առաջ բերելու Տաճկահայաստանում և այդպիսով վերականգնել Հայոց թագաւորութիւնը ազատելով հայերին Օսմանեան տիրապետութիւնից։ Այս գրքից մի օրինակ էլ ուղարկել էին Սիմէոն կաթողիկոսին։

Ներկայ հատորում ընթերցողը կգտնէ Սիմէոնի ընդարձակ պատասխանը Շամիր աղային այդ մասին, որից նախ այն նորութիւնն ենք իմանում, որ գրքի հեղինակը Յակովբ Շահամիրեանը չէ, այլ թագնուած մի ուրիշ անձ—Խամսեցի—Ղարաբաղցի Մովսէս անունով մէկը (չիք—Մովսէս՝ ըստ Սիմէոնի) և ապա մենք ունինք Սիմէոնի պէս խորամիտ անձի կարծիքը Տաճկահայաստանի խնդրի մասին։ «Եւ զի էին սոքա՝ ի հանգստութեան և յազատութեան սնեալք, գրում է Սիմէոնը, չկրեալք զվիշտս տաճկական և ոչ զնեղութիւնս տեսեալ երբէք, 'ի վեր քան զչափն իւրեանց ձըգտին... չմտածելով զորպիսութիւնս ազգիս՝ թէ ո՞ւր կան, 'ի ձեռս որո՞ց, և որպիսի՞ կերպիւ»։ Այդ ամենը ոչ այլ ինչ հետևանք կունենայ, ասում է նա, բայց եթէ «կորուստ ազգիս»։ Իսկ գրքի առաջարկած միջոցները գտնում է ցնորական և անիրագործելի։ Նա այնպէս է համոզուած լինում իւր կարծիքի մէջ, որ առաջարկում է չիք-Մովսիսին հեռացնել այնտեղից և հայութեան համար այդ աստիճան վտանգաւոր առաջարկներ տպող տպարանը փակել։

ԳԻՒՏ. Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ



1

2



3



4

Տ. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ՝ 1776 ԹՈՒԻՆ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ԲԱՑԱԾ ԹՂԹԱԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ ՊԱՏՐԱՍՏԱԾ ԹՂԹԻ ԴՐՈՇՄԸ (гербъ).

1. Ս. Էջմիածին (փակագիր)։—2. Սիմէոն Կաթողիկոս (սկզբնատառեր)։ 3.—Թուին Հայոց Ռ Մ Ի Ե (1225=1776)։—4. Գրիգոր Միքայէլեան (սկզբնատառեր), որի ծախքով կառուցուեց թղթագործարանը։

1767

ՃԺԵ.

Առ Ռահիմ խանն Նախիջեւանու վասն Աստապատու: Առ Մշու Մախսուտ բէկն վասն իթլախին[1]), եւ առ Բաղտասար վարդապետն։

Աստապատեցիքն կամելով ազատ մնալ յանկանոն հարկատուութենէ և ի սատրիաթէ [2]), զմուլք գեզջն՝ իւրեանց (որ էր խալիս) վաճառեալ էին Հաջի խանին (որ էր ազգակից Նախիջեւանու խանին) որպէս զի նա թերես կարիցէ ազատ պահել զինքեանս ի սատրիաթէն։ Եւ յետոյ տեսեալ զի չար է վախճան նորին, փոշիմանեալ էին և յետս էին խնդրեալ ի Հաջի խանէն զիւրեանց տուեալ ձեռագիրն։ Իսկ նա զայլեայլս պատճառելով և ասելով թէ կորուսեալ եմ, չէր տուեալ։ Եւ յետոյ գնացեալ նըրմին ի Շիրազ առ. Քեարիմ խանն, ազգականք նորին և կնոյն կամէին բռնութեամբ ծառայեցուցանել զնոսա։ Վասն որոյ խնդրեալ էին նոքա ի սրբազան վեհէն օգնել ինքեանց և գրել առ. Ռահիմ խանն (որ էր այժմ իշխող Նախիջևանու.) զի ազատեսցէ զինքեանս։ Իսկ փալակն զթուղթն կորուսեալ էր և բերանով եկեալ ասաց։ Վասն որոյ գրեաց սրբազան վեհն զթուղթ աղերսանաց առ. Ռահիմ խանն, զի մի թողցէ կնոջ և որդւոց Հաճի խանին ծառայեցուցանել զնոսա, մինչև ասէ ես թերես կարացից առնուլ ի Հաջի խանէն զձեռագիրն որ էր հայերէն։

Առ. Աստապատեցիսն ես զթուղթ գրեաց, առ. որս և յղեաց զթուղթ խանին տալ նմա և մեզագրեաց, թէ ընդէր մինչ զայդ առնել կամէիք զմեզ ոչ հարցիք, քան ի խորխորատդ անկայք և ապա ի մեզ անկանիք։ Ի ձեռն Աստուածատուր աղային, ի սեպա. ԻՉ։

Ցետ միոյ աւուր եկման Բաղտասար վարդապետին ի սրբոյ Աթոռոյս (որ ի վերդ յիշեցաւ.) եկին ի Պօլսոյ թուղթք բազմօք որպիսութեամբք, յորս էր և ի սրբոյ Կարապետի Առաջնորդ Յօնան պետէն թուղթ, որ գրեալ էր թէ Մախսուտ բէկի իթլախն եւ յարքայէն (որոյ աղագաւ ի նոյեմ. Ե և ի յապրիլի ԻԷ գրեալ էր սրբազան վեհն. զի հանցեն և զկանոն իմն գիցեն նմա)։ Իսկ Պետրոս վարդապետի իթլախն ասէր ոչ եւ, զի նորա ևս գոյր Սիւրկիւնի ֆերման (որպէս ասացեալ է յօգոստ. ԻԳ) զի կամին ասէր իշխանքն և Պատրիարգն տանել զնա ի վանքն Սեբաստիոյ և անտի կամ զԱռաջնորդութիւն մի տալ և կամ զայլ իմն հնարս հնարել, որպէս զի՝ այլ մի ևս դարձցի նա ի սուրբ Կարապետ։ Եւ բէկին գրեալ էին Պօլսոյ իշխանքն և Պատրիարգն, զի զոր ինչ լառաջ սովորաբար առեալ են ի վանիցն, թէ ինքն և թէ հայրն իւր, այժմ ևս զնոյն առցէ և ոչ աւելի։ Իսկ և գրեալ էին Պօլսեցիքն և Յօնան վարդապետն ես յամենայն տեղիս, չտալ զարդիւնս ինչ սրբոյ Կարապետին, մինչև Պետրոս վարդապետն անտի ելցէ և Յօնան վարդապետն գնասցէ անդ։ Իսկ ի Կարնոյ ես եկին թուղթք, որք գրէին թէ Մախսուտ բէկի

իԹլախն անցուցեալ առ. մեօք տարան առ.նա։ Եւ առ. այս յուժ նեղասրտեցաւ՝ սրբազան վեհն ի վերայ Յօնան վարդապետին։ Զի իւր խօսիւքն հանին իշխանքն զիԹլախն, իսկ նա առանց իւր գիտելոյ՝ զիԹլախն լղեալ էր առ. բէկն, և զշնորհ ցուցեալ նմա, և իւրեան ոչ ինչ շնորհ առ. բէկն երևէր. զի պարտ էր յառաջ քան զլղելն իԹլախին նախագիտակ առնել սրբազան վեհին, զի գրիցէր նմա աւետիս, և շնորհ ցուցանիցէր, Թէ ահա ըստ խնդրոյդ հանել ետու զիԹլախն քոյ։ Այլ զի գրեաց սրբազան վեհն վասն Պետրոս վարդապետին զգիր վէքիլուԹեան, և ըստ այնմ առ. բէկն ևս զգիր ընդ Պաղտասար վարդապետին, (որ ահա ի վերդ ի սեպտեմբերի ԻԶ ասացաւ.) վասնորոյ կամեցաւ այժմ խափանել զայն վասն այսց անցից։ Ուստի գրեաց առ. Մախսուտ բէկն զԹուղԹ, շնորհաւորելով զիԹլախն, և աւետիս տալով վասն գալստեանն։ Եւ ծանուցանելով զգրեյն քանիցս անգամ յառաջ քան զայս ի Պօլիս, և հանել տալն, (որպէս ի վերոյ ասացաւ.) (զի յիրաւի գրեաց, Թէպէտ ես մոռացմամբ ոչ գրեցի որոշապէս ի վերոյիշեալ տեղիսն,) և մինչև ցայժմ ասէ վասն այն ոչ գրէի քեզ զգրելն ի Պօլիս, զի սպասէի կատարման բանին։ Իսկ և յանձնարարուԹիւն վանիցն։ Եւ՝ վասն Պետրոս վարդապետին Թէ՝ որովհետև կամին հանել զդա յայգրուստ և տանել ի վանքն Սեբաստիոյ, բարւոք է զի աստ գայցէ, և մի անդ և յայլուր գնասցէ, զի մի ի յորոգայԹս անկցի որք վասն .իւր զոն պատրաստեալ։ Եւ Թէ՝ գիտէի ես, զի վախճան բանիս այսորիկ այսպէս լինէր, զի ի Պօլսոյ մեզ գրէին, վասն այնորիկ որքան գրէիք զուք առ. իս կարգել զՊետրոս վարդապետդ վէքիլ վանիցդ մինչև ցգալն Յօնա. վարդապետին, ես զանց առնէի, և ոչ եԹէ զքոյլ խաԹրդ ոչ պահէի։ Իսկ և յանձնարարուԹիւն վասն Պաղտասար վարդապետին, և շնորհակալուԹիւն վասն Մարտիրոս վարդապետին, (որպէս և ի վերոյ ի խափանեցեալ ԹղԹոջն գրեցաւ.) Եւ խնդիր, դի որպէս և դրեալ են առ. ինքն զկանոն, զի ըստ այնմ ընդ վանիցն վարեսցի, ինքն ևս սիրով յանձըն առցէ զայն, և գրեսցէ առ. Յօնան վարդապետն զմիամտուԹիւն, դառնալ և գալ ի վանսըն։ Եւ բազում առ. այս բանք։

ԹուղԹ ևս առ. Պաղտասար վարդապետն գրեաց՝ (որ եւ աստի յերեկն աւուր.) ծանուցանելով զգրեալսն ի Պօլսոյ և ի Կարնոյ (որք ի վերոյ ասացան,) և որոց ազազաւ պատուիրելով, զի զվէքիլուԹեան գրեանսն զօրս տարաւ ընդ իւր, Թէ հասարակինն, Թէ բէկինն և Թէ Պետրոս վարդապետինն, ծածկեսցէ իսպառ, և միայն զայս զոր այժմ առ. բէկն գրեաց, տացէ բէկին։ Եւ զգրեալսն ի նմա միըստմիոջէ գրեաց սմա, և պատուիրեաց, զի ընԹեռնուլ ես տացէ զգիրն, և զմիտսն յաւ իմացեալ ըստ այնմ խօսեսցի ընդ բէկին։ Եւ որպէս աւետիս տանօղ ձեասցի նմա, և մի երևեցուսցէ, Թէ զհասանիլն առ. քեզ իԹլախին մեք գիտեմք։ Եւ զպատճառն յոյշ հասանելոյն անդ զայս դիցէ, Թէ զգիրս ի վաղուց էր դրեալ խալիֆայն, այլ վասն զի՝ խանն զճանապարհն վասըն երկիւղի մահուն արգելեալ է, (որ և էր իսկ յիրաւի, զի ի Բալազիտ, որպէս ի հերուն ամի, ըստ որում ասացեալ է անդ յօգոստոսի Զ, յայս ամի ևս ժանտամահն զյուժ սաստիկ կոտորածս արար։ Նմանապէս և ի Կարս։) Վասն այնորիկ մեք յետացաք։ Եւ զի հարկիւ ասասցէ բէկին և Պետրոս պետին ևս, զի Թէ հարկն ստիպեսցէ ելանել անտի, ի սուրբ ԱԹոռս եկեսցէ և ոչ յայլուր, զի մի ի յորոգայԹս անկցի։ Եւ զի՝ Թէ պատշաճ տեսցէ, ինքն ի Մուշ երԹիցէ, և զգրեցեալքս հոգասցէ։ Իսկ եԹէ ոչ, զԹուղԹ բէկին շուտով առ. ինքն յղեսցէ, և զայս բանքըս գրեսցէ Պետրոս պետին, որք են օգուտ իւր, և հարկեսցէ դալ։ Եւ որպէս արասցէ, շուտով ծանուսցէ ինքեան ընդ ումեմն ի սեպտ.ԻԵ։

ՃԺԶ.

Առ մահտեսի Յօնանն ի յԱխալցխայ՝ վասըն բանին ախլթարմայից:

Որպէս ի սեպտեմբերի Ի, այժմ ևս ի յԱխալցխայու ի մահտեսի Յօնանէն ԹուղԹք Բ ժամանեցին առ. սրբազան վեհն։ Որոց մինն էր այս՝ Թէ փաշայն կամի զուղտս լղել յայդր վասն բրնձի, զոր կամեցեալ էր Թէպէտ արգելուլ, այլ չէր կարացեալ։ Ուստի էր զբրինձ հոգալ, զի ի գալն՝ շուտով դարձցին ուղտքն։ Իսկ միւս գիրն, որ քան զայն

լառաջ էր Թուով, այլ յուչ եկն, էր դարձեալ ըստ առաջին գրոյն, որ ի սեպտեմբերի Ը լինելցաւ։ Զի Աստուծով յաջողէր բանն, և շնորհակալ լինէր զՔեահիայէն, և զխաղնադարէն, և զսառաֆէն, որք օժանդակէին ինքեան, և վերստին խնդրէր վասն նոցա զշնորհակալութեան թուղթս։ Միայն այն էր արգելառիթն գլուխ գալոյ բանին, զի փաշայն արդ էր արարեալ թագաւորին զֆերմանն յիւր անուն նորել՝ (որպէս ի սեպտեմբերի Ը ասացաւ.) և գնացող Թաթար մէնզիլն, վասորն բանի ինչ յետացեալ էր։ Քանզի ի ձեռն Դաւիթ անուամբ վրացի առն այնորիկ, որ ի յանցեալ ամին ի յապրիլի ԻԶ գնաց ի Պօլիս, գրեալ էր ընդ նմա զթուղթ առ արքայն Օսմանցոց, յուծանելով զկարծիսն՝ զոր կարծէին զինքենէ Օսմանցիքն. որպէս թէ թե տալ բացագլխացն, որք զօրանան ընդդէմ թագաւորութեան իւրեանց։ Թէ որպիսի օրինակաւ և կամիս, հնազանդեցո զնոսա. զի ծառայեսցեն քեզ որպէս և յառաջն ծառայէին, ես ոչ եմ եղեալ՝ և ոչ այսուհետև լինիմ նոցա զօրաւիգ։ Ուստի՝ մի կարծեր զմեզ որպէս զթշնամի թագաւորութեան ձերոյ՝ զի թէ գիտիցես, ես յամենայն կեանս իմ զբարեբարութիւնս եմ արարեալ թագաւորութեան ձերոյ, և յայսմհետէ ես առնելոց եմ։ Քանզի ահա կամ ընդդէմ յարձակմանց թշնամեաց թագաւորութեան ձերոյ ազգին լէկզեաց, որք հանապազ յարձակին ի վերայ իշխանութեան ձերոյ որ յայս կողմունս է, և առնուն զնոսա աւար և գերի։ Իսկ ես բազում անգամ ելեալ ընդ առաջ նոցա, սաստիկ կոտորմամբ դարձուցանեմ յետս։ Եւ որք անտես լինէին յարձակին յառ և յաւար իշխանութեան ձերոյ, հատեալ զկիրճս նոցա թափեմ զաւարն և զգերին, և դարձուցանեմ ի տեղիս իւրեանց։ Որ և ահա արդէն իսկ հատեալ եմ զոտս նոցա լիշխանութենէ ձերմէ, և ապահով արարեալ զթագաւորութիւն ձեր։ Եւ յետ ցուցանելոյն զբարեբարութիւնս իւր, խնդրեալ էր տալ զֆերմանմի, զի որքան պանդուխտ ժողովուրդք իցեն յերկրէ իւրմէ ի թագաւորութեան Օսմանցոց, ժողովեալ տարցէ զնոսա յերկիր իւր, և շինեսցէ զաւերեալ տեղիսն։ Զի որքան աւէ աւեր կան կողմանքս այսոքիկ, որք են սահմանակիցք իշխանութեան ձերոյ, յամենայնի վնաս է իշխանութեան ձերում։ Իսկ՝ երբ ամենայն աւերեալք կողմանցս շինեսցին, հանգիստ և ապահովութիւն մեծ լինի երկրին ձերում։ Եւ թագաւորն Օսմանցոց ի յընկալնուլն զթուղթս զայս, յոյժ շնորհակալեալ էր զնմանէ, և տուեալ էր զխնդրեցեալ ֆերմանն, որպէս զի որքան մարդիկք և իցեն յերկրէ նորին յիշխանութեան իւրում, տարցէ զամենայն։ Եւ զշնորհակալութեան թուղթ ևս էր գրեալ նմա, և զընծայ ևս էր յղեալ։ Եւ գրեալ էր ևս, զի միջնորդ լիցի բացագլխացն[3]), և վերստին հնազանդեցուսցէ թագաւորութեան իւրում։ Իսկ Արքայն Հերակլ, իբրև միջնորդ լինիլ կամէր, բացագլուխքն յանձն առնուին հնազանդիլ և հարկս տալ Օսմանցոց, այլ Օսմանցիքն ոչ կամէին միայն հարկատու լինիլ, այլ զգերի ևս վաճառել ինքեանց, զոր բացագլուխքն ոչ կամէին։ Վասնորոյ հարկաւորիւր Արքայն վերստին զգիր գրել առ թագաւորն այսր աղագաւ։ Եւ զի զայս ի ձեռն Ախլցխայու փաշային էր գրելոց. և տակաւին ոչ գրէր վասն երթևեկութեան՝ որ էր ի մէջ Օսմանցոցն և բացագլխացն, զի թերեւս հաշտութիւն լիցի, վասնորոյ և փաշայն Ախլցխայու զվերոյիշեցեալ Թաթար մէնզիլն յամեցուցանէր, զի զթուղթ արքային Հերակլայ ևս ընդ նմա յղեսցէ։ Իսկ այժմ գրեաց սրբազան վեհն ի պատասխանի վերոյիշեալ թղթոց մահտեսի Յօհանին զթուղթ առ նա, զի որքան կարասցէ, խափանեսցէ զգալուստ ուղտուցն, մինչև նոր բրինձն ելցէ։ Եւ շնորհակալեցաւ վասն հոգացելոցն, զոր ինչ հոգացեալն էր, և պատուիրեաց ի գլուխ հանել ջանալ, որպէս և ի սեպտեմբերի Ը գրեաց։ Ծանոյց և զառաջին թղթոյ գրելն, և զընծայսն և զթուղթսն զորս խնդրեալ էր, յղելն։

Թուղթ ևս առ Ղօշավանից առաջնորդ Մինաս վարդապետն գրեալ, զթուղթս առ նա յղեաց, զի յղեսցէ առ նա, և թէ ինքն յղել ոչ կարասցէ, ի ձեռն զանձապետ Նզիկին յղեսցէ։ Ընդ Մուստաֆայ տաճկին յղեցաւ։ Ի սեպտեմբեր ԻԹ.

ՃԺԱ·

Առ Համաղանցիսն, վասն տուեալ արդեանցն շնորհակալութիւն, եւ վասն հերձուածողի ումեմն եւ այլ բանից պատուէր:

Նուիրակունքն Սպահանու և Գիլանու, Ռեթէոս և Ստեփաննոս վարդապետքն, (որք ի մարտի Ը, և յապրիլի ԻԱ և յանցելումն ամի ի յունիսի ԻԶ եղեն յիշեցեալք·) աւարտեալք զգործս իւրեանց եկին ի սուրբ Աթոռս, ի յօգոստոսի վերջն։ Եւ յետ գալոյն սոցա, դեսպան ոմն եկն առ խանն մեր ի Քեարիմ խանէն, Կարապետ անուամբ, որ էր Քանաքեռցի, և տաճկացեալ էր։ Եւ էր ընդ նմա Համազանցի տիրացու ոմն Յարութիւն անուամբ։ Զոր վերոյիշեալ Ռեթէոս վարդապետն ի մէջ ժողովրդոցն Համաղանու, կարդեալ էր երեցփոխան և վեքիլ սրբոյ Աթոռոյս։ Որ անգուստ ի ժողովրդենէն բերեալ էր առ սրբազան վեհն զթուղթ մի գանգատանաց զհերձուածողէ ումեմնէ, որոյ անունն էր Սմբաթ։ Որ հերձուածով ինչ չփոթէր զմիտս միամիտ ժողովրդոց։ Վասնորոյ և սրբազանն գրեաց առ Համաղանցիսն զթուղթ մի։ Նախապէս շնորհակալութիւն և օրհնութիւն նոցին, վասն տուեալ արդեանցն նուիրակական, Առաջնորդական (զի տէրունի ժողովուրդք էին սրբոյ Աթոռոյս.) և գանձանակական։ Զորս տուեալ էին Ռեթէոս վարդապետին։ Երկրորդ՝ պատուէր՝ զի սուրբ Աթոռս միայն ծանիցեն իւրեանց առաջնորդարան, և զհայրապետն սորին իւրեանց առաջնորդ։ Եւ զայլ ոք մի ճանաչել, և հնազանդիլ և տուրս տալ որպէս առաջնորդի, զի դուք ասէ յատուկ և տէրունի ժողովուրդք էք սրբոյ Աթոռոյս։ Պատուէր և վասն չատահրջիկ սեագլխաց, զի մի ընդունիցին, և մի զտուրս տայցեն նոցա՝ որք աստի ոչ ունիցին զկոնդակ։ Բայց զկամաւոր ժողովարարսն փութով չահեալ ուղեւորեսցեն ի միջոյ իւրեանց։ Երրորդ՝ պատուէր՝ զի թէ ոք ի հերձուածողաց և ի Փռանկ պատրեաց եկեսցէ առ ինքեանս, մի ընկալցին, և ջանասցեն ես հանել ի միջոյ իւրեանց։ Իսկ վասն վերոյիշեալ Սմբաթ հերձուածողին, սրբազան վեհն ի կարծիս լինէր, թէ գուցէ յիրաւի լինիցի և կամ ոչ։ Վասնորոյ գրեաց, զի թէ յիրաւի իցէ, մի ընկալցին զնա, և մի խառնեսցեն ի մէջ իւրեանց, զի անիծեալ է ասէ ի մէնջ և բանադրեցեալ։ Իսկ եթէ չիցէ յիրաւի, կամ թէ յիրաւի իցէ և զղջանայցէ։ Ապա ընկալցին զնա իբրև զեղբայր, և որպէս զմի յինքեանց համարեսցեն։ Նոյնպէս և զերիցուէ ումեմնէ Յովաննէս անուամբ գանկատէին, որպէս թէ ընդունօղ իցէ նա հերձուածօղին Սմբաթայ և գործակից։ Եւ առ սուրբ Աթոռս խորդ։ Ուստի՝ վասն սորա ևս գրեաց, զի թէ յիրաւի իցէ, մի ընկալցին, և կամ իբրև զքրիստոնեայ համարեսցեն, զի նա ևս է ասէ անիծեալ։ Իսկ թէ նա ևս զղջացեալ ի հերձուածողէն մեկնիցի, և առ սուրբ Աթոռս եկեսցէ հարազատ, ապա զնա ևս ընկալցին։ Չորրորդ՝ որովհետև Ռեթէոս վարդապետն զայս տիրացու Յարութիւնս կարգեալ էր ի մէջ նոցա երեցփոխան. և սրբոյ Աթոռոյս դանձապետ և վեքիլ, վասնորոյ՝ ինքն ևս հաստատեաց, և հրամայեաց նմա լինիլ հալածիչ հերձուածողաց, և ժողովրդեանն հողաբարձու։ Եւ գրեաց ժողովրդեանն լինիլ նմա յամենայնի հնազանդ և ունկնդիր։ Եւ թէ ոք զբանս իցէ զրելոց առ ինքն, ի ձեռն նորա գրեսցէ։ Եւ այլ առ այսոսիկ պատուէրք։ Երկրորդ պատուէրն էր այնր աղագաւ, զի Ջուղայու առաջնորդն ձեռնամուխ լինէր ի նոսա։ Օրինակ սորա ի բոլորագրահամար տետրոջն է, յերեսն ՄՀԶ։

Թուղթ մի ևս առ վերոյիշեալ Կարապետն գրեաց յԵրեւան, ի պատասխանի թղթոյն, որ փափագէր զսուրբ Աթոռս և սրբազան վեհն տեսանել, այլ ի տաճկացն երկնչէր, որոյ և զընծայս յղեաց։ Թուղթն Համաղանու ի սեպտեմբերի ելն գրեցաւ, այլ յետ միոյ ամսոյ գնացին սոքա աստի։

ՃԺԲ·

Առ Մելքոնն եւ առ այլս ոմանս թուղթք ի Կարին:

Ի Կարնոյ թուղթք ինչ եկին առ սրբազան վեհն, որոց որպէսքն ի ներքոյ յիւրաքանչիւրոց պատասխանեացն տեսցին։ Թուղթ մի գրեաց սրբազան վեհն առ Մելքոն Աղայն ի պատասխանի թղթոյն։ Որ գրեալ էր զորպիսութեանց Զաքարիա և Յովաննէս վարդապետացն, որք ի յօգոստոսի ԻԳ գնացին

աստի և զճանապարհելն զնոսա։ Առ այս շնորհակալութիւն։ Եւ աստ զալ կամէր, հաճեցաւ։

Փուսուլայ մի ևս գրեաց առ. սա վասն բանից մահտեսի Յօնանին, որ ի սեպտեմբերի ԻԹ յիշեցաւ։ Զի Յօնանն ի յԱխալցխայ սոցա Աւետիքին զխորհուրդն իւր յայտնեալ էր, և խնդրեալ էր ի նմանէ զդրամս վասն ի դրունսըն խարճելոյ։ Եւ զոր ինչ ծածկապէս հոգացեալ էր, ծանուցեալ էր նմա։ Եւ Աւետիքն գրեալ էր Մելքոնին, և նա սրբազան վեհին էր գրեալ։ Եւ խնդրեալ էր ծանուցանէլ թէ՝ իւրով հրամանաւն է։ Ուստի՝ ծանոյց իւրով հրամանաւ լինիլն։ Զի առացեալ էր Յօնանին, զի ի պիտոյանալն ինքեան դրամոյ, յումմէ և իցէ առցէ, և տուօղքն ուր և կամիցին, առցեն ի սրբոյ Աթոռոյս։ Գրեաց և զայս թէ՝ յառաջագոյն գրեալ էր մեզ մահտեսի Յօնանն, թէ այսչափ ինչ դրամ է պիտոյ, (ԳՃԾ) և մեք այսչափ ինչ ի վերայ Եփրիկեանց մահտեսի Գրիգորին փօլիս արարաք, (ԲՋ) և այսչափ ի վերայ փաշայի Սառաֆ Գաբրիէլին, (ԱՀ) տալ մահտեսի Յօնանին։ Իսկ այժմ որովհետև յԱւետիսէն է խնդրեալ, (ԱՀ) ի հարկէ սառաֆն չէ տուեալ։ Վասն այսորիկ ի նմանէ է խնդրեալ։ Արդ ասէ թէ այդպէս իցէ յիրաւի, թող տացէ Աւետիսն։ Թէ զբովանդակն իսկ խնդրեսցէ տացէ անյապաղ։ Այլ և վասն դրամոյն՝ զոր տալ պարտ էր Մուրտիկեանց, (Ա) զորմէ ասացեալ է յապրիլի ԺԱ, և մինչև ցայժմ չտայր, և նոքա գրէին սրբազան վեհին, վասնորոյ գրեաց սմա տալ՝ և հատանել զձայն նոցին։ Եւ ի վերնում հասարակ թղթօջն՝ գրեաց ևս սմա վասն Ակնայ Առաջնորդ Մարտիրոս վարդապետի տալիք դրամոյն (35) որոյ աղագաւ գրեաց սմա յառաջ, և ի յօգոստոսի Բ առնուլ։ Իսկ Մարտիրոս վարդապետն գրեալ էր քան զայս յառաջ տեղապահին, թէ ետու ի Մուրտիկեանսն զի յայդր հասուսցեն։ Վասնորոյ գրեաց սմա այժմ, զի թէ առ ինքն իցէ հասեալ և թէ առ Մուրտիկեանսն, ծանուսցէ ինքեան։

Եւ գրեաց զԹուղթ ևս առ. Տէր Պետրոսն ի պատասխանի թղթոյ նորին՝ զոր ի յուլիսի ամսոյն էր գրեալ, ի պատասխանի այնմ թղթոյ սրբազան վեհին, զոր ի յունիսի ԻԱ գրեաց առ նա։ Բայց յետոյ ի սեպտեմբեր ամսոյն էր աստ յղեալ, ի պատճառս վերոյիշեալ դրամոյն (Ա) զոր Մելքոնն տալոց էր Մուրտիկեանցն, որպէս զի առեալ տացէ նոցա, և առ սրբազան վեհն զմիամտութիւն գրեսցէ։ Այլ նա զեռ ևս չէր տուեալ. և սա գրեալ էր սրբազան վեհին, թէ տրտնջան Մուրտիկեանքն։ Ուստի՛ զհարկ գրեաց սմա առնուլ և տալ նոցա, որպէս իւրեան իսկ Մելքոնին ևս գրեաց։ Գրեալ էր ևս վասն Մուրտիկեանց սանատին (ԲՑ) յղեալ, (որ ի յօգոստոսի ԻԳ յիշեցաւ) և ըստ նոցին խնդրոյն, գրէր թէ՝ գրեա՛ վերստին Յարութիւն վարդապետին, տան անդ օրթաղին սոցա զդրամն, և սոքա աստ տացեն, գրեաց թէ յղեցաք ընդ Զաքարիա վարդապետին ի Պօլիս, դի ընդ Յարութիւն վարդապետին հոգասցեն։ Եւ՝ գիր Մինաս վարդապետին որ ի յունիսի ԻԱ առ. սա յղեցաւ, (որ և ի սեպտեմբերի ԺԹ յիշեցաւ.) հասեալ էր առ սա, ուստի՛ գրեաց պահել առ ինքն ցդալն նորին, (որպէս և յայնժամ գրեցաւ,) և ի դալն՝ զհոգալիսն հոգալ, և փութով յղել։ Իսկ և դրեալ էր վասն Հնդկաց նուիրակի փօլիսին, (Դ) (որ յապրիլի ԺԱ և ի մարտի Ի յիշեցաւ թէ, ի ձեռն Մկրտիչ աղային և ի Մուրտիկեանցն էհաս առ մեզ.) որ և յօգոստոսի ԻԳ ևս ի թղթօջ Պապիկ աղային յիշեցաւ։ Գրեալ էր՝ ի մէջ Մկրտիչ աղային և Մուրտիկեանց օրթաղին վէճ գոլ այնր աղագաւ։ Եւ սրբազան վեհն գրեաց թէ՝ մեր դրամն մեզ է հասեալ մեզ չէ փոյթ, ինքեանք գիտասցեն։ Զի Մկրտիչ աղայի օրթաղն՝ որ էր ի Պօլիս, կոտր էր անկեալ, և ի փօլիցայէն զմասն ինչ (8) տակաւին չէր հասուցեալ Մուրտիկեանց օրթաղին։ Եւ զի՝ թէ տակաւին կարմիր վանից Առաջնորդն ի յԱխլցխայ չիցէ գնացեալ, հարկեսցէ գնալ։ (Որպէս ի սեպտեմբերի ԺԹ ևս գրեցաւ։)

Փուսուլայ մի ևս գրեաց առ սա՝ վասըն թղթոյ Մինաս վարդապետին, որ էր առ նմա. (որպէս ի վերոյ ասացաւ։) Վասն այնր, զի դրեալ էր ի նմա առնուլ ի Սարխօշէն զդրամս, (Գ) որ ի Ղուկաս վարդապետէն էր առ սա հասեալ։ Այլ յառաջ քան զայս էառ աստ ի տաճկաց ոմանց զդրամս և փօլիս արար ի վերայ Սարխօշին զի տացէ, ԲՀԾ) և ետայր առ Սարխօշն մասն ինչ. (ԳԾ.) ուստի՝ գրեաց ընդ Մինաս պետին առնուլ զայն ի նմանէ։ Իսկ զի յԱկնցի ղասապ Ա-

լէքոանէն, (որոյ բանադրանացն արձակման աղագաւ գրեցաւ ի սեպտեմբերի ԻԱ թուղթ,) հասեալ էր առ Պապիկ Աղային գրամ ինչ. (1 Լէ 20) գրեաց զայն ես ընդ Մինաս վարդապետին առնուլ։ Եւ Ակնայ Առաջնորդի գրամն՝ (3Հ) (որ ի վերոյ ի թղթոջ Մելքոն աղային յիշեցաւ.) որ էր առ Մուրատիկեանոն, գրեաց զայն ես առնուլ։ Եւ զի Եսայի վարդապետն՝ Նուիրակն Եւդոկիոյ, զգրամս էր տուեալ սումեամ, (ԱՊ) և զթամասուկ առեալ յղեալ էր ի Կարին առ Նսնուսեցի մահտեսի Յովհաննէսն, զի ի Կարին առեալ ի սուրբ Աթոռս հասուսցէ։ Վասնորոյ գրեաց սրբազանն այժմ Տէր Պետրոսին, զի զայն ես ընդ Մինաս վարդապետին առցեն։ Գրեաց ես՝ զի թէ զզապզ խնդրեսցեն գրամ տուօղքն, զգրեանքս զայսոսիկ ցուցցեն, և թէ ես չտայցեն, ապա ինքեանք զզապզ տուեալ առցեն։ Եւ ի ցայն ասա Մինաս վարդապետին, մեք աստ զզապզ գրեալ առ Նոսա յղեսցուք և զձերն առցուք։

Թուղթ ես առ Պապիկ Աղային, շնորհակալութիւն վասն Նուիրակացն, զորս չահեալ և ուղեորեալ էին, (որք ի վերոյ յիշեցան։) և վասն վերոյիշեալ ղասապ Ալէքսանին զըրեալ էր զաղաչանս, արձակել ի բանադրանացն, գրէր և վասն դրամոյ Նորին որ առ ինքն էր։ Գրեաց թէ՝ մեք ի փառս Աստուծոյ, ոչ միայն զնա, այլ և զորդի Գրիգորին զՅակոբն ես արձակեցաք վասն խաթեր ձերոյ։

Թուղթ ես առ Մուրատիկեանց խոջայ Առաքելն գրեաց, նմանապէս շնորհակալութիւն վասն Նուիրակացն։ Եւ վասն սանատին սոցա (ԲՅ) զնոյն, զոր ինչ առ Տէր Պետրոսն գրեաց, (նմանապէս շնորհակալութիւն վասն Նուիրակացն) և միամտեցոյց թէ՝ ս.սացեալ եմ Զաքարիա վարդապետին՝ ընդ Յարութիւն վարդապետին հողալ։ Նսկ սուրբ Կարապետի Առաջնորդ Յօնան վարդապետն (որ տակաւին ի Պօլիս էր։) (որ ի սեպտեմբերի Իէ յիշեցաւ։) խնդրեալ էր ի սրբազան վեհէն ըղկոնդակ ժողովարարութեան վասն վանից սրբոյ Կարապետին։ Որոյ աղագաւ այս Առաքելս ես էր գրեալ զաղերս։ Եւ՝ սրբազանն ոչ ետ, որոյ պատճառն ի Ներքոյ տեսցի։ Այլ զսա միամտեցոյց թէ՝ զոյր հարկաւոր պատճառ, որոյ վասն այժմ չետու։ Զոր Նմա ես գրեցի, և Նա ես հաւանելոց է։ Իսկ և գրեաց վասն այսր զթուղթ մի առ Յօնան վարդապետն, ի պատասխանի թղթոյն։ Որ գրեալ էր զխըղճութենէն և զվշտաւսրութենէն վանից սրբոյ Կարապետին։ (Որք ի սեպտեմբերի Իւ էն ի վեր բացայայտ դոն։) Գրեաց թէ՝ զայդոսիկ գրես. որոց դուք եղէք պատճառ, իսկ զսրբոյ Աթոռոյս և զմեր վնասակրութենէն և զանուտնակոտրութենէն ոչ գրես, որոց և դուք եղէք պատճառ։ Այս վասն առաջին անցից Պաղտասար վարդապետին գրեաց, (որ ի սեպտեմբերի ԻԶ էն ի վեր, և մանաւանդ ի պատմութեան ՌՄԺԴ ամին, և յօդոստոսի ԻԴ բացայայտ գոյ։) Զորս այժմ ի կարճոյ յիշեցոյց Նմա։ Այլ մեք աստ զայնս ամենայն իմացեալ ի սէր սրբոյ վանիցդ, զքեզ և զքոյայինսդ ամենայն ի սէր ընկալաք, և զօգուան սրբոյ վանիցն կամեցաք։ Բայց դուք աստ զմեզ որպէս օտար համարելով՝ ոչ ընտելացաք մեզ ամենևին, և ոչ կամեցայք և հաւատացիք մեզ յայտնել մեզ զխորհուրդս ձեր. զոր աշխարհ ամենայն գիտէ։ Օրինակ բերելով զանցսն, որ ի Իէ ըն սեպտեմբերի ասացաւ։ Քանզի աստ ի յելանելդ քոյ ի վանիցն, բազում անգամ բէկն, երկրականքն, և միաբանք վանիցն գրեցին առ մեզ զաղաչանս կարգել զՊետրոս վարդապետն վեքիլ, զսեագլուխս և զիշխանս ես յղեալ էին։ Կարգալով զնա միտյն շինարար և կառավարիչ վանիցն։ Իսկ մեք աստ ոչ լուաք, այլ զՍտեփաննոս վարդապետն զորս գու վէքիլ էիր կարգեալ՝ մեք ես զնա կարգեցաք կոնդակաւ, և զՊետրոս վարդապետն գրեցաք Նոցա յղել յԱթոռըս. այնու մտօք, զի սակաւ մի զբարձրավըղութիւն ընկճեսցուք։ Եւ ի զալդ քոյ ի սուրբ Աթոռս, թէ կամէիր՝ տանէին ընդ քեզ, և ոչ աստ մնայր, զի դու և վանքդ մնայցէիք հանդարտ։ Որպէս աստ իշխանացն Պօլսոյ ես գրեցի, զի հարկեսցեն զնա զալ յԱթոռս, և զքեզ փութով դարձուսցեն։ (Զորոց ասացաւ ի Նոյեմբերի Էւ։) Զոր աստ վասն քոյոյ օգտի և խաղաղութեան քոյայնոցն արարի, ինձ ինչ պիտոյ էր Պետրոս վարդապետն։ Բայց դուք աստ զայս չկամելով՝ ի Սեբաստիայ կամեցաք տանել։ (Զոր մեք աստ անտի հանել կարէաք, զի բէկն և երկիրն որպէս զառաջնորդ կալեալ ունին զնա։) Եւ զմեր եղեալ վէքիլն, թարց մերոյ հրամանի հանեալ զայլ ոք ես կացուցեալ։ Եւ այգու զամենայն գրեալսն մեր

վասն Պետրոս վարդապետին, և հրաման մեր վէքիլութեան, թէ ի Մուշ և թէ ի Պօլիսդ։ Նորապէս ասէ գրէր մեզ բէկն զաղաչանս՝ զիթլախն իւր հանել տալ, և մեք գրեցաք յայդր հանել և չուտով մեզ գրել։ Իսկ դուք ասէ հանեալ առ նա յղեցիք, ոչինչ ազդելով և ոչ նմա գրելով թէ խալիֆայն ես գրեալ էր մեզ հանել, զորմէ ասէ ոչինչ կարծի բաց յայսմանէ, զի բէկն քոյ եռ զմեզ չծանիցէ, և զգրեցեալսն մեր սուտ և անընդունակ համարիցէ։ (Զայս ամենից ի սեպտեմբերի Իէ, և ի վերոյս նորին եղև ասացեալ։) Իսկ որովհետև (որպէս ասացեալ է ի վերոյ ցուցեալ տեղւոջն, իշխանքն Պօլսոյ գրեալ էին առ բէկն հրաժարիլ ի յաւելապահանջութեանցն և զՊետրոս վարդապետն հանել անտի, զի ապա Յօնան վարդապետն դարձցի լետս, զի առանց սոցա ի գլուխ գալոյ՝ անհնար էր նմա դառնալ լետս, և պատասխանւոյ դրոյն սպասէին։ Իսկ Մշեցւոցն և բէկին անհնար էր թողուլ ի ձեռաց զՊետրոս վարդապետն։ Որոյ աղագաւ իսկ գրեալ էին լամենայն ուրեք իշխանքն և Յօնան վարդապետն գրեալ էին լամենայն ուրեք, և հատեալ զարդիւնս սրբոյ Կարապետին։ Ուստի գրեաց սմա սրբազան վեհն թէ՝ անլսրմար է, թէ զհատեալ արդիւնս ձեր մեք վերստին հաստատիցեմք կոնդակաւ, ի դերեւ ելանէ կոնդակն մեր, որպէս մինչև ցայժմ գրեցեալքն մեր և լինիմք յառակս թէ՝ մեք զտուեալն մեր արդիւնսն ես հատանեմք, նա յայնկուսէ գրէ թէ առատութեամբ տուք։ Այլ ասէ, յորժամ ամենայն բանք քոյ ի գլուխ գալցեն, յայնժամ ոչ միայն զկոնդակն տաց, այլ և զոր ինչ խնդրեսցես կատարեցից։ Զայս առ Մուրտիկեանց Առաքելն յղեաց յղել առ նա։ Որ ընդ այլ Թղթոցն յղեցաւ ընդ Կարապետ փալեկին ի հոկտեմբերի Գ։

ՃԺԹ

Առ ժողովուրդսն Բայազիտու, մխիթարութիւն վասն հարուածոյ ժանտամահին:

Որպէս ի սեպտեմբերի Իէ ասացաւ, յայսմ ամի ես հարուած ժանտամահին զսաստիկ կոտորածս արար ի Բայազիտ, վասնորոյ զթուղթ մի մխիթարութեան գրեաց առ նոսա սրբազան վեհն։ Թուղթ մի ես առ Տէր Վահանն գրեաց՝ ընթեռնուլ յեկեղեցւոջն զթուղթն, և իւրեան ես յատուկ մխիթարութիւն վասն այսր։ Հոկտեմբերի Ը.

Մխիթարական թուղթ ես առ Մարգար աղայն, և առ այնոսիկ՝ որք ընդ նմա ի Բալղտոյ փախուցեալք ի ժանտամահէն եկեալ էին յԱկոռի։ Որոյ և զփոքր ինչ ուտելիս յղել ետ։ Հոկտեմբերի ԺԱ.։

ՃԻ.

Առ Ղազախեցին, վասն սրբոյ Աթոռոյս տաւարին՝ որք յղեցան անդ:

Պաղտասար վարդապետն որ ի վերդ ի հոկտեմբերի Գ յիշեցեալ եղև ըստ որում ի մայիսի գրեալ էր առ նա սրբազան վեհն ըղպատուէր բերել ի Ղօշավանիցն զաւելի անասունսն սրբոյ Աթոռոյս որք էին անդ, վասնորոյ նա յորժամ եկն ի սուրբ Աթոռս (որպէս ասացաւ ի սեպտեմբերի Ը) եբեր զնոսա, որք էին բազումք։ Եւ յայսոսիկ աւուրս եկն ի սուրբ Աթոռս ի տես սրբազան վեհին Ղազախու Աղարծնոյ վանից առաջնորդ Մանուէլ վարդապետն։ (Որոյ աղագաւ ս ս·ոցեալ է բան, և յիշեալ ի յունվարի ԻԲ և ի մայիսի ԺԴ։) Եւ վասն զի ահա մերձեալ էին աւուրք ձմեռանն, և սրբոյ Աթոռոյս անասնոցն չգոյին ըստ բաւականին ուտելիք, վասնորոյ զնոր եկեալսն ի Կարոայ որք ի վերոյ յիշեցան, ետ սրբազան վեհն Մանուէլ վարդապետին տանել ի Ղազախ, և զօրհնութեան թուղթ մի գրեաց առ ժողովուրդսն Ղազախու, զի հնգով և տասնով առ ցեն ի նոցանէ իւրաքանչիւրքն ի տունս իւրեանց, և յայս ձմեռս պահեսցեն, մինչև ի գարնանն ասէ զնոգս իմն հոգասցուք վասն նոցա։ Թուղթ մի ես առ Մելիք բէկն գրեաց այսր աղագաւ, յորմէ ես զնոյն խնդիր առնելով։ Եւ զԱւետիս վարդապետն կարգեաց վէքիլ ի վերայ անձանցն, զոր Մանուէլ վարդապետն բերեալ էր ընդ իւր։ Նլին աստի։ Հոկտեմբեր ԺԳ.

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Թիֆլիզու առաջնորդ և նուիրակ Զաքարիա վարդապետն, յանձնարարութիւն վասն Թիֆլիզեցի ժամասաց Յարութիւն վարդապետին, որ հրաման առեալ ի սրբազան վեհէն գնաց անդ վասն իւրոյ անձնական ինչ հարկաւորութեան հոգալ և դառնալ աստ։

ՃԽԱ.

Առ Պաղտասար վարդապետն ի Վան, եւ առ Տէր Վահանն ի Բայազիտ:

Հասեալ էր առ. վերոյիշեցեալ Պաղտասար վարդապետն թուղթն այն, որ յետ ելանելոյն նորա աստի ի սեպտեմբերի ԻԷ գրեցաւ առ նա։ Եւ նա ի ճանապարհէն գրեալ զպատասխանի նորին յղեալ էր յետս։ Եւ զի մոռացեալ էր տանել ընդ իւր ըստ սովորութեան զսուրաթ բէրաթ ֆերմանին, վասնորոյ խնդրեալ էր յղել։ Ուստի՝ թուղթ գրեալ առ նա՝ զսուրաթն ևս յղեաց՝ և պատուիրեաց փոյթ ընդ փոյթ գրել զգործոյն և զորպիսութեանցն։

Թուղթ ևս ի Բայազիտ առ Տէր Վահանն գրեաց, վասն դրամոց ինչ ինչ (3) և ղրմզի, զորս Նոնուսեցի մահտեսի Յովաննէսն ի փոլիցայէ Եսայի վարդապետին որ էր առ ինքըն, (որ յիշեցաւ ի հոկտեմբերի Գ) յղեալ էր ի Կարնոյ ի Բայազիտ առ սա։ Վասնորոյ գրեցաւ սմա, զի զղրմզն կամ անդ ծախեսցէ, և կամ թէ էժանագին իցէ, և առնօղ չիցէ ծանուսցէ ինքեան։ Իսկ վասն դրամոյն՝ (3) զոր անդ ի նոյն մահտեսի Յովաննէսի չրաղ Ագուլեցի Ստեփանէն առնլոց էր սա, պատուէր՝ զի թէ նա ի յառնուլն զդրամն զթամասուկ խնդրիցէ, ասասցէ թէ ահա առ մահտեսի Յովհաննէսն է, զոր և ինքն գիտէ։ Ջալոսիկ քարաշ Երանոսն տարաւ որ երթայր ի Վան, ի յամսեանս հոկտեմբերի ԺՋ։

ՃԽԲ

Առ Եւդոկիոյ նուիրակ Եսայի վարդապետն, վասն փոլիցայի։

Երեք ուխտաւորք եկին ի սուրբ Աթոռս ի Թօխաթու, որոց անուանքն էին՝ մահտեսի Գրիգոր, մահտեսի Յարութիւն և մահտեսի Մարտիրոս։ Որք բերեալ էին յԵսայի վարդապետէն զթուղթ առ սրբազանն։ Վասնորոյ զթուղթ գրեաց սրբազան վեհն առ Եսայի վարդապետն ի պատասխանի թղթոյն։ Որ գրեալ էր վասն փոլիցային, զոր հասուցեալ էր ի Կարին առ Նոնուսեցի մահտեսի Յովհաննէսն (որպէս ի վերդ ի հոկտեմբերի ԺՋ, և Գ ասացաւ)։ Եւ խնդրէր այնր աղագաւ զղապզ։ Ուստի գրեցաւ, թէ թուղթս այս քեզ ղապզ լիցի։ Եւ յղեցաւ առ մահտեսի Յովհաննէսն յղել առ նա։ Իսկ զրմզն զայն՝ որ ի վերդ յիշեցաւ ի ԺՋըն ամսոյս, Գաստակեցի մահտեսի Այվազ ոմն էր տուեալ, ի տեղի ՆԾ զուռուշ գանձանակադրամին դեղջն իւրեանց, որ էր ԺԷ հոխայ։ Որ հասեալ էր ի Բայազիտ առ Տէր Վահանն՝ որպէս ասացաւ։ Վասնորոյ՝ գրեաց սմա զմիամտութիւն։ Եւ առ մահտեսի Այվազն ևս օրհնութեան թուղթ գրեալ այսր աղագաւ, գրեաց ևս ի նմա զմիամտութիւն վասն ՄԾ զուռուշ. կտակի, զոր տուեալ էին նախանցեալ նուիրակ Զաքարիա վարդապետին, և օրհնութեան թուղթն չէր գնացեալ։ Վասնորոյ՝ այժմ գրեցաւ։ Եւ զրմզն չ՚յիշեցաւ, այլ թէ ՆԾ զուռուշ գանձանակադրամն մեզ էհաս։ Նաև՝ Երուսաղէմայ գանձապետ մահտեսի Յօհան ոմն խոստացեալ էր տալ ըզԺԵ զուռուշ, և սա զօրհնութեան թուղթ էր խնդրեալ, յղեցաւ։ Եւ այս մահտեսի Գրիգորս որ եկեալ էր, էր գանձապետ սրբոյ Աթոռոյս ի Կաթնաղբիւր եկեղեցին. և տուեալ զհաշիւն հրաժարել կամէր։ Իսկ Եսայի վարդապետն՝ վասն առաւել հարազատութեանն չկամէր զհրաժարելն։ Ուստի և խնդրեալ էր աստ վերստին գանձապետ կարգել և զկոնդակ ևս տալ նմա վասն նոր գանձապետութեան։ Եւ սրբազան վեհըն այնպէս արար։ Խնդրեալ էր ևս զնոր նուիրակ կարգել և յղել, քանզի Գ ամն լրացեալ անցեալ էր։ Ծանոյց զյղելն ի յօգոստոսի ԻԳ զՊետրոս վարդապետն, և պատուիրեաց, զի թէ դաւթար պիտոյ իցէ նմա, տացէ, և զորպիսութիւն վիճակացն ծանուսցէ։ Իսկ և գրեաց ի Կարին զթուղթ առ վերոյիշեալ Նոնուսեցի մահտեսի Յովհաննէսն և մահտեսի Սարգիսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Շնորհակալութիւն վասն զղրմզն և ի փոլիցայէն զմասն ինչ (3) յղելոյն ի Բայազիտ՝ (որպէս ասացաւ ի վերոյ.) իսկ զթուղթ Եսայի վարդապետին ասէ, (որ ղապզ իսկ էր նորին,) ի լրանալ վատային երբ ամենայն դրամն ձեզ հասցի, նմա յղեսջիք զի միամիտ լիցի։ Քանզի՝ դեռ բովանդակ փոլիսն ոչ էր հասեալ ի [illegible]։ Իսկ զմնացեալն ասէ Ուռումելու նուիրակի սպասաւոր Մինաս վարդապետն

յաւղր իցէ, ի նա տուեալ ծանուցիք մեզ՝ (որ ի հոկտեմբերի Գ լցեալ) Հարկեաց ես, զի գրեսցեն զպարզ միտս իւրեանց, թէ ի Թիֆլիզ գնալոց են, թէ ոչ։ Զի ինքեանք խոստացեալ էին Արքային, և Արքայն երբեմն գրէր սրբազան վեհին, իմանալ զմիտս նոցա և յորդորել ի գնալ՝ (որպէս ասացաւ եա ի յունիսի ԻԱ)։ Իսկ և թուղթ գրեցաւ առ յորդիս վերոյիշեալ դանձապետ մահտեսի Գրիգորին Յովհաննէսն և Պաղտասարն, վասն յիշատակի։ Թուղթ առ. մահտեսի Աննայն՝ վասն յիշատակի. ի ձեռն իւր որդի մահտեսի Յարութիւնին։ Ի ձեռն սորին գարձեալ, թուղթք ես առ. մահտեսի Խաչիկն, մահտեսի Ազայեկն, և մահտեսի Միրզայն, վասն ողորմութեան։ Թուղթ մի ես առ. մահտեսի Յակոբն և պարոն Յովհաննէսն, ձեռամբ մահտեսի Գրիգորին վասն ողորմութեան։ Թուղթ մի ես առ. մահտեսի Գասպարն և Յարութիւն, ձեռամբ մահտեսի Մարտիրոսին, վասն ողորմութեան։ Որք ելին ի սրբոյ Աթոռոյս ի հոկտ. ԺԷ։

ՃԻԳ.

Առ Շուշեցիսն, վասն գանձանակին զոր հաստատեալ էին եւ զի զՀիսրայէլն մի ընկալցին:

Յալում միջոցի, Ղազանչեցի հայքն որք բնակեալ էին ի Շուշի, փչխանութեան որդւոյ Փանահխանին, հաստատեալ էին ի մէջ իւրեանց յանուն սրբոյ Աթոռոյս զգանձանակ և դրեալ էին սրբազանին։ Վասնորոյ զօրհնութեան հասարակ կոնդակ գրեաց ի վերայ նոցա և չնորհակալեցաւ։ Եւ ապա շրջեալ ըղբանն՝ ի վերայ հասարակ ամենից բնակչացն Շօշու, և երկրին Խամսայու, գրեաց վասն չիք Իսրայէլին զպատուէր՝՝, զի մի ընկալցին ի գնալ անդ ամենևին, (որպէս և ի սեպտեմբերի ԻԴ գրեաց)։ Թուղթ մի ես առ. Յովհաննէս կաթուղիկոսն գրեաց այսր աղագաւ։ Այլ զի ինձ յալում միջոցի՝ ըստ մեղաց մահամերձ իմն տըկարութիւն դիպեցաւ, վասնորոյ՝ ոչ ստոյգ զօր ամսոյն, և ոչ նմանապէս զօրպիսութիւն բանիս գիտել կարացի։ Հոկտ. ԺԸ։

ՃԻԴ.

Առ Տէր Վահանն ի Բայազիտ, վասն Թիֆլիզեցւոյ ուրուք աւանդի։

Ոմն Թիֆլիզեցի Մկրտում անուամբ ախթարմայ, եղեալ էր ի Բայազիտ առ Տէր Վահանն յաւանդ զիրս ինչ, որք էին ակնեղէնք, և գնացեալ ի Թիֆլիզ մեռեալ էր անդէն, և կտակեալ էր որդւոյ իւրում՝ որոյ անունն էր Ստեփաննոս, առնուլ զաւանդն իւր ի Տէր Վահանէն։ Եւ նա զՋօհրար ոմն ինքեան վէքիլ արարեալ թղթով և մահսէրով յղեալ էր ի Բայազիտ առնուլ զայն։ Իսկ Տէր Վահանն երկուցեալ լապաղայական վտանգէ, կամեցեալ զհաստատուն գիր իմն ունել ի ձեռին, և ապա տալ նմա զիրն, չհաւատալով այն մահսարին։ Վասնորոյ ասացեալ էր, թէ՝ առանց սրբազան վեհի հրամանին տալ ոչ կարեմ։ Ուստի Ջօհրարն եկեալ առ սրբազան վեհն, խնդրեաց տալ զթուղթ մի ի վերայ Տէր Վահանին, զի տացէ զաւանդն։ Եւ սրբազան վեհն ես կամելով լինել այս հաստատուն, վասնորոյ ոչ հաճեցաւ անդէն առնուլ Ջօհրաբին զիրն զայն, այլ զթուղթ մի գրեաց առ Տէր Վահանն, զի ի ձեռն հաւատարմի ուրուք, կամ թէ յԱթոռալնոցս ոք անդէն պատահիցի, յղեսցէ զայն ի սուրբ Աթոռս, զի աստ ինքն նոցա տացէ, զոր նոյն Ջօհրաբն տարաւ։ հոկտ. Ի.

ՃԻԵ.

Առ Զմիւռնոյ առաջնորդ Ղուկաս վարդապետն վասն տպագրչին, եւ առ այլս ոմանս։

Ի Զմիւռնոյ նուիրակ և առաջնորդ Ղուկաս վարդապետէն, ի Պօլսոյ և ի Կարնոյ թուղթք ինչ եկին, որոց որպէսքն ի պատասխանիս իւրեանց տեսցին։ Թուղթ մի գրեաց սրբազան վեհն առ Ղուկաս վարդապետն, ի պատասխանի թղթոյն, զոր գրեալ էր ի սեպտեմբերի Ե։ Որ էր պատասխանի այնց թղթոց սրբազան վեհին, որք գրեցան առ նա ի յունիսի Գ և ի ԻԱ։ Որ խնդրեալ էր վերս-

A III/2451
47.394

տին զգրեանսն, զորս յառաջ քան զայս ես էր խնդրեալ, զորս և սրբազան վեհն ի յօգոստոսի Բ, և քան զայն յառաջ ես, յղեացւ Եւ զի ի յունվարի ամսոյն հետէ զմի կամ զԲ թուղթս ասէր ընկալեալ, վասնորոյ ամսաթուով ծանուցաւ նոցա թիւ թղթոյն, որք յայսմ. ամի գրեցեալք էին առ նա, որոց վերջինն էր յօգոստոսի ԻԳ գրեցեալն։ Եւ զի զգրամն (Բ) զոր փոխս արար ի վերայ սորա սրբազան վեհն ի յունիսի ԻԱ, տալ ի Պօլիս Մելքոնենց Խաչատուրին, տուեալ էր, վասնորոյ գրեաց զշնորհակալութիւն։ Եւ ասաց առնուլ ի Խաչատուրէն զպապզն և զպարաթագիրն։ (Խաչատուրին ես գրեաց տալ նմա։) Նա և ծանոյց սմա զառնուլն իւր ի սարխօշէն փոխիցալիւ զգրամս (ԲՄԾ) ի փոխիցալէն իւրմէ, որ հսկեալ էր առ Սարխօշն, (Գ) (որպէս ասացաւ ի սեպտեմբերի ԺԹ։) Եւ ասաց զի ումն և տուեալ իցէ զգրամն, զփոխիցալագրեանսն ի նմանէ խնդրեսցէ, և մի թողցէ մնալ յուրէք զայսպիսի թուղթս։ Իսկ և նորապէս զգրամս էր հասուցեալ ի Թօխաթ առ մահտեսի Աղալեկն, հասուցանել սրբոյ Աթոռոյս։ Ծանոյց սմա զգրելն առ Եսայի վարդապետն, զի առցէ, (որպէս ի թղթոջ նորին ասելոց եմ։) Եւ յառնուլն ասէ՝ զպապզ յղեցից առ քեզ։ Եւ որպէս ի յօգոստոսի ԻԳ, այժմ. ես գրեաց չհաւատալ միանգամայն ումեք զգրամ։ Եւ միամտեցոյց ես, թէ այլ չեմք արարեալ ի վերայ քոյ զփոխս, և ժամանակ մի ես չեմք առնելոց յետ այսորիկ։ Իսկ և՝ ի կարի յոյժ ստիպելն զսա սրբազան վեհին վասն տպագրիչ Մարկոսին՝ (որպէս բազմիցս ասացեալ է ի վերոյ ցուցեալ տեղիսն։) կոչեալ էր զնա ի մէջ իշխանաց և հարցեալ, և նա յանձն էր առեալ զայլ աստ և յերիս ամս աստ մնալ, և զերկուս կամ զերիս աշակերտս ուսուցանել, և տալ մեզ զգիրս Եզնակայ և զԽոբհրդատեարին, զորս ինքն էր հոգացեալ, և զՏաթեացւոյ հատորոցն, (զոր ստացեալ էր,) ամենայն պարագայիւքն իւրեանց, և ապա ինքն ելանել և գնալ աստի։ Բայց խնդրեալ էր ես զԵՌ ղուռուշ գրամ, ԲՌն ի զին գրոց և գործեացն իւրոց, զորս խոստանայր տալ մեզ, և զԳՌն ի վարձ երից ամացն, յորս աստ մնալոց էր։ Եւ այսոքիկ բաց ի ճանապարհական ծախուցն և կերլեացն և զգենլեացն աստ ի մէնջ ի յերիս ամս։ Որոյ աղագաւ իշխանքն Զմիւռնոյ, և ինքն մահտեսի Մարկոսն ես գրեալ էին առ սրբազան վեհն զթուղթ։ Ընդ որ հաճեցաւ սրբազան վեհն, և գրեաց Ղուկաս վարդապետին, զի թէ ի վերոյիշեալ գրոցն պակաս ինչ իցէ ի պարագայիցն, հոգալ տացէ, և զքանի տէրունական պատկերս ես ի ձեռն բերել տացէ նմա։ Ապա առեալ ի նմանէ զամենն, դիցէ յարկեզ, և նմա և իշխանացն կնքեցուցեալ, յիւր անուն յղեսցէ ի Կարին, և զծախսն նոցին ինքն հոգասցէ։ Եւ աստ ինքեան դրեալ ծանուսցէ։ Որպէս զի՝ ինքն մահտեսի Մարկոսն առանց ծանրութեան թեթև և փութով եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Եւ թէ այս ասէ ի գլուխ գալոյ լիցի, ընդ գրոցն և զԻԾ օգնայ լաւ թուղթ առեալ յղեսցէ։ Իսկ և պատուիրեաց զԱՌ ղուռուշն անդէն տալ մահտեսի Մարկոսին, որպէս նա խնդրեալ էր։ Որ ի ԵՌ էն։ Նա և ըստ բաւականին միոյ մարդոյ տալ նմա զճանապարհական ծախսն։ Յետ այսորիկ ասէ՝ թէ յօժարեսցի նա ի գալ, թող ի գարնանս աստ գտանիցի փութով, և թէ ոչ, ծանո մեզ, զի և մեք զվերջինն արասցուք։ Կամէր ես նա, զի յայնմ. օրէ դիցէ զսկիզբն երից ամաց, յորում. ելցէ ի Զմիւռնոյ։ Ընդ այս ես հաճեցաւ սրբազան վեհն, բայց այսու պայմանաւ զի ի մուտն մարտի ամսոյ ելցէ, և ի մուտն մայիսի աստ գտանիցի, և բաց ի յԲ ամսոց՝ այլ մի ես աւելի յամեսցի ի ճանապարհին։ Եւ վասն Ամստերդամու գրոյն դարձեալ հարկ, (որպէս և յօգոստոսի Բ,) ջանալ թերևս և զայն ի ձեռն ածել։ Եւ վասն Յարութիւն վարդապետին՝ Նուիրակին վիճակացն Պօլսոյ գրեաց սմա՝ (որպէս և Զաքարիա վարդապետին ի յօգոստոսի ԻԳ ի գնալն աստի պատուիրեաց։) զի դրով՝ և թէ դիպեսցի բերանով ես զնա միամտեցուսցէ, զի թողեալ զայլ և այլ կարծիսն և զմտածմունսն, առ սուրբ Աթոռս հաստատեսցէ զմիտս և զկամս իւր զի մեք ասէ կամիմք միշտ ի սէր պահել զնա, որպէս մինչև ցայժմ. պահեցաք։ Եւ վասն ՂԵ ղուռուշ գրամոյ ես զմիամտութիւն գրեաց, զոր տուեալ էր անդ վասն Երևանցի Թասալուի որդի Յարութիւնին ճոթից, և նա ասա սրբազան վեհին հասոյց։ Եւ զի՝ Մեզրեցիքն ոչ էին տուեալ զայն գրամն, զորոյ թէմէսուկն յղեաց առ Նոսա սրբազան վեհն ի յօգոստոսի ԺԳ, և թէմէսուկն մնացեալ էր առ նոսա, և դրեալ էին

սրբազան վեհին թէ՝ այդ դրամդ վաղուց հատէ արեցեալ է։ Իսկ թէմէսուկի ընկեր բարեւագիրն աստ էր։ Վասնորոյ՝ յղեաց առ նա զայն բարեւագիրն, և զՄեզրեցոց պատասխանին ես ծանոյց՝ թէ դու գիտես, յայդ հոգա որպէս և իցէ պատշաճ։ Եւ՝ այլ բանք առ. այսք։

Թուղթ ես առ Զմիւռնոյ իշխանսն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրեանց, այսինքն առ խոջայ Յարութիւնն, Աստուածատուր Չէլէպին, մահտեսի Գալուստն, խօջայ Դանիէլն, մահտեսի Սէլումն, և մահտեսի Կիրակոսն։ Դարձեալ վասն բանից տպագրչին, ըստ որում առ. նուիրակն գրեցաւ։ Եղաւ այս ի թղթոջ Ղուկաս վարդապետին։ Գրեաց և զթուղթ առ. Եւդոկիոյ նուիրակ Եսայի վարդապետն, ծանուցանելով զառաջին թղթոյ գրելն ընդ դանձապետ մահտեսի Գրիգորին ի հոկտեմբերի ԺԷ։ Եւ վասն փոլիցայի Ղուկաս վարդապետին, զոր հասուցեալ ի Թօխաթ առ. մահտեսի Աղալեկն, (Բ) (որպէս ի վերոյ ասացաւ.) գրեաց առնուլ ի նմանէ և ինքն զդապդ տալ. և գրել՝ զի ինքն զդապդ գրեալ յղիցէ աստի ի ձեռն իւր, զի տուեալ մահտեսի Աղալեկին զիւր դապդն առցէ. և նա զայն զապդն առ Ղուկաս վարդապետն յղեսցէ։ Եւ զի՝ զորպէսն գործոյն և զերբ զայն գրեսցէ։ Թուղթ ես առ տիրացու Խաչատուրն գրեաց ի Պոլիս։ Ի պատասխանի ի սեպտեմբերի ԻԱ գրեալ թղթոյն։ Որ մահտեսի Յակոբի տալիք դրամոյն, (Բ) (որ լիշեցեալ է ի յօգոստոսի Բ.) թէ դժուարաւ տալ, և զայս ինչ ժամանակ պտըմանէ, թէ երբ լնանիցի, տաց։ Վասնորոյ՝ գրեաց՝ զի ինքն ստիպով խնդրեսցէ ի նմանէ։ Թէ ըստ խոստմանն իւրոյ ի լնանիլ պայմանին տացէ, բարւոք է, և թէ ոչ, յայնժամ ասէ ծանո մեզ, և մեք կարեմք առնուլ ի նմանէ։ Եւ վասն վերոյիշեալ փոլիցայի Ղուկաս վարդապետին, որ սմա պարտ էր հասանիլ, (Բ) գրեալ էր թէ՝ զկէսն առի, (Ա) և կէսն մնացեալ է ի վերայ Մասեհի որդի Նիկողայոսին։ (Ա) գրեաց թէ՝ Ղուկաս վարդապետն գրէ թէ՝ իսկոյն հասուցի Նիկողայոսին, և ի մէնջ խնդրէ զդապդն, դու ընդէր ոչ փութով առնուս։ Եւ հարկեաց առնուլ փութով և զդապդն և զբարաթագիրն առ Ղուկաս վարդապետն հասուցանել փութով։ Եւ զթուղթ Ղուկաս վարդապետին առ. սա յղեաց, փութով յղել առ նա։

Թուղթ ես գրեաց սրբազան վեհն ի Կարին առ պարոն Մելքոնն, ի պատասխանի թղթոյն։ Առ որ յղեաց զպահարանն Խաչատուրին, և զթուղթ Եսայի վարդապետին, հասուցանել շուտով առ իւրաքանչիւրսն։ Եւ զի Մինաս վարդապետն (որ ի հոկտեմբերի ԺԷ լիշեցաւ.) ելեալ էր ի Պոլսոյ յայս կոյս։ Վասնորոյ գրեաց սմա գրել առ Խաչատուրն, և յետս բերել զթուղթսն՝ զորս ի սեպտեմբերի ԺԹ գրեալ առ. Մինաս վարդապետն յղեաց առ սա և աստ յղել։ Իսկ Հնդկաց նուիրակ Յովսէփ վարդապետն (որ ի մարտի ԻԷ, և ի յունիսի Ի լիշեցեալ է), գրեալ էր ի Բաղդատու առ. սրբազան վեհն, թէ ի Հնդկաց Պետրոս աղայն աջահամբոյր դրամ էր յղեալ վասն Սրբազանիդ, (Ա) և Ա եաղուտ մատանի ընծայ։ Զոր ընդ Յակոբին՝ (որ էր ի Բաղդատ,) յղեցաք ի Կարին առ Մելքոնն, առցես ի նմանէ։ Իսկ Մելքոնն զոչինչ գրէր զայսմանէ։ Վասնորոյ՝ գրեաց գրել զորպէսն սորին։ Իսկ և տաճիկք երթալին յերկրէս մերմէ ի Քեաբայն իւրեանց, որք տալին աստ զդրամս սրբազան վեհին, և խնդրէին զփոլիցայագիրս, զի ի Կարին առցեն։ Վասնորոյ յառաջ քան զգնալն սոցա, գրեաց առ. Տէր Պետրոսն զթուղթ մի ի Կարին, և զորպիսութիւնս զայս ծանոյց, զի զդրամս պատրաստեալ տացէ Նոնուսեցի մահտեսի Յովհաննէսին (որ ի ԺԷ ամսոյս լիշեցաւ) (ԳԻԸ) և Մուրտիկեանց Առաքելին, (որ ԻԳ ամսոյս լիշեցաւ,) (ԳԻԸ) յարդեանցն սրբոյ Աթոռոյս՝ որք դոլին առ նոսա, (զորոց ի վերոյ ցուցեալ տեղիսն ասացեալ է։) Եւ այնպէս ընդ փոյթ, զի մի ի գնալն անդ տաճկացն՝ յետասցին վասն դրամառութեանն, այլ փութով առեալ երթիցեն։ (Զորոյ լիապէսն յետոյ ի գնալն տաճկաց գրեցից։) Ուրոյն յղեցաւ այս առ Տէր Պետրոսն, ընդ Պէտօլին ի հոկտ. ԻԸ։

ՃԻԶ

Հասանիլն ի Հաշտարխան Դաւիթ վարդապետին, եւ առնելն անդ զխաղաղութիւն: Եւ որդյ աղագաւ գրելն անդ սրբազան վեհին զներողութիւն եւ զշնորհակալութիւն:

Դաւիթ վարդապետն՝ որ լիշեցաւ ի սեպտեմբերի ԻԴ, ի հասանիլն ի Հաշտարխան՝

ըստ պատուիրանի սրբազան վեհին, արարեալ էր զհաշտութիւն ի մէջ ժողովրդեանն և նուիրակին։ Եւ ժողովուրդքն իշխանքն ամենայն հաստատեալ էին ընդ նուիրակին զսէր, և նուիրակն սկիզբն էր արարեալ զործոյն նուիրակութեան։ Եւ ապա Դաւիթ վարդապետն զթուղթս գրեալ առ. սրբազան վեհն այսց ազագաւ լցեալ էր անտի, և ինքն գնացեալ ի Մօսկով առ. թագաւորն։ Եւ անտի ես գըրեալ առ. սրբազանն զթուղթ, և ծանուցեալ զհնճիլն անդ։ Եւ որոյ թուղթքն հասին աստ յառաջ քան զալս, որպէս ասացաւ ի սեպտեմբերի ԻԴ։ Վասնորոյ և սրբազան վեհին ընդ ալս ուրախացեալ։ Թուղթ գրեաց առ. ժողովուրդսն Հաշտարխանու, օրհնութիւն և շնորհակալութիւն և օրհնութիւն նոցին՝ վասն զԴաւիթ վարդապետն սիրով ընդունելոյն, և առնելոյն զխաղաղութիւն։ Որոց և ինքն գրեաց զներողութիւն, զանցեալսն ամենայն մոռանալով, և պատուիրեաց մնալ ի նոյն սէր և ի նոյն խաղաղութիւն, և զանցեալսն մոռանալ, և լինիլ առ սուրբ Աթոռս ջերմ և հարազատք։ Եւ որպէս ի յանցելումն ամի ի յունվարի Ժ, այժմ ես գրեաց սրբազան վեհն, զի առանց իւրոյ կոնդակին և հրամանին, ըզսեաղլուխ և զժողովարար ոք մի ընկալցին։ Եւ՝ գրելն զալս էր այնր ազագաւ, զի ժողովարար ոմն չիք Իսրայէլին արարեալ էր անդ ընդդէմ սրբոյ Աթոռոյս զբազում լրբութիւնս։ Որոյ անունն էր Սողոմոն։ (Որ ի ժամանակս լուսահոգի կաթուղիկոսին եկեալ աստ, և աստ մնալ ոչ կարացեալ վասն անսանձ բարուցն, եւ աստի։) Որ և արկեալ էր անդ ի մէջ ժողովրդեանն զչփոթ և զլուսահատութիւն։ Քանզի յորժամ բարձեալ էին զանուն չիք Իսրայէլին յեկեղեցւոյն (զոր բարեկամք նորա յիշեցուցեալ էին յեկեղեցւոջն,) նա որպէս զշուն կատաղի արարեալ էր անդ զլոլով լրբութիւնս, և ի մէջ վայրաղօզանջութեանցն զսուրբ Խաչն ևս էր հայհոյեալ՝ զոր լսօղքն իբրև յանդիմանեալ էին զնա. ասացեալ էր թէ՝ ես զՀալոց խաչն հայհոյեմ։ Վասնորոյ և սրբազանն գրեաց ժողովրդեանն թէ՝ որպէս յառաջ քան զալս զչիք առաքիչն լուծի ի կարգէն և որոշեցի ի հօտէն Քրիստոսի, նոյնպէս զդա ևս ահա լուծանեմ ի կարգէն և բանադրեմ «Անիծեալք են ալսուհետև դա, և որք ընդունիցին զդա, և քրիստոնեայ համարեսցին։

Եւ պատուիրեաց սաստիւ, վարել զնա ի միջոյ իւրեանց, զի երթիցէ առ առաքիչն և կորուսակիցն իւր չիք Իսրայէլն, զի մի և ինքեանք կցորդեսցին պատժոց նորա։ Եւ յանձնարարութիւն վասն նուիրակին։ Թուղթ ևս առ նուիրակ Յովհաննէս վարդապետն, մեղադրութիւն, որ զգիր ոչ է գրեալ, և հարկ գրել զորպիսութեանց զործոյն։ Եւ զհասարակ գիրն յեկեղեցւոջն ընթեռնուլ տալ յատուկ ծանուցմամբ, և զչիք Սողոմոնն վոնել տալ։ Եւ զընծայս առաջնորդին՝ (զոր ցայժմ չէր տուեալ,) որ էր փիլոն մի ազնիւ և բազմական, պատուէր տալ յեկեղեցւոջն յատուկ ծանուցմամբ և հանդիսաւորութեամբ, և փառաւորել զնա, և միամիտ առնել, զի յայամենայնէ հարազատութեամբ և միամտութեամբ ծառայեսցէ սրբոյ Աթոռոյս, զի եղբայր մեր է ասէ, և զանցեալսըն ամենայն մոռացաք մեք։ Եւ ինքեան ևս պատուէր՝ հաշտիլ ընդ նմա, և զփոյթ ունել զործոյն. և մնալ առ ամենեսեան սիրով։ Թուղթ մի ևս առ Հաշտարխանու իշխող Նիկիտայ Աֆանասիչ Բէքտովն, ըստ խնդրոյ Դաւիթ վարդապետին, շնորհակալութիւն և օրհնութիւն վասն շահելոյն զԴաւիթ վարդապետն, և փութով յղելոյն ի Մօսկով պատուով և փառաւորութեամբ։ Եւ խնդիր առ սուրբ Աթոռս ունիլ միշտ զսէր և զբարեկամութիւն։ Եւ ի դառնալն Դաւիթ վարդապետին, փութով աստ յղել։ Թուղթ ևս առ. պարոն Բարդուղիմէոսն, շնորհակալութիւն վասն հարազատութեանցն, զոր ցուցեալ էր Դաւիթ վարդապետին։ Առ որ յղեաց զհասարակ գիրն ընդ նուիրակին ընթեռնուլ տալ յեկեղեցւոջն, և զգիր իշխողի տեղւոյն տանել առ նա, և լաւ թարգմանութեամբ հասկացուցանել։ Զգիր նուիրակին ևս առ սա յղեաց։ Թուղթ մի ևս առ Ղզլարու Եանրալ մայոր Նիկօլայիչն, ըստ խնդրոյ Դաւիթ վարդապետին, նման թղթոյ Հաշտարխանու իշխողին։ Թուղթ մի ևս ի Ղզլար, առ Թիֆլիզեցի Ամրակումն, ըստ թըղթոյ Բարդուղիմէոսին։ Առ որ յղեաց զթուղթ իշխողի տեղւոյն տանել առ նա և հասկացուցանել։ Օրինակ հասարակ թղթոյն ի բոլորագրահամար տետրոջն է, յերես ՄԴ.Զ, ՄԴԷ։ Այսք Բ պահարանաւ, ի ձեռն Ռուս վաճառականի ումեմն Իւանէ անուամբ և նորին թարգման Գրիգոր տղային յղեցան։ Հոկտ. ԻԹ։

Ժողովաբարութեան թուղթ տուաւ Ռա-

փայէլ անուամբ քահանայի միոյ Բիւզանդեցւոյ: Զոր զրպարտեալ էր ումն հայ, թէ ՙԻԾ ղուռուշ տալիք է: Եւ նա լալմանէ փախուցեալ եկն աստ, և խնդրեաց լալով ի սրբազան վեհէն զթուղթս գալս, զոր ետ ի վերայ Թօխաթու, Սեբաստիոյ, Ակնայ և Արապկերու, մի ամ պայմանաւ: Նոյեմ. Ա.:

Ժողովարարութեան թուղթ ես տուաւ Ցամթեցի Տօնապետ անուամբ հայոյ միոյ, և Ցօհաննէս անուամբ տղայի: Զի այս Ցօհաննէս իւր Բ քերբքն անկեալ էր ի գերութիւն, զոր կամեցեալ էին տաճկացուցանել. և այս Տօնապետս գնեալ էր զնոսա ի գերողացն ԱՌ և ԱՃ ղուռուշ գրամով, որոյ զԾՃ ղուռուշն լիւրմէն տուեալ էր, և զՃ ղուռուշն մնացեալ էր տալիք: Որոյ վասն զբոլոր տունն և զընտանիսն իւր առ. այս տաճիկսն եդեալ էր յերաշխի, և ինքն եկն առ.սրբազան վեհն խնդրել զթուղթ, որով և յԱմթայ առաջնորդն ես տուեալ ըղթուղթ ժողովաբարութեան: Որոյ զթացեալ սրբազան վեհն ետ նմա գալս թուղթս ի վերայ Վանայ, Մշու, Դիարբէքրու, Բալուայ, Ուրհայու և Կեսարիոյ, Ա ամ պայմանաւ: Նոյեմ. Ա.:

Ժողովարարութեան թուղթ ես տուաւ Բ Ասորոց, որք եղբարք էին ի յերկրէն Սալմաստու: Որոց միոյն անունն էր Ասլան, և միւսոյն Նիազ: Որոց Գ որդին և Բ դստերքն անկեալ էին գերի ի ձեռս զօրաց Քեարիմ խանին, և գնացեալ ի Շիրազ: Մինչ նա բազմութեամբ զօրաց եկեալ էր ի վերայ Ֆաթալի խանին (որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺԳ երրորդ ամին, ի փետրվարի ԻԳ:) Եւ զԱ դուստրն տաճիկ ումն առեալ էր, իսկ Ա դուստրն և Դ որդիքն, Ջուղայեցի վաճառականի ազատեալ էին Կ թումանով: Եւ՝ այս ասորիքս ղԺԲ թումանն տարեալ տուեալ էին, և ԻԴ թումանն նոքա բաշխեալ էին: Իսկ վասն մնացեալ ԻԳ թումանին, մնացեալ էին առ նոսա գերիքն: Վասնորոյ եկեալ ասորիքն առ սրբազան վեհն, աղաչէին տալ ղժողովարարութեան թուղթ: Եւ թէպէտ ասորիք էին, այլ վասն Քրիստոսական հաւատոյն, ետ նոցա սրբազան վեհն զթուղթս գալս, ի վերայ Մահմուտանու, Հախբակու, և Սալմաստու, թէ ի վերայ Հայոց, և թէ Ասորաց եսՙ որք յայն տեղիսն գոն բնակեալք, մի ամ պայմանաւ:

ՃԻԷ.

Առ Ցօհաննէս կաթուղիկոսն եւ Մելիքսն Խամսայու, պատուէր հաշտիլ ընդ չիք Իսրայէլին: Խանին եւս գիր:

Որպէս ի սեպտեմբերի ԻԴ, և ի հոկտեմբերի ԺԸ ասացեալ եղև, թէ չիք Իսրայէլն ընդ Մելիք Աղամին զալոց է ի Խամսայ, այժմ եկեալ էր անդ Մելիք Աղամն ի Խամսայ, և գնացեալ էր առ որդի Փանահխանին: Եւ նա ըստ որում ուխտեալ էր երդմամբ, ընկալեալ էր զնա պատուով և մեծարանօք, և խիլայիւք: Նմանապէս և զչիքն՝ ի պատիւ և ի հաւատարմութիւն Մելիք Աղամին երեելապէս, թէպէտ սրտիւ էր ընդ Ցօհաննէս կաթուղիկոսին: Եւ էր Մելիք Աղամն յերկրի իւրում ի Ջարաբերդ, և չիքն ես ընդ նմա: Եւ ոմանք ի կողմնացոց Ցօհաննիսին (այսինքն Մելիք Եսային և այլք աննշանք յորս անկեալ էր չիքն,)կամէին զհաշտութիւն ձգել ի մէջ նորա և Ցօհաննիսին, և խանին ես վասն նորա բարեխօսել, զի կամ զերկիրն ընդմիջեսցեն ի մէջ երկուցն, և կամ այլով կերպիւ արկցեն ի մէջ նոցա, և ինքեանք անխտիր առնէին ընդ նմա զբարեկամութիւն, և խանն որպէս թէ տեղի տայր: Զորս գրեալ էր սրբազան վեհին Ցօհաննէս կաթուղիկոսն, և զբանադրանս խնդրէր վասն չքոյն: Զի տակաւին չէր հասեալ առ նա բանադրանքն ի Զաքարիա վարդապետէն, որում ի սեպտեմբերի ԻԴ գրեաց սրբազան վեհն զհարկ յղել առ Ցօհաննէս կաթուղիկոսն: Վասնորոյ գրեաց սրբազան վեհն հասարակապէս զթուղթ առ Ցօհաննէս կաթուղիկոսն, և առ Մելիքսն Շօշու և Խամսայու: Ցիշեցուցանելով նոցա զառաջին պատուէրն՝ զոր գրեաց առ նոսա ի սեպտեմբերի ԻԴ, և հոկտեմբերի ԺԸ: Եւ վերստին մեծաւ հարկիւ պատուիրելով,զի մի մտաբերիցեն հաշտեցուցանել զՑօհաննէս ընդ չքոյն, և կամ ինքեանք հաշտեսցին և առնիցեն նմա զբարեկամութիւն, կամ բարեխօսեսցեն ինչ վասն նորա առ խանն, և կամ առ ինքն կամիցին գրել զաղերսանս, և խանին ես գրեցուցանել, զի անդէն արձակեսցէ զչիքն: Քանզի աստ ես բանադրեալ եմ ի վաղուց հետէ, և հաւասարեալ զնա դիւաց, ընդ որում ոչ է պարտ ունել ձեզ

մասն։ Եւ բանադրանաց Թուղթն ասէ յայդ կողմունսդ է, և թերևս ցայժմ յայդր հասեալ իցէ։ Ուստի՝ ասէ՝ որք կամիցինն ի ձէնջ առնել զայսոսիկ, կցորդեսցիս զնոսա չարեաց նորա։ Քանզի ասէ լսեմ եթէ ոմանք ի ձէնջ զայսոսիկ առնել ջանան, որք ոչ եթէ են այգոյ որդիք խաղաղութեան, այլ որդիք խռովութեան։ Քանզի ոչ է այս կատակ, և կամ աւաղ երէցութիւն մի և առաջնորդութիւն զի լայլ փոխիցեմք, այլ կաթուղիկոսութիւն։ Եւ մանաւանդ դուք ի յերկս ամս զիս աշխատեցուցիք հաստատել զԱթոռն ձեր, և զկաթուղիկոս նստուցանել ի նմա։ Եւ ես յետ բազմաց ստիպմանց ձերոց, ըստ յաջողմանն Աստուծոյ, և որպէս ես իսկ կամէի, հաստատեցի զԱթոռդ զայդ։ Ա՛ռ եթէ յերաւի այլ իմն միտս ունիցիք ներհակ այնմ, յայնժամ և ես ընդ ձեզ այլ իմնպէս վարեցայց, և ծանուցից ձեզ զչափս ձեր։ Զի ես ոչ եմ ձեզ խաղալիկ, զի ըստ որում կամիցիք դուք ընթանայցէք։ Եւ արարեալն իմ ոչ է մարմնաւոր և փոփոխելի գործ, այլ հոգևոր և անյեղաշրջելի։ Իսկ որոց սիրտն ցաւի վասն նորա, թող յԱթոռս բերցեն և ես զնա արձակեցից, և զճանապարհ իմն եղից առաջի նորա։ Զի ես եմ ի վերայ նորա բարկացեալ և բանադրեալ, յայդր ընդ ո՞ւմ կամիցին հաշտեցուցանել զնա։ Իսկ եթէ այսպէս ոչ արասցեն, ապա զոր ինչ առնիցեն, ի զուր է, և կորուստ անձանց իւրեանց։ Ուստի՝ որ ոք մինչև ցայժմ զայս կամեցեալ է, (զորս գիտեմ իսկ ասէ), այժմ ի բաց կացցէ, ապա թէ ոչ, յայնժամ զոր ինչ և առնիցեմ ես, անպարտ եմ։ Եւ թէ՝ այժմ զթուղթս առ իւրաքանչիւրոք յատկապէս ոչ գրեցաք։ Յետոյ իբրև ընկալայց ի ձէնջ զպատասխանի թղթոյս, յայնժամ առ արժանաւորսն օրհնութեան զօրհնութեան թուղթս գրեցից, իսկ որք ներհակին իցեն արժանիք, զներհակ գրեցից։ Օրինակ սորին ի բոլորագրահամար տետրոջն է յերեսն ՄՂէ, ՄՂԸ։ Թուղթ ևս առ լորդի Փանահ խանին Իբրահիմ Խալիլ խանն գրեաց, դարձեալ վասն չիք Իսրայէլին։ Յիշեցուցանելով նմա զջանսն իւր՝ որ բազմիցս զինքն աշխատ առնելով, ջանայր զՅօհաննէսն առնել տալ կաթուղիկոս, և զԳանձասար շինեցուցանել։ Իսկ և զերկն և զգլխացաւութիւնսն, զորս ի յերկս ամս ինքն կրեաց և հազիւ վերջապէս (որպէս Տէր կամեցաւ,) զՅօհաննէսն արար կաթուղիկոս, և զԳանձասարն շինեցոյց։ Ուրեմն ասէ՝ ոչ պարտիս աւերել զաշխատանսն քոյ և մեր, և լսել խռովասիրաց որք միջնորդիցեն քեզ զկործանեալսն ի մէնջ կանգնել։ Մի լուիցես նոցա, զի լինի մեծապէս աւերումն տանն այնմիկ, և կռիւն ոչ վերջանալ, և մանաւանդ՝ անկարելի ևս է։ Զի մեք ասէ մերկացուցեալ եմք զնա յամենայն կարգացն, և ի քրիստոնէութենէն ևս, և ի կարգէ մարդոյ ևս հանեալ եմք, և հաւասարեալ դիւաց։ Եւ՝ որք ասէ կատարեալք են, ընդ այնպիսոյն երբէք ոչ խօսին, և ոչ բարև տան և առնուն, և ոչ զբարի ինչ վասն նորա կամին, այլ որպէս ի սատանայէ խորշին, զի մի կցորդեսցին չարեաց նորա, սատանայ է նա։ Եւ աղերս բազում, խնամել զՅօհաննէս կաթուղիկոսն և զԳանձասար, և զինքն միշտ տեսել։ Թուղթ մի ևս առ Յօհաննէս կաթուղիկոսն, ըստ մտաց հասարակ գրոյն։ Սաստկապէս պատուէր՝ զի զգուշացուսցէ զմելիքսն և զիշխանսն չառնել ընդ Չքին զբարեկամութիւն, զի մի ասէ և նոքա զնորինն կրիցեն։ Զի թէ զորքան զգլխացաւութիւնս կրեցաք ցայժմ, և զորքան գրեանս գրեցաք յայդր կողմանսդ, և որքան խանից և մեծամեծաց ընդդէմ կացաք, մինչև վերջապէս ի շինութիւն բերաք զԱթոռդ զայդ խղճալի։ Եւ դոքա յառաջագոյն մեզ զինչ գրէին, և այժմ զինչ առնել կամին։ Որոց զգրեանսն ես զոմանս յղեաց առ սա, և զքանի գրեանս ես ի գրելոցն կողմանցւոց չԻսրայէլին։ Զի ցուցցէ նոցա ի պատեհ ժամու, զի ծանիցեն թէ զինչ գրեալ իցեն յառաջ, և անպակաս յղեսցէ զնոսա յետս ի սուրբ Աթոռս։ Որք էին Խամսեցւոց այն մահսարն, զոր յետ օծանելոյ Յովաննիսին ինքնագլուխ ի կաթուղիկոս ինքեանց, գրեալ էին զաղաչանս օգնել նմա և տէրութիւն առնել, զի Աթոռն շինեսցի։ Նաև այն թուղթս՝ զոր ի գրելն սրբազան վեհին ի Շամախի և այն կողմունսըն՝ զի և ոչ զմի յերկուցն ընկալցին, գրեալ էին թէ՝ խանն լուաւ և բարկացաւ, և կամէր զզօրս առաքել և ասպատակել զերկիրդ, և զՂափան, և զՍիսեան, և զՂարադաղ, և զայլս որք ընդ իշխանութեամբ սորա են, հատանել յԱթոռոյդ։ Զոր ի ՌՄԺԳ թուոջն, ի մարտի Լ գրեալ ընդ Տաթևու առաջնորդ Մինաս վարդապետին յղեալ էին։ Իսկ և ի

կողմնացուց չԻսրայէլին, այն մահսարն Գեանճայու, զոր յետ օծման Յովհաննէս կաթուղիկոսին, ի ՌՄԺԲ թուոյն, և ի հոկտեմբերի ԺԴ գրեալ էին թէ՝ նա առանց քոյ կամաց և մեր հաւանութեան օծաւ, մեք զնա ոչ ընդունիմք, կաթուղիկոսն մեր Իսրայէլն է։ Եւ աղաչանօք խնդրեալ էին օգնել չքոյն և զօրացուցանել, և տալ զկոնդակ ի վերայ բոլոր երկրին, զի զՅօհաննէսն մի ընկալցին, այլ միայն չիքն լիցի կաթուղիկոս։ Եւ զայն գիրն չքոյն, զոր ընդ վերոյիշեալ թղթոյն գրեալ էր առ. սրբազան վեհն վասն նոյն բանից, և ուխտէր գնալ ի Շամախի, և դառնալ և գալ աստ ի գարնանն իշխանօք և ժողովրդօք, որպէս նոքա ես յիւրեանց թղթոյն խոստանալին։ Եւ զայն գիրն չքոյն, զոր ի ՌՄԺԳ թուոյն և ի մարտի ԻԳ, գրեալ էր առ. Լուսարար Եղիազար վարդապետն աղաչել ըզսրբազան վեհն, չառնել զխնդիրս կողմնացուց Յօհաննիսին, մինչև աստ ես փութով եկից։ Իսկ և զթուղթ Շամախու բանադրեցեալ Իսահակին, զոր ի պատասխանի յանդիմանական գրոյ սրբազան վեհին, գրեալ էր ի ՌՄԺԴ թուոյն, և ի մուտն նոյեմբերի։ Խոստովանելով զյանցանս իւրեանց, թէ վասն որոյ պատճառաց զչիք Իսրայէլն ընկալան, և զմահսար ետուն նմա։ Եւ՝ վերջապէս այս թէ՝ որ ինչ կամք տէրութեանդ է, մեք այնմ եմք հնազանդ, զի զո ոք ի յերկուցդ դու ընտրեսցես, որ ինքն ես յանձն առնուցու նստիլ յԱթոռն Գանձասար և զնա շինել, մեք նմա եմք հնազանդ։ Եւ աղաչանս բազում յոյժ, զի որպէս և ինքն հաճեսցէ, զերկպառակութիւնն բարձցէ ի միջոյ։ Նաև զայն գիրն ստահակին, զոր առ ինքն Յօհաննէս կաթուղիկոսն էր դրեալ մինչ էր նա ի սուրբ Աթոռոջս, ի ՌՄԺԴ թուոյն, խոստանալով նմա, թէ ի գալն աստ նուիրակի չիք Իսրայէլին, զնուիրակութիւն ոչ տացուք։ Մինչև զոր ինչ սրբազան վեհն հրամայեսցէ, այնպէս արասցուք, զոր ընդ թղթոյ սրբազան վեհին էր յղեալ աստ։ Իսկ և յղեաց զօրինակ ձեռագրին Գեանճեցւոց, զոր ի ՌՄԺԴ թուոյն և ի մուտն ամսոյն դեկտեմբերի, տուեալ էին Զաքարիա վարդապետին և Գէօրկի բէկին, զի ի գարնանն զչԻսրայէլն առեալ եկեսցեն աստ։ Յղեաց և զօրինակս ձեռագրաց Ներսէս և Սիմէօն կաթուղիկոսացն նախնեաց չքոյն։ Որք ամենեքեան էին Ժ։ (որք ամենեքեան ի ՌՄԺԳ, և ի ՌՄԺԴ թիւսն դոն յիշեցեալք։ Զորոց զտեղիսն միըստմիոջէ ցուցանելն լինէր երկարութիւն, բայց զվերոցուցեալ տեղին, այսինքն՝ զսեպտեմբերի ԻԸ-ըն առեալ ի վեր ընթացիր զամենն զտանես։) Եւ գրեաց թէ՝ ահա ութն ի դոցանէ Գեանճեցւոց ստութեան են խայտառակիչք, և բանք որք են ի ձերդ կողմանէ, ձերայնոց ստութեան են խայտառակիչք, եթէ յայդ գրեցելոց վերայ չ'մնալով զայլ և այլս մտածիցեն, և յԲս հետ կաղալցեն։ Զորս պատուիրեաց լաւապէս ընթեռնուլ, և առնուլ ի միտ։ Զի զինչ կերպ զէն և բռնեաց աստ պիտոյասցի զոն ի դոսա, որովք կարես յամենայնի զլեզուս ներհակախօսիցն քոց կապել։ Եւ յայս ներկայումս ի Թիֆլիզու առաջնորդ Զաքարիա վարդապետէն գիր եկն, որ դրեալ էր թէ՝ զբանադրանսն չիք Իսրայէլին յղեսցէ առ Յօհաննէս կաթուղիկոսն, (ըստ որում գրեցաւ առ նա պատուէր ի սեպտեմբերի ԻԳ)։ Վասն որոյ՝ ծանոյց սմա զայս։ Եւ ապա աստ, այլ զինչ արարից աւելի քան զայս, բաւական է զոր ինչ մինչև ցայժմ գրեցաք, և ոչ ես մաշեմք զկեանս մեր ընդ յեղյեղուկ բարուք վայրենեացդ։ Եւ պատուէր՝ զի թէ վերջապէս զչիքն չթողուցուն ի ձեռաց, և մինչև ոչ հաշտեսցին, իհարկէ ոչ լինի ինքեան հաստատութիւն և խաղաղութիւն։ Դու աստ ի տեղդ մի կամիցիս բնաւ՝ հաշտիլ, զի զայս քան սէրս մեր աստ յատելութիւն փոխարկես։ Այլ ասա թէ՝ գիր գրեցաք առ սրբազան վեհն, և երկուքս ես գնասցուք ի սուրբ Աթոռն, զի սրբազան վեհին ձեռամբն լիցի մեր հաշտութիւնն, և սա ես ի կապիցն արձակիցի։ Ապա թէ՝ երկուցս միամտութիւն և հանդարտութիւն լիցի։ Եւ թէ ոչ, զիս ես բանադրեալ կուտալք, որքան զա ապստամբէ յԷջմիածնայ, և ի ներքոյ բանադրանաց, ոչ ես կարեմ ընդ դմա հաշտիլ, և ոչ խաղաղութիւն հնար է լինել։ Պինդ կաց աստ յայդ։ Եթէ կամեսցին, խանի և երկրի գրովքն աղերսանօք առ և բեր, և թէ ոչ, այլ կամիցին յայդր հաշտեցուցանել, դու մի կամիցիս, այլ ելեալ ի սուրբ Աթոռս եկեսցես։ Թող զդա արասցեն իւրեանց կաթուղիկոս, և զոր ժառանգեալ է դա, և ինքեանք ժառանգեսցեն։ Իսկ և՝ ըստ որում ի յունիսի Ը և յայլ տեղիս գրեցաւ առ սա հարկ յղել զԱջ սրբոյն Գրիգորիսի, (զոր աստի դողացեալ տարեալ էին,) վասնորոյ՝ այժմ յղեալ էր, ի ձեռն

Բց թղթաբեր փալեկացն իւրոց։ Ու զի խոստացեալ էր սրբազան վեհն վերստին առ ինքն լզել վկայական կոնդակաւ (որպէս ասացեալ էր լանցելումն ամի ի յօդուածոսի Դ. Դաւիթ վարդապետին ասել նմա։) Վ.ասնորոյ այժմ գրեաց թէ՝ լզելոց եմ ըստ խոստմանս, բայց մինչև զկատարումն հրամանաց մերոց, զոցա հաւատարմութիւնն ձեր Աթոռոյդ չինութիւնն և զքոյ հաստատութիւն միապետաբար, և զնքոյն հալածումն ոչ տեսից, ոչ եմ լզելոց։ Զի որովհետև ասէ կամին վերստին զերկճզութիւնս արկանել, և Աթոռոյդ քակման պատճառ լինիլ, և զհրաման մեր առ ոտս արկանել, մեզ այլ զինչ պիտոյ է հոգալ և կամ զմասունս առաքել, այլ մանաւանդ՝ վասն արարելոցն ես փոշիմանել։ Զի խաբէին զմեզ ուրեմն ասէ, որք վասն քոյ և վասն չինութեան Աթոռոյդ գրէին առ մեզ զաղաչանս, և այժմ զայդ մոռածմունսդ առնեն։ Եւ զի լսէաք եթէ կամին Շամախեցիքն վասն իւրեանց չիք Սահակին՝ (որ լիշեցաւ ի սեպտեմբերի ԻԴ,) գրել զաղերս, և կամ Յոհաննէս կաթուղիկոսին գրեցուցանել առ սրբազան վեհն, զի գրեսցէ առ նա զգիր արձակման։ Վասնորոյ՝ գրեաց թէ՝ եթէ դու և եթէ նոքա, զոր ինչ գրիցէք վասն նորա, ի զուր է՝ զի չեմ լսելոց, մինչև նա ի սուրբ Աթոռս ոչ եկեսցէ։ Ընդ Բց փալեկաց նորին։ Նոյեմ. Ա։

Ժողովարարութեան թուղթ ես տուաւ քահանայի ումեմն Մկրտիչ անուամբ, որ էր յայս երկրէ, և ի գեղջէն Արտաղաքանու։ Որոյ եղբօրորդին ԺԵ ամաւ լառաջ քան զայս դերեցեալ՝ այժմ լալտնեցեալ էր ի մէջ Զարքեաղին, ԺԵ թումանով գնահատեալ։ Տուաւ այս ըստ խնդրոյ և վկայութեան Մելիք Սարգիսջանին։ Ի վերայ Ուռումելու և Դրիմու։ Եւ վասն ճանապարհական թոշակի ի վերայ Կիւմիշխանալու և Տրապիզոնու և շրջակայից նոցին ես մի ամ պայմանաւ։ Նոյեմ. Դ։

ՃԻԸ.

Առ Իբրահիմ էֆէնտին ի Կարս, մխիթարութիւն վասն վշտակրութեանցն:

Երբ Կարսեցիքն ընդդիմացան փաշային, և ի բերթն պաշարեալ անդէն մեռուցին՝ (որպէս ասացաւ ի մարտի Լ.։) Ապա արքայն Օսմանցւոց զմիւս ևս փաշայլ լղեաց անդ, և հրամայեաց նմա քննութիւն առնել ընդդիմացելոցն, և ըստ իւրաքանչիւրոց արժանեաց դատել։ Որև արար այնպէս, զոմանս աքսորելով, զոմանս սպանանելով, և յոմանց ըղձանր տուգանս առնլով։ Եւ՝ յայսմանէ հասին ամենայն ուրեք վիշտք և վտանգք։ Յորմէ և Իբրահիմ էֆէնտուն հասին լոլով վիշտք, որ երևելի էր ի մէջ նոցին։ Վ.ասնորոյ գրեաց սրբազան վեհն առ նա զմխիթարական թուղթ մի վասն վշտացն։ Նա և յանձնարարութիւն վասն Դօշավանից և Մինաս վարդապետին, որ լիշեցաւ ի սեպտեմբերի ԻԹ. ի ձեռն Մինաս վարդապետի տղալին։ Նոյեմ. Է։

ՃԻԹ.

Առ Մարգար աղայն մխիթարութիւն, եւ առ Տէր Պետրոսն ի Կարին վասն փօլիցայի։

Մխիթարական թուղթ ևս գրեաց սրբազանն ի Բալաղիտու Մարգար աղայն, (որպէս և ի հոկտեմբերի ԺԱ,) վասն մահուան կնոջն, և ոմանց ընտանեաց նորին։ Թուղթ մի ևս առ Տէր Վահանն վասն մահուան դստերացն, և փեսայլին մխիթարութիւն։ Թուղթ մի ևս ի Կարին առ Տէր Պետրոսն, հարկ՝ (որպէս և ի հոկտեմբերի ԻԸ,) պատրաստել տալ անդ զգրամս (Ե) Մելքոնին, Մուրտիկեանց Առաքելին, Սարխօշին, Պապիկին, և Նսնուսեցի մահտեսի Յովհաննիսին։ Որ էր վասն հաճ զնացօղ տաճկաց, որ լինիցի ասէ զարիմհազուպ ոսկի։ Առ Տէր Վահանն լղեցաւ լղել առ նա։ Նոյեմ. ԺԵ։

ՃԼ.

Փօլիցայ արար սրբազանն ի Կարին ի վերայ Մելքոնին ընդ ոմանց ուղտս վաճառողաց։

Խանն էառ զուղտս։ Եւ վաճառօղքն խնդրէին զգին նոցին (9) տալ օսմանցու դրամս։ Եւ նա գրեաց սրբազան վեհին տալ, (զի մեզ ոչ

գտանի ասէ,) և ի հաշիւ՝ տալեացն քոց ար-կանելոց եմք ասէ, որ ի կողմանէ դեղջին։ Զի յայսմ ամի սրբազան վեհն զգիւղս զայս էառ ի խանէն իճարալով։ (Զոր ի դէպ տեղւոջ ա-սելոց եմ.) և սրբազան վեհին աստ ոչ տու-եալ՝ փոլիցայ արար ի Կարին ի վերայ Մել-քոնին, և գրեալ զզապզ մի և զբարաթագիր, ետ ուխտ ծախօղ տաճկին, որ էր Ղալսարցի, անունն Ալի աղայ, Դաւոր աղայի եկեան։ Զի գնացեալ ի Կարին առցէ ի Մելքոնէն։ Եւ նմա հարկ գրեցաւ, զի յարդեանցն սրբոյ Ա-թոռոյս որ առ ինքն էր, Օսմանցու սպիտակ և սաղ դրամ տացէ նմա։ Որ եւ աստի ի նոյեմ. ԺԳ։

ՃԼԸ

Առ Հերակլ Արքայն եւ յորդին, վասն ժանտամահին երեւելոյ։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ. ար-քայն Հերակլ ի պատասխանի թղթոյն, որ վասն երեւեալ ժանտամահին ի մէջ Բօռչալու-ին, որ նարդեանս լեալ էր, խնդրեալ էր զսրբոյ Գեղարդեան խաչալուան և մատնա-հարն յղել, զոր և յղեաց։ Եւ զի շնորհակալ Արքայն վասն գրելոյ սրբազան վեհին շնորհա-ւորութիւն վասն որդեծնութեան որդւոյն իւրոյ Գէօրկւոյն, (որպէս ասացաւ ի սեպտեմ-բերի ԻԴ,) և իւրեան ես ծնանելոց էր, գրեաց թէ՝ բարեաւ՝ և զայդ տեսցուք, և յայնժամ ևս հանդերձ առատաձիր օրհնութեամբ զշնոր-հաւորութիւն գրեսցուք։ Իսկ և գրեաց ըղ-թուղթ առ. որդի Արքայլին Գէօրկի Միրզային։ Որ ի տեղապահէն զգինի էր խնդրեալ։ Եւ սրբազան վեհն Բ բեռն յղել ետ, և զթուղ-թըս այնր աղագաւ գրեաց։ Փուսուլայ մի ես գրեաց առ սա վասն չիք Իսրայէլին՝ (որ ի նոյեմբերի Ա յիշեցաւ) թէ նա՝ որ յայսչափ ժամանակս զչարիսն յաճախեաց, փոքր ինչ յայդրուստ ի ձէնջ ունէր գթե, և առաւելա-պէս ի չարիսն յամառէր։ Այլ այժմ յայդրուստ ես թեախուզեալ, տակաւին ոչ դիջանի ի բիրտ կամացն, այլ զչարէ և ես սկսանի յու-զիլ։ Զի այժմ գնացեալ ընդ երկրականացն առ որդի Փանահ խանին, կամի ի ձեռն միջնոր-դաց զնա յիւր կողմն ձգել, և Յօհաննէս կա-թողիկոսին և Գանձասարայ զվնաս տալ։ Եւ խնդրեաց՝ զի թէ ինքն և թէ Աստուածազօր Արքայն, գրեսցեն առ Իբրահիմ Խալիլ խանն՝ զի մի երբեք տացէ նմա, և Յօհաննէս կաթու-ղիկոսին Գանձասարայ՝ լաւապէս խնամս տար-ցէ։ Գրեաց և զթուղթ առ. Անտօն կաթողի-կոսն Վրաց ի պատասխանի թղթոյն, և յղեաց ըստ խնդրոյն զՄխիթարի բառարան մի նմա։ Եւ զթուղթ առ Միրչքեար աղայն գրեաց, շնոր-հակալութիւն և օրհնութիւն նմին, որ զԱջա-համբոյր, Սեզանազին և Պաշտօնից էր յղեալ ի ձեռն Ազալօյին, վասն սրբազան վեհին և միաբանից, յաղագս հոգւոյ կնոջն, և իւրն իսկ ի հողեբաժին։ Քանզի էր ի սաստիկ հի-ւանդութեան։ Ընդ Ազալօյին յղեցան թուղթքս ի նոյեմ. Ի։

ՃԼԹ.

Առ Հերակլ արքայն, աղերս վասն Բօռ-չալուի միոյ շնորհել զվնասն։

Հրամայեալ էր Արքայն Հերակլ Բօռչա-լուացն՝ որք էին ի Ցախճալաղի ով ոք ի յայլ երկրաց զցրուեալ Բօռչալուս բերցէ յիշ-խանութիւն իւր, տացէ զնա ի ծառայութիւն բերողին։ Եւ մի ոմն ի նոցանէ գնացեալ բե-րեալ էր ի Կարսայ զտունս քանիս, որոց Բէքն լեալ էին ումեմն գլխաւորի նոցա զո-րըս խնդրեալ էր ի բերողէն տալ ինքեան։ Եւ՝ նա ի խոստումն Արքայլին ելով վստահ, իբրև ոչ էր տուեալ, ոխացեալ էր ընդ նմա խնդրողն։ Եւ զի մահ գոյր ի կողմանս Կար-սայ՝ (որպէս ի սեպտեմբերի ԻԷ ասացաւ։) վասնորոյ ընդ տնաբերին եկեալ էր նշանն ի մէջ Բօռչալուացն, և երեէր անդ՝ (որպէս ի վերոյ յամսոյս Ի ասացաւ։) Ուստի՝ ոխակալն զայս պատճառ առեալ, յոտին կանգնեցու-ցեալ էր զԲօռչալուսն ամենայն, որք խնդրեալ էին Արքայէն սպանանել զնա, զընտանիսն ի միջոյ իւրեանց վտարել, և զտունն այրել, զի ցաւն բարձցի։ Եւ Արքայն հրամայեալ էր։ Իսկ նա փախստեամբ անկեալ աստ խնդրեաց ի սրբազանէն զթուղթ մի աղերսանաց առ Արքայն զի ներեսցէ։ Եւ սրբազան վեհն ետ։ Ի նոյեմ. ԻԲ։

ՃԼԳ․

Առ Վանեցիսն, որք յանձն էին առեալ զՔէսիմ[1] անունն բառնալ։

Պաղտասար վարդապետն՝ որ ի սեպտեմբերի ԻԶ առաքեցաւ ի նուիրակութիւն Վանայ՝ (որ և ի հոկտեմբերի ԺԶ լիշեցաւ։) իբրև հասեալ էր ի Վան, և ընթերցեալ զկոնդակն, և զհրաման սրբազան վեհին ծանուցեալ նոցա, նոքա յօժարութեամբ յանձն էին առեալ բառնալ զՔէսիմ անունն, և գլուխ տալ զնուիրակութիւնն։ Եւ գրեալ էին այսր աղաչաւ առ սրբազան վեհն զթուղթ, և խնդրեալ էին զառաջին նուիրակութիւնն մի խնդրել։ Վասնորոյ գրեաց սրբազան վեհն ի պատասխանի թղթոց նոցա զթուղթ մի, և որպէս նոքա հնազանդելով հրամանաց իւրոց բարձեալ էին զՔէսիմ անունն, և յանձն առեալ գլուխ տալ զնուիրակութիւնն, (զորս և շնորհակալեցաւ) ինքն ևս լուաւ աղաչանաց նոցին, և զառաջին նուիրակութիւնն բաշխեաց։ Եւ՝ պատուիրեաց՝ զի յայսմհետէ մի ևս զՔեսիմ անունն մտաբերիցեն։ Գրեաց թուղթ առ Առաջնորդ Գրիգոր վարդապետն։ Ըստ մտաց հասարակ գրոյն։ Սմա ևս պատուէր՝ մնալ ի վերայ նոյն կանոնին, և ոչ ևս միւսանգամ զանունն Քէսիմ բերել ի միտ։ Եւ թէ՝ որքան յորդորող պարտիս լինիլ ժողովրդեանն ի յառատ արդիւնաւորութիւնս ասէ, զի առաջին նուիրակութեան վնասն ելցէ, այդ ևս ասէ ի քոյ հարազատութենդ է տեսանել։ Որ թէ ոչ ըստ բոլորին, գոնեայ ըստ կիսոյն և ըստ մասին ելցէ։ Գրեաց և զողջոյն մահտեսի Թօմային, մահտեսի Յօհաննիսին, և մահտեսի Մինասին, և պատուիրեաց սմա նոցա ևս ասել զնոյն պատուէրսն։ Օրինակն սոցա է ի յերեսն ՄՂԹ։ Թուղթ ևս առ Իսաղ աղային, ըստ նոցին դարձեալ վասն գլուխ տալոյ նուիրակութեան, և վասն Պաղտասար վարդապետին շնորհակալութիւն և սէր։ ԺԱ թուղթք ևս առ ԺԱ գանձապետս ԺԱ եկեղեցեացն Վանայ վասն գանձանակական արդեանցն, զորս տուեալ էին Պաղդասար վարդապետին շնորհակալութիւն և օրհնութիւն։ Այսինքն, առ Արարուց սուրբ Աստուածածին եկեղեցւոյ գանձապետ պարոն Աւէտն։ (ՀԱ) առ սուրբ Յակոբ եկեղեցւոյ գանձապետ պարոն Վարդանն, (Է) առ Հուկավանից սուրբ Աստուածածին եկեղեցւոյ գանձապետ Տէր Պաղտասարն և Տէր Յակոբն։ (ԺԱ) Առ սուրբ Վարդան եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Թօմայն, (Ի) Առ Տիրամայր եկեղեցւոյ՝ Գանձապետ տիրացու Յօհաննէսն, (ԻԷ) Առ սուրբ Առաքել եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Սիմէոնն, (ԺԸ) Առ սուրբ Պօղոս եկեղեցւոյ գանձապետ պարոն Պետրոսն, (ԺԹ) առ սուրբ Սահակ եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Յովհաննէսն (Ժ) առ սուրբ Նշանի եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Պօղոսն, (Լ) առ սուրբ Ծիրանաւոր եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Աստուածատուրն, (Ը) և առ Անկուսներաց սուրբ Աստուածածնի եկեղեցւոյ գանձապետ մահտեսի Սարուխանն, (ԺԱ) զորս և վերստին գանձապետ կարգեաց և պատուիրեաց, զի առանց իւրոյ հրամանին և կնքոյն, ոչ ումեք տացեն զփարայ մի յարդեանց գանձանակացն, մինչ նուիրակ ոչ իցէ անդ ի սրբոյ Աթոռոյս։ Զի յառաջ քան զայս տուեալ էին զգանձանակադրամսն Դանիէլ վարդապետին՝ զոր Յօնան վարդապետն փոխանակ իւր առաքեալ էր անդ նուիրակ անուամբ, (որպէս ի մայիսի Ը ասացաւ։) Գրեաց ևս սրբազան վեհն զթուղթ առ Բաղիշու գանձապետ մհ. Պապայն և մհ. Սիմէոնն, շնորհակալութիւն վասն հարազատութեանցն, կարգելով վերստին գանձապետ սրբոյ Աթոռոյս, որպէս և Բաղտասար վարդապետն կարգեալ էր յառաջին նուիրակութեան։ Եւ զի՝ վերոյիշեալ Դանիէլ վարդապետն ի սոցանէ ևս էր առեալ զգանձանակադրամ, վասնորոյ՝ անորոշաբար գրեաց նոցա թէ՝ զարդիւնսն գանձանակին այլոց էք տուեալ, և ոչ գիտացաք թէ ում և որոյ հրամանաւ։ Ուստի՝ ասէ՝ ի գալն յայդր Բաղտասար վարդապետին, յօրէ յանմանէ յորում կարգեցեալ էք գանձապետ տաջիք նմա զհաշիւն ձեր, զի և նա գրեսցէ մեզ, և մեք յայնժամ գրեսցուք առ ձեզ զօրհնութեան և շնորհակալութեան թուղթս։ Իսկ և այս Դանիէլ վարդապետս նստեալ էր ինքնագլուխ առաջնորդ ի միում վանիցն Բաղիշու հրամանաւ տեղւոյ բէկին, վասնորոյ գրեաց սոցա թէ՝ դուք գիտէք զի առաջնորդքն քաղաքիդ ձերոյ ի մէնջ կարգին, իսկ այժմ Դանիէլ Սեագլուխ ումն լսեմք թէ առաջնորդ է նստեալ ի տեղդ, ում հրամանաւ է։ Եւ գանձանակացն սրբոյ Աթոռոյս ևս լինի ձեռնամուխ, մեք թէպէտ ոչ հաւատամք ասէ, այլ

գուք ասասջիք նմա, թէ կամի զառաջնորդութիւն առնել, և կամեցօղք զոն, թող մահսարաւ ի սուրբ Աթոռս եկեսցէ, և առեալ ի մէնջ զԱռաջնորդութիւն, դարձցի.Իսկ թէ ասէ այսմ ոչ լուիցէ, ապա բանադրեցեալ է և լուծեալ ի կարգէն։ Փութով ասէ ծանուսջիք մեզ զորպէս լինիլն։ Թուղթ մի ես առ Զօպան աղային գրեաց, որ էր պարոն Ապազու, ի պատասխանի թղթոյն, զոր քան զայս յառաջ գրեալ էր առ սրբազան վեհն։ Շնորհակալութիւն վասն զԲազտասար վարդապետն չ․․հելոյն ի գնալն ի Վան։ Եւ վասն խոստմանն, որ խոստացեալ էր, զի երբ Ջրաղացաքարինքն սրբոյ Աթոռոյս եկեսցեն յերկիր իւր, ինքն յղեսցէ աստ փութով։ (Զորոց ասացեալ է ի սեպտեմբերի ԻԶ։) Եւ խնդիր, զի ըստ խոստմանն արասցէ։ Թուղթ մի ես առ Պաղտասար վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն, վասն ամենայն վերոյիշեալ թղթոցս, զորս ինքն իսկ խնդրեալ էր, թէ ահա յղեցաք։ Զորս բաց յղեաց առ նա, զի ընթերցեալ իմասցի նախ ինքն, և ապա տացէ յիւրաքանչիւր տեարսն։ Եւ միայն Առաջնորդի գիրն զմոեալ յղեցաւ։ Իսկ Զօպան աղայինն, տուաւ սորին սպասաւոր Սահակին, որ էր թղթաբերն, զի յանցանելն ընդ երկիր նորին, տացէ նմա։ Նլ ի նոյեմ. ԻԳ։

ՃԼԴ.

Փոլիսցայս արար սրբազան վեհն ի Կարին, ընդ հաճ զնացող տաճկաց այս երկրացւոց։

Որպէս ի նոյեմբերի ԺԷ. և ի հոկտեմբերի ԻԸ ասացաւ, թէ տաճիկք են գնալոց ի Քեաբայն իւրեանց, (որոց աղագաւ՝ և դրեաց սրբազան վեհն ի Կարին պատրաստել ըղդրամս) Ահա այժմ երթալին նոքա, որք էին ոգիք Դ առաջիկայք և հարազատք խանին։ Որոց միոյն անունն էր Ղ․ոլիպ զ․․լի բէկ, որ էր եղբայր Խամիխան բէկին։ Երկրորդինն Միրզայ Ասկեար, որ էր գրիչ և վերակացու հարկաց, և ամենայն առից դիւանական։ Երրորդինն՝ Ռ․ահիմ բէկ, որ էր Նասուլբաշի խանին։ Եւ Չորրորդինն Ապտուլլայ բէկ, որ էր ախոռապետ խանին։ Եւ չորքս այսոքիկ աղաչեցին զսրբազան վեհն՝ (որոց աղագաւ խանն ևս գրեաց քանիցս դագերսանաց թուղթ։) Որպէս զի աստ զդրամս տացեն, և սրբազան վեհն կամ զփոխանակն ոսկի տացէ աստ, (որ յԷսմանցւոց երկիրն ծախիցի,) և կամ փոլիս արասցէ ի Կարին, զի գնացեալ անդ առցեն։ Եւ ի չատ ստիպելն նոցա և խանին բազմօք աղերսանօք, յօժարեցաւ սրբազան վեհն փօլիս առնել ի Կարին, (որպէս ասացեալ է։) Վասնորոյ՝ էառ աստ ի նոցանէ սըրբազան վեհն զդրամս, այսինքն Ղալիպզուլի բէկէն, (ԱՃԾ) ի Միրզայ Ասկեարէն, (5) ի Ռահիմբէկէն, (9) և ի յԱպտուլլայ բէկէն։ (ԱԳԾ) Զորս և փօլիս արար ի Կարին։ ԶՂալիպզուլի բէկլինն ի վերայ Մուրտիկեանց խօջայ Առաքելին, զի տացէ նմա յարդեանց Կարնոյ Նուիրակ Սարգիս վարդապետին՝ որ էր առ ինքն, (որպէս ասացեալ է ի յունիսի ԻԱ,) զՄիրզայ Ասկեարինն և զՌ․ահիմ բէկինն, ի վերայ Նոնուսեցի մահտեսի Յովհաննիսին և իւր եղբայր մահտեսի Սարգսին, զի տացեն յարդեանց Եւդոկիոյ Նուիրակ Եսայի վարդապետին՝ որ էր առ ինքեանս, (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԺԷ, և յիշեցաւ ևս ի վերոյ։) Որ էր նոյն չափ իսկ, զոր այս երկուքս ետուն աստ սրբազան վեհին։ Իսկ զԱրդուլլայ բէկինն, զմասն ինչ արար ի վերայ Ազուլեցի պարոն Սարխօշին, զի գոյր առ նա Յնացորդ ինչ ի փօլիցայն Ղուկաս վարդապետին ԳԾ (որպէս ցուցաւ ի սեպտեմբերի ԺԹ.) և զմնացեալն արար ի վերայ Պապիկ աղային Արապկերցւոյ՝ զի տացէ նմա զհասեալն առ ինքն ի Կարնոյ Նուիրակ Սարգիս վարդապետէն, (Ա) (որպէս ասացեալ է ի յունիսի ԻԱ։) Որոց աղագաւ գրեաց սրբազան վեհըն ՁՆ զապգս, Զ օր վատալով, և ետ զերկուսն Ապտուլլայ բէկին, ի վերայ Սարխօշին և Պապիկին։ Եւ զմինն Ռահիմ բէկին՝ և զմինն Միրզայ Ասկեարին, ի վերայ մահտեսի Յովհաննիսին, իսկ զմինն Ղալիպզուլի բէկին, ի վերայ պարոն Առաքելին։ Բայց վասն Միրզայ Ասկեարին և Ռահիմ բէկին, Ա Բարաթագիր միայն գրեաց ի վերայ մահտեսի Յովաննիսին, որովհետև նա միայն էր տալոց զդրամն նոցա։ Եւ վասն Արդուլլայ բէկին գրեաց զբարաթագիրս, մինն ի վերայ Սարխօշին, և մինն

ի վերայ Պապիկ աղալին։ Իսկ վասն Ղալիպղուլի բէկին, բարաթագիր գրեցաւ ի վերայ պարոն Առաքելին։ Եւ զայս վերոյիշեալ Դ բարաթագիրս ոչ ետ նոցա, այլ գրեալ զթուղթ առ Կարնոյ առաջնորդ Պաղտասար վարդապետն, և առ Տէր Պետրոսն, յղեաց զայսոսիկ առ նոսա, և կարգեաց վերակացու և հոգացօղ բանիցս այսոցիկ, զի ցուցցեն զբարաթագրեանսն դրամ տուողացն, և զդրամսն առեալ ի նոցանէ տաճկացն տացեն, և զզապզսն առեալ ի ձեռաց նոցա, ընդ բարաթագրեանցն տացեն դրամ տուողացն։ Որք լինիցին ասէ ընդ ամէնն լաւ՝ ոսկի․ որպէս ի մէջ զապզիցն և բարաթագրեանցն ես գրեաց։ Զի աստ զարիմահպուպ ոսկի պայմանեցաւ ընդ նոսա (որպէս և յամսոյս ԺԵ գրեցաւ Տէր Պետրոսին զզարիմահպուպ [*]) ոսկիս հոգալ։ Ուստի և հարկեաց զնոսա, զի զլաւ դրամ առեալ տացեն, և չուտով ճանապարհեսցեն։ Զի մի ասէ մեզ ամօթ և կամ վնաս լինիցի։ Զի երևելիք են ասէ եկօղքդ, մանաւանդ՝ զի ի վաղուց հետէ դրամն ի վերայ դոցա գոլ ասէ, պարտին չուտով հոգալ և տալ։ Եւ թէպէտ ասէ ոչ էր պարտ ի ձեռն տաճկի առնել զայս, այլ յուժ ըղմեզ հարկեցին, և յամենայն ժամ աստ այսպիսի դրամ տուօղ ոչ գտանի, և մեզ ներկայապէս պիտոյ էր դրամն։ Բայց ի բարեադրոջս անորոշաբար գրեաց զպատուէր, իսկ անորոշաբար զփուսուլայ մի գրեաց առ նոսա, (զոր վաճառականք զուքայ կոչեն,) յորում յատկացոյց զամենայն որպիսութիւնս վերոասացելոցն, թէ մեք զինչ առաք ի տաճկացն աստ, ի Կարին յումմէ՝ և որքան դրամ պարտի հասանիլ նոցա։ Զորս պատուիրեաց կրկին պատուիրմամբ հոգալ՝ և զտաճիկսն փութով ճանապարհել։ Իսկ և որովհետև՝ յառաջ քան զայս գրեաց սրբազան վեհն Մինաս վարդապետին, զի ի զալն ի Կարին առցէ զամենայն դրամսն որք անդ գոն, և բերցէ ընդ իւր, (որպէս ասացաւ ի յունիսի ԻԱ,) վասնորոյ՝ գրեաց այժմ Տէր Պետրոսին, զի թէ տակաւին ոչ իցէ եկեալ Մինաս վարդապետն և առեալ զդրամսն, այսպէս հոգասցեն, որպէս ասացաւ ի վերոյ։ Իսկ թէ նա եկեալ և առեալ իցէ զդրամսն, ապա՝ կամ ի նոյն արանցն և կամ յայլոց՝ զդրամս հոգացեալ տաճկացն տացեն և ճանապարհեսցեն և յետոյ ինքեան ծանուսցեն, զի մեք որպէս կամիցին ասէ վճարելոց եմք։ Զայս հանդերձ Դ բարաթագրովն եղ ի թղթոջ Պաղտասար վարդապետին և Տէր Պետրոսին, և յղեաց առ նոսա ընդ Ռահիմ բէկին։ Եւ թէպէտ ի սոսա նոյեմբերի ԻԵ գրեցաւ, այլ ի մէջ զապզիցն ԻԴ գրեցաւ, զի տաճիկքն ի սոյն օրս եկին աստ և գնացին։ Ի նոյեմ․ ԻԴ։

ՃԼԵ․

Յղելն սրբազան վեհին զՏէր Սիմօնն ի Ղօշավանք, վերակացու իրաց սրբոյ Աթոռոյ և թեւակից Մինաս պետին:

Էրէց դեղջն Ալիբէկլուի Տէր Սիմօնն, որովհետև էր այրի եկեալ ի սուրբ Աթոռս էառ վեղար, և եղև Աբեղայ։ Եւ յետ աւուրց, որովհետև ի Ղօշավանք ոչ գոյր միաբան, և Մինաս վարդապետն, (որ յիշեցաւ յամսոյս Է․) բազմիցս խնդրէր ի սրբազան վեհէն զկարգաւոր ոք, վասնորոյ յղեաց անդ զՏէր Սիմօնն ի միաբանութիւն Վանիցն, և յատկապէս ի վերակացութիւն սրբոյ Աթոռոյս ցանելեացն, և արօրին։ Վասնորոյ և զթուղթ մի գրեաց առ Մինաս վարդապետն, յանձնելով զնա նմա։ Եհարց և զդրոյ Իբրահիմ էֆէնտուն, զոր յամսոյս Է յղեաց առ սա, զի թէ տուեալ իցէ նմա, և նա զինչ իցէ ասացեալ, ծանուսցէ․ եհարց և զորպիսութեանց մահտեսի Յօհաննին որ ի սեպտեմբերի ԻԹ յիշեցաւ։) և զայլ մանր անհարկաւոր բանս։ Փուսուլայ ևս ետ սմա, յորում գրեցաւ որքանութիւն անասնոց և այլ իրացն սրբոյ Աթոռոյս որք գոն անդ, նոյնպէս և զվանիցն, զի և սա գիտացեալ լիցի զայնս․ և թեւակցեալ ընդ Մինաս վարդապետին ի միասին կառավարեսցեն։ Նոյեմբերի ԻԵ։

ՃԼԶ․

Յղելն սրբազան վեհին Ջզնուրեանն Հաշտարխանու Յովհաննէս վարդապետն զալ յետս ի սուրբ Աթոռս, որովհետև ոչ եղև անդ ի մէջ նորա և ժողովր-

ղեան սէր եւ խաղաղութիւն: Իսկ եւ բանադրելն զչիք Սողոմոնն չԻսրայէլեան, եւ արձակելն զբանադրեալն ի նմանէ զպարոն Ամբակումն: Եւ զօրինակ բանադրանաց չիք Իսրայէլին յղելն ի Հաշտարխան եւ ի Ղզլար: Եւ յոյժ բազում բանք ընդ սոցին:

Յետ առնելոյն Դաւիթ վարդապետին որպէս թէ զհաշտութիւն ի մէջ ժողովրդեանն Հաշտարխանու և սրբոյ Աթոռոյս Նուիրակ Յովհաննէս վարդապետին, և գնալոյն ի Մօսկով, և գրելոյն առ սրբազան վեհն զմիամտութիւն, (որոյ աղագաւ և սրբազան վեհն առ ժողովուրդսն Հաշտարխանու զշնորհակալութիւն, յորդորելով պատուիրմամբ մնալ ի նոյն սէր և հաշտութիւն,) (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԻԹ։) ապա՝ նորապէս ազդումն իմն դիւական, և բազմադիմի վէճք և խռովութիւնք յուզեցեալք էին ի մէջ նոցա դեռ քան զառաջինսն։ Որք ամենեքեան էին ի զուր, և անօգուտք, և մանաւանդ՝ յառաջացեալք ի յոչինչ պատճառաց։ Որոց գլխաւորն էր այս, զի երէց ումն անկեալ էր ի մեղս ընդ կնոջ ուրուք, և այր կնոջն գանգատեալ էր Առաջնորդին, և նա առ ի չլինել նախատինք ազգիս մերոյ ի մէջ օտարազգէիցն, և կամ որով դիտմամբ և իցէ, կամեցեալ էր ծածկել զյանցանսն, վասն որոյ արդարացուցեալ էր զքահանայն ի մէջ ատենի։ Բայց այր կնոջն այսմ ոչ հաւանեալ գնացեալ գանգատեալ էր Նուիրակին, և նա պնդապէս կացեալ էր յոտին, և կամեցեալ էր յայտնապէս խայտառակել զքահանայն։ Իսկ առաջնորդն . . . ի յիշխանացն զայս ոչ կամելով՝ անկեալ էր ի մէջ նոցա վէճ և կռիւ մեծ։ Մինչև վերջապէս առ ռուսաց եպիսկոպոսն ևս էր անկեալ այս դատաստան, և տակաւին չէր վերջացեալ։ Արդ՝ թէ վասն այսր, և թէ վասն այլ ևս այսպիսեաց ոչինչ բանից՝ (զորս ոչ երկարեմ աստէն ի ձանձրութիւն լսողաց և վասն անօգտութեանց նոցին, քանզի և ոչ սրբազան վեհն կալաւ զայսցանէ զփոյթ ի դիրսն, զորս գրեաց այժմ առ նոսա, և ոչ զմիոյն ի նոցանէ։) յոյժ մեծացեալ էր ի նոսա վէճն։ Վասն որոյ գրեալ էին առ սրբազան վեհն գլով գրեանս, յերկուց կողմանցն ևս, ի Նուիրակէն և ի Բարդուղէն, և յԱռաջնորդէն և հասարակ ժողովրդէն։ Եւ Նուիրակն որպէս զմեծ իմն ինչ համարելով զայս, զսպասաւորն իւր զՍարգիս յղեալ էր թղթովքս, այնու մտօք, զի բերանով լաւապէս հասկացուսցէ զպատճառ և որպիսութիւն կռուոցն սրբազան վեհին, և զպատասխանիս թղթոցն առեալ փութով դարձցի առ ինքն, զի և ինքն զմարտ եղեալ այնոքիւք ընդ ներհակացն իւրոց, յաղթեսցէ զնոսա։ Իսկ թուղթքն Առաջնորդին և կողմնացոց նորին, ի ձեռն այլոյ ուրուք եկեալ մինչև ցԹիֆլիզ, անդ տուեալ էին վերոյիշեալ Սարգսին, որ ընդ թղթոց Նուիրակին բերեալ ի միասին ի սուրբ Աթոռս առ սրբազան վեհն հասոյց։ Բայց յառաջ քան զգնալն այս թղթոցս ի Դաւիթ վարդապետէն, ի ձեռն Թիֆլիզու առաջնորդ Զաքարիա վարդապետին առ սրբազան վեհն էհաս թուղթ, զորոյ լիով որպէսն յետոյ գրեցից· բայց չիք Սողոմոնն (որոյ աղագաւ գրեաց սրբազան վեհն զբանադրանս ի հոկտեմբերի ԻԹ ի թուղթն Հաշտարխանու,) յետ առնելոյն ի Հաշտարխան զմեծագոյն լրբութիւնս ընդդէմ սրբոյ Աթոռոյս (որպէս ասացեալ է,) ելեալ անտի եկեալ էր ի Ղզլար, անդ ևս արարեալ էր ընդդէմ սրբոյ Աթոռոյս զլրբութիւնս, և յատեան եկեղեցւոյն խօսեցեալ զբազում հայհոյութիւնս և զչարութիւնս։ Որոյ ընդդէմ կացեալ Թիֆլիզեցի պարոն Ամբակումին, (որ ի ռուսաց կացուցեալ էր պօտպօլկովնիկ, այսինքն փոքր հազարապետ։) մեծաւ անարգանօք արտաքսեալ էր զնա յեկեղեցւոյն, և ի քաղաքէն ևս վարեալ։ Եւ ի հասանելն չքոյն այնմիկ ի Դարբանդ, բանադրեալ էր անդուստ զպարոն Ամբակումն, Զոր Դաւիթ վարդապետն ծանուցեալ էր սրբազան վեհին, և խնդրեալ էր գրել առ նա զօրհնութեան և զմիամտական թուղթ, և արձակել զնա ի բանադրանաց չքոյն։ Եւ՝ յետոյ ընդ թղթոցն Հաշտարխանու, յԱմբակումէն, ևս թուղթ ժամանեաց առ սրբազան վեհն, որ զբանադրանսն չիք Սողոմոնին զոր դրեալ էր առ ինքն, եղեալ ի մէջ թղթոյն յղեալ էր առ սրբազան վեհն և զիրաւունս խնդրեալ. Վասն որոյ ի յետկոյս բանադրանացն, գրեաց և սրբազան վեհն զբանադրանս ի վերայ չիք Սողոմոնին, խառնելով և զչիք Իսրայէլին կրկնապէս ընդ նմա։ Եւ զայս դնելով

պատճառ, նախապէս թէ՝ դու յիմում վիճակի ընդ Քեր բանադրեսս։ Երկրորդ՝ թէ՝ դու կամեցեալ ես զանուն մեր բառնալ յեկեղեցւոյն, և զանուն չիք առաքչին քոյ յիշել, (զոր արարեալ էր յիրաւի,) ուստի՝ զքեզ արտաքսեալ են յեկեղեցւոյն, այսու զինչ են մեղուցեալ նոքա, որ ի զուր բանադրեալ ես։ Երրորդ թէ՝ դու և չիք առաքիչն քոյ բանադրեցեալք էք ի մինջ, և լուծեցեալք ի դողունի կարգաց ձերոց, դուք մեռեալք, զայլս որպէս կարէք մեռուցանել։ Եւ առ այսոքիւք անէծք նմին խիստ։ Այսպէս գրեալ ի յետկոյս բանադրանացն, կնքեաց ես մեծ կնքովն, Փրկչականաւ, և յղեաց առ պարոն Ամբակումն յղել առ չիք Սողոմոնն։ Նաև՝ զօրինակն բանադրանաց չիք Իսրայէլին ես յղեաց առ սա՝ (որ յիշեցեալ զոյ յ" մսոյս Ա,) ընթեռնուլ տալ անդ, և յղել ի Հաշտարխան զի անդ ես ընթերցցին։ Վասնորոյ՝ և զթուղթ մի ես գրեաց առ սա այսց աղագաւ, և արձակեաց ես ի բանադրանացն, և միամտեցոյց և օրհնեաց, և հրամայեաց անխիղճ լինել ի բանադրանաց չքոյն, և յառաջ քան զայս ի հոկտեմբերի ԻԹ ես բանադրելն զչիքն, ծանոյց սմա, և գրեաց ես թէ՝ նոքա՝ որք ինքեանք անիծեալք իսկ են, զիարդ համարին անծէքն նոցին անէծք, և օրհնութիւնն օրհնութիւն։ Եւ զի զաձապետն սրբոյ Աթոռոյս որ ի Ղզլար՝ վախճանեալ էր, վասնորոյ՝ կարգեաց զսա զանձապետ և վէքիլ սրբոյ Աթոռոյս, և գրեաց սմա զլոլով պատուէրս այսց աղագաւ, որ ինչ պատշաճ էր։ Թուղթ ես գրեաց առ ժողովուրդսն Ղզլարու, շնորհակալութիւն և օրհնութիւն նոցին վասն առ սուրբ Աթոռս հարազատութեանցն և վանելոյն ի միջոյ իւրեանց զչիք Սողոմոնն։ Եւ՝ վասն զանձապետութեան և վէքիլութեան պարոն Ամբակումին ես գրեաց։ Եւ զբանադրելն զչիք Իսրայէլն և զչիք Սողոմոնն, և որոց աղագաւ որ ինչ առ Ամբակումն գրեցաւ (որպէս ի վերոյ ցուցաւ,) երկարապէսն առ ժողովուրդսն գրեցաւ։ Թուղթ ես առ Դաւիթ վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն։ Որ գնացեալ հանդիպեալ էր Թագաւորին Ռուսաց, սրբազան վեհին թարգմանեցուցեալ՝ հանդերձ ընծայիւքն մատուցեալ էր նմա։ Եւ զբազում պատիւս և մեծարանս ընկալեալ էր ի նմանէ։ Եւ գրէր թէ՝ մերձ է, զի պատասխանի գրոյն առեալ ելից աստի։ Առ կարի լոյժ ուրախացաւ սրբազան վեհն։ Բայց զի՝ բաց ի յայսմանէ առաջադրութենէ այլ ոչինչ զսյր Դաւիթ վարդապետին յատկապէս հոգալի անդ, վասնորոյ՝ ոչ գրէր նմա սրբազան վեհն զթուղթ երբեմն երբեմն ի գրելն զթուղթս ի Հաշտարխան։ Զի այն իսկ էր զգրելին, զոր աստ ականջով իւրով լուաւ, զոր ինչ պատուիրեաց սրբազան վեհն, և զորս զըրով տարաւ։ Նաև Մովսէսն այն Աստապատցի, զոր ի յապրիլի Թ յիշեցաք և զովեցաք, ըստ պատրուակեալ դեղոյ յետոյ զթոյնն ազդելով, զբազում ընդդիմութիւնս անզէն արարեալ էր Դաւիթ վարդապետին և զխռովութիւնս, զորս և նուիրակն իսկ համաձայն նըմին արարեալ էր։ Որոյ գլխաւոր պատճառն ոչ այլ ինչ. եթէ ոչ այս, զի ստիպեալ էին զնա բառնալ ինքեանց զխորհուրդն, թէ վասն Քեր երթալ առ թագաւորն։ Եւ՝ նա՝ զի չունէր ի սրբազան վեհէն զայս հրաման, վասնորոյ՝ ոչ էր բացեալ նոցա։ Եւ նոցա զչարեալ ընդ այս գրէին զնմանէ զլոլով չարաբանութիւնս։ Ուստի՝ նա լալսցանէ, և վասն գիր չգրելոյ առ ինքն սրբազան վեհին, յայլ և յայլ կարծիս լինէր, և զգրեալ թուղթսն իւր մինչև ցայժմ առ սրբազան վեհն, ոչ հասեալ կարծէր։ Այլ սրբազան վեհն միամտեցոյց զնա, թէ մինչև ի սուրբ Աթոռս ոչ եկեսցես, ով ոք գրեսցէ ինչ զքէն կամ ասասցէ, ոչ հաւատացից։ Ծանոյց և զհասանելն ամենայն թղթոցն իւրոց աստ։ Եւ զպատճառ գիր չգրելոյն իւրոյ ես, (որպէս ասացաւն։) Եւ՝ հարկ, զի թէ տակաւին ոչ իցէ ելեալ անտի, թղթոյ արքային Բ Գ և կամ Դ օրինակս հոգացեալ ընդ իւր բերցէ՝ (որպէս աստ ես ի գնալն պատուիրեաց։) Ծանոյց ես սմա զգրելն ի հոկտեմբերի ԻԹ զթուղթս օրհնութեան և շնորհակալութեան վասն իւր ս.ռ. Հաշտարխանու և Ղզլարու զումբռնաթսն, և առ պարոն Բարդուղն և պարոն Ամբակումն։ Եւ զի՝ ի Մոսկով ոմանք ասացեալ էին թէ՝ ընդ Քեր սրբազանն զթուղթս ոչ գրէ առ մեզ զթուղթըս, գրեաց ասել նոցա թէ՝ յորժամ երթայց ի սուրբ Աթոռն, գրեցուցից սրբազան վեհին ի վերայ ձեր զյատուկ թուղթս։ Ծանոյց սմա և զարձակելն զպարոն Ամբակումն, և կարգելն զանձապետ և վէքիլ սրբոյ Աթոռոյս ի ի Ղզլար։ Բանադրելն զչիք Սողոմոնն, և յղելն զբանադրանսն չիք Իսրայէլին յերկիրն Խամ-

տալու, (որպէս ասացաւ յամսոյս Ա.) Եւ զմի ևս օրինակ նորին ի Հաշտարխան։ Եւ՝ թէ՝ վասըն Քր այդքան յամեցար։ Եւ զգուշութիւն նմա բազում, զի մի այնպէս շարժեսցի, զի թշնամիք իւր ծիծաղեսցին զինքեամբ, և ըզբիծ ինչ դիցեն ի վերայ իւր։ Ծանոյց և զոր ինչ գրեալ էին ի Հաշտարխան, և զոր ինչ ինքն առ նոսա գրեաց։ (Զոր այժմ ասելոց եմ։) Իսկ զվերոյիշեալ թուղթսն Հաշտարխանու իբրև ընթերցաւ սրբազան վեհն և ծանեաւ զոչինչ պատճառս և զորպիսութիւնս կռուոցն որ անդ, ապա յոյժ զզուեցեալ՝ ոչ կամեցաւ լսել, և ոչ միոյ կողման գրեցելոցն։ Զի յերկոսեանն ևս ոչ էր ճշմարտութիւն, և երկոքեանն ևս ոչ էին արդարք, այլ էր երկուցն ևս պարտաւորութիւն։ Նուիրակին, զի պարտ էր նմա, թէ սաստիւ և յանդիմանութեամբ երբեմն վիրաւորել, դարձեալ փութով շահել և մխիթարել։ (զոր չէր արարեալ) և ժողովրդեանն, զի պարտ էր, թէ երբեմն ըստ մարդկային բարուց խրտնիլ և յետս կալ, դարձեալ փութով հնազանդիլ ի պատիւ առաքողին նկատելով։ Այլ զի զայս կանոն երկուցն ևս ոչ պահելով՝ էին պարտաւորք, և չէր՝ և ոչ ի մի կողմն նոցա առիթ սիրոյ և խաղաղութեան, այլ մանաւանդ խռովութեան, վասնորոյ ետ նոցա սրբազան վեհն զպատճառ խաղաղութեան, կամելով բառնալ զխռովութիւնսն, և շահել զժողովուրդսն, և ոչ կալաւ փոյթ զկռուոցն։ Եւ ոչ միոյ կողման նոցին ըստ գրեցելոց իւրեանց դրեաց զպատասխանի։ Քանզի գրեաց զթուղթ մի առ հասարակ ժողովուրդսն Հաշտարխանու, թէ ահա Գ ամ էանց, յորս Նուիրակդ ի ձեզ է, և ես երդուիլ կամիմ, զի ամենևին ի քաղաքէդ, թէ ի ձէնջ և թէ ի Նուիրակէն զգիր մի ոչ առի, որ լինիցէր ինձ ի սրտադիւրութիւն, յուրախութիւն և յապահովութիւն, այլ բոլորն կռիւ, դանկատ և սրտամաշութիւն։ Եւ այնպէս ասէ համարեցէք, զի յամենայն տեղեաց, յորս առաքեմք զնուիրակունս, ոչ այնքան լինին մեզ սրտամաշութիւնք և զլխացաւութիւնք, որք յայդ միոյ քաղաքէդ։ Մեք զնուիրակունս վասն այն առաքեմք, զի շահեսցեն զժողովուրդսն, և ժողովուրդքն ուրախասցին, և զնոսա սիրեսցեն, և մեք ևս լուեալ ուրախասցուք, զայս յայդրուստ ոչ տեսաք։ Բազմիցս քան զայս յառաջ գրեցաք ձեզ և նուիրակիդ սիրով և երբեմն ուրախառն մեղադրանօք, բառնալ ի միջոյ զտարաձայնութիւնսդ. չեղև հնար։ Վերջապէս զԴաւիթ վարդապետն առաքեցաք ի բառնալ զխռովութիւնսդ։ Եւ՝ նա գրեաց մեզ թէ՝ ահա բարձաք իսպառ, մոռացիր և դու զանցեալսն, և գրեա առ ժողովուրդսն զօրհնութիւն և ըզշնորհակալութիւն։ Մեք ևս հաւատացեալ ուրախացաք, և գրեցաք առ ձեզ զօրհնութիւն և զշնորհակալութիւն։ (Որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԻԹ.) Ապա յետ աւուրց ինչ, յերկուց կողմանցդ ևս՝ թէ ի ձէնջ և թէ ի Նուիրակէն, ընկալաք զլոլով գրեանս, յորս ոչ հաշտութիւն ինչ երևեցաւ, և ոչ սէր, այլ կռիւք, և նոր ի նորոյ զլխացաւութիւնք անվերջանալիք։ Յորմէ յայտնի երևեցաւ, զի երկուք կողմունքդ ևս ոչ էք արդարք, և ազատք ի մեղադրութեանց։ Իսկ ես՝ ոչ զձեզ մերժել կարեմ, և ոչ զնուիրակն, զի երկուքդ ևս իմ էք։ Եւ ոչ ունիմ զհարիւրամեայ կեանս զի երկայնամիտ լեալ՝ մինչ լուիցեմ զայդ արտունջ և տանիցեմ։ Վասնորոյ՝ զայս գտի հնար ի սրտադիւրութիւն ինձ և ձեզ, զի որքան արդիւնս ցայժմ տուեալ էք նուիրակիդ, շնորհակալ եմ, և ևս լինելոց եմ։ Արդ ի ձմեռնըս յայս մնասցէ յայդր ցգարունն, իսկ ի գարնանն անպատճառ ուղեւորեսջիք զդա գալ ի սուրբ Աթոռս։ Եւ մի այլ և այլ մտօք զայս իմասջիք, զի վասն խնայելոյս ինձ և ձեզ զայս գրեցի։ Զի ուր ոչ է սէր, անդ ամենայնիւ անհամութիւն է։ Ուրեմն՝ հարկիւ զդա ի գարնանն ուղեւորեջիք աստ։ Եւ որպէս ի հոկտեմբերի ԻԹ, այժմ ևս վերստին ծանոյց նոցա զբանադրելն զչիք Իսրայէլն և զչիք Սողոմոնն, և ի նորոյ ևս կրկնապէս զչիք Սողոմոնն բանադրելն. ի վերայ բանադրանաց նորին զոր գրեալ էր առ Ամրակումն։ (Որպէս ի վերոյ ասացաւ։) Նա և զյղելն անդ այժմ զօրինակ բանադրանաց չիք Իսրայէլին, (որպէս ասացաւ ի վերոյ։) Եւ պատուէր՝ զի որպէս յօձէ թունաւորէ փախչելով հեռասցին ի նմանէ և ի նորայնոցն, և խոտեսցեն զնոսա։ Իսկ և գրեաց զշնորհակալութիւն վասն հաւանելոյն, և ձեռնագրելոյն զկանոնականն, որ յանցելումն ամի ի յօգոստոսի Գ ընդ Դաւիթ վարդապետին յղեաց անդ։ (Որ գրեցեալ էր ի յունվարի Ժ.) Պատուիրելով մնալ հաստատուն ի վերա նոյնոյ պայմանի։ Նա և

վասն Բաղդասար պետին յոյնժամ գրեաց սրբազանն յղել աստ, գրեալ էին զաղաչանս ներել նմա, զի մնացէ անդ, զի ծեր և անկար էր։ Ես ինքն Բաղդասար վարդապետն ևս էր գրեալ զաղաչանս։ Վասնորոյ և սրբազան վեհն ներեաց և նոցա բաշխեաց։

Թուղթ մի ես առ առաջնորդ Ստեփաննոս վարդապետն գրեաց՝ ի պատասխանի երից թղթոց նորին, որոց մինն յանցելումն ամի, և Բ֊քն ի սոյն ամի էին գրեցեալք ընդ այլոցն թղթոց ի ձեռն օգոստոսի։ Ըստ նմին դարձեալ՝ թէ որովհետև ոչ եղև հնար զի խաղաղութիւն լիցի ի մէջ ձեր և նուիրակին, վասնորոյ՝ հետևելով խաղաղութեան, և կամելով զձեզ սրտադիւր առնել, գրեցաք նուիրակին, զի ի գարնանն դարձցէ, որպէս հասարակին ևս գրեցաք։ Սերոբէ ասէ, դու ես լեալ մուղալէթ, փութով ուղեորեսջիք։ Զմնացեալն ի գործոյ գործն ասէ, այլով նուիրակաւ ևս կարեմք հոգալ։ (Զայս և հասարակին գրեաց։) Իսկ և սիրախառն մեղադրանօք և յանդիմանութեամբ, գրեաց նմա զբազում խրատս և զգուշութիւնս, զի զգուշասցի. և մի արարմամբք իւրովք ի ծերութեանն ժամու անկցի ի վտանգս։ Քանզի՝ յամենայն գիրս իւր գրէր նա զերկուս բանս ընդդէմ սրբոյ Աթոռոյս։ Մինն թէ՝ յիմում ժամանակի եղև, և ես արարի, զի երկիրս այս ի յԷջմիածնէ առնուցուն զՄեռոն, որով երևեցուցանէր թէ յառաջ ի Գանձասարու առնուին, որ էր սուտ։ Որոյ ընդդէմ գրեաց թէ՝ ընդէ՞ր զայն ոչ գրես, թէ մինչև յիմ նստիլս ի Քաղաքս Էջմիածնի նուիրակն և Առաջնորդն մի էր, և յայդրուստ զայր։ Եւ ես խափանեցի և այլոց դուռն բացի, քան զսուտ գրես։ Զի մեք իսկ՝ քան զքեզ յառաջ, Բ և Դ նուիրակ և Առաջնորդս տեսաք, որք աստի եկին յայդր։ Եւ միւսն էր այս թէ՝ որովհետև Ներսէս կաթողիկոսն մեռաւ, և ի մէջ նոցա երկճղութիւն անկաւ, վասնորոյ՝ գրեցաք նոցա, զի այլ մի ևս նուիրակ առաքեսցեն անդ, այլ ընդ սրբոյ Աթոռոյս միաբանիցին. կամիս քեզ կու ծառայեմք, կամիս նոցա։ Առ այս գրեաց թէ՝ որքան աղքատագոյն ոք լինիցի, կարէ ընտրել զմեծաւորն իւր, և իւրեան յինչ կարգի գոլն։ Դու զայս ասէ ընդէ՞ր ոչ գիտես։ Եւ ի գանձուց սրտիդ ի հարկէ բղխիս զոր մեզ գրես։ Եթէ հայ ես ասէ և Լուսաւորչածին, և ժողովուրդդ զոր հովուես են նմանապէս հայք, պարտիս ասէ Լուսաւորչին քոյ և նորին փոխանորդացն հնազանդիլ ի հարկէ և ծառայել, առ այս զի՞նչ երկմտութիւն գոյ։ Եւ բազում առ այս խրատ նմին և զգուշութիւն, և սպառնալիք ես։ Այսպէս և վասն նուիրակին անցից գրեաց նմա զյանդիմանութիւն, որ զինքն ամենեին արդար առնէր յայնմ կողմանէ։ Ըստ այսմ թէ՝ գիտուք նա անկատար էր, դու ընդէ՞ր կատարելութեամբդ զնա ոչ սանձեցեր սիրով։ Այլ մեք ասէ և ոչ նորա արարմանցն հաւանիմք, և զյանդիմանութիւնս թէ որքան գրեալ եմք նմա, դու ոչ գիտես։ Բայց զի՞նչ է այն, որ զգիր գրեալ ես առ նա ի Ղզլար, և զմեծ կնիքդ ի ճակատն եդեալ։ Ոչ ապաքէն իմ նուիրակ և գործակալ է։ Եւ այլ այսպիսիք բազումք։ Ծանոյց և զբանադրելն իւր զչիք Սողոմոնն ի վերայ բանադրանաց իւրոց, զոր առ պարոն Ամբակումն էր գրեալ, և զյղելն անդ զօրինակ բանադրանաց չիք Իսաբալէլին, զի տեսցեն ասէ ամենեքեանքն, և խոտեսցեն զնա՝ և զիւրսն։ Դու ևս ասէ զգուշացուսցես այնպէս առնել։ Մատծելով թէ՝ որ մերձենայ ի ձիւթ, պղծեսցի։ Եւ այլ առ այսոքիկ բանք։

Թուղթ ես առ Շամախեցի, և սրբոյ Աթոռոյս զանձապետ Սարգիս աղային գրեաց ի պատասխանի թղթոյն։ Դարձեալ վասն բանից նուիրակին ըստ միւս թղթոցն, մանաւանդ ըստ թղթոյն առաջնորդին։ Եւ այս սմա յատուկ թէ՝ իմ ի վերայ քոյ նեղասրտելոյս պատճառն այս է թէ՝ գիտուք թէ՝ նուիրակին մերոյ անկատարութիւն ինչ գոյր. դու գոլով կատարեալ, և սրբոյ Աթոռոյս հին բարեկամ, այդ որքան մեծ ինչ էր, որ չկարացիր համոզել զերկոսին կողմունս ի խաղաղութիւն։ Եւ այլ այսպիսիք առ այս։ Եւ պատուէր՝ զնուիրակն փութով ճանապարհել։ Զմնացեալն ասէ կարեմք հոգալ այլով նուիրակաւ։ Եւ վասն Դաւիթ վարդապետին ևս յանձնարարութիւն, ի սէր ունիլ և փութով յայս կոյս ուղևորել։ Եւ որովհետև անդուստ դրամ ոչ ելանէր ըստ սովորութեան Ռուսաց երկրին, և ըստ տեղւոյն հաշւոյ՝ յայս կողմունքս վնաս ևս ունէր։ Վասնորոյ՝ գրեաց սմա, զի (1Ծ, կամ 2Ծ) յարգեանց նուիրակին ի ձեռն հաւատարմաց իւրոց փոխցայլև յայս կողմս ձգեսցէ։ Եւ զԹուղթ Առաջնորդին եդ ի թըղ-

թող սորին, և գրեաց, զի ի տալն նմա, ինքն ևս դիտասցէ զգրեալն, և զգուշացուսցէ զնա։ Նա և զհասարակ զիրն ես եդ ի թղթոջ սորին, ընթեռնուլ տալ յեկեղեցւոջն։

Գրեաց և զթուղթ առ. Նուիրակ Յովաննէս վարդապետն, ի պատասխանի թղթոյն։ Թէ որովհետև ոչ եղև յայսչափ ժամանակս ի մէջ քոյ և ժողովրդեանդ սէր և խաղաղութիւն, այլ մանաւանդ խռովութիւն և կռիւ։ Արդ՝ ասէ ամենայն բանք և գործք, թէ հոգևոր և թէ մարմնաւոր, սիրով լինին։ Իսկ առանց սիրոյ ասէ, հեղուլ զարիւն, և տալ զմարմին իւր յայրումն, անօգուտ է։ Եւ հարկ է ասէ զբազումն շահել քան թէ զմինն։ Ուստի ի գարնանն ելեալ ասէ եկեսցես աստ։ Զմնացեալ գործդ մեք այլով նուիրակաւ կարեմք հոգալ։ Ի ձմեռնս ասէ զինչ և տայցեն, սիրով առ և եկ, և մի ես յամիր։ Իսկ և որովհետև Դաւիթ վարդապետն սմա զխորհուրդն իւր չէր բացեալ, և սա ընդ այն ոխացեալ առնոյր զնա ի բերան, և աստ և անդ բամբասէր, վասնորոյ գրեաց նմա մի առնել զայն, այլ միամիտ ի սուրբ Աթոռս գալ փութով։ Եթէ բիծ ինչ ասէ գացի ի նա, մեք ի գալն նորին վրէժխնդիր լինել կարող եմք։ Ծանոյց և զկարգելն զպարոն Ամբակումն զանձապետ Ղզլարու, և արձակելն զնա ի բանադրանաց չիք Սողոմոնին, և ինքն զչիքն բանադրելն, և յղելն անդ զբանադրանս չիք Իսրայէլին, (որպէս ի վերոյ ասացաւ.) և թէ՝ զոր ինչ տուեալ ես յարդեանց Դաւիթ վարդապետին, մի ինչ հոգար, զի ի համարս հաշուի քոյ արկանելոց է։ Հարկեաց ևս յետս առնուլ զգիրն, զոր տուեալ էր Աստապատեցի Մօվսէսին, զի լիցի վէքիլ սրբոյ Աթոռոյս, և պատառել։ Մեք կարեմք ասէ ըստ արժանւոյն զգիր գրել նմա։ Եւ զոր ինչ գրեանս գրեաց անդ, զամենն սմա ծանոյց։ ԶՍարգիսն զոր յղեալ էր աստ թղթովքն, չյղեաց յետս, խոստանալով թէ՝ թերևս ի գարնանն ընդ նոր նուիրակին յղեցից։ Բայց դու ասէ սոցա չմնասցես այլ ելեալ փութով եկեսցես։ Գրեալ էր վասն փոխս առնելոյ, ուստի ծանոյց սմա զոր ինչ այսր աղագաւ գրեաց առ Սարգիս աղայն։ (Որպէս ի վերոյ ասացաւ.) և պարոն Ստեփանին ևս, (որպէս յետոյ ասելոց եմ,) թերևս ասէ նոցա ձեռօքն և կամ այլովք ի տեղդ հոգացեալ եկեսցես։ Բայց այնպէս ասէ, զի մեզ վնաս չլինիցի, զի Թիֆլիզու դրամն վտանկաւոր է։ Խոհեմութեամբ հոգա։ Կրկին հարկ վասն Դաւիթ վարդապետին բառնալ զտրտունջն, և մի լինիլ չուտափոյթ։ Սպասելով վախճանի նորին գործոյ, և ջանալ որքան անդ է, օր մի յառաջ զնա աստ ձգել։ Թուղթ մի ևս առ պարոն Բօրդուղիմէոսն, ի պատասխանի թղթոյն, ըստ մտաց այլ թղթոցն։ Եւ զի՝ նուիրակն որ ընդ քաղաքին մարտնչէր, զսա և զԱստապատեցի Մօվսէսն միայն ունէր ինքեան հաստատուն բարեկամ և թիկունս, սակս որոց, և մանաւանդ յաղագս Բարգուզին, զԱռաջնորդն, զՍարգիսն, և գրեթէ զբոլոր քաղաքն արարեալ էր ինքեան թշնամիս։ Վասնորոյ՝ գրեաց սրբազան վեհն Բարդուղին թէ՝ զհարազատութիւնդ՝ զոր առ սուրբ Աթոռս և առ մեզ ունիս, գիտեմ և շնորհակալ եմ, նա և սիրելդ զնուիրակն մեր։ Բայց ճշմարիտ սիրոյն ասէ կանոն մի դոյ, զոր ոչ գիտեմ դու ոչ գիտես, թէ գիտես և ոչ ածես ի գործ։ Զի զինչ օգուտ սիրելդ միայն քոյ զնուիրակդ մեր, մինչ ամենայն քաղաքդ թշնամիք են լեալ դմա այդր աղագաւ։ Արդ ես զինչ արարից, զի ոչ զքաղաքդ կարեմ մերժել. և ոչ զնուիրակդ։ Զի երկուքն ևս իմ են։ Եւ պատուէր՝ զի ինքն ևս ջանասցէ փութով զնուիրակն ճանապարհել աստ։ Իսկ և Դաւիթ վարդապետին զսմանէ գրէր զբազում շնորհակալութիւնս. այլ սա նուիրակին հետևելով գրէր զնմանէ զամբաստանութիւնս։ Զայս սիրախառն մեղադրանօք գրեաց նմա։ Եւ պատուիրեաց գրել չուտով զիսկն որպիսութեան նորա։ Եւ ջանալ չուտով յայսկոյս ուղևորել, նա եթէ ի պատուիրանաց մերոց ելեալ իցէ ասէ, յետոյ տեսցուք։ Եւ վասն բանադրանաց չիք Իսրայէլին սմա ևս գրեաց զպատուէր, զի ընթեռնուլ տացեն յատեանն ի լուր ամենեցուն, զի ամենեքեանքն հեռասցին ի հնոտելոյն։

Թուղթ ևս ըստ սոյն օրինակի առ Աստապատեցի Մօվսէս գրեաց ի պատասխանի թղթոյն։ Բայց ոչ զբոլորն; և հարկ սմա տալ յետս զձեռագիրն, զոր նուիրակն ինքնագլուխ տուեալ էր նմա լինիլ վէքիլ սրբոյ Աթոռոյս, (որպէս ասացաւ ի թղթոջ նորին։) Զի անհամութիւն է այդ ասէ, և անտեղի։ Պատառեալ անհետ արասջիք։ Եւ որպէս ևս ասէ յառաջ գրեցի

քեզ՝ զի բանից և գործոց սրբոյ Աթոռոյս ըստ ձեռնհասութեան քոյ մուղալէթ լիցիս, և դու ըստ այնմ վարեաց, զի աւելի քան զայն անհամութիւն է։ Իսկ յետոյ ես գիտեմ ասէ թէ քեզ զինչ գրելոց եմ. և դու յայնժամ զոր ինչ մերով հրամանաւն և զբովն առնիցես, անվտանգածին է։ Եւ՝ այլ առ այսոսիկ բանք։ Փուսուլայ մի ես գրեաց առ Նուիրակ Յովաննէս վարդապետն, միամտութիւն, զի մի յայլ և յայլ կարծիս անկցի վասն խնդրելոյն զինքն։ Զի վասն ամօթով առնելոյ զգոսա ասէ զայս աբարի։ Եւ զի՝ բարձից զպատճառս զոյցին, որք զքէն բազմակնիւք թղթով գանգատ էին գրեալ, զի տեսից թէ՝ յետոյ ընդ նոր նուիրակին որպէս են վարելոց։ Եւ յայնժամ խօսեսցայց ընդ նոսա։ Եւ՝ պատուէր՝ զի յետ ընթեռնուլ տալոյն զբանագրանս չիք Իսրայէլին, տացէ պարոն Բարղուղիմէոսին, զի նա պահեսցէ վասն ապագայի պիտանաւորութեան։ Եւ զի գրեսցէ զկանոնականէն, զոր Դաւիթ վարդապետն տարաւ (որ ի վերոյ յիշեցաւ թէ ուր մնաց։)

Թուղթ ես առ Միֆօտի Արքեպիսկոպոսն Ռուսաց որ ի Հաշտարխան ի պատասխանի թղթոյն սիրոյ՝ զոր գրեալ էր առ սրբազան վեհն Բ օրինակ, այսինքն հայերէն և ռուսերէն։ Որ էր պատասխանի այնմ թղթոյ սրբազան վեհին, զոր գրեաց առ նա յանցեալումն ամի ընդ Դաւիթ վարդապետին ի յօգոստոսի Գ։ Որ յօժարութեամբ յանձն էր առեալ կատարել զերիս խնդիրս սրբազան վեհին, զորս յայնժամ գրեաց առ նոսա։ Այսինքն խնամել զազգն մեր որք անդ դոն, համարելով որպէս զիւրս։ Զսուրբ Աթոռս միշտ ի մտի ունիլ, և զլաւն սորին կամիլ. և զգործակալս սրբոյ Աթոռոյս որք անդ գտանիցին, ունիլ ի սէր և ի խնամս, և շահել։ Որ և զԴաւիթ վարդապետն շահեալ էր, որպէս նա զբազում շնորհակալութիւնս էր գրեալ։ Ուստի և սրբազան վեհն գրեաց զշնորհակալութիւնս այս։ Եւ խնդիր, զի զնոյնս միշտ արասցէ։ Զայս առ Ծաբղուղն յղեաց։

Թուղթ առ Թիֆլիզեցի պարոն Ստեփանն։ Վասն բանից նուիրակին, նոյն՝ որ ինչ յայլ թղթոն գրեցաւ։ Եւ վասն Դաւիթ վարդապետին պատուէր, զի զոր ինչ որպիսութիւնս լուիցէ ի նմանէ, փութով գրեսցէ։ Եւ շնորհակալութիւն վասն գրելոյն հարազատութեամբ զամենայն անցսն տեղւոյն, և պատուէր՝ զնոյն առնել միշտ։ Եւ վասն փոլիցային՝ (որ ի վերոյ ի թղթոջ Սաբղիս աղային և նուիրակին յիշեցաւ։) Սմա ևս գրեաց, զի խորհեալ ընդ նուիրակին, որոյ ձեռօք և իցէ կարելի, փոլիս արասցեն յայնկոյս, այնպէս առնելով՝ որ վնաս չլինիցի սրբոյ Աթոռոյս։ Առ որ և զվերոգրեալ գրեանսն Հաշտարխանու յղեաց՝ տալ յիւրաքանչիւր տեարսն, որովհետև և նորին ձեռամբն էին եկեալ անդուստ թուղթքըն։

Թուղթ ես առ սորին եղբայր Տէր Աբրահամն գրեաց ի Թիֆլիզ։ Առ որ զթուղթսն Հաշտարխանու և Ղզլարու յղեաց Բ պահարանաւ. զի կամ զԲսն ևս յղեսցէ ի Ղզլար առ պարոն Ամբակումն, և կամ ուրոյն ուրոյն յղեսցէ, զՀաշտարխանունն առ եղբայրն իւր ի Հաշտարխան, և Ղզլարունն անդ՝ առ պարոն Ամբակումն։

Փուսուլայ մի ևս գրեաց առ նա վասն փոլիցայի բանին վերոյիշելոյ։ Զի (1Ծ, կամ 25) յարդեանց նուիրակին, գրեսցէ եղբօրն իւրոյ որպէս և ինքն գրեաց, փոլիս առնել յայս կոյս։ Եւ ինքն զայնպիսի մարդ մի գտցէ ի Թիֆլիզ, որ մեզ զսաղ դրամ տացէ, և ինքն ի Հաշտարխան յիւր եղբօրէն առցէ։ Թուղթ ես առ Թիֆլիզու առաջնորդ Զաքարիա վարդապետն գրեաց, ի պատասխանի թղթոյն, որ գրեալ էր զորպիսութեանց և զյաջողմանէ նուիրակութեանն, գրեաց առ այն զշնորհակալութիւն։ Որում և ծանոյց զամենայն գրեալսն ի Հաշտարխանու և ի Ղզլարու, և զոր ինչ ինքն գրեաց առ նոսա, և զնուիրակն խնդրելն, և զչիք Իսբայէլի բանագրանաց յղելն ի Հաշտարխան, և զԱմբակումն արձակելն։ Եւ կարգելն զանձապետ սրբոյ Աթոռոյս։ Եւ զայլս այսպիսիս։ Օրինակն ոմանց այս թղթոյս տեսցեն ի բոլորագրահամար տետրոջն յերեսն։ Յ, ՅԱ, ՅԲ։ Ընդ վրացի Աւթանդիլին։ Ի նոյեմ. ԻԸ։

ՃԼԷ.

Առ Բաղիշու խանն եւ բաղիշեցիսն, վասն խնդրոյն իւրեանց։

Զայն խնդիրն՝ զոր յառաջագոյն ի յօգոստոսի ԻԲ գրեալ էին Բաղիշեցիքն առ սրբազան վեհն վասն խանին իւրեանց, և սրբազան վեհն ըստ պատասխանիս նոցին գրեաց յայնժամ յանձն առնլով որպէս թէ. Վասնորոյ խանն նոցին, որոյ անունն էր Հասան, հարի ընդ այն ուրախացեալ, գրեալ էր սրբազան վեհին ցուցանել ինքեան զայնպիսի մարդ մի ի Պօլիս, որ յամենայնում ամի զիւր ֆերմանն նորոգեսցէ նա, և յղեսցէ առ ինքն։ Եւ ասէր թէ՝ որ ինչ խարճ գնասցէ, ես հոգացից։ Եւ առ այս սրբազան վեհն անկաւ ի տարակոյս, զի չունէր անդ զայնպիսի հոգացող, ոչ ի հայոց և ոչ ի տաճկաց, և բացասել ես ամօթ և անտեղի վարկաւ։ Վասնորոյ՝ զթուղթ մի գրեաց առ Հասան խանն ի պատասխանի թղթոյն, յանձն առնլով գրել առ պատրիարգն մեծին Պօլսոյ, զի կամ ինքն զայս հոգասցէ, և կամ զայլ ոք գտցէ, որ կարող իցէ զայս հոգալ։ Զի ես ի վաղուց աւէ անտի եղեալ եմ, և զայլ մարդիկսն զորս ես տեսեալ եմ, ոմանք վախճանեալք են, և ոմանք ելեալ անտի։ Վասնորոյ և ես պատրիարգին գրեցի, զի նա որպէս և իցէ հոգասցէ։ Ուստի ասէ ի յղելդ անդ զմարդն քոյ, առ պատրիարգն յղեա, և նա հոգալոց է։ Այլ և շնորհակալութիւն նմին, որ զ՚այսն և զեկեղեցիսն ունէր ի խնամս։ Եւ խնդիր զնոյն միշտ առնել։ Թուղթ ես առ Բաղիշեցիսն գրեաց, ի պատասխանի թղթոյն, ծանուցանելով զոր ինչ գրեաց առ պատրիարգն, (զորմէ յետոյ ասելոց եմ,) զոր և առ բէկն գրեաց։ Եւ պատուէր՝ զի և ինքեանք նոյնպէս ծանուսցեն բէկին։ Եւ առ Բաղիշեցիսն ես որք անդ ի Պօլիս են, գրեսցեն, զի նոքա ես ծանուսցեն պատրիարգին զօգուտն իւրեանց քաղաքին և զցաւն, և յորդորեսցեն զնա այսր աղագաւ յանձն առնուլ և հոգալ։ Եւ զի օրինազանցութիւնք ինչ յաճախէին ի նոսա։ Գրեաց թէ՝ թէպէտ մինչև ցայժմ լսէի և երկայնամտէի, այլ ոչ այժմ ասէ Զաքարիա վարդապետիդ, զի զօրինազանցօղսն նախ ինքն խրատեսցէ և յուղղութիւն ածել ջանասցէ։ Եւ ի չլսելն նոցին, յանուանէ ծանուսցէ մեզ, զի և մեք յայնժամ ըստ պահանջման իրաւանցն արասցուք։ Իսկ և յաղագս Դանիէլ վարդապետին, որպէս յառաջ յամսոյս ԻԴ, նոյնպէս և այժմ հասարակին գրեաց, զի կամի անդ զառաջնորդութիւն առնել, և կամեցողք զոն, թող ինոցունց զվկայական գիր առեալ աստ եկեսցէ, և մեք տեսցուք։ Իսկ թէ յայսմանէ չլուիցէ, ապա չունի հրաման մնալ յայդր, և ինքնագլուխ Առաջնորդութիւն առնել, և լուծեալ ես է ի կարգէն։ Զթուղթսն ընդ Ամրզօղլու Առաջնորդ Զաքարիա վարդապետին էր յղեալ խանն, ի ձեռն որոյ՝ Ա քիւրք ես էր յղեալ ընծայ։ Որ եւ աստի ընդ մարդոյ Ապազու բէկ Զօպան աղային (որ յիշեցաւ յամսոյս ԻԴ։) որ սրբազան վեհին զընծայ էր յղեալ և զգիր գրեալ և սրբազան վեհն ես նմա զբրինձ և զգինի և զօղի յղեաց ընծայ և զգիր ես գրեաց։

ՃԼԸ.

Յաղագս Բաղիշու խանին Թուղթք ի Պօլիս։

Իսկ վասն վերոյիշեցեալ բանի խանին Բաղիշու, գրեաց սրբազան վեհն զթուղթ մի առ Գրիգոր պատրիարգն մեծին Պօլսոյ, ծանուցանելով նմա երկարապէս՝ զամենայն գրեալսն խանին Բաղիշու և բաղիշեցւոցն առ ինքն, և զգիտմունս նոցին։ Եւ թէ ինքն զինչ գրեաց առ նոսա և զայս ետ։ Եւ խնդրեաց զի կամ ի ձեռն սառաֆի ուրուք, և կամ ի ձեռն քեաթիպին [6]) իւրոյ հոգասցէ, որպէս զի՝ յամենայնում ամի զֆերման նորին հանցեն, և յղեսցեն առ նա, և զխարճն ի նմանէ առցեն։ (Զոր Ե, կամ Զ քսակ ասէին։) Զի թէ բացասէաք ասէ զխնդիրս նոցին, ամօթ մեծ էր մեզ, և քեզ ես, որովհետև տաճիկ զոլով, ի հեռաստանէ այսքան աղերսանօք գրեալ էին մեզ, որ և չէր այնքան ինչ ծանր խնդիրք։ Զոր թէ ասէ հոգասցես, քեզ ես ոչինչ է վնաս և պակասութիւն, այլ մանաւանդ՝ պայծառութիւն անուան։ Ուստի՝ ասէ ի գալն մարդոյն նորին յայդր առ քեզ, (ըստ որում մեք գրեցաք իւրեան։) պարտիս կերպիւ ինչ հոգալ

զայս, որպէս զի յամենայնում ամի նա լիցի իշխօղ տեղւոյն, և ոչ միւսքն։ Զի և քաղաքացի հայքն զնմանէ են շնորհակալ, զի յոյժ հալածէր և եկեղեցասէր է։ Եւ բազում բանք առ այս։ Առ որ յղեաց և զօրինակ տաճկերէն գրոյ Բաղիշու խանին զի տեսցէ, նա և բաղիշեցիքն զթուղթ մի բազմակնիք արարեալ յղեալ էին առանց գրոյ՝ սանով գլխաւորք, զի սրբազանն գրեցուցեալ ի բերանոյ իւրեանց ի վերայ իւր, յղեսցէ ի Պօլիս, որպէս թէ այժմ գրեալ իցեն ինքեանք առ սրբազան վեհն վասն այս խնդրոյս։ Զի զգիր ոչ էին գրեալ այժմ, այլ այսպէս էին արարեալ։ Ուստի և սրբազան վեհն գրել ետ ի նմա զօրինակ այն մահսարին, զոր յառաջագոյն գրեալ սոքա առ ինքն վասն սոյն խնդրոյս, (որպէս ասացաւ ի յօգոստոսի ԻԲ.) Եւ յղեաց զայն ևս առ պատրիարգն, զի տեսցէ։ Զանուանս անդ եղեալ բաղիշեցոցն ևս գրեալ ի փուսուլայոջ, յղեաց առ նա, զի կոչեալ առ ինքն վասն այս բանիս խօսեցուսցէ։ Գրեաց զթուղթ առ Անտօն Ամիրայն վասն այսր, ծանուցանելով նմա լիապէս զորպիսութիւն բանիս, և զգրելն իւր առ պատրիարգն զի հոգասցէ։ Եւ խնդիր, զի թէ նա յանձն չառնուցու հոգալ, և զանց առնիցէ, ծածկապէս ինքն զգուշացեալ՝ երբ իմասցի զայս, ապա ինքն որպիսի հնարիւ և իցէ հոգասցէ, և գտեալ զոմն ցուցցէ այն խանի մարդոյն, որ յամենայն տարի հանցէ յարքունուստ զֆիրման նորին։ Զի մեք ասէ այն խանին գրեցաք թէ զմարդ առ պատրիարգն յղեա, և նա հոգալոց է, արդ թէ նա չհոգասցէ, մեզ ամօթ է լինելոց։ Վասնորոյ զգոյշ լեր դի դու որպէս և իցէ զհնարն գտեալ հոգասցես ի սէր մեր, և մեզ գրեսցես։ Զի այնպէս գիտեն ասէ նոքա թէ՝ մեր և իշխանաց մերոց խօսքն անդառնալի է ի դուռն թագաւորին, որոյ աղագաւ զայսպիսի աղերս գրեն մեզ։ Արդ՝ ասէ թէ ոչ հոգալցեմք ըստ բազմիցս թախանձելոյ նոցին, մեզ ամօթ և պակասութիւն է, որոյ վասն բացասել չկարացաք։ Եւ վասն դրամին միամտեցոյց թէ՝ որքան և լինիցի խարճ, խանն տալոց է։ Եցոյց նմա և զբաղիշեցիսն, որք էին անդ, գրեալ զանուանսն ի փուսուլայոջ, ծանոյց ևս թէ՝ զոքա են գրեալ առ խանն իւրեանց թէ՝ դու խալիֆայն գրեա. զի ի տեղս մեզ Ա մարդ ցոյց տալ, որ զֆերմանն յարքունուստ հանցէ, մեք որքան զխարճ զնա կու հոգամք, ուստի ասէ՝ կոչեալ խօսեցո զնոսա, և հոգ տար բանիս այսմիկ որպէս և իցէ։ Զպատրիարգինն յուրոյն պահարանով եղեալ, և զտուրինն ուրոյն, յղեաց ի Կարին առ Մելքոնն, և զթուղթ գրեաց ի Կարին զի յոյժ փութով յղեսցէ ի Պօլիս առ Խաչատուրն, և գրեսցէ նմա տալ յիւրաքանչիւրսն, և զպատասխանիսն առնուլ և յղել աստ։ Իսկ և ի Ներկայումս թուղթ մի եկն ի սմանէ, որ գրեալ էր վասն ոսկոյն և մատանւոյն, զոր դրեալ էր Հնդկաց Նուիրակ Յովսէփ վարդապետն, թէ յղեցաք ի Կարին առ Մելքոնն, և՝ սրբազան վեհն գրեաց սմա յառաջ քան զայս, ի հոկտեմբերի ԻԸ, զի ծանուսցէ զառ ինքն հասանելն, և հաւատարմաւ յղեսցէ ի սուրբ Աթոռս։ Գրեալ էր սա այժմ թէ՝ ինձ չէ հասեալ։ Վասնորոյ գրեաց թէ՝ նոքա այսպէս են գրեալ որ սուտ չէ, իմա, թէ զինչ իցէ լեալ, և մեզ գրեա։ Խաչատուրին ևս գրեա թերևս նմա իցէ հասեալ՝ և մեզ ծանո։ Գրեաց ևս զփուսուլայ մի առ սա, վասն Բաղիշու խանի բանին, թէ նա և երկրականքն այսպէս էին գրեալ, (որպէս ի վերոյ ասացաք,) և մեք այսպէս գրեցաք պատրիարգին։ Արդ եթէ իցէ՝ զի նա յանձն ոչ առնուցու, որպէ՞ս է լինելոց։ Եթէ գրեսցես դու Խաչատուրին, կարէ՞ զայնպիսի մարդ մի գտանել, որ զայս հոգասցէ։ Զայս դու ևս ասէ մտածեա թերևս զդիւրին հնար մի գտցես։ Եւ որպէս և պատշաճ տեսցես, մեզ ևս փութով ազդեա։ Այլ և քոյր Մէլիք Սարգիսջանին, որոյ անունն էր Բաղչագիւլ, ի վաղուց հետէ գերեցեալ ի լեկզեաց, այժմ յայտնեցեալ էր ի մէջ չէրքեզին։ Որոյ աղագաւ աղաչեաց Մելիքն զսրբազան վեհն, զի դրեսցէ առ Ուռումէլու նուիրակ Յովհաննէս վարդապետն ազատել զնա որով կերպիւ և իցէ, և յղել յայսկոյս։ Եւ սրբազան վեհն ըստ խնդրոյն նորին զթուղթ դրեաց առ Յովհաննէս վարդապետն, զի ջանասցէ ազատել զնա, և ի վերայ Պօլսոյ կամ ի վերայ Տրապիզոնու յղել յայսկոյս։ Եւ՝ ինքն Մելիքն ևս գրեաց նմա զգիր, և զանուանս ազգատոհմին իւրոյ և զամենայն որպիսութիւն նորին գրեաց նմա, զի թէ այնու նշանօքն իցէ, ապա ազատեսցէ։ Զի մի այլ ոք լինիցի, և խաբէութեամբ ձևացեալ իցէ գոլ քոյր իւր, որպէս բազում անգամ լինէր։ Եւ սրբազանն ևս այսպէս պատուիրեաց,

զի այնու նշանոքն զոտցէ, աղատեսցէ։ Այս ես առ. Մելքոնն յղեցաւ, և Ա փուսուլայ գրեցաւ առ. Նա, յղել զայս առ. Խաչատուրն ի Պօլիս, զի և նա առ. Յովհաննէս վարդապետն հասուսցէ։ Եւ սոքա ուրոյն ուրոյն ի միում պահարանոջ եղեալ և ի ձեռն Մելքոնին գրեալ, յղեցան առ. Տէր Վահանն ի Բալաղիտ, թուղթ ես գրեցաւ առ. նա յղել ընդ գնացօղի ի Կարին առ. Մելքոնն, իսկ թէ չիցէ գնացօղ, զյատուկ փայեակ մի վարձեալ շուտով ի Կարին յղեսցէ։ Եւ զի փեսային՝ (որոյ անունն էր Յարութիւն,) և զստերք սորին վախճանեալ էին ժանտամահիւ։ Վասնորոյ գրեաց սմա զմխիթարութիւն։ Թուղթ մի ես առ. իշխանսն Բալաղտոյ, Մարգարէն, Իլօն, և Մուրատն և յայլսն գրեցաւ, ըստ նմին մխիթարութիւն վասն ժանտամահին, (որպէս և ի նոյեմբերի ԺԵ։) Եւ վասն ընչից Տէր Վահանի փեսային վերոյ յիշեցելոյ պատուէր, զի մի ոք ձեռնամուխ լիցի, և կամ ի դրունս տաճկաց զբանս խօսեսցի, յանձնելով իւրեանց։ Զի նորին կտակագիրն ասէ առ. մեզ է, զոր ի ձեռն Խորվիրապու առաջնորդին է արարեալ։ (Զի տամբն իւրով փախուցեալ ի ժանտամահէն, անդ և յԵրեան էին վախճանեալք։) Եւ ինչք նորին ընդ մերով իշխանութեամբ են ասէ, որպէս Տէր Վահանին ես գրեցաք։ Այս ըստ խնդրոյ Տէր Վահանին գրեցաւ, զի էր վախճանեալն անյիշատակ և ինչք բազում էին նորա։ Երկնչէր եթէ՝ գուցէ չարակամք տաճկաց մատնեսցեն, վասնայսորիկ զայս առ. ձեզ ետ։ Պօլսոյ թուղթքն ի նոյեմբերի ԻԹ գրեցան, այլ այժմ ընդ այս գեղացի Մալխասին յղեցան ի դեկտ. Ա։

ՃԼԹ.

Առ գանձապետ Եղիկն ի Կարս, վասն Ղօշավանից գանձանակին։

Թուղթ գրեաց սրբազան վեհն ի Կարս առ. սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Եղիկն, ըստ խնդրոյ Ղօշավանից Առաջնորդ Մինաս վարդապետին, (որ յիշեցաւ ի նոյեմբերի ԻԵ։) Զի Ղօշավանից գանձանակին, հողերաժնին, տէրունի ժողովրդոցն, և այլ ամենայն արդեանցըն մուղալէթ լիցի որպէս և սրբոյ Աթոռոյս գանձանակին։ Զի այգ ես ասէ մեզ է համարեցեալ։ Ընդ Մինաս վարդապետի աղայոցն յղեցաւ, որք ձէթ էին բերեալ ի դեկտ. Բ,

ՃԽ.

Առ Քեօռօղլուայ ժողովուրդսն, շնորհակալութիւն վասն յղեալ մատաղացն։

Ի Քեօռօղլի բնակեալ ժողովուրդքն, ի ձեռն Թադէոս երիցուն իւրեանց զԺ մատաղացուս էին յղեալ եզինս։ Առ որս գրեաց սրբազան վեհն զթուղթ մի օրհնութեան և շնորհակալութեան։ Եւ զի Մեսրոպ վարդապետն՝ որ յառաջ էր նուիրակ Կարսայ, (որ ի պատմութեան ՌՄԺԴ ամին, ի յուլիսի Ի) զսրբալոյս Մեռոն ոչ էր տուեալ նոցա, զի չէր գնացեալ ի մէջ նոցա. վասն զոլոյ տեղւոյն երկիւղալից յայնժամ։ Ուստի տուաւ այժմ այս երիցուս փոքր ինչ սրբալոյս Մեռոն։ Եւ Ա շուրջառ ես, զի չունէին։ Ա փիլոն ես տուաւ պարգեւ ի դեկտ. Դ։

ՃԽԱ.

Առ Մինաս վարդապետն եւ առ այլս թուղթք ի Կարին, վասն փօլիցայական բանից:

Մինաս վարդապետն՝ (որ յիշեցաւ ի նոյեմբերի ԻԴ,) եկեալ հասեալ էր ի Կարին։ Եւ գրեալ էր անտի ի նոյեմբերի ԻԹ զթուղթ առ. սրբազան վեհն, կ ծանուցեալ էր զհոգացեալսն իւր անդէն ի Կարին ըստ գրոյ սրբազան վեհին, որ զոյր առ. Տէր Պետրոսն ի Կարին, որպէս զի ի գալն անդ սոյն Մինաս վարդապետիս, տացէ . . . զբանսն հոգացեալ ի սուրբ Աթոռս եկեսցէ, (որպէս յիշեցաւ ի նոյեմբերի ԻԴ, և քան զայն յառաջ։) Եւ ընդ ծանուցանելոյն զհոգացեալսն, խնդրեալ էր ես վասն ոչ հոգացելոցն ծանուցանել թէ զինչ

առնիցէ։ Զի այնպէս արարեալ եկեսցէ ապա։ Վ,ասնորոյ՝ և սրբազան վեհն զթուղթ մի գրեաց առ նա ի պատասխանի թղթոյն, հաւանելով ամենից արարելոցն։ Եւ վասն ոչ հողացելոցն այսպէս։ Զի Պապիկ աղայն զԱՌ ղուռուշն որ զոյր առ ինքն ի Նուիրակէն մերմէ Սարգիս վարդապետէն, (որ յիշեցաւ ի նոյեմբերի ԻԴ,) չէր տուեալ։ Պատճառելով թէ՝ Նուիրակն ետս էառ, որ էր սուտ։ Եւ զԱկնեցի բանադրեալ Ալէքսանի ասացեալ էր թէ տակաւին ինձ ոչ է հասեալ, բայց ինքն յառաջագոյն գրեալ էր սրբազան վեհին թէ՝ ինձ էհաս, (որպէս ասացաւ ի հոկտեմբերի Գ։) Միայն զՄիւմիշխանացի կնոջ դրամն. (ԼԾ) կրկնապէս գրէր թէ ինձ է հասեալ, զոր յառաջ քան զայս ի սուրբ Աթոռս հասուցեալ իսկ էր։ (Որպէս ասացաւ ի սեպտեմբերի ԻԱ,) վասնորոյ գրեաց սրբազան վեհն Մինաս վարդապետին, զի այն ասացելոցն մի լիցի ունկնդիր, այլ առեալ ի նմանէ զդրամսն, թէ զի Սարգիս վարդապետէն հասանելին, և թէ զակնեցւոյնն, եթէ Հաճ ղնացօղ տաճիկքն, (որք յիշեցան ի նոյեմբերի ԻԴ) անդ իցեն, և չիցեն տուեալ զփօլիցայս նոցին, զայս զդրամս տայցէ նոցա, որպէս ի փօլիցայագիրս նոցին գրեցեալ է։ Իսկ եթէ զնոսա ուղևորեալ իցեն, ապա ընդ իւր բերցէ զայն զդրամսն ի սուրբ Աթոռս։ Իսկ Մելքոն աղային, յառինքն եղեալ զդրամոցն (որք յիշեցան ի յունիսի ԻԱ,) զմասն ինչ տուեալ էր, և մասն ինչ տակաւին զոյր առ ինքն։ Որոց աղագաւ գրեալ էր զիրիճայ, [1]) զի ժամանակ ինչ ներեսցէ, և յետոյ տացէ։ Եւ սրբազան վեհն գրեաց Մինաս վարդապետին, զի մնացեալն թողցէ առ նա, յետոյ մեք ասէ առնլոց եմք։ Իսկ Գէորգ վարդապետի փեսայ մահտեսի Խաչատուրն, զդրամն, (Բ) որ զոյր առ ինքն ի Գէորգ վարդապետէն (որ յիշեցաւ ի յունիսի ԻԱ,) զոր իւրեանք իւրեանց բերանովն առին ի վերայ իւրեանց թէ տալ պարտիմք, որպէս ի յունիսի Գ, և քան զայն յառաջ ասացեալ է։ Այժմ զայլ և այլս պատճառելով չտայր Մինաս վարդապետին։ Վ,ասնորոյ՝ գրեաց սրբազան վեհն Մինաս վարդապետին, զի հարկիւ խնդրեսցէ ի նմանէ և անդ առցէ։ Իսկ եթէ ոչ տայցէ, ապա ընդ իւր բերցէ զնա ի Բալաղիտ, զի ընդ Ղազարին խօսեսցին, և տացեն զդրամն և զքսուրն և զգրեանսն Գէորգ վարդապետին։ Որոց զաւթարն ևս յղեաց առ նա, (որ յիշեցեալ գոյ ի յունիսի Գ, և ի վերոյս նորին,) (զոր Զաքարիա վարդապետն էր բերեալ ի Բալաղտոյ։) Եւ՝ պատուէր գրեաց, զի թէ առ ինք ևս իցէ Գաւթար, ընդ այս զաւթարիս համեմատեալ առցէ զայնս լրապէս։ Իսկ եթէ ի Բալաղիտ ևս չգայցէ, կամ եկեալ անդ ևս չտայցէ, ապա թողեալ եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Մեք յետոյ ասէ կարեմք առնուլ։ Գրեաց և զթուղթ առ մահտեսի Խաչատուրն, հարկ, զի անպատճառ տացէ անդ զդրամն, կամ ընդ Մինաս վարդապետին ի Բալաղիտ եկեալ տացէ։ Եւ զթուղթս զայս իւրն ի զապղ առցէ։ Եւ սպառնալիք՝ մինչ ոչ տայցէ։ Զայս ևս թէ՝ մեք այլ ևս քան զայդ մեծամեծաց ակն ունիմք թէ գոյ առ ձեզ ի Գէորգ վարդապետէն, և մեզ պարտիք տալ, իսկ դուք զայդ ևս ցաւեցուցանելով տայք, զոր ձեզէն ի վերայ ձեր առիք։ Զայս բաց առ Մինաս վարդապետն յղեաց, զի ինքն ընթերցցի, և ապա, յետ առնլոյ դրամին նմա տացէ որպէս զզապղ։ Իսկ թէ չտայցէ նա զդրամն, զայս թուղթս մի տացէ նմա։ Զայս ևս գրեաց Մինաս վարդապետին, զի հարկեսցէ, և երդմնեցուսցէ զՂազարն և զմահտեսի Խաչատուրն, զի թէ այլ ևս իցէ առ ինքեանս ի Գէորգ վարդապետէն դրամ կամ քսուր, այժմ տացեն, զի ընդ իւր բերցէ։ Իսկ եթէ ոչ յետոյ յորժամ նշան ինչ երևեսցի ասէ, մեծ ամօթ և զլխացաւութիւնս շատ են կրելոց։ Ինքեանք գիտասցին։ Զայս ևս թէ՝ եթէ ի Կարին նազդ ոչ ունիցի մի. Խաչատուրն թող ի վէճէզինաց տացէ, և թէ զինչ, փուսուլայ առ սա որ ինչ պիտոյ էր, զի թէ ունիցի յայնցանէ, առցէ ըստ գնոյն, և բերցէ ընդ իւր։ Փուսուլայ մի ևս յղեաց առ սա վասն ճոթեղինաց միայն։ Այսինքն խառալի, աթլասի և մահուտի։ Որոց զգինսն ևս յատկացոյց, զի թէ այն գնովն տացեն, առցէ, և թէ ոչ, մի առցէ։ Զայս փուսուլայս յղեաց ի Բալաղիտ առ Տէր Վ,ահանն, և թէ վասն էր, ի նորին թղթոյն ասելոց եմ։ Այլ և գրեաց Մինաս վարդապետին թէ՝ առ Մուրտիկեանց Առաքելն մեզ դրամ գոյր, (ԱՊ) (որ յիշեցեալ է ի յունիսի ԻԱ։) Յորմէ զմեծ մասն ընդ հաճեացն փօլիս արարաք մեք։ (ԱԸԾ) և մեծ ինչ մասն մնաց առ նա, (Ծ) այլ դու որովհետև զամենայն առեալ ես, (քանզի նախ քան զզնալն հաճեացն էր առեալ։) Ուստի՝ գրես-

ցես ի յետկոյս զապզին՝ զոր ի ձեռն հաճեացն յղեցաք, թէ . . . սրբազան վեհին միացեալն ես առաք։ (Ծ) զի նոցա ասէ միամտութիւն լիցի։ Այլ և գրեալ էր յառաջ թէ՝ Ա պիլօր ջահ և Ա փեշտախտալ թողի ի Փիլիպէ այս ինչ մարդոյ մօտ, զի յղեսցէ ի սուրբ Աթոռսդ, բայց ոչ եկն ցայժմ։ Ուստի՝ ծանոյց սմա զչհասանիլն։ Եւ պատուիրեաց, զի զոր ինչ հոգասցէ, ծածկապէս հոգասցէ։ Եւ մանաւանդ ի գալն աստ խոհեմութեամբ եկեսցէ։ Եւ բազում առ. այսոսիկ պատուէրք։ Թուղթ ես առ. Տէր Պետրոսն գրեաց ի պատասխանի թղթոյն սմա ես նմանապէս շնորհակալութիւն վասն ընդ Մինաս վարդապետին հոգացելոցն։ Եւ վասն բանից Պապիկ աղային նոյն՝ որ ինչ առ Մինաս վարդապետն գրեցաւ։ Եւ վասն տիրացու Յովաննէսի ումեմն, զոր յղեալ էին վասն ձեռնադրելոյ ի քահանայութիւն, (որ լեալ էր երբեմն սպասաւոր Իսահակայ կոչմամբ կաթուղիկոսին։) միամտութիւն, թէ ընկալաք սիրով, և զոր ինչ գրեալ էիք վասն նորա խնդիրս, տեսցուք յետոյ ըստ դիպման ժամանակին։ Եւ զի թուղթ և համբաւ ինչ ոչ գայր ի Բաբերդու Առաջնորդ Սարգիս վարդապետէն, ընդ որում թուղթ գրեցաւ առ. մահտեսի Նիկողայոս ումն, զկարպետս և զփոխլիս առնուլ վասն սրբոյ Աթոռոյս և յղել, (որպէս ասացաւ ի յուլիսի Թ։) Վասնորոյ՝ գրեաց սմա, զի գրեսցէ առ նա զգիր, և ըղստոյգ որպիսութիւն մի իմացեալ գրեսցէ, ծանոյց և զոր ինչ գրեաց ընդ նմա առ. մահտեսի Նիկողայոսն, և յղելն առ նա զԳձ ղուռուշի սանատն Սարգիս պետին, (որպէս ասացեալ է ի յուլիսի Թ։) Եւ յաղագս Եղբեան բէգլուղ պատուէր, զի թէ գտանիցի անդ ծանուսցէ զորպէսն նորին հանդերձ գնովն, որ վասն երկուց վրանաց էր պիտոյ մեզ։ Փուսուլալ մի ես գրեաց առ սա առանձին վասն կարմիր Վանից Կարապետ վարդապետին, (զոր յետոյ ի թղթոջ Սարգիս վարդապետին յիշելոց եմ,) զի գրեսցէ զորպէսն նորին, թէ որոյ հրամանաւ ելեալ իցէ ի թէմսն Կարնոյ ի ժողով, և ի Կարին ով է նմա տիրութիւն առնօղն թէ ի տաճկաց և թէ ի հայոց։ Եւ վասն Կարմիր Վանիցն առնէ զժողովն, և դարձեալ երթալոց է անդ, թէ որպէս։ Այսուրոյն առ. Տէր Պետրոսն յղեցաւ ընդ փայեկին։ Թուղթ ես Բալաղիտ առ Գէորգ վարդապետի եղբայր Ղազարն գրեցաւ. (որ յիշեցաւ ի վերոյ.) Նախ մխիթարութիւն վասն հանգուցեալ ընտանեացն հարուածով ժանտամահին։ Եւ զի՝ սա Տէր Վահանին գրեցուցեալ էր առ սրբազան վեհն զիրիջայ, զե ժամանակ ինչ ներեսցէ մահտեսի Խաչատուրին վասն տալիք դրամոյն, (Բ) (որ ի վերոյ յիշեցաւ։) Յետոյ ասէ մեք հատուսցուք։ Գրեաց սմա սրբազան վեհն թէ՝ որովհետև շատ ժամանակ է, զի ի վերայ նորա է դրամն, և նա մինչև ցայժմ ցաւեցոյց, վասնորոյ՝ այլ չէր պատեհ յայմհետէ ես նմա թուլատրել։ Այլ ահա գրեցաք Մինաս վարդապետին զի առցէ, և թէ նա ա՞նդ չտայցէ, ապա ընդ Մինաս վարդապետին յայդր եկեսցէ, զի ընդ քեզ խօսեցեալ՝ հոգայցէք և տայցէք։ Զսա ես հարկեաց, զի անպատճառ տացեն, զի մի իւրեանց զլխացաւութիւն լիցի։ Եւ սմա ես (որպէս և մահտեսի Խաչատուրին,) գրեաց թէ՝ ուր է Գէորգ վարդապետի դրամն և քսուրն, որ ի քանի տեղիս վասն սրբոյ Աթոռոյս ի նուիրակութիւն գնաց, և յառաջ ես վասն Տաթեւ Վանիցն և սուրբ Կարապետին ի քանի տեղիս գնաց ի ժողովարարութիւնս։ Եւ զոր ինչ ունէր՝ առ ձեզ լինէր։ Եւ զբարսն ևս գիտեմք, որ զփարայ մի ոչ կորուսանէր, այլ շահեցուցանէր միշտ զունեցեալսն։ Ապա՝ այդքանդ միայն է նորա քսուրն և դրամն։ Եւ ապա պատուէր՝ թէ որ այժմ երևի ի մէջն, տուք այժմ, իսկ վասն մնացելոցն յետոյ տեսցուք։ Եւ այլ առ այս բանք։

Թուղթ մի ևս առ. Տէր Վահանն գրեաց, ի պատասխանի թղթոյն, զնոյն՝ զոր ինչ առ Ղազարն գրեաց։ Եւ զառ նա գրեալսն ես ծանոյց։ Եւ պատուիրեաց՝ զի ինքն ևս հարկեսցէ զնոսա տալ առանց ցաւեցուցմանց զայն դրամն և զքսուրսն և զգրեանսն։ Եւ պատուէր դարձեալ սմա, (որպէս և առ Մինաս վարդապետն գրեաց։) Զի յորդորելով ասասցէ նոցա և զգուշացուսցէ, զոր ինչ ունիցին առ ինքեանս ի Գէորգ վարդապետէն բաց յայտցանէ, թէ դրամ և թէ քսուր, տացեն այժմ առանց խօսելոյ և հաչակելոյ։ Զի զայս գիտեն ասէ ամենեքեանքն, զի զոր ինչ ունէր Գէորգ վարդապետն՝ առ. գոսա է, և ի սուրբ Աթոռոջս զդանկ մի ոչ ունի։ Արդ՝ թէ այժմ չտայցեն իւրեանց կամաւ, յետոյ ասէ յորժամ նշանն երեեսցի, զմեծ ամօթս և զգլխացաւու-

թիւնս են կրելոց։ Եւ զի ի գրմղոյն որ էր առ ինքն, (որ յիշեցաւ ի հոկտեմբերի ԺԶ, և ԺԷ.) զմասն ինչ վաճառեալ էր, և մասն ինչ զոլր առ ինքն, հաճեցաւ ընդ վաճառեալսն, և վասն մնացելոցն գրեաց զպատուէր, զի պակաս գնով չծախեսցէ, այլ թէ լաւ գնով առնօղ լիցի տացէ, և թէ ոչ, ծանուսցէ, զի որպէս գրեսցէ, այնպէս արասցէ։ Եւ զի յաղագս փեսայլին իւրոյ՝ (որ յամսոյս Ա յիշեցաւ,) սա զոչինչ գրէր, որ պարտ էր հասանիլ սրբոյ Աթոռոյս։ Վասնորոյ՝ գրեաց թէ զու ես գիտես որ այդ սրբոյ Աթոռոյս պարտի հասանիլ։ Մեք այժմ զոչինչ գրեմք, այլ զու ծանո մեզ, թէ զինչ իցես մտածեալ այդր աղագաւ։ Եւ զորինչ առնելոց իցես, առանց մերոյ գիտութեան մի առնիցես։ Իսկ և յղեցաւ առ սա ճոթեղինաց փուսուլայն՝ (որ ի թղթոջ Մինաս վարդապետին յիշեցաւ) զի թէ անդ Մարդար աղային և կամ այլոց գտանիցի, առցէ, և ինքեան ծանուսցէ։ Եւ թէ ոչ, ապա զփուսուլայն առ Մինաս վարդապետն յղեսցէ ի Կարին, զի նա անդ առցէ։ Ղազարի թուղթն ես առ սա, զի տացէ նմա։ Ընդ Մինաս վարդապետի փայեկին։

Թուղթ ես ի Կարին առ պարոն Մելքոնն գրեաց, ի պատասխանի թղթոյն, հաւանելով խնդրոյն՝ որ զմասն ինչ (ԱՃԾ) տուեալ էր ի գրամոյն որ առ ինքն Մինաս վարդապետին, (որպէս և ի նորին թղթոջն ասացաւ,) և մնացելոցն աղագաւ գրեալ էր զաղերս, զի յետոյ տացէ, հաւանեցաւ, և գրեաց Մինաս վարդապետին չառնուլ։ Բայց և գրեաց սմա՝ թէ՝ գիտես զորպէսն մեր, որ ուր և գոյ մեզ դրամ, գրեալ ձգեմք այդր, զի մեզ պիտոյասցի։ Եւ զիւրեալիդ մեր նման այլոցն ոչ աշխատ առնեմք միշտ, զի յայլոցն փոխ ընդ փոխ առնումք, իսկ զառ քեզ հասեալսն, որքան կամիս թողումք ի վերայ քո, պարտիս և զու այնպէս առնել և ի պատրաստի պահել առ քեզ, զի յորժամ խնդրեսցուք անպատրաստ մի գտանիցիս։ Իսկ բանից մահտեսի Յօնանին՝ (որ յիշեցաւ ի նոյեմբերի ԻԵ, և ի սեպտեմբերի ԻԹ և յայլ տեղիս,) գիտեալ էր յոյժ անյաջողութիւն։ Քանզի՝ որքան փաշայն յուսադրէր զնա կատարել զխնդիրն, նա մեծաւ յուսով նըստէր անդ, և մեծամեծ պարծեցմամբ գրէր առ սրբազան վեհն զթուղթս, և զաւետիսս մատուցանէր։ Իսկ յետոյ՝ վասն իրիք պատճառանաց, յարուցեալ էին Ախլցխայու քաղաքացի տաճիկքն ի վերայ փաշային սպանանել զնա, և յոյժ ճեպով փախուցեալ ելեալ էր անտի, և մերձ ի թեմսն Կարնոյ նստեալ էր ի միում ի թեմիցն Ախլցխայու, և անդուստ արզ արարեալ Թագաւորին։ Եւ Թագաւորն հրամայեալ էր նմա երթալ ի Կարին նստել, իսկ Կարնոյ փաշային հրամայեալ էր ի յԱխլցխայ երթալ։ Իսկ մահտեսի Յօնանն՝ յետ ելանելոյ փաշային նստեալ էր անդ ի քանի աւուրս։ Եւ Ախթարմայիցն զգացեալ սակաւ ինչ զխորհուրդ նորին (զոր տակաւին չէր յայտնեալ անդ ումէք,) և զպատճառ անդ լինելոյն, կամեցեալ էին սպանանել տալ զնա։ Եւ նա առ Ենիչարի Աղասին անկեալ՝ ելեալ էր անտի մազապուրծ, և գնացեալ ի Կարին։ Եւ առ ամօթոյ՝ զայս որպիսութեանց իւրոց ինքն չէր գրեալ, բայց Մելքոնն գրեալ էր զայս առ սրբազան վեհն։ Իսկ և ի թղթոցն զորս աստի տարաւ ընդ իւր, էին առ փաշայն թուղթք ինչ։ Եւ սրբազան վեհին մտածեալ, զի ոչ այնուհետև օգուտ էր մնալն նորին անդ բաց ի վնասուց, վասնորոյ զթուղթ գըրեաց առ Նիրիկատէ մահտեսի Գրիգորն։ Նախ վասն տիրացու Յովհաննիսին միամտութիւն, զոր մահսերով յղեալ էին աստ ձեռնադրել ի քահանայ, թէ լինելոց է ըստ ժամանակին (որպէս և առ Տէր Պետրոսն գըրեաց։) Եւ՝ ապա պատուէր՝ զի առցէ զառ փաշայն մնացեալ թուղթսն առանց պակասութեան, և մահտեսի Յօնանին տուեալ ի սուրբ Աթոռս յղեսցէ։ Եւ զի զԱխլցխայու, և զնոր փաշայէ նորին իմացեալ զորպիսութիւնս գրեսցէ։ Հարցանելով ես սմա թէ՝ եթէ ի նորոյ զմարգ յղեսցուք ֆերմանաւ առ նոր փաշայն, որպէս լինի։ Մելքոնին ևս գըրեաց զայս, զի ընդ մահտեսի Գրիգորին խորհրդակցեալ, որպէս պատշաճ տեսցեն գրեսցեն։ Եւ՝ զի վախճանեալ էր որդի Առաջնորդին Կարնոյ որ էր քահանայ, և վասն ծխոյ նորին գրեալ էր Տէր Պետրոսն առ սրբազան վեհն զխնդիր, զի գրեսցէ մահտեսի Գրիգորին առնուլ վասն իւր։ Վասնորոյ գրեաց սրբազան վեհն մահտեսի Գրիգորին, զի առցէ զայն վասն Տէր Պետրոսին։ Եւ զգրամն գրեաց, զի փոքր ինչ յետոյ առցեն։ Եւ Տէր Պետրոսին ծանուցաւ այս։ Զխնդիր մի ես արարեալ Տէր Պետրոսն, գրեցաւ թէ՝ ի դիպող ժամու տեսցուք։

Թուղթ մի ես առ մահտեսի Ցօնանն գրեաց, հարկ, զի անյապաղ ելեալ փութով եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Ծանոյց և զգրելն մահտեսի Գրիգորին, զի զթուղթսն առցէ ի փաշայէն։ Եւ իւրեան պատուէր գրեցաւ զի մի թողցէ առ փաշայն ի թղթոցն։ Եւ թէ նա ի տալն զգրամ խնդրեսցէ, մի տացէ ընդ վայր, զի բաւական է ասէ, զոր ինչ տուեալ ես ընդ վայր։ Քանզի տուեալ էր նմա զգրամս ինչ։ (Զորմէ ի դէպ տեղւոջ ասելոց եմ։

Թուղթ ես առ Կարնոյ նուիրակ Սարգիս վարդապետն գրեաց, ի պատասխանի թղթոյն։ Որ գնացեալ ի վիճակսն Կարնոյ ի տեղի մի, ուրոյ Առաջնորդն չէր եպիսկոպոս, և ինքն վասն պայմանի ձեռագրին, զոր ի ձեռնադրելն ի յեպիսկոպոսութիւն տուեալ էր սրբազան վեհին, ոչ կարէր զձեռնադրութիւն ինչ առնել անդ։ Իսկ Կարմիր վանից սուտ միաբան Կարապետ պետն, (զոր ի թղթոջ Տէր Պետրոսին ես յիշեցաք,) գնացեալ անդ ինքնագլուխ ըզձեռնադրութիւնս առնէր։ Զոր ծանուցեալ էր սրբազան վեհին։ Վասնորոյ՝ գրեաց վեհն թէ՝ անդ քեզ ձեռնադրութիւն առնել ոչ պատշաճի, ուր լիցի եպիսկոպոս Առաջնորդ, իսկ յայնպիսի տեղիս, ուրոյ Առաջնորդն չէ եպիսկոպոս, և ձեռնադրութիւն հարկաւորի, և ժողովուրդն և Առաջնորդն յօժարիցին, զի դու ձեռնադրութիւն արասցես, զի՞նչ զինչ արգելու զքեզ ոչ առնել։ Եւ պատուիրեաց սմա եւ գրել զորպիսութեանց Կարապետին այնմիկ, թէ հրամանաւ ուրուք է գնացեալ անդ, թէ ինքնագլուխ։ Զի նա ասէր միաբան էր Կարմիր վանիցն, և պարտ էր, զի առանց հրամանի Առաջնորդին անդէն մի ելցէ, որպէս է զի յայգր է եկեալ, իմացեալ մեզ գրեսցես ասէ։ Իսկ և զթուղթ գրեաց առ Գաղատիոյ Առաջնորդ Ստեփանոս վարդապետն, ի պատասխանի թղթոյն։ Առ որ հասեալ էր կոնդակն, որ վասն կարպետից և սփռելեաց գըրեցաւ ի Թեմսն Անկիւրիոյ։ (որ յիշեցաւ ի յօգոստոսի ԻԳ, և գրեցեալ էր ի յապրիլի ԺԱ։) Եւ խնդրեալ էր չառնել զփօլիս ի վերայ իւր և նուիրակին։ Զի նուիրակն ասէ ի Թեմսն է, ես ես կամիմ ի Թեմսն երթալ, և մինչև ցզատիկն նուիրակն զգործն աւարտէ։ Գրեալ էր և զյաջողմանէ գործոյ նուիրակին։ Վասնորոյ՝ գրեաց սրբազան վեհն զպատուէր, վասն Կարապետին, զի լիաձեռն ջանասցէ ժողովել տալ։ Միամտեցոյց ես թէ՝ փօլիս չեմ առնելոց։ Եւ պատուիրեաց, զի ասասցէ նուիրակին ի գալն բերել ընդ իւր զքանի թօփ վեզարցուս, և զջանտարասզ զօֆս, վասն փիլօնի և ֆարաջայի, որք լինիցին ասէ լաւ, միջակ, և ստոր, և որքան մահրամայք ի ձեռն անկցին ի վիճակսն, բերցէ ընդ իւր։ Որք պիտոյանան վասն տաճկաց տալոյ։ Եւ սէր բազում հանդերձ որպիսութեամբք տեղւոյս, զի նա ևս էր գրեալ զտեղւոյ որպիսութիւնսն։ Որոց գլխաւորն էր այս, զի Արքայն Օսմանցւոց յետ քակեցուցանելոյ զմասն ինչ սուրբ Աստուածածնի եկեղեցւոյն որ ի Պօլիս (որպէս ասացաւ ի սեպտեմբերի ԺԹ։) յղեալ էր ի յոմանս տեղիս ևս զքննիչս վասն եկեղեցեաց, յորոց և ի Գաղատիա գնացեալ, զննութիւնս էին հասուցեալ Ստեփանոս վարդապետին, այլ զվնաս չէին տուեալ եկեղեցեացն։ Որոյ աղագաւ գրեաց առ նա սըրբազան վեհն զմխիթարութիւն։ Եւ՝ Պօլիսցիք տուեալ էին նուիրակին զիմտախայ (Կ) վասն պարսպաշինութեան, որոց աղագաւ խնդրեալ էր զթուղթ մի օրհնութեան, ՛զոր յղեաց սրբազան վեհն։ Գիր մահտեսի Գրիգորին Ջուրոյն առ ինքն յղեցաւ, իսկ Սարգիս և Ստեփաննոս վարդապետացն և մահտեսի Ցօնանինն առ Մելքոնն յղեցան, զի յիւրաքանչիւրսն հասուսցէ. Որովք եւ Ներսէս անուամբ փալեկն, զոր Մինաս պետն էր յղեալ ի դեկտ. ԺԴ։

ՃԽԲ.

Առ Վանայ նուիրակ Բաղդասար վարդապետն ի Կարմիր Կոնդ։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Վանայ նուիրակ Պաղտասար վարդապետն, որ ըստ գրելոյն առ ինքն յապրիլի ԻԳ, զժողովեալ տաւարսն և զոչխարսն ինքեամբ իսկ առեալ եկեալ էր ի Կարմիր Կոնդ, որք էին, ԱՌԾ ոչխար, և ԲԾՁ տաւար։ Եւ անդ զհամբաւս լեզկեաց լուեալ՝ որ ի վերոյսդ ասացաւ.—, գրեալ էր սրբազան վեհին, զի որպէս կամիցի, այնպէս արասցէ։ Եւ ինքն կամէր անտի յետս դառնալ ի գործն իւր։ Եւ սրբազան վեհն գրեաց, զի մի անտի դարձցի, այլ եկեսցէ աստ ընդ տաւար և ոչխար բերողացն որք աստի յղեցան։ Զի ունիմք ասէ զկարօտութիւն և զխօսելիս հարկաւորս։ Ցղեցաւ ի ձեռն Գալուստ վարդապետին ի օգոստոսի ԺԴ։

1769

ՃԽԳ.

Առ Չարքնզօղլի Ցօնանն ի Կարին։ Ու առ Նմնուանցի Մահտեսի Ցովհաննէսն վասն Հիսապից:

Թուղթ գրեաց սրբազան վեհն ի Կարին առ. Չերքեզօղլի Ցօհանն, (որ լիշեցեալ է յանցեալ ամին ի մայիսի ԻԴ,) ի պատասխանի թղթոյ նորին։ Որ յանցեալ ամին ելեալ ի Բազիշու գնաց ի Պոլիս, և այժմ ֆերմանաւ Թագաւորին եկեալ էր ի Կարին և գրեալ էր զորպէսն իւր սրբազան վեհին։ Եւ որպէս յանցեալ ամին, նոյնպէս և այժմ գրեալ էր զգանգատ զԱռաջնորդէն Կարնոյ, և խնդրեալ էր լինել վրէժխնդիր։ Եւ սրբազան վեհն գրեաց թէ՝ զայդ և մեք թէպէտ գիտեմք ի վաղուց, այլ տակաւին թուլատրեմք, վասն չունելոյ զժամանակ։ Մանաւանդ՝ զի այժմ ի մէջ ըղբաղանաց էաք, (որ էր լեկզեաց երկիւղն, որ ի վերդ յամսոյս ԺԱ յիշեցաւ. Զօր և ծանոյց նմա։) Եւ խոստացաւ յետոյ հետևել գրելոցն, և լիապէս գրել զպատասխանի թղթոյն իւրոյ։ Ծանոյց սմա և զչգրելն նուիրակ Սարգիս վարդապետին առ. ինքն զթուղթ, (որ յիշեցեալ է ի յուլիսի ԺԴ, և ի ԻԷ։) և հարկեաց ասել նմա, զի գրեսցէ զորպէսն իւր և զործոյն, և զպատասխանիս գրելոցն իւրոց։ Եւ եթէ նա անդ ոչ իցէ, ինքն զորպէսն նորա իմացեալ գրեսցէ։

Թուղթ մի ևս առ. Նմնուսեցի մահտեսի Ցովաննէսն, և յիւր եղբայր մահտեսի Զաքարիայն գրեաց, մեղադիր լինելով նոցա, որք յայսչափ ժամանակս զկատարեալ որպիսութիւն ինչ ոչ գրեցին ի կողմանէ հիսապին որ ընդ ինքեանց, (որ ի յուլիսի ԺԴ, և ի վերոյս նորին յիշեցեալ է։ Ի ԻԷ ևս) այնր աղագաւ մահտեսի Փիլիպպոսին գրեաց ըզթուղթ։ Եւ հարկեաց՝ զի գրեսցեն պարզապէս, թէ յումմէ զինչ առին, ի նուիրակէն որքան, ի Մուրտիկեանցն որքան և ի Տէր Պետրոսէն, որքան։ Եւ թէ առեալ էք ասէ, ընդէ՞ր զԺամասուկն մեր ոչ յղէք առ մեզ։ Իսկ և յառաջագոյն նուիրակն զգրամ էր հասուցեալ սոցա, (Ա) (որպէս ասացաւ ի մայիսի Դ։) Այժմ գրէր սրբազան վեհին թէ՝ այս որպէս ամանաթ է առ մահտեսի Ցովհաննէսն, երբ և կամիցիս առ, զի ահա սա զգրամն իւր ի մահտեսի Փիլիպպոսէն է առնելոց։ Եւ սրբազան վեհն ևս այժմ գրեաց սոցա, թէ այն գրամն (Ա) առ քեզ ամանաթ մնասցէ, և մի խառնեսջիք ընդ այդ հիսապիդ, և յետոյ որպէս և գրեսցուք, այնպէս արասջիք։ Զորպէսն նուիրակին ի սոցանէ ևս խնդրեաց։ Ընդ ումեմն փակեկի։ Ի օգոստոսի ԺԵ։

ՃԽԴ.

Առ Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդ., պատուէր՝ շուտով բերել զախթարմայ երիցունսն,զորս ըմբռնեալ էր:

Բալաղիտու Աւտի փաշային՝ ըստ խոստմանն իւրոյ՝ (որ ասացաւ ի յուլիսի ԻԶ, և ԼԱ), զախթարմայ երիցունսն կալեալ տուեալ էր Զաքարիա վարդապետին բերել աստ։ Եւ զի գոյր ի միջի համբաւ լէկզեաց, (որպէս ասացաւ ի վերոյող,) վասնորոյ՝ մտածեաց սրբազան վեհն, թէ դուցէ Զաքարիա վարդապետն երկուցեալ՝ ոչ բերցէ զնոսա։ Իսկ այժմ համբաւն լէկզեաց անլալտացեալ էր։ Վասնորոյ՝ զթուղթ մի գրեաց առ նա, միամտեցուցանելով յայնմ կողմանէ, և հարկ, զի անկասկածիք լեալ՝ և դայլ պատճառս ևս ի բաց եդեալ բերցէ զնոսա։ Ի օգոստոսի ԺԶ։

ՃԽԵ.

Բերելն Զաքարիա վարդապետին զախթարմայ երիցունս Ալաշկերտու ի սուրբ Աթոռս։

Իսկ յետ աւուրց Բ, եկն Զաքարիա վարդապետն, և երեք զԾ ախթարմայ քահանայս, Ա սարկաւագ և զԱ աշխարհական, որ յոյժ մոլորեցուցիչ էր քան զայլսն։ Եւ փաշայն՝ և այլք տաճիկք գրեալ էին առ սրբազան վեհն զթուղթ այսր աղագաւ։ Եւ սրբազան վեհն գրեաց առ փաշայն զթուղթ մի շնորհակալութեան վասն այսր։ Թուղթ մի ևս առ Տատա աղայն գրեաց, որ ի փաշայէն մուրաշիր [8]) էր կարգեցեալ ըմբռնել զախթարմայսն, և բերել աստ ընդ Զաքարիա վարդապետին։ Եւ եկեալ մինչև ի Կարմիր Կոնդ, խօթացեալ էր, և զծառայս իւր եղեալ ընդ Զաքարիա վարդապետին յղեալ էր աստ, և գրեալ ևս զթուղթ առ սրբազան վեհն, և ինքն դարձեալ անտի ի Բալաղիտ։ Վասնորոյ՝ գրեաց սրբազան վեհն զշնորհակալութիւն, և խոստացաւ յետոյ ընդ Զաքարիա վարդապետին յղել զվարձս վաստակոց իւրոց։ Զի մնայր աստ Զաքարիա վարդապետն։ Վասնորոյ՝ և զմիւս տաճկաց թղթոց պատասխանիսն եթող յետոյ գրել։ Ի օգոստոսի ԺԸ։

ՃԽԶ

Առ Աբրահամ վարդապետն ի Թիֆլիզ, վասն փոլիցայ առնելոյ:

Թուղթ գրեաց սրբազան վեհն ի Թիֆլիզ առ սրբոյ Գեղարդեանն սպասաւոր Աբրահամ վարդապետն, զի յարդեանց իւրոց տացէ զդրամս ինչ (Ծ, կամ, Կ,) Աւետիք աղային, և զթուղթ մի առցէ ի նմանէ ի վերայ վեքիլին նորա, որ էր աստ յԵրևան, զի որպէս զնայ աստ Երևանու դրամն, ըստ նոյն զնոյն նա աստ տացէ մեզ։ Եւ յղեսցէ զթուղթըն շուտով աստ։ Եւ որպէս յամսոյս ԺԱ, այժմ ևս հարկեաց՝ հարցանել Սրքային, և զստոյգ որպիսութիւն ինչ իմանալ զլէկզեացն, և գրել։ ԶԴաւիթ վարդապետէն, և դայլ որպիսութեանց ևս գրել։ Ընդ գնացողաց ոմանց Ի օգոստ. ԺԹ։

ՃԽԷ.

Գալն Վանայ նուիրակ Պաղտասար վարդապետին ի սուրբ Աթոռս, եւ դառնալն անդ վերստին:

Վանայ նուիրակ Բաղդասար վարդապետն, զտաւարն և զոչխարսն որք յիշեցան յամսոյս ԺԴ, առեալ եկն ի սուրբ Աթոռս։ Եւ ի քանի աւուրս մնացեալ աստ, դարձաւ անդրէն, աւարտել զմնացեալ գործն։ Եւ զթուղթս ոմանս ես խնդրեալ տարաւ։ Որք էին, Շնորհակալութեան թուղթ առ Վանայ Առաջնորդ Գրիգոր վարդապետն, և առ մահտեսի Թօմայն, Պարիկ աղայն, մահտեսի Յովաննէսն, մահտեսի Սիմէօնն, և մահտեսի Մինասն։ Որք բանից և գործոց Պաղտասար վարդապետին լեալ էին յամենայնի ձեռնտու, և կնուիրակութիւնն լիապէս տուեալ։ Իսկ և վասն Ջուղայեցի տանցն՝ (որք յիշեցան ի յապրիլի ԻԳ) վերստին խնդրեալ էին ի ձեռն Պաղտասար վարդապետին, գրել թէ՝ որպէս եղև։ Եւ սրբազան վեհն որպէս և յայնժամ, գրեաց թէ՝ մեք այսպէս գիտեմք՝ զի որքան անձինք գոյին անդ, նաւսագլուխ էառ ի նոցանէ Քեալանթարն զդրամն, և ոչ ի միոյն կամ ի յերկուցն։

Ուրեմն՝ դուք ևս ասէ նաւասպլուխ Թաւֆի [9]) արարեալ, առէք յամենեցն զալդ դրամդ, և տուք դրամ տուողին, և մի ևս երկարացուցանէք։

Թուղթ մի ևս առ. մահտեսի Անտոնն, որ Ժ զուռուշ, և Դ չինի ղաւաթ քառասնից էր տուեալ։ Օրհնութիւն։—Եւ զի գնալ կամէր ալսուհետև ի կողմունս Բաղիշու և Մշու, վասնորոյ էառ զլանձնարարութիւնս ոմանս, որք էին։ Թուղթ առ. սրբոյ Աթոռոյս վէքիլ և զանձապետ մահտեսի Պապալն, մխիթարութիւն վասն մահուան եղբօրն իւրոյ մահտեսի Սիմէօնին։ Իսկ և վասն Պաղտասար վարդապետին յանձնարարութիւն։ Եւ սակս գանձանակին ևս պատուէր։ Եւ զի սուրբ Կարապետի Դանիէլ վարդապետն ի Բաղիշու զանձապետացն ևս առեալ զզանձանակադրամս, (որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺՋ երորդ ամին, ի նոյեմբերի ԻԳ.,) վասնորոյ՝ այժմ գրեաց սմա, զի զհին և զնոր արդիւնսն գանձանակին, բոլորապէս լանձնեսցէ Պաղտասար վարդապետին։ Զի զոր ինչ տուեալ ես ասէ Դանիէլ վարդապետին, այն ոչ է մեզ ընդունելի, զի նա վասն սրբոյ Աթոռոյս ոչ է առեալ, և մեզ ոչ է հասուցեալ։ Ուստի պարտիս ասէ՝ թէ զփոխն նմա տուեցելոյդ, և եթէ զնոր արդիւնսն գանձանակիդ լրապէս տալ Պաղտասար վարդապետիդ։ (Զի և իշխանքն Վանայ այսպէս էին արարեալ ի գնալ անդ Պաղտասար վարդապետին։ Զի փոխանակ դրամոցն, զորս դանձապետքն մեր տուեալ էին Դանիէլ վարդապետին, ի գանձանակաց սրբոյ Կարապետին զդրամս հանեալ՝ տուեալ էին Պաղտասար վարդապետին։) Ի սոյն միտ, թուղթ ևս առ. գանձապետսն սրբոյ Աթոռոյս մահտեսի Վարդանն, մահտեսի Պետրոսն և մահտեսի Մալխասն, ի Բաղէշ։

Յանձնարարութիւն ես հասարակ ի Բաղէշ, առ. մահտեսի Կիրակոսն, մահտեսի Սիմէօնն, մահտեսի Մատթէոսն, խօջայ Միլիտոնն, խօջայ Թումանն, խօջայ Միրզալն, և խօջայ Յովսէփն։

Յանձնարարութեան թուղթ մի ևս առ. Մախսուտ բէկն ի Մուշ, որում զփոքր ինչ գիւլապ, և Ե հատ մոմ լղեաց։

Թուղթ մի ևս ի Վան առ. Իսաղ աղալն, շնորհակալութիւն վասն արարեալ լաւութեանցըն Պաղտասար վարդապետին և վերստին յանձնարարութիւն։ Որում ես զգիւլապ և զԷ մոմ լղեաց։ Եւ Պաղտասար վարդապետն ի օղոստ. ԻԴ։

ՃԽԸ.

Առ որդի Փանահխանին, նւ առ Յովհաննէս կաթուղիկոսն:

Ի Հերակլ Արքայէն Դեօրկի անուամբ վրացի ոմն առաքեցեալ աստ առ. խանն, երթալր աստի ի Շուշի՝ առ. որդի փանահխանին Իբրահիմ Խալիլ խանն, վասն Շատրլու կոչեցեալ տաճկացն, որք փախուցեալք աստի գնացին լերկիր նորին, զի յետս լղել տացէ զնոսա աստ, և ի մէջ սոցա լիցի հաշտութիւն։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն զթուղթ սիրոյ գրեաց առ. Իբրահիմ Խալիլ խանն, լորում և զլանձնարարութիւնս դրեաց վասն Յովհաննէս կաթուղիկոսին, և Դանձասարու։ Եւ զումանս հարկաւոր բանս բերանով ասաց Դեօրկո.ն՝ ասել նմա։ Եւ գրեաց թէ՝ եթէ կատարեսցես, ի քէն շնորհակալ եմք լինելոց, և մեզ լաւութիւն մեծ է։ Ա ամանն չայ ևս լղեաց նմա, զոր ինքն էր խնդրեալ յալլոց ձեռօք։

Թուղթ մի ևս առ. Յովհաննէս կաթուղիկոսն գրեաց, ի պատասխանի Բց թղթոցն իւրոց ի լուլիսի ամսեանն գրեցելոց։ Եւ ծանոյց զդրեալն՝ յառաջ քան զալս ևս ի յունիսի ԺԷ զթուղթ առ. ինքն, և այժմ զլանձնարարութիւն գրելն վասն իւր առ. խանն։ Եւ զի դրեալ էր թէ՝ գնուիրակունս եմ լղելոց ի կողմն Շրուանու, գրեաց լղել փութով. և ըզլանձնաբարութիւնս էր խնդրեալ, դրեաց թէ՝ մեք ի հանդիպիլն գնացողաց՝ աստի գրեմք, դու միամիտ զնուիրակսդ լղեա։ Եւ զյաջողութեանց իւրոյ կողմանն էր գրեալ՝ պատուիրեաց ես արիանալ։ Եւ վասն Մելիք Ադամին զօրհնութեան թուղթ խնդրէր, զի զնա ևս յիւր կողմն արկցէ, զի նա միայն էր ջատագովն չիք Իսրայէլին։ Դրեաց թէ՝ չունիմ ըզպատճառ ինչ՝ որով գրեցից դմա զթուղթ։ Դու զոր ինչ արար ցայժմ, գիտէ լաւապէս։ Իսկ մեք՝ ոչ գրով և ոչ բանիւ դմա զոչինչ եմք արարեալ. իսկ թէ ինքն զզջացեալ յարարմանցն՝ գրեսցէ առ. մեզ զթուղթ մեղայական, մեք ևս սիրով ընկալեալ՝ դրելոց եմք առ. դա

զԹուղԹ օրհնուԹեան և սիրոյ։ Ապա Թէ ոչ, ինքն լիցի ողջ, մեք միշտ զնա մերն գիտելով՝ բացի յօրհնելոյ զոչինչ ինչ արարեալ զմա։ Եւ սմա՝ և այլ մէլիքացն անորոշաբար ողջոյն գրեաց, և մեղադրեաց, զի յառաջ մինչ կո-իւ էր ի միջի, զԹուղԹս յոլովս գրէին, իսկ այժմ և ոչ մի։ Եւ Գեօրկին ի օգոստոս ԻԸ։

ՃԽԹ.

Առ Ախլցխայու ժողովուրդն նոցա, դառնալ յուղղութիւն, եւ առ փաշայն, եւ յայլս:

Դարձաւ ի յԱխլցխայու մահտեսի Յոհաննն, որ առաքեցաւ անդ ի յուլիսի ԺԶ։ Ընդ որում եկն և փաշայի սառաֆ Պապիկ աղայն ի սուրբ ԱԹոռս։ Իսկ՝ զոր ինչ տարեալ էր աստի վասն փաշային և այլոց, հասուցեալ էր յիւրաքանչիւրսն։ Այլ ի բերանոյ ԱխԹարմայիցն զհուճէԹ [10]) առնուլ չէր կարացեալ, զի փաշայն չէր յօժարեալ, ասելով Թէ՝ ի մէջ ֆարմանին չէ գրեցեալ Թէ հուճէԹ առ, այլ Թէ Թամբեհ արա։ Նմանապէս և չէր յօժարեալ, զի ըստ խնդրոյ սրբազան վեհին ըզքահանայս և զիշխանս ոմանս ի Քաղաքէն աստ յղեսցէ, այլ ասացեալ էր Թէ՝ առանց ֆարմանի ես ոչ կարեմ զոք յղել։ Այլ սակայն նորապէս ֆարման պիտոյ է, (ասացեալ էր,) զի հրաման լիցի այնպէս Թամբեհ առնել, մինչև սպանանել ևս զանհնազանդսն, և ի դարձելոցն զհուճէԹ ևս առնուլ, զի մի այլ ևս ախԹարմայուԹիւն արասցեն։ Ասացեալ էր ևս Թէ՝ զո ոք առաւել անհնազանդ գիտէք ի գլխաւորացն, Թէ քահանայ և Թէ իշխան, գրեցէք զանուանսն, և ասացէք խալիֆային՝ զի նորապէս աքսորման ֆարմանս բերել տացէ վասն նոցա։ Ո՛չ միմիայն, այլ Բ անձին մի ֆարման, և Բց ևս մի։ Եւ այսպէս՝ որքան և իցեն, զորս և յղեսցէ առ իս, զի ես օրըստօրէ հանեալ զմի մի ի նոցանէ, տեսից եԹէ ոչ դառնան յախԹարմայուԹենէ, յաքսորս առաքեցից։ Այլ զի զայլոսիկ ասելով՝ կամէր զի նորապէս վասն իւրեան զդուռն առնելոյ բացցէ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն ոչ հաճեցաւ ընդ այս ասացեալս նորա։ Երկայնամտելով՝ զի Թերևս դարձցի քաղաքն ի յուղղուԹիւն, և հանելն զփաշայի ասացեալ ֆէրմանսն ի զուր լիցի։ Քանզի արդէն իսկ սկսեալ էին ոմանք ի նոցանէ դառնալ, որ և Տէր Կիրակոս յանուն քահանայ ոմն ծերունի, և Զ տունք ևս աշխարհականք, ի յուղղուԹիւն էին եկեալ։ Եւ այլքն ամենայն զերկուց և զերից գլխաւորաց միայն կախեալք, ասէին Թէ՝ եԹէ նոքա դարձցին, մեք ևս դարձցուք։ Իսկ առհասարակ քաղաքն զայս ասէին Թէ՝ չորք գլխաւորքն մեր որք ի յԷջմիածին վարեցան, որպէս և լիցին, մեք ևս հետևեսցուք նոցա։ Իսկ նոքա ահա դարձեալք էին ի յուղղուԹիւն, որպէս յամսոյս Է և Դ ասացաւ։ Եւ հրամանաւ սրբազան վեհին գրեցին ևս նոցա զուղղիլն իւրեանց, և զնոսա ևս յորդորեցին յուղղիլ, և ի գլխաւորացն ևս գալ աստ։ Որ չէր տակաւին հասեալ առ նոսա։ Յետոյ մի անգամ ևս ըստ նմին գրեցին, և այն ևս տակաւին ոչ էր առ նոսա հասեալ։ Իսկ այժմ ևս հրամանաւ սրբազան վեհին, Պօղոս վարդապետն միայն գրեաց Է անձանց՝ Բ քահանայից և Ե իշխանաց, զի եկեսցեն աստ։ Եւ սրբազան վեհն այսպէս ուղղուԹեան և գալստեան նոցին սպասելով՝ և զասացեալսն փաշային ոչ բարւոք վարկանելով, ոչ արար այնպէս։ Այլ զԹուղԹ մի գրեաց առ փաշայն, ի պատասխանի ԹղԹոյն, շնորհակալելով վասն արարեալ լաւուԹեացն, և կատարելոյն զխնդիրս իւր (որպէս ի յուլիսի ԺԶ արարեալ էր,) որ նորապէս ևս զայս արարեալ էր, զի ախԹարմայքն չէին յօժարեալ գնալ յեկեղեցիսն, որովհետև էր ի ձեռն Մարտիրոս վարդապետին, և զարարողուԹիւնսն ըստ Հայաստանեայցս սուրբ եկեղեցւոյ առնել տայր ուղղափառ քահանայիցն՝ որք անդ էին, այլ ի տունս իւրեանց կատարեալ էին զժամերգուԹիւնս յաւուրս ինչ, մինչև զմկրտուԹիւն և զպսակ ևս։ Զոր Մարտիրոս վարդապետն արզ էր արարեալ փաշային, և փաշայն հրամայեալ էր սաստիւ Թէ՝ եԹէ այսուհետև արտաքոյ եկեղեցւոյ ի տեղւոջ ուրուք Բ կամ Դ աշխարհական, և Ա քահանայ ի միասին գտանիցին, այսպէս և այնպէս պատիժս տայցեմ, և զայս ինչ տուգանս առնելոց։ Յայսմանէ երկուցեալ նոցա, ապա գնացեալ էին յեկեղեցին։ Զի և պատժեալ իսկ էր զքահանայս ոմանս, որք արտաքոյ եկեղեցւոյ զօրէնս ինչ կատարեալ էին։ Հրամայեալ էր ևս՝ զի առանց

հրամանի և գիտութեան Մարտիրոս վարդապետին, ոչ ոք ի քահանայից իշխեսցէ զօրէնս ինչ կատարել։ Վասն որոյ գրեաց վասն այսոցիկ սրբազան վեհն զշնորհակալութիւնս։ Եւ այս ես եթէ՝ ոչ գիտեմ թէ վասն Էր զհուճէթս ոչ առնուլ ետուր ի բերանոյ ախթարմայիցն, որ ոչ սակաւ լաւութիւն էր մեզ, ընդ որ և մեք յոյժ շնորհակալ էաք, և հաստատութիւն ես էր արարեալ լաւութեանցդ։ Եւ յանձնարարութիւն ես վասն Մարտիրոս վարդապետին, և այլ բանք առ. այսոսիկ։ Մանոյց և ղուղղիլն աստ եկեալոցն. և թէ՝ ահա դոքա որք սոցա հետեւիլ խոստանային, այժմ այլ ոչ ես ունիմ պատճառ, զի սոքա ահա դարձան ի յուղղութիւն։ Խոստացաւ ես՝ թէ դրելոց եմ այսուհետեւ ի Պօլիս, զի զիթլախն սոցա հանցեն։ Պորինջան յղեցաւ սմա ընծայ։

Թուղթ ես առ. փաշայի քեահեայն գրեաց։ Որ մինչև ցայժմ ի Խաշաչխաց երկիրն է լեալ որ գնացեալ էր անդ վասն բերելոյ զնոսա կատարելապէս ի հնազանդութիւն Օսմանցւոց, և չէր օգտեցեալ։ Իսկ այժմ մինչ դարձեալ էր ի յԱխլցխայ, ախթարմայքն ի նա անկեալ՝ կամեցեալ էին թէ առնել զնա ինքեանց։ Ուստի մեքայինքն խրատաւ փաշային խազնադարին՝ խոստացեալ էին նմա զդրամս, (5) որոյ աղագաւ և Մարտիրոս վարդապետն թէմէսուկ էր տուեալ նմա։ Ապա նա ես ի մեր կողմ լեալ՝ ջատագովեալ էր յոյժ։ Որոց աղագաւ սրբազան վեհն գրեաց զշնորհակալութիւնս, և զայս ես թէ՝ եթէ դու յայդր լինէիր, ես լաւագոյն հոգացեալ լինէր բանդ այդ, և ոչ գիտեմ թէ՝ Դօվլաթլու փաշայն վասն Էր ոչ է առեալ զհուճէթս ի բերանոյ ախթարմայիցն, եթէ առնոյր՝ յոյժ լաւ լինէր։ Եւ խնդիր՝ զի սոյն բանիցս այսուհետեւ ջատագով լիցի լաւապէս, զի ի գլուխ եկեսցէ, և Մարտիրոս վարդապետին յամենայնի մուղայէթ լիցի։ Եւ զնորին խոստացեալ դրամն ես յղեաց, (5) ի ձեռն Պապիկ աղային, և խնդրեաց՝ զի զՄարտիրոս վարդապետի տուեալ թէմէսուկն յետս տացէ ինքեան։ Իսկ, և յետ այսց այսպէս լինելոյ, Ախթարմայքն զսակաւաւոր հայսն որք անդ էին, նեղացուցանէին ի մէջ սալեանի, և այլ հարկատրութեանց։ Վասն որոյ՝ գրեաց սրբազան վեհն առ քեահեայն զխնդիր, զի տիրութիւն արասցէ նոցա։ Եւ այլ բանք առ այսոսիկ, որում և փոքր ինչ վարդաջուր յղեաց։

Բաց ի յետին խնդրոյն՝ ըստ սմին ոճի Թուղթ ես առ. Ենկիչար աղասին, Դիւտն Էֆէնտին, և փաշայի խազնադարն գրեցաւ։ Այս խազնադարս էր, որ ի յուլիսի ԺԶ քեահիայ գրեցաւ, զի յայնժամ քեահիայն էր ի յերկիրն Բաշաչխայ, և զիշխանութիւն նորին սա վարէր։ Սմա ես վարդաջուր յղեցաւ։

Թուղթ մի ես առ. Մուհամատ աղայն գրեցաւ, որ յառաջագոյն երեր աստ զաքոռբեալսն, (որպէս ասացաւ ի յուլիսի ԺԶ,) ի պատասխանի թղթոյն իւրոյ, որ խնդրեալ էր զփոքրիկ խալիչայ մի, և սրբազան վեհն յետոյ յղել խոստացաւ։ Եւ վասն Մարտիրոս վարդապետին և բանից նորա յանձնարարութիւն սմա ես։

Թուղթ ես առ ժողովուրդսն Ախլցխայու հասարակապէս, յիշեցուցանելով նոցա զբանս երկուց թղթոցն, զորս ի յուլիսի ԺԶ, և յօգոստոսի Է գրեաց առ նոսա։ Եւ զի նոքա յառաջագոյն գրեալ էին առ սրբազան վեհն զթուղթ մի, և ծածուկ ի գործակալացն մերոց որք անդ, յղեալ էին աստ ի ձեռն յատուկ փայեկի միոյ։ Որ էր կարի լրբութեամբ և ընդդիմութեամբ լի։ Զի յայտնապէս առնուին զախթարմայութիւն ի վերայ իւրեանց, և զինքեանս ասէին ուղղափառ։ Եւ խառնելով զգողս ընդ ճշմարիտ հովուաց, ասէին թէ՝ մեք ճշմարիտ աշակերտք եմք Լուսաւորչին, և որդւոց և թոռանց նորին, և ամենայն նոցին հետեւող Հայրապետաց և վարդապետաց։ Ներսէսի Կլայեցւոյն, և Ներսէսի Լամբրոնացւոյն, Եզրի կաթուղիկոսին, և Վահանայ, և Կոստանդնի, և Յօհաննու Բռնեցւոյն, և զայլ այսպիսի անյիշելիս ընդ ճշմարիտ հովուաց խառնեալ, ասէին զինքեանս նոցին հետեւող։ Եւ զԵ ժողովս ես յիշելով՝ ասէին թէ՝ մեք զաւանդութիւնս նոցին ունիմք։ Որք էին ժողովն Կոստանդնուպօլսի որ հրամանաւ Մօրկայ։ Ժողովն Կարնոյ՝ որ հրամանաւ Հերակլի, ժողովն Շիրակայ գաւառի, ժողովն Տարսոնի, որ առ. Կոստանդին կաթուղիկոսիւ, և ժողովն Ատանայ։ Եւ այլ այսպիսի խօսս լրբութեան և անզգամութեան գրեալ էին։ Որում սրբազան վեհն ոչ գրեաց յայնժամ զպատասխանի, այլ դարձեալքն ի նոցանէ որք աստ, այսինքն՝ Պօղոս և Յովաննէս վարդապետքն, և Տէր Ստեփանն և Տէր Յակոբն, գրե-

ցին նոցա առ այս զյանդիմանութիւնս, և ընդ փայեկլին յղեցին։ Իսկ սրբազան վեհն որովհետև այժմ թուղթ գրէր, զայն յիշեաց, և սիրով յանդիմանեաց, թէ ոչ էր այն պատասխանի թղթոյն մերոյ զոր գրեալ էիք։ Եւ մանաւանդ՝ հեռի էր ի քաղաքականութենէ, և ոչ վայել էր ձեզ գրել զայնս առ մեզ։ Ցորոց ծանեաք, զի դոյ ի ձեզ տհասութիւն և անկատարութիւն։ Եւ մեք առ այնս ոչինչ նե ղասքտեցաք, այլ տհասութեան ձերոյ տալով՝ ներեցաք հայրաբար։ Եւ վերստին ի գութ հոգևոր որդւոց մերոց շարժեալ, վերակրկնեմ ձեզ դարձեալ զնոյն յորդորմունսն, զի բաւական համարեսջիք, որքան մինչև ցայժմ ընթացայք ընդ անկոխ անպէտս, թողլով զուղիղ և զհայրենաւանդ պողոտայն, և դարձջիք՝ ի յուղղութիւն։ Այս երիցս է ասէ զի գրեմ ձեզ զայս, զի շահեցից զձեզ։ Ապա թէ ոք յամառեալ մնասցէ ի ձէնջ ի նոյն չարիսն, եղէց ես ասէ քաւեալ յարենէ նորին։ Տեսէք ասէ զսէրն իմ որ առ ձեզ։ Զի որ կարողս եմ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ զձեզ պատժել, տակաւին սիրով ի յուղղութիւն կոչեմ, ապա թէ ոչ անսայցէք հոգևոր խրատու իմոյ, յայնժամ զփոշիմանութիւնս յոլովս էք կրելոց։ Գրեաց ես թէ՝ ի յաշխարհականացդ եմ միամիտ, զի երբ և իցէ զառնալոց էք։ Բայց ի քահանայիցն ով ոք հնազանդեսցի սրբոյ Աթոռոյս և Աթոռակալաց սորին, և ընկալցի զհաւատս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, նա զձեզ հովուեսցէ։ Իսկ որ ոք ի քահանայից ի նոյն չարիսն յամառեալ մնասցէ, նա մի հովուեսցէ զձեզ, և մի ես բնաւ զգործ ինչ քահանայութեան կատարեսցէ, և լուծեալ ես է ի կարգէն։ Եւ գրեաց նուիրակին զհրաման, առնել այսպէս, և ոչ հնազանդողաց նորին գրեաց զսաստ։ Ծանոյց և ըզզայն ասա Տէր Կիրակոսին ուղղեցելոյ՝ մեղայիւ և զղջմամբ, (որ յիշեցաւ ի վերոյ,) և իւր զնա ընդունիլն, և փառաւորիլն, և խիլայելն։ Եւ այս թէ՝ լիցի դա ձեզ բարի օրինակ և խրատիչ. զոր և դուք ընկալջիք, հնազանդեսջիք իբրև ի մէնջ առաքելոյ։ Ապա թէ ոք ներհակիցի դմա, մեզ և սրբոյ Աթոռոյս է ներհակ, և չէ մնալոց առանց պատժոյ։ Վերստին ծանոյց և զուղղիլն ասա եկեղոցն, և որպէս յառաջ, այժմ ես գրեաց ի քահանայիցն և ի յիշխանացն ոմանց գլխաւոր անձացն գալ ի սուրբ Աթոռս։ Օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՑԼԳ, ՑԼԴ, ՑԼԵ։

Թուղթ մի ես առ Մարտիրոս վարդապետն գրեաց, ի պատասխանի թղթոյն, և զայս ամենայն վերոգրեալ բանքս ծանոյց նմա, և զգրելն առ տաճիկսն զթուղթս, և տալն Պապիկ աղային։ Եւ պատուէր, զի ընդ նմա տարեալ տացեն յիւրաքանչիւրսն։ Եւ պատուէր ես՝ սիրով ընդ ժողովրդեանն վարիլ, և՝ զհասարակ թուղթն առ սա յղեաց, և գրեաց ծանուցմամբ ընթեռնուլ ի մէջ ժողովրդեանն, և սիրով խրատելոյ ոչ դադարիլ։ Ծանոյց ես սմա զբերելն ի Քիւրտիստանու զէ ախթարմայս, (որպէս ասացաւ յամսոյս ԺԸ,) և ուղղելն զնոսա, (որպէս ասելոց եմ յետոյ։) Զի ծանուսցէ նոցա, և գիտասցեն թէ՝ յամենայն տեղիս է՝ ձեռնարկեալ ի յախթարմայս ի յուղղել, և ոչ ի յինքեանս միայն։ Իսկ և Պօղոս վարդապետին էր անդ ԲՃ, և Կ տուն ծուխ, ի հայրենեաց։ Որոց աղագաւ գրեաց սմա սրբազան վեհն ըստ աղերսանաց Պօղոս վարդապետին, զի որպէս և լեալ է ի րնէ սովորութիւն, զարդիւնս նոցին Պօղոս վարդապետի մօրն հասուցանել տացէ։ Եւ զի՝ թէ զպատշաճաւոր ոք գտցէ, յարտաքին վիճակսն ի նուիրակիլ յղեսցէ։ Փուսուլայ մի ես գրեաց առ սա, զի զգրամն, (5) զոր ընդ Պապիկ աղային յղեաց, տացէ քեահիային, և զիւր տուեալ թէմէսուկն ի նմանէ առցէ։ Պապիկ աղային ես իբր ընծայ զգրամս ետ (I) ծանոյց սմա։ Եւ զԲ շալսն, զորս տարաւ մահտեսի Ցօնանն վասն Ենկիչար Աղասուն և Դիւան Էֆէնտուն, չէին պատշաճ տեսեալ տալ նոցա, և այժմ առ սա էին, վասնորոյ՝ գրեաց մի տալ ումեք, զի որպէս գրեսցէ, այնպէս արասցէ։ Եւ զփարայ մի այսուհետև մի տացէ ումեք կամ խոստասցի, զի թէ արասցես ես ասէ՝ չէ ինձ ընդունելի։ Եւ զի խսաանայր յոյժ ախթարմայից, պատուիրեաց սիրով վարիլ, և համեստութեամբ ի ձեռն բերել զնոսա։ Եւ այնքան անդէն մնալ, մինչև ասէ գրեալ եմ ի Պոլիս վասն նոր ֆարմանի, (որպէս ասացաւ ի յուլիսի ԺԶ. և ի Ի.) եկեսցէ, և յայնժամ որպէս գրեցից, այնպէս արասցես։ Եւ զի՝ վասն արտաքին վիճակաց ախթարմայիցն ես ընդ փաշային խօսեսցի, տեսցէ եթէ զինչ ասէ։ Եւ այլ առ այսոսիկ պատուէրք։

Թուղթ ես առ. հայ ամալայսն փաշային գրեաց, այսինքն՝ աս. Շինիկչի բաշի խօջայ Իսպիրն։ Նալբանդ բաշի մահտեսի Պաղտասար՝, և մահտեսի Շահինն։ Քիլէրճի բաշի Փիլիպպոսն։ Էքմէքճի բաշի Կարապետն։ Աչչի բաշի Այվազն և Ղարակեօզն։ Թէքզի բաշի Սրաբիոնն և Ասլանն։ Դաւուչչի բաշի մահտեսի Վարդանն, և պարոն Բալասանն, մէյտան ուստասի Պետրոսն և Ցարութիւնն։ Բաշխալ ֆայ ուստայ Դաւիթն։ Աչչի Իսպիրն, և միւս Իսպիրն։ Եւ առ. Ղասար բաշի խօջայ Սարգիսն։ Շնորհակալութիւն վասն զՄարտիրոս վարդապետն չահելոյն իւրեանց և բանիցն ջատագով լինելոյն։ Եւ պատուէր՝ ես առնել զնոյն։ Զայս ես առ. Մարտիրոս վարդապետն լցեաց։ Եւ Պապիկ աղային և Մարտիրոս վարդապետի չաթիրն ի օգոստոս Ը։

ՃԺ.

Առ Կարսայ փաշայն թուղթ սիրոյ, ընդ Իւսիւֆ չուխատարին:

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ. Կարսայ փաշայն, ի պատասխանի սիրոյ թղթոյն, զոր ի ձեռն Իւսուֆի գրեալ էր առ. սրբազան վեհն։ Եւ զպարինճան էր խնդրեալ՝ զոր լցեաց՝ հանդերձ խաղողով և մեխիւ։ Եւ զի նորապէս յերկրէս մերմէ գողք գնացեալ զձեօզ մի աւար էին առեալ ի Կարսայ, որպէս և յառաջ, (որ ի յօգոստոսի Է ասացաւ։) Վասնորոյ՝ չուխատարս լցեալ էր առ. խանն, յետս տալ հրամայել զաւարն։ Սրբազան վեհին ես էր գրեալ այսր աղագաւ։ Իսկ խանն այսր աղագաւ զմարդ լցեաց առ. փաշայն, և զթուղթ ևս գրեալ, խոստացաւ տալ։ Սրբազան վեհն ևս ըստ այսմ գրեաց։ Ի սեպտեմբեր Բ։

ՃԺԱ.

Ի Կարին, վասն դրամոց ինչ, եւ ի Բայազիտ թուղթք, եւ միամտութիւն նուիրակին վասն հասուցելոցն։

Դրամն այն՝ (42) որ հասանիլ պարտ էր Նոնուսեցի մահտեսի Յովաննիսին, (զորմէ յօգոստոսի ԺԵ, և ի վերոյս նորին ասացեալ է,) այժմ լրապէս հասեալ էր նմա ի Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսէն, և մասն ինչ (24) ի Տէր Պետրոսէն։ Ուստի առեալ էր ի նմանէ մահտեսի Փիլիպպոսն զթամասուկն սրբազան վեհին, զոր առեալ էր նա աստ ի տալն մեզ զդրամն, և լցեալ էր առ սրբազան վեհն. և գրեալ զմիամտութիւն։ Որ էհաս աստ յամսոյս Ա։ Ուստի՝ զթուղթ գրեաց սրբազան վեհն առ մահտեսի Փիլիպպոսն, ի պատասխանի թղթոյն. շնորհակալութիւն վասն հասուցանելոյն մահտեսի Յովաննիսի զդրամսն, զոր տալոց էաք նմա։ Եւ վասն Թոխաթու նուիրակի փոլիցային կրկին ես միամտութիւն, (որպէս և ի յուլիսի ԺԴ, որ և ի Ի ևս ի թղթոջ Զաքարիա վարդապետին լիշեցաւ,) թէ ահա տալոց է անդ Զաքարիա վարդապետն Նազարէթին։ Իսկ դրամն այն՝ (3Ճ) զոր մահտեսի Փիլիպպոսն տուեալ էր Տէր Պետրոսին, և յետս էր առնլոց ի նմանէ, (որ ի յունիսի Ժ, և ի վերոյս նորին յիշեցեալ է։) այժմ մահտեսի Փիլիպպոսն ոչինչ գրէր զայնմանէ, թէ առի կամ ոչ։ Վասնորոյ գրեաց զհարկ՝ զի թէ չիցէ առեալ ցայժմ, առցէ։ Նոյնպէս՝ և զԲաբերդու Առաջնորդ Սարգիս վարդապետի տալիք դրամն, (3Ճ) եթէ մինչև ցայժմ ոչ իցէ առեալ՝ պատուիրեաց հարկել գրով և առնուլ։ Եւ թէ ոչ տացէ, ծանուցանել ինքեան, մեք կարեմք առէ առնուլ ի նմանէ։ Եւ վասն մահտեսի Նիկողայոսի գրոյն՝ զոր վասն այս գրամոյս ի յապրիլի ԻԸ գրեաց, էհարց թէ՝ զինչ արարեր, լցեցեր առ նա, թէ ոչ։ Եւ զի՝ զպարտս մահտեսի Յովաննիսին (Բ9Խ) ահա եստ ի տալեացն իւրոց զոր մեզ տալ պարտ էր, (Ը) և վերոյիշեալ Տէր Պետրոսի և Սարգիս վարդապետի տալիքն ևս՝ ի մէջ այն տալեացն էին, (որպէս ասացեալ է յապրիլի ԻԸ։) վասնորոյ՝ գրեաց թէ՝ եթէ զայգուսիկ ևս առցես, Յեսս մեզ այսինչ տալոյ, (ԵԿ) զոր ի յետկոյս թէմէյսուկին քոյ զախիրա[11]) արարաք, և՛ քեզ՝ գրեցի առէ զի զիտասցես։ Իսկ և Դեղու Առաջնորդ Յօհան վարդապետն, ի տալեացն իւրոց՝ (3) (որ յիշեցաւ ի դեկտեմբերի ԺԴ,) զմասն ինչ հասուցեալ էր Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին, (Ռ) և մասն ինչ (I) տակաւին մնացեալ էր տալիք։ Վասնորոյ՝ գրեաց մահտեսի Փիլիպպոսին զայն ևս առնուլ ի նմա-

նէ։ Եւ թէ ոչ տացէ, ծանուցանել ինքեան։ Եւ որպէս ի յօգոստոսի ԺԵ ի Զարքեաղ Օղլի Ցօհանէն, այժմ ես ի սմանէ էհարց զորպէսն նուիրակին թէ վասն Ըր յայսչափ ժամանակս ոչ գայ, և գիր ես ոչ գրէ։ Եւ յԱնկիւրիոյ ամանաթ ինչ եկեալ էր առ. նա ի նուիրակէն, գրեաց զի յղեսցէ։ Եւ՝ զԱխլցխայու անցսն ծանոյց, որպէս յօգոստոսի ԼԱ, և ի վերոյս նորին ասացեալ է։ Եւ այլ առ. այսք բանք։ Թուղթ ես առ. Նսնուսեցի մահտեսի Ցովաննէսն. և մահտեսի Սարգիոն, ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Վասն թէմէսուկին վերոյիշեցելոյ սոցա ես միամտութիւն. թէ էհաս մեզ։ Եւ ըստ որում գրեաց սրբազան վեհն ի մայիսի Ը վասն թղթոյ, այժմ զթապազալ մի յղեալ էին, և զգինն ծանուցեալ՝ (զի էր օղմայն Դ ղռուշի։) Զի թէ հաւանեսցէ ընդ լաւութիւնն և ընդ գինն, գրեսցի զի յղեսցին. Եւ զի թաղթն էր լաւ, իսկ գինն չատ։ Գրեաց՝ զի թէ Ա օղմայն Գ ղուռուշ և կիսով տայցեն, բարի է, ծանուսցէ, զի գրեսցէ ինքեան առնուլ, և յայնժամ որքան և խնդրիցէ, առեալ յղեսցէ։ Իսկ եթէ ոչ, չէ պիտոյ ասէ։ Փուսուլայ մի ես գրեաց առ. մահտեսի Ցովաննէսն, վերստին պատուէր վասն գրամոյն։ (Ա) զոր նուիրակն հասուցեալ էր սոցա, (որպէս և ի յօգոստոսի ԺԵ,) զի պահեսցեն առ. ինքեանս ամանաթ, և յետոյ որպէս գրեսցէ, այնպէս արասցեն։ Ցորմէ մասն ինչ (2) նուիրակն տակաւին չէր հասուցեալ սոցա, և յետոյ հասուցանելոց էր։ Զայս թուղթս առ. մահտեսի Փիլիպպոսն յղեաց տալ մահտեսի Ցովաննէսին։

Իսկ և Բոլաղիտու նուիրակ Փիլիպպոս վարդապետն՝ յարդեանց իւրոց զդրամս էր տուեալ Տէր Վահանին, զի աստ հասուսցէ, և ի նմանէ զղապղ էր առեալ։ Եւ Տէր Վահանն ի սրբազան վեհէն զապղ էր խնդրեալ, զի տացէ նուիրակին, և զիւր զապղն առցէ։ Ուստի զմիամտական զապղ մի գրեաց սրբազան վեհըն առ. Փիլիպպոս վարդապետն վասն հասուցեալ արդեանցն, (Գ) որ առ. Տէր Վահանն յղեցաւ տալ նմա, և զիւր զապղն առնուլ։

Թուղթ ես առ. Մարգարէ աղայն, մահտեսի Էլօն և պարոն Թումանն գրեցաւ, վասն Ցովաննէս անուամբ աւն միոյ, որ յիշեցեալ է յանցեալ ամին, ի մայիսի ԺԴ, որոյ Վիրապ ամն սուտ գաւաճի լեալ քարշէր ի դիւան փաշայլին, և կամէր հանել ի գրամոց։ Որ առ. սրբազան վեհն զպաղատանս էր գրեալ օգնել ինքեան։ Եւ զի փաշայն հրամայեալ էր նոցա ի վաճառականաց զատաստանս երթալ, վասնորոյ՝ գրեաց սրբազան վեհն, զի արդարութեամբ տեսցեն զդատաստանն, և զՑովհաննէսն մի զըրկեսցեն, որ մեզ գրամ ես էր տալիք։ Զի տակաւին չէր տուեալ մեզ զդրամն, (8) զոր յանցեալ ամին տալ պարտ էր։ Այս առ. Տէր Վահանն յղեցաւ տալ նոցա։ Նոյնպէս՝ և թուղթքըն Կարնոյ զի յղեսցէ, ի ձեռն իւր յղեալ փայեկին, որ զթուղթսն Կարնոյ եբեր, ի սեպտեմբեր Գ։

Թիֆլիզեցի Յարութիւն վարդապետն, որ յիշեցաւ ի նոյեմբերի ԺԴ, փախուցեալ ի սրբոյ Աթոռոյս գնաց ի Գեանջա։ Վասնորոյ՝ թուղթ գրեաց առ. Մէլիք Ռուստամն սրբազան վեհն, զի ուր և իցէ նա յայն կողմունսն, կալեալ յղեսցէ աստ։ Զոր իւզբաշի Ալլահվէրտին յղեաց առ. նա։ Ի սեպտեմբեր Դ։

Փօլիցալուգիր գրեաց սրբազան վեհն առ. Վանայ նուիրակ Բաղտասար վարդապետն, (որ յիշեցաւ ի յօգոստոսի ԻԴ, զի յարդեանց նուիրակութեան զՀԵ ղուռուշ դրամ տացէ քանքանչի Կիրակոսին։ (Որ յիշեցաւ յապրիլի ԻԳ։) Զի զքանքանն՝ զոր ի մէջ Պարսպին սրբոյ Աթոռոյս հանել տալը սրբազան վեհն, զերծաւ։ Ի սեպտեմբեր Ե։

Ցբհնութեան թուղթ գրեաց սրբազան վեհն առ. Հռիփսիմէ կին ումն ի Պօլիս, որ վասն հոգւոյ առն իւրոյ մահտեսի Պետրոսին զԳ ղուռուշ դրամս էր յղեալ ի սուրբ Աթոռս, ի ձեռն մահտեսի Կարապետ անուն ուխտաւորի միոյ։ Ի սեպտեմբեր Ժ։

ՃԺԱ.

Ի Թիֆլիզ եւ ի Ղզլար թուղթք, վասն ընչից անհաղորդ մեռելոյ ուրուք:

Դարձաւ ի Թիֆլիզու սրբոյ Գեղարդեան սպասաւոր Աբրահամ վարդապետն, (որ ի յօգոստոսի ԺԹ յիշեցաւ,) և զսուրբ Գեղարդն

երեր անտի։ Ընդ որում եղեալ էր Արքային զոմն ի ծառայից իւրոց, զԲէջանն, և զիր եւ էր գրեալ սրբազան վեհին։ Իսկ և վասն ընչից անհաղորդ մեռելոյն՝ (որ ի յունիսի Գ ի Թուղթսն Ղզլարու յիշեցաւ.) գրեալ էր Արքային՝ թէ մեռեալն այն, (որոյ անունն Զալի էր,) է այս քաղաքացի, և ի Ղզլար վախճանեալ է, և զինչս բազումս ունի։ Եւ մեք զազգականն նորա՝ որոյ անունն է Փարսատան, մահսարաւ յղեցաք անդ՝ զի տիրեսցէ ընչիցն, իսկ ինչքն են ի ձեռն ուրումն, որոյ անունն է Պապա. գրեա ի Ղզլար քոյոց գործակալաց, զի Փարսատանին տալ տացեն զայն ինչսն։ Եւ զի ի թաղելն այս մեռելոյս Յովաննէս վարդապետն չէր թոյլատրեալ, ուստի յիշեցեալ Պապային զԾ թուման զրամս էր խոստացեալ սրբոյ Աթոռոյս տալ։ Ապա նա տուեալ էր զհրաման թաղելոյ։ Եւ ապա խնդրեալ էր զխոստացեալն, և Պապային չէր տուեալ։ Ի նոյն միջոցսն Մինաս վարդապետն ես ի Ղզլար գնացեալ աստի՝ նա ես խնդրեալ էր զխոստմունսն, և նմա ես չէր տուեալ։ Վասնորոյ՝ զԹուղթ գրեաց սրբազան վեհն առ իշխանսն՝ և քահանայս՝ և առ հասարակ ժողովուրդսն Ղզլարու, յորում և զանուն Յովաննէս վարդապետին գրեաց, կարծելով տակաւին անդ լինել։ Յիշեցուցանելով զընդդիմութիւն Պապային, որ զխոստմունսն զոր խոստացեալ էր սրբոյ Աթոռոյս, չէր տուեալ, և ապա հրաման, զի առցեն զայն ինչսն դաւթարաւ և առանց պակասութեան ի Պապայէն, և յանձնեսցեն Փարսատանին, զի բերցէ ի Թիֆլիզ, մեք կարեմք ասէ առնուլ անտի զբաժինն սրբոյ Աթոռոյս։ Եւ բաց ի Փարսատանէդ յայցմանէ, որ մահսարաւ Հերակլ արքային և Թիֆլիզու ժողովրդեանն եկեալ է յայդր, այլ ոչ ոք ունի իշխանութիւն տիրել ընչից մեռելոյն այնմիկ։ Եւ պատուիրեաց՝ զի թէ Յովհաննէս վարդապետն անդ լինիցի, ձեռամբ նորին արասցեն զայս, ապա թէ ոչ, իւրեանք արասցեն։ Եւ թէ Պապայն չտայցէ, ծանուսցեն ինքեան։ Թուղթ մի ևս ի Թիֆլիզ առ Տէր Նիկողայոսն գրեալ՝ զայս թուղթս յղեաց առ նա՝ հաւատարմաւ և շուտով ի Ղզլար հասուցանել։ Թուղթ մի ևս առ Հերակլ արքային՝ ի պատասխանի թղթոյն, նախ վասն սրբոյ Գեղարդեանն և Աբրահամ վարդապետին աստ հասանելոյն և ապա ծանոյց ըղ-գրելն ըստ խնդրոյն առ ժողովուրդսն Ղզլարու զԹուղթ, զի զինչս Զալուն տացեն Փարսատանին։ Ծանոյց ես թէ՝ Պապայն Ծ թուման է խոստացեալ յընչից մեռելոյն տալ սրբոյ Աթոռոյս, և չէ տուեալ, զգործակալսն մեր խաբէ, թէ ահա ի Թիֆլիզու վարիոն եկեալ է, ես ոչ կարեմ տալ։ Իսկ զՓարսատանն խաբէ, թէ ի սրբոյ Աթոռոյն երկնչիմ, և տալ ոչ կարեմ։ Արդ՝ ասէ, յորժամ այն ինչքն եկեսցեն յայդր, յայնժամ՝ վասն միզ խոստացեալ Ծ թումանին կամք քոյ է։ Եւ ըստ որում խնդրեաց յարքայէն սրբազան վեհն ի յուլիսի Ի, գրեալ էր այժմ զորպիսութեանց Ռուսաց համբաւոյն փոքր ինչ, որ լուրաւ էր, և գլխաւոր ոմն եկեալ ի վերին Վրաստուն, ինքն ընդ յառաջ երթայր նմա։ Խնդրեաց՝ զի ես ծանուսցէ զորպէս լինելն համբաւոյն։ Իսկ և պատասխանիք թղթոցն՝ որք ի յունիսի Գ գրեցան ի Ղզլար, այժմ եկն։ Տաճիկն այն՝ որոյ աղագաւ գրեաց սրբազան վեհն գնել զրամով և յղել աստ, Ռուսքն քրիստոնէացուցեալ էին, և արկեալ զխաչն ի պարանոցն, ընդ որում չէր ումեք հնար խօսել։ Եւ Դաւիթ վարդապետն գալոց էր ի Ղզլար։ Յղեցան Թուղթք ընդ Ազալօյի եղբայր Բէջանին, որ ընդ սրբոյ Գեղարդեանն էր եկեալ։ Ի սեպտեմբեր ԺԳ։

ՃԺԲ.

Ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն, գրել կերպիւ ինչ զպատերազմէն Ռուսաց։

Թուղթ գրեաց սրբազան վեհն ի Պօլիս առ սրբոյ Աթոռոյս Նուիրակ Զաքարիա վարդապետն, յիշեցուցանելով նմա վերստին ըղգրեալսն առ ինքն ի յուլիսի Ի, և մինչև ցայժմ ոչ ընկալնուլն զպատասխանիս նոցին։ Եւ յետ այնորիկ ուղղելն զԱխլցխայու Ախթարմայսն, որք բերան աստ, (որպէս ասացաւ յօգոստոսի Գ.) Նոյնպէս գրերելն ի յԱլաշկերտու ևս զէ Ախթարմայ էրէցս և աշխարհականս, (որպէս ասացաւ ի ԺԸ օգոստոսի,) և ուղղելն զնոսա ևս՝ (որպէս յօգոստոսի ԼԱ ասացաւ ի թղթոջ Մարտիրոս վարդապետին, և յետոյ ևս ասելոց եմ) Եւ զի ի զեկ-

տեմբերի ԺԳ գրեաց առ սա մի գրել ումեք զհամբաւոյ պատերազմին Ռուսաց ընդ Օսմանցիս, և մի խօսել ևս ընաւ զայնցանէ, զի վտանգաւոր էր, իսկ այժմ՝ զի լուր սաստկացաւ համբաւ այնմ կողման, վասնորոյ՝ գրեաց զի անորոշաբար կերպիւ ինչ զստուգութիւն համբաւոյն գիտացեալ գրեսցէ ինքեան։ Եւ զոր ինչ ի Վրացն կողմանէ հնչէր, որպէս ի վերդ յամսոյս ԺԳ ասացաւ, ծանոյց նմա անորոշաբար։ Փուստլայ մի ևս գրեաց առ նա, զի յառաջագոյն գրեալ էր սրբազան վեհին թէ՝ Յարութիւն ոմն աղայ, գնացեալ աստի ի Ֆռանկստուն, այժմս եկեալ է, որ գիտէ լաւապէս զբանս իմաստասիրականս, որ ի մէջ լատինացւոց զոն։ Եւ յայդր գալ խնդրէ. եթէ կամիս, եկեսցէ։ Իսկ նոյն Յարութիւնն գրեալ էր զթուղթ մի առ Աբրահամ վարդապետն, և զոր ինչ գիտէրն, ծանուցեալ էր սեռօրէն։ Եւ զի զպարտս բազումս ունէր, խնդրէր ազատել զինքն ի պարտուցն, զի եկեալ աստ մնասցէ։ Եւ յայսմանէ զկարծիս էառ սրբազան վեհն, թէ գուցէ ոչ այնքան գիտասցէ զոր ինչ գրեալ էր, այլ վասն ազատելոյ ի պարտուցն զմեզ խաբել կամի։ Վասնորոյ՝ գրեաց Զաքարիա վարդապետին թէ՝ ասասցես դմա ի քէն, թէ սրբազան վեհըն ի խնդիր է լոյծ որպիսութեանց խաւարման արեգական և լուսնի, արդ թէ գիտես դու, գրեա թէ երբ, և յորում ժամու, և բոպէով խաւարին, ի տուընջեան, եթէ ի գիշերի, զի ի վեց ամիսն միանգամ հանդիպի խաւարումն. զայս ասէ գրեցուցեալ յղեսցես ինձ, և ապա՝ որպէս և գրեցից, այնպէս արասցես։ Իսկ և Կեսարացի Սարգիս վարդապետն գրեալ էր առ սրբազան վեհն զթուղթ, և զերիս գիրս ցուցեալ, այսինքն՝ զգիր Ոսկանի Աստուածաշնչոյն, զգիր Ճաշոցին, և զգիր Մխիթարայ բառարանին, զի ի նոցանէ զորն և կամիցի ի Վենետիկ փորագրել տացէ պարագայիւք իւրովք, յղեսցէ աստ։ Եւ սրբազան վեհն այժմ չգրեաց ինչ նմա պատասխանի, այլ գրեաց Զաքարիա վարդապետին, թէ յետոյ գրելոց եմ, այսպէս ծանո նմա։ Այս թուղթս ընդ մահտեսի Կարապետ տղային յղեցաւ, որ յամսոյս Ժ յիշեցաւ, զի դեռ աստ էր տակաւին։ Ի սեպտեմբեր ԺԳ։

Օրհնութեան թուղթ գրեաց սրբազան վեհն ի Թօխաթ առ ոմանս բարեպաշտ անձինս, որք զԴ ղուռուշ ողորմութիւնս էին յղեալ վասն սրբոյ Աթոռոյս. ի ձեռն տիրացու Գալուստ յանուն աղայի միոյ։ Որ և աստի ի սեպտեմբեր ԺԳ։

ՃԺԳ.

Ուղղութիւն Ախթարմայ Քահանայիցն Ալաշկերտու։ Եւ վասն նոցին աստ յղելոյն, շնորհակալութիւն առ Բայազիտու իշխօղսն։

Երիցունքն Ախթարմայք՝ որք եկեալ աստ, (որպէս ասացաւ յօգոստոսի ԺԸ,) յետ խրատուց բազմաց դարձան ի յուղղութիւն, և գիր ևս ետուն ի բերանոյ իւրեանց (որպէս և ի վերդ ի թղթոջ Զաքարիա վարդապետին ևս ասացաւ։) Ապա՝ զերկուս ի նոցանէ այսինքն՝ զՏէր Խաչատուրն՝ որ էր ի Մօլլայ Սուլէյմանայ. և զՏէր Գրիգորն՝ որ էր ի Նաւկայ, առեալ ընդ իւր դարձաւ յետս։ Իսկ Գ քահանայքն, այսինքն՝ Տէր Ղազարն որ էր ի Գարսանայ, Տէր Պօղոսն ի Ղարասուայ, և Տէր Յարութիւն՝ ի Միրանգայ, Ա սարկաւագ ևս —յանուն ի Գարսանայ, և Ա աշխարհական ևս՝ անունն Մաթօ, ի—գեղջէ, որ չարագոյն մոլորեցուցիչ էր քան զնոսա, մնացին աստ խորհրդով ինչ, զոր յետոյ ի կատարելն՝ ասելոց եմ։ Այլ ի բերանոյ սարկաւագին և Մաթոյին, տաճկերէն գիր առաւ։ Իսկ սրբազան վեհն վասն սոցա զթուղթ գրեաց առ Բայազիտու Աւտի փաշայն, կրկին անգամ շնորհակալութիւն վասն յղելոյն աստ զնոսա։ Որպէս և ի յօգոստոսի ԺԸ։ Եւ վերստին խնդիր, զի ևս մուղալէթ լիցի այսմ, և ով ոք յիշխանութեան իւրում արասցէ դարձեալ զախթարմայութիւն թամբեհ արասցէ նոցա, և մի թողցէ ընդ նոյն ճանապարհն գնալ։ Եւ յամենայնի ձեռնտու լիցի Զաքարիա վարդապետին, ի յուղղելն նորա զնոսա, և ի վրէժխնդիր լինելն նորա ոչ հնազանդողացն։ Թուղթ ևս՝ առ Իսաղ բէկն և առ Մօլլա Մուսայն, առ Թօփրախղալայու Աւզուլլա բէկն, և առ Խալիլ Աֆանտին, ի նոյն միտս։ Աւզուլլայ բէկին և այս

զրեցաւ աղերսանք, զի մի առցէ տուգանս յաստ եկեալ քահանայիցն, ըստ որում սպառնացեալ էր, զի ահա ասէ հնազանդեցան մեզ, և եկին ի յուղղութիւն։ Թուղթ մի ևս առ Տատա աղային գրեաց՝ ի նոյն միտ, և ըստ որում ի յօգոստոսի ԺԸ խոստացաւ, այժմ զվարձն վաստակոց նորին յղեաց, (ՀԵ) ի ձեռն Զաքարիա վարդապետին։ Թուղթ մի ևս առ Մանազկերտու իշխօղ Մահմատ բէկն գրեաց։ Զի յախթարմայ քահանայիցն մի ոմն փախուցեալ էր անդ, և Զաքարիա վարդապետն գրեալ էր նմա յղել առ ինքն։ Իսկ նա գրեալ էր երդմամբ, թէ աստ չգտանեցաւ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն գրեաց, զի յորժամ գտանիցի, յղեսցէ աստ առ ինքն։ Նա և՝ թէ այլ ախթարմայ ի յիշխանութեան իւրում գացի, և Զաքարիա վարդապետն ազդեսցէ ինքեան, կալեալ աստ յղեսցէ կապանօք. և անդ ես թամբեհ արասցէ, յայնժամ ասէ՝ ոչ սակաւ լինելոց եմք զքէն շնորհակալ։ Գրեաց և զթուղթ առ Մարդար աղային, և առ մահտեսի Էլօն, և յիւր որդի Ստեփաննն, և ծանոյց զուղղիլն ախթարմայիցն, և խնդրեաց զի ձեռնատու լիցին Զաքարիա վարդապետին, յորժամ վասն նոցա, կամ միւս մնացեալ Ախթարմայիցն աղագաւ զրանս ինչ ասասցէ փաշային, և հոգասցեն ընդ նմա։ Սոցա փոքր ինչ գինի յղեցաւ։ Եւ այս ևս գրեցաւ Մարդար աղային թէ՝ զոր ինչ խարճս արարեալ էր Զաքարիա վարդապետն ի դրունս դոցա, զամենն մեք տուաք, և ի վերայ մեր հաշուեցաք։ Թէ դէպ լիցի. ծանուսցես դոցա, զի գիտասցեն թէ ի մէնջ է։ Եւ զի զթաւթիշ ֆարմանի սօտաթն [12]) էր տարեալ Զաքարիա վարդապետն, որով ղալյոսիկ արարեալ էր, իսկ առլն նորին ես երբեմն ի տեղիս տեղիս պիտոյանալը նմա, վասնորոյ՝ զայն ես տարաւ, զի փաշային և այլոց ցուցեալ՝ նա և ի մախկամայն [13]) ես, յղեսցէ յետս առ մեզ։ Ախլցխայու ֆարմանի սաւատն ևս տարաւ, ի ցուցանել անդ փաշային, զի տեսցէ և իմասցի զզրեանսն ի նմա և թէ փաշայն Ախլցխայու որպէս կատարեաց զհրամայեալսն ի նմա, և ինքն ևս ի նոյն նախանձ վառեսցի։ Կամէր ևս սրբազան վեհն ի բերանոյ այսց քահանայիցս զտաճկերէն հուճէթ առնուլ տալ ի դատարանում, վասնորոյ՝ զօրինակն աստ դրեցուցեալ՝ ետ Զաքարիա վարդապետին, զի ըստ այնմ օրինակի անդ առցէ զհուճէթ. քահանայքն ևս գրեցին ժողովրդոցն իւրեանց, զի դարձցին ի յուղղութիւն, մեք էաք ասեն ուսուցիչքն ձեր, ահա ի յուղղութիւն եկաք, զի ծանեաք զճշմարտութիւն, դուք ևս մեզ լերուք հետեօղք։ Տարաւ ևս Զաքարիա վարդապետն զխաղող՝ և զայլ մրգեղէնս, զի փաշային, և որոց և կամիցի ընծայեսցէ։ Որ ել աստի ի սեպտեմբեր ԺԴ։

ՃԺԴ.

Ի Ջուղայ վասն նուիրակին բանից, եւ Գիլան եւս Թուղթք, ընդ Աստուածատուր վարդապետին։

Որ ինչ ի մայիսի ԻԹ ասացաւ զնուիրակէն Սպահանու, թէ զայս ինչ գրեալ էր զինքն ընծայ առաջնորդէն Ջուղայու նախքան զգնալն ի Շիրազ, զնոյնս գրեալ էր և ի Շիրազու՝ հանդերձ զՔեալանթար Սարգիս աղայէն ևս բազմօք գանգատանօք, (Քանզի ընդ նմա ևս էր զանհամութիւնս յոլովս արարեալ, և զայնպիսի հաւատարիմ բարեկամն սրբոյ Աթոռոյս վիրաւորեալ ոչինչ պատճառօք,) որ յառաջ քան զայս էհաս աստ, ի ձեռն վրացի Զալբէկին, որ յիշեցաւ ի յուլիսի ԻԸ։ Իսկ և Քեալանթարն զնմանէ էր գրեալ գանգատ բազմօք դժգոհանօք, զորս ասելն անհամութիւն բերէ։ Եւ վերջապէս խնդրեալ էր, թէ տար զսա աստի։ Իսկ սրբազան վեհն ոչ գնա խոտելով բացասութիւն գրեաց խնդրոյն, և ոչ զնուիրակն խայտառակելով գրեաց զայս, այլ զթուղթ գրեաց առ Քեալանթարն ի կերպ փուսուլայի, ցաւելով վասն վիրաւորելոյն ի նուիրակէն, և որոյ աղագաւ զնուիրակն զատելի և պատժելի գոլ ցուցանելով։ Եւ ապա խնդիր՝ զի թէ կարիցէ այնքան համբերել, մինչև նուիրակն զգործն աւարտիցէ, ապա ինքն ևս լիցի նմա ձեռնտու ի փութով աւարտել, և յղեսցէ ի սուրբ Աթոռս։ Ցուցանելով նմա զվնասն, և զպակասութիւն անուան սրբոյ Աթոռոյս, որք ի բերելն զնա, և նոր նուիրակ առաքելն լինելոց էին։ Զի չէ եղեալ բնաւ, թէ զսրբոյ Աթոռոյս նուիրակի գործն կիսակատար թողեալ՝ յետս բերիցեմք

ի սուրբ Աթոռս։ Իւրեան ես գրեալ եմ առէ, զի բաց ի գործոյն իւրոյ այլ ոչինչ բանս խառնեսցի, և զգործն փութով աւարտեալ եկեսցէ։ Ապա թէ ոչ կարիցես առէ համբերել ցաւարտելն գործոյն, ապա այլ ոչ ունի օգուտ մնալն դորա յայդր։ Զի թէ դու այդպէս, ապա այլքն, և կամ Առաջնորդն որպէս են վարելոց ընդ նմա, և զինչ արդիւնք լինելոց են անտի սրբոյ Աթոռոյս։ Ուստի՝ եթէ ոչ լինիցի առէ ըստ կամաց քոց, յղեսցես շուտով, և այլ ոչ է պիտոյ մեզ այդ նուիրակութիւնդ։ Զի ես առէ զբոլոր աշխարհ սչ փոխանակեմ ընդ խաթեր քոյ, թող թէ զայդ։ Վասնորոյ՝ զթուղթ մի ևս գրեաց սրբազան վեհն առ Պօղոս վարդապետն, զի զգործն թողցէ կիսակատար, և ելեալ եկեսցէ ի սուրբ Աթոռս փութապէս։ Զի հարկաւորապէս պիտոյ է մեզ առէ։ Զայս թուղթս բաց եղ ի թղթոջ Քեալանթարին, և զփութսուլայ գրեալ եղ ի նմա, զի թէ ոչ կամիցի մնալ անդ նուիրակին, կնքեալ տացէ նմա, և յղեսցէ փութով յայսկոյս։ Իսկ թէ համբերել կամիցի, մինչև նա զգործն աւարտիցէ, ապա՝ պատառեսցեն ըզթուղթն, և մի ումեք ցոյց տայցէ։ Իսկ և ի Ջուղայեցւոց մահսար եկն վասն Առաջնորդին իւրեանց Մկրտիչ պետին, (զոր ինքեանք ընտրեալ և եղեալ էին,) ըստ որում խոստանայլին յառաջ յղել, որպէս ասացեալ է ի մարտի ԺԸ, և յայլուր։ Ցորում ոչինչ խնդիր գոյր վասն Առաջնորդին, թէ կամ Առաջնորդ կարգեա մեզ զսա, և կամ Առաջնորդական կոնդակ յղեա, այլ միայն զպատմութիւն արարմանց իւրեանց գրէին, թէ այսպէս ընտրեցաք զսա, և մեզ առաջնորդ արարաք։ Եւ ի վերջն այս թէ՝ գրեցաք զի գիտակ լիցիս։ Առ այս յոյժ ի խոր խոցեցաւ սրբազան վեհն, և որ դրելեաց նուիրակին ոչ անսալով՝ ի վերայ նորին դարձեալ բարկանայր, և նախատանօք բազմօք մեղադրէր թէ ընդէ՞ր ոչ սիրով վարիս ընդ դոսա, այժմ զնոյն՝բարկութիւնն յԱռաջնորդն դարձուցեալ՝ (թէպէտ և զնուիրակն ոչ ամենևին արդարացուցանէր։) կամէր պատժել զնա։ Սակայն ի պատիւ և ի սէր Քեալանթարին նկատելով՝ թոյլ ետ այժմ, և առեալ զօրինակն մահսարին՝ յղեաց առ Քեալանթարն, մեղադիր լինելով՝ թէ ընդէ՞ր ոչ իմացար զգրեալսդ ի մէջ գրին, և ապա կնքեցեր։ Ուստի, ի վերոյիշեալ փուսուլայակերպ թղթոջն, յետ բանիցն՝ զորս յաղագս նուիրակին գրեաց, վասնորոյ նորա ես ի կարճոյ զփոխադրութիւնս գրեաց Քեալանթարին, յիշեցուցանելով նմա զառաջին անցսն, որ գնացեալ նա յԵրուսաղէմ, առեալ էր զնուիրակութիւն Հնդկաց երկրին միանգամ, և աւարտեալ։ Եւ դարձեալ միանգամ ես առեալ զնուիրակութիւն այնու պայմանաւ, զի ի Հնդկաց երկրոջն միշտ նստիցի որպէս վէքիլ, և զնուիրակութիւն ժողովեալ յիւրաքանչիւր ժամանակս, անտի ի Սազիմ հասուսցէ։ Առեալ էր ես զթուղթ վկայական ի Սազիմայ պատրիարգէն, զի եկեալ աստ ձեռնադրեսցի եպիսկոպոս, և գնասցէ ապա ի Հնդիկս ըստ պայմանին ասացելոյ։ Իսկ մեք առէ ընդ այս ոչ հաճեցեալ, զիր առաք ի բերանոյն, և այսու պայմանաւ ձեռնադրեցաք եպիսկոպոս, զի աւարտեսցէ զնուիրակութիւնն Սազիմայ, գնասցէ յԵրուսաղէմ, և անդ մնասցէ։ Իսկ եթէ վասն հարկի իրիք անդ մնալ ոչ կարիցէ, յայնժամ ելեալ անտի, կամ ի սուրբ Աթոռս եկեսցէ, և կամ ի վանքդ ձեր եկեսցէ։ (որպէս ասացեալ է այս մասամբ ի պատմութեան ՌՄԺԶ երորդ ամին, և ի մարտի Ը։) Եւ այնու պայմանաւ մեք ես առէ վկայական տուաք նմա, զոր առեալ տեսցես։ Եւ այն վկայականն են առէ տեսեալ ի Բասրայ՝ (որպէս գրեալ էին մեզ,) զի զնա յղեալ են յայդր, և դու և նոքա բարի մտօք յղեալ էք ի վանքն ձեր, զի լիցի յաջորդ Գէորգ վարդապետին, զոր և մեք լուեալ հաւանեցաք։ Ապա յետ վախճանման Գէորգ վարդապետին, դա ում հրամանաւ նստաւ առէ Առաջնորդ։ Եթէ առէք թէ սովորութիւն մեր այս է, որ ի վանիցս մերոյ նստիցի մեզ Առաջնորդ, այդ յիրաւի է, այլ ոչ է կանոնն այդպէս, զոր արարեալ է դա։ Զի ի վախճանելն Առաջնորդին տեղւոյդ, զոմն ընտրէին միաբանք վանիցդ և տեղականքդ, և մահսար արարեալ աստ առ կաթողիկոսն յղէին, թէ զսա մեզ Առաջնորդ կացո։ Ապա և կաթողիկոսն հաւանել գրէր առ նա զհրաման Առաջնորդութեան, և զկոնդակ յղէր, և Առաջնորդ հաստատէր։ Այժմ դա առէ առանց մեր հրամանին և կոնդակին նստեալ է Առաջնորդ, որ ահա տարի մի է՝ և դու գրես թէ առ քեզ մահսար յղեցին։ Ահա եկն մահսարն, յորում ոչ գոյ խնդիր և աղերսանք ինչ, թէ կամ զսա Առաջ-

նորդ արա, և կամ կոնդակ յղեա։ Այլ միայն զպատմութիւն արարմանցն իւրեանց գրեն, թէ ահա զՄկրտիչ վարդապետն Առաջնորդ արարաք, և գրեցաք քեզ, զի գիտակ լինիցիս։ Բարի է ասէ, ահա գիտակ եղէ, որ զուք զդա Առաջնորդ էք արարեալ։ Ինքն ես թող լաւ խաթրիջամ Առաջնորդ նստի։ Սակայն՝ որովհետև այլ ոչ ասէ կարօտ մեր կոնդակին և հրամանին, մեք ես միայն զմեր տուեալն յետս առցուք ի զմանէ, (որ էր եպիսկոպոսութեան կարգն,) այնուհետև լինի կատարեալ ինքնագլուխ, և դուք ես բարեաւ վայելեջիք զդա։ Իսկ և գրէր թէ Պօղոս վարդապետն ասացեալ է՝ թէ ես եմ լինելոց Առաջնորդ, և ի մէջ Ջուղայու վրդովումն է ձգեալ։ Այդ ամենայն ասէ ձեր առաջնորդ հոչակէ, զի զինքն անմեղ ցուցցէ, Պօղոս վարդապետն միայն զայս է ասացեալ, թէ առանց կաթողիկոսի հրամանին յԱթոռ մի նստիր, որպէս վկայեն տեսօղք։ Իսկ այդ ասէ չարութիւն ձեր Առաջնորդին է, որ ինքն լիրբ և անկարգ գոլով, ի մէջ ձեր ես այդքան խռովութիւն է արկեալ։ Երիցակտորդ այդ ասէ՝ որ ինքնագլուխ Առաջնորդ նստի, և այսպէս մահսար շինել տայ, ինքն ես ըստ նոյն ոճի գրէ միզ, որպէս իւր ընկերին պատմելով ցանցս իւր, առանց խնդրոյ և աղերսանաց և խոնարհութեան իրիք, մեզ եթէ այսպէս առնիցէ, նուիրակին մերոյ զինչ է առնելոց։ Ծանոյց աստ նմա և զգիր գրելոյ ոճն նորին առ նուիրակն մեր, որ գրեալ էր առ նա զգիր մի, այսպէս, թէ Ցիսուսի Քրիստոսի ծառայ Մկրտիչ վարդապետ, և այլն, նման կաթողիկոսի, և ծաղկեալ, և կնիքն ես ի ճակատն, զոր նուիրակն յղեալ էր աստ։ Ապա ասէ, այս մինչև ցայժմ ի տեղւոջ իմիք չէ եղեալ, թէ Էջմիածնի նուիրակին այսպէս գիր գրեն։ Դա որ նոր է ասէ, և երիցահոտն գայ, այդքան լրբացաւ, յետոյ զինչ է առնելոց։ Կարծեմ թէ ասէ՝ անցելոյն շատ ողորմիս է տալ տալոց զա։ Կամ թէ ասէ՝ դա որ զմեզ ի տեղի մեծաւորի չհամարի, և չերկնչի, զձեզ և զժողովուրդսդ ընչի տեղ է դնելոց յորժամ հաստատիցի, որ փոխանակ սանձելոյ ջատագով լինիս։ Եւ զի գրէր թէ՝ յայդ կողմունսդ որքան սեազլուխ ունիմք յղեա։ Գրեաց թէ՝ ահա զդա յղեցի, շատ համ տեսի, որ զայլս ես առաքեմ։ Եւ այլ այսպիսի բանք շատ։ Ի վախճանի այս՝ թէ ի կարճոյ գրեցի զայս զի գիտասցես, զի յետոյ յարաժամ ըստ պահանջման հարկին զչափն ծանուցից իւրեան, այլ մի ես զիս մեղադրեսցես, թէ ընդէ՞ր մեզ ոչ իմացուցեր յառաջ, ահա իմա։ Մեք ի հնոյն զղուեալ՝ կամէաք ասէ պատժել զնա, այլ վասն ծերութեանն խնայէաք։ Այժմ զա որ զեռ հաւկթէն չելեալ այսքան լրբացաւ, հարկն պահանջէ, զի վերստին գայցէ յԱթոռս, և յաւապէս ճանաչիցէ զմեծաւորն և զչափն իւր։ (Որ վխչեցեալ է ի ՌՄԺԶ, ի մարտի Ը։) Քան զդա հին և մեծ եպիսկոպոս գոլ ասէ Ջուղայեցի՝ Առաջնորդացու, Խաչատուր վարդապետն, որ ահա ի Հնդիկս է, զոր թէ դուք բերել ոչ կարիցէք, ես բերել կարեմ։ Է՛ր այս առանձին փ ւսուլայ։

Բայց յայսմանէ, գրեաց ես առ նա հասարակապէս զթուղթ, ի պատասխանի թղթոյն, ծանուցանելով զլզելն թղթոյ Զաքարիա վարդապետին առ ինքն, որպէս ասացաւ ի յուլիսի ԻԸ։) Եւ զի հասարակ մահսարոջն, և ինքն ես ուրոյն, վասն Աստուածատուր վարդապետին, (որ վխչեցեալ է ի նոյեմբերի ԻԹ, որ մինչև ցայժմ ըստ գրելոյ սորին աստ որպէս թէ արգելեալ կայր։) Որպէս զի մի ձեռնադրեսցէ եպիսկոպոս, այլ թէ ի վանքն գնալ կամիցի, խրատեսցէ զնա սրբազան վեհն և յղեսցէ յետս ի Ջուղայ, և սրբազան վեհն արար այնպէս, և յղեաց անդ զնա։ Բայց այսու պայմանաւ զի թէ ինքն ընդ միաբանս վանիցն, և միաբանքն ընդ ինքն հաճեսցին, և կամիցի մնալ անդ միաբան, մնասցէ, ապա թէ ոչ, վերադարձցի աստ ընչիւք և ստացուածովք իւրովք, և աստ լիցի միաբան, զոր և նա յօժարութեամբ յանձն էառ, և աղերսանօք խնդրեաց ի սրբազան վեհէն ընդ թուղթ մի առ միաբանսն վանիցն Ջուղայու, վասն այսր պայմանի, և ըստ սոյն մտաց զոր ասացի, զոր և սրբազան վեհն գրեալ ետ նմա։ Եւ զայս պայմանս Քեալանթարին ես ծանոյց սրբազան վեհն։ Եւ զի զայլ սեազլուխս ես էր խնդրեալ Ջուղայեցիս, գրեաց թէ՝ տեսցուք, եթէ այլ լինիցի յղեցից։ Իսկ և Քեարիմ խանն ասացեալ էր ի մէջ խօսից, թէ խալիֆայն սեզ գիր ոչ գրէ, գրեաց սմա զպատճառն, զի երկիւղ կրէաք ի տեղւոյս տաճկացն, զոր ծանոյց սմա, զոր յառաջ ես էր գրեալ և ասացեալ ես բերանով ի տեսանելն զնա յառաջ։ Ուստի ասէ

ծանուսցեն նմա, և զոր ինչ ասիցէ, մեզ գրեսցես։ Զի թէ այս պատճառ ոչ լինիցի ասէ, ով ոք ոչ կամիցի այդպիսոյ մեծաւորի ծառայել։ Գրեաց փոքր ինչ և զօրպիսութեանց կողմանցս, այսինքն, զհամբաւոյն ռուսաց, որք չամսոյս ԺԴ, և յայլս տեղիս զոն ասացեալք։

Թուղթ մի ես առ. Քեալանթարի փեսայ պարոն Սամրէկն գրեաց, և զթուղթ Քեալանթարին առ. նա յղեաց՝ հասուցանել առ. Քեալանթարն, և գրեաց զշնորհակալութիւն, որ զՊօղոս վարդապետն չահեալ էր, և վերստին յանձնարարութիւն ես գրեաց։

Թուղթ մի ես առ. Պօղոս վարդապետն գրեաց հարկաւորապէս՝ ի պատասխանի թղթոյն, բայց յանմանէ, զոր առ. Քեալանթարն յղեաց։ Ծանուցանելով զգրելն առ. ինքն թուղթ ի մայիսի ԻԹ։ Եւ վերստին զնոյն խրատսն, և զյանդիմանութիւնս ի կարճոյ և անորոշապէս վերակրկնելով։ Եւ պատուէր՝ զի ջանասցէ զգործն փութով աւարտել և գալ, և մի ես յամիլ, և մի բանս Առաջնորդի՝ ժողովրդեան, և իշխանաց խառնիլ, և բաց ի յետ գործոյն՝ այլ յուրիշ բանս ոչ խառնիլ բնաւ։ Եւ վարիլ ընդ ամենեսին սիրով, և զորս վիրաւորեալ իցէ, այսուհետև չահել ջանալ, իսկ ինքն յումեքէ վիրաւորեսցի, տարցէ համբերութեամբ մինչև աստ եկեսցէ։ Զի զքեզ առաքողն կարէ ասէ վրէժխնդիր լինիլ թշնամեաց քոց։ Եւ այսպիսի խրատք յոլովք։ Գրեաց և ըստ խնդրոյն

Թուղթ առ. Ղուլ պարոն Կոստանդինոսն, որ զԴ թուման հոգեբաժին էր տուեալ՝ վասն հոգւոյ հանգուցեալ Ցովսէփի ումեմն։

Թուղթ ես առ. պարոն Թահմազն գրեաց, որ զԳ թուման ողորմիս էր տուեալ սրբոյ Աթոռոյս։ Որք յղեցան առ. Պօղոս վարդապետն։

Թուղթ ես առ. Ոսկան և Մինաս երիցունսն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրեանց, որք և ըստ ոճի մահսարին զպատմութիւնս էին գրեալ՝ թէ այսպէս արարաք, և գրեցաք զի գիտակ լինիս։ Եւ սրբազան վեհն գրեաց թէ գիտացաք, և հաւանեցաք, զոր բաբեաւ վայելեսջիք։ Արդարև՝ քաղաքացիք, և քաղաքացւոց քաղաքավարութիւն։ Թուի թէ ասէ, Ջուղա որքան Քաղաք էր լեալ, զայսպիսի քաղաքավար գործ չէր երևեցուցեալ, զոր այժմ եցոյց այսու մահսարիւս։ Բայց վասն Բց պատճառաց ասէ տարակուսեցաք, նախ զի թէ վասն գիտակ լինելոյ մերոյ էիք գրեալ վայս, զինչ պիտոյ էր այսքան կնքով վկայութիւնն, և կամ ձեր այդքան տաժանմամբ ժողովումն կնքոց զի մի ես թէ գրեցէր մեզ ի ձէնջ զայդ օրինաւոր գործ, մեք գիտակ լինէաք և հաւանէաք։ Երկրորդ՝ զի թէ աղերսանաց մահսար էիք անուանեալ զայս, այլ մեք ի սմա զաղերսանս և կամ զխնդիր մի ոչ տեսաք, այլ զպատմութիւն օրինաւոր արարմանցն ձերոց։ Իսկ եթէ աղերս զայն ասիցէք ասէ, զոր գրեալ էիք վասն Աստուածատուր և Աւետիք վարդապետն, (զի գրեալ էին մի ձեռնագրել եպիսկոպոս, և զԱստուածատուր վարդապետացն խրատել և յետս յղել (որպէս ասացաւ) այն ասէ հրաման էր, և ոչ խնդիր, զոր ահա կարացաք, զի զերկուսն ես չձեռնադրեցաք, որպէս յառաջ գրեալ եմք Գէորգ վարդապետին, (որ ասացաւ ի նոյեմբերի ԻԹ։) Թէպէտ դուք ասէ քան զայս մեծագոյն մահսարօք խնդրեալ էք, զի ձեռնագրիցեմք զոսա։ Եւ զԱստուածատուր վարդապետն ահա խրատեալ յետս դարձուցաք, որպէս գիր տուեալ եմք, և տեսանելոց էք։ Եւ այլ զոր ինչ հրամայիցէք ասէ, պատրաստ եմք ի կատարել։ Գրողքն մահսարիս եթէ հարցանիցեն, այսպէս ծանուսջիք իւրեանց։ Սամրէկինն ուրոյն, Նուիրակինն ուրոյն, տուան Աստուածատուր վարդապետին տանիլ ի Ջուղա։ Իսկ և ի Գիլանու Նուիրակ Ցովսէփ վարդապետէն եկին թուղթք յառաջ զայս, որ խնդրեալ էր զթուղթս ինչ։ Որք են,

Թուղթ ի վերայ Ռէշտու և Անզալուայ հասարակապէս, շնորհակալութիւն վասն նուիրակական արդեանց, զոր տուեալ էին Ցովսէփ վարդապետին, զի զնուիրակութիւնն աւարտեալ էր։ Եւ յորդորումն, զի վասն տանեաց սրբոյ եկեղեցւոյն զյատուկ օգնութիւնս արասցեն։

Թուղթ մի առ. սրբոյ Աթոռոյս վէքիլ տիրացու Դաւիթ աղային՝ շնորհակալութիւն վասն զՅովսէփ վարդապետն չահելոյն։ Եւ զի զնորատիպ տօնացոյց և մաշտոց խնդրէր, տպեցեալ կարծելով, գրեաց զգեռ ես ոչ ի գործ անկանելն Տպագրատանն, և խոստացաւ, զի յորժամ տպեսցին, ինքեանց ես յղեսցէ։ Եւ զի զՓռանկ պատրին՝ որ ի մար-

տի Ն յիշեցաւ, խոստանալը վաննել տալ անտի, թէ ինքն ոչ գնասցէ. գրեաց առնել այնոյէս։ Ծանոյց սմա ի կարճոյ զարարեալսն իւր ընդ Ախթարմայսն Ախալցխայու և Ալաշկերտու, որպէս յամսոյս ԺԴ, և ի վերոյս նորին ասացաւ, փոքր ինչ և զՌուսաց համբաւոյ գրեաց ըստ խնդրոյն անորոշապէս որպէս և Քեալանթարին գրեաց։ Տիրացու Մովսէս որդւոյն ողջոյն գրեաց։

Թուղթ ևս առ. Համասանցի պարոն Ալէքսանն ի Ռէշտ, շնորհակալութիւն վասն շահելոյն զՅովսէփ վարդապետն և ձեռնատ լինելոյն նմա, և վերստին յանձնարարութիւն։

Ըստ այսմ, թուղթ մի ևս առ. պարոն Յովհաննէսն գրեաց ի յԱնզալի, որ էր եղբօրորդի Շամախեցի Սարգիս աղային, ի Հաշտարխան բնակեցելոյ։

Գրեաց և զթուղթ առ. Գէորէցի պարոն Բաղտասարն, որ ախթարմայ էր լեալ, և Յովսէփ վարդապետն ածեալ էր ի յուղղութիւն, որում գրեաց օրհնութիւն, և մխիթարութիւն, և յուսագրութիւն, և խրատ, մնալ ի յուղղութեան։

Թուղթ մի ևս առ. Թիֆլիզեցի Գալուստն, որ յորդորմամբ Յովսէփ վարդապետին տուեալ էր յիշատակ սրբոյ Աթոռոյս զԲ ալնիւ պատկերս Աստուածածնի։

Թուղթ ևս առ. Յովսէփ վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն, առ. որ յըղեաց զգրեանսն վերոյիշեալս, և զորպիսութիւնս սրբոյ Աթոռոյս, և զարարս իւր ընդ Ախթարմայսն գրեաց նմա, որպէս և Դաւիթ աղային։ Եւ զի զբառարան մի յղել խնդրեալ էր վասն Դաւիթ աղայի որդւոյն, և աստ ոչ գոյր, և տանող ևս չէր ոք հաւատարիմ։ Վասնորոյ՝ գրեաց նմա զիւրն տալ, և ի բարեաւ գալն աստ, առնուլ յինքենէ զփոխն։

Թուղթ ևս ի Թարվէզ առ. Տէր Փիլիպպոսն գրեաց, առ. որ և զթուղթսն Գիլանու յղեաց՝ առ. Յովսէփ վարդապետն հասուցանել շուտով։ Եւ վերոյիշեալ Ալէքսանին էր ի Թարվէզ ազգական մի Յովաննէս անուն, որ երկիցս անգամ ի Թարվիզու զթուղթս Յովսէփ վարդապետին յղեալ էր աստ, և խնդրէր զպատասխանիսն, վասնորոյ զթուղթ ևս առ. նա գրեաց սրբազան վեհն։ Բայց կարծելով թէ այժմ անդ չլինիցի, վասն այսորիկ առ. Տէր Փիլիպպոսն յղեաց զթուղթսն, որպէս երկուցն ևս գրեաց։ Եւ պատուիրեաց՝ զի երկուքն ևս մուղայէթ լեալ շուտով յղեսցեն։ Եւ Աստուածատուր վարդապետն ի սեպտեմբերի ԺԷ։

ՃԺԵ.

Առ Արքայն Հերակլ եւ յայլս, ի Թիֆլիզ, եւ յայլ տեղիս:

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ. Հերակլ Արքային, ծանուցանելով զգրեալն յառաջ քան զայս առ. ինքն զթուղթ յամսոյս ԺԴ։ Իսկ և՝ ըստ որում գրեաց սրբազան վեհն առ. ի Բասրա եղեալ Թիֆլիզեցիսն, գալ ի Թիֆլիզ, ըստ խնդրոյ Արքային, (որպէս ասացաւ ի դեկտեմբերի ԺԵ.) գրեալ էին նոքա այժմ զպատասխանի թղթոյն, խոստացեալ էին յօժարութեամբ գալ։ Զոր այժմ ծանոյց Արքային սրբազան վեհն։ Եւ Շաթիր Թահմազն երթալը ի քաղաքն ի տես ընտանեաց իւրոց, ուստի՝ գրեաց ի նմանէ իմանալ զորպէսն մեր։

Թուղթ մի ևս առանձին և վրացերէն գրեաց առ. Արքային։

Գրեաց և զփուսուլայ ևս առանձին առ. Արքային, վասն մարդոյ միոյ անդ գնացողի յանձնարարութիւն, լսել զհայցուածսն։

Սիրոյ թուղթ ևս առ. Վրաց Անտոն կաթուղիկոսն գրեաց, խնդրելով և զսէրն մի առնել պակաս, և զորպիսութեանց Ռուսաց որ ի կողմանցն հռչակիւր, գրել ստոյգ, թէ զիարդ է։

Թուղթ մի ևս առ. Ջալբէկն գրեաց, (որ ի վերդ յամսոյս ԺԵ յիշեցաւ.) խնդրելով ի նմանէ ևս ստոյգ որպէս ինչ։ Եւ զի՝ ի Ջուղայու Քեալանթար Սարգիս աղայէն այժմ ևս եկն թուղթ առ. սրբազան վեհն, յորում գրէր թէ՝ գրեա Ջալբէկին, թէ Սամխանն՝ յորոյ տանն դու յերկար ժամանակս մնացեր, և վասն քոյ զծախս արար, այժմ Քեարիմ խանն զնա ի Բանտարարաս ի գործ յղեաց, ուր մեծապէս շահելոց է, մի առներ վասն նորա հոգս, և միամիտ լեր։ Եւ սրբազան վեհն գրեաց զայս Ջալբէկին։ Գրեալ էր ևս թէ՝ գրեա Հերակլ Արքային, զի ըստ որում պայմանեաց Քեարիմ խանն ընդ Ջալբէկին, այնպէս արասցէ շուտով, և Ծ կամ Կ մարդ յղեսցէ աստ առ. սա, որ յոյժ լաւ լինի իւրեանց։ Եւ այլ առ. այս

բանք, զոր և մասամբ ի յուլիսի ԻԴ ևս գրեցաք։ Զայս ևս գրեաց Զալբէկին, զի թէ պատչաճ տեսցէ, ասասցէ Արքային։ Եւ որպէս գըրեան սրբազան վեհն ի յօգոստոսի ԺԹ սրբոյ Գեղարդեան սպասաւոր Աբրահամ վարդապետին, թողեալ էր զարդիւնս իւր ի Թիֆլիզ առ Մէլիք Աւետիքն, և զթուղթ առեալ ի նմանէ փօլիցայլի, որ էր Բ թամասուկ, (ՃԿ) (Ժ) և բարեագիր մի ևս ի վերայ Թիֆլիզեցի Ստեփանին, որ էր աստ, զի տացէ։ Եւ նա ոչ ետ։ Վասնորոյ սրբազան վեհն յետս յղեաց զայն Բ թամասուկսն և զԱ բարաթագիրն առ Մելիք Աւետիքն, և զթուղթ մի գրեալ առ նա, սիրով մեղադրեաց, թէ վասն Է՞ր այսպիսի կոտր տեղիս փօլիս առնես, զի ոչ տան մեզ։ Զի բաց յայսմանէ, յառաջ ևս զփօլիս էր արարեալ աստ ի վերայ Աղալօլին տալ մեզ, և նա ոչ ետ, (Խ) և փօլիցալագիրն յետս յղեցաւ առ. սա։ (որպէս ի յունիսի Գ ևս որոշ կերպիւ ասացեալ է։) Շնորհակալեցաւ և վասն զԱբրահամ վարդապետն չահելոյն։ Եւ մանաւանդ՝ այնպէս էր փօլիցայ արարեալ զի աստ մեզ վնաս լինէր, զի ինքն զԱ ապասին Դ չահով էր առեալ ի յԱբրահամ վարդապետէն, իսկ աստ Գ չահով պարտ էր տալ մեզ տուօղն։ Եւ ապա պատուէր, զի ի վերայ այնպիսի մարդոյ փօլիցայ արասցէ, որ տալ կարիցէ մեզ սաղ դրամ։ Իսկ և՝ ըստ որում գրեցաւ առ սա յունիսի ԻԵ վասն զազանչի Ենովքին՝ խոստացեալ էր առնել այնպէս, և սրբազան վեհն շնորհակալեցաւ։ բայց յետոյ լուաք թէ՝ ևս նեզացուցանեն զեղբայրն նորա, և զհարկն խնդրեն։ Վասնորոյ՝ գրեաց վերստին, զի նոցա բաժին հարկն հաշուեսցեն, և գրեսցեն ինքեան, զի և ինքն անդ ում և գրեսցէ, առցեն ի նմանէ, և մի ես ի տանէ և յեղբօրէ Ենովքին զհարկ խնդրեսցեն։ Գրեաց զթուղթ առ Զաքարիա վարդապետն, նախ շնորհակալութիւն վասն զԱբրահամ վարդապետն չահելոյն, և զի զօրպխութեանցն գրեսցէ։ Եւ թէ զինչ ընդ Ախթարմայսն Ալաշկերտու արար՝ ծանոյց նմա։ (որք ի վերոյսդ ասացեալք գոն։) Եւ մեղադրութիւն, զի յառաջագոյն ի ձեռն Աբրահամ վարդապետին տուեալ զարդիւնսն սրբոյ Գեղարդեանն և հաշուեալ, (ՄԵ) յետոյ ի տաճկաց Նուռուզին տեղւոյ դրամն կոտրեալ էր։ Իսկ նոքա զառաջին հաշիւն ի վերայ մեր բարդելով՝ գրէին թէ այս ինչ է։ Եւ զնոյն աստ փօլիս առնէր Աւետիքն, և լինէր մեզ կրկին վնաս, և այն ես ոչ տային աստ։ Զայս ամենայն ծանոյց միըստմիոջէ և մեղադրեաց։ Եւ վասն Ենովքին սմա ևս գրեաց, զի մի ինքն ի վերայ Աւետսին և Աւետիսն ի վերայ իւր արկցէ, այլ զբաժին նորա ի վերայ մեր հաշուեալ գրեսցեն ինքեան, զի զով և ցուցցէ անդ, ի նմանէ առցեն։ Եւ զի՝ եթէ խարճի ինչ պիտոյասցի Թահմազին Ա թուման կամ ԺԵ ՌԴՆ. փող տացէ։

Թուղթ մի ևս առ Թիֆլիզու քահանայս գրեաց. որք զբազմակնիք թուղթ գրէին, և զարդիւնսն որպէս յառաջ քան զկոտրելն տուեալ էին Աբրահամ վարդապետին, ըստ նմին հաշուոյ գրէին այժմ յետ կոտրելոյ դրամոյն, թէ այս ինչ է։ Մեղադրութիւն թէ զայս թուղթս թէ յառաջ քան քան զկոտբիլն էք գրեալ, մածախ բառս այս զի՞նչ է, զոր լնուք ի մէջ թղթոյս, (մածախն է կոտրած և չիւրիւկ դրամ,) իսկ թէ յետ կոտրելոյն էք գըրեալ, ընդէ՞ր սաղ դրամ հաշուէք ի վերայ մեր, և միանգամայն բարդէք, թէ այսքան է։ (ՄԵ) իսկ և երդումն եղ ի վերայ նոցա, և պատուիրեաց ստուգապէս գրել ինքեան, թէ յիւրաքանչիւր եկեղեցեացն որքան արդիւնք են տուեալ, զի այս գրելոյս ասէ ոչ հաւատամ։ Եւ որպէս Զաքարիա վարդապետին սոցա ևս եցոյց յայս թղթոջս, թէ որքան պակասի դրամն անտի յաստ գալն։ Եւ շնորհակալութիւն, զի լաւապէս ծառայեալ էին Աբրահամ վարդապետին։—Թուղթ ևս առ Գաւիթ վարդապետն, (զոր սրբազան վեհն իսկ գըրեաց,) որ լիշեցաւ յամսոյս ԺԴ մեղադրութիւն յոյժ և նախատինք, զի յայսքան ժամանակս յամեցաւ, յորմէ ոչ այլ ինչ գոյր չահ, նթէ ոչ այս վնաս, զի զանազան կարծիք ի զանազան մտաց խաղայր զնմանէ և խաղալոց էր։ Եւ պատուէր յոյժ ստիպով, զի առանց յամեցման յուրեք՝ աստ հասցի։ Մի՛ և ի Թիֆլիզ յամեսցի, այլ մուտն և ելն մի արասցէ անդ։ Յովաննէս վարդապետին ևս ողջոյն գըրեաց, և նմա ես պատուիրեաց չուտով ընդ նմա գալ։ Յղեցաւ առ Տէր Նիկողայոսն ի Դզլար յղել։ Իսկ և թուղթքն որք ի յօգոստոսի ԻԳ գրեցան առ Յովհաննէս կաթուղիկոս (և յորդի Փանահ խանին, պատճառաւ ինչ եկին յետս ի ճանապարհէն, վասնորոյ՝ այլ ոչ յղեաց սրբազան վեհն զթուղթ խանին այլ

Յովհաննէս կաթուղիկոսինն միայն յղեաց, և զփուսուլայ մի գրեաց առ նա, ծանուցանելով զպատճառ ոչ գրելոյն առ խանն զթուղթ, զի վասն Խամսեցւոցն էր ասէ, զի կամէաք արգելուլ, այլ մինչ եկին նոքա, գրելոյ ոչ ևս էր պատշաճ։ Զի պանդխտաժողովն եկեալ էհան, և տարաւ զնոսա աստի։ Իսկ և ի Պօլիս Ճր ի մէջ Տօլպանտճոցն զաձանակ մի, յանուն Անապատի միոյ, որ լեալ է ի յերկիրն Տուզախու, և այժմ Անապատն այն աւերեցեալ էր, և զանձանակն խափանեցեալ, այլ զոյր զանձանակադրամ ի վաղուց։ Վասնորոյ գրէին սրբազան վեհին թուղթ գրել Ասնաֆին, և զայն դրամն առնուլ։ Եւ որովհետև Անապատն այն լեալ է ի թեմն Գանձասարու, վասնորոյ զթացեալ սրբազան վեհին, շնորհեաց զայն դրամն Գանձասարու, և գրեաց Յովհաննէս կաթուղիկոսին, զի օրհնութեան թուղթ մի գրեսցէ առ Ասնաֆն այն և ասացէ՝ զայդ դրամդ զոր տուեալ էք սրբոյ Էջմիածնի նուիրակ Զաքարիա վարդապետին, սրբազան վեհն մեզ շնորհեաց, վասնորոյ և մեք զայս օրհնութեան թուղթս առ ձեզ գրեցաք։ Պատուիրեաց գրել զայս, և յղել աստ, զի ինքն ի Պօլիս յղեսցէ, և յորժամ նոքա անդ տացեն Զաքարիա վարդապետին, մեք ևս քեզ եմք հասուցանելոց։ Ի Պօլսոյ զոյր սմա թուղթ մի, յղեաց։ Զայս ևս Թահմազն տարաւ զի անտի յղեսցէ։ Ի սեպտեմբերի ԻԲ։

ՃԺԶ.

Ի Կարին, առ նուիրակն և առ այլս թուղթք, մաքսապետին ևս:

Գաղատիոյ նուիրակի յղեալ ինչքն, որք յիշեցան յամսոյս Դ, յղեալ էր մահտեսի Փիլիպպոսն, յորմէ մաքսապետն զՇՆ ղուռուշ մաքս էր առեալ՝ մեղադրելով՝ թէ խալիֆայքն ձեր յառաջ տեղւոյս մաքսապետին զընծայս յղէին մեզ ընդէ՞ր ոչ յղեն այժմ։ Զոր գրեալ էր մահտեսի Փիլիպպոսն։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն գրեաց զթուղթ առ մաքսապետն, սէր և յորդորումն ի սէր և ի բարեկամութիւն ընդ սրբոյ Աթոռոյս։ Եւ զի եկողաց և գնացողաց և իրաց մերոց խնամս արասցէ, և մի որպէս զայս համարեսցէ։ Յղեաց նմա զԻՆ թիլանի լիտր բրինձ, Ն լիտր քացախ, Ն մոմ, և Ա ամանով վարդեջուր։

Թուղթ մի ևս առ մահտեսի Փիլիպպոսն գրեալ, զզիր մաքսապետին առ նա յղեաց, ընդ իրացն նմա մատուցանել, և շնորհակալութիւն վասն յղելոյն զԱնկիւրու նուիրակի յղեցեալսն։ Ն լիտր գինի ևս սմա յղեաց, և գրեաց զերկուսն նուիրակին տալ։ Փուսուլայ մի ևս գրեաց առ մահտեսի Փիլիպպոսն։ Եւ որպէս յամսոյս Դ, այժմ ևս մանրամասնաբար գրեաց նմա, թէ այս ինչ հասուցաք քեզ փօլիցայիւ, (ԺԳՊ) այս ինչ զու աստ ետուր մեզ, (ՍՊ) և այսպէս յիշեցոյց նմա և զտուեալն ի մահտեսի Յովաննէսն, (ԲՅԽ) և զի այժմ ՂՆ ղուռուշ ևս մաքսապետին էր տուեալ, և զոր մնայր տալոց, զայն ևս ծանոյց։ (ԴՅԿՆ) և պատուիրեաց զի ջանասցէ տալ զայն օրըստօրէ նուիրակին, որ քան է անդ, զի ընդ իւր բերցէ։ Եւ թէ աւելի ևս տալ կամիցի, գրեսցեն ինքեան ընդ նուիրակին, զի փօլիցայաւ զիր գրեալ յղեսցէ։ Իսկ և Կարնոյ նուիրակ Սարգիս վարդապետն գրեալ էր այժմ զթուղթ առ սրբազան վեհն, ի պատասխանի ի յունիսի Ժ, և ի յուլիսի ԺԴ գրեալ թղթոցն։ Որ գրեալ էր զպատճառ խռովութեան իւր ընդ երիցուն և Առաջնորդին, թէ այս է պատճառն, զի յարաժամ ես պատարագ առնեմ, զզանձանակն զոր վասն շրջեցուցանեն, և զբուրվառի դրամն, Առաջնորդն զաւթէ և ինձ չտայ։ Եւ պատճառ յամեցմանն ես գրեալ էր, թէ ի քաղաքոջ ոչ տան զնուիրակութիւնս։ Վասնորոյ գրեաց զթուղթ առ ժողովուրդսն Կարնոյ, մեղադրութիւն սիրով՝ վասն նուիրակութիւն չտալոյն, և յամեցուցանելոյն առ ինքեանս, որ ահա Գ տարի և կէս լինէր, զի կարգեցեալ էր անդ նուիրակ։ Եւ հարկ, զի փութով՝ զոր ինչ և տալոց են, տացեն, թէ շատ, և թէ սակաւ, և զնուիրակն աստ վերադարձուսցեն։ Ի ամիս վատալ եղ, թէ յետ այնորիկ այլ ոչ է մնալոց առ ձեզ։ Եւ բազում առ այս մեղադրութիւն և յորդորումն, զի փութով ջանասցեն զնուիրակն յղել յայսկոյս։ Ապա և Առաջնորդին և քահանայիցն ևս յանուանէ և յատկապէս մեղադրութիւն, թէ դուք ասէ եթէ սիրով և յորդորմամբ ծանուցանիցէք ժողովրդեանն զպարտականութիւնն իւրեանց սրբոյ

Աթոռոյս, և զպակասութիւնս սորին, ժողովուրդն զինչ պարտին ասել։ Եւ հասարակապէս դարձեալ թէ՝ որք յօժարութեամբ տայցեն, եղիցին օրհնեալք և որք ոչ տացեն, նոքա ևս եղիցին օրհնեալք, սակայն՝ իւրաքանչիւր ոք առնու զվարձս ըստ վաստակոց իւրոց։

Թուղթ մի ևս առ Առաջնորդ Պաղտասար վարդապետն գրեաց՝ ըստ հասարակ թղթոյն, նախ մեղադրութիւն վասն զժողովուրդսն ոչ յորդորելոյն ի տուրս նուիրակութեան, և ապա՝ վասն իւրացուցանելոյն զնուիրակի թապաղն, և բուրվառի արդիւնսն, որպէս ասացաւ ի վերոյ։ Եւ հարկ, զի զոր ինչ մինչև ցայժմ առեալ է տացէ նուիրակին, և գործոյն ձեռնտուեալ՝ չուառով յայսկոյս ուղևորեսցէ։

Գրեաց և զթուղթ առ նուիրակ Սարգիս վարդապետն, ծանուցանելով զվերոգրեցեալքս, և զթուղթոն յղեաց առ նա, և պատուիրեաց ծանուցմամբ ընթեռնուլ տալ յեկեղեցիսն, և ջանալ շուտով աւարտել զգործն և գալ։ Եւ հետեւել դրամ տուօղ գտանել անդ, որք այժմ իսկ՝ առանց յետաձգութեան տացեն և առցեն զփոլիցալադրետնսն։ Եւ եթէ ըստ այսմ ասացելոյ ղոցի ոք, ծանուսցէ, զի զփոլիցալադրեանս գրեալ յղեսցէ։ Եւ որպէս ի յուլիսի ԺԴ ասացաւ, չէր յանձն առեալ մահտեսի Յովաննէսն՝ զտալիս (զծ) մահտեսի Խաչատուրին ի վերայ իւր հաշուելի։ Իսկ մահտեսի Խաչատուրն Տէր Պետրոսին զդրամս էր լեալ տալոց, (ՂԾ) վասնորոյ՝ հատեալ էր զայն յետս Տէր Պետրոսն, և չէր տուեալ նմա, թէ դու պարտիս սրբոյ Աթոռոյն զդրամս տալ, զայսքանս տուեալ իմա։ Ուստի՝ և սրբազան վեհն գրեաց նուիրակին՝ առնուլ զայն ի Տէր Պետրոսէն, և զմնացեալն ևս ի մահտեսի Խաչատուրէն առնուլ, (ԻԾԵ) ձեռամբ մահտեսի Յովաննիսին, և բերել ընդ իւր։ Ծանոյց զընծայս առ մաքսապետն, և զինի վասըն իւր, և այլն, որ ինչ ի վերոյ գրեցաւ։ Եւ ոմն ի միաբանութենէ սրբոյ Աթոռոյս եւ. լեալ յառաջ, Սէթ անուամբ, որ այժմ լեալ էր վարդապետ, և անուանեցեալ Պետրոս, և եկեալ էր այժմ ի Կարին։ Ուստի գրեաց նուիրակին բերել զնա ընդ ինքեան, և թէ ոչ գայցէ ասէ, այլով կերպիւ բերելոց եմ։ Եւ այլ առ այսոսիկ բանք։ Փուսուլայ ևս գրեաց առ սա, ըստ օրինակի մահտեսի Փիլիպպոսի փուսուլային, և զնոյն բանսն ծանոյց նմա, և հարկեաց, զի մինչև ցգալն առ սակաւ սակաւ առցէ ի նմանէ զմնացեալ դրամն, (ԴՑԿԵ) և ընդ իւր բերցէ։ Եւ թէ ևս աւելի տալ յօժարիցէ, ծանուսցէ, զի փոլիցալադիրս յղեսցէ։ Ցղեցան այսք ընդ Ղաթրջի Սահակին, որ զիրսն Անկիւրոյ եբեր. ի սեպտեմբեր ԻԳ։

ՃԺԷ·

Առ Թարվիզու նուիրակ Գրիգոր վարդապետն, զժողովեալ տուարսն եւ զայլ ինչսըն տալ եւ զումէշս առնուլ:

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Թարվիզու նուիրակ Գրիգոր վարդապետն, ի պատասխանի թղթոյն։ Որ զտաւարս ինչ ժողովեալ՝ գրեալ էր սրբազան վեհին, զի զոր ինչ կամիցի, այնպէս արասցէ, թէ ի բերել, և թէ ի վաճառել։ Եւ սրբազան վեհն գրեաց, զի որք պիտանացուքն իցեն, թէ կովք և թէ լծելի եզինք, բերցէ։ Իսկ զանպիտանսն վաճառեալ և լաւ զումէշս առեալ բերցէ։ Եւ զի յոյժ յամեցաւ ի գործն, պատուիրեաց մի ևս շատ յամել, այլ փութով զմնացեալ գործն ևս ի յերկու ամսոջ վճարել և գալ։ Եւ զոր ինչ դրամս ունիցի, թէ կարասցէ, հաւատարմօք առ Տէր Վահանն հասուսցէ ի Բայազիտ, զի անտի մեզ հասցի։ Յետոյ լուաք թէ՝ բաց ի տաւարէն՝ զոչխարս, և բազում ցորեանս ևս ունի ժողովեալ, զոր ինքն ոչ գրէր։ Վասնորոյ Ա փուսուլայ ևս գրեաց առ նա, զի զայնս ևս վաճառեալ, մինչև ցքսան լուծ զումէշս առցէ, յայնցանէ՝ զորս բերեն անդ ի Մուսուլայ, և ընդ իւր ի սուրբ Աթոռս բերցէ։ Ընդ գրաբեր Յովհաննիսին ի սեպտեմբեր ԻԳ։

ՃԺԸ·

Առ՝ Ղօշավանից Առաջնորդ Կարապետ վարդապետն, զի զվանսն յանձնեալ Մինաս վարդապետին, ինքն եկեսցէ աստ։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Ղօշավանից Առաջնորդ Կարապետ վարդապետն, որ յօղոստոսի Է, և յուլիսի Ի յիշեցեալ է։ Որ

դարձեալ զլոյս էր գրեալ, որպէս և յառաջ բազմիցս, և խնդրեալ էր ի սրբազան վեհէն՝ հանել զինքն յԱռաջնորդութենէն, և բերել աստ։ Եւ սրբազան վեհն գրեաց նմա զվանսն յանձնել Մինաս վարդապետին, (որ յիշեցեալ է յապրիլի ԻԷ,) և զինչն վանիցն ուրոյն, և զորս սրբոյ Աթոռոյս՝ ուրոյն, դաւթար առնել ձեռամբ քահանայից և իշխանաց, և կնքել տալ նոցա։ Եւ Բ առնել զդաւթարն, զմինն ինքն կնքել և տալ Մինաս վարդապետին և զմինն նմա կնքեցուցանել, և ինքն առնուլ և գալ։ Բայց յետ միոյ ամսոյ գալ, մինչև վանից կալն ի տուն ժողովեսցի իւր ձեռամբ։ Փաւսուլայ մի ևս գրեաց առ նա, զի զարդիւնսն Մարտիրոս վարդապետի նուիրակութեան՝ զորս թողեալ էր ի գիւղորայսն, (որպէս ի յուլիսի ԺԶ, և ի մայիսի ԺԸ յիշեցեալ է։) Զորս բերել կարիցէ ընդ իւր՝ բերցէ, և զորս ոչ, դաւթար արարեալ և բերեալ ընդ իւր՝ ասցէ ինքեան։ Նա և զթամասուկսն զորս տուեալ էր նմա, (որք յիշեցեալք են յապրիլի ԻԷ,) գրեաց տանել առ պարտատուսն, և զտալիս նոցա առնուլ և բերել ընդ իւր։ Թուղթ ևս առ Մինաս վարդապետն գրեաց վասն նոյն բանիցն, զորս առ Կարապետ վարդապետն գրեաց, և պատուիրեաց նմա ևս՝ առնել այնպէս, և լաւ ծառայել վանիցն, զպտղիսն ժողովել, և զայլ հողալիսն հողալ, և յետոյ որպէս գրեսցէ՝ այնպէս արասցէ։ Ընդ գրաբեր աղային, ի սեպտեմբեր ԻԳ։

ՃԺԹ.

Առ Մելիք Ռուստամն ի Գեանճայ, որ զփախուցեալ Յարութիւն պետն կալեալ յղեալ էր աստ։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Մելիք Ռուստամն ի Գեանջայ, որ ըստ հրամանի սրբազան վեհին՝ որ գրեցաւ առ նա յամսոյս Դ, զԹիֆլիզեցի Յարութիւն վարդապետն կալեալ յղեալ էր առ սրբազան վեհն։ Որոյ աղագաւ գրեաց զշնորհակալութիւն։ Եւ զի խնդրեալ էր մի պատժել զնա, գրեաց զմխիթարութիւն, թէ վասն խաթեր քոյ ներելոց եմք։ Իսկ զի զԴԾ ոչխարս, և զԱԾ տաւարս, գործակալքն սրբոյ Աթոռոյս հրամանաւ սրբազան վեհին անդ ի վաճառել յղէին՝ (զի գոյր աւելորդ շատ, ի բերելոցն Պաղտասար վարդապետին, որք յիշեցան յօգոստոսի ԻԹ) վասն որոյ՝ և սրբազան վեհն գրեաց նմա վերահասու լինել, և վաճառել տալ շուտով։

Թուղթ մի ևս առ Բիլխաքեանտի Մելիք Մնացականն գրեաց ի պատասխանի թղթոյն՝ վասն Յարութիւն պետին դարձեալ՝ և զերոզոն խիլայեաց։ Ի սեպտեմբեր ԻԴ։

ՃԿ.

Առ Կարսայ փաշայն, որ վերստին ըզպորինջան էր խնդրեալ։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Կարսայ փաշայն, որ որպէս յամսոյս Ե, այժմ ևս զպորինճան էր խնդրեալ ի ձեռն չուխատարի ումեմն, զոր աստ առ խանն էր յղեալ։ Եւ վասն առաջին յղեցելոյն գրեալ էր զշնորհակալութիւն։ Եւ սրբազան վեհն յղեաց, և գալս թղթոյս սիրոյ ի պատասխանի թղթոյն գրեաց։

Թուղթ մի ևս առ Ահմատ Չէլէպին գրեաց ի պատասխանի սիրոյ թղթոյն, առ որ չէր հասեալ զիւլապն, որ յապրիլի ԻԷ յղեցաւ, զի տանողն այլոյ էր տուեալ։ Ուստի այժմ ևս խնդրեալ էր։ Բայց վասն տանող ոչ գոլոյ՝ այժմ ոչ յղեցաւ։ Եւ խոստացաւ սրբազան վեհն յետոյ յղել։ Ընդ չուխատարն ի սեպտեմբեր ԻԴ։

ՃԿԱ.

Առ արքայն Հերակլ և յայլս՝ վասն առնցեալ և առնլի դրամոցն յերկրէս։

Ըստ որում ի նոյեմբերի Գ խոստացաւ սրբազան վեհն Հերակլ արքային, գրել զևով որպէսն դրամոցն առեցելոց և առնլեաց յերկրէս մերմէ, և զայլս որպիսութիւնս, այժմ գրեաց առ նա զթուղթ մի, նախ շնորհակալ լինելով վասն առաւելագոյն մարդասիրութեանցն, զորս արար աստ ինքեան՝ (որպէս

ասացաւ։) Ապա և վերստին ծանուցումն որքանութեանց և որպիսութեանց դրամոցն, զոր միրչքեար Իւանին տարաւ, և որոց աղաղաւ էառ Թամասուկ Բ ամիս վատալով։ Իսկ և որովհետև դրամ զոլր մեզ ի Թիֆլիզ առ Մէլիք Աւետիքն, (ՃՇԷ 2500) (որ լինչեցեալ է ի սեպտեմբերի ԻԲ, Թէպէտ անդ աւելի, զի աստ զմածախն ես սաղացուցանելով գրեաց։) Վասնորոյ գրեաց Արքային, զի զայն առցէ յԱւետիքէն, և զայն զրամն ես՝ զոր աստ սրբազան վեհն ի բանակն Արքային ետ ոմանց ծառայից նորին, ԺԸ գրեաց՝ զի և զայն հաչուեսցէ ի վերայ նորին առնցեալ. և յորժամ վասն մնացեալ դրամոյն տալեացն երկրիս զմարդ յղեսցէ, ասասցէ նմա, զի յայն դրամոյն աստ հասուսցէ ինքեան լրապէս։ (ՃՆԵ) 2500) խնդրեաց ես՝ զի պատուիրեսցէ եկողին ծածկաբար առնել զայս զի յերկրականացս մի ոք իմասցի։

Թուղթ ես առ Մէլիք Աւետիքն գրեաց։ Նոյն ի պատասխանի Թղթոյն՝ որ զժուարեալ էր ընդ բանս սրբազան վեհին, զոր ի սեպտեմբերի ԻԷ գրեաց առ նա՝ Թէ ամօթ քեզ, զի փօլիցալագիրդ յետս յղեցին առ մեզ։ Նա և ընդ զանելն Ստեփանին, որ անդ լինչեցաւ, զի զանեաց զնա սրբազան վեհն ի չտալն զփօլիցայն։ Որոյ գրեաց ըստ պատշաճին զպատասխանիս, սիրոյ բանիւք, և պատրուակեալ մեղադրանօք։ Եւ ապա վասն դրամոյն որ առ ինքն՝ պատուէր, զի տացէ Արքային, զի աստ մեզ հասցի։ Որպէս արքային ես գրեաց։

Թուղթ ես առ Զաքարիա վարդապետն գրեաց, ծանուցանելով զգալն աստ Արքային, և զանցսն ամենայն այնր սակս։ Եւ զորպիսութիւն դրամոց տալեաց երկրիս, առեցելոց և մնացելոց։ (Որպէս և Արքային գրեաց։) Եւ վասն առ Մէլիք Աւետիքն եղեալ դրամոյն մերոյ սմա ես գրեաց առնուլ տալ արքային. զի աստ ի մնացեալ տալեաց դրամոցն մեզ հասցի։ Փուսուլայ մի ես գրեցաւ առ սա առանձին՝ վասն արարմանց և անյարմար շարժմանցն աստ միրիշքեարին։ Եւ պատուէր՝ ասել արքային, զի վասն մնացեալ դրամոյն զՋաղաբէկն յղեսցէ։ Զինչ կերպ դրամ լինիլն ես ծանոյց տրեցելոյն ի մէնջ միրչքեարին։ Եւ պատուիրեաց առ Արքայն զայս ընթեռնուլ։ Փօլիցալագիր ես գրեաց սրբազան վեհն առ Զաքարիա վարդապետն, տալ ծաղկարար Ցօլնաթանէն ԻԲ Թուման դրամ, ի վարձ նմին, զի այժմ երթալր աստի, (որ ի յունիսի ԻԵ լինչեցեալ գոյ։) Եւ այս դրամոյս Բ Թումանն էր նորին աշակերտ վրացի Դաւթին աղաղաւ։

Թուղթ ես առ Տէր Նիկողայոսն գրեաց, զի տուն մի՝ որ ի նախնեաց իւրոց հովուեցեալ էր, և ինքն ես հովուէր, որում Շանչենց Դիօ ասէին կամէր Զաքարիա վարդապետն զաւթել, և նա զանգատ էր գրեալ առ սրբազան վեհն։ Վասնորոյ գրեաց, զի որպէս նախնիքն իւր և ինքն ես ցայժմ հովուեալ են, այժմ ես ինքն հովուեսցէ։ Ընդ Յօնաթանին։ Նոյեմբեր Ժ։

ՃԿԲ.

Առ Պոլսոյ՝ Զմիւռնոյ՝ և Հնդկաց՝ և Կայենոյ նուիրակունսն, սակս հնոց և նորոց փոլիցայից։ Եւ այլ ևս բազմաց բանից։ Եւ մխիթարութիւն քաղաքին Պոլսոյ՝ սակս նեղութեանցն, որ ի մեծ պատերազմէն Ռուսաց։ Եւ վասն Ախթարմայիցն Ախալցխայու, և այլ ևս բազում թուղթք սակս զանազանից իրակութեանց։

Ի Պօլսոյ ի Զմիւռնոյ և ի Կարնոյ ժամանեցին Թուղթք առ սրբազան վեհն։ Խնդրեալ էր նուիրակն մեծին Պօլսոյ Զաքարիա վարդապետն զԹուղթս ինչ ի սրբազան վեհէն, զորս և յղեաց. Որք են Թուղթ մի ի վերայ քաղաքին Պօլսոյ, մխիթարութիւն և սփոփութիւն սակս նեղութեանցն զոր կրէին։ Զի վասն մեծ պատերազմին Ռուսաց՝ սով էր անկեալ ի Պօլիս, և ամենեքեան անհաբեկ լեալ՝ կային ի մէջ տրտմութեան։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, լերեսն ՑԼԶ. ՑԼԷ։

Թուղթ մի ես առ Միքայէլ ոմն, որ զկտակ հանգուցելոյ ումեմն Յարութիւն անուամբ, հասուցեալ էր Զաքարիա վարդապետին։ (Խ)։

Թուղթ մի ես առ մՀ. Սարգիս ոմն, որ զԲ ոսկի ողորմութիւնս էր տուեալ, և յամենայն ամիս ես խոստացեալ էր տալ։

Թուղթ մի ես առ մահտեսի Վարտաչն, որ ի կենդանութեան իւրում տուեալ սրբոյ Աթոռոյս վասն հոգւոյն իւրոյ զբաժինն. (2) Թուղթ մի ես առ Նորին եղբայր մահտեսի Պետրոսն, վասն այսր դարձեալ, և յորդորումն, զի որպէս ի վերայ Պարսպին զանունն արձանացոյց, ի վերայ տանեաց եկեղեցւոյն ես արձանացուցէ՝ տալով զյատուկ իմսատխալս.

Թուղթ ես վասն հաստատութեան առ Պալաթու նոր գանձապետ մահտեսի Սիմէոնն, որոյ վասն գրեցաւ ի յուլիսի Ի Զաքարիա վարդապետին գրել զորպէսն, և նա գրեալ էր.

Թուղթ ես առ Շօռօթեցի Մկրտիչ աղայն գրեաց, սիրով և յորդորմամբ պատուէր՝ (որպէս և ի յուլիսի Ի,) զի զմեզ և միաբանից մերոց տալոց զրամսն տացէ. Մխիթարութիւն ես սակս վշտացն, զի էր ի բանտի. Թուղթ առ Նասիպն, մեղադրութիւն վասն ռոպո. արարմանցն, (որ ասացաւ ի յուլիսի Ի,) և սաստիւ մեծաւ հարկ, տալ զդրամն անպատճառ.

Թուղթ մի ես առ Ուռումէլու Նուիրակ Յովհաննէս վարդապետն, որ տրտում և յուսահատ նստէր ի Պոլիս. (Որ յիշեցաւ ի յուլիսի Ի.) Պատուէր՝ առ Զաքարիա վարդապետն մնալ յայս ձմեռանս, և մի զերկուս ծախս առնել, մինչև եթէ ի գարնանն անդորրութիւն լիցի, երթիցէ ի վիճակն իւր, ապա թէ ոչ, զայլ իմն հոգս արասցէ յանժամ. Իսկ Պօղոս աղայն զփօլիցայն նուիրակին Հնդկաց հասուցեալ էր Զաքարիա վարդապետին, (Ա) (որ ի յուլիսի Ժ յիշեցեալ է,) վասնորոյ ըզթուղթ մի գրեաց առ նա, շնորհակալելով վասն տալոյն զփօլիցայն. Այլ և ըստ ի յունիսի Ժ գրելոյն առ նա սրբազան վեհին, գրէր նա այժմ, թէ գրեա Հնդկաց նուիրակին, զի զոր ինչ դրամս ունիցի, հասուսցէ ի Բասրա առ Միքայէլ աղայն, զի և ինքն ի Պոլիս տացէ Զաքարիա վարդապետին. Եւ սրբազան վեհն գրեաց՝ (որպէս ասելոց եմ ի ներքոյ.) և ծանոյց նմա չգրելն. Եւ որպէս ի յունիսի Ժ ասացաւ, ի Բաղդատ ես գոյր դրամ յարդեանց նուիրակին առ գանձապետ Ալէքսանն, (35) նաև Շահվէրտի անուամբ հայ ոմն ի Բաղդատ ի տան սրբոյ Աթոռոյս վէքիլ Տէր Մարկոսին վախճանեալ, զկտակ էր արարեալ սրբոյ Աթոռոս. (Ի) զի իւր ազտ Թիֆլիզեցի Դաւթի որդի մահտեսի Աստուածատուրն՝ որ էր ի Բասրա, հասուսցէ սրբոյ Աթոռոյս, որպէս գրէր Տէր Մարկոսն. Վասնորոյ գրեաց սրբազան վեհն Պօղոս աղային, զի գրեսցէ Միքայէլ աղային զայն զրամսն ես առնուլ. թէ զբաղդատունն, և թէ զբասրայունն, (ՃՀ) զի և ինքն ի Պոլիս տացէ Զաքարիա վարդապետին.

Թուղթ մի ես առ Միքայէլ աղայն գրեաց ի Բասրա, զնոյն բանսն՝ զորս գրեաց Պօղոս աղային, և պատուէր՝ շուտով առնուլ ի յԱլէքսանէն և մահտեսի Աստուածատուրէն զդրամսն, և գրել Պօղոս աղային, զի և նա ի Պոլիս հասուսցէ Զաքարիա վարդապետին.

Թուղթ մի ես ի Բասրա առ վերոյիշեալ մահտեսի Աստուածատուրն գրեաց, տալ զկտակ Շահվերտուն (Ի) Միքայէլ աղային, և գրել ի Պոլիս Զաքարիա վարդապետին՝ Զի ի Պօղոս աղայէն առցէ զայն գրով իւրով. Եւ ինքեան ես գրեսցէ զտայն. Առ Միքայէլ աղայն յղեցաւ.

Թուղթ մի ես Բաղդատ առ սրբոյ Աթոռոյս վէքիլ Տէր Մարկոսն՝ և գանձապետ Ալէքսանն գրեաց, ծանուցանելով զոր ինչ վասն Շահվերտու կտակին գրեաց, և պատուէր՝ զի և ինքեանք գրեսցեն մահտեսի Աստուածատուրին՝ տալ զայն դրամն Միքայէլ աղային. Ապա՝ և վասն առ ինքեանս եղեալ դրամոյն՝ որ էր մնացորդ արդեանց նուիրակին՝ զոր առ նոսա էր եղեալ, (որպէս ասացեալ է յանցեալ ամին ի փետրուարի ԻԴ,) գրեաց զպատուէր՝ զի հասուսցեն ի Բասրա Միքայէլ աղային, և գրեսցեն Զաքարիա վարդապետին, զի և նա գրովն իւրեանց առցեն ի Պօղոս աղայէն, և ինքեան ես գրեսցեն. (Առ Միքայէլ աղայն յղեցաւ.) Թուղթ մի ես առ Հնդկաց նուիրակ Յովսէփ վարդապետն գրեաց, ծանուցանելով զգրելն առ ինքն զթուղթս ի դեկտեմբերի ԺԷ, և ի յունիսի Ժ, հանդերձ դիտմամբ նոցին փոքր մի. Եւ Պօղոս աղային հասանիլն առ մեզ փօլիցային իւրոյ, (Ա) և առ Ալէքսանն եղելոյն ես՝ որպէս ասացաւ ի վերոյ. Եւ պատուէր՝ զի զոր ինչ դրամս ունիցի հասուսցէ ի Բասրա առ Միքայէլ աղայն, և գրեսցէ ի Պոլիս առ Զաքարիա վարդապետն, զի գրով իւրով առցէ ի նմանէ, և ինքեան ես գրեսցէ ասա. Եւ զի՝ զԺ հատ միանման և կօթաւոր չալի զաւաթս

տակոյն իւրեանց առեալ բերցէ։ Առ Միքայէլ աղային լղեցաւ, և նորինն առ Պօղոս աղային ի Պօլիս, զի լղեսցէ առ նա ի Բասրա։

Թուղթ ևս առ Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Ղուկաս վարդապետն ղրեաց, ի պատասխանի երից գրոց նորին, ղրեցելոցն ի մարտի Ը, ի յունիսի Ն, և ի յուլիսի ԻԲ։ Առ որ հասեալ էր թուղթն, որ յապրիլի ԻԸ ղրեցաւ։ Վասն Մսրգամու Առաքելի գրոյն ղրեալ էր թէ՝ կամի զպղնձեայ մայր գիր մի լղել, և ոչ զհոյր, նա և զպատկերս պղնձեայ՝ զոր ինչ և խնդրիցես։ Գրեաց թէ՝ այլ չեն պիտոյ մեզ նորին գիրն և զպատկերն։ Սպասնալիս ես՝ զի գրեսցէ նմա։ Եւ ի յԱմստերդամ ղրեաց զկարգաւոր լղել, որպէս և ինքն գրէր։ Անթիմոնին զոր խնդրեաց յառաջ, այժմ գրեաց թէ այլ չէ պիտոյ։ Եւ զգործիս վասն տպագրին, և զայլ ինչս՝ և զթուղթ՝ և զհայր գրոյն, զորս յառաջ գրեալ էր առնուլ, գրեաց կամ ի ձեռն Զաքարիա վարդապետին ի վերայ Պօլսոյ, և կամ այլով հաւատարմաւ լղել աստ։ Վասն թուղթ շինելոյ այլ ևս հարցմամբ գրեաց տեղեկանալ։ Եւ Ֆռանկիւլի Բաթլնամալի Սաւատն զոր լղեցաք, (որպէս յիշեցաւ յապրիլի ԻԸ,) տեսեալ էին զի այլ իմն էր լեալ, և թուով յառաջ քան զթամասուկն։ Ուստի՝ լղեալ էր յետս Ղուկաս վարդապետն, հանդերձ հուճաթիւն, զոր ի դատարանում առեալ էր ի նմանէ յառաջ ի տալն գրամին, (5) և սրբազան վեհն հաւանեցաւ, և ղրեաց միամիտ առնել զՍազաթիէլն, և գորգի նորին Ֆռանկիւլն։ Եւ զՄարգարի հուճէթն ես լղել, որպէս և յապրիլի ԻԸ գրեցաւ։ Ցիշեցոյց ես թէ՝ վասն գրամոյն՝ (դ) զոր գրեցաք քեզ յապրիլի ԻԸ տալ Զաքարիա վարդապետին, այն գիրն լիցի քեզ զապղ, որպէս և ի նմա գրեալ եմ։ Բայց զի մասն ինչ (5) ես էր հասուցեալ, մասն ինչ ես նոր գրեաց տալ Զաքարիա վարդապետին, (Բ5) և այսոցիկ ասէ ի միասին, այս գիրս լիցի քեզ զապղ։ Գրեաց փոքր ինչ և զորպիսութեանց ներկայիս և զանցից։

Թուղթ օրհնութեան ես՝ ըստ խնդրոյ սորին առ մահտեսի Պօղոս ոմն, և զոքանչն իւր, որ վասն հոգւոյ կնոջն իւրոյ զԱ. արծաթէ սկիհ էր տուեալ։ Թուղթ ես առ Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետն ղրեաց, ի պատասխանի երից թղթոց նորին, ի յուլիսի ԻԱ, յօգոստոսի ԻԳ, և ի սեպտեմբերի ԺԶ գրեցելոց։ Թէ ահա զթուղթսն զորս խնդրեալ էիր լղեցաք, որք ի վերոյ գրեցան։ Եւ պատուէր վասն Յովհաննէս վարդապետին, տանել առ ինքն, զի լայս ձմռանս ի միասին մնասցեն՝ (որպէս և նմա ղրեաց։) Իսկ Թօխաթու նուիրակի փօլիցայն (Գ) (որ յիշեցաւ ի յուլիսի Ի, և ի սեպտեմբերի Գ,) ըստ հրամանի սրբազան վեհին տուեալ էր մահտեսի Փիլիպպոսի եղբայր Նազարէթին, որպէս ղրէր ինքն։ Բայց Նազարէթն չէր ղրեալ եղբօրն իւրոյ զառնուլն, և նա տարակուսէր։ Ուստի ղրեաց ասել նմա, զի եղբօրն զմիամտութիւն գրեսցէ։ Իսկ և ի Հիւլպալու Տէր Մանուէլն հասուցեալ էր ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն զկտակսն, զորս յիշեցաք ի դեկտեմբերի ԺԴ և ի Նահրիարցի Տէր Յովհաննէսէն զԱՃ ղուռուշ ես նորապէս, յորմէ ԲՃ ես յառաջ էր հասեալ։ Գրեաց սրբազան վեհն զհաճութիւն։ Եւ զի՝ վասն ի սեպտեմբերի ԻԲ յիշեցեալ Տուղախու անապատի զանձանակին գրէր ստէպ ստէպ, վասնորոյ ղրեաց թէ՝ չէ մեզ այգ պիտոյ, որովհետև անապատն այն Գանձասարու է վիճակ, ծանոյց և զգրելն վասն այնր Յովհաննէս կաթողիկոսին, և խոստացաւ յետոյ գրել վասն նորա թէ զինչ արասցէ։ Վասն զանձանակաց կոնդակս էր խնդրեալ, յետոյ գրել խոստացաւ։ Իսկ վասն Ախլցխալու Առաջնորդութեան ֆերմանին, զոր ի յուլիսի Ի և յառաջ ես, խնդրեաց սրբազան վեհն, ղրեալ էին պատրիարգն և Զաքարիա վարդապետն թէ՝ որովհետև վէզիրն ի պատերազմին է, և տակաւին չեն առեալ զօրքն ի տեղւոջ իմիք զկայ, ուստի՝ ոչ արգ առնելոյ զոյ, և ոչ զֆերման տալ, զի ի ձեռն վէզիրին պարտի լինիլ, և ղրեալ էին ժամանակ ինչ համբերել։ Եւ սրբազան վեհն հաճեցաւ։ Բայց անհնար է ասէ, թէ զԿարմիր Վանից Յակոբն թողուցում ի վիճակն այն, իսկ եթէ դուք առանց Առաջնորդի թողուք զնոսա, դուք գիտէք։ Իսկ ֆռանկ պատրիքն, զորս Ախլցխալու փաշայն վարեալ անտի ի կալանս էր արարեալ յաւին ծովուն ի տեղւոջ իմիք։ Գրեալ էին զբողոք առ դեսպանն ֆռանկաց որ ի Պօլիս, զի զհոգս ինչ արասցէ վասն ինքեանց։ Եւ նա խնդրեալ էր ի պատրիարգէն թողուլ տալ զնոսա ի բաց։ Իսկ նա ասացեալ էր՝ թէ այդ բանիւ՝ և ձեռամբ կա-

Թովլկոսին մեռոյ է լեալ։ Եւ նա խնդրեալ էր ի Նմանէ, գրել սրբազան վեհին, զի ազատեսցէ զնոսա։ Եւ պատրիարգն պատասխանեալ էր թէ՝ դիւրին է այդ, բայց մինչ ոչ գրեսցես դու նոցա, զի մի ևս վրդովեսցեն զհայոց ժողովուրդսն, և ոչ ևս ի մէջ նոցա մտցեն ուր և իցեն, և կամ զաղանդն ախտարմալութեան նոցա ուսուսցեն։ Եւ նա հաւանեալ ասացելոյն, գրեալ էր զթուղթ մի պատուիրական առ պատրիսն, զի մի ևս մտցեն ի մէջ հայոց ժողովրդեան ուր և լինիցին, և կամ լեղաշրջիցեն զնոսա ի հաւատոց իւրեանց։ Եւ յղեալ էին զգիրն զայն առ սրբազան վեհն, և խնդրեալ էին զպատասխանիսն ի բաց թողուլ տալ, և զգիրն զայն առ նոսա յղել։ Իսկ զի ի մէջ ֆարմանին չէր գրեցեալ զպատրիսն ի կալանս առնել, այլ միայն ի բաց վանել յերկրէն, վասնորոյ գրեաց թէ՝ փաշային է ի կալանս արարեալ, առանց մեր խնդրոյն։ Եւ թէ որպէս էր կատարեալ փաշային զհրաման ֆարմանին, յղեաց առ Զաքարիա վարդապետն զօրինակ գրոյ փաշային Ախլցխայու, զոր գրեալ էր առ ինքն, յորում ցուցեալ էր, թէ որպէս զհրաման ֆերմանին ի գլուխ հանեաց։ Զի ցուցցէ անդ պատրիարգին և իշխանացն։ Արդ ասէ, որ ինչ ի մէջ ֆարմանին գոյր, մեք զայնս կատարել ետուք, իսկ եթէ փաշայն ինքն է զպատրիքսն ի կալանս տարեալ, մեք զինչ արասցուք։ Բայց խոստացաւ հանել տալ անտի զպատրիսն։ Եւ զդեսպանէն շնորհակալ եղև, որ զայն գիրն գրեալ էր առ պատրիսն։ Բայց յայնժամ ասէ լինիմք կատարելապէս շնորհակալ զդմանէ, և օրհնօղ միշտ, մինչ զայսպիսի իմն կանոնագրական և սաստի գիր ևս ի փաւիէն հանցէ ի վերայ ամենայն պատրեաց, զի մի ալալլիցեն զխղճալի ազգս Հայոց, և մի հանցեն ի ընական աւանդութեանց իւրեանց, և մի ընաւ խօսիցին ընդ նոսա վասն հաւատոյ։ Եթէ կամի՝ զի սէրն հաստատուն մնասցէ ի մէջ երկուցս, թող այսպէս արասցէ, յայնժամ և մեք ազագաւ շնորհակալս և զոհարանս լիցուք զինքեանց։ Եւ պատուիրեաց ասել պատրիարգին և Գասպար Ամիրային, զի թէ պատշաճ տեսցեն, ընթերցին զայսքան բանս առ դեսպանն։ Գրեաց ևս ասել դեսպտնին, զի պաարիքն ի յԱխլցխայ ոչ եթէ հարևանցօրէն մուտ և ելս առնէին, այլ տեղաւորեալ հաստատնապէս, և զմի եկեղեցին զաւթեալ՝ նստին որպէս Առաջնորդ՝ և տէր ժողովրդեան։ Զոր եթէ ոք ի Մերազգի սևագլխաց արասցէ ի յերկիրս իւրեանց, թողուն արդեօք։ Ասացէք ասէ՝ և զիրաւունս խնդրեցէք, զի Ախլցխա հայոց երկիր է և ոչ Փռանկաց։ Եթէ այսպէս յայտնի զրկողութիւնս արդարութիւն համարին իւրեանք և ոչ անիրաւութիւն, այդ ևս ահա նոր օրէնք՝ և նոր աւետարան։ Գրեաց և զդայն Հերակլ Արքային, և զանցսն ամենայն որք տակս նորին, ի կարճոյ։ (Որպէս յամսոյս Ժ, և յայլ տեղիս ասացաւ։) Փուսուլայ մի ևս զըրեաց առ Զաքարիա վարդապետն, շնորհակալիլով վասն տալոյն զփօլիցայսն, զորս մինչև ցայժմ ի վերայ իւր։ Զորոց նա այժմ գրեալ էր։ Եւ զօրինչ Ղուկաս վարդապետին գրեաց՝ հասուցանել ինքեան զդրամ (Բ5), սմա ևս ծանոյց, և զգիրն առ սա յղեաց՝ յղել առ նա, և զդրամն առնուլ։ Եւ զոր ինչ առ Պօղոս աղայն՝ և ի Բաղդատ, և ի Բասրա՝ և առ Նուիրակն Հնդկաց և յայն կողմունսն գրեաց վասըն փօլիցայից՝ որք ի վերոյ ասացան, սմա ևս ծանոյց, և զգրեանսն առ սա յղեաց՝ տալ Պօղոս աղային, և ըստ ժամանակին զդրամսն առնուլ։ Ծանոյց և զնոր փօլիցայագրեանսն գրելն և յղելն ի Կարին, (որպէս ասելոց եմ ի ներքոյ) զի Նուիրակն Կարնոյ զդրամն առեալ տացէ զգրեանսն դրամ տուողին։ Ուստի ասէ՝ ի գալն առ քեզ գրեանցն, տուր աներկրայ։ Մկրտիչ աղային և Նասիպին ևս զգիր գրելն ծանոյց, և պատուիրեաց հարկել և առնուլ զդրամսն, և յոչ տալն՝ ծանուցանել, զի տացէ զբաժին նոցա։ Նոյնպէս և մահտեսի Յակոբին՝ (որ յիշեցաւ ի յուլիսի Ի, որոյ եղբայրը մահտեսի Մաղաքիայն մեռեալ էր,) պատուիրեաց գրել սաստիւ և հարկել զի տացէ զդրամն, և յամառիլն, զնմանէ ևս ծանուցանել։ Եւ սիրով մեզադրութիւն փոքր ինչ մահտեսի Մովսէսին, որ ոչ ևս գրէր զգիր։ Զօրինակս ձեռագրաց աքսորելոցն Ախլցխայու, և երիցանցն Վաղարշակերտու, յղեաց զի տեսցէ, և ցուցցէ ևս պատրիարգին և իշխանաց։ Թուղթ ևս առ խոջայ Նազարէթն գրեաց, գրել եղբօրն իւրոյ մահտեսի Փիլիպպոսին զառնուլն ի Զաքարիա վարդապետէն զփօլիցայն Նուիրակին Թօխաթու, (Գ) զի և նա միամտեսցի, որպէս և Զաքարիա վարդապե-

տին գրեաց։ Եւ զի՝ գիրս ոմանս ըստ գրելոյ սրբազան վեհին առեալ էր Զաքարիա վարդապետին, և բերօզ ոչ լինէր վասն վրդովմանց կողմանցն, գրեաց սմա հոգ տանիլ, և ընդ հաւատարմաց յղել։

Թուղթ մի ևս առ սրբոյ Աթոռոյս հին նուիրակ Յարութիւն վարդապետն գրեաց, (որ վիճեցաւ ի յունիսի Ժ, և յուլիսի Ի.) վերջացուցանելով զգրելին և զասելին, թէ ահա Զ ամն լրացաւ նուիրակութեանդ, և Դ ամն լրացաւ ապստամբութեանդ, և իմս համբերութեան չափն ևս լրացաւ։ Զի այլ ոչ մնաց կերպ՝ զոր քեզ ոչ գրեցի, թէ սիրով՝ թէ մեղադրանօք, թէ յորդորանօք, և թէ ահացուցմամբ, և ոչ մի կերպ ազդեաց քեզ։ Շատ էր քեզ այդքան անիրաւել, և ինձ այսքան համբերել, որ այլ մեծաւորք այսքանեաց մասին ոչ համբերէին։ Բայց արդ ասէ, Բ ինչ մնաց ասել քեզ և վերջացուցանել։ Նախապէս՝ վկայէ ամենասուրբ երրորդութիւնն և մեր հաւատն, զի ես խէթ ինչ դքէն ոչ եմ ունելոց բնաւին ի սիրտս իմ, մինչ եկեսցես աստ, թողեալ զկարծրասրտութիւնսդ։ Երկրորդապէս՝ նոյնքն ասէ լիցին վկայ, զի մինչ ոչ բնաւ գայցես, յայնժամ՝ թէ ի Հայս իցես՝ և թէ յայլ ազգս, թէ մեռեալ և թէ կենդանի, զքեզ այնպէս եմ առնելոց, որ յԱդամայ հետէ բնաւ՝ չիցէ լեալ ի վերայ աշխարհի։ Զի ուր երթիցես, եղջիւրն Կայենի ի ճակատդ, և դատապարտութեան գիրն ի պարանոցդ, անհանգիստ և հալածական լինիցիս յամենայն ումեքէ, մինչ կենդանի ես, և յետ մահուանդ ևս ըստ սմին։ Պահեա ասէ զայս գիրս, զի զորն յերկուց անտի ընտրեսցես և կատարիցի, իմասցիս զճշմարտութիւն և զստութիւն։ Քանիցս ասէ ընթերցիր, թերևս լիցի կակղութիւն քարացելոյ սրտի և արթնութիւն ննջեցելոյ խղճմտանացդ։—Զայս յղեաց առ Զաքարիա վարդապետն, և զօրինակն ևս յղեաց առ նա, և գրեաց ի վերայ նորա թէ՝ այսու օրինակաւ գիր գրեցաք առ Յարութիւն վարդապետն, և ահա առ քեզ յղեցաք։ Արդ՝ եթէ որպէս գրէք՝ (զոր այժմ էին գրեալ.) եկեսցէ նա յայդր, և զնշան զղջման և աստ դալոյ ցուցցէ, բարի է։ Եւ թէ ոչ, յայնժամ՝ զօրինակդ զայդ ցոյց իշխանաց և պաարիարդին զի տեսցեն, և զմեզ անմեղադիր արասցեն։ Եւ դու զթուղթդ զայդ յղեա առ Յարութիւն վարդապետն, և զորպէս լինելն վերջապէս մեզ ծանո։ Յղեաց զմեծ պահարանն առ խոջայ Նազարէթն, տալ Զաքարիա վարդապետին։

Թուղթ գրեաց առ Կարնոյ Առաջնորդ Բաղդասար վարդապետն, և առ իշխանսն, ըստ խնդրոյ Մուրտիկեանց մ. Փիլիպպոսին։ Զի վասն հարկաւոր պիտոյից և հարկատրութեանց իւրեանց դրամ էին առեալ ի նմանէ փոխ, և ոչ տային։ Վասնորոյ գրեաց սիրախառն մեղադրանօք և յանդիմանութեամբ՝ տալ նմա զփոխն իւր։ Եւ յատկապէս Առաջնորդին վասըն ղնուիրակն յամեցուցանելոյն, (որպէս և ի սեպտեմբերի ԻԴ,) և յոյժ սաստիւ և սպառնալեօք հարկ և պատուէր՝ ջանալ վասն նուիրակին, և յայս նոյեմբեր ամսեանս հանել ի քաղաքէն յայսկոյս ի գալ աստ։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն ի Կարին, և ի պատասխանի թըղթոյն, առ որ զգրեանսն Պօլսոյ յղեաց, հասուցանել առ իւր եղբայր Նազարէթն, զի տացէ Զաքարիա վարդապետին։ Եւ առ քաղաքի իշխանսն և Առաջնորդն զթուղթ գրելն ըստ խնդրոյն՝ ծանոյց՝ զոր յղեաց առ նա։ Եւ գըրեաց վասն տարակուսանաց նորին՝ որ յաղագս փօլիցալի Թօխաթու նուիրակին, (որպէս ասացաւ ի վերոյ,) թէ ահա հասուցեալ է Զաքարիա վարդապետն Նազարէթին։ Եւ զի գըրէր թէ՝ Բաբերդու Առաջնորդ Սարգիս վարդապետն՝ և Տէր Պետրոսն՝ զդրամսն ոչ գտան, (ՅԾ) և կամէր, զի հանցէ ի հաշուէն, գրեաց թէ՝ Բաբերդու Առաջնորդն եթէ ոչ տացէ՝ ունիս դու զիրաւունս, յայնժամ մեզ ծանո։ Բայց վասն տալեաց Տէր Պետրոսին ես զինչ արարից, զի ես ոչ եմ ասացեալ թէ տուր, այլ դու ես տուեալ։ Արդ որպէս տուեալ ես, յետս առ։ Ի մահտեսի Խաչատուրէն ևս է ասէ Տէր Պետրոսին դրամ հասեալ՝ (Գ.Ս) (որպէս ասացաւ ի սեպտեմբերի ԻԴ.) զայն ևս առ։ Եւ վասն նոր փօլիցալի գրեաց թէ՝ ահա նուիրակն խօսելոց է ընդ քեզ, որպէս ի թղթոջ նորին ասելոց եմ ի ներքոյ։ Գրեաց և զթուղթ ևս առ Նսնուսեցի մահտեսի Յովհաննէսն, և յեղբայրն իւր մահտեսի Սարգիսն, ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Եւ որպէս ի սեպտեմբերի Գ, այժմ ևս գրեաց, զի զթուղթն՝ զորոյ օրինակն յղեալ էին յառաջ, Ա օրմայն Դ ղուռուշ և կիսով՝ մինչև ըԱԾ օրմա յղել։

Եւ ի Զմիւռնոյ թուղթ էր գալոց վասն սոցա, և մեզ ես ամանաթ, ի Ղուկաս վարդապետն, որպէս գրէր նա, վասնորոյ՝ գրեաց, զի ըզթուղթն զայն զնովն իւրով՝ ընդ մեր ամանաթին յանձնեսցեն Սարգիս վարդապետին, զի բերցէ։ Եւ որքան ես աժանագին թուղթ գտանիցի, ի կողմն իւրեանց անցուցեալ ըզնշանն լցեսցեն և եթէ խնդրեսցէ, լցեսցեն վասն մեր։ Այլ ես թուղթս ունէր, որոյ աղաղաւ գրէր թէ՝ վատ է փոքր ինչ, ասաց զնորին նշանն ես լցել։

Թուղթ մի ես առ Կարնոյ Նուիրակ Սարգիս վարդապետն գրեաց ի պատասխանի թըղթոյն։ Զոր ինչ մահտեսի Փիլիպպոսն գրեաց սակս Տէր Պետրոսին Բարերդու Առաջնորդի, և այլոց հաշուից, սմա ես գրեաց ասել նմա։ Եւ պատուէր՝ գրել Բարերդու և Գեզու Առաջնորդացն սակս տալեացն իւրեանց, (որք ի վերոյսդ, և յապրիլի ԻԸ, և անտի այսր, և ի վեր եղեն յիշեցեալք,) սաստիւ և հարկիւ զի տացեն, և ի չտալն՝ ծանուցանել։ Եւ լուրեան յոյժ հարկիւ, սաստիւ և մեղադրութեամբ պատուէր՝ փութալ ի գալ աստ, և մի ես յամել։ Գտանիլ աստ մինչև յայտնութիւնն։ Ապա թէ ոչ՝ ասէ, այնուհետև զոր ինչ ասիցես և գըրեսցես, անընդունելի է։ Զմահտեսի Յովաննիսի թուղթն ես առ սա լցեաց, և պատուիրեաց՝ զի որպէս նմա ես գրեալ է, զթուղթն առեալ ընդ իւր բերցէ, իսկ եթէ մահտեսի Փիլիպպոսն թուղթս ունիցի քան զնորինն լաւ և աժանագին, ի նմանէ առեալ բերցէ։

Գրեաց և զերկուս փոլիցայագիրս՝ յանուն Պոլսոյ Նուիրակ Զաքարիա վարդապետին, ի միումն գրեալ զանուն մահտեսի Փիլիպպոսին (Ե) և միւսն առանց անուան դրամ. տուողի, (Բ) զի թէ մահտեսի Փիլիպպոսն տալ ոչ յօժարիցի, Նուիրակն յայլոյ առեալ զդրամն՝ տացէ նմա զթուղթն։ Զորս և առ. Նուիրակն լցեաց, և պատուիրեաց՝ զի մինչև ոչ առցէ զդրամն՝ ոչ տացէ զթուղթսն, ապա թէ ոչ, ի քէն ասէ առից։ Եւ առեալ ասէ զայնս, նա և զհին հիսապից դրամսն ես ի մահտեսի Փիլիպպոսէն, և ի Տէր Պետրոսէն ես գտալեաց բանոն սաղացուցեալ, (ՅԾ) (ՂԵ) քոլովդ հանդերձ, և զայլս ամենայն զորս գրեցաք, մինչև ցուլըր ծնունդն աստ գտանիլ պարտիս։ Ապա թէ ոչ ծանր մեզ, զի յատկապէս մարդ լցեսցուք վասն քոյ, որ զքեզ առեալ բերցէ աստ։

Այլ և՝ զմահտեսի Փիլիպպոսի թամասուկն՝ զոր վասն տալեացն իւրոց տուեալ էր մեզ ի գնալն աստի ի յապրիլի ԻԸ, լցեաց առ սա, զի յետ հատանելոյն ընդ նմա զհին հաշիւն, և յառնուլն յրապէս զդրամսն տացէ նմա։ Գրեաց սմա և զիսկն որպիսութեան գալոյ Հերակլ Արքային, և զանցիցն՝ որք այնր սակս, ծանուցանել ի պատճաճաւոր տեղիս, զի մի զայլ և այլս ասիցեն։ Իսկ և տղայ ոմն Յովհաննէս անուամբ, որ լեալ էր անդ սմա սպասաւոր, յորմէ և ձեռնադրեցեալ էր սարկաւագ, եկն աստ՝ զի միաբան լիցի, և յետոյ հրաժարեալ դարձաւ յետս, ուստի՝ գրեաց սմա՝ զի եթէ կամիցի դարձեալ սպասաւորել ինքեան, եթէ յանձն առնուցու զալ աստ ընդ իւր, և մնալ աստ մինչև ցմահ, առցէ առ իւր, ապա թէ ոչ, մի առցէ։ Այս ես առ մահտեսի Փիլիպպոսն լցեցաւ տալ նմա։

Թուղթ մի ես առ Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետն գրեաց, ծանուցանելով զորպիսութիւն գալստեան Հերակլ Արքային, զանցսն՝ որք այնր աղագաւ։ Եւ պատուէր դարձեալ վասն Ալաշկերտու ախթարմալիցն, զի մի թուլատրեսցէ, այլ ջանասցէ դարձուցանել զնոսա։ Հարցանելով թէ՝ կոնդակն զոր գրեցաք, զինչ եղև, (որ ի սեպտեմբերի ԻԷ յիշեցաք։) Եւ՝ Ղօշավանից Մինաս վարդապետն՝ յետ աւարտման վանիցն՝ (որպէս ասացաւ ի ԺԷ հոկտեմբերի։) փախուցեալ գնացեալ էր ի վանս սրբոյն Թադէոսի Առաքելոյն։ Վասնորոյ գրեաց սմա կոչել զնա առ ինքն, և առնուլ և գալ աստ, զի իմասցուք ասէ ի նմանէ լաւապէս զորպիսութիւնս Ղօշավանիցն։ Այս ես Կարնոյ փայեկին տուաւ, տալ Զաքարիա վարդապետին յերթալն։ Զոր մահտեսի Փիլիպպոսն էր լցեալ, որոյ անունն էր մահտեսի Պաղտասար։ Որ եւ ի նոյեմբ. ԺԲ։

ՃԿԳ.

Ի Կարս վասն գալստեան Հերակլ Արքային։ Եւ զի՝ զինչս Ղօշավանիցն ի քաղաքն տարեալ՝ ժամանակ ինչ թողցեն ամայի։

Թուղթ գրեաց սրբազան վեհն ի Կարս առ Իբրահիմ Էֆէնտին, ի պատասխանի թըղ-

թոյն. որ խնդրեալ էր գրել սաուղապէս ըղպատճառ. գալստեան Հերակլ Արքային թագաւորին Օսմանցւոյ, նաև զաւարելն զԿարսայ ղիւզորտյսն։ Եւ թէ զինչ խօսք և զրոյց և պայման ունի նա ընդ Ռուսաց և զալոց են նոքա յիրաւի ի վերայ Վրաստանու յերկիրն Օսմանցւոց։ Քանզի յետ գնալոյն յետս յերկիր իւր Արքային Հերակլայ, (որպէս ասացաւ յամսոյս Դ) կամէին Կարսեցիքն գրել զՀերակլ Արքայէն գանգատ առ. թագաւորն իւրեանց, և զհամբաւոյն ռուսաց որ յայս կողմունքս հնչէր։ Եւ խնդրել զօգնութիւն։ Ուստի և ի սահմանակցաց իւրեանց ամենից՝ ի յիշխողէն երկրիս մերոյ, խնդրէին զվկայութիւնս, յղել առ. թագաւորն։ Ըստ որում օրինակին և ի սրբազան վեհէն խնդրէին։ Այլ սրբազան վեհն գրեաց նմա թէ՝ գալուստ Հերակլին յայդր՝ (որպէս հարցաք մեք իւրեան, ըստ գրելոյ Կարսեցւոցդ, և յայս երկրիս քրդացնէր, որք խնդրեալ էին գալ և թամրեհ առնել քիտր Ալիբէկին, (որպէս և ի հոկտեմբերի ԺԷ ասացաք։) Բայց ի մէջ զօրաց նորա ոչ գոյր Ռուս, և ոչ համբաւ ինչ լուաք նմանէ վասն Ռուսաց, այլ զոր ինչ դուք լսէք վասն նոցա, մեք ես զնոյնս լսեմք։ Բայց արզ առնել թագաւորին զայսպիսի բանս՝ մեզ չէ համարձակելի, զի չունիմք հրաման յայսպիսի բանս խառնիլ։ Այլ միայն որ ինչ մեզ հարկաւոր լինի, գրեմք պատրիարգին, և նա արզ առնէ և հոգայ։ Բայց թէ դուք ֆարման մի բերել տայցէք թագաւորէն ի վերայ մեր, որ հրամայեսցէ մեզ զայսպիսի բանս արզ առնել ինքեան, յայնժամ և մեք զոր ինչ պատշաճ իցէ, առնելոց եմք։

Թուղթ մի ևս առ Ազսախալու պարոն Ղազարն գրեաց ի պատասխանի թղթոյն, որ ևս էր դարձեալ զնոյն գրեալ, նմա ևս զնոյն պատասխանեաց։ Իբրահիմ էֆէնտու գիրն ևս առ նա յղեաց տալ նմա։ Իսկ որովհետև Ղօշավանից տաւարն աւար գնաց, և Կարապետ վարդապետն փախուցեալ աստ եկն, և Մինաս վարդապետն գնացեալ էր ի վանս Թադէոսի Առաքելոյն, (որպէս ի հոկտեմբերի ԺԷ, և ի վերդ յամսոյս ԺԲ ի թղթոջ Ուչքիլիսայի Առաջնորդին ասացաւ։) վասնորոյ՝ գրեաց նմա, ընդ քաննեաց իշխանաց գնալ ի վանքն, և զոր ինչ կայ անդ՝ ասէ զպարտսն տաջիք, և զվարձաւորաց վարձն ես տուեալ՝ զմնացեալսն ի քաղաքէն տարջիք, և անդ պահեսջիք։ Զի թէպէտ մեք կամեցաք զի չլինիցի վանքն՝ այլ Աստուած ոչ կամի։ Մինչև ժամանակ ինչ ոչ մնասցէ ամայի, ոչ չինի։ Ընդ փայեկին անտի եկելոյ։ Ի նոյեմբերի Ժ։

Առ Բամբակածորու Մէլիք Դէմոն՝ վասն փախուցեալ երկուց տանցն Մողնեցւոց, զի յետս յղեսցէ սիրով։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Բամբակաձորու Մէլիք Դէմօն՝ վասն երկուց տանցն Մօզնեցւոց որք ընդ ինքեան ծածկաբար փախուցեալ էր, պատուէր՝ զի յետս առաքեսցէ սիրով։ Ապա՞ թէ ոչ յղեսցես ասէ, յայնժամ զգրելոց եմ Արքային, և բռնութեամբ բերելոց։ Յղեցաւ ընդ ումեմն գնացողի Մօզնեցւոյ։ Ի նոյ. ԺԸ։

ՃԿԳ.

Առ Ղօշավանից վէքիլ Մինաս վարդապետն փախուցեալ զի դայցէ. եւ առ Մարգար աղայն վասն նորին:

Թուղթ առ Ղօշավանից վէքիլ Մինաս վարդապետն գրեաց։ Որպէս ի յամսոյս ԺԳ ասացաւ։ Ի լինիլ վրդովմանց կողմանց Կարսայ վասըն գալստեան Հերակլին, անտի փախուցեալ էր, և ի Թադէոսի Առաքելոյն վանսն էր գնացեալ։ Եւ մինչ լուաւ սրբազան վեհն զգնալն նորա անդր, վասնորոյ՝ զմեղադրութիւնս գրեաց նմա թէ՝ ընդէ՞ր ի սուրբ Աթոռս ոչ եկիր քան թէ յայդր գնացեր։ Եւ ընդ նմին պատուէր՝ զի ի գնալ թղթոյն առանց յամեցման ելեալ ի սուրբ Աթոռս եկեսցէ։ Եւ սպառնալիք՝ մինչ ոչ դայցէ։

Թուղթ ևս առ Մարգար աղայն գրեաց վասն նորին։ Եւ զթուղթ նորա յղեաց առ նա, զի ի նա հասուսցէ։ Եւ պատուէր՝ զի ինքն ևս հարկեսցէ զնա ի սուրբ Աթոռս գալ։ Այլ և՝ ծանոյց նմա վերստին զանցսն երկրիս՝ զի եղև գալստեամբ Հերակլ Արքային, և ըղվերադառնալն նորին։ Եւ զյոլով մեղադրութիւնս՝ վասն ոչ յղելոյ փաշային ըստ խոստմանն ընծայս վասն Արքային՝ (որպէս ի հոկտեմբերի Ի ասացաք։) և ոչ գոնեա զդատարկ

զեր և զմարդ։ Զի որովհետև դուք մինչ զորպիսութիւն խնդրէք ասէ ի մէնջ, վասնորոյ՝ և մեք զոր ինչ օգուտն է երկրիդ ձերոյ՝ փաշային՝ և ձեզ գրեմք, բայց դուք ահա ոչ առնէք. և այլ առ. այս բանք ըստ սմին։

Թուղթ մի ես ի Վան՝ առ Ջուղայեցի Տէր Յովհաննիսի որդի տիրացու Ստեփաննոսին, ի պատասխանի գրոյն իւրոյ գրելոյ ի սեպտեմբերի ԻԱ։ Առ յոր գրեաց նախապէս զմխիթարութիւն վասն հանգուցեալ մօրն իւրոյ։ Ընդ նմին և զմխամտութիւն, որ կարծէր զսրբազան վեհ նուաղեցուցեալ յինքեանց զխնամս իւր։ Նաև՝ ըստ խնդրոյն գրեաց զորպէսն կողմանցս և զանցսն որք անցին զալստեամբ Հերակլ Արքային։ Խնդրէր զարձեալ, զի թէ կամեցի իւրայնովքն յայս կողմունս գալցէ։ Բայց սրբազան վեհն ոչ կամեցաւ այժմ զգալն, այլ գրեաց ի ձմեռնս այս համբերել, մինչև տեսցէ զկատարածն անցիցս։ Այլ և՝ ի կողմանէ՝ փոլիցայ առնելոյ ի Բաղդատ և ի Բասրայ զխառն ի խուռն բանս էր գրեալ, յորմէ ոչ ինչ իմացեալ եղև, ուստի գրեաց պարզապէս գրել զայն։ Եւ այլ ևս՝ զի թէ ի նուիրակէն Հնդկաց դրամ. իցէ հասեալ ի Բասրա կամ. ի Բաղդատ, և ինքն լուեալ իցէ, գրեսցէ չուտով զորքանն, և առ ով զոյն, զի զփոլիցայագրեանս գրեալ առ ինքըն յղեսցէ, ինքն տալ մեզ ի Վան զդրամն, և անդ առնուլ։ Յղեցաւ այս ընդ Ղուկաս Թուանկչոյն ի Բայազիտ առ Տէր Վահանն հասուցանել առ նա ի Վան, ի նոյեմբերի ԻԱ։

Ի Ջուղա, առ Սարգիս Քալանթարն վասն Ջաման խանին յանձնարարութիւն, եւ այլ ինչ բանք։

Թուղթ առ Սարգիս Քեալանթարն գրեաց։ Նախապէս ծանուցանելով նմա զգրելն զպատասխանիս երկուց թղթոցն իւրոց ընդ Աստուածատուր վարդապետին ի սեպտեմբերի ԺՍ։ Եւ յանձնարարութիւն վասն Ջաման խանին, (զոր խանն մեր յղէր ի Շիրազ առ Քեարիմ խանն։) առ ի չահել զնա ըստ արժանւոյն, և ինքեան ևս ծանուցանել թէ՝ խալիֆայն վասն քոյ զյանձնարարութիւնս է գրեալ։ Եւ պատուէր՝ զի թարց խառնելոյ ի բանսն նորին, վերահասու լիցի արարելոցն, և փութով գրեսցէ ինքեան։ Եւ Ջաման խանն ի նոյեմբերի ԻԱ։

ՃԿԵ.

Առ Ախալցխայու փաշայն եւ նուիրակն, եւ յաքսորեալ պատրիսն, վասն խլակութեանց ախթարմայիցն։

Որպէս ի նոյեմբերի ԺԲ խոստացաւ. սրբազան վեհն Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետին, զֆռանկ պատրիսն հանել տալ յարգելանացն, այժմ. կատարեաց։ Զի գրեաց առ փաշայն Ախլցխայու զԱ թուղթ՝ խնդրելով, զի հանեալ զնոսա յարգելանացն, և զինչս նոցա տուեալ ինքեանց, թողցէ ի բաց, զի ուր և կամին գնասցեն։ Զի ի մէջ ֆարմանին ևս ասէ գրեցեալ էր վարիլ յերկրէն, և ոչ եթէ արգելուլ յուրեք։ Եւ յառաջ քան զայս՝ և այժմ. ևս թուղթ եկն, որ գրէր զժողովրդենէ տեղւոյն, զի ոչ հնազանդէին ինքեան, և ոչ կասէին ի յամառութեանց իւրեանց, և ոչ ևս յեկեղեցիսն երթային, որովհետև ընդ իշխանութեամբ Մարտիրոս վարդապետին էին։ Այլ քանիցս արզ էին արարեալ փաշային, թէ մեք որով աւանդութեամբ և էաք, այլ նովիմբ մնամք և ոչ փոփոխիմք։ Եւ որովհետև Մարտիրոս վարդապետն հրամանաւ փաշային ոչ թողոյր յառաջ ախթարմայ քահանայիցն զօրէնս կատարել, այժմ. այնքան այսր և անդր էին անկեալ ախթարմայքն, մինչև հրամայեցեալ էր նոցա միմիայն ախթարմայ էրէց զմեռեալս նոցա թաղել և զծնեալսն մկրտել առանց յեկեղեցի բերելոյ, մինչև իրակութիւնն ի մի կողմն եղբակալեսցի։ Վասնորոյ գրեաց սրբազան վեհն զխնդիրս առ փաշայն՝ թամբեհ առնել նոցա, և սպառնալեօք և սաստիւ պատուիրել, զի ի Հայոց օրէնս դարձցին։ Քանզի՝ դոքա յառաջագոյն պատճառէին ասէ թէ Պօղոս վարդապետն և ընկերք իւր որպէս և լինիցին, մեք ևս նոցա հետևիմք։ Ահա սոքա աստ ի յուղղութիւն եկին, և քանիցս գրեն դոցա հետևիլ իւրեանց, և դոքա ոչ կամին հետևիլ։ Եւ զի՝ զնորապէս ֆարման խնդրէր փաշայն՝ (որպէս և յօգոստոսի ԼԱ ասացաւ,) գրեաց թէ ահա առաջին ֆարմանն որ ի ձեռին քում, վասն դոցա թամբեհ առնելոյ է, իսկ մինչ դոքա ոչ հնազանդին զմա, դու թամբեհ արա դոցա։ Ապա թէ ես միւսանգամ. արզ արարից թա-

զաւսրին, թէ ֆարմանին քում ոչ հնազանդին Ախլցխայեցիք, այն եռ յայսպիսի ժամանակի, (զի էր ի մէջ հողոց պատերազմին, որ ընդ քրիստոնեայսն գոյր,) գուցէ նեղացեալ ընդ անարգելն զոցա զհրամանս իւր, ի սուր քարշել և հրամայեսցէ զզոսա, և յայնժամ լիցի մեզ խղճահարութիւն, վասն այն ասէ նորապէս արդ ոչ առնեմք թագաւորին։ Եւ խնդրեաց՝ զի ինքն թամբեհ արասցէ նոցա, և պատուիրեսցէ լինել օրինօք Հայոց։ Եւ շնորհակալութիւն ևս գրեաց վասն արարեալ լաւութեանցն և ձեռնտու լինելոյն Մարտիրոս վարդապետին, որոյ աղագաւ և վերստին գրեաց զյանձնարարութիւն։

Թուղթ ևս առ Ֆռանկ պատրիսն գրեաց, և զթուղթ էլչուն որ յիշեցաւ ի նոյեմբերի ԺԲ, յղեաց առ նոսա։ Որոց անուանքն էին, պատրի Ալուիզի, պատրի Հերոնիմոս, պատրի Վ.իչէնցիոս, պատրի Ֆէդէրիկօ, և Ցրաֆօռթօնատօ։ Որոց գրեաց գոլով մեղադրութիւնս և զանգիտանութիւնս վասն անիրաւ արարմանց իւրեանց ընդ ազգս և եկեղեցիս Հայոց։ Բերելով նոցա յերիս զգանցանս իւրեանց առ մեզ, այսինքն՝ զխաբեբայութիւնն, զդողութիւնն, զզրկողութիւնն, և զյափշտակութիւնն, և առ այսոսիկ լոլով յոյժ զմեղադրութիւնս։ Ապա և սպառնալեօք հանդերձ հարկ, զի մի ևս զնոյնս ի գործ ածցեն առ ազգս և եկեղեցիս մեր ուր և իցեն։ Հարկեաց ևս դրել ըզպատասխանիս թղթոց իւր և դեսպանին։ Որոց օրինակն է ի բոլորագրահամար տետրօջն, յերեսն...։ Զոր առ Մարտիրոս պետն յըղեաց, յղել առ նոսա, և զպատասխանիսն խնդրել և յղել աստ։

Թուղթ ևս առ Մարտիրոս վարդապետն գրեաց ի պատասխանի գրեցեալ գրոյն ի սեպտեմբերի ԽԱ։ Որ խնդրեալ էր զբէրաթի սուրաթ մի ի ձեռնտուութիւն ինքեան զոր յղեաց։ Որում և զգրելն պատրոցն առ դեսպանն Ֆռանկսիզաց զդանդատ, և զանցսն որ անդ ի Պօլիս այսր աղագաւ, (որպէս ասացաւ ի նոյեմբերի ԺԲ։) և թէ ինքն զինչ գրեաց վասն նոցա առ փաշայն, նաև զբովանդակ միտս թղթոյ փաշային՝ ծանոյց, և պատուիրեաց ընդ Պապիկ աղային հոգալ, ինքեանք ևս բերանով ասել փաշային զնոյնս, և այնպէս առնել տալ։ Գրեաց ևս՝ զի վասն փաշային զբրինձ և զվարդեջուր յղել կամէր, և տանող չեղև։ Ասաց ի մէջ խօսից ծանուցանել փաշային։ Եւ զի մինչ գրեալ զգիրս յղել կամէր սրբազան վեհին, և փայակ մի ևս նորապէս եկն ի նմանէ, ընդ որում միւս անգամ գրեալ էր զառաջին գրեալսն, կարծելով զառաջինն աստ ոչ հասեալ, վասնորոյ՝ ծանոյց զսորին ևս հասանելն, և զպատճառ յամեցման՝ առաջին թըղթոյ պատասխանւոյն, զի առաջին փայակն մինչև ի Կարս եկեալ, և զթուղթ առ Կարապետ վարդապետն էր թողեալ, և ինքն յետս գնացեալ։ Այլ և՝ Պօղոս վարդապետն և ընկերք նորին նորապէս զթուղթս գրեցին առ ժողովուրդն և ընտանիսն իւրեանց, (որպէս և յօղոստոսի ԼԱ, և յառաջ քան զայն։) Եւ զյատուկ փայակ մի ի վարձու կալեալ յղեսցին։ Եւ զվէքիլնամայ ևս ետուն նմա՝ զի զինչս զոր ինչ ունին անդ, ընտանիքն իւրեանց նմա յանձնեսցեն զի բերցէ։ Եւ ինքեանք՝ Մարտիրոս վարդապետին ևս գրեցին զթուղթ վասն այսր, և վասն անցիցն իւրեանց։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն գրեաց նմա, զի ինքըն ևս վերահասու լինիցի այսմ բանիս, և թէ պատշաճ իցէ խօսեսցի, և զինչս սոցին յղել տացէ։ Նաև՝ զփայակն որ մեր ընտանի է՝ կոչեալ առ ինքն խօսեսցի, և զորպէսն սոցա, և անդ ախթարմայից զինչ ասելն նմա սոցա աղագաւ՝ ի նմանէ իմացեալ, գրեսցէ ինքեան։ Եւ վասն Տէր Յակոբ երիցուն գըրեաց՝ զի ծխոյ նորին վերահասու լինիցի, և ում և կամիցի հովուել տացէ, և զմուտսն՝ ընտանեաց նորին հասուսցէ, և զնոսա ի խընամս ունիցի։ Տէր Յակոբն ևս գրեաց նմա վասն այսր զթուղթ աղերսանաց։ Փուսուլայ մի ևս գրեաց առ Մարտիրոս վարդապետն, վասն Տէր Յակոբին, զի կամէր յղել անդ, որովհետև էր տէր ընտանեաց, և մանաւանդ՝ յանձն առնոյր անդ ձեռնտու լինել Մարտիրոս վարդապետին, և զծուխն իւր, և զայլս ևս ի յուղղութիւն ածել։ Արդ՝ ասէ՝ չօշափեա զմիտս և զբերանս փաշային և զդրան մարդկանցն ընդ Պապիկ աղային՝ թէ կամիմք մեք իրիջայ գրել խալիֆային՝ զի զՏէր Յակոբն աստ յղեսցէ։ Բայց այժմ ոչ է հանեցեալ. եթէ առանց իթլախի աստ եկեսցէ զինչ լինի։ Եւ յորժամ տեսցուք թէ կատարելապէս ուղղեցեալ է, յայնժամ գրեսցուք խալիֆային՝ զի զիթլախն հանել տացէ։ Տես զինչ ասեն ասէ՝ մեզ ծանո՛, զի թէ կարելի լիցի՝ յղեսցուք ի

ձեռնտուութիւն քեզ լալըր, ծանոյց և զողըն կարելի ի ներկայումս զնոր ֆարման հանել, (որպէս ասացաւ ի նոյեմբերի ԺԲ.) ուստի՝ ժամանակ ինչ համբերելով սիրով վարեաց ընդ դոսա, և ջանա՛ ի ձեռն բերել, մինչև տեսցուք թէ զինչ լինին եթէ չատ լրբասցին, և Տաճիկդ քեզ ոչ օգնեսցէ, կարես ասել թէ՝ ահա հրաման թագաւորին և ֆէրմանն աստ ոչ անցանի, երթալց առ մեծաւորն իմ, և ասացից, զի նոր արդ արասցէ թագաւորին։ Պատուիրեաց ես զԼեւլ՝ թէ անդ զինչ մուտս ունի, և որպէս կառավարի։

Թուղթ մի ես առ Պապիկ աղայն՝ ըստ մտաց Նարկ զրոց նուիրակին, պատուէր՝ զի ընդ նոսա զայնս հողացեալ զրեսցեն ինքեանս։ Ընդ փայեկին անտի եկեալ ի զեկտ. Բ.

ՃԿԶ.

Ի Թիֆլիս, վասն սըբոյ Գեղարդեանն՝ որ նորապէս անդ յղեցաւ, եւ վասն Դաւիթ եւ Յովաննէս վարդապետացն որք եկեալ էին ի Հաշտարխանու։

Նորապէս երեեցեալ էր նշան ժանտամահին ի Վրաստուն։ (որպէս և յանցեալ ամին՝ որ ասացաւ ի նոյեմբերի ...) ուստի՝ վերստին խնդրեալ էր Արքայն Հերակլ զԳեղարդն սուրբ, որոյ աղագաւ և զԱրղութեանց Բէջանն յղեալ էր աստ ՃԽ աքամբք։ Եւ սրբազան վեհն յղեաց ըստ խնդրոյն՝ ի ձեռն Ջուղայեցի Դալուստ վարդապետին՝ եկելոյն ի Հաշտարխանու (որոյ անունն յիշեցեալ զոյ ի...)

Վասնորոյ՝ և զթուղթ մի գրեաց առ Արքայն, և զԴալուստ վարդապետն յանձնեաց նմա՝ զի ի խնամս իւր ունիցի։ Եւ զի ի բամբակէն՝ զոր առնոյր յերկրէս՝ մնացորդ ինչ զոյր, գրեալ էր սրբազան վեհն ասել խանին զի տացէ։ Բայց զի՝ սրբազան վեհն ի սոցանէ զկատարեալ պատասխանի ինչ ոչ էառ, վասնորոյ այսպէս գրեաց Արքային թէ՝ վասն չուտափոյթ վերադառնալոյ Բէջանին ոչ կարացաք զխանն տեսանել և այնր աղագաւ խօսել։ Բայց յետոյ տեսանելոց եմ զնա և խօսելոց, և զոր ինչ ասիցէ՝ քեզ ծանուցանելոց։ Եւ զի Դաւիթ և Յովաննէս վարդապետքն որք յիշեցան ի սեպտեմբերի ԻԲ, եկեալ էին այժմ ի Թիֆլիզ, վասնորոյ՝ գրեաց Արքային՝ զի թէ աստ եկօղ կարաւան լինիցի յիշեսցէ զնոսա. և թէ ոչ՝ կամ ընդ սոյն Բէջանիս, և կամ ընդ այլոյ ումեմն որոց և ինքն կամեսցի մէկ քանի ձիաւորօք զնոսա ի սուրբ Աթոռս առաքեսցէ։

Թուղթ մի ես առ Հաշտարխանու հին նուիրակ Յովաննէս և առ Դաւիթ վարդապետսն գրեաց, զի եկեալ ի սուրբ Աթոռս եկեսցեն։ Եւ ծանոյց ես զգրելն առ Արքայն վասն ինքեանց, զի ընդ հաւատարմի յղեսցէ։ Եւ զի Ջուղայեցի Աւետիք վարդապետն ես էր եկեալ ընդ նոսա, (որ յիշեցեալ զոյ ի վերոյս վերոցուցեալ անդուոյն։) Վասնորոյ գրեաց նոցա զի ընդ ինքեանս ի սուրբ Աթոռս բերցեն, նաև՝ վասն բեռանց նոցին զպատուէր գրեաց, զի Գ. թամպալիթ չինեալ ընդ ինքեանս բերցեն, և զմնացեալսն անդ հաւատարմի միոյ յանձնել, զի կամ քան զինքեանս յառաջ յղեսցէ, և կամ յետոյ։ Փուսուլայ մի ես գրեաց առ Դաւիթ վարդապետն, պատուէր՝ զի թէ Արքայն զմարդ զնիցէ ընդ ինքեանց, ջանասցեն զԲէջանն, և կամ զայնպիսի ոք առնուլ սակաւ աքամբք, զի աստ մի լիցի ծանրութիւն։ Եւ զի զբովանդակ աղխս իւրեանց մի բերցեն ընդ ինքեանց, այլ զհարկաւորսն միայն Գ. թամպալիթ՝ յանուն երից, իսկ զայլն յանձնեսցեն Դալուստ վարդապետին, զի նա յետոյ յղեսցէ։ Եւ այլ առ այսոսիկ պատուէրք։ Կոնդակ մի ես ի վերայ հասարակ ժողովրդոց քաղաքին, վասն սրբոյ Գեղարդեան։

Թուղթ ես առ Անտօն Վրաց կաթուղիկոսն գրեաց. սէր և յանձնարարութիւն վասն սրբոյ Գեղարդին, և Դալուստ վարդապետին։

Թուղթ ես առ Զաքարիա վարդապետն գրեաց պատուէր՝ զի սրբոյ Գեղարդեանն ըստ ամենայնի մուղայէթ լինիցի, և արդեանցն ես վերահասու լիցի։ Ասելով թէ՝ քահանայիցն ես եմ գրեալ զայս պատուէր այսր աղագաւ։ Պարտիք սիրով և միաբանութեամբ մուղայէթ լինիլ յամենայն կողմանէ։ Եւ վասն Դալուստ վարդապետին զյանձնարարութիւն գրեաց նմա զի ի սէր ունիցի և լաւապէս չահեսցէ։ Նա և՝ եպիսկոպոս ոչ յղեցի ասէ վասն ցրտութեան եղանակիս, զի ծերք են։ Այլ և՝ վասն Դաւիթ և Յովաննէս վարդապետացն գրեաց թէ՝ որպէս գրեալ եմ Արքային՝ դու ես

մաղալէթ լինիցիս, և ընդ կարաւանի՝ կամ ընդ յատուկ մարդոյ յղեսցես զգոսա, և թէ ոչ՝ ընթերցիր առէ զթուղթս նոցա, և այնպէս արա։ Եւ պատուէր՝ զի յԱրքայէն՝ կամ զԲէջանն, և կամ այնպէս մարդ առնուցու, զի մի աստ մեզ ծանրութիւն լիցի։ Գրեաց ես՝ զի զպատասխանի թղթոյն որ ընդ Յովնաթանին յղեաց, չուտով գրեսցէ։

Փոքրիկ փուսուլայ ես գրեաց առ սա, և որպէս ի նոյեմբերի Ժ, և այժմ ևս գրեաց հարկ՝ առել Արքայէն, զի վասն մնացեալ դրամոյն զՋազարէկն յղեսցէ։ Եւ թէ նա գայցէ՝ զԴաւիթ և զՅովհաննէս վարդապետսն ընդ նմա եղեալ, դէպ ի սուրբ Աթոռս ուղևորեսցէ։ Նմին Գալուստ պետն և Բէջանն ի դեկտ. Գ։

ՃԿԷ.

Ի Կարսայ գիւղորայսն, վասն առնլեաց մնրոց զի տացեն, եւ զնուիրակի ժողովեալ ցորեանս յղեսցեն։

Ի Նախիջեան գեղջն՝ որ ի Կարս՝ և ի շրջակայս նորին, զոյր ՍԱ սոմար և կէս ցորեան, և Գ սոմար և կէս գարի, (որ ի սեպտեմբերի ԻԳ յիշեցեալ է) զոր նուիրակ Մարտիրոս վարդապետն էր ժողովեալ և թողեալ անդ։ Վասնորոյ՝ սրբազան վեհն զթուղթ գրեաց առ Տէր Մովսէս էրէցն նոյն գեղջ, զի յանձնեսցէ զայն Կարսեցի Արիստակէսին, (որ եկեալ աստ դառնալը լեսո։) զի ի սուրբ Աթոռս բերցէ։ Եւ այսր աղագաւ Մարտիրոս վարդապետն ի վերայ սորա թուղթ էր գրեալ, զայն ևս ընդ թղթոյս եղեալ, յղեաց առ նա։ Ի Ջրչի գեղջն ԺԲ ղռուշ դրամ ես կայր ի վերայ Մակարի ուրեմն, գրեաց զայն ևս առնուլ և յղել։

Թուղթ ևս առ Գիւնաշի որդի Զաքարեայն գրեաց։ Հարկ՝ զի ի տեղի դրամոյն մնացելոյ զոր տալիք էր մեզ, (զորմէ ի սեպտեմբերի ԻԳ և ի վերոյս նորին ասացեալ է։) զցորեան և զգարի տացէ, և մի ևս յամեցուսցէ, զի բաւական էր առէ մինչև ցայժմ համբերելն մեր, և զխաթրս քոյ պահելն։ Եւ ընդ թէմէջսուկն նորին Արիստակէսին ետ, զի զառնելիսն առցէ ի նմանէ, և զթէմէջսուկն տացէ իւրեան։ Հիւսիբէկն ես զաալիքն իւր սմա էր հասուցեալ, վասնորոյ՝ զթէմէջսուկն նորա ես ընդ Արիստակէսին առ սա յղեաց, զի զայն ես տացէ Արիստակէսին, և առցէ զթէմէջսուկն, ի սոյն միտ, և նովին հարկիւ, և վասն տալեաց զարձեալ։

Թուղթ ևս առ նորին եղբայր Սուքիասն և առ Ալէքսանն գրեաց, (որք ևս ի նոյն ասացեալ տեղիսն յիշեցեալք են։) և զսոցին թէմէջսուկն ևս ընդ Արիստակէսին յղեաց, զի ի տեղի տալեացն իւրեանց զցորեան և զգարի տացեն, և զթէմէջսուկն առցեն։ Նյ Արիստակէսն ի դեկտ. Գ։

ՃԿԸ.

Ի Պոլիս՝ ի Գաղատիա՝ եւ ի Կարին, վասն բազմաց զանազանից իրակութեանց։

Ի Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետէն և յայլոց՝ թուղթք եկին։ Խնդրեալ էր Զաքարիա վարդապետն զթուղթս ինչ։ Որք են։

Թուղթ մի առ Սարուխան անուամբ այր ոմն, որ վասն հոգւոյ կնոջն, և զԱ դոտի և զԱ վզնոց էր տուեալ։

Թուղթ մի ևս առ Յակոբ ամիրայն՝ զոր նոր զանձապետ էր կարգեալ ի սուրբ Աստուածածնի եկեղեցւոջն Զաքարիա վարդապետն. հաստատութիւն գործոյն, և պատուէր ըստ պատշաճին։

Թուղթ մի ևս առ Մարտիրոս ամիրայն։ Մխիթարութիւն՝ վասն հրկիզութեան տանն, որ յայսմ ամի պատահեալ էր։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՅԼԸ. ՅԼԹ։ Իսկ և ի հին նուիրակ Յարութիւն վարդապետէն՝ հաղիւ թէ՝ գիր իմն ժամանեաց առ սրբազան վեհն՝ յետ չորից ամաց որպէս և ի նոյեմբերի ԺԲ ցուցաւ ի Դ ամս գիր չըգրելն։) յոյժ երկարաբան և լի մեղալիւ. յորում ոչ կնիք, և ոչ անուն իւր, ոչ թիւ, և ոչ օր ամսոյ գոյր՝ ոչ և ուր գրելն էր յայտ, և ոչ գիրն իւր ձեռօքն գրեալ։ Այլ՝ այլոյ գըրեցեալ, և միայն ի բանիցն սուղ ինչ ճանաչիւր թէ նորա իցէ։ Յորում գրէր թէ՝ կրկին գրեցի զթուղթս, զի թերևս յերկուցն մինն հասցի։ Վասնորոյ և սրբազան վեհն զթուղթ մի գրեաց առ նա ի պատասխանի թղթոյն.

ծանուցանելով զմիոյն յերկուց թղթոցն հասանելն աստ ի ձեռն Զաքարիա վարդապետին, իսկ միւսոյն ոչ։ Ընկալնլով և զմեղայն՝ և շնորհելով զներումն, և գրեաց ամենայնիւ և ամենայն կերպիւ զմիամտութիւն նմա, որ որպէս օտարացեալ և վիրաւորեցեալ կարծէր լինքենէ զսրբազան վեհն։ Գրէր և զհաշուէն, թէ ցայժմ այսչափ ինչ հասուցեալ եմ յԱթոռոյս և այսուհետև զոր ինչ և լինիցի՝ ես եմ բերելոց։ Գրեաց թէ՝ հարկ է տուելոցդ մեզ՝ գիր ունել ի մէնջ, և մեք ես գրեալ ունիմք։ Զինչ փոյթ յայդրուստ գրելդ, եթէ գալցես որպէս և գրես, յայնժամ յայտնի երեւին մեզ և քեզ, իսկ եթէ չունիս զմիտս գալոյ, յայնժամ և ես գրեցից. ծանոյց և զգրելն ի նոյեմբերի ԺԲ զթուղթ մի փոքրիկ առ ինքն, ընթերցիր զայն աստ, և տուր ի խղճմտանսդ, զայլ ինչ ոչ ունիմ գրել քեզ։ Գաս բարեաւ, և ամաչիս զքոյդ բարուցդ։ Եւ սիրով յորդորումն իւր ձեռամբն գրեաց, փութալ և գալ յԱթոռս սուրբ։ Զի ոչ ուրեք զլաւ հանգիստ գտանի որպէս աստ։

Թուղթ մի ես առ Բարսեղ վարդապետն, որպէս ասացեալ է ի պատմութեան ԺԾ րդ. ամին, յօգոստոսի Գ և ի Ժ, ի սեպտեմբերի ԺԶ, և ի ԻԴ. զգրամս ինչ աստ հասուցեալ, (5) և զայլ ես անհետացեալ առնլիս աստ և անդ ցուցեալ, որպէս Թամասուկն որ յղեցաւ ի Հաշտարխան, ասէր և զայնս առնուլ, և զինքն մասնակցել ի պարսպաշինութենէն սրբոյ Աթոռոյս, և յանուն իւր զարձան մի գրեցուցանել։ Եւ սրբազան վեհն զկորուսեալ առնլիսն առնուլ ոչ կարաց։ Իսկ նա այժմ ասացեալ էր զնոյն բանսն Զաքարիա վարդապետին, թէ գրեցաք սրբազան վեհին, և ոչ արար։ Եւ նա գրեալ էր սրբազան վեհին։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն գրեաց նմա թէ՝ ի պարտականացն քոց զորս ցուցեալ էիր, մինն էր Կարապետն՝ որ առ քեզ է, (որ ի ՌՄԺԾ յօգոստոսի Ժ յիշեցեալ է։) հարց թէ մեզ զինչ է տուեալ։ Երկրորդն էր Հաշտարխանու Թէմէջսուկն, (որ ես ի նոյն թուոջ յօգոստոսի Գ յիշեցաւ։) զորմէ գրեն այժմ ի Հաշտարխանու թէ՝ զայն առնօղն վաղագոյն լուծ էառ և եկեր։ Երրորդն էր ասէ Եւդոկիացինն, յոր արքունական ֆէրմանն՝ որ ձեռնհաս է քեզ. քան թէ մեր հոգեորական գիրն՝ ազդէ։ Իսկ Չորրորդն էր ասէ Կարնեցի Տէր Սարգիսն, որոյ զինչ լինելն տնյալ։ Ցայսպիսեացս ես զինչ ասից ասէ. միայն թէ քոյդ տուեալն է մեզ հասեալ, (5) որպէս քեզ գրեալ եմք յառաջ։ Իսկ շինելին ասէ զոր ասես, ահա շինեցեալ կայ ի պատրաստի, արձանն ես ի նմա եղեալ զատարկ, խնդրէ զանուն շինողի։ Եւ ծախքն ես շատ չէ։ Ի ծերութեանդ խնայելով (որում թոշակ պիտոյ է,) շատ ոչ ասեմ, (4) այլ թէ այսչափ ինչ տայցես, (Բ) կանգնէ զարձանն և յաւիտեան պահէ։

Թուղթ ևս առ Պօլսոյ Նուիրակ Զաքարիա վարդապետն գրեաց, ի պատասխանի ի հոկտեմբերի ԻԴ գրեալ թղթոյն։ Վասն թըղթոյն զորս խնդրեալ էր թէ ահա յղեցաք։ Ծանուցանելով և զոր ինչ գրեաց առ Յարութիւն և Բարսեղ վարդապետսն, և զթուղթսն ի ձեռս իւր յղեաց տալ նոցա։ Եւ զի յառաջ և այժմ ես զկոնդակս խնդրէր, վասն գանձանակաց հասեալ դրամոց գրել առ յեկեղեցիսն, բայց զթիւ դրամոցն զորս դնէր, հազիւ թէ միոյ տարւոյ էին, բայց ի յԱստուածածնի և Խաս գեղջ եկեղեցեացն գանձանակադրամից որք չէին միոյ տարւոյ։ Նա որպէս գրեցից ասէ զոցա կոնդակ։ Միոյ միոյ տարւոյ է առեալդ՝ թէ այլ վերստին չես առնլոց։ Գրէր թէ՝ ի կոնդակսն զթիւս ամենեցուն մի դնէր. գրեաց թէ՝ բարի է, սակայն՝ դու գրեա ինձ թէ այս քանի ամաց գանձանակք են զորս տուեալ են քեզ, և Յարութիւն վարդապետին որքան և քանի ամաց են տուեալ, ես զկոնդակն երբ և իցէ քեզ հասուցից։ Դեռ ես չես Նուիրակեալ զՂալաթիա և զայլ մանր տեղիս, զի վռազես։ Խնդիր մի ունէր ի սրբազան վեհէն, զոր իսկ յառաջ խոստացեալ էր նմա. գրեաց զմիամտութիւն, թէ այնպէս եմ առնելոց։ Եւ զի՝ ի յուլիսի Ի գրեաց զընծայս տալ պատրիարգին, այժմ ես գրեաց՝ զի թէ չիցէ տուեալ, տացէ կամ զլաւ մատանի մի, և կամ զայլ ինչ պատշաճաւոր, մինչև ցԱԾ ղռուշի ընծայ։ Եւ որպէս ի յուլիսի Ի՝ այժմ ես գրեաց ասել պատրիարգին, զի գրեսցէ առ ախթարմալ քահանայսն Ախլցխայու զգիր մի սաստի։ Եւ թէպէտ ֆարմանն զոր գրեաց հանել վասն Ախլցխայու, չէր յեալ ձեռնտու՝ (որպէս ասացաւ ի նոյեմբերի ԺԲ) այլ գրեաց ես ասել պատրիարգին, զի ևս մուղալէթ լեալ, հանել ջանասցէ, զի մի ասէ ի վերայ մեր ծիծաղես-

ցին նոքա։ Եւ որպէս յայնժամ դարձեալ, այժմ ես գրեցի, զի թէ չարմար ոք չունիցի լինել յԱռաջնորդութիւն ի յԱխլցխա, յանուն իւր զֆարման շինեցուցեալ յղեսցէ։ Իսկ ե՛ յետ դնալոյ Մելքոնին ի Թարվէզ (որպէս ասացաւ ի մայիսի Դ.) գիր եկն ի Խաչատուրէն՝ եղբօր որդւոյ նորին ի Պօլսոյ, որ գրեալ էր առ սրբազան վեհն զրազում զանդատս զնմանէ, և խնդրեալ էր՝ զի կամ ինքն գրեսցէ գալ աստ, և զիւր՝ և զՄելքոնի զատաստանն դատել ուղղապէս, (քանզի լուեալ էր զՄելքոնի աստ գալն,) և կամ զՄելքոնն յղել ի Պօլիս։ Մելքոնին ես էր գիր գրեալ, զոր յղեաց առ. նա սրբազան վեհն ի Թարվէզ։ Եւ նա այժմ զպատասխանին գրեալ լղեալ էր, և խոստանայր գալ աստ։ Վ.ասնորոյ յղեաց սրբազան վեհն զայն թուղթն առ. Զաքարիա վարդապետն տալ Խաչատուրին և ասել, զի միամիտ լիցի, զի երբ եկեսցէ աստ, ասէ, յղելոց եմ յայդր։

Փուսուլայ մի ես գրեցի առ. Զաքարիա վարդապետն՝ կրկին պատուէր, զի մի աւելի քան զԱծ զուռուշի ընծայս տայցէ պատրիարգին, այլ միայն զմատանի մի ազնիւ, որ արժիցէ Ած զուռուշ, ճարեալ տացէ նմա. ի հարկէ ասէ յեղանելզ յայտի ես զիր ինչ տալոց ես։ Զիւրն օրինակ ետ նմա, թէ անդ ի նուիրակութեանն՝ զի՞նչ, և յորժամ և քանիցս էր տուեալ Պատրիարգին զընծայս։ Պատուիրեաց ես՝ զի մի այլ ումեք, կամ Խաչատուրին վերոյիշեցելոյ (եթէ խնդրեսցէ,) և առանց իւրոյ գրոյն զդրամս տացէ։

Թուղթ մի ես առ. Երուսաղէմայ Պատրիարգ Պօղոս վարդապետն գրեաց սրբազան վեհն։ Զի որպէս խոստացեալ էր յանցեալ ամին ի սեպտեմբերի ԺՆ, իմանալ զորպէսն նուիրակին իւրեանց Բարսեղ վարդապետին, իբրև եկն նա աստ (որպէս ասացաւ յանցեալ ամին ի նոյեմբերի ԺԴ,) ապա՝ սրբազան վեհն ի մէջ եպիսկոպոսաց զհաշիւ խնդրեաց ի նմանէ։

1770

ՃԿԹ.

Այժմ ես էր գրեալ առ սրբազան վեհն զթուղթ աղերսանաց մեծաւ պաղատանօք վասն որդւոյն իւրոյ Ալլի փաշային, և խնդրեալ էր գրել առ Հերակլ Արքային՝ և զկենդանի և զանկենդան զօլն նորին իմանալ ի նմանէ և գրել ինքեան։ Ինքն ես էր գրեալ առ Արքայն զթուղթ, և յղեալ առ սրբազան վեհն, զի ընդ իւր թղթոյն յղեսցէ առ նա։ Եւ սրբազան վեհն որովհետև բազմիցս անգամ գրեաց առ Հերակլն այսր աղագաւ, և ոչ ընկալաւ զպատասխանի ինչ, վասնորոյ՝ այժմ որպէս թէ զզուեալ՝ այլ ոչ ես նմա գրեաց, այլ Մէլիք Աւետիքին գրեաց հարկիւ, և զզիր կնոջն ես՝ զոր գրեալ էր առ Հերակլն՝ յղեաց առ նա, զի տարեալ տացէ նմա. և ի կողմանէ իւրմէ խնդրեսցէ ինքեան զկենդանի և զմեռեալ զօլն տաճկին՝ և մօրն նորա ևս նոյնպէս զթուղթ մի միամտութեան գրեսցէ, զկենդանութենէ և զմահուանէ որդւոյն՝ որով և նա միամտեալ, մի ևս այսուհետև գրեսցէ զզիր աղերսանաց ինքեան, և աշխատ արասցէ զինքն։ Այլ և՝ զփակեալն յեսս յղել տացէ առ կինն այն՝ որ ի յուլիսի Ժ-Ն զնաց անդ առ ի բերել զորդին իւր։ Ցղեցաւ այս ընդ Կարնեցի վաճառական Աղայեկին յԵրեան, զի նա անտի յղեսցէ ի Թիֆլիզ։ ի զեկտ. Ը.

*) Ակիզբը չկայ բնագրում։

Առ մայր Գնօլայու փաշային՝ միամտութիւն վասն խնդրոյ։

Ապա յետ զրելոյն այսպէս վեհն զվերոգրեալ թուղթն սակս Գեօլայու փաշային, զըրեաց առ մայր նորին զթուղթ մի ի պատասխանի թղթոյն, և զյղելն զրոյն իւրոյ առ Հերակլ Արքայն, և իւր ես այնր աղագաւ զըրելն զթուղթ ըստ իւրոյ խնդրոյն, ծանոյց նմա, և միամիտ առար զնա։ Ցղեցաւ այս ընդ իւր յղեալ Թադէոս անուամբ փայեկին։ Որ եւ ի զեկտ. Թ.

ՃՀ.

Ի Կարին՝ առ մահտեսի Ցովհաննէսն և նորին եղբայր Սարգիսն խոստումն՝ զի ըստ խնդրոյ իւրեանց զզաւլն զոր տանէր ընդ ինքեանց մէլիք Աւետիքն, ի մի կողմն կտրեսցէ:

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Նըսնուսեցի մահտեսի Ցովաննէսն (որ ի վերզ յամուոյս Ը՝ յիշեցաւ։) և նորին եղբայր մահտեսի Սարգիսն՝ ի պատասխանի թղթոց նոցին։ Եւ զմիտս թղթոյ Թիֆլիզեցի մելիք Աւետքին զոր գրեաց առ նա; (որպէս ի վերոյ յամսոյս Ը ասացաւ,) մի ըստմիոջէ երկարապէս ծանոյց նոցա։ Եւ խոստացաւ կատարել զխնդիրս իւրեանց, և յետոյ ինքեանց լիովին միամտութիւն գրել։ Ծանոյց ես յղելն մահտեսի Օնանին ի Թիֆլիզ՝ վասն պատճառի իմիք, (որպէս ի Նոյեմբերի Դ ասացաւ,) և վասն արգելեալ լինելոյն որք անդ, և միամտութիւն՝ զի միրես և նա եկեալ յայսմ միջոցի, բերցէ ընդ իւր զարգելեալ բեռինսն։ Եւ պա-

տուէր՝ զի ղղիրս գալս առաջի մահտեսի Փիլիպպոսին ընթերցցին, (որով՝ եւս նա ես էր դրեալ լատկապէս իրիջայ առ ինքն վասն բեռանցն.) զի նա ես միամիտ լիցի յալսմ կողմանէ։

Փոքրիկ փուստղայ մի ես առանձին առ Մուրաիկ զատէ մահտեսի Փիլիպպոսն գրեաց, (որ ի հոկտեմբերի ԺԸ լիչեցաւ.) վասն Զարքեաղ օղլի Յօհանին՝ (որ լիչեցեալ է ի նոյեմբերի ԻԹ, ի թղթոջ Զաքարիա վարդապետին,) որ փախուցեալ ի Կարնոյ առամրն իւրով՝ նկն աստ, և բնակէր յԵրեան։ Եւ ունէր նա ընդ Մուրտիկեանսն զհաշիւ ինչ առ. և տրոց, և զպահանջելիս, որպէս ինքն ասէր։ Զոր ծանոյց սրբազան վեհին ասելով թէ՝ եթէ դու գրիցես նոցա, զի եկեալ աստ տեսցեն զհաշիւն իմ, և զառնելիսն իմ տացեն, բարի է, և թէ ոչ, ես խանին ասելոց եմ, զի գրեսցէ սարասկեարին, և բռնութեամբ բերել տա ցէ զմի ումն ի նոցանէ աստ՝ զի զիմ հաշիւն աստ տացեն։ Եւ սրբազան վեհն ծանոյց զայս մահտեսի Փիլիպպոսին, և հարկեաց, զի ինքն և կամ եղբայրն իւր եկեսցեն աստ, և կամ զգիրս և զզաւթարս իւրեանց՝ եթէ կամիցին, յղեսցեն աստ առ ինքն, զի ինքն վերահասու լեալ հոգասցէ։ Եւ յոյժ հարկ առ այս՝ չուտով հոգալ։ Յղեցան այսք ընդ Կարնոյ փայակին։ Որ եւ ի գեկտ. Թ։

Ի Կարս՝ առ. սարասկեար փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն, որ վասն փաշային սպիտակ մոմ էր խնդրեալ ի սրբազան վեհէն։ Զոր յղեաց ըստ խնդրոյ նորին։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ. սարասկեար Մուստաֆայ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն (որ յամսոյս Դ լիչեցաւ,) ի պատասխանի թղթոյն։ Եւ ծանոյց նմա զգրելն առ ինքն զթուղթ յամսոյս Դ։ Եւ ըստ խնդրոյ նորին՝ վասն փաշայլին Ժ հատ սպիտակ մոմ յղեաց։ Այլև՝ պատուիրեաց՝ զի մի ես այսուհետեւ զմոմ խնդրեսցէ ի սրբոյ Աթոռոյս վասն երկուց պատճառաց. նախ՝ զի յայսմ ամի ոչ ունի սուրբ Աթոռս ասէ ըստ բաւականին մոմ. և երկրորդ՝ զի մի լետազայ փաշայքն սովորութիւն արարեալ ասէ, նոքա ես միշտ խնդրեսցեն ի մէնջ զմոմ։ Յղեցաւ այս ընդ փաշայի չուխատարին։ Որ եւ ի դեկտ. Ժ։

ԺՀԱ.

Առ Վանայ նուիրակ Պաղտասար պետն վասն Առաջնորդին Վանայ, զոր խնդրեցին ոմանք աննշանք լինել առաջնորդ։ Եւ առ յայլս եւս վասն բանից ինչ։

Ի Վանայ քաղաքէն արք ոմանք աննշանք գրեցուցեալ էին զԱռաջնորդական մահսար մի տեղւոյ նուիրակ Պաղտասար վարդապետին, և կնքեալ, և ընդ նորին սպասաւոր Խոսրհակին յղեալ առ սրբազան վեհն, և զնա ինքեանց Առաջնորդ խնդրեալ. ինքն ես էր գրեալ սրբազան վեհին։ Իբրև ետես սրբազան վեհն թէ՝ իւր է զիրն մահսարին, և իւր սպասաւորն է բերողն, և կնքողքն են աննշան մարդիկք, վասնորոյ՝ զթուղթ մի գրեաց առ Պաղտասար վարդապետն ի պատասխանի թղթոյն, և վասն սոյն անպատշաճ մահսարիս փոքր ինչ սիրով մեղադրեաց զնա, ծանուցանելով դանպատեհ զոյն բանին, և զկանոնն Առաջնորդ խնդրելոյն։ Եւ պատուիրեաց իմանալ զստոյգն, զի թէ ինքեան կամին լինիլ Առաջնորդ, բոլոր քահանայիւք, իշխանօք, ժողովրդովք և միաբանիւք վանիցն, ապա մահսար արարեալ կնքեսցեն ամենեքեանքն, և ի ձեռն սեադլխի միոյ ընդ քանի մի քահանայից և իշխանաց յղեսցեն աստ։ Աղայք վանիցն՝ և Իսաղ աղայն ես գրեսցեն վասն իւր զաղերս առ ինքն, որ ապա միամտեալ ըստ յամենայնի զԱռաջնորդական կոնդակ յղեսցէ վասն իւր։ Եւ պատուիրեաց՝ զի թէ այսպէս առնիցեն նոքա՝ բարի է, և թէ ոչ, ինքն ես թոյլ տացէ, և զգործն իւր աւարտեալ, ի սուրբ Աթոռս եկեսցէ։ Եւ յայնժամ տալոց եմք ասէ մեք զարժանիս չիք Սամուէլ ապօրինաւոր Առաջնորդին, և նորին համախոհիցն։ Զորոց իրակութեանցն ասացեալ է ի մայիսի ԻԳ, ի մարտի Է, և յայլ տեղիս։ Այլ և՝ Իսաղ աղայն գրեալ էր առ նա զգիր մի լուսագրութեան, և նա զայն գիրն ես էր առ սրբազան վեհն յղեալ։ Եւ սրբազան վեհն տեսեալ զայն՝ գրեաց նմա թէ զա որ այդքան խնամս ունի ի վերայ քոյ, կարես՝ զի ի ձեռն դորա հաստատնապէս հոգասցես, զի թէ աղայք վանիցն, թէ ինքն, և թէ բոլոր ժողովուրդքն, գրեսցեն առ մեզ զթուղթս հաւանու-

թեան, և զքեզ խնդրեսցեն առնել Առաջնորդ։ Եւ մեք ապա՝ Առաջնորդ արասցուք զքեզ։ Զի թէ այսպէս ոչ լիցի, չատ է ցաւելոց զլուխ մեր։ Եւ զոր ինչ ի հոկտեմբերի ԺԲ ի կողմանէ Մշու սրբոյ Կարապետի վանից վէքիլ Պետրոս վարդապետին գրեաց առ սա ընդ Աբրահամ վարդապետին, այժմ զնոյնն վերստին գրեաց, զի կատարել տացէ նմա։ Նաև՝ ըստ խնդրոյ նորին՝ Թուղթ ես գրեաց ի Բաղէշ առ սրբոյ Աթոռոյս զանձապետ մահտեսի Պապայն, և կարգեաց զնա վէքիլ սրբոյ Աթոռոյս։ Պատուիրելով՝ զի զզանձանակն սրբոյ Աթոռոյս, քան զայլ զանձանակս յառաջ շրջեցուսցէ։ Եւ ամենայն բանից և հոգալեացն սրբոյ Աթոռոյս որք անդ զիպեսցին, հոգացօղ լիցի։ Եւ միւս եկեղեցեաց զանձապետացն ես մուղալէթ լիցի, և զզանձանակս նոցա արգիլնաւորս առնել տացէ։ Նաև՝ վասն նուիրակ Գալուստ վարդապետին զյանձնարարութիւնս գրեաց առ նա։ Եւ առ իշխօղն տեղւոյն Հասան խանն ես գրեաց զթուղթ մի յանձնարարութեան վասն Պաղտասար վարդապետին։ Եւ վասն տեղւոյ ժողովրդեանն բարերարութիւն առնելոյն շնորհակալութիւն։ Այս այն Հասան խանն է, որ խնդրէր ի սրբազան վեհէն զըրել ի Պոլիս, և նորոգել տալ զխանութիւն իւր, որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺԷ երրորդ ամին, ի յունվարի Թ, և ի վերոյս նորին։ Որև յետոյ հանաւ ի խանութենէն, որպէս ասացաւ ի նոյն ամին, և ի լօղոստոսի ԻԱ. իսկ յայսմ ամի նորապէս էառ զխանութիւն։

Թուղթ ես յանձնարարութեան առ Մշու Մախսուտ բէկն գրեաց։ Եւ ընդ վերոյիշեալ թղթոցն յղեաց առ Պաղտասար վարդապետն։ Թուղթ ես Առ Տէր կոչեցեալ կղզւոյ Աստուածածնի վանից Առաջնորդ Յակոբ վարդապետն գրեաց։ (որ յանցեալ ամին և ի յապրիլի ԻԳ յիշեցաւ.) որ ի Ցամիթ գնացեալ ժողովարարութեան աղաղաւ, վասն սրբոյ Աթոռոյս՝ և վասըն սրբոյ Հաւատոյս մերոյ բաղում ջատագովութիւնս էր արարեալ։ Եւ ընդ երկաբնական ես չատ մաքառեալ, և զոմանս ես յուղղութիւն ածեալ։ Որոյ աղաղաւ և սրբազան վեհն գրեաց նմա զօրհնութիւնս և զշնորհակալութիւնս, և յորդորումն՝ ես արիանալ ի նոյնս։ Իսկ և՝ ի Մանուկ անուամբ մարդոյ միոյ Ծ զուռուշ դրամ էր առեալ նա վասն սրբոյ Աթոռոյս, և վասն նորա օրհնութեան թուղթ խնդրեալ։ Ուստի՝ և սրբազան վեհն ըստ խնդրոյ նորին գրեալ առ Մանուկն զթուղթ մի օրհնութեան, յղեաց առ նա՝ զի տացէ նմա։ Իսկ և վասն բանից կողմանն Ախթամարու՝ նորապէս բանս էր ասացեալ նա տիրացու Սահակին վերոյիշեցելոյ՝ ասել սրբազան վեհին։ Որպէս և ինքն, ի զալն աստ յանցեալ ամին և ի յունվարի ... իւրով բերանովն ասաց, որպէս զի՝ զհոգս ինչ արասցէ։ Եւ սրբազան վեհն ի կարճոյ և անորոշապէս պայս գրեաց նմա թէ՝ առանց ուրուք գրողի և ստիպողի անպատչաճ է մեզ զրան ինչ առնել կամ գրել։ Զի մ.ինչև ոչ ասասցէ ցաւաղարն զցաւս իւր բժշկին, բժիշկն զինչ սպեղանիս արասցէ նմա։ Ցղեցան պլոուքիկ ընդ Պաղտասար վարդապետի սպասաւոր տիրացու Սահակին։ Որ եւ ի նոյեմբերի ԺԶ.

ՃՀԲ.

Ի 1Ծo՝ առ Ահմատ բէկն եւ վրացի Մեհրապն վասն Ախլցխայու Բ Ախթարմայ տղայոց՝ որք անդ էին որք էին որդիք չարագլխաց. զի ըմբռնեալ յղեսցեն աստ։

Ցետ անցիցն՝ զորս պիղծ հաճի Մահմատ փաշայն Ախլցխայու, Սմբատ օղլի կոչեցեալն՝ անցոյց ընդ Մարտիրոս վարդապետին մեր որ անդ, և զեկեղեցիսն անզրէն առ Ախթարմայսն վերադարձոյց։ (որպէս ասացաւ ի յօգոստոսի ԻԵ։) Ապա և ինքն հանաւ ի փաշայութենէն, և ձեռամբ սարասկեար Մուստաֆայ փաշային՝ Սուլէյման ոմն, նոր փաշայ եղեալ անդ նստաւ։ Իսկ Մարտիրոս վարդապետն մնաց անդէն կալանաւոր, և ոչ կարէր ելանել անտի և գալ։ Իսկ յայսմ միջոցի, ոմն ի նշանաւորացն Ախլցխայու, Նէֆիս օղլի կոչեցեալ Ցովսէփ անուամբ, վաճառականութեան աղաղաւ եկեալ էր յԵրեան, զոր ծանուցեալ սրբազան վեհին, խնդրեաց ի խանէն՝ զի ըմբռնեսցէ զնա փոխանակ Մարտիրոս վարդապետին մերոյ, որպէս զի Ախլցխուլեցիքն զնա յղեսցեն աստ և մեք զնա թողցուք ի բաց։ Եւ խանն արար այնպէս։

Յետոյ լուաք թէ՝ նոյն Յովսէփի եղբօր որդին՝ որոյ անունն էր Անտօն՝ և ընկեր մի ևս նորին՝ անունն Յակոբ, որդի ումեմն Յովաննիսի չարագլուխ երիցու, են ի միասին ի Խօյ։ Վասնորոյ՝ նոցին աղագաւ ևս խնդրեաց սրբազան վեհն ի խանէն, գրել ի Խօյ առ Ահմատ բէկն, զի զնոսա ըմբռնեալ աստ յղեսցէ։ Եւ խանն այսմ ևս հաւանեալ, գրեաց առ Ահմատբէկն զթուղթ, և զերկուս եասաւուլս հանդերձ թղթովն յղեաց աստ առ սրբազան վեհն, զի ինքն ևս գրեսցէ առ Ահմատբէկն ըզթուղթ՝ և ընդ եասաւուլացն զմարդ մի ևս եղեալ յինքենէ, յղեսցէ անդ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն։ Զթուղթ մի գրեաց առ Խօյայ իշխօղ Ահմատբէկն, և խնդրեաց՝ զի որպէս խանն ևս է գրեալ, ըմբռնեալ զնոսա աստ յղեսցէ։ Թուղթ մի ևս առ Թիֆլիզեցի պարոն Մէհրապն ըզգրեաց այնր աղագաւ։ Եւ պատուիրեաց՝ զի ինքն ևս յորդորեսցէ զխանն, և զնոսա աստ յղել տացէ։ Եւ մեր թուտնկչի Իւանէն ընդ երկուց եասաւուլացն խանին, ի նոյեմբերի ԻԴ։

ՃՀԳ.

Առ Պօլսոյ նուիրակ Զաքարիա վ՟ետն վասն ընչից Զարքեաւզօղլի Յօհանին, զի յղել տացէ առ ինքն։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ մեծին Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետն (որ ի հոկտեմբերի ԺԸ յիշեցաւ,) ըստ խնդրոյ Կեսարացի Զարքեաւզօղլի խօջայ Յօհանին։ (որ յիշեցեալ է յանցեալ ամին ի յօգոստոսի ԺԵ, և ի սեպտեմբերի Գ։) Որ այժմ տամբն իւրով փախուցեալ ի Կարնոյ եկն աստ, և բնակեցաւ յԵրևան։ Որպէս զի՝ զինչս նորին որք անդ յաւանդ կային եղեալ առ Քիւրքչի օղլի Յակոբն և առ Ակնցի Յակոբն, (որք կային անդ ի Քիւրքչի խանումն,) առեալ ի Քիւրքչի օղլի Յակոբէն զառ նա եղեալ աւանդսն՝ տացէ Ակնցի Յակոբին, և հարկեսցէ զնա, զի հանդերձ առ ինքն եղեալ ընչիւքն յղեսցէ ի Կարս առ Պուպուզեանց պարոն Պետրոսն, զի և նա աստ՝ առ Զարքեաղ օղլին հասուսցէ։ Եւ պատուէր՝ զի թէ Ակնցի Յակոբն զինչսն յղելոյն աղագաւ գրամ խնդրեսցէ յինքենէ, Դ․ և կամ Դ՟ դուռուշ տացէ, և ինքեան ծանուսցէ զտալն։ Զայս թուղթս տուաք վերոյիշեալ ընչատէր Զարքեաղ օղլի խօջայ Յօհանին, զի յղեսցէ առ Զաքարիա վարդապետն ի մեծն Պօլիս։ Նոյեմբերի ԻԹ։

Առ սարասկեար Մուստաֆայ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն ի Կարս ի պատասխանի թղթոյն։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ սարասկեար Մուստաֆայ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն (որ յիշեցաւ ի հոկտեմբերի ԺԷ,) ի պատասխանի թղթոյն՝ զոր գրեալ էր առ սրբազան վեհն վասն բանիցն՝ զորս գըրեալ էր փաշայն սրբազան վեհին գրել առ Հերակլ Արքային, հարցանելով, թէ գրեցե՞ր առ նա և պատասխանի ինչ եկն թէ ոչ։ Առ որ գրեաց սրբազան վեհն թէ՝ Լն օր է որ յղեալ եմք առ նա զմահտեսի Յօնանն այնր աղագաւ, (որպէս ասացաւ ի նոյեմբերի Դ) բայց տակաւին ոչ է եկեալ, յորժամ եկեսցէ, և զպատասխանի թղթոյն մերոյ բերցէ, յայնժամ զոր ինչ գրեալ իցէ մեզ Հերակլ Արքայն, գրելոց եմք փաշային և քեզ։ Եւ ըստ խնդրոյ նորին մէկ բեռն լաւ գինի ևս յղեց առ նա։ Յղեցաւ այս ընդ նորին յղեալ փայեկին։ Որ եկ ի դեկտեմբերի Դ։

ՃՀԴ.

Առ Մէլիք Աւետիքն Թիֆլիզ, վասն արգելեալ բեռանցն Կարնեցւոց։

Զբեռինս Կարնեցւոց զորս արգելեալ էր Մէլիք Աւետիքն ի Թիֆլիզ, Աձկ դաւոյն զոր ունէր ընդ Նոնուսեցի մահտեսի Յովաննիսին։ (որպէս ի նոյեմբերի ԺԱ ասացաւ։) Այժմ մահտեսի Յովհաննէսն մինչ լուեալ էր զդաւին Մէլիք Աւետիքին ընդ ինքեան, որոյ աղագաւ և զարգելումն բեռանցն, գրեալ էր անտի բազում աղերսիւ զթուղթ առ սրբազան վեհն, և զմուծալլամայս, զաւթարս, և զապզագրեանս ևս առ ինքն յղեալ, և զդատաստան խնդրեալ՝ որպէս զի՝ գրով խօսեսցի ընդ Մէլիք Աւետիքին, և զբանն ի մի կողմն կտրեսցէ, և զբեռինսն թափեալ անտի առ ինքն յղել տացէ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն

Զթուղթ մի գրեաց առ Մելիք Աւետիքն (որ ի մայիսի ԺԱ վչեցաւ,) և զգրեալն առ ինքն մահտեսի Յովաննիսին զթուղթ վասն ի զուր գալոյն իւրոյ ծանոյց նմա։ Եւ հար կեաց՝ զի վաճառականացն թուղ տացէ զի զբեռինսն բերցեն աստ, և զմի ոք հաւատարիմ ինքեան՝ ի կողմանէ իւրմէ վէքիլ արարեալ, և որքան զբեռանս և զաւթարս ունի զաւոյն աղաղաւ տուեալ նմա յղեսցէ աստ, զի ինքն զմիաս երկուցունց թղթոցն և զաւթարացն իմացի, և յԱստուածակոյս կողմանէ անաչառութեամբ և իրաւապէս դատաստան արասցէ ի ներկայութեան վաճառականաց։ Եթէ մահտեսի Յովաննէսն իրաւապէս տալոց իցէ ինքեան զայն Աձլըն, որ ասէ, ինքն աստ տացէ վէքլին իւրոյ ի կողմանէ նորին։ Իսկ և՝ մայր Գեօլալու փաշային (որ վչեցեալ է։ *)

*) Նամակը թերի էր այստեղից։

1772

Ցիշատակարան ամի Թուականութեանս Հայոց ՌՄ քսան եւ մի երորդի․ Տասներորդի ամի Հայրապետութեան Տեառն Սիմէոնի գերերջանիկ եւ յոգնիմաստ կաթուղիկոսին ամենայն Հայոց։

Շնորհիւ եւ յաջողմամբ Ամենազօրին Աստուծոյ՝ զանցեալ ամի զորքանութիւնս Թղթագրութեանցն հանդերձ նոցին որպիսութեամբքն՝ ըստ առաջնոյն յաւարտ հասուցեալ, այժմ յուսալով մեր յաջորդութիւն նորին, վերստին ի նոյն գործ յիշատակութեան ձեռնամխեցաք։

ՃՀԸ.

Արդ՝ ի մտանելն մեր շնորհիւ Տեառն յայս շնորհաւոր ամս, զէպ եղև զի սարասկեար Մուստաֆայ փաշայն զմուհուրդարն իւր որոյ անուն էր Մուստաֆայ բէկ՝ բարեկամութիւն առնելոյ աղագաւ, հանդերձ ընծայիւք առ Քեարիմ խանն, յղէր ի Շիրազ, և նա եկեալ ի սուրբ Աթոռս առ մեզ իջեանեցաւ։ Որոյ յետ երկուց աւուրց ի գնալն աստի, սրբազան վեհն բաց ի շահելոյն զնա՝ վասն խաթեր փաշային զԹուղթ մի յանձնարարութեան ես զըրեաց նմա առ Քեալանթար Սարգիս աղայն վասն նորա, զի զնա շահօղ՝ և բանիցն հոգացօղ լիցի։ Քանզի՝ յՕրեանայ նա խնդրեաց աղերսիւ ի սրբազան վեհէն գրել առ Քեալանթարն վասն իւր։ Զնոյն պատուէր ՝ն վասն Զաման խանին իմա՝ եղակի։ Զի խանն մեր յղեաց զնա ընդ նմա ի Շիրազ ճանապարհորդակից առնելով նմա։ Ծանոյց նմա և քան զայս յառաջ յանցեալ ամին և ի հոկտեմբերի Ժ․ զԹուղթ գրելն առ ինքն ընդ նորոգ նուիրակին իւրեանց Ստեփաննոս վարդապետին։ Ցղեցաւ այս ընդ մահտեսի Ցօնանին յՕրեան առ վերոյիշեալ մուհուրտար Մուստաֆայ բէկն, զի ընդ իւր առ Քեալանթարն տարցէ։

Գրեցաւ ի յունվարի Ը։

ՃՀԹ.

Առ Պօլսոյ եւ Զմիւռնոյ նուիրակունսն ի պատասխանի նոցին։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետն (որ ի դեկտեմբերի եւն լիշեցաւ,)ր պատասխանի ի նոյեմբերի ԺԷ և ի ԻԸ երկուց Թղթոցն իւրոց զըրեցելոց առ մեզ։ Նախ շնորհակալութիւն վասրն իթլախին աքսորելոց՝ զոր ձեռամբ պատրիարգին հանեալ և յղեալ էր այժմ առ մեզ։ Նաև՝ ծանուցեալ էր սրբազան վեհին զմահ Բարսեղ վարդապետին։ Որոյ աղագաւ և սրբազան վեհն պատուիրեաց նմա, զի ի տեսա-

նելն իւր ընդ պատրիարգին և ընդ իշխանացն զգրեանս և զինչս նորին, եթէ կտակագիր ունիցի՝ ըստ այնմ արասցեն, և թէ ոչ՝ բոլոր ինչքն նորին սրբոյ Աթոռոյս են հասանելոց ասէ. ուստի պարտիս ասէ ասել պատրիարգին և իշխանացն, և զինչս նորին անթերի առնուլ, և ի սուրբ Աթոռ յղել։ Եւ վասն նորա գրէր թէ՝ պարտատեարս ունի, բայց նա մեզ ևս էր զգրամ տալոց. զի վասն սրբոյ Աթոռոյս պարսպաշինութեան Ե քսակ էր խոստացեալ տալ. որոց Ա քսակն հասուցեալ էր մեզ, և Դ տակաւին տալոց էր։ Ուստի՝ և պատուիրեաց նմա՝ զի նախ զԴ քէսայն վեր առցեն, և ապա զպարտս նորին տացեն։ Այլ և՝ սրբոյ Աթոռոյս վէքիլ Միքայէլ աղային (որ ի պատմութեան ՌՄԺԹ թուին և ի յունվարի ... վխճեցաւ,) ի Բասրայու գրեալ էր սմա մահ Հնդկաց նուիրակ Յովսէփ վարդապետին. և խնդրեալ էր գրել սրբազան վեհին զի աստի մարդ յղեսցէ առ. ինքն առ ի յանձնել նմա զինչս նուիրակին, և սա ևս գրեալ էր սրբազան վեհին, և ծանուցեալ ըղխնդիր նորին։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն այժմ պատրաստ էր զնուիրակ յղել ի Հնդիկս, զի ընչիցն նուիրակին ևս վերահասու լիցի և առցէ։ Զի այսր աղաղաւ, վասն խառնակութեան կողմանն, զյատուկ մարդ յղելն աստի անկարելի էր։ Այլև՝ զայն ԱՌ ղուռուշն զոր փոլիցայ արար սրբազան վեհն ի վերայ սորա տալ անդ Ակնցի Յակոբին, զի ինքն աստ ի Զարքեաղօղլի խօջայ Յօհանէն առցէ. (որպէս ի դեկտեմբերի ելն և ի վերոյս նորին ասացաւ) այժմ տուեալ էր, և զղապզ առեալ ի Յակոբէն, և յղեալ առ սրբազան վեհն։ Եւ Զարքեաղօղլին յայսմ միջոցի աստ պատահեցաւ։ Վասնորոյ և սրբազան վեհն զղապզն զայն ետ նմա, և զթամասուկ հառ ի նմանէ, զի յետ սակաւ միջոցի տացէ մեզ զդրամն մեր։ Եւ Բ փոլիցայագրեանքն (որք ի դեկտեմբերի ելն վխճեցան,) որոց մինն էր ԱՌ ղուռուշի և միւսն ԴՃ ղուռուշի, ԱՌ ղուռուշին աղաղաւ գրեալ էր թէ՝ ետու Ակնցի Յակոբին՝ իսկ սակս թգթոյն մերոյ առնլոյն և չառնլոյն ի նմանէ, ոչինչ գրէր։ Նոյնպէս և վասն ԴՃ ղուռուշի դրոյն իմն. քանզի գրեալ էր թէ՝ Յակոբ Ամիրայն յետս յղեաց, և թէ առ. յով յղեաց, ոչ էր գրեալ պարզապէս։ Վասնորոյ պատուիրեաց նմա, զի թէ զայն տակաւին առ. Յակոբ Ամիրայն է, յետս առցէ ի նմանէ, և կիսապատառարարեալ առ ինքն յղեսցէ ի միամտութիւն իւր։ Բայց թէ նա ի Կարին առ. եղբայրն իւր իցէ յղեալ, գրել տացէ նմա եղբօրն իւրոյ, զի նա անտի առեալ հասուսցէ։ Կրկին պատուէր առ սա՝ ասել Յակոբ Ամիրային, զի զինչս Զարքեաղօղլուն որովհետև յանձն էր առեալ յըղել, փութով յղեսցէ առ. նա։ Զարքեաղօղլին ևս գրեաց սա. սա այսր աղագաւ զթուղթ ընդ այս թղթոյս։ Նաև՝ զթուղթ Զմիւռնոյ նուիրակ Ղուկաս վարդապետին (որպէս ասելոց եմք անա) առ սա յղեցաք յղել առ նա։

Թուղթ ևս առ. Զմիւռնոյ նուիրակ Ղուկաս վարդապետն դրեաց (որ ի դեկտեմբերի ԼԱ վխճեցաւ,) ի պատասխանի ի հոկտեմբերի ԻԷ գրեցեալ թղթոյն։ Ծանուցանելով նմա քան ղայս յառաջ ի սեպտեմբերի ԻԲ, և ի դեկտեմբերի ելն զթուղթս գրելն առ ինքն։ Որում և վասն թղթաշինութեան կրկին պատուէր, զի այլ այղաց ևս հարցանիցէ, թերևս ի նոսա գիտող լինիցի. քանզի գրէր թէ՝ աստ թղթաշինութեան գիտօղ ոչ զոյ։ Եւ ի Սարգամ զքահանայ յղելոյն աստի, որպէս քան զայս յառաջ ի յուլիս ամսոյն գրեալ էր սըրբազան վեհին, և այժմ ևս էր գրեալ զնոյն խնդիր։ Բայց աստ այնպէս քահանայ ոչ գըտանեցաւ զի յղիցէր սրբազան վեհն, վասնորոյ՝ յառաջադոյն գրեաց ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն զի անդ քահանայ գտեալ յղեսցէ։ Եւ նա ևս խոստացեալ էր յղել։ Ուստի և սրբազան վեհն ծանոյց նմա զխոստումն նորին, և պատուիրեաց ի նմանէ խնդրել քահանայ։ Այլ և որովհետև վասն խառնակութեան այնց կողմանցն այժմ անկարելի էր աստի զնուիրակ յղելն անդ, վասնորոյ կամեցաւ սրբազան վեհն վերստին զնա նուիրակ առնել տեղւոյն։ Ուստի և խոստացաւ նմա ի դիպօղ ժամու զնուիրակն և զԱռաջնորդական կոնդակս հոգացեալ առ ինքն յղել։ Եւ պատուէր վասն Մեռոնի՝ զի որքան առ ինքն գտանիցի, այնու ի դըլուխ տարցէ զնոր նուիրակութիւնն։

Թուղթ ևս օրհնութեան և շնորհակալութեան առ Ցալիկեան մահտեսի Կարապետն դրեաց ըստ խնդրոյ սորին՝ որ զմէկ Արծաթեայ սկիհ էր տուեալ սմա իւր ծածկոցովն ի յիշատակ իւր յանուն սրբոյ Աթոռոյս։

Թուղթ մի ևս ի Կարին առ. Ակնցի Յովաննէս Ամիրային դրեաց ի պատասխանի թըղ-

Թոյն իւրոյ։ Որ զպահարանաւ Թուղթն Զաքարիա վարդապետին առ. սրբազան վեհն էր յղեալ յատուկ փակեկաւ, և խոստացեալ էր ծառայութիւն առնել սրբոյ Աթոռոյս։ Վասն նորոյ՝ և սրբազան վեհն գրեաց առ. սա՝ զի ինքն որքան ղուռուշ և կամիցի, չիրըն արարեալ առ. Տէր Վահանն յղեսցէ ի Բալաղիա, Զի և մեք ես աստի այնր աղագաւ զփոլիցալադիր գրեալ առ. ինքն յղեսցուք, զի և ինքն առ. եղբայրն իւր Յակոբ Ամիրային յղեսցէ ի Պոլիս, զոր և նա ի Զաքարիա վարդապետէն առցէ։ Նաև զի՝ Զարքեաղօղլուն ամանաթ զոյր առ. սա եղեալ ի պահեստի, վասնորոյ գրեաց ես զի զամանաթն նորին առ. ինքն յղեսցէ։ Զարքեաղօղլուն ես գրեցոյց այսր աղագաւ առ. սա՝ զԹուղթ, և ի մէջ Թղթոյս եղեալ առ. սա յղեաց։ Այսուքիկ առ. սա յղեցան ընդ իւր յղեալ փակեկին յղել առ. եղբայրն իւր Յակոբ ամիրայն ի Պոլիս, զոր և նա անդ Զաքարիա վարդապետին տացէ։ Եւ փակեկն նորին, ի յունվարի Ժ։

ՃՀԷ·

Ի Կարս առ սարասկեարն վասն հանելոյն աքսորելոց իթլախին: Եւ առ յայլս ես սակս բանից ինչ:

Զիթլախն չորից աքսորելոցն Ախլցխալու՝ սրբազան վեհս մեր ըստ խնդրոյ սարասկեար Մուստաֆայ փաշային (որ ի վերդ չամսոյս Ը յիշեցաւ,) բերել ետ ի Պոլսոյ ձեռամբ Պատրիարգ Գրիգոր վարդապետին։ Որոյ աղագաւ և զԹուղթ մի գրեաց առ. սարասկեարն ընդ մահտեսի Ցօհանին, այսպէս թէ զիթլախն աքսորելոց հանեալ են աստ ի Պոլիս. յայսմ միջոցի յղելոց են առ. մեզ։ Բայց խնդրեմ աստ ի քէն, զի որովհետև յայս բանիս մէջն մտեր, և զազնիւ գլուխդ շատ ցաւեցուցեր, վասնորոյ՝ սակս Ախլցխայեցւոցն մէկ այնպէս հաստատուն բան հոգասցես որ յաւիտենական յիշատակ լինիցի քեզ։

Թուղթ մի ես յանձնաբարութեան վասն մահտեսի Ցօնանին առ. Ղարաբէկն գրեաց (որ ի դեկտեմբերի ելն և ի վերոյս նորին յիշեցաւ,) զի բանիցն նորին ձեռնտու և հոգացող լիցի։

Թուղթ մի ես առ. սարասկեար Մուստաֆայ փաշայի սառաֆ մհ. Փիլիպպոսն գրեաց ի պատասխանի Թղթոյն։ Որ վասն սարասկեարի մուհուրտար Մուստաֆայ բէկին (որ ի վերդ չամսոյս Ը յիշեցաւ,) յանձնարարութիւն էր գրեալ, զի ըստ արժանւոյն չահեսցէ զնա, և սիրով ուղեւորեսցէ։ Վասնորոյ՝ սրբազան վեհն վասն ախթեր փաշային յաւապէս չահեաց զնա, և ըստ խնդրոյ նորին առ. Քեալանթար Սարգիս աղային յանձնարարութիւն գրեաց (որպէս տեսանի ի վերդ,) վասն նորա և ետ նմա, և սիրով ուղևորեաց։ Որում և իմացումն ետ։ Նաև՝ զհանելն աքսորելոց իթլախին ի Պոլիս որոյ աղագաւ և զմահտեսի Ցօհանն առ. փաշայն ծանոյց։ Որում և պատուիրեաց՝ զի ընդ մահտեսի Ցօնանին խորհրդակցեալ, ասասցէ փաշային՝ զի որովհետև ինքն այս բանիս մէջն եմուտ, մէկ այնպէս հաստատուն բան հոգասցէ վասն Ախլցխայեցւոցն, որ մշտնջենաւոր լիցի։ Քեզ ես է աստ լինելոց յաւետենական յիշատակ, եթէ ըստ խնդրոյ և ըղձից մերոց առնել տայցես փաշային։ Զի յորմէհետէ փաշայն գիր էառ ի յԱխլցխայեցւոցն իբր թէ հնազանդեցոյց զնոսա մեզ, մինչև ցայժմ բնաւին ոչ տեսաք ի նոցանէ զնշան ինչ հնազանդութեան ոչ բանիւ և ոչ գրով։

Թուղթ մի ևս առ. Կարսայ Նուիրակ Յակոբ վարդապետն գրեաց, զի ի գնալն մահտեսի Ցօնանին ի Կարս՝ սրբազան վեհն պատուիրեաց նմա, զի վասն Մեռոն՝օրհնելոյ՝ անդ զԼ. Թիլաւի զէթեաղի առցէ, և զտախտակսն զորս Ղարապէկն ըստ խնդրոյ մերոյ առեալ էր, զայնս ի միասին ընդ իւր բերցէ, և զգինսն նոցին, ի Նուիրակէն մերմէ առեալ տացէ։ Որում և պատուէր՝ զի ի խնդրելն մահտեսի Ցօնանին յինքենէ զդրամ վասն զէթեաղուն և տախտակացն, անպատճառ տացէ, և ի նմանէ զգապզ առեալ առ. ինքն պահեսցէ, զի յաւուր հաշուատրութեան իւրոյ պիտոյասցի։ Նաև ի մէջ սորա և տեղւոյ Առաջնորդին վասն ոչինչ պատճառի շատ խռովութիւն գոյր։ Այնքան մինչ զի զիրեարս աստ և անդ վատաբանէին, և զբազումս ևս միմեանց թշնամի առնել ջանային, և առ. սրբազան վեհն զիրերաց զանդատ դրել յորդորէին։ Վասնորոյ՝ և պատուիրեաց զի ի բաց եղեալ զնախանձ և խռովութիւն յինքենէ հաշտեսցի ընդ Առաջնորդին, և սիրով միասցեն ընդ միմեանս։ Ոչ ապաքէն նա ես

իմն է ասէ և իմ եղեալն։ Նա ոչ թէ յատուկ Առաջնորդ է, այլ ի կողմանէ իմմէ վէքիլ սրբոյ վանիցն։ Եւ այլ ինչ ալոյխսի բանք չատ։

Թուղթ ես առ Խնձասու գիւղի Դիլան Քեահեայն, Երեցփոխան Պետրոս, Դալուստն, և Աէքվաղն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրեանց. որք առաջնորդէն իւրեանց Սուքիաս վարդապետէն դանդատ էին գրեալ առ սրբազան վեհն թէ՝ վասն պաղի չտալոյն մեր ինքեան, զդուռն եկեղեցւոյն մերոյ փակեալ է ի սուրբ Խաչէն մինչև ցայժմ։ Զի թէ տամք ասեն նմա զպաղին մեր, իւր որդւոցն և ընտանեացն տայ և ոչ ի վանքն տանի։ Որոյ աղագաւ և սրբազան վեհն զմիատութիւն գրեաց առ նոսա, ծանուցանելով նոցա զգրելն առ. Առաջնորդն իւրեանց ընդթուղթ մեղադրանաց։ Որոց և պատուէր զի զպտղին իւրեանց՝ թարց իմիք պատճառին ամ յամէ տացեն Առաջնորդին իւրեանց, և հնազանդ կացցեն նմա ըստ ամենայնի։ Նաև՝ մեղադրեաց ես զնոսա՝ ասելով թէ՝ ձեզ զի՞ փոյթ է հետևիլն վասն տուեալ նուիրին ձերոյ, զի այն գործ մեր է, այլ դուք զպտղին ձեր անպատճառ տուք Առաջնորդին ձերոյ։

Թուղթ մի ևս սիրախառն մեղադրանաց առ Ղօշավանից Առաջնորդ Սուքիաս վարդապետն գրեաց (որ ի դեկտեմբերի ելն յիշեցաւ.) ըստ մտաց թղթոյ նուիրակին, զի զոր ինչ պատուէր գրեաց նմա վասն հաշտ մնալոյն ընդ միմեանս, զնոյնն և սմա ես գրեաց՝ զի սա ևս այնպէս վարէր ընդ նմա։ Եւ զի՝ ի վերայ Խնձասու գիւղի ժողովրդոցն բայկացեալ էր վասն պաղի չտալոյն ինքեան, և զդուռն եկեղեցւոյն նոցա փակեալ էր ի սուրբ Խաչէն մինչև ցայժմ (որպէս ասացաւ ի վերդ.) վասնորոյ և սրբազան վեհն պատուիրեաց նմա, զի զդուռն եկեղեցւոյն նոցա բացցէ. և Աջ տուեալ հաշտեսցի ընդ նոսա։ Յղեցան այսոքիկ ընդ մահտեսի Յօնանին, որ եւ ընդ Սարասկեարի թաթարին, ի յունվարի ԺԳ։

Առ Նսնուսեցի Յովհաննէսն եւ նորին եղբայր մահտեսի Սարգիսն, միամտութիւն վասն երկիցս անգամ առ մեզ յղեալ ամանաթիցն եւ խաչինն։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Նըսնուսեցի մահտեսի Յովհաննէսն և յիւր եղբօր մահտեսի Սարգիսն ի Բաղդադ (որք ի . . . յիշեցան,) ի պատասխանի թղթոյ նոցին։ Վանդի մահտեսի Յովհաննէսն անուամբ այր ոմն բարեկամ զոլով սոցա, ի Նուխու՝ յանուն սրբոյ Աթոռոյս զմէկ Արծաթեայ խաչ էր շինեցուցեալ և յղեալ առ նոսա, ի սուրբ Աթոռս յղել։ Եւ նոքա ևս յղեալ էին, և յանուն նորին զթուղթ օրհնութեան խնդրեալ։ Վասնորոյ և սրբազան վեհն զթուղթ մի օրհնութեան և շնորհակալութեան գրեալ ի վերայ նորա՝ յղեաց առ նոսա առ նա հասուցանել։ Այլ և՝ միամտութիւն ևս գրեաց առ նոսա վասն երկիցս անգամ յղեալ ամանաթիցն առ մեզ։ Զայսոսիկ ետուք չիշման Դաւթին՝ զի ընդ Բաղդադու գընացողի առ մահտեսի Յովհաննէսն յղեսցէ։ Ի յունվարի ԺԶ։

ՃՀԸ.

Առ Հաշտարխանու նուիրակ Մինաս պետըն միամտութիւն վասն այլ եւ այլ սնոտի կարծեացն իւրոց:

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Հաշտարխանու նուիրակ Մինաս վարդապետն ի պատասխանի ի հոկտ. և ի նոյ. ամսոջ գրեցեալ Բց թղթոցն իւրոց։ Զի քան զայս յառաջ ի պատմութիւն ՌՄԺԹ թուին և ի . . . գրեաց առ նա սրբազան վեհն զորպիսութիւն գործոյն իւրոյ զարդիւնաւոր և զարժանաւոր առնելն ծանուցանել ինքեան, իսկ նա այնպէս էր իմացեալ թէ սրբազան վեհն հաշիւ խնդրէ յինքենէ։ Եւ նա ևս, անտի գրով տուեալ էր սրբազան վեհին զհաշիւն իւր։ Եւ սրբազան վեհն ևս շնորհակալութիւն գրեաց առ նա։ Այլ և՝ զմիտս թղթոյն իւրոյն ծանոյց նմա. ասելով թէ՝ ես պատուիրեցի քեզ զորպիսութիւն գործոյդ գրել մեզ, իսկ դու զսորին ներհակն իմացեալ հաշիւ տաս մեզ. այտի որպէս լինի ասէ հաշուատրութիւն մինչ ոչ գալցես ի սուրբ Աթոռս։ Նաև լուաւ սրբազան վեհն թէ տրտունջեն զնմանէ ժողովուրդքն, վասնորոյ յայնժամ պատուէր գրեաց առ նա մարդաշահութիւն առնել։ Բայց նա այնպէս էր կարծեալ, թէ սրբազան վեհն թշնամեաց խօսիւքն իցէ գրեալ ինքեան զմեղադրութիւն զայն

ստկս որոյ յոյժ խոյնեալ էր։ Աստի և սրբազանն միամտեցոյց զնա ասելով թէ՝ զայն բան առ ի հոյրարար խրատ գրեցի քեզ, և ոչ ըստ թիւրիմաց կարծեացն քոց։ Այլ և՝ խնդրեալ էր ի սրբազան վեհէն զՌուսաց թագաւորի հրովարտակի Աստատն յղել, բայց այժմ ձեռնհաս չեղև յղելն։ Եւ պատուէր՝ զի ի մէնջ առաքեսցեալ Հաշտարխանու թղթոց առ ինքն հասանելն՝ և զինչ առնելն, ծանուսցէ ինքեան ի միամտութիւն իւր։ Զայս ի յԵրեան յղեցաք, զի անտի ընդ կարաւանի առ Տէր Աբրահամն յղեսցեն ի Թիֆլիզ, զի և նա առ Մինաս վարդապետն հասուսցէ ի Հաշտարխան։ (որոյ զամսաթիւն, սոյն ամսոյս ԻԳ եղաք։) ի յունվարի ԻԳ. իսկ և՝ Հաշտարխանու, Մոսկովու և Պետրպօրքու թղթոց պատասխանիք. զորս ի յուլիսի ԺԵ գրեալ էր առ սա յղ.։

ՃՀԹ.

Առ Արապկերու ժողովուրդն պատուէր վասն Առաջնորդին իւրեանց, եւ առ յայլս ես սակս քանից ինչ։

ՅԵրապօլսոյ ժողովուրդքն՝ վասն խռովութ անցից ինչ, զԱռաջնորդն իւրեանց զՊետրոս վարդապետն բարկացուցեալ էին ի վերայ ինքեանց։ Եւ նա ես զզուեալ և խռովեալ ի նոցանէ, և թողեալ զվիճակն իւր, գնացեալ էր ի Մատան Եւ ի գիտելն զայս սրբազան վեհին, զթուղթ գրեաց յորդորման և պատուիրի առ յԵրապօլսոյ ժողովուրդսն, զի յինքեանց քանի մի գլխաւոր իշխանք գնացեալ ի Մատան, զԱռաջնորդն իւրեանց համոզելով վերադարձուսցեն առ ինքեանս, և հաշտեսցին ընդ նմա, և այսուհետև հնազանդ լիցին հրամանի նորին։ Եւ շնորհակալութիւն վասն արդիւնաւոր առնելոյ զնորոգ նուիրակն իւրեանց Պետրոս վարդապետն։

Թուղթ ես առ յԵրապօլսոյ Առաջնորդ Պետրոս վարդապետն գրեաց (որ ի հոկտեմբերի Ժ յիշեցաւ,) վասն վերոյիշեալ անցիցն։ Եւ խրատական բանիւ և սիրով յանդիմանեաց զանհամբեր բարս նորին։ Եւ վերջապէս պատուէր՝ զի ի գալ իշխանացն իւրոց առ ինքն, ի բաց թողեալ զխստաբարոյութիւն իւր, գնասցէ ընդ նոսա ի տեղի իւր, և աջ տուեալ հաշտեսցի ընդ ժողովրդեանն իւրոյ։

Թուղթ մի ես առ Թօխաթու նորոգ նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց (որ ի հոկտեմբերի Ժ յիշեցաւ,) ի պատասխանի ի դեկտեմբերի Գ գրեցեալ թղթոյն։ Որ զյաջողմանէ գործոյն իւրոյ գրէր։ Որում և պատուէր՝ զի որքան ի պատրաստի զրամս ունիցի, առ մահտեսի Փիլիպպոսն յղեսցէ ի Կարին, զի նա անտի առ մեզ հասուսցէ։ Թուղթ մի ես առ Մուրադիկեանց Խօջայ Առաքելն գրեաց յԱրապկեր ի պատասխանի թղթոյն։ Զի լուեալ էր թէ՝ սրբազան վեհն նուիրակ է յղելոց ի Պօլիս, վասնորոյ՝ խնդրեալ էր պատուէր տալ նմա վասն եղբօրն իւրոյ Նազարէթին, զի ի գնալն անդ՝ զնա ի սէր ունիցի և մուզալէթ լինիցի։ Ցազագս որոյ՝ և սրբազան վեհն խոստացաւ նմա ըստ խնդրոյ իւրոյ առնել։

Թուղթ մի ես առ սորին եղբայր մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի Կարին (որ ի դեկտեմբերի ելն յիշեցաւ) ի պատասխանի թղթոյն և զվերոյիշեալ թուղթսն առ սա յղեաց յիւրաքանչիւր տեարսն հասուցանել։ Որում և պատուէր վասն Թօխաթու հին նուիրակի դրամոցն (ԱI ԼԱ) առ Արապկերցի խօջայ Մարտիրոսն դոյր (զորմէ ի դեկտեմբերի ելն և ի վերոյս նորին ասացաւ.) զի թէ մինչև ցարդ տուեալ իցէ ինքեան և կամ այժմ տալոց է, բարւոք է. իսկ թէ ես յամեցուցանել կամիցի՝ ծանուսցէ ինքեան։ Նոյնպէս և վասն Երզնկանու դրամոյն (Ա) հարցախնդիր եղե, արդեօք ցայժմ առեալ իցէ թէ ոչ։ Եւ զի սրբազան վեհն, այժմ ի Գաղատիա նուիրակ յղել կամէր, բայց վասն վրդովմանց ի տարակուսի կայր։ Վասնորոյ՝ պատուիրեաց նմա, ճանապարհաց որպիսութիւնն ծանուսցէ ինքեան։ Զորմէ և շնորհակալութիւն՝ վասն յղեալ լիմոնին առ մեզ։ Այլ և պատուէր՝ զի զՆ և կամ զՁ թիլանի Տրապօլսոյ և կամ Հալապու հալալ սապոն առեալ յղեսցէ։ Փոքրիկ փուսուլայ մի ես գրեաց առ սա։ Քանզի լուաք թէ՝ ի Կարնոյ ոչխար էր յղեալ սա ի Պօլիս վասն վաճառելոյ. Եւ՝ թագաւորն ես ի լսելն իւր, շնորհակալ էր եղեալ զսմանէ, և զսորին եղբայր Նազարէթն խիլայեալ։ Ուստի և պատուէր՝ զի զստոյգն իրակութեանս գրեսցէ մեզ, զի ուրախասցուք։ Զայսոսիկ ի միում պահարանոջ եղեալ առ Տէր Վահանն յղեցաք, զի և նա ի Կարին առ մահտեսի Փիլիպպոսն հասուսցէ։ Ի յունվարի ԻԵ։

ՃՁ.

Ցոյց սրբազան վեհին զԱխլցխայեցի չորեսին աքսորեալսն ի տեղիս իւրեանց:

Ախլցխայու չորեքին աստ աքսորեալ կարգաւորքն՝ այսինքն՝ Պօղոս և Յովաննէս վարդապետքն, Տէր Ստեփաննն և Տէր Յակոբն,(որք յամսոյս ԺԳ և ի վերոյսն յիշեցան,) յորժամ ի յուղիղ կրօնս և ի դաւանութիւնս մեր դարձան, և ձեռաղրով և երգմամբ միամտեցուցին զսրբազան վեհն, վասնորոյ՝ և սրբազան վեհն զիթլախն նոցա բերել ետ ի Պօլսոյ. (որպէս ի վերդ յամսոյս ԺԳ ասացաւ,) և զմինն ի նոցանէ զՊօղոս վարդապետն Առաջնորդ արարեալ ի վերայ Ախլցխայու, և Առաջնորդական կոնդակ տուեալ, (զմիտս կոնդակին յետոյ գըրելոց եմք լիովին,) զչորեքեանն ես ի միասին ընդ մահտեսի Յօնանին եղեալ յղեաց ի Կարս, զի նա ի սարասկեարէն մարդ առեալ ի յԱխլցխա տարցէ զնոսա ընդ նմա. Եւ զի՝ տեսեալ զնոսա սարասկեարն՝ միամտեսցի, որ բազմիցս խնդրէր ի սրբազան վեհէն զիթլախն նոցա բերել տալ, և ի բաց արձակել զնոսա. (որպէս ասացեալ է ի յօղոստոսի ԺԴ,) որոյ աղագաւ և զթուղթ գրեաց սրբազան վեհն առ սարասկեար Մուստաֆայ փաշայն (որ յամսոյս ԺԳ և ի վերոյս նորին յիշեցաւ,) և զիթլախն աքսորելոց հանդերձ աքսորեցելովքն առ նա յղեաց, որպէս զի՝ տեսցէ զիթլախն, և զօրինակն առեալ զիսկն առ մեզ յղեսցէ աստ. Եւ մարդ եղեալ ընդ մահտեսի Յօնանին՝ յղեսցէ զնոսա ի յԱխլցխա. Եւ խնդրեաց ես, զի գրեսցէ Սուլէյման փաշային, և այնպէս բան հոգասցէ, որ ուղղեսցին միացեալ Ախթարմալքն Ախլցխայու. Եւ այնպէս հաստատուն լիցի, որ մի ևս ցաւեսցին գլուխ քոյ և մեր. և այսքան որ աշխատեցաք թէ մեք և թէ դու, կորիցէ ընդ վայր. Թուղթ ևս այսր աղագաւ առ Իբրահիմ էֆէնտին գրեաց (որ ի դեկտեմբերի ԼԱ յիշեցաւ.) խօսիլ ընդ փաշային, և վասն Ախթարմալեցն Ախլցխայու, զհաստատուն բանս հոգալ տալ նմա. Թուղթ մի ևս յորդորանաց առ Նաղուպ աղայն գրեաց (որ է դեկտեմբերի ԼԱ յիշեցաւ,) այսր աղագաւ, գրել Սուլէյման փաշային, որում ծանօթ էր կարի. Զի խամրեհ արասցէ Ախթարմալեցն չառնել զԱխթարմալութիւն, այլ լինել հնազանդ հրամանաց. Եւ այլ առ այս բանք.

Թուղթ մի ևս ըստ նոյն մտաց առ Կարսայ Ահմատ փաշայն գրեաց. (որ ի սեպտեմբերի Ի յիշեցեալ է.) Թուղթ ևս առ սարասկեարի Սառաֆ մահտեսի Փիլիպպոսն գրեաց (որ յամսոյս ԺԴ յիշեցեալ է) պատուիրելով նմա՝ զի զոր ինչ մահտեսի Յօնանն ասասցէ ինքեան, այնպէս խօսեսցի ընդ փաշային, և զհաստատուն բան հոգալ տացէ նմա վասն Ախթարմալեցն Ախլցխայու.

Թուղթ ևս առ Ղարախանօղլի Ահմատ էֆէնտին գրեաց, որ զեթոն և այլ ինչ էր յղեալ ընծայ սրբազան վեհին.

Թուղթ մի ևս առ Ախլցխայու Սուլէյման փաշայն գրեաց (որոյ անունն ի վերդ ի թղթոջ սարասկեարին և յայլում տեղւոջ յիշեցեալ է,) վասն Ախթարմալեցն յիշեցուցանելոյ ի կարճոյ զարարեալ բարերարութիւնն առ մեզ Հօման փաշային (որ ի պատմութեան ՌՄԺԹ թուին ի յօղոստոսի ԻԵ ի մայիսի Ը, և ի վերոյսն յայլ տեղիս յիշեցեալ է.) զոր ինչ արար ընդ Ախթարմալսն Ախլցխայու. Եւ խնդիր՝ զի և ինքն հետևելով նմա՝ զԱխթարմալսն ահացուցեալ, ի յԱխթարմալութենէն ի բաց դարձուցանել ջանասցէ, և ի սմա նստօղ Հայրապետին հնազանդիլ տացէ. Առաջնորդական կոնդակ ետ սրբազան վեհն Պօղոս վարդապետին ի առնելն զնա Առաջնորդ ի վերայ Ախլցխայու և համայն երկրի նորին, չգրելով բաց ի քաղաքէն զանուն տեղւոյ իրիք. Յորում թէ Ախթարմալեցն և թէ Մերազնէից, ուրոյն ուրոյն զպատուէրս գրեաց. Նախ՝ երկայնպէս ծանուցանելով Ախթարմալեցն ըզդարձն չորից մոլորեցուցչացն իւրեանց հանդերձ պարագայիւքն նոցին. (որպէս ի վերդ և յայլ տեղիս ի վերոյսն ասացաւ.) Եւ պատուէր՝ զի որպէս գլխաւորքն և մոլորեցուցիչքն իւրեանց թողեալ զյամառութիւնն իւրեանց հետևեսցին ուղղութեան, ինքեանք ևս թողեալ զթիւր և զարտուղի ընթացս իւրեանց, հետևեսցին ուղղափառ և ճշմարիտ դաւանութեան Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ, զոր մեքս ունիմք, և զայլ և այլ դաւանութիւնս և զօտարաց անուանս (որ է զանուն փռանկին,) բարձցեն ի միջոյ իւրեանց, և միայն զսուրբ Աթոռս իւրեանց լուսատու ծնօղ, և ի սմա նստօղ Հայրապետն միայն իւրեանց Հայրա-

պետ և փոխանորդ սուրբ Լուսաւորչին իմացին, և զՊօղոս վարդապետն իւրեանց Առաջնորդ ընդունիցին, և հնազանդ լիցին նմա ըստ ամենայնի։ Եւ սպառնալիք՝ մինչ ոչ կատարեսցեն զպատուէրքս զայսոսիկ։ Իսկ և միաբնադաւան քրիստոնէիցն տեղւոյն այսպէս պատուիրեաց՝ զի թէ զՊօղոս վարդապետն ի յուղիղ դաւանութիւնս և յեկեղեցական արարողութիւնս մեր հաստատուն տեսցեն, իւրեանց Առաջնորդ ընկալցին, և ըստ ամենայնի հնազանդ լիցին նմա։ Իսկ եթէ ի թիւր կողմն դարձցի որպէս և յառաջն էր, և նոյն թիւր դաւանութեամբն զթիւր արարողութեամբս սկսանիցի առնել և ուսուցանել այլոց, ապա՝ և ինքեանք մի ևս Առաջնորդ ընդունիցին զնա ինքեանց. այլ ի բաց կացցեն ի նմանէ, և խոտեսցեն զնա։ Օրինակն սորին է ի բոլորագրահամար տետրոջն, յեբեսն ՆԽ. ՆԽԱ։

Թուղթ մի ևս յատկապէս և առանձին առ Ախլցխայու բոլոր միաբնադաւան քրիստոնեայսն գրեաց։ Պատուիրելով նոցա զի թէ զՊօղոս վարդապետն ի թիւր կողմն շեղեալ տեսցեն, փութով և լռելեայն ծանուսցեն ինքեան և մի հնազանդ լիցին նմա։ Որպէս ի կոնդակոջն ևս գրեցաւ։ Եւ աստի մահտեսի Յօնանն ընդ Դ կարդաւսրացն ի յունվարի ԼԱ։

ՃՁԱ.

Խնդիր ի սարասկեարէն. վասն ըմբռնեցեալ նուիրակին մերոյ եւ իշխանացն որ ընդ նմա ի Մատեն։

Խաբերայ և յուղալասարաս ժողովարար ոմն, ժողովարարութեան աղագաւ գնացեալ ի Յերապօլիս՝ և անդ մա՛մետականքն չաշուտ [14]) անուամբ կալեալ են զնա և տուեալ առ տեղւոյ իշխօզ Մահմատբէկն, և նա ևս յանձն է առեալ զչաշուտութիւնն, և անմեղ անձինս ոմանս՝ ես ի զուր զրպարտեալ է, իբր թէ ինքըն ի վերայ նոցա զիր բերեալ իցէ։ Յորոց մինն եղեալ է Թօխաթու նորոգ նուիրակ Պետրոս վարդապետն։ Ուստի՝ և իշխօզ տեղւոյն՝ կապանօք յղեալ է զնոսա առ Մատենու Էմին աղայն։ Եւ նա ևս արկեալ է զնոսա ի բանտ։ Եւ բաց ի սոցանէ՝ անմեղ անձինս ոմանս ևս է ժողովեալ սա ի Յերապոլսոյ, յԱկնայ և ի Մատենու, (մինչև ոգիս Ի, թէ քահանայք և թէ աշխարհականք,) և եղեալ ընդ նոսա ի բանտի։ Կամելով ծանուցանել սարասկեար Մուստաֆայ փաշային, զի որպէս կամիցի՝ այնպէս արասցէ։ Եւ բանտարկեալքն ևս լռելեայն գրեալ էին ընդ փայեկի առ սրբազան վեհն և առ բարեկամսն իւրեանց զեկեալ զիպուածն ի վերայ ինքեանց։ Եւ ի գալ փայեկին ի Կարին՝ ըմբռնեալ էին զնա աւազակք ի ճանապարհին։ Եւ մերկացուցեալ, զթուղթսըն ի նմանէ առեալ։ Իսկ նա տեղեակ և հմուտ գոլով վերոյիշեալ անցիցն՝ եկեալ ի Կարին, միըստմիօջէ ծանուցեալ էր մահտեսի Փիլիպպոսին։ Եւ նա ևս զամենայն գրեալ էր աղերսիւ առ սրբազան վեհն և ազատութեան հնար առնել խնդրեալ վասն նոցա, և զվտանկաւոր անուննն վերացուցանել ջանալ ի յազգէն մերմէ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն թուղթ մի խանին մերոյ գրեցոյց ի վերայ սարասկեարին և զթուղթ ևս ինքն գրեաց առ նա։ Որոց դիտումն էր այս թէ՝ այս օճախիս խալիֆայն Բ թագաւորաց ֆէրմանով նստի անդ, և ամենայն ազգին Հայոց հոգեւորապէս իշխէ, և զսեպհականն իւր թագաւորի ֆէրմանով ուզէ յամենայն տեղիս, և զաքեաթ [15]) ժողովել տալ և բերէ աստ, որով այս օճախս չէն մնայ։ Ի բնէ անտի այս է սոցա կանոնն։ Եւ մինչև ցայժմ թէ յայս օճախէս և թէ ի Հայոց ազգէն, խայինութիւն [16]) մի չէ ոք երբէք տեսեալ և ոչ լուեալ, և խալիֆայի մարդկանցն ոչ ոք մանի [17]) չէ եղեալ, կամ չառ և չիլթախ ինչ ի նոցանէ արարեալ։ Այժմ այդ զուր ձայնդ որ յԱրապկերու կողմունսն եղեալ են ի վերայ անմեղ անձանց ոմանց Հայոց ազգին իբր թէ նոքա խային և չաշուտ լինին, և ըմբռնեալ են և հապս [18]) այ արեալ հանդերձ խալիֆայի մարդովն։ Ամենեին սուտ է, և անհաւատալի զրոյց. այդպիսի բան մինչև ցայժմ ոչ ի Հայոց ազգէն է ելեալ, և ոչ յայս օճախէս։ Զի Հայոց ազգն բաց ի հնազանդ ծառայութենէ, խայնութիւն ոչ առնեն թագաւորի։ Արդ՝ գրեմ չուտով Մատենի Էմինին, զի մուրախաս [19]) արասցէ զնոսա։ Զի վատ անուն է այդ յայլ տեղիս և չար օրինակ առնուն և այդպէս առնեն, և զանուն խղճալի ազգին Հայոց կոտրեն և խայլին հանեն։ Եթէ զայս

այսպէս ոչ արասցես, վերջն լաւ չի լինիլ։ Խանի գիրն փոքր ինչ սպառնալեօք էր, իբր թէ այսպէս ոչ արասցես՝ վերջն լաւ չի լինիլ, և սրբազան վեհինն աղաչական ոճիւ էր։

Թուղթ ևս առ. Իբրահիմ էֆէնտին ղըրեաց (որ ի յունվարի ելն յիշեցաւ,) վասն բանտարկելոցն ըստ նոյն զխամանն ի կարճոյ՝ զոր ինչ առ փաշայն գրեաց. որպէս զի՝ նա ևս խօսեսցի ընդ փաշային, և այնպէս սանձել տացէ, որպէս ղրեցաւ։

Թուղթ մի ևս առ. սարասկեարի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն գրեաց (որ ի յունվարի ելն յիշեցաւ,) ըստ նմին օրինակի։

Թուղթ մի ևս առ փոքր փաշայի սառաֆ տիրացու Յակոբն ղրեաց և ըստ խնդրոյ նորին փաշայի՝ մէկ ամանով ջաւզի մուրապպայ յղեաց առ նա ընդ մեր Միրզային տալ փաշային։ Յղեցան այսոքիկ ընդ մեր Միրզայ մօլլա Ահմատին։ Որ եւ ընդ խանի մարդոյն ի յունվարի ԺԷ։

ՃՁԹ.

Ի Պօլիս, ի Կարին, ի Ցամիթ եւ յայլ տեղիս թուղթք վասն այլ եւ այլ ոպալիսութեանց:

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետն (որ ի յունվարի Ժ յիշեցաւ,) յիշեցուցանելով նմա ի դեկտեմբերի ելն և յունվարի Ժ զթուղթս գրելն առ ինքն։ Որում և լրապէս ծանոյց զանցսն Թօխաթու նորող նուիրակին և իշխանացն հանդերձ իւր արարեցելովքն՝ զորս այսր աղագաւ արար։ Որպէս ի վերդ ասացաւ։ Նաև՝ միամտութիւն առ նա՝ վասն Բց փօլիցայագրեանցն (որք ի յունվարի Ժ յիշեցան,) որք այժմ հասեալ էին առ Զարքեաղօղլին, և նա ևս առ մեզ էր յղեալ յԵրևանայ։ Փուսուլայ ևս ղրեաց առ սա վասն Մուրտիկեանց Խօջայ Նազարէթին։ Զոր վասն փօլիցայ ոչ առնելոյն նորին ձեռամբն, խաթրամնեալ էր արարեալ (որպէս ասացաւ ի դեկտեմբերի ելն։) Ուստի գրեաց՝ զի զնա ի սէր ունիցի և մի իսպառ թողցէ ի ձեռաց։ Քանզի ղրեալ էր թէ՝ այսուհետև ի ձեռն մահտեսի Յակոբին, որ աստ է, և նորին եղբարցն որք են ի Կարին, զփօլիս արա. և մի ի ձեռն Մուրտիկեանցն, զի այլ իմն երևին։ Ուստի և սրբազան վեհն գրեաց առ եղբայր մահտեսի Յակոբին մահտեսի Յովաննէսն, (որպէս ասացաւ ի յունվարի Ժ.) զի որքան զրամ կամիցի՝ տացէ մեզ, և փօլիցայագիր առեալ յղեսցէ ի Պօլիս առ եղբայր իւր մահտեսի Յակոբ Ամիրային՝ զի նա անդ ի Զաքարիա վարդապետէն առցէ։ Եւ մինչև ցայժմ նա զրան ինչ ոչ գրեաց առ սրբազան վեհն այսր աղագաւ։ Ուստի գրեաց Զաքարիա վարդապետին, թէ ահա Յովաննէսին գրեցաք, և տակաւին պատասխանի ևս ոչ գրեաց զրոյն մերոյ։ Արդ թէ զՄուրտիկեանսն ի ձեռաց թողցուք, որովք հոգասցուք զրանս մեր։ Զի սաղ մարդ ոչ գոյ այժմ։ Ուստի զՆազարէթն շահեա և ի ձեռին պահեա, զի ոչ սակաւ ծառայեսցեն զոքա մեզ։ Նազարէթն յայդր, և եղբարքն ի Կարին։ Թերևս փօլիցայ ևս արասցուք ի վերայ քոյ ի ձեռն զոցա, եթէ պատահիցի։ Եւ այլ առ այս բանք։

Թուղթ ևս առ Թօխաթու հին նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց (որ ի դեկտեմբերի ելն յիշեցաւ) ի պատասխանի ի դեկտեմբերի Ժ գրեցեալ թղթոյն։ Որ խնդրեալ էր ի սրբազան վեհէն Լ ղուռուշ զրամ խարճի տալ քեռն իւրոյ և աղաչանօք հարցեալ էր զորպիսութիւնս քեռն։ Եւ սրբազան վեհն ծանոյց նմա զորպիսութիւնն, և զզրամն տուեալ քեռն նորա, գրեաց զի միամտեսցի։ Եւ Թիֆլիզու Առաջնորդ Ոէթէոս պետն (որ յիշեցեալ է ի յուլիսի ԺԵ,) գրեալ էր առ սա զթուղթ մի վասն ԱՑԾ ղուռուշ առնելեացն իւրոց որ անդ, (որ յիշեցեալ է ի յապրիլի ԻԱ,) ի պարտատիրէն իւրմէ Սողոմոնէն առցէ, և ի սուրբ Աթոռս հասուսցէ։ Ուստի՝ և սրբազան վեհն զթուղթն նորին յղեաց առ նա, և պատուիրեաց շուտով ջանալ և առնուլ։ Զի մեզ հասուցանելոց էր զրամն այն, որպէս ասացեալ է։

Թուղթ մի ևս ի Կարին՝ առ Արապկերցի խօջայ Մարտիրոսն, Ստեփաննն և Պետրոսն ղրեաց։ Որք զԹօխաթու նուիրակի առ ինքեանս եղեալ զրամն (ԱՂԱ) (որ ի յունվարի ԻԵ յիշեցաւ,) ցուեցուցանէին և ոչ տային։ Ուստի՝ ղրեաց առ նոսա այսր աղագաւ զմեղադրութիւն և հարկ՝ զի տացեն շուտով Մուր-

տիկնոնց մահտեսի Փիլիպպոսին, զի նա առ. մեզ հասուսցէ։

Թուղթ մի ևս առ. Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն գրեաց (որ ի յունվարի ԻՆ լիչեցեալ է։) ի պատասխանի յամսոյս Ա գրեցեալ թղթույն. որ զ՚ի զի զուր ըմբռնումն Թօխաթու Նորոդ Նուիրակին և իշխանացն գրեալ էր առ. սրբազան վեհն և վասն ազատելոյն նոցա, հնար առնել խնդրեալ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն, թէ զխանին մերոյ զրեցուցեալն առ. սարասկեարն, և թէ զիւրն ևս զորս այնր աղագաւ գրեաց առ. նա (որպէս ցուցաւ յամսոյս մ՟Ը,) զամենայն միըստմիոջէ ծանոյց նա։ Եւ պատուիրեաց՝ զի զայսոսիկ զրեսցէ ի յԱրապկեր և յայն կողմունսն որոց և կամիցի, և ի նոցանէ այսր աղագաւ որպիսութիւն հարցեալ ծանուսցէ ինքեան։ Կրկին պատուէր՝ զի Դ լիտր լաւ և արժանագին լեղակ առեալ փոյթ յղեսցէ առ. Տէր Վահանն, զի նա առ. մեզ հասուսցէ։ Ծանոյց և զթուղթ գրելն առ. Արապկերցի խօջայ Մարտիրոսն և յընկերսն նորին՝ վասն Թօխաթու Նուիրակի դրամոյն (անլա) զի ինքեան հասուսցեն։ (որպէս ասացաւ ի վերոյ,) և պատուիրեաց՝ զի զտալն և զչտալն չուտով ծանուսցէ ինքեան։ Եւ ըզթուղթս Պոլսոյ և Թօխաթու Նուիրակացն առ. սա յղեաց, յինքեանս հասուցանել։

Թուղթ մի ևս առ Ցամթա Նուիրակ Մինաս վարդապետն գրեաց ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի . . . զթուղթ գրելն առ. առ ինքն։ Որում և պատուէր՝ զի զորպիսութիւն գործոյն իւրոյ և իւր, գրեսցէ ինքեան։ Զի լուաք թէ՝ հիւանդացեալ է։

Թուղթ մի ևս ի Ցամիթ՝ առ. սրբոյ Աթոռոյս զանձապետ խօջայ Գասպարն, Բարսեղն, և մահտեսի Ցակորն դրեաց, ի պատասխանի ի դեկտեմբերի Ժ գրեցեալ թղթոյն։ Որք գրեալ էին առ. սրբազան վեհն զնահատակութիւն Առն Աստուծոյ երանելոյն Ցակոբայ վարդապետին, որ վասն ժողովարարութեան գնացեալ էր ի Ցամիթ, ուր նենգութեամբ զբանս էին որսացեալ ի բերանոյ նորա պիղծ տաճիկքն, և հակաջինեալ ընդ նմա բանիւք, կամեցեալ էին տաճկացուցանել զնա։ Եւ յոչ հաւանեալ նորա, կարծրագոյն չարչարանօք նահատակեալ էին զնա ի փառս Քրիստոսի։ Եւ սոքա վասն թաղման նորին՝ ԱՌ ղուռուշ խարճ էին արարեալ. Եւ գրէին թէ՝ ոչ ոք է տուեալ մեզ փարայ մի։ Եւ սրբազան վեհն գրեաց՝ զի որովհետև վասն անուան նահատակին են արարեալ զայն խարճն, վասնորոյ ի փառս Աստուծոյ համարեալ, տեսցեն ընդ քաղաքացւոցն։ Որոց և պատուէր՝ զի զանձանակին սրբոյ Աթոռոյս մուղալէթ լինիցին, և զժողովեալ զանձանակադրամն Նուիրակին իւրեանց Մինաս վարդապետին տացեն ամբողջապէս։ Եւ զթուղթ Նուիրակին ի մէջ թղթոյս եղեալ առ. սոսա յղեաց տալ ինքեան։ Նաև՝ մխիթարութիւն՝ վասն մահուան Սաեփանին և որդւոյն իւրոյ տիրացու Ցօհանին։ Ցորում և յատկապէս մխիթարութիւն ևս առ. մահտեսի Ցակոբն վասն ի Քրիստոս հանգուցեալ մօրն իւրոյ։

Թուղթ մի ևս առ. Խորվիրապայ Առաջնորդ Աւետիք վարդապետն գրեաց (որ ի պատմութ. ՌՄԺ ամի և ի . . . լիչեցաւ) զի վասն անցից ինչ՝ թողեալ զվանքն իւր, փախուցեալ էր ի կողմունս Վանայ։ Որում և պատուէր՝ զի միամտութեամբ ելեալ եկեսցէ ի սուրբ Աթոռս. զի որպէս իւր խնդիրն է, այնպէս առնել խոստացաւ։ Եւ սպառնալիք՝ մինչ ոչ եկեսցէ։

Թուղթ մի ևս առ. Վանայ Նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վարդապետն գրեաց (որ ի դեկտեմբերի ելն լիչեցաւ,) ի պատասխանի ի յունվարի ԻԲ գրեցեալ թղթոյն։ Եւ զթուղթ վերոյլիշեալ Աւետիք վարդապետին առ. սա յղեաց զի կոչեալ զնա առ. ինքն՝, տացէ նմա զթուղթն, և համոզելով յղեսցէ ի սուրբ Աթոռս։ Եւ զթուղթ Ցամթայ զանձապետացն հանդերձ Նուիրակի թղթովք ևս առ. սա յղեաց՝ զի առ. նոսա հասուսցէ։ Որում և պատուիրեաց՝ զի զպատասխանի թղթոյն իւրոյ զոր ի դեկտեմբերի ելն գրեաց ընդ իւր առ. Ցօնան վարդապետն (որ ի յապրիլի ԻԵ լիչեցաւ,) խնդրեսցէ ի նմանէ, և զինչ պատասխանելն նորին, ծանուսցէ ինքեան։ Փոքրիկ փուսուլայ մի ևս գրեաց առ. սա վասն վերոյլիշեալ Աւետիք վարդապետին, զի որպէս և իցէ՝ թէ սիրով և թէ բռնութեամբ, թարց զանցառման յղեսցէ ի սուրբ Աթոռս։

Թուղթ ևս առ. Ջուղայեցի Տէր Ցովաննէսն և յորդին իւր տիրացու Ստեփաննոսն գրեաց ի Վան՝ (որք ի դեկտեմբերի ելն լիչեցան,) ի պատասխանի թղթոյ նոցին։ Առ. որս գրեաց ի յունվարի Ը զորպիսութիւն

Հնդկաց նուիրակին ծանուցանել ինքեան, զորմէ ասէին վախճանեալ ի նաւին· Բայց նոքա ոչ գիտէին զհամբաւ ինչ զնմանէ, զի գրիցէին մեզ· Սակայն՝ զոր ինչ յետոյ սրբազան վեհն լուաւ յայլուստ՝ գրեաց նոցա· Փոքրիկ փուստուլայ ես՝ յատկապէս առ Տէր Յովաննէսն գրեաց, պատուիրելով նմա, զի մի զանուն Մարգարային յուրեք յիշեսցէ, այլ կնքեալ՝ ծածուկ ընդ հաւատարմի առ ինքն յղեսցէ·

Թուղթ մի ես շնորհակալութեան առ Թամզարայու Առաջնորդ Միքայէլ վարդապետն գրեաց ի Բայազիտ՝ (որ ի դեկտեմբերի ելն յիշեցաւ,) վասն Աջահամբուրին իւր զոր Տէր Վահանին էր տուեալ, զի նա առ մեզ հասուսցէ· Յղեցան այսոքիկ ընդ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսի յղեալ ծերունի Յօհան փայեկին· Որ ել ի փետրվարի ԺԸ·

ՃՁԳ·

Ի Բասրա եւ ի Բաղդատ, վասն ընչից հանգուցեալ նուիրակ Յովսէփ վարդապետին՝ զի յղեսցեն ի սուրբ Աթոռս:

Որպէս ի յունվարի Ժ ասացաւ զվախճանմանէ նուիրակին Հնդկաց Յովսէփ վարդապետին, եկն այժմ ի Բաղդատու փայեակ՝ բերեալ զթուղթս ի Բասրայու և ի Բաղդատու վասն վախճանման նորա, զի որպէս կամիցի սրբազան վեհն, այնպէս արասցէ· Քանզի՝ մինչ լուսահոգին վախճանեալ էր ի նաւին, վէքիլ էր արարեալ ինքեան դրով և կտակաւ զսրբոյ Աթոռոյս վէքիլ Միքայէլ Աղային, որպէս զի՝ տիրեսցէ ընչից իւրոց յելանելն ի նաւէն, և ի սուրբ Աթոռս հասուսցէ· Իսկ նա ըստ կտակի լուսահոգւոյն տիրեալ էր բոլոր ընչից, և ընդ Ջուղայեցի խօջայ Մինասեանց մհ. էմիրաղի որդի Յարութիւն աղային խորհրդակցեալ զոմանս յընչից ծախեալ էր, և զգին նոցին հանդերձ այլ ես դրամօք՝ (որք ի ներքոյ գրելոց են.) փօլիս էր արարեալ ի մեծն Պօլիս՝ զի հասցի անդ սրբոյ Աթոռոյս նուիրակ Զաքարիա վարդապետին, (Ե) (որպէս ասացաւ ի յունվարի Ժ·) Եւ ապա զբոլոր ընչից որպէսն, հանդերձ ամենայն որպիսութեամբք հանգուցելոյն՝ գրեալ էր առ սրբազան վեհն· Մահտեսի Յարութիւն աղայն ես ուրոյն էր գրեալ, և յղեալ էին ընդ թուղթսն ի Բաղդատ առ Ջուղայեցի Տէր Յակոբի որդի պարոն Պետրոս աղայն, զի նա յղեսցէ աստ· Եւ նա յատուկ փայեկաւ յղեալ էր աստ զայն թուղթն, որ էր սարկաւագ, և անուննն Աւմէօն· Եւ սրբազան վեհն չկամեցաւ մարդ յղել աստի վասն ընչիցն բերելոյ, զի ծախք շատ էին լինելոց յերթալն և ի գալն, և մանաւանդ մեծանայր ես անուննն· Վասնորոյ՝ այսց պատճառաց կամեցաւ զի ինքեանք յղեսցեն աստ· Վասնորոյ զթուղթ մի գրեաց առ Միքայէլ աղայն՝ (որ ի յունվարի Ժ ի թղթոջ Զաքարիա վարդապետին յիշեցաւ,) նախ շնորհակալ լինելով վասն հարազատութեամբ տիրելոյն ընչիցն, և միըստմիոջէ ստուգապէս գրելոյն զորպիսութիւնս նոցին· Եւ ապա ասէ՝ մինչ զլուսահոգին առաքեցաք, շատ բան պատուիրեցաք նմա բերանով վասն հարկաւոր իրաց ոմանց առնլոյ և բերելոյ· Յետոյ ես Գ անգամ զաւթար եմք յղեալ առ նա· Թէ այս ինչ և այն ինչ հարկաւոր է սրբոյ Աթոռոյս, առեալ բերցես ընդ քեզ· որոնէիք աստ ի մէջ թղթոցն, թերևս զայն զաւթարսն գտանէիք, և վերահասու լինէիք նոքօք թէ մեզ զինչ է պիտոյ· Իսկ այժմ ասէ քսուրքդ և ճոթեզէնքդ զորս գրես թէ ծախեալ եմք, և զորն ես ծախելոց եմք· Թէպէտ բարի մտօք էք արարեալ, բայց մեզ ամենայն տեսակ իր պիտոյ է· Զի երբեմն ըստ պահանջման հարկին, օսմանցւոց փաշայից և այլ մեծամեծաց, նոյնպէս և պարսիկ խանից և այլոց իշխողաց ընծայատուր լինիմք, որոց փոքրագին իր ընծայել անպատշաճ է· Նոյնպէս և հասարակ աղայից տաճկաց, և այլ երթ և եկաց, և միաբանից՝ ըստ իւրաքանչիւր արժանեացն· Եւ այժմ ասէ սուրբ Աթոռս դատարկ է յայդպիսեաց իրաց, աստ ոչ գտանի, և յայդ երկրէդ պարտ է գալ· Եւ ես չգիտացի այժմ թէ՝ դուք զո՞րն պատշաճ տեսանէք ծախելոյ, թուի թէ ասէ զծանրագինսն ծախէք, և զթեթեւագինսն պահէք վասն յղելոյ, կարծելով թէ աստ մեք ծախելոց եմք, և այն զնովն չի ծախուիլ· Որպէս գրես ասէ թէ՝ մազրասի և մուլչի բանտարի չիթ և լհէպն ծախեցաք, և դուշրաթինն պահեցաք· Արդ ես ոչ տեսանեմ աստ զեղեալ թէ ասացից այս ինչ պիտոյ է և այս ինչ ոչ· Զայս այսպէս գրեաց, և ապա՝ զԱ Դաւթար

արարեալ եղ ի թղթոջն, որ ինչ գիտոյ էր սրբոյ Աթոռոյս, ձոխեղէնք չինեղէնք, ապեղանիք, և այլ նմանք։ Եւ զվերոյիշեցեալ մահտեսի Յարութիւն աղայն ևս ընդ նմա վէքիլ կարգեաց, որովհետև երկուքն էին ի մէջ բանին։ Եւ գրեաց, զի զամենայն քսուրոն լուսահոգւոյն զբովանդակն բացեալ տեսցին, (քանզի էր ինչ տակաւին զոր չէին բացեալ, որպէս գրէին,) և զոր ինչ իւր խնդրեցեալն իցէ, յղեսցին, և զոր ինչ ոչ, վաճառեսցեն։ և զմնացեալսն ի խնդրելոցն նոր առցեն և յղեսցին։ Իսկ զեկեղեցական զգեստք՝ անօթք, և այլ ոսկեղէնք և արծաթեղէնք, մատանիք, և այլ մանր և պիտանք քսուրք որքան և լինիցին, և գրեանքն և թուղթքն բովանդակ, գրեաց հարկիւ, զի զամենայն յղեսցեն։ Այսքան վասն վէճեղինաց։ Իսկ վասն նոցա դրամոց գրեաց թէ՝ մինչև ցայժմ ձեռամբ քո հասեալ է մեզ ի լուսահոգւոյն կողմանէ, այսքան դրամ (Ջ)։ (որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺԲ ամին՝ ի նոյեմբերի ԺԲ։ (Ա) և ի պատմութեան ՌՄԺԹ ամին, և փետրվարի Գ։ (Դ) և յետոյ հասանիլն նոցին մեզ յիշեցաւ ևս յանցեալ ամին, ի յօգոստոսի ԺԷ,) նաև առէ ի Կալկաթու Պետրոս աղայի յղեալն (Ա) (որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺԷ երրորդ ամին, և յապրիլի ԻԵ) Եւ Բաղդատու նուիրակութեան ձեռամբ Ալէքսան աղային, (Բ) (որպէս ասացեալ է յանցեալ ամին, և ի յունվարի ԻՋ) Այսքէն առէ նաղտ հասեալ են մեզ։ Իսկ և՝ այն զոր նոր էք փոլիս արարեալ ի Պօլիս, որ Ասլան աղայն տացէ Զաքարիա վարդապետին, (Ե) (որպէս ասացաւ ի վերն և ի յունվարի Ժ,) ահա Ասլան աղայն յանձն է առեալ առէ զի տացէ։ Արդ՝ բայց յայսքանեաց առէ՝ թէ այլ ինչ կումեալ առ քեզ, թէ ի լուսահոգւոյ նուիրակէն և թէ յայլոց որպէս գրեալ էիր միստմիոջէ, ես ոչ գիտեմ։ Սակայն՝ միամիտ եմ առէ յամենայնի և հաւատարիմ սիրելոյդ իմոյ։ Բայց ի կողմանէ Զաքիկեանց Միքայէլ աղայի որդի Գրիգոր աղային փոքր ինչ տարակուսեցայ առէ։ Զի նա լուսահոգի Յովսէփ վարդապետին վասն տպագրատան հաստատութեան այսքան զրամոյ (Թ) թէմէսուկ է տուեալ՝ և մասն ինչ ևս խոստացեալ է տալ, (Գ) Եւ երկուքն ևս մեզ գրեալ էին, և մեք շնորհակալութիւն գրեցաք Գրիգոր աղային, և միամտեցուցաք թէ՝ զտպագրատունն հաստատեսցաք, և զյիշատակն քո գրեցաք։ (որպէս ասացաւ այս յանցեալ թուոջն, և ի յունվարի ԻԶ։) Արդ այժմ դուք գրէք առէ թէ՝ այսքան էր գրեալ Գրիգորն մահտեսի Յարութիւնին, (Գ) թէ տուր Քանգի՝ վերոյիշեալ յանցեալ թուոջն և ի յունվարի ամսոջն գրեցեալ թուղթքն մինչ հասեալ էին առ Միքայէլ աղայն, Յովսէփ վարդապետն չէր լեալ կենդանի, և մահտեսի Յարութիւն աղայն յայտնեալ էր Միքայէլին, թէ Գրիգոր աղայն ինձ այսպէս է գրեալ։ Եւ ասացեալ էր Միքայէլ աղային բանալ զգրեանս սրբազան վեհին որ առ Յովսէփ վարդապետն, զի տեսցեն թէ զինչ է գրեալ այնր աղագաւ։ Եւ նա բացեալ էր և տեսեալ թէ՝ գրեալ է սրբազան վեհն Յովսէփ վարդապետին, թէ զայդ դրամդ առ Գրիգոր աղայէն, զի զտպագրատուն հաստատեսցի։ Զոր ցուցեալ էր մահտեսի Յարութիւն աղային, և նա հաւանեալ էր, և զվերոյիշեցեալ դրամն տուեալ։ (Գ) Արդ ես զորպէսն դորա չգիտացի առէ՝ վասն Էր այդքան միայն է տուեալ, որ այնքան էր խոստացեալ, (որպէս ի վերոյ ցուցաւ, (Թ) (Գ) Եւ չգիտացի առէ թէ՝ այդ տուեալդ (Գ) ևս ի մէջ այն դրամոյն զոր փօլիս էք արարեալ ի մեծն Պօլիս՝ (Ե) թէ ոչ։ Զայսմանէ գրեսցես մեզ առէ։ Եւ այլ դրամից կողմանէ ձեզ հաւատացեալ եմ առէ որպէս և գրեցի։ Որքան և լինիցի, մահտեսի Յարութիւն աղային ձեռօքն ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն մեր հասուսջիք։ Եւ զի նոքա գրէին՝ զի սրբազան վեհն առտի մարդ յղեսցէ վասն ընչիցն բերելոյ, և սրբազան վեհն չկամեցաւ, (որպէս ի վերոյ ասացաւ) վասնորոյ գրեաց՝ զի կամ ի վերայ Շիրազու և Սպահանու յղեսցեն, (որպէս իւրեանք ևս էին գրեալ,) ի ձեռըն հաւատարիմ եկողաց։ Եւ Բ թուղթ ևս գրեաց Ջուղայու Քեալանթար Սարգիս աղային՝ և առ սրբոյ Աթոռոյս նուիրակ Ստեփաննոս վարդապետն, այսր աղագաւ, (որպէս գրելոց եմ ի ներքոյ) և յղեաց առ Միքայէլ աղայն զի թէ ի վերայ Շիրազու յղելոց լինիցին, զայն թուղթսն ևս յղեսցեն առ նոսա, զի նոքա ևս որպէս գրեալ է այնպէս արասցեն։ Իսկ թէ ի վերայ Շիրազու պատշաճ չտեսցեն յղել, ապա ի Բաղդատ յղեսցեն, զի անտի տէր Մարկոսն և այլքն որք լինին ի ներքոյ՝ յղեսցեն ի Թարվէզ։ Եւ զի՝ լուսահոգի Յովսէփ

վարդապետն զիրէց մի էր ձեռնադրեալ Գէորգ անուամբ՝ որ էր Բալաշխեցի, և քան զինքն յառաջ փոքր ինչ քարոզ լեալ էր ի Բասրա։ Որոյ աղագաւ այժմ գրէր Միքայէլ աղային թէ՝ իւր բերեալ ընչիւքն յառաջագոյն լցելոց կամ Վասնորոյ՝ և սրբազան վեհն գրեաց զի թէ նա տակաւին անդ իցէ, ի ձեռն նորա լցեցէք զբոլոր ինչսն։ Ապա թէ ոչ, այլ հաւատարմաւ լցեցէք. այնպէս, որ իբրև իւր անուամբն բերցէ։ Եւ Գ զաւթար չինեցէք ասէ, մինն յառաջագոյն առ մեզ լցեցէք, մինն ընդ քարոզին, և մինն առ ձեզ պահեցէք։ Եւ զի ի մէջ քարոզն տիպար՝ զաֆալ՝ պիլօրեղէնք՝ արկեղք, և այլ ալապիոի իրք զոլին, գրեաց թէ չեն մեզ պիտոյ։ Բայց ի Սուրաթին՝ Բանաքեոցի պարոն Նիկողայոսն (որ յիշեցեալ ի պատմութեան ՌՄԺ երորդ ամին և ի . . .) բրինձ՝ և Ա զապտլ ամղէածառ էր լցեալ վասըն սրբազան վեհին, գրեաց՝ զի զայնս լցեսցէ։ Եւ զի՝ գրէր թէ՝ ի մէջ քարոզն Ա խաք խաւալ զոլ։ Գրեաց թէ զորպէսն զորին չգիտեմ Եթէ գիտես զի լալս երկոտղս պիտանի լինի, կամ մեզ վակելելոյ և կամ այլոց տալոյ՝ Ի կամ Լ թան լցեա։ Եւ մնացեալն վաճառեա։ Եւ թէ ոչ. զամէնն վաճառեա։ Գրեաց ևս զի թէ քան զիւր գրեալն՝ (որ զաւթար արարեալ ի թղթոջս եղ և լցեալ առ նա, որպէս ասացաւ ի վերոյ,) այլ ևս աւելի չինեղէն և կամ այլ ինչ քաւր լինիցի մեզ վակելելոյ և կամ այլոց տալոյ՝ լցեսցէ։ Եւ զայս ամենայն գրեաց ընդ մահտեսի Յարութիւն աղային ի միասին հոգալ։ Եւ զբանս հեսապից՝ պարզապէս և լաւ զրով գրել։ Իսկ պարոն Աստուածատուր Աղային՝ զհանդուցեալ Շահվէրտու գրամն (Ի) տուեալ էր սմա ըստ հրամանի սրբազան վեհին՝ (որ գրեցաւ առ նա ի ՌՄԺԸ թուոջն և ի նոյեմբերի ԺԲ։) Վասնորոյ գրեաց սմա՝ թէ շնորհակալութեամբ ողջոյն տուր նմա զմէնջ, զի ոչ այլ իշխանաց կարացաք այժմ գրել թուղթ։ Յետ քանի աւուրց ընդ նոր նուիրակին գրելոց եմ։ Զի կամէր նուիրակ լինել ի Հնդիկս։

Թուղթ մի ևս առ մահտեսի Յարութիւն աղային որ ի վերոյ յիշեցաւ։ Յետ կսկծանացն սակս Յովսէփ վարդապետին, և շնորհակալութեան որ առ ինքն սակս հարազատութեան, գրեաց զյատուկ շնորհակալութիւն վասն վելիշեալ փոլիցայլին, (Ե) զոր արարեալ էր ի վերայ Աոլան աղային՝ տալ անտի ի Պոլիս նուիրակին Մարոյ Զաքարիա վարդապետին։ Իսկ վասն քարոզն, զոր ինչ գրեաց Միքայէլ աղային, սմա ևս ի կարճոյ գրեաց այնպէս առնել ընդ նմա։ Եւ չատ խնդիր զի որպէս թէ իւրն համարելով՝ հաւատարիմ որդէս հոգասցէ, և լցեսցէ ի սուրբ Աթոռս։ Եւ զբան Զաքիկեանց Միքայէլ աղային, սմա ևս գրեաց, թէ թէմեսուկ է տուեալ մեր նուիրակին, և նա և յառաջ այսքան տալ խոստացեալ՝ (ԺԲ) (որպէս ի վերոյ ևս ասացաւ.) և մեք շնորհակալութիւն գրեցաք, և նոր տպեալ գիրք ևս լցեցաք իւրեան։ (որպէս ասացեալ է յանցեալ ամին, և ի յունուարի ԻԶ։) Արդ այժմ այդ քան է տուեալ՝ (Կ) չիմացալ զդատճառն։ Եւ գրեաց զի թէ զայս բանս, և թէ զայլ մնացեալ հիւապոն յուսահոգւոյն՝ ընդ Միքայէլ աղային հոգասցեն. զի որովհետև յուսահոգին ոչ եկն աստ, չատ բան մեզ մութն մնաց։ Եւ զայլ երկար բանսն գրեաց ի թղթոյ Միքայէլ աղային իմանալ։ Եւ որդւոյ նորին Ստեփաննոս Աղազատէին ևս ողջոյն գրեաց։

Փոսուլայ ևս գրեաց առ սա վասն առանձին բանից ինչ իւր ձեռամբն։

Թուղթ ևս առ Ջուղայու Քեալանթար Սարգիս աղային գրեաց ի Շիրազ։ (որպէս խոստացաւ ի թղթոջ Միքայէլ աղային.) ծանուցանելով զմահ յուսահոգի Յովսէփ վարդապետին հանդերձ այլ պարագայիւքն որպէս ի վերոյ գրեցաւ։ Եւ խնդիր՝ թէ գրեցի ի Բասրայ Միքայէլ և Յարութիւն աղային՝ զի զարգիւնս և զինչս յուսահոգւոյն եթէ պատշաճ տեսցեն, լցեսցեն յայգր առ քեզ, զի դու ևս ի Ջուղայ լցեսցես առ մեր նուիրակ Ստեփաննոս վարդապետն, զի նա աստ լցեսցէ։ Ուրեմն, եթէ առ ձեզ լցեսցեն, ամբողջ կնքովքըն իւրեանց և ի ձեռն հաւատարիմ մարդոյ լցեա ի Ջուղայ առ մեր նուիրակն, զի նա աստ հասուսցէ։

Թուղթ մի ևս առ Ջուղայու նուիրակ Ստեփաննոս վարդապետն գրեաց (որ ի հոկտեմբերի Ժ յիշեցաւ.) ծանուցանելով զմահ յուսահոգի Յովսէփ վարդապետին, և թէ զինչ գրեաց առ Միքայէլ և Յարութիւն աղայսն, և առ Սարգիս Քալանթարն։ Եւ պատուէր՝ զի թէ զինչսն Յովսէփ վարդապետին ի Բասրայու առ Քեալանթարն լցեսցեն ի Շիրազ, և ինքն լցեսցէ ի Ջուղայ, ինքն ևս չուառվ և

հաւատարիմ մարդով և ամբողջ կնքով յղեսցէ ի Թաւրիզ առ Համատանցի Յովաննէս աղալն, զի նա ի սուրբ Աթոռս հասուսցէ։ Իսկ եթէ ճանապարհքն անյաջող լիցին, և հաւատարիմ եկող չլինիցի, պահեսցէ առ ինքն, և ի գալն ի սուրբ Աթոռս բերցէ ընդ իւր։ Զայսոսիկ յղեաց առ Միքայէլ աղալն ի Բասրա, որպէս ի նորին թղթոջն ասացաւ։

Թուղթ ես առ Պետրոս աղալն գրեաց ի Բաղդատ ի պատասխանի թղթոյն (որ ի վերոյ յիշեցաւ,) որ էր ուղարկօղն փակեկին։ Ծանուցանելով զոր ինչ գրեաց առ Միքայէլ և Յարութիւն աղալսն։ Եւ պատուէր՝ զի յորժամ յղեսցեն նոքա զինչսն անդ ի Բաղդատ առ ինքն, ինքն ես ընդ Տէր Մարկոսին և Մարգար և Ալէքսան աղալիցն հոգացեալ, յղեսցէ ի Թաւրէզ առ վերոյիշեցեալ Համադանցի Յովհաննէս աղալն (որոյ տունն ի Բաղդատ էր,) զի նա ես աստ յղեսցէ, սմա յոյժ հարկիւ պատուիրեաց, զի հաւատարիմ եկողաց ձեռօք յղեսցէ, և զքիրայն և զխմրուկն ես հոգասցէ։ Եւ այլ առ այս բանք։ Թուղթ մի ես առ սրբոյ Աթոռոյս վէքիլ Տէր Մարկոսն գրեաց ի Բաղդատ, (որ ի վերոյ յիշեցաւ.) վասն վերոյիշեալ բանին դարձեալ և ըստ նոյն ոճին, և զնոյն պատուէրն և առ սա գրեաց յաճախ, զի ընդ վերոյիշեալ արանցն մուղայէթ լեալ՝ յղեսցեն ի Թաւրէզ՝ որպէս ի վերոյ գրեցաւ։ Եւ զի առ սա ես էր եղեալ լուսահոգին զինչս ամանաթ, և սա այժմ գրեալ էր սրբազան վեհին, և զդաւթարն ես յղեալ, թէ այս ինչ և այն ինչ է։ Գրեաց զի զայն ես ընդ ի Բասրայու եկեալ ընչիցն յղեսցէ ի Թաւրէզ առ Յովաննէս աղալն։ Եւ զի զզգենլի հանդերձք ես գրէր, թէ գոյ ի մէջ իրաց լուսահոգւոյն, վասն նորոյ գրեաց, զի զզգենլիսն այնք որք իւրավայելք իցեն, ինքն վայելեսցէ, և զբօղչայով քսուրսն զոր գրէր յանուանէ՝ զայնս յղեսցէ։ Թուղթ մի ես առ սուրբ Աթոռոյս զանձապետ Ալէքսան աղալն գրեաց (որ յանցեալ ամին և ի յունվարի ԻԶ յիշեցաւ,) ըստ նոյն վերոգրեցեալ ոճիցն, և զնոյն պատուէրսն և առ սա՝ որք վասն ընչից Յովսէփ վարդապետին։ Այլ և ծանոյց սմա զառնուլն Յարութիւն աղալին ի Միքայէլ աղայէն զղրամ (Ն) ի յարդեանց Յովսէփ վարդապետին, և փօլիցայ առնելն ի Պօլիս ի վերայ Ասլան աղալին՝ (որ էր սորին եղբայր,) զի անդ տայցէ սուրբ Աթոռոյս նուիրակ Զաքարիա վարդապետին, և նորա յանձն առնուլն ի տալ, (որպէս ի թղթոջ Յարութիւն և Միքայէլ աղալիցն ի վերոյ գրեցաւ.) Եւ առ սա շնորհակալութիւն յոլով սմա, որովհետև Ասլանն սորին եղբայր էր։ Եւ այլ այսոսիկ բանք։

Թուղթ մի ես առ Մարգարէ աղալն գրեաց ի Բաղդատ, որ էր վէքիլ Ինկլիզի Պալիօզին, և տեղւոյ զխմրուկն, և ամենայն վերահասու առ և տրոցն ի ձեռն սորա էին։ Վասն ընչից Յովսէփ վարդապետին, և նորին ի Թաւրէզ յղեցմանն, և քիրային և զխմրուկին, դարձեալ նոյն պատուէրքն՝ որք ի վերոյ գրեալ թուղթսն գրեցան հանդերձ բազում օրհնութեամբ։ Թուղթ մի ես առ Համադանցի Յովհաննէս աղալն գրեաց ի Թաւրէզ, (որ ի վերոյ յիշեցաւ՝ ծանուցանելով զմահ Յովսէփայ վարդապետին, և զմիտս ամենայն թղթոցն, զորս գրեաց ի Բասրա, ի Բաղդատ, և ի Շիրազ, և ի Ջուղայ՝ վասն ընչից և կալից Յովսէփ վարդապետին։ Եւ պատուէր՝ զի թէ ի վերայ Բաղդատու և թէ ի վերայ Շիրազու, յորժամ հասցին առ ինքն ինչք լուսահոգի Յովսէփ վարդապետն, ինքն ես նոյն ամբողջ կնքովն և ի ձեռն հաւատարիմ եկողաց՝ յղեսցէ ի Բայազիտ առ Տէր Վահանն՝ զի նա աստ հասցէ։ Ապա թէ ճանապարհքն անձեռնտու լինիցին յայնժամ, և հաւատարիմ եկօղ չլինիցի, պահեսցէ առ ինքն, և ծանուսցէ իւրեան։ Եւ այլ առ այս պատուէրք ըստ սմին։

Թուղթ մի ես առ սրբոյ Աթոռոյս զանձապետ Տէր Փիլիպպոսն գրեաց ի Թաւրէզ, (որ ի պատմութեան ՌՄԺ երորդ ամին և վասն ընչից Յովսէփ վարդապետին՝ նոյն պատուէր, որ ինչ առ Յովհաննէս աղալն գրեաց ի վերոյ։

Թուղթ մի ես առ Գիլանու նուիրակ և Առաջնորդ Աւետիս վարդապետն գրեաց (որ յիշեցաւ ի հոկտեմբերի Ժ.) մեղադրութիւն վասն թուղթ չգրելոյն։ Եւ զի ի Բասրայու թուղթ էր եկեալ սմա, եղեալ ի թղթոջս առ սա յղեաց։ Եւ զի լուաւ թէ անդ Մօսկովու սահաթ ծախեն աժանագին՝ Ա թումանով կամ ԺԲՌ դիանով, գրեաց՝ զի թէ գեղեցկատես և լաւն գտանիցի, նոյն գնովն, Ժ հատ առեալ յղեսցէ։ Ա թումանով, կամ ԺԲՌ ով, կամ թէ ԺԳՌ ով և ոչ աւելեօք։ Զայս յղեաց ի Թաւրէզ առ վերոյիշեալ Տէր Փիլիպպոսն, զի առ նա յղեսցէ։

Թուղթ ետ առ Ջուղայեցի Տէր Յովհաննէսն, և նորին որդի տիրացու Ստեփաննոսն գրեաց ի Վանս (Առ որս գրեցաւ թուղթ վասըն մահուան Յովսէփայ վարդապետին, յամսոյս ԺԹ.) ծանուցանելով զգալուստ փայեկին վերոյիշեցելոյ՝ որ ի Բասրայու և ի Բաղդատու զթուղթս էր բերեալ վասն մահուան Յովսէփ վարդապետին։ Եւ զմիւս գրոցն, որք խնդրէին զմարդ յղել վասն ընչիցն։ Եւ զմեր առ նոսա գրեալսն, որ գրեաց կամ ի վերայ Շիրազու և կամ ի վերայ Բաղտատու յղել ի Թարվէզ՝ (որպէս ի վերոյ լիապէս գրեցաւ։) Եւ զի նոյն փայակն Ա պահտրանով թուղթ էր բերեալ՝ որ էր ի վերայ սորա, եղեալ ի թղթոյս յղեաց առ սա, փութացեալ ես եդ ի թղթոջ սորին վասն առանձին յանից ինչ, իւրով ձեռամբն գրեցեալ։

Թուղթ ետ առ Աբրահամ վարդապետն գրեաց որ վասն Երզնկացի բանադրեալ Կարապետ վարդապետին (որ յիշեցուցեալ է ի դեկտեմբերի ԻՆ։) հանդերձ Անապատի հարքն և միաբանիւքն իւրիջալ էր գրեալ՝ զի արձակեսցէ։ Զի Անապատաւորքն ծանուցեալ զբանադրեալ զայն նորին՝ խղճահարէին։ Եւ ինքն Կարապետ վարդապետն ես մեղայական գիր էր գրեալ առ սրբազան վեհն իբրու, այլ չէր ստոյգ մեղայ, զի ի յանցանացն և ոչ զմինն առնոյր յանձն։ Ուստի սրբազան վեհն գրեաց զայս Աբրահամ վարդապետին թէ՝ թէպէտ դուք իւրիջալ էիք գրեալ, և ինքն ես որպէս թէ մեղայական թուղթ էր գրեալ՝ բայց չէր այն ստոյգ զղջումն և մեղայ։ Զի զԲ գլխաւոր յանցանսն զոնեայ՝ ոչ էր առեալ յանձն, որք առեալ յայտնիք են։ Որոց մինն է զմեզ անարգելն հրապարակաւ, և միւսն այն, որ զկնատէր ժամկոչն Աբեղայ է ձեռնադրեալ, որ այժմ եպիսկոպոս ես է, և տեղին յայտնի է։ Բայց սակայն վասն խաթեր և իւրիջալից քոց և միաբանից Անապատից՝ ահա տամք զմա հրաման պաշտել զկարգ իւր առանց խղճի։ Իւրեանց յատուկ ձեռնհաս չեղաք գրել զթուղթս՝ այս իւրեանց բաւական է, սա՝ զի զկարգն իւր պաշտեսցէ, միամտեցո զինքն և զմիաբանսն, զի մի խղճահարեսցին վասն զորա։ Եւ Անապատի Առաջնորդ Յակոբ վարդապետն ես էր վասն նորա յատուկ իւրիջալ գրեալ՝ գրեաց զնա ես միամիտ առնել, զի նմա ես չկարացաք աստ յատուկ գիր գրել վասն անձեռնհասութեան։ Եւ զհին և զանծանօթ գըրեանս էր գաեալ յայն կողմունսն՝ ի մեր՝ վարդապետաց արարեալ և տակաւին ի նոյն հետաքրքրէր, զոր գրեալ էր սրբազան վեհին. և սրբազան վեհն գրեաց, զի որպէս կամի հետաքրքիր լիցի այնպիսեաց ըստ ձեռնհասութեանն։

Թուղթ մի ես առ Վանայ առաջնորդ և սրբոյ Աթոռոյս նուիրակ Պօղոսասար վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն, զի նա ես էր իւրիջալ գրեալ վասն Կարապետ վարդապետին։ Ուստի՝ զոր ինչ գրեաց Աբրահամ վարդապետին վասն նորա, սմա ծանոյց լիապէս, թէ ահա վասն խաթեր ձերոյ այդպէս արարաք։ Եւ որպէս ի սոյն փետրվար ամսոյս ԺԼ, այժմ ես գրեաց առ սա զհարկ վասն Խօրվիրապայ Առաջնորդ Աւետիս վարդապետին, զի որով կերպիւ և իցէ, յղեսցէ զնա աստ։ Զնմանէ գրեալ էր սա այժմ, թէ աստ է, և յանուն Վանիցն ժողովս առնէ։ Այլ գըրեաց յղել, և ոչ զանից առնել։ Եւ զթուղթս Աբրահամ վարդապետին և Տէր Յովհաննէսին յղեաց առ սա, տալ նոցա։ Որք յղեցան առ նա ի ձեռն իւր յղել փայեկին։

Միամտական զապղ գրեաց սրբազան վեհն առ Բաղդատոյ նուիրակ, Ջուղայեցի Գալուստ վարդապետն, (որ յիշեցեալ է ի հոկտեմբերի Ժ.) վասն ԻԶ ց ԱՌ և Ժ չահի նուիրակին արդեանցն, զորս յղեալ էր աստ, ձեռամբ Երուսաղէմայ ի Հաշտարխան գնացող նուիրակի սպասաւոր տիրացու Պետրոսին։ փետ. ԻԹ։

ՃՁԴ.

Վասն անցիցն նուիրակին Թօխաթու, զոր իբրև զչաշուշ էին ըմբռնեալ ի յԱրապկեր հանդերձ այլ ոմամբք։

Յետ յղելոյն սրբազան վեհին զՄիրզայն մեր ի Կարս առ սարասկեարն վասն Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետի և ընդ եղեալ իշխանաց ըմբռնեցմանն, (որպէս առաջուս յամսոյս ԺԼ։) և զԿարնոյ փայակն որ վասն այոր եկեալ էր, դարձուցանելոյն յետս ի Կարին։ եկն մահսար մի ի յԱրապկերու ժո-

զովրգենէն, ընդ որոց և Թուղթ յԱռաջնորդէ նոցին և մեր նուիրակին որք լիապէս գրեալ էին զնոյն անցսն։ Զորս մահտեսի Փիլիպպոսն ի Կարնոյ յղեալ էր աստ ընդ եկողաց, և ինքն ես գրեալ վասն այսր զԹուղԹ։ Եւ ի հասանելն աստ այն մահսարին, եկն և Միրզայն մեր ի Կարսայ, և ահա Թէ զինչ էր հոգացեալ, և սարասկեարն զի՞նչ էր արարեալ. գրեցից։ Զի նախ քան զգնալն Միրզային անդ, հասեալ էր առ սարասկեարն համբաւն այն։ Եւ մահտեսի Յօնանն մեր՝ որ ընդ չորից կարգաւորացն Ախլցխայու գնաց ի Կարս՝ (որպէս ասացաւ ի յեյն յունվարի.) չգնացեալ տակաւին յԱխլցխայ՝ անդ գիպեալ էր։ Որում հարցեալ էր փաշայն զորպէսն նուիրակին, և նա ծանուցեալ էր։ Եւ փաշայն մեղադիր էր լեալ սրբազան վեհին, Թէ յորժամ առաքէ զնուիրակս յայն կողմունսն, ընդէր ոչ յղէ առ մեզ զի բույրուլԹու [20]) տացուք նմա, որ այսպէս փո՞րձուԹեան չհանդիպին։ Եւ նա ասացեալ էր Թէ՝ որովհետև չէ սովորուԹիւն, վասն այն ոչ յղէ աստ, զի Թագաւորի բէրաԹն զոր տուեալ է իւրեան զնորին սուրաԹն տայ նուիրակայն, որք գնացեալ այնու շրջագային յայն երկիրսն։ Եւ փաշայն պատասխանեալ էր Թէ՝ Թէպէտ չէ լեալ սովորուԹիւն, բայց այժմ այսպէս պահանջէ ժամանակն, Թող մատն մի բույրուլԹու ես ի մէնջ լիցի ի ձեռն նուիրակացն, զի այդպէս փորձուԹեանց չհանդիպին։ Զայս այսպէս էր ասացեալ։ Եւ ապա խոստացեալ էր վասն խաԹեր սրբազան վեհին գրել Մատէն Աղասուն, զի Թոյլ տացէ նուիրակին։ Եւ Յօնանն գնացեալ էր յԱխլցխայ։ Եւ ապա մեր Միրզայն ես է գնացեալ ի Կարս, (որպէս ի վերոյ ասացաւ,) Եւ ի տեսանելն փաշային զԹուղԹ սրբազան վեհին, և լիմանալն զխնդիրն, իսկոյն գրեալ էր զԹուղԹ առ Մատէնի էմին Աղասին, Թողուլ զնուիրակն մեր՝ և զորս ընդ նմա, և զփարայ մի դրամ ոչ առնուլ։ Եւ տուեալ զԹուղԹն Բայրախտարի միոյ՝ յղեալ էր շուտով։ Եւ ապա զպատասխանի Թղթոյ սրբազան վեհին գրեալ էր փաշայն, և ծանուցեալ զվերոյ ասացեալն և միամիտ արարեալ։ Եւ զնոյնանման բույրուԹլու մի ես գրեալ նորապէս ի վերայ նոյն էմին Աղասուն, և յղեալ առ սրբազան վեհն, զի տեսեալ միամտեսցի, և յղեսցէ զայն ևս անդ՝ զի Թէ տակաւին չիցէ Թոյլատրեալ զնոսա Մատէն Աղասին, Թոյլ տացէ։ Այս այսպէս էր լեալ։ Վասնորոյ և սրբազան վեհն զԹուղԹ մի գրեաց առ Արապկերցիսն ի պատասխանի մահսարին նոցին (որ ի վերոյ լիշեցաւ,) որք բազմաւ աղաչանօք խնդրեալ էին ի սրբազան վեհէն Թէ վատ է անունս այս զոր ի վերայ ազգին մերոյ կայացուցին, հոգա այսր աղագաւ, և զհնար սորին գտա, զի մի կայասցի ի վերայ մեր հասակավնաս անունս այս։ Ուստի՝ և սրբազան վեհն ծանոյց նոցա զոր ինչ արարն, և որպէս եղև կատարումն բանին, (որպէս գրեցաւ ի վերոյ երկարապէս,) նաև զիրս կրկին բույրուլԹուիցն ես ծանոյց նոցա, (որք ի վերոյ լիշեցան,) և զառ ինքն յղեալն՝ առ նուիրակն յղեաց, և գրեաց սոցա տեսանել զայն և իմանալ զգրեալսն ի նմա, յորում գրէր փաշայն առ էմին Աղասին զփարայ մի ոչ առնուլ։ Բայց նոքա շուտափոյԹ լեալ անդ՝ ԱՌ ոսկի էին խոստացեալ անդ էմինին, վասն սարասկեարին, և զայն Գ բաժին էին արարեալ, զի մինն Արապկերցիք տացեն, մինն Ակնցիք, (որովհետև նոքա ևս էին ընդ սոսա զրպարտեցեալ այսու զրպարտուԹեամբ։) և մինն նուիրակն մեր։ Եւ գրեալ էին առ սրբազան վեհն զխնդիր, զի աստ զայն խոստացեալն ծածկապէս տացէ սարասկեարին, զի մի անդ ինքեանք յայտնապէս տալով զայն՝ իսպառ կայացուսցեն ի վերայ ինքեանց զայն վատ անունն, և յետոյ ինքեանք մեզ հասուսցեն։ Եւ սրբազան վեհն գրեաց Թէ՝ դաք կարի շուտափոյԹ էք եղեալ, և զայդ ընդ վայր խոստացեալ։ ԵԹէ զայս մեզ գրելոց էիք, պարտ էիք մեզ Թողուլ զի մեք հոգայաք աստ։ Բայց արդ՝ ահա դուք զայդ ի բերան էք տուեալ, արդ Թէ առնու և Թէ ոչ, ես ոչ գիտեմ։ Բայց որ ինչ ինձ գրեալն է, (որպէս ահա ի մէջ բույրուլԹուիդ այդմիկ գրեալ է,) գրէ Թէ՝ վասն խաԹեր քոյ գրեալ եմ որ փարայ մի չառնուն։ Արդ նա այսպէս մեզ բեռն դնէ, և մեք մեզէն՝ զմարդավարուԹիւն ինչ առնել պարտիմք ի հարկէ՝ յորժամ այսր աղագաւ զշնորհակալուԹիւնս գրեսցուք առ նա։ Եւ մարդ ես մինչ յղեցաք ի Կարս, Թէ ի մէնջ և Թէ ի խանէն, գիտէք ահա Թէ որքան լինին ծախք։ Մահտեսի Փիլիպպոսն ես ահա գրէ մեզ ի Կարնոյ, (զոր այժմ էր գրեալ,) Թէ գիւմրիւկչին ԲԾԼԵ ղուռուշ դրամ էառ յինէն,

որ մէկ Թաթար էր եկեալ ի սարասկեարէն առ սա վասն այս բանիս, Ի զուռուշն նմա եա, և ԲՃՀՍ զռուշն ես բոյրուԹլու բերողին պարտի տալ՝ զոր ի հարկէ ձեզ ես է գրեալ առ մահտեսի Փիլիպպոսն։ Արդ դուք այնպէս գիտէք առէ Թէ՝ միայն տեղ ձեր խոստացեալ ԱՌ ոսկին է, որ Գ բաժին էք արարեալ, և Ա բաժինն արկեալ ի վերայ նուիրակին մերոյ։ Արդ՝ ի վերայ ծախուցն վերոյ յիշեցելոց զորս մեք աստ արարաք, և առնելոց ես եմք, եԹէ զայդ ես ի նուիրակէն մերմէ առնուք. զայն ես ի խղճմտանս ձեր Թողում։ Եւ այլ երկար բանք առ այսոսիկ։

Թուղթ մի ես առ. սրբոյ ԱԹոռոյս նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց (որ յամսոյս ԺԷ և ի յունվարի ԻԹ յիշեցեալ է,) ի պատասխանի ԹղԹոյն։ Եւ զվերոյիշեալ պատմուԹիւնսն, և զոր ինչ գրեաց առ Արապկերցիսն, զամենայն լիապէս ծանոյց նմա։ Եւ վասն ԱՌ ոսկւոյ Գ բաժին առնելոյն գրեաց Թէ՝ եԹէ կամիցին առնուլ ի քէն, ինքեանք ողջ լիցին, իւրեանց տուեալն է, Թող վերստին յետս առցեն։ Եւ զոր ինչ ինքն առս վասն բանիս տալմիկ ծախեաց և ծախելոց էր, (ոյպէս ի վերոյ ասացաւ,) սմա ծանոյց, զի ընդ առաջնորդ Պետրոս վարդապետին խօսեսցին, և ծանուսցեն հասարակին, որպէս ինքն ես գրեաց և որպէս և կամիցին և արասցեն, գրեալ ծանուսցէ ինքեան։ Զբոյրուլթուն ես առ սա յղեաց՝ (որպէս ասացաւ ի վերոյ,) զի Թէ պիտոյասցի, հանցէ, ապա Թէ ոչ, պահեսցէ առ ինքն, զի Թերեւս յայլ ուրեք պիտոյասցի։ Եւ զի՝ զրարանսուԹիւն այն ի բերանոյ սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին էր առաւել կալացեալ ի վերայ իւր. քանզի պինդ ժողովարարն այն յորմէ ելեալ էր զրաբանուԹիւնն, (որպէս ասացաւ յամսոյս ԺԷ,) ասացեալ էր Թէ՝ Թուղթ բերի, և ետու նուիրակի սպասաւոր Աբեղային։ Եւ ի հարցանելն զնա բռնաւորին Արապկերու Թէ այս յիրաւի է զոր առէ, և ի խոշտանգելն զնա դանիւ փոքր ինչ, նա իսկոյն յանձն առեալ էր ըզրաբանուԹիւնն, Թէ յիրաւի է, ինձ Թուղթ ետ, և ես ետու մեծաւորին իմոյ։ Այս և բըռնաւորն զՊետրոս վարդապետն եղեալ էր ի բանտի, (որպէս ասացեալ է յամսոյս ԺԷ,) Վասնորոյ՝ գրեաց սմա սրբազան վեհն զի կերպիւ ինչ յղեսցէ զՄկրտիչ վարդապետն յետս ասա, զի մի ի բերանոյ նորին այլ ես կրեսցէ զվտանգ ինչ։

Թուղթ մի ես առ. Արապկերու Առաջնորդ Պետրոս վարդապետն գրեաց (որ ի վերդ յիշեցաւ,) ի պատասխանի ԹղԹոյն, և զամենայն վերոյգրեալ պատմուԹիւնսն, և զոր ինչ գրեաց հասարակին, և մեր նուիրակին Թէ Թէ վասն անցիցն, և Թէ ԱՌ ոսկւոյն, ի կարճոյ գրեաց սմա, և պատուիրեաց ընդ նուիրակին խօսել այսր ադագաւ, և զպատշաճն հոգալ։ Իբրու ի վերայ սորա արկանելով ըզբանն, այնպէս հոգալ՝ զի մի մեք աստ այսքան ծախս արարեալ (որպէս ի վերոյ գրեցաւ,) անդ ես նուիրակն տացէ։ Եւ զի գրէր սա Թէ՝ բոյրուլԹուն այնպէս գրեցո սարասկեարին, Թէ Հայոց տղղին մի գիպիք բնաւ։ Ուստի գրեաց նմա առ. այս Թէ՝ մեք Թէպէտ քան զայդ լաւագոյնս էաք գրեալ սարասկեարին և իւրայ'ոցն, բայց գրեն մեզ Թէ՝ խալիֆայ, մեք այժմ յԱզգէն մերմէ ես ունիմք զկարծիս, վասն ազգին Հայոց որպէս գրեցուք Թէ մի գիպիք։ Եւ այլ առ. այսոսիկ բանք։ Թուղթ ես առ. Մուրտիկզատէ մահտեսի Փիլիպպոսն գրեաց (որ ի վերդ և յամսոյս ԺԸ յիշեցաւ,) ի պատասխանի ԹըղԹոյն։ Ծանուցանելով նմա զամենայն անցսն որք ի վերոյ գրեցան, և զոր ինչ գրեաց առ. Արապկերցիսն և առ. Առաջնորդն նոցին և առ. մեր նուիրակն։ Եւ զվերոյիշեցեալ բոյրուլԹուն ես յղեաց առ. սա, զի տեսցէ Թէ զինչ է ի նմա գրեալ։ Եւ վասն բոյրուլԹուին ըզնուիրակի Թուղթն ես բաց յղեաց առ. սա, զի յետ տեսանելոյն զբոյրուլԹուն, դիցէ ի մէջ ԹղԹոյն, և կնքեալ յղեսցէ առ. նա։ Զըղբեանսն Արապկերցոց ես բաց եդ ի մէջ ԹըղԹոյն, զի կնքեալ յղեսցէ առ. նոսա։ Եւ Թէ առաջին յղեալ բոյրուլԹուն՝ (զոր սարասկեարն իւր մարդովն էր յղեալ,) հասեալ իցէ անդ, և զինչ է եղեալ, կամ յետ ընկալոյ այս ԹղԹոյս զինչ լինիցի, ծանուսցէ ինքեան։ Իսկ և Արապկերցի Մարտիրոսն՝ և ուղուն Պետրոսն՝ (որք յիշեցեալք են ի ԺԸ ամսոյս,) զդրամն մեր ոչ տային, (որ անդ յիշեցաւ,) Եւ Մարտիրոսն այժմ զխարբերդական Թուղթ մի ըզրեալ էր առ. սրբազան վեհն, հրաժարելով ի տալոյ զդրամն, և զսնոտի պատճառս ինչ ցուցանելով։ Եւ ի ձեռն յատուկ փայեկի միոյ յղեալ էր աստ առ. սրբազան վեհն։ Եւ սրբա-

զան վէհն գրեաց դԹուղԹ մի մեղադրանաց և սպառնալեաց առ երկոսեանն, այսինքն առ Մարտիրոսն և ուղուն Պետրոսն։ Այսպէս Թէ Մարտիրոս, հիլլաբաղական գիրդ եկաւ առ մեզ, և իմացաք։ Այլ այդպիսի պատճառք և խաբարալուԹիւնք առ մեզ ոչինչ համարին։ Մեք զդրամն մեր ի ձէնջ պահանջեմք։ Նմանապէս ի քէն պահանջեմք ուղուն Պետրոս, զի նուիրակն մեր զփողն ի ձեռս քո է համարեալ։ (ԱԱԱ) Երկրորդ ի քէն պահանջեմք Մարտիրոս, զի դու գրեցեր մեզ Թէ՝ փողն ինձ է հասեալ, և ես տալոց եմ, միամիտ լեր։ Ահա զԹուղԹդ առ իս ունիմ։ Արդ՝ որպէս և և իցէ այդ երկուքդ պարտիք տալ զդրամն մեր։ Որք Թէ որ մի յառաջ առցէք մահտեսի Փիլիպպոսին, զի նա մեզ հասուսցէ, բարի է։ Ապա Թէ ոչ յայնժամ որիշ կերպիւ առնումք ի ձէնջ, և դուք փոշիմանելոց էք մեծապէս։ Եւ այլ բազում սպառնալիք առ այս։ Զայս ԹուղԹս յատկապէս ետ նորին լինել փայեկին, (որոյ անունն էր Մուրատ,) տանել տալ նմա։ Եւ զայս ես ծանոյց մահտեսի Փիլիպպոսին, զոր ինչ գրեաց Մարտիրոսին և Պետրոսին։ Եւ պատուիրեաց՝ զի Թէ տալ ոչ կամիցին զդրամն, չուտով ծանուսցէ ինքեան։ Այս փայակս ես ընդ վերոյգրեալ երկուց փայեկացն ել։ Այսինքն՝ Բաղդասար և Վանայ։ Երեքեանն ի միասին ելին աստի ի փետրվարի ԻԹ։

ՃԶԵ.

Ընդ Նախիջեւանու նոր նուիրակ Պետրոս ալնտին, մինչ հին նուիրակ Մեսրոպ ալնտն վախճանեալ էր։

Նախիջեւանու նուիրակ Մեսրոպ վարդապետն՝ (որ գնաց անդ յանցեալ ամին ի մայիսի ԻԴ) վախճանեալ էր ի Ղափան, ի գիւղն Խնձորեքս։ Եւ սպասաւորն նորին և միաբանքն ՏաԹեւու, (զի Առաջնորդն անդ ոչ էր եկեալ) և Մէլիք Փոլին, գրեալ ծանուցեալ էին սրբազան վեհին։ Վասն որոյ, և սրբազան վեհն նոր նուիրակ կարգեաց տեղւոյն զՊետրոս վարդապետն, (որ յիշեցեալ է ի պատմուԹեան ՌՄԺԹ երորդ ամին, և ի մարտի ԻԴ.) և յղեաց անդ ի նուիրակել զմնացեալ երկիրն, և զարդիւնս ժողովեալս հին նուիրակին և զինչսն, զաւԹել և բերել ի սուրբ ԱԹոռս։

Թուղթ ևս գրեաց հասարակապէս ի վերայ ամենայն երկրին, զի զնա նոր նուիրակ ընկալցին, և զարդիւնս իւրեանց տացեն նմա։ Որոյ օրինակն է ի բոլորտղրահամար տետրոջն, յերեսն Գ։

Թուղթ ևս առ ՏաԹեւ Առաջնորդ Ղազար վարդապետն, առ սուրբ Կարապետի Առաջնորդ Կարապետ վարդապետն, և առ Ագուլեաց Թովմայի սրբոյ Առաքելոյ վանից Առաջնորդ Թոմայ վարդապետն գրեաց, յանձնարարուԹիւն վասն նուիրակին։ ԹուղԹ մի ևս առ ՏաԹեւ միաբանսն և առ Մէլիք Փոլին՝ ի պատասխանի ԹղԹոյն իւրեանց, ծանուցանելով զնոր նուիրակ կարգելն զՊետրոս վարդապետն։ Եւ պատուէր՝ զի զինչս և զժողովեալ արդիւնս հանգուցելոյն նմա յանձնեսցեն։ Եւ յատուկ պատուէր առ Գրիգոր քահանայ ոմն, որ ընդ Մեսրոպ վարդապետն շրջագայեալ էր յերկրոջն Ղափանու, և զգաւԹարսն նորին առ ինքն ունէր, և գիտէր զորպէսն առեալ և առնլի արդեանց։ Որպէս զի՝ զգաւԹարսն տացէ նմա, և շրջագայեալ ընդ նմա ի գիւղորայսն, ուր և իցեն առնլիք, առնուլ տացէ նմա և լիցի նմա ըստ ամենայնի օգնական։ Զմահսարն նոցա ես ետ նուիրակին տանել ընդ իւր, Թերևս անդ պիտոյասցի։ Եւս ետ նմա ի բերան պատուէր, զի գրել ԹուղԹ առ Ղազանչեցի, Նախիջեանցի և Ագուլեցի ժողովուրդսն, որք ի Նուշի,) որք յիշեցեալք զոն յանցեալ ամին և ի ...) և զզանձանակական արդիւնսն սրբոյ ԱԹոռոյս խնդրել և առնուլ ի նոցանէ, և գրել ինքեան, զի առ նոսա զշնորհակալուԹեան ԹուղԹ գրեսցէ։ Նաև՝ վասն կտակին այնմիկ, (որ յիշեցաւ ի պատմուԹեան ՌՄԺԶ երորդ ամին, և ի յօգոստոսի ԺԳ,) զոր նուիրակ Յակոբ վարդապետն բերեալ էր ի Մեղրու, որ ասաց Թէ Ը Թուման էր, Բն մնաց, և Զն բերի, (որպէս անդ ասացեալ է,) իսկ այժմ որդի կտակ առնողին այնմիկ՝ որոյ անունն էր Թուման, գրեալ էր սրբազան վեհին Թէ՝ կտակն Ժ Թուման էր, զոր լրապէս տուեալ եմք Յակոբ վարդապետին։ Պատուիրեաց այժմ նուիրակին սրբազան վեհն, զի որպի-

ստութեան նորին լաւապէս վերահաստ. լեալ՝ զստոյգն գրեսցէ ինքեան։ Եւ այլ պատուէրս բազումս պատուիրեաց նմա։ Որ եւ առաքի ի մարտի Բ։

ՃՁՁ·

Ի Շամախի վասն արարմանց չիք Իսրայէլին։

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Շամախեցիսն ի պատասխանի մահտրական թղթոյ նոցին, զոր գրեալ էին առ սրբազան վեհն վասն արարմանց չիք Իսրայէլին։ Քանզի՝ իշխողն Շամախու եւ Դարբանդու Ֆաթալի խանն, այժմ բարեկամացեալ էր ընդ Հերակլ Արքային, եւ ընդ Գեանջայու խանին եւս։ Եւ չիք Իսրայէլն որ յղեցեալ էր ի Գեանջայու խանն, եւ ի ձեռն նորա ի Հերակլ Արքայն եւս, կամէր թեօք նոցին զՇամախու եւ այն կողմանց նուիրակութիւնն առնուլ։ Եւ յայսմ միջոցի դեսպան էր գնացեալ Հերակլ Արքային առ Ֆաթալի խանն, եւ չիքն զսեաղլուխ էր եղեալ ընդ այն դեսպանին, եւ ի Գեանջայու խանէն եւս զիրիջալի թուղթ առեալ առ Ֆաթալի խանն, որպէս զի՝ պատուիրեսցէ ժողովրդոցն Հայոց որք ընդ իւրով իշխանութեամբն են, ի Շամախի եւ յայլ տեղիս, զի ինքեան հնազանդեսցեն, եւ զնուիրակութիւն տացեն։ Եւ դեսպանն այն տարեալ զսեաղլուխն առ Ֆաթալի խանն, եւ որպէս Շամախեցիքն կարծէին, գիր եւս ի Հերակլ Արքայէն, կամ բերանով բանս առ նա այսր աղագաւ, կամ թէ դեսպանն իսկ կաշառակեր լեալ ի չքոյն՝ ի դիմաց Հերակլ Արքային յինքենէ զայնպիսի բանս ասացեալ է նմա։ Եւ նա մուհասիլ[11]) էր կարգեալ ի վերայ Հայոց ժողովրդեան, թէ որովհետեւ Հերակլ Արքայն այսպէս կամի, ես եւս վասն խաթեր նորին այսպէս կամիմ. Իսրայէլին հնազանդեցարուք, եւ նմա տուք զտուրս ձեր։ Ուստի՝ նոքա գրեալ էին առ սրբազան վեհն զզանգատ եւ աղաչեալ էին գտանել վասն այսր զհնար ինչ։ Եւ սրբազան վեհն գրեաց նոցա թէ՝ քան զմեղր ոչ գոյ քաղցր, բայց ի շատ ուտելն առելի լինի, ուր միայն թէ կռիւ է այս, եւ վէճ զզուեցուցիչ, զոր լոյս ինն ամս կրեմ։ Յամենայն ուստեք պաշարեցեալ եմ ցաւօք, իմ եւ Ազգիս մերոյ. եւ սրբոյ Աթոռոյս։ (գրեաց փոքր ինչ զցաւսն։) Ես զիմ ցաւս թողեալ զոքօք պաշարեցայ, եւ դոքա ոչ ուղղեցան։ Ես եւս զզուեալ եւ մանաւանդ վաստակեալ, այլ ոչ գիտեմ թէ զինչ արարից։ Մանաւանդ՝ զի ես իմայնոց իշխեմ, եւ որ հաւատս ունին քրիստոնէական, նոցա հրամայեմ գրել եւ առնել զոր ինչ պատշաճն է, եւ ի յոչ լսելն պատժեմ եւս։ Իսկ որք ոչ են իմ, եւ այլ են հաւատով եւ կրօնիւ, եւ մանաւանդ բռնակալք են, ես զինչ արարից, չունիմ ես կար մաքառելոյ ընդ նոսա։ Ուստի՝ դուք եւս զայդ բռնութեամբ ի ձէնջ արգելինք առնուլն, համարեցարուք իբրեւ զփչրտնս սեղանոյ արկանել ձեզ առ զուրս անկելոց, որովհետեւ ոչ կարէք ընդդիմակաւեւ մարմնաւոր բռնութեանց։ Բայց ի հաւատս ձեր եւ յօրէնս Աստուածայինս լերուք հաստատուն, եւ հետեւելով ճշմարտութեան, ի ստութեանց ի բաց փախերուք։ Եւ զոր գրեալ էք ասէ թէ՝ Հերակլ Արքայն է գրեալ Ֆաթալի խանին առնել այսպէս, նա գիր է տուեալ յառաջագոյն Յովաննէս կաթուղիկոսին, որ այժմ ննջեալ է թէպէտ։ Խնդրեցէք ի նմանէ զայն գիրն եւ տեսէք։ Արդ՝ եթէ այնպիսի գիր տուողն այժմ այդպէս արասցէ, ես զինչ ասացից նմա, եւ կամ զինչ արարից։ Այժմ ես գրելոց եմք նմա այսր աղագաւ, տեսցուք թէ զինչ պատասխանէ մեզ։ Եւ զի՝ խնդրեալ էին այսր աղագաւ գիր գրել առ իշխողն։ Գրեաց թէ՝ ես մինչ գրեցից նմա. չլսէ ես գրելոց մերոց թերեւս։ Վերջապէս զայս ես թէ՝ մինչեւ ցայժմ մեր ջանքն վասն շինութեան Գանձասարու էր, եւ ի նոյն եմք տակաւին։ Այլ որ ոք պատճառ եւ կամեցող լինի քակման նորին, նա լիցի պարտական առաջի Քրիստոսի, եւ ես անպարտ։ Եւ այլ բազում եւ երկար բանք առ այսոսիկ։ Զայն մահսար յղեալ էին ի Գանձասար առ Յովաննէս կաթուղիկոսն, եւ նա յղեալ էր ի Տաթեւ յղել աստ։ եւ ինքն գիր ոչ էր գրեալ։ Եւ Տաթեւու ընդ վերոյիշեալ փայեկին յղեալ էին աստ։ Վասն որոյ զայս գիրս եւ նոյն փայեկաւն յղեցաք ի Տաթեւ, հասուցանել ի տեղի իւր ի մարտի Բ։

Առ Բայազիտու Իսաղ փաշայն շնորհաւորութիւն վասն Թուղիյն իւրոց որ նոր եկեալ է, ի Թագաւորէն իւրեանց։

Թուղթ գրեաց սրբազան Վեհըն առ Բայազիտու Իսաղ փաշայն (որ ի Հոկտեմբերի Ժ. յիշեցաւ)· կրկին շնորհաւորելով զփաշայութիւն նորին։ Զի ի թագաւորէն իւրեանց այժմ թուղթ էին եկեալ առ նա. և նա ևս ծանուցեալ էր սրբազան Վեհին։ Եւ խնդիր՝ զի ընդ ի վերայ իշխանութեամբ իւրոյ եղեալ քրիստոնէից խնամս ունիցի։ Թուղթ մի ևս առ սորին խազնատար Ըռըզվան Աղայն գրեաց (որ ի Հոկտեմբերի Ժ յիշեցաւ)· ի պատասխանի թղթոյն։ Որ զգալն թուղոցն փաշային, ծանուցեալ էր սրբազան Վեհին։ Առ որ գրեաց զշնորհաւորութիւն և սէր, և յորդորումն ի սիրելութեան մնալ։ Ցղեցան այսօքիկ ընդ գրաբեր չուխատար Հասան Աղային։ Որ եւ ի մարտի ԺԳ։

Առ Վէթու եւ Արկուռոյ ժողովուրդսն պատուէր՝ վասն սրբոյն Խորվիրապայ վանից վէքիլ տէր Կարապետին, զի նմա տացեն զԱռաջնորդական հասս մինչև ի գալ Առաջնորդին։

Արդ՝ յորժամ սրբոյն Խորվիրապայ վանից Առաջնորդ Աւետիք վարդապետն փախեաւ ի կողմունս Վանայ (որպէս ասացաւ ի փետրվարի ԺԸ)· սուրբ առունն այն անտերունչ մնաց։ Ապա՝ և սրբազան Վեհըն չկամելով զամայութիւն նորին. (որովհետև ինքն նորինորոյ ի յամայութենէ ի շինութիւն եբեր)· վասնորոյ՝ զնոյն վանից միաբան Տէր Կարապետ Աբեղայն վէքիլ կարգեաց վանիցն, զի մինչև ի գալն Առաջնորդին մուղայէթ լինիցի։ Ուստի՝ և զթուղթ գրեաց ի վերայ թեմի վանիցն. այսինքն՝ առ Վէթու և Արկուուոյ ժողովուրդսն, զի զԱռաջնորդական և զվանքական հասսն և զիրաւունսն Տէր Կարապետ Աբեղային տասցեն. որովք զտունն այն շէն պահեսցեն մինչև ցգալ Առաջնորդին։ Նաև՝ բանից և գործոցն նորին ձեռնտու և մուղայէթ ևս լինիցին։ Տուաւ նմա այս ի մարտի ԺԳ։

Առ Թիֆլիզու Առաջնորդ Ռէթէոս պետն պատուէր, վասն Փարսատանինց Սամուէլի պարտուցն զի առցէ։

Թիֆլիզեցի Փարսատանենց Սամուէլ ոմն, թէմէսուկով դրամ էր տալոյ Երևանցի Թասալուի որդի Ցաբութիւնին, Բարիջանի որդի Զաքարիային, և դերձակ Պօղոսի որդի դերձակ Ադաբարին։ Եւ ի բազմիցս խնդրելն նոցա ի նմանէ, մինչ չկարացին առնուլ, եկեալ աղաչեցին սրբազան Վեհին ասել Սամուէլին թէ՝ այն դրամն իմն է. զի սոքա ինձ տալոց են, և զայդ քո տալիքդ մեզ երես առնեն, զի մեք առցուք ի քէն։ Ի տեղի տալեացն սոցա։ Ուրեմն մեզ տուր զայդ դրամդ։ Եւ սրբազան Վեհն լուաւ աղաչանաց նոցա, և այնպէս արար։ Իսկ Սամուէլն սրբազան Վեհին ևս չկարաց տալ. վասնորոյ՝ թամասուկ ետ, և պայմանեաց երթալ ի Թիֆլիզ, և յետ միջոցի ինչ տալ։ Եւ ի յոյժ յամեցուցանելն նորին զտալն դրամոյն՝ զթուղթ մի գրեաց սրբազան Վեհըն առ Թիֆլիզու նուիրակ և Առաջնորդ Ռեթէոս վարդապետն, (որ յիշեցեալ է ի փետրվարի ԺԸ), զի զդրամն զայն առեալ ի Սամուէլէն առ մեզ յղեսցէ, և յոչտալն նորին ծանուսցէ ինքեան։ Զի տյլով կերպիւ ասէ առցուք։ Նաև՝ Կարրեցի Գրիգոր անուամբ նորընծայ էրէց ոմն, ի վաղուցհետէ զտուն իւր ի խղճութեան թողեալ, ելեալ յԵրևանու գնացեալ էր ի Գեանճայ առ չիք Իսրայէլն, և զժողովարարութեան կոնդակ առեալ ի նմանէ, և ժողով արարեալ ի վիճակն յայն։ Ցետոյ ի Գիլան գնացեալ, և անդ ևս զչարիս յոլովս անցուցեալ։ Իսկ այժմ ի Թիֆլիզ եկեալ, նստեցեալ էր առ Ռէթէոս վարդապետն։ Եւ նա ընկալեալ զնա առ իւր, պահէր առ ինքն միամտութեամբ։ Իսկ էրէցն՝ քսութեամբ զամենայն քահանայս քաղաքին, և զբազումս ի ժողովրդոցն՝ ատելի էր արարեալ նմա. և ազմկայոյզ լինէր ի միջի. մինչև քանիցս անգամ զանգատ գրեցին աստ զնմանէ 'ի ծածուկ։ Բողոքելով զի հանցէ զնա անտի սրբազան Վեհըն։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն գրեաց վաղվաղակի առ Ռէթէոս վարդապետն, վարել զնա անտի ի բաց, և փութով ի քաղաքէն հանել, և աստ յղել։ Զտյս վերոյիշեալ երևանց-

ւոցն տուաք, զի ընդ կարաւանի յղեսցեն ի Թիֆլիզ։ Ի մարտի Ժե։

Առ Սալմաստու մելիքսն պատուէր՝ վասն Առաջնորդին իւրեանց, զի ի սուրբ Աթոռս յղեսցեն։

Սրբոյն Բարդուղիմէոսի վանից Առաջնորդ Ստեփաննոս վարդապետն որ ի Հոկտեմբերի յիշեցաւ գնացեալ է ի Վ.ան։ Այժմ դարձեալ էր անտի ի Սալմաստ, և զվանքն թողեալ։ Սալմաստցիքն որք յառաջ դանդաղաւորք էին զնմանէ, (որպէս ասացաւ ի Հոկտեմբերի). այժմ համակամեալ էին ընդ նմա, և զոչինչ խօսէին։ Հապա և մէլիք Յուտավէրտին և Տէր Մարգարն՝ որք զնա աստ բերել խոստացան ըստ հրամանի սրբազան Վեհին, այժմ չէին բնաւ վրէժխնդիր նմա, այլ միաբանք։ Իսկ Հախբակցիքն որք յառաջ գանգատողք էին նորա, այժմ լալով գանգատէին գրեալ զնմանէ բազմակնիք մահսարաւ. պատմելով զամենայն չարիս նորին. և բողոքելով՝ զի հանցէ զնա յԱռաջնորդութենէն, և զայլ ոք Առաջնորդ կարգեսցէ ինքեանց աստի։ Տեղւոյ իշխօղ Սալախբէկն ևս էր գրեալ առ սրբազան Վեհըն զթուղթ ըստ մտաց Հախբակցւոց մահսարին, սա ևս նմանապէս այրմամբ և կսկծմամբ, թէ վանքս և ժողովուրդս այս քոյ են, եթէ խնայես ի սոսա, զբարւոք Առաջնորդ ոք յղեա յայգրուստ, զի եկեալ տիրութիւն արասցէ վանիցն, և այս վիճակացս։ Եւ բարւոքապէս զսոսա հովուեսցէ։ Եւ թէ ըէկն՝ թէ ժողովուրդքն՝ զայս գրէին թէ՝ մինչև ցայժմ մեր տիրութիւն առնելն այնր աղագաւ էր, զի թերևս յուղղութիւն եկեսցէ, և խրատեցաք ևս բազմիցս, այժմ մինչ անհնարին եղև, որ ահա շինութիւն ոչ մնաց վանիցն, և ինքն ոչ ուղղեցաւ, մեք ևս ի նմանէ հոգւով չափ տաղտկացաք, և այլ ոչ կամիմք Առաջնորդ լինել նմա։ Բէկն զայս ևս գրէր թէ՝ եթէ զիս հարցանիցես, նա է լաւ վասն իմ. զի յորժամ՝ և որքան կամիմ, առնում ի նմանէ, ըստ արարմանց իւրոց։ Ինքն ևս յօժար է, թէ տացէ՝ և մնասցէ ըստ կամացն։ Բայց վասն վանիցն և ազգին քո որ աստ, չէ ձեռնտու. որք միաբան եկեալ առ մեզ՝ բողոք բարձին, և խնդրեցին գրել առ ձեզ զճշմարիտն. որք ինքեանք ևս ահա գրեցին, դու ես խնայեա ի սոսա, և արա վասն սոցա և վասն այս խեղճալի վանիցս զկատարեալ իմ հոգս։ Զսոյնս և ժողովուրդքն գրէին աղիողորմ պաղատանօք, որք որպէս թէ՝ ի ծայր վերջին յուսահատութեան էին հասեալք։ Եւ զերիս փայակս էին յղեալ՝ երկուքն տաճիկ՝ Շահպազ և Իբրահիմ անուամբ, և մինն հայ՝ մահտեսի Յարութիւն անուամբ։ Զտաճիկսն ըէկն էր յղեալ, և զհայն ժողովուրդքն, որք բերանով ևս պատմիցեն զամենայն արարմունս Ստեփաննոս վարդապետին, զորպիսութիւնս վանիցն, և զխնդիր ժողովրդեանն։ Եւ զի՝ այժմ Թիֆլիզեցի Մեհրապն (որ յիշեցեալ է ի). եկն ի Թիֆլիզու, և երթայր ի Յոյ։ Վասնորոյ և սրբազան Վեհըն նախ քան զգրել պատասխանեաց թղթոց Հախբակցւոցն, ի ձեռն Մեհրապին զթուղթ մի գրեաց առ Սալմաստու մէլիք Յուտավէրտին և մէլիք Ենկօն։ Նախ սիրով մեղադրութիւն մէլիք Յուտավէրտինն թէ մեք պատուիրեցաք քեզ զՍտեփաննոս վարդապետն բերել տալ ի Վանայ և ընդ Տէր Մարգարին աստ յղել, որոյ աղագաւ թուղթս ևս դրեալ ի վերայ Հախբակցւոցն և ձեր երկրացւոցդ, և Ստեփաննոս վարդապետին տուաք քեզ։ (Որպէս ասացաւ այս ի Հոկտեմբերի). դու ևս յանձն առիր, և այնպէս առնել պայմանեցեր մեզ։ Այժմ ո՞րպէս արարեր, և զայն թուղթսն զի՞նչ արարեր, ընդէ՞ր ոչ կատարեցեր զխոստացեալսդ։ Ահա Ստեփաննոս վարդապետն ևս յայդր է եկեալ՝ որպէս է որ ոչ աստ յղես, և ոչ զբան ինչ գրես մեզ զնմանէ։ Եւ ապա՝ պատուէր՝ զի զՍտեփաննոս վարդապետն ընդ Տէր Մարգարին եղեալ, ի սուրբ Աթոռս յղեսցեն, առ ի բառնալոյ ըզտարաձայնութիւնս իւրեանց։ Եւ յոչ գալն նորին ծանուսցեն ինքեանց։ Թուղթ մի ևս ի վերայ Մէհրապին գրեաց և ետ ինքեան հարկադրելով՝ զի թէ Ստեփաննոս վարդապետն ոչ եկեսցէ աստ, կապանօք և բռնութեամբ յղեսցէ։ Զի ասաց ասել Ահմատ բէկին, և բանիւ նորին ինքն իսկ երթալ և կապել զնա, և աստ յղել։ Ուստի՝ և զամսաթիւն սորին յամսոյս Ի գնել ետ, զի յետոյ իմասցին գրեալ մեր ինքեանս։ Որ եւ ի մարտի ԺԵ։

Առ Հախրակցիսն պատուէր վասն Սարգիս պետին զի ի սուրբ Աթոռս յղեսցեն։ Եւ վասն Առաջնորդին իւրեանց գրեաց ի Ալմաստ առ Տէր Մարգարն, զի նա ևս զնա առեալ եկեսցէ աստ։

Վասն Բարդուղիմէոսի սրբոյ Առաքելոյ վանից Առաջնորդ Ստեփաննոս վարդապետին՝ թուղթն այն որ յամսոյս ԺԷ առ Սալմաստու Մէլիքսն գրեցաւ, էր յայնժամ սրբազան Վեհըն յԵրևան վասն Նուռուզլին տաճկաց, և իբրև դարձաւ անտի ի սուրբ Աթոռս, ապա յետ քանեաց աւուրց զթուղթ մի գրեաց առ Հախրակու բոլոր ժողովուրդսն ի պատասխանի մահսարի նոցին. (որ անդ՝ յամսոյս ԺԵ յիշեցաւ հանդերձ բոլոր որպիսութեամբքն)։ Նախապէս սիրախառն բանիւ յանդիմանելով և մեղադրելով և յիշեցուցանելով զառաջին անցսն. որք մինչև յղեալ էին զՍտեփաննոս վարդապետն աստ. զի եպիսկոպոս ձեռնադրեսցի, և Առաջնորդ կարգեսցի ինքեանց, սրբազան Վեհըն չկամեցաւ առնել։ Այլ գրեաց նոցա թէ՝ եթէ դուք ամենեքեան համահաւանութեամբ կամիք զսա ձեզ Առաջնորդ լինել՝ և ձեզ ընդունելի է, գրեցէք մեզ համահաճութեամբ, զի և մեք յայնժամ կատարեսցուք զխնդիրս ձեր։ Ապա թէ ոչ, ոչ եմք յղելոց։ Եւ նոքա բոլոր երկրով՝ հայոք և տաճկօք, դրեալ էին թէ մեզ ընդունելի է դա, և լաւութեան ևս վկայելով՝ երաշխաւոր էին լեալ նմա, և խնդրեալ էին եպիսկոպոս ձեռնադրել և Առաջնորդ առնել ինքեանց։ (Որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺԳ ամին, և 'ի)։ Արդ՝ դուք զնա ի վաղուց հետէ ճանաչէիք եթէ վատ մարդ էր, յայնժամ ընդէ՞ր խնդրէիք, և եթէ լաւ էր, այժմ ընդէ՞ր դանդատէք։ Յետ այնորիկ ևս ասէ՝ մինչ նա ի մէջ ձեր էր, յայնժամ դուք ներհակ սալմաստցւոցն շնորհակալութիւնս գրէիք զնմանէ՝ և սալմաստցիքն գանգատ գրէին։ Իսկ այժմ որովհետև գնացեալ է նա ի Սալմաստ, այժմ սալմաստցիք տիրութիւն առնեն նմա, և դուք զանգատ գրէք զնմանէ, և լալով խնդրէք ի մէնջ հանել զնա յԱռաջնորդութենէն, և նոր Առաջնորդ յղել ձեզ աստի։ Ոչ գիտեմք ասէ թէ՝ ձեր ո՛ր գրոյն հաւատամք. զի երբեմն լաւ գրէք ասէ մեզ զնմանէ, և երբեմն վատ։ Եւ այլ առ այս բանք շատ։ Որոց և ծանոյց քան զայս յառաջ ի մայիսի ԻԴ, և 'ի Հոկտեմբերի ելն երկիցս անգամ զթուղթս գրելն առ ինքեանս և առ բէկն իւրեանց այսր աղագաւ ընդ Նուիրակ Մեսրոպ վարդապետին, և ընդ Մէլիք Յուտավէրդուն և Տէր Մարգարին։ Որոց պատասխանին ասէ ոչ դուք գրեցիք մեզ՝ և ոչ բէկն ձեր։ Ոչ գիտեմք թէ առ ձեզ են հասեալ թուղթքն այն, թէ ոչ։ Որոց սակս փայակքն ասէին թէ չէ հասեալ։ Վասնորոյ՝ ասաց նոցա ի վերայ Ալմաստու երթալ, և զայն թուղթսն առնուլ անտի և տանել ընդ իւրեանս ի Հախբակ։ Ուստի՝ զայս ևս գրեաց Հախրակեցւոցն։ Նաև՝ զոր յամսոյս ԺԵ գրեաց առ մէլիքսն Սալմաստու՝ զի զՍտեփաննոս վարդապետն յղեսցեն աստ, ծանոյց նոցա այժմ։ Եւ զի՝ այժմ Տէր Մարգարին ևս գրեաց կրկնապէս զնոյն հրամանն, առնուլ ընդ իւր զՍտեփաննոս վարդապետն և գալ աստ (որպէս ասելոց եմ ի ներքոյ). զայն ևս ծանոյց նոցա։ Եւ պատուէր՝ զի ինքեանք ևս զՍարգիս վարդապետն ընդ քանի մի գլխաւոր իշխանաց յղեսցեն աստ, զի իրակութեանցն լաւապէս վերահասու լեալ, անաչառութեամբ դատաստան արասցէ, և յետոյ ըստ խնդրոյ իւրեանց հանցէ զՍտեփաննոս վարդապետն յԱռաջնորդութենէն. և ի տեղի նորին զայլ ոմն Առաջնորդ արարեալ աստի, յղեսցէ առ ինքեանս։ Օրինակն սորին ի բոլորագրահամար տետրոջն է, յերեսն ՆՅԳ։ Թուղթ ևս սմին նման առ տեղւոյ իշխող Սալախբէկն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Որ համաձայն հախրակցւոց մահսարին դրեալ էր առ սրբազան Վեհըն զթուղթ գանգատսնաց զՍտեփաննոս վարդապետէն։ (Որպէս անդ յամսոյս ԺԵ ասացաւ)։ Թուղթ մի ևս առ Տէր Մարգարն գրեաց ի Սալմաստ։ Ծանուցանելով նմա զմիտս թղթոյ հախրակեցւոցն, և թէ ինքն զի՞նչ գրեաց նոցա։ Եւ մեղադրութիւն բազում յոյժ՝ (որպէս և յամսոյս ԺԵ առ մէլիք Յուտավերտին). որ ոչ բերէր աստ զՍտեփաննոս վարդապետն ըստ որում խոստացաւ սրբազան Վեհին ընդ մէլիք Յուտավերտուն, բերել զնա աստ, և այժմ նստուցեալ զնա ի մէջ իւրեանց կային ընդ ի մէջ հակակամութեամբ և ոչ բերեր աստ ըստ խոստմանն։ Եւ զթուղթս հախ-

րակցուոցն և բէկլին նոցա զօրս տարան ընդ ինքեանս՝ չէին յղեալ առ նոսա։ Եւ պատուէր՝ զի զՍտեփաննոս վարդապետն առեալ ընդ իւր փութով եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Ասելով թէ՝ եթէ զդա փութով ոչ առեալ եկեսցես աստ, յանցաւորն դու ես լինելոց. և յայնժամ տալոց եմ սաէ զարժանին քո։ Զի ի բերան ես անկեալ սաէ, թէ տէր Մարգարն ընդ Ստեփաննոս վարդապետին միացեալ է, և զարդիւնս վանիցն այսպէս փչացուցանեն։ Եւ հարկ՝ զի զթուղթս Հախբակցուոցն և բէկլին զօրս առ ինքեանս ունին՝ տացեն փայեկացն նոցա, զի ընդ իւրեանս առ նոսա տարցեն։ Զի վասն այնորիկ սաէ ի վերայ տեղւոյդ յղեցաք զդոսա, զի զայն թուղթսն առեալ ի ձէնջ՝ տարցեն։ Թուղթ ևս առ Թարվիզու նուիրակ Մեսրոպ վարդապետն գրեաց՝ որում և ծանոյց քան զայս յառաջ ի փետրվարի ելն զթուղթ գրելն առ ինքն։ Ընդ տիրացու Սիմէօն փայեկին որ ի Բաղդատու էր եկեալ։ Եւ պատուէր՝ զի զՀախբակցւոց թուղթսն զօրս ընդ իւր տարաւ, (որպէս ասացաւ ի մայիսի ԻԴ). եթէ ցայժմ չիցէ յղեալ, յղեսցէ առ նոսա ընդ այս փայեկացս։ Որք ելին ի Մարտի Ի։

Ի Կարին և ի Թօխաթ Թուղթք՝ վասն այլ և այլ իրակութեանց

Թուղթ գրեաց սրբազան Վիհըն առ Թօխաթու հին նուիրակ Պետրոս վարդապետն՝ ի պատասխանի ի փետրվարի ԺԳ գրեցեալ թղթոյն։ Շնորհակալիլով զնմանէ՝ զի նուիրակական արդեանցն իւրոց, դրամ (Ց) էր հասուցեալ այժմ առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն, զի նա առ մեզ յղեսցէ։ Որոյ աղագաւ միամտութիւն ևս գրեաց, զի մեզ հասեալ իմասցի։ Նաև՝ ի վերայ բարեպաշտ անձանց ոմանց տեղւոյն, զԲ օրհնութեան թուղթս էր խնդրեալ։ Զորս և յղեաց։ Որք են՝ թուղթ մի օրհնութեան առ մահտեսի Աղամալ ոմն գրեաց, որ զկտակ եղբօրն իւրոյ մահտեսի Մէլիքին՝ տուեալ էր նուիրակին իւրեանց Պետրոս վարդապետին։ (Ծ) թուղթ մի ևս օրհնութեան առ պարոն Սիմէօնն և կին նորին մահտեսի Թուբվանդայն գրեաց։ Որք զկտակ փեսային իւրեանց մահտեսի Ցակոբին հասուցեալ էին նուիրակին իւրեանց։ Թուղթ մի ևս շնորհակալութեան և միամտութեան առ Բաբերդու Առաջնորդ Սարգիս գրեաց, (որ ի դեկտեմբերի ելն ի թղթոյ Բաբերդու ժողովրդեանն յիշեցաւ). զի յորժամ հասեալ էր թուղթ սրբազան Վեհին ի Բաբերդ՝ զոր նորին աղագաւ ի դեկտեմբերի ելն գրեաց առ Բաբերդու ժողովուրդսն, ոչ ընդունել զնա եպիսկոպոս վասն խաբեբայութեանն։ Ապա՝ զղջացեալ նա, այժմ եկեալ էր ի Կարին, և զաալիք դրամս իւր որ էր ԳԾ դռուշ, տուեալ էր Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին։ Եւ զի՝ ի մէջ սանատին՝ ԳԾ դռուշ էր գրեցեալ. բայց մեք սխալմամբ ԳԾԾ դռուշ դիաէաք։ Ուստի՝ նա առ ի միամտութիւն մեզ, զսանատն իւր յղեալ էր առ տեղապահն, զի ցուցցէ սրբազան Վեհին։ Զոր և ետես սրբազան Վեհըն, և միամտեցաւ։ Եւ զԴԾ դռուշն այսպէս էր տուեալ մահտեսի Փիլիպպոսին, զի ԱԾ դռուշն յառաջագոյն հասուցեալ էր տէր Պետրոսին ի Կարին, և գրեալ սրբազան Վեհին։ Իսկ Տէր Պետրոսն ուրաստ լինէր թէ ինձ դրամ չէ հասեալ։ Ուստի՝ և Սարգիս վարդապետն ի գալն այժմ ի Կարին, հանեալ էր զթուղթ տէր Պետրոսին՝ զոր առ ինքն էր գրեալ յառաջագոյն՝ թէ ԱԾ դռուշ դրամս ինձ էհաս։ Զոր ի տեսանելն տէր Պետրոսին, սևերես էր լեալ, և յանձն էր առեալ տալ մահտեսի Փիլիպպոսին։ Արդ՝ ԱԾ զռուշն այսպէս էր հասուցեալ։ ԾԵ դռուշ ևս յառաջագոյն տուեալ էր Ակնցի մարդոյ միոյ՝ զի ի Կարին մահտեսի Փիլիպպոսին տացէ. այլ նա ջէր տուեալ։ Ուստի ինքն այժմ ի Կարին տուեալ էր մահտեսի Փիլիպպոսին։ Իսկ ԱԾԽԵ դռուշն ևս յառաջագոյն տուեալ էր ի Պօլիս սառաֆի միոյ՝ տալ Զաքարիա վարդապետին, մինչ ինքն Սարգիս վարդապետն վասն ժողովարարութեան գնացեալ էր յայն կողմունսն, (որպէս ասացեալ է ի ՌՄԺԹ-երորդ ամին և ի յունվարի ԺԹ). իսկ սառաֆն այն չէր տուեալ Զաքարիա վարդապետին։ Ուստի՝ ինքն այժմ ի Կարին ի տեղի այն ԱԾԽԵ դռուշին, Գ կարպետ էր տուեալ մահտեսի Փիլիպպոսին, զի ի սուրբ Աթոռն հասուսցէ։ Արդ՝ այսպէս ելից նա զայն ԳԾ դռուշն և մեզ հասոյց ձեռամբ մահտեսի Փիլիպպո-

սին։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն գրեաց նմա զօրհնութիւն և զմիամտութիւն և զարձակումն, և հրամայեաց միամտութեամբ զիւր կարգն պաշտել։ Եւ. ի լուսանցն թղթոյն՝ ժողովրդեանն ես զողջոյն գրեաց, և պատուիրեաց սիրով բազմաւ ընդունել զնա, և հնազանդ կալ նմա ըստ ամենայնի։ Թուղթ մի ևս առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի Կարին, ի պատասխանի ի փետրվարի ԻԴ գրեցեալ թղթոյն, որում և ծանոյց ի փետրվարի ելն զթուղթ գրելն առ ինքն։ Այլ՝ սա վասն Բարերգու Առաջնորդին իւրիջոյ էր գրեալ առ սրբազան Վեհըն, և վասն նորա օրհնութեան թուղթ խնդրեալ։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն զթուղթ նորին բաց եգեալ ի մէջ թղթոյս առ. սա յղեաց, զի տեսցէ և տացէ նմա և ըստ ամենայնի միամտեցուսցէ։ Եւ զի՝ բացի Բարերգու Առաջնորդի տուեալ ԱԵ դուուշ դրամին, ՂԵ դուուշ ևս ի մահտեսի Խաչատուրէն գոյր առ. Տէր Պետրոսն՝ (որպէս ասացեալ է բազմիցս՝ ի ՌՄԺԸ թուին, ի նոյեմբերի ԺԲ, և ի վերոյս նորին). որ տակաւին ոչ էր տուեալ մեզ։ Որոց աղագաւ և սրբազան Վեհըն տեղապահին թուղթ գրել ետ ի վերայ տէր Պետրոսին և առ սա յղեաց, զի տուեալ նմա, խնդրեսցէ ի նմանէ զդրամսն, և յոչ տալն նորին ծանուսցէ ինքեան։ Եւ պատուէր՝ զի զԲարերգու Առաջնորդի ինքեան տուեալ ԾԵ դուուշ դրամն և զԳ կարպետն, ընդ այլ առ ինքն եղեալ դրամոց, ի ձեռն հաւատարմի աստ յղեսցէ։ Զթուղթ Թօխաթու նուիրակին ևս յղեաց առ սա, հասուցանել առ նա։ Ը ներկարար Նաւասարդին (որ երթայր ի Բայազիտ վասն լեղակ առնլոյ), առ տէր Վահանն յղեցան այսոքիկ, զի նա ևս անտի առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն յղեսցէ ի Կարին։ Որ ել ի մարտի Ի։

Յղելն սրբազան Վեհին զԱհարօն պետն ի Թիֆլիզ վասն ժողովելոյ զմոմս։

Ըստ բարեաւանդ կանոնին սրբոյ Աթոռոյս, յղեաց սրբազան Վեհըն հանդերձ ժողովարարութեան կոնդակաւ զԵղեգաձորեցի Ահարոն վարդապետն ի Թիֆլիզ զի գնացեալ անդ, ժողովեսցէ ի ժողովրդենէն զմոմս, ըստ սահմանադրութեան նախնեաց նոցին, և բերցէ ընդ իւր ի սուրբ Աթոռս։ Ուստի՝ յաղագս այսոքիկ թուղթ մի յանձնարարութեան առ Թիֆլիզու նուիրակ և Առաջնորդ Ռևթէոս վարդապետն գրեաց. (որ յամսոյս ԺԵ յիշեցաւ). Թուղթ մի ևս յանձնարարութեան առ Թիֆլիզու տէր Նիկողայոս, տէր Աբրահամ և տէր Պետրոս աւագագոյն քահանայսն գրեաց, հարկելով՝ զի շուտով ժողովեալ զմոմն, մինչև ցմայիս ամիսն աստ դարձուսցեն զնա, զի յիւրում ժամանակին սպիտակասցի. Որ ելն ի մարտի ԻԲ։

ՃՁԷ.

Առ Վանայ իշխանսն՝ բացասելով զխնդիրս նոցին՝ որ վասն Սաղաղասուն։

Վանայ բոլոր իշխանքն մահսար արարեալ յղեալ էին առ սրբազան Վեհըն՝ և խնդրեալ էին, զի վասն տեղւոյ Սաղաղասուն դրեսցէ առ սարասկեարն զխնդիրն, զի տեղւոյ փաշային և օճախլուացն սաստ դրեսցէ. զի մի իշխեսցեն ի բանս նորա խառնիլ, և կամ յիշխանութենէն հանել կամիլ, վկայելով զլաւութենէ նորին։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն զթուղթ մի գրեաց առ Վանայ իշխանսն, բացասելով զանպատեհ խնդիրս նոցին։ Այսպէս թէ՝ սարասկեարն մեծ մարդ ոմն է, զայդպիսի բան իւրեանց թագաւորն միայն գրէ և հարկէ այդպէս առնել։ Մեք որպէս հարկ դիցուք նմա վասն այդ խնդրոյդ ձերոյ՝ թէ այսպէս արա։ Եւ մանաւանդ՝ Օսմանցւոյ դուռն է ասէ, այդպիսի բանից խնդիրն դատարկ ևս ոչ լինի ասէ։ Եւ վերջապէս խոստացաւ նոցա յետոյ դրել սարասկեարին ըստ խնդրոյ իւրեանց։ Թուղթ մի ևս առ Աղաղասի Մուստաֆայ Աղայն գրեաց ի Վան պատասխանի թղթոյն իւրոյ։ Զի զայն խնդիրն զոր իշխանացն գրեցուցեալ էր առ սրբազան Վեհըն վասն իւր, զնոյնն՝ ինքն ևս էր գրեալ յատկապէս բազում աղերսիւ։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն ըստ խնդրոյ իւրոյ առնել խոստացաւ նմա։ Թուղթ ևս առ Վանայ նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վար-

դապետն գրեաց ի պատասխանի յամսոյս Ժ գրեցեալ թղթոյն։ Որում և ծանոյց զմիտս իշխանաց թղթոյն զոր ինչ գրեաց առնոսա։ Եւ առ ինքն ևս զնոյնն գրեաց, զի սա ևս էր գրեալ առ սրբազան Վ.եհին զնոյն խընդիրը։ Եւ որպէս քան զայս յառաջ ի փետրվարի ԺԸ և ԺԹ, և այժմ ևս հարկեաց վասն Խորվիրապայ Առաջնորդ Աւետիք վարդապետին. զի զկոնդակն և զսուրբ նշանն (եթէ ունիցի) և զժողովեցեալ արդիւնսն առեալ ի ձեռաց նոցա, զինքն ի սուրբ Աթոռս յղեսցէ։ Եւ պաառւէր՝ զի զԾօնան վարդապետի թուղթն՝ (զոր ի դեկտեմբերի եւն տարաւ ընդ իւր) առ ինքն յղեսցէ. զի տակաւին ոչ էր յղեալ առ նա։ Եւ զթուղթս իշխանացն և Սաղաղասուն ի մէջ թղթոյս եղեալ առ սա յղեաց. զի տացէ նոցա։ Թուղթ մի ևս առ Ջուղայեցի Տէր Յովհաննէսն և յորդի նորին տիրացու Ստեփաննոսն գրեաց ի Վան, ի պատասխանի յամսոյս Ժ գրեցեալ թղթոյն իւրեանց։ Որոց և ծանոյց քան զայս յառաջ ի փետրվարի եւն զթուղթ գրելն առ ինքեանս։ Եւ զորպէսն Հնդկաց նուիրակին և ընչիցն նորին, որպէս ի փետրվարի եւն, և այժմ ևս ծանոյց ի կարճոյ, զի այժմ ես նորապէս թուղթք եկին ի Բասրայու, և ի կողմանցն Հնդկաց, ի վերայ Շիրազու և Սպահանու վասն ընչից և իրակութեանց հանգուցեալ Յովսէփ վարդապետին։ Եւ զի՝ ինքն տէր Յովհաննէսն երթալ կամէր ի Բասրա վասն իւրոց բանից։ Ուստի դրեալ էր սրբազան Վ.եհին, զի թէ կամիցի, գրեսցէ ի Բասրա, զի զինչսն Յովսէփ վարդապետին ինքեան յանձնեսցեն, որ ընդ իւր ի սուրբ Աթոռս բերցէ անտի։ Այլ սրբազան Վեհըն զորինչ վասն այն ընչիցն գրեաց ի Բասրա ի փետրվարի եւն, յայնժամ սմա ծանոյց։ Բայց այն թուղթն տակաւին ոչ էր հասեալ առ նա որ իմանայր, այնր աղագաւ այժմ այսպէս էր գրեալ, վասնորոյ՝ այժմ ևս վերստին գրեաց զնոյն՝ զի իմասցի։ Եւ այժմ նուիրակ կամէր յղել ի կողմունսն Հնդկաց, և ընդ նմա ևս երկարապէս զբանս գրէր վասն ընչիցն առ մահտեսի Յարութիւն և Միքայէլ Աղայսն, որոց զայս ես գրէր, զի ընդ նուիրակին և տէր Յովհաննէսին խորհեսցեն զարժանն առնելոյ, և այնպէս արասցեն։ (Որպէս անելոց եմք յետոյ լիապէս ի գնալ նուիրակին)։ Ուստի՝ զայս ես ծանոյց տէր Յովհաննէսին։ Եւ ղրեաց՝ զի թէ անտի երթալոց է, զնուիրակն ես առ ինքն յղեսցէ, զի ի միասին երթիցեն։ Եւ թէ աստ գալ կամի, ևս ծանուսցէ, զի պատրաստեսցէ զնուիրակն, զի ի գալն իւր աստ՝ առեալ ընդ ինքեան գնասցէ։ Եւ զի՝ ի Բայազիտ առ Նոնուսեցի մահտեսի Յովհաննէսն ԻԵ թիրմայ շալ ունէր եղեալ և խնդրեալ էր ի սրբազան Վ.եհէն՝ զի զայնս առեալ, զկէս գինն նոցին անդ հասուսցէ ինքեան, և զկէսն ի Բասրա։ Բայց որովհետև վասն սաստիկ տօթոյն, ի յամարայնի՝ շալն դժուարաւ պահեալ լինի աստ ի ցեցոյ, և մանաւանդ՝ ոչ այնքան պիտոյանան մեզ, վասնորոյ ոչ էառ։ Այլ միայն թէ՝ վասն խաթեր նոցա, զԺ առնուլ կամեցաւ յայնցանէ (եթէ աժան լինիցին), և զգինս նոցա, ի Բայազիտ կամ ի Կարին տալ խոստացաւ ինքեանց։ Թուղթ մի ևս առ Աբրահամ վարդապետն գրեաց ի Լիժ։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ զթուղթ գրելն առ ինքն՝ ի փետրվարի եւն. և զնոյն բանսն փոքր ինչ վերայիշելով։ Եւ ի Հնդկաց Բ թուղթ էր եկեալ ի վերայ սորա ընդ վերոյիշեալ գրեանցն Հնդկաց, զայնս ի մէջ թըղթոյս եզեալ առ ինքն յղեաց։ Յղեցան այսոքիկ ընդ Պաղտասար վարդապետի սպասաւոր գրաբեր Տիրացու Սահակին։ Որ եւ ի ժարտի ԻԵ։

ՃՂԸ.

Ի Կարին՝ Առ մեծամեծ տաճիկսն տեղւոյն, եւ առ մերայինսն։ Բացասելով զխնդիրս նոցին որ վասն ուղտուցն։

Յայսմ միջոցի՝ ոմանք ի Կարնոյ տաճիկ Աղայիցն՝ զուգաս իւրեանց աստ բամբակի էին յղեալ։ Եւ մինչ առեալ ուղտապանացն զբամբակն՝ կամէին ի վերայ Կարսայ վերադառնալով ի տեգիս իւրեանց։ Եւ ի ճանապարհին Բամբկաձորցւոցն հանդիպեալ նոցա, զուղտսն հանդերձ բեռամբք և արամբքն քշեալ տարան ի Բամբկաձոր։ Եւ զաւղտսն տարեալ մատուցեալ էին Հե-

բակլ Արքային։ Եւ ի գիտելն զայս անցս մեծամեծ տաճկաց Կարնոյ, ամենեքեանքն աղերսիւ ղրեալ էին առ սրբազան Վեհըն, առ խանն մեր, և առ հաճի Ախմատ խանն, իբրու յանդէտս ընելով զինքեանս թէ տանօղ ուղտուցն ով է, աղաչեալ էին, զի ով ոք տարեալ է ղուղաս իւրեանց, գրեսցեն նոցա և յետս առեալ առ ինքեանս յղեսցեն ընդ արանցն իւրեանց։ Եւ եկեալ արանցն նոցա աստ (որք էին այն գերեցեալք ուղտապանքն. զի յետոյ գերեալքն ի բաց էին թողեալ զնոսա ունայն). ետուն զթուղթն սրբազան Վեհին. և սրբազան Վեհըն ասաց նոցա. զի զթուղթ խանին ևս տարեալ տացեն ինքեան, և ի նմանէ զպատասխանին առեալ եկեսցեն աստ, զի տեսցէ թէ՝ խանն որպիսի կերպիւ պատասխանի գրէ նոցա. ինքն ևս նոյնպէս գրեսցէ։ Իսկ յետ քանեաց աւուրց՝ ուղտապանացն առեալ զպատասխանի թղթոյն ի խանէն, եկին աստ. և սակաւ ինչ մնացեալ՝ թարց առնլոյ ի սրբազան Վեհէն զպատասխանի բերեալ թղթոյն իւրեանց, փութով անցեալ աստի ի Կարս էին գնացեալ։ Եւ սրբազան Վեհըն յետոյ իմացեալ զգնալն նոցա, փութով զթուղթ մի գրեաց առ մեծամեծ տաճիկ Աղայսն Կարնոյ ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Ըստ այսմ թէ՝ այժմ կողմունքս այս վրդովեցեալք են և թշնամի եղեալք միմեանց, երևանցիք ընդ թիֆլիզեցւոց, և թիֆլիզեցիք ընդ երևանցւոց։ Նոյնպէս կարսեցիք և ախլցխացիք ընդ Թիֆլիզու և Վրաստանու, և նոքա ընդ նոսա։ Յորոց միջի ոչ գոյ աստ այժմ խաղաղութիւն ինչ և սէր, բաց ի թշնամութենէ, և զմիմեանս աւար առնլոյ։ Եւ յայսմ պատճառէ հատեալ է աստ ամենևին երթ և եկն սոցա միմեանց։ Արդ՝ եթէ այսպէս ոչ լինիցէր, գրէաք անյապաղ, զայդ իրիջայդ առ Հերակլն։ Բայց այժմ մինչ այսպէս է որպէս ասացաք, մեր գիրն և խօսքն ևս է առ նա անընդունակ։ Եւ ի հաստատութիւն բանիս՝ առ ի հաւատալ նոցա, գրեաց և դրան մի համանման ասացելոյս, որ եղև ի մօտակայ աւուրքս։ Զի յանցեալ աւուրսն աստէ՝ Բամրկուձորցիք եկեալ ի գլուխ Սև ջրոյն, զկողբեցիսն թալանեցին, և զապրանսն նոցա տարան։ Հալով առ մեզ եկին նոքա, և մեք իրիջայ գրեցաք առ նա յետս տալ զապրանսն նոցա։ Ընդ վայր եղե աստ աղերսանքն մեր։ Այսր աղագաւ զիմրդ լսէ նա մեզ։ Թուղթ մի ևս առ Կարնոյ Առաջնորդ Սարգիս վարդապետն, առ մահտեսի Գրիգորն, և առ մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Զի բանիւ վերոյիշեալ տաճկացն, սոքա ևս էին գրեալ առ սրբազան Վեհըն զթուղթ աղերսանաց այնր աղագաւ։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն ծանոյց նոցա զմիտս տաճկաց թղթոյն զորինչ գրեաց առ նոսա։ Զայս ևս գրելով նոցա թէ՝ եթէ թշնամութիւն ոչ լինէր ի մէջ սոցա, կարելի էր զայդ գրելն առ Հերակլ Արքայն։ Որպէս յառաջ մինչ գոյր ի միջի խաղաղութիւն, գրեցաք նմա վասն ապրանացն ձերոց, և հանել տուաք անտի։ (Որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺԹ-երորդ ամին, և ի դեկտեմբերի Ը, և ի վերոյս նորին). իսկ այժմ մինչ այսպէս է, մեր խօսքն անընդունակ է աստ առ նա. քանզի գազանացեալք են ամենեքեան, և զմիմեանս կլանել ջանան, ով ում լսէ։ Եւ պատուէր ասել Աղայիդ զի իմասցին, և թողութիւն արասցեն։ Զայսոսիկ՝ ընդ մեր միրզայի տղայոցն և միոյ թուանկչու՝ առ Կարնոյ ուղտապանսն յղեցաք ի Կարս։ Որք ելին ի մարտ ԼԱ։

ՃՁԹ.

Ի Կարս՝ Առ Նուիրակն եւ Առաջնորդն եւ առ յայլս պատուէր՝ զի զեյթեաղի առեալ յղեսցեն ի նիւթ սրբալոյս Մեռոնին։

Թուղթ միամտութեան գրեաց սրբազան Վեհըն առ Կարսայ Նուիրակ Յակոբ վարդապետն։ Որ ի նուիրակական արդեանցն իւրոց, (1 ԾԴ) գրամ էր հասուցեալ մեզ, զոր տուեալ էր երկաթի, բահի՝ և ղաթրանի և ընդ մահտեսի Յօնանին ի սուրբ Աթոռս յղեալ։ Որոյ սակս և պատուէր՝ զի զթուղթս զայս իբր զապզ առ ինքն պահեսցէ, զի յաւուր հաշուատրութեան իւրոյ պիտոյասցի ինքեան։ Եւ որպէս քան զայս յառաջ ի յունվարի ԺԳ, և այժմ ևս գրեաց՝ զի վասն

օրհնութեան սրբալոյս Մեռոնին, Լ թիլանի լաւ զեթեաղի առեալ յղեսցէ։ Եւ պատուէր՝ թէ գրեալ եմ Սուքիաս վարդապետին, զի թէ դու յայդր չլինիցիս, նա առնուցու զձեթեաղին, և յղեսցէ աստ։ Ուստի՝ թէ այսպէս լինիցի ասէ, յետոյ դու զգինն տուր Սուքիաս վարդապետին։ Եւ Մարտիրոս վարդապետն (որ ի մարտի Ե յիշեցաւ)· մինչ էր յԱխլցխայ, զկոնդակն իւր և զՄեռոնն տուեալ էր քահանայի միոյ՝ զի զարտաքին վիճակսն Ախլցխայու երթեալ նուիրակեսցէ Եւ ի դալն աստ՝ չէր առեալ ի նմանէ. վասնորոյ՝ մինչ ի յունվարի ելն յղէր սրբազան Վեհըն զմահտեսի Յօնանն ի յԱխլցխա, պատուիրեաց նմա առնուլ զայնս յերիցուն, և բերել ընդ իւր աստ։ Իսկ նա առեալ և բերեալ էր ընդ իւր մինչև ցհարս, և անդ ինքնագլուխ տուեալ նուիրակին։ Յորմէ կարծիս էառ սրբազան Վեհըն, թէ թէ գուցէ դողացեալ իցէ ի նմանէ, և տուեալ Ախթաբժայիցն կամ այլոց։ Վասնորոյ՝ գրեաց Յակոբ վարդապետին, զի զորքանութիւն նորին գրեալ ծանուսցէ ինքեան։ Նաև՝ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն՝ վասն Բ բոյրուլթուիցն, զորս խնդրեալ էր սրբազան Վեհըն ի փաշայէն (որպէս ասացաւ ի մարտի Ե), տուեալ էր գրողացն Գ ոսկի ի կողմանէ մերմէ։ Որոյ աղագաւ գրեաց սմա, զի ի նուիրակական արդեանցն իւրոց Դ ոսկի տացէ նմա։ Եւ հարկ՝ զի զորպէսն գործոյն իւրոյ միշտ գրեսցէ ինքեան։ Փուսուլայ մի ևս գրեաց առ սա, զի թէ զձեթեաղին առեալ է, ընդ գրաբեր տաճկին յղեսցէ. և թէ տակաւին չիցէ առեալ, ընդ նմա յղեսցէ։ Թուղթ մի ևս առ Լօշավանից Առաջնորդ Աուքիաս վարդապետն գրեաց։ (Որ ի վերդ և ի յունվարի ԺԳ յիշեցաւ), ծանուցանելով նմա զգրելն առ նուիրակին վասն վերոյիշեալ զեթևաղունս։ Եւ պատուէր՝ զի թէ նուիրակն անդ իցէ, լաւ զեթեաղի գտցեն, և Լ թիլանի առեալ աստ յղեսցեն։ Իսկ թէ նուիրակն մեր անդ ոչ իցէ, ինքն առցէ զձեթեաղին և մեզ յղեսցէ, և զթուղթ նուիրակին առ ինքն պահեսցէ. զի յետոյ տուեալ նմա զթուղթն, առցէ ի նմանէ զդրամն։ Այլ և՝ վասն տախտակացն՝ (որք ի յունվարի ԺԳ ի թղթոջ նուիրակի Յակոբ վարդապետին յիշեցան). զորս Ղարաբէկն ըստ խնդրոյ սրբազան Վեհին առեալ էր և առ սա եղեալ։ Գրեաց սմա սրբազան Վեհըն՝ զի քիրայով զտախտակսն ի սուրբ Աթոռս յղեսցէ։ Զքիրայն՝ ինքն տալ խոստացաւ տախտակ բերողացն։ Թուղթ մի ևս առ Ղարաբէկն գրեաց վասն զեթեաղուն, զի ինքն ևս հետևելով, լաւ և նոր զեթեաղի գտեալ, առնուլ տացէ նոցա։ Եւ զի վերոյիշեալ մահտեսի Յօնանն, ի դառնալն յԱխլցխայու մինչ հանդիպեալ սարասկեարին, զվտանկաւոր իմն դուռն բացեալ էր վասն մեր, (զոր այժմ չէ դէպ ասել)· ձևացուցանելով այնպէս, իբր թէ օգուտ մեզ։ Որ ոչ թէ օգուտ էր, այլ վնաս մեծ։ Զոր ոչ թէ վասն օգտի մերոյ՝ այլ վասն իւրոյ ախտի՝ թարց կամաց և գիտութեան սրբազան Վեհին արարեալ էր։ Ընդ որ հաճեալ սարասկեարին՝ գրեալ էր առ սրբազան Վեհն առնել զայն վաղվաղակի, իբրու թէ օգուտ է մեր։ Այլ ոչ թէ հարկադրելով՝ այլ ի կամս իւր արկանելով։ Իսկ սրբազան վեհըն անկաւ ի մէջ մեծի տարակուսանաց, չառնէր՝ վտանկէր, և թէ առնէր, տասնապատիկ քան զայն էր վտանկ։ Ուստի շիւարեալ չգիտէր թէ զի՞նչ արասցէ. և բարւոք վարկաւ ժամանակ ինչ թուլատրել, մինչև տեսցէ զվախճանն թէ որպէս լինի։ Բայց Ղարաբէկն ևս էր գրեալ առ սրբազան վեհըն թէ՝ եթէ այդպէս արասցես՝ օգուտ քոյ է։ Այժմ ևս ի դառնալն անտի տղայոցն, որք ի մարտի ելն գնացին անդ կարնեցւոց թղթովքն, գրեալ էր կրկնակի առ սրբազան վեհըն, թէ որպէս արարեր զայն զոր յառաջ գրեցաք։ Իսկ որովհետև (որպէս ասացաք) կամէր սրբազան վեհըն ժամանակ ինչ թուլատրել՝ վասնորոյ՝ զգալուստ այն տղայոցն այժմ ընաւ չյայտնեաց ի մէջ այս թղթոցս, այլ գրեաց յերեսն թըղթոյ Ղարաբէկին թէ՝ քան զայս յառաջ զտղայսն զորս յղեցաք յայդր թղթովք կարնեցւոցն, տակաւին առ մեզ ոչ դարձան։ Զի գիտասցէ, թէ տակաւին չէ հասեալ թուղթն իւր աստ առ ինքն։ Թուղթ մի ևս առ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի պատասխանի թղթոյն։ Շնորհակալելով իբրու զնմանէ, զի ի գնալն մահտեսի Յօնանին ի յունվարի ելն ընդ չորից կարգաւորացն ի յԱխլցխա, սա ևս էր գնացեալ ընդ նոսա անդ հրամանաւ փաշային իւրոյ,

և անդ որպէս թէ աշխատեալ ընդ նմա, որպէս ինքն գրեալ էր սրբազան վեհին, և Յօնանն ևս ասէր զնոյն։ Բայց սակայն՝ կաշառակուր էին եղեալ երկուքն ևս, և ոչ որպէս պատուիրեալ էր սրբազան վեհըն այնպէս էին շարժեալ։ Զի ոչ զկոնդակն զոր գրեաց առ նոսա, յեկեղեցւոջ ընթերցեալ էին, և ոչ ինքեանք յեկեղեցին գնացեալ, և ըստ մերոյ աւանդութեան զեկեղեցական արարողութիւնս և զժամերգութիւնս առնել տուեալ նոցա։ Մինչև Սուլէյման փաշայն ևս՝ (ըստ որում սրբազան վեհըն և սաքասկեարն գրեալ էին նմա։) հարկեալ էր զնոսա երթալ ժողովել զնոսա յեկեղեցին, և ըստ մերոյ աւանդութեան առնել տալ նոցա զարարողութիւնս, և զժամակարգութիւնս եկեղեցւոյ. և նոքա ոչ էին արարեալ, այլ զկաշառս առեալ յԱխթարմայից՝ հարևանցօրէն զբանս ինչ խօսեցեալ էին ընդ նոսա, և դարձեալ եկեալ։ Բայց սակայն՝ առերես այժմ շնորհակալութիւն գրեաց նմա սրբազան վեհըն։ Զբերելով նմա առ այժմոյս յերես՝ զարարեալն տիրանենգութիւն։ Բայց զմահտեսի Յօնան ախտաւոր և տիրանենգ ծառայն այլահաճոյ՝ վասն այսր, նա և վասն վերոյ ասացեալ վտանկաւոր բանի յօրինմանն, վանեաց այժմ յերեսաց։ Այլ և՝ ծանոյց մահտեսի Փիլիպպոսին զգրելն նուիրակին մեր և Առաջնորդին վասն զեթեաղուն։ Եւ պատուէր՝ զի ինքն ևս մուղայէթ լեալ, լաւ զեթեաղի առնուլ տացէ նոցա և յղեսցէ։ Ծանոյց ևս զգրելն առ նուիրակն մեր վասն իւրոյ խարճեալ Դ ոսկոյն զի տասցէ ինքեան։ (Որպէս ի վերոյ ասացաւ)։ Ցղեցան այսոքիկ ընդ Ղարահիւսէյնի փեսայ Հիւսէյինին։ Որ եւ ի Ապրիլի Զ։

Փօլիցայ ի Կարին ի վերայ մահտեսի Փիլիպպոսին, ի ձեռն տաճկի։

Որպէս ի վախճանական պատմութեան ՌՄԺԶ-երորդ ամին ասացաւ, և ի տեղիս տեղիս ևս անտի և այսր յիշեցաւ, իբրև ետ մեզ խանն զգեօղս մեր իջարայով՝ 22) մինչև ցայժմ յամենայն ամի նոյնպէս արար, և չկարացաք հանել ի գլխոյ մերմէ։ Զի յորժամ կամէր սրբազան վեհըն թողուլ ի բաց. խանն խռովէր, և զվնաս հասուցանէր մեզ։ Վասնորոյ՝ ակամայ առնուաք ի վերայ մեր յամենայն ամի զիջարայն գեղջս։ Ցայսմ ամի ևս առաք, և թամասուկ տուաք խանին։ Եւ խանն զրամ պարտ էր հաճի Զէյնալուն. ուստի՝ զմեր իջարայն նմա յանձնեաց՝ զի առցէ ի մէնջ ի տեղի պարտուցն իւրոց։ Եւ նա ի Քեալբալայի Միրզայ Բաբաբէկ անուամբ օտարական տաճկէ ումեմնէ դրամս էր առեալ՝ և ի վերայ մեր բաբաթ արարեալ։ Ցորմէ մասն ինչ՝ որ Ծ թուման, աստ ետուք։ Իսկ մնացեալն որ էր ԱԾ թուման, ի Կարին տալ կամեցաք։ Եւ այժմ յիշեցեալ Քեալբալայի Միրզաբաբայի ընկեր հաճի Ահմատն երթայր ի Կարին։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն զԱ բարաթագիր դրեաց ի վերայ մահտեսի Փիլիպպոսին, և ետ նմա, զի գնացեալ անդ առցէ զդրամն ի նմանէ։ Ծանոյց նաև մահտեսի Փիլիպպոսին զեղեալ պայմանն իւր ընդ տաճկին։ Զի ընդ տաճկին Խ օր պայման եղաք, որ ի լրանալ Խ աւուրն տացուք նմա զդրամն։ Եւ սկիզբն պայմանին ի մարտի ԻԳ եղև։ Եւ պատուէր՝ զի թէ զտալիք դրամն Պետրոսին և Մարտիրոս (ՋԼ) և թէ տէր Պետրոսինն (ՂԵ) (որք ի մարտի Ի յիշեցան), առցէ ի նոցանէ, և զմնացեալ պակասն ԱԾ թումանին յինքենէ հոգասցէ, և ի լրանալ Խ աւուրն տացէ տաճկին, և զայս բարաթագիրս առեալ ի նմանէ առ մեզ յղեսցէ։ Եւ սպառնալիք ևս գրեաց Պետրոսին՝ Մարտիրոսին՝ և տէր Պետրոսին՝ զի ասասցէ նոցա մահտեսի Փիլիպպոսն, մինչ ոչ տացեն նոքա զտալիք գրամն մեր։ Փուսուլայ ևս դրեաց առ սա առանձին՝ զի թէ նոքա իսպառ չկարիցեն տալ ինքեան զտալիք գրամն իւրեանց, ինքն տացէ տաճկին զԱԾ թումանն։ Զի ի չլինելն՝ ամօթ մեծ է ասէ մեզ։ Եւ պատուէր՝ զի յետ տալոյն զդրամն տաճկին, ասասցէ նմա թէ՝ զայս դրամս խալիֆայն փոխ խընդրեալ է յինէն։ Եւ հաճի Ահմատ անուամբ տաճիկն Ապրիլի Է։

ՃԴ.

Ի Բայազիտ՝ եւ ի Կարին՝ Առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն, եւ առ Բայազիտու իշխանսն վասն առնլի զրամոց մերոց, եւ վասն բանի ինչ։

Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետն (որ ի փետրվարի ԺԸ յիշեցաւ) պահարա-

նաւ Թուղթ էր յղեալ առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն ի Կարին, յղել ի սուրբ Աթոռս առ սրբազան Վեհըն։ Եւ նա ևս զպահարանն զայն ընդ Պաղտասար անուամբ փայեկի միոյ յղեալ էր առ մեզ։ Բայց փայեակն այն՝ Թարց ժամանելոյ ի սուրբ Աթոռս, և տալոյ մեզ զպահարանն, վասն բանից իւրոց գնացեալ էր յԵրևան, ընդ իւր ունելով զպահարանն։ Եւ զկնի քանի մի աւուրց եկն նա յԵրևանայ ի սուրբ Աթոռս, և ետ մեզ զպահարանն և փութացոյց մեզ գրել զպատասխանիս իւրոյ բերեալ Թղթոցն՝ զի առեալ տարցէ ընդ իւր։ Բայց վասն փութով վերադառնալոյ փայեակին աննարին էր փոյթ ընդ փոյթ գրելն մեզ զպատասխանիս Թղթոցն զի ընդ փայեակին յղիցէաք։ Քանզի Թալպիզ փայեակն այն՝ յերեկային եմուտ ի սուրբ Աթոռս, և ի լուսանալ առաւօտուն գնալոց էր աստի։ Վասնորոյ և սրբազան Վեհըն առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն զԹուղթ միամտութեան գրեաց, ընդ իւր յղեալ փայեակին, զի զպահարանաւ Թուղթսն զորս յղեալ էր առ մեզ, առ մեզ հասեալ իմասցի, և միամտեսցի։ Որում և ծանոյց զանխոհեմ արարմունս իւրոյ յղեալ փայեակին, (որպէս ասացաւ ի վերդ) որոյ աղագաւ և զանձեռնհաս լինելն մեր այժմ գրելն ընդ փայեակին զպատասխանիս իւրոյ յղեալ Թղթոցն։ Եւ խոստացաւ նմա յետոյ գրել, և յղել առ ինքն։ Նաև՝ ծանոյց ևս նմա քան զայս յառաջ յամսոյս Է ի ձեռն օտարական տաճկի միոյ բարաթ առնելն ի վերայ իւր։ (Ծ) Եւ պատուէր՝ զի տացէ։ Այլ և վասն Թօխաթու հին նուիրակի առ Պետրոսն և Մարտիրոսն եղեալ դրամոյն՝ (Ա|Լ) որպէս քան զայս յառաջ յամսոյս Դ։ Եւ այժմ ևս գրեաց նմա, զի զԹուղթս զայս ընթերցեալ առաջի նոցա, պահանջեսցէ ի նոցանէ զդրամն։ (Ա|Լ) Եւ յոչ տալն նոցա, ծանուսցէ ինքեան։ Քանզի՝ կամէր սրբազան Վեհըն՝ զի Թէ յայս անգամ ևս չտացեն մեզ նոքա զդրամն մեր յետոյ ընդ բանիւ արասցէ զնա։ Թուղթ մի ևս ի Բայազիտ՝ առ Մարգար Աղայն, առ մահտեսի Էլօն, առ պարոն Մուրատն, առ պարոն Թագէոսն, և առ պարոն Թումայն գրեաց. զի սոքա քան զայս յառաջ յանցեալ ամին և ի հոկտեմբերի ԻԷ վասն պատճառի ինչ՝ Գ ամիս պայմանաւ դրամ փոխ առին ի մէնջ, զի ի լրանալ պայմանին տացեն։ Եւ ահա Գ ամիսն մերձ է ի լրանալ, բայց սոքա ի յայն դրամոյն՝ մինչև ցարդ ոչինչ են հասուցեալ առ մեզ։ Եւ Հաճի Զէյնալն (որ յամսոյս Է յիշեցաւ) այժմ դրամ (ԾԼ) էր առեալ ի Հաճի Բաղրէն, և ի կողմանէ մեր գիւղի իջարային ի վերայ մեր բարաթ արարեալ, զի մեք տացուք նմա զդրամն, բայց սրբազան Վեհըն Հաճի Զէյնալուն յայսմ ամի մի զկնի միոյ բարաթագիր առնելոյն ի վերայ մեր յոյժ զզուեալ, վասն որոյ՝ այժմ ոչ կամէր տալ Հաճի Բաղրուն զդրամն։ Իսկ նա յառաջնմէ դրամ էր տալոց Նմնուսեցի մահտեսի Ցովհաննիսին։ Վասնորոյ՝ խնդրեաց ի սրբազան Վեհէն զդրամն զայն ի Բայազիտ տալ ինքեան, զի անդ տուեալ Նմնուսեցի մահտեսի Ցովհաննիսին, գերծցի ի պարտուցն իւրոց։ Ուստի և սրբազան Վեհըն ըստ խնդրոյ նորին, ի Բայազիտ խոստացաւ տալ նմա զդրամն։ (Ծ) Եւ վասն առ բայազիտցիսն եղեալ դրամոյն՝ (Ր) քան զայս յառաջ սրբազան Վեհըն գրեցոյց սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին առ տէր Վահանն, ասել նոցա՝ զի պատրաստեսցեն զդրամն (Ր) և այսր աղագաւ այժմ ինքն ևս գրեաց առ նոսա, զի մինչև ցմէկ ամիսն ժողովեալ զդրամն (Ր) տացեն տէր Վահանին, որ ի պատրաստի ունիցի։ Զի զկնի սորոյ Զատկին՝ ի ձեռն Հաճի Բաղրին բարաթ էր առնելոց ի վերայ նորա։ Զի զմասն ինչ (ՃԼ) ի յայն դրամոյն (Ր) տաճկին տացէ, և զմնացեալն (Դ) յետոյ առ մեզ յղեսցէ։ Յղեցան այսոքիկ ընդ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին յղեալ Պաղտասար փայեկին։ Որ եւ ի Ապրիլի ԺԲ։

ՃԴԱ.

Ի Թիֆլիզ՝ Առ չիլթճոց Անաֆին շնորհակալութիւն, վասն յանուն սրբոյ Աթոռոյս նոր զանձանակ հաստատելոյն ի միջի իւրեանց։

Արդ՝ ի բնէ սովորութիւն է ի մէջ ամենայն Անաֆից, զի յորժամ արուեստաւոր ոմն զաշակերտն իւր ի յարհեստն այն

զոր ինքն ուսեալն է լաւապէս կրթէ, յետ այնորիկ ըստ սովորութեան իւրեանց վարպետ օրհնէ զնա, և չրաղ առնէ ինքեան։ Եւ աշակերտն ես՝ յայնժամ ըստ կարեաց իւրոց խարճ հոգացեալ, յայնմ աւուր՝ ընդունելութիւն և հացկերոյթ առնէ այնմ բոլոր Անաֆին, և վարպետին իւրոյ ես տուշալիկ[23]) տայ։ Այսպէս և ի Թիֆլիզ քաղաքուոջն բարեպաշտ Ցարութիւն անուամբ այր ոմն, որ էր ուստաբաշի չիթճոց Անաֆին, տեռեալ էր թէ ի յընդունելութենէն մեղք ծնանին. այսինքն կադ և աղմուկ լինին, վասնորոյ՝ զայն Անաֆի բոլոր վարպետսն ի բարեգործութիւնս յորդորեալ, համակամութեամբ ամենեցուն, յանուն սրբոյ Աթոռոյս գանձանակ էր հաստատեալ ի միջի իւրեանց, զի յորժամ աշակերտն այն զընդունելութեան խարճն զոր հոգալոց է ի վարպետ լինելն իւր, մի արասցէ. այլ զայն ի գանձանակն սրբոյ Աթոռոյս արկցէ. զոր ինքն այժմ հաստատեալ է։ Եւ ուստաբաշի Ցարութիւնն այն բաց ի գանձանակ հաստատելոյն, զիւր տուշալիկն ես արկանէր ի գանձանակն սրբոյ Աթոռոյս, վասնորոյ՝ և սրբազան Վեհըն ըստ խնդրոյ տեղւոյն Նուիրակ և Առաջնորդ Ռեթէոս վարդապետին՝ զօրհնութեան և շնորհակալութեան թուղթ մի գրեաց չիթճոց բոլոր Անաֆին։ Ցորում և ուստաբաշի Ցարութիւնին՝ յատուկ օրհնութիւն և շնորհակալութիւն ես գրեաց, և զնա սրբոյ Աթոռոյս վերակացու և գանձապետ կարգեաց։ Պատուիրելով նմա զի գանձապետութեան գործոյն իւրոյ մուգայէթ լինիցի. և զարդիւնսն առատութեամբ առեալ ի գանձանակն արկցէ և առ ինքն պահեսցէ, և ըստ ժամանակին նուիրակին մերոյ տացէ, և մեզ դրեսցէ։ Կրկին պատուէր՝ զի զորքան գանձանակաւ դրամս այժմ ընդ իւր ժողովեալ ունի, նուիրակին մերոյ և Առաջնորդ Ռեթէոս վարդապետին տացէ, զի նա առ մեզ հասուսցէ։ Նաև կանոն է սրբոյ Աթոռոյս, զի ի ժողովարար յղելն մեր ի Թիֆլիզ վասն մոմի, քանի մի ղալիպ սպիտակ մոմ տամք նմա զոր տարեալ անդ թափէ, և իբր օրհնութիւն սրբոյ Աթոռոյս գլխաւոր Անաֆիցն բաժանէ, զի առատութեամբ տացեն մոմ սրբոյ Աթոռոյս։ Արդ՝ յայսմ ամի ևս ըստ սովորութեանն յորժամ սրբազան Վեհըն ի մարտի ԻԲ զԱհարօն վարդապետն մոմի ժողովարարութեան աղագաւ յղեաց ի Թիֆլիզ. բայց ոչ էր բաւականացեալ ընդ ետ տարեալ մոմն։ Որոյ աղագաւ և Ռեթէոս վարդապետն ի մէնջ մոմ էր խնդրեալ յղել։ Վասնորոյ՝ և հրամանաւ սրբազան Վեհին ԸԾ բաժանելոյ մոմ յղեցաք առ նա ընդ վրացի Եսայուն հանդերձ թղթովն չիթճոց Անաֆին։ Եւ Ռեթէոս վարդապետն նշխար և սեր էր խնդրեալ ի մէնջ, Բայց չէր սովորութիւն. վասնորոյ՝ ոչ յղեցաք։ Եւ վրացի Եսային ի Ապրիլի ԺԶ։

Առ Հաշտարխանու նուիրակ Մինաս պետն ի պատասխանի Թղթոյն։

Թուղթ գրեաց սրբազան Վեհըն առ Հաշտարխանու Նուիրակ Մինաս վարդապետն ի պատասխանի ի դեկտեմբերի Ի դրեցեալ թղթոյն։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի յունվարի ԻԳ զթուղթ գրելն առ ինքն հանդերձ դիտմամբն ի կարճոյ։ Եւ հարկ զի գրեսցէ զպատասխանին ի միամտութիւն իւր։ Եւ զի՝ ի դրդմանէ այլոց ոմանց տեղւոյն, վասն թղթագրութեան զբանս էր գրեալ առ սրբազան Վեհըն։ Վասնորոյ և սրբազան Վեհըն ծանոյց նմա բազմիցս զթուղթ դրեալ առ նոսա, և ի նոցանէ պատասխանի ոչ ընկալեալ։ Եւ մանաւանդ պատճառելով զնեղութիւն կողմանցս վասն հանրատարած խռովութեանն, որոյ աղագաւ և անհնարին գոլ աստի զթուղթ և զմարդ յղելն անդ։ Այլ և Ռուսաց թագաւորի հրամանագրի օրինակն խնդրեալ էր ի սրբազան Վեհէն. զոր և գրեցուցեալ ընդ թղթոյս յղեաց առ նա։ Նաև հրամանաւ սրբազան Վեհին՝ թուղթ մի ևս Մկրտիչ վարդապետն մեր դրեաց առ նա, զի Դ քիւրք առեալ յղեսցէ։

Որում և պատուիրեաց՝ զի զոր ինչ հրամանաւ իւրով դրեալ է ինքեան Մկրտիչ վարդապետն, փութով առեալ յղեսցէ, զի մինչև ցաշունն աստ հասցեն։ Ցղեցաւ այս ընդ հաշտարխանցի Ջուլհակ Ցարութիւնին։ Որ եւ ի ապրիլի ԺԶ։

Առ Նախիջևանու Հաձիխանն ի պատասխանի Թղթոյն։

Եղեգաձոր՝ ի վաղուցհետէ ամայի կայր, բայց այժմ Նախիջևանու իշխօղ Հաճիխանն

և նորին ազգական Շիւքիւլլարէկն (որում էր սեպհական մուլք)․ քանի մի գիւղորայս շինեցուցեալ էին յայնմանէ, և զմնացեալն ևս օրաւուր շինեցուցանէին։ Բայց ի նորաշէն գիւղորայս ընակեալ քրիստոնեայքն ոչ ունէին քահանայ։ Եւ ոչ գոյր Առաջնորդ Կարմիր վանիցն որ անդ։ Որոց աղաղաւ և Հաճիխանն զԵրնջակու սրրոյ Կարապետի Առաջնորդ Կարապետ վարդապետն ընդ Շիւքիւլլարէկին եղեալ, հանդերձ թղթով յղեալ էր առ. սրբազան Վեհըն։ Զի գրեսցէ Առաջնորդացն երկրին այնմիկ, զի ի նորաշէն գիւղորայս եղեալ ժողովրդոցն քահանայ յղեսցեն։ Եւ ինքն ևս աստի Առաջնորդ յղեսցէ Կարմիր վանիցն։ Եւ որովհետև գիւղորայքն տակաւին ոչ էին ըստ բոլորին ի շինութիւն եկեալ․ վասնորոյ՝ և սրբազան Վեհըն ըստ խնդրոյ Հաճի խանին այժմ ոչ յղեաց անդ Առաջնորդ։ Այլ զթուղթ մի գրեաց առ. նա ի պատասխանի թղթոյն։ Որում և խոստացաւ զի երբ գիւղորայքն ըստ բոլորին ի շինութիւն գայցեն, յայնժամ Առաջնորդ յղեսցէ Կարմիր վանիցն։ Եւ վասն քահանայից ոչինչ գրեաց նմա․ այլ պատուիրեաց Կարապետ վարդապետին, զի ի հասանելն ի տեղի իւր, զմի ոմն ի միաբանից իւրոյ վանիցն երբեմն երբեմն յղեսցէ առ ժողովուրդսն Նորաշէն գիւղորէիցն զի երթեալ շրջեսցի ի մէջ նոցա․ և ի ձեռն հոգևոր խրատու շահեսցէ զնոսա մինչև ի կատարեալ շինութիւն գալն գիւղորէիցն․ և ապա յայնժամ ըստ խոստման իւրոյ Առաջնորդ յղեսցէ Կարմիր վանիցն։ Եւ զի՝ աստ ևս Եղեգաձորցիք դտանէին, որոց աղագաւ եկեալ էր Շիւքիւլլախանն առ ի տանել զնոսա ի հայրենի երկիրն իւրեանց։ Որոյ գնացեալ առ խանն մեր խնդրեաց զնոսա։ Եւ խանն ևս մեծաւ պատուով ընկալաւ զնա, և ի կողմունս Գառնոյ՝ ազգ մի գոյր քրդաց զոր Միլլու կոչէին (որք էին բանակ մեծ)․ զայն ետ նմա, և սիրով ուղևորեաց։ Եւ Կարապետ վարդապետն ոչ գնաց ընդ Շիւքիւլլարէկին․ քանզի մերձ էր սուրբ Զատիկն, վասնորոյ մնացեալ աստ արար զսուրբ Զատիկն, և ապա գնաց աստի։ Որ եւ հանդերձ աբամբքն իւրովքն ի Ապրիլի Ի։

Ի Բայազիտ՝ Առ Նսնուսեցի մահտեսի Յովհաննէսն՝ վասն առնլի դրամոյն իւրեանց ի հաճի Բաղրէն, և նորին Թէմէսուկացն։

Եւ թէպէտ քան զայս յառաջ յամսայս ԺԲ խոստացաւ սրբազան Վեհըն Բայազիտցւոցն զի փութով հոգացեալ զդրամն մեր (ր) տացեն տէր Վահանին, որ յետ քանեաց աւուրց ի ձեռն հաճի Բաղր տաճկին ի կողմանէ մեր գիւղի իշխայէն բարաթ արասցէ ի վերայ նորա, այլ ոչ ևս գնաց անդ հաճի Բաղըն։ Բայց ի կողմանէ իւրոյ տալեաց դրամոյն (ԾՀ) Նսնուսեցի մահտեսի Յովհաննիսին և նորին փեսայ Մարկոսին եկեալ աղաչեաց զսրբազան Վեհըն, զի զայն դրամն (ԾՀ) ի Բայազիտ Նսնուսեցի մահտեսի Յովհաննիսին և Մարկոսին տացէ, և զիւր Բ թամասուկսն բերել տացէ ի նոցանէ, և իւրեան հասուսցէ։ Եւ մինչ կամէր սրբազան Վեհըն զի ըստ խնդրոյ Հաճի Բաղրուն գրեսցէ Նսնուսեցի մահտեսի Յովհաննիսին, նոցա չրաղ Աղաբաբն, յայնժամ եկն յԵրևան․ ընդ իւր ունելով զՋԳ թումանի և զՌ դեանի թամասուկն պարոն Մարկոսին, որով և խնդրէր զգրամն ի հաճի Բաղրէն։ Եւ նա ևս կրկին անգամ աղաչեաց զսրբազան Վեհըն զի զտալիք գրամն մեր (ԾՀ) ինքեան Նսնուսեցի մահտեսի Յովհաննիսին և նորին փեսայ Մարկոսին տացուք ի Բայազիտ, և զիւր Բ թամասուկսն առեալ ի նոցանէ ինքեան տացուք։ Եւ սրբազան Վեհըն ևս լսելով նմա, պատուիրեաց Աղաբաբին ոչ խնդրել զդրամն ի հաճի Բաղրէն, մինչև գրեսցէ ինքն մահտեսի Յովհաննիսին, զի որպէս գրեսցէ նա ինքեան, այնպէս արասցէ։ Եւ նա ևս ըստ հրամանի սրբազան Վեհին թոյլ ետ։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն զթուղթ մի գրեաց առ Նսնուսեցի մահտեսի Յովհաննէսն ի Բայազիտ՝ (որ ի յունվարի ԺԶ յիշեցաւ), զի գրեսցէ Աղաբաբին որ զպարոն Մարկոսի թամասուկն տացէ մեզ, և ինքն ևս զՃՁ թումանի և ԳՌ դեանի թամասուկն առ մեզ յղեսցէ, զի մեք ևս զԲ թամասուկն Հաճի Բաղրին տացուք, և ինքն անդ զդրամն առցէ ի Բայազիտցւոց․ սրբազան Վեհըն զդահբաշի Սողոմոնն այժմ յղեաց ի Բայազիտ, զի ընդ պարոն Վահանին ի միասին ախլաթ[4]) արարեալ, առցեն ի նոցանէ զդրամն մեր։ Քանզի ցաւեցուցանելով

տայրին։ Ընդ. ղտհբաշի Սողոմոնին՝ Թուղթ մի գրեցոյց սրբազան Վեհըն առ. Տէր Վահանն, դի Թէ մինչև ցայժմ. ի Բայազիտցւոցն առեալ իցէ զգրամն մեր (ր) յորմէ՝ մասն ինչ (ծԼ) հանեալ Նոնուսեցի մահտեսի Յովհաննիսին տացէ, և զմնացեալն որ է Գ Թուման ԳՌ զեան և Ի փարայ, յանձնեսցէ դահբաշի Սողոմոնին, որ բերեալ մեզ հասուսցէ։ Ցղեցաւ այս ընդ. գահբաշի Սողոմոնին։ Որ եւ ի Ապրիլի ԻԱ։

ՃՂԲ.

Ի Պօլիս՝ ի Զմիւռին՝ եւ ի Կարին Թուղթք վասն այլ եւ այլ իրակութեանց։

Արդ ըստ որում. յամսոյս ԺԲ խոստացաւ սրբազան Վեհըն Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին դրել զպատասխանիս ի Պօլսոյ եկեալ Թղթոցն և յղել առ. ինքն։ Ահա այժմ. դրեալ յղեաց առ Նա զի յղեսցէ։ Որք են։ Թուղթ մի առ Պօլսոյ Նուիրակ Զաքարիա վարդապետն ի պատասխանի ի փետրվարի ԺԶ դրեալ Թղթոյն։ Որում. և ծանոյց քան զայս յառաջ ի փետրվարի ԺԸ և ի յունվարի ԺԳ զԹուղթս գրելն առ ինքն։ Այլև՝ ի կողմանէ Զմիւռնոյ Նուիրակ Ղուկաս վարդապետի մինչև ցայժմ. առ ինքն յղեալ դրամոցն, քան զայս յառաջ զդաւԹար մի արարեալ յղեաց առ սա։ Իսկ սա՝ այսր աղագաւ այժմ ոչինչ գրեալ սրբազան Վեհին. բայց Նազարէթն գրեալ էր, և զԲ սխալ գտեալ ի դաւԹարոցն։ Ասելով Թէ՝ այդ մին ԷՌ զռուշդ, ի Ղուկաս վարդապետէն չէ հասեալ Զաքարիա վարդապետին, այլ միայն զԻՌ զռուշ։ Որոյ աղագաւ և սրբազան Վեհըն ի տարակուսի լեալ, գրեաց Ղուկաս պետին, զի ինքեան և Նոցա զմիամտութիւն դրեսցէ, Թէ մինչև ցայժմ. որքան ղրամ. է հասուցեալ Զաքարիա վարդապետին։ (որպէս ասելոց եմք յետոյ) և ծանոյց սմա զգրելն։ Եւ մին սխալն դաւԹարին էր այս՝ զի սրբազան Վեհըն մէկ անգամ. ԲՌ ղռուշ գրէր ի գաւԹարոջն իւրում, (զոր քան զայս յառաջ ի ՌՄԺԹ Թուոջն փօլիցայ արար ի վերայ սորա։ Իսկ սա և Նազարէթն Բ անգամ. ԲՌ ղռուշ փօլիցայ ցուցանէին, ասելով Թէ՝ Բ անգամ. ԲՌ ղռուշ փօլիցայի ղաւզերգ [25]) գոն առ մեզ, բայց ոչ գրէին Թէ՝ երբ և որ Թիւն է, և ում. ձեռօքն։ Վասնորոյ՝ պատուիրեաց Նոցա, դի պարզապէս գրեսցեն զայս ինքեան։ Նա և գրեց Թէ՝ մէկ Ռ պակաս եմ. Թողեալ (որէ Թարճիման օղլու ձեռօքն) որ առեալ եմ. և չեմ. գրեալ։

Առ. Մուրտիկեանց Խօջայ Նազարէթն ի Պօլիս. ի պատասխանի ի փետրվարի ԺԶ գրեալ Թղթոյն։ Որ գրեալ էր սրբազան Վեհըն զհաշտութիւն լինելն ի մէջ իւր և Նուիրակին, քանզի յառաջ վասն իմիք պատճառի խռով էր Զաքարիա վարդապետն ընդ. Նմա։ (որպէս ի դեկտեմբերի ելն ես ասացաւ.)։ Եւ ի կողմանէ Զաքարիա պետի հաշուին և դաւԹարի Բ սխալին գրեալ էր սա առ. սրբազան Վեհըն, որոց զպատասխանիսն գրեաց զի ի Զաքարիա վարդապետի Թղթոյն իմասցի։ Զի լիովին դրեաց Նմա։

Առ զմիւռնոյ Նուիրակ և Առաջնորդ Ղուկաս վարդապետն գրեաց։ Որում. և ծանոյց քան զայս յառաջ ի յունվարի Ժ և ի դեկտեմբերի ելն զԹուղթս գրելն առ ինքն։ Եւ պատուէր զի զպատասխանիսն Նոցին՝ փութով գրեսցէ ինքեան։ Քանզի՝ կամէր զի այնու՝ այնց կողմանց ճանապարհաց որպիսութիւնն իմասցի, զի Թէ յաջողիցէ, յայնժամ. զայլ Նուիրակ յղեսցէ անդ, և զինքն ըստ ըղձիցն իւրոց աստ բերցէ, և Թէ ոչ՝ զինքն վերստին Նուիրակ արասցէ տեղւոյն մինչև խաղաղասցի խռովութիւնն, և բացցին ճանապարհք կողմանցն։ Այլ և պատուիրեաց՝ զի մինչև ցայժմ. որքան դրամ. է հասուցեալ Զաքարիա վարդապետին, զամենայն ուրոյն ուրոյն և Թուով ժամանակին գրեսցէ ինքեան և Զաքարիա վարդապետին։ Ծանոյց սմա և զանցսն Թօխաթու Նուիրակին ի կարճոյ (որպէս՝ ի փետրվարի ԺԷ ասացաւ) պատուիրեաց ես՝ զի Ե կամ. ԶՌ ղռուշ դրամս հասուսցէ ի Պօլիս Զաքարիա վարդապետին, և դրեսցէ ինքեան։ Եւ վասն Յօհանավանից գանձանակին խնդիր արար, արդեօք ցայժմ. առեալ իցէ Թէ ոչ։ Եւ Թէ քեզ չտան ասէ, Թարց մեր գրոյն, այլոյ հրաման չունին տալոյ։ Նոյնպէս և վասն Խորվիրապայ գանձանակին պատուէր՝ զի ա-

ռեալ, գրեսցէ ինքեան։ Ծանոյր և զմահ ապագիր Մարկոսին (որ յանցեալ ամին առ Տէր փոխեցաւ,) և զշինուածն նորոգ գրոյն ձեռամբ տեղապահին, և զխափանուածն արպագրատանն վասն Թուղթ չլինելոյն և զի՝ վարժապետ Սահփաննոս վարդապետի քեռորդի . . . վախճանեալ էր ի Զմիւռին, և ոչ ունէր վարիս. որոյ ինչքն սմա պարտ էին հասանիլ։ Վասնորոյ և սա ես զմուճալլայ մի շինեալ, և եպիսկոպոսացն կնքեցուցեալ, ետ սրբազան Վեհին, և խնդրեաց աղերսիւ զի յղեսցէ առ Ղուկաս վարդապետն, և ինքն ես գրեսցէ նմա, զի ըստ դրեցելոյ մուճալլամային[35]). տիրեսցէ ընչիցն հանգուցելոյն, և առ ինքն հասուսցէ։ Վասնորոյ և սրբազան Վեհըն ըստ խնդրոյ սորին՝ զմուճալլամայն եդեալ ի թղթոջս առ նա յղեաց, և պատուիրեաց՝ զի զոր ինչ դրեալն է ի մէջ մուճալլամային, այնպէս արասցէ։

Առ Կարնոյ Նուիրակ Իսահակ վարդապետն ի պատասխանի թղթոյն։ Զի վասն Երզնկանու դրամոյն (ա) (որ ի յունվարի ԻԵ և ի դեկտեմբերի ելն յիշեցաւ.) ի տարակուսի կայր սա, թէ արդեօք առ մեզ իցէ հասեալ թէ ոչ, վասնորոյ և սրբազան Վեհըն զմիամտութիւն գրեաց առ սա, զի առ մեզ հասեալ իմասցի։ Եւ պատուէր՝ զի որքան դրամս ի պատրաստի ունիցի, ի ձեռն հաւատարմի և կամ փօլիցայի, առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն յղեսցէ ի Կաբին, և գրեսցէ ինքեան։

Առ Կարնոյ Առաջնորդ Սարգիս վարդապետն, մահտեսի Գրիգորն և առ մահտեսի Փիլիպպոսն դրեաց վասն Թօխաթու հին նուիրակի առ Պետրոսն և Մարտիրոսն եղեալ դրամոյն (որ յամսոյս ԺԲ յիշեցաւ.) ծանուցանելով սոցա այսր աղագաւ զբազմիցս գրելն առ նոսա, և նոցա ներհակիլն, և մինչև ցայժմ ոչ տալն մեզ զդրամն մեր։ Եւ պատուէր՝ դի կոչեալ զնոսա առ ինքեանս և ի ձեռն խրատու և յանդիմանութեան զզաստացուցեալ զնոսա, առցեն ի նոցանէ զդրամն մեր և տացեն մահտեսի Փիլիպպոսին, և յոչ տալն նոցա, ինքեան։ Առ Մուրտիկզադէ մահտեսի Փիլիպպոսն ի Կարին՝ ի պատասխանի ի մարտի ելն գրեցեալ թղթոյն, ընդ որում և զգրեանսն Պօլսոյ յղեալ էր առ սրբազան Վեհըն։ Որոց զպատասխանիսն՝ (որք ի վերոյ գրեցան՝) յղեաց առ սա՝ զի շուտով ի Պօլիս հասուսցէ։ Այլ և դրեալ էր թէ Արապկերցիքն խոստացեալ են փարայ մի ոչ առնուլ ի նուիրակէն՝ վասն ԱՌ ոսկի տուգանացն՝ զոր ինքեանք իւրեանց կամաւ խոստացեալ էին տալ Սարասկետրին։ (Որպէս ասացեալ է։, Ուստի զշնորհակալութիւն և զօրհնութիւն առ Արապկերցիսն։ Բայց տակաւին զթուղթ գրեանց ոչ ընկալաք ի նոցանէ՝ և ոչ ի նուիրակէն մերմէ. եթէ դրեսցեն ասէ, շուտով յղեմ առ մեզ։ Այլ և՝ գրէր թէ՝ Հաճիարապ անուամբ տաճիկն, ի Թարվիրու դրամ է ընբելոց վասն մեր ի Բայազիտ, գրեալ եմք որ անդ Տէր Վոհանն առնու ի նմանէ, և քեզ հասուցանէ։ Եւ յորժամ հասցի առ քեզ՝ դու յայնժամ մեզ փօլիցայագիր յղեա, որ ի Պօլիս առնումք։ Եւ սրբազան Վեհըն գրեաց թէ՝ այդ ոյժ բարուք է, բայց տաճիկն այն տակաւին ոչ է եկեալ ի Բայազիտ. յորժամ գայցէ, և տայցէ զդրամն, յայնժամ և մեք առ քեզ փօլիցայագիր եմք յղելոց։ Եւ տէր Պետրոսն զԲաբերդու Առաջնորդի ԱՃ ղռուշն որ յանձն էր առեալ զի տացէ՝ (որպէս ասացաւ.) զՄ ղռուշն տուեալ էր, և խոստացեալ էր յիսունն ես յետոյ տալ։ Գրեաց հետեւիլ և շուտով առնուլ։ Եւ վասն Մարտիրոսին և ուզուն Պետրոսին զթուղթն զոր դրեաց ի վերայ Առաջնորդին, և մահտեսի Գրիգորին, և սորա, (որպէս ասացաւ) յղեաց առ սա, և զի նմա խոստացեալ Պետրոս վարդապետի և Մարտիրոսի թուղթսն ես ի սորին պահարանոջն եդ՝ և յղեաց առ սա։ Եւ գրեաց՝ զի ընդ Առաջնորդին և մահտեսի Գրիգորին արասցեն այնպէս, որպէս ի թղթոջ երիցն գրեցաւ. և թէ ոչ լուիցեն նոքա, ապա շուտով ծանուսցէ ինքեան։ Եւ զվերոյիշեալ Բ թուղթսն՝ այսինքն Պետրոս վարդապետի և Մարտիրոսի, յետ կատարումն տալոյ բանին, շուտով յետս յղեսցէ աստ առ ինքն։ Եւ զի՝ Մկրտում փայեակն որ զթուղթսս տարաւ ընդ իւր, ազգական էր սրբազան Վեհիս մերոյ, վասնորոյ և սրբազան Վեհըն առ ի շահել զնա կամելով, գրեաց սմա յերեսն թղթոյս՝ զի Ժ ղռուշ խարճի տացէ նմա. և ի վերայ իւր հաշուեսցէ։ Զի վասն երկիւղի ճանտպարհացն՝ աստ ոչինչ ետ նմա։ Այ-

սոքիկ առ սա յղեցան, զի յիւրաքանչիւր տեարցն հասուսցէ։

Թուղթ մի ես առ տէր Վահանն ի Բայազիտ. քանզի Իսպիրու Առաջնորդ Ղափանցի Յովաննէս վարդապետն (որ ի սեպտեմբերի ել յիշեցաւ). վախճանեալ էր ի յԻւչքիլիսայն։ Եւ նորին ինչքն թէ նազու և թէ վէճ, ի Բայազիտ էին։ Եւ Իւչքիլիսայու միաբանքն այժմ գրեալ էին աստ առ Առաջնորդն իւրեանց Զաքարիա վարդապետն (որ ի նոյեմբերի յիշեցաւ). զմահ նորին. և որոյ ընչից զաւթարն և զբանալիսն առ նա յղեալ։ Եւ նա ես ծանոյց սրբազան Վ.եհին զմահ նորին, և զդաւթարն և զբանալիսն եւ ինքեանս։ Եւ մասն ինչ յընչից նորին ի յԻւչքիլիսայն էին, և մասն ինչ առ Նմուսեցի մահտեսի Յովհաննէսն։ Վասնորոյ՝ և սրբազան Վեհըն գրեաց առ տէր Վահանն, զի վասն ընչից նորին առանձին խօսեսցի ընդ մահտեսի Յովաննիսին, և որ ինչ դոյ առ նմա, զայն նորին գիտութեամբն կնքեալ, փութով ընդ հաւատարմի ր սուրբ Աթոռս յղեսցէ։ Եւ պատուէր՝ զի ընչիցն հանգուցելոյն որ ինչ ոչ երևի, զայն ես հետևեալ իմասցի թէ առ ով է, և զի՞նչ է։ Եւ յետ իմանալոյն՝ փութով ծանուսցէ ինքեանս։ Փանզի՝ ֆարման ունիմք ի յօսմանցւոց թագաւորէն զոր տուեալ է Յակոբ կաթողիկոսին Շամախեցւոյ յորում մետասան պատուէրք գոն, որոց մինն է և այս. զի խալիֆայի մարդն որտեղ որ լինի, յայն տեղն Ա. վարդապետ կամ տէրտէր որ մեռանի, նոցա ապրանքն նա զաւթէ. ի ձէնջ արգելին չլինիցի. և զատ ես չառնուք։ Առ Ջուղայեցի տէր Յովաննէսն ի Վան։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի փետրվարի ել և ի մարտի ԻԵ զթուղթս գրելն առ ինքն։ Եւ յոյժ յամեցուցանէք զպատասխանիս թղթոցն։ Ուստի՝ և սրբազան Վեհըն կարծէր թէ՝ տակաւին չիցեն հասեալ առ նա թուղթքն մեր, վասն այն ոչ գրէ նա զպատասխանիսն։ Վասնորոյ կրկին գրեաց նմա զմիտս երկոցունց թղթոցն։ Եւ որպէս ի մարտի ԻԵ, և այժմ ես պատուիրեաց սմա վասն նորոգ նուիրակին Հնդկաց։ Զի թէ աստ գալոց է, փութով եկեսցէ, որ զնուիրակն առեալ ընդ իւր երթիցէ, և թէ աստ գալ ոչ կամի, փութով գրեսցէ մեզ, զի գիտասցուք թէ ե՞րբ և կամ ուստի՞ է գնալոց զի և մեք ես զնուիրակն առ ինքն յղեսցուք, զի ի միասին երթիցեն։ Այս առ տէր Վահանն յղեցաւ ի Բայազիտ. զի առ նա յղեսցէ։ Եւ հարկ սմա, զի թէ տէր Վահանն ընդ փայեակի յղեսցէ առ ինքն զթուղթս, ընդ նմա՝ զպատասխանին փութով դրեսցէ մեզ։ Ապա թէ ոչ՝ ինքն ընդ յատուկ փայեակի դրեսցէ մեզ զպատասխանին։ Զվարձ փայեկին՝ սրբազան Վեհըն աստ տալ խոստացաւ։ Այլ և ի Շիրազու գիր մի ընկալաք ի վերայ սորա դրեցեալ. զոր քան զայս յառաջ առ սա յղեաց սրբազան Վեհըն, և այժմ ծանոյց գյղելն։ Յղեցան այսոքիկ ընդ սրբազան Վեհի ազգական Մկրտում փայեկին։ Զոր ի Զմիւռնոյ Մեղրեցի իշխանքն էին յղեալ ի Մեղրի. ընդ նմա զթուղթս գրելով առ բարեկամս իւրեանց։ Որոյ երթ և եկն աստ դիպեցաւ։ Վասնորոյ տուաք նմա զվերոյիշեալ թուղթսն. զի յիւրաքանչիւր տեարսն հասուսցէ։ Որ ել ի Ապրիլի ԻԶ։

Առ Բայազիտու փիսաղ փաշայն Թուղթ սիրոյ։

Թուղթ սիրոյ գրեաց սրբազան Վեհըն առ Բայազիտու Իսաղ փաշայն ի պատասխանի նորին սիրոյ թղթոյն։ (Որ ի մարտի ԺԳ յիշեցաւ.) որ ընդ չուխատարին իւրոյ Բ ձի էր յղեալ յընծայ խանին մերոյ։ Բայց խանն ոչ զընծայսն ընկալաւ վասն սակաւութեանն, և ոչ զչուխատարն մեծարեաց ըստ արժանւոյն. այլ ընծայիւն յետս դարձոյց առ առաքիչն իւր։ Ել չուխատարն ի Ապրիլի Լ։

ՃՂԳ.

Ի Խոյ՝ Առ նուիրակ Մեսրոպ պետն եւ առ վրացի Մեհրապն վասն Բց մառմառ քարանց եւ լեղակից, զի հոգացեալ յղեսցեն։

Թուղթ դրեաց սրբազան Վեհըն առ Թիֆլիզեցի պարոն Մէհրապն ի Խօյ։ Զի որպէս քան զայս յառաջ ի և այժմ ես պատուիրեաց վասն Բ մառմառ քարանցն՝ զի հոգացեալ, առ Տէր Վահանն յղեսցէ ի Բայազիտ, զի նա առ մեզ հասուսցէ և որոց խարճն և զքիրայն ի նուիրակ Մեսրոպ վարդապետէն

ժերմէ առցէ և որոյ ադագաւ զապզ տացէ նմա։ Այլ և՝ զմեր ներկարար Նաւասարդն յղեցաք անդ վասն լեղակի, ուստի՝ գրեաց սմա սրբազան Վեհըն՝ զի Դ կամ Ե թիլանի Լահօռու լեղակ առեալ ընդ նմա առ մեզ յղեսցէ, և որոյ զգինն ես ի Նուիրակէն ժերմէ առցէ։ Եւ պատուէր՝ զի դրեսցէ զօրպէսն Հախրակու վանիցն, զի ի գնալ սորին աստի ի մարտի ԺԵ, թուղթ ետ նմա սրբազան Վեհըն՝ զի զԱռաջնորդն նորին կապանօք աստ յղեսցէ։ Առ Թարվիզու Նուիրակ Մեսրօպ վարդապետն պատուէր զի թէ վասն Բց մառմառ քարանցն յղելոյն առ մեզ պարոն մեհրապին՝ և թէ ի գին լեղակին որքան դրամ խնդրեսցէ յինքենէ, տացէ նմա, և զապզ առցէ ի նմանէ։ Նաև լուաք թէ՝ ի Բաղտատու եկեալ փայեակն յորժամ ի յելն փետրվարի թղթովքն մերովք գնաց աստի, ի Թարվէզ էր գնացեալ, զի անտի երթիցէ ի տեղի իւր։ Բայց նա անդ տաճկի միոյ դրամ պարտ էր. զոր կալեալ տաճիկն, զթուղթսն մեր առեալ էր ի նմանէ, և խնդրէր զդրամն իւր, իսկ այր ոմն բարեպաշտ հանդիպեալ նոցա զթուղթսն մեր առեալ ի տաճկէն տուեալ էր նմա, և ուրախութեամբ ուղևորեալ։ Եւ պատուէր՝ զի զօրպէսն անցիցս գրեսցէ ինքեան ի միամտութիւն իւր։ Ցղեցան այսոքիկ ընդ մեր ներկարար Նաւասարդին։ Որ եղ ի մայիսի Զ։

ՃՂԴ

Ի Կարին՝ Առ պարտատեարսն մեր հարկ զի տացեն զդրամն մեր։

Վասն Թօխաթու հին Նուիրակ Պետրոս վարդապետի դրամոյն որ առ ուզուն Պետրոսն Մարտիրոսն և Ստեփաննն գոյր (որպէս ի յտպրիլի Է ասացաւ,) ուրոյն ուրոյն և մի զլնի միոյ, գրեալ էին սոքա առ սրբազան Վեհըն ընդ Բց փայեկաց։ Ի վերայ միմեանց ձգելով, և ոչ տալ կամելով զդրամն մեր։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն գրեաց զպատասխանիս թղթոց նոցին և յղեաց առ նոսա։ Որք են՝ թուղթ առ ուզուն Պետրոսն ի պատասխանի թղթոյ նորին։ Որ գրեալ էր առ սրբազան վեհըն թէ՞ զհիսապն մեր տեսաք ընդ Ստեփանին (զի իւր օրթախն -7) էր։) Եւ նա ԺԴ քսակի վնաս ցոյց ետ ինձ։ Առ որ գրեաց սրբազան վեհըն ասելով թէ՝ ինձ զի՞նչ փոյթ է ընդ այլոց որ դրևս վտորն հաշուին ձերոյ, զի իմ դրամն դու ես առեալ ի Նուիրակէն իմմէ որպէս և գրես, ուստի՝ ես զքեզ դիտեմ, և ի քէն պահանջեմ զդրամն։ Որում և ծանոյց այսր աղագաւ զգրելն առ Եփրիկեանց մահտեսի Գրիգորն և առ մահտեսի Փիլիպպոսն, և պատուէր՝ զի ընդ ընկերացն իւրոց գնացեալ առ նոսա, տեսցեն զհաշիւն մեր, և թէ առ ինքն է, և թէ առ նոսա դրամն մեր, կամ գտցէ, կամ ինքն տացէ, և թէ սիրով չետուր ասէ զդրամն մեր, յետոյ՝ այլ իմն կերպիւ և տոկոսեօք առից ի քէն։ Առ Մարտիրոսն ի պատասխանի թղթոյն։ Որ երդմամբ դրեալ էր առ սրբազան վեհըն թէ՝ այդ դրամդ ինձ չէ հասեալ։ Առ որ գրեաց սրբազան վեհըն թէ՝ ի լրանալ ԼԱ օր պայմանին՝ ընդէ՞ր չառեր զայդ դրամդ ի Ստեփաննոսէն։ Եւ թէ ոչ տայր. վասն է՞ր յայնժամ ոչ դրեցեր մեզ թէ ոչ տայ, որ Է և Ը ամիս անցեալ է, այժմ գրես մեզ թէ՝ ես ոչ եմ առեալ զդրամն, այլ Պետրոսն պարտի տալ։ Զնոյն պատուէր՝ և առ սա։ Առ Ստեփաննն՝ ի պատասխանի թղթոյն։ Որ զինքն անմեղադրելի էր ցուցեալ։ Որում գրեաց սրբազան վեհըն թէ՝ այն առաջին օրն որ Մարտիրոսն քեզ ցոյց ետ զթէմէսուկն. և ասաց թէ՝ այսքան դրամ պարտիս տալ. դու եթէ չէիր տալոյ, ընդէ՞ր յայնժամ յանձնդ առեր խաբելով զՄարտիրոսն թէ տամ և նա ևս զմեզ խաբեաց թէ պատրաստ է դրամն։ Եւ յորժամ գաւայն ի մէջ անկաւ, այժմ գրես թէ՝ Պետրոսն պարտի տալ զդրամն։ Զնոյն պատուէր՝ և առ սա ևս։ Առ Եփրիկեանց մահտեսի Գրիգորն և առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն ի Կարին։ Ծանուցանելով նոցա զմիտս թղթոցն զոր ինչ գրեաց առ նոսա։ Եւ պատուէր՝ զի զերեսեանն ևս կոչեսցեն առ ինքեանս. և զթուղթսն մեր առեալ ի նոցանէ ընթերցցին. և խօսեցուցեալ զնոսա իմասցին թէ առ որ է զդրամն մեր, խնդրեսցեն ի նմանէ։ Եւ յետոյ որպէս լինելն փութով դրեսցեն ինքեանս։ Եւ թէ յայս անգամ ես ոչ եղ ի նոցանէ դրամն մեր, ընդ բանիւ առնել խոստացաւ

զնոսա։ Փուսուլայ մի ևս գրեաց առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն ի Կարին՝ ծանուցանելով Նմա զհասանիլն առ մեզ իւրոյ յղեալ Բց թղթոցն։ Զորս ընդ Բց փայեկացն յղեալ էր առ մեզ, յորում վերստին յիշումն ածելով զվերոյգրեալսն ի կարճոյ։ Եւ պատուէր՝ յետ խօսեցուցանելոյն զնոսա․ եթէ ոչ իմասցին թէ առ որ է դրամն մեր, ի Պետրոսէն առցէ։ Այլև Պօլսոյ Նուիրակ Զաքարիա պետն՝ այժմ զիրս ինչ յղեալ էր առ սա՝ առ մեզ յղել։ Եւ սա ևս ծանուցեալ էր սրբազան վեհին զհասանելն ընչիցն առ ինքն։ Եւ սրբազան վեհըն պատուիրեաց Նմա յղել աստ առ մեզ։ Այլև՝ ըստ հրամանի սրբազան վեհին մէկ կարաս Ղոի այգւոյ գինի Գ տկով պատրաստեալ մեր ընդ քրեհտար Սահակին յղեցաւ առ տէր Վահանն՝ զի առ Նա հասուսցէ․ Որոց մէկն Ժ լտրանոց էր, և Բքն՝ ԵԵ։ Որում և պատուիրեաց սրբազան վեհըն ի հասանիլն Գ տկով գինեացն առ ինքն, զԲ փոքր տիկն ինքն առցէ, և զԱ մեծ տիկն Եփրիկեանց մահտեսի Գրիգորին տացէ։ Ցղեցան այսոքիկ՝ ընդ երկուց յղեալ երկուց փայեկացն առ մեզ․ որոց անուանքն էին Մելքոն և Պաղտասար։ Մելքոնն՝ Մաքտիրոսի յղեալն էր, և Պաղտասարն՝ ուղուն Պետրոսին։ Որք եկին ի միասին՝ ի Մայիսի Ը։

Ի մայիսի ԻԵ Առ Բայազիտու Նուիրակ Գալուստ վարդապետն միամտութիւն վասն իւրոյ յղեալ դրամոյն առ մեզ։ Բայազիտու Նուիրակ Գալուստ վարդապետն որպէս քան զայս յառաջ ի փետրվարի եկն, և այժմ ևս էր ի Նուիրակական արդեանցն մերոց դրամս (ԻԳ ըռ․ և ԵՃ գեան․) յղեալ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զԱ զապզ ղըրեաց առ Նա ի միամտութիւն իւր․ զի յաւուք հաշուատրութեան իւրոյ պիտոյասցի ինքեան։ Ցղեցաւ այս ընդ Պաղտասար անուամբ փայեկի միոյ։ Որ եկ ի Մայիսի ԻԵ։

ՃԴ․ԵՒ

Ի Կարին՝ ի յԱրապկեր՝ ի Վան եւ յայլ տեղիս Առ Նուիրակունսն Մեր եւ առ այլս վասն ջանից ինչ, եւ առ Արապկերցիսն միամտութիւն վասն ի Նուիրակէն առեալ դրամոյն, եւ մխիթարութիւն՝ վասն Նեղութեանցն այսր աղագաւ։

Արապկերցիք յորժամ վասն զրպարտութեան պիղծ չաշուտին զբազում տուգանս էին տուեալ աանկաց՝ (որպէս՛ի փետրվարի ԺԷ ասացաւ․) յայնժամ՝ ԸՃ ղուշ ևս ի մեր Նոր Նուիրակ Պետրոս վարդապետէն էին փոխ առեալ և տուեալ։ Որոյ սակս և քաղաքացիքն ամենայն, այժմ մահսար աբարեալ յղեալ էին առ սրբազան վեհըն, յորմէ և խնդրեալ էին աղերսիւ, զի զդրամս զայն ինքեանց շնորհեսցէ և մի պահանջեսցէ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ի պատասխանի մահսարին իւրեանց՝ զԹուղթ մի գրեաց առ Առաջնորդ Պետրոս վարդապետն առ իշխանսն և առ ժողովուրդսն։ Եւ ըստ խնդրոյ իւրեանց՝ ինքեանց շնորհեաց զԸՃ ղուշ դրամն զայն։ Ընդ սմին՝ և զմխիթարութիւն ևս գրեաց վասն Նեղութեանցն զոր այսր աղագաւ կրեցին։

Թուղթ մի ևս միամտութեան առ Թարվիզու Նուիրակ Մեսրօպ վարդապետն գրեաց։ Որ ի Նուիրակական արդեանցն իւրոց Ի թուման գրամ․ էր յղեալ այժմ առ մեզ, և զԹուղթ ևս գրեալ առ սրբազան վեհըն։ Որում և պատուէր՝ զի վրացի պարոն Մեհրապին Ե թուման և ԸՌ գեան տացէ ի գին Ա թիլանի լեղակին։ (Զոր ըստ խնդրոյ մերոյ՝ այժմ առեալ և յղեալ էր առ մեզ։) և ի Նմանէ զղապղ առեալ առ մեզ յղեսցէ։

Թուղթ մի ևս առ Թիֆլիզեցի պարոն Մեհրապն գրեաց ի Խօյ ի պատասխանի թղթոյն, և ի միամտութիւն վասն Ա թիլանի լեղակին, զոր ըստ խնդրոյ մերոյ առեալ էր, և ընդ մեր Ներկարար Նաւասարդին այժմ յղեալ առ մեզ։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի մայիսի Զ զգրելն առ Մեսրօպ պետն, զի զգին լեղակին տացէ ինքեան։ Եւ պատուէր՝ առնուլ ի Նմանէ։ Եւ զի՝ վասն Բ ժառմառ քաբանցն (որք ի մայիսի Զ յիշեցան․) գրեալ էր այժմ առ սրբազան

վեհըն. և խոստացեալ, զի 'յղեսցէ։ Եւ պատուէր՝ զի փութով 'յղեսցէ։ Այլև՝ քան զայս յառաջ ի մայիսի Զ գրեաց սմա սրբազան վեհըն, զի զորպէսն Հախբակու վանիցն գրեսցէ ինքեան, և նա ևս վասն Առաջնորդ Ստեփաննոս վարդապետին գրեալ էր այժմ. առ սրբազան վեհըն թէ՝ իշխանքն 'յղելոց են զնա ի սուրբ Աթոռդ։ Եւ պատուէր՝ զի 'յղել տացէ։

Թուղթ մի ևս առ Աստապատցի Աբրահամ. վարդապետն գրեաց ի Բայազիտ ի պատասխանի թղթոյն։ Որոյ ի Լիժու եկեալ անդ կամէր գալ ի սուրբ Աթոռս. բայց վասն խասախին[28]) որ'յիշխողէն տեղւոյս զոյր, երկնչէր գալ աստ. իսկ այժմ. վերացաւ խասախն. վասնորոյ և սրբազան վեհըն հրաւիրեաց նմա գալ։ Այլև՝ զթուղթ Վանայ Նուիրակ Պաղտասար վարդապետին (զոր յառաջիկայդ դրելոց եմք.) 'յղեաց առ սա, զի առ նա 'յղեսցէ։

Թուղթ մի առ Վանայ Նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վարդապետն գրեաց ի պատասխանի ի 'յԱպրիլի ԻԴ և ի Մայիսի ԻԱ գրեցեալ երկոքին թղթոցն իւրոց։ Որ վասն Խորվիրապայ Առաջնորդ Աւետիք վարդապետին (որ ի . . . 'յիշեցաւ.) իրիջայ էր գրեալ առ սրբազան վեհըն թէ՝ 'յղեցի զնա 'յայդր. ներեսցես սխալանացն զորին։ Բայց նա ոչ եկն աստ. այլ մինչև ի Բայազիտ եկեալ էր, և երկուցեալ ի սրբազան վեհէն առ ի գալ ի սուրբ Աթոռս, անտի փախուցեալ էր 'յայլ տեղիս։ Եւ սա զնորին կողմն պահելով՝ գրէր վասն նորա առ սրբազան վեհըն զստալիր պատճառս թէ՝ ոչինչ ունէր նա. այլ միայն քանի մի այծ և ուլ։ Առ որ գրեաց սրբազան վեհըն վասն նորա թէ՝ ահա Զ ամ. է՝ 'յորս Առաջնորդ է ասէ սրբոյ վանիցն Խորվիրապայ. և 'յանուն նորին միշտ ժողովք է արարեալ. և թէ ոչինչ ունի, ապա ո՞ւր է նորին ժողովեալ արդիւնքն 'յայսքան ամս։ Որում. և պատուիրեաց՝ զի թէ անդ է կամ. ուր և իցէ նա, աստ առ մեզ 'յղեսցէ։ Եւ թէ կամաւ գայցէ ասէ՝ բարի է, և թէ ոչ՝ ընդ բանիւ առնել խոստացաւ զնա։ Այլև՝ վասն սրբոյ Կարապետի Առաջնորդ Ցօնան վարդապետին (որ 'յիշեցաւ . . .) ևս էր իրիջայ գրեալ սա առ սրբազան վեհըն զի ներեսցէ նմա։ Եւ սրբազան վեհըն ևս ըստ խնդրոյ սորին այժմ. ներեաց նմա, և ծանոյց ևս սմա զմիտս թղթոյ նորին զոր այժմ. գրեալ էր առ ինքն, և խոստացեալ՝ զի նախ զՑովհաննէս վարդապետն (որ էր միաբան սրբոյ Կարապետի վանիցն.) յղեսցէ աստ, և յետոյ ինքն ընդ Վէքիլ Պետրոս վարդապետին գայցէ ի սուրբ Աթոռս բայց ոչ եկն. վասնորոյ պատուիրեաց սմա, զի գրեսցէ առ նա, և զորինչ պատասխանի ընկալցի ի նմանէ, գրեալ ծանուսցէ ինքեան։ Իսկ և՝ վասն Ջուղայեցի Տէր Սարգիս երիցուն պատուիրեաց ևս՝ 'յղել զնա ի սուրբ Աթոռս, զի ժամանակ ինչ պահեալ զնա աստ, 'յետոյ 'յետս դարձուսցէ առ ինքն։ Այլ և՝ Լմայ Անապատի միաբան Կարապետ պետն՝ (որ 'յանցեալ ամին և ի դեկտեմբերի ելն 'յիշեցաւ.) այժմ. իրիջայ էր գրեալ առ սրբազան վեհըն, զի զիթլախն իւր բերել տացէ։ Բայց սրբազան վեհըն այժմ ոչինչ գրեաց նմա ի պատասխանի թղթոյն։ Այլ պատուիրեաց սմա գրել առ նա, և զնա միամտեցուցանել վասն իթլախին իւրոյ։ Քանզի՝ հանել տալ խոստացաւ զիթլախն նորին։ Նաև՝ վասն պատկերահան Գէորգ վարդապետի ուրումն գրեալ ևս էր առ սրբազան վեհըն թէ՝ կամի գալ ի սուրբ Աթոռդ և միաբան լինել. բայց վասն ճանապարհի խարճի չունի։ Առ որ գրեաց սրբազան վեհըն վասն գալստեան նորա զի իմասցի՝ թէ 'յիրաւի կամի գալ ի սուրբ աթոռս, և աստ մնալ, Ժ կամ. Ի ղուռուշ խարճի տացէ նմա և յղեսցէ աստ. և թէ ոչ կամիցի գալ, փարայ մի ո՛չ տացէ նմա։

Թուղթ մի ևս առ Ցերապօլսոյ Առաջնորդ Պետրոս վարդապետն գրեաց ի պատասխանի յապրիլի Ի գրեցեալ թղթոյն։ Որում և ծանոյց զմիտս թղթոյ ժողովրդեանն իւրոյ զոր ինչ գրեաց առ նոսա։ (Որպէս ի վերդ ասացաւ) Եւ պատուէր՝ զի և ինքն ևս յուսադրեալ միամտեցուսցէ զժողովուրդսըն իւր վասն ՃԾ ղուռուշ դրամոյն զոր ըստ խնդրոյ իւրեանց շնորհեաց նոցա։ Այլև՝ սա ձեռամբ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին, Ժ զարմահպուպ ոսկի Աջահամբոյր էր 'յղեալ սրբազան վեհին։ (Բայց տակաւին չէր հասեալ առ մեզ,) վասնորոյ՝ և սրբազան վեհըն զշնորհակալութիւն գրեաց առ նա։ Իսկ և՝ զթուղթ Թօխաթու նորող

նուիրակին դրեալ առ. սա յղեաց (որպէս ասելոց եմք յառաջիկայդ։) Զի առ. նա հասուսցէ, և դրեսցէ նմա, ղի զամենայն աւելորդ ղինչսն իւր ի միում կրպակոջ եդեալ առ. ինքն յղեսցէ, ղի և ինքն ես զայսն նոյն կնքովն առ. Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն յղեսցէ յաւանդ մինչ ի յաւարտիլ գործոյ նորին։ Եւ յետոյ զինչ առնելն իւր ծանուսցէ ինքեան։

Թուղթ մի ես առ Թօխաթու նորոդ նուիրակ Պետրոս վարդապետն դրեաց ի պատասխանի յապրիլի ելն դրեցեալ թղթոյն։ Ուր վասն ՐԺ ղռուշ դրամոյն գրէր՝ զոր տուեալ էր փոխ Արապկերցւոցն։ Վասնորոյ և սրբաղան վեհըն ծանոյց նմա զմիարս Արտպկերցւոցն մահսարին, որոյ աղա՞զաւ և զինչ գրելն իւր առ նոսա, և ըստ խնդրոյ նոցա ղՐԾ ղռուշն ինքեանց շնորհելն։ Եւ պատուէր՝ ղի վասն այս ղրամոյն ինքն ես մի խօսեսցի ընաւ, այլ ի վերայ իւր հաշուեալ, զանց արասցէ։ Այլ և՝ վասն րոյրուլթուին զոր ընդ իւր ունէր, ոչ ումէք ցուցանել կամէր, որպէս և գրեալ էր սրբազան վեհըն։ Վասնորոյ և սրբաղան վեհըն այնպէս առնել պատուիրեաց։ Եւ զի վասն անցից ինչ՝քան զայս յառաջ ի…գրեաց սմա սրբաղան վեհըն վասն սպասաւորին իւրոյ Մկրաիչ վարդապետին ղի յետս յղեսցէ ի սուրբ Աթոռս։ և սա ևս գրէր վասն նորա թէ յղեցի․ բայց նա տակաւին ոչ էր եկեալ ի սուրբ Աթոռս։ Եւ ծանոյց նմա զչգալն նորին աստ։ Նաև՝ սա այժմ ի վերայ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին ԳԾՀ ղռուշի փօլիցայ էր արարեալ, և զի թամասուկսն ևս. առ. սրբաղան վեհըն յղեալ։ Որոց Աըն ԲԾԾ ղռուշի էր, և միւսն ԱԾԻ ղռուշի։ Բայց ինքն գրէր սրբաղան վեհին թէ՝ ԴԾ ղռուշի փօլիցայ արարի ի վերայ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին, որ նա հասուսցէ ի սուրբ Աթոռդ։ Եւ թամասուկքն ևս այնպէս էին գրեցեալք, որ ինքն գայցէ ի Կարին. և առնուցու։ Եւ անուն մահտեսի Փիլիպպոսին ևս ոչ գոյր գրեալ ի նոսա։ Առ. որ գրեաց սրբաղան վեհըն մեզագրանք թէ՝ այս ո՞րպէս փօլիցայ է։ Ընդէ՞ր ասէ ոչ դրեցուցանես ի թէմէսուկսն թէ՝ ի Կարին հասուցանեն մահտեսի Փիլիպպոսին, որ նա հասուսցէ ի սուրբ Աթոռն։ Եւ յետ զգուշացուցանելոյն, պատուիրեաց՝ զի միշտ զփօլիցայն իւր, ձեռամբ մահտեսի Փիլիպպոսին արասցէ։

Փուսուլայ մի ևս գրեաց առ. սա։ Քանզի ի գնալն սորին աստի ի գործ նուիրակութեան յՆւդոկիայ զամենայն ինչ որ իւրն էր թէ նաղտ և թէ վէճ, բարձեալ ընդ իւր տարաւ։ Եւ այժմ լուաք վասն ընչիցն նորին թէ՝ ոչ ուրեք է թողեալ՝ այլ ուր և երթայ, միշտ ընդ իւր շրջեցուցանէ. վասնորոյ՝ և տաճիկք երկրին այնմիկ իմացեալ են զինչ ունիլն նորին, և յամենայն տեղիս հոչակեալ։ Ցաղագս որոյ՝ և սրբազան վեհըն յոյժ մեղադրութեամբ գրեաց առ. սա, որ ի գնալն աստի՝ ոչ եթող ղինչսն իւր աստ։ Որում և պատուիրեաց՝ զի բաց ի կոնդակէն՝ ի սրբալոյս Մեռոնէն՝ ի զդենլի հանդերձէն, և ի հարկաւոր գրեանցն զամենայն զոր ինչ ունի թէ նաղտ և թէ վէճ, գաւթարով ի միում կրպակի եդեալ, և զբերանն կնքեալ, ձեռամբ Արապկերու Առաջնորդ Պետրոս վարդապետին՝ առ. Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն յղեսցէ ի Կարին յաւանդ, մինչ ի ցաւարտիլ գործոյն իւրոյ։ Եւ զկնի աւարտմանն՝ առեալ ընդ իւր բերցէ ի սուրբ Աթոռս։ Եւ ծանոյց սմա այսր աղագաւ զգրելն առ. Ցերապօլսոյ Առաջնորդ Պետրոս վարդապետն։

Թուղթ մի ես առ. Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն գրեաց՝ ի պատասխանի Բ ց թղթոցն իւրոց։ Որոց մինն փայեկաւ էր յղեալ առ. մեզ, և միւսն Ֆիլիողեցի ուխտաւորօքն։ Որում և ծանոյց զմիտս թղթոյ Արապկերցւոցն՝ և Առաջնորդին իւրեանց Պետրոս վարդապետին։ Եւ զգրելն առ Թօխաթու նորոդ նուիրակ Պետրոս վարդապետն ըստ արժանւոյն րանս վասն Բ ց փօլիցայադրեանցն, և զթէմէսուկսն առ. ինքն յղելն։ Եւ պատուէր՝ զի մուղայէթ լեալ, առցէ ի նմանէ զգրամն։ Այլ և՝ վասն Թօխաթու հին նուիրակ Պետրոս պետի դրամոյն գրեալ էր թէ՝ յանձն առին տալ։ Եւ պատուէր՝ զի առցէ, և յոչ տալն նոցին, ծանուսցէ ինքեան։ Գրէր ևս. թէ՝ յայսմ միջոցի Հաճի Արապն գալոց է։ Որում գրեաց սրբազան վեհըն թէ՝ ինձ զ՞ինչ փոյթ է նորա գալն։ Դու որքան կամիս ընդէր ոչ գրես մեզ, զի փօլիցայի գիր յղեսցուք։ Եւ

զի՝ Ֆիլիպեցի Գ ուխտաւորք եկին այժմ ի սուրբ Աթոռս յուլիս։ Որոց ի հասանելն ի Կարին՝ վասն երկիւղի ճանապարհին ըղդրամս ([8]) թողեալ անդ, ունայն եկին ի սուրբ Աթոռս։ Վասնորոյ՝ և ի մէնջ դրամ առին, և այսքան դրամոյ ([8]) թէմէսուկ ետուն մեզ՝ (որոց ԱՃԼԵ ղռուշ իւրեանց պարտքն էր զոր փոխ առին ի մէնջ, և ԱՃԿԵ ղռուշ իւրեանց ողորմութիւն.) զի գնացեալ ի Կարին տացեն մեզ։ Նոյնպէս և կարնեցի Կարապետ և Ստեփաննոս անուամբ Բ տղայք՝ ի Կարին ԻԴ ղռուշ ունելով (ըստ ասից նոցին,) աստ ԺԲ ղռուշ փոխ առին ի մէնջ, և ԺԲ ղռուշ ողորմութիւն խոստացան տալ սրբոյ Աթոռոյս։ Եւ աստ ԻԴ ղռուշի թէմէսուկ ետուն մեզ, զի գնացեալ ի Կարին տացեն։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զԲ թէմէսուկսն ի թղթոյս եդեալ առ սա յղեաց, զի առցէ ի նոցանէ զդրամսն՝ ([3]) ([2]ե) և զթէմէսուկսն տացէ նոցա։ Նմանապէս՝ և Գիւմիշխանցի Բ տղայք Մարտիրոս և Խաչատուր անուամբ՝ վասն երկիւղի ճանապարհին, աստ ԽԵ ղռուշ ետուն մեզ, զի ի Կարին տացուք ինքեանց։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զԱ բարաթագիր գրեալ ի վերայ սորայ, ետ նոցա՝ զի գնացեալ ի Կարին, այնու առցեն զդրամն (ԽԵ ղռուշ) իւրեանց ի սմանէ։ Ծանոյց սմա զայս՝ և պատուիրեաց, զի ի գալ բարաթագրին առ ինքն, տացէ նոցա զդրամն։ (ԽԵ ղռուշ.) Եւ պատուէր՝ զի թէ էնկիւրու կամ Ֆռանկի շալ և կամ հասարակ սև խառայ գտանիցին վասն փիլոնի, և կամ դեղին և կապուտ և այլ գունով ֆռանկի շալ ևս լինիցին, քանի մի թօփ առեալ յղեսցէ։ Նոյնպէս՝ և թէ լաւ և աժանագին թուղթք ևս պատահիցին, զայնս ևս առեալ յղեսցէ ընդ նոսա։

Փուսուլայ մի ևս գրեաց առ սա։ Ծանուցանելով սմա զգրելն իւր առ Թօխաթու նորոգ նուիրակ Պետրոս վարդապետն վասն ընչից նորին, զի առ ինքն յղեսցէ։ Նոյնպէս և առ Արապկերու Առաջնորդ Պետրոս վարդապետն ևս՝ զի զինչս նորին առեալ ի նմանէ, առ ինքն հասուսցէ։ Եւ զթուղթսըն նոցա առ սա յղեաց, և պատուիրեաց՝ զի առ նոսա յղեսցէ, և ինքն ևս գրեսցէ նոցա այնպէս առնել։ Եւ թէ նուիրակն զինչսն իւր առ ինքն յղեսցէ, ինքն ևս առեալ պահեսցէ՝ և գրեսցէ ինքեանց։ Իսկ թէ ոչ կամիցի յղել, ևս դրեալ ծանուսցէ ինքեանց։ Յղեցան այսոքիկ՝ ընդ Գաղտասար փայեկին զոր Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն էր յղեալ։ Որ եւ ի յունիսի Զ։

Եկաւ հասաւ ի Փիլիպէ:

Ի Ֆիլիպու Գ ուխտաւորք էին եկեալ ի սուրբ Աթոռս յուլիս։ (Որք ի վերդ ի թղթոյ մահտեսի Փիլիպպոսին յիշեցան.) Ընդ որս և բարեպաշտ անձինք ոմանք ողորմութիւն էին յղեալ ի սուրբ Աթոռս։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն առ նոսա ըղթուղթ օրհնութեան գրեալ յղեաց։ Որք են։ Ա թուղթ առ պարոն Ստեփանն։ Թուղթ մի ևս առ տիրացու Մարտիրոսն։ Թուղթ մի ես առ Խէր Յակորն։ Թուղթ մի ևս առ տիրացու Առաքելն։ Թուղթ մի ևս առ Տիրուհի խաթունն։ Թուղթ մի ևս առ պարոն Միքայէլն։ Թուղթ մի ևս առ Աբրքուհի խաթունն։ Թուղթ մի ևս առ Եղսախաթունն։ Թուղթ մի ևս առ տիրացու Յովաննէսն, որ գիր ևս էր գրեալ առ սրբազան վեհըն։ Թուղթ մի ևս առ Մարգար, Առաքել և Պօղոս։ Թուղթ մի ևս առ կին ոմն. որոյ զանունն ոչ գիտելով մեր զի գրիցէաք, վասնորոյ՝ թարց անուան յղեցաք զթուղթս առ նա։ Յղեցան այսոքիկ ձեռ. տիրացու Յաքութիւնին։

Թուղթ ևս առ պարոն Գրիգորն ձեռ. Սարգսին։ Թուղթ մի ևս առ Նազլու խաթուն։ Թուղթ մի ևս առ Մարիամ խաթունն։ Թուղթ մի ևս առ մահտեսի Նազարն։ Թուղթ մի ևս առ Սառայ խաթունն։ Յղեցան այսք ձեռ. մահտեսի Ստեփանին։

Թուղթ ևս առ պարոն Յօհանն գրեաց։ Զի գիտութեամբ Ուռումելու նուիրակ Յովաննէս վարդապետին, Ա գուլթանի խարճ էր խոստացեալ տալ սրբոյ Աթոռոյս յիշատակ իւր. որոյ աղագաւ և քան զայս յառաջ ի ՌՄ-երորդ ամին և ի . . . շնորհակալութեան թուղթ գրեցաւ նմա։ Բայց թուղթըն այն ոչ էր հասեալ առ նա։ Որպէս այժմ դրեալ էր անտի տէր Մանուէլն սրբազան վեհին, և ծանուցեալ զչհասանիլն թղթոյն առ նա։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն վերստին գրեաց առ նա զթուղթ շնորհակալու-

թեան, և գնահատեաց ևս զգին գութանին Ժ Թուման զոլ։ Այս ևս ձեռամբ տիրացու Յօհաննին յղեցաւ առ Նա։ Ելին Գ ուխտաւորքն աստի, ի Յունիսի Զ։

Առ Կարսայ Նուիրակ Յակոբ պետն միամտութիւն վասն իւրոյ խարձեալ դրամոյն

Թուղթ միամտութեան գրեաց սրբազան վեհըն առ Կարսայ Նուիրակ Յակոբ վարդապետն (որ ի . . . յիշեցաւ.) որ ըստ հրամանի իւրոյ ՃԱ զոուշ էր խարճեալ։ Զի Նորին ԺԱ զոուշն բոյրուլթու գրողին էր տուեալ։ (Որպէս ի . . . ասացաւ։) և Զ զոուշն ի գին Լ Թիլանի լիտր զեթեաղուն և Նորին քիրային ի Կարսայ մինչ ի սուրբ Աթոռս։ (Որպէս ի . . . ասացաւ)։ Յղեցաւ այս ընդ կարսեցի Յակոբին։ Որ եւ ի յունիսի Զ։

Կարգելն սրբազան վեհին զՄարկոս պետն յԱռաջնորդութիւն սրբոյն Խորվիրապայ վանիցն։

Յորժամ սրբոյն Խոբվիրապայ վանից Առաջնորդ Աւետիք վարդապետն (որ ի յամսոյս Զ ի Թղթոջ Գազտասար պետին յիշեցաւ.) վասն անցից ինչ փախեաւ ի կողմունս Վանայ (որպէս ի . . . ասացաւ.) և յետ այնորիկ սուրբ Տունն այն անտերունչ մնաց։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն բազմիցս գրեաց Նմա զի եկեսցէ, և Գազտասար վարդապետին ևս գրեաց վասն Նորա զի յղեսցէ, իսկ Նա վասն երկիւղին ոչ եկն։ Եւ սրբազան վեհըն չկամելով զամայութիւն սրբոյն Խոբվիրապայ վանիցն, վասնորոյ զտէր Կարապետ Աբեղայն (որ էր միաբան սրբոյ Ուխտին.) քան զայս յառաջ ի . . . վէքիլ կարգեաց Նոյն վանիցն, զի ժամանակ ինչ մուղայէթ լեալ ի շինութեան պահեսցէ զսուրբ Տունն այն մինչ ի գալ Առաջնորդին։ Իսկ Նա տակաւին ոչ եկն։ Եւ յայսմ միջոցի Իւչքիլիսայի վանից միաբան Մարկոս վարդապետն (որ ի . . . յիշեցաւ.) ընդ Առաջնորդին իւրոյ Զաքարիա վարդապետին եկեալ էր ի սուրբ Աթոռս։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զՆա սրբոյն Խոբվիրապայ վանիցն Առաջնորդ արարեալ, որում և Առաջնորդական կոնդակ տուեալ, յղեաց անդ՝ առ ի շինութեան պահել զսուրբ Տունն այն։ Ընդ որում և զթուղթ յանձնաբարութեան վասն Նորա, առ Բռզասուլթանի որդի պիղծ կակօն գրեաց։ Ել Մարկոս վարդապետն ի Յունիսի Ժ։

ԶՀաղարծնոյ վանից Առաջնորդ Մանուէլ պետն իւղի և պանրի ժողովարար կարգեաց սրբազան վեհըն ի վերայ երկրին իւրոյ և մերձակայ երկրացն։

Սովորութիւն է սրբոյ Աթոռոյս՝ զի յամենայն ամի, սրբազան վեհըն վասն իւղի և պանրի զժողովարարս յղէր ի Բայազիտ՝ յԱլաշկերտ, և յայլ տեղիս։ Իսկ այսմ ամի վասն վրդովման կողմանցն Բայազիտոյ, ոչ կարաց անդ զժողովարարս յղել։ Իսկ որովհետև երանելի Հայրապետքն մեր յառաջագոյն ի կողմունս Ղազախու ևս էին զժողովարարս յղեալ վասն իւղի և պանրի, վասնորոյ և սրբազան վեհըն զԱ ժողովարարութեան կոնդակ գրեալ ի վերայ Ղազախու՝ Բօրչալուայ և Բամբկաձորու, առ Հաղարծնու վանից Առաջնորդ Մանուէլ վարդապետն յղեաց, զի այնու գնացեալ շրջագայեսցի ի մէջ ժողովրդեանն, յորոց զիւղս՝ զպանիրս՝ և զմատաղացուս ժողովեալ. յղեսցէ ի սուրբ Աթոռս։

Թուղթ մի ևս գրեաց ընդ կոնդակին առ Մանուէլ վարդապետն։ Ծանուցանելով Նմա զմիտս կոնդակին։ Եւ պատուէր՝ զի որպէս գրեցաւ ի վերդ, այնպէս արասցէ։ Եւ զի Տեղապահ Մկրտիչ վարդապետն քան զայս յառաջ ի պէտս արխաթախգայի՝ ԲԾ աճարի տախտակ էր խնդրեալ ի Մանուէլ վարդապետէն վասն սրբազան վեհի ձմերան թանապունն։ Իսկ Նա մինչև ցայժմ զանց արարեալ ոչ յղէր։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ըստ խնդրոյ Տեղապահին գրեաց սմա, զի փութով հոգացեալ զտախտակսն յղեսցէ։ Զայսոսիկ ետուք Թասալուի որդի Յարութիւնին, զի յղեսցէ առ Նա ի յունիսի Ժ։

Կրկին փօլիցայ ի վերայ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին։

Արդ՝ ի կողմանէ մեր գիւղի իջաբային, ի ԵԾ Թումանէն՝ Ղ Թուման էաք մնացեալ տալիք հաճի Զէյնալուն, զի ի տալեացն մերոց զերծցուք։ Եւ Նա ևս՝ որպէս ի յԱպրիլի է, և այժմ ևս էր ի Քեալբալայի Միրզարաբաբէկ աաճկէն իննսուն Թուման առեալ և ի վերայ մեր բարաթ արարեալ. զի տա-

ցուք նմա։ Եւ տաճիկն այն վաճառականութեան աղագաւ երթայր ի Կարին։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զԱ բարաթագիր գրեալ ի վերայ Մուրտիկեանց ժահտեսի Փիլիպպոսին ետ նմա, զի գնացեալ առցէ ի նմանէ զդրամն իւր։ Եւ պատուիրեաց սմա՝ զի ի գալ բարաթագրին առ ինքն, տացէ զդրամն տաճկին։ Որ եղ ի յունիսի ԺԶ։

Եկաւ հասաւ ի Կարին։

Ի Կարնոյ ուխտաւորք եկին ի սուրբ Աթոռս յուխտ։ Ընդ որս և բարեպաշտ անձինք ոմանք Աջահամբոյր էին յղեալ սրբազան վեհին։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն առ նոսա զթուղթ շնորհակալութեան գրեալ յղեաց։ Որք են։ Ա թուղթ առ պարոն Նիկողայոս և Մինաս ոմն ձեռ. պարոն Թորոսին։ Թուղթ մի ես առ Խաթուն կինն (ը) ձեռ. պարոն Պօղոսին։ Թուղթ մի ևս առ Մարիամն (բ) ձեռ. ևս պարոն Պօղոսին։ Իսկ և ոմն յայս ուխտաւորացս Յօհան անուամբ ըստ ասից իւրոց էր Ցամթեցի։ Որ և վասն երկիւղի ճանապարհին՝ սատ դրամ (ԽԵ) ետ մեզ, զի ի Ցամիթ տացուք ինքեան։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զթուղթ գրեաց առ Ցամթայ Առաջնորդ և սրբոյ Աթոռոյս նուիրակ Կարապետ վարդապետն, զի ի նուիրակական արդեանցն իւրոց՝ դրամ (ԽԵ) տացէ Յօհանին, և զթուղթս զայս առեալ ի նմանէ, իբր զապզ առ ինքն պահեսցէ ի միամտութիւն ինքեան։ Եւ պատուէր՝ զի զորպէսն գործոյն իւրոյ միշտ գրեսցէ ինքեան։ Զի յորմէ հետէ մտեալ է ի գործ նուիրակութեան սրբոյ Աթոռոյս, տակաւին ոչ է գրեալ զթուղթ առ սրբազան վեհըն։ Ելին ուխտաւորքն ի Յունիսի ԺԹ։

Առ Թիֆլիզու Առաջնորդ Ռսթէոս պնսւն վասն ծերոյ ումեմն Թիֆլիզեցւոյ։

Թիֆլիզեցի ծեր Ահարոն անուամբ աորն ումեմն աղքատի-որդին գերի էր անկեալ ի ձեռս լազկեաց։ Որք տարեալ զնա, ի յԱնատոլիա՝ ԺԵ Թումանի վաճառեալ էին։ Նա իմացեալ զտեղին, չունելով կարողութիւն ազատելոյ, այնու ժողով արասցէ, որով և զդրամս ժողովեալ, այնու գնացեալ զորդին իւր ազատեսցէ։ Բայց սրբազան վեհըն վասն վրդովման ժամանակիս, ոչ ետ նմա զկոնդակ, այլ զթուղթ մի գրեաց առ Թիֆլիզու նուիրակ և առաջնորդ Ռեթէոս վարդապետն (որ ի. . . յիշեցաւ.) գրեաց՝ զի վասն նորա յեկեղեցիսն ծանուցումն արասցէ, և զթուղթ ես տացէ նմա, ի վերայ շրջակայ երկրին Թիֆլիզու, զի գնացեալ ի մնացեալ տեղիսն ես ժողով արասցէ, և երթեալ զորդին իւր ազատեսցէ։ Որ եղ ի յունիսի ԻԵ։

ՃՂԶ.

Առ Ագուլեաց վանից Առաջնորդ Թովմայ պեան պատուէր վասն սրբոյն Քրիստափորի Աջոյն զոր յղեաց առ նա, զի արծաթապատել տացէ։

Սրբոյն Թօմայի Առաքելոյ վանից ժողովարար Մատթէոս վարդապետն որ ի ՌՄ երորդ ամի և ի . . . եկն աստ, և ի սրբազան վեհէն յայնժամ կոնդակ առեալ գնաց ի մեծն Պօլիս ժողով։ Այժմ անտի եկն ի սուրբ Աթոռս, զի տեսեալ սրբազան վեհըն, ապա գնասցէ ի վանս իւր։ Ըստ որում և ի Պօլիս եղեալ Ագուլեցի ժողովուրդքն, մեծաւ թախանձանօք գրեալ էին առ սրբազան վեհըն, զԱջ սրբոյն Քրիստափորի վկային, (որ էր այժմ ի սուրբ Աթոռոջս,) յղեսցէ ի վանս իւրեանց ի յԱգուլիս։ Քանզի՝ ի ՌՄ երորդ ամին և ի Հայրապետութեան տեառն . . . սրբազան կաթուղիկոսին, յորժամ Ազատ Խանն բազմօք զօրօք եկն յերկիրս Հայոց, և փակեալ աւերեաց զնախիջևան և զամենայն տուն Ագուլեաց, և զանօթս եկեղեցեաց հանդերձ մասամբքն սրբոց կողոպտեաց, և զժողովուրդն գերէ վարեաց, յայնժամ զԱջ սրբոյն Քրիստափորի վկային, Ագուլեաց Վանիցն (որոյ անուամբն կառուցեալ կայ.) Աղուանք գերեալ էին, և տարեալ ի Թարվեզ, անդ յարծաթապատ պահարանէն հանեալ զնըշխարն վաճառեալ։ Յայնժամ՝ և սրբոյ Աթոռոյս ժամօրհնօղ Պօղոս վարդապետն (որ ի ՌՄ երորդ ամին և... յիշեցաւ.) յաշխարհականութեան ժամանակին անդ պատահեալ, առեալ էր զնա՝ և յումեմն վարդապետէ միոյ

յաւանդ եղեալ։ Կարծելով զԱջ սրբոյն Շրմաւօնի Առաքելոյն դոլ։ Եւ ի ժամանակս Տեառն Սիմէօնի սրբազան վեհիս մերոյ՝ եկն նա ի սուրբ Աթոռս և միաբան եղեւ։ Որ և այժմ է ժամօրհնօղ սրբոյ Աթոռոյս։ Եւ յայնժամ ծանոյց սրբազան վեհին վասն սրբոյն Քրիստափորի Աջոյն։ Վասնորոյ և սրբազան վեհըն գրեալ բերել ետ ի սուրբ Աթոռս, և այժմ ըստ խնդրոյ ի Պօլիս եղեալ ադուլեցի ժողովրդոցն (որպէս ի վերդ ասացաք,) ընդ Մատթէոս վարդապետին յղեաց ի վանս Ադուլեաց առ սրբոյն Թօմայի Առաքելոյ վանից Առաջնորդ Թօմայ վարդապետն, վասնորոյ՝ և զթուղթ մի գրեաց առ նա որում և պատուիրեաց՝ զի զնա արծաթապատել տացէ։ Ել Մատթէոս վարդապետն ի սրբոյ Միածնաէջ Աթոռոյս, ի յունիսի ԻԵ։

Առ Բայազիտու ժողովուրդսն շնորհակալութիւն վասն ցանծանակադրամին։

Բայազիտու ժողովրդեան տուեալ գանձանակադրամն եղև ԳԾ ղուռշ. զոր սրբոյ Աթոռոյս ղանձապետ պարոն Մարգարէ Աղայն, յանձնեալ էր Տէր Վահանին,՝զի յղեսցէ ի սուրբ Աթոռս, և նա ևս հասոյց մեզ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զթուղթ մի շնորհակալութեան և միամտութեան գրեաց առ Բայազիտու բոլոր ժողովուրդսն, զի զդրամն զայն առ սուրբ Աթոռս և առ մեզ հասեալ իմացցին, և միամտեսցին։ Յղեցաւ այս ընդ Մատթէոս վարդապետին ի յունիսի ԻԵ,

---

ՃՂԵ.

Ի Պօլիս՝ ի Կարին՝ եւ ի Ցամիթ վասն փօլիցայից եւ այլ իրակութեանց։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Պօլսոյ Նուիրակ Զաքարիա վարդապետն (որ ի . . . յիշեցեալ է.) ի պատասխանի ի փետրվարի. յԱպրիլի. ի Մայիսի և ի Ցունիսի դրեցեալք թղթոցն իւրոց։ Որք մի զկնի միոյ հասին առ մեզ։ Բայց վասն ի զբաղանս գոլոյ սրբազան վեհին, այժմ ձեռնհաս չեղև զպատասխանիս թղթոցն Նորին լիովին գրել Նմա, այլ միայն զհամառօտ դիր մի գրեաց առ Նա, որում և խոստացաւ, զկատարեալ պատասխանիսն թղթոցն իւրոց յետոյ դրեսցէ ինքեան։ Որպէս և Նա ևս խոստանայր զլիովին որպէսն յետոյ գրել մեզ։ Եւ զի քան զայս յառաջ. . . սրբազան վեհըն գրեաց սմա և իշխանացն Պօլսոյ՝ զի զհաշիւն Նուիրակութեան առցեն ի Պօլսոյ հին Նուիրակ Ցարութիւն պետէն։ Եւ Նոքա ևս ըստ հրամանի սրբազան վեհին առեալ էին զհաշիւն Նուիրակութեան ի Նմանէ։ Որպէս և սա այժմ գրէր սրբազան վեհին։ Բայց թերի և կիսատ, զի ոչ զնազտից որքանն և ոչ զվէճից ստոյգ որպէսն և զինչ լինելն գրէր։ Գրէր ևս թէ՝ Ցարութիւն վարդապետն և իշխանքն գրելոց են առ քեզ զորպէսն հաշուին։ Բայց տակաւին զգիր ինչ ոչ ընկալաք ի Նոցանէ։ Վասնորոյ և սրբազան վեհըն խոստացաւ սմա, զի երբ ինքն և իշխանքն Պօլսոյ զկատարեալ որպէսն հաշուին, և իւրեան զինչ հասանիլն գրեսցեն ինքեան, և ինքն ևս յայնժամ զպատասխանիս Նոցին թղթոցն և իւր գրեսցէ լիովին։ Ծանոյց սմա և այժմ զկրկին փօլիցայ առնելն իւր ձեռամբ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին, (գ) և ակնցի խօջայ Ցովաննէսին. (ժ) և զփօլիցայագրետնսն առ Նոսա յղելն։ Եւ պատուէր՝ զի ի գալ փօլիցայագրեանցն առ ինքն, տացէ Նոցա զդրամսն (գ) (ժ) և զփօլիցայագիրսն առեալ ի Նոցանէ առ ինքն պահեսցէ, զի յաւուր հաշուատրութեան իւրոյ պիտոյասցի ինքեան։ Եւ զի՝ քան զայս յառաջ ի . . . գրեաց սրբազան վեհըն Զմիւռնոյ Նուիրակ Ղուկաս պետն՝ զի Ե կամ ՋՌ ղուռշ յղեսցէ ի Պօլիս առ սա, զի և սա ևս անտի առ մեզ հասուսցէ։ Ծանոյց սմա զայս՝ և պատուիրեաց, զի և ինքն ևս դրեսցէ Նմա այնպէս առնել։ Նա և՝ սրբազան վեհըն ի կողմանէ հիսապին իւրոյ և սոցա, յայնժամ զրանս գրեաց առ սոսա, և այժմ զպատասխանին հարկեաց սմա գրել ինքեան, և Նմա ևս հարկել, զի Նա ևս դրեսցէ ի միամտութիւն իւր։ Գրէր թէ՝ Աբրահամ պետի սպասաւոր Սողոմօն պետն եկն յայդր, և ընդ Նմա զիր ինչ յղեցաք։ Բայց Նա տակաւին ոչ եկն աստ։ Ծանոյց Նմա և զգալն սրբոյն Թօմայի Առաքելոյ վանից ժողովարար Մատթէոս վարդապետին։ (Որ յամ-

սոյս ԻԵ յիշեցաւ) ի սուրբ Աթոռս, և ըստ խնդրոյ ի Պօլիս եղեալ Ագուլեցի ժողովրդոցն, ընդ նմա յղել զԱՋ սրբոյն Քրիստափորի վկային ի վանս իւրեանց։

Թուղթ մի ևս առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի Կարին՝ ի պատասխանի յամսոյս ԺԹ դրեցեալ թղթոյն։ Առ որ հասեալ էր թուղթ սրբազան վեհին որ յամսոյս Զ գրեցաւ առ նա. և նա այժմ. վասն ընչիցն Թօխաթու նորոդ նուիրակին գրէր թէ՝ երկնչիմ. թէ մի գուցէ չյղիցէ առ մեզ Վասնորոյ և սրբազան վեհըն պատուիրեաց սմա, զոր ինչ դրեսցէ նա ինքեան վասն ընչիցն իւրոց, ծանուսցէ մեզ։ Նաև՝ քան զայս յառաջ յԱպրիլի է՝ գրարաթագիր մի գրեաց սրբազան վեհըն ի վերայ սորա՝ ի ձեռն գրաբեր հաճի Ահմատ անուամբ տաճկի ուրումն զի զդրամ. տացէ նմա։ Եւ սա՛ես ըստ գրեցելոյ սրբազան վեհին տուեալ էր նմա զդրամն, և զթամասուկն առեալ ի նմանէ, առ մեզ էր յղեալ։ Վասնորոյ և սրբազան վեհըն զշնորհակալութիւն դրեաց առ սա։ Ծանոյց սմա և քան զայս յառաջ յամսոյս ԺԶ և ի Լ, կրկին բարաթ առնելն ի վերայ։ Զմինն ի ձեռն նոյն տաճկի ընկեր Քեալբալայ Միրզաբաբային, և զմիւսն ի ձեռն մեր Գալուստ վարդապետի փեսայ պարոն Եսայուն։ (ա) և պատուէր զի զայնս ևս տացէ նոցա։ Իսկ և՝ նորապէս փօլիցայ արար ի վերայ Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետին (Գ)‸ և զփօլիցայագիրն առ սա յղեաց, զի ինքն անդ տացէ մեզ, և զփօլիցայագիրն յղեսցէ առ եղբայրն իւր Խօջայ Նազարէթն ի Պօլիս՝ զի և նա անդ ի Զաքարիա պետէն առցէ։ Եւ զի զմիամտութիւն ևս գրեաց առ սա, վասն իւրոյ յղեալ ընչիցն առ մեզ։ Եւ պատուէր՝ զի Ժ կամ. Ի հօխայաչափ Անթիմոնի առեալ, ընդ Պօլսոյ եկեալ ընչիցն առ տէր Վահանն յղեսցէ ի Բայազիտ, զի և նա առ մեզ հասուսցէ։ Եւ գրէր թէ՝ աստէն քահանայ ոմն եկն յայդր, և ընդ նմա դրեսցէ առէ զօրպէսն ուղուն Պետրոսին։ Բայց ոչ զքահանայն տեսաք և ոչ զգիրն ընկալաք։ Եւ զթուղթսն Պօլսոյ և Համթայ նուիրակացն և տեղւոյ Առաջնորդինն և ժողովրդեանն գրեալ առ սա յղեաց, (որպէս ասելոց եմք յետոյ.) զի նուիրակացն առինքեանս յղեսցէ, և զթուղթ Առաջնորդին ինքեան տացէ, և ասասցէ նմա, զի ի նմա զոր ինչ պատուէրս դրեալ է ինքեան վասն ուղուն Պետրոսին, այնպէս արասցէ։ Եւ ծանոյց սմա քան զայսյառաջ յԱպրիլի ԻԶ, և յամսոյս Զ զգրեալն առ տեղւոյ Թօխաթու և Ցամթայ նուիրակունսն, զի զոր ինչ դրամս ունիցին, առ ինքն յղեսցեն։ Եւ պատուէր՝ զի և ինքն ևս մուղայէթ լեալ, ի նոցանէ զդրամ. առցէ, և առ մեզ յղեսցէ։

Թուղթ մի ևս առ Ակնցի Խօջայ Ցովաննէսն գրեաց ի Կարին ի պատասխանի թղթոյն։ Եւ ըստ խնդրոյ և ի ձեռն սորին, կրկին փօլիցայ արար ի վերայ Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետին (Ժ), և զփօլիցայագիրն առ սա յղեաց, զի ինքն անդ զդրամն (Ժ) տացէ մեզ, և զփօլիցայագիրն յղեսցէ առ եղբայրն իւր Խօջայ Ցակոբն ի Պօլիս, զի և նա անդ ի Զաքարիա պետէն առցէ։ Այս ուրոյն յղեցաւ առ սա ձեռամբ Ատաալ փայեկկին։

Թուղթ մի ևս առ Համթայ Առաջնորդ և սրբոյ Աթոռոյս նուիրակ Կարապետ վարդապետն գրեաց (որ յամսոյս ԺԹ յիշեցաւ ի յունիսի . . .)։

Թուղթ ևս առ Կարնոյ Առաջնորդ Սարգիս վարդապետն՝ առ քահանայսն՝ իշխանսն և ժողովուրդսն գրեաց։ Ծանուցանելով նոցա զչտալն չիք ուղուն Պետրոսին զդրամն Թօխաթու նուիրակին։ Վասնորոյ՝ և զչիքն զայն ընդ բանիւ արար, յորում. և գրեաց յատկապէս առ տեղւոյ Առաջնորդ Սարգիս պետն, զի զթուղթս զայս ծանուցմամբ յեկեղեցիսն ընթեռնուլ տացէ, և զգուշացուսցէ զժողովուրդսն, զի մի ոք ընդ չքոյն խօսեսցի, և կամ. առևտուր արասցէ, մինչև չզղջացեալ տացէ զդրամս մեր։ Իսկ և՝ սրբոյ Աթոռոյս վէքիլ Գալուստ վարդապետի փեսայ պարոն Եսային վաճառականութեան աղագաւ երթայր ի Կարին։ Եւ վասն երկիւղի ճանապարհին աստ զդրամ. (ա) ետ մեզ. զի ի Կարին տացուք։ Վասնորոյ և սրբազան վեհըն զփօլիցագիր մի դրեալ ի վերայ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին, ետ նմա, զի տարեալ այնու առցէ զդրամն (ա) իւր ի նմանէ։ Եւ պատուէր մահտեսի Փիլիպպոսին, զի ի գալ փօլիցայագրին առ ինքն, տացէ զդրամն (ա) պարոն Եսայուն,և զփօլիցայագիրն առեալ ի նմանէ առ մեզ յղես-

ցէ, և ղդրամն (ա) ի հաշիւ հիսապին մերոյ արկցէ՛ Փօլիցայագիրն յամսոյս ելն դըրեցաւ, և պարոն Եսային յամսոյս ԻԸ ել ընդ Կարնոյ փայեկլին և Զաքարիա պետին։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Վանայ նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վարդապետն (որ յամսոյս Զ յիշեցաւ)։ Ծանուցանելով նմա զդրելն այժմ առ ընտանիսն նոր նահատակին Յակոբայ վարդապետին զմխիթարութիւն և զպատուէր՝ զի զսուրբ Անապատն նորին ի շինութեան պահեսցեն։ (Որպէս ասելոց եմք յետոյ,) Եւ պատուէր՝ զի և ինքն եւս մուղայէթ լինիցի, և ի շինութեան պահել տացէ նոցա զսուրբ վանքն այն։ Եւ զի Բ ճառընտիր ունէր սա, որում ղրեաց սրբազան վեհըն, զի ի նոցանէ որն հարուստ է, առ մեզ յղեսցէ, զի ընդ մեր ճառընտրացն համեմատեալ տեսցուք. եթէ ի նմա աւելորդ բանք ինչ լինիցին՝ օրինակեսցուք, և զիւրեանն առ ինքն յղեսցուք։ Նոյնպէս՝ և Գ. Պատմագիրք եւս զոյր անդ՝ Ղազար Փարպեցւոյնն. Յովաննէս պատմագիրն, և Ուխտանէս վարդապետինն։ Ղազար Փարպեցւոյնն ընդ սմա էր. Յօվաննէս պատմագիրն առ մահտեսի Թօմայն, Ուխտանէս վարդապետինն առ Սիմէօն Աբեղայն, (որ էր ի Լիմ,) որոց աղագաւ եւս դրեաց սմա, զի զայնս եւս առեալ ի նոցանէ ընդ ճառընտրացն առ մեզ յղեսցէ, զի թէ հաւանելիք են, զնոսա եւս օրինակեսցուք և առ ինքն յղեսցուք, զի տեարցն տացէ։ Եւ վասն Ուխտանէս վարդապետի պատմագրին՝ Աբրահամ վարդապետն եւս գրեաց զթուղթ մի առ Սիմէօն Աբեղայն, զի յղեսցէ։ Եւ վասն սրբոյ Կարապետի Առաջնորդ Յօնան պետին որպէս յամսոյս Զ և այժմ եւս գրեաց առ սա՝ զի զորպէսն նորին իմացեալ, գրեսցէ ինքեան։ Զի ըստ խոստման իւրոյ ոչ եկն նա ի սուրբ Աթոռս։ Եւ վասն նորա զայս եւս գրեաց առ սա ասելով թէ՝ զմեր նուիրակութեան հաշիւն ըզսուրբ Մեռոնն և զկոնդակն խնդրեմք ի նըմանէ։ Եւ թէ գայցէ նա ի սուրբ Աթոռս և թէ ոչ, ինքն գիտասցէ։ Թուղթ մի եւս օրհնութեան և շնորհակալութեան՝ յամսոյս ԻԵ առ Խամփերի կինն և իւր որդի Նիկողայոսըն գրեաց։ Որ վասն հանգուցեալ առն իւրոյ Մարտիրոսին՝ ԲԾ մսխալ մարգարիտ էր յղեալ ի սուրբ Աթոռս ձեռամբ Ջուղայեցի տէր Յովաննէսին։ Ընդ սմա յղեցաք զայս Բ թուղթքս։ Թուղթ մի եւս ի Վան յամսոյս ԻԷ՝ ըստ խնդրոյ Աստապատեցի Աբրահամ պետին առ մահտեսի Ծաֆար և Կարապետ ընտանիսն նոր նահատակին տեառն Յակոբայ վարդապետին։ (Որ վասն ի քրիստոս հաւատոցն յանցեալ ամին ի Յամիթ նահատակեցաւ։ Որոյ զպատմութիւն տես ի . . . ։) Գրեաց թէ որովհետև այդ նոր Անապատն յանուն սրբոյ Աթոռոյս և հրամանաւ մերով էր շինեցեալ պարտիք մուղայեթ լինել դմա և ղցրուեալ միաբանսն դորին ժողովել, և շինութեան պահել, և միշտ զորպէսն ձեր ձեռամբ Պաղտասար պետին գրել մեզ։ Զի Անապատն այն որովհետև սրբոյ Աթոռոյս անուամբն է շինեցեալ, վասնորոյ ընդ իշխանութեամբ մերով պարտի մնալ ասէ։ Զայս ետուք Աբրահամ պետին զի յղեսցէ։ Իսկ և՝ ի Բալուայ Բ ուխտաւորք եկին այժմ ի սուրբ Աթոռս յուխտ։ Ընդ որս և սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Զաքարիայն թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն, և զառաջին թուղթն սրբազան վեհին (զոր ի . . .) յետոյ յղեալ առ մեզ։ Եւ թէպէտ զորպիսութենէ նուիրակին և արդեանց տեղւոյն ոչինչ գրէր մեզ, բայց ի թղթաբերացս և ի թղթոյն նուիրակին իմացաք, որ զարդիւնս տեղւոյն յանձնեալ էր նուիրակին։ Եւ նա եւս առ ինքն էր թողեալ, որ անտի առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պարոն Բարսեղն յղեսցէ ի Յամիթ։ Վասնորոյ և սրբազան վեհըն զթուղթ գրեաց առ նա ի պատասխանի թղթոյն։ Եւ պատուիրեաց՝ զի գանձապետութեան գործոյն իւրոյ մուղայէթ լինիցի, և զոր ինչ արդիւնս եւս ժողովեսցէ, առ նուիրակն յղեսցէ, և ինքեան գրեսցէ։ Եւ զթուղթն զոր յղեալ էր յետոյ, ի թղթոջ եդեալ վերստին առ նա յղեցաք, զի ընդ թղթոյս ի միասին պահեսցէ ընդ իւր իբր օրհնութիւն սրբոյ Աթոռոյս։ Այս ընդ Բալուեցի ուխտաւորացն յղեցաւ։ Իսկ և՝ Բայազիտու Իսաղ փաշային՝ յառաջագոյն ի յԻւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետէն գրամս էր խնդրեալ փոխ։ Բայց նա ոչ տալ կա-

մելով, վասնորոյ՝ խոյս տուեալ՝ ի նմանէ եկն ի սուրբ Աթոռս։ Եւ ժամանակ ինչ եկաց աստ։ Եւ այժմ փաշային վասն նորա թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն, զի յղեսցէ ի վանս իւր։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ըստ խնդրոյ նորին յղեաց զնա ի վանս իւր. Ընդ որում և զթուղթ մի գրեաց առ փաշային ի պատասխանի թղթոյն, և յանձնարարութիւն վասն Զաքարիա վարդապետին։ Ասելով թէ՝ որպէս հայրն քո Մահմուտ փաշային գգա ի խնամս է ունեցեալ, և զորին վանիցն տիրութիւն արարեալ, նոյնպէս և ի քէն խնդրեմ՝ զի գգա ի սէր և ի խնամս քո ունիցիս, և վանիցն զորին ես մուզայէթ լինիցիս։ Նաև՝ վասն տէր Վահանին ևս գրեաց առ սա զյանձնարարութիւն։ Այլև՝ վասն խոյս տալոյն Զաքարիա պետին և գալոյն ի սուրբ Աթոռս, փաշային ԴԾ ղուուշ ճառմայ[29]) էր ձգեալ ի վերայ նորա։ Բայց սրբազան վեհըն ի գնալն նորին աստի, ԴԾ ղուուշ ետ նմա, զի տարեալ տացէ փաշային, և զերծցի։ Նա և՝ Իսպիրու Առաջնորդ Յովհաննէս վարդապետն ի յԻւչքիլիսայն վախճանեալ էր, (որպէս ի յԱպրիլի ԻԶ ասացաւ,) և սորա եղբօրորդի Պօղոսն եկեալ առ Զաքարիա վարդապետն, խնդրէր ի նմանէ զինչս հանգուցելոյն։ Եւ նա ևս ծանոյց սրբազան վեհին։ Եւ սրբազան վեհըն ևս կոչեալ զնա առաջի իւր կամէր զի ի ձեռն սակաւ իրաց ի հաւանութիւն ածցէ զնա։ Իսկ նա ոչ առնոյր յանձն։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն բարկացեալ ի վերայ նորա, էհան զնա յերեսաց իւրոց։ Եւ նա ևս ընդ պատրաստ կարաւանի կամէր գնալ ի Բայազիտ։ Բայց ոչ թոյլ ետ նմա սրբազան վեհըն ի գնալ, այլ պատուիրեաց քանի մի վարդապետաց՝ զի կոչեսցեն զնա առաջի իւրեանց և յորդորական բանիւք խօսեսցին ընդ նմա, զի թերևս սակաւ ընչիւք ի հաւանութիւն բերցեն զնա։ Եւ նոքա ևս ըստ հրամանի սրբազան վեհին կոչեալ էին զնա առ ինքեանս, և ի հաւանութիւն ածեալ։ Եւ եկեալ ծանուցին սրբազան վեհին, և սրբազան վեհըն ևս ընդ այս ուրախ եղև յոյժ։ Բայց նա վերստին ի նոյն յամառութիւնն դարձաւ, և դարձեալ ներհակէր Զաքարիա պետին։ Զոր իմացեալ սրբազան վեհին, ի բանտ ետ արկանել զնա զի ուղղեսցի։ Զոր և արկին իսկ։ Բայց նա ի բանտին զղջացեալ, զմեղայի թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն, զի հանցէ զինքն ի բանտէն։ Եւ սրբազան վեհըն ևս լուեալ աղաչանաց նորին, հանել ետ զնա ի բանտէն, զքսուրն հանգուցելոյն, զքանի մի գրեանս ի սրբոյ Աթոռոյս, և ԲԾ ղուուշ ի կողմանէ Զաքարիա պետին տուեալ նմա, եթող գնալ ի տեղի իւր։

Թուղթ մի ևս առ փաշայի քեահիայ Հոըղվան Աղայն գրեաց։ Զի սա ևս էր գրեալ առ սրբազան վեհըն վասն Զաքարիա վարդապետին, զի յղեսցէ։ Զոր և յղեաց իսկ։ (Որպէս ի վերդ ասացաք։) Այլև սա վասն փաշային ի Ջուղայեցի տէր Յովհաննիսէն յառաջագոյն ճոթ էր առեալ, բայց զգինն նոցին տակաւին ոչ էր տուեալ նմա։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ըստ խնդրոյ նորին գրեաց առ սա, զի զգինն ճոթիցն տացէ նմա։ Զթուղթսն փաշային և նորին Քեահիային Զաքարիա վարդապետն տարաւ ընդ իւր։ Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետն, Ջուղայեցի տէր Յովաննէսն. Էսային. բալուեցի Ի ուխտաւորքն և Կարնոյ Ապաալ փայեակն ելին ի միասին ի յունիսի ԻԸ։

---

*) Կրթեսցէ, յետ այնորիկ ըստ սովորութեան իւրեանց վարպետ օրհնէ զնա, և չըրաղ առնէ ինքեան։ Եւ աշակերտն ևս՝ յայնժամ ըստ կարեաց իւրոց խարճ հոգացեալ, յայն աւուր մեծ ընդունելութիւն և հացկերոյթ առնէ այնմ բոլոր Անսաֆին։ Եւ վարպետին իւրոյ ևս տիւշալիկ[30]) տայ։ Այսպէս և ի Թիֆլիզ քաղաքոջն Ցարութիւն անուամբ բարեպաշտ այր ոմն տեսեալ էր թէ՝ ի յընդունելութէնէն բազում մեղք ծնանին, այսինքն կագ և խռովութիւն լինին, վասնորոյ՝ զայն Անսաֆի բոլոր վարպետսն ի բարեգործութիւնս յորդորեալ, համակամութեամբ ամենեցուն, յանուն սրբոյ Աթոռոյս գանձանակ էր հաստատեալ ի միջի իւրեանց, զի աշակերտն այն զընդունելութեան խարճըն զոր առնելոց է ի վարպետ լինելն իւր, մի արասցէ, այլ զայն յիւր հաստատեալ

*) Ապրիլի մի քանի թուղթ կցած էր յունիսի վերջը. այսպէս էլ տպում ենք։

գանձանակն արկցէ։ Եւ ուստաբաշի Յարութիւնն այն բացի գանձանակ հաստատելոյն ի միջի իւրեանց, զիւր տիւշալիկն ևս խոստացեալ էր արկանել ի գանձանակն սրբոյ Աթոռոյս։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ըստ խնդրոյ տեղւոյ նուիրակ և Առաջնորդ Ռեթէոս վարդապետին՝ զթուղթ մի օրհնութեան և շնորհակալութեան գրեաց չիթճոց բոլոր Ասնաֆին։ Յորում․ և ուստաբաշի Յարութիւնին յատուկ օրհնութիւն և շնորհակալութիւն ևս գրեաց։ Եւ գնա սրբոյ Աթոռոյս վերակացու և դանձապետ կարգեաց։ Պատուիրելով նմա, զի գանձապետութեան գործոյն իւրոյ մուղայէթ լինիցի, և զարդիւնսն առատութեամբ առեալ ի գանձանակն սրբոյ Աթոռոյս արկցէ, և առ ինքն պահեսցէ, և ըստ ժամանակին նուիրակին մերոյ յանձնեսցէ, և ինքեան գրեսցէ։ Կրկին պատուէր՝ զի զորքան գանձանակադրամս այժմ ընդ իւր ժողովեալ ունի, նուիրակին մերոյ և Առաջնորդին իւրեանց Ռեթէոս վարդապետին տացէ, զի նա առ մեզ հասուսցէ։ (Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն։ Յերեսն ՇԼԹ։ ՇԽ։) Եւ զի՝ կանոն է սրբոյ Աթոռոյս, զի ի ժողովարար յղելն մեր ի Թիֆլիզ վասն մոմի, քանի մի ղալիպ սպիտակ մոմ տամք նմա, զոր ընդ իւր տարեալ թափէ անդ, և իբր յօրհնութիւն սրբոյ Աթոռոյս գլխաւոր Ասնաֆիցն բաժանէ, զի առատութեամբ տացեն մոմ սրբոյ Աթոռոյս։ Արդ՝ յայսմ ամի ևս յորժամ սրբազան վեհըն ըստ սովորութեան ի Մարտի ԻԲ զԱհարօն վարդապետն մոմի ժողովարար արարեալ յղեաց ի Թիֆլիզ, բայց նմա ոչ էր բաւականացեալ ընդ իւր տարեալ մոմն։ Վասն որոյ՝ և Թիֆլիզու Առաջնորդ Ռեթէոս վարդապետն ի մէնջ մոմ էր խնդրեալ։ Եւ մեք ևս ըստ հրամանի սրբազան վեհին ԸՃ հատ բաժանելոյ սպիտակ մոմ յղեցաք առ նա ընդ վրացի Եսայուն՝ հանդերձ թըղթովն չիթճոց Ասնաֆին։ Եւ Ռեթէոս վարդապետն ի մէնջ նշխարհս էր խնդրեալ։ Բայց չէր սովորութիւն, վասնորոյ՝ ոչ յըղեցաք։ Եւ վրացի Եսային հանդերձ թղթովն և մոմիւն յապրիլի ԺԶ։

Առ Հաշտարխանու նուիրակ Մինաս պեսն ի պատասխանի Թղթոյն։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Հաշտարխանու նուիրակ Մինաս վարդապետըն ի պատասխանի ի դեկտեմբերի Ի գըրեցեալ թղթոյն։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի Յունվարի ԻԳ զթուղթ գըրելն առ ինքն հանդերձ դիտմամբ նորին ի կարճոյ։ Եւ հարկ՝ զի գրեսցէ զպատասխանին։ Այլև՝ Ռուսաց թագաւորի հրամանագրի օրինակն խնդրեալ էր սա ի սրբազան վեհէն։ Զոր և ըստ խնդրոյ սորին՝ գրեալ, և ի թղթոջս եդեալ, յղեցաք առ սա։ Թուղթ մի ևս սրբազան վեհըն սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին գրեցոյց առ սա, զի Դ քիւբք, Բ փիլոնցու սև գօզէթ․ Բ փիլօնցու կապուտ դօզէթ, Բ փիլոնցու մօռ գողէթ․ քանի մի ղըֆիլ, և զայլ ինչ իրս մանունս առեալ յղեսցէ։ Որում և պատուիրեաց սրբազան վեհըն, զի զոր ինչ հրամանաւ իւրով գրեաց ինքեան Մկրտիչ վարդապետն, փութով հոգացեալ յղեսցէ, զի մինչև ցաշունն աստ հասցին։ Յղեցաւ այս ընդ Հաշտարխանցի Ջուլհակ Յարութիւնին։ Որ եւ ի Ապրիլի ԺԶ։

Առ Նախիջևանու Հածիխանն ի պատասխանի Թղթոյն։

Եղեգաձոր՝ (որ է ի կողմն Նախիջևանու.) ի վաղուց հետէ ամայի կայր։ Բայց Նախիջևանու իշխօղ Հաճիխանն, և նորին ազգական Շիւքիւլլարէկն (որում էր մուլք սեպհական.) զքանի մի գիւղօրայս այժմ շինեցուցեալ էին ի նմանէ, և զմնացեալն ևս օրաւուր շինեցուցանէին։ Բայց ի նորաշէն գիւղօրայս բնակեալ ժողովուրդքն ոչ ունէին քահանայս, և Կարմիր վանիցն ևս (որ անդ) ոչ գոյր Առաջնորդ։ Որոց սակս՝ և Հաճիխանն զԾրնջակու սրբոյ Կարապետի վանից Առաջնորդ Կարապետ վարդապետն (որ ի Մարտի Բ յիշեցաւ,) ընդ Հիւքիւլլարէկին հանդերձ թղթով յղեալ առ սրբազան վեհըն, զի գրեսցէ Նախիջևանու բոլոր Առաջնորդացն, զի առ նորաշէն գիւղօրայս եղեալ ժողովուրդսն զքահանայս յղեսցեն։ Եւ ինքն ևս աստի Առաջնորդ յղեսցէ Կարմիր վանիցն։ Իսկ որովհետև գիւղօրայք Եղեգաձորու տակաւին

ոչ էին ըստ բոլորին ի շինութիւն եկեալ, վասնորոյ և սրբազան վեհըն այժմ ոչ յըղեաց անդ Առաջնորդ. այլ զթուղթ մի գըրեաց առ Հաճիխանն (որ ի . . .) ի պատասխանի թղթոյն։ Որում և խոստացաւ, զի երբ գիւղորայքն ըստ բոլորին ի շինութիւն գայցեն, յայնժամ ըստ խնդրոյ իւրոյ Առաջնորդ յղեսցէ Կարմիր վանիցն։ Բայց վասն քահանայից ոչինչ գրեաց սմա, այլ պատուիրեաց Կարապետ վարդապետին՝ զի երբ աստի գնասցէ ի վիճակս իւր, յայնժամ զմի ոմն ի միաբանից իւրոյ վանիցն երբեմն երբեմն յղեսցէ առ ժողովուրդսն նորաշէն գիւղօրէիցն, զի երթեալ շրջագայեսցի ի մէջ նոցա, և ի ձեռն հոգևոր խըրատու շահեսցէ զնոսա, մինչև մնացեալ գիւղորայքն տեղւոյն ևս ի շինութիւն գայցեն, և ապա յայնժամ Առաջնորդ յղեսցէ Կարմիր վանիցն։ Եւ զի՝ Եղեգաձորցի տուն շատ գոյր աստ, որք յառաջագոյն զկնի աւերման երկրին իւրեանց փախուցեալ, և եկեալ աստ բնակէին։ Որոց աղագաւ եկեալ էր Շիւքիւլլաբէկն, զի առեալ զնոսա ի խանէն, տարցէ ի հայրենի երկիրն իւրեանց։ Բայց խանն զնոսա ոչ ետ նմա, այլ զմիլլու քիւրտն տուեալ նմա, սիրով ուղևորեաց։ Որք յետոյ վասն իրիք պատճառի անտի փախուցեալք, վերստին դարձան ի տեղիս իւրեանց ի Գառնի, զի անդ բընակէին ի վաղուց հետէ։ Բայց Կարապետ վարդապետն ոչ գնաց ընդ Շիւքիւլլաբէկին ի տեղի իւր. քանզի մերձ էր սուրբ Զատիկն։ Վասնորոյ՝ մնացեալ աստ ժամանակ ինչ արար զսուրբ Զատիկն, և ապա գնաց աստի։ Զթուղթ Հաճիխանին յղեցաք ընդ սմա։ Որ եւ ի Ապրիլի Ի։

Ի Բայազիտ առ Նսնուսեցի մահտեսի Յովաննէսն վասն առնլի դրամոյն իւրեանց ի Հաճիբաղրէն, և նորին Թէմէսուկացն։

Թէպէտ քան զայս յառաջ յամսոյս ԺԲ գրեաց սրբազան վեհըն առ Բայազիտու իշխանսն, զի զտալիք դրամն (ը) մեր փութով հոգացեալ տացեն տէր Վահանին, զի զկնի քանի մի աւուրց ի ձեռն Հաճիբաղըին բարաթ արասցէ ի վերայ նորա։ Բայց Հաճիբաղըն ոչ ևս գնաց ի Բայազիտ։ Այլ եկեալ աղաչեաց զսրբազան վեհըն՝ զի ի Հաճիզէյնալէն ի վերայ մեր ձեռամբ իւրով բարաթ արարեալ գրամն, (ճլ) ի կողմանէ իւրոյ տալեաց դրամոյն իւրոյ Նսնուսեցի մահտեսի Յովաննիսին և նորին փեսայ պարոն Մարկոսին՝ ի Բայազիտ տացուք նոցա, և զիւր Բ թեմէսուկսն բերեալ ի նոցանէ, ինքեան տացուք։ Եւ սրբազան վեհըն ես լսելով աղաչանաց նորին, մինչ կամէր գրել զթուղթ առ Նսնուսեցի մահտեսի Յովաննէսն վասն դրամոյն, յայնժամ նոցա չըրագ պարոն Աղարարն եկն յԵրևան։ Ունելով ընդ իւր զթեմէսուկն պարոն Մարկոսին։ Որով և խնդրէր զի նմա գրեալ դըրամն ի Հաճիրաղըէն, զոր տալոց էր նմա։ Եւ նա ևս կրկին անգամ աղաչեաց զսրբազան վեհըն, գրել առ Նսնուսեցի մահտեսի Յովաննէս զառաջին խնդիրս իւր. Եւ պատուիրել Աղարարին, զի ժամանակ ինչ համբերեսցէ։ Յաղագս որոյ և սրբազան վեհըն պատուիրեաց Աղարարին, ոչ խնդրել զդրամն ի Հաճիրաղըէն, մինչև դրեսցէ ինքըն մահտեսի Յովաննիսին, զի որպէս գրեսցէ նա ինքեան, այնպէս արասցէ։ Եւ նա ևս ըստ հրամանի սրբազան վեհին թոյլ ետ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զթուղթ գրեաց առ Նսնուսեցի մահտեսի Յովաննէսն (որ ի Յունվարի ԺԶ յիշեցաւ.) ի Բայազիտ։ Զի դրեսցէ աստ Աղարարին, որ զպարոն Մարկոսի ՋԳԾ (?) և ՋՌ գիանի թամասուկն տացէ մեզ, և ինքն ևս զՌՋ թումանի և ԴՌ գիանի թամասուկն առ մեզ յըղեսցէ, զի մեք ևս զԲ թամասուկսն աստ Հաճիբաղըին տացուք, և ինքն անդ զդրամն (ՃԼ) մեր ի տէր Վահանէն առցէ ի տեղի Հաճիբաղըի տալեաց դրամոյն ինքեանց։ Եւ սրբազան վեհըն վասն առնլի դրամոյն (ը) մերոյ ի Բայազիտցւոց, ղգահրաշի Սողոմոնն այժմ յղեաց անդ, զի ընդ տէր Վահանին ի միասին հարկ արարեալ նոցա, առցեն ի նոցանէ զդրամն մեր (ը)։ Քանզի՝ դժուարութեամբ տային։ Որոյ սակս՝ և զթուղթ մի սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին գրեցոյց առ տէր Վահանն զի թէ մինչև ցարդ ի Բայազիտցւոցն առեալ իցէ զդրամն (ը) յորմէ զայս ինչ (ՃԼ) հանեալ՝ Նսնուսեցի մահտեսի Յովաննիսին տացէ, և զմնացեալն (գ. գ. Ի փարայ.) յանձնեսցէ ղահրաշի Սողոմոնին, որ բերեալ

առ մեզ հասուսցէ։ Ցղեցան այսոքիկ ընդ մեր ղահրաշլի Սողոմոնին։ Որ եւ ի սրբոյ Աթոռոյս ի ապրիլի ԻԱ։

Ի Պօլիս՝ ի Զմիւռին՝ ի Կարին և ի Բայազիտ Թուղթք. վասն հաշուից և այլ իրակութեանց։

Ըստորում յամսոյս ԺԲ խոստացաւ սրբազան վեհըն Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին, գրել զպատասխանիս ի Պօլսոյ եկեալ թղթոցն, և յղել առ ինքն։ Ահա այժմ գրեալ յղեաց առ նա, զի յըղեսցէ։ Որք են։

Թուղթ մի առ Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Ղուկաս վարդապետն գրեաց։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի յունվարի Ժ, և ի դեկտեմբերի ելն զթուղթս գրելն առ ինքն։ Եւ պատուէր՝ զի զպատասխանիս նոցին, փութով գրեսցէ ինքեան։ Քանզի՝ կամէր իմանալ՝ զի թէ յաջող իցեն ճանապարհք կողմանցն, զայլ նուիրակ յղեսցէ անդ, և զնա աստ բերցէ։ Եւ թէ ոչ՝ վերստին նուիրակ արասցէ զնա տեղւոյն, մինչև խաղաղասցին խռովութիւնն, և բացցին ճանապարհք կողմանցն, և ապա բերցէ զնա աստ։ Կրկին պատուէր՝ զի մինչև ցարդ որքան դրամ է հասուցեալ Զաքարիա վարդապետին, զամենայնն ուրոյն ուրոյն դրեսցէ ինքեան և Զաքարիա վարդապետին՝ ի միամտութիւն իւր։ Գրեաց ևս՝ զի Ե կամ ԶՌ ղռուշ դրամ հասուսցէ Զաքարիա վարդապետին, և ծանուսցէ ինքեան։ Ծանոյց սմա և զանցսն Թօխաթու նորոգ նուիրակին ի կարճոյ։ (Որպէս ի փետրվարի ԺԷ ասացաւ։) Նոյնպէս՝ և զմահ տպագիր մահտեսի Մարկոսին, (որ յանցեալ ամին առ. տէր փոխեցաւ.) և զչինումն նորոգ գրոյն ձեռամբ տեղապահին։ Եւ վասն Ցօհանավանից գանձանակին խնդիր արար, արդեօք ցայժմ առեալ իցէ, թէ ոչ։ Եւ թէ՝ քեզ ոչ տան ասէ զգանձանակն վանիցն, այլոց ևս ոչ ունին հրաման տալոյ առանց մեր գրոյն։

ՃԳԸ.

Առ Բայազիտու Իսաղ փաշայն խնդիր՝ վասն ընչիցն Իսպիրու Առաջնորդ հանգուցեալ Յովաննէս վարդապետին, զոր ի բերելն աստ ի ճանապարհէն յետըս էր դարձուցեալ, որոյ աղագաւ եւ մեր մարդկանցն շատ նեղութիւն տուեալ։

Ինչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետն ըստ խնդրոյ Բայազիտու Իսաղ փաշային յորժամ ի յունիսի ԻԸ հրաման առեալ ի սրբազան վեհէն գնաց ի վանս իւր, հասեալ էր ի Բայազիտ, և տեսեալ զփաշայն։ Եւ այժմ գրեալ էր սրբազան վեհին։ Եւ յայսմ միջոցին Հնդկաց նուիրակ լուսահոգի Յովսէփ վարդապետի սպասաւոր տէր Գէորգն հանդերձ Բ չինեզէն բեռամբքն եկեալ էր ի Բայազիտ, և գալոց էր ի սուրբ Աթոռս։ Որոյ աղագաւ զգահրաշլի Սողոմօնն ընդ քանի մի տղայոց յղեալ էաք անդ, զի բերցէ ի սուրբ Աթոռս։ Վասնորոյ և Զաքարիա վարդապետն ըստ պատուիրի սրբազան վեհին՝ ընդ տէր Վահանին խորհրդակցեալ, զինչսն Իսպիրու Առաջնորդ Յովհաննէս վարդապետին (որ էր Բ սնդուկ։ Ի միումն գրեանք գոյր, և ի միւսումն շորեղէն։) յանձնեալ էին գահրաշլի Սողոմոնին, զի ընդ տէր Գէորգին առեալ բերցէ ի սուրբ Աթոռս։ Եւ նա ևս ընդ իւր եղեալ թֆանկչոցն բերեալ էր մինչ ի Կարմիր Կոնդն, զի անտի բերցէ ի սուրբ Աթոռս։ Իսկ՝ տեղւոյ մաքսապետ չիք Բարսօն իմացեալ զբերելն սնդկացն Յովաննէս վարդապետին ի սուրբ Աթոռս, իսկոյն գնացեալ ի գիշերին ծանուցեալ էր փաշային զայլ և այլ բարբանջմունս առնելով։ Եւ փաշայն ես փութով զօրականս էր յղեալ ի Կարմիր Կոնտն, և զսնտուկսն անդ արգելեալ և յառաւօտուն զպարոն Մարգարն և զՄուրատն կոչեալ էր առաջի իւր, և մեծաւ ցասմամբ հարցեալ նոցա թէ՝ ով խայինք ձեր է Յովհաննէս վարդապետի Ռ քըսակի ապրանքն։ Եւ նոքա պատասխանեալ են նմա թէ՝ Յովհաննէս վարդապետն երբեմն ի Կարին էր, երբեմն աստ. և յետոյ ասալի գնացեալ ի յԻնչքիլիսայն վախճանեցաւ։ Որոյ սակս մեք ոչ գիտեմք զինչ ունելն նորին։ Եւ փաշայն

աստցեալ նոցա թէ՝ ծանուցեալ են ինձ վասըն ձեր՝ թէ Դ և Ն խօջայքդ, Զաքարիա վարդապետն և տէր Վահանն ի ղիշերի գնացեալ, զսնդուկսն Յովաննէս վարդապետին բացեալ էք, և զոր ինչ արծաթեղէն և ոսկեղէն ունի՝ հանեալ։ Եւ յետ ամենայն խօսակցութեանցն, բարկութեամբ հանեալ է զնոսա յերեսացն իւրոց։ Եւ նոքա ես ելեալ յերեսաց փաշային, գնացեալ են ի մի վայր, զի գելս իւրեն հնարել խորհեսցին, և յայնժամու եղբայրն Հազրի փաշային ձիընթաց արշաւմամբ ի փաշայէն առաքեցեալ, եկեալ է առ նոսա, և զտէր Վահանն և ղմահտեսի Խաչատուրն առեալ ընդ իւր, գնացեալ է ի Կարմիր Կոնտն, և զեր՝կուսին սնտուկսն Յովաննէս վարդապետին բացեալ։ Ի մէջ միոյ սնդկանն գրեանք է եղեալ, և ի մէջ միւսոյն շորեղէն։ Եւ աէր Վահանն զշորեղէնն ղաւթար արարեալ, և տարեալ տուեալ է փաշային։ Եւ իբրև տեսեալ են թէ՝ ոչինչ ել, ապա չար Բարսօն ընդ համախոհիցն իւրոց խորհրդակցեալ, վերստին գընացեալ է առ փաշայն, և կրկին չարախօսութիւն արարեալ թէ՝ Յովաննէս վարդապետն զգեստ և Զ քսակ դրամ ունէր։ Վասնորոյ և փաշայն մարդ է յղեալ առ նոսա, և զգեստն, և զԶ քսակ դրամն Յովաննէս վարդապետին ի նոցանէ պահանջեալ։ Որոյ աղագաւ և Զաքարիա վարդապետն ըստ ամենայն անճարացեալ, զվերոյիշեալ զանցսն գրեալ էր առ սրբազան վեհըն՝ յորմէ և խնդրեալ էր աղերսիւ, զի յօգնութիւն իւրեանց, զԹագաւորի ֆարմանի սուրաթն, զՍարասկեարի բոյրուլթուն փութով յղեսցէ առ փաշայն, և դրեսցէ ես նմա գիբիջայ վասն իւրեանց, զի մի խոշտանկեսցէ զինքեանս։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ըստ խնդրոյ Զաքարիա վարդապետին՝ զԹուղթ գրեաց առ Իսաղ փաշայն, և զԹագաւորի ֆարմանի սուրաթն և զսարասկեարի բոյրուլթուն ընդ Եսայի վարդապետին եղեալ, յղեաց առ նա, զի ընթերցեալ իմասցէ, որովք թերևս ցածնուցու ի բարկութենէն։ Քանզի ի մէջ ֆարմանի սուրաթին բազում պատուէր գոյր դրեցեալ որոց մինն էր և այս թէ՝ զի թէ ուրեք սևագլուխ վախճանեսցի մի՛ ոք իշխեսցէ զինչսն նորին իւրացուցանել, զի ի սուրբ Աթոռն հասանիլ պարտին։ Որում և վասն Զաքարիա վարդապետին, տէր Վահանին, և իշխանացն զրաղում իբիջայս գրեաց, զի անցցէ ի բարկութենէն և մի զիր ինչ խնդրեսցէ ի նոցանէ, այլ ի բաց թողցէ զնոսա։

Թուղթ մի ևս առ փաշայի խազնատար Ըուլզվան Ազայն գրեաց։ Որում և ծանոյց զյղելն Թագաւորի ֆարմանի սուրաթին և սարասկեարի բոյրուլթուին առ փաշայն։ Յորժէ և խնդրեաց՝ զի աստսցէ փաշային թողուլ զնոսա ի բաց, և մի՛ ինչ առնուլ ի նոցանէ։ Թուղթ մի ևս առ Ունուզրէկլի որդի Մահմատ բէկն գրեաց ըստ այսմ մտաց։ Եւ Եսայի վարդապետն ի սրբոյ Աթոռոյս՝ ի յուլիսի Ժ։

Թուղթ ժողովարարութեան միոյ գերետէրի։

Ժողովաբարութեան թուղթ տուաւ Պետրոս անուամբ քրիստոնէի միոյ։ Որ էր յերկրէն Ղարաաաղու։ Որոյ եղբայրն գերի էր անկեալ ի ձեռն լազկեաց, զոր տարեալ էին ի Տաղստուն։ Եւ նա գնացեալ անդ, գտեալ էր զեղբայրն իւր։ Բայց գերիչքն ԺԸ թուման գին էին հատեալ ի վերայ եղբօրն իւրոյ։ Եւ գերիչք լազկիքն պայմանեալ էին ընդ սմա, զի թէ ի պայմանեալ աւուրն բերցէ զդրամն, տացեն ինքեան զեղբայրն իւր։ Եւ թէ ոչ՝ խոստացեալ էին տաճկացուցանել։ Ի վերայ Խօյայ, Աալմաստու, և Նախիջևանու, և Ղափանու։ Թարց պայմանի։ Եւ գերետէր Պետրոսն աստի ի յուլիսի Ժ։

ճՂԹ.

Ի Թօխաթ եւ ի Կարին թուղթք վասն Գեօրեցի Սիմօնի հիսապին զոր ունէր ընդ ծատուրին։

Ի Թօխաթ՝ Նախիջևանցի Ղուլիջանի որդի պարոն Ծատուր մի գոյ (որոյ տունն այժմ ի Բայազիտ է։) որ Դ ամաւ յառաջ ի Բայազիտ ի Թիֆլիզեցի Զոհրապի որդի պարոն Սիմօնէն ԴԾ թուման դրամ առնու իբր սարմայայ[31]) և թէժէսուկ տայ նմա այսու պայմանաւ, որ յերկիր, և ինչ խրիտ

որ պարոն Սիմօնն կամեցի, այնպէս արասցէ և ինչ վասւակ որ լինիցի, Թող զսարմայէն, կիսեսցեն երկուքն։ Ահա Դ ամի էանց, բայց Ծատուրն այն մինչև ցայժմ. Ա դրամ. է ցոյց տուեալ պարոն Սիմօնին, և ոչ յիւր պայմանեալ տեղն է եկեալ, և զհաշիւն իւր տուեալ նմա, և Սիմօնն ևս վասն վտանկաւորութեան ժամանակիս ոչ կարէր գնալ անդ, զի զհաշիւն իւր տեսցէ ընդ պարոն Ծատուրին, և Ծատուրն ևս ոչ գայր ասա։ Այլ այնքան դրամն առեալ ի նմանէ ըստ կամաց իւրոց զինչ կամէր, առնէր։ Եւ Սիմօնն ասա խղճութեամբ մնացեալ էր։ Ուստի եկեալ ծանոյց սրբազան վեհին զորպէսն իւր, յորմէ և խնդրեաց աղերսիւ գրել իշխանաց աեղւոյն, զի պարոն Ծագուրն կոչեալ առ. ինքեանս, ըստ օրինի վաճառականաց կամ զհաշիւն իւր ընդ նմա տեսցին, և կամ զնա աստ յղեսցեն։ Եւ պարոն Սիմօնն զպարոն Ծատուրի թէմեսուկի զօրինակ առեալ, և բազմաց կնքեցուցեալ, և զգիր մի ի վերայ տեղւոյ իշխանացն և Ծատուրին գրեալ, ետ սրբազան վեհին, զի յղեսցէ ընդ թղթոյն իւրոյ։ Վասնորոյ և սրբազան վեհըն լսելով աղերսանաց նորին՝ զթուղթ մի գրեաց առ Թօխաթու հին նուիրակ Պետրոս վարդապետն, և տեղւոյ Առաջնորդ Սարգիս վարդապետն, և առ պարոն Թումաջան և Անտօն Աղայսն, և առ մահտեսի Ծատուր և պարոն Անանիայն, ծանուցանելով նոցա զվերոյիշեալ զանցսն։ Եւ զթուղթ պարոն Սիմօնին և զօրինակն թէմէսուկին ի թղթոջս եդեալ յղեաց առ նոսա։ Որոց և պատուիրեաց՝ զի ի մի վայր եկեալ, զպարոն Ծատուրն կոչեսցեն առ ինքեանս, և զթուղթսն (զոր յղեաց առ նոսա) ընթերցցին առաջի նորա, և զիւրն տացեն նմա։ (Որպէս ասելոց եմք յետոյ։) Եւ ըստ ոճի թեմեսուկին իւրոյ և ըստ օրինի վաճառականաց զհիսապն նորին տեսցեն, և զդրամն եթէ տացէ նա, առեալ ի նմանէ յանձնեսցեն նուիրակին մերոյ Պետրոս վարդապետին, և մեզ դրեսցեն։ Եւ թէ ոչ տացէ զդրամն, զինքն աստ յղեսցեն։ Եւ վասն առաւել հոգ տանելոյն նոցա բանիս, գրեաց ևս նոցա սրբազան վեհըն թէ պարոն Սիմօնն մեզ գրամ. է տալոյ։ Եւ պարոն Սիմօնն բաց ի ԴՃ թուման դրամոյն զոր տուեալ էր Ծատուրին, քար մի ևս տուեալ նմա։ Որոյ աղագաւ ևս պատուիրեաց նոցա, զի վերահասու լեալ իմասցին թէ զի՞նչ է արարեալ զքարն։

Թուղթ մի ևս առ Նախիջևանցի Ղուլիջանի որդի պարոն Ծատուրն գրեաց վասըն այսմ. բանիս։ Որում. և ծանոյց զթուղթ գրելն Սիմօնին ևս առ ինքն։ Եւ զօրինակն իւրոյ թեմեսուկին առնուլն և առ ինքն յղելն վասն հաշուին իւրեանց զոր ունին ընդ միմեանս։ Եւ պատուիրեաց նմա՝ զի կամ. զհաշիւն իւր անդ իշխանացն տացէ, և զդրամն (Դ) զոր տալոց է պարոն Սիմօնին, նուիրակին մերոյ Պետրոս վարդապետին յանձնեսցէ, և զթեմեսուկսն իւր առեալ, գրեսցէ մեզ, (զի դրամն այն որպէս թէ մեզ է հասանելոց ասէ։) Եւ կամ. ելեալ եկեսցէ աստ, և զհաշիւն իւր տեսցէ ընդ պարոն Սիմօնին։ Եւ սպառնալիք՝ մինչ ոչ կատարեսցէ զմինն ի յերկուց գրեցելոցս։ Թուղթ ևս առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի Կարին ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Որ ընդ Թօխաթու նորոգ նուիրակ Պետրոս վարդապետի սպասաւոր Գէորգ տղային գիր էր գրեալ առ սրբազան վեհըն և ընդ նմա ևս ամանաթ յղեալ։ Վասնորոյ և՛ սրբազան վեհըն զշնորհակալութիւն և զմխիթարութիւն գրեաց առ նա, զի ամանաթն այն առ մեզ հասեալ իմասցի, և միամտեսցի։ Ծանոյց սմա և զմիտս թղթոյն զոր քան զայս յառաջ ի յունիսի ԻԸ գրեաց առ ինքն։ Եւ զի՝ այժմ. լուաք թէ՝ Եսայի անուամբ մարդ մի է եկեալ ի Կարին, և զբազում. ապրանս է բերեալ անդ առ ի վաճառել։ Եւ այն ապրանքն վերոյիշեալ Նախիջեանցի Ղուլիջանի որդի Ծատուրինն է։ Վասնորոյ և սրբազան վեհըն ծանոյց սմա զվերոյիշեալ զանցսն և պատուիրեաց ասել Եսայուն, զի մի վատնեսցէ զիւր բերեալ ապրանսն, մինչև տեսցուք թէ՝ ի Թօխաթու զինչ գրեն մեզ վասն բանիցն Գեօրեցի պարոն Սիմօնին։ Յղեցան այսոքիկ ընդ Թիֆլիզեցի տիրացու Մովսէսին։ Զոր Գեօրեցի պարոն Սիմօնն վասն բանիցն իւրոյ իվարձու կալեալ յղեաց ի Թօխաթ։ Որ եւ ընդ Յամթայու ուխտաւորացն։ Ի յուլիսի ԺՁ։

Իսկ և՝ ի Յամթայու քանի մի ուխտա-

ւորք էին եկեալ ի սուրբ Աթոռս ՚յուխտ։ Եւ Կարապետ անուամբ այր ոմն ի նոցանէ, ի բարեպաշտ անձանց ոմանց տեղւոյն աջահամբոյր էր բերեալ սրբազան վեհին։ Վասնորոյ և սրբազանն առ նոսա սթուղթս օրհնութեան գրեալ ՚յղեաց։

Թուղթ մի օրհնութեան առ պարոն Ստեփաննոս այր ոմն (ա) ձեռ՝ Կարապետին։

Թուղթ մի ևս օրհնութեան առ մետասան անձինս. այսինքն առ մահտեսի Յովաննէսըն. Սողոմօնն. Պաղտասարն, Եղիայն. Ստեփաննն, Կարապետն, Պետրոսն, Աւետիսն, Պօղոսն, Մելքոնն, Ապգին, Սօփին, Մարիամն, Բրաբիոնն, Եղիսաբեթն, Սուլթանն, և Սափիրն։ Որք ի միասին արք և կանայք զՆ ղռուշ և կէս դրամս էին ՚յղեալ ձեռ. Կարապետին։

Թուղթ ևս օրհնութեան առ Խանում կլինն գրեաց (Ա) ձեռ. նոյն Կարապետին։ . . . Ելին ուխտաւորքն և վրացի տիրացու Մովսէսն ի միասին ի սրբոյ Աթոռոյս, ի յուլիսի ԺԶ։

Մ.

Վերադառնալն Եսայի պետին ի Բայազիտու ի սուրբ Աթոռս, եւ գրելն սրբազան վեհին առ Իսաղ փաշայն զմիամտութիւն։

Յորժամ վասն անկարգ տրարմանցն Բայազիտու Իսաղ փաշային, սրբազան վեհըն զԵսայի վարդապետն հանդերձ թագաւորի ֆարմանի սուրաթովն և սարասկեարի բոյրուլթուովն քան զայս յառաջ ՚յամսոյս Ժ ՚յղեաց առ նա, և գիր ևս գրեաց նմա։ Եւ նա ևս ի գնալն Եսայի վարդապետին առ ինքն, առերես սիրով ընկալեալ էր զնա, և ըստ խնդրոյ սրբազան վեհին ՚յանձըն էր առեալ վնաս ինչ ոչ հասուցանել արանցն մերոց։ Եւ որովհետև ՚յառաջագոյն մթերեալ և զանձեալ ունէր ի սրտի իւրում զչարութիւն իւր, վասնորոյ՝ փութով զպատասխանի թղթոյն սրբազան վեհին դրեալ և տուեալ էր Եսայի վարդապետին և իսկոյն ուղևորեալ։ Եւ ՚յետ ելանելոյ Եսայի վարդապետին ի քաղաքէն, տնօրէնն այն վասն ընչիցն Իսպիրու Առաջնորդ հանգուցեալ Յովհաննէս վարդապետին, ինմին աւուր, ի վերայ Զաքարիա վարդապետին, տէր Վահանին, Մարգար Աղային, և նմնուսեցի մահտեսի Յովաննէսին ԺԱ քսակ դրամ էր վճարեալ զի տացեն։ Եւ սրբազան վեհըն իբրև լուաւ զայս, ՚յոյժ բարկացաւ, վասնորոյ՝ և զթուղթ մի մեղադրութեան գրեաց առ Իսաղ փաշայն։ Առակաւ և օրինակաւ ՚յանդիմանելով զտմարդի բարս նորին։ Քանզի ընդ Եսայի պետին գրեալ թէ շնորհեցի քեզ և վասն խաթեր քոյ վնաս ինչ ոչ հասուցից արանցն քոց։ Եւ այժմ ԺԱ քսակ դրամս պահանջէ ի նոցանէ։ Յղեցաւ այս ընդ օլուսանենց Ղազարին։ Որ ել ի Յուլիսի ԺԷ։

Ի Կարս՝ Առ սարասկեարն պատրիջան յղեցաք ընծայ։

Սովորութիւն էր սրբազան վեհին՝ զի երբեմն երբեմն մրգեղէն և զայլ ինչ այսպիսի իբրս ընծայ ՚յղէր Սարասկեար Մուստաֆայ փաշային։ Վասնորոյ և այժմ ևս զԱԾԸ հատ պատրիջան հոգացեալ (զի նոր էր) ընդ մեր միրզի աղային տուեալ ՚յղեցաք առ Ղարաբէկն։ Որոյ աղագաւ զթուղթ գըրեաց առ նա սրբազան վեհըն, և վասն պատրիջանին հարկեաց նմա, զի ընդ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսին ի միասին տարեալ մատուսցեն փաշային։

Թուղթ մի ևս առ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Որ ընդ ուխտաւորացն գրեալ էր, և ընդ նոսա պաստըրմայ ևս յըղեալ ՚յընծայ սրբազան վեհին։ Վասնորոյ և սրբազան վեհըն զշնորհակալութիւն գրեաց առ նա, և զուխտաւորսն ևս լաւապէս շահեալ, սիրով ուղևորեաց ի տեղիս իւրեանց, և միամտութիւն գրեաց առ նա։ Որում և պատուիրեաց՝ զի թէ՝ ի կողմանէ Բայազիտու զորպիսութիւն ինչ լինիցի, և կամ այսր աղագաւ զմիտս փաշային առանձին իմացեալ, գրեսցէ ինքեան։ Զի հարկաւորապէս բան ունիմ ասէ գրելոյ քեզ։ Եւ ծանոյց նմա զյղելն պատրիջանին առ Ղարաբէկն։ Որում և պատուիրեաց ևս, զի ի միասին տարեալ ընծայեսցեն փաշային։ Զթուղթսըն և զպատրիջանն ընդ միրզի աղային ՚յղեցաք։ Որ ել ի Յուլիս ԺԸ։

ՄԱ.

Առ Հերակլ Արքայն եւ որդի նորին Գեօրկին ըէկն վասն չխսրայէլին։

Քրիստոսազօր Հերակլ Արքայն Վրաց՝ զպարոն Աֆթանդիլն յղեալ էր ի Խամսայ առ չխսրայէլն, զի՝ զնա առեալ անտի բերցէ ի սուրբ Աթոռս առ սրբազան վեհըն, և հաշտեցուսցէ ընդ նմա։ Եւ Աֆթանդիլն ևս ըստ հրամանի Արքային գնացեալ անդ, զչխսրայէլն յորդորեալ էր զի ընդ իւր առեալ բերցէ առ սրբազան վեհըն։ Բայց նա երկուցեալ ի սրբազան վեհէն, ոչ էր եկեալ։ Եւ Աֆթանդիլն անտի եկն ի սուրբ Աթոռըս, և մատոյց սրբազան վեհին զերկոսին թուղթսն Արքային։ Ցորս գրեալ էր առ սրբազան վեհըն վասն չխսրայելին թէ՝ ահա ընդ Աֆթանգլին յղեցի յոտս քո։ Ցորմէ և խնդրեալ էր աղերսիւ, զի զկաթուղիկոսութիւնն տանն Աղուանից տուեալ նմա, վերադարձուսցէ ի տեղի իւր։ Եւ զի՝ զտեղապահ և զԻաւիթ վարդապետսն խնդրեալ էր ի սրբազան վեհէն, զի ընդ Աֆթանգլին վասն հարկաւոր բանից ինչ յղեսցէ առ ինքըն։ Եւ խոստանայր փութով յետս առաքել։ Վասնորոյ և սրբազան վեհըն ի պատասխանի երկուց թղթոց նորին զթուղթ մի գրեաց առ նա, և զչգալն չխսրայէլին ի սուրբ Աթոռս ծանոյց նմա։ Եւ ըստ խնդրոյ նորին՝ զտեղապահն միայն ընդ Աֆթանգլին եղեալ յղեաց առ նա։ Եւ տեղապահն ևս ըստ խնդրոյ Հերակլ Արքային և ըստ հրամանի սրբազան վեհին ընդ Աֆթանգլին ելեալ աստի գնաց յԵրեան, զի անտի երթիցեն ի Թիֆլիզ։ Բայց խանն իմացեալ զգնալն տեղապահին ի քաղաքն, արգելեաց և ոչ թոյլ ետ նմա գնալ։ Վասնորոյ՝ և նա ևս յԵրևանայ վերադարձաւ ի սուրբ Աթոռըս։ Եւ Աֆթանդիլն միայն գնաց ի քաղաքն։

Թուղթ մի ևս առ Արքայորդի Գեօրգինըէկն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Զի սա ևս էր գրեալ վասն չխսրայէլին զնոյն խնդիր։ Զի զկաթուղիկոսութիւնըն տանն Աղուանից տացէ նմա, և սիրով ուղևորեսցէ ի տեղի իւր։ Վասնորոյ և սրբազան վեհըն սմա ևս ծանոյց զչգալն չխսրայէլին ի սուրբ Աթոռս։

Թուղթ ևս առ Դիվանբէկ պարոն Իւանէն գրեաց ի պատասխանի քան զայս յառաջ գրեցեալ թղթոյն։ Որ գրեալ էր առ սրբազան վեհըն, յորմէ և աչաց դեղ խնդրեալ։ Բայց աստ ըստ խնդրոյ նորին աչաց դեղ ոչ գտանիւր զի յղիցէաք։ Եւ մանաւանդ՝ սրբազան վեհըն ևս ոչ կամեցաւ յղել, զի մի փոխանակ լաւութեան վնաս ինչ դիպիցի նմա։ Եւ Թիֆլիզեցի պարոն Աֆթանգիլն ի սրբոյ Աթոռոյս ի յուլիսի ԻԷ։

ՄԲ.

Փոխումն Այգւոյն մերոյ ընդ Թասալուի որդի Ցարութիւնի այգւոյն։

Գեղարդելու սրբոյ վանիցն այգի մի գոյր յԵրեան քաղաքոջն, զոր Անտոնենց այգի կոչէին։ Որոյ Ա կողմն առուն է, Ա կողմն ղըռն, Ա կողմն Գէորգի այգին, և Ա կողմն հէքիմ Հէրապետի այգին։ Զոր յետ աւերման Գետարգելու վանիցն՝ սուրբ Աթոռս զաւթեալ ունէր։ Այժմ սրբազան վեհըն փոխեաց զայն այգին Երևանցի Թասալուի որդի Ցարութիւնին և էառ ի նմանէ փոխանակ նորին զիւր այգին, որ ևս է ի յԵրեան քաղաքոջն։ Որոյ Բ կողմունքն, նոյն Ցարութիւնի այգիքն են, և միւս Բ կողմունքն, մինն էլչու տղայ Յովաննէսի այգին է, և միւսն քուչէն։ Եւ այս եղև հաճութեամբ և հաւանութեամբ. երկոցունցն այսինքըն սրբազան վեհին, և Թասալուի որդի Ցարութիւնին։ Այսու պայմանաւ, որ եթէ մեր տուած այգւոյն՝ յետ ժամանակաց դաւի առնօղ լինիցի, պատասխանին մեք տացուք։ Իսկ եթէ Ցարութիւնի մեզ տուած այգոյն դաւի առնօղ լինիցի, ինքն Ցարութիւնն պատասխանի տացէ։ Այս եղև երկուց պայմանն։ Վասնորոյ և սրբազան վեհըն զթուղթս գրեալ և կնքեալ՝ և եպիսկոպոսացն զայս ևս կնքեցուցեալ, ետ Թասալուի որդի Ցարութիւնին։ Նոյնպէս և Ցարութիւնն ըզսոյնանման գիր մի ևս գրեալ և կնքեցու-

ցեալ բազմաց վկայից՝ եւ մեզ։ Որ գոյ ի սուրբ Աթոռս ի պահեստի։ Եղեւ այս ի ՌՄԻԱ թուոջս մերում, ի յուլիսի Իէ և ի սուրբ Աթոռս էջմիածին։

Փոլիցայ ի վերայ Ակնցի Խօջայ Յովաննէսին։

Ըստորում յամսոյս ԺԷ ասացաք, Բայազիտու Իսաղ փաշայն իբրեւ եւես թէ ոչինչ եւ ի Իսպիրու Առաջնորդ հանգուցեալ Յովաննէս վարդապետի մնդկացն, վասնորոյ՝ բարկացեա լ ի վերայ Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետին, տէր Վահանին, Մարգար Աղային, և նմանասեցի մահտեսի Յովաննէսին, յորոց վերայ և վճիռ էհատ, զի ԺԱ քսակ դրամ տացեն ինքեան։ Եւ թէ ոչ՝ սպառնալիք և տանջանք խոստանայր։ Վասնորոյ և Զաքարիա վարդապետն ոչ ունելով յուստեքէ օգնութիւն, ընդ փայեկի միոյ աղերսիւ դրեալ էր առ սրբազան վեհըն զի խնայելով ինքեան ԱՌ ղռուշ դրամ փոխ տացէ ինքեան, զի այժմ տուեալ փաշային ղերծցի ի նմանէ, և յաշնանն հատուսցէ մեզ զդրամն մեր։ Վասնորոյ և սրբազան վեհըն լսելով աղաչանաց նորա, զփօլիցայագիր մի գրեաց ի վերայ Ակնցի խօջայ Յովաննիսին՝ (բ) զի Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետն և կամ տէր Վահանն զփօլիցայագիրս զայս երբ առ ինքն յղեսցեն, ԲՌ ղռուշ տացէ նոցա։ Եւ զփօլիցայագիրս զայս իբր զավղ առ ինքն պահեսցէ, որ յետոյ ընդ հաշուառութեան հաշուեսցի։

Թուղթ եւ առ Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետն գրեաց, և զվերոյյիշեալ ԲՌ ղռուշի փօլիցայագիրն առ նա յղեաց, զի ընդ տէր Վահանին ի միասին յղեսցեն ի Կարին առ Ակնցի Խօջայ Յովաննէսն, և առցեն ի նմանէ զդրամն, և ինքեան գրեսցեն։ Եւ յայն դրամոյն՝ (բ) զմինն (ա) ինքն առցէ, և միւսն աէր Վահանին տացէ։ Եւ ի վերայ իւրեանց պարտք լիցի, զի յետոյ հատուսցեն մեզ զդրամն (բ) մեր։ Յղեցան այսոքիկ ընդ Զաքարիա վարդապետի յատուկ յղեալ Ղաուչըզ անուամբ փայեկին։ Որ եւ ի յուլիսի Լ։

Յղելն սրբազան վեհին առ Սարասկեարն և առ մեծամեծան նորին զմրգեղէն զընծայս ի Կարս։

Թուղթ սիրոյ գրեաց սրբազան վեհըն առ Սարասկեար Մուստաֆայ փաշայն ի Կարս։ Եւ որպէս քան զայս յառաջ ի յուլիսի ԺԸ և այժմ եւս վասն նորա ԵԾ հատ պատրճան, Ծ հատ մեղրապոպ. Բ հօխայ վարգեջուր, Է հատ սպիտակմոմ յղեաց ընծայ։

Թուղթ մի եւ սիրոյ առ տեղւոյ հին Ահմաա փաշայն։

Թուղթ մի եւ սիրոյ առ Սարասկեար փաշայի քեահիայն։

Թուղթ մի եւ սիրոյ առ Իբրահիմ էֆէնտին։

Թուղթ եւ առ Սարասկեար փաշայի Մօհրտար Մուստաֆայ բէկն ղրեաց։

Թուղթ եւ առ եսկիչար Աղասին գրեաց։

Թուղթ եւ սիրոյ առ Ղարաբէկն։

Թուղթ մի եւ առ Սարասկեար փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի պատասխանի թղթոյն։ Որքան զայս ի յուլիսի ԺԸ վասն մեր յղեալ մրգեղէն ընծայիցըն առ փաշայն, զմիամտութիւն էր գրեալ առ սրբազան վեհըն թէ տարեալ մատուցի փաշային։ Եւ խնդրեալ էր ի սրբազան վեհէն կրկին յղել զմրգեղէն ընծայս առ փաշայն։ Վասնորոյ և սրբազան վեհըն ԵԾ հատ պատրճան. Ծ հատ սեխ. Ծ հատ մեղրապոպ, Բ հօխայ վարգեջուր, և Է հատ սպիտակ մոմ յղեաց յատկապէս վասն Սարասկեար փաշային։ Նոյնպէս և վասն հին փաշային և մեծամեծ Աղայիցն տեղւոյն ԸԾ հատ պատրճան, Կ հատ դուԹմայ, Կ հատ ձմերուկ։ Եւ Զ հօխայ վարգեջուր եւս յղեաց։ Որում և պատուիրեաց՝ զի զընծայսըն Սարասկեար փաշային յատկապէս տարեալ մատուսցէ նմա։ Եւ զայլսն եւս ըստ պատշաճին վերոյյիշեալ հին փաշային և Աղայիցն բաժանեսցէ ընդ Ղարաբէկին։ Եւ զմնացեալսն եւս ինքն վայելեսցէ։ Զի վասն մեծամեծ Աղայի. ընծայիցն անորոշակի գրեցաւ ի թուղթսն նոցին։ Նաև՝ վասն սորա եւ Ժ լիար գինի, և կէս լիար արագ յղեաց։ Փուսուլայ մի եւ դրեաց առ սա վասն առանձին բանից ինչ։

Թուղթ մի եւ առ հին փաշայի սառաֆ տիրացու Յակոբն գրեաց, որում և ծանոյց ընդ այլ մարդկանց ընծայից խառըն՝ փաշային իւրոյ եւ ընծայ յղելն։ Եւ

պատուիրեաց՝ զի փաշայի բաժին ընծայն, ընդ մահտեսի Փիլիպպոսին ի միասին տարեալ մատուսցեն նմա։ Այլև՝ վասն սորա Ե լիտր գինի, և Ռ չարէք արաղ յղեաց։ Ցղեցան այսոքիկ ընդ դահրաշի Սողոմոնին ե զինակրացն մերոց։ Որք եկին ի օգոստոսի Զ։

ՄԳ.

Առ Թիֆլիզու Առաջնորդ Ռեթէոս աւետն յանձնարարութեան վասն երկու հրէիցն։

Ի Բաղդատու։ Բ Հրէայք եկին ի սուրբ Աթոռս ի պատճառս քրիստոնէութեան։ Անուն միոյն էր Իսրայել։ Եւ միւսոյն Աբրահամ։ Որք կամէին մկրտիլ, ե աստ մնալ։ Եւ երկոքեանն ես տունս ունէին ի Բաղդատ։ Եւ խոստանային մեզ զտունս իւրեանց ես բերել աստ։ Բայց աստի անհնարին էր բերել զտունս իւրեանց վասն երկիւղի անօրինաց։ Վասնորոյ՝ խորհրդակցեալ ընդ սրբազան վեհին գնացին ի Թիֆլիզ, զի ժամանակ ինչ մնասցեն անդ, և անտի զփայեակ մի յղեալ ի Բաղդատ, զտունս իւրեանց անդ բերել տացեն, և անտի տամբն իւրեանց վերադարձցին ի սուրբ Աթոռս։ Վասնորոյ՝ ե սրբազան վեհըն ընդ նոսա զթուղթ մի գրեաց առ Թիֆլիզու նուիրակ և Առաջնորդ Ռեթէոս վարդապետն։ Որում և ծանոյց զգալն հրէիցն անդ ե զորպէսն նոցա։ Եւ պատուիրեաց՝ զի ըստ ամենայնի մուղայէթ լեալ նոցա, ի պատշաճաւոր տեղւոջ զետեղեցուսցէ, ե խարճի ես եթէ պիտոյասցի տացէ, և որքան անդր են՝ զկարիս նոցա հոգասցէ, մինչև ինքեանք ըստ պայմանին իւրեանց փայեակ յղեսցեն ի Բաղդատ, և զոր ինչ մտադրեալ ունին այնպէս արասցեն։ Եւ մանաւանդ ուշադիր ես լիցի նոցա թէ զորինչ աստ մեզ պայմանեցին, անդ ես ի նոյն պայմանին կան մնան։ Զփայեակն յղեն շուտով յօժարութեամբ, և մինչև ցդառնալն առ ինքեանս փայակին, ի նոյն դիտմանն անշեղ մնան, թէ յայլ և այլս յեղաշրջին։ Կամ որքան անդ մնան, զսիրտն իւրեանց ուղղապէս ի մեր կողմն պահեն, թէ ընդ կրօնիւք այլոց մտադրին։ Եւ թէ ըստ ամենայնի անխոտոր տեսցէ զնոսա ի կամս, ի դիտմունս և ի պայմանս իւրեանց, յոյժ բարի է ինքն ես խնամատար լիցի նոցա. և մի թողուցու յայլս յարիլ. կամ զխորհուրդս իւրեանց ումեք յայտնել։ Եւ ինքն ես ումեք մի յայտնեսցէ զխորհուրդս նոցա. բաց ի Արքայէն, եթէ հարցանիցէ։ Եւ նմա ես լռելեայն։ Բայց տեսցէ թէ՝ յայսց վերոգրեցելոցս ի ներհակն ընթանան, փութով ազդ արասցէ ինքեան՝ և որպէս գրեսցէ ինքեան վասն նոցա, այնպէս արասցէ։ Այլև ծանոյց նմա՝ ըստ խնդրոյ Արքային զտեղապահն ընդ Աֆթանդիլին յղելն անդ, և խանին յետս դարձուցանելն զտեղապահըն յԵրևանայ (որպէս ի յուլիսի ԻԷ ասացաւ)։ Նաև՝ լուաք թէ յայնժամ խանն խոստացեալ է, զի յետոյ Արքային միրգ յղեսցէ, և զտեղապահն ես թերևս յայնժամ յղեսցէ առ նա։ Զայս ես ծանոյց նմա։ Եւ պատուիրեաց զի Աֆթանդիլն անդ զոր ինչ այսր աղագաւ խօսեսցի զամենայն իմացեալ փութով դրեսցէ ինքեան։ Ցղեցաւ այս ընդ Բց հրէիցն։ Որ եկին աստի ի օգոստոսի ԺԳ։

ՄԴ.

Ի Պօլիս՝ ի Կարին, ի յԱմիթ ի յԱկն եւ յայլ տեղիս. վասն փօլիցայից եւ այլ իրակութեանց։

Ի Թօխաթու նորոգ նուիրակ Պետրոս վարդապետէն և յայլոց՝ թուղթք ժամանեցին առ սրբազան վեհըս մեր ձեռամբ սպասաւորի Նորին Գէորգ տղային։ Վասնորոյ և սրբազան վեհըն զպատասխանիս թղթոցն գրեալ յղեաց։ Որք են։

Թուղթ շնորհակալութեան ըստ խնդրոյ նուիրակին մերոյ Պետրոս վարդապետին առ Ղուկաս և Ստեփան Աղայսն գրեաց ի . . . ։ Որք ի սէր սրբոյ Աթոռոյս գյոլով զաշխատութիւնս կրելով, ազատեալ էին զնուիրակն մեր Պետրոս վարդապետն ի յանիրաւ զրպարտութեանցն։ Նա և պատուէր՝ զի ի նոյն հարազատութեան մնասցեն առ սուրբ Աթոռս։ Նա և ի թղթոջս

առ Շխլղզատէ ուստաբաշին ողջոյն օրհնութիւն և շնորհակալութիւն գրեաց՝ զի գյոլով բարերարութիւնս էր արարեալ նուիրակին մերոյ Պետրոս վարդապետին։

Թուղթ ես ի . . . առ Ակնցի Խօջայ Գէորգն և Խօջայ Թորոսն գրեաց ի պատասխանի ի յուլիսի ԺԶ գրեալ թղթոյն իւրեանց։ Որք ի Թօխաթու նորոգ նուիրակ Պետրոս վարդապետէն սանատով գըրամ (ա) էին առեալ, և գրեալ էին եղբօրն իւրոյ Խօջայ Յովաննիսին ի Կարին, զի անդ տացէ մեզ։ Եւ ծանուցեալ էին այժմ. սրբազան վեհին զղրելն առ նա։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զշնորհակալութիւն գըրեաց առ նոսա։ Եւ ծանոյց նոցա զգրելն իւր առ նուիրակն մեր, զի զսանատն իւրեանց տացէ ինքեանց, և առ եղբայրն իւրեանց Խօջայ Յովաննէսն ես՝ զի զղրամն (ա) զայն փութով մեզ հասուսցէ։ (Որպէս ասելոց եմք յետոյ ի թուղթսն նոցա։) Եւ պատուէր՝ զի և ինքեանք ես գրեսցեն եղբօրն իւրեանց վասն այս դրամոյն (ա) և վասն Պօլսոյ փօլիցային, զի փութով առ մեզ յղեսցէ։ Եւ զի՝ սոքա զհոգեբաժին հօրըն իւրեանց մահտեսի Կարապետին, տուեալ էին նուիրակին մերոյ Պետրոս վարդապետին։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զշնորհակալութիւն և զմիամտութիւն գըրեաց առ սոսա։ Նա և յանձնարարութիւն ես վասն նուիրակին։

Թուղթ մի ես առ սոցա եղբայր Ակընցի Խօջայ Յովաննէսն գրեաց։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի յուլիսի Լ ի ձեռն Ուչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետին և տէր Վահանին ի վերայ իւր փօլիցայ առնելն։ (ր) և զփօլիցայագիրն առ նոսա յղելն։ Եւ պատուէր՝ զի թէ ցայժմ չիցէ տուեալ նոցա զգրամն՝ (բ) տացէ, և դրեսցէ ի միամտութիւն ինքեանս։ Այլև՝ պատուիրեաց ես՝ զի թէպէտ Պօլսոյ փօլիցային, (ժ) և թէ Թօխաթու նուիրակի եղբարցն իւրոց տուեալ դրամսն զայն չըխըն արարեալ, յղեսցէ առ տէր Վահանն ի Բայազիտ, զի նա անտի առ մեզ հասուսցէ։ Եւ թէ հաւատարիմ եկօղ չգտանիցի, զդրամսն զայն ի պատրաստի ունիցի, զի թերևս աստ մեզ դրամ. առօղ մարդ պատահեաց, առցէ, փօլիցայ արասցէ ի վերայ իւր։ Նա և ծանոյց նմա գրելն նուիրակին վասն եղբարցն իւրոց թէմէսուկին, զի տացէ ինքեանց։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի պատասխանի ի յուլիսի ԼԱ գրեաց թղթոյն։ Որ զպարոն Եսայու փօլիցայն (ա) և ԻԲ ղուուշ ևս էջմիածնեցի Սողոմոն վարդապետին էր տուեալ։

ՌՄԻԳ (1774)

Ցիշատակարան ամի Թուականութեանս հայոց հազար երկերիւր քսանեւորդ՝ երրորդի։

Երկոտասաներորդի ամի Հայրապետութեան Տեառն Սիմէօնի երզնկացւոյ և Աստուածաշնորհ կաթուղիկոսի ամենայն հայոց։

Նուաստ ծառայս վեհին մե	ծի.	Առ ի գրել ըստ իմ. կա	րի։
Ցովհաննէս պետս անա	րի։	Ի սէր եղբօրս հոգեո	րի.
Ցուսալով յԱստուածն ամե	նի.	Իսահակայ գիտնոյ պե	տի։
Որ միշտ լնու. գպէտս	ձրի։	Զի գծանրութիւնսնորին բար	ձի.
Կրկին ի յայս գործ ձեռնար	կի.	Ըստ Առաքելոյն Պօղո	սի։

Արդ՝ ըստ կարգի ընթացիցն մերոց, շնորհիւ և ողորմութեամբ ամենազօրացուցչին Աստուծոյ՝ զզանազան որպիսութիւնս անցեալ ամի թղթագրութեանցն այսմ. Ցիշատակարանիս ըստ փանաքի կարեաց մերոց յաւարտ հասուցաք մեք։ Այժմ. ժամ. է մեզ յուսալով յաղօթս սիրելեացդ մերոց, վերստին ձեռնակել ի նոյնակերպ յառաջադրեալն գործ։

ՄԵ.

Ի սկզբան գործառնութեանըս մերոյ և շնորհաւոր ամիս, պատահեցաւ մեզ տեսել զսրբոյն Թօմայի Առաքելոյ վանից Առաջնորդ Թօմայ վարդապետէն։ Որ քան զայս քանի մի աւուրբք յառաջ, ըստ խոստման սրբազան վեհին առեալ ընդ իւր զիւր միաբան Մատթէոս վարդապետն եկն ի սուրբ Աթոռս, զի եպիսկոպոս ձեռնադրել տացէ զնա սրբազան վեհին։ Վկայելով ըզնմանէ արժանի զոլ այնմ առաքելաշնորհ աստիճանի։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ըստ խնդրոյ և վկայութեան նորին, զՄատթէոս վարդապետն (որ ի ՌՄԻԱ ամին և ի յունիսի ԻԵ յիշեցաւ.) ընդ Թարվիզու նուիրակ Մեսրօպ. սրբոյ Աթոռոյս Վէքիլ կարնեցի Ցակոբ. Ուռումելու նոր նուիրակ Պետրոս. սրբոյն Հոփսիմէի վանից Առաջնորդ Աւետիս. Ամբարտար Իսահակ. իւր սպասաւոր միւս Իսահակ, և Ռեթէոս վարդապետի սպասաւոր Գրիգոր վարդապետացըն եպիսկոպոս ձեռնադրեաց։ Որում. և զԱ վկայական ետ ի միամտութիւն իւր ի գնալն նորին աստի ի տեղի իւր։ Որև զօրինակն իւրոյ վկայականին դրեալ և կնքեալ ետ մեզ, ի միամտութիւն մեզ։ Զի ի նմա զերիս գլխաւոր պատուէրս էր

դրեալ սրբազան վեհըն։ Զորս և նա յօժարութեամբ յանձն էառ կատարել։ Որք են այսք։ Նախ՝ զի մինչև ի յելն շընչոյն, մընայցէ ի հնազանդութեան, և հետևօղ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի, և ի սմա Նստօղ Հայրապետացն, հաւատով վարիցի յամենայն կեանըս իւր։ Երկրորդ՝ ի սրբոյն Թօմայի Առաքելոյ վանից միաբանութենէն ոչ վերջանայցէ մինչև ի մահն իւր։ Եւ թարց հրամանի Նորին Առաջնորդ Թօմայ վարդապետին ոչ յուրէք ելանիցէ. որով պատճառաւ և իցէ։ Երրորդ՝ ի պատահելն իւր ի վիճակ մի. որոյ իցէ օրինաւոր Առաջնորդ և եպիսկոպոս, ի վիճակին յայնմիկ մի արասցէ զձեռնադրութիւն ինչ թարց հաճութեան նոյնոյ Առաջնորդին։ Եւ թէ չիցէ եպիսկոպոս Առաջնորդ, ի պահանջել հարկին արասցէ, բայց լաւապէս վերահասու լինելով հաւատոյն, վարուցն, և գիտութեանն։ Եւ մի դիւրահաւան և վաղվաղակամ գտանիցի ի ձեռնադրութեան վասն աչառանաց և կամ ախտի ինչ և ագահութեանն։ Ուրեմն՝ եթէ շեղիցի և ուխտազանց գտանիցի յայսց կանոնաց և պատուիրանացս զորս և ինքն ուխտեաց և յանձն էառ, պարտական եղիցի առաջի Աստուծոյ, և եպիսկոպոսութիւնն իւր անընդունակ լիցի։ Այս վկայականս ի դեկտեմբերի ԺԵ գրեցաւ, և այժմ տուաւ Նմա, ի գնալն Նորին աստի ի տեղի իւր։

Թուղթ մի առ սրբոյն Թօմայի Առաքելոյ վանից հին միաբան ծերունի Գէորգ վարդապետն (որ ի ՌՄԻԱ երորդ ամին, և ի մարտի Ը յիշեցաւ.) գրեաց սրբազան վեհըն ի պատասխանի թղթոյն։ Զի վասն Մատթէոս վարդապետին իբիջայ էր դրեալ առ սրբազան վեհըն ընդ Թօմայ վարդապետին, զի եպիսկոպոս ձեռնադրեալ զնա, յղեսցէ առ ինքն։ Եւ զարժանաւորութենէ Նորին սա ևս էր վկայեալ, վասնորոյ՝ և սրբազան վեհըն ծանոյց սմա զկատարումն տալն խնդրոյն իւրոյ, և զՄատթէոս վարդապետն ընդ Թօմայ վարդապետին առ ինքն վերադարձուցանելն։ Նա և՝ սրբազան վեհըն ըստ խոստման իւրոյ քան զայս յառաջ ի հոկտեմբեր ամսոյն գրեցոյց Երեմիայ վարդապետին առ Մատթէոս վարդապետն (որ ի վերդ լիշեցաւ.) զի եկեալ աստ եպիսկոպոս ձեռնագրեսցի։ Իսկ նա նախքան զհասանելն թղթոյն մերոյ առ ինքն, ընդ Առաջնորդին իւրոյ Թօմայ վարդապետին եկն ի սուրբ Աթոռս։ Բայց սա վասն Մատթէոս վարդապետին թօհմաթ ևս էր դրեալ առ սրբազան վեհըն թէ ընդ էր ըստ խոստմանդ ոչ դրեալ ծանուցեր մեզ, զի յղիցեաք զնա յայդր։ Եւ սրբազան վեհըն ևս ծանոյց սմա վասն գալստեան նորին՝ յառաջագոյն զգրեցուցանելն Երեմիայ վարդապետին առ նա։ Այլև՝ իբրնէ սիրելի էր սա սրբազան վեհին։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն ի նշան սիրոյ և յօրհնութիւն սրբոյ Աթոռոյս, զԱ պատուական շալ փարաճի յղեաց առ սա։ Իսկ և՝ վերոյիշեալ սրբոյն Թօմայի Առաքելոյ վանից Առաջնորդ Թօմայ վարդապետն ի վերադառնալն ասաի ընդ Մատթէոս վարդապետին ի վանս իւր, ի սրբազան վեհէն զԱ ժողովարարութեան կոնդակ խնդրեաց վասըն վանիցն իւրոց և սրբազան վեհըն ևս ըստ խնդրոյ նորին զԱ ընդհանրական ժողովարարութեան Կոնդակ ետ Նմա։ Եւ բաց ի հասարակ պատուիրանացն զորս գրեաց վեհըն ի կոնդակոջն առ մերազնեայ ժողովուրդսն վասն ժողովարարութեան, զյատուկ պատուէրս ևս գրեաց ի Նմա առ Աբեղեան տան ցիրեցան եղեալ ժողովուրդսն վասն զանձանակադրամից։ Քան- :' Նրքա յառաջագոյն յանուն սրբոց եկեղեցեաց երկրին իւրեանց զանձանակս ունէին հաստատեալ ի միջի իւրեանց։ Բայց զփարայ մի ոչ հասուցանէին նոցա։ Եւ Առաջնորդն իւրեանց Թօմայ վարդապետն միշտ հոգայր զպակասութիւնս եկեղեցեաց իւրեանց։ Զոր ծանոյց Թօմայ վարդապետն սրբազան վեհին, և խնդրեաց դրել առ նոսա ի Կոնդակոջն զյատուկ պատուէրս ևս, զի դժողովեալ զանձանակադրամն ժողովարարին իւրոյ տացեն, և զզանձանակն ի միջի իւրեանց հաստատուն պահեսցեն։ Եւ սրբազան վեհըն ևս ըստ խնդրոյ նորին գրեաց առ նոսա և պատուիրեաց, զի ով ոք ի միաբանից վանիցն իւրեանց այսու Կոնդակաւս գնասցէ ի մէջ իւրեանց, զբոլոր արդիւնս զանձանակաց սրբոց եկեղեցեաց իւրեանց, լրապէս տացեն ժողովարարին սրբոյ վանիցն իւրեանց, զի տարեալ այնու հոգասցեն զպակասութիւնս

սրբոյ վանիցն և եկեղեցեաց իւրեանց։ Եւ սաստ և սպառնալիք, մինչ ոչ տացեն։ Այլ կամ արգելուցուն, կամ թագուցանիցեն, և կամ կերիցեն։ Կրկին պատուէր՝ զի ըղձանձանակումս զոր յանուն սրբոյ վանիցն ես ունին ի միջի իւրեանց, հաստատուն պահեսցեն, և արդիւնաւոր արասցեն, և զարդիւնս նոցին ես նոյն վերոյյիշեալ ժողովարարին տացեն, զի տարեալ զպակասութիւնս սրբոյ վանիցն հոգասցեն։ Ելին Թօմայ և Մատթէոս վարդապետքն ի միասին ի սրբոյ Աթոռոյս ի յունուար Ա։

Ի Պոլիս՝ Թուղթ օրհնութեան, առ բարեկամսն քարտաշ Սարգսին։

Սրբոյ Աթոռոյս քարահատ Պոլսեցի Սարգիսն յառաջագոյն ի Պոլիս եղեալ համշիրակ բարեկամաց իւրոց (որք էին արւեստիւ հիւսք,) զհիւսան գործիս էր խնդրեալ դրամով վասն իւր։ Եւ նոքա ես ըստ խնդրոյ նորին, Բ սղոց. Բ բուրղու, և Ա քիւշտարայ (որէ ընտայ.) էին յղեալ առ նա։ Յորմէ և խնդրեալ էին աղերսիւ, զի ի տեղի գործեաց զնոյն, ի սրբազան վեհէն զթուղթ օրհնութեան առեալ յղեսցէ առ ինքեանս։ Եւ Աարգիսն ես ծանոյց սրբազան վեհին զխնդիրս նոցին. և խնդրեաց գրել առ նոսա զթուղթ օրհնութեան։ Վասնորոյ և սրբազան վեհըն ըստ խնդրոյ նորին՝ ըզթուղթ մի օրհնութեան և շնորհակալութեան գրեաց ի Պոլիս առ Եսայի և Յովհաննէս զալֆայսն. առ էքսարճի Գրիգորն. առ ուստայ Բարսեղն, և առ այլ օտաշըղ ընկերսն նոցին։ Որոց և ծանոյց զհասանելն իւրոց յղեալ գործեացն առ Սարգիսն ի միամտութիւննոցա։ Զայս թուղթս գրեալ ետուք քարահատ Սարգսին, զի ընդ հաւատարիմ գնացողի յղեսցէ ի Պոլիս առ նոսա։ Գրեցաւ ի յունուարի Ա։

Ըստ խնդրոյ քիւրտ Ապտալ Աղային գինի և օղի յղեցաք առ նա վասն դեղոյ։

Քիւրտ Ապտալ Աղայն (որ այժմ եկեալ տամբն իւրով, առընթեր Շամտին Աղային բնակի։) զցաւ իմն ունէր։ Վասնորոյ՝ աղերսիւ թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն, և փոքր ինչ գինի և օղի խնդրեալ վասն դեղոյ։ Բայց թուղթն այն ոչ էր ի վերայ սրբազան վեհին գրեցեալ, այլ ի վերայ Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետին։ Սակայն ի գրաբերէն հարցեալ իմացաք, որ գրագիրն նորին, զանուն Զաքարիա վարդապետին սխալմամբ էր գրեալ ի թղթոջն։ Այլ զինչ և իցէ, ի պատասխանի թղթոյն զթուղթ մի գրեաց առ նա սրբազան վեհըն, և ըստ խնդրոյ նորին՝ Ա չարէք գինի, և Ա չարէք արաղ յղեաց ընդ իւր յղեալ մարդոյն։ Ծանոյց նմա և զոբպէսն իւրոյ յղեալ թղթոյն։ Ել գրաբեր տաճիկն աստ. ի յունուարի Բ։

Ի Կարս՝ Առ Ղարախան օղլի Հաճի Չալապին, ի պատասխանի թղթոյն։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Ղարախանօղլի Հաճի Ջալապին, (որ ի ՌՄԻԱ. երորդ ամին, և ի յունվարի ԼԱ յիշեցաւ.) գրեաց ի պատասխանի թղթոյն իւրոյ՝ զի սիրախառն թօհմաթ էր գրեալ առ սրբազան վեհըն, թէ ընդէ՞ր զգիրդ սիրոյ պակաս առնես ի մէնջ։ Որոյ պատճառն էր այս, զի ոչ պատահէին նմա պատշաճ գրելիք առ նա։ Որում և ծանոյց զայս։ Այլ և Միրզային մերոյ ես էր գրեալ այժմ զթուղթ, որով և ի մէնջ վարգեջուր խնդրեալ վասն իւր։ Զոր ծանոյց Միրզայն սրբազան վեհին։ Եւ սրբազան վեհըն ես փոքր ինչ վարգեջուր յղել ետ վասն նորա։ Ել նորին յղեալ գրաբեր տաճիկն աստի հանդերձ այսու թղթովս, ի յունուարի Գ։

ՄԶ.

Ի Շիրազ՝ եւ յԱսպահան, առ Ջուղայու Քեալանթար Սարգիսն եւ առ նուիրակ Ստեփաննոս պետն ի պատասխանի թղթոցն իւրեանց, եւ վասն Աստապատեցւոց ըանիցն։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Ջուղայու Քեալանթար Սարգիս Աղայն՝ ի պատասխանի ի հոկտեմբերի ԻԲ գրեցեալ թղթոյն։ Որում և ծանոյց քան զայս յառաջ

ի սեպտեմբերի ԻԲ զթուղթ գրելն առ ինքըն։ Զի թօհմաթ էր գրեալ առ սրբազան վեհըն՝ թէ ի վաղուց հետէ թուղթ ոչ ընկալնում ի քէն։ Եւ զայն թուղթն՝ ընդ Քեարիմ Խանի Ղուլլար Աղասի Ֆաթա Սուլթանին էր գրեալ սա առ սրբազան վեհըն։ Բայց սրբազան վեհըն զպատասխանի թղթոյ սորին գրեալ, ոչ ընդ Ֆաթա Սուլթանին յղեաց առ սա (թէպէտ տակաւին աստ էր նա.) զի մի գուցէ վտանկ ինչ ծընանիցի։ Այլ ետ Թիֆլիզեցի Պարոն Մէհրապին (որ ի Թիֆլիզու եկեալ աստ, երթայր ի Խոյ։) տանիլ ընդ իւր ի Խոյ, և անտի յղել առ սա։ Որում և ծանոյց զայս, և պատուիրեաց մի եւս այսուհետեւ ի գրելն առ ինքըն զթուղթ ինչ, ի ձեռն տաճկաց յըղեսցէ առ մեզ, այլ ընդ քրիստոնէի։ Եւ վասն դրամոյն (ճ) զոր յայնժամ գրեալ էր սա առ սրբազան վեհըն գրել նուիրակին, զի փոխ տացէ ինքեան։ Եւ սրբազան վեհըն ըստ խնդրոյ սորին գրեաց նուիրակին գըրամ (ճ) տալ սմա, և զսանատ առնուլ ի սմանէ։ (որպէս ի սեպտեմբերի ԻԲ ասացեալ է.) որոյ աղագաւ փոշիմանեալ սա, այժմ մեծաւ զղջմամբ գրեալ էր առ սրբազան վեհըն թէ՝ ես ոչ կամէի գրել քեզ վասըն դրամոյն. այլք ստիպեցին զիս և գըրել ետուն։ Եթէ գրեալ ես իցես աստ նուիրակին դրամ տալ ինձ, ես ոչ առից։ Եւ սրբազան վեհըն պատուիրեաց սմա, մի եւս այսուհետեւ զդրամ ինչ խնդրել ի նուիրակէն։ Զի թէպէտ ըստ քոյդ խնդրոյդ յայնժամ գրեցի աստ նուիրակին դրամ տալ քեզ, բայց զայն ակամայ և թահրիւ գրեցի աստ նմա, և ոչ կամաւ։ Զի քեզ ամօթ մեծ է աստ եթէ սրբոյ Աթոռոյս դրամոյն ձեռնամուխ լինիցիս։ Նաև՝ խնդրեալ էր սա ի սրբազան վեհէն գրել նուիրակին իւրեանց Ստեփաննոս վարդապետին մնալ ի Ջուղայ։ և սրբազան վեհըն առ այս գրեաց սմա թէ՝ զի թէ դա կամի աստ մնալ յայդր, թող մնասցէ։ Եւ թէ ոչ կամիցի, մեք որպէս բռնութեամբ արգելեսցուք աստ զդա յայդր։ Զայսոսիկ նուիրակին ես գրեաց, (որպէս ասելոց եմք յետոյ,) և ծանոյց սմա զգրելն։ Եւ զի վասն վրացի Աղէքսանդրի ինքեան տալեաց դրամոյն, յառաջագոյն գրեալ էր սա առ սրբազան վեհըն, զի գրեսցէ ի Հաշտարխան, և ի մօրէ նորին առնուլ տացէ։ Եւ թէպէտ սրբազան վեհըն քան զայս յառաջ ի սեպտեմբերի ԻԲ գրեալ սմա, բացասաց զխնդիրս սորին, բայց յետոյ ի յըղելն զՄանահնեցի Յովսէփ վարդապետն ի դեկտեմբերի ԺԷ ի Հաշտարխան նուիրակ, պատուիրեաց նմա, զի ի հասանելն ի վիճակս իւր, լռելեայն խորհեսցի ընդ իշխանաց տեղւոյն, զի թէ վասն առնլոյ զդրամն սորին ի յԱղէքսանդրի մօրէն զիր իմն հընարել կարասցէ, գրեսցէ ինքեան, զի ըստ այնըմ արասցէ։ Զոր ծանոյց սմա, և խոստացաւ, զի թէ Յովսէփ վարդապետն ըստ պատուիրի իւրոյ ի կողմանէ առնելեացն իւրոց բան ինչ գրեսցէ ինքեան, գրեալ ծանուսցէ ի միամտութիւն իւր։ Եւ վասն որդւոյն իւրոյ տիրացու Թադէոսին որպէս քան զայս յառաջ ի պատմութեան ՌՄԺԹ երորդ ամին և ի նոյեմբերի Ե, և այժմ եւս էր գրեալ վասն նորա առ սրբազան վեհըն, և խոստանայր յղել զնա ի սուրբ Աթոռս։ Եւ սրբազան վեհըն պատուիրեաց սմա ի կամս իւր թողուլ նմա, զի թէ գայցէ աստ և թէ ոչ, սրբոյ Աթոռոյս և մեր որդի է։ Զայս վասն այն գրեաց սմա վասն նորա, քանզի կարծէր զնմանէ՝ թէ նա ոչ կամի գալ, այլ սա ստիպէ նմա։ Իսկ և Նախիջեւանու իշխօղքն ի քանի ամս զմիմեամբք անկեալք, աւերեցին զերկիրն ըստ մեծի մասին։ Որոց բողոքն հասեալ էր ի Շիրազ առ Քեարամ Խանն՝ և նա հրամայեալ էր, զի ամենեքեանքն երթիցեն անդ առ ինքն, զի տեսցէ զդատաստանս նոցա, և այցելութիւն արասցէ երկրին։ Ուստի՝ նոքա եւս ժողովեալք երթային առ նա, տանելով ընդ իւրեանս և ի գլխաւոր քեանդխուտայից երկրին, թէ ի հայոց և թէ ի տաճկաց։ Որև ի յԱստապատու եւս զոմանս ի քէդխուտայից տանէին ընդ իւրեանս։ Եւ նոքա թէ յաղագս այնր՝ և թէ վասն այլ ինչ յատուկ հոգալեաց ի կողմանէ գեղջն իւրեանց, գրեալ էին առ Աբրահամ վարդապետն աղաչել զսրբազան վեհըն, զի գրեսցէ առ Քեալանթար Սարգիս Աղայն, զի հոգ տարցէ բանից իւրեանց։ Եւ սրբազան վեհըն գրեաց նմա, զի թէ կարելի իցէ խնդիրն նոցա, հոգասցէ։ Որպէս և յառաջագոյն անգամ մի եւս գրեաց նմա յաղագս

նոցս վասն այսպիսւոյ բանի գլխդիր, (որպէս ասացեալ է ի պատմութեան ՌՄԺԷ երորդ ամին, և ի մարտի Ա,) բայց թէ չլինիցի ասէ կարելի, կամ թէ դու յաղագս այնր զվնաս ինն կրելոյ լիցիս, մի հոգար։ Զի զայսպիսի բանս զմեզ աղաչելով գրեցուցանեն, դու թէ կարելի է, հոգա, ապա թէ վնաս ինչ լինելոյ լիցի քեզ վասն այնց, մի հոգար։ Մեք քեզ վնաս ոչ կամիմք։ Զայս վասն այն գրեաց, զի երբեմն նա բեռն բառնայր թէ՝ զայս ինչ բան դու գրեցեր, և ես հոգացի։ Որոյ աղագաւ զայս ինչ վնասս կրեցի։ Որպէս և գրեալ էր վասն Աղէքսանդրին, (որ ասացեալ է ի սեպտեմբերի ԻԲ։) Փուսուլայ մի ես դրեաց առ սա սրբազան վեհըն ի պատասխանի և այլ միւս գըրեցելոցն սորին։ Զի բաց ի սրբազան վեհէն զնուիրակ Ստեփաննոս վարդապետն խնդրելոյն, (որպէս ի վերդ ասացաւ,) զԱւետիս պետն և զայլ սևագլուխ ևս խնդրէր յղել ատտի ի վանս իւրեանց։ Եւ վասն վանիցն իւրեանց ևս զհոգս առնել աղաչէր։ Զի Առաջնորդն իւրեանց Մկրտիչ վարդապետն (որ յիշեցեալ է ի պատմութեան ՌՄԻ երորդ ամին, և ի հոկտեմբերի Ժ։) ոչ լինէր մուդայէթ վանիցն իւրեանց։ Որպէս գանգատ գրէր զնմանէ։ Նոյնպէս և զտէր Մինասէն (որ ի պատմութեան ՌՄԺԸ երորդ ամին, և ի սեպտեմբերի ԺԵ յիշեցեալ է.) ևս էր դրեալ զգանգատ առ սրբազան վեհըն. վասն անյիշելի արարմանցն Նորին։ Ցորմէ և խնդրեալ էր ընդ բանիւ արարեալ զնա, տանիլ առ ինքն, և դատել զնա ըստ արժանւոյն իւրոյ։ Եւ սրբազան վեհըն ի պատասխանի սորին խնդրոցն և գանգատանացն միանգամայն այսպէս գրեաց սմա ի կարճոյ թէ՝ զի զոր ինչ գրեալ էիր ասէ առ մեզ, զամենայն իմացաք։ Բայց այդոքիկ Առաջնորդին են ասէ գործք. և ոչ մեր։ Այսինքն զանկարգ քահանայսն դատել, վանքին ֆիքր քաշել, և զեղեալ միաբանսն պահել։ Զոր այլք լուեալ, յօժարին ասէ զալ յայդր։ Արդ՝ այդ անկարգութիւնդ եթէ ի ձեզ գոն, Առաջնորդն վասն ե՞ր ոչ լինի վրէժխնդիր։ Եւ ե՞ր ոչ տայ նիզամ վանքին և քահանայից։ Եւ թէ ինքն ոչ կարէ, թող բազմակնիք թղթով գրեսցեն մեզ, ապա և մեք հոգասցուք։ Իսկ եթէ ինքն է պատճառ այդ անկարգութեանցդ, վասնայնորիկ ոչ լինի հոգացող, յայնժամ ևս պարտին միաբանք և ժողովուրդքն միաբանութեամբ ծանուցանել մեզ, որպէս յառաջ գրեցին մեզ բազմակնիք թղթով։ (Որպէս ի պատմութեան ՌՄԺԹ երորդ ամին, և ի սեպտեմբերի ԺԵ ասացեալ է.) զոր սա ևս կնքեալ էր, և յատուկ ևս դրեալ վասն լաւութեանն։ Զի որպէս գըրեցիք ասէ վասն լաւութեան միաբանութեամբ, և մեք ևս լսելով ձեզ ներեցաք Նըրմա և կոնդակ յղեցաք. (Որպէս ասացեալ ի պատմութեան ՌՄԻ ամին, և ի հոկտեմբերի Ժ։) նոյնպէս եթէ ունի գա վատութիւն, պարտիք ասէ միաբանութեամբ դրել մեզ։ Եւ թէ ոչ, զի՞նչ արարից։ Եթէ միոյ գրովն ես վրէժխնդիր լինիցիմ ասէ ոմանց, և կարէ ասէ դրել մեզ, և բազմաց կնքեցուցանել։ Զդատելին անպարտ առնել, և զայն մէկ գրօղն պարտաւոր։ Որպէս աբար յառաջ։ Եւ վասն սևագլուխ խնդրելոյն ի մէնջ, այսպէս ևս գրեաց սմա սրբազան վեհըն թէ՝ զորպէսն տեղւոյդ լաւապէս գիտես ասէ. զայդ լօղն որպէս յօժարի գալ յայդր։ Զրհորն որ հոտի, որքան լաւ ջուր լնուս, ևս հոտի ասէ։ Պարտիս զՋրհորն մաքրել, և ապա նոր ջուր լնուլ։ Եթէ կարես, այս է հնարն, և թէ ոչ, ուրեմն մէկ կռնակ ունի (որ է Քեարիմխանն.) ասէ, որ դու ոչ կարես խօսիլ, զի՞նչ արասցուք։ Զի թէ խօսիմք ասէ, բանն յայդ դուռնդ անկանի, և մեծանայ։ Մեք ոչ ծանօթանամք այդ դրանդ. որպէս պատճառն գիտես։ (Զի սրբազան վեհըն երկնչելով յիշխողէն տեղւոյս, ոչ գրէր առ Քեարիմխանն զթուղթ ինչ վասն հարկաւոր հոգալեաց ևս, զի մի նա յայլ և այլ կարծիս անկանիցի վասն իւր։ Թէպէտ Քեարիմխանն թօհմահթիւ [3]-) ասացեալ էր սմա թէ՝ Խալիֆայն վասն ե՞ր ոչ գրէ մեզ զթուղթ ինչ, զոր և Նա ևս յայնժամ դրեալ էր սրբազան վեհին։ Եւ սրբազան վեհըն ի պատասխանի թղթոյն, ի . . . գրեալ ծանոյց սմա զպատճառն արգելման թղթոյն իւրոյ ի Քեարիմխանէն (որպէս ասացաւ ի վերդ,) որում և պատուիրեաց, զի ի դիպօղ ժամու ծանուսցէ նմա զայն, և միամտեցուսցէ զնա վասն իւր։ Եւ նա ևս ըստ պատուիրի սրբազան վեհին ասացեալ էր նմա զպատճա-

ըն արգելման թղթոյ սրբազան վեհին յինքենէ (Եւ նա ևս հաւանեալ էր։)՝ եթէ բանն մեծանայ և յայդ դուռնդ անկանի, մեզ ևս հարկ լինի ասէ, որ ծանօթանամք այդ դըբանդ։ Զի գիտեմ ասէ որ նա դովաւ պարծի։ Ուրեմն խոստովանաբար կարդա ասէ և լաւ մտածեա. եթէ յիրաւ է զոր գրես զդմանէ, թէպէտ առ մեզ արարք շատ ունի գա։ Թէպէտ համբերեմք դեռ ևս, և մեք ևս եթէ վրէժխնդիր լինիմք, դու զայդ գուանդ կարես պահել ասէ, որ նոր տիրութիւն չառնէ, ստոյգն գրեցէք մեզ ասէ բազմակնիք թղթով։ Եւ թէ ոչ կարես ասէ պահել զայդ դուռնդ, ուրեմն պարտիս համբերել, և ժամանակին սպասել, և տնկած ծառիդ պտուղն ժամանակ մի վայելել։ Գիտեմ ասէ զփոփոխական և զզղջական բարս քո, որ յետ քանի մի աւուրց հաշտիս ասէ ընդ նմա, և զներհակն դրելոց ես մեզ։ Որ ոչ վայելէ ասէ քումդ խոհեմութեան յայսր և անդր փոփոխիլ, և թշնամեաց հաւատալ և մեզ դրել. որպէս այս փող խնդրելդ ի մէնջ։ (որպէս ի վերդ ասացաւ։)

Թուղթ ևս առ Ասպահանու նուիրակ Ստեփաննոս վարդապետն գրեաց։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի սեպտեմբերի ԻԲ ըստ խնդրոյ Քեալանթարին զգրելն առ ինքն վասն դրամոյ, զի ի նուիրակական արդեանցն իւրոց դրամ (ճ) տացէ նմա, և զսանատ առցէ ի նմանէ։ Եւ կրկին գրելն Քեալանթարին առ ինքն, և փոշիմանութեամբ հրաժարիլն ի խնդրելոյն զդրամ։ (որպէս ի վերդ ասացաւ։) Եւ պատուէր՝ զի թէ Քեալանթարն զդրամ ինչ խնդրել կամիցի յինքենէ և թէ ոչ կամիցի, յարդեանցն սրբոյ Աթոռոյս դրամ ինչ մի տացէ նմա։ Եւ զառաջին առ ինքն դրեալ գիրն մեր վասն դրամոյն, (ճ) մի ընդունիցի ընաւ, զի տյն գիրն իբր թահր գրեցի ասէ քեզ։ Այլ և վասն սորա լուաք թէ գնացեալ է ի Բասրա, առ ի տեսանել զքոյրն և զփեսայն։ (որ է Յարութիւն Աղայն։) որոյ աղագաւ և Քեալանթարն դրեալ էր սրբազան վեհին թէ՝ գրեալ եմ ի Բասրա նուիրակին մերոյ։ Զի որքան դրամս առ ինքն ունիցի, ձեռամբ մահտեսի Յարութիւն Աղային առ Զաքարիա վարդապետն յղեսցէ ի Պօլիս։ Զոր և դրեալ ծանոյց սմա։ Որում և պատուիրեաց՝ զի որքան դրամս առ ինքն ի պատրաստի ունիցի, կամ ձեռամբ մահտեսի Յարութիւն Աղային փօլիցայիւ առ Զաքարիա վարդապետն յղեսցէ ի Պօլիս, և կամ ընդ իւր բերցէ ի սուրբ Աթոռս։ Այլև՝ Քեալանթարն որ խնդրեալ էր զսա ի սրբազան վեհէն մնալ ի Ջուղա, (որպէս ի վերդ ի թղթոջ նորին ասացաւ։) ոչ գիտաց սրբազան վեհըն թէ արդեօք սորա կամօքն և հաւանութեամբն էր գրեալ նա ինքեան, թէ յինքենէ։ Վասնորոյ՝ և գրեալ զայս ծանոյց սմա, և պատուիրեաց, զի թէ Քեալանթարըն իւր հաւանութեամբն էր գըրեալ ինքեան վասն իւր անդ մնալոյն, փութով։ Զպատճառն մնալոյն իւրոյ փութով գրեալ ծանուսցէ մեզ, զի գիտասցուք։ Եւ թէ ոչ կամի մնալ անդ, վաղվաղակի ելեալ եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Զայս թուղթս եղաք ի թղթոջ Քեալանթարին և ետուք յԱստապատու եկեալ Յովսէփ փայեկին, զի ընդ իւր տարեալ անդ Աստապատեցւոցըն տացէ, զի և նոքա անտի յղեսցեն առ Քեալանթարն ի Ջուղա, զի և նա նուիրակին տացէ։ Եւ Յովսէփ փայեակն ի յունուարի Ը։

ՄԷ.

Ի Կարս՝ ի Կարին, եւ ի Ցամ՚իթ։ Առ Մուստաֆայ փաշայն եւ առ ոմանս անձինս վերստին թուղթք, վասն ընչիցըն Արապկերու Առաջնորդ հանգուցեալ Պետրոս վարդապետին։ Եւ առ Ղարաբէկն շնորհակալութիւն՝ վասն յղեալ ընծայիցն։

Վասն ընչից և արդեանցն Ցերապօլսոյ Առաջնորդ հանգուցեալ Պետրոս վարդապետին յորժամ սրբազան վեհըն քան զայս յառաջ ի դեկտեմբերի ԻԳ ընդ յատուկ փայեկի զթուղթս գրեաց առ Մուստաֆայ փաշայն և առ ոմանս անձինս, յայնժամ և առ Ղարաբէկն ես գրեաց զթուղթ վասն այսր, զի ասասցէ փաշային, զի զինչսըն Պետրոս վարդապետին զորս առեալ է,

յետոս տացէ մեզ։ Բայց ընդ վայր եղե գրելն սրբազան վեհին առ Նա։ Զի Նա ի դառնալն փաշային ի Շամու, յայնժամ հրաման էր առեալ ի Նմանէ, և եկեալ ի տուն իւր ի Կարս։ Եւ անտի քան զայս քանի մի աւուրբք յառաջ թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն, և ծանուցեալ զգալն իւր անդ։ Նա և՝ խոստացեալ էր սրբազան վեհին յետոյ ընծայ յղել վասն իւր։ Եւ Նա ոչ յետ բազում ինչ աւուրց, ընդ Մուլթի տաճկին թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն, և ըստ խոստման իւրոյ ընծայ յղեալ վասն Նորա։ Որ էր Ա լաւ Շամու ալաճայ, և Ա զառ ճոթ փարտացու։ Եւ զայս Մուլթի յանուն տաճիկս Մուստաֆայ փաշայն ի Ցամթայու այժմ յղեալ էր ի Կարս առ Ղարաբէկն, զի առեալ տարցէ զնա առ ինքն։ Քանզի՝ վասն հարազատութեանն յոյժ սիրէր զՆա։ Եւ Նա ես հանդերձ ընծայիւք և սիրանիշ թղթով յղեալ էր զնա առ սրբազան վեհըն, և պատուիրեալ, զի փութով դարձցի առ ինքն, զի ի միասին երթիցեն առ փաշայն։ Զոր Մուլթին ի գալն աստ, պատմեաց սրբազան վեհին։ Եւ ի դիտելն զայս սրբազան վեհին, զթուղթ մի գրեաց առ Մուստաֆայ փաշայն ի Ցամիթ ծանուցանելով Նմա քան զայս յառաջ ի դեկտեմբերի ԻԳ վասն ընչիցն Պետրոս վարդապետին զթուղթ գրելն առ ինքն։ Եւ որպէս յայնժամ, և այժմ ես խնդրեաց, զի զինչսն նորին յետոս տացէ մեզ։ Այլև սրբազան վեհըն մէկ ղութիով Ագուլեաց տանձ (Կ) յղեաց վասն Նորա։

Թուղթ ես առ սրբոյ Աթոռոյս գանձապետ մահտեսի Մարտիրոսն գրեաց ի Ցամիթ, և զդարձն Ղարաբէկին որ անդ, ծանոյց Նմա։ Եւ պատուէր զի զոր ինչ վասն ընչիցն Պետրոս վարդապետին քան զայս յառաջ ի դեկտեմբերի ԻԳ գրեալ է ինքեան, զայնս ամենայն մուզայէթ լեալ հոգասցէ, և յետոյ զոր ինչ առնելն իւր դրեսցէ ինքեան։

Թուղթ մի ես առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն գրեաց ի Կարին։ (Որ ի դեկտեմբերի ԻԳ յիշեցեալ է.) որում ես ծանոյց զդարձն Ղարաբէկին ի Ցամիթ, և ընդ Նմա վասն ընչիցն Պետրոս վարդապետին կրկին զթուղթ գրելն իւր առ փաշայն, և ընծայ ես յղելն վասն Նորա։ Եւ պատուէր՝ զի ի գալն Ղարաբէկին անդ, և ի տեսանելն զմիմեանս, վասն ընչիցն Պետրոս վարդապետին խօսեսցի ընդ Նմա, և սակս այնր զթուղթս ես գրեսցէ ընդ Նմա առ փաշայն, և առ որս ինքն կամիցի։

Թուղթ մի ես առ Ղարաբէկն գրեաց ի Կարս ի պատասխանի Բց թղթոցն իւրոց գրեցելոց։ Եւ շնորհակալութիւն՝ վասն յղեալ ընծայիցն։ (Որք ի վերդ յիշեցան.) Նաև ծանոյց Նմա քան զայս յառաջ ի դեկտեմբերի ԻԳ զթուղթս գրելն առ փաշայն, և առ ինքն։ Եւ խնդրեաց, զի թէ ինքն երթալոց է առ փաշայն ի Ցամիթ, զթուղթսն և զընծայն մեր տարեալ ընդ իւր մատուսցէ Նմա, և վասն ընչիցն Պետրոս վարդապետին խօսեսցի ընդ Նմա, զի տացէ մեզ։ Իսկ թէ ինքն ոչ երթայ անդ, զայնս Մութուն յանձնեսցէ, զի տարեալ տացէ փաշային։ Եւ ընդ Նմա զթուղթ ես գրեսցէ առ փաշայն վասն վերոյիշեալ խնդրոյն իւրոյ։ Նա և կամեցաւ սրբազան վեհըն ընդ Մութի տաճկին փոքր ինչ ընծայ յղել վասն սորա. իսկ Նա վասն միայնութեան իւրոյ ոչինչ կարաց տանիլ ընդ իւր։ Զոր ծանոյց սմա։ Որում և խոստացաւ յետոյ ընծայ յղել առ ինքն։ Զորս ուրոյն կնքեալ, ընդ Մութի տաճկին առ Ղարաբէկն յղեցաք ի Կարս, զի կամ ինքն տարցէ առ յիւրաքանչիւր տեարս իւրեանց, և կամ յղեսցէ առ Նոսա։ Եւ Մութի տաճիկն ի յունվարի Ը։

Փօլիցայ՝ ի վերայ Կարնոյ Նուիրակ Իսահակ պետին, ձեռամբ մահտեսի Ցովասափին։

Պօլսեցի դերձակ մահտեսի Ցովասափ յանուն այլ ումն աստի երթայր ի Կարին։ Եւ վասն երկիւղի ճանապարհին ձեռամբ Պօլսեցի սրբոյ Աթոռոյս ժամօրհնող Պետրոս վարդապետին աստ դրամ (ձ) ետ մեզ, զի ի Կարին տացուք ինքեան։ Վասն որոյ՝ և սրբազան վեհըն բարեգրի ոճիւ զփօլիցայագիր մի գրեաց առ Կարնոյ Նուիրակ Իսահակ վարդապետն, զի ի Նուիրակական արդեանցն իւրոց դրամ (ձ) տացէ մահտեսի Ցովասափին, և զայս փօլիցայագիրս առեալ ի Նմանէ առ ինքն պահեսցէ, որ յա-

ուր հաշուատուութեան իւրոյ պիտոյասցի ինքեան։ Զոր ետուք մահտեսի Ցովասափին, զի տարեալ տացէ Նուիրակին, և ըղդրամն իւր (Ձ) առցէ ի նմանէ։ Որ եւ ի յունվարի Ը։

ՄԸ.

Ի Կարս եւ ի Ցամիլթ։ Կատարումն Իբրահիմ Էֆէնտի խնդրոյն։ Եւ ընծայ յաղագս գլխաւոր տաճկացն Կարսայ, եւ առ ոմանս թուղթք, վասն ընչիցն Պետրոս վարդապետին։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Իբրահիմ Էֆէնտին (որ ի հոկտեմբերի Լ յիշեցաւ,) ի Կարս ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Քանզի կամեցեալ էր սա վասն Մուստաֆայ փաշային ընծայ պատրաստել, զի յղեսցէ։ Բայց անդ ընծայավայել իր ինչ ոչ էր լեալ զի առնիցէր։ Վասնորոյ՝ գրեալ էր այժմ առ սրբազան վեհըն, զի Դ հատ Քաշանու զարպապ առեա աստի, յղեսցէ առ ինքն։ Որոց և զգինն խոստացեալ էր յետոյ տալ մեզ։ Եւ սրբազան վեհըն ըստ խնդրոյ նորին՝ զտէր Վահանն (որ այժմ աստ գտանեցաւ՝) յղեաց յԵրեւան։ Որ գնացեալ անդ, զմէկ հատ ղիպայ, մէկ ջուխտալ գունով, և Ա ջուխա մօռ գունով զարպապ առեալ եբեր։ Եւ սրբազան վեհըն զգինս նոցին ի վերայ իւրաքանչիւրոցն գրեալ, յղեաց առ նա։ Եւ սպիտակ գունով զարպապ եւս էր խնդրեալ նա ի մէնջ. բայց ի նմանէ ոչ գտանեցաւ զի առեալ յղէաք։ Զոր ծանոյց նմա։ Եւ այս Դ զարպապի և Ա ղիպայի գինն եղեւ ԱՃՁԹ ղռուշ. զորս տէր Վահանն ի վերայ միմեանց էր գնահատեալ և առեալ։ Զոր ոչ ծանոյց նմա. այլ նորին վէքիլխարճ [88]) պարոն Գէորգին ծանոյց։ (Որպէս ասելոց եմք յետոյ ի թըղթոջ նորին։) Այլեւ՝ վասն նորա ընծայ եւս յղեաց ընդ ղահբաշի Սողոմօնին։ Որք են այսք։ ԱՃ լիտր բրինձ, Ժ լիտր ղայսի չիր. Ա ղութիով Ագուլեաց մալաչի տանձ. Ա բղղով պատրճանի թթու, և փոքրինչ վարդեջուր։ Զորս և գրեալ ծանոյց նմա։ Որում. և ծանոյց եւս զորպէսն Արապկերու Առաջնորդ հանգուցեալ Պետրոս վարդապետին։ Եւ խնդրեաց, զի գրեսցէ առ Մուստաֆայ փաշայն, զի զինչսն նորին զորս առեալ է, տացէ մեզ։

Թուղթ եւս սիրոյ առ Ղարաբէկն գրեաց ի Կարս (որ յամսոյս Ը յիշեցեալ է.) և ըստ խոստմանն իւրոյ (որպէս յամսոյս Ը ասացաւ) վասն նորա եւս փոքր ինչ բրինձ, և զմէկ հոխայ վարդեջուր յըղեաց։ Զոր ծանոյց նմա։

Թուղթ եւս սիրոյ առ Գիւմրիւկչի Թուրք Հասան Աղայն գրեաց՝ և վասն նորա եւս փոքր ինչ բրինձ և զԱ հօխայ վարդեջուր յղեաց։ Որում. և ծանոյց զյղելըն։

Թուղթ մի եւս առ Մուստաֆայ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն գրեաց, (որ ի պատմութեան ՌՄԻԱերորդ ամին և ի յօգոստոսի ԺԳ յիշեցեալ է։) Որում. և ծանոյց վասն ընչիցն Պետրոս վարդապետին քան զայս յառաջ ի դեկտեմբերի ԻԳ և յամսոյս Ը զթուղթս գրելն առ փաշայն, (և առ ոմանս անձինս եւս.) զի տացէ մեզ զայն։ Եւ պատուէր՝ զի ինքն եւս յորդորեսցէ փաշային, զի զինչսն նորին տացէ մեզ։ Եւ թէ վասն Էր երկիցս անգամ ի գրելն սրբազան վեհին զթուղթս առ փաշայն և առ յայլս վասն ընչիցն Պետրոս վարդապետին, յայնժամ զսովաւ զանց արար։ Որոյ պատճառն է՝ զի յայնժամ լուաք զմանէ, թէ ոչ է անդ. այլ ի գնալն փաշային ի Շամ, հրաման է առեալ ի նմանէ, և գնացեալ ի տուն իւր։ Բայց յետոյ սորին յուրեք գնալն աստ եղեւ. վասնորոյ՝ այժմ գրեաց։

Թուղթ մի եւս առ Ցամթայու Առաջնորդ և սրբոյ Աթոռոյս Նուիրակ Կարապետ վարդապետն գրեաց ի Ցամիթ։ Որում. եւս ծանոյց կրկին զթուղթ գրելն իւր առ փաշայն վասն ընչիցն Պետրոս վարդապետին։ Եւ զթուղթ մահտեսի Փիլիպպոսին ի թղթոջս եդեալ յղեաց առ սա զի տացէ նմա և ասասցէ, զի յորդորեսցէ զփաշայն առ ի տալ մեզ զինչսն Պետրոս վարդապետին։ Թուղթ եւս առ Իբրահիմ Էֆէնտու Վէքիլխարճ պարոն Գէորգն (որ ի սեպտեմբերի Ը յիշեցեալ է.) գրեաց ի Կարս

ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Զի Իբրահիմ էֆէնտին բաց յինքենէ գրելոյն զթուղթ առ սրբազան վեհըն վասն իւր խնդրեալ ղարպապիցն, սմա ևս էր գրեցուցեալ, զի զայնս առեալ յղեսցէ և մի զանց արասցէ։ Զոր առեալ սրբազան վեհըն յղեաց առ սա։ Որում և ծանոյց զյղելն, և զգինս նոցին (1ծթ)։ Եւ պատուէր՝ զի զընծայսն մեր զորս ընդ գահբաշի Սողոմոնին յղեցաք անդ, ի միասին տարեալ, էֆէնտուն և իւրաքանչիւր տեարցն մատուսցէն։ Նա և ծանոյց սմա զորպէսն Արապկերու Առաջնորդին, և պատուէր՝ ասել էֆէնտուն, զի վասն ընչիցըն նոցին դրեսցէ փաշային, զի յետս տացէ մեզ. զի մի չար օրինակ լիցի այլոց։ Այլ և վասն հոգալեաց ինչ ի պէտս սրբոյ Աթոռոյս, հրամանաւ և գիտութեամբ սրբազան վեհին։ զթուղթ մի ևս Աթոռակալ Գալուստ վարդապետն գրեաց սմա, զի զայս ինչ հոգացեալ յղեսցէ։ Որոյ աղագաւ և սրբազան վեհըն պատուիրեաց սմա, զի նորին գրեցելոցն առ ինքն՝ կատարումն տացէ։ Զայս վերոյիշեալ թուղթքս ետուք գահբաշի Սողոմոնին և ընծայիւք յղեցաք ի Կարս, զի զայն թուղթսն զորս անդ գրեցաք, ընդ ընծայիցն իւրաքանչիւր տեարցն տացէ, և զթուղթսն մահտեսի Փիլիպպոսին և Կարապետ պետին եթէ Ղարաբէկն ի Ցամիթ իցէ երթալոց, տացէ նմա, զի ընդ իւր տարեալ տացէ նոցա։ Եւ թէ ոչ՝ պարոն Գէորգին տացէ, զի յղեսցէ առ նոսա։ Ել գահբաշի Աողոմոնն հանդերձ քանի մի զինակրիւք ի յունվարի ԺԳ։

Ի Ցամիթ՝ Առ Մարիամ կինն՝ միամտութիւն վասն որդւոյն իւրոյ։

Ցամթեցի Մարիամ յանուն կին ոմն՝ զտասնամեայ Պօղոս զորդին իւր ընդ . . . իւրոյ Պաղտասարին յղեալ էր ի սուրբ Աթոռս, առ ի մնալ աստ և ընթեռնուլ, զոր և նա բերեալ աստ, յանձնեաց մեզ։ Եւ ի վերադառնալն նորին աստի ի տեղի իւր, ի սրբազան վեհէն զթուղթ խնդրեաց։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զթուղթ մի միամտութեան գրեաց առ մայրն տղային, զի զՊօղոս զորդին իւր զոր ընդ Պաղտասարին յղեալ էր ի սուրբ Աթոռս, առ մեզ հասեալ իմասցի, և միամտեսցի։ Եւ ի յանձնելն մեզ Պաղտասարին զՊօղոս տղայն, պատմեաց մեզ զնմանէ թէ՝ ինքն խնդրեաց աղերսիւ ի մօրէն իւրմէ յղել զինքն ի սուրբ Աթոռս առ ի ուսանել։ Ել Պաղտասարն ի յունվարի ԺԶ։

ՄԹ.

Ի Թիֆլիզ՝ Առ տեղւոյ Առաջնորդ Յովաննէս պետն. առ տէր Նիկողայոսն եւ տէր Մելքիսէթն, եւ առ Մէլիք Աւետիքն. վասն բարբանջման չիք Մըկրտումին, եւ վասն գործոցն իւրեանց։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Թիֆլիզու նորոգ Առաջնորդ Յովաննէս վարդապետն, առ սրբոյ Աթոռոյս գործակալ տէր Նիկողայոսն և տէր Մելքիսէթն, և առ երիցփոխան Մէլիք Աւետիքն, վասն բարբանջման Թիֆլիզեցի չիք Մկրտումին։ Զի Հերակլ Արքայն վրաց զԹաղօյենց չիք Մկրտումն առաքեալ էր առ Խանն. առ Շամտինն, և առ սրբազան վեհըն վասն դրամոյ։ Որ և նա եկեալ ետես զնոսա. որոց և ծանոյց զհրաման առաքողին իւրոյ։ Եւ յետ այնորիկ երկիցս անգամ ևս եկն նա առ սրբազան վեհըն վասն վերոյիշեալ խնդրոյն։ Բայց սրբազան վեհըն ոչինչ ետ նմա. այլ զզօրաւոր պատասխանիս տուեալ նմա, ունայն դարձոյց զնա յետս առ առաքօղն իւր։ Որև նա տրանջանօք ելեալ աստի գնաց յԵրևան. և անտի ի Քանաքեռ գիւղն, զի երթիցէ ի տեղի իւր։ Բայց նա յորքան աւուրս և ի ժամս կացեալ և մնացեալ էր անդ, զբազում բարբանջմունս էր արարեալ զսրբազան վեհէն քան զչափն իւր, և ապա գնացեալ։ Զոր մահտեսի Յոնանն եկեալ աստ պատմեաց սրբազան վեհին։ Եւ սրբազան վեհըն դրեալ զայս ծանոյց նոցա։ Եւ պատուիրեաց, զի ի գնալն անդ չիք Մկրտումին, եթէ անդ ևս զբարբանջմունսն առնիցէ զինէն, զգուշացեալ իմասցին, և ըստ տեղւոյն պատասխանեսցեն, և յետոյ զորպէսն գրեսցեն ինքեան

Կրկին պատուէր՝ զի ընդ նմին զորպէսն գործոցն իւրեանց և գրեսցեն ինքեան առ ի միամտութիւն իւր։ Զի ի նոյեմբերի ԺԷ յորժամ. ելին նոքա աստի, յօրէ յայնմանէ մինչև ցարդ ոչ էին գրեալ սրբազան վեհին զորպէսն գործոցն իւրեանց։ Թէպէտ յայլո՛յ երթևեկողաց այլ և այլ իմանայաք։ Միայն թէ՝ տէր Մելքիսէթն մասամբ իւիք գրեալ էր մերայնոցն զորպէս գործոցն իւրեանց։

Թուղթ ևս սրբազան վեհըն մահտեսի Յօնանին գրեցոյց առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն ի վկայութիւն բարբանջմանցն չիք Մկրտումին։ Զի մահտեսի Յօնանն ի ներկայութեան նորին գոլով, լուեալ էր զասացեալսն նորին, զոր և ի լսելն ևս սաստեալ էր նմա զի լռեսցէ. իսկ նա ոչ էր անսացեալ նմա. այլ ևս առաւել վատաբանեալ զսրբազան վեհըն։ Եւ թուղթս այս ըստ պատուիրի սրբազան վեհին այնպէս գրեցաւ առ նա, որպէս թէ մահտեսի Յօնանն ի Քանաքեռու իցէ գրեալ նմա և ոչ ի սրբոյ Աթոռոյս։ Փոքրիկ փուսուլայ մի ևս գրեաց սրբազան վեհըն առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի դեկտեմբերի Ի զթուղթ գրելն առ ինքն։ (Որ էր մեղադրութիւն նմա վասըն զՄարաիրոս տղայն քահանայ ձեռնադրել տալոյն Խորվիրապայ Առաջնորդ Մարկոս վարդապետին։ Որոյ զլիովին որպէսն տես ի վերոյիշեալ տեղին։) Եւ պատուէր՝ զի զպատասխանիսն թղթոցս փութով գրեսցէ ինքեան։ Զորս եդաք ի թղթոջ մահտեսի Յօնանին, և ետուք ինքեան, զի տարեալ ընդ իւր ի Քանաքեռ, անտի ընդ հաւատարմի առ Յովաննէս պետն յղեսցէ ի Թիֆլիս։ Որ ել ի յունվարի ԺԹ։

ՄԺ.

յԱլաշկերտ՝ Առ Բայազիտոյ հին Իսաղ փաշայն ի պատասխանի թղթոյն իւրոյ։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Բայազիտու հին Իսաղ փաշայն ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Առ որ հասեալ էր թուղթն Խանին մերոյ (և սրբազան վեհին.) զոր ի նոյեմբերի ԺԶ գրեաց առ նա զալ ի տունն Շամտին Աղային, զի անտի իմասցի զխնդիրս իւր։ Բայց նա երկուցեալ ի նմանէ, ոչ էր կամեցեալ գալ անդ, այլ այժմ. թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն, զի թէ ի կողմանէ Խանին երաշխաւոր լիցի ինքեան, զի ի գալն իւր ի տունն Շամտին Աղային, Խանն ինքեան վնաս ինչ ոչ հասուսցէ, զմիամտութիւն գրեսցէ առ ինքն, զի աներկրայ ելեալ եկեսցէ անդ։ Եւ սրբազան վեհըն զթուղթ Իսաղ փաշային ի ձեռն միրզային մերոյ առաքեալ առ Խանն, ընդ որում. և զթուղթ ևս գրեալ առ նա, ծանոյց նմա զխնդիրս նորին։ Եւ խնդրեաց՝ զի ընթերցեալ զթուղթն՝ լաւապէս վերահասու լիցի գրեցելոցն նորին։ Եւ զորինչ կամիցի վասն նորա, գրեալ ծանուսցէ ինքեան, զի ինքն ևս ըստ այնմ. պատասխանի գրեսցէ առ նա։ Եւ Խանն ևս վասն նորա գրեալ էր առ սրբազան վեհըն, զի զրացասաց պատասխանի գրեսցէ առ նա, և արգելցէ զնա ի գալոյ աստ։ Եւ սրբազան վեհըն զնորին գրաբեր սաճիկն առ ինքն կոչեաց, և զթուղթ Խանին մերոյ զոր գրեալ էր առ ինքն, ընթեռնուլ ետ առաջի նորա զի իմացեալ զմիտս թղթոյ Խանին, երթեալ պատմեսցէ փաշային իւրոյ։ Նաև՝ գրեալ ծանոյց նմա զհրաման Խանին վասն իւր. և արգել զնա ի գալոյ աստ։ Եւ նորին գրաբեր Իբրահիմն ի յունվարի ԻԳ։

ՄԺԱ.

Հանել Պոլսեցւոցն զԳրիգոր վարդապետն ի պատրիարքութենէն, եւ կացուցանելն պատրիարգ զսրբոյ Աթոռոյս նուիրակ Զաքարիա վարդապետն։ Եւ որոց աղագաւ թուղթք առ սրբազան վեհըն յայլոց, եւ պատասխանիք ի սրբազան վեհէն։ Եւ այլ եւս իրակութիւնք համախառն ընդ սոսա։

Ժամանեցին առ սրբազան վեհըն մեր թուղթք ի Պօլսոյ՝ ի նուիրակ Զաքարիա

վարդապետէն՝ երկիցս գրեալ. նաև յայլոց ոմանց անաւի։ Նաև ի Կարնոյ՝ ի մահտեսի Փիլիպպոսէն ի Մելքոնէն ի Խաչատուրէն և յայլոց։ Ի Կարնոյ գրօղքն՝ գրէին թէ՝ իշխանքն և ժողովուրդքն Պօլսոյ՝ զԳրիգոր վարդապետն հանեալ են ի պատրիարքութենէ հրամանաւ թագաւորին, և զԶաքարիա վարդապետն արարեալ են իւրեանց պատրիարք։ Նոյնպէս և ի մեծէն Պօլսոյ՝ միայն Գէորգն գրէր առ Աբրահամ վարդապետն զսոյն բանս։ Իսկ Զաքարիա վարդապետն՝ թէպէտ գրեալ էր զթուղթս առ սրբազան վեհըն, բայց զսոյն բանս ոչ էր գրեալ. այլ միայն զզուելն Պօլսեցւոցն զԳրիգոր Պատրիարգէն, և զարզայ տալն զնմանէ թագաւորին քանիցս անգամ, և թագաւորի ձանձրանալն ընդ բազմութիւն արզայիցն մատուցելոց ինքեան՝ և այնր աղագաւ հրամայելն Պօլսեցւոցն, զի զայլ ոք պատշաճաւոր ընտրեսցեն ի պատրիարքութիւն։ Եւ գրէր ես թէ՝ յոյս քանի օրս բանն ի մի կողմն է եզերելոց. և յայնժամ գրելոց եմ զլիովինն։ Եւ սրբազան վեհին թէպէտ ցնծութիւն մեծ եղև պատրիարքանալն Զաքարիա վարդապետին, բայց զի ինքն Զաքարիա վարդապետն զայնմանէ բան ինչ ոչ գրէր, և ոչ ի Պօլսեցւոցն մահսար կամ թուղթ ինչ գոյր վասն այնր. վասնորոյ՝ յերկբայս լինէր։ Ուստի՝ առ Զաքարիա վարդապետն՝ կամ ի Պօլիս զթուղթ ոչ գրեաց այժմ. այլ մահտեսի Փիլիպպոսին՝ Մելքոնին, և այլոցն գրեաց զթուղթս ի պատասխանի իւրեանց թղթոյն։ Որք են։

Թուղթ առ Կարնոյ Առաջնորդ Յարութիւն վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Որ խնդրեալ էր զկոնդակ պատուիրական վասն օրինազանցից ոմանց՝ հասարակապէս ի վերայ քաղաքին։ Եւ սրբազան վեհըն ըստ նորին խնդրոյն, կոնդակ գրեաց առ ժողովուրդն Կարնոյ, (որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրօջն, յերեսն ՇԺԳ՝ և ՇԺԵ.) Եւ վասն Նուիրակին ևս պատուէր գրեաց ի կոնդակոջն, զի շուտով տացեն զնուիրակութիւնն, և ուղևորեսցեն յայսկոյս։ Եւ սմա ևս պատուէր գրեցաւ օժանդակել Նուիրակին, և զօրինազանցսն՝, որք ոչ լինիցին ունկնդիր, անուանէ ծանուցանել ինքեան, զի պատժեսցէ զնոսա ըստ արժանեաց իւրեանց։ Եւ պատուէր՝ լինել արի ի գործն իւր, և այլ առ այս բանք։ Փուսուլայ ևս գրեաց առ սա, ի պատասխանի բանից նորին, որ գրէր թէ՝ եղբօրս որդին կամք ունի՝ որ ԳԾ դռուշ տայ սրբոյ Աթոռոյդ, եթէ ինձ եպիսկոպոսութեան հրաման տացես։ Որում գրեաց թէ՝ մեք որ քեզ չհրամայեցաք առնել եպիսկոպոսութիւն, ոչ եթէ վասն դրամոյ էր, ապա թէ ոչ, կարէաք աստ առնուլ ի քէն զդրամս, որքան և կամէաք, բայց կամեցաք մեք զայդ մուրդ վեր առնուլ ի քէն, զի բարձցի ի քէն այն անունն, թէ ի բանադրեցելոյն յայնմանէ ես ձեռնադրեցեալ։ Եւ յետոյ ի սուրբ Աթոռս եկեսցես, որ զքեզ օրինաւոր եպիսկոպոս արարեալ սրբոյ Աթոռոյս, յետս դարձուսցուք։ Ուրեմն, կամ ընդ Նուիրակին մերոյ՝ և կամ դու ինքնին երբ և կամիցիս, եկ ի սուրբ Աթոռս, զի արասցուք զքեզ օրինաւոր եպիսկոպոս։ Զի թէ աստ չեկեալ, յայդր տացուք քեզ հրաման, նոյն հոտն տակաւին մնայ ի վերայ քո։ Բայց թէ եկեսցես աստ, բառնի ի քէն իսպառ այն մուրն և վատ անունն։ Եւ լինիս օրինաւոր եպիսկոպոս և Առաջնորդ։

Թուղթ ևս առ Կարնոյ Նուիրակ Իսահակ վարդապետն գրեաց (որ յօգոստոսի Լ յիշեցաւ.) ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Որ խնդրեալ էր զկոնդակ պատուիրական ի վերայ քաղաքին, զի զնուիրակութիւնն շուտով տացեն և մի յամեցուսցեն։ Գրեաց թէ Առաջնորդն ևս էր խնդրեալ զկոնդակ պատուիրական վասն օրինազանցից։ Մեք ևս սակս երկուցդ խնդրոյն, ահա Ա կոնդակ գրեալ յղեցաք ի ձեռն քոյ որպէս տեսանելոց ես։ Տուր ընթեռնուլ յեկեղեցիսն, և ժողովեա զնուիրակութիւնդ, և որպէս գրեալ եմք ի նմա, այնպէս արա։ Եւ վասն տրապիզոնցի օրինազանցից ոմանց՝ և ումեմն Պետրոս վարդապետի՝ գանգատանս գրէր և վրէժխնդիր լինել խնդրէր։ Բայց չծանուցանէր թէ՝ օրինազանցքն ոյք են, և այն Պետրոս պետն ով է, և ուր է։ Վասնորոյ՝ զմեղադրութիւն գրեաց առ սա վասն այսր, և պատուիրեաց պարզապէս գրել զորպէսն նոցա։ Եւ զթուղթսն այնպէս գրել որ զբանս հասկացուսցէ, զի կարի ան-

հեթեթ գրէր։ Եւ յառաջագոյն ի նուիրական արդեանցն իւրոց գրամ (ա) էր հասուցել մահտեսի Փիլիպպոսին, (որպէս ասացեալ է յօգոստոսի Լ) որոյ աղագաւ ղավգ ես յղեցեալ էր առ սա, իսկ սա քանիցս անգամ կրկին ղապգ խնդրէր։ Առ այս ես ղմեղադրութիւն գրեաց, և յետոյ ղայս ես թէ՝ ահա այս թուղթ ես քեզ կրկին ղապգ ի կողմանէ այն ԱՌ ղուշին, լե՛ր միամիտ։ Եւ գրէր թէ՝ ասա վասն սրբոյ Աթոռոյդ Ա վէքիլ է պիտոյ։ Գրեաց թէ՝ ընդ մահտեսի Փիլիպպոսին խորհեալ զոմն պարկեշտ և պատշաճաւոր քահանայ դտեալ մեղ գրեսջիք, ղի և մեք վէքիլ հաստատեսցուք։ Եւ վարժապետ Ստեփաննոս պետն անդ ԱՃԻ ղուշ առնլիս ունէր, որոց զթամասուկսն առ սա յղեաց, և վէքիլ առար որ առնու։ Ուստի սրբազան վեհըն ես գրեաց որ հոգասցէ զայն։ Եւ վասն թոքմաճոց բանին որպէս որ գրեալ էր Մկրտիչ վարդապետն սմա, ղի այնպէս հոգասցէ. որոյ լիապէսն ահա գրեալ կայ ի թղթոջ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին։

Թուղթ ես առ Բաղտոնց պարոն Մելքոնն՝ նորին եղբայր պարոն Աւետիսն, և պարոն Խաչատուրն գրեաց ի Կարին ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Զի պարոն Մելքոնն և Աւետիսն յորժամ ի ՌՄԺԹ թուոջն և ի յԱպրիլի ԻԶ գնացին ի Պօլիս վասն պարտուցն իւրեանց զոր անդ տալոց էին տաճկաց, այժմ վերադարձեալ ~ անտի եկին ի Կարին։ Եւ պարոն Խաչատուրն այժմ գրեալ էր առ սրբազան վեհըն զդարձըն նոցա։ Եւ սրբազան վեհըն առ նոսա զմխիթարութիւն գրեաց վասն կրեալ նեղութեանցն զորս կրեալ էին ի Պօլիս ի պարտատեարց իւրեանց։ Եւ շնորհաւորեաց զգալուստ նոցա։ Այլև յանցեալ ամին թուղթ էին դրեալ առ սրբազան վեհըն ի Պօլսոյ. և սրբազան վեհըն ծանոյց նոցա զհասանիլն թղթոյն իւրեանց առ ինքն։ Եւ խնդրեալ էին ի սրբազան վեհէն յղել առ ինքեանս զսանատն իւրեանց (բ), զի նորեսցեն։ Բայց որովհետև ըստ խոստմանց իւրեանց գալոց էին ի սուրբ Աթոռս, վասն որոյ և սրբազան վեհըն ոչ յղեաց առ նոսա զսանատն իւրեանց, այլ խոստացաւ նոցա, զի երբ եկեսցեն ինքեանք ի սուրբ Աթոռս, յայնժամ վասն սանատին զորինչ պատշաճն է, այնպէս հոգասցէ ընդ ինքեանս։ Այլ և՝ իսմայիլցի մահտեսի Յակոբի մեղ տալեաց դրամոյ (ր) թէմէսուկն որ առ պարոն Խաչատուրն էր մնացեալ, (ղորմէ յանցեալ ամին և ի դեկտեմբերի ԺԷ ի թղթոջ իսմայիլցի մահտեսի Յակոբին ասացաւ։) եւ նա ես ի կողմանէ՞այն թէմէսուկին, Ուռումելու նուիրակ հանգուցեալ Գէորգ պետի սպասաւոր հանգուցեալ Մինաս պետին ղապգ էր տուեալ։ Եւ ղապգն այն այժմ առ մեղ էր, և սրբազան վեհըն զղապգն զայն այժմ առ մահտեսի Փիլիպպոսն յղեաց, տալ պարոն Խաչատուրին, և ղմահտեսի Յակոբի թէմէսուկն առեալ ի նմանէ՝ առ մեղ յգել։ Եւ ծանոյց պարոն Խաչատուրին դյղելն ղավղին իւրոյ առ մահտեսի Փիլիպպոսն, տալ ինքեան։ Եւ պատուէր՝ զի զթէմէսուկն մահտեսի Յակոբին որ առ ինքն գոյ՝ տացէ մահտեսի Փիլիպպոսին, որ նա առ մեղ յղեսցէ, և զղապգն իւր առցէ ի նմանէ։

Թուղթ մի ևս առ Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետն դրեաց (որ ի փետրվարի ԻԲ, և ի մարտի ԺԲ յիշեցեալ է.) ի պատասխանի թղթոյն իւրոյ, զոր քան զայս յառաջ ընդ մահտեսի Յօնանին գրեալ էր առ ինքն։ Եւ վասն այն փօլիցային (դ) զոր սրբազան վեհըն քան զայս յառաջ ի մարտի ԺԲ ի ձեռն մահտեսի Յօնանին առար ի վերայ նորա, և պատուիրեաց յանձնել զայն մահտեսի Յօնանին, զի ընդ իւր առեալ բերցէ առ մեզ։ Մինչ գնացեալ էր մահտեսի Յօնանն ի Թօխաթ՝ առնուլ զայն ի նմանէ, ոչ էր էր դտեալ զնա անդ, քանզի՝ և նա զքաղաքն նուիրակեալ, յանժամ գնացեալ էր յարտաքին վիճակսն իւր, զի զնոսա ևս նուիրակեսցէ։ Եւ գնացեալ առ նա մահտեսի Յօնանն ի վիճակն՝ խնդրեալ էր ի նմանէ. զփօլիցայն, (դ), և նա ևս զմեծ մասն (դցկե) փօլիցային տուեալ էր նմա, և վասն մնացելոյն, (ԽԵ) զՂուլիջանի որդի պարոն Ծատուրի ԽԵ ղուշի թամասուկն տուեալ էր նմա, զի երթեալ ի քաղաքն առցէ ի նմանէ։ Եւ ընդ մահտեսի Յօնանին թուղթ էր գրեալ առ սրբազան վեհըն որում և ծանուցեալ զտալն փօլիցային մահտեսի Յօնանին, և մահտեսի

Ցօնանն զթամասուկն առեալ գնացեալ էր ի քաղաքն, զի այնու առցէ զդրամն (ԽԵ) ի պարոն Ծատուրէն, բայց նա յայնժամ մեռեալ էր։ Վասնորոյ՝ և մահտեսի Ցօնանն զթամասուկն զայն ընդ իւր բերեալ եւ սրբազան վեհին։ Եւ սրբազան վեհըն ծանոյց նմա զայս, զի մի զպարոն Ծատուրի ինքեան տալիք դրամն (ԽԵ) առ մեզ հասեալ իմացի։ Իսկ վասն առ մահտեսի Ցօնանն հասուցեալ դրամոյն, (դցկե) այժմ զշնորհակալութիւն և զմիամտութիւն գրեաց առ նա, զի զդրամն զայն առ մեզ հասեալ իմացի, և միամտեցի։ Այլև՝ Նըսնուսեցի մահտեսի Ցովաննէսն և նորին եղբայր Սարգիսն (որք ի յունիսի ԺԶ յիշեցան.) ի կողմանէ չրաղին իւրեանց Ագուլեցի մահտեսի Աբրահամի որդի պարոն Հայրապետին, սատ դրամ (1) եւուն սրբազան վեհին, յորմէ և խնդրեցին գրել Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետին՝ (սրէ այս։) Զի նա զդրամն զայն (1) ի Մարսվան բնակեալ եղբօրն նորին մահտեսի Սահակին տացէ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհն առեալ ի նոցանէ զդրամն (1), փոխցայ արար (1) ի վերայ նորա։ Որում և պատուիրեաց, զի երբ Ագուլեցի մահտեսի Աբրահամի որդի մահտեսի Սահակն զթուղթըս զայս առեալ բերցէ առ ինքն, տացէ նմա զդրամն (1), և զթուղթս զայս առեալ ի նմանէ, իբր զապզ առ ինքն պահեսցէ ի միամտութիւն իւր։ Այսր աղագաւ զթուղթ մի ևս Նսնուսեցի մահտեսի Ցովաննէսն և նորին եղբայր մահտեսի Սարգիսն գրեցին առ մահտեսի Սահակն։ Զոր ընդ թղթոյս յղեաց առ Թօխաթու Առաջնորդ Սարգիս պետն, յղել ի Մարսվան առ մահտեսի Սահակն։ Զի նա զնուիրակէն առցէ զդրամն։

Թուղթ ևս սրբազան վեհն առ Թօխաթու Առաջնորդ Սարգիս վարդապետըն գրեաց՝ (որ ի փետրվարի ԻԲ յիշեցաւ.) ի պատասխանի ընդ մահտեսի Ցօնանին դրեալ թղթոյն իւրոյ։ Որում և ծանոյց զորպէսն մահտեսի Ցօնանին թէ որպէս ի դառնալն նորին՝ ի Թօխաթու ի ճանապարհին պատահեալ էր յաւազակաց որք մերկացուցեալ էին զնա, և ի յընչիցն մերոց, և պարոն Սիմոնին բռնութեամբ առեալ ի նմանէ։ (Որոյ լիովին որպէսն ի հոկտեմբերի Լ ի փուսուլայոջ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին ասացաւ և ցուցաւ։) Այլև՝ զթուղթն Թօխաթու նուիրակին և Նսնուսեցոցն (որք ի վերդ գրեցան.) ի թղթոյս եգեալ առ սա յղեցաք, անտի յղել առ վերոյիշեալ Ագուլեցի մահտեսի Աբրահամի որդի մահտեսի Սահակն, զի նա ի նուիրակէն մերմէ առեալ զդրամն (1), տացէ նմա զթուղթսն։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն դրեաց ի Կարին ի պատասխանի յամսոյս Դ գրեցեալ թղթոյն։ Որ զՊօլսոյ թուղթսն ևս ընդ Արեշատ փայեկին այժմ յղեալ էր առ սրբազան վեհըն։ Եւ որպէս ի վերդ ասացաք՝ զպատրիարգանալն Զաքարիա վարդապետին, սա ևս գրէր առ սրբազան վեհըն, և ի տեղի նորին զայլ նուիրակ յղել խնդրէր ի Պօլիս։ Բայց որովհետև բանն ի կարծիս էր, վասնորոյ և սրբազան վեհըն այժմ զթուղթ ինչ ոչ դրեաց անդ. այլ թոյլ տուեալ սպասէր կատարածի բանին։ Զոր և ծանոյց սմա, և պատուիրեաց, զի թէ այսուհետև ի Պօլսոյ նորագոյն համբաւ ինչ լուիցէ, գրեսցէ ինքեան։ Եւ կամ թէ՝ անտի զթուղթ ինչ ընկալցի, զայնս փութով առ ինքն յղեսցէ։ Իսկ և՝ վասն Ագուլեցւոց ինքեանց տալեաց դրամոյն (ՇԿա) գրէր թէ՝ ոչ են տուեալ։ Բայց որովհետև սրբազան վեհըն քան զայս յառաջ յօգոստոսի Լ գրեաց տիրացու Գէորգին առնուլ յԱգուլեցւոցն զդրամն (ՇԿա) և յանձնել խօջայ Նազարէթին։ Եւ նա ևս այնր աղագաւ զմիամտութիւն էր դրեալ առ սրբազան վեհըն և խոստացեալ էր առնուլ ի նոցանէ զդրամն։ Եւ մանաւանդ՝ Առաջնորդն նոցա՝ Թօմայ վարդապետն (որ յամսոյս Ա յիշեցաւ) այժմ ի Բայազիտ էր, վասնորոյ՝ և սրբազան վեհըն գրեցոյց Երեմիայ վարդապետին առ նա զհացկ՝ գրել առ Ագուլեցիսն ի Պօլիս, զի տացեն զդրամն Մուրտիկեանցն։ Զայս ևս թէ՝ եթէ նոքա ոչ տացեն զդրամն, ի քէն առից սաէ, և զնոսա ընդ բանիւ աբարից։ Զորս և ծանոյց սմա ի միամտութիւն իւր։ Այլև՝ Արապկերցիք բազմակնիք մահսար արարեալ այժմ յղեալ էին առ սրբազան վեհն, յորում գրելով զշաղփաղփեալ խնդիր իւրն, յորմէ ոչինչ իմացեալ

եղեւ։ Քանզի՝ գրեալ էին առ. սրբազան վեհըն թէ՝ որքան որ ժամանակս այսպէս է. առ մեզ Առաջնորդ մի ՚յղեր։ Բայց զնորին անդրադարձն ոչ էին գրեալ թէ՝ եթէ Առաջնորդ ոչ յղեսցէ, ապա զի՞նչ արասցէ։ Զոր և գրեալ ծանոյց սմա, և պատուիրեաց հարկադրել նոցա, զի զոր ինչ ՚յինքենէ խնդրել կամին, վերստին պարզապէս գրեալ ծանուսցեն ինքեան, զի կատարեսցէ։ Զայս ևս գրեաց թէ՝ եթէ կամին որ ժամանակ մի վէքիլ նստցի ի մէջ իւրեանց, զպատշաճաւոր քահանայ մի ընտրեալ, ՚յանուանէ գրեսցեն ինքեան, զի առ նա զկոնդակ մի գրեալ, վէքիլ կարգեսցէ զնա իւրեանց, որ ժամանակ մի հովուեսցէ զինքեանս, մինչև ՚յետոյ երբ իւրեանք կամիցին և գրեսցեն ինքեան, ՚յայնժամ զոմն սեավգլուխ Առաջնորդ արարեալ յղեսցէ անդ, առ ի ըստ օրինին հովուել զինքեանս։ Իսկ և՝ Թօքմաճի մահտեսի Մըսըրն քան զայս յառաջ ի սեպտեմբերի Զ ըստ հրամանի սրբազան վեհին մինչ եկն ի սուրբ Աթոռս, ի բազում աւուրս աշխատեալ, ոչ կարաց նման ընկեալ զանկակին մերոյ զնորագոյն զանկակ ինն թափել։ Վասնորոյ ի ՚յօգնութիւն ինքեան, փութով գրեալ եղբօրն իւրոյ մահտեսի Աստուածատուրին ի Կարին, զնա ևս եբեր ի սուրբ Աթոռս։ Որք ի միասին ի բազում աւուրս աշխատեալ, հազիւ թէ զմեծ զանկակ մի թափեցին. և այն ևս ոչ եղև մեզ հաւանելի, զի էր խռնաձայն։ Եւ սոքա ՚յառաջագոյն դրամ էին տալոց մեզ (Ծ)։ Եւ մահտեսի Փիլիպպոսն ևս ի ՚յղելն զմահտեսի Մըսըրն ի սուրբ Աթոռս, ըստ հրամանի սրբազան վեհին (որպէս ի սեպտեմբերի Լ գրեցեալ է,) խարճի էր տուեալ նմա։ (I) և մանաւանդ՝ ի բազում ժամանակս կացեալ նոցա ի սուրբ Աթոռս, կարի յոլով խարճ և մասրաֆ արարին ի մէնջ։ Բայց սրբազան վեհըն խնայելով ի ծերութիւնս և ՚յաշխատանս նոցին, զայնս ամենայն շնորհեալ նոցա, այլ և սիրով ուղեւորեաց զնոսա ի տեղիս իւրեանց։ Եւ ի գնալն նոցա աստի՝ Թամասուկով դրամ փոխ առին ի մէնջ, (Ծ) զի երթեալ ի տեղիս իւրեանց, ի տեղի դրամոյն մերոյ զոր ինչ և խնդրեսցուք ՚յինքեանց, զայնս ամենայն շինեալ ՚յանձնեսցեն նուիրակին մերոյ, զի նա ի սուրբ Աթոռս ՚յղեսցէ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն այժմ գրեցոյց զայս Մկրտիչ վարդապետին մերոյ, և վասն շինելի իրաց (որք էին Ժ բուրվառ, Ժ քշոց, Ժ ձեռաց զանկակ, և Ժ շամատան) զդաւթար առնել ետ, և ընդ Թամասուկին առ նա ՚յղեաց, որում և պատուիրեաց՝ զի զոր ինչ գրեալ եմք ի դաւթարօջն, զայնս շինել տացէ նոցա, և առ մեզ ՚յղեսցէ. և զԹամասուկն տացէ նոցա։ Եւ թէ վասն շինելի իրացն ևս դրամ պիտոյասցի, զայն ևս ՚յինքենէ տացէ նոցա։ Որում և ծանոյց զայս, և պատուիրեաց, զի զոր ինչ ի դաւթարօջն գրեալ եմք, զայնս ընդ նուիրակին ի միասին շինել տացեն նոցա, և առեալ առ մեզ ՚յղեսցեն։ Կրկին պատուէր՝ զի թէ անդ Թուղթ կամ այլ հարկաւոր իր ինչ գտանիցի, զայնս գրեալ ծանուսցէ մեզ, զի ինքեան առնուլ տացուք։ Եւ մանաւանդ՝ գրեսցէ եղբօրն իւրոյ խօջայ Նազարէթին վասն ԱԾ օզմայ Թղթոյն, (զոր ՚յառաջագոյն ինքեան գրել ետուք առ նա,) զի առեալ ՚յղեսցէ առ մեզ. քանզի՝ կարի ՚յամեցոյց նա։ Այլև՝ վասն հարկաւոր առնլի իրաց ինչ՝ զդաւթար մի եղեալ ի Թղթօջս առ սա ՚յղեցաք, ՚յղել առ եղբայրն իւր խօջայ Նազարէթն ի Պօլիս, զ՚ի նմա գրեալսն առեալ առ մեզ ՚յղեսցէ։ Եւ զպարոն Խաչատուրի զապղն ևս ՚յղեաց առ սա, տալ նմա, և զխմայիլցի մահտեսի Յակոբի Թամասուկն առեալ ի նմանէ առ մեզ ՚յղել։

Թուղթ մի ևս գրեաց առ սա. որում և ծանոյց զորպէսն սրբոյ Կարապետի Վանից Առաջնորդ Յօնան վարդապետին, թէ որպէս յառաջ քան զայս ի ՌՄԺԴ-երորդ ամին և ի յունիսի Լ վասն անկարգ արարմանցն և անուղիղ ընթացիցն նորին ընդ բանիւ արարեալ զնա եբեր ի սուրբ Աթոռս։ Եւ ըստ խնդրոյ Կարնեցւոցն ներեաց ՚յանցանացն նորին, և արձակեաց զնա ի բանադրանացն, և խիլայիւ պատուեաց զնա, և ըստ աղերսանաց և խնդրոյ նորին զնուիրակութիւնն Վանայ երկրին տուեալ նմա, ուրախութեամբ դարձոյց զնա ի տեղի իւր։ (որպէս ի նոյն Թուղջն և ի սեպտեմբերի Է ասացեալ է։) Իսկ նա զնուիրակութիւնն Վանայ երկրին ժողովեալ եկեր, և զփարայ մի ոչ հասոյց ի սուրբ Աթոռս։ Վասնորոյ՝

և սրբազան վեհըն քան զայս յառաջ ի ՌՄԻ Թուոյն և ի դեկտեմբերի ԵՆ, և ի սեպտեմբերի ԻԸ երկիցս սիրախառն մեղադրանօք գրեաց առ նա, պահանջելով ի նմանէ զնուիրակութեան հաշիւն իւր։ Իսկ նա զգրեցելովքս ամենևին զանց արար. ոչ գրելով զպատասխանիս թղթոցն սրբազան վեհին։ Ուստի՝ և սրբազան վեհըն բարկացեալ ի վերայ նորա, զայսոսիկ ծանուցանելով պատուիրեաց սմա զի գրեալ առ նա զգուշացուսցէ, տալ մեզ զնուիրակութեան հաշիւն իւր։ Եւ զպատասխանի թղթոյն իւրոյ փութով խնդրեալ ի նմանէ առ ինքն յղեսցէ, զի գիտասցէ զմիտս գրեցելոցն նորին։ Արդ՝ եթէ զգաստացաւ ասէ և ետ մեզ զնուիրակութեան հաշիւն իւր, բարի է. և թէ ոչ՝ գիտէ տէր որ ըստ առաջնոյն ոչ եմ առնելոց ասէ, այլ այնպէս եմ առնլոց որ ի մէջ աշխարհի խայտառակ լիցի և յետոյ սնիծիւք և պատժական բռամբ ի դժոխս իջցէ։ Ցայնժամ եթէ վասն նորա ես իրիջայ առնող լիցի. նա ես է առնլոց ասէ զբաժինն իւր։ Մի գուցէ ասէ կեղծաւորական բանից նորին հաւատացեալ գրեսցես մեզ, այլ զհաստատուն պատասխանի խնդրեսցես ի նմանէ վասն վերոյյիշեալ բանիցն մերոց։ Ըստ որում մինչև յԱղուհացն պայման եղ, զի գրեալ առ նա, և զպատասխանին փութով խնդրեալ ի նըմանէ, առ ինքն յղեսցէ։ Եւ զվերոյյիշեալ թուղթսն ընդ իւր յղեալ Արևշատ փայեկին առ ինքն յղեցաք, զի իւրաքանչիւր տեարցըն տացէ։ Եւ Արևշատ փայեակն ի յունվարի ԻԷ։

Առ Ղօշավանից Առաջնորդ Սուքիաս պետն մեղադրութիւն՝ վասն չհասութիւն առնելոյն։

Ի փոքր Փարկիթ կոչեցեալ գեղջն որ ի Կարս՝ Հայրապետ յանուն առն միոյ որդին վախճանեալ էր։ Եւ Ղօշավանից Առաջնորդ Սուքիաս վարդապետն ի յաղագ տըղայէ միոջէ ԽԵ ղուրշ դրամ կաշառ առեալ, զկին հանդուցելոյն պսակեալ էր ընդ նմա։ Զոր իմացեալ Ղարախանօղլի Հաճի Ջալալին, գրեալ էր Միրզային, ծանուցանել սրբազան վեհին։ Զոր և ծանոյց։ Եւ ի գիտելն սրբազան վեհին, զթուղթ մեղադրութեան գրեաց առ նա։ Որում և պատուիրեաց՝ զի թէ յիրաւի դրամ առեալ իցէ ի յայն տղայէն, յետս տացէ Ղարախանօղլուն, (զի ընդ իշխանութեամբ նորա էր գիւղն այն.) և թէ ոչ, զստոյգ եղելութիւն իրին գրեալ ծանուսցէ ինքեան։

Թուղթ մի ևս ըստ հրամանի սրբազան վեհին մեր Միրզայն գրեաց առ Ղարախանօղլի հաճի Ջալալին, (որ յամսոյս Դ յիշեցաւ,) ծանուցանելով նմա զգրեալն սրբազան վեհին առ Սուքիաս վարդապետն վասն առեալ դրամոյն, զի յետս տացէ ինքեան։ Յղեցան այսոքիկ ընդ մեր Միրզային տղային։ Որ վասն բանիցն իւրոց երթայր ի Կարս։ Որ եւ ի յունվարի ԻԹ։

ՄԺԲ.

Առ Դիատինու եւ Խամուրայ իշխօղսն թուղթ սիրոյ, եւ առ Բայազիտու նուիրակ Գալուստ պետն մխամտութիւն, վասն նորապէս առ մեզ հասուցեալ արդեանցն։

Ծուճանու տանուտէր պարոն Դիլանն այժմ միայն յուխտ էր եկեալ ի սուրբ Աթոռս։ Ընդ որում և Բայազիտու նուիրակ Գալուստ վարդապետն ի նուիրակական արդեանցն իւրոց դրամ (ԺԴ) էր յղեալ ի սուրբ Աթոռս առ մեզ։ Վասնորոյ՝ և սրբազան վեհըն զմիամտական զապզ մի գրեալ, ընդ պարոն Դիլօյին յղեաց առ նա, զի զգրամն զայն առ մեզ հասեալ իմասցի, և միամտեսցի։ Եւ պատուէր՝ զի զղապզն զայն առ ինքն պահեսցէ, զի յաւուր հաշուատուութեան իւրոյ պիտոյասցի ինքեան։

Թուղթ սիրոյ ևս առ Դիատինու իշխօղ Սէյիտ բէկն գրեաց։ Որ վասն բանիցն իւրոց յառաջագոյն գնացեալ էր ի Թօփրախղալայն. այժմ լուաք զնմանէ թէ՝ նոր եկեալ է ի տեղի իւր։

Թուղթ մի ևս առ նորին եղբայր Մահմատբէկն գրեաց ի պատասխանի թղթոյն։ Զոր ընդ պարոն Դիլանին վասն նորա յանձնարարութիւն էր գրեալ առ սրբազան վեհըն, առ ի շահել զնա։ Զոր և

սիրով ընկալաւ, և շահեաց, և ծանոյց նմա։ Եւ վասն նորա Ա հօխայ վարդեջուր յղեաց ընդ պարոն Գիլանին։ Զոր և ծանոյց նմա։

Թուղթ մի ևս ըստ խնդրոյ Բայազիտու նուիրակ Գալուստ վարդապետին՝ առ Խամուրայ իշխող Հասանբէկն, և նորին Քեռի Բէքիր բէկն գրեաց. սէր՝ և մխիթարութիւն, վասն մահուան հօրն իւրոյ։ Եւ պարոն Դիլանն հանդերձ վերոյյիշեալ թղթովքս, ի փետրվարի Ե։

ՄԺԳ.

Ի Բայազիտ՝ ի Խոյ՝ եւ ի Վան. Առ տիրացու Ստեփաննոսն ի պատասխանի թղթոյն։ Եւ առ հայր նորին տէր Յովաննէսն զմխիթարութիւն վասն գալստեան նորա. եւ առ պարոն Մեհրապն եւս գյանձնարարութիւն վասն նորա։

Թուղթ գրեաց սրբազան վեհըն առ Ջուղայեցի տէր Յովհաննէսի որդի տիրացու Ստեփաննոսն ի Խոյ՝ ի պատասխանի թղթոյն։ Զի քան զայս յառաջ ի Մայիսի Ը վաճառականութեան աղագաւ գնացեալ էր սա ի մեծն Պօլիս. և այժմ վերադարձեալ անտի եկեալ էր ի Բայազիտ, զի վասն բանիցն իւրոց երթիցէ ի Խոյ։ Եւ անտի՝ ընդ վանեցի Մելքոն յանուն տղայի միոյ (զոր ընդ իւր տարեալ էր ի մեծն Պօլիս, որ այժմ եկն ի սուրբ Աթոռս յուխտ, և երթալոց էր ի Վան.) գրեալ էր առ սրբազան վեհըն զդարձն իւր ի Պօլսոյ, ի Բայազիտ, և անտի յերթալն իւր ի Խոյ։ Եւ թէպէտ սրբազան վեհըն քան զայս յառաջ ի մայիսի Ը գրեաց Պօլսոյ նուիրակ Զաքարիա վարդապետին, զի թէ դրամ խնդրեսցէ յինքենէ, այսքան դրամ միայն տացէ նմա (ա)։ Իսկ սա՝ ըստ պահանջման հարկին, քան զգրեալն աւելի էր առեալ զդրամ ի նմանէ (ած)։ Եւ ի գալն իւր ի Կարին՝ ի տեղւոյ նուիրակ Իսահակ պետէն, և ի Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսէն ևս էր զդրամս առեալ, (ի) (ՑԺ) և վասն ընդ իւր ի Պօլսոյ բերեալ բեռանցն գիւմրիւկ տուեալ։ Եւ մահտեսի Փիլիպպոսին վասն իւր առեալ դրամոյն (ՑԺ) թէմէսուկ էր տուեալ. զորս այժմ գրեալ էր սրբազան վեհին, և խոստացեալ, զի ի դառնալն իւր ի Խոյայ, տացէ մեզ զտալիք դրամն իւր։ Բայց սրբազան վեհըն պատուիրեաց սմա, զի երբ ի Խօյայ վերադարձեալ եկեսցէ ի Բայազիտ, զտալիք դրամն իւր տէր Վահանին (որ տակաւին աստ առ մեզ էր.) տացէ, զի նա առ մեզ յղեսցէ, և ծանուսցէ մեզ զտալն։ Որում և ծանոյց առ պարոն Մէհրապն վասն իւր զյանձնարարութիւն գրելն։ (որպէս ասելոց եմք ահա։)

Թուղթ մի ևս շնորհակալութեան առ Թիֆլիզեցի պարոն Մէհրապն, վասն Հաշտաբխանու և Ուռումելու նորոգ նուիրակ Յովսէփ և Պետրոս վարդապետացն, զի ի դեկտեմբերի ԺԷ յորժամ չուեալ նոցա աստի գնացին ի Խոյ, սա մեծաւ պատւով ընկալեալ էր զնոսա, և սիրով ուղևորեալ ի վիճակս իւրեանց։ Նաև՝ յանձնարարութիւն վասն տիրացու Ստեփաննոսին, (որ ի վերդ յիշեցաւ,) զի զնա ի սէր ունիցի և ամենայն բանիցն նորին մուղայէթ լիցի։ Եւ պատուէր՝ զի զորպէսն սրբոյն Բարդուղիմէոսի վանից Առաջնորդ Սողոմօն վարդապետին և տէր Գէորգին իմացեալ, գրեսցէ մեզ, քանզի՝ Յովսէփ վարդապետն ի Խոյայ գրեալ էր մեզ վասն տէր Գէորգին թէ՝ ի Բաղտատու կարաւանէ գալոց է այս կողմունս, և տէր Գէորգն ի մէջ նոցա է։ Յղեցաւ այս առ տիրացու Ստեփաննոսն, տալ նմա։

Թուղթ մի ևս առ նոյն տիրացու Ստեփաննոսի հայր տէր Յովաննէսն գրեաց ի Վան։ Որում և ծանոյց զդառնալն որդւոյն իւրոյ տիրացու Ստեփաննոսին ի Պօլսոյ, և զգնալն ի Խոյ։ Եւ որպէս ի դեկտեմբերի ԻԳ և այժմ ևս ծանոյց վասն Նննուսեցւոց յԱստապատցի պարոն Բունեաթէն առնլի դրամոյն . . . քան զայս յառաջ յօգոստոսի Ը առ Պաղտասար վարդապետն և առ ինքն զթուղթս գրելն, զի առցեն զդրամն ի նմանէ։ Եւ յոչ գրելն նոցա զպատասխանիս թղթոցն, այժմ ևս պատուիրեաց, զի գրեսցէ։ Եւ որպէս յայնժամ, և այժմ ևս պատուիրեաց սմա զի զքարահատ Գասպարն փութով յղեսցէ ի սուրբ Աթոռս։ Եւ պատուէր՝ ևս՝ զի զորպէս

տէր Գէորգին՝ Վանայ նուիրակ և Առաջնորդ Գազտասար և սուրբ Կարապետի Առաջնորդ Յօնան վարդապետացն, և վանցի չիք տէր Սարգսին, միրստմիոջէ իմացեալ, գրեսցէ ինքեան։ Որում և ծանոյց վասն որդւոյն իւրոյ տիրացու Ստեփաննոսին առ պարոն Մէհրապն զյանձնարարութիւն դրբելն։ Զոր յատուկ կնքեալ, ետուք վանցի Մելքոնին զի տարեալ տացէ նմա։ Նւ ըզթուղթ պարոն Մէհրապին ի թղթոջ տիրացու Ստփաննոսին եղեալ, նոյն Վանցի տղային ետուք, զի տարեալ ընդ իւր ի Բայազիտ, անտի առ տիրացու Ստեփաննն յղեսցէ ի ձօյ։ Որ եւ ի փետրվարի Ն։

ՄԺԴ.

Ի Կարս առ Ղօշավանից Առաջնորդ Սուքիաս պետն, առ Ղարախանօղլին եւ առ պարոն Գէորգին կրկին վասն չհասուցեան, եւ այլ ինչ բանից։

Թուղթ ղրեաց սրբազան վեհըն Ղօշավանից Առաջնորդ Սուքիաս վարդապետին ի պատասխանի թղթոյն։ Առ որ հասեալ էր թուղթ սրբազան վեհին զոր յունվարի ԻԹ դրեաց առ նա։ Եւ նա ես ըստ պատուիրի սրբազան վեհին դրեալ էր զորպէսն անցիցըն ղրան զամբաստանօղացն իւրոց սուտ կացուցանելով։ Զի Հայրապետ անուամբ այրն այն յետ մեռանելոյ որդւոյն իւրոյ, ոչ ունելով զզաւակ, վասնորոյ՝ թարց ղիտելոյ և հրամանի Առաջնորդին իւրոյ Սուքիաս պետին, զկին որդւոյն իւրոյ տուեալ է ծառային իւրոյ, զնա որդեգիր առնել կամելով ինքեան։ Բայց քահանայն վասն երկիւղին ոչ է պսակեալ զնոսա։ Եւ յետ ժամանակի յղացեալ կինն այն բերեալ էր արու զաւակ։ Եւ Հայրապետն այն եկեալ առ Առաջնորդն աղաչեալ էր, զի հրաման տացէ վասն մկրտելոյ նորածին մանկանն։ Եւ նա ես հրաման էր տուեալ, զի մկրտեսցեն։ Եւ Հայրապետն այն վասն մահուան որդւոյն իւրոյ եթէ թաղումն և թէ հոգեբաժին Ա ձի, Ա արջառ, և Ա չուխայ է տուեալ նմա։ Եւ պարոն Պետրոս կոչեցեալն ի ժամանակի Առաջնորդութեան Մինաս վարդապետին, զայրի դուստրն իւր աղափ տղայի էր տուեալ։ Եւ այժմ ես նոյն Պետրոսի աներձադու որդին ինքն այրի գոլով, գնացեալ ազափ աղջիկ է առեալ։ Եւ եկեալ առ Առաջնորդն հրաման է խնդրեալ վասն պսակելոյ։ Իսկ նա ոչ էր հրաման տուեալ։ Վասնորոյ՝ և Պետրոսն և այլ չարք ոմանք ի բարկութիւն դրդեալ, գնացեալ առ Ղարախանօղլին չարախօսութիւն են արարեալ զնմանէ առաջի նորա, ասելով թէ՝ Սուքիաս վարդապետն ԽՆ ղուուշ գրամ կաշառ առեալ ի յազափ տղայէ միոջէ զկինն հանգուցելոյն պսակեալ է ընդ նմա։ Զոր իմացեալ Ղարախանօղլին՝ զՍուքիաս վարդապետն գոչեալ է առ ինքն, և բարկացեալ ի վերայ նորա, և ըմանէ ի ձեռն Միրզային մերոյ զանգատ գրեալ առ սրբազան վեհըն։ (Որպէս ի յունվարի ԻԹ ասացաւ.) և սրբազան վեհըն գրեաց Ղարախանօղլին զվերոյյիշեալ զանցսն (որպէս ասելոց եմք), և ծանոյց սմա զգրեալն։

Թուղթ ես առ Ղարախանօղլին հաճի Ջալալին գրեաց (որ ի յունվարի ԻԹ յիշեցաւ.) որում և ծանոյց զվերոյյիշեալ իրակութիւնսն։ Եւ դրեաց՝ զի զՍուքիաս վարդապետն և զամբաստանողսն նորին կոչեալ առ ինքն իրաւանցն վերահասու լիցի, և զղատելին զո ոք և իցէ, դատեսցէ։

Թուղթ մի ես միամտութեան առ Իբրահիմ Աֆանտու վէքիլխարճ պարոն Գէորգն ղրեաց (որ ի յնվ. ԺԳ յիշեցեալ է.) ի պատասխանի թղթոյն։ Զի զՊօլսոյ եկեալ պահարանն ընդ Սուքիաս վարդապետի տըղային այժմ յղեալ էր առ սրբ. վեհըն։ Այլև՝ լուաք թէ՝ նորոգ Սարասկեար Դամադ Հիւսէյն փաշայն ի Կարնոյ այժմ եկեալ է ի Կարս։ Եւ որովհետև սրբ. վեհըն ըստ սովորութեանն հանդերձ ընծայիւք մարդ էր յղելոց առ նա, և շնորհաւորելոց զփաշայութիւն նորին, վասնորոյ պատուիրեաց սմա, զի զստոյգ գալն նորա, և զպատշաճաւոր ժամանակն մեր մարդ յղելոյն առ նա, դրեալ ծանուսցէ ինքեան, զի ըստ այնմ արասցէ։ Եւ զթուղթ Ղարախանօղլուն յըղեաց առ ինքն տալ նմա։ Յղեցան այսուքիկ ընդ Սուքիաս պետի յղեալ գրաբեր տղային։ Որ եւ ի ղեկ. Ը։

ՄԺԵ.

Ի Կարին՝ Առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն վասն դարձման տէր Վահանին ի տեղի իւր։ Եւ առ մհ. Թումանն և եղբայրն իւր շնորհակալութիւն՝ վասն յղեալ հոգեբաժնին։

Թուղթ միամտութեան գրեաց սրբ. վեհըն առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն ի Կարին վասն տէր Վահանին։ Զի նա քան զայս յառաջ վասն վրդովման կողմանցն Բայազիտու խոյս տուեալ անտի՝ երկոքին որդովքն իւրովք եկն ի սուրբ Աթոռս, և ժամանակ ինչ եկաց աստ։ Մինչև խաղաղասցի խռովութիւն կողմանցն, (զի խռովութիւն և պատերազմ մեծ էր ի մէջ Ալզի և Իսաղ փաշայիցն, վասն փաշայութեան տեղւոյն։ Զի Ալզի փաշայն ըստ օրինին տիրեալ ունէր զերկիրն, և Իսաղ փաշայն ոխացեալ ընդ նմա, կամէր ի ձեռն կաշառաց և բռնութեամբ առ ինքն գրաւել զփաշայութիւն նորին։ Բայց ոչ կարէր, զի իշխօղն տեղւոյս Հիւսէին Ալիխանն օգնական էր նմա։) Եւ այժմ լուաւ թէ՝ սակաւ ինչ խաղաղացեալ է կողմն այն, վասնորոյ՝ վերադարձաւ ի տուն իւր։ Ընդ որում գրեաց սրբ. վեհըն մհ. Փիլիպպոսին. ծանուցանելով նմա զդարձն տէր Վահանին ի տեղի իւր, զի այնու միամտեալ, այսուհետև զթուղթ և զայլ ինչ յղելոյ լիցի առ մեզ, առ նա յղեսցէ ի Բայազիտ, զի նա անտի առ մեզ հասուսցէ։ Ծանոյց և զհասանելն առ մեզ ի Պօլսոյ եկեալ թղթոցն ի ձեռն պարոն Գէորգին։ (որպէս ի վերդ յամսոյս Ը ի թղթոջ նորին ասացաւ.) որում և խոստացաւ գրել զպատասխանիսն թղթոցն և յղել առ ինքն, զի յղեսցէ ի տեղի իւր։ Թուղթ մի ևս մխիթարութեան և շնորհակալութեան առ Ագուլեցի մհ. Թօմայն և յեղբայրն իւր պարոն Պետրոսն գրեաց։ Զի վասն մահուան որդւոյն իւրեանց Ահարօնին և Յովաննիսին՝ (զորս ի Դեանջայու ճանապարհին աւաղակք սպանեալ էին, և զրեռինսն իւրեանց տարեալ որպէս ի մյս. ԺԹ ասացեալ է,) ընդ տէր Վահանին մէկ պէկիր էին յղեալ ի սուրբ Աթոռս իբր հոգեբաժին։ Զորս ետուք տէր Վահանին, զի տարեալ ընդ իւր ի Բայազիտ, զթուղթն նոցա ինքեանց տացէ, և զմհ. Փիլիպոսին առ ինքըն յղեսցէ ի Կարին։ Որ եւ ընդ հոնտցի տէր Նիկողայոսի եղբայր Պետրոսին ի փետրվարի ԺԸ։

Ի Թիֆլիզ՝ Առ տեղւոյ Առաջնորդ Յովաննէս պետըն և առ Իւանէ Դիւանբէկն վասն անկարգ արարմանց չիք Մկրտումին և տէր Եսայուն և տէր Խաչատուրին։

Թուղթ գրեաց սրբ. վեհըն առ պարոն Իօվանէ Դիւանբէկն ի պատասխանի թղթոյն։ Որ էր պատասխանի թղթոյ սրբ. վեհին, զոր քան զայս յառաջ ի նոյ. ԺԷ ընդ տեղւոյ Առաջնորդ Յովաննէս վարդապետին գրեաց առ նա։ Որ էր յանձնարարութիւն վասն Յովաննէս վարդապետին, և վասն Դաւիթ վարդապետին զրանս ինչ մեղադրութեան։ Որոյ աղագաւ և նա այժմ զմիամտութիւն էր գրեալ առ սրբ. վեհըն։ Եւ սրբ. վեհըն գրեաց առ նա թէ՝ զթուղթդ ընթերցեալ՝ հաւատացաք ասէ գրեցելոցն քոց, և միամտեցաք զքէն. դու ևս ի կողմանէ մերմէ լեր միամիտ, զի ստոյգ սիրելի մեր ես ասէ, որպէս և յառաջն էիր։ Այլև՝ Թաղօյենց չիք Մկրտումն յորժամ աստէն գնաց ի քաղաքն, ընդ չիք տէր Եսայուն միաբանեալ, զրազում բամբասանս էին արարեալ զսրբ. վեհէն. ասելով թէ՝ զՀախպատու արդիւնսն գաւթել կամի սրբ. վեհըն. և այլ ինչ այսպիսի բանք շատ։ Զոր իմացեալ սրբ. վեհըն, այժմ զօրինակն թղթոյ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետին և այլոցն (զոր ի յնվ. ԺԹ գրեաց առ նոսա) առեալ յղեաց առ նա, զի այնու իմացեալ զայս բամբասանս չիք Մկրտումին, ի դիպօղ ժամու ծանուսցէ Արքային։ Եւ զոր ինչ պատասխանի ի նմանէ ընկալցի, գրեալ մի ըստ միոջէ ծանուսցէ ինքեան։ Փուսուլայ ևս գրեաց առ սա սրբ. վեհն ասել Արքային, զի վասն Հախպատու արդեանցն զմէկ զանձապետ կարգեսցէ, և կամ Առաջնորդին յանձնեսցէ, զի զարդիւնսըն Հախպատու ժողովեալ առ ինքն պահեսցէ, զի մի ոք ձեռնամուխ լիցի նմա, և

յետոյ ինքն որպէս կամիցի, այնպէս արասցէ։ Եւ զի՝ չիք տէր Եսային և չիք տէր Խաչատուրն ի դուռն Արքային անկեալ, վասն օգտի իւրեանց ճորտ յաւելացուցանէին վասն նորա։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ ես ի վերայ դոցա ոչ վասն այնորիկ բարկանամ առէ զի Արքային օգուտ ծառայութիւն առնեն, զի այդ ոչ է առէ ինձ հոգ։ Այլ իմ ասելս վասն այնորիկ է առէ. եթէ քահանայ է՝ ինձ՝ և իմ կանօնիս հնազանդ պարտի լինիլ, և ոչ եթէ ի դրունս արքունեաց շրջիլ, և նոքօք ընդ մեզ մաքառել յայտնապէս փոխանակ հնազանդութեան։ Ի հարկէ վերջն այնպէս պահանջէ առէ իրաւունքն, զի զկարգն ձգեսցէ, և արքունեաց ծառայեսցէ այնպիսին որպէս կանօնն վճռէ։ Այլ և տէր Մելքիսէթն դիր էր դրեալ մեր Մկրտիչ վարդապետին. և չիք Մկրտումն զթուղթն զայն ի բերողէն առեալ, տարեալ տուեալ էր Արքային։ Եւ սրբ. վեհն այսր աղագաւ գրեաց նմա թէ՝ զայն դիրն որ ետես Արքայն, եթէ մէկ խայինութիւն կայր ի նմա, վասնէ՞ր ոչ պատժեաց զգրողն. և թէ ոչ, զայն չիք Մկրտումն ընդէ՞ր ոչ պատժեաց առէ, որ յայտնապէս լրբութիւն առնէ ընդդէմ մեզ։ Եւ պատուէր՝ զայսոսիկ ևս ծանուցանել Արքային, զի գիտասցէ առէ զցաւս մեր, և մի վաճառեսցէ առէ զպատիւ և զսէր մեր այնպիսեաց լրբից։

Թուղթ մի ևս սրբ. վեհըն սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին գրեցոյց առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն, զի վասն անկարգ արարմանցն (զոր ի վերդ յիշեցաք.) չիք աէր Եսայուն և չիք տէր Խաչատուրին մի խօսեսցի, զի մի՛ գուցէ ծանր թուեսցի այս Արքային, և գործոյն իւրոյ վնաս լիցի։ Զի զանկարգ արարս նոցին ոչ կամելով սորա, գնացեալ առ Արքայն ծանուցեալ էր նմա, դի սաստեսցէ նոցա, առ ի խափանել զչար սովորութիւն իւրեանց։ Փուսուլայ մի ևս սրբ. վեհն իւրով ձեռամբն գրեաց առ սա այսր աղագաւ ըստ այսմ մտաց։ Զորս Գեօրեցի պարոն Եսայուն ետուք տանել ընդ իւր յԵրևան, և անտի ընդ հաւատարմի յղել ի Թիֆլիզ։ Ի մրտ. Ն։

ՄԺԶ.

Ի Վան՝ ի Մուշ՝ եւ ի Բաղէշ։ Առ ոմանս անձինս յանձնարարութիւն վասըն Վանայ նուիրակ եւ Առաջնորդ Պաղտասար վարդապետին, եւ վասն Յօնան սլետի հաշուին։

Վանայ նուիրակ և Առաջնորդ Պազտասար վարդապետն զՎան նուիրակեալ էր, և երթալոց էր ի շրջակայսն նորին՝ այսինքն ի Մուշ և ի Բաղէշ, զի զնոսա ևս նուիրակեսցէ։ Վասնորոյ՝ և ի վերայ գլխաւոր անձանց տեղեացն ղյանձնարարութեան թուղթըս էր խնդրեալ ի սրբ. վեհէն վասն իւր։ Զորս և սրբ. վեհն ըստ խնդրոյ նորին գըրեալ յղեաց առ նա։ Որք են։

Ի Մուշ։ Թուղթ յանձնարարութեան վասըն Պազտասար վարդապետին առ Մատնավանից Առաջնորդ Սուքիաս վարդապետն՝ առ սուրբ Յօհաննու վանից Առաջնորդ Մելքիսէթ վարդապետն, և առ սուրբ Առաքելոց Վանից Գասպար վարդապետն գրեաց։ Եւ վասն նոցա ևս զԳ նորատիպ Աղօթից գիրք յղեաց յընծայ։

Թուղթ ևս ըստ այսց ոճի առ Ռէս Մարդարն գրեաց։ Թուղթ մի ևս առ Մշու սրբոյ Կարապետի վանից Առաջնորդ Յօնան վարդապետն գրեաց, որ ի յնվ...ի յերկրորդ թղթոջն Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին յիշեցեալ է,) ի պատասխանի յնվ. ԺԲ գրեցեալ թղթոյն։ Որ և զերկուս խնդիրս էր արարեալ ի սրբ. վեհէն։ Մի՝ դի վասն ոչ գալստեան իւրոյ ի սուրբ Աթոռս, ներեսցէ։ Եւ երկրորդ՝ զի մի չարախօսացն իւրոց լուեալ ի վերայ իւր զայրասցի։ Եւ սրբ. վեհըն ևս վասն Բց խնդրոց նորին ուրոյն ուրոյն զպատասխանիս դրեաց։ Առաջին պատասխանիքն էր այս, զի ես ի գիրս իմ ոչ եմ առէ հարկեալ քեզ, թէ պարտիս գալ ի սուրբ Աթոռս։ Կրկին կարդա առէ զգիրս իմ և տես, զի ես վնաս ունիմ առէ ի գալստենէդ, և ոչ օգուտ։ Որպէս յառաջնում գալստեանդ տեսի առէ, զի ես առաւել քան զարժանն պատուեցի առէ զքեզ և փառաւորեցի որպէս վայել էր ինձ, բայց դու ոչ թէ ըստ արժանւոյն, այլ ըստ մասին ևս

ոչ արարեր, և ոչ գիտացեր բնաւ։ Զայլն դու մտածեա, և դատ արա ասէ ի քեզ։ Եւ վասն երկրորդ խնդրոյն այսպէս դրեաց առ նա թէ՝ զայն չարախօսսն զորս դու մարդ համարելով խօսակցիս ասէ ընդ նոսա, և հաւատաս որքան առ քեզ են, ես զայնպիսիսն ի տեղի մրճման ոչ դնեմ ասէ, ուր թնա բերելն առ մեզ, և խօսակցիլ ընդ նոսա։ Զի իմ վէճ և խօսակցութիւն առ մասսեայպէս լերինսն են ասէ, զորոց գծանրութիւնն միշտ կրեմ, Ուրեմն՝ առ Բ խնդիրդ ես ասէ լեր միամիտ, զի ոչ զդալդ քո կամիմ ասէ, և ոչ չարախօսացն քոց լսեմ։ Եւ մանաւանդ զխռովութիւն ոչ ունիմ ասէ ընդ քեզ. այլ զնուիրակութիւն սրբոյ Աթոռոյս պահանջեմ ասէ ի քէն։ Եւ երբ տացես ասէ զնուիրակութիւնդ, սիրելի ես լինելոց ասէ մեզ։ Այլև սա վասն նուիրակութեան հաշուին իւրոյ զՊաղտասար վարդապետն միջնորդ էր արկեալ, զի տացէ նմա զնուիրակութեան հաշիւն իւր։ և Պաղտասար վարդապետն ևս ի կողմանէ սորին երաշխաւոր լինելով, (որպէս յետոյ ասելոց եմք ի թղթոջ նորին.) դրեալ էր աղերսիւ առ սրբ. վեհն վասն նորա, զի ներեսցէ նմա ժամանակ ինչ. մինչև գնացեալ առ նա, առցէ զնուիրակութիւն ի նմանէ։ Եւ սրբ. վեհըն ևս ըստ խնդրոյ և պայմանի նորին թոյլ ետ։ Զոր և ծանոյց նմա։ Եւ գրէր ես թէ՝ բաց ի Պաղտասար վարդապետէն յայս երկիրս նուիրակ ոչ էր մտեալ։ Առ որ գրեաց սրբ. վեհն թէ՝ կարի զարմանամ ասէ, զի յամենայն երկիր ուր հայք կան և ընդ իշխանութեամբ այլազգեաց, սրբոյ Աթոռոյս նուիրակունքն համարձակ մտանեն և ելանեն. միայն յերկիրդ ձեր ոչ կարեն մտանել։ Միթէ միայն յայդ երկիրդ ասէ գոյ բռնաւոր։ Կամ թէ ծր բռնաւոր ի նուիրակացն մերոց ԵԾ և ԷԾ գրուշ է առեալ ասէ, որ դուք այդքան տայք աւելորդով, և պարծիք ևս թէ՝ այսքան ետուք՝ հազիւ. թէ հրաման առաք, այդ ոչ այլ ինչ նշանակէ ասէ, եթէ ոչ ճանապարհ, զի և այլք տռնուցուն։ Ուրեմն լաւ է ասէ ոչ գալ նուիրակին մերոյ յայդ երկիր, որպէս մինչև ցայժմ ոչ է եկեալ ըստ դրեցելոցն ձերոց։ Քան թէ գալ, զմասն առնուլ, և զբոլորն տալ։ Զոր և ծանոյց սմա առ Պաղտասար վարդապետն ես գրելն։ Եւ պատուէր՝ զի ի դնալն Պաղտասար վարդապետին անդ, զմէկ պատշաճաւոր ընծայիւք գնացեալ տեսցեն զԲէկն, որում և ծանուսցեն զկարգն նուիրակացն մերոց։ Ասելով նմա թէ՝ Էջմիածնի նուիրակունքն յամենայն երկիր գնան. բայց բռնաւոր մի ի նոցանէ ոչինչ պահանջէ։ Դու ևս պարտիս այսպէս առնել։ Եթէ նա սիրով ընդունիցի ասէ զընծայն, բարի է. և թէ ոչ, բնաւ ոչ նուիրակեսցէ անդ, այլ ելցէ անտի։ Առ Բէկն ևս գրեաց զայս։ Որում և ծանոյց զգրելն։ Առ սա ևս զմէկ նորատիպ Աղօթից գիրք յղեաց։

Թուղթ ևս առ նոյն սրբոյ Կարապետի վանից Վէքիլ Պետրոս վարդապետն գրեաց, ի պատասխանի ի յնվ. ԺԲ դրեցեալ։ Որ էր ըստ մտաց թղթոյ Յօնան պետին։ Զի սա ևս էր ըստ Յօնան պետին զնոյն զերկուսին խնդիրսն արարեալ ի սրբ. վեհէն։ Նախ վասըն ոչ գալստեան իւրեանց ի սուրբ Աթոռս ներեսցէ ինքեանց, և երկրորդ՝ չարախօսացըն իւրեանց ոչ լուիցէ բնաւ։ Եւ սրբ. վեհըն որպէս Յօնան պետին, և սմա ևս զմիամտութիւն գրեաց վասն խնդրոցն իւրոց։ Յիշեցոյց սմա և զգրելն առ Յօնան պետն վասն նուիրակութեան հաշուին իւրոյ։ Զոր խնդրէր յինքեանց։ Առ սա ևս զմէկ նորատիպ Աղօթից գիրք յղեաց սրբ. վեհն։

Թուղթ ևս առ տեղւոյ իշխօղ Մախսուտբէկն։ Սէր և յանձնարարութիւն վասն Պաղտասար վարդապետին։ Եւ ի նուիրակացն մերոց դրամ պահանջէր սա։ Վասնորոյ և սրբ. վեհն անորոշակի յիշեցոյց սմա զայս։ Յորմէ և խնդրեաց, զի զՊաղտասար վարդապետն վասն խաթեր իւրոյ ի խնամս իւր ունիցի, զի մի ոք իշխեսցէ զիր ինչ պահանջել ի նմանէ։ Եւ այլք այսպիսի բանք։

Ի Բաղէշ Բ թուղթ ևս յանձնարարութեան վասն Պաղտասար վարդապետին առ Ամրտօլու և Խնդրակատար Վանից Առաջնորդք Զաքարիա և Վարդան վարդապետսն գրեաց։ Առ նոսա ևս զմէն մի Աղօթից գիրք յղեաց։ Ժ Թուղթ ևս յանձնարարութեան վասն Պաղտասար վարդապետին՝ առ խօջայ Մալիկն՝ մհ. Յովաննէսն՝ Ռէս Խաչատուրըն՝ և եղբայրն իւր մհ. Ղազարն՝ և յորդին իւր Պապայն։ Առ մհ. Սիրունն՝ Խօջայ Թումօն՝ Խօջայ Գրիգորն՝ Խօջայ Միլիտոնն, և յեղբայրսն իւր մհ. Աւքիանն և պարոն

Աւագն։ Խոջայ Բարսեղն, և յորդին իւր պարոն Գասպարն, առ միւս մհ. Պապայն՝ Խոջայ Յովաննէսն, և յորդին իւր մհ. Աւագն գրեաց։ Բ թուղթ ես առ սրբոյ Աթոռոյս զանձապետ մհ. Պապայն, և Յովհաննէսն գրեաց։ Յանձնարարութիւն վասն Պաղտասար պետին, և պատուէր՝ վասն գործոցն իւրեանց։

Թուղթ ես սիրոյ և յանձնարարութեան վասն Պաղտասար վարդապետին՝ առ տեղւոյ իշխող Շարաբ խանն գրեաց։ Որ էր ըստ մտաց թղթոյ Մշու իշխող Մախսուտբէկին։

Ի Վան. Թուղթ ես սիրոյ և յանձնարարութեան վասն Պաղտասար վարդապետին առ Վանայ իշխող Ահմատ փաշայն գրեաց։ Եւ վասն նորա Բ հոխայ վարդեջուր յղեաց։ Այս այն Ահմատ փաշայն է՝ որ երբեմն փաշայ էր ի Կարս. և ի գնալն Աարասկեար Մուստաֆայ փաշային ի Շամ, փոխանակ նորին Սարասկեար ես եղև տեղւոյն։ Իսկ յետոյ վասն անցից ինչ բարկացեալ ի վերայ նորա թագաւորն, մանդուլ արար զնա անտի, և յղեաց ի Վան։ Եւ փոխարէն նորին զԴամատ Հիւսէյն փաշայն Սարասկեար արարեալ յղեաց ի Կարս։ Իսկ նա անողջանալի վէրս ունելով ի մարմինն իւր, յետ քանեաց աւուրց վախճանեցաւ։

Թուղթ մի ես առ սոյն փաշայի սառաֆ տիրացու Յակորն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Զի բոա խնդրոյ փաշային զորպիսութիւնս էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Եւ սրբ. վեհըն գրեաց առ նա զանցսըն Ախլցխայու։ Զի քան զայս յառաջ վըրացին և բաշաչուխն գնացին ի վերայ Ախլցխայու։ Եւ սակաւ ինչ մատուցեալ ընդ օսմանցւոցն, յաղթեցին նոցա. և բազում աւարաւ դարձան ի տեղիս իւրեանց։ Եւ յայսմ միջոցի ես Ախլցխայու Սուլէյման փաշայն զօրս յղեաց ի Բաշաչուխ, որք գընացեալք անդ, ընդ բաշաչուխին յիբեարս դիպեցան. յորոց փոքր ինչ կոտորուածք եղև։ Եւ այժմ դարձեալ ի տեղիս իւրեանց խաղաղ նստեալ կան։ Եւ Եաղուպ Աղայն որ փաշայ եղև, այժմ յԱխլցխայու եկեալ ի Կարս, անդ հանդարտ նստեալ կայ։ Որում և ծանոյց ես զմահ Գամատ Հիւսէին փաշային, և վասն փաշային իւրոյ Բ հոխայ վարդեջուր յղելն։ Եւ պատուէր՝ զի զթուղթըն և զվարդեջուրն ընդ Պաղտասար վարդապետին ի միասին տարեալ մատուսցեն փաշային։ Եւ շնորհակալութիւն ես գրեաց առ սա վասն արարեալ բարերարութեանն Պաղտասար վարդապետին, զի Մահմատ բէկըն ոճն գնացեալ առ փաշայն, ամբաստանութիւն էր արարեալ զսրբ. վեհէն թէ՝ յերկրէս մերմէ զրամ ժողովեալ, վրացուն յղէ։ Եւ փաշայն ես հաւատացեալ բանից նորին, փութով մուպաշիր է յղեալ, զի ըմբռնեալ զնա տարցեն առ ինքն։ Զոր նա գիտացեալ, վասըն երկիւղին փախուցեալ է յուրեք և թագուցեալ։ Զոր իմացեալ սորա, ծանուցեալ է փաշային. և փաշայն իբրև իմացեալ է ի սըրմանէ թէ Խալիֆայի մարդն է նա, փութով կոչեալ զնա առ ինքն, սիրով ընկալեալ է և մեծարեալ, և զՄահմատբէկ զաւաճանողն և զրպարտօղն նորին անարգեալ և արհամարհեալ։ Եւ յանձնարարութիւն՝ վասն Պաղտասար վարդապետին։

Թուղթ ես առ Վանայ նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վարդապետն գրեաց ի պատասխանի ի փար. Ե դրեցեալ թղթոյն։ Եւ զվերոյյիշեալ թուղթսն ըստ խնդրոյ սորին դրեալ և կնքեալ յղեաց առ ինքն, զի ընդ իւր տարեալ իւրաքանչիւր տեարցն տացէ։ Իսկ զթուղթն Յօնան վարդապետին թարց կնքոյն յղեաց առ սա, զի ընթերցցի, և ապա կնքեալ տացէ նմա։ Եւ զնա միամտեցուսցէ ի սնոտի կարծեացն իւրոց։ Նախ վասըն ոչ գալստեան իւրոյ ի սուրբ Աթոռս, և երկրորդ վասն չարախօսացն իւրոց։ Զի վասըն նորա իրիջայ էր գրեալ սա առ սրբ. վեհըն ներել զյանցանս նորին, և զմխիթարութեան թուղթ դրել առ նա։ Զոր և գրեաց։ Եւ ի կողմանէ նորին երաշխաւոր էր եղեալ, զի ընդ իւր բերցէ ի սուրբ Աթոռս։ Եւ սրբ. վեհն առ այս մեղադրեաց սմա թէ՝ Երբ հարկիցէ ասէ քեզ զՅօնան վարդապետն բերել ընդ քեզ ի սուրբ Աթոռս։ Զի ես զիմ նուիրանութիւնն խնդրեմ առէ ի նմանէ և ոչ զինքն։ Եւ պատուէր՝ զի ի գնալն իւր ի Մուշ և ի Բաղէշ, սակաւ ընծայիւք տեսցէ զիշխողսն տեղեացն, և ժողովեսցէ զնուիրակութիւն։ Զի իշխողք կողմանցն քան զայլ իշխողս յոլով զրամ պահանջէին ի նուիրակացն մերոց։ Որ էր էԾ և ԵԾ զօլաբայ։ Եւ Մեռոն

էր խնդրեալ ի մէնջ. որում Գ հոխայ Մեռոն յղեցաք։ Եւ վասն վանիցն իւրոց գժողովարարութեան կոնդակ ես էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Բայց վասն վաանկաւորութեան ժամանակիս, կոնդակ ոչ յղեաց առ նա սրբ. վեհն։ Եւ սրբոյն Մեծօփայ Վանից Առաջնորդ Առդոմօն պետն ըստ հարկելոյ սրբ. վեհին խոստացեալ էր սմա ի գարնանս գալ ի սուրբ Աթոռս։ Զոր և ծանուցեալ էր սա սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն ես թոյլ ետ, և սպասէր գալստեան նորին։ Նւ սպառնալիք՝ մինչ ոչ եկեսցէ։ Եւ պատուէր՝ զի ուր լինիլն Ցամթայ նուիրակ հանգուցեալ Մինաս վարդապետի սպասաւոր Աստուածատուր վարդապետին իմացեալ, ծանուսցէ ինքեան, քանզի Ցամթայ Առաջնորդ և նուիրակ Կարապետ վարդապետն վասն նորա դրեալ էր առ սրբ. վեհն թէ՝ հանդերձ ընռամրք յղեցի ի սուրբ Աթոռդ. իսկ նա տակաւին ոչ եկն ի սուրբ Աթոռս։ Փուսուլայ ես դրեաց առ սա։ Եւ վասն Ցօնան և Պետրոս պետին պատուիրեաց սմա, զի յառնուլն ի նմանէ զհաշիւն նուիրակութեան, մի՛ սակաւ բանիւք հաւանեսցի. այլ ջանասցէ զբոլոր նուիրակութիւնն առնուլ ի նոցանէ։ Եւ յոչ լրիւ տալն նոցա զնուիրակութիւն, հրաժարեսցի յերաշխաւորութենէն։ Զորս ի միում պահարանոջ եդեալ՝ ընդ գրաբեր Պաղտասար վարդապետի սպասաւոր Կարապետ տղային առ նա յղեցաք, յիւրաքանչիւր տեարսն հասուցանել։ Ել Կաբապետ տղայն ի մրտ. Է։

Ժողովարարութեան թուղթ տուաւ տիրացու Սուքիաս և Գալուստ անուամբ արանց ոմանց, ըստ խնդրոյ կարնեցւոցն։ Ի վերայ Կարնոյ և բոլոր շրջակայիցն նորին թարց պայմանի։ Որք էին կարնեցի, և յէրմասեայ դեզջէն։ Որք յառաջագոյն մեծատուն էին եղեալ, բայց յետոյ վասն իմիք պատճառի աղքատացեալ էին, և ի ներքոյ բազում պարտուց անկեալ։ Եւ թէպէտ զամենայն ինչս իւրեանց վաճառեալ էին և տուեալ պարտատերաց իւրեանց, բայց այնու ոչ էին զերծեալ ի պարտուց իւրեանց։ Այլ ԱՌ ԲԾ ղուռուշ ես էին մնացեալ տալիք նոցա։ Վասնորոյ՝ և մինն զեղբայրն և միւսն զորդին իւր աւանդ էին եդեալ առ այլազգի պարտատերսն իւրեանց։ Մինչև հատուցեն զմնացեալ դրամն ես։ Բայց ոչ ունելով յուստեք է ճար, վասնորոյ՝ և վկայական թղթով Կարնոյ Առաջնորդին՝ նուիրակին, և իշխանացն եկին առ սրբ. վեհն։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյ նոցա, թուղթ ետ սոցա։ Որք ելին ի մրա. ԺԵ։

ՌԺԼ.

Ի Բայազիտ՝ Առ տէր Վահանն եւ Մարզար Աղայն զրացասաց պատասխանի սակս խնդրոյն իւրեանց, որ վասն սրբոյն Թադէոսի Առաքելոյ Աջոյն։

Վասն սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից միաբան տիրանենց Պետրոս վարդապետին՝ քան ղայս յառաջ ի . . . գրեաց սրբ. վեհն Գիլանու նուիրակ և առաջնորդ Աւետիս վարդապետին, զի զսուրբ Աջն Թադէոսի Առաքելոյն՝ զկոնդակն զոր ինքն տուեալ էր նմա, և զժողովեալ արդիւնսն առցէ ի նմանէ։ Եւ նա ևս ըստ պատուիրի սրբ. վեհին առեալ էր։ Զի նա յայսքան ամս կոնդակաւ սրբ. վեհին զդրամս և զինչսն ժողովեալ, աստ և անդ վատնեալ էր։ Եւ բաց յայսցանէ՝ ի սրբոյ Աջոյն զմասն մասն հատեալ, աստ և անդ լռելեայն վաճառեալ էր։ Զոր իմացեալ Աւետիս վարդապետին, զմասն մի ի սուրբ Աջոյն առ քահանայ ոմն գտեալ էր, և յետս առեալ։ Զոր լուեալ Պետրոս վարդապետն, վասն երկիւղին մեղայական թուղթ էր գրեալ Աւետիս վարդապետին, զի մի խայտառակեսցէ զինքն։ Եւ բաց յանօրինակ արարմանցս, յաւելեալ էր և զայս. զի զկոնդակի թիւն որ էր ԺԲ քակեալ էր և ԺԶ շինեալ։ Զայս ամենայն չարիս գործեալ էր նա։ Եւ յորժամ Աւետիս վարդապետն աւարտեալ զգործն նուիրակութեան եկն ի սուրբ Աթոռս, եբեր ընդ իւր զսուրբ Աջն և զկոնդակըն, և եցոյց սրբ. վեհին զբեկեալ մասն սրբոյ Աջոյն, և զկոնդակի փոխեալ թիւն։ Եւ յայսմ միջոցի՝ քանի մի անձինք ի Բայազիտու եկին ի սուրբ Աթոռս յուխտ։ Որոց գլխաւորքն էին տէր Պետրոսն՝ Մարդար Աղայի քեռորդի Պաղտասարն, և Թումայն։ Ընդ որս տէր Վահանն և Մարդար

Աղայն ըստ խնդրոյ սրբոյն Թադէոսի Առաքելոյ վանից Առաջնորդ Եսայեայ վարդապետին, աղաչանաց թուղթ էին դրեալ առ սրբ. վեհն, զի զսուրբ Աջն Թադէոսի Առաքելոյն ե զկոնդակն շնորհեսցէ նմա։ Բայց ոչ ետ սրբ. վեհն։ Այլ զսուրբ Աջն աստ պահել կամեցաւ, ոչ ես հաւատալով նոցա։ Եւ ի հաւաստութիւն բանիս, յաւուր միում հանդէս արարեալ ի ներկայութեան ընաւից եպիսկոպոսաց ղրայազիտցիսն կոչեաց առ ինքն. ե րացեալ զսուրբ Աջն՝ եցոյց նոցա զրեկեալ մասն, ե զհատեալ տեղին, զի երթեալ պատմեսցեն իշխանաց տեղւոյն, վասն ոչ տալոյն յետս զսուրբ Աջն, անմեղադիր արասցեն զինքն։ Եւ ի պատասխանի թղթոյ նոցա, զթուղթ դրեաց առ տէր Վահանն ե Մարգար Աղայն։ Որոց ե պատուիրեաց՝ զի վերոյյիշեալ եղելութիւնսն ի նոցանէ հարցեալ իմասցին, ե վասն ոչ տալոյն իւրոյ զսուրբ Աջն ե զկոնդակն յետս, անմեղադրելի արասցեն զինքն։ Եւ ի ստուգութիւն եղելութեանս, զօրինակն մեղայական թղթոյ պետրոս վարդապետին առեալ, ընդ թղթոյս յղեաց առ նոսա, զի տեսցեն՝ որով հաւաստի գոլ իմասցին զայս եղելութեանս։ Իսկ զդրամն (ԻԳ) զոր Աւետիս վարդապետն անգ առեալ էր ի Պետրոս վարդապետէն, ի նըմանէ զԺ թումանն սրբ. վեհն յառաջագոյն հասոյց Եսայի վարդապետին, մինչ յայսմ աժի եկն ի տեսութիւն ինքեան։ Եւ վասն մնացեալ դրամոյն (որ էր ԺԳ թուման.) այժըմ գրեցոյց սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին առ տէր Վահանն, զի տացէ Եսայի վարդապետին, և զապզ առցէ ի նըմանէ։ Զայս պատուէր՝ ինքն սրբ. վեհն ես գրեաց առ տէր Վահանն։ Զորս ի միում պահարանոջ եդեալ, ընդ Մարգար Աղայի քեռորդի Պաղտասարին առ տէր Վահանն ե Մարգար Աղայն յղեցաք ի Բայազիտ։ Եկին Բայազիտցիքն ի սրբոյ Աթոռոյս, ի մրտ. Ժէ։

ՄԺԲ.

Նստուցանելն Պօլսեցւոց զԶաքարիա վարդապետն պատրիարք տեղւոյն, եւ զբազմակնիք մահսար յղելն առ սրբ. վեհն սակս նորա, եւ խնդրելն զկոնդակ հաստատութեան եւ շնորհաւորութեան վասն նորա։ Եւ առ Զաքարիա վարդապետն եւ իշխանսն զմխամտութիւն վասն կոնդակին եւ այլ թղթոցն։ Եւ առ Մեհրաւլն եւս զպատուէր՝ վասն համբաւոյ զալստեան զօրացն Քեարիմխանին։

Ըստորում ի յնվ. ԻԷ ասացաք զպատրիարգութեան Զաքարիա վարդապետին, զի թէպէտ յայնժամ վասն պատրիարգութեան նորա ոմանք անձինք դրեալ էին առ սրբ. վեհն, բայց նա ոչ հաւատայր նոցա, քանզի բանն դեռ ի կարծիս էր։ Զի ի Պօլսեցւոցն ոչ դոյր մահսար վասն պատրիարգութեան Զաքարիա վարդապետին, ե ոչ ի նմանէ հաւաստի գիր վասն այսր։ Իսկ այժմ ի Պօլսեցւոցն բազմակնիք մահսար եկն առ սրբ. վեհն պատրիարգութեան Զաքարիա վարդապետին։ Որք համակամութեամբ միմեանց զպատրիարգ Գրիգոր վարդապետն հանեալ էին ի պատրիարգութենէն, ե դԶաքարիա վարդապետն ի տեղի նորին պատրիարգ կացուցեալ։ Որք ե բազմակնիք մահսար արարեալ յղեալ էին առ սրբ. վեհն վասն նորա. խնդրեալ էին աղերսիւ՝ զի և ինքն ես հաճեսցի ընդ այս, ե վասն հաստատութեան պատրիարգութեան նորա զմիամտական կոնդակ գրեալ յղեսցէ առ նա։ Զաքարիա վարդապետն ես էր դրեալ առ սրբ. վեհն զնոյն խնդիր վասն իւր։ Ընդ նմին և ծանուցեալ զորպէսն անցիցն վասն այսր։ Քանզի՝ գրէր զպատրիարգէ տեղւոյն թէ՝ իշխանք ոմանք քանիցս անգամ ի ծածուկ արզ ետուն թագաւորին հանել զսա ի պատրիարգութենէն. զի առ հասարակ թէ մեծք ե թէ փոքունք զզուեալ են ի սմանէ։ Եւ Արքայն վասն զոլոյն ի զբաղանսն ի կողմանէ մարտին չառնէր փոյթ։ Բայց ի շատ ստիպելն ե թախանձելն զնա արզայիւք, ե ի գրելն ի մէջ արզային զբանս ծանունս ե մեծամեծս զսրմանէ, խառնելով ընդ սմա ե զայլս ի մեծամեծ իշխանաց, իբր թէ նոքա են՝ որք թիկունք ե թեակիցք լինին նմա, և նա թեւով նոցին զմեծամեծ անհարազատութիւնս առնէ թագաւորութեան քում, որ ահա զմեծ մասն ազգիս մերոյ փռանկացոյց՝ կաշառակեր լինելով ի նոցունց և թուլատրելով,

զսևագլուխսն այնքան զզուեցոյց՝ որ ի Ֆռանկստան գնացին գլխաւորքն ի նոցանէ։ (Եւ այս գնացողքս էին Սարգիսն կեսարացի, և Պրուսայու Առաջնորդ Սամուէլ.) Եւ այլ քան զսոսա մեծամեծ և անյիշելի բանս էին գրեալ զսմանէ, որք ոչ միայն սմա, այլ և բազմաց գլխաւոր իշխանաց՝ եւ ազգիս մերոյ իսկ՝ յառաջանալոց էին ի սոցանէ վնասք մեծ։ Ապա և Արքայն կարի յոյժ զզուեալ հրամայեալ էր իշխանացն ամենեցուն գրել առ ինքն զարզայ, թէ ով ոք է կամեցօղն պատրիարգութեան նորին, և ով ոք ոչ։ Եւ նոքա միաբանութեամբ արզ ետուն թէ ոչ կամիմք զպատրիարգութիւն նորա։ Զի ուք բարեկամք և թեակիցք էին սորա, նոքա ես ակամայ խառնեցան ի մէջ այն արզային, զի մի հաղորգեսցին վնասուց նորին. զի գիտացին հաւաստեաւ, որ այլ չկամի Արքայն զպատրիարգութիւն սորա։ Ապա Արքայն հրամայեալ էր սոցա զպատշաճաւոր ոք ընտրել ի պատրիարքութիւն։ Եւ իշխանքն խնդրեցին ժամանակ ինչ ներել ինքեանց, մինչև միաբանութեամբ զհրամայեալն կատարեսցեն։ Եւ ի յամեցուցանելն սակաւիկ մի, կրկին բարկութեամբ մեծաւ հրաման ել յԱրքայէն, զի ընտրեսցեն զմի ոք ի պատրիարգութիւն, և արզ արասցեն ինքեան։ Եւ սոքա ժողովեալ ի սուրբ Աստուածածնի եկեղեցին, յետ բազմաց խօսից և խոկմանց՝ թէ զով ընտրեսցեն ի պատրիարգութիւն, ապա միաբանութեամբ՝ թէ քահանայք, թէ իշխանք, թէ ժողովուրդք, ստիպեցին զմեզ յանձն առնուլ զպատրիարգութիւնն։ Իսկ մեք պրնտապէս հրաժարեցաք, պատճառելով զպատճառս պէսպէսս. որոց գլխաւորագոյնն այս թէ՝ ես ի սրբ. վեհէն կու երկնչիմ, և ոչ կարեմ յանձն առնուլ զայդ գործ։ Իսկ սոքա ոչ թողին զմեզ ի կամս մեր. այլ բռնադատեցին մեծաւ թախանձանօք՝ յանձն առնուլ. ասելով թէ՝ մեք սրբ. վեհին ղաղաչանաց թուղթ դրելոց եմք, զի նա ևս հաճեսցի, և զհաստատութեան և շնորհաւորութեան կոնդակ գրեսցէ աստ վասն քոյ. և մի զայրասցի ընդ այս. եթէ զայրանալոց է՝ թող մեզ զայրասցի և ոչ քեզ. զի զայս մեք արարաք և ոչ դու։ Քանզի՝ մեք ոչ կամիմք այսուհետև, զի ոռանց կամաց սրբոյ Էջմիածնի նստօղ կաթուղիկոսին աստ պատրիարդ ընտրեսցի և նստցի. այլ կամք մեր այս է, զի տեղւոյս պաարիարգութիւնն և պատրիարգարանն ընդ իշխանութեամբ սրբոյ Էջմիածնի լիցի, զի նմա ընծայեցաք ահա զսոսա։ Զով ոք կամի կաթուղիկոսն, աստ պատրիարգ կացուսցէ իւրով հոգևոր հրամանաւն, և մեք աստ ի թագաւորէն զֆէրման հանցուք վասն նորա, զի նստեալ աստ՝ ղտեղւոյս պատրիարգութիւնն և զգործսըն սրբոյ Աթոռոյն ի միասին հոգասցէ։ Զայս ամենայն այսպէս պարագայիւք գրեալ էր Զաքարիա վարդապետն առ սրբ. վեհն։ Եւ բոլոր ժողովուրդքն Պօլսոյ ես մեծագոյն բազմակնիք մահսար մի դրեալ առ սրբ. վեհն վասն այսր, խնդրեալ էին հաճիլ ընդ այս և մի ինչ դժուարիլ կամ զայլ և այլ մրտածմունս առնել. կամ նեղասրտիլ վասն ոչ հարցանելոյ զինքն նախապէս՝ վասն կացուցանելոյն իւրեանց դԶաքարիա վարդապետն Պատրիարգ։ Քանզի՝ սաստիկ էր ասեն հրաման Արքային ի վերայ մեր. և թէ յայդր նախապէս գրէաք, բանն յետանայր, և վնաս մեծ քանթէ օգուտ յառաջանայր անտի։ Եւ զայլ ըստ սոցին բանս գրելով խնդրեալ էին գրել շուտով ղկոնդակ օրհնութեան, հաստատութեան և շնորհակալութեան վասն պատրիարգին, զի բաբւոքապէս կայասցի անունն և գործն, և ինքեանք ևս միամտեալ ուրախասցին։ Եւ ի ժամանիլն թղթոցս այսոցիկ առ սրբ. վեհն, ցնծացաւ մեծապէս։ Վասնորոյ՝ և զզանկակսն ետ հնչեցուցանել. և ժողովեալ զմիաբանսն սրբոյ Աթոռոյս ի ներս, ետ ընթեռնուլ ի ներկայութեան ըռնաւիցն զմեծ մահսարն Պօլսեցւոց և զայլ թուղթսն. և այնուհետև հողացաւ գրել զկոնդակ ի Պօլիս վասն պատրիարգութեան Զաքարիա վարդապետին, և այլոց թղթոցն ևս զպատասխանիս ըստ իւրաքանչիւրոյ պատշաճին։ Բայց յայսմ միջոցի համբաւ իմն եկն զՔեարիմ Խանէն թէ՝ վասն իմիք պատճառի բարկացեալ է ի վերայ իշխօղին տեղւոյս, վասնորոյ՝ և Շիրազու զզօրս պատրաստեալ յղէ ի վերայ սորա։ Եւ սա ևս մինչ լուաւ զգալուստն զօրաց Քեարիմ խանին ի վերայ իւր, վասն երկիւղին ամրացոյց զբերդըն։ Եւ զբազում սերմանելիս այսինքն ցորեան և գարի յերկրականացս բռնութեամբ առեալ տարաւ ներս։ Եւ ի ձեռն նոզրին

իւրոյ հաճի Մահմաալին ԲՃԾ խալվար ցորեան ես ի սրբ. վեհէն էառ փոխ. որոյ աղաղաւ և Նաղրին սանատ տալ եա սրբ. վեհին, զի ի ժամանակի հնձոցն հատուսցէ մեզ զփոխն։ Ցետ այսորիկ իբրև ետես սրբ. վեհն եթէ համբաւս այս օրաւուր ի վեր հնչէր, որոյ աղագաւ և կարի յամեցան պատասխանիք թղթոցն Պօլսեցւոց, և նոքա ես վասն յամեցման պատասխանեաց թղթոց իւրեանց և վասն պատրիարգութեան կոնդակին յերկրայս էին, վասնորոյ՝ զթուղթ միամտութեան գրեցոյց սպասաւորին իւրոյ Մըկրտիչ վարդապետին առ Պօլսոյ նուիրակ և նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետըն, ծանուցանելով զվերոյյիշեալ համբաւն. որ արգել զպատասխանիս թղթոցն Պօլսեցւոց։ Որում և խոստացաւ՝ յետ սակաւ միջոցի զկոնդակն պատրիարգութեան իւրոյ և զպատասխանիս թղթոցն գրել և յղել առ ինքն։ Եւ պատուէր՝ զի այսու վասն կոնդակին իւրոյ և պատասխանեաց թղթոցն՝ միամտեսցի, և իշխանացն ես ծանուսցէ զայս, զի նոքա ես միամտեսցին առ այս։ Եւ յայսմ միջոցի թագաւոր Օսմանցւոց Մուստաֆայն վախճանեալ էր. և փոխանակ նորին նստուցեալ էին թագաւոր զՍուլթան Համիթ ոմն ի նոյն ցեղէն։ Զոր այժմ ղրեալ էր սա սրբազանին։

Թուղթ ես առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն գրեցոյց նմա։ Ծանուցանելով զվերոյիշեալ զանցսն։ Եւ զթուղթ Զաքարիա վարդապետին յղեաց առ սա յղել ի Պօլիս։ Եւ պատուէր՝ զի ԲՃ օղմայ թուղթ. կամ որքան և գտցէ, առեալ յղեսցէ։ Նաև՝ գրեսցէ եղբօրն իւրոյ Խոջայ Նազարէթին, զի նա ես ԲՃ կամ ԳՃ օղմայ թուղթ առեալ յղեսցէ վասն տպագրատանն։ Այլև՝ Խոջայ Նազարէթն զինչսն Զարքեաղօղլուն յղեալ էր առ սա ի Կարին։ Զոր և ծանուցեալ էր սա սրբ. վեհին և հարցեալ թէ զինչ արասցէ։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց սմա պահել առ ինքն, մինչև յետոյ երբ գրեսցէ ինքեան, առ սուրբ Աթոռս յղեսցէ։ Թուղթ մի ես առ տէր Վահանն գրեաց ի Բայազիտ և զվերոյյիշեալ զերկուսին թուղթսն ընդ Խօջայ փայակին (որ ի վերայ Բայազիտու երթայր ի Խօյ.) յղեաց առ նա յղել առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն ի Կարին, զի նա զթուղթ Զաքարիա վարդապետին փութով յղեսցէ ի Պօլիս։

Թուղթ ես առ Ջուղայեցի տէր Յովաննէսի որդի տիրացու Սահփաննոսի օրթախ պարոն Նիկողայոսն ղրեաց ի Խօյ ի պատասխանի թղթոյն իւրոյ։ Զի սա ի կողմանէ տիրացու Ստեփաննոսի մեզ տալեաց գըրամոյն՝ (որպէս ի փտր. Ե թղթոջ նորին ասացաւ.) գիտութեամբ նորին ղրամ էր յըղեալ առ տէր Վահանն ի Բայազիտ, (ծ) յղել ի սուրբ Աթոռս։ Եւ այժմ ծանուցեալ էր սրբ. վեհին զյղելն։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն զմիամտութիւն գրեաց առ նա, զի զդրամն զայն (ծ) առ մեզ հասեալ իմասցի և միամտեսցի։ Որում և պատուիրեաց՝ դի թէ տիրացու Սահփաննոսն անդ իցէ, զթուղթսն զայս ցուցցէ սմա, զի նա ես միամտեսցի։ Բայց թէ ի Թարվէզ իցէ, վասն դըրամոյն զմիամտութիւն գրեսցէ առ նա։ Թուղթ մի ես առ պարոն Մեհրապն գրեաց ի Խօյ վասն համբաւոյ գալստեան զօրացն Քեարիմխանին։ Զոր և ընդ յատուկ փայեկի յղեաց առ նա։ Պատուիրելով նմա, զի թէ վասն այս համբաւոյս զհաւաստի որպիսութիւն ինչ գիտիցէ, ընդ փայեկին փութով գրեալ ծանուսցէ ինքեան։ Եւ զթուղթ պարոն Նիկողայոսին յղեաց առ սա տալ նմա։ Եւ որովհետև փայեակն (զոր ի վարձու կալեալ յղեցաք ի Խօյ առ պարոն Մեհրապըն.) ի վերայ Բայազիտու էր երթալոց ի Խօյ, վասնորոյ՝ և զվերոյյիշեալ թուղթսն ես ետուք նմա տանիլ առ տէր Վահանն։ Որովք եւ փայեկն ի մրա. ԻԲ։

Ի Կարս՝ Առ Եաղուպ Աղայն՝ ի պատասխանի որպիսահարց Թղթոյն։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Եաղուպ Աղայն ի Կարս՝ ի պատասխանի թղթոյն։ Զի լուեալ էր զգալուստ զօրացն Քեարիմխանին, վասնորոյ՝ ընդ յատուկ փայեկի գրեալ էր առ սրբ. վեհն, և խնդրեալ զի զստոյգն համբաւոյս փութով գրեալ ծանուսցէ ինքեան։ Եւ բաց յայսմանէ եթէ զայլ որպիսութիւն ես գիտիցէ, զայն ես գրեսցէ ինքեան։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյ նորին զպատշաճաւոր պատասխանիս գրեաց առ նա։ Զի զգալուստ զօրացն Քեարիմ Խանին ոչ էր ստոյգ,

և ոչ յուստեքէ ևս գոյր այլ նորագոյն համբաւ իմն։ Եւ նորին յղեալ փայետկն այսու թղթովս, ի մրա. ԼԱ։

Նկաւ հասաւ ի Թօխաթ։

Թուղթ միամտութեան և օրհնութեան գրեաց սրբ. վեհն ի Թօխաթ՝ առ տէր Մելքոն յանուն քահանայ ոմն։ Որ ընդ Պարսամ յանուն ուխտաւորի միոյ, Աջահամբոյր (Բ) էր յղեալ սրբ. վեհին։ Եւ Պարսամն այն այսու թղթովս, ի ապր. Դ։

ՄԺԹ.

Առաքեալն սրբ. վեհին ի Պօլիս զկոնդակ հաստատութեան եւ շնորհաւորութեան վասն տեղւոյ նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետին ընդ այլ թղթոց։ Ընդ նոսին եւ այլ եւս թուղթք՝ ի Զմիւռնիա՝ ի Գաղատիա՝ ի Հնդիկս՝ ի Թօխաթ՝ ի Ցամ՛իթ՝ ի Կարին, եւ ի Կարս. վասն այլ եւ այլ իրակութեանց։

Որպէս ի մրա. ԻԲ խոստացաւ սրբ. վեհըն Պօլսոյ նուիրակ և տեղւոյ նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետին ըստ խնդրոյ Պօլսեցւոցն գրել զկոնդակ հաստատութեան և շնորհաւորութեան վասն պատրիարգութեան իւրոյ, և զպատասխանիս զայլ թղթոց, և յղել առ ինքն, այժմ. ահա ընդ այլ թղթոց դրեալ յղեաց։ Որոց պատասխանիքն յիւրաքանչիւր տեղիսն տեսցեն։ Որք են։ Կոնդակ հաստատութեան և շնորհաւորութեան ըստ խնդրոյ Պօլսեցւոցնառ տեղւոյ նուիրակ և նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետն գրեաց։ Ցորում զբաղում պատուէրս և կանոնս գրելով առ նա։ Եւ առ Պօլսեցիսն վասն նորա։ Նախ՝ զի զազգս Հայոց որք անդ կան բնակեալք, զամենեսեանսն կառավարեսցէ հոգևորապէս և հովուեսցէ զնոսա ըստ հրամանին Քրիստոսի և ըստ աւանդութեան սրբոյ եկեղեցւոյս հայաստանեայց։ Երկրորդ՝ զամենեսեանսն զգուշացուսցէ և յորդորեսցէ հեռի կալ ի մէնջ հեստեալ ապականչացն կրօնի և ուղիղ դաւանութեանս սրբոյ եկեղեցւոյս հայաստանեայց. և զայնպիսիսն բացէ ի բաց հալածելով, հանցէ ի հօտից իւրոց։ Իսկ զմերազնէից զուղղագնացսն և զկանօնապահսն սիրեսցէ շահեսցէ և յորդորեսցէ ի նոյնն մնալ։ Զթիւրաղնացսն սաստեսցէ, խրատեսցէ, և յուղղութիւն ածցէ, զինքն օրինակ բարի տալով ամենեցուն։ Երրորդ՝ ի պատահելն այնպիսի գործոց և իրադործութեանց որք առ հասարակութիւն ազգիս, կամ. առ յեկեղեցիս, առ հաւատս և առ յայլս այսպիսիս վերաբերին, ինքնին միտյն և կամ. ոմանց աննշանից խօսիւք և գրդեցմամբն մի՛ ձեռնամխիցի ընաւին, այլ խորհրդակցութեամբ իշխանացն և գլխաւորացըն խորհրդակցեալ տնօրինեսցէ. թէ զօդաակարն և թէ զվնասաբերն։ Չորրորդ՝ հասարակապէս ընդ ամենեսեան սիրով, խաղաղութեամբ և քաղցրութեամբ վարեսցի առանց աչառութեան և կողմնապահութեան։ Իսկ զբանսարկուսն ատել, և դատել ևս խորհրդակցութեամբ իշխանաց, եթէ խրատելով ոչ կարիցէ ուղղել։ Հինգերորդ՝ ի յարտաքին վիճակսն զայնպիսի անձինս կարգիցէ Առաջնորդ, որք փորձեալք իցեն ի հաւատս և ի կրօնս ըստ հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ՝ և ի վարս պարկեշտս։ Զի լաւ է տգէտն որ ըստ հաւատոյն ուղիղ իցէ և ըստ վարուցն պարկեշտ, քան զիմաստուն սնապարծ. որ ըստ հաւատոյն թերի իցէ և ըստ վարուցն անպարկեշտ։ Վեցերորդ՝ զինքն յամենայնի հետևող՝ ստորադրեցեալ և հրամանակատար գիտասցէ Էջմիածնանիստ կաթուղիկոսին, և յամենայնի հնազանդ և կատարօղ Աթոռաշահ և ազգօգուտ հրամանաց նորին։ Նաև զնուիրակսն սրբոյ Աթոռոյս, թէ ի քաղաքն և թէ յարտաքին վիճակսն, ի յարգի պահեսցէ։ զԺողովուրդսն յորդորեսցէ ի սէր՝ ի հարազատութիւն ի հնազանդութիւն և յառատ տուրս սրբոյ Աթոռոյս, և յայլս այսպիսիս։ Նոյնպէս և Աթոռոյս հարկաւոր գործոց և հոգալեացն որք անդ պատահին, ըստ յամենայնի հոգ տարեալ հոգասցէ. թէ ինքնին և թէ խորհրդակցութեամբ գլխաւոր իշխանացն։ Եւ միանգամայն ի քաղաքն յայն նստօղ պատրիարգն այնպէս պարտի գիտել աստ զինքն, որպէս թէ՝ իցէ փոխանորդ՝ Աթոռակալ, և յատուկ գործակալ Էջմիածնանիստ կաթուղիկոսաց, զոր և վասն

այսօրիկ նստուցանեն յարքայանիստ քաղաքըն։ Զի հոգասցէ զհողալիսն սրբոյ Աթոռոյս, վանօրէից, եկեղեցեաց, և ազգիս հայոց որք գոն ընդ իշխանութեամբ նոցին։ Զայսօսիկ կանոնքս զորս գրեցաք աստ, ոչ եթէ վասն մեր Զաքարիա վարդապետին գրեցաք աստ, զորմէ եմք ամենևին անկարծիք և միամիտ, այլ վասն ապագայիցն մանաւանդ, զի գիտասջիք աստ ամենեքեան թէ՝ յայդր նստօղ պատրիարգի գործ և պաշտօնքն սոքա են։ Եւ պատուէր՝ զի որպէս ամենեքեանքն միաբանութեամբ և ինքնակամ յօժարութեամբ, և մանաւանդ ազդմամբն Աստուծոյ ընարեցին զնա ի գործ պատրիարգութեան, և յինքենէ ևս խնդրեցին հաւանել ընալողութեան իւրեանց, և զնա ինքեանց շնորհեալ, նոյնպէս՝ պարտին ի նոյն ուխտ և ի միաբանութիւն իւրեանց հաստատուն մնալ։ Եւ որպէս սիրով և փառօք ընտրեցին զնա, ի նոյն սէր ի փառս և ի մեծարանս պահել։ Մխիթարիչ և օգնական լինելով նմա, և ամենայն անմեղածին հրամանաց նորին հնազանդ։ Քանզի՝ ոչ միայն զհասարակ Առաջնորդական և պատրիարգական սէր և հնազանդութիւն պահանջեմ աստ ի ձէնջ վասն դորա, այլ որպէս յատուկ սիրելոյ՝ փոխանորդի և գործակալի մերոյ և սրբոյ Աթոռոյս խնդրեմ աստ ի ձէնջ։ Եւ մանաւանդ սիրելեացն նորին սիրելի լինիլ, և ատելեացն ատելի։ Բայց թէ ոչինչ պատճառաւ քրթմնջիւն իմն ելցէ աստ ի վեր վասն դորա, և դուք հասարակութիւնդ թոյլ տուեալ ոչ ջատագովիցէք դմա, և այնպիսեացն ոչ լինիցիք միաբանութեամբ վրէժխնդիր, մեղանչէք։ Քանզի՝ ի բազմակնիք մահսարոջն իւրեանց գրեալ էին զնմանէ թէ՝ զԶաքարիա սրբափայլ վարդապետն ի բազում գործս ընտիր գտեալն ընտրեցաք ի պատրիարգութիւն։ Եւ թէ՝ յանձնելով այսմ գործոյ բարեհաճ կամս Աստուծոյ, ի խորհուրդ մտաք տէր ողորմեայիւ, և որովհետև տնօրինողին Աստուծոյ յանձնեցաւ, եկն ի միտս ամենեցունց ընտրել զսա։ Եթէ մեք էաք աստ հրաւիրեալ զձեզ թէ՝ զդա ընտրեցէք ի պատրիարգութիւն, կարէիք աստ յետոյ պատճառել թէ՝ մեք ոչ կամէաք, դու եղեր պատճառ պատրիարգութեան նորին։ Ահա գիտէք աստ ամենեքեան զի մեք անպարտ եմք առ յայդ։ Եւ ինքն ևս ոչ կամելով, քանզի սա հրաժարեալ է, և դուք մեծաւ ստիպմամբ արկեալ էք զդա ընդ այդմ լծոյ, երաշխաւոր լինելով յամենայնի։ Որպէս և վկայեալ էին ևս ի բազմակնիք թուղթս իւրեանց։ Կրկին պատուէր՝ զի մի ոք ի քահանայից և ժողովրդոց թարց նորին գիտութեան և հրամանին ձեռնամուխ լիցին ի գործս հոգևորս օրինաց և եկեղեցւոյ։ Զի ամենայն եկեղեցական արարողութիւնք և կարգք, նաև հաւատոյ և օրինաց բանք պարտին աստ հրամանաւ նորին կատարիլ։ Եւ թէպէտ դրեաց նոցա թէ՝ վասն շնորհաւորութեան Զաքարիա վարդապետի պատրիարգութեան զմէկ լաւ փիլոն և մատանի յղեցաք, բայց վասն նոցա գրեաց Խոջայ Նազարէթին, զի զայնս անդ հոգասցէ. և զմէկ շալ փիլոն ևս վասն նորին վէքիլ տէր Վարդանին հոգասցէ։ (որպէս ասելոց եմք յետոյ ի թղթոջ նորին.) և յետ ընթերցման կոնդակին ձգեսցէ ի վերայ նոցա։

Թուղթ ևս առ Պօլսոյ գլխաւոր իշխանսըն՝ այսինքն՝ Պաղտասար՝ Մարտիրոս՝ Պետրոս՝ Արիստակէս, մհ. Գասպար. մհ. Յարութիւն, և Առաքել Ամիրայսն գրեաց։ Ծանուցանելով նոցա զհասանելն բազմակնիք մահսարին իւրեանց առ ինքն վասն պատրիարգութեան Զաքարիա վարդապետին, և ըստ խնդրոյ իւրեանց զհաստատութեան և շնորհաւորութեան կոնդակ ղրևլն առ նա։ Եւ յանձնարարութիւն վասն նորա։ Եւ պատուէր՝ վասն ֆարմանին իւրոյ շինելոյն, զոր ընդ մհ. Յօնանին յղեաց առ նոսա։ (զորմէ յետոյ լիովին ասելոց եմք ի թղթոջ Զաքարիա վարդապետին։) Յիշեցոյց նոցա և ի կոնդակոջն զկանօն և զպատուէր դրելն առ Զաքարիա վարդապետն, և առ ինքեանըս։ Որոց օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն՝ ՇԺԶ. ՇԺԸ. ՇԺԹ. ՇԻ։

Թուղթ ևս առ նորոգ պատրիարգի Վէքիլ տէր Վարդանն գրեաց։ Զի ի լինիլն Զաքարիա վարդապետին պատրիարգ տեղւոյն, զնա վասն առաւել հարազատութեան առ սուրբ Աթոռս վէքիլ էր կարդեալ իւրեան. և սրբ. վեհին ծանուցեալ։ Եւ սրբ. վեհն սակս հաւատարմութեան նորին սրբոյ Աթոռոյս հաճեցաւ ընդ այն։ Եւ պատուիրեաց նմա՝ զի վէքիլութեան գործոյն իւրոյ

արի և ժիր լիցի։ Եւ որպէս Զաքարիա վարդապետին, ե սմա ևս դրեաց, զի զսրբոյ Աթոռոյս արդիւնսն թէ կնաղտսն և թէ զվէճսն ի պաարիարդական արդեանցն անխառն պահեսցէ։ Թուղթ մի ևս առ Խոջայ Նազարէթն և յեղբօր որդի նորին պարոն Թադէոսն գրեաց ի պատասխանի ի յնվ. Ե դրեցեալ թղթոյն իւրեանց։ Որոց և ծանոյց վասն հաստատութեան Զաքարիա վարդապետի պատրիարգութեան զկոնդակ յղելն առ նա։ Եւ առ գլխաւոր իշխանսն տեղւոյն զյանձնարարութիւն գրելն վասն նորա։ Եւ պատուէր՝ զի վասն Զաքարիա վարդապետին և նորին վէքիլ աէր Վարդանին ԲԾ զռուշի կամ պակասի մէկ լաւ փիլոն և Ա լաւ մատանի և մէկ շալ փիլոն ևս հոգացեալ, զկնի ընթերցման կոնդակին զլաւ փիլոնն ձգեսցեն ի վերայ Զաքարիա վարդապետին և զմատանին դիցեն ի մատն, շնորհաւորելով զպատրիարգութիւնն նորին։ Եւ զշալ փիլոնն ևս ի վերայ տէր Վարդանին ձգեսցեն. շնորհաւորելով զվէքիլութիւն նորին։ Եւ զինչսն Ջեարքեազօղլուն այժմ յղեալ էին առ մհ. Փիլիպպոսն ի Կարին, և ծանուցեալ սրբ. վեհին զյղելն։ Եւ խոստացեալ էին զմնացեալ զինչսն ևս յղել։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց նոցա զի զմնացեալ զինչսն եթէ տակաւին չիցեն յղեալ առ մհ. Փիլիպպոսն, փութով առ նա լզեսցեն, զի նա անտի առ մեզ հասուսցէ։ Եւ խոստացաւ նոցա, զի երբ մհ. Փիլիպպոսն զինչսն Ջարքեազօղլուն ի սուրբ Աթոռս յղեսցէ, յայնժամ և ինքն զգրամն (ա) մեր և զխարճն իւրեանց առեալ ի նմանէ, զինչսն իւր տացէ ինքեանն։ Որում և ծանոյց առ մհ. Փիլիպպոսն զդաւթար մի յղելն, և առ Զաքարիա վարդապետն ևս զգրելն վասն թղթոց։ Եւ պատուէր՝ զի մհ. Փիլիպպոսն յորժամ զգաւթարն զայն առ ինքն յղեսցէ, զ ի նմա գրեալսն հոգացեալ առ մեզ առաքեսցէ։ Եւ վասն թղթոց առնլոյն ինքն ևս մուղայէթ լիցի ընդ Զաքարիա վարդապետին, և առնուլ տացէ նմա, և ընդ այլ ընչից առ մեզ յղեսցէ։ Ծանոյց ևս սմա զնորապէս փօլիցայ առնելն իւր ի վերայ Զաքարիա վարդապետին ի ձեռն իւրեանց. (ե) և զփօլիցայագիրն առ յեղբայրն իւր մհ. Փիլիպպոսն յղելն ի Կարին, զի առ ինքն յղեսցէ։ Եւ պատուէր՝ զի մհ. Փիլիպպոսն յորժամ զփօլիցայագիրն առ ինքն յըղեսցէ, առեալ զգրամն ի Զաքարիա վարդապետէն, (ե) տացէ նմա զփօլիցայագիրն։ Թուղթ մի ևս առ հին պատրիարգ Գրիգոր վարդապետի սպասաւոր տիրացու Սարգիսն դրեաց։ Զի նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետն զսա ևս էր առ ինքն ընկալեալ վասն առաւել շնորհացն։ Եւ սա ինքն պահել կամէր։ Զոր և ծանուցեալ էր սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն ևս հաճեցաւ, և պատուիրեաց սմա հարազատութեամբ ծառայել պատրիարգին։ Իսկ թէ ի պատրիարդարանոջն ոչ կամիցի մնալ, յուրեք մի երթիցէ, այլ ի սուրբ Աթոռս եկեսցէ։

Թուղթ ևս առ Ագուլեցի տիրացու Գէորգն գրեաց (որ ի յօդ. Լ յիշեցեալ է.) ի պատասխանի ի նոյ. Է դրեցեալ թղթոյն։ Եւ թէպէտ խոստանայր սրբ. վեհին զտպագիր տիրացու. Պօղոսի պայմանի գրեանսն յետոյ յղել առ ինքն, բայց յԱբրահամ վարդապետի պահարանէն ելին հանդերձ դէվթէրաւն, զի յելանելն տպագիր տիրացու. Պօղոսին ի քաղաքէն, և ի գալն ի սուրբ Աթոռս, խարճ էին արարեալ վասն նորա, և գրեալ։ Առ այս սիրով մեղադրեաց զնա սրբ. վեհն։ Եւ տպագիր տիրացու Պօղոսի գրեանքն զորս ընդ իւր բերեալ էր, վասն խոշորութեան ոչ պիտոյացաւ մեզ։ Եւ մանաւանդ Բ տեսակ գիր ունէաք այժմ ի պատրաստի։ Որոց մինն է՝ որով զնո բատիպ Աղօթից գիրքն տպեցաք, և միւսն է՝ որով զտարեկան տօնացոյցն տպեցուցանեմք։ Եւ սրբ. վեհին ոչ հաւանեալ Պօղոսի բերեալ գրեանցն, Ոսկանի գիրըն յառաջադրեաց նմա ի շինել. և նա ևս ահա շինէ։ Եւ մերձ է ի լրացուցանել։ Զոր և ծանոյց սմա, և պատուիրեաց, զի յորժամ Պօղոսն զգիրն զայն շինեալ յաւարտ հասուսցէ, վասն հնոյն յետոյ որպէս գրեսցէ ինքեան այնպէս արասցէ։ Եւ Պօղոսն ասէր թէ՝ անթիմոնի և թուղթ կամեցայ բերել ընդ իս, բայց Գէորգն չեթող. ասելով թէ՝ անթիմոնի յղեալ եմ, և թուղթ ես յղելոց եմ. բայց դու մի յամեցուցաներ այնու զգնալդ ի սուրբ Աթոռն. այլ երթ փութով։ Եւ պատուիրեաց սմա որոյ զստոյգն գրել ինքեան։ Եւ վասն Ագուլեցւոց Մուրտիկեանց տալեաց դրամոյն (ճկա) որպէս քան զայս յառաջ յօդ. Լ, ե այժմ ես պատուիրեաց առ-

նուլ ի նոցանէ. և յոչ տալն նոցա ծանուցանել ինքեան։ Զի թէ չետուն ասէ նոքա զդրամն Մուրաիկեանցն, ի Թօմայ վարդապետէն եմ պահանջելոց, զի նա է երաշխաւոր նոցա։ Եւ տիրացու Աստուածապահին Գրիգորին և Քրիստափորին ողջոյն գրեաց ի թղթոջս։ Թուղթ ես առ մն. Մասեհի որդի պարոն Նիկողայոսն և պարոն Եսային դըրեաց ի Պօլիս՝ ի պատասխանի յառաջագոյն դրեցեալ աղաչանաց թղթոյն իւրեանց։ Զի Թիֆլիզեցի Թաղօյենց Մկրտումն և Ագուլեցի մն. Թօմայն դրամ էին տալոց նոցա։ Որոյ աղագաւ և աղերսիւ դրեալ էին նոքա առ սրբ. վեհն, զի առցէ զդրամն իւրեանց ի նոցանէ։ Եւ թէպէտ անհնարին էր զՄկրտումին բերելն առ ինքն, զի էր ի դրան Արքային Վրաց, բայց զմն. Թօմայն ի Բայազիտու գրեցուցեալ եբեր ի սուրբ Աթոռս, և ի ներկայութեան եպիսկոպոսաց և իշխանաց ոմանց կոչեալ զնա առ ինքն, եցոյց նմա զթուղթն Մասեհի որդւոցն, և պահանջեաց ի նմանէ զդրամն։ Իսկ նա երդմամբ ուրաստ եղե թէ՝ ոչինչ եմ տալոց նոցա։ Բայց թէ իմ և եղբօրս յանուանն սանատ և վկայս ունին ասէ, թող յառաջ բերցեն. աւայն զինչ կարօղ եմ ասել։ Եւ թէ՝ մեք Ագուլեցի համշիրակ ունիմք ի Պօլիս. եթէ նոքա վասն տալեաց մերոց վկայեսցեն, այն ես է ասէ մեզ ընդունելի։ Եւ յետ ամենայն հարցաքննութեան և խօսիցն իբրև ետես սրբ. վեհն թէ՝ ոչինչ ել ի նմանէ, տանել ետ զնա առ Աբրահամ վարդապետն, զի ինքն ևս խօսեցուցեալ զնա, դրեսցէ նոցա զօրպէսն ի միամտութիւն իւրեանց և նա ես ըստ հրամանի և պատուիրի սրբ. վեհին այսպէս արար։

Թուղթ ևս օրհնութեան առ պարոն Գէորգն և պարոն Յարութիւնն գրեաց ի Զմիւռին։ Զի յանուն սրբոյն Յօհաննավանիցն Արծաթեայ սկիհ էին տուեալ ի յիշատակ ձեռամբ Նուիրակին իւրեանց Ղուկաս վարդապետին։

Թուղթ ևս առ Զաւահիրճիզատէ խոջայ Յարութիւն գրեաց ի պատասխանի ի սեպ. ԻԲ դրեցեալ թղթոյն։ Զի վասն վերանորոգելոյն դնուիրակութիւնն և զԱռաջնորդութիւն Ղուկաս վարդապետին, շնորհակալութիւն էր դրեալ առ սրբ. վեհն։ Եւ յանձնարարութիւն վասն Ղուկաս վարդապետին։ Եւ որդւոցն նորին տիրացու Յօհաննիսին և Իսահակին ողջոյն գրեաց։ Թուղթ մի ևս առ Աստուածատուր, Գալուստ և Առաքել Աղազատայսն գրեաց ի պատասխանի ի սեպ. ԻԱ դրեցեալ թղթոյն իւրեանց։ Զի վասն Ղուկաս վարդապետի կրկին նուիրակութեանն նոքա ևս էին գրեալ առ սրբ. վեհն զշնորհակալութիւն։ Եւ սրբ. վեհն զյանձնարարութիւն դրեաց վասն նորա։ Եւ պատուէր՝ զի մէկ կամ ԲՃ օգմայ լու քեասուքնար թուղթ առեալ յանձնեսցեն Ղուկաս վարդապետին, զի նա առ մեզ յղեսցէ։ Թուղթ մի ևս առ Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Ղուկաս վարդապետն գրեաց ի սեպ. ամսոյ դրեցեալ թղթոյն։ Առ որ հասեալ էին նուիրակական կոնդակն և նորատիպ Աղօթից գրեանքն և տաղարանքն. զորս սրբ. վեհն քան զայս յառաջ ի . . . յղեաց առ նա։ Որոց աղագաւ և նա ևս զմիամտութիւն էր գրեալ առ սրբ. վեհն։ Եւ ձեռնարկեալ էր նուիրակութեան գործոյն։ Եւ զՅօհաննավանից գանձանակադրամն առեալ էր, և ծանուցեալ էր սրբ. վեհին դառնուլն։ Որում և ծանոյց սրբ. վեհն ըստ խնդրոյ իւրոյ առանձինս ոմանս զթուղթս օրհնութեան գրելն և յղելն առ ինքն, զի տացէ նոցա։ (որպէս ի վերդ ասացաւ.) և վասն թզթառութեան ես գրելն առ Աստուածատուր, Գալուստ և Առաքելն։ Եւ պատուէր՝ ի յառնուլն նոցա զթուղթսն և ի յանձնելն ինքեան, յղեսցէ ի Թօխաթ. զի անտի փութով հասանի առ մեզ։ Ծանոյց սմա և ի ձեռն Պօլսոյ նուիրակ և պատրիարգ Զաքարիա վարդապետին նորապէս փօլիցայ առնելն ի վերայ իւր. (և) և զփօլիցայագիրն հանդերձ բարեագրաւն առ նա յղելն։ Եւ պատուէր՝ զի տացէ նմա զդրամն, (և) և զփօլիցայագիրն իւր առցէ ի նմանէ։ Եւ որպէս Զաքարիա վարդապետին՝ (որպէս ասելոց եմք յետոյ) և սմա ևս պատուիրեաց, զի զամենայն նուիրակութեան գոյսն սրբոյ Աթոռոյս թէ զնաղտսն և թէ զվէճսն զորս ունի ընդ իւր, միրստմիրօջէ դաւթար արարեալ, զդաւթարն առ ինքն յղեսցէ։ Եւ յընչիցն ես փոքր փոքր ծբար արարեալ կամ ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն յղեսցէ, և կամ ի Թօխաթ՝ որոյ աղագաւ մն. Յօնանն դրեսցէ ինքեան։

Զի անտի փութով հասանի առ մեզ։ Բանզի՝ ի գնալն մհ. Ցօնանին ի Պօլիս, պատուիրեաց նմա սրբ. վեհն ի հասանիլն իւր ի Պօլիս անտի դրեսցէ առ նա, զի ի յընչիցն սրբոյ Աթոռոյս ծրար արարեալ յղեսցէ ի Թօխաթ առ սրբոյ Աթոռոյս գանձապետ և վէքիլ մհ. Աղամջանն, զի ի վերադառնալն իւր ի Պօլսոյ, առեալ ընդ իւր բերցէ ի սուրբ Աթոռս։

Թուղթ ես առ Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետն դրեաց (որ ի յօդ. Լ յիշեցեալ է,) ի պատասխանի ի նոյ. Բ գրեցեալ թղթոյն։ Զի ըստ հրամանի սրբ. վեհին ի Գաղատիա էր գնացեալ ի նուիրակութիւն, և զգնալն իւր ծանուցեալ սրբ. վեհին։ Եւ ի նուիրակական արդեանցն իւրոց դրամ (45դ) էր յղեալ առ Զաքարիա վարդապետն ի Պօլիս, և դրեալ սրբ. վեհին զյղելն։ Եւ սրբ. վեհն զթուղթս զայս իբր զղապղ գրեալ յղեաց առ նա, զի զդրամն (գ5դ) իւր առ մեզ հասեալ իմասցի, և միամտեսցի։ Այլև նա ի կողմանէ Ուռումելու հին նուիրակութեան իւրոյ դրամ (2) էր տալոց մեզ։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց նմա, զի զդրամն զայն (-) առ Զաքարիա վարդապետն յղեսցէ։ Եւ այսուհետև որքան դրամ առ ձեռն բերցէ, ևս յղեսցէ առ նա։ Կրկին պատուէր՝ զի քանի մի թօփ վեղարացու և փիլոնցու զուֆ և շալեղէն հոգացեալ առ Զաքարիա վարդապետն հասուսցէ ի Պօլիս, որոյ և զգաւթարն առ մեզ յղեսցէ, զի անտի բերել տացուք զայն ի սուրբ Աթոռս առ մեզ։

Թուղթ ևս առ Հնդկաց նուիրակ Փիլիպպոս վարդապետն գրեաց։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի յօդ. Լ զթուղթ գրելն առ ինքն ի վերայ Պօլսոյ։ Եւ պատուէր՝ գրել զպատասխանին, և գործոյն իւրոյ արի և ժիր լինել։ Թուղթ մի ևս առ Զաքիկենց Գրիգոր Աղայն գրեաց ի Մատրաս։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի յօդ. Լ զթուղթ գրելն առ ինքն ի վերայ Պօլսոյ։ Եւ զի՝ առաջին տպագրատունն մութն էր և փոքր. և սրբ. վեհն յանցեալ ամին քակել ետ զայն, լայնացոյց և բարձրացոյց, և ի վերոյ դրանն նորին արձան կանգնել ետ յանուն նորա, և զյիշատակն նորին հանդերձ իւրայնովքն գրել ետ ի վերայ արձանին։ Որոյ և զօրինակն այժմ յղեաց առ նա, զի տեսեալ ուրախասցի։ Այլև՝ յայսմ ամի զմշտնջենաւոր տօնացոյցն ձեռնարկեալ տպեցուցանեմք նորագոյն և պայծառ գրովք։ Յորմէ և սրբ. վեհն զթուղթ մի եղեալ ի թղթոջս յղեաց առ նա, զի այնու ևս ուրախասցի։ Որում և խոստացաւ՝ զի ի լրանալ տօնացուցին ի տպելոյ, յայնմանէ բաժին յղեսցէ վասն իւր։ Նաև՝ սրբ. վեհն ակն ունէր զթղթաշինէն թէ՝ ըստ պայմանին իւրեանց գայցեն աստ, (որպէս ի ՌՄԻԱ ամին և ի նոյ. Ա ասացաւ.) բայց Զաքարիա վարդապետն գրեալ էր վասն նոցա առ սրբ. վեհն թէ՝ զեղանակն տեղւոյդ և զայլ ինչս պատճառելով, ոչ են կամեցեալ գալ յայդր։ Եւ սրբ. վեհն առ այս կարի տարակուսի լեալ, դրեաց սմա ասել Մուսի Աղէքսանդր Գլաշին թէ՝ այս որպիսի բան է, զի դու վասն թղթաշինին հաւատացուցեր ինձ թէ յղեցից անդ. ես ևս կաթուղիկոսին մերոյ գրեցի և զգրեանսն քո առ նա յղեցի և հաւատացուցի. իսկ դու սուտ հաներ զիս առաջի նորա. զի նոքա սուտ պատճառս դնելով ոչ են գնացեալ։ Մեր կաթուղիկոսն միթէ ոչ կարէր այնպէս պահպանել զնոսա, որ թող ևս ոչ իջանիցէր ի վերայ նոցա։ Ուրեմն՝ նոքա յոժանց ի մէնջ հեստելոցն խարեցան և ոչ եկին, և զքեզ և զմեզ թեթևացուցին։ Եւ զայլս այսպիսիս ասա նմա ասէ, և զոր ինչ պատասխանի տացէ քեզ, գրեա մեզ։ Այլև՝ յանցեալ ամին զթղթաշինութեան խրատն թարգմանեցուցեալ էր նա և յղեալ առ սրբ. վեհն։ Յորմէ ոչինչ իմացեալ եղև, զի թարգմանութիւնն և դրեալն կարի խառնափնդոր էին։ Վասնորոյ՝ պատուիրեաց նմա, զի զտէր Աւետիսն վերակացու կարգեալ ի վերայ թարգմանութեան, զթղթաշինութեան խրատն հայերէն բառիւ և պարզ ոճիւ վերստին լաւ թարգմանի թարգմանել տացէ, և առ ինքն յղեսցէ։ Եւ թէ այսու ևս ոչ լինիցի հնար, այնուհետև զայլ իմն հնարս հոգասցէ, զի թերևս զթղթաշինութեան կերպն ի ձեռն բերցուք։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի ՌՄԻԱ ամին և ի յօդ. ԺԹ ընդ նորոգ նուիրակին իւրեանց Փիլիպպոս վարդապետին զթուղթ և զնորատիպ Աղօթից գրեանս յղելն առ ինքն։

Թուղթ ևս առ մհ. Յարութիւն Աղայն

գրեաց ի Բասրա։ Որում և ծանոյց յառաջ քան զայս ի յօդ. Լ ի վերայ Պօլսոյ զթուղթ գրելն առ ինքն։ Եւ պատուէր՝ զի թէ զմարգարտեայ թազպէհ առեալ իցէ ըստ հրամանի իւրոյ և ընդ տէր Գէորգին յղեալ, (զոր գրեաց առ նա.) բարւոք է. և թէ ոչ՝ յուստեքէ և իցէ գտեալ և առեալ, ընդ հաւատարմի առ ինքն յղեսցէ։ Կրկին պատուէր՝ զի զորպէսն Փիլիպպոս վարդապետին և տէր Գէորգին զրեսցէ ինքեան։ Զի ահա Բ ամ եղև յորս սրբ. վեհն գտէր Գէորգն վասըն ընչիցն հանգուցեալ հնդկաց Նուիրակ Յովսէփ վարդապետին ընդ Փիլիպպոս վարդապետին յղեաց ի Բասրա։ Եւ այժմ լուաք թէ՝ հկեալ է ի Բաղդաա, զի անտի դրեալ էր նա սրբ. վեհի սպասաւոր Մկրտիչ վարդապետին զգնալն իւր անդ։ Բայց ոչ իմացեալ եղև թէ՝ վասն Էր այնքան յամեցաւ նա ի Բասրա։

Թուղթ մի ևս առ Միքայէլ Աղայն գրեաց ի Բասրա։ Որում ես ծանոյց քան զայս յառաջ ի յօդ. Լ ի վերայ Պօլսոյ զթուղթ գրելն առ ինքն։ Զայն պաաուէրն զոր առ Յարութիւն Աղայն գրեաց վասն Փիլիպպոս վարդապետին և տէր Գէորգին, զնոյնն և առ սա ես գրեաց։ Եւ զթուղթսն Փիլիպպոս վարդապետին և Զաքիկենց Գրիգոր Աղային ի թղթոջս եդեալ յղեաց առ սա առ Նոսա յղել։

Թուղթ մի ևս առ սրբոյ Աթոռոյս գանձապետ Ալէքսան Աղայն գրեաց ի Բաղդատ։ Որում ես ծանոյց քան զայս յառաջ ի յօդ. Լ ի վերայ Պօլսոյ զթուղթ գրելն առ ինքն։ Եւ որպէս յայնժամ, և այժմ ես զթուղթսն Փիլիպպոս վարդապետին և Յարութիւն և Միքայէլ Աղայիցն յղեաց առ սա առ Նոսա յղել։ Եւ վասն Կարնոյ Առաջնորդ Սարգիս վարդապետին (որ ի ՌՄԻ ամին և ի . . . յիշեցեալ է.) լուաք թէ՝ փախստեամբ յայն կողմունսն գնացեալ, մերով կոնդակաւն ժողովք առնէ անդ։ Որ և թէմէսուկով դրամ (8) էր տալոց սրբոյ Աթոռոյս։ Եւ սրբ. վեհըն պատուիրեաց սմա, զի զկոնդակն և զդրամն մեր առեալ ի նմանէ, զինքն ի բաց վարեսցէ անտի, զի մի ի հնդիկս երթիցէ։ Զվերոյիշեալ թուղթսն հնդկաց ընդ մհ. Յօնանին՝ ես առ Պօլոյ Նուիրակ և Նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետն յղեցաք ի Պօլիս, զի անտի առ սա յղեսցէ։

Թուղթ ևս առ Պօլսոյ Նուիրակ և Նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետն գրեաց ի Պօլիս՝ ի պատասխանի ի յնվ. Ե դրեցեալ թղթոցն իւրոց։ Զորս ընդ բազմակնիք մահսարին պօլսեցւոց (որ էր վասն իւրոյ պատրիարգութեան.) յղեալ էր առ սրբ. վեհն, յորս և զամենայն եղելութիւնսն տեղւոյն մի ըստ միոջէ ծանուցեալ նմա։ (որպէս ի մրա. ԻԲ լիովին ասացաւ և ցուցաւ,) և սրբ. վեհն ծանոյց նմա ըստ խնդրոյ պօլսեցւոցն վասն հաստատութեան պատրիարգութեան իւրոյ զկոնդակ գրելն և ընդ մհ. Յօնանին յղելն առ ինքն։ Եւ առ գլխաւոր իշխանսն տեղւոյն ևս յատկապէս վասն իւր զյանձնարարութիւն գրելն։ Եւ պատուէր՝ զի ի հասանելն կոնդակին առ ինքն, հանդերձ ծանուցմամբ յեկեղեցիսն ընթեռնուլ տացէ, և զոր ինչ կանոնս և պա. . . *)

*) Բնագիրը թերի էր։

ՌՄԻԴ–1775

Ցիշատակարան ամի Թուականութեանս հայոց հազար երկերիւր, քսանեւչորսերորդի՝

Երեքտասաներորդի ամի Հայրապետութեան տեառն Սիմէօնի երջանկափայլ և Աստուածաշնորհ կաթուղիկոսի ամենայն Հայոց։

Ցաջողմամբ ամենատնօրինողին Աստուծոյ՝ վերստին բուռն հարցուք դյիշատակագրութենէս ըստ տկար կարեաց մերոց, առ. ի գրել և այսմ. ամի զորպէսսն Թղթագրութեանց ըստ կարգին։

ՄԻ.

Արդ՝ ի մտանելն մեր շնորհիւ տեառն յայս շնորհաւոր ամս, ժամանեաց առ սրբ. վեհս մեր Թուղթ յԱխլցխայու Սուլէյման փաշայէն։ Զի Հերակլ Արքայն Վրաց կամելով հաշտիլ ընդ Սուլէյման փաշային, վասնորոյ՝ քան զայս յառաջ ընդ Գեօրկին Միրզային զգերիսն Ախլցխայու (զորս զօրքն իւր գերեալ էին ի պատերազմին.) յետս դարձոյց առ նա։ Եւ նա ես զգիրսն Թիֆլիզու յանձնեալ էր Գէօրգին Միրզային։ Եւ զԱծղրու բէկ Օսման Աղայն եղեալ ընդ նմա, յղէր առ արքայն, զի երթեալ առ նա՝ վասն հաշտութեան հաստատուն պայման դիցէ, և յետս դարձցի առ ինքն։ Որք և եկին ի սուրբ Աթոռս, և աստի երթային ի Թիֆլիզ։ Եւ Սուլէյման փաշայն ընդ Օսման Աղային աղերսանաց Թուղթ էր գրեալ առ սրբ. վեհն, գրել Արքային վասն իւր, զի կատարեալ սրտիւ հաշտեսցի ընդ ինքեան։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ըստ խնդրոյ նորին՝ զԹուղթ մի գրեաց առ Հերակլ Արքայն, (որ ի նոյ. Է յիշեցեալ է.) ծանուցանելով նմա զխնդիր Սուլէյման փաշային վասն հաշտութեան։ Եւ խնդրեաց՝ զի ի բաց եղեալ զխռովութիւնն իւր, հաշտեսցի ընդ նմա, և ընդ Օսման Աղային զմիամտութեան Թուղթ գրեսցէ առ նա։ Եւ զի՝ ախթարմայքն զեկեղեցիսն Ախլցխայու ի խղճալի ժողովրդենէն մերմէ բռնութեամբ առեալ էին և իւրացուցեալ, և գնոսա յարտաքս թողեալ։ Զոր ի լսելն սրբ. վեհին՝ ընդ այն կարի ցաւեցաւ։ Որոյ աղագաւ և գրեաց սմա, գրել Սուլէյման փաշային, զի զմի զեկեղեցին յախթարմայիցն առեալ, Հայոց տացէ։

Թուղթ ես առ Ախլցխայու Սուլէյման փաշայն գրեաց (որ ի հոկ. Ը յիշեցաւ) ի պատասխանի· թղթոյն։ Ծանուցանելով նմա ըստ խնդրոյ իւրոյ զգրելն իւր առ Արքայն վասն հաշտութեան։ Զնոյն խնդիր վասն եկեղեցւոյ, սմա ևս գրեաց։ Ցղեցան այսոքիկ ընդ Գեօրկին Միրզային և Օսման Աղային։ Որք ելին ի միասին ի յնվ. Ա։

ՄԻԱ·

Ի Պօլիս՝ ի Կարին եւ ի Կարս թուղթք։ Առ պատրիարգ Զաքարիա պետն եւ մհ. Գասպար եւ Պաղտասար Ամիրայսն միամտութիւն վասն սրբոյն Սաղիմայ ժամօրհնօղ Սարգիս վարդապետին, եւ ինորին պատրիարգէն զանգատ։ Եւ առ Իբրահիմ Էֆէնտին, մհ. Փիլիպպոսն եւ Գէորգն եւս զմիամտութիւն՝ վասն հաճոնց տուեալ դրամոյն։

Թուղթ մխիթարութեան գրեաց սրբ. վեհն ի Պօլիս՝ առ Պաղտասար և նորին եղբայր մհ. Գասպար Ամիրայսն՝ (որք յապր. Ե յիշեցան.) ըստ խնդրոյ Զաքարիա վարդապետին, վասն մահուան կնոջն մհ. Գասպարին, որ յայսմ միջոցի վախճանեալ էր։ Եւ զի՝ սոքա և միւս գլխաւոր իշխանքն տեղւոյն զսրրոյն Սաղիմայ ժամօրհնօղ Սարգիս վարդապետին թելադրութեամբ նորին պատրիարգ Պօղոս վարդապետին յղեալ էին ի սուրբ Աթոռս։ Եւ վասն նորա յանձնարարութիւն էին գրեալ առ սրբ. վեհն, զի եպիսկոպոս ձեռնադրեսցէ։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն զմիամտութիւն գրեաց սոցա. և խոստացաւ առնել զհայցուածս իւրեանց։ Բայց նորին պատրիարգ Պօղոս վարդապետն ոչ էր գրեալ յանձնարարութիւն վասն նորա առ սրբ. վեհն. քանզի վասն քանի մի ոչինչ պատճառաց ի վաղուց հետէ խռովեալ էր ի սրբ. վեհէն։ (զորս յետոյ լիովին ասելոց եմք յիւրում տեղւոջն,) վասնորոյ՝ զոմանս ի միաբանից իւրոց ի Սիս յղէր յեպիսկոպոսանալ, որպէս զԴաւիթն Զմիւռնոյ, և զոմանս ևս ի սուրբ Աթոռս, միջնորդութեամբ այլոց։ Որպէս զԿարբեցի Կարապետ և զՍարգիս վարգապետսն։ Քանզի՝ գրեալ էր Կարապետին թէ՝ եթէ կարես՝ հնարիւք իմն և կամ ընտանեացդ միջնորդութեամբն եպիսկոպոս լեր, բայց ձրիապէս յամենայնի։ Եւ զՍարգիսն ևս ի ձեռն գլխաւոր իշխանացն Պօլսոյ, որպէս ի վերդ ասացաք։ Զորս գրեալ ծանոյց սոցա։ Որոց և խոստացաւ զլիովին որպէսն նորին յետոյ գրել ինքեանց, զի իրաւամբ դատաստան արասցեն։ Քանզի՝ զանգատանօք լցեալ էր նա զքաղաքն Պօլիս, և զանուն սրբ. վեհին ի բերան առեալ վատաբանէր։ Եւ . . . նոցին Ցակոբին և Ռափայէլին ողջոյն գրեաց։ Փուսուլայ ևս յատկապէս առ Պաղտասար Ամիրայն գրեաց վասն եղբօրն իւրոյ մհ. Գասպաբ Ամիրային, զի մի անմխիթար թողուցու. այլ կենակցութեամբ մխիթարեսցէ զնա։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց խօջայ Նազարէթն և նորին եղբօրորդի պարոն Թադէոսն գրեաց ի Պօլիս՝ ի պատասխանի ի նոյ. Թ դրեցեալ թղթոյն։ Նախ շնորհակալութիւն վասն Յանի յինքենէ խնդրեցեալ մարգարտեայ թէսպեհին, զոր այսու գնով (8) առեալ էր, և ընդ սրբոյն Սաղիմայ ժամօրհնօղ Սարգիս վարդապետին յղեալ առ սրբ. վեհն։ Եւ պատուէր՝ զի զթէսպէհի և զփիլոնաց գինսն (8) (8կ) ի Զաքարիա վարդապետէն առցէ։ Եւ խոստացեալ էր սրբ. վեհին ԱԾ օզմայ թուղթ յայլուստ բերել տալ և յղել։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց նմա, զի ի հասանելն թղթոյն առ ինքն, փութով յղեսցէ։ Եւ զի՝ թիֆլիզեցի հանգուցեալ Զոհրապ Յանն՝ ի կենդանութեան իւրում, Ղարայայ վազօղլի պարոն Պօղոսին (որ ի պամութեան ՌՄԺԹ ամին՝ և ի փտր. Գ յիշեցեալ է՝) թամասուկով դրամ էր տուեալ փոխ։ Եւ նորին որդի Գիւլխանն զթամասուկ բերել ետ սրբ. վեհին, և խնդրեաց աղերսիւ գրել ի Պօլիս առ պարոն Պօղոսն, և զդրամն իւր խնդրել ի նմանէ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ըստ խնդրոյ նորին, զթամասուկի սաւատն առեալ և ի թղթոջս եդեալ յղեաց առ նոսա. պատուիրելով նոցա՝ զի զպարոն Պօղոսն առեալ տարցեն առ պատրիարգն, և զիւր թամասուկի սաւատն ցուցեալ նմա, զի նմա դրեալ դրամն խնդրեսցեն ի նմանէ։ Եթէ նա զդրամն յանձն առնուցու տալ, դրեալ ծանուսցեն ինքեան, զի զթամասուկն յայնժամ յղեսցէ ինքեանց զի տուեալ նմա, զդրամն առնուցուն ի նմանէ։ Կրկին պատուէր՝ զի Բ հատ զեղեցկատես ջահ առեալ յղեսցեն, և զգինն նոցին ի պատրիարգէն առցեն։ Որում և ծանոյց ի ձեռն եղբօրն իւրոյ մհ. Փիլիպպոսին զնորապէս փօլիցայ առնելն իւր ի վերայ պատրիարգին։ (ժ) և պատուէր՝ զի ի հասանելն փօլիցայագրին առ ինքն, տացէ նմա և զդրամն

առցէ ի նմանէ. և զառնուլն ղրամոյն գրեալ ծանուցէ ինքեան։ Ծանոյց ևս զգրելն իւր առ մհ. Փիլիպպոսն վասն առնլի ճոթից։ Եւ պատուէր՝ զի թէ ի Կարին ճոթ ոչ գտանիցի, ըստ գրեցելոյ մհ. Փիլիպպոսին առ ինքն, անտի առեալ յղեսցէ։ Եւ զթուղթ պատրիարգին յղեաց առ նոսա տալ ինքեան։

Թուղթ ևս առ Պօլսոյ Նուիրակ և պատրիարգ Զաքարիա վարդապետն գրեաց (որ ի հոկ. ԻԹ յիշեցեալ է՝) ի պատասխանի ի սեպ. և ի նոյ. գրեցեալ թղթոցն։ Ծանուցանելով նմա զհասանիլն Սարգիս վարդապետին ի սուրբ Աթոռս։ Եւ խոստացաւ՝ զի ըստ խնդրոյ իշխանացն տեղւոյն՝ յետ սակաւ միջոցի ընդ Թէքիրտաղու Առաջնորդ Յակոբ վարդապետին եպիսկոպոս ձեռնադրեալ զնա յղեսցէ ի տեղի իւր, և վասն նորին պատրիարք Պօղոս պետին ի զուր վատահամբաւելոյն զինքն, զթուղթ գրեսցէ առ գլխաւոր իշխանսն տեղւոյն, և ի նոցանէ իրաւամբ դատաստան խնդրեսցէ։ Եւ վասն Սարգիս վարդապետին՝ զարմանալի իմն է ասէ այս։ Զի գոլով Երուսաղէմայ միաբան, ժամօրհնող՝ և ըստ վկայութեան ձերոյ գիտուն և արժանի պատւոյ և եպիսկոպոսութեան, ապա ընդէր և իւր մեծաւորն ոչ գրէ և ոչ վկայէ ասէ. կամ թէ յո՞ր անուն և տեղւոյ վերայ օրհնեցից ասէ զսա. և կամ ըստ որոյ խնդրոյ. եթէ Երուսաղէմայ, անտի դիր և խնդրող չունի. չիմացայ ասէ թէ այս ո՞րպէս բան է. ինչ և իցէ, ես ըստ խնդրոյ իշխանացն օրհնեմ, սակայն՝ անկանոն է ասէ։ Եւ իշխանքն Պօլսոյ զմհ. Յօնանն վասն Բասենցի Յարութիւն վարդապետին դատելի էին արարեալ, իբր թէ նա իցէ զպրուսացիսն ղրդեալ ի գանգատել զնմանէ սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն այսպէս գրեաց առ նա թէ՝ մհ. Յօնանին աստ մեղ ոչ գոյ, զի պրուսացիքն քան զայս յառաջ երկիցս ևս էին ասէ գրեալ առ իս գանգատ զՅարութիւն վարդապետէն, բայց մեք զանցարարաք ասէ։ Եւ մհ. Յօնանն վասն Յարութիւն վարդապետին ղրեալ էր ասէ թէ՝ կարի անպատիւ է ի քաղաքս. զի ի մէջ սորա և ժողովրդեանն ամենևին սէր ոչ գոյ։ Եւ իմացայ զմիտն նորա՝ որ յԱթոռդ գալ կամի, բայց երկնչի, և թէ յուսադրական գիր գրեսցես առ նա, թարց կարծեաց ելեալ եկեսցէ ի սուրբ Աթոռդ։ Այս է ասէ Յօնանի ղրեալն առ մեզ. և ոչ այլ ինչ։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի սեպ. ԻԵ ընդ յատուկ փայեկի նոցին զթուղթ մի միամտութեան առ Յարութիւն վարդապետն գրելն և խնդրելն զնա, և զթուղթ մի ևս առ ինքն և առ իշխանսն գրելն զի յղեսցեն զնա ի սուրբ Աթոռս։ Ընդ նմին և զպրուսացւոց մահսարի սուրէթն առ ինքեանս յղելն, զի իմասցին զմիտս զրեցելոցն նոցին։ Բայց թուի թէ՝ այն գրեանքն տակաւին ոչ էին հասեալ առ նոսա։ Վասնայսորիկ զմհ. Յօնանն դատելի առնէին։ Վասնորոյ՝ պատուիրեաց սմա, զի զայն գրեանսն ի Պրուսայու քահանայիցն բերել տայցէ, և ընդ գլխաւոր իշխանացն ընթերցեալ իմասցին զմիտս զրեցելոցն նոցին, և վասն Յարութիւն վարդապետին որպէս գրեալ է ինքեանց, այնպէս արասցեն։ Զի ամօթ մեծ է ասէ յետ այդքան հոչակեցմանն թոյլ տալ. զի սիրօղն զսիրելին յարգանս պահէ ասէ և ոչ թէ յանարգանս։ Զի նա որքան Թեայ ասէ անդ, միշտ յանարգութենէ յանարգութիւն ընթանայ։ Կրկին պատուէր՝ զի զմհ. Յօնանն իւր ապուռովն յետս դարձուսցէ։ Զի որպէս և իցէ, անարգանքն դորին առ առաքօղն վերաբերի ասէ. և մանաւանդ թէ իզուր անարգիցի։ Եւ վասն Առաջնորդաց որպէս յառաջ ղրեալ էր, և այժմ ևս գրեաց՝ զի յետ տալոյն իւրոյ զմարմնաւոր հրամանն, յղեսցէ զնոսա ի սուրբ Աթոռս, զի եկեալ աստ յինքենէ ևս զհոգեւոր հրամանն առնուցուն։ Եւ վասն թղթաշինութեան խրատուց թարգմանութեանն և փարմանացն կրկին գրեաց շուտով հոգալ և յղել։ Եւ վասն Գիւխանի թամասուկին՝ որպէս Խօջայ Նազարէթին, և սմա ևս գրեաց զնոյն պատուէր։ Որում և ծանոյց ի ձեռն Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին նորապէս Փօլիս (Ժ) առնելն ի վերայ իւր, և պատուէր զի տացէ զգրամն (Ժ) Խօջայ Նազարէթին։ Ծանոյց ևս Խօջայ Նազարէթին Բ պիլօր ջահ խնդրելն։ Եւ պատուէր՝ զի առնուլ տացէ Նազարէթին զջահս և զգինս նոցին ինքն տացէ նմա։ Եւ վասն Առաջնորդաց տալեաց ղրամոց գրէր թէ՝ այս ինչ քեզ պարտի հասանիլ։ Բայց գեռ ոչ էր հասեալ։ Եւ սրբ. վեհն խոստացաւ սմա ի հասանելն՝ զմիամտութիւն գրել առ ինքն։ Այլ և Զաքիկենց Գրիգոր Աղայն (որ յապր. Ե յիշեցաւ).

վասն Թղթաշինացն կրկին գիր էր առեալ ի Ֆռանկօղի Թագաւորական մարդոյն և յղեալ առ սրբ. վեհն յղել ի Փարիզ առ Թղթաշէնսն։ Եւ սրբ. վեհն զգիրն զայն այժմ յղեաց առ սա, զի ձեռամբ Գասպար ամիրային յղեսցեն ի Փարէզ առ Թղթաշէնսն. և ինքեանք ես զմիամտութիւն գրեսցեն նոցա զի եղեալ եկեսցեն ի սուրբ Աթոռս։ Պատուիրեաց ես՝ զթեսպեհի և զփիլոնաց դինսն (8) (գկ) ես տալ Խօջայ Նազարէթին։ Փուսուլայ ես սրբ. վեհն իւր ձեռամբն գրեաց առ սա։ Եւ զթուղթ ամիրայիցն յղեաց առ սա տալ նոցա։ Եւ զթուղթն սորին ես առ Խօջայ Նազարէթն յղեաց։

Թուղթ մի ես ի Կարին առ Մուրտիկ զատէ մհ. Փիլիպպոսն։ (Որ ի դեկտ. Գ յիշեցեալ է)։ ի պատասխանի՝ ի դեկտ. Է ե ի ԺԵ գրեալ թղթոցն։ Եւ ձեռամբ պարոն Կօշտոյին առ մեզ հասուցեալ դրամոյն՝ (ր) որպէս ի դեկտ. Գ. և այժմ ես կրկին զմիամտութիւն գրեաց առ նա։ Որում և ծանոյց յառաջ քան զայս ի նոյ. ելն զգրեալն իւր առ ինքն վասն ի վերայ Բայազիտու յղեալ դրամոյն։ (ք) Որոյ մեծ մասն (ա) ձեռամբ տէր Վահանին յառաջագոյն առ մեզ էր հասեալ։ Եւ վասն մնացելոյն՝ (9) գրեաց թէ՝ ոչ գիտեմք թէ զայն ես ով է մեզ հասուցանելոց։ Այլ ե՝ նորապէս դրամ (ա) էր յղեալ առ պարոն Կօշտօն, հասուցանել ի սուրբ Աթոռս։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն զմիամտութիւն գրեաց, զի զգրամն զայն առ մեզ հասեալ իմաստի՝ և միամտեսցի։ Եւ վասն մարգարտեայ թէսպեհին զշնորհակալութիւն գրեաց, զի ընդ սրբ. Սաղիմայ ժամօրհնօզ Սարգիս վարդապետին յղեալ էր ի սուրբ Աթոռս։ Որում և պատուիրեաց դրել եղբօրն իւրոյ Նազարէթին, զի թէսպեհի (8) և զփիլոնաց (84) գինսն ի պատրիարգէն առնուցու, և մի ի Կարին ձգեսցէ զքաննն։ Եւ վասն տեղւոյ Առաջնորդ Ծռասոնցաբութիւն վարդապետինզմիամտութիւն գրեաց, զի ի գալ ֆարմանին իւրոյ, վերստին Առաջնորդական կոնդակաւ յղեսցէ զնա անդ։ Եւ պատուէր՝ զի թէ ճոթք գտանիցին անդ, մէկ մէկ փաստահ զոյն զգոյն չուխայ՝ ՋԾ հալապի աթլաս, և ԳԾ հալապի խառայ առեալ յղեսցէ. իսկ թէ անդ ոչ գտանիցեն, գրեսցէ Նազարէթին, զի անտի առեալ յղեսցէ։ Եւ վասն Ֆայատօղլու ընծային կրկին պատուիրեաց գրել ինքեան զորպէսն։ Իսկ ե՝ ձեռամբ սորին նորապէս փօլիցայ արար ի վերայ Զաքարիա վարդապետին։ (Ժ) Որոյ աղագաւ և զփօլիցայագիր մի դրեալ ի վերայ Զաքարիա վարդապետին յղեաց առ սա՝ յղել առ Նազարէթն, զի նա ի Զաքարիա վարդապետէն առնուցու զդրամն (Ժ)։ Եւ վասն Յակոբ և Սարգիս վարդապետացն զմիամտութիւն գրեաց։ Եւ վասն իւր դրամին (ԲՇԳԸ) զոր տուեալ էր Հաճ գնացողացն տեղւոյս, (որպէս ի նոյեմ. ԻԹ ասացեալ է)։ Իբրահիմ Աֆանտին որպէս յայնժամ և այժմ ես զՍալահ անուն փոքրաւորն իւր յղեալ էր յԵրևան. և վասն Խանին և հաճու տղայ Մահմատ Ռզայբէկին ուրոյն գիր և ընծայ էր յղեալ։ Եւ վասն դրամոյն գրեալ էր թէ՝ մեզ պարտի հասանիլ։ Հալպաթ առնուք և յղէք։ Եւ որովհետև վասն մահուանն ի Կարսայ եկողացն խտրութիւն կայր ի մէջ երևանցւոցն, ուստի՝ մինչ Սալահբէկն եկն յԱթոռս, ոչ իշխեաց փութով երթալ յԵրևան. այլ սրբ. վեհին ասաց թէ՝ մարդ յղեա յԵրևան, և գիր գրեաց Խանին և Մահմատ Ռզայբէկին. և ծանոյց նոցա զորպէսն։ Եւ Մահմատ Ռզայբէկն հրամանաւ Խանին գրեալ էր առ սրբ. վեհն վասն Սալահբէկին թէ՝ ոչ ինքն գայ և ոչ գիրն, զի մահոտ են դոքա. ջուղապ տուր գնայ։ Յետոյ որովհետև ծնունդն մէջ անկաւ, վասնորոյ՝ և սրբ. վեհն զՍալաբէկն աստ արգելեաց, թէ քանի օր կաց, մինչև ծնունդն անցանի, յետոյ մեք ես գրեսցուք նոցա, և տեսցուք թէ զի՞նչ լինի։ Ապա յետ ծննդեանն՝ կրկին գրեաց սրբ. վեհն խանին և Մահմատ Ռզայբէկին զգալն Սալահբէկին։ Եւ նրանք գրեալ էին սրբ. վեհին թէ՝ զթէմէսուկն առ, և ընդ քոյ մարդոյն յղեա առ մեզ, զի գրամն առեալ յղեսցուք։ Եւ սրբ. վեհն ես զթէմէսուկն առեալ ի Սալահբէկէն, ետ մեր Միրզային, և յղեաց յԵրևան, զի գնացեալ առնուցու զդրամն ի նոցանէ։ Ինչևիցէ՝ յետ բազում գլխացաւութեանց, դրամի ջամն էր 2268 ղուրուշ, 323 ղուրուշ և կէս յԵրզրում էին հասուցեալ մհ. Փիլիպպոսին. 955 ղուրուշ և Լ փարայ ասա եառւն սրբ. վեհին. որ լինի հասուցելոց ջամն 1278 ղուրուշ. մնացեալն որ էր 990 ղուրուշ, ոչ ետուն։ Որպէս կամիս՝ հիսապ արա ասէ, և խրատ լինի քեզ։ Եւ հաճիքն ի Բեապայէն դառնալն ի Կարին, ի կողմանէ տալեացն իւ-

րեանց՝ ԴՃԷ ղռուշ հասուցեալ էին մհ. Փիլիպպոսին, և զապղ առեալ ի Նմանէ։ Որում և խոստացեալ էին՝ զմնացեալ դրամն ես յետոյ հասուցանել ինքեանս։ Եւ ի գալն Նոցա ասա, Թէպէտ սրբ. վեհն զայն զապղն էառ ի Նոցանէ զի յղեսցէ առ ժհ. Փիլիպպոսն, որում ես գրեաց Թէ զապղն ահա յղեցի քեզ, բայց մոռացմամբ առ մեզ մնաց։ Պօլսոյ պահարանն յղեաց առ սա, յղել առ եղբայրն իւր Խօջայ Նազարէթն, զի տացէ Զաքարիա վարդապետին։

Թուղթ ևս առ Իբրահիմ Աֆանդին դրեաց ի պատասխանի Թղթոյն։ (Որ ի դեկտ. Գ յիշեցաւ). ծանուցանելով Նմա զորպէսն հաճոնց տալեաց դրամոյն. (Որպէս և մհ. Փիլիպպոսին դրեաց։ Եւ ընդ Սալահբէկին ընծայ յղեաց առ Նա, Որ էր Բ լուլայ զարպապ. Ա լուլայ կանաչ զրզօվու Ե Թիլանի հնդու բրինձ. Ա մեծ ճերմակ մոմապատ, և Բ հոխայ վարդեջուր։

Թուղթ մի ևս առ Նորին վեքիլխարճ պարոն Գէորգն գրեաց՝ (որ ի դեկտ. Գ յիշեցեալ է). ի պատասխանի՝ ի դեկտ. ԻԹ գրեցեալ Թղթոյն։ Որում ևս ծանոյց զորպէսն հաճոնց տալեաց գրամոցն։ Եւ մհ. Փիլիպպոսն այժմ դրամ (ա) էր յղեալ առ սա և առ պ. Կօշտօն յղեալ ի ս. Աթոռս, և Նոքա ծանուցեալ էին ս. վեհին զհասանիլն դրամոյն առ ինքեանս։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց Նոցա, զի ընդ հաւատարմի յղեսցեն ի սուրբ Աթոռս։ Բայց յետոյ ի գնալն աստի Սալահբէկին՝ աստ դրամ (ծ) ետ մեզ, զի ի Կարս տացուք ինքեանս։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն գրեաց Գէորգին, զի ի մհ. Փիլիպպոսի յղեալ դրամոյն (ա) այս ինչ (ծ) տացէ Սալահբէկին ի տեղի դրամոյն իւրոյ, և զմնացեալն (գծ) ի սուրբ Աթոռս յղեսցէ։ Որում պատուիրեաց ևս՝ զի ըստ գրեցելոյ Գալուստ վարդապետին աս ինքն, քանի մի ուղտ առեալ յղեսցէ ի պէտս սրբոյ Աթոռոյս և զՊօլսոյ պահարանն առ սա յղեաց, յղել ի Կարին առ մհ. Փիլիպպոսն։

Թուղթ ևս առ Ալի Աղայն գրեաց ի Կարս՝ (որ ի դեկտ. Գ յիշեցեալ է). ի պատասխանի Թղթոյն, որ ընդ Ղօշավանից սուբաշի Գեամալմասուն Ա բեռն զէյթուն էր յղեալ վասն սրբ. վեհին. և հրաւիրեալ գնա ի հարսանիսն իւր։ Բայց ոչ գնաց։ Եւ վասն զէյթունին՝ շնորհակալութիւն գրեաց առ Նա։ Եւ առ Նա ևս ընծայ յղեաց ընդ Գեամալմասուն։ Որ էր Ե լիտր քացախ, և ԻԵ լիտր բրինձ։ Զվերոյիշեալ Թուղթսն Սալահբէկին ետուք տանել ընդ իւր և տալ Գէորգին, զի Նա ևս զՊօլսոյ պահարանն անտի յղեսցէ առ ժհ. Փիլիպպոսն ի Կարին, Սալահբէկն և Գեամալմասին ելին ի յնվ. Ժզ։

ՄԻԲ

Ի Հաշտարխան եւ ի Թիֆլիզ։ Առ Հաշտարխանու նուիրակ Յովսէփ պետն վասն խնդրոց ոմանց։ Եւ առ Յովհաննէս վարդապետն եւս վասն զրպարտելոյն զինքն չիք քահանայից ոմանց ընդ բանիւ առնելն զնոսա։ Եւ վասն երեցփոխութեան եւ այլ ինչ բանից։

’Ի Հաշտարխանու Նորոգ Նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետէն Թուղթք ժամանեցին առ սրբ. վեհս մեր մի զկնի միոյ։ Յորս գրեալ էր սրբ. վեհին զպէսպէս խնդիրս։ Որոց մինն էր այս, զի ի վերայ Պետրպօրքու և Մօսկովու յատկապէս զնուիրակութեան կոնդակ էր խնդրեալ ի սրբ. վեհէն վասն իւր. Վասնորոյ՝ և սրբ. վեհն ըստ խնդրոյ Նորին՝ զմէկ Նուիրակութեան և Առաջնորդութեան կոնդակ գրեալ ի վերայ Պետրպօրքու և Մօսկովու, յղեաց առ Նա։ Յորում՝ ժողովրդեանն զօրհնութիւն և զյանձնարարութիւն գրելով վասն Նորա։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն՝ յերեսն ՇԻԲ՝ ՇԻԳ։

Թուղթ մի ևս առ Յովսէփ վարդապետն գրեաց (որ ի յուլ. ԻԸ յիշեցաւ). ի պատասխանի չորեքին Թղթոցն իւրոց ի յուլ. Ի, ի սեպ. Է՝ ի հոկ. Բ՝ և ի ԻԸ գրեցելոց։ Եւ զկոնդակն առ Նա յղեաց։ Եւ բաց ի կոնդակէն՝ վասն տեղւոյ հին գումբեռնաթին, և վասն Եղիազար՝ Յովհաննէս՝ Գրիգոր և Սարգիս տղայից և ոմանց անձանց ևս էր զԹուղթս օրհնութեան խնդրեալ ի սրբ. վեհէն։ Իսկ որովհետև տեղւոյ հին Նուիրակ Մինաս վարդապետն աւարտեալ զգործն իւր գալոց էր ի սուրբ Աթոռս, վասնորոյ՝ և սրբ. վեհն

այժմ ոչ գրեաց ումեք զթուղթս, այլ եթող զի ի գալ Մինաս վարդապետին գրեսցէ։ Եւ մանաւանդ՝ այժմ հարկաւոր գրելի ես ոչ գոյր անդ։ Եւ վասն տօնախմբութեան տետերն (որ ի պատմութեան ՌՄԻ ամին է ի յուլ, ժ յիշեցաւ). խորագիր էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Վասնորոյ սրբ. վեհն զյառաջաբանութիւն մի վասն տետերն նորապէս շարադրեալ, և ըստ չափու տետերն և նոյն գրովն գրեցուցեալ, յղեաց առ նա, զի ընդ տետերն դիցէ, և թարգմանեցուցեալ ի նեբսն յղեսցէ։ Եւ վասն Դարբանդու գանձանակին խնդրեալ էր ես ի սրբ. վեհէն գրել տեղւոյ ժողովրդեանն, զի ինքեան հասուսցեն։ Բայց ոչ գրեաց նոցա սրբ. վեհն, զի յառաջագոյն գրեալ էր նոցա զտեղւոյ գանձանակին Գիլանու նուիրակին հասուցանել։ Զոր և ծանոյց սմա։ Եւ խնդրեալ էր ես՝ զի թէ կամիցի, մինչ ի յելանելն անտի պարոն Եսայուն զորքան արդիւնս առ ձեռն բերցի, տացէ նմա, զի մեք աստ ի նմանէ առցուք։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա այնպէս առնել։ Եւ վասն վտանկաւոր թղթոյ իմիք զբանս էր գրեալ առ սրբ. վեհն զի հոգ տարցէ։ Եւ սրբ. վեհն խոստացաւ նմա, ի գալն Մինաս վարդապետին ի սուրբ Աթոռս՝ զկատարեալ որպէսն նորին ի նմանէ իմացեալ, այնր ազագաւ զհոգս արասցէ։ Եւ ըստ խնդրոյ սորին՝ զորպէսն պատրիարգանալոյ Զաքարիա վարդապետին և տեղւոյ նուիրակութեան գրեալ ծանոյց։ Ընդ նմին և զորպէսն Թարխան Աղային ես գրեաց առ նա։ Զի նա թէպէտ այժմ ոչ էր ի կալանս, բայց զնա յայն կողմն յղելոյ համբաւ ոչ գոյր։ Եւ վասն Մըստրդամու գրոյն խնդրէր ի սրբ. վեհէն բերել տալ, զի Առաքելն վախճանեալ էր։ Բայց սրբ. վեհն ոչ կամեցաւ, զի գրոյ կարօտութիւն ոչ ունէաք այժմ. քանզի՝ յաջողմամբն Աստուծոյ քան զայն լաւ գիր մեք մեզէն հնարեցաք. որով ահա տօնացոյցն տպեցուցանեմք, և մերձ է ի լրանալ։ Յորմէ և զտետր մի յղեաց առ նա, զի տեսցէ, և իշխանացն ես ցուցցէ, զի տեսեալ ուրախասցին։ Նորատիպ տաղարան էր խնդրեալ. յորմէ Ե հատ յղեաց։ Եւ պատուէր՝ զի վասն Պետրոս վարդապետին անտի գնալոյ ի վիճակն իւր մի ես աշխատ լինիցի, զի որովհետև հաշտութիւն եղև, վասնորոյ յայս կողմամբս կամեցաւ յղել զնա ի վիճակն իւր։ Եւ Մոսկովու քահանայն վախճանեալ էր. վասնորոյ՝ և խնդրեալ էր սա ի սրբ. վեհէն փոխանակ նորին զԳիլմնու տէր Պետրոսն յղել անդ։ Որում և խոստացաւ սրբ. վեհն յետոյ գրել Գաւիթ Աղային վասն նորա, զի յղեսցէ անդ։ Եւ նմա ևս դրեսցէ առ ի յերթալ։ Եւ տեղւոյ քահանայիցն՝ իշխանացն և ժողովրդոցն, և յանուանէ Սարգիս՝ Գրիգոր՝ Մինաս և Ղևոնդ Աղայիցն ողջոյն և օրհնութիւն գրեաց։ Յղեցան այսք առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս պետն, զի ձեռամբ տէր Աբրահամին, անտի առ Յովսէփ պետն յղեսցէ ի Հաշտարխան։ Կոնդակ ևս վասն երիցփոխութեան պարոն Մկրտումին՝ առ Թիֆլիզու քահանայսն՝ իշխանսն և ժողովուրդսն գրեաց։ Ծանուցանելով նոցա զհրաժարիլն Մելիք Աւետքին յերիցփոխութենէն՝ և այժմ ի տեղի նորին և զպարոն Մկրտումն երիցփոխան կարգելն իւր։ Եւ պատուէր՝ զի ի սէր ունիցին զնա, և հնազանդ լինիցին նմա։ Յորում վասն Առաջնորդին իւրեանց Յովաննէս վարդապետին ևս յանձնարարութիւն և պատուէր գրեաց նոցա։ Որոց օրինակն է ի բոլորադրահամար տետրոջն՝ յերեսն ՇԾԸ՝ ՇԾԹ։

Թուղթ ևս առ Վանքի եկեղեցւոյ քահանայսն իշխանսն և ժողովուրդսն գրեաց։ Զի վասն աւագերիցութեան վէճ և խռովութիւն էր ի մէջ նոցա։ Վասնորոյ՝ և ոմանք յիշխանաց և ի ժողովրդոցն յեկեղեցին ոչ երթային. և մանաւանդ՝ արդեանց և կայից եկեղեցւոյն ևս վնասք հասանէին։ Եւ որովհետև այն եկեղեցին յատուկ թեմ վիճակ՝ և Առաջնորդն էր սրբոյ Աթոռոյս, վասնորոյ՝ և սրբ. վեհն զտէր Աստուածատուրն. զոր յառաջագոյն աւագէրէց էր կարգեալ ի վերայ նոյն եկեղեցւոյն, այժմ էհան յաւագերիցութենէն, և զեկեղեցին արար Աւագէրէց։ Եւ զտէր Պօղոսն ևս ժամօրհնօղ կարգեաց ի վերայ նոյն եկեղեցւոյն, որ զայսպիսի աւագերիցական գործս նմ արասցէ այսուհետև. և արդիւնք և աւագերիցութիւն, գիտութեամբ Առաջնորդին և քահանայիցն՝ եկեղեցւոյն լիցի։

Բանադրանաց թուղթ ևս առ չիք Մելքիսէթըն և չիք Գաբրէլն գրեաց։ Զի Առաջնորդն իւրեանց Յովաննէս վարդապետն փոխանակ լի-

գունելոյն և պատուելոյն, անարգեալ էին և հայհոյեալ, և զինքեանց արարեալ եղեռնագործութիւնն ի վերայ նորա եդեալ, յառաջագոյն դրեալ էին սրբ. վեհին. (որպէս ի դեկ. Թ ի Թղթոջ նոյն Յովաննէս վարդապետին ասացաւ,) և Յովաննէս վարդապետն վասն ի զուր զրպարտելոյն և անարգելոյն նոցա զինքըն, այժմ դանդատ էր դրեալ ի նոցանէ առ սրբ. վեհն. և զդաւաճանական դիրս առեալ ի քահանայիցն վասն նոցա՝ (յորս վկայեալ էին նոքա զՅովաննէս վարդապետէն անմեղ գոլ,) յղեալ էր առ սրբ. վեհն։ Որովք և սրբ. վեհին եղելութեանն վերահասու լեալ, իրաւամբ պատժելի եգիտ զնոսա։ Վասնորոյ՝ և ընդ բանիւ արար զնոսա։ Որոց և պատուիրեաց, զի թէ կատարեալ զղջացեալ՝ ի հանդիսի խոստովանեսցեն զչարիս իւրեանց, և առաջի Յովաննէս վարդապետին մեղայ գոչեսցեն և ուխտիցեն այսուհետև մնալ յուղղութեան, ի հնազանդութեան և ի հարազատութեան, հրաման է աստ նմա ի մէնջ արձակել զձեզ։ Եւ թէ ոչ՝ մինչև ի սատակիլն ձեր մաշելոց աստ զձեզ նզովիւք և պատժօք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Զոր յայս անգամս իբր ներելով գրեցի աստ ձեզ։

Թուղթ ևս առ պարոն Մկրտումն գրեաց՝ (որ ի նոյ. Է յիշեցաւ,) և զնա ի տեղի մէլիք Աւետքին երիցփոխան կարգեաց։ Որում և ծանոյց ի վերայ քաղաքին զկոնդակ գրելն վասն իւր։ Եւ պատուէր՝ զի երիցփոխութեան գործոյն իւրոյ ջաւապէս մուղայէթ լինիցի, և Առաջնորդին ևս ձեռնտու լիցի։ Եւ մանաւանդ ամենայն անկարգութեանց, այսինքն չհասից և օրինազանցութեանց և այլոց այսպիսեաց խափանօղ և արգելիչ լինիցի, և սրբոյ Աթոռոյս հասից և իրաւանցն և ամենայն գործոցն մուղայէթ և վերահասու լիցի։

Թուղթ մի ևս առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց (որ ի դեկտ. Թ յիշեցաւ.) ի պատասխանի թղթոյն։ Զոր հանդերձ փուսուլայիւք և քահանայից տուեալ դաւաճանական ձեռագրովքն յղեալ էր։ Որում և ծանոյց զչիք Մելքիսէթն և զչիք Գաբրէլն վասն իզուր զրպարտելոյն զինքն ընդ բանիւ տռնելն։ Որում և պատուիրեաց՝ զի թէ նոքա զղջացեալ յանկարգ արարմանցըն իւրեանց և եկեալ առ ինքն մեղայ գոչեսցեն, արձակեսցէ զնոսա ի բանադրանացն, և թէ ոչ՝ մի արձակեսցէ։ Որում ծանոյց զպարոն Մկրտումն երիցփոխան կարգելն ի վերայ քաղաքին։ Եւ զՎանք եկեղեցւոյ աւագ երիցութիւնն բառնալն, և ըստ խնդրոյ միաբանիցն նորին զեկեղեցին առնելն աւագ էրէց, և զտէր Պօղոսն ևս ժամօրհնօղ։ Կրկին պատուէր՝ զի ի գալն Մինաս վարդապետին անդ, փութով յղեսցէ ի սուրբ Աթոռս։ Եւ Յովսէփ վարդապետն՝ վասն Գալուստ անուամբ աբեղայի միոյ գրէր թէ՝ ի բերանոյն գիր առի, որ յայլ ուրեք ոչ երթիցէ. այլ ի սուրբ Աթոռդ եկեսցէ։ Բայց նա դեռ ոչ էր եկեալ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն պատուիրեաց սմա մուղայէթ լինիլ, և ի գալն նորա անդ ի սուրբ Աթոռս յղել։ Զվերոյիշեալ թուղթսդ ընդ միոյ զինակրի մերոյ՝ առ վրացի Ստեփաննն յղեցաք յԵրևան, յղել առ Յովաննէս վարդապետն ի Թիֆլիզ՝ զի նա զտեղւոյ գրեանսն իւրաքանչիւր տեարցն տացէ. և զՀաշտարխանու գրեանսն ձեռամբ տէր Աբրահամին առ Յովսէփ վարդապետն յղեսցէ ի Հաշտարխան։ Գրեցաւ ի յնվ. ԻԱ։

Եկաւ հասաւ ի Կարին։

Թուղթ օրհնութեան առ պարոն Ղազարն գրեաց ի Կարին, որ զհանգուցեալ հօրն իւրոյ պարոն Ստեփանի հոգեբաժինն (Ծ) սրբոյ Աթոռոյս վէքիլ տէր Մանուէլին էր տուեալ յղել ի ս. Աթոռս։ Զոր և նա հասոյց մեզ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն զայս թուղթս գրեալ՝ ետ Կարնոյ նուիրակ Իսահակ վարդապետին, յղել առ տէր Մանուէլն՝ զի տացէ նմա ի միամտութիւն իւր։ Գրեցաւ ի յնվ. ԻԱ։

ՄԻԳ.

Ի Բայազիտ՝ Համաղանցի Յովաննէս վարդապետին պատուէր՝ զի գայցէ ի սուրբ Աթոռս։

Սրբոյն Աղիմայ նուիրակ Համաղանցի Յովաննէս վարդապետն (որ ի դեկտ. ԻԹ յիշեցաւ,) ըստ հրամանի սրբ. վեհին ի Թար-

վիզու ևկեալ էր ի Բայազիտ։ Եւ անտի գրեալ էր սրբ. վեհին զգալուստն իւր անդ։ Բայց վասն Բ՝ց պատճառաց ոչ կամէր գալ ի սուրբ Աթոռս։ Նախկին պատճառն էր այս, թէ ի պատրիարգէն իմմէ և յիշխանացն երկնչիմ գալ։ Երկրորդն թէ՝ վասն տէր Ղուկասին լուեալ եմ ասէ թէ արձակեալ ես ի բանադրանացն և ի սէր ունիս։ Ուրեմն անօգուտ է ասէ գալն իմ ի սուրբ Աթոռդ. զի գիտեմ ասէ որ ի դատելն քո զմեզ՝ նա անպարտ է լինելոց առաջի քո, և ես պարտաւոր։ Բայց սրբ. վեհն ոչ եղև ունկնդիր յիմարաբար գրեցելոցն նորին, զի զտէր Ղուկասն ի վաղուցհետէ արգելեալ էր աստ վասն նորա։ Ուստի՝ և սպասէր գալստեան նորա, զի նա ես եկեալ աստ, երկոքեանն ես ի միասին ներկայացին առաջի իւր. և ապա յայնժամ հարցաքննութեամբ իրաւանցն վերահասու լեալ, հատցէ զվէճս նոցա։ Եւ մանաւանդ վասն մեծի խռովութեան Հնդկաց (զոր արարեալ էր նա անդ։ Որպէս ի սեպտ. ելն ասացաւ.) խոստացեալ էր իշխանացն տեղւոյն բերել զնա ի սուրբ Աթոռս, և դատել ըստ արժանւոյն։ Ցաղագս որոյ ոչ կամեցաւ նմա թարց գալոյ ի սուրբ Աթոռս երթալ ի տեղի իւր, զի այսու կամէր շահել զսիրտս նոցա, և բառնալ զտարաձայնութիւնն ի միջոյ։ Զի մեծ էր խռովութիւն՝ և յոլով բողոքն գանգատանաց նոցա զնմանէ։ Զորս աստանօր ոչ երկրորդեմ, զի մի վերստին կրկնարանեցից, զի զամենայն անցսն և զօրպէսն նորին՝ ի սեպ. ելն լրապէս ասացեալ եմ։ Եւ վասն վերոգրեալ պատճառացդ, ոչ կամեցաւ սրբ. վեհն զի նա թարց գալոյ ի սուրբ Աթոռս երթիցէ ի տեղի իւր։ Վասն որոյ հրամայեաց Երեմիա Մկրտիչ և Սարգիս վարդապետացն զթուղթ մի դրել առ նա, զի ի բաց թողեալ զամենայն այլ և այլ պատճառաբանութիւնս իւր, փութով եկեալ գայցէ ի սուրբ Աթոռս։ Ցղեցաւ այս առ Յովաննէս վարդապետն ի Բայազիտ՝ ընդ տէր Վահանի յղեալ յատուկ փայեկին։ Որ եւ ի յնվ. Լ։

ՄԻԴ.

Ի Շիրազ՝ Առ Մահմատ Էմինն վասն Թղթաշինի։

Մահմատ Հասանխանի քեռորդի Մահմատ Էմինն ընդ Թղթաշինի աշակերտ Մահմատ անուամբ տաճկին գրեալ էր առ սրբ. վեհն թէ՝ լուեալ եմ թէ ի տէր Դաւթէն թղթաշէն ես խնդրեալ, բայց նա ոչ կարէ թղթաշէն բերել, և թէ կամիցիս՝ ես յղեցից ասէ։ Սակայն՝ ոչ նուիրակն էր գրեալ վասն թղթաշինին, և ոչ Աւետիք վարդապետն, այլ միայն նա գրէր։ Իսկ որովհետև սրբ. վեհն քան զայս յառաջ ի յնս. Ի՛Է գրեալ էր նուիրակին թղթաշէն բերել ընդ իւր։ Եւ Աւետիք վարդապետին ևս բերան առ բերան պատուիրեաց վասն թղթաշինի արդ առնել Քեարիմխանին, վասնորոյ՝ զթուղթ մի գրեաց առ նոսա։ Ծանուցանելով նոցա զմիտս թղթոյ Մահմատ Էմինին։ Որոց և պատուիրեաց՝ զի թէ ըստ հրամանի իւրոյ մինչև ցայժմ խօսեցեալ իցեն ընդ թղթաշինին, բերելոց են զնա ընդ իւրեանս, բերցեն։ Թէ ոչ՝ ընդ Մահմատ Էմինին խօսեսցեն, և զնորին յառաջադրեալ թղթաշէնն բերցեն։

Թուղթ մի ևս առ Մահմատ Էմինն գրեաց։ Որում և ծանոյց զգրելն առ տեղւոյ նուիրակ Ստեփաննոս և Աւետիք վարդապետն վասն թղթաշինի։ Եւ զթուղթն նոցա յղեաց առ նա զի տացէ նոցա, և ի նոցանէ հարցեալ իմասցի զօրպէսն թղթաշինին. զի թէ նոքա ըստ պատուէրի իւրոյ զթղթաշէնն պատրաստեալ են բերել ընդ իւրեանս, բարի է։ Եւ թէ ոչ՝ զիւր խոստացեալ թղթաշէնն յանձնեսցէ նոցա առ ի բերել ի սուրբ Աթոռս։ Ցղեցան այսոքիկ առ Մահմատ Էմինն ընդ նորին յղեալ Մահմատին։ Որ եւ ի յնվ. ԼԱ։

ՄԻԵ.

Ի Բաղդատ եւ ի Բասրա։ Առ մ՟Տ. Յարութիւն՝ Միքայէլ՝ Ալէքսան եւ Մարգար Աղայսն, յանձնարարութիւն՝ վասն տէր Գէորգին։

Շամպեցի Սաղաթիէլն և իւր եղբայր Յարութիւնն ի Հնդիկս բնակեալ յանձանց

ոմանց սանատով առնելացուք ունէին։ Եւ ի ՌՄԺԶ թուոջն ի գալն տէր Գէորգին ընդ լուսահողի Ցովսէփ վարդապետին ի Հնդիկս, գնա վէքիլ էին արարեալ թղթովք, զի գընացեալ առնուցու ի պարտատեարցն զդրամս իւրեանց։ Իսկ ի հասանելն նորա ի Հնդիկս, վէքիլլամայքն և սանատքն ի ծովն էր գընացեալ։ Եւ նա ես ոչ զպարտատեարսն էր տեսեալ, և ոչ դրամ ինչ առեալ ի կողմանէ վէքիլութեան ըստ իւր ասիցն։ Եւ յետ ժամանակաց ի դառնալն նորա ի Բայազիտ, վէքիլ առնօղ արքն այնոքիկ խնդրեալ էին ի նմանէ զդրամս իւրեանց։ Իսկ նա թէպէտ մահսար և թուղթ էր ցուցետլ նոցա, ասելով թէ՝ ոչ զձեր պարտատեարսն եմ տեսեալ, և ոչ դրամ ինչ առեալ, բայց նոքա ոչ էին հաւատացեալ նմա. այլ ի ձեռն տաճկաց բազում վնաս էին հասուցեալ նմա։ Եւ ի րերանոյ նորա ես զթուղթ էին առեալ, զի գնացեալ յայն կողմունսն, ի նշանաւոր արանց ոմանց վերստին հաստատուն մահսար բերցէ առ ինքեանս, զի յայնժամ միամտեալ այնու, հաւատասցեն ասացելոցն իւրոց։ Եւ նա ես եկեալ աղաչեաց զսրբ. վեհն գրել ի Բաղդատ և ի Բասրա Ցարութիւն՝ Միքայէլ՝ Ալէքսան և Մարդար Աղայիցն, զի ի գնալն իւր յայն կողմունսն, մուղայէթ և հօգացօղ լիցին բանիցն իւրոց։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ըստ խնդրոյն նորա՝ զթուղթ գրեաց նոցա։ Պատուիրելով նոցա, զի ի գնալն տէր Գէորգին առ ինքեանս այսու թղթովս, և ի պատմելն ինքեանց զայս եղելութիւնս, մուղայէթ լիցին նմա, և յԱստուածակոյս կողմանէ մէկ հաստատուն մահսար բերել տացեն առ նա, որ բերեալ ցուցցէ զպարտողացն իւրոց և ազատիցի, և միամտութեամբ զկարգն իւր պաշտեսցէ։ Զայս վասն այն գրեաց նոցա սրբ. վեհն, զի նա ասաց թէ՝ նոքա ես լաւ տեղակ են այս եղելութեանս։ Եւ վասն ընչիցն Հնդկաց նուիրակ լուսահոգի Ցովսէփ վարդապետին՝ որպէս ի սեպ. ելն, և այժմ ես զմիամտութիւն գրեաց նոցա, զի զայնս ձեռամբ սոյն տէր Գէորգին առ մեզ հասեալ իմասցին՝ և միամտեսցին։ Ել տէր Գէորգն այսու թղթովս ի յնբ. ԼԱ։

Փոլիցայ ի վերայ Կարսայ Նուիրակ Գրիգոր պետին ի ձեռն կարսեցի Գէորգին:

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Կարսայ նուիրակ Գրիգոր վարդապետն։ (որ ի սեպ. Գ յիշեցեալ է.) պատուէր՝ զի ի նուիրակական արդեանցն իւրոց (4) կամ՝ (5) տացէ կարսեցի Գէորգին, և դապղ առեալ ի նմանէ առ մեզ յղեսցէ, զի մեք միամտութիւն գրեսցուք առ ինքն։ Եւ պատուէր՝ վասն գործոյն։ Թուղթ մի ես առ կարսեցի պարոն Գէորգն (որ ի յնվ. ԺԶ յիշեցաւ.) որում և ծանոյց զգրելն առ նուիրակն, զի դրամ տացէ ինքեան։ (4) կամ (5) և պատուէր՝ զի յառնուլն ի նուիրակէն զդրամս, զապղ տացէ նմա, և այն դրամովն ի պէտս սրբոյ Աթոռոյս զիրս առեալ յղեսցէ առ մեզ։ Իսկ վասն այն դրամոյն (Ծ) զոր ի յնվ. ԺԶ գրեաց սմա տալ Սալահ Աղային, այժմ ոչինչ գրէր սրբ. վեհին թէ տուեալ է թէ ոչ։ Վասն որոյ՝ և սրբ. վեհն պատուիրեաց սմա դրել առ ինքն զտալն դրամոյն։ Ցղեցան այսոքիկ ընդ աշտարակցւոցն առ Գէորգն։ Որք ելին ի փետր. Բ։

ՄԻՋ·

Ի Կարս՝ առ Ալի փաշայն՝ առ Իբրահիմ Աֆանտին եւ առ յայլս։ Խնդիր՝ վասն թղթաշէն ֆռանկացն, զի յղեսցեն ի սուրբ Աթոռս։

Ըստ դրելոյ և խոստման մեծահաւատ և բարեպաշտ Զաքիկենց Գրիգոր Աղային, (որպէս ի պատմութեան ՌՄԻԱ ամին և ի նոյ. Բ ասացաք։) ի. Փարէզ քաղաքէն Բ թղթաշէն ֆռանկ էին եկեալ ի Պօլիս։ Որոց միոյն անունն Ցովսէփ էր, և միւսոյն Ցովաննէս։ Եւ պատրիարգն և իշխանքն մինչ լուեալ զգալն նոցա, ըստ պատուիրի սրբ. վեհին սիրով ընկալեալ էին զնոսա, և ի թագաւորէն ֆարման հանեալ վասն նոցա, և զՋամճիօղլի պարոն Ստեփաննն թարգմանիչ տուեալ նոցա, յանձնեալ էին զնոսա թաթարի միոյ հասուցանել ի սուրբ Աթոռս։ Բայց թաթարն մինչև ի Կարս էր բերեալ զնոսա, և ինքն անտի յետս դարձեալ։ Եւ ի լսելն փաշային զգալն նոցա, կոչեալ էր զնոսա առ ինքն, և հարցեալ զպատճառն գալստեան իւրեանց։ Իսկ նոքա վասն երկիւ-

ղին ոչ էին ասացեալ Նմա զճիշտն։ Այլ պատասխանեալ էին Նմա թէ՝ մեք ուխտ եմք եկեալ ի սուրբ Աթոռն։ Եւ փաշայն լրտես կարծելով զնոսա, ի կալանս էր արարեալ. և վասն Նոցա գրեալ ի դուռն Արքային։ Ասելով Նոցա թէ՝ ոչ գոյ ձեզ հրաման աստէն յուրեք երթալոյ, զի ֆարմանն ձեր այնպէս է գրեալ վասն ձեր։ Եւ թարգմանիչն և պարոն Գէորգն գրեալ էին սրբ. վեհին զորպէսն։ Բայց թարգմանիչն սրբ. վեհին ես ոչ էր գրեալ զով լինելն Նոցա։ Այլ սրբ. վեհն ըստ գրեցելոյ և խոստման Չաքիկենց Գրիգոր Աղային կարծեաց եթէ Նոքա թղթաշէնքն իցեն։ Վասնորոյ՝ զԱշտարակցի Գէորգն հանդերձ ընծայիւք յղեաց առ փաշայն։ Գրելով փաշային և այլոց զթուղթս վասն Նոցա։ Որք են այսք։

Թուղթ սիրոյ առ Կարսայ Ալի փաշայն գրեաց։ (որ ի յօգ. ԺԶ յիշեցեալ է։) յորմէ և խնդրեաց, զի վասն թղթաշինացն զոր ինչ գրեալ է Իբրահիմ Աֆանտուն, այնպէս արասցէ։ Որում և ընծայ ես յղեաց։ Որ էր Դ լուլայ զարպապ. Է սպիտակ մոմ. Բ հոխայ վարդեջուր, և փոքր ինչ միրգ։

Թուղթ սիրոյ ես առ Իբրահիմ Աֆանտին։ (որ ի յնվ. ԺԶ յիշեցաւ.) փուսուլայ մի ես գրեաց առ Նա վասն թղթաշինացն։ Զի արգ արարեալ փաշային, յղել տացէ զնոսա ի սուրբ Աթոռս։

Թուղթ ես սիրոյ առ Ղարարէկն գրեաց։ (որ ի դեկտ. Գ յիշեցեալ է,) թուղթ ևս Ջամճիօղլի Թարճիման պարոն Ստեփաննն գրեաց ի պատասխանի թղթոյն։ Որ զաքգելումն իւրեանց ծանուցեալ էր սրբ. վեհին, յորմէ և զօգնութիւն խնդրեալ։ Ոչ գրելով բնաւ զպատճառն գալստեան իւրեանց։ Որում և ծանոյց սրբ. վեհն զգրելն իւր առ փաշայն և առ Իբրահին Աֆանտին վասն Ինքեանց։ Եւ պատուէր՝ զի թէ փաշայն մուրախաս արասցէ զինքեանս, բարի է. և թէ ոչ՝ ընդ իւր յղեալ գրեանսն տացէ Գէորգին առ ի բերել առ մեզ։ Եւ գինի յղեաց վասն Նոցա։

Թուղթ ևս առ Պոլսոյ պատրիարգ Զաքարիա վարդապետն։ (որ ի յնվ. ԺԶ յիշեցաւ.) պատուէր՝ զի թէ Նոքա թղթաշէնքն իցեն, և փաշայն ըստ դրելոյ իւրոյ մուրախաս չարասցէ զնոսա, ինքն բան հոգասցէ վասն Նոցա։ Իսկ թէ փաշայն մուրախաս արասցէ զնոսա, մի ևս աշխատ լիցի ինքն։ Յղեցաւ այս առ պարոն Գէորգն։ Պատուիրելով Նմա, զի թէ փաշայն մուրախաս արասցէ զթղթաշէնսն, զայս թուղթս յետս դարձուսցէ առ մեզ։ Եւ թէ ոչ՝ յղեսցէ առ պատրիարքն, և ինքն ևս գրեսցէ Նմա զորպէսն անցիցս։

Թուղթ ևս առ Իբրահիմ Աֆանտու վէքիլխարճ պարոն Գէորգն դրեաց ի պատասխանի թղթոյն. (որ ի յնվ. ԺԶ յիշեցեալ է,) որ զորպէսն թղթաշինացն գրեալ էր սրբ. վեհին, Պատուէր՝ զի թէ Նոքա թղթաշէնքն իցեն, ի ձեռն Աֆանտուն մուրախաս առնել տացէ Նոցա։ Իսկ թէ փաշայն չթողուցու զնոսա, ինքն այսքան (Ծ) խարճի տացէ Նոցա։ Զորս և ի սէր ունիցի։ Բայց յետոյ մեր Գէորգին պատուիրեաց ասել Նմա, զի այսքան (1) խարճի տացէ Նոցա։ Եւ զթուղթսն մեր առեալ ի Նոցանէ, առ մեզ յղեսցէ։ Ընդ Գէորգին առ Նա յղեցան թուղթս այսոքիկ, իւրաքանչիւր տեարցն տալ։ Որ ել ընդ զինակրացն մերոց, յամսոյս Գ։

Թուղթ օրհնութեան ի վերայ անձանց ոմանց, ըստ խնդրոյ Բայազիտու Նուիրակին։ Առ որ և միամտութիւն՝ վասն Նորապէս յղեալ արդեանցն առ մեզ:

Ըստ խնդրոյ Բայազիտու Նուիրակ Գալուստ վարդապետին՝ զօրհնութեան թուղթս գրեաց սրբ. վեհն առ ոմանց անձինս։ Որք են։

Թուղթ մի օրհնութեան առ պարոն Սեօն։ Որ Նուիրակին Ա ձագ էր տուեալ յանուն սրբոյ Աթոռոյս։

Թուղթ մի ևս յանձնարարութեան վասըն Նուիրակին, առ պարոն Բարիկն՝ ուստայ Սահակն՝ Խօջալ Մկրտիչն՝ պարոն Կիրակոսն՝ պարոն Սնօն, և պարոն Սարօն դրեաց։ Թուղթ մի ևս միամտութեան առ Բայազիտու Նուիրակ Գալուստ վարդապետն դրեաց։ (որ յանցեալ ամին՝ ի փետր. Գ յիշեցեալ է,) զի ի Նուիրակական արդեանցն իւրոց՝ դրամ (ԺԵ) էր յղեալ առ տէր Վահանն։ Զոր և Նա ձեռամբ Սաղիմայ Նուիրակ Յովաննէս վարդապետին այժմ առ մեզ հասոյց։ Զորս ընդ Տլոտ կոչեցեալ Պետրոսին առ տէր Վահանն յղեցաք. հասուցանել Նուիրակին։ Որ ել ի փետր. Թ։

Թուղթ ժողովարարութեան ի վերայ Թիֆլիզու՝ յանուն սրբոյ Խորվիրապայ վանիցն։ Որ տուաւ Նորին Առաջնորդ Մարկոս պետին;

Ըստ խնդրոյ սրբոյն Խորվիրապայ վանից Առաջնորդ Մարկոս վարդապետին, զժողովարարութեան թուղթ գրեաց սրբ. վեհն ի վերայ Թիֆլիզու քաղաքին։ Պատուէր նոցա, զի թէ ինքն Մարկոս վարդապետն այսու նամակաւս երթիցէ առ ինքեանս, և կամ զոմն ի միաբանից իւրոց առաքեսցէ, յանուն սրբոյն Խորվիրապայ վանիցն զկամաւոր ողորմութիւն տացեն նմա։ Կրկին պատուէր՝ զի յանուն նոյն վանիցն որքան գանձանակագրամք՝ խոստմունք՝ և դուքեանաց և օտայից քրեհք գոն, զայնս ես յանձնեսցեն նմա։ Զոր ետուք նոյն վանից Առաջնորդ Մարկոս վարդապետին։ Զորս նորատիպ Սաղմոս ևս ետուք նմա։ Որ եւ աստի ի փետր. Ժ։

Առ Ռէս պարոն Դիլանն շնորհակալութիւն՝ վասն յղեալ ընծայիցն։

Թավլայու գիւղի Ռէս պարոն Գիլանն՝ (որ յանցեալ ամին և ի փտր. Ե յիշեցեալ է.) ընդ որդւոյն իւրոյ Ստեփանին Ա կով, Ա տիկ մաստրոն, և Գ լիտր տարեխ էր յղեալ յընծայ սրբ. վեհին։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն զթուղթ մի շնորհակալութեան գրեաց առ նա։ Եւ ընդ Ստեփանին Ժ լիտր բրինձ, և Բ լիտր քացախ ես յղեաց առ նա։ Եւ Ստեփանն ի փետր. ԺԲ։

ՄԻԷ.

Ի Կարին՝ առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն, միամտութիւն վասն յղեալ ընչիցն, եւ վասն գալստեան Թղթաշէն Ֆռանկացն ի սուրբ Աթոռս։

Արապկերցի Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն՝ (որ ի ԺԶ յնվ. յիշեցեալ է.) ըստ խնդրոյ սրբ. վեհին Ա բեռն ճոթեղէն զիրս առեալ, ընդ Ջալապաց ոմանց յղեալ էր ի սուրբ Աթոռս, և ընդ նոսա զթուղթս գրեալ առ սրբ. վեհն։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ի պատասխանի թղթոցն և վասն առ մեզ յղեալ ընչիցն, զթուղթ միամտութեան գրեաց առ նա։ Եւ զի ոչ ունէաք ըստ բաւականին զգրաստս։ Ուստի՝ պատուիրեաց սմա, զի քանի մի նորահասակ ջորի և ուղտ առեալ յղեսցէ ի պէտս սրբոյ Աթոռոյս։ Եւ Կարսայ Եկեան Ալի փաշայն ըստ խնդրոյ սրբ. վեհին՝ զԹղթաշէն ֆռանկսն և զթարգմանն նոցա (զորս վասն իմիք պատճառի ի կալանսն ունէր.) մուրախաս էր արարեալ։ Եւ յայսմ աւուր՝ որ էր փետրվարի ԺԳ, ընդ Գէորգին եկեալ նոքա մտին ի սուրբ Աթոռս։ Առ այս՝ ոչ սակաւ ցնծութիւն եղև սրբ. վեհին, զի ի վաղուց հետէ ցանկայր և սպասէր զալստեան նոցա։ Զի որպէս յաջողմամբն Աստուծոյ զտպագրատունն հաստատեաց ի սուրբ Աթոռոջս, նոյնպէս և ի ձեռն նոցա՝ զԹղթաշինութիւն ևս հաստատել ջանայր։ Զի վասն թղթոց կարի պակասութիւն ունէաք, զոր ըստ բաւականին առ ձեռն բերել ոչ կարէաք։ Եւ մանաւանդ առեցեալն ևս ըստ մեծի մասին անօգուտ և անապավայել լինէր։ Պատուէր՝ գրել պատրիարգին զգալն Թղթաշինացն, զի միամտեսցի։ Զի ինքն զկովին որպէսն նոցա՝ յետոյ գրել խոստացաւ նմա։ Զւ հաճի Ֆահրատն սորա ղապզն կորուսեալ էր. և սրբ. վեհն ի տեղի ղապզին հուճէթ էառ ի նմանէ, և առ սա յղեաց։ Որում և ծանոյց զորպէսն։ Փետր. ԺԴ.

ՄԻԸ.

Առ վրաց Անտօն կաթողիկոսն զբացասաց պատասխանի վասն անպատշաճ խնդրոյն։ Եւ շնորհատրութիւն վասն գալստեանն։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Վրաց Անտօն կաթուղիկոսն (որ ի պատմ. ՌՄԻ ի յլս. ԺԷ յիշեցեալ է.) ի պատասխանի թղթոյն։ Զի վասն տէր Ղազարին Աւագ երիցութիւն էր խնդրեալ սա ի սրբ. վեհէն. բայց ոչ ետ։ Զի ղաէր Սահակն նոր էր գործակալ և վէքիլ կարգեալ ի Գօրի։ Ուրեմն անպատշաճ էր փութով փոխելն զնա, և զտէր Ղազարն Աւագ էրէց կարգել ի վերայ նոյն գեղջն։ Եւ

զի՛ Արքայն Վրաց Հերակլէս ի ՌՄԻ թուոջն վասն հարկաւոր խնդրոց ոմանց՝ զորդին իւր զԼեւոն միրզայն և զսա առաքեաց առ Թագաւորն Ռուսաց Եկատերինէն։ Որք յայսմ ամի վերադարձեալ անտի եկին ի քաղաքն։ Վասնորոյ՝ և շնորհաւորութիւն գրեաց սմա։ Զոր ընդ նոյն գրաբերին յղեցաք։ Որ էր վերոյիշեալ տէր Ղազարի որդին։ Որ եւ աստէն ի փետր. ԺԵ։

ՄԻԹ

Առ պատրիարգն եւ իշխանսն Պօլսոյ ըստ խնդրոյ Վանեցւոյն, վասն Թամուր փաշային։

Վանայ Իսաղ Աղայի եղբայր Թամուր Աղայն զԲեարքուտու փաշայութիւնն առեալ, եկեալ էր ի Վան։ Եւ անտի երթալոց էր ի վիճակեալ տեղին իւր։ Բայց Վանեցիք արդելեալ էին զնա անդ. զի ոչ կամէին նմա երթալ ի Բեարքիւտ. այլ կամէին մահսար գրել ի Պօլիս վասն նորա, զի ի վերայ Վանայ երկրին իւրեանց փաշայ առնել տացեն զնա։ Որոյ աղագաւ՝ նոյն Իսաղ Աղայի եղբօր որդի Ահմատ բէկն և գլխաւոր իշխանքն տեղւոյն գրեալ էին աղերսիւ առ սրբ. վեհն, զի ինքն ես գրեսցէ պատրիարգին և իշխանացն Պօլսոյ վասն նորա։ Վասնորոյ և սրբ. վեհն ըստ խնդրոյ և աղերսանաց նոցին, զթուղթ գրեաց առ պատրիարգ Զաքարիա վարդապետն և գլխաւոր իշխանսն Պօլսոյ, ծանուցանելով նոցա զխնդիր վանեցոցն վասն Թամուր փաշային։ Եւ պատուէր զի թէ կարելի է՝ կատարումն տացեն խնդրոց նոցին։ Եւ առ Թամուր փաշայն՝ առ Վանեցիսն և առ ինքն զմխիթարութիւն գրեսցեն։

Թուղթ մի եւս՝ առ Իսաղ Աղայի եղբօր որդի Ահմատ բէկն, (որ ի յնս. Ի յիշեցեալ է.) ի պատասխանի թղթոյն՝ Մխիթարութիւն՝ վասն խնդրոյն իւրոյ։ Թէ ահա ըստ խնդրոյդ գրեցաք պատրիարգին և իշխանացն վասն Թամուր փաշային։

Թուղթ եւս առ Վանայ գլխաւոր իշխանսն գրեաց ի պատասխանի բաղմակնիք մահսարին իւրեանց, զոր վասն Թամուր փաշային գրեալ էին։ Եւ զթուղթ պատրիարգին և իշխանացն ըստ խնդրոյ նոցին գրեալ յղեաց առ նոսա։ Պատուիրելով նոցա զի թէ բոլոր երկրականքն վասն Թամուր փաշային համակամութեամբ մահսար շինեալ յղեսցեն ի Պօլիս, ինքեանք ևս զթուղթն պատրիարգին և իշխանացն առ նոսա յղեսցեն։ Եւ թէ ոչ՝ յետս դարձուսցեն առ մեզ։ Ցղեցան այսոքիկ առ Վանայ իշխանսն ընդ նոցա յղեալ գրաբեր Աբրահամ փայեկին։ Որ եկ ի փետր. ԺԷ.

ՄԼ.

Առ Հերակլ Արքայն եւ առ որդի նորին Գէօրկին միրզայն թուղթ սիրոյ՝ ի պատասխանի սիրոյ թղթոյն իւրեանց։

Արքայն Վրաց Հերակլէս՝ (որ ի յլս. ԺԵ յիշեցաւ.) վասն խանի տալեաց դրամոյն, զՇիօշբէկ Մօլարէթխուցէսն իւր յղեալ էր առ նա, զի առեալ ի նմանէ զդրամն տարցէ առ ինքն։ Ընդ որում և սիրոյ թուղթ էր գրեալ առ սրբ. վեհն։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ի պատասխանի թղթոյն՝ զթուղթ սիրոյ գրեաց առ նա։

Թուղթ մի ևս սիրոյ առ որդի նորին Գէօրկին Միրզայն գրեաց ի պատասխանի սիրոյ թղթոյն։

Թուղթ մի ևս առ տեղւոյ Առաջնորդ Ցովհաննէս վարդապետն գրեաց։ Ծանուցանելով նմա զչիք Մելիքսէթն և զչիք Գարրէլն ընդ բանիւ առնելն, և զբանադրանքն նոցա քան զայս յառաջ ի յնվ. ԻԱ առ ինքն յղելն։ Եւ ըստ խնդրոյ կաթուղիկոսին ոչ տալն զաւագ քահանայութիւն տէր Ղազարին։ Եւ զի տէր Աստուածատուրն աղքատի միոյ դրամ էր փոխ տուեալ։ Եւ յետ միջոցի ինչ՝ աղքատն այն դրամն հատուցեալ էր նմա, և զսանատն իւր խնդրեալ ի նմանէ։ Իսկ նա ոչ էր տուեալ նմա զսանատն. կամելով շահ ևս առնուլ ի նմանէ և ապա տալ զսանատն։ Զոր ի լսելն սրբ. վեհին, պատուիրեաց սմա՝ զի ի տէր Աստուածատուրէն առեալ զսանատն, տացէ աղքատին։ Եւ ի գնալն աստի Մոլարէթխուցէսին, ըստ խնդրոյ թղթաշինացն ասաց նմա սրբ. վեհն, զի ի քաղաքէն

Բ տուրկեաբս՝ Ա խառատ և Ա դաբբին յղեսցէ աստ։ Զի բազում լաւ տրհեստաւորք էին պիտոյ Թղթաշինութեան գործեացն, բայց լաւն ոչ գտանիւր աստ։ Զոր և ծանոյց սմա, զի յղել տացէ։ Ցղեցան այսոքիկ ընդ Մոլաբէքթխուցէսին։ Որ եւ ի սրբոյ Աթոռոյս, ի փետրուար ԻԴ.

ՄԼԱ.

Առ Սաղիմայ պատրիարգ Պօղոս վարդապետն սիրով մեղադրութիւն, որ ի զուր վատահամբաւէր զսրբ. վեհս մեր։ Եւ առ Պօլսոյ իշխանն եւս թուղթ վասն Սարգիս վարդապետին։ Թէ անա ըստ խնդրոյ ծերոյ եպիսկոպոս արարեալ վերադարձուցի։—Եւ այլ եւս թուղթք առ այլս։

Սրբոյ Երուսաղեմի պատրիարգ Պօղոս վարդապետն՝ զանցեալ զկանոնոք քան զինքն յառաջ անդ նստօղ պատրիարգաց՝ որովք վարէին նոքա առ սրբ. կաթուղիկոսունս սրբոյ և մեծի Աթոռոյս խոնարհութեան ճանապարհաւ իբրև զստորադրեալս, սկսանէր այլ իմնապէս վարիլ։ Եղեալ զինքն յաստիճան մեծապատուութեան, իբր ընկեր՝ համաստիճան և պատուակից դոլ մեծամտէր կաթուղիկոսի։ Եւ վասն այսր ամենայնի, սակս ոչինչ և ունայն և սուտ պատճառաց վատահամբաւէր զսրբ. վեհն մեր նոյն մեծամտութեան ոճիւն, գրելով զգանկատս առ իշխանս Պօլսոյ՝ և առ այլս ես հռչակելով՝ թէ ես թուղթ գրեցի նմա և ընծայ յղեցի՝ նա ոչ գիր գրեաց ինձ, և ոչ ընծայ յղեաց։ Եւ թէ՝ ես զմիաբանսն մեր յղեմ անդ յեպիսկոպոսանալ՝ նա բռնութեամբ զյոլով զրամս առնու ի նոցունց։ Եւ այսոքիւք իբրու խռովեալ ի սրբ. վեհէս մերմէ, ոչ գրէր առ սա զթուղթ։ Եւ զմիաբանս իւր ես եթէ առաքէր աստ յեպիսկոպոսանալ, ոչ գրէր վասն նոցա զընծայական թուղթս առ սրբ. վեհն, որպէս օրէն էր քան զինքն յառաջ նստողացն, այլ զայլս արկանէր միջնորդ վասն նոցա առ ի ձեռնադրել։ Որպէս յառաջ քան զայս Կարբեցի Կարապետ վարդապետն եկեալ աստ ձեռնադրեցաւ իւր եղբարց միջնորդութեամբն։ (Որ ասացեալ է ի հոկտ. ԺԹ)։ Իւ այժմ զՀաճնցի Սարգիս վարդապետն՝ որ էր ժամօրհնօղ սուրբ Ցակովբայ վանիցն, Պօլսոյ իշխանաց միջնորդութեամբն և աղերսական գրովն էր յղեալ աստ ի ձեռնադրիլ։ Եւ զոմանս ես ի միաբանից իւրոց ի Սիս առաքեալ՝ անդ տայր ձեռնադրել եպիսկոպոս, և առաքէր ի նուիրակութիւն ի վիճակսն սրբոյ Աթոռոյս, այն ես ի տէրունիսն՝ որպէս Դաւիթ ոմն յղեալ էր ի Զմիւռին։ Եւ առաւել քան զսոսա ի չափազանցագոյնսն ես ձգտեալ՝ անուանէր զինքն ծայրագոյն պատրիարգ ամենայն հայոց ի թուղթսն իւր, զոր քան զինքն նախկինքն ոչ առնէին, այլ միայն պատրիարգ Երուսաղէմի և սբբոց Ցակոբեանց վանիցն գրէին զինքեանս։ Եւ ի վախճանի թղթոցն գրէր թէ՝ գրեցաւ ի պատրիարքարանս ամենայն հայոց, զոր մինչև յառ սրբ. վեհն գրեալ թուղթսն ես գրէր։ Եւ ի կոնդակսն գրէր թէ՝ զայս ինչ վարդապետ կարգեցի ծայրագոյն նուիրակ, և թէ ետու դմա իշխանութիւն կապելոյ և արձակելոյ, որք կաթուղիկոսի միայն են վայել գրելոյ։ Եւ կաթուղիկոսունքն սրբոյ Աթոռոյս՝ ի գրելն առ տեղւոյն պատրիարգունսն զթուղթս, ի պատիւ սբբոց տեղեացն զկնիքսն ի մէջ Ցիսուսի բառի յիրոյն եդեալ՝ կոչելով ղնոսա եղբայր. զոր կանօն և սրբ. վեհս մեր պահեաց՝ ի գրելն առ նա զթուղթս։ Եւ պատրիարքն Երուսաղէմի ի գրելն առ սրբ. կաթուղիկոսունսն զթուղթս, զանունն ի վերին կողմն գրէին շարադրութեամբ ըստ հասարակաց կարգին, և հայր՝ և տէր և վեհ գրէին, և զկնիքն իւրեանց ի յետկոյս թղթոցն դնէին։ Իսկ սա մինչ նստաւ, զանցեալ զկանոնօք առաջնոցն, եղբայր գրէր սբբ. վեհիս մերոյ. և զկնիքն ի յերես թղթոյն դնէր ի լուսանցն։ Եւ վասն գանձանակաց յետ և յառաջ գնալոյ վիճոյն՝ սրբ. վեհն գրեալ էր նմա թէ՝ նուիրակացդ պատուէր տուր, զի զգանձանակսն՝ մի այլայլեսցեն. զի ժողովուրդքն գայթակղին՝ և զգանգատս գրեն մեզ միշտ։ Իսկ նա գրէր չափազանցութեամբ թէ՝ իմ նուիրակացն ինչ մեղ, քո նուիրակունքն քակեն զնախնեաց կարգն։ Զայս ասէր՝ իբր թէ՝ այն է նախնեաց կանօնն, որ մեր գանձանակն յառաջ շրջիցի քան զձերն։ Որ էր սուտ։ Արդ՝ այսպիսեօք, և այլ ևս ըստ սոցին չափազանցական բանիւք վարէր նա ան-

կարգաբար։ Որովք և սրբ. վեհս մեր վիրաւորեալ և նեղասրտեալ յոյժ՝ կամէր ծանուցանել նմա զչափ անձինն։ Բայց տակաւին երկայնամտէր, և ոչ լինէր շուտափոյթ առ այն, յորպիսութիւն բանին և յուր եղբօրն հայելով։ Իսկ այժմ մինչ եկն ի սուրբ Աթոռս վերոյիշեալ Սարգիս վարդապետն ի ձեռնադրիլ, եկն ի հնդկաց և նոցին նուիրակ Համատանցի Յովհաննէս վարդապետն՝ (որ յիշեցեալ է ի յնվ. Լ.) զի տեսեալ նախ զսրբ. վեհն և զսուրբ Աթոռս որոց կարօտն էր, երթիցէ ապա ի սուրբն Սազիմ։ Եւ հանդիպելն աստ այսց երկուցս ի միասին, կոչեաց զնոսա սրբ. վեհն յատեան եպիսկոպոսաց, և զամենայն արարմունս և զանկարգ շարժմունս պատրիարք կոչեցելոյն իւրեանց՝ եդ առաջի նոցա դատաստանաւ. և զիրաւունս խնդրեաց. ծանուցանելով և զիւր անյիշաչարութիւն և զերկայնամտիլն մինչև ցարդ։ Եւ նոցա հայեցեալ յիրաւունս սրբ. վեհին, և ի պարտաւորութիւն իւրեանց պատրիարդ կոչեցելոյն, իբրու ի դիմաց նորին պարտաւորս խոստովանեցան զինքեանս, և յանձն առին երթալ պատմել զամենայն իւրեանց պատրիարքին մեղագրաբար։ Եւ խնդրեցին ևս ի սրբ. վեհէն այլ ևս երկայնամտիլ՝ և չզայրանալ նմա. այլ անյիշաչար լինիլ ըստ վայելից մեծութեան իւրոյ՝ և գրել առ սա զթուղթ սիրոյ, և ամաչեցուցանել զնա, որպէս զի բարձցի խռովութիւնն որ ի մէջ երկուցն։ Եւ սրբ. վեհին խոնարհեալ յաղաչանս նոցին և ի բազմակերպ թախանձանս, յօժարեցաւ ի գրել զթուղթ. բայց կամէր զամենայն վերոգրեալ չափազանցութիւնսն նորին գրել առ նա ի թղթոջն, և բերել յերեսն, և յանդիմանել սիրով։ Իսկ նոքա կրկին ի թախանձ և յոգոք անկեալ սրբ. վեհին, խնդրեցին մի գրել զայնս և մի խստութեամբ իսկ գրել առ նա զթուղթն, այլ՝ սիրով ամաչեցուցանել։ Վասնորոյ՝ և սրբ. վեհին զանց արարեալ զբազմօք չափազանցութեամբք նորին, գրեաց առ նա զթուղթ մի ըստ նոցին աղերսանացն, զքանի մի արարմունսն միայն գրելով նմա սիրախառն մեղադրութեամբ։ Նախ թէ՝ լուայ զխռովիլդ և զարտունջդ ի մէնջ, և զվատահամբաւելդ զմեզ իզուր, թէ ես գիր գրեցի նմա, ենա զպատասխանին ոչ գրեաց։ Դու ասէ ի ՌՄԺԷ թուոջն և ի յնս. գիր մի գրեցեր առ մեզ վասն կոչմանդ, և մեք ի նոյն թուոջն ի ի սեպ. գրեցաք առ քեզ զպատասխանին՝ շնորհաւորելով զպատրիարքութիւնդ։ (Յիշեցեալ է այս ի պատմութեան ՌՄԺԷ ի սեպ...) Դու ասէ ի ՌՄԺԸ թուոջն և ի սեպ. գիր էիր գրեալ մեզ ընդ չորից վարդապետացդ, զորս առաքեալ էիր ի ձեռնադրել, և զընծայս ես յղեալ էիր, և մեք յետ ձեռնադրելոյն զնոսա, գրեցաք զպատասխանին թղթոյդ, յօբում և շնորհակալութիւն վասն ընծայիցդ, և տուաք Սարգիս վարդապետին հասուցանել քեզ։ (Որ յիշեցեալ է ի պտմ. ՌՄԺԹ ի փար...)։ Իսկ Սարգիս վարդապետն ի ճանապարհին կողոպտեցեալ է ի սրիկայից, որք մինչև զվկայականն նորին ևս են փչացուցեալ, զոր վերստին խնդրեաց ի մէնջ, և մեք գրեալ յղեցաք։ Իսկ վասն թղթոյն առ քեզ՝ ոչ մեզ էր ծանուցեալ թէ կորուսի զի վերստին գրէաք, և ոչ քեզ՝ թէ կորուսի, դու այնպէս կարծես թէ մեք ոչ եմք գրեալ. ահա քո նուիրակինն է, մեղն, մեք զինչ արասցուք։ Ուրեմն ասէ՝ և արդար եմ և անպարտ, և գրաբերդ է պարտաւոր՝ որ քեզ ոչ է ծանուցեալ զկորուստնելն. և դու ես պարտաւոր, որ թարց մեզ հարցանելոյ և զորպէսն իմանալոյ՝ զմեզ ի զուր վատահամբաւես։ Երկրորդ թէ՝ դու արանջաս զմէնջ թէ՝ ես ընծայ յղեցի՝ և նա ոչ յղեաց։ Մեր հարկաւոր ընծայն առ քեզ ասէ՝ կոնդակ և սրբալոյս Մեռոն է. զորս ոչ խնդրեալ ես դու՝ և ոչ ընդունակութեան նշան ցուցեալ մեզ. և ոչ մեք ընծայեալ եմք։ Եւ բաց ի սոցանէ ասէ՝ յերկրոջս մերում բամբակ և չալթուկ դաանի և ոչ այլ ինչ։ Երրորդ թէ՝ դու զմեզ հռչակես թէ ի միաբանիցն մերոց շատ դրամ առնու բռնութեամբ։ Ես Ե տարի ի Պոլիս կացի ասէ ի նուիրակութեան, և ԺԲ տարի յայս կողմանս կամ։ Յայս ԺԷ տարիս եթէ ստորոգեալ է զմէնջ զայդ անուն, և կամ ոք լուեալ է զմէնջ զայդ ախտ, քոյդ ասութիւն ևս ճիշտ է։ Ապա թէ ոչ սուտ է։ Քանզի մեք զառ մեզ եկեալսն ասէ՝ բաց ի մարմնաւորապէս շահելոյն ըստ արժանոյն՝ ըստ հոգւոյ ևս զարդարեմք, և նոքա հարկեցեալ ի սիրոյ և ի շահեցմանէ մերմէ՝ տան յօժարութեամբ և մեք առնումք։ Եթէ հոգևոր և մարմնաւոր սիրով առօղն ասէ ի յօժարութեամբ տուողացն մեղանչէ, որչափ ևս առաւել՝ խրոխտալով և հայհոյելով

ընդ վայր առօղն ի լալով տուողացն։ Զայս ասէր վասն անկարգ և չափազանց պահանջմոնցն, զորս բռնութեամբ առնէին նոքա յուխտաւորացն։ Երբեր նմա յերեսս և զգիր ոչ գրելն առ ինքն, և զմխարանսն այլոց միջնորդութեամբ յղելն՝ ասա ի ձեռնադրել, և զոմանս ես ի Սիս առաքելն և ձեռնադրել տալն անդ, և առաքելն զնոսա նուիրակ ի վիճակսն սրբոյ Աթոռոյս, այն ես ի տէրունիսն մեր։ Իսկ զայլ արարսն՝ այժմ վասն վերոյգրեալ վարդապետացն աղերսանացն ոչ գրեաց նմա։ Այլ զայս թէ՝ զայսքանս նախապէս գրեցի քեզ՝ ստիպեցեալ ի սիրոյդ, և հարկեցեալ յաղաչանաց Յովաննէս և Սարգիս վարդապետացն քոց. զի իմացեալ զստոյգն, կայցես ի սէր և ի բարեմտութեան, և քեզապատշաճ հարազատութեան այսուհետև։ Ունէի թէպէտ և զայլս հարկաւոր գրելոյ, բայց ի զբաղմանց արգելեցեալ չգրեցի։ Մանաւանդ՝ Յովաննէս և Սարգիս վարդապետքդ ասէ զամենն լուան և լաւապէս վերահասու եղեն, որք որպէս բաւական գիր՝ պատմելոց են քեզ։ Տես զօրինակն թղթոյս ի բոլորագրահամար տետրոջն, ի ՇՀ, և ի ՇՀԱ թղթահամարն։

Փուսուլայ ես գրեաց առ սա։ Զի սրբոյն Խորվիրապայ վանից Առաջնորդ չիք Աւօն որ ի ՌՄԻԱ թուոջն փախուցեալ էր ի Վան, (որպէս ի նոյն թիւն և ի յնս. Զ ասացաւ,) անտի ես յԵրուսաղէմ էր գնացեալ։ Եւ սա եպիսկոպոս ընդունէր զնա։ Զոր ի լսելն սրբ. վեհին, զնորին Բց ձեռագրաց օրինակն առեալ, և վարդապետացն մերոց կնքեցուցեալ յղեաց առ սա, զի իմացեալ զուխտազանց և զապստամբ գոլն նորա՝ այսուհետև մի ես եպիսկոպոս ընդունիցի զնա. այլ լոկ աբեղայ միայն։ Զի վասն ապստամբութեան այժմ լուծեաց զնա յեպիսկոպոսութենէն։ Եւ մանաւանդ իւր տուեալ ձեռագրովքն (զորս ի ժամ ձեռնադրութեան տուեալ էր սրբ. վեհին։) ես էր լուծեալ նա յեպիսկոպոսական կարգէն. զի ի ձեռագիրս իւր խոստացեալ էր և երդմամբ ու խտեալ՝ մինչև ի մահն իւր մնալ ի վանսն Խորվիրապայ, և զնա ի շինութեան պահել։ Եւ թէ անդ ոչ կամիցի մնալ, ի սուրբ Աթոռս դառնալ. և ոչ յուրեք երթալ թարց հրամանի սրբ. վեհին։

Իսկ վասն անցից և որպիսութեանցն Հնդու նուիրակ համադանցի Յովաննէս վարդապետին թէ զինչ էին գրեալ սրբ. վեհին տեղւոյ ժողովուրդքն, և սրբ. վեհն ի սպա. ելն թէ զինչ գրեաց նոցա զպատասխանին, այժմ ոչ երկարեաց։ Զի ի Սարգիս վարդապետէն իմացի, զի երբ ի Հնդիկս նուիրակ առաքեսցէ, զպատշաճաւոր ոմն ընտրեալ յղեսցէ, զի սիրով վարիցի ընդ ժողովրդեանն, և մի խստութեամբ որպէս նա։ Եւ ինքն ևս յայնժամ սիրոյ գիր գրեսցէ առ այն ժողովուրդսն, զի շահիցին յինքեանց, և մի մնասցեն այնպէս վիրաւորեալ։ Եւ մանաւանդ՝ Պետրոս Աղային ևս գրեսցէ յատկապէս, յիշելով նմա՝ թէ սրբ. գրեալ էր մեզ։

Թուղթ ևս առ Պօլսոյ գլխաւոր իշխանսրն գրեաց ի պատասխանի թղթոյն իւրեանց, միամտեցուցանելով զնոսա վասն խնդրոյն իւրեանց։ Զի զսրբոյն Սաղիմայ ժամօրհնօղ հաճնցի Սարգիս վարդապետն յղեալ էին ի սուրբ Աթոռս, և աղերսանօք գրեալ էին առ սրբ. վեհն վասն նորա, եպիսկոպոս ձեռնադրել զնա։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ըստ խնդրոյ նոցին՝ ի փտր. ԺԴ յաւուր քառասնօրեայ գալստեանն Քրիստոսի ի տաճարն՝ (որ յԻսահակ Հայրապետի շաբաթ օրն տօնեցաւ.) զՍարգիս վարդապետն ընդ Թրակիոյ Առաջնորդ Յակոբ՝ Շողակաթի Առաջնորդ Ստեփաննոս՝ և Զորագեղու. Անապատի Առաջնորդ Ղազար վարդապետացն եպիսկոպոս ձեռնադրեաց, և ընդ նոյն Յակոբ և Հնդու նուիրակ համադանցի Յովաննէս վարդապետացն խառայ փիլոնաւ խիլայեալ, ընդ նոսա ուրախութեամբ դարձոյց ի տեղի իւր։ Բայց պատրիարգն նորին ըստ սովորութեան ոչ էր զգիր գրեալ առ սրբ. վեհն վասն նորա։ Եւ թէ ո՞յր աղագաւ, զպատճառն ի վերդ ի թղթոջ նոյն պատրիարքին լիովին ասացաք։ Եւ մանաւանդ՝ որովհետև Յովաննէս Սարգիս և Յակոբ վարդապետքն ի ներկայութեան գոլով յառարկելն սրբ. վեհին զայսմանէ նիւթոյ, լաւապէս վերահասու եղեն իրաւանցն։ Վասնորոյ և սրբ. վեհն ոչ ևս երկրորդեաց զասացեալսն իւր. այլ գրեաց նոցա՝ զի զպատճառն խռովութեան նորին և զամենայն ասացեալսն իւր, ի նոցանէ հարցեալ իմասցին, որով և իրաւանցն վերահասու լեալ, զինքն անմեղադրելի արաս-

ցեն։ Ծանոյց նոցա ըստ խնդրոյ Յովաննէս և Սարգիս վարդապետացն զգիր գրելն իւր առ նա. յաղթելով զնորին տմարդութիւնն։ Եւ խնդրեաց ի նոցանէ՝ զի զֆէրմանն իւր փութով հոգացեալ յղեսցեն։ Եւ ի կողմանէ մհ. Յօնանին կարի վերաւորեալ էին նոքա. իբր թէ նա իցէ զպրուսացւոն դրդեալ գանգատ դրել առ սրբ. վեհն զՅարութիւն գիտէն։ Վասնորոյ և սրբ. վեհն ի միամտութիւն նոցա այսպէս դրեաց նոցա թէ եթէ յայլ կողմանէ յանցաւոր իցէ նա, սակայն ըստ այդմ անպարտ է. զի նա զՅարութիւն գիտէն լաւ էր դրեալ ասէ և ոչ վատ։ Զորպէսն լիովին դրեալ եմ ասէ սիրելոյն մերոյ պատրիարք Զաքարիա վարդապետին՝ յետս դարձուցէք, պահելով գոնէ զպատիւ առաքողին. և մի իզուր պարտաւորէք ասէ զանպարտն ի տեղի պարտաւորին։ Նաև՝ յիշեցոյց նոցա վասն այսր քան զայս յառաջ ի սեպ. ԻԲ ի վերայ Պրուսայու ընդ փայեկլի նոցին զթուղթ գրելն առ ինքեանս, ընդ որում և զՊրուսացւոց թղթոյ սուրէթն առնուլն և յղելն ինքեանց, զի դիտասցեն։ Թուի թէ՝ այն գրեանքն ձեզ չեն հասեալ ասէ։ Գրեցի ասէ պատրիարքին զի գտցէ զայն դրեանսն։ Գուք ևս վերահասու լերուք ասէ, և զիրաւունս արարէք և մեզ ծանուցէք։ Երիցս անգամ եկեալ է ասէ այդպէս դիր առ մեզ, ոչ եթէ միայն մի։ Յղեցան այսք ընդ Սարգիս պետին։

Վկայական ետ Սարգիս վարդապետին։ Յորում գրելով թէ՝ զսրբոյն Սաղիմայ միաբան հաճնցի Սարգիս վարդապետն ըստ խնդրոյ մեծին Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետին և նորին իշխանացն եպիսկոպոս ձեռնադրեցի ի միաբանութիւն սրբոց Յակոբեանց վանիցն։ Եւ նա ևս զօրինակն վկայականին իւրոյ գրեալ և կնքեալ ետ սրբ. վեհին։

Վկայական մի ևս Թրակիոյ Առաջնորդ Յակոբ վարդապետին ետ։ Եւ նա ևս նոյնպէս զօրինակն վկայականին իւրոյ դրեալ և կնքել ետ սրբ. վեհին։

Առաջնորդական կոնդակ ևս ետ նմա սրբ. վեհն։ Յորում զպատուէրս դրելով ժողովրդեանն վասն նորա։

Եկաւ ռասաւ ի Թրակիա՝ ձեռամբ նորին Առաջնորդ Յակոբ վարդապետին։

Թուղթ օրհնութեան առ Կարապետ Ամիրայն և յերկոսին եղբայրսն նորին Պօղոսն և Պետրոսն՝ (Բ) ձեռամբ Առաջնորդին իւրեանց Յակոբ վարդապետին։

Թուղթ ևս օրհնութեան առ տիրացու Գրիգորն՝ (Բ) ձեռամբ ևս նոյն Յակոբ վարդապետին։

Թուղթ ևս առ Պրուսայու Աւագ քահանայ տէր Յովսէփն՝ տէր Եղիազարն՝ տէր Յովաննէսն և այլ միւս քահանայսն գրեաց։ Ծանուցանելով նոցա քան զայս յառաջ ի սպա. ԻԲ ընդ տաճիկ փայեկլին իւրեանց զթուղթս գրելն առ ինքեանս։ Պատուէր՝ զի զպատասխանին փութով գրեալ առ մհ. Աղամջանն յղեսցեն ի Թօխաթ՝ զի նա անտի առ մեզ հասուսցէ։ Եւ սպասնալիք՝ մինչ ոչ գրեսցեն զպատասխանին։ Եւ զթուղթսն Պօլսոյ զորս գրեալ յղեաց առ նոսա յղել առ պատրիարքն, տակաւին չէին յղեալ. պատուէր՝ զի յղեսցեն, և զպատասխանին խնդրեալ առ ինքն առաքեսցեն։ Զոր ետուք Թրակիոյ դիտին անտի յղել առ նոսա։

Թուղթ ղրեաց սրբ. վեհն առ Հաշտարխանու նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետն։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի յնվ. ԻԱ զթուղթ գրելն առ ինքն, և ըստ խնդրոյ իւրոյ ի վերայ Պետրպօռքու և Մօսկովու զկոնդակ գրելն և ընդ թղթոյն իւրոյ յղելն առ ինքն։ Ծանոյց նաև առ Գիլանու տէր Պետրոսն այժմ զթուղթ գրելն, զի ելեալ երթիցէ ի Մօսկով։ Եւ առ Գիլանու նուիրակ Պետրոս վարդապետն ևս զպատուէր գրելն, զի փութով աւարտեալ զգործն եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Թուղթ մի ևս պատուիրի առ Գիլանու տէր Պետրոսն գրեաց, զի ելեալ երթիցէ ի Մօսկով, և անդ մնացեալ քահանայութիւն արասցէ։ Զի տեղւոյ քահանայն վախճանեալ էր, և ժողովուրդքն ոչ ունէին զայլ քահանայ զի հովուեսցէ զինքեանս։

Թուղթ ևս առ Գիլանու նուիրակ և Առաջնորդ Պետրոս վարդապետն գրեաց։ (որ յիշեցեալ է ի յուլ. ԻԸ.) ի պատասխանի Բց թղթոց իւրոց։ Որ թէպէտ յառաջագոյն ոչ յանձն առնոյր զնուիրակութիւն Գիլանու, բայց այժմ յանձն էր առեալ, որոյ աղագաւ

և միամտութիւն գրեալ սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհին միամտեալ ընդ այն, պատուիրեաց նմա, զի փութով աւարտեալ զգործն իւր ելեալ եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Զի որովհետև հաշտութիւն եղև, վասնորոյ՝ յայս կողմամբս կամէր յղել զնա ի Նախկին վիճակն իւր։ Կրկին պատուէր զի զտէր Պետրոսն յղեսցէ ի Հաշտարխան, զի անտի երթիցէ ի Մոսկով։ Եւ Դաւիթ Աղայն գիտութեամբ նորին՝ ըստ խնդրոյ սրբ. վեհին քանի մի շիմշատ փայտ հոգացեալ, ընդ երևանցի տէր Յովաննէսին յղեալ էր առ մեզ։ Որք ոչ այնքան պիտոյացան մեզ, զի կոստխաւորք էին և ճեղքեալք։ Վասնորոյ՝ պատուիրեաց նմա, զի մէկ բեռն լաւ շիմշատ փայտ յղեսցէ վասն ծաղկի և պատկերի։ Եւ տեղւոյ քահանայիցն՝ իշխանացն և ժողովրդոցն ողջոյն գրեաց։

Թուղթ ևս առ Թիֆլիզեցի Դաւիթ Աղայն ի Ռէշտ (որ ի յուլ. ԻԸ յիշեցեալ է) ի պատասխանի ի հոկ. Զ գրեցեալ թղթոյն։ Նախ շնորհակալութիւն վասն շիմշատ փայտիցն՝ զորս յաշնանն ընդ երևանցի տէր Յովաննէսին յղեալ էր։ Պատուէր՝ զի քանի մի հատ լաւ շիմշատ փայտ ևս յղեսցէ վասն ծաղկի և պատկերի, զի այնք ոչ պիտոյացան մեզ. զի կոստխաւորք էին և ճեղքեալք։ Եւ յանձնարարութիւն վասն Նուիրակին։ Եւ պատուէր ևս զի զտէր Պետրոսն յղեսցէ ի Հաշտարխան։ Եւ պարոն Ալէքսանին՝ և տեղւոյ բոլոր քահանայիցն՝ իշխանացն և ժողովրդոցն և որդւոյն նորին Մովսէսին ողջոյն գրեաց։ Զայսոսիկ ևս Հնդու Նուիրակ Յովաննէս վարդապետին ետուք տանել ընդ իւր ի Բայազիտ առ տէր Վահանն, զի նա անտի առ Դաւիթ Աղայն յղեսցէ ի Գիլան։ Յովաննէս՝ Սարգիս և Յակոբ վարդապետքն ելին ի միասին ի սրբոյ Աթոռոյս, ի փետր. Ին։

ՄԼԲ.

Ի Պօլիս՝ ի Կարին և ի Կարս։ Առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն առ մհ. Գասպարն և առ այլս միամտութիւն վասն զհաճնցի Սարգիս վարդապետն եպիսկոպոս ձեռնադրելոյն, և վասն թղթաշինաց գալստեանն ի սուրբ Աթոռս։ Եւ առ այլս ևս վասն այլինչ բանից։

Թուղթ գրեաց սրբ. վեհն ի Պօլիս առ մհ. Գասպար Ամիրայն։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի յնվ. ԺԶ առ ինքն և առ եղբայրն իւր մհ. Պաղտասարն զմխիթարութեան թուղթ գրելն։ Եւ վասն սրբոյն Սաղիմայ միարան և ժամօրհնօղ հաճնցի Սարգիս վարդապետին սա ևս էր ընդ իշխանացն տեղւոյն զթուղթ աղաչանաց գրեալ առ սրբ. վեհն, եպիսկոպոս ձեռնադրել զնա։ Որում և ծանոյց սրբ. վեհն ըստ խնդրոյ իւրեանց ի Տեառն ընդ առաջի աւուրն զՍարգիս վարդապետն ընդ Թըակիոյ Առաջնորդ Յակոբ վարդապետին եպիսկոպոս ձեռնադրելն, և խիլայիւ յղելն ի տեղի իւր։ Եւ ըստ խնդրոյ Սարգիս և համազանցի Յովաննէս վարդապետացն առ Սաղիմայ պատրիարգ Պօղոս վարդապետն զթուղթ գրելն։ (որպէս յամսոյս ԻԵ ասացաւ։) Եւ պատուէր զի զորպէսն Պրուսացւոց և դիտի նոցին Յարութիւն վարդապետին, և Սաղիմայ պատրիարքին, և զանցսն Հնդկաց, ի Սարգիս վարդապետէն իմացեալ, զինքն անմեղադրելի արասցէ։ Զի զայսոսիկ ծանոյց սրբ. վեհն Սարգիս պետին ասել նմա։ Եւ վասն թղթաշինացն շնորհակալութիւն գրեաց սմա, զի ընդ թաթարի յղեալ էր ի Կարին։ Եւ պատուիրեաց՝ զի զորպէսն նոցա ի պատրիարքի թղթոյն իմասցի։ Զի լիովին գրեաց նմա։ (զոր յետոյ ասելոց եմք ի թղթոջ նորին.) գրեաց ևս՝ զի զֆէրմանն իւր փութով հոգացեալ յղեսցէ։ Նաև՝ զմհ. Յօնանն իւր ապուռովն յետս դարձուսցէ։ Որում և ծանոյց վասն Իսահակ վարդապետի առ մհ. Յարութիւն Ամիրայն եղեալ ԺՌ ղուռշ փօլիցայագրին. այժմ զսիրոյ և յորդորանաց գիր գրելն առ նա, զի յղեսցէ։ Յորմէ և խնդրեաց զի զայն փօլիցայագիրն առեալ ի մհ. Յարութիւն Ամիրայէն, առ ինքն յղեսցէ։ Շատ շնորհակալ եմ լինելոց ասէ զսիրելւոյդ։ Եւ եղբօրն նորին Պաղտասար Ամիրային և Յակորին և Ռաֆային ողջոյն գրեաց։

Թուղթ ևս առ մհ. Յարութիւն Ամիրայն գրեաց։ Զի թէ ինքն ըստ խոստման իւրոյ գալոց իցէ ի սուրբ Աթոռս յուխտ,

զհանգուցեալ Իսահակ վարդապետի ԺՌ ղուշի փօլիցայաղիրն (որ առ ինքն գոյր.) բերցէ ընդ իւր։ Եւ թէ ոչ՝ յղեսցէ ի սուրբ Աթոռս առ ինքն։ Զի մի՛ ասէ վասն վտանկաւորութեան ժամանակիս այդպիսի կարմիր քնքով և յանուն կաթուղիկոսի դրեալ բաթալ գիր ի դուրս մնասցէ։ Որում և ծանոյց այսր աղագաւ առ պատրիարքն և առ մհ. Գասպար Ամիրայն ևս զգրելն։ Եւ Արիստակէս Ամիրային ողջոյն գրեաց։ Որոց օրինակն տես ի բոլորագրահամար տետրոջն, և ի ՇՀԶ և ի ՇՀԷ թղթահամարն։ Թուղթ ևս շնորհակալութեան առ Աբրահամ Ամիրայն դրեաց։ Զի վասն թգթաշինաց գալստեանն ի սուրբ Աթոռս, ի ֆռանկաց դեսպանէն հրաման էր առեալ։ Եւ Թօմաս Ամիրային ևս շնորհակալութիւն և ողջոյն գրեաց, զի նա ևս էր ձայնակից լեալ նմա ի հրամանառութեան վասն թղթաշինացն։ Եւ նոյն Դեսպանին ևս ողջոյն և շնորհակալութիւն գրեաց ի թղթոջըս։ Եւ պատուիրեաց սմա, զի թէ պատշաճ տեսցէ, զայս գիրս ցուցցէ դեսպանին։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց խօջայ Նազարէթն և պարոն Թադէոսն գրեաց ի պատասխանի ի դեկտ. ԻԷ գրեալ թղթոյն իւրեանց։ Նախ շնորհակալութիւն վասն թղթաշինացն, զի թաթար մի ի վարձու կալեալ, (5) գթղթաշէնսն յղեալ էին ընդ նմա յղեալ էր ի Կարս։ Եւ թղթաշինացն ևս էր խարճի (1ի) տուեալ։ Եւ սրբ. վեհն զայսոսիկ ծանոյց Նազարէթին։ Որում և պատուիրեաց՝ զի թէ զիւր տուեալ դրամն (5) և թէ եղբօրն իւրոյ մհ. Փիլիպպոսի տուեալն, (2ի) ի պատրիարքէն առցէ, և մի ի Կարին ձգեսցէ ըդբանն։ Եւ զորպէսն թղթաշինացն ի պատրիարքի թղթոյն իմասցի։ Եւ թէ պատրիարքն և թէ սա վասն թղթաշինացն թէ զինչ էին խարճ արարեալ, և թարճիմանին թէ զինչ էին վարձ խոստացեալ, ոչինչ գրէին։ Այլ միայն պատրիարքն գրէր թէ՝ վասն թղթաշինաց խարճին պարոն Գէորգն գրեաց՝ քեզ։ Եւ նա ևս ոչ էր գրեալ։ Եւ պատուէր զի գրեսցեն։ Եւ վասն մարգարտեայ թագպէհին՝ որպէս ի յնվ. ԺԶ, և այժմ ևս զմիամտութիւն գրեաց առ նա, զի զայս առ մեզ հասեալ իմասցի՝ և ըստ ամենայնի միամիտ լինիցի։

Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս զանձապետ և վէքիլ մհ. Աղամջանն գրեաց ի Թօխաթ ի պատասխանի ի դեկ. ԻԵ գրեալ թղթոյն։ Որում և ծանոյց ըստ խնդրոյ իւրոյ քան զայս յառաջ ի հոկտ. ԻԳ առ տեղւոյ գանձապետսն և առ ոմանս անձինս ըդթուղթս գրելն և առ ինքն յղելն։ Եւ պատուէր՝ զի զթուղթսն իւրաքանչիւր տեարցն տացէ, և ի վերայ գործոյն իւրոյ արի լիցի։ Եւ թէ վասն Ֆ̃ր սրբ. վեհն վասն թղթոցն վերստին զպատուէրս դրեաց առ նա, զի մինչ ըթուղթսն առ նա յղեցաք, յայնժամ վասն բանիցն իւրոց ի Պօլիս էր գնացեալ, և այժմ նոր էր եկեալ ի Պօլսոյ։ Եւ նա Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին դրամ (դ) էր հասուցեալ, և մհ. Փիլիպպոսն գրեալ էր սրբ. վեհին զհասանիլն դրամոյն առ ինքն։ (որպէս ի գեկ. Գ ի թղթոջ մհ. Փիլիպպոսին ասացաւ։) բայց նա ոչ էր դրեալ սրբ. վեհին զհասուցանելն դրամոյն առ մհ. Փիլիպպոսն։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն զմիամտութիւն գրեաց առ նա, զի զդրամն զայն (դ) առ մեզ հասեալ իմասցի և միամտեսցի։ Այս դրամոյն (գ) մեծ մասն (Գ) Թօխաթու նուիրակի փօլիցային է, զոր մհ. Աղամջանն առեալ ի նուիրակէն, ընդ առ ինքն եղեալ գանձանակական և այլ դրամոյն, (ա) հասուցեալ էր մհ. Փիլիպպոսին։ (որպէս ի գեկ. Գ ի թղթոջ մհ. Փիլիպպոսին ևս ասացաւ և ցուցաւ։) Եւ Զմիւռնոյ նուիրակ Ղուկաս վարդապետն (որ ի հոկտ. ԻԹ յիշեցեալ է.) բեռն էր յղեալ ի Թօխաթ առ մհ. Աղամջանն յղել ի սուրբ Աթոռս։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց նմա հասուցանել մհ. Փիլիպպոսին, զի նա անտի առ մեզ հասուսցէ։ Եւ մհ. Աւետքին ողջոյն գրեաց ի թղթոջս։

Թուղթ ևս առ Պօլսոյ նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետն դրեաց ի պատասխանի Բց թղթոցն իւրոց ի դեկտ. ԻԳ ղրեցելոց։ Զորս ընդ թղթաշինացն գըրեալ էր։ Եւ վասն թղթաշինաց հաշուին և թարճիմանի վարձուն գրէր թէ՝ Գէորգն գըրեաց. բայց նա ոչ էր գրեալ։ Առ այս կարի մեղադրեաց նմա սրբ. վեհն, և պատուիրեաց գրել զորպէսն նոցա։ Ծանոյց նմա և զանցսն թղթաշինաց, և յամսոյս ԺԳ զանվնաս հասանելն նոցա ի սուրբ Աթոռս։ (որպէս յամսոյս Գ և ի ԺԳ ասացեալ է։) Եւ Նազարէթն որ զթղթաշէնսն և զթարճիմանն ընդ թա-

թարի միոյ յղեալ էր ի Կարին, ԵԾ ղոուշ վարձ էր տուեալ նմա։ Եւ ԱԾ ղոուշ ևս նորին եղբայր մհ. Փիլիպպոսն էր տուեալ նոյն թաթարին վասն թղթաշինացն, զի հասուսցէ զնոսա ի Կարս։ Եւ ԱԾԻ ղոուշ ևս թղթաշինացն խարճի էր տուեալ։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց սմա, զի զայն դրամն անդ Նազարէթին տացէ, և ծանուսցէ ինքեան զտալն դրամոյն։ Ծանոյց նաև զՍարգիս և զՅակոբ վարդապետասն եպիսկոպոս ձեռնադրելն, և յամսոյս ԻԵ յղելն ի տեղիս իւրեանց։ Եւ ընդ Սարգիս վարդապետին առ Աղիմայ պատրիարքն զթուղթ գրելն։ Որում և հարկեաց՝ զի զանցսն նորին ի Սարգիս և ի Յակոբ վարդապետացն իմասցի։ Վասն Պրուսացւոցն գրէր թէ՝ զգիրս քո բացեալ ընթերցեալ էին, և առ մեզ յղեալ։ Եւ մեք գրեցաք ասէ նոցա թէ՝ եթէ զղջացեալ էք, գրեցէք մեզ և այլն։ Եւ սրբ. վեհն գրեաց թէ՝ մի՞թէ սուտ էին գրեալ ասէ մեզ որ զղջանայցեն։ Այդ ձրպէս բան է ասէ, դիցուք թէ նոքա զղջացեալ են, մի՞թէ ես թողում, զի թէ նոքա սուտ էին դրեալ ասէ մեզ, զնոսա եմ պատժելոց, և թէ ճիշտ, ըզմիւսն եմ պատժելոց։ Եւ պատուիրեաց՝ զի զգրեանսն մեր ընթերցեալ, զմիտս նոցին ծանուսցէ իշխանացն, և այնր աղագաւ զոր ինչ առարկութիւն լիցի ի մէջ իւրեանց, փութով դրեսցէ ինքեան։ զԳասպար՝ Յարութիւն և Աբրահամ Ամիրայից թուղթսն յղեաց առ սա, զի տացէ նոցա, և յորդորեսցէ Յարութիւն Ամիրային, զի զՍահակ վարդապետի փոլիցայադիրն (Ժ) առ ինքն յղեսցէ։ Թղթաշէն ֆռանկքն վասն թղթաշինութեան գործեացն իւրեանց և այլ ինչ բանից, Գ պահարանաւ թուղթ դրեցին յերկիրն իւրեանց։ Զորս ի թղթոջս եղեալ յղեաց առ սա, զի կամ Ջամճիօղլի Թարճիմանի եղբայր պարոն Պետրոսին և կամ Թօմայ Աղային տացէ, զի յերկիրն նոցա յղեսցեն։ Եւ վասն բէրաթին իւրոյ պատուիրեաց զի փութով հոգացեալ յղեսցէ։ Եսայի վարդապետն յառաջադոյն դրամ (1Ծ) էր տալոց սմա։ Գրեալ էր սա սրբ. վեհին, զի առեալ զդրամն յԻսայի վարդապետէն, յորմէ մասն ինչ (Ծ) տեղապահ Մկրտիչ վարդապետին տացէ։ Եւ սրբ. վեհըն այնպէս արար։ Բայց վասն այս դրամոյս՝ (1Ծ) ոչ էր զապզ գրեալ սա Եսայի վարդապետին։ Վասնորոյ՝ ի տալն նորին զդրամն (1Ծ) սրբ. վեհին սպասաւոր Մկրտիչ վարդապետէն զապզ էառ։ Զի նմա յանձնեցաւ դրամն այն։ (1Ծ) և նա 'ս հրամանաւ սրբ. վեհին զմասն ինչ (Ծ) յայն դրամոյն տեղապահին եա, և մնացեալն (1) առ ինքն պահեաց։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց սմա, զի զապզ դրեալ յղեսցէ առ Եսայի վարդապետն, զի մեք զզապզն մեր յեաս առցուք ի նմանէ։ Եւ Եսայի վարդապետն ի Պօլիս եղեալ քեռն իւրոյ կաակին աղագաւ, և վասն Մարաիրոս յանուն մարդոյ միոյ ինքեան ալեաց դրամոյն (2) քանիցս անգամ դրեալ էր սմա զի առցէ, բայց սա զանց առնոյր։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյ Եսայի վարդապետին պատուիրեաց սմա զի առցէ։ Գրեալ էր սրբ. վեհին թէ՝ այս ինչ և այն ինչ տեղւոյ աղագաւ Առաջնորդ պատրաստեմ։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ դեռ իմ բէրաթն ոչ եկն, զայլս որպէս ասէ պատրաստել։ Ահա միոյն պատրաստ է ասէ, որ էր Ծռասոն Յարութիւն վարդապետն զոր կամէր ի Կարին Առաջնորդ յղել. և բէրաթին սպասէր, զի ի գալն յղեսցէ զնա։ Եւ վասն արգելման Ուռումելու ճանապարհացն, ի վաղուցհետէ ոչ էր նուիրակ յղեալ անդ։ Այժմ թէպէտ կամէր յղել, բայց տակաւին յերկբայս էր, զի մի՞ գուցէ դեռ ևս արգելեալ լինիցին ճանապարհք կողմաննն։ Վասնորոյ՝ էհարց սմա, զի թէ կարելի է յՈւռումելի նուիրակ յղելն, ծանուսցէ ինքեան զի յղեսցէ։ Փուսուլայ ևս սրբ. վեհն իւր ձեռամբն գրեաց առ սա առանձին։ Որպէս և ի յնվ. ԺԶ։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն գրեաց ի Կարին ի պատասխանի երից թղթոցն իւրոց ի յնվ. ԻԳ և ի ԻԳ, և յամսոյս Աըն գրեցելոց։ Եւ վասն թղթաշինացն և իւր յղեալ Ա բեռն ճոթեղինացն որպէս յամսոյս ԺԳ, և այժմ ևս զմիամտութիւն դրեաց առ նա։ Եւ ի գէվթէրոջն իւրում Ժ հատ շամու ալաջայ ևս էր գրեալ հանդերձ գնովն. (ՀԲ, ի փարա,) բայց ի մէջ ճոթեղինացն շամու ալաճայ ոչ զոյր։ Եւ պատուիրեաց դրել զորպէսն։ Եւ բաց ի Նազարէթի թաթարին տուեալ դրամոյն, (5) այսքան (1) ևս սա էր տուեալ նոյն թաթարին վարձ։ Զի զթղթաշէնսն յանձնեալ էր նմա անվնաս ի Կարս հասուցանել։ Եւ այս-

քան (Լի) ևս Թղթաշինացն խարճի էր տուեալ։ Եւ պատուիրեաց գրել Նազարէթին, զի զայն դրամսն (5) (2ի) ի պատրիարքէն առցէ, և մի ի Կարին ձգեսցէ դրանն։ Եւ հարկեսցէ նմա, զի զորպէսն Թղթաշինաց հաշուին և Թարճիմանին խոստացեալ վարձուն գրեսցէ ինքեան։ զՊօլսոյ պահարանն յղեաց առ սա հասուցանել Նազարէթին, զի պատրիարքին տացէ։ Եւ զմհ. Աղամջանի Թուղթ ևս առ ինքն յղեսցէ ի Թօխաթ։ Թուղթ մի ևս առ Իբրահիմ Աֆանտու վէքիլխարճ պարոն Գէորգն գրեաց ի Կարս ի պատասխանի յամսոյս Թ գրեալ Թղթոյն։ Եւ վասն Թղթաշինացն շնորհակալութիւն գրեաց առ նա, զի բաց ի շահելոյն զնոսա, ի դրան փաշային և մեծամեծացն կարի աշխատանս էր կրեալ վասն նոցա. քանզի՝ ի ձեռն Իբրահիմ Աֆանտուն ազատեալ զնոսա ի բանտէն, յանձնեալ էր աշտարակցի Գէորգին։ Զորս և նա բերեալ ի սուրբ Աթոռս հասոյց։ (որպէս յամսոյս ԺԳ ի Թղթոջ մհ. Փիլիպպոսին ասացեալ է.) և հօրն նորին մհ. Գալուստին և պարոն Կարապետին ողջոյն գրեաց։

Փուսուլայ ևս գրեաց առ նա։ Զի Գէորգին ասացեալ էր Թէ՝ մեր Աֆանտուն ԺԾ ուղտ գոյ ի Կարին. ասա սրբ. վեհին, զի Թէ կամիցի առնուլ, բերել տաց։ Եւ նա ևս ծանոյց սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն գրեաց առ նա, զի զուղտսն բերել տացէ, և ծանուսցէ ինքեան, զի առցէ։ Եւ պատուիրեաց՝ զի ի կողմանէ տեղւոյն նուիրակին և Սուքիաս վարդապետին զոր ինչ յառաջագոյն գրեալ է ինքեան, այնպէս արասցէ։ Եւ վասն փաշային և Իբրահիմ Աֆանտուն կրկին ընծայ էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց նմա, զի ԲՃ ղուրշի ընծայ առեալ, ծանուսցէ ինքեան, զի յայնժամ ընդ Թուղթս գրեալ ի վերայ նոցա առ ինքն յղեսցէ, զի ընդ ընծայիցն տարեալ մատուսցէ նոցա։ զՊօլսոյ պահարանն յղեաց առ սա, առ մհ. Փիլիպպոսն հասուցանել։ Յղեցան այսօրէիկ ընդ Օլուսանենց Ղազարին առ Առաքիաս պետն, զի առ Գէորգն յղեսցէ ի Կարս որ ել ի փտր. ԻԶ։

ՄԼԳ.

Գանգատ կեսարացւոցն զԱռաջնորդէն իւրեանց Դաւիթ վարդապետէն, եւ խնդրելն նոցա ի սրբ. վեհէն տանել զնա առ ինքն։ Եւ գրելն առ նա սրբ. վեհին, զի եկեսցէ ի սուրբ Աթոռս։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Կեսարիոյ բոլոր քահանայսն, իշխանսն և ժողովուրդսն ի պատասխանի բազմակնիք Թղթոյն իւրեանց։ Զի քանի մի քահանայք և իշխանք տեղւոյն՝ համակամութեամբ հասարակին, զԱռաջնորդէն իւրեանց Դաւիթ վարդապետէն բազմակնիք գանգատանաց Թուղթ էին գրեալ առ սրբ. վեհն, Թէ Առաջնորդն մեր Դաւիթ վարդապետն՝ զմեզ՝ զվանս և զեկեղեցիս մեր բոլորովին հիմնաքանդ արար ասեն։ Զի սա մինչ յաքսորանացն վերադարձաւ ի քաղաքս, ի վերայ առաջնոյ պարտուցն, յաւելացոյց զպարտս վանիցն։ Զի բոլոր պարտքըն եղև ասեն ԻԷ քսակ։ Եւ մեր նկատեալ ասեն զդիզումն պարտուցն ափշէաք, և վասն զերծմանն միշտ հնարս որոնէաք։ Եւ ի Գրիգոր պատրիարքէն ժողովարարութեան Թուղթ բերել ետուք ասեն, զի ժողով արարեալ զպարտս վանիցն վճարեսցէ։ Իսկ նա ոչ գնաց ասեն ի ժողով, այլ զերկաթեայ շղթայս ի պարանոցն անցուցեալ և զկենարար Մարմինն և զսուրբ Միւռոնն և զայլս այսպիսիս ի ձեռս իւր առեալ երդուաւ ի նոսա, ասելով Թէ՝ մինչև ոչ վճարեցից ըզպարտս վանից ձերոց, ոչ ի վանս մտանեմ, և ոչ զայս շղթայս ի պարանոցէս հանեմ։ Եւ մեր տեսեալ ասեն զկեղծական երդումն նորին՝ իսկոյն հաւատացեալ նմա, Թող զկանանց բերեալ ոսկեայ օղսն և զմատանիսն և զկերպասեայ հանդերձսն, ի քաղաքէս և ի գիւղօրէիցս ԹՌ ղուրշ հաւաքեալ ետուք։ Իսկ նա անցեալ զերդմամբ իւրով, ոչ գնաց ասեն ի ժողով, այլ զշղթայսն ի պարանոցէն հանեալ, եկեալ, նստաւ ի վանս իւր։ Ահա Գ ամէ ասեն յորս ընդ մեզ մաքառի, ասելով Թէ՝ դուք զպարտս ձեր՝ զի վանքն ձեր ի ՀԳ քսակ պարտուց ներքոյ է։ Եւ մեք զկնի բազում վրդովմանց՝ խորհուրդ արարաք ասեն զի զարմատս պարտուցն

հատցուք, զի մի՛ կարող լիցի վերաւին յա-
ճախել։ Վասնորոյ՝ զամենայն անպէտ անօթս
վանիցն և զարտօրայսն, և զերկուց եկեղե-
ցեաց մերոց հայրենի մնացեալ տուննսն և
զխանութսն վաճառեցաք, Ի քսակ այլ ես
յերկուց եկեղեցեաց մերոց ճարեալ, ետուք
զպարտսն։ Մնաց աւեն Ժ քսակ պարտք։
Կամէաք աւեն զայն ես վճարել, իսկ նա
վերստին պարտատեարցն այնոցիկ ձեռագիր
տուեալ, Զ քսակ ես էառ։ Եւ զկէնճ Մէհ-
մէտ անուամբ տաճիկ ոմն փոխանորդ է ա-
սեն արարեալ իւրեան, զի այնու զմեզ գի-
շաւեսցէ։ Եւ զկնի գանգատանացս՝ Թախան-
ձանօք խնդրեալ էին ի սրբ. վեհէն, աս-
տուստ ընդ փայեկին իւրեանց մարդ յղել
անդ, և Առաջնորդն իւրեանց տանել տալ առ
ինքն, զի մինչև ցմահն իւր մնասցէ ի սուրբ
Աթոռոջս։ Բայց նախ զկարգն մո աւեն և
մպա տար, զի մի գուցէ ընդ բանիւ արաս-
ցէ զմեզ։ Եւ վասն սակաւութեան կնքոցս
մի՛ երկմտիցիս աւեն, և մի՛ առ Նախանձու
համարիցիս զդրեալս մեր, զի երկեաք աւեն
բազմաց յայտնել, զի մի՛ յանկարծ լուեալ ի
դրունս տաճկաց անկցի, և մեզ վնաս տա-
ցէ։ Եւ թէ հարցանիցես աւեն թէ ընդէ՞ր
պատրիարքին չծանուցիք զայդ, զի յոլով
երկրացիք մեր են ի մեծն Պօլիս, վասնորոյ՝
երկեաք աւեն ծանուցանել պատրիարքին,
զի մի՞ դուցէ դրդեալ զպատրիարք վար-
դապետն ի ձեռն չաւուշի կրկին աքսորես-
ցեն զսա և վերստին ի ներքոյ ծանր պար-
տուց արկցեն զմեզ։ Եթէ կամիցիս աւեն
դու ծանո պատրիարքին։ Իսկ թէ կամիցի
աւեն տէրութիւնդ զբոլոր ստորակնքօղ ծա-
ռայքս քո ի կողմանէ վեհիդ փոխանորդ
արա, զի դացուք զոմն մեզ հաճելի. և զսուրբ
տունս մեր հաստատուն պահօղ։ Եւ թէպէտ
աստանօր ոչ էին պարզեալ զմիտս իւրեանց
թէ զով կամիցին Առաջնորդ ընտրել ին-
քեանց, բայց դիտումն նոցա այն էր՝ զի
զսրբոյն Դանիէլի վանից վանահայր կեսա-
րացի Մատթէոս վարդապետն ընտրեսցեն։
Զի ամենեքեան հաւանեալ էին նմա և յոյժ
սիրէին զնա, զի էր նա այր քաղցրաբարոյ
և քաղաքացի նոցա։ Եւ թէպէտ նոքա ի սրբ.
վեհէն մարդ էին խնդրեալ, զի գնացեալ անդ
զԱռաջնորդն իւրեանց բռնութեամբ քար-
շեալ բերցէ ի սուրբ Աթոռս, բայց սրբ. վեհն
աստէն մարդ յղելն ոչ պատշաճ ետես,
զի առանց ֆարմանի անհնարին էր լինելն
այս խնդրոյս, այլ սիրով և յորդորմամբ գր-
րեաց նմա ելանել և գալ ի սուրբ Աթոռս։
Եւ թէ ոչ եկեսցես աստ, ընդ բանիւ ես և
լուծեալ ի կարգէդ և յԱռաջնորդութենէդ։
(զոր ասելոց եմք յետոյ,) զոր և ծանոյց նո-
ցա։ Որոց և պատուիրեաց զի եկեսցէ նա ի
սուրբ Աթոռս, բարի է. և թէ ոչ՝ յայնժամ
գրելոց եմք աստ ի Պօլիս. դուք ևս՝ (յորժամ
տեսանիցէք թէ ոչ դայ) գրեցէք աստ պատ-
րիարքին և իշխանացն զի այլով կերպիւ
յղեսցեն զգա յայսկոյս։ Որոց օրինակն է ի
բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՇՁ։

Թուղթ ևս առ Կեսարիոյ Առաջնորդ
Դաւիթ վարդապետն գրեաց։ Ծանուցանելով
նմա քան զայս յառաջ ի յնս. ԺԵ ընդ Մատ-
թէոս վարդապետին զթուղթ դրելն առ ինքն
ի պատասխանի ընդ նմա ղրեալ թղթոյն։
Եւ առ այս մեղադրութիւն՝ վասն ոչ դրելոյն
առ ինքն զպատասխանին։ Եւ զկնի որոյ
հարկիւ և յորդորմամբ պատուիրեաց նմա ե-
լանել և գալ ի սուրբ Աթոռս։ Ասելով թէ՝
զի որովհետև այդ գժտութիւնդ գոյ ի մի՛ջի
ձերում, անօգուտ է մնալդ յայդր, ուր ոչինչ
կարես շահիլ այսուհետև բաց ի հոգեմաշ վի-
րաւորութեանց և պէսպէս ցաւոց որք օրստօ-
րէ դիպելոց են քեզ։ Եւ թէ ոչ եկեսցես աստ
ի սուրբ Աթոռս, ընդ բանիւ ես, և լուծեալ
ի կարգէդ։ Եւ այլ ո՛չ ևս ունիս իշխանու-
թիւն յայդր Առաջնորդութիւն առնելոյ։ Բայց
զգանգատ ժողովրդեանն ոչ ծանոյց նմա։
Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետ-
րոջն, և ի ՇՀԹ թղթահամարն։

Թուղթ ևս օրհնութիւն առ մհ. Եղիայ
ոմն վասն տուեալ ողորմութեան՝ (ԺԲ) զոր
յանուն սրբոյ Աթոռոյս հասուցեալ էր կե-
սարացի Մատթէոս վարդապետին։

Թուղթ ևս առ սրբոյն Դանիէլի վանից
վանահայր Մատթէոս վարդապետն գրեաց ի
պատասխանի ի յնվ. ԺՀ գրեալ թղթոյն։ Առ
որ հասեալ էր թուղթ սրբ. վեհին, զոր ըստ
խնդրոյ Թօխաթցւոցն գրեաց առ նա զի ե-
լեալ երթիցէ ի Թոխաթ, և անդ Առաջնորդ
լիցի։ (որպէս ի հոկտ. ԻԳ ասացեալ է.) և
նա ես ըստ հրամանի սրբ. վեհին մինչ պատ-
րաստեալ է առ ինքն գնալ ի Թօխաթ, Պօլ-
սոյ պատրիարքն այսմ իրակութեան ոչ տե-

ղեակ գոլով՝ յայնժամ զՊետրոս վարդապետն ոմն Առաջնորդ արարեալ ի վերայ Թօխաթու, յղեալ էր անդ։ Զոր նա մինչ լուեալ էր, ոչ ևս էր գնացեալ ի Թօխաթ։ Եւ այժմ գրեալ էր սրբ. վեհին զորպէսն անցիցս։ Եւ սրբ. վեհն միամտութիւն գրեաց առ նա, ասելով թէ՝ միամտութեամբ նիստ 'յայդր, մինչև տեսցուք զվախճան իրին։ Քանզի կամէր՝ զի երբ զԴաւիթ վարդապետն բերցէ ի սուրբ Աթոռս, յայնժամ զնա Առաջնորդ արասցէ անդւոյն։ Որում և ծանոյց զմիտս թղթոց Դաւիթ վարդապետին և ժողովրդեանն։ Եւ զթուղթն մհ. Եղիային յղեաց առ սա, զի տացէ նմա, և զողորմութիւնն (ժբ) զոր 'յանուն սրբոյ Աթոռոյս առեալ ի նմանէ, առ մհ. Փիլիպպոսն յղեսցէ ի Կարին, զի նա անտի առ մեզ հասուսցէ։

Փուսուլայ ևս գրեաց նմա։ Եւ զվերոյիշեալ թուղթսն ընդ փայեկին յղեաց առ նա։ Պատուիրելով նմա, զի թէ ժողովուրդքն վերստին ընդունիցին զԱռաջնորդն իւրեանց, մի ևս ցուցցէ նոցա զթուղթսն, այլ առ ինքն պահեսցէ։ Իսկ թէ ըստ դրեալ գանգատանացն իւրեանց ոչ ընդունեսցին զնա, տացէ նոցա զթուղթսն, և հարկեսցէ նոցա, զի զԱռաջնորդն իւրեանց 'յորդորեալ յղեսցեն ի սուրբ Աթոռս։ Դու ևս ասէ ի կողմանէ մերմէ երաշխաւոր լեր նմա, և առեալ ընդ քեզ բեր ի սուրբ Աթոռս։ Յղեցան այսոքիկ ընդ ի Կեսարիոյ եկեալ տաճիկ փայեկին։ Որ եւ ի մարտի. Դ։

ՄԼԴ.

Խնդիր Կարնեցւոցն ի սրբ. վեհէն վասն Ճռասօնօղլի Յարութիւն պետին, զի Առաջնորդ արասցէ զնա իւրեանց։ Եւ սրբ. վեհին. ի ձեռն մհ. Փիլիպպոսին խոստանալ նոցա կատարել զխնդիրս իւրեանց։

Կարնեցիք բազմակնիք մահսար արարեալ՝ ի ձեռն Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին յղեալ էին առ սրբազանն յորմէ և խնդրեալ էին աղերսիւ, զի զԹօխաթցի Ճռասօնօղլի Յարութիւն վարդապետն Առաջնորդ արարեալ ի վերայ քաղաքին իւրեանց, Առաջնորդական կոնդակաւ յղեսցէ զնա առ ինքեանս։ Եւ թէպէտ սրբ. վեհն հաճեցաւ ընդ բարի խնդիրս նոցին, բայց որովհետև մերձ էր նաւուղն տաճկաց, և գնալոց էր յԵրեան, վասնորոյ՝ այժմ ոչ եղև ձեռնհաս կատարել զխնդիրս նոցա։

Այլ զթուղթ մի գրեաց առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն ի պատասխանի ի փար. ԺԲ գրեալ թղթոյն։ Եւ ի ձեռն սորին խոստացաւ նոցա, զի ի դառնալն իւր յԵրեանայ՝ կատարեսցէ զխնդիրս իւրեանց։ Որում և պատուիրեաց միամտեցուցանել նոցա վասն խնդրոյն իւրեանց։ Զայս խնդիր Եփրիկեանց մհ. Գրիգորն ևս էր գրեալ առ սրբ. վեհն։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց սմա զնա ևս միամտեցուցանել վասն խնդրոյն և վասն պատասխանւոյ թղթոյն իւրոյ։ Զի խոստացաւ նմա ընդ Յարութիւն վարդապետին գրել առ ինքն զպատասխանի թղթոյն իւրոյ։ Ծանոյց սմա քան զայս յառաջ ի փար. ԻԶ ի վերայ Կարսայ ի ձեռն պարոն Գէորգին պահարանաւ թուղթ յղելն առ ինքն, զի յղեսցէ առ եղբայրն իւր խօջայ Նազարէթն ի Պօլիս։ Եւ պատուէր՝ ի հասանիլն պահարանին առ ինքն, ընդ մէնզիլի յղեսցէ առ պարոն Նազարէթն։ Յղեցաւ այս ընդ Կեսարիոյ փայեկին, ի մարտի. Դ։

ՄԼԵ.

Խնդիր Հերակլ Արքային՝ վասն տէր Մելքիսէթին։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Հերակլ Արքայն (որ ի փար. ԻԴ յիշեցաւ) ի պատասխանի թղթոյն։ Զի վասն տէր Մելքիսէթին իրիջայ էր գրեալ սրբ. վեհն, թէ քահանայքն տեղւոյս զոր ինչ գանգատ գրեսցեն քեզ վասն տէր Մելքիսէթին՝ մի հաւատար նոցա, զի զայն առ նախանձու ասէ գրեն քեզ։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ ես ոչ հաւատամ ասէ գրեցելոցն նոցա, բայց դու պատուիրեա ասէ ամենեցուն, զի մի ևս զգանգատանաց թուղթ գրեսցեն մեզ։

Թուղթ ևս առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց։ Որում և ծա-

զմիտս թղթոյ Արքային։ Եւ պատուիրեաց ասել նմա՝ զի արգելցէ զքահանայսն ի գրելոյ զթուղթս գանգատանաց առ ինքն։ Յղեցան այսոքիկ ընդ Հերակլ Արքայի յղեալ յատուկ փայեկլին։ Որ եւ ի մարտի Ի։

ՄԼՁ·

Պատուէր յամթեցւոցն վասն Հալապու Առաջնորդ Պետրոս պետին, մի ընդունիցին զնա Առաջնորդ ինքեանց՝ մինչեւ ոչ եկեսցէ ի ս. Աթոռս, եւ զանունն Սսայ քարոզէ յինքենէ։ Եւ թէ զՆարապետ պետն խնդրեն, գրեսցեն ինքեան զստոյգն։

Հալապու Առաջնորդ Պետրոս վարդապետն (որ ի հոկա. Իթ յիշեցեալ է) յանցեալ ամին գրեալ էր առ սրբ. վեհն՝ թէ ի միում տեղւոջ Առաջնորդութիւն տուր ինձ ուր որ կամիս, կամ գրեա պատրիարքին, զի նա տացէ ինձ զԱռաջնորդութիւն յայն կողմունս։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ որովհետեւ դու Սսայ եպիսկոպոս ես, մինչեւ ոչ եկեսցես ի ս. Աթոռս, և զանունն սորա առնուցուս ի վերայ քոյ՝ իբրու միաբան լինելով սմա, որով և զՍսեցութեան անունն ի քէն ի բաց բարձցես, ոչ կարես դու ի վիճակս մեր Առաջնորդ լինիլ, և ոչ զգործ եպիսկոպոսութեան կատարել։ Ո՛չ մեք եմք տալոց քեզ զԱռաջնորդութիւն, և ոչ պատրիարքն կարէ տալ առանց մերոյ հրամանին, և ոչ ժողովուրդքն ընդունելոց են։ (որպէս ի հոկա. Իթ ասացեալ,) իսկ նա ոչ ի ս. Աթոռս եկն, և ոչ զպատասխանի թղթոյն գրեաց առ սրբ. վեհն։ Այժմ լուաք թէ՝ զՅամթայ Առաջնորդութիւնն առեալ է նա ի պատրիարքէն, և գնալոց է անդ և զօրհնութեան գիր ևս է գրեալ առ նոսա։ Զոր ի գիտելն սրբ. վեհին զկոնդակ մի գրեաց առ Յամթայ քաղաքի քահանայսն՝ իշխանսն և ժողովուրդսն։ Ծանուցանելով նոցա զմիտս վերոյիշեալ բանիցս։ Ընդ նմին և պատուիրեաց նոցա ասելով թէ՝ Պետրոս վարդապետն մինչև ոչ եկեսցէ ի ս. Աթոռս որպէս գրեալ եմք իւրեան, ոչ ունի իշխանութիւն յայդր Առաջնորդութիւն առնելոյ՝ և զեպիսկոպոսութեան գործս կատարելոյ։ Եւ դուք ևս ոչ պարտիք ասէ ընդունել զնա, և ոչ զանուն նորա յիշել յեկեղեցւոջն։ Եթէ հաստատնապէս Առաջնորդ է ասէ լինելոց ձեզ՝ թող նախապէս ի ս. Աթոռս եկեսցէ, և ապա մերով հրամանաւ և կոնդակաւն եկեալ նստցի յայդր։ Եւ զի՝ Յամթայ Առաջնորդ Կարապետ վարդապետն՝ (որ ի յօգ. ել յիշեցեալ է.) ըստ գրեցելոյ սրբ. վեհին այժմ եկն ի ս. Աթոռս, ունելով զբազմակնիք վկայական թուղթս ի ձեռին իւրում ի ժողովրդոցն Ջերմուկայ՝ Արղնու՝ Ակլայ և Լօճկայ։ Որք գրեալ էին սրբ. վեհին թէ՝ Սսայ եպիսկոպոսն մեզ ընդունելի չէ. մեր Առաջնորդն այդ Կարապետ վարդապետդ է՝ և զդա կամիմք մեք լինիլ մեզ Առաջնորդ, զոր ահա ի ս. Աթոռդ յղեցաք, զի վերստին մեզ Առաջնորդ կարգեսցես։ Քանզի՝ այս վանքիս բնական թեմն և վիճակն մեք եմք, և ի բնէ այս վանքս իւր վիճակօքն տէրունի էր սրբոյ Աթոռոյդ, և Առաջնորդն սորա յայդրուստ կարգեալ լինէր։ Այժմ ևս այս Դ վիճակքս կամիմք զի այսպէս լիցի։ Որիշ Առաջնորդ և օտար եպիսկոպոս մեզ ընդունելի չէ։ Իսկ դուք որովհետև թուղթ ինչ ոչ էիք ասէ գրեալ մեզ յայսմ կողմանէ, վասնորոյ՝ զայս ևս հարկաւոր համարեցաք ասէ գրել ձեզ։ Զի այն չորեքին վիճակքն ահա գրեն մեզ թէ՝ Սսայ եպիսկոպոսն մեզ ընդունելի չէ՝ և Առաջնորդն մեր ի սրբոյ Աթոռոյդ կարգեսցի. դուք զինչ ասէք ասէ վասն այսր. եթէ դուք ևս զայս կամիք, գրեցէք մեզ։ Եւ եթէ զՊետրոս վարդապետն կամիք լինիլ ձեզ Առաջնորդ, նախապէս ի ս. Աթոռս եկեսցէ ասէ։ Իսկ եթէ ոչ կամիք՝ զայս ևս ասէ գրեցէք մեզ։ Եւ ի կողմանէ այս Կարապետ վարդապետիս եթէ զի՞նչ են ասէ կամք ձեր. ձեզ ընդունելի է՝ թէ ոչ, զայն ևս մեզ գրեսջիք փութով։ Եւ պատուէր՝ զի զպատասխանին թղթոյս փութով գրեսցեն առ ինքն։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն յեբեսն ՇՁԱ։

Թուղթ ևս առ սրբոյ Աթոռոյս զանձապետ մհ. Մարտիրոսն՝ մհ. Բարսեղն՝ խոջայ Գասպարն և մհ. Դաւիթն գրեաց ի Յամիթ։ Եւ զվերոգրեալ թուղթն յամթեցւոց ի թղթոջս եգեալ յղեաց առ նոսա։ Պատուիրելով

նոցա՝ զի յեկեղեցիսն ընթեռնուլ տացեն, և զպատասխանին առեալ առ ինքն յղեսցէն։

Թուղթ ևս առ Մուստաֆայ փաշայի սառաֆ մհ. Փիլիպոսն գրեաց ի Ցամիթ՝ ի պատասխանի թղթոյն։ Զի վասն Ցամթայ Առաջնորդ Կարապետ վարդապետին յանձնարարութիւն էր գրեալ առ սրբ. վեհն, թէ կատարեա՛ զխնդիրս դորին, և փութով յետս դարձս ի տեղի իւր։ Եւ սրբ. վեհն այնպէս առնել խոստացաւ նմա։

Թուղթ ևս առ Արգունու վանից վէքել Պօղոս վարդապետն գրեաց, և ընդ խնդրոյ Կարապետ վարդապետին՝ կրկին վէքիլ կարգեաց զնա ի վերայ նոյն վանիցն։ Պատուիրելով նմա զի լաւապէս մուղայէթ լիցի վանիցն մինչև զդառնալն Առաջնորդին իւրոյ Կարապետ վարդապետին յետս։ Զորս գրեալ ետուք Ցամթայ առաջնորդ Կարապետին յղել ի տեղի իւր։ Եւ նա ևս դքրղստանցի այր ոմն ի վարձու կալեալ, զգրեանսն ետ նմա, զի տարցի առ իւրաքանչիւր տեարսն, և զպատասխանիսն առեալ ի նոցանէ, դարձցի յետս։ Որ եկ ի սրբոյ Աթոռոյս, ի մրա. ԻԳ։

ՄԼԸ.

Վերստին Առաջնորդ կարգելն սրբ. վեհին զԹօխաթցի Ցարութիւն պետն ի վերայ Կարնոյ քաղաքին, եւ յղելն ի վիճակն իւր։ Ընդ նմին եւ թուղթք ի Կալին՝ ի Պօլիս, եւ յայլ տեղիս վասն նորա եւ վասն այլ ինչ իրակութեանց։

Որպէս յամսոյս Դ ի ձեռն Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին սրբ. վեհն խոստացաւ Կարնեցւոցն ըստ խնդրոյ իւրեանց զԹօխաթցի Ցարութիւն վարդապետն Առաջնորդ առնել ինքեանց, ահա այժմ ըստ խոստմանն իւրոյ յղեաց զնա անդ, առնելով զնա ինքեան վէքիլ և փոխանորդ ի վերայ Կարնոյ քաղաքին։ Ուստի՝ և զԱ կոնդակ դրեալ ի վերայ Կարնոյ քաղաքին և բոլոր վիճակացն սրբոյ Լուսաւորչի վանիցն, ետ նմա։ Ցորում գրեաց թէ՝ դա ոչ է օտար և նման առաջնոց Առաջնորդացն, այլ յատուկ մեր է, և մեր փոխանորդ։ Քանզի՝ դուք այսուհետև որպէս թէ յատուկ և տէրունի ժողովուրդք էք սրբոյ Աթոռոյս, և ձեր Առաջնորդն մեք եմք. իսկ դա մեր վէքիլ է և փոխանորդ։ Զայս վասն այն գրեաց նոցա սրբ. վեհն, քանզի կամէր զԿարնոյ քաղաքի Առաջնորդութիւնն արքունական ֆարմանաւ առ ինքն դարձուցանել։ Եւ պատուէր՝ զի սիրով ընկալեալ զնա, հնազանդ լիցին նմա։ Եւ զի՝ ի մէջ քահանայիցն և ժողովրդոցն տեղւոյն բազում անկարգութիւնք գոյին։ Զորս ի լսելն սրբ. վեհին՝ պատուիրեաց նոցա այսուհետև մի ևս առնել զայնպիսի անկարգութիւնսն։ Զի ոմանք քահանայք յեկեղեցւոյ և ի պաշտօնէ ծոյլ և պղերգ գոլով, միշտ արբեցութեան և որկրամոլութեան հետևէին։ Որովք և լինէին բազմաց անկարգութեանց պատճառք, և մայր գայթակղութեանց միամիտ ժողովրդոց։ Եւ պատուէր՝ զի զգաստասցին այնպիսիքն այսուհետև և ի կարգի կացցեն։ Եւ ոմանք եկամուտ քահանայք ևս տանէ ի տուն շրջելով, զծածուկ պսակս և զայլ օրէնս կատարէին թարց գիտութեան Առաջնորդին և կամ ընիկ քահանայից։ Եւ պատուէր՝ զի երթիցեն այնպիսիքն ի տեղիս իւրեանց, և մի մնասցեն անդ, և ծակէ ի ծակ շրջիցին։ Եւ թէ ոչ ունին զյատուկ տեղի և ժողովուրդ, գայցեն յԱթոռս, ես դտանեմ. ասէ վասն նոցա զժողովուրդ որովք կենցաղավարիցեն։ Եւ ոմանք տիրացուք առանց կամաց քահանայից և ժողովրդոց և կամ թարց կամաց Առաջնորդին միջնորդութեամբ ոմանց և կամ այլազգեաց կամէին քահանայ լինիլ։ Եւ կամ գնացեալ յայլմէ եպիսկոպոսէ քահանայ լինէին, և գնացեալ անդ քահանայութիւն առնէին։ Եւ պատուէր՝ զի զգուշասցին այսուհետև այնպիսիքն, և այլ մի ևս արասցեն զայն անկարգութիւնսն։ Եւ ոմանք ի ժողովրդոց որք մինչ կամէին զպսակ և զամուսնութիւնս առնել չհասիւք, և կամ կուսի ընդ այրւոյ, և կամ այլ ինչ ապօրինաւորութեամբ, և ի չտալ հրաման Առաջնորդին, անկանէին յայլազգիս և բռնութեամբ յառաջ տանէին զհոդեվնաս կամս իւրեանց։ Եւ պատուէր՝ զի մի ևս արասցեն զայն անկարգութիւնսն։ Նաև՝ սովորութիւն մի գոյր ի մէջ նոցա՝ զի նորընծեցեալ քահանայից ծուխն՝ նոցին կանայքն և ընտանիքն զաւթէին իբրև զմարմնաւոր

ժառանգութիւնս։ Վասն նոցա այսպէս կանոնեաց սրբ. վեհն, զի ի վախճանիլ քահանայից՝ եթէ գոն նոցա ի չափ հասեալ քահանայացու ժառանգք, որք կարիցեն փոխանորդել զտեղիս հարց իւրեանց, տիրեսցեն իւրեանց ծխոյն։ Ապա թէ ոչ գոն նոցա քահանայացու ժառանգք, կանայք և այլ ընտանիք նոցին մի իշխեսցեն տիրել ծխոցն և իւրացուցանել, այլ Առաջնորդն տիրեսցէ այն ծխոցն։ Եւ եթէ գոն այնպիսի քահանայք, որք ինքեանց պիտանիք են՝ և ծուխ չունին, յայն ծխոցն բաժին տացէ նոցա Առաջնորդն, որպէս որ ինքն կամիցի և պատշաճ տեսցէ։ Իսկ այրի քահանայք եթէ ունին զմատաղ մանկունսն, և պարկեշտք են վարուք, կացցեն ի պաշտաման իւրեանց, և հովուեսցեն։ Իսկ որք մատաղ մանկունս ոչ ունին ասէ, և կամ անպարկեշտք են վարուք, որով և ժողովուրդքն գայթակղին, զայնպիսիսն գրեսջիք ասէ մեզ յանուանէ՝ զի զինչ և գրեսցուք ձեզ վասն նոցա, այնպէս առնիցէք։ Եւ սաստ և սպառնալիք՝ մինչ ոչ կատարեսցեն զհրամանս և զպատուէրս իւր։

Վկայական ես գրեալ սրբ. վեհն ետ նոյն Ցարութիւն վարդապետին։ Ցորում յիշելով զամենայն զորպէսսն և զանցսն նորին որք մինչև ցայժմ անցեալ էին զնովաւ։ Զի նա գոլով ի վիճակէն սրբոյ Աթոռոյս, ի ՌՄԺԲ թուոջն գնացեալ ի Գեանջայ առ ապօրինաւոր չԻսրայէլ կաթուղիկոսն՝ (որ յետոյ ի նմանէ զողոճարար եպիսկոպոս էր ձեռնադրեցեալ ի ՌՄԺԲ թուոջն։) Զոր իմացեալ սրբ. վեհին՝ ընդ բանիւ արար զնա։ (որպէս ի պատմութեան ՌՄԺԷ թուոջն և ի սեպտ. ԺԸ ի թղթոջ Զաքարիա վարդապետին ասացեալ է.) և յամս Ժ ի տարագրութեան և յողորմելութեան մնաց։ Ապա ի ՌՄԻԲ թուոջն զղջացեալ դիմեաց ի ս. Աթոռս առ ոտս սրբ. վեհին գոչելով զմեղայն. և յանձն էառ մնալ ի հնազանդութեան և ի միաբանութեան ս. Աթոռոյս մինչև ի մահն իւր։ (բերեալ էր ընդ իւր և զաղերսանաց թուղթս վասն իւր առ սրբ. վեհն ի պատրիարք Գրիգոր վարդապետէն,) Եւ սրբ. վեհն ներեաց նմա, և զապաշխարանս եդեալ ի վերայ նորա պահեաց սատ ժամանակ մի։ (որպէս ի ՌՄԻԲ թուոջն և ի սեպտ. Ը. ասացեալ է.) Եւ յետոյ ի նոյն թուոջն և ի հոկտ. ԻԴ արարեալ զնա Առաջնորդ Կարնոյ՝ յղեաց անդ։ Եւ զկնի միոյ տարւոյ եբեր ի ս. Աթոռս, և ըստ խնդրոյ ժողովրդեանն ընդ Կարնոյ նուիրակ Փառակեցի Իսահակ՝ և սրբոյն Սաղիմայ միաբան կարբեցի Կարապետ վարդապետացն յանցեալ թուոջն և ի հոկտ. ԺԹ ի վեցերորդ կիւրակէին որ զկնի սրբոյ խաչին ետ նմա զիշխանութիւն եպիսկոպոսութեան այսու կերպիւ։ Զի թէպէտ անվաւեր և ապօրինաւոր էր ձեռնադրութիւնն նորին որ չիք Իսրայելէն, ըստ այնմ, զի ի մերմէ վիճակէ էր, բայց որովհետև օծեցեալ էր, մանաւանդ՝ զի և չիք Իսրայէլն յայնմ ժամանակի յորում ձեռնագրեալ էր զնա, դեռ չէր բանադրեցեալ. (որպէս ի վերդ ասացաք,) վասնորոյ՝ այժմ ոչ էօծ զնա սրբ. վեհն կրկին։ Այլ զգեստաւորեցուցեալ զնա ընդ միւս նորընծայիցն վերոյգրեցելոց ուրոյն ի նոցանէ՝ և նախ քան զպատարագն եբեր առաջի սեղանւոյն՝ և զփոխ մի Աւետարան ընթերցեալ ի վերայ նորին՝ ետ նմա ըստ կարգի ձեռնադրութեան, զեմիփորոն, զթագ՝ զմատանի՝ զգաւազան և զԱւետարան ի գիրկն, բաց ի յօծմանէ, և տարեալ ընդ իւր ի վեր, ի կարգս զգեստաւորեալ Զ եպիսկոպոսացն կացոյց։ Եւ այսպէս զանընդունակ եպիսկոպոսութիւնն նորին արար ընդունելի, և վերստին արարեալ Առաջնորդ Կարնոյ՝ փառաւորութեամբ և խիլայիւ դարձոյց անդ։ Այսու պայմանաւ, նախ՝ զի մինչև ցելն շնչոյն մնայցէ ի հնազանդութեան ս. և մեծի Աթոռոյս Էջմիածնի և ի սմա նստօղ Հայրապետացն, որոց ոչ երբէք ներհակիցի ի խորհուրդս՝ ի կամս՝ ի հաւատս և ի գործս։ Եւ ոչ շեղիցի կերպիւ խիք ի հաւատոյն՝ ի դաւանութենէն և ի կրօնիցն զորս ս. Աթոռս և եկեղեցիս հայաստանեայցս ունի։ Երկրորդ՝ ի ս. Աթոռոյս. ի միաբանութենէ և ի ծառայութենէ սորին ոչ վերջանայցէ մինչև ի մահն իւր. և առանց հրամանի սրբազանից Հայրապետացն ոչ ելանիցէ ի սմանէ յայլուրեք որով պատճառաւ և իցէ. Երրորդ՝ ի պատահիլն իւր ի վիճակս այլոց Առաջնորդաց՝ և կամ ի յայլոց վիճակաց եթէ ոք առ ինքն եկեսցէ ի խնդրել զկարգ ինչ՝ թարց հրամանի Հայրապետացն իւրոց, և առանց գի-

տութեան իւրոյ Առաջնորդին, ամենևին ոչ յօժարիցի և ոչ տայցէ երբէք ի միոյ աստիճանէն մինչև ի յեօթն աստիճանն, եթէ արժանաւոր իցէ խնդրողն և եթէ անարժան։ Իսկ և՝ ի տալն իւրում հրամանաւ և օրինօք՝ Թարց լաւապէս վերահասութեան և քննութեան՝ ըստ հաւատոյն՝ ըստ վարուցն և ըստ գիտութեան ոչ տայցէ ամենևին զաստիճան մի՝ որով պատճառաւ և կամիցի խնդրողն։ Եւ մի գիւրտհաւան և վաղվաղակամ լինիցի ի ձեռնադրութիւն ինչ վասն անձնական ինչ ախտի, կամ աչառանաց, և կամ վասն ագահութեան։ Ուրեմն՝ եթէ շեղիցի և ուխտազանց ղտանիցի յայսց կանոնաց և պատուիրանացս՝ զորս ինքն ուխտեաց և յանձն էառ, պարտական եղիցի Աստուծոյ, և եպիսկոպոսութիւն սորին անընդունակ լիցի։ Որոյ և զօրինակն գրեալ և կնքեալ ետ սրբ. վեհին։ Որոյ մուսավատայն է ի բոլորագրահամար տետրոջն, և ի ՇՀԸ թղթահամարն։

Թուղթ ևս առ Կարնոյ իշխող Խալիլ փաշայն։ (որ ի յօդ. ԺԳ յիշեցեալ է,) սէր և յանձնարարութիւն վասն Յարութիւն վարդապետին։ Ընդ նմա փոքր ինչ վարդեջուր և է սպիտակ մոմ յղեաց առ նա։

Թուղթ ևս առ Եփրիկեանց մհ. Գրիգորն գրեաց ի պատասխանի ի փար. Ե գրեցեալ թղթոյն։ Զի ընդ Կարնեցւոց մահսարին սա ևս էր գրեալ առ սրբ. վեհն զխնդիր վասն Յարութիւն վարդապետին Առաջնորդ առնել զնա ինքեանց։ Եւ սրբ. վեհն այնպէս արար։ Եւ վասն Յարութիւն վարդապետին յանձնարարութիւն գրեաց նմա։ Եւ եղբօրն նորին մհ. Կիրակոսին՝ և որդւոցն Մովսէսին և Գէորգին ողջոյն գրեաց։

Թուղթ ևս առ Թօխաթու Նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց ի պատասխանի ի յնվ. ԻԵ գրեալ թղթոյն։ Եւ վասն այն փօլիցային՝ (գ) զոր սրբ. վեհն քան զայս յառաջ յԱպր. Ե ընդ մհ. Յօնանին արար ի վերայ նորա, և պատուիրեաց յանձնել զայն մհ. Աղամջանին, զի ի ս. Աթոռս հասուսցէ։ Եւ նա ևս ըստ պատուիրի սրբ. վեհին այնպէս էր արարեալ։ Եւ գրեալ էր սրբ. վեհին զհասուցանելն փօլիցային առ մհ. Աղամջանն։ Եւ սրբ. վեհն զշնորհակալութիւն և զմիամտութիւն գրեաց առ նա, զի զփօլիցայն իւր առ մեզ հասեալ իմասցի՝ և միամտեսցի։ Եւ մհ. Աղամջանն յառնուլն զփօլիցայն սորին՝ (գ) ընդ առ ինքն եղեալ զանձանական և այլ դրամոյն, (ա) յետոյ հասուցեալ էր մհ. Փիլիպպոսին։ (որպէս ի փտր. ԻԶ ի թղթոջ նորին մհ. Աղամջանին ասացեալ է,) զոր և ծանոյց սմա, զի ևս առաւել միամտեսցի։ Եւ վասն Թօխաթու Առաջնորդ հանգուցեալ Սարգիս վարդապետի զգրչեայ գրեանցն՝ քան զայս յառաջ ի հոկտ. ԻԳ որպէս մհ. Գրիգորին, և սմա ևս գրեաց, զի զգրչեայ գրեանսն նորա ի նորին եղբայր Յարութիւնէն առեալ ի ս. Աթոռս յղեսցէ։ Զի գրեանքն այն ոչ էր նմա. այլ Սահակ վարդապետինն էր։ Զոր նա զկնի մահուան Սահակ վարդապետին՝ իւրացուցեալ էր։ Եւ սա ևս ըստ գրեցելոյ սրբ. վեհին խնդրեալ էր ի նմանէ զգրեանսն։ Իսկ նա ոչ էր տուեալ, ասելով թէ՝ եղբայրս պարտք ունի. զգրեանսն նորին ծախելոց եմ, և զպարտսն հատուցանելոց։ Զոր և սա գրեալ էր սրբ. վեհին, զի որպէս և հրամայեսցէ ինքեան՝ այնպէս արասցէ։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց սմա զգրեանսն մի՛ ևս առնուլ, այլ թոյլ տալ։ Եւ տեղւոյ քահանայիցն և ժողովրդոցն ողջոյն գրեաց։ Յղեցաւ այս առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն ի Կարին՝ յղել առ նա։

Ժողովարարութեան կոնդակ ևս ըստ խնդրոյ Մշու ս. Կարապետի վանից Առաջնորդ Յօնան վարդապետին ի վերայ Թօխաթու՝ Կարնոյ՝ Գաղատիոյ՝ Կեսարիոյ՝ և բոլոր Անատօլու շրջակայ երկրին գրեաց։ Յորում պատուէր գրելով ամենեցուն, զի երբ Յօնան վարդապետն զայս կոնդակս ի ձեռն միաբանին իւրոյ Պօղոս վարդապետին առ ինքեանս յղեսցէ, յանուն ս. Կարապետի վանիցն զկամաւոր ողորմութիւնս տացեն նմա, զի տարեալ զպակասութիւնս վանիցն լցուսցեն։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերես ՇՁԲ ՇՁԳ։ Այս ևս առ մհ. Փիլիպպոսն յղեցաւ, տալ Յօնան պետի ժողովարար Պօղոս պետին։ Զի նա այսու աղագաւ զՊօղոս պետն յղեալ էր ի Կարին, և ի ձեռն մհ. Փիլիպպոսին զայս խնդիրս արարեալ ի սրբ. վեհէն։

Թուղթ ևս առ Պօլսոյ Նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետն գրեաց։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի յնվ. ԺԶ և ի փտր. ԻԶ զթուղթս գրելն առ ինքն։

Եւ որպէս յայնժամ, և այժմ ևս պատուիրեաց՝ զի զորպէսն Ուռումելու ճանապարհացն՝ զհաշիւն Թղթաշինացն՝ զխոստացեալ վարձն Թարճիմանին և զյամեցման պատճառն ըէրաթին իւրոյ և մհ. Յօնանին գրել առ ինքն։ Ծանոյց սմա ի ձեռն Մուրտիկեանցն նորապէս փոլիցայ առնելն ի վերայ իւր, (ժ) և զփօլիցայագիրն առ մհ. Փիլիպպոսն յղելն ի Կարին զի առ եղբայրն իւր Խոջայ Նազարէթն յղեսցէ, զի առցէ զդրամն յինքենէ։ Եւ պատուէր՝ զի տացէ Նազարէթին զդրամն, և ծանուսցէ ինքեան զտալն։ Ծանոյց ևս սմա զԹօխաթեցի Յարութիւն վարդապետն ըստ խնդրոյ Կարնեցւոցն վերստին Առաջնորդ առնելն ի վերայ Կարնոյ քաղաքին, և Առաջնորդական կոնդակաւ այժմ յղելն սմա։ Եւ վասն Առաջնորդաց ոմանց խոստացեալ դրամոցն վերստին յիշեաց։ Զի ըստ դրեցելոյ սորին, մինչև ցայժմ ի նոցանէ դրամ ինչ ոչ էհաս մեզ։ Թղթաշէնքն՝ որպէս ի փար. ԻՋ, և այժմ ևս վասն գործեացն իւրեանց Թուղթ գրեցին յերկիրն իւրեանց։ Զոր ի թղթոջս եդեալ յղեաց աս սա, տալ Թօմայ Աղային՝ զի յերկիրն նոցա յղեսցէ։ Եւ պատուէր՝ զի փութով յղել տացէ զգիրն նոցա, և զգործիսն նոցա խնդրեալ առ մեզ յղեսցէ։ Եւ զՅամթայ Առաջնորդ Կարապետ վարդապետն հանեալ էր սա յԱռաջնորդութենէն, և զՀալապցի Պետրոս վարդապետն ի տեղի նորին Առաջնորդ արարեալ ի վերայ յԱմթայ քաղաքին, յղելոց էր անդ։ Բայց քաղաքի շատ բաժինն և Արղունու մասանն ամենայն վիճակօքն նոցա վանից ոչ ընդունէին զնա, ասելով թէ՝ մեք զՍսեցցին ոչ թողումք ի մէջ մեր մտանել։ Վասնորոյ՝ Բ մեծ բազմակնիք մահսար արարեալ իւրեանց շրջակայիւքն ընդ Առաջնորդին իւրեանց Կարապետ վարդապետին յղեալ էին առ սրբ. վեհն։ Յորս դրելով թէ՝ մեր վանքն իւր վիճակօքն բնական տէրունի է եղեալ։ Եւ մեր Առաջնորդ յԱթոռոյդ է եկեալ, մեք ոչ խառնիմք ընդ Յամթայ։ Վասնորոյ՝ դու մեզ Առաջնորդն կարգեա, մեք զնա ընդունիմք։ Քաղաքացիքն և միւսքն զորն կամին իւրեանք գիտեն։ Եւ վասն Առաջնորդին իւրեանց Կարապետ վարդապետին գրեալ էին թէ՝ դա մեր վանքին վերայ երախտիք շատ ունի։ (զի զվանքն Արղնու նորոգեալ էր նա։) եթէ դու զդա առաքես առ մեզ, մեզ ընդունելի է։ (որպէս յամսոյս ԻԳ ի կոնդակոջն յամթեցւոց ես ասացաք։) զոր և ծանոյց սմա։ Ուբում և էհարց՝ թէ դու որպէ՞ս գիտես, և զինչ ասես ասէ առ այս։ Զի ես կամիմ ասէ ըստ գրեցելոյ նոցա զվանքն Արղնու իւր մէկ քանի գիւղորէիւքն ջոկել, և անդ յատուկ Առաջնորդ առաքել, և զնա տէրունի առնել։ Զի Յամթայ Առաջնորդին գոյ ասէ իւրեան բաւական վիճակ։ Եւ պատուիրեաց դրել զպատասխանին սորա։ Եւ Թարճիման Ստեփաննն զոր ընդ Թղթաշինացն յղեալ էր սա, ամենևին ոչ պիտոյանայր մեզ, զի միշտ արբեցութեան և որկրամոլութեան հետևէր։ Եւ մանաւանդ՝ անթարմայ գոլով, ոչ կամէր զի Թղթաշինութեան արհեստն ի ս. Աթոռոջս հաստատեսցի, քանզի՝ ի մէջ խօսակցութեան զրանս Թղթաշինացն խայինութեամր թիւր մեկնէր մեզ։ Զոր նշանօք իմանայաք մեք։ Վասնորոյ՝ պատուիրեաց սմա սրբ. վեհն, զի զմէկ ուղղադաւան և քաջավարժ Թարճիման գտեալ յղեսցէ առ մեզ։ Ի ձեռն Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսին յղեցաւ այս ս:ռ Խոջայ Նազարէթն տալ սմա։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց Խոջայ Նազարէթն գրեաց՝ (որ յիշեցեալ է ի փետր. ԻՋ՝) ի պատասխանի ի փտր. ամսոջ գրեալ թղթոյն։ Որ վասն ֆարմանացն գրեալ էր սրբ. վեհին թէ՝ ի գլուխ է եկեալ։ Եւ սրբ. վեհն գրեաց սմա, զի զֆէրմանսն՝ ընդ Յօնանին փութով յղեսցեն առ մեզ։ Եւ որպէս պատրիարքին՝ և սմա ևս գրեաց, զի զմէկ լաւ Թարճիման գտեալ յղեսցէ։ Պատրիարքի գիրն յղեաց առ ·սա տալ նմա։

Թուղթ ևս առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն գրեաց՝ (որ յամսոյս Գ յիշեցաւ.) ի պատասխանի երկոքին թղթոցն իւրոց գրեցելոց։ Եւ ըստ Յամթայ Առաջնորդ Կարապետ վարդապետին զէյթուն և բաքսիմաթ էր յղեալ վասն սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն շնորհակալութիւն գրեաց նմա։ Եւ վասն Կարապետ վարդապետին իրիջայ էր դրեալ սրբ. վեհին փութով յղել ի տեղի իւր։ Եւ սրբ. վեհն խոստացաւ սմա, յետ սակաւ միջոցի Առաջնորդական կոնդակաւ յղել զնա ի տեղի իւր։ Եւ զի նորին վէքիլ Տէտիկն և Մըկրտիչն զպակասն այն դրամոյն

տակաւին ոչ հասուցեն մեզ։ Վասնորոյ և սրբ. վեհն որպէս ի յնվ. ԺՁ, և այժմ ևս ծանոյց սմա զայս։ Եւ պատուիրեաց կամ գրել իւր մարդկանցն զի մեզ փութով զդրամ հասուսցեն, և կամ ինքն ընդ հաւատարմի առ մեզ զդրամ յղեսցէ։ Եւ թէպէտ սրբ. վեհըն ըստ խնդրոյ տէր Վահանին՝ քան զայս յառաջ յօգ. ելն վասն միւս դրամոյն (ե) զմիամտութիւն գրեաց առ սա, թէ զդրամն զայն առ մեզ հասեալ իմա։ Բայց նոյն Տէտիկն և Մկրտիչն յայն դրամոյն (ե) այսքան միայն էին հասուցեալ մեզ։ Եւ այն ևս այսպիսի դրամ, և պակասով։ Զի լսեմք թէ՝ ֆնդուղ ոսկին ի Կարին Դ ղռուշ Դ փարայով անցանի. և աստ ևս Դ ղռուշ Ը փարայով գնայ. իսկ նոքա Դ ղռուշ Թ փարայով էին հաշուեալ զայն ի վերայ մեր։ Զայս ևս ծանոյց սմա։ Եւ ըստ մեր գրեցելոյն՝ Դ ջորի էր առեալ, և ծանուցեալ սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց սմա, զի թէ ի Զմիւռնոյ եկեալ բեռինքն հասեալ իցէ առ ինքն, ի վերայ նոյն ջորոցն բարձեալ առ մեզ յղեսցէ։ Եւ զայլ ջորիս և զուղտն ես առեալ յղեսցէ։ Եւ վասն տեղւոյ նոր Առաջնորդ Ցարութիւն վարդապետին յանձնարարութիւն գրեաց սմա։ Եւ դփաշայի թուղթն և զընծայն ընդ նմա յղեաց առ սա, զի ի միասին տարեալ մատուսցեն փաշային։ Իսկ և սրբ. վեհն ըստ խնդրոյ սորին նորապէս փօլիցայ արար ի վերայ Պօլսոյ նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետին։ (ժ) որոյ աղագաւ և զփօլիցայագիր մի դրեալ յանուն նորին, յղեաց առ սա, յղել առ Նազարէթն, զի առցէ ըզդրամն ի Զաքարիա վարդապետէն, և ինքն ի Կարին մեզ հասուսցէ։ Եւ վասն Արապկերցի Մարտիրոսի մեզ տալիք դրամոյն որպէս ի հոկտ. ԻԹ, և այժմ ևս գրեաց սմա, զի հոգ տարեալ առնուցու։ Եւ յայնժամ գրեաց ևս թէ՝ լսեմք թէ Մարտիրոսն առ ձեզ րեան և ապրանք ունի. մի տայցես մինչև զդրամն մեր առնուցուս։ Եւ այժմ գրեալ էր թէ՝ Մարտիրոսն առ մեզ րեան և ապրանք ոչ ունի։ Եւ զորպէսն թղթաշինացն ծանոյց սմա, Զի սկսանին շինեցուցանել զթղթաշինութեան տեղին։ Եւ վասն նոր թարջիման յղելոյ, սմա ևս դրեաց, զի թէ անդ լաւ թարճիման գտանիցի, յղեսցէ։ Եւ թէ ոչ՝ գրեսցէ Նազարէթին, զի նա դտեալ յղեսցէ։ Բայց մի ումեք յայտնեսցեն զայս։ Պօլսոյ պահարանն յղեաց առ սա յղել առ Նազարէթն, զի Զաքարիա պետին տացէ։ Թօխաթու նուիրակի գիրն և Ցօնան պետի ժողովարարութեան կոնդակն ևս յղեցաք առ սա յղել առ նոսա։ Եւ Ցարութիւն պետն ի մարտի ԻԴ։

Ի Բամբակածոր՝ առ Բաբաբէկն՝ Դամղուլին և Մահմատ Աղայն, յանձնարարութիւն վասն թղթաշինացն։

Վասն թղթաշինութեան գործեացն հաստ և մեծ փայտք պիտոյացան։ Եւ յերկրոջս մերում ըստ այնքանութեան փայտք ոչ գտանեցան։ Եւ լուաք թէ՝ ի մայրին Բամբակաձորու հաստ և մեծ փայտք շատ գոն։ Վասն որոյ և սրբ. վեհն զթղթաշէնսն ընդ մեր միրզային եղեալ յղեաց անդ, զի երթեալ տեսցեն զփայտն, և որոց հաւանեսցին, նըշանադրեալ ցուցանիցեն արանցն մերոց, զի հատեալ բերցեն։ Որոց աղագաւ առ Բաբաբէկն՝ Դամղուլին և Մահմատ Աղայն ուրոյն ուրոյն զերիս թուղթս յանձնարարութեան գրեաց վասն թղթաշինացն, զի ի յերթալն նոցա անդ, ի սէր ունիցին զնոսա, և բանից նոցա ձեռնտու լիցին։ Որք ելին ի մարտի ԻԸ։

ՄԼԸ.

Ի Պօլիս եւ ի Հնդիկս։ Առ պատրիարքն եւ մհ. Ցարութիւն եւ Միքայէլ Աղայն եւ առ ոմանս անձինս, վասն ընչիցն հանգ. շօռոթեցի ալ. Ղազարին։

Արդ՝ յանցեալ թուոջն ի Հնդկաց երկրէն նաւ մի ելեալ իբրու գայցէ ի Բասրա, և եկեալ հանդէպ Մաշկաթու բեկեալ է։ Եւ ի մէջ նաւուն եղեալքն որն ջրասոյզ են լեալք, և որն զերծեալք։ Բայց ի մէջ նաւուն այն շօռոթեցի Ղազար անուամբ հարուստ և ընչաւէտ մարդ մի է եղեալ. որ բաց ի յայնց որք ի նաւուն կորեալ են, ԽՌ թումանի ևս գոյք է ունեցեալ ի ղուրսն։ Այս Ղազարս յառաջ քան զնաւի բեկանիլն, ի մէջ նաւին հիւանդացեալ վախճանեալ է։ Եւ ի ժամ մահուանն իւրոյ՝ ի Բասրա նստող Ինկլիզի Պա-

լիօզն իւրեան վէքիլ է արարեալ, զի ամենայն գոյքն իւր ի նա հասանիցին։ Որ եթէ ընտանի լինիցի, և կամ վարիս և կամ կտակ, զայնս ամենայն Գալիօզն հոգասցէ։ Զոր ի Վան բնակեալ Ջուղայեցի տէր Յովհաննէսն և որդինորին տիրացու Ատեփաննոսն գրեալ էին սրբ. վեհին։ Զայս ես էին գրեալ թէ՝ Ղազարն այն այսքան կայ ունի, և բնաւին ոչ մէկ վարիս ունի, և ոչ մէկ փարայ պարտք։ Նորա կայքն յԱթոռդ պարտին հասանիլ։ Բայց մինչև ի Պօլսոյ յԻնկլիզի դեսպանէն ի վերայ Գալիօզին դիր ոչ լինիցի ասեն, փարայ զի ոչ տայ մարդոյ։ Զոր ի դիտելն սրբ. վեհին, փութով զթուղթ մի գրեաց առ Պօլսոյ նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետն։ Ծանուցանելով նմա զորպէսն հանգուցեալ շօռոթեցի Ղազարին։ Որում և պատուիրեաց, զի անդ հետեեալ իմասցի թէ որձյ ձեռօքն է կարելի, և կամ ի մերայնոցն ձվ կայ ի դրանն դեսպանին, ի ձեռն նոցա մէկ դիր առցէ ի դեսպանէն ի վերայ Բասրայու Ինկլիզի Գալիօզին թէ՝ այդ շօռոթեցի Ղազարդ որ ի նաւուն մեռեալ է, դորա ոչ վարիս ունի, և ոչ այլ ինչ միրասխոռ. դորա գոյքն ամենայն հայոց կաթողիկոսին և Աթոռոյն պարտի հասանիլ ըստ օրինաց իւրեանց և ըստ վկայութեան տեղւոյդ հայոց։ Վասնորոյ պարտիս զամենայն գոյսն դորա յանձնել տեղդ Էջմիածնի վէքիլ Էմիրազեան Յարութիւն և Մարտիրոսեան Միքայէլին որպէս կաթողիկոսն ես դրեալ է դոցա։ Հալտաթ՝ այսպէս մէկ գիր առցես ասէ ի դեսպանէն, և ղու ես գրեսցես ասէ մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայիցն, և դեսպանի գրովն յղեսցես ի Բասրա ի ձեռն նոցա։ Ես ես գրեալ եմ ասէ նոցա։ Ցղեցաւ այս առ մհ. Փիլիպպոսն, առ Զաքարիա պետն յղել ի Պօլիս։ Եւ յԱպրիլ ամսոյս մէկն գրեցաւ։

Թուղթ ես առ Էմիրաղեան մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայսն գրեաց ի պատասխանի թղթոցն իւրեանց, զոր ընդ ս. Երուսաղեմայ նուիրակ Համատանցի Յովհաննէս վարդապետին դրեալ էին։ Որոց և խոստացաւ զպատասխանին թղթոցն իւրեանց յետոյ գրել առ ինքեանս, և յայնժամ զնորատիպ տօնացոյցս ես յղել վասն իւրեանց։ Զի որովհետև յայս ներկայ աւուրքս սակս տաճկաց նաւրուղին յՇրեան զտանէաք ասէ, և էաք ի մէջ բազմակերպ զբաղանաց, վասնայնորիկ ոչ կարացաք գրել ձեզ երկարապէս զպատասխանիս թղթոց ձերոց։ Զայսվասն այն այսպէս գրեաց նոցա, քանզի կամէր ի կարճոյ գրել զգիրս զայս, զի փութով յղեսցէ առ նոսա, զի մի կորնչիցին կայքն հանգուցեալ Ղազարին։ Իսկ և՝ զորպէսն հանգուցեալ շօռոթեցի Ղազարին ի կարճոյ ծանոյց նոցա։ Որոց և պատուիրեաց, զի երթեալ ընդ տեղւոյ Գալիօզին խօսեսցին, և ասասցեն թէ՝ Ղազարին յիշատակ ոչ գոյ որ իւր ապրանացն տիրէ. նորա ինչքն ըստ մեր օրինացն պարտին հասանիլ մեր ս. Աթոռոյն և Հայրապետին։ Եւ որքան գիտէք դուք, և որպիսի կերպիւ որ պատշաճ տեսանէք, ասացէք ասէ նմա, և յորդորեցէք հասուցանել սրբոյ Աթոռոյս, և մի կորուսանել ընդ վայր, և զսուրբ Աթոռս և զհոգի հանգուցեալոյն զրկել։ Եթէ լուիցէ ձեզ, և հաւանեսցի այսպէս առնել, ապա առէք ասէ ի դմանէ զայն ինչսն, և գրեցէք մեզ, զի գրեսցուք առ նա զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան, և յղեսցուք առ ձեզ՝ զի տաջիք դմա։ Ապա թէ ոչ կամիցի տալ, զայն ես գրեսջիք ասէ մեզ և Զաքարիա վարդապետին, զի նա ի Պօլիս եղեալ Ինկլիզի էլչուն ծանուսցէ, և թուղթ առեալ ի նմանէ ի վերայ դորա վասն այդ բանիդ՝ յղեսցէ առ ձեզ՝ զի և դուք տաջիք դմա, և զայն ինչսն առնուցուք։ Քանզի՝ մեք դրեալ եմք ասէ Զաքարիա վարդապետին, զի ինքն ևս առ ձեզ զթուղթ գրեալ տեղեկասցի. եթէ տեղւոյդ Գալիօղն զայն ինչսն մեզ հասուցանել չը կամիցի, ի տեղւոյ եղեալ էլչուցն գիր առնուցու և առ ձեզ յղեսցէ, որ զայն ինչսն առնուցուք ի դմանէ։ Եւ առ այս հարկ։ Փուսուլայ ևս գրեաց առ նոսա։ Ծանուցանելով նոցա քան զայս յառաջ ի սեպտ. ելն ընդ Աւետիք վարդապետին ի վերայ Շիրազու զթուղթս դրելն առ ինքեանս և առ ոմանս անձինս։ Էմիրազեանց մհ. Յարութիւն Աղայն ի կողմանէ Զաքիկենց Գրիգոր Աղային դրամ էր յղեալ ի Պօլիս առ Զաքարիա վարդ. և ծանուցեալ սրբ. վեհին։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն միամտութիւն գրեաց առ նա, զի զդրամն զայն առ մեզ հասեալ իմասցի՝ և միամտեսցի։ Որում և ծանոյց վասն այն դրամոյն առ Գրիգոր Աղայն ևս զմիամտութիւն գրելն այժմ։ Եւ

ընդ Սաղիմայ նուիրակ համատանցի Յովհաննէս վարդապետին մէկ մարդարտեայ թասպէհ էր յղեալ սա։ Որոյ գինն որդի նորին պ. Ստեփաննն դրեալ էր թէ՝ Ա հատն մարգարտին Դ ոսկի և կէս է։ Եւ թէպէտ շատ թանկագին էր, բայց որովհետև յղեալ էին, ընկալաւ։ Եւ խոստացեալ էին զնորին պակասն ևս դառնել և յղել. բայց ոչ կամեցաւ սրբ. վեհն։ Եւ վասն Գրիգոր Աղայի առ ինքն յղեալ չինեղինացն և բօղչայով ամանաթին որպէս ի սեպտ. ելն և այժմ ևս պատուիրեաց սմա, զի թէ մինչև ցայժմ յայսկոյս իցէ յղեալ բարի է. և թէ ոչ՝ ընդ հաւատարիմ եկողաց յղեսցէ։ Նոյնպէս և Միքայէլ Աղայն ևս էր ի կողմանէ տեղւոյ նուիրակ Փիլիպպոս վարդապետին դրամ յղեալ առ Զաքարիա վարդապետն....։ Առ նա ևս զմիամաութիւն գրեաց վասն այն դրամոյն։ Եւ որդւոցն նոցին Ստեփանին և Յովսէփին ողջոյն գրեաց։ Ցղեցան այսոքիկ առ Զաքարիա վարդապետն, յղել առ նոսա ի Բասրա։

Թուղթ ևս առ Զաքիկենց Գրիգոր Աղայն գրեաց ի Մատրաս, ի պատասխանի երկոքին թղթոցն իւրոց։ Որոց մինն ի սոյն թուոյս յունվարին ընդ Սաղիմայ նուիրակ Յովհաննէս վարդապետին առ մեզ էհաս, և միւսն ի մարտին հասարակ մարդով։ Երկուքն մի օրինակ, գրեալ ի 1773 թ. և ի հոկտ. 17 և ի 29։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի սեպտ. ելն ընդ Աւետիք վարդապետին ի վերայ Շիրազու զթուղթ գրելն առ ինքն, և առ Էմիրազենց մհ. Յարութիւն Աղայն յղելն ի Բասրա, զի առ ինքն հասուսցէ։ Ծանոյց և զգալն թղթաշինացն ի ս. Աթոռս։ Որք ի փետր. ԺԳ. եկեալ ժտին աստ։ Եւ թէ որպէս էին եկեալ, և յՕսմանցւոց երկրոջն զի՞նչ պատահեալ նոցա և որքան մասրաֆ եղեալ վասն նոցա, զամենն մի ըստ միոջէ յետոյ գրել խոստացաւ նմա։ Եւ յաւուր միում ի մէջ խօսից էհարց սրբ. վեհն թղթաշինացն, թէ ձրպէս և ի՞նչ պայմանաւ եկիք. ասացին թէ՝ բաց ի ճանապարհի մասրաֆէն, Գ տարի մնամք աստ, տարին մէկիս հազար ղուռշ վարձ լինի։ Զայս ևս ծանոյց նմա։ Եւ վասն տէր Աւետքին՝ մխիթարութեամբ գրեաց սմա և ընտանեացն նորին։ Եւ որդւոցն նորին յետոյ մխիթարութիւն գրել խոստացաւ սմա։ Եւ վասն թղթաշինացն առ Մուսի Դլաչն ևս յետոյ շնորհակալութիւն գրել խոստացաւ։ Վասն այն դրամոյն՝ զոր մհ. Յարութիւն Աղայն ի կողմանէ սորին հասուցեալ Զաքարիա վարդապետին, որոյ աղագաւ միամտութիւն գրեաց սմա։ Իսկ վասն չինեղինացն և բօղչայով ամանաթին (զորս հասուցեալ էր մհ. Յարութիւն Աղային յղել ի ս. Աթոռս) որպէս ի սեպտ. ելն, և այժմ ևս խոստացաւ սմա յետոյ միամտութիւն և շնորհակալութիւն գրել առ ինքն. զի ինչքն այնք տակաւին ոչ հասին առ մեզ։ Եւ գրէր սրբ. վեհին թէ՝ Շամիր աղայն պատմագիրք է յղեալ վասն քոյ, բայց ոչ էհաս մեզ։ Եւ խոստացաւ սմա ի հասանելն պատմագրին առ մեզ, շնորհակալութիւն գրել նմա։ Եւ պատուիրեաց ասել Շամիր Աղային՝ զի մի գուցէ միամտօրէն այնպէս գիրք տպիցէ, որ ազգիս և եկեղեցւոյս մերոյ վնաս լիցի։ Ես ևս յետոյ դրելոց եմ ասէ իւրեան։ Եւ վասն Փիլիպպոս վարդապետին յանձնարարութիւն գրեաց, զի թէ անդ իցէ, ի սէր ունիցի զնա։ Եւ զորպէսն հանգուցեալ Ղազարին ի կարճոյ ծանոյց սմա։ Որում և խոստացաւ զկնի Զատկին զնոր տօնացոյցն յղել առ ինքն։ Ցղեցաւ այս առ մհ. Յարութիւն յղել առ նա։

Թուղթ ևս առ Հնդկաց նուիրակ Փիլիպպոս վարդապետն գրեաց ի պատասխանի ի ՌՄԻԲ թուոջն և յԱպրիլի ԺԹ ի Առւրաթու գրեալ թղթոյն։ Որում և ծանոյց քան զայս յառաջ ի սեպտ. ելն վասն Կալկաթուանցիցն և վիճոյն զթուղթս գրելն առ ինքն և առ այլս ոմանս։ Եւ պատուէր՝ գրել զպատասխանին։ Եւ ի վերայ անձանց ոմանց օրհնութեան թուղթ էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Զորս յետոյ գրել խոստացաւ նմա։ Եւ վասն հանգուցեալ շօռոթեցի Ղազարի ընչիցն այժմ առ մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայսն զթուղթ գրելն և զնսսա վէքիլ առնելն ծանոյց սմա։ Եւ պատուիրեաց՝ զի ինքն ևս ժուղայէթ լեալ տիրեսցէ ընչիցն նորին. և զինչ առնելն իւր գրեսցէ ինքեան։ Ցղեցաւ այս առ Մարտիրոսեան Միքայէլ Աղայն յղել առ նա։

Թուղթ ևս առ Մուրատիկեանց մհ. Փիլիպպոսն՝ զՊօլսոյ պահարանն ընդ Ջալապ Իւղէիր անուամբ տաճկի միոյ (որ էր քիւրտ ազգաւ Մրտեսի). յղեաց առ սա, փութով առ Զաքարիա վարդապեան յղել ի Պօ-

լիս։ Նւ պատուէր՝ զի թէ նոր ֆարմանքն հասեալ իցեն առ ինքն, փութով առ մեզ յղեսցէ, և զպատասխանին թղթոյս ղրեսցէ։ Իսկ և՝ վերոյիշեալ Ջալալ Իւզէիր տաճիկն վասն երկիւղի ճանապարհին սատ ղրամ (ահձե) ետ մեզ, զի ի Կարին տացուք ին-քեան։ Վասնորոյ և սրբ. վեհն զփօլիցայա-ղիր ղրեալ ի վերայ Մուրտիկեանց մհ. Փի-լիպպոսին, ետ նոյն տաճկին, զի երթեալ այնու առնուցու զդրամն ի մհ. Փիլիպպոսէն։ Յորում և պատուէր գրեցաւ մհ. Փիլիպպո-սին, զի ի ձեռն այն տաճկին ի հասանիլն փօլիցայագրիս առ ինքն, յարղեանցն ս. Ա-թոռոյս (որ առ ինքն գոյր.) դրամ (ամձե) տացէ նմա, և ի վերայ մեր հաշուեսցէ, և զփօլիցայագիրս առեալ ի նմանէ առ ինքն պահեսցէ ի միամտութիւն իւր։ Յղեցան այ-սոքիկ ընդ Ջալալ Իւզէիր տաճկին առ մհ. Փիլիպպոսն։ Որ եւ ի ապրիլ Ա։

ՄԼԹ.

Ի Տաթեւ՝ ի Վան եւ ի Բայազիտ։ Առ Աբրահամ Պաղտասար եւ Յօնան վար-դապետսն ի պատասխանի թղթոցն, եւ ի միամտութիւն վասն կատարման խնդ-րոցն իւրեանց։ Եւ առ այլս եւս՝ վասն այլ ինչ իրակութեանց։

Սրբոյն Առաքելոյ վանից Առաջնորդ Աս-տապատեցի Աբրահամ վարդապետն զոր սրբ. վեհն ըստ խնդրոյ ժողովրդեանն քան զայս յառաջ ի նոյ. Ա առաջնորդ արարեալ ի վերայ Տաթեւու վանիցն Առաջնորդական կոնդակաւ յղեաց անդ, հասեալ էր ի վիճակն իւր։ Եւ բոլոր երկրացիքն և իշխօղն տեղւոյն Իբրա-հիմ խանն սիրով ընկալեալ էին զնա և մե-ծարեալ, և պատուով տարեալ ի վանս իւր նստուցեալ։ Զորս և նա այժմ դրեալ էր սրբ. վեհին, և վասն վանիցն իւրոց Տաթեւ և մեծ Անապատին Բ ժողովարարութեան կոնդակ խնդրեալ ի սրբ վեհէն։ Վասնորոյ և սրբ. վեհն ժողովարարութեան կոնդակ դրեալ յղեաց առ Աբրահամ վարդապետն։ Զմինն ի վերայ Հաշտարխանու՝ Գիլանու և բոլոր տանն Աղուանից՝ յանուն սրբոյն Ստա-թէի Առաքելոյ վանիցն, և զմիւսն ես ընդ-հանրական՝ յանուն նոյն Ստաթէի վանից մեծ Անապատին։ Յորս պատուէր գրելով ամե-նեցուն, զի երբ Աբրահամ վարդապետն զայ-սոսիկ կոնդակքս միաբանից իւրոց տուեալ առաքեսցէ ի մէջ իւրեանց, յանուն սրբոյն Ստաթէի վանիցն և մեծ Անապատին զկա-մաւոր ողորմութիւնս տացեն նոցա, զի տա-րեալ զպակասութիւնս վանիցն և Անապա-տին հոգասցէ։

Թուղթ մի ես ըստ խնդրոյ Աբրահամ վարդապետին առ Հաշտարխանու նորոգ նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետն պատուէր՝ զի Աբրահամ վարդապետն երբ կոնդակաւ մերով ժողովարար յղեսցէ յայն կողմունսն, թողուցու զնա մտանել ի վի-ճակն իւր, և յորդորեսցէ զժողովուրդսն, զի յանուն սրբոյն Ստաթէի Առաքելոյ վանիցն զկամաւոր ողորմութիւնս տացեն նմա։ Թուղթ մի ես առ սրբոյն Ստաթէի վանից Առաջ. նորդ Աբրահամ վարդապետն ի պատասխա-նի ի փտր. ԻԴ գրեալ թղթոյն։ Եւ զժողո-վարարութեան կոնդակսն և զՅովսէփ վար-դապետի դիրն ի թղթոջս եղեալ յղեաց առ սա։ Որում և ծանոյց զյղելն։ Եւ պատուէր՝ զի զհասանիլն կոնդակացն առ ինքն, դրեսցէ ինքեան ի միամտութիւն իւր։ Ծանոյց և զգալն թղթաշինացն ի ս. Աթոռս, և ձեռ-նարկելն ի թղթաշինութեան քարխանայինս։ Զորս ի միում պահարանոջ եղեալ, յղեցաք առ տէր Վահանն ի Բայազիտ՝ յղել առ Աբ-րահամ վարդապետն ի Տաթեւ։

Թուղթ ես գրեցաւ առ Հաշտարխանու նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետն ըստ խնդրոյ սրբոյն Թօմայի Առաքելոյ վա-նից Առաջնորդ Թօմայ վարդապետին ըստ մտաց վերոյիշեալ թղթոյն։ Զի նա ես կա-մէր ի կողմունսն Հաշտարխանու կոնդակաւ մերով յանուն վանիցն իւրոց զժողովարար յղել։ Վասնորոյ ի ձեռն Երեմիա վարդա-պետին խնդրեալ էր ի սրբ. վեհէն գրել Յով-սէփ վարդապետին, զի զժողովարարն իւր թողցէ ի վիճակն իւր մտանել, զժողովուրդն ի յառատ տուրս յորդորեսցէ։ Զոր գրեալ ետուք Երեմիա պետին յղել առ նա։

Թուղթ ես առ Մշու սրբոյ Կարապետի վանից Առաջնորդ Յօնան վարդապետն՝ ի պատասխանի ի դեկտ. Դ գրեալ թղթոյն։

Զի Բ ժողովարարութեան կոնդակ էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Զմինն ի վերայ Անատօլու երկրին, և զմիւսն ի վերայ Ռուռումելու։ Ըստ խնդրոյ նորին՝ քան զայս յառաջ ի մրա. ԻԳ ի վերայ Անատօլու երկրին Ա ժողովարարութեան կոնդակ դրեալ յղեաց առ մհ. Փիլիպպոսն, առ նորին ժողովարար Պօղոս վարդապետին։ Զոր և ծանոյց նմա այժմ։ Իսկ ի վերայ Ռուռումելու երկրին այժմ ոչ կամեցաւ կոնդակ գրել, զի դեռ արգելեալք կային ճանապարհք կողմանցն, այլ խոստացաւ նմա, զի երբ յՌուռումելու նուիրակ յղեսցէ, յայնժամ և զայն խնդիրն իւր ևս կատարեսցէ։ Եւ Պետրոս վարդապետին և այլ միաբանիցն նորին ողջոյն դրեաց։ Յղեցաւ այս առ Պաղտասար պետն յղել առ նա։

Թուղթ ես առ Վանայ նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վարդապետն՝ ի պատասխանի ի ղեկտ. ԺԶ ի Բաղիշու գրեալ թղթոյն։ Որ ի կողմանէ Ղազար՝ Կրպօ և Սահակ անուամբ օրինազանցից ոմանց գանգատ էր դրեալ առ սրբ. վեհն. և խնդրեալ էր պատժել զնոսա։ Բայց սրբ. վեհն այժմ ոչ կամեցաւ պատժել զնոսա, զի մի ի նմանէ իմասցին։ Այլ խոստացաւ նմա, զի երբ ինքն ի ս. Աթոռս եկեսցէ, յայնժամ պատժեսցէ զնոսա։ Եւ պատուիրեաց՝ զի որքան լծկան դոմէշ ի պատրաստի ունիցի, զայնս ընդ հաւատարմի փութով ի ս. Աթոռս յղեսցէ։ Եւ զմիտս թղթոյ Յօնան վարդապետին ծանոյց սմա։ Զոր և յղեաց առ սա՝ առ նա հասուցանել։ Յղեցաւ այս առ տէր Յովաննէսն յղել առ նա։

Թուղթ ես ի Վան առ Ջուղայեցի տէր Յովաննէսն և որդի նորին տիրացու Ստեփաննոսն ի պատասխանի երից թղթոցն իւրեանց գրեցելոց։ Որք զորպէսն հանգուցեալ շօռոթեցի Ղազարին գրեալ էին սրբ. վեհին։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն շնորհակալութիւն դրեաց նոցա։ Որոց և ծանոյց առ Զաքարիա վարդապետն և առ մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայսն զպատուէր գրելն իւր, զի տիրեսցեն ընչիցն նորին։ (որպէս յամսոյս Ա ասացեալ է,) և վասն տէր Ղուկասին միամտութիւն գրեաց նոցա։ Զի ի մեծի պահոց . . . կիւրակէին ի վանս սրբոյ Գայիանէին վարդապետական իշխանութիւն տալ ետ նմա։ Եւ խոստացաւ նոցա՝ ըստ ժամանակին կատարել զխնդիրս նորին։ Քանզի՝ եկեալ էր յեպիսկոպոս ձեռնադրիլ։ Եւ ծանոյց նոցա զորպէսն Թղթաշինացն։ Որպէս և Զաքիկենց Գրիգոր Աղային։ Եւ Ի զռուշի զապզն իւրեանց ի փառակեցի Սահակ վարդապետէն առեալ յղեաց առ նոսա։ Եւ դրեալ էին թէ՝ աստ ի Բասրա գնացող գոյ։ Բայց զով լինիլն չէին ծանուցեալ. քանզի՝ ի Հնդիկս զթուղթս և զնորատիպ տօնացոյցս էր յղելոց. և հաւատարիմ մարդ ոչ գտանիւք զի ընդ նմա յղեսցէ։ Վասնորոյ՝ պատուիրեաց նոցա զով լինիլն նորին դրել ինքեան, զի գիտասցէ թէ հաւատարիմ է նա, զթուղթսն և զտօնացոյցսն ընդ նմա յղեսցէ ի Հնդիկս։ զՊաղտասար վարդապետի գիրն յղեաց առ նոսա յղել առ նա։

Միամտական զապզ ես առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն գրեաց։ Զի ի փօլիցայական արդեանցն ս. Աթոռոյս որ առ ինքն գոյր, ըստ գրեցելոյ իւրոյ ի Բայազիտ՝ ի նորին վէքիլ պարոն Տէտիկէն ձեռամբ տէր Վահանին այսքան դրամ (ե) առ մեզ էհաս։ Վասնորոյ՝ և զայս զապզս դրեալ յղեաց առ տէր Վահանն տալ պարոն Տէտիկին, զի յղեսցէ առ մհ. Փիլիպպոսն, զի նա զդրամն զայն առ մեզ հասեալ իմասցի՝ և միամտեսցի։

Միամտական զապզ ես գրեաց առ մհ. Փիլիպպոսն։ Զի այն առաջի փօլիցայի (ր) մնացեալ դրամն, (ծ) զոր նորին վէքիլ պարոն Մկրտիչն առ մեզ էր հասուցանելոց, հազիւ թէ հասուցեալ էր տէր Վահանին յըզել առ մեզ։ Զոր և նա ծանուցեալ էր սրբ. վեհին։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն, զայս զապզս ես գրեալ յղեաց առ տէր Վահանն տալ պարոն Մկրտչին, զի առ մհ. Փիլիպպոսն յղեսցէ ի միամտութիւն իւր։ Յղեցան այսոքիկ ընդ Օլուսանենց Ղազարին առ տէր Վահանն. զի յիւրաքանչիւր տեղիսն յղեսցէ։ Որ եւ ի ապրիլի Ա։

Մխ.

Խնդիր Մէլիք Աղամին ի սրբ. վեհէն վասն եղբօրն իւրոյ զի խրատեալ յետս դարձուցէ առ ինքն։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Մէլիք

Ադամն ի պատասխանի թղթոյն։ Առ որ հասեալ էր թուղթ սրբ. վեհին, զոր ի հոկ. ԻԷ գրեաց առ նա, զի զաւնն եղբօրն իւրոյ Յօսէփ բէկին յղեսցէ ասա առ ինքն։ Իսկ նա ոչ էր տուեալ զտունն այլ թուղթ գրեալ առ Խանն և առ սրբ. վեհն, ընդ արանցն իւրոց յղեալ էր առ նոսա։ Եւ բազմաւ աղերսիւ խնդրեալ էր ի նոցանէ, զի զեղբայրն իւր զՅօսէփբէկն խրատեալ յետս դարձուսցեն առ ինքն։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյ նորին զՅօվսէփբէկն յԵրեւանու բերել ետ առ ինքն։ Եւ շատ խրատեաց զնա երթալ առ եղբայրն իւր, իսկ նա ամենևին ոչ էառ յանձն, քանզի՝ կարի զզուեալ էր յեղբօրէն իւրմէ։ Եւ սրբ. վեհն իբրև ետես թէ ոչ կամի երթալ, վասնորոյ՝ ի կամս իւր եթող։ Զոր և գրեալ ծանոյց նմա։

Թուղթ ևս առ Մէլիք Յովսէփն ի պատասխանի թղթոյն։ Զի ըստ խնդրոյ Մէլիք Ադամին սա ևս էր գրեալ զթուղթ աղերսանաց առ սրբ. վեհն վասն եղբօրն նորա Յօսէփ Բէկին։ Եւ սրբ. վեհն որպէս Մէլիք Ադամին, և սմա ևս ծանոյց զհրաժարիլն նորին։ Եւ սա վասն Շամիր Աղայի ամանաթին՝ զիւր իւզբաշի Ալամխանն ընդ Մէլիք Ադամի մարդկանցն յղեալ էր առ սրբ. վեհըն, զի զայնս յանձնեսցէ նմա տանիլ առ ինքն։ Եւ սրբ. վեհն այնպէս արար։ Եւ ծանոյց նմա զորպէսն ամանաթին, զի էր Բ լուլանի Ա թֆանկ. Բ մանր լաւ փշտով, և ԲՃԿ չախմախաքար։ Եւ թէպէտ ԿԾ էր յղեալ չախմախաքարն, բայց բերողն ի ճանապարհին կորուսեալ էր։ Զայն ևս ծանոյց նմա։ Եւ Շամիր Աղայն ընդ ընծայիցն Բ գիր ևս էր գրեալ առ Մէլիք Յովսէփն։ Որոց մինն բարևագիր էր, և միւսն խրատ վասն թֆանկին և փշտովացն. թէ որպէս պարտին ի գործ ածել։ Զորս և ի թղթոջս եդեալ յղեաց առ նա։

Թուղթ ևս առ Յովաննէս կաթուղիկոսն գրեաց ի պատասխանի յամսոյս ԺԱ գրեալ թղթոյն։ Որ էր պատասխանի թղթոյ սրբ. վեհին զոր ի հոկտ. ԺԷ գրեաց առ նա։ Որ ըստ Մէլիք Յովսէփին՝ վասն Մէլին Ադամի եղբօր առաքմանն սա ևս էր գրեալ զթուղթ աղաչանաց առ սրբ. վեհն, զի խրատեալ զնա դարձուսցէ առ եղբայրն իւր։ Եւ սրբ. վեհն սմա և՛ս ծանոյց զբացասաց պատասխանիս նորին։ Յղեցան այսուքիկ ընդ Ալլահղուլի բէկին։ Որ եւ ընդ չրաղին և Ալամ Խանին ի յապրիլի ԺԷ։

ՄԽԱ.

Յղելն սրբ. վեհին զԽաչատուր վարդապետն ի Բամբակաձոր վասն թղթաշինութեան փայտից։ Ընդ նմին եւ թուղթք յանձնարարութեան վասն նորա առ գլխաւորսն տեղւոյն։

Թղթաշէն ֆռանկքն զորս սրբ. վեհն քան զայս յառաջ ի մրտ. ԻԸ վասն փայտից ընդ մեր Միրզային առաքեաց ի Բամբակաձոր, հասեալ էին անդ։ Եւ անտի զնացեալ յանտառն, ըստ խնդրոյ և ըստ հաճոյից իւրեանց հաստ և երկայն ծառս գտեալ, յոյժ հաւանեալ էին նոցա։ Ուստի՝ և նշան արարեալ ի վերայ նոցա՝ թողեալ էին անդ, զի մեք վասն թղթաշինութեան գործեացն բերել տացուք զնոսա ասա։ Զորս զկնի հոգալոյն իւրեանց, եկեալ ծանուցին սրբ. վեհին։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն զԽաչատուր վարդապետն առաքեաց անդ, զի զփայտսն բերցէ ի ս. Աթոռս։ Որոյ աղագաւ և Բարաբէկին՝ Դամղուլուն՝ Մահմատ Աղային և Մէլիք Շաքարոյին զԴ թուղթս գրեաց։ Խնդրելով ի նոցանէ՝ զի ի հատանելն և բերելն Խաչատուր վարդապետին զփայտսն ի ս. Աթոռս, ըստ ամենայնի մուղայէթ և ձեռնտու լիցին բանիցն նորա։ Եւ ընդ թղթոցն Ա խառայ կապայ վասն Բաբաբէկին յղեաց սրբ. վեհն, Գ մահուտ կապայ վասն Շաքարոյին։ Թղթաշէնքն վասն փայտիցն դաւթար ետուն Խաչատուր վարդապետին, զի չափով հատանել տացէ զծառսն և բերցէ։ Եւ Խաչատուր վարդապետն ի ապրիլի ԺԹ։

ՄԽԲ.

Ի Պոլիս՝ ի Կարին եւ ի Կարս։ Շնորհակալութիւն զպատրիարքէն եւ զիշխանացն Պոլսոյ՝ վասն կաթուղիկոսութեան բերաթին եւ ֆարմանացն զորս հոգացեալ Ղազարի ընչիցն։ Եւ առ Կարսայ փաշային եւ Իբրահիմ Աֆանտին թուղթ սիրոյ եւ ընծայ։

Մեծին Պոլսոյ պատրիարք և նուիրակ

Զաքարիա վարդապետն և գլխաւոր իշխանքն տեղւոյն ըստ խնդրոյ սրբ. վեհին զֆարմանսն հողացեալ էին և յղեալ։ Որք էին Դ ֆարմանք, մինն էր սրբ. վեհի կաթուղիկոսութեան ըէրաթն, մինն էր հաւալայ ֆարմանի. ուրոյ իւրաքանչիւրոցն գոյր ԺԵ ԺԵ սուրաթ. մինն էր Կարսայ Առաջնորդական ֆարմանն, Ախլցխայու երկիրն ևս ընդ նմա ի նոյն ֆարմանոջն աէրունի արարեալ վասն խնդրոյ սրբ. վեհին։ Իսկ մինն էր Կարնոյ քաղաքի և Մուտուրկու վանից Առաջնորդական ֆերմանն, զի զայն վիճակ ևս էին արարեալ աէրունի ըստ խնդրոյ սրբ. վեհին։ Եւ այս Բ ֆարմանացս սուրաթ չէին յղեալ։ Ֆարման մի ևս վասն Վանայ Առաջնորդութեան հոգացեալ անուամբ վանեցի Պաղտասար վարդապետին, յղեալ էր պատրիարքն առ սրբ. վեհն առ նմա։ Եւ զամենայն խնդիրսն զորս արարեալ էր ի նոցանէ սրբ. վեհն արկանել տալ ի մէջ ըէրաթին, և զամենայն ֆարմանաց միասն ի մէջ ըէրաթին ժողովել և մի շինել՝ արարեալ էին ըստ խնդրոյն. հանդերձ այլ ևս քանի մի հարկաւոր բանիւք, զորս ոչ էր խնդրեալ ի նոցանէ սրբ. վեհն։ Յորոց մինն էր թէ՝ զհայն բռնութեամբ մի տաճկացուսցեն։ Եւ զայլս այնպիսի օգտաւոր բանս։ Բայց խնդիր մի ևս էր արարեալ սրբ. վեհն, զի արկանել տացեն ի մէջ ըէրաթին. որպէս զի՝ զոր ինչ թագաւորին ծանուցանելոյ՝ և ի նմանէ խնդրելոյ բանք իցեն մեզ, ինքն սրբ. վեհն արզ արասցէ թագաւորին. բայց իշխանքն զայս խնդիրս չէին հոգացեալ. այսպէս պատճառս յօդելով թէ՝ չէ ժամանակն։ Եւ խոստացեալ էին յետոյ հոգալ։ Եւ սրբ. վեհն ես թոյլ ետ։ Իսկ վասն ըէրաթին և ֆարմանացն զորս հոգացեալ էին և ի ձեռն Զաքարիա վարդապետին յղեալ առ սրբ. վեհն, զթուղթ մի շնորհակալութեան գրեաց նոցա սրբ. վեհն։ Եւ զորպէսն իւր և երկրիս և սրբոյ Աթոռոյս ի կարճոյ ծանոյց նոցա։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՇՋԴ՝ ՇՋԵ։

Թուղթ ևս առ մհ. Պաղտասար և սորին եղբայր մհ Գասպար Ամիրայսն։ Նոյնպէս շնորհակալութիւն զնոցանէ վասն նոյն ֆարմանացն զորս հոգացեալ էին։ Եւ մանաւանդ՝ զմհ. Գասպար Ամիրայէն շատ շնորհակալ եղև, զի ըստ մեծի մասին նա էր հոգացեալ զֆարմանսն։ Եւ վասն հանգուցեալ կողակցին իւրոյ հոգւոյն ես յանուն սրբոյ Աթոռոյս հոգեբաժին և քառասնից էր տուեալ Զաքարիա վարդապետին։ (Իծ) Նա և՝ Ժ ջուխտ Նորատիպ Նարեկ ևս էին տուեալ Զաքարիա վարդապետին յիշատակ սրբոյ Աթոռոյս։ Որոց աղագաւ ևս շնորհակալութիւն գրեաց նոցա։ Եւ խոստացաւ նոցա զի զկնի սակաւ միջոցի նորատիպ տօնացոյց յղեսցէ վասն իւրեանց և այլոց, զի ահա տօնացոյցն նոր ել ի տպագրութենէն, զորս կազմել տամք, զի յիւրաքանչիւր տեղիս յղեսցուք, զի թողեալ զհին տօնացոյցն, այսուհետև այնու վարեսցին։ Եւ զորպէսն թղթաշինութեան քեարխանային ի կարճոյ ծանոյց նոցա՝ զոր ահա թղթաշէնքն նոր ձեռնարկեալ շինեցուցանեմ։ Որոց և խոստացաւ, զի երբ Աստուծով աւարտեսցի տեղին այն և թուղթ ելցէ, ևս դրեսցէ ինքեանց, զի իմացեալ ուրախասցին։ Որոյ օրինակն է ի տետրոջն, յերեսն . . .

Թուղթ ևս առ Խոջայ Նազարէթն և պարոն Թադէոսն։ (որք ի մարտի ԻԵ և ի փար. ԻԶ յիշեցան.) և վասն ֆարմանացն Նազարէթին ևս շնորհակալութիւն դրեաց, զի զնոսա ընդ պատրիարքի գրոյն յղեալ էր առ եղբայրն իւր մհ. Փիլիպպոսն ի Կարին հասուցանել ի ս. Աթոռս, զորս և նա ձեռամբ տէր Վահանին ի վերայ Բայազիտու առ մեզ հասոյց։ Բայց վասն Կարնոյ և Կարսայ ֆարմանացն սուրաթ չէին յղեալ։ Վասն որոյ պատուիրեաց սմա, զի պատրիարքին Զ հատ սուրաթ հոգալ տացէ և յղեսցէ։ Եւ զպատասխանիս թղթոցն իւրոց դրեսցէ ինքեան, և զորպէսն թղթաշինութեան տեղւոյն սոցա ևս ծանոյց ի կարճոյ։

Թուղթ մի ևս առ Էմնիազենց մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայսն։ Եւ որպէս յամսոյս Ա, և այժմ ևս ծանոյց նոցա զմահ հանգուցեալ շօռօթեցի Ղազարին և ընչիցն նորին։ Քանզի՝ ի Պոլիս բնակեալ Արևելցի վաճառականքն մինչ լուեալ էին զմահ շօռօթեցի Ղազարին, կարծելով թէ որովհետև յայն կողմունսն վարիս ոչ ունի նա որ ընչիցն տիրեսցէ, վասնորոյ՝ որոնեալ մէկ շօռօթեցի Մկրտիչ յանուն մարդ մի գտանեն որ այն Ղազարին փոքր ինչ ազդականու-

Թիւն ունի, զայն Մկրտիչն բերեն առ պատրիարքն. և աղաչեն զնա ասելով թէ՝ գիր մի գրեսցուք մեզ և կնքեսցուք. և վկայեսցուք սորա վարիսութեան, զի այն Ղազարի ինչքն մի՛ կորիցէ, այլ այս Մկրտիչս տիրեսցէ։ Դու ևս կնքեա՛ ասեն և սրբ. վեհին դրեա, զի նա գրեսցէ ի Գասբա։ Բայց այսու պայմանաւ, զի յետ տիրելոյն Մկրտչին ընչիցն Ղազարին, ի ս. Աթոռն հասուսցէ։ (Այսպէս պայմանաւ զայն Մկրտիչն վարիս առնեն Ղազարին, և գիր գրեն ի Բասրա, որ զինչսն Ղազարին Մկրտչին հասուսցեն։) և պատրիարքն ևս ըստ խնդրոյ նոցին գրեալ էր զայս սրբ. վեհին, յորմէ և խնդրեալ էր աղերսիւ գրել ի Բասրա այսպէս թէ՝ Ղազարի վարիսն Մկրտիչն է. նորա պարտի հասանիլ ամենայն գոյքն նորա։ Բայց այսու պայմանաւ, զի յետ տիրելոյն Մկրտչին ընչիցն Ղազարին ի ս. Աթոռդ հասուսցէ։ Վասն որոյ և սրբ. վեհն ըստ խնդրոյ պատրիարքին գրեալ զայս ծանոյց նոցա։ Որոց և պատուիրեաց՝ զի լաւապէս վերահասու և մուղայէթ լեալ իմասցին, թէ Ղազարի ինչքն թէ նաղտ և թէ վէճ ո՞րքան է՝ և ո՞ւր է, և առ ո՞ւմ է։ Եւ յետ իմանալոյն՝ զամենն Բ դաւթար արարեալ, զմինն առ պատրիարքն յըղեսցեն, և զմիւսն առ ինքն։ Եւ երբ ի ձեռն բերիցէք ասէ զկայսն Ղազարին, գրեցէք ասէ ի Պոլիս թէ՝ որովհետև կայքն Ղազարին ի ս. Աթոռն պարտի հասանիլ, և սրբ. վեհն ևս մեզ հարկիւ գրեալ էր, վասնորոյ՝ նորա հրամանաւն և սրբոյ Իջման տեղւոյ խաթերն զայս զահմէթս կրեցաք մեք. ուրեմն՝ դուք ևս որպէս խոստացեալ էք և պայմանեալ, այնպէս պարտիք առնել, զի մեք գիտեմք որ այս Ղազարս մերձաւոր վարիս չունի։ Եւ պատուէր՝ զի յետ այսպէս դրելոյ նոցա, զամենայն որպէսն ևս գրեալ ծանուսցեն ինքեան։ Յղեցաւ այս առ Զաքարիա պետն յըղել առ նոսա։

Թուղթ ևս առ Պօլսոյ պատրիարք և Նուիրակ Զաքարիա վարդապետն (որ յամսոյս Ա յիշեցեալ է,) ի պատասխանի թղթոյն։ Եւ վասն բէրաթին և ֆարմանացն շնորհակալութիւն գրեաց նմա. զորս ընդ տեղւոյ գըլխաւոր իշխանացն հոգացեալ էր և յղեալ առ մեզ։ Բայց վասն Կարնոյ և Կարսայ ֆարմանացն սուրաթ չէր յղեալ, վասնորոյ պատուիրեաց՝ զի իւրաքանչիւրոցն Գ Գ սուրաթ շինել տացէ և յղեսցէ։ Եւ դրեալ էր սրբ. վեհին թէ՝ վասն հանգուցեալ Ղազարի ընչիցն զշօռօթեցի Մկրտիչն վարիս շինեցաք. և դիր եմք դրելոց ի Բասրա, դու ևս գրեա՛ ասէ։ Վասնորոյ և սրբ. վեհն ըստ խնդրոյ սորին ի վերայ Յարութիւն և Միքայէլ Աղայիցն զգիր դրեալ յղեաց առ սա, զի առ նոսա յղեսցէ, և զգուշացեալ զկայսն Ղազարին ի ս. Աթոռս հասուցանել տացէ, զի մի՛ այլք կերիցեն։ Եւ զմիտս թղթոյ նոցին ծանոյց սմա։ Յիշեցոյց սմա և վասն հանգուցեալ Ղազարի կայիցն քան զայս յառաջյամսոյս Ա ևս ի վերայ Յարութիւն և Միքայէլ Աղայիցն զթուղթ գրելն և յղելն առ ինքն, զի յղեսցէ առ նոսա ի Բասրա։ Եւ զի Գաղատիոյ նուիրակ Յովանէս վարդապետն ի նուիրակական արդեանցն իւրոց դրամ (աճ) էր հասուցեալ սմա, Նոյնպէս և Միքայէլ Աղայն (որ ի վերդ յիշեցաւ.) ի կողմանէ Նուիրակին իւրեանց Փիլիպպոս վարդապետին ևս էր դրամ (Ա) հասուցեալ։ (և սրբ. վեհն յամսոյս Ա, վասն այս դրամոյս միամտութիւն գրեաց Միքայէլ Աղային։) որոց զհասանելն առ ինքն ծանուցեալ էր սա սրբ. վեհին, զի միամտեսցի։ Զոր գիտացեալ սրբ. վեհին միամիտ եղև, և այսպէս գրեաց սմա թէ՝ վասն առ քեզ հասեալ դրամոցն զոր գըրեալ էին ասէ մեզ՝ իմացաք։ Եւ պատուէր՝ զի ի գալն անդ Յովաննէս վարդապետին, ի ս. Աթոռս յղեսցէ, զի կարի պիտանի է ասէ մեզ։ Եւ զի՝ պօլսեցի այր ոմն կամաւ իւրով խոտորեալ էր յուղիղ հաւատոյն իւրմէ, և եղեալ ընդ օրինօքն Մահմէտի։ Եւ զորդին իւր ևս՝ որոյ անունն էր Յովաննէս, մատնեալ էր ի ձեռս անօրինաց, զի ըստ իւր դարձուսցեն ի մոլար կրօնս իւրեանց։ Ուստի՝ և կալեալ զնա անօրինացն՝ բազում ահացուցական բանիւք և խոստմամբ պարգեւաց հրաւիրեալ էին զնա ի չար աղանդն իւրեանց։ Բայց նա վառեալ գոլով ի սէրն Քրիստոսի՝ աներկիւղ և անվեհեր զանհաւանական պատասխանիս տուեալ էր նոցա։ Ընդ որ բարկացեալ անօրինացն՝ արկեալ էին զնա ի բանտ, և զերկուս ամս պահեալ ի բանտի, զի թերևս այնու կարասցեն դարձուցանել զնա ի մոլար աղանդն իւրեանց։ Բայց այնու ևս ոչ էին կարացեալ փոխել

ղնա ի հաւատոյն իւրմէ։ Եւ ՚յայնմ ժամանակի թագաւորն Օսմանցւոց Սուլթան Մուստաֆայն վախճանեցաւ, և ՚յաջորդեաց զտեղին եղբայր նորա Սուլթան Համիթն։ Եւ ՚յայնժամ բարեպաշտ անձինք ոմանք հնարիւք իմն աղատեալ էին զնա ի բանտէն, և ի ս. Աթոռս ՚յղեալ, զի աստ մնացեալ, պահեսցէ զհաւատն իւր։ Որոյ աղագաւ և Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն ՚յանձնարարութիւն էր գրեալ առ սրբ. վեհն, զի ՚յատկապէս ի խնամս իւր ունիցի զնա, քանզի՝ էր նա ազգակից իւր։ Վասնորոյ և սրբ. վեհն վասն քաջութեան և փորձանաւոր գոլոյն, և վասն խաթեր մհ. Փիլիպպոսին ի ներսս առ ինքն ընկալաւ զնա, և այժմ ի խնամս իւր ունի։ Որոյ սակս և սա ևս էր ՚յանձնարարութիւն գրեալ առ սրբ. վեհն, և ս. վեհն պատուիրեաց սմա, զի զընտանիսն նորին միամաեցուսցէ վասն որդւոյն իւրեանց։ Եւ Յովհաննէս տըղայն ևս զմիամտական թուղթ մի գրեցոյց առ ընտանիսն իւր։ Զոր և ի թղթոջս եգեալ առ սա ՚յղեսցաք, ղի տացէ ընտանեացն նորա։ Եւ որպէս իշխանացն՝ և սմա ևս խոստացաւ, թէ ՚յետ քանեաց աւուրց զնորատիպ տօնացոյցս եմ ՚յղելոց ՚յայդր։ Եւ զորպէսն թղթաշինութեան տեղւոյն սմա ևս ծանոյց ի կարճոյ։ Եւ որպէս ՚յայնժամ, և այժմ ևս պատուիրեաց, զի ղդաւթարն արդեանցն և և զքսուրն ՚յղեսցէ։ Եւ զորպէսն թարճիմանի վարձուն դրեսցէ առ ինքն։ Նոյնպէս և զորպէսն Հաճնցի Սարգիս վարդապետին ևս գըրեսցէ ինքեան, զի գիտասցէ թէ՝ ի գնալն նորա անդ, զի՞նչ ձայն հնչեաց վասն նորա։ Եւ վասն հանգուցեալ Ղազարի կայիցն, փուսուլայ ևս գրեաց առ սա առանձին իւր ձեռամբն, զի զգուշացեալ մի՛ թողուցու. հանգուցեալ Ղազարի կայքն կորնչիլ, զի թէպէտ զՄկրտիչն վարիս էք արարեալ ասէ նորա, բայց մի՛ գուցէ առեալ զկայսն իւրացուսցեն, և մեզ ոչինչ տացեն ասէ։ Յղեցաւ այս առ Նազարէթն տալ սմա։

Թուղթ ես առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն՝ ի պատասխանի ի մրտ. ԻԸ գըրեալ թղթոյն։ Որ ըստ գրեցելոյ սրբ. վեհին մեր դրամովն Ե հատ Ջորի էր առեալ իւրեանց թախումովն, և ընդ նոր ըէրաթին և ֆարմանացն ՚յղեալ առ տէր Վահանն՝ հաստուցանել ի ս. Աթոռս։ Զորս տէր Վահանն ի ձեռն զինակրացն մերոց առ մեզ հասոյց։ Առ այս և սրբ. վեհն շնորհակալութիւն և միամտութիւն գրեաց սմա։ Որում և պատուիրեաց գրել Նազարէթին՝, զի վասն Կարնոյ և Կարսայ ֆարմանացն Զ հատ սուրաթ հոգալ տացէ պատրիարքին, և ՚յղեսցէ առ մեզ։ Եւ թօքմաճի մհ. Մըսըրն՝ (որ ՚յանցեալ ամին և ի ՚յնվ. ԻԷ ՚յիշեցեալ է,) ի ձըմրանս Բ մեծ աշտանակ էր բերեալ առ սրբ. վեհն, զի առցէ։ Բայց ոչ էառ սրբ. վեհն, զի ոչ էին Աթոռավայելք։ Զորս առեալ ՚յետս տարաւ ընդ իւր։ Որոց աղագաւ այժմ գըրեալ էր սա սրբ. վեհին, զի թէ կամիցի՝ առեալ զնոսա, յղեսցէ առ մեզ։ Բայց սրբ. վեհն ոչ կամեցաւ առնուլ, զի մեզ ոչ էին պիտոյ։ Եւ վասն քահանայիցն տեղւոյն գանգատ էր գրեալ առ սրբ. վեհն։ Եւ սրբ. վեհըն խոստացաւ նմա, զի երբ տեղւոյ ֆարմանի սուրաթն հասցէ առ ինքն, ՚յայնժամ խրատական և կանոնական կոնդակ դրեսցէ ի քաղաքն, զի իւրաքանչիւրքն թէ քահանայք և թէ ժողովուրդք ըստ այնմ կանոնի կացցեն։ Եւ պատուէր՝ զի Առաջնորդին և աէր Մանուէլին հարկեսցէ, զի վասն թըղթաշինութեան նիւթոյն հին քեաթան ժողովեալ, ՚յղեսցեն առ մեզ։ Եւ վասն թղթաշէն ֆռանկացն ԳԾ Հալապի զազ մուրչակտամացու նոր քեաթան առեալ ՚յղեսցէ։ Նոյնպէս և վասն եկեղեցւոյ փանճարայիցն և այլ շինուածոց՝ Գ թիլանի լիար դեղնապղնձեայ մաւթուլ ևս առեալ ՚յղեսցէ։ Եւ ՚յայսմաւուր՝ յՕսմանցի ՚յԻբրահիմ ՚յանուն տաճկէ միոջէ Զ ուղտ առաք դրամով։ Եւ տաճիկն այն խնդրեաց ի մէնջ, ղի զգինս ուղտուցն ի Կարին տացուք ինքեան։ Զոր և ծանոյց սմա սրբ. վեհն և պատուիրեաց, զի երբ ի ձեռն այս ուղտատէր տաճկիս փօլիս արասցէ ի վերայ իւր, տացէ նմա զփօլիցայն, (ակս) և զփօլիցայագիրն առեալ ի նմանէ առ մեզ ՚յղեսցէ։ Պօլսոյ պահարանն ՚յղեաց առ սա՚յըզել առ եղբայրն իւր Խօջայ Նազարէթն ի Պօլիս, զի պատրիարքին տացէ։

Թուղթ սիրոյ գրեաց սրբ. վեհն ի Կարս առ Ալի փաշայն։ Եւ ընդ զինակրացն մերոց Է ճերմակ մոմ, և փոքր ինչ վարդեջուր ՚յըղեաց վասն նորա։ Եւ գրեաց Գէորգին՝ զի վասն փաշային և Իբրահիմ Աֆանտուն այսքան (1) կամ այնքան (1ծ) ղոուշի ևս ընծայ

առեալ ի կողմանէ մերմէ տարեալ ընծայեսցէ նոցա։

Թուղթ ևս սիրոյ առ Իբրահիմ Աֆանտին. և փոքր ինչ վարդեջուր ես վասն նորա յղեաց։ Եւ պատուիրեաց Գէորգին, զի յայն առեալ ընծայէն սմա ես բաժին հանցէ որպէս ասացաք։

Թուղթ մի ևս սիրոյ առ Ղարաբէկն։ Որպէս և ի փտր. Դ։

Թուղթ ևս առ Իբրահիմ Աֆանտու վէքիլխարճ պարոն Գէորգն, ի պատասխանի յամսոյս Գ գրեալ թղթոյն։ Եւ զՊօլսոյ պահարանն յղեաց առ սա, զի առ մհ. Փիլիպպոսն յղեսցէ ի Կարին։ Նոյնպէս՝ զփաշայի՝ Իբրահիմ Աֆանտու և Ղարաբէկի թուղթսն, Է հատ ճերմակ մոմ, և փոքր ինչ վարդեջուր ևս յղեաց առ նա։ Որում և պատուիրեաց զի զՂարաբէկի թուղթն տացէ ինքեան, և վասն փաշային և Իբրահիմ Աֆանտուն ԱԾ կամ ԱԾԾ ղուուշի ընծայ առեալ, և զիւրաքանչիւրոց ընծայսն ի փոսուլայոջ դրեալ, և ի թղթոջ իւրեանց եդեալ, ընդ Է հատ մոմին և վարդեջրոյն տարեալ ընծայեսցէ նոցա։ Է հատ մոմն միայն վասն փաշային յղեցաւ, և վարդեջուրն վասն երկուցն։ Որպէս ի թղթոջ իւրաքանչիւրոցն ևս ասացաք։ Եւ ըստ գրեցելոյ սրբ. վեհին՝ ի տեղւոյ Նուիրակ Գրիգոր վարդապետէն դրամ (5) էր առեալ, և զառնուլն դրամոյն այժմ ծանուցեալ էր սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն կրկին պատուիրեաց սմա, զի այսուհետև ևս որքան դրամ առ ձեռն բերցէ նա, առեալ, զապգ տացէ նմա ի միամտութիւն իւր։ Նաև ծանոյց սմա զգրելն իւր առ պատրիարքն, զի վասն Կարնոյ և Կարսայ ֆարմանացն ևս սուրաթ շինել տացէ և յղեսցէ։ Որում և խոստացաւ թէ՝ երբ պատրիարքն զսուրաթսն հոգալ տացէ և յղեսցէ, յայնժամ զմինն ի Կարսայ ֆարմանի սուրաթէն յղելոց եմ աստ առ քեզ, զի ընդ քեզ պահեսցես։ Եւ հօրն նորա մհ. Գալստին և Կօշտոյին ողջոյն գրեաց։ Փուսուլայ մի ևս գրեաց առ սա։ Զի վասն ի Բաղտատ և ի Բասրա բնակեալ ջուղայեցւոցն, ի մէջ Քեարիմ խանին և Բաղդատու փաշային մեծ խռովութիւն և պատերազմ գոյր։ քանզի Քեարիմ խանն զջուղայեցւոց տունսն խնդրեալ էր ի փաշայէն, իսկ նա ոչ էր տուեալ։ Վասն որոյ՝ և բարկացեալ Քեարիմ խանն, բազում զօրս առաքեալ էր ի վերայ Բաղդատու բերդին։ Որք պաշարեալ էին զնա. և մերձ էին յառնուլ զքաղաքն։ Եւ այժմ լուաք թէ հաշտեալ են ընդ միմեանս, և պատերազմն դադարեալ է։ Զորս և ծանոյց սմա ասել Իբրահիմ Աֆանտուն, զի իմացեալ՝ միամտեսցի։ Որում և խոստացաւ՝ թէ երբ Աւետիս վարդապետն ի Շիրազու եկեսցէ, յայնժամ զստոյգ որպէսն կողմանցն ի նմանէ իմացեալ գրելոց եմ աստ քեզ։ Յղեցան այսոքիկ ընդ Մինաս և Խաչատուր զինակրացն մերոց։ Որք եկին ի ապրիլի ԻԷ։

ՄԻԽԳ.

Առ Բայազիտու Աւտի փաշայն խնդիր՝ զի քարճցէ զքեասիմ անունն, եւ նուիրակին ողջոյլթու տացէ։ Եւ առ տէր Վահանն՝ Մարգարէ Աղայն եւ պարոն Մուրատն պատուէր՝ զի այսպէս առնել տացեն փաշայինն։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Բայազիտու Աւտի փաշայն, զի այր ոմն չարագլուխ գնացեալ առ փաշայն արզ էր արարեալ թէ՝ նուիրակն աւելի դրամս առնու։ Եւ նա ևս բոյրուլթու էր տուեալ, զի դօշակադլուխ ԺԲ ԺԲ փարայ տացեն նուիրակին, և ոչ աւելի։ Զոր ի լսելն սրբ. վեհին՝ այսպէս գրեաց փաշային թէ՝ զի յորիշ տեղիս ուր որ Հայոց ազգ գտանին աստ, քեասիմի անուն չկայ. ամեն մարդ իւր կարողութեան կեօրէ կուտայ, ինչ է աստ պատճառն որ այդ երկիրդ մեզ մերձակայ, և դրացի՝ ԺԲ ԺԲ փարայ քեասիմ տան։ Եթէ Ի կամ Լ փարայ ևս տան, մեզ չէ պիտոյ աստ, որովհետև քեասիմ անունն կայ։ Մեր դիտումն այն է աստ, որ քեասիմի անուն չլինի. որքան որ կարեն տալ աստ ժողովուրդքն իւրեանց կարողութեան կհօրէ՝ թէ շատ և թէ սակաւ, այնքան տան, որպէս որ այլ աեղեաց կանօն է։ Մանաւանդ՝ մեք ի թագաւորէն ֆարման ունիմք աստ, որ փաշայ և այլ զապիթք, մեր մարդկանցն և մեր նուիրակացն թէ ի շրջելն ասա և անդ՝ և թէ յառնուլն ի ժողովրդոցն

գտուրս ըստ մեր կանոնին, չխօսին։ Այս կանօնս հեռաւոր տեղեաց ղապիթքն պահեն, և մեր մարդկանցն չխօսին, զու որ մերձակայ ես մեզ և ի բնէ բարեկամ ես, զայդ վասն էր առնես ասէ. որ Թագաւորի հրամանին ես է ներհակ։ Եւ թէ մեր նուիրակին նոր բոյրուլթու կուաաս ասէ որ գնայ ի մնացեալ տեղիսն, և ըստ կանոնին մերոյ յիւրաքանչիւր անձանց առնու զիւր նուիրակութիւնն բարի է։ Ապա թէ ոչ, ահա գրեցի ասէ մեր նուիրակին որ գայ յԱթոռս, և այնուհետև որքան ես կենդանի եմ, այլ սևագլուխ չեմ յղելոց յայդ երկիրդ։ Եւ իմ յետադայ կաթուղիկոսացն ես կտակ կու գրեմ ասէ, որ նոքա ևս չուղարկեն բնաւ յայդ երկիրդ զսևագլուխ։

Թուղթ մի ևս առ տէր Վահանն՝ Մարգարէ Աղայն, և պարոն Մուրատն։ Որոց և ծանոյց զմիտս թղթոյ փաշային։ Զոր և բաց եգեալ ի թղթոջս, յղեաց առ նոսա, զի առանձին բացեալ ընթերցցին, և իմասցին զմիտս դրեցելոցն, և ապա տարեալ տացեն փաշային։ Զնոր ֆարմանի սուրաթն ևս յղեաց առ նոսա, զի տարեալ ցուցցեն փաշային, զի գիտասցէ լաւապէս՝ որ անկարգ է իւր արարմունքն, և ընդդէմ հրամանաց Թագաւորին։ Եւ պատուէր՝ զի այնպէս ջանասցեն, որ փաշայն զնուիրակն բերցէ առ ինքն և յուսադրեսցէ, և նոր բոյրուլթու տացէ՝ որ գնացեալ զմնացեալ տեղիսն ժողովեսցէ. և քեասիմի անուն չլինիցի։ Եթէ այսպէս լինիցի ասէ՝ յոյժ բարի է. զնուիրակն յղեսջիք յիւր վիճակն, և զեղելութիւնն մեզ գրեսջիք։ Ապա թէ այսպէս չլինիցի ասէ, և՛ս գրեսջիք մեզ զորպէսն, և զնուիրակդ մեր փութով ի ս. Աթոռս յղեսջիք։ Այնուհետև այլ սևագլուխ չէ մտանելոց ասէ յայդ երկիրդ. ոչ յիմ ժամանակս, և ոչ յետոյ։ Կրկին պատուէր՝ զի զսուրաթն ֆէրմանին իւրոյ ընդ Սողոմոնին յետս յղեսցեն առ ինքն, և զպատասխանին թղթոյս գրեսցեն։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՇՁԵ, ՇՁԶ։

Թուղթ մի ևս առ Բայազիտու Գալուստ վարդապետն։ Ծանուցանելով նմա զմիտս թղթոց փաշային և իշխանացն։ Եւ պատուէր՝ զի թէ փաշայն ըստ դրեցելոյ իւրոյ բոյրուլթու տացէ ինքեան, յայնժամ և ինքն ևս սակաւ ընծայիւք տեսցէ զնա, և գնացեալ զմնացեալ տեղիսն նուիրակեսցէ։ Եւ թէ ոչ՝ ելեալ եկեսցէ ի ս. Աթոռս։ Ցղեցան այսոքիկ ընդ դահբաշի Սողոմոնին։ Որ ել ի ապրիլի Ւէ։

Նկաւ դասաւ ի Թիֆլիզ։

Վրացի մի Քիտեսի անուամբ՝ ի ձեռն ղաթրջի Գաւթին Ա լիտր մոմ էր յղեալ ի ս. Աթոռս յանուն սրբոյ Գեղարդին։

Վասնորոյ՝ և սրբ. վեհն զթուղթ օրհնութեան դրեալ ի վերայ նորա, ի ձեռն նոյն ղաթրջուն յղեաց առ նա։ Որ ել ի ապրիլի Իթ։

Փօլիցայ ի վերայ Մուրտիկեանց մղ. Փիլիպպոսին։

Քան զայս յառաջ մինչ յԱզիզի որդի յԻբրահիմ յանուն տաճկէ միոջէ Զ ուղտ առաք դրամով իպէտս ս. Աթոռոյս, (ա|խ) յայնժամ տաճիկն այն խնդրեաց ի սրբ. վեհէն զդրամն ի Կարին տալ ինքեան։ Եւ սրբ. վեհն ևս այնպէս առնել խոստացաւ նմա, և յամսոյս Իէ գրեաց ևս մհ. Փիլիպպոսն, թէ յետ քանի մի աւուրց ի ձեռն Իբրահիմ յանուն տաճկի միոյ փօլիցայ եմ առնելոց ի վերայ քոյ, պարտիս տալ։ Սակայն՝ տաճիկն այն յետոյ փոշիմանեալ ի խնդրոյն, զսակաւ մասն ինչ (Խ) յայն դրամոյն (ա|խ) աստ էառ ի մէնջ, զմնացեալն խնդրեաց ի Կարին տալ ինքեան։ (ա|) վասնորոյ՝ և սրբ. վեհն զփօլիցայագիր մի գրեալ ի վերայ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին, այն ուղտատէր Իբրահիմ տաճկին ետ, զի երթեալ առնուցու դրամն ի նմանէ։ (ա|) յորում և պատուէր՝ գրեաց առ նա, զի ի գալ փօլիցայագրին առ ինքն, յարդեանցն ս. Աթոռոյս դրամ տացէ տաճկին, (ա|) և զփօլիցայագիրն առնուցու ի նմանէ, և զդրամն ի հաշիւն ս. Աթոռոյս արկցէ։ Ել Իբրահիմ տաճիկն այն ի սրբոյ Աթոռոյս ի ապրիլի Լ։

Կրկին փօլիցայ ի վերայ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին։

Կարնեցի Օքսուզօղլի կոչեցեալ մհ. Աբրահամեան պ. Ցովհաննէսն վաճառականութեան ազատաւ եկեալ էր աստ։ Եւ վասն երկիւղի ճանապարհին աստ դրամ (6) ետ մեզ,

զի ի Կարին տացուք ինքեանց։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն զփօլիցայագիր մի գրեալ ի վերայ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին, ետ նմա, զի այնու երթեալ առնուցու զդրամն (6) ի մհ. Փիլիպպոսէն։ Իսկ նա զփօլիցայագիրն ետ մեզ, զի մեք յղեսցուք առ մհ. Փիլիպպոսն։ Քանզի՝ ինքն վաճառականութեան աղագաւ երթալոց էր ի Թիֆլիզ։ Եւ մինչ աստէն ելեալ գնաց յԵրեւան, յետ քանի մի աւուրց ընդ Կարնեցի խաղաղորդ Յովաննէս անուամբ առն միոյ գրեալ էր մեր վէքիլ Յակոբ վարդապետին թէ՝ զփօլիցայագիրն մեր առեալ ի սրբ. վեհէն տուր դմա, զի առ մհ. Փիլիպպոսն տարցէ։ Եւ Յակոբ վարդապետն բերեալ զգիրն նորա եցոյց մեզ, և խնդրեաց զփօլիցայագիրն և մեք ևս հաւատացեալ գրոյն, զփօլիցայագիրն՝ Յակոբ վարդապետին ետուք, զի տացէ նմա։ Ել Յովաննէսն այն ի սրբոյ Աթոռոյս ի մայիսի Ե։

Առ Կարսեցի պ. Գէորգն պատուէր վասն ջրաղացի նաւագնոյն և ողորմութեանն։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Կարսեցի պ. Գէորգն։ (Որ ի յնվ. ԻԵ յիշեցաւ.) որում և պատուիրեաց, զի փայտարեր Գեամալմաս տաճկին ԱԾ ղուուշ տացէ. որոյ Լ ղուուշն ողորմութիւն նմա, և Հ ղուուշին ևս Ջրաղացի Գ փայտեայ նաւ շինեցուցեալ բերցէ ի պէտս սրբոյ Աթոռյս։ Զի աստ այնպէս պայմանեցաք ընդ նմա։ Որ եւ ի մայիսի Ը։

Առ Թիֆլիզու Առաջնորդ Յովհաննէս պետն պատուէր վասն արգելման առաքմանն յատուկ դրաւիրակի, և վասն առնլեայն պ. Սաֆարին։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն։ (Որ ի մարտի Ի յիշեցեալ է.) զի լուաք թէ՝ Հերակլ Արքային վասն հարսանեաց որդւոյն իւրոյ Լևոն Միրզային՝ կրկին յատուկ հրաւիրակ է յղելոց առ սրբ. վեհն։ Զոր ի լսելն սրբ. վեհին, պատուիրեաց սմա խափանումն տալ։ Քանզի վասն զբաղմանց և հոգալեացն իւրոց ոչ կամէր երթալ։ Եւ զի Փարսատանեանց Սամուէլն (որ ի պատմութեան ՌՄԻԱ երորդ ամին և ի մարտի ԺԵ յիշեցուցեալ է.) Թիֆլիզեցի պ. Սաֆարին դրամ էր տալոց։ Եւ Սաֆարն այն այժմ եկեալ ի Թարվիզու երթայր ի Թիֆլիզ յառնուլ զդրամն իւր ի Սամուէլէն։ Ուստի՝ եկեալ աղաչեաց զսրբ. վեհն գրել Յովաննէս վարդապետին, զի թէ Սամուէլն ոչ տացէ զդրամն իւր, առեալ նա տացէ ինքեանց։ Եւ սրբ. վեհն լսելով աղաչանաց նորին, գրեաց սմա զայս։ Եւ պատուէր ևս՝ զի փութով մոմ հոգացեալ յղեսցէ։ Յղեցաւ այս յԵրեւան առ վրացի Ստեփաննն, առ Յովաննէս վարդապետն յղեալ։ Գրեցաւ ի մայիսի Թ։

Ժողովարարութեան թուղթ տուաւ Բէրիձէ անուամբ քրիստոնէի ումեմն։ Որ էր Վրաստանցի և ի գեղջէն Կասպու։ Որոյ որդին դերի էր անկեալ ի ձեռս այլազգեաց։ Զոր և այլազգի ոմն առեալ, Խ թումանի գրաւ պահէր առ ինքն։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյ Հերակլ Արքային՝ զայս թուղթս ի վերայ Բայազիտու՝ Խոյայ՝ Սալմաստու՝ Հախբակու՝ Յորմու՝ Մակուայ՝ Թարվիզու՝ Մարաղու՝ Տուխուրղանու՝ Ասպհնու՝ Շիրազու՝ Ռէշտու՝ Գիլանու և շրջակայից նոցին գրեալ Ա ամ պայմանաւ՝ ետ նմա։ Որ եւ այսու ժողովարարութեան թղթովս, ի մայիսի ԺԲ.

ՄԽԳ.

Յղելն սրբ. վեհին զտեղապահ Մկրտիչ վարդապետն առ Հերակլ Արքայն, առ ի շնորհաւորել զհարսանիսն որդւոյ նորին։ Եւ զՄարտիրոս վարդապետն ևս նուիրակ առաքելն ի Թիֆլիզ։ Նաև՝ զալն Հաշտարխանու հին նուիրակ և Առաջնորդ Մինաս վարդապետին ի ս. Աթոռս, և սրբ. վեհին առ ժողովուրդսն զշնորհակալութիւն գրելն վասն նորա։

Քրիստոսազօր Արքայն Վրաց Հերակլէս՝ (որ յամսոյս Թ և ի մարտի Ի յիշեցեալ է.) որդւոյն իւրոյ Լևոն Միրզային հարսանիս առնել կամէր։ Վասնորոյ՝ զԳէորգին բէկ կնքապահն իւր սիրանիշ թղթով յղեալ էր առ սրբ. վեհն. և հրաւիրեալ էր ի հարսանիս որդւոյն իւրոյ։ Բայց սրբ. վեհն վասն բազում զբաղմանց և հոգալեացն իւրոց ոչ կարաց երթալ։ Այլ զՄկրտիչ վարդապետն ի կողմանէ իւրմէ վէքիլ արարեալ, հանդերձ սիրանիշ թղթովք և ընծայիւք առաքեաց առ

նա, զի երթեալ ի դիմաց իւրոց շնորհաւորեսցէ զհարսանիսն որդւոյ նորին Լևոն Միրզային։ Իսկ և՝ զՄարտիրոս վարդապետն ևս՝ (որ ի պատմութեան ՌՄԻԱ ամին և ի մրա. Ե յիշեցեալ է.) ի վերայ Թիֆլիզու նուիրակ արարեալ, հանդերձ սրբալոյս Մեռոնաւ և նուիրակական կոնդակաւ ընդ Մկրտիչ վարդապետին յղեաց անդ։ Եւ թուղթքն զորս սրբ. վեհն ընդ Մկրտիչ վարդապետին գրեաց առ Հերակլ Արքայն՝ առ որդիսն նորին և առ այլս ոմանս անձինս, են այսոքիկ։

Թուղթ սիրոյ գրեաց սրբ. վեհն առ Հերակլ Արքայն, և զհարսանիսն որդւոյ նորին շնորհաւորեաց։ Եւ պատուիրեաց Մկրտիչ վարդապետին ասել Արքային, զի Յովսէփ վարդապետի եղբարց էլն զոր առեալ է ի նոցանէ, հետս տացէ ինքեանց։ Եւ ընդ Մկրտիչ վարդապետին ընծայ յղեաց վասն նորա։ Որ էր Բ տօնլուղ կարմիր բկոոսա. Բ տօնլուղ չիչակլու աթլաս, Բ տօնլուղ խառայ, Բ հատ զարպապ, Գ տօնլուղ մահուտ, Ա երեսսրբի՝ տառունքն զառլու և խաւլու, Ա թիրայի փէշկիր ևս տառունքն զառլու, Ա լաւ բաղայ սանդր, Ա հատ մշլիբանտար եօրղան, Ա հատ սադրասի ղալամքեար չիթ, և Ա հատ ճերմակ սահաթ։

Թուղթ ևս առ Գեօրկին Միրզայն, (որ ի փտր. ԻԳ յիշեցեալ է) և զհարսանիսն եղբօր նորին շնորհաւորեաց։ Եւ ընդ Մկրտիչ վարդապետին վասն նորա և՛ս ընծայ յղեաց։ Որ էր Ա սադրասի ղալամքեար, և Ա սադկզու աթլաս։

Թուղթ ես առ. Լևոն Միրզայն. (որ ի փար. ԺԵ ի թղթոջ Անտօն կաթողիկոսին Վրաց յիշեցեալ է) օրհնութիւն և շնորհաւորութիւն հարսանեացն, զոր առնէր նմա հայրն։ Եւ վասն նորա ես ընծայ յղեաց ընդ Մկրտիչ վարդապետին։ Եւ էր Ա լաւ բալափօշ, Ա լաւ չարքեազի, և Ա ոսկեայ ս. նշան ի պարանոցն արկանելի։ (Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՌԽԲ.)։

Թուղթ ևս սիրոյ առ Անտօն կաթողիկոսն Վրաց։ (Որ ի փտր. ԺԵ յիշեցեալ է.) որում և ծանոյց զՄկրտիչ վարդապետն առ Արքայն յղելն, վասն շնորհաւորելոյ դհարսանիս որդւոյ նորին Լևոնին։ Եւ ընդ Մկրտիչ վարդապետին վասն նորա ևս ընծայ յղեաց։ Որ էր Ա տօնլուղ սև շալի, Ա բաղայ սանար սրմայադործ ամանով. Ա երեսսրբիչ խաւլու և տառունքն ծաղկեայ, և Ա ջուխտ Հաշտարխանու հողաթափ կարմիր մախմուրով։ Որոյ օրինակն է ի բոլորադրահամար տետրոջն, յերեսն ՌԽԳ.)։

Թուղթ ևս առ. Մէլիք Աւետիքն և նորին եղբայր Միրիշկեար Իւանէն։ (Որք ի յլս. ԺԵ յիշեցան.) որոց և ծանոյց զպատճառ առաքման Մկրտիչ և Մարտիրոս վարդապետացն։ Եւ վասն Մարտիրոս պետին յանձնարարութիւն գրեաց։

Թուղթ ևս առ. երեցփոխան պ. Մկրտումն, ըստ այսմ մտաց։

Թուղթ ևս առ. Թիֆլիզու Առաջնորդ Յովհաննէս վարդապետն։ Եւս նոյնպէս։ Կոնդակ ևս ի Թիֆլիզ՝ վասն Նորատիպ տօնացուցին։ Զոր և ի ձեռն Մկրտիչ վարդապետին ընդ Ծ հատ տօնացուցի յղեաց առ Յովհաննէս վարդապետն, պատուիրելով նմա, զի իւրաքանչիւր եկեղեցեաց տեղւոյն մեն մի տօնացոյց տացէ, և զկոնդակն ևս ընթեռնուցու յեկեղեցիսն, և ծանուցմամբ պատուիրեսցէ ամենեցուն, զի զհին տօնացոյցն ի բաց թողեալ այսուհետև զնոր տօնացոյցն ի գործ ածիցեն։

Թուղթ ևս առ. սրբոյ Աթոռոյս գործակալ և վէքիլ Գեօրեցի տէր Սահակն։ Ծանուցանելով նմա՝ քան զայս յառաջ կոնդակաւ գործակալ և վէքիլ կարգելն ինքեան, և զկոնդակն ի ձեռն Յովհաննէս վարդապետին առ ինքն յղելն։ Եւ պատուէր՝ զի զկոնդակին առ ինքն հասանելն ծանուսցէ մեզ, և գործակալութեան և վէքիլութեան գործոյն իւրոյ արի և ժիր լիցի, և Մարտիրոս վարդապետի նուիրակութեան գործոյն ևս ձեռնտու լինիցի։ Յղեցան այսոքիկ ընդ Մկրտիչ վարդապետին։ Իսկ և՝ Հաշտարխանուհին նուիրակ և Առաջնորդ Մինաս վարդապետն՝ աւարտեալ զգործն իւր, քան զայս յառաջ յԱպրիլի Է եկն ի ս. Աթոռս։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ի Պետրպօրք՝ ի Մօսկով՝ ի Հաշտարխան՝ ի Ղզլար ի Մօզդոկ՝ ի Սարաֆան ի Բորաղան ի Զէրքէզ և յայլ շրջակայ վիճակսն և ի գիւղօրայս նոցին զետեղեալ մերազնեայ ժողովրդոցն զկոնդակ շնորհակալութեան գրեաց։ Զի զհին նուիրակն և Առաջնորդն իւրեանց Մինաս վարդապետն

շահեալ էին և պատուեալ, և զառատ արդիւնս առեալ, Եւ պատուէր՝ զի զնորոգ նուիրակն և Առաջնորդն իւրեանց Յովսէփ վարդապեան ևս նոյնպէս շահեալ պատուեսցեն, և զգործն արդիւնաւոր արասցեն, և անմեղածին հրամանաց նորին ըստ ամենայն հնազանդ և հպատակ լիցին ըստ օրինին։ Կոնդակ և՛ս առ վերոյիշեալ քաղաքսն վասն նորատիպ տօնացուցին։ Որպէս ի Թիֆլիզ,

Ի Հաշտարխան քաղաքն

Թուղթ ևս շնորհակալութեան առ Թիֆլիզեցի Նազարէթի որդի պ. Յօնան՝ Զի Թիֆլիզեցի Բայրամի կնոջ հանգուցեալ Դարէջանի կտակն, (Ե) հասուցեալ էր Մինաս վարդապետին։

Թուղթ ևս առ Վրտստանցի ղասապ պ. Զօհրապն։ Ե՛ւս շնորհակալութիւն։ Զի յանուն սրբոյ Աթոռոյս քառասնից էր տուեալ Մինաս վարդապետին։ (Ա)։

Թուղթ ևս առ Մշեցի Միքայէլի որդի տիրացու Յովհաննէսն։ Որ խոստմունք էր (ԵՌ գեան) տուեալ Մինաս վարդապետին։

Թուղթ ևս առ Բշնեցի տէր Յովհաննէսն, որ խոստմունք էր տուեալ Մինաս վարդապետին։ (Բ)։

Թուղթ ևս առ Գաղտասար վարդապետոմն։ Որ նա ևս էր խոստմունք (Բ) և Բ Խաչ յիշատակի տուեալ Մինաս վարդապետին։ Որոց մինն էր չիւթիշի և զանճիրով, և միւսն փոքր։

Թուղթ ևս առ Փարաքարցի պ. Մովսէսն։ Շնորհակալութիւն և մխիթարութիւն։ Վասն հոգւոյ հանգուցեալ եղբօրն իւրոյ սափրիչ պ. Յովհաննէսին հոգեբաժին էր տուեալ Մինաս վարդապետին։ (ԺԵՌ դն.)։ Այլ և՝ զնորին դիազարդ իսմի ղանաւաթն շապիկ էր կարեցուցեալ և տուեալ։

Թուղթ ևս առ Երևանցի տէր Ոսկանն։ Նոյնպէս շնորհակալութիւն և մխիթարութիւն։ Զի վասն հանգուցեալ եղբօրն իւրոյ տէր Խաչատուրին հոգեբաժին էր տուեալ Մինաս վարդապետին, (Ա) և սակս հոգւոյ մօրն իւրոյ ևս մէկ խաթայի բաւ շապիկ յիշատակի։ Եւ յանձնարարութիւն ևս վասն Յովսէփ պետին։

Թուղթ ևս առ Խալաֆենց պ. Գէորգն։ Եւս շնորհակալութիւն և մխիթարութիւն։ Զի կտակն (որ էր ԺԵՌ դն.) մօրն իւրոյ Սիրամարգին տուեալ էր Մինաս վարդապետին։ Որոյ ԵՌ դեանն խոստմունք էր, և Ա թումանն Առաջնորդական նուէրք և հասք։

Թուղթ ևս առ Ջուղայեցի Մնացականի կին Մարիամ Խանումն։ Զի ի տեղի նուիրակութեան և սրբ. վեհին ժամուց Ժ հատ կիսնոց իմփրիալ ոսկի. Ա դեղին Հնդկաց ապրշումէ եազլուխ, Ա կտոր կնդրուկ, Ա ժամարարութեան ստամբոյ քէչայ, և Ա դեղնապղնձեայ նշխարքի սինի էր տուեալ Մինաս վարդապետին։

Թուղթ եւս առ Ագուլեցի Նազարի որդի պ. Եային։ Որ քառասնից էր տուեալ Մինաս վարդապետին. (Ա)։

Թուղթ եւս առ Երևանցի Աւաքի որդի պ. Աիմէօնն։ Շնորհակալութիւն։ Զի Հաշտարխանցի Յովհաննէսի կողակից Աննախաթունն ի ժամ վախճանին Ա ճերմակ ծաղկով կարմիր խառայ շապիկ էր խոստացեալ սրբոյ Աթոռոյս։ Եւ սա յետ մահուանն նորին հասուցեալ էր զայն Մինաս վարդապետին։

Թուղթ ևս շնորհակալութեան առ սրբոյ Աթոռոյս գանձապետ պ. Աբրահամն և պ. Աստուածատուրն։ Զի Հաշտարխանցի Մելքոնի դուստր Եթարն առ Աստուած էր փոխեցեալ. ուստի՝ նորին որդի պ. Աստուածատուրն և սրբոյ Աթոռոյս գանձապետ պ. Աբրահամն վասն հոգւոյ նորին Ա ապիլուստրին շապիկ էին առեալ յիշատակ սրբոյ Աթոռոյս։

Թուղթ ևս շնորհակալութեան և մխիթարութեան առ Գիւլգիւլ կինն։ Զի այր նորին Նազարի որդի Թարղուլին ի ժամ մահուան իւրում Ա ապրի ղանաւաթ շապիկ էր խոստացեալ սրբոյ Աթոռոյս։ Զոր և նա յետ մահուանն նորին հասուցեալ էր Մինաս վարդապետին։

Թուղթ եւս շնորհակալութեան և մխիթարութեան առ Ագուլեցի Շահնազարի որդի պ. Աղամալն։ պ. Յովհաննէսն, Զարիֆն և Մարիամն։ Զի հանգուցեալ տէր Զաքարիայի մայր Զարիֆն, և կինն նորին Մարիամն և որդի նորին պ. Յովաննէսն վասն հոգւոյ տէր Զաքարիային ձեռամբ պ. Աղամալին Ա ստամբայ արծաթապատ և ոսկէջրեալ Աւետարան էին տուեալ ս. Աթոռոյս։

Թուղթ շնորհակալութեան և մխիթարութեան առ Համատանցի պ. Եսային։ Որ

վասն հոգւոց ծնողաց իւրոց, ձեռամբ Մինաս վարդապեաին Ա սև զօլղօլ ղանաւաթ շալիկ էր տուեալ սրբոյ Աթոռոյս։

Թուղթ ևւս շնորհակալութեան և մխիթարութեան առ Թաւրիզեցի Թորոսի որդի պ. Գրիգորն։ Զի վասն հոգւոց ծնողացն իւրոց և յանուն սրբոյ Աթոռոյս Ա կանաչ աթլաս շալիկ էր տուեալ Մինաս վարդապեաին։

Թուղթ ևւս մխիթարութեան առ տէր Սիմէօնն և նորին եղբայր պ. Կարապետն՝ վասն մահուան եղբօրն իւրեանց պ. Մարտիրոսին։ Զի վասն հանգուցեալ որդւոյն իւրոյ Ա կարմիր ղարպապ սեղանի գոգնոց էր տուեալ Մինաս վարդապետին, և զթուղթ ևս գրեալ սրբ. վեհին, և յետոյ ինքն վախճանեալ էր։

Թուղթ ևւս մխիթարութեան առ Աննախաթունն վասն մահուան որդւոյն Գրիգորին, զի վասն որդւոյն իւրոյ Ա ձեռաց արծաթեայ խաչ էր տուեալ յիշատակ յանուն սրբոյ Աթոռոյս։

Թուղթ ևս շնորհակալութեան առ Արտավէլցի Մկրտումի որդի պ. Մանուչարն։ Զի ընդ Մինաս վարդապեաին Ա մախմուր գթակի երես էր յղեալ իւր մորթոֆն վասն սրբ. վեհին, և թուղթս ևւս գրեալ։ Նաև՝ վասն Յովսէփ վարդապետին յանձնարարութիւս ևւս գրեաց սմա։

Թուղթ ևւս շնորհտկալութեան առ Ադուլեցի պ. Շմաւօնն։ Զի ընդ Մինաս վարդապետին՝ Ա ձեռաց փէշկիր, և Ա արծաթեայ արաղի թաս էր յղեալ վասն սրբ. վեհին։

Թուղթ ևս շնորհակալութեան սո Էտիլխանի Գրիգորի որդի պ. Ստեփաննն։ Որ Ա շիրմահի գաւազան էր յղեալ։

Թուղթ ևւս շնորհակալութեան և մխիթարութեան առ հանգուցեալ Խաչատուր Աղայի կին Մարիամն և որդի նորին պ. Աբրահամն։ Զի վասն հոգւոյ Խաչատուր Աղային՝ Ա խաթայի սեղանի գոգնոց, Ա սկհւոյ արծաթ որ էր բաժալ և Ա սկհւոյ կարմիր ետղլուխ էին տուեալ։

Թուղթ ևւս շնորհակալութեան առ Ջուղայեցի պ. Մկրտումն։ Զի ընդ Մինաս վարդապետին Ա Չլղաւայ քիւրք էր յղեալ վասն սրբ. վեհին, և թուղթ ևս դրեալ։ Եւ յանձնարարութիւն վասն Յովսէփ պետին։

Թուղթ ևս առ Թարգման պ. Աւէտն Կարբեցի և Երեւանցի պ. Բ Եղիազարսն. պ. Գէորգն, պ. Մատթէոսն և առ պ. Մանուկն։ Շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին, եւ ի պատասխանի սիրոյ թղթոցն իւրեանց։

Թուղթ ևւս առ Սարգիս Աղայի եղբօրորդի Յովաննէս Աղայն։ Շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին։

Թուղթ ևւս մհ. Գրիգոր Աղայն՝ ի պատասխանի ի նոյ. ԻԷ դրեալ թղթոյն։ Նոյնպէս շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին։ Եւ խնդրեալ էր սա ի սրբ. վեհէն, զի զօրպէսն Թարխան Աղային գրեսցէ ինքեանն։ Զոր և դրեաց, զի նա այժմ ոչ է ի կալանս որպէս լսեմք։ Եւ Թարխան Աղայն մինչ էր ի կալանս, յայնժամ սրբ. վեհն զօրպէսն նորին գրեաց հօրն նորա Աղամալ աղային։ Որում և պատուիրեաց գալ ի ս. Աթոռս։ Քանզի՝ կամէր սրբ. վեհն, զի ի գալն նորա աստ, ինքն ի մէջ մտեալ թերևս հաշտեցուսցէ զսիրա Արքային ընդ որդւոյ նորա, և զհնարս ազատութեան ևս վասն նորա գտանել կարիցէ։ Իսկ նա մինչև ցայժմ ոչ եկն։ Զոր և ծանոյց սմա։ Եւ զի՝ սրբ. վեհն յառաջագոյն գրեաց իշխանացն տեղւոյն, զի զվէճն Բարդուղին հատեալ, հաշտեցուսցեն զնա ընդ եղբօրն իւրոյ Յակոբին։ Եւ նոքա ևւս ըստ հրամանի սրբ. վեհին կոչեալ զնոսա առ ինքեանս, կամեցեալ էին հաշտեցուցանել զնոսա ընդ միմեանս. բայց նոքա ոչ էին հաշտեալ։ Զոր գրեալ էր սա սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն գրեաց սմա ասելով թէ՝ մեք կամեցաք ասէ զի դոքա հաշտեսցին ընդ միմեանս, իսկ թէ ոչ հաշտին, մեք զի՞նչ արասցուք, ինքեանք լիցին ասէ պարտական իւրեանց մեղացն։ Եւ թագաւորն Ռուսաց ազատագնուութիւն էր շնորհեալ սմա։ Որոյ աղագաւ ևս ս. վեհն շնորհաւորութիւն դրեաց սմա։

Թուղթ ևւս առ սրբոյ Աթոռոյս դանձապետ Սարգիս Աղայն, (որ ի պատմութեան ՌՄԻԲ ամին և դեկտ. ԺԷ յիշեցեալ է), ի պատասխանի ի նոյ. ԻԷ դրեալ թղթոյն։ Եւ վասն Մինաս և Յովսէփ վարդապետացն շնորհակալութիւն գրեաց սմա, զի շահեալ էր զնոսա։ Եւ պատուէր՝ զի Յովսէփ վարդա-

պետն որքան անդ է, ես ի սէր ունիցի զնա և շահեսցէ, և գործոյն իւրոյ ես ձեռնտու լիցի։ Կրկին շնորհակալութիւն՝ զի վասն հանգուցեալ եղբօրն իւրոյ Խաչատուր Աղային, հոգեբաժին էր տուեալ Մինաս վարդապետին։ (Բ) Եւ վասն Բտրղուղի և եղբօր Նորա Յակոբի անհաշտ խռովութեան զոր ինչ գրեաց մհ. Գրիգոր Աղային, զնոյն բանն սմա եւս գրեաց։

Թուղթ մի ես առ. Միֆօաի եպիսկոպոսն Ռուսաց. (որ ի ՌՄԻԲ թ. և ի դեկա. ԺԷ յիշեցեալ է.) ի պատասխանի ի նոյ. Է գրեալ թղթոյն։ Զոր ընդ Մինաս վարդապետին դրեալ էր, Եւ վասն Մինաս և Յովսէփ վարդապետացն շնորհակալութիւն գրեաց, զի զնոսա ի սէր ընկալեալ էր և շահեալ։ Յորմէ և խնդրեաց՝ զի Յովսէփ վարդապետն որքան անդ է՝ ես ի սէր ունիցի զնա և շահեսցէ։ Եւ ոչ միայն նմա, այլ և զմերազնեայսն ես միշտ ի սէր և ի խնամս իւր ունիցի։

Թուղթ ես առ. ենարալ մայօր՝ և կաւալէր, և Հաշտարխանու գումբեռնաթօր Պետր Գրեչեդնիկովին (որ ի պատմութեան ՌՄԻԲ և ի դեկտ. ԺԷ յիշեցեալ է.) ի պատասխանի յօդ. Թ գրեալ թղթոյն։ Նոյնպէս շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին և մերայնոցն։

Թուղթ ես առ. Ղզլարու պօլկօվնիկ Իվան Իվանիչ կաւալեր Իշտենտիրն։ Նոյնպէս շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին և մերազնէիցն։

Թուղթ ես առ. Ղզլարու պլացմայեօր Վասիլի Վլօգիդիմիչ Կպիտովցկին։ Նոյնպէս շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանծնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին և մերայնոցն։ (ՇՋԹ)

Թուղթ ես շնորհակալութեան առ. Ծաղկնու ձորեցի Գասպարի դուստր Մարիամ։ Զի յանուն սրբոյ Աթոռոյս քառասնից էր տուեալ Մինաս վարդապետին։ (Բ)

Թուղթ ես շնորհակալութեան և ի պատասխանի թղթոյն՝ առ. սրբոյ Աթոռոյս զանձապետ պ. Աբրահամ։ Զի լաց ի շահելոյն զՄինաս վարդապետն, Ա. եալգուզ ոսկի ինքն, և Ա. զարմահպուպ ոսկի ես կինն էր տուեալ նմա աջահամբոյր վասն սրբ. վեհին։ Եւ պատուէր՝ զի զգործն իւր արդիւնաւոր արարեալ, զարդիւնս նորին ըստ ժամանակին Յովսէփ վարդապետին յանձնեսցէ, և գործոյ նորին ես ձեռնտու և մուզայէթ լիցի, և շահեսցէ զնա։

Թուղթ ես առ. Կլաւայ պ. Աւետիքն. պ. Նուրիջանն, և պ. Գաբրիէլն։ Շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին։ (ՈԽԳ)

Թուղթ ես առ. Մօզտօքու պոլկովնիկ Ալէքսանդր Ֆէդօտիչ Իվանովին։ Նոյնպէս շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին և մերայնոցն։ (ՇՋԹ)

Թուղթ ես առ Եղիազար Աղայի որդի Յովաննէս Աղայն ի Պետրպօրք։ (Որ ի պատմ. ՌՄԻԲ, և ի դեկտ. ԺԷ յիշեցեալ է.) շնորհակալութիւն վասն Մինաս վարդապետին, և յանձնարարութիւն վասն Յովսէփ վարդապետին, և մխիթարութիւն վասն մահուան եղբօրն իւրոյ Խաչիկ Աղային։ Եւ վասն Նորաշէն եկեղեցւոյն իւրոյ Ա. հատ Նորատիպ տօնացոյց յղեաց առ. նա։ Եւ զի՝ սովորութիւն է երկրին Ռուսաց, որք ոչ թողուն ումեք յերկրէն իւրեանց զդրամ ինչ ի դուրս բերելոյ, այլ վէճեղէն միայն։ Որոյ աղագաւ և Մինաս վարդապետի ժողովեալ նուիրականն արդիւնքն ի Հաշտարխան առ. սրբոյ Աթոռոյս գանձապետ Սարգիս Աղայն արգելեալ կայր, զի ոչ թողին բերել ընդ իւր։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն պատուիրեաց սմա, զի ի դրան Արքային այնպէս բան իմն հոգասցէ, որ այսուհետև մի ես իշխեսցէ ոք զարդիւնսն սրբոյ Աթոռոյս անդ արգելուլ, այլ նուիրակն բերցէ ընդ իւր։ Յղեցաւ այս առ. Եղիազար Աղայն՝ յղել առ նա։

Թուղթ մի ես ի Մօսկով առ. Եղիազար Աղայն։ (Որ ի պատմ. ՌՄԻԲ ի դեկա. ԺԷ յիշեցաւ.) Նոյնպէս շնորհակալութիւն վասն Մինաս վարդապեաին, և մխիթարութիւն՝ վասն մահուան որդւոյն իւրոյ Խաչիկ աղային, զի վասն նորա հոգեբաժին էր աուեալ Յովսէփ վարդապեաին։ (Ժ) Եւ զթուղթն որդւոյ սորին Յովաննէս Աղային ի թղթոջս եգեալ առ. սա յղեաց, զի առ. նա յղեսցէ, և վասն սրբոյ Աթոռոյս արդեանցն ինքն ես գրեսցէ նմա զպատուէրս։

Թուղթ ևս շնորհակալութեան առ Ներսէս Աղային ի Մօսկով։ Զի բաց ի շահելոյն զՄինաս վարդապետն, Ա բժշկարանի տետր էր յղեալ ընդ նմա վասն սրբազանին։ Եւ վասն Յովսէփ վարդապետին կրկին յանձնարարութիւն դրեաց առ նա։ Եւ զի Բայազատցի Մարգարէ Աղայի մարդն յայն կողմն վախճանեալ էր, և զինչսն նորին այլք ի ծածուկ կողոպտեալ էին։ Զոր ի լսելն Մարգարէ Աղային, գրեալ էր աղաչանօք առ սրբ. վեհն գրել Ներսէս Աղային, զի հետևեալ իմասցի՝ զի թերևս գտանել կարասցէ զինչսն իւր։ Ուստի՝ և սրբ. վեհն ըստ խնդրոյ նորին գրեաց սմա, զի վասն խաթերն իւրոյ հոգ տարցէ այսմ բանիս։

Թուղթ ևս առ Հաշտարխանու նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետն՝ ի պատասխանի ի նոյ. Իէ գրեալ թղթոյն։ Զոր ընդ Մինաս վարդապետին գրեալ էր։ Որում և ծանոյց զՄինաս վարդապետի անվնաս հասանիլն ի ս. Աթոռս։ Եւ պատուէր՝ զի զնուիրակական արդիւնս նորին զորս առ Սարգիս Աղայն թողեալ էր, ջանասցէ ի ս. Աթոռս հասուցանել։ Եւ վասն Բարդուղին և Յակոբին գրեալ էր թէ՝ ոչ կամին հաշտիլ ընդ միմեանս։ Եւ թէ Յակոբն կամի քահանայ ձեռնադրիլ։ Բայց սրբ. վեհն ոչ ետ նմա հրաման առանց հաշտութեան ընդ եղբօրն իւրոյ՝ քահանայ լինել։ Այլ պատուիրեաց սմա թէ՝ որպէս տեղւոյդ իշխանքն վճռեալ են ասէ զդաւ երկուցն, եթէ Յակոբն տայցէ ասէ զդրամն Բարդուղին, և մեղայ ասիցէ նմա, և կատարելապէս հաշտիցին ընդ միմեանս, հրաման է ասէ քեզ օրհնել զՅակոբն. և թէ ոչ՝ մի օրհնեսցես զնա, և մի ինչ գրեսցես վասն դորա առ մեզ։ Եւ պատուիրեաց ևս՝ զի վասն Գիլանու նուիրակ Պետրոս վարդապետին ի նախկին վիճակն իւր յՈւռումելի երթալոյն որոց գիր է գրեալ, ևս գրեսցէ նոցա, զի թոյլ տացեն. քանզի՝ կամէր յՈւռումելի զայլ նուիրակ յղել յայս կողմանս։ Կրկին պատուէր՝ զի վասն Քեալանթարի պարտուցն մի ինչ գրեսցէ ումեք, այլ զանց արասցէ, զի նա յանցեալ ամին վախճանեցաւ։ Եւ սա վասն եղբարց իւրոց էլին խնդրեալ էր ի սրբ. վեհէն գրել Արքային, զի յետս տացէ ինքեանց։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյ նորին գրեաց Արքային, և Մկրտիչ վարդապետին ևս բերանով պատուիրեաց ասել նմա, զի էլն նոցա յետս տացէ ինքեանց, զոր և ծանոյց սմա։ Ծանոյց սմա և վասն տօնակատարութեան տետերն զյառաջաբանութիւն շինելն և յառաջագոյն յղելն առ ինքն, զի ընդ տետերն դիցէ։ (Որպէս՝ ի յնվ. ԻԱ ասացեալ է.) Ծանոյց ևս զգալն թղթաշինացն, և զձեռնարկելն շինութեան թղթատանն։ Եւ գրաֆի հարսանեաց շնորհաւորելոյն աղագաւ գիր էր խնդրեալ սա ի սրբ. վեհէն։ Բայց սրբ. վեհն ոչ գրեաց ասելով թէ՝ զի թէ զթուղթ կամիցիմ գրել ասէ առ նա, վասն սրբոյ Աթոռոյս արդեանցն ասէ գրեցից, զի թողուցուն ի դուրս բերել։ Եւ ընդ թղթոցս ԺԲ հատ տօնացոյց յղեաց առ նա, զի իւրաքանչիւր եկեղեցեաց երկրին մէնմի տօնացոյց տացէ, և զտօնացուցի կոնդակն յեկեղեցիսն ընթերցեալ, ծանուցմամբ պատուիրեսցէ ամենեցուն, զի այսուհետև զնոր տօնացոյցն ի գործ ածիցեն։ Եւ պատուէր՝ զի Ներսէս Աղայի գիրն ևս առ ինքն յղեսցէ, և վասն Մարգար Աղայի բանիցն ինքն ևս գրեսցէ նմա, զի հոգ տարցէ։ Եւ զկնի երթալոյն նորա ի վիճակն իւր, սրբ. վեհն մինչև ցայժմ Դ գիր էր գրեալ նմա։ Զոր և այժմ ծանոյց նմա։ Իսկ և՝ Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսն և ս. Երուսաղէմայ պատրիարք Մարտիրոս վարդապետն վասն Եղիազար կաթուղիկոսի վիճմանցն Ագուլեցի Խօջայ Խոսրովին Թամասուկ տան, և յոլով դրամս առեալ ի նմանէ վասնեն ի դրունս արքունի ի Պօլիս. և նոյն Թամասուկին սաւատ ևս գրեն և կնքեն, և առնեն զայն ևս իբրև զասլ Թամասուկ, բայց Յակոբ կաթողիկոսն զայն ոչ կնքէ։ Եւ տաճկերէն Թուղթ ևս յայնմ կողմանէ գրեցուցեալ կնքեն։ Եւ յետոյ զպարտսն որպէս և է, վճարեն, և զասլ Թամասուկն առնուն, բայց այն սաւատն և տաճկերէն գիրն Ֆիան ի ձեռս Խոսրովին պատճառանօք ինչ։ Եւ յետոյ Խոսրովն մեռանի, և այն Թուղթքն Ֆիան և անկանին ի ձեռս Թոռին նորա։ Եւ նա երթեալ արզ առնէ Իբրահիմ շահին, զի պահանջեսցէ զդրամն ի սրբոյ Աթոռոյս։ Որ և առնու ի նմանէ ռաղամ, և զայ յԵրեւան առնել ընդ մեզ զգաւայ։ Եւ յայն աւուրսն, Աղուան Ազատխանն աւերէ զԱգուլիս և գերէ։ Եւ նա յորժամ լսէ զգերելն ընտանեացն, յանժամ զայն Թուղթն ումեմն

Յովսէփ յանուն Թիֆլիզեցւոյ գրաւ տայ, և ԻԱ թուման և Ժ խալվար չալթուկ առեալ ի նմանէ՝ երթայ, զի զգերիսն իւր ազատեսցէ։ Եւ անտի այլ ոչ դառնայ. և անյայտ ևս լինի։ Իսկ այն թուղթքն մնան ի ձեռն Յովսէփին։ Զոր առեալ երթայ ի Հաշտարխան։ Եւ այժմ անդ է։ Զոր այժմ ցուցեալ էր Մինաս և Յովսէփ վարդապետացն, և ծանուցեալ էր նոցա զայս իրակութիւնս։ Եւ Յովսէփ վարդապետն զթամասուկի սաւատի օրինակն կերպիւ ինչ առեալ, ընդ Մինաս վարդապետին յղեալ էր սրբ. վեհին, և գրեալ էր ինմա զորպէսն։ Յորժէ և խնդրեալ էր՝ զի վասն այսր զհոգս արասցէ, զի զայն թուղթսն առ ձեռն բերցուք։ Զի մի՞ գուցէ ի ձեռս այլոց մնալովն վնաս բերցէ սրբոյ Աթոռոյս։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն զթուղթ ևս գրեաց առ Յովսէփ վարդապետն։ Այնպէս՝ որպէս զի զՅովսէփն այն կոչեալ առ ինքն, առընթեր նմա ընթերցցի զայն, և ծանուսցէ նմա զմիտս գրեցելոցն։ Զի թերևս կարասցէ այնու ի հաւանութիւն բերել զնա, և առնուլ զթուղթսն ի նմանէ։ Եւ օրինակ դրոյն զոր սրբ. վեհն վասն վերոյիշեալ թղթոցն գրեաց առ Յովսէփ վարդապետն, էր այս։ Թէ մինչ էհաս աստ ի ս. Աթոռս սիրելի որդին մեր Մինաս վարդապետն, ի ծանուցանելն մեզ բերանով զորպիսութիւնս քո և տեղւոյդ, պատմեաց մեզ և զիրակութիւն մի անցեալ և վաղեմի ժամանակաց։ Իբր թէ ի ժամանակաց Ջուղայեցի Յակոբ կաթուղիկոսին և Երուսաղէմայ պատրիարք Մարտիրոս վարդապետին՝ մէկ թամասուկ լինի մնացեալ, որ անկեալ է ի ձեռն Թիֆլիզեցի պ. Յովսէփին. որ իբրու թէ այն թամասուկի տէրն իցէ զայն գրաւ եդեալ առ դա, և ԻԱ թուման փող՝ և Ժ խալվար չալթուկ առեալ ի դմանէ։ Եւ մեր իմացեալ աստ զայս, յոյժ հիացմամբ զարմացաք, և չիմացաք թէ որպիսի բան է այդ։ Քանզի՝ նախապէս, յետ Յակոբայ կաթուղիկոսին և Մարտիրոս վարդապետին՝ ԺԱ կաթուղիկոսունք են փոխեցեալք աստ մինչև ցմեզ, և շատ ևս պատրիարքունք. այդ թամասուկդ եթէ հաւաստի թամասուկ էր աստ, յայսքան երկար ժամանակս ընդէ՞ր ոչ խնդրեաց զիւր դրամն։ Եթէ ի միում ժամանակի չյաջողեցաւ աստ որ խնդրէր, յայլ ժամանակսն ընդէ՞ր ոչ խնդրեաց։ Զի ամէն մէկ կաթուղիկոսի փոխիլ՝ մէկ ժամանակ է և Ա դար. Այսչափ ժամանակ չկարաց աստ գտանել յայնքան միջոցսն։ Երկրորդ՝ այդ թամասուկիդ դրամն սակաւ դրամ չէ աստ որպէս լսեմք. դորա տէրն եթէ աներկբայ էր յիւր թամասուկէն, այն որքան անդէտ էր աստ, որ ԻԱ թուման փողի՝ և Ժ խալվար չալթուկի ծախեաց։ Երրորդ՝ դիցուք թէ յիրաւի ևս լինի աստ այդ թամասուկդ, ի վերայ դորա միայն Մարտիրոս վարդապետի կնիքն է, Յակոբ կաթուղիկոսի կնիք ոչ գոյ՝ (որպէս լուեալ եմք աստ հաւաստեաւ)։ Այժմ էջմիածնայ կաթուղիկոսին ի՞նչ փոյթ է աստ։ Եթէ ասիցեն թէ՝ էջմիածնայ անուամբն ևս է այս պարտքն. ասեմք առ այդ թէ՝ թերևս և այլք կամ թշնամութեամբ կամ ինչ կերպիւ և իցէ, թամասուկն գրեն, և էջմիածնայ անուն դնեն առանց կաթուղիկոսի կնքոյն, ընդունելի՞ կու լինի աստ։ Ասեմք թէ Յակոբ կաթուղիկոսն այսօր կենդանի է. մէկ թամասուկի վերայ որ իւր կնիքն և ձեռագիրն չլինի աստ, օտար կնքով թամասուկի պարտքն նա որպէս տայ։ Ո՞ւր մնայ թէ՝ ի վաղ ժամանակի վախճանեալ, և այսքան միջոց անցեալ, և որքան կաթողիկոսունք փոխեալ ոչ կենդանի վկայ գոյ, և ոչ յիւրմէն կնիք՝ կամ ձեռագիր և վկայութիւն ինչ, և ոչ ասացեալ կամ լսեցեալ է այդ բանդ մինչև ցայսօր։ Այժմ ո՞վ կու հաւատայ աստ այդմ, և ո՞վ կու վճռէ թէ՝ յիրաւի է այդ։ Ուստի՝ զայս գրեմ աստ սիրելի որդւոյդ իմոյ. զի որովհետև մեք զայդ պ. Յովսէփդ չեմք տեսեալ և չճանաչեմք աստ, վասնորոյ գիր ոչ գրեցաք իւրեան։ Բայց դու սիրով և օրհնութեամբ ողջոյն տուեալ աստ զմէնջ, ասասցես թէ՝ այդ թամասուկդ քեզ պահելն անշահ և անօգուտ է վասն վերոյ ասացեալ Դ պատճառացն. յորոյ կողմանէն մեք ևս կասկած ոչ ունիմք, զի ահա հաւաստեաւ յայտնի է՝ որ անհաստատ բան է այդ։ Բայց դու ևս զդա պահելով օգուտ ինչ ոչ ունիս՝ բացի յապագայական վնասուց, և քեզ ևս խղճահարութեանց։ Եթէ յղեսցես ի ս. Աթոռս, շնորհակալ եմք լինելոց զքէն, և զթուղթ օրհնութեան գրելոց առ քեզ։ Զի որովհետև սրբոյ Աթոռոյս անունն ի մէջ դորին է, և մանաւանդ՝ ս. Երուսաղէմայ պատրիարքի կնիքն ի վերայ դորին է, ս. Երուսաղէմ ևս մեր է, և նորա ղայրէթն մեք ևս պարտիմք քարշել, վասնորոյ՝

այդ թամասուկիդ ի դուրս հանելն, և ձեռաց ի ձեռ. անկանիլն անօգուտ է։ Այսպէս ասա դմա ասէ, և զայն թուղթն առ. և առ մեզ յղեա, զի և մեք գրեսցուք առ դա զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան։ Փուսուլայ մի ես գրեաց առ սա, զի յարդեանցն սրբոյ Աթոռոյս մինչև ցքսան թուման տացէ այն Յովսէփին, և զթուղթն առեալ ի նմանէ առ մեզ յղեսցէ։ Յղեցան այսոքիկ ընդ տեղապահ Մկրտիչ վարդապետին, զի ի Թիֆլիզու առ Յովսէփ վարդապետն յղեսցէ ի Հաշտարխան։ Որ եւ ընդ Մարտիրոս պետին, ի մայիսի ԺԴ։

Առ Կախ կոչեցեալ դասապայի ժողովուրդսն շնորհակալութիւն և միաբանութիւն վասն յղեալ զանձանակադրամին իւրեանց։

Կախ կոչեցեալ գասապայի ժողովուրդքն յորդորմամբ Թիֆլիզեցի պ. Կոկալօյին, յանուն սրբոյ Աթոռոյս զանձանակ էին հաստատեալ ի միջի իւրեանց, և զՅարութիւն ոմն զանձապետ կարգեալ սրբոյ Աթոռոյս։ Եւ զարդիւնս զանձանակին (որ էր ԹՌ գն) ընդ նոյն Կակալօյին յղեալ էին առ սրբ. վեհն, և օրհնութեան և միաբանութեան թուղթ խնդրեալ ի վերայ իւրեանց։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն զթուղթ շնորհակալութեան և օրհնութեան դրեալ ի վերայ նոցա, ետ Կակալօյին տանել առ նոսա։ Յորում և զանձապետ պ. Յարութիւնին ես պատուէր գրեաց, զի զանձապետութեան գործոյն լաւապէս մուղայէթ լիցի, և զարդիւնս զանձանակին ժողովեալ, ըստ ժամանակին ի ս. Աթոռս և առ մեզ հասուսցէ։ Յղեցաւ այս ընդ պ. Կակալօյին։ Որ եւ ի մայիս Ի։

ՄԽԵ.

Առ Զաքարիա վարդապետն պատուէր վասն թղթաշինաց գործեացն։ Եւ առ մհ. Փիլիպպոսն եւս վասն այսր, եւ այլ ինչ բանից։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Պօլսոյ նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետն։ (Որ ի յԱպրիլի Իէ յիշեցաւ.) զի թղթաշէն ֆռանկքն՝ վասն թղթաշինութեան գործեացն իւրեանց, որպէս յառաջ՝ և այժմ. ևս թուղթ գրեցին առ ընտանիսն իւրեանց, և ետուն սրբ. վեհին յղել յերկիրն իւրեանց։ Զորս և սրբ. վեհն ի թղթոյս եդեալ յղեաց առ Զաքարիա վարդապետն տալ Թօմայ Աղային, և հարկել նմա, զի փութով յերկիրն նոցա յղեսցէ, և ի դալ գործեացն նոցա՝ փութով առ մեզ հասուսցէ, զի տացուք ինքեանց։ Որում և ծանոյց քան զայս յառաջ յապրիլի Իէ զթուղթ գրելն առ ինքն։ Եւ պատուիրեաց նմա գրել զպատասխանին։

Թուղթ մի ևս առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն գրեաց, և զպատրիարքի թուղթն յղեաց առ սա, զի ընդ մէնզիլի փութով առ նա յղեսցէ։ Եւ պատուէր՝ զի թարճիման Ստեփանի սանատն զոր ի տալն նմա զդրամս առեալ ի նմանէ, (Ի) առ մեզ յղեսցէ, զի տացուք նմա, զի նա միշտ խնդրէր ի մէնջ բերել տալ զսանատն։ Որպէս յառաջ, և այժըմ. ևս գրեաց սմա, զի մուրճակտամացու և հին քեաթան հոգացեալ յղեսցէ։ Եւ գրեալ էր սա սրբ. վեհին՝ թէ դրամ. (ե) յըղեցի առ պարոն Գէորգն, որ ի ս. Աթոռդ հասուսցէ։ Բայց պարոն Գէորգն ոչ էր գրեալ սրբ. վեհին զհասանիլն դրամոյն առ ինքն։ Զոր և ծանոյց սմա։ Եւ Ստեփան և Յարութիւն տղայքն վաճառականութեան աղագաւ այժմ. երթային ի Կարին։ Եւ սրբ. վեհն ի ձեռն Գալուստ վարդապետին պատուիրեաց նոցա, զի թղթատան փանճարայիցն աղագաւ անուամբ իւրեանց Ի բեռն ճերմակ շիշայ ճամ առեալ բերցեն։ Զոր և ծանոյց սմա, և պատուիրեաց, զի յառնուլն նոցա զշիշայ ճամս, ինքն ես հոգացօղ լիցի բանիցն նոցա։ Յղեցան այսոքիկ ընդ Ստեփան և Յարութիւն տղայոցն։ Որք ելին ի միասին յամսոյս ԻԱ։

Ի Կարս՝ առ պարոն Գէորգն պատուէր վասն առ ինքն յղեալ դրամոյն, զի ընդ դադրաչի Սողոմոնին յղեսցէ առ մեզ։

Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն՝ յարդեանցն ս. Աթոռոյս դրամ. (ե) էր հասուցեալ առ պ. Գէորգն յղել ի ս. Աթոռս։ Եւ նա ես ծանուցեալ էր սրբ. վեհին զհասանիլն դրամոյն առ ինքն։ Եւ բաց ի սմանէ՝ այլ դրամ. ես գոյր մեզ առ նմա։ Որոց աղագաւ և սրբ.

վեհն ընդ Սողոմոնին զթուղթ մի գրեաց առ պարոն Գէորգն։ Եւ պատուիրեաց նմա, զի թէ՝ ի մհ. Փիլիպպոսէն նորապէս առ ինքն հասեալ դրամն, (ե) ե թէ զայլ զրամսն ես, յանձնեսցէ դահբաշի Սողոմոնին, զի բերեալ առ մեզ հասուսցէ։ Եւ պատուէր՝ զի վասն թղթաշինութեան նիւթոյն հին քեաթան ես հոգացեալ յղեսցէ։ Մէկ նորատիպ տօնացոյց յղեաց առ նա վասն իւր։ Եւ հօրն նորա մհ. Գալուստին և պարոն Կօշտօ Կարապետին ես ողջոյն ղրեաց։

Փուսուլայ ևս սրբ. վեհն իւր ձեռամբն գրեաց առ նա։ Ծանուցանելով նմա զորպէսն Գարրանտու և Շիրազու։ Որպէս և յԱպ. Իէ։ Ցղեցաւ այս ընդ դահբաշի Սողոմոնին։ Որ եւ ի մայիսի ԻԲ։

ՄԽՋ·

Առ յամիթեցիսն մեղադրութիւն՝ վասն նախապէս ոչ յղելոյն զնորոգ Առաջնորդն իւրեանց Պետրոս պետն ի ս. Աթոռս։ Եւ կրկին պատուէր՝ զի փութով յղեսցէ զնա։

Վասն Ցամթայ նորոգ Առաջնորդ Հալապցի Պետրոս վարդապետին՝ կոնդակն այն որ ի մրտ. ԻԳ ի վերայ յամթեցւոցն գրեալ, առ ս. Աթոռոյս զանձապետ մհ. Մարտիրոսն յղեցաւ, հասեալ էր առ նա։ Իսկ նենգաւոր Մարտիրոսն այն և խառնակիչ Մուրատն (որք չարագլուխքն էին քաղաքին.) ընդ Պետրոս վարդապետին համաձայնեալ, թագուցանեն զկոնդակն։ Զոր ի լսել հասարակին՝ բողոք բարձեալ ասեն թէ՝ սրբ. վեհէն գիր է եկեալ ի վերայ քաղաքիս. ընդէ՞ր ոչ յայտնէք։ Լսէ զայս և դատաւորն. և տարեալ զՄարտիրոսն առ ինքն՝ սաստէ նմա ասելով թէ՝ ի խալիֆայէն գիր է եկեալ վասն ե՞ր թագուցանէք։ Որոյ աղագաւ և քանի ղուուշ տուգանս առնու ի նմանէ. և ապա թէ հագիւ յայտնեն զկոնդակն։ Եւ յետոյ վասն Պետրոս վարդապետին բազմակնիք մահսար աբարեալ, ի ձեռն տաճիկ փայեկի միոյ յղեն առ սրբ. վեհն։ Ցորում գայլ և այլ արգելառիթ պատճառս գրելով վասն նորա։ Նախապէս զայս պատճառեն թէ՝ տէրութիւնդ հրաման էիր արարեալ Պետրոս վարդապետին ի գալ ի ս. Գահդ. բայց նախքան զհրամանդ կրկին փայեկօք կոչեցեալ էաք զնա գալ ի շիջուցանել զհուր քաղաքիս։ Եւ ինքն խոնարհեալ գալ աստ՝ և աստէն գնալ յոտս սրբազանիդ։ Իսկ ի հռչակիլ փոփոխումն Առաջնորդաց, յետ Բ աւուր իմացեալ քաղաքապետն, կոչեաց ասեն ղմահտեսիքն, թէ Առաջնորդն ձեր կրկնեալ էք, ընդէ՞ր մեզ ոչ ծանուցանէք։ Եւ նոքա պատասխանեցին թէ՝ մեզ մին գիր եկեալ է Հալպայ, բայց Պետրոս վարդապետի ինչ օր գալն մեզ յայտնի չէ։ Եւ Մովպետ քաղաքիս գալոց էր այն օրերն, բայց ներկայ հաքիմներն ոչ լսելով մեզ, եառուն զԱռաջնորդի ազանելի ընծայն, և պահանջեցին դրամ. թէ վասն իւրեանց, կամ թէ վասն Մովպետին։ Վերջապէս մինչև Ե քսայ էհաս ասեն մապլաղն։ Ապա ոչ գտաք ասեն զելս ազատութեան, և վճարելոյ փողոյն, պայման առեալ ասեն ընդ բռնաւորին, և մուրհակ պարտուց կնքեալ տուաք, որ մինչ այսքան օր գայ Առաջնորդն. և թէ ոչ գայ, մեք հատուսցուք։ Վասնորոյ փայեկաւ գիր յղեցաք ասեն նմա, և նա զամենայն հոգսն թողեալ, վռազիւ եկն առ մեզ։ Երկրորդ պատճառն այս էր, որ քառասնորդաց առաջի չորեքշաբթին եկն, անտի մինչև ԻԵ օր հազիւ կարացաք ասեն գտանել փողն։ Զոր տուաք նոցա, և առաք ղկնքեցեալ ձեռագիրն մեր։ Եւ վերստին թէմէսուկ տուաք փոխատէր տաճկին։ Ե քսայ այս է, Ը քէսայ ևս ի Լուսիկ Կարապետի օրէն կայ տասն դիզեալ Բ եկեղեցեաց վերայ։ Զայսոսիկ որո՞վ վճարելոց եմք ասեն, եթէ ոչ ձեռամբ Առաջնորդին։ Զի ինքն իսկ յանձն էառ ասեն յորդորելով զհասարակն և աղաչելով, զի թեթեւ և դիւրաւ պողոտայի միով վճարեսցի։ Եւ ինքն շատ կամեցաւ ասեն թէ գայցէ ի ս. Աթոռդ, և ապա եկեալ տեսցէ զհնար իրին, և մեք ևս ունիմք յօժարութիւն յղելոյ զնա, բայց վասն ուժգնութեան խուժանացն ոչ կարացաք թուլատրել զյօժարութիւն նորին։ Եւ խորհուրդ մեր այս էր ասեն, որ յետ սրբոյ Զատկին զգործ իրին դոյզն ինչ ճանապարհ ձգել, և ապա գալ առ ոտս քոյին տէրութեան։ Մինչ մեք զայս խորհէաք ասեն, յանուր խթման սրբոյ Զատկին յանկարծ դղրդեցաւ քաղաքս, և բօթալի համբաւ եկն

թէ՝ սահաթպաղ մհ. Յովաննէսն եկեալ ի ս. Գահէն, և բերեալ ընդ իւր զԿարապետ վարդապետն ե թողեալ զնա իժա տան, և ինքն եկեալ և բերեալ էր զարքունական հրամանի զաւետիսն, ե զԱռաջնորդական կոնդակն նորին։ Որոյ աղաղաւ և չփոթեցան ասեն անձինք անմեղ զառանցն Քրիստոսի։ Վասն այս փաստիցս ոչ կարեմք ասեն զԱռաջնորդն մեր զՊեարոս վարդապետն 'յղել առ ոտս քոյ, մինչև զանդրադարձն դրոյս ոչ յղեսցես։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ի պատասխանի բազմակնիք մահսարին իւրեանց՝ զմեզաղրութեան կոնդակ մի գըրեաց ի վերայ Ցամթայ քաղաքին։ Այսպէս գրելով նոցա թէ՝ էհաս բազմակնիք թուղթն ձեր ընդ այլ գրեանցն ի մյս. Ժէ, զոր գրեալ էք 'յԱպ. ԻԴ ընդ տաճիկ փայեկաւն ամբողջ կնքովն։ Զորս ընթերցեալ, վերահասու եղաք ամենայն գրեցելոցն ձերոց, կմրի զարմացաք ասէ ի վերայ խելաց ե խոհեմութեանց ձերոց։ Միթէ 'յայդ բազմամարդ քաղաքդ մէկ երկու անձինք ոչ գտանեցան ասէ որ զգրեցելոց մերոց դիտաւորութիւնն իմանային, ե ըստ այնմ. մեզ պատասխանի գրէին, որ թողեալ զդիտումն մեր՝ վայր ի վերոյ ե խելառական բանիւք լցեալ զթուղթս առաքեալ էք առ մեզ։ Զի եթէ հարցանօղ լիցի ձեզ թէ՝ մեծաւորն ձեզ զի՞նչ է գրեալ, ե դուք նորա զի՞նչ գրեցիք, չդիտէք ասէ ես ղպատասխանի մի տալ։ Աւաղ ասէ հոչակաւոր ե անուանի քաղաքիդ, որ 'յայդ աստիճան է հասեալ։ Ա՛յ օրհնեալք, ես ձեզ մէկ կոնդակ գրեցի ասէ սիրով ե օրհնութեամբ ե 'ինմա Բ հարկաւոր բան ե պատուէր դրեցի, ե ղպատասխանի խնդրեցի ի ձէնջ։ Առաջինն այս էր թէ՝ այդ Պետրոս վարդապետդ որ ձեզ Առաջնորդ ևն կարգեալ, դա Ասայ եպիսկոպոս է. ոչ կարէ դա ի վիճակին Էջմիածնի Առաջնորդանալ և եպիսկոպոսութիւն առնել։ Եթէ կամի Էջմիածնային լինիլ և ի վիճակս մեր մտանել, նախ պարտի գալ ի ս. Աթոռս և զսորա անունն ի վերայ իւր առնուլ, և ապա հրամանաւ մերով, եկեալ ձեզ Առաջնորդ լիցի։ Որ իւրեան և ձեր ևս օգուտն այս էր ասէ. զի նզովիւք փակեցեալ է ի կանօնս. որ եպիսկոպոս մի 'յայլում վիճակի ոչ կարէ եպիսկոպոսութիւն առնել։ Եւ մանաւանդ՝ չար օրինակ ևս լինի ասէ ապագայից։ Մեր դիտաւորութիւնն այս էր, դուք զի՞նչ ասէք այս բանիս։ Եթէ Էջմիածնի վիճակ էք, ե ձեր կաթուղիկոսն ես եմ, պարտիք 'ինձ լսել և զհրամանս մեր կատարել. եթէ Սսայ վիճակ էք, զայն ևս մեզ ծանուցէք ասէ։ Եթէ ասէք բերաթով և պատրիարքի կոնդակաւ է եկեալ, առաւել քան զայն բէրաթն մեք ևս ունիմք. որ ամենայն սեւագլխաց վերայ կարեմք իշխել, հանել և դնել. եթէ ոչ հաւատայք, կամիք զսուրէթն ուղարկեմ. դատաւորին և կապանօք բերեմ։ Եւ պատրիարքն ևս գիտելով զայս, գրեալ է դորա թէ՝ մինչև 'յԱթոռն ոչ գնաս, մի՛ մտցես ի Ցամիթ. որպէս գիտէք։ Ապա այդ ի՞նչ վայր ի վերոյ խելառական զրոյցք են ասէ. զոր ասէք և գրէք. դուք տգէտ, զմեզ ևս տգէտ համարիք ասէ։ Եթէ քաղաքիդ պարտքըն պատճառէք որպէս դրէք, դուք միշտ տուեալ էք և տայք առանց կանօնի քան զայլ քաղաքս. մինչև ցարդ քանի հազար տուեալ էք վասն ապօրինաւորութեան ձերոյ որպէս գրէք. դիցուք թէ սակաւ մի ևս վասն օրինաւորութեան տայցէք, զի՞նչ մեղք է։ Մանաւանդ՝ մէկ փարայ ևս ոչ տայք ս. Աթոռոյս աղագաւ. զի ամենեքեան այլադգիք գիտեն որ սևագլխաց մեծն աստ է և ի սմանէ կան կախեալք, թէպէտ դուք միայն ոչ պահէք զայս կանօն։ Իսկ եթէ Պետրոս վարդապետիդ կամիք իբր բարեբարութիւն առնել, այդ ոչ է բարեբարութիւն, այլ չարակամութիւն և մեծ թշնամութիւն։ Զի կամիք զդա միշտ այգու անուամբ պարտաւոր պահել, զի ատելի լիցի մեզ և ժողովրդեանն և այլազգեաց ևս, որով լեզուն կարճ լիցի և չկարիցէ իշխել ձեզ. և ի խօսիլն ընդ միոյ, ասեցէք թէ՝ դու այսպէս ես, և այլն։ Ուրեմն կամիք և զդա խայտառակել և 'յետ քանի աւուրց արտաքսել, որպէս է սովորութիւն ձեր։ Ուրեմն եթէ Պետրոս վարդապետդ խէլօք է ե իւր օգաիցն ընտրօղ, ի՞նձ պարտի լսել քան ձեզ, որք այսօր ովսաննայ ասէք, 'յետ քանի աւուրց, խաչեսցի։ Ահա ճիշտն գրեմ ձեզ, ես զՊետրոս վարդապետդ խնդրեմ, ոչ ի 'յատել ե ի մերժել 'յԱռաջնորդութենէն ձերմէ, զի զնախանձ մի և ատելութիւն ինչ ոչ ունիմ ընդ դմա, մանաւանդ սէր ե ծանօթութիւն ի վաղուցհետէ.

այլ խնդրեմ, առ ի սիրել, ի սրբել զկեղտն, և լաւ անուամբ հաստատել ձեզ Առաջնորդ, եթէ առաքէք, բարի է, և թէ ոչ, ի մէնջ հրաման չունի եպիսկոպոսական կարգ կատարել ի վիճակս էջմիածնի։ Այլ զոր ինչ և պատճառէք, սուտ է և անընդունելի. տաճիկն ոչ կարէ ասել սեագլխոյն թէ՝ քո մեծաւորի մօտն մի գնար. եթէ ասիցէր, ձեր նախկին Կարապետին ասէր, զոր բազմակնիք թղթովք և փառաւորութեամբ առաքեցիք ի յեպիսկոպոսանալ, յետոյ մինչ կամեցայք, նախատանօք արտաքսեցիք։ Եւ մանաւանդ՝ յամենայն տեղիս դոն տաճիկք, որոց սեագլուխքն գան և գնան. ոչ ոք արգելու։ Որքան առ յայս, բաւ լիցի։ Այս էր ասէ առաջին պատուէրս ձեզ, որոց դուք զներհակն գրեցիք մեզ։ Երկրորդ խնդիրս իմ այս էր, զի զձեզ իբր իմանալին գիտելով, մասլահաթ հարցուցի ձեզ թէ՝ Արզնու, և յայլ կողմանցն բազմակնիք մահսար են գրեալ թէ՝ մեր վանքն վիճակօքն բաժանեա ի Ցամթայ, որպէս յառաջ բաժան էր, և զԿարապետ վարդապետն մեր վանքին Առաջնորդ կարգեա. նոքա այսպէս են գրեալ դուք զի՞նչ ասէք։ Սորա պատասխանին գրէք թէ՝ այն մահսարն սուտ է, չհաւատաս, կրկին գրէք թէ՝ լաւ հետեեմք և իմանամք, յետոյ զկատարեալն գրեմք, յետոյ զայսոսիկ մոռացեալ, դրէք թէ՝ մեք զԿարապետն չեմք ուզեր, մի՛ ուղարկեր մեզ Առաջնորդ, որ զմեր քաղաքն կուքակէ, և այլն։ Ես երբ գրեցի ասէ ձեզ, թէ զԿարապետ վարդապետն կու առաքեմ, պարտիք ընդունիլ, որ դուք այսքան աղաղակ և անհամ բանիւք լցեալ էք զթուղթն, կամ թէ այդ որպէս քաղաք է, և այգ որպէ՞ս իշխանք, որք միոյ ստախօս սհաթչու բանիւքն այդքան շուտով հաւատացիք և քաղաքդ դղրդեցաւ ի ձայնէ մունէտկի նորա։ զԿարապետ վարդապետն դուք խնդրէք ես, ոչ նա գայ ի քաղաքդ, և ոչ ես առաքեմ. միամիտ կացէք և մի՛ վրդովիք։ Իսկ եթէ վանքի վիճակն ֆէրմանով Առաջնորդ առնեն իւրեանց, ինձ չէ փոյթ։ Կամ թէ այն ի՞նչ է ասէ զոր ի բազում տեղիս գրէք ի յանհամ գիրս ձեր թէ՞ Կարապետ վարդապետն այսքան բեռն և այսքան դրամ է բերեալ և տուեալ մեզ, և պատրեալ զմեզ և զգործակալսն մեր. միթէ ո՞չ ամաչեցայք բնաւ, և ո՞չ մտածեցիք թէ՝ զի՞նչ է զոր գրեմք։ Աւաղ ձեր խելացն և մարդավարութեանն. բնաւ չէք լուեալ յուստեքէ զայսպիսիս. զի Կարապետ վարդապետն մէկ որ մեր նուիրակ էր, երկրորդ՝ որ ձեր Առաջնորդ էր. հապա թէ մէկ անգամ եկեալ է յԱթոռս, եթէ մէկ քանի հարիւր ղուռշի բան բաժանէ, մի՞թէ մեղանչէ, կամ թէ մեք կաշառակեր և պատրեցեալ լինիմք այնու, ապա ձեր Քեայ որ մէկն հարիւր շինէք և անամօթաբար գըրէք։ Մէկ քանի ալաճայ, քանի սապոն, և քանի կոպիտ մահրմայ է սորա բաժանեալն, այգ ո՞ր հոտեալ և որդնալից բերան է ասէ, որ այդքան քեսայ շինէ, և է՞ բեռն քսուլ։ Այդ չիք սհաթսաղղ յանցեալ տարին անգամ մի եկն յԱթոռս, քանի ղուռշ լափեաց, և մէկ քանի սհաթ ունէաք, փոխանակ շինելոյն աւերեաց։ Ցայս անգամ ես եկն, երես ոչ ետուք. վասնայսորիկ այդպէս է ցրուեալ բերանն։ Դիցուք թէ նա ասաց, դուք որպէս շուտով հաւատացիք ասէ դմա, և զմեզ պատրեալ և կաշառօք խաբեցեալ գրեցիք խենթաբար։ Եթէ այդպէս ճիշտ ասաց և հաւատարիմ իշխան էր ասէ գա ձեր, հարցէք դորա թէ՝ գնացեր յԱթոռն, քանի՞ օր հաց կերեր, զի՞նչ ետուր աջահամբոյր։ Այդպէս մարդոյ հաւատացողին չէ զարմանք ասէ այսպէս բան գրել մեծաւորին։ Շնորհակալ եմ ասէ զհարազատութենէ ձերմէ, որ այդքան փառաւորեցիք զմեզ և զգործակալսն մեր։ Թուղթ ես առ ս. Աթոռոյս զանձապետ մհ. Մարտիրոսն և նորին եղբայր մհ. Բարսեղն։ Ծանուցանելով նոցա զյղելն կոնդակին ի ձեռն նորոգ Առաջնորդին իւրեանց Պետրոս վարդապետին։ Եւ պատուէր՝ զի ի մէջ հասարակին ընթեռնուցուն. և մի՛ ծածկեսցեն որպէս զառաջինն։ Եւ վասն Կարապետ վարդապետին ի կարծիս էին նոքա, թէ սրբ. վեհն վերստին յղելոց է զնա անդ։ Վասն որոյ՝ և սրբ. վեհն առ ի բառնալ կամելով զկարծիս նոցա, միամտեցոյց նոցա ասելով թէ՝ զի եթէ ես չէի ասէ զԿարապետն խնդրեալ գալ աստ, սա ոչ ելանէր ի քաղաքէդ, և ոչ նոր Առաջնորդ գայր ձեզ։ Լաւ իմացէք։ Ուրեմն այսպէս առնօղն՝ կրկին ոչ առաքէ զսա յայդ քաղաքդ։ Առ այս մի՞ամիտ լերուք։ Իսկ վանքցիք որովհետև այնպէս մահսար էին գրեալ ասէ մեզ, և գիտեմք որ նոքա այլ ոչ միաբանին ընդ ձեզ բնաւ յայս

կողմանէ, վասնայսորիկ ես ընդ ձեզ իբր մուշավարայ արարեալ, հարցուցի թէ՝ դուք զի՞նչ ասէ որ զայդ խղճալիդ ոչ թողուք գալ յԱթոռս, և զայդ Սսեցի անունդ բառնալ, այդքան անօգուտ և անպատշաճ պատճառ գընելով։ Մի՞թէ մեք ոչ հասկանամք, և կամ թէ ոչ գիտեմք որ այս ամենայն դուք առնէք, և այսքան փուչ և սնոտի գրերովք զգլուխս մեր ցաւեցուցանէք, և զհրամանս մեր ստոր արկանէք։ Զի՞նչ է այս, դուք մեր սիրելի և ս. Աթոռոյս զանձապետ. դուք պարտիք ասէ ջատագով լինիլ մեզ, և զհրամանս մեր յառաջ տանիլ, փոխանակն՝ ներհակութիւն առնէք։ Ահա գրեմ ձեզ ի զգուշանալ և թողուլ զայդպիսի անհարազատութեան շարժմունսդ, և զպատիւ Աթոռոյս պահել, և զհրամանս մեր կատարել։ Դուք էք ասէ արգելօղն այդ մարդոյդ. որ յետոյ ձեզ լաւ չի լինիլ, և դա ես ողորմելի կուլինի, յայտնապէս ներհակութիւն է ասէ արարք ձեր. ս. Աթոռոյս, մեզ՝ և պատրիարքին։ Լաւ մտածեցէք։ (որոյ օրինակն աս է ի մահսաբօջն։)

Թուղթ ևս առ Յամթայ Նորոգ Առաջնորդ Հալապցի Պետրոս վարդապետն։ Ի պատասխանի թղթոյն։ Եւ վասն ոչ գալոյն նորա ի ս. Աթոռս, սրբ. վեհն սիրով մեղադրեաց նմա ասելով թէ՝ արգելօղն զքեզ ի յԱթոռս գալոյ, եթէ դու ես ասէ, շատ մեծ տգիտութիւն է քեզ, և անընտրողութիւն օգտիցն քոց։ Քանզի՝ մեք զքեզ առ ի սիրել, և փառաւորել և մանաւանդ ի բառնալ զայդ արատաւորութիւնդ ի քէն խնդրեմք, որպէս ահա սկսեալ են ասել, և ես յաճախելոց է այդ ձայնդ և զքեզ միշտ կարճալեզու և շառագունեալ պահել. եթէ ոչ՝ ընդ քեզ մէկ հեռ և նախանձ ինչ ոչ ունիմ ասէ։ Իսկ եթէ այլք են, անկարծիք մեծ թշնամիք են ասէ քեզ։ Այժմ ի նախանձ կարապետին, այդպէս շողոքորթեն ասէ զքեզ և գովեն, յետոյ յանհետանալ անուան նորին, յայս կուսէ ևս հատեալ իցես, դու յայնժամ տեսանելոց ես ասէ զշողոքորթ րարեկամսն քո. զօգուտն քո դու ընտրեա նախապէս, և հատ զձայն զայս մինչ նոր է և շատ չէ արծարծեալ։ Յետոյ ի բորբոքելն, դժուարաւ կարես ասէ շիջուցանել։ Աստուծով զնախքան զմեօք եղեալ ապօրինաւորութիւնն ես արգելեալ եմ յիմ ժամանակս. զայդ որ բնաւ չէ եղեալ, զի՞նչ կարծես դու զինէն։ Ի Սիս ինչ ազգ մարդ ձեռն ձգեն, զնա օրհնեն եպիսկոպոս. ուրեմն ճանապարհ բանաս ասէ և նոցա, զի և նոքա մտցեն ի վիճակս մեր։ Որ ցարդ չէ եղեալ, այժմ յիմ ժամանակս պարտի լինիլ։ Եւ զի՝ թէմէսուկ մի գրեալ էր սա և կնքեալ, և զտեղին գրամոյն ի բաց թողեալ, յղեալ էր առ սրբ. վեհըն, զի ըստ հաճոյիցն իւրոց որքան և կամիցի՝ գրեսցէ ի նմա զորքանութիւն դրամոյն, զի յետոյ ինքն տացէ մեզ։ Բայց սրբ. վեհն ոչ հաճեցաւ ընդ այն, այլ զթէմէսուկն զայն զոր յղեալ էր նա, պատառեալ, և ի թղթոջս եդեալ, յետս դարձոյց առ նա. այսպէս գրելով նմա թէ՝ այն մուրհակն զի՞նչ է ասէ զոր եդեալ ի գիրդ յղեալ ես առ մեզ։ Թուի թէ՝ զխօսս յիմարացն հաստատելոյ աղագաւ ես արարեալ զայդ, զի հաւաստիցի կաշառօք խաբելն մեր։ Ես զքեզ և զհնազանդութիւն քո խնդրեմ ասէ, և ոչ զաւուրդ։ Պատրիարքին խոստացեալ ԵԾ ոսկիդ մեզ պարտի ասէ հասանիլ. զայն խնդրէի ասէ եթէ այդու մտօք լինէիր։ Ահա զմուրհակդ պատառեալ, եդի ասէ ի թղթոջդ, և յղեցի առ քեզ։ Թող ասէ ուրեմն զայդպիսի մտածմունսդ և զայլոց կարկատունսն, և եկ. որպէս և պատրիարքն ես գրեալ է քեզ։ Եթէ ոչ, դու լիցիս պարտական։ Յղեցան այսոքիկ առ Յամթայ Նորոգ Առաջնորդ Պետրոս վարդապետն, ձեռամբ Իբրահիմ յանուն տաճիկ փայեկին։ Զոր յամթեցիքն էին յղեալ առ սրբազանն վասն բանիցն։ Որ եւ ի մայիսի ԻԳ։

ՄԽԷ.

Ի Խամսա՝ առ Մէլիք Յովսէփն՝ բացասութիւն վասն անպատշաճ խնդրոյն ի սրբազան վեհէն։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Մէլիք Յովսէփն ի պատասխանի թղթոյն։ Զի որդի նորին պարոն Բէկլարն ի վաղուցհետէ ցաւս ունէր յանձն իւր. որ և ի բազում բժիշկս անկեալ, ոչ էր գտեալ յումեքէ բժշկութիւն։ Եւ հայրն նորա մինչ լուեալ էր զգալն թըգթաշէն ֆռանկացն ի ս. Աթոռս. կարծելով թէ՝ բժիշկք իցեն նոքա, վասնորոյ՝ ընդ իւր իւզբաշի Ալամխանին աղաչանաց գիր էր

ղրեալ առ սրբ. վեհն, զի զմինն ի Թղթաշէն փռանկացն ստորաքեսցէ առ ինքն, որ երթեալ բժշկեսցէ զորդին իւր։ Բայց սրբ. վեհըն զառաքեալսն նորին ունայն յետս դարձոյց, Գրելով նմա թէ՝ սոքա ոչ են ասէ բժիշկք որպէս լուեալ ես. այլ Թղթաշէնք են. զորս ի փռանկստանու բերեալ եմք վասն Թղթաշինութեան։ Իսկ յետոյ սրբ. վեհն ցաւակցաբար քանի մի բժշկութեան բանս ասաց Ալամխանին ասել նմա, զի այնպէս արասցէ. որպէս զի՝ թերևս այնու բժշկութիւն գտցէ որդին իւր։ Որում և ծանոյց զասացեալսն իւր։ Ցղեցաւ այս ընդ իւզբաշի Ալամխանին։ Որ եւ հանդերձ ընկերօքն իւրովք, ի մայիսի ԻԶ։

Ի Բաղդատ՝ ի Բասրա և ի Հնդիկս Թուղթք և նորատիպ տօնացոյցք յղեցան ընդ տէր Գէորգին:

Որովհետև սրբ. վեհն յամենայն երկիր զնորատիպ տօնացոյցս յղէր, վասնորոյ՝ և ի Հնդիկս ևս յղեաց։ Թէ վասն եկեղեցեաց այնց կողմանցն, և թէ վասն յատուկ անձանց ոմանց։ Որոյ աղագաւ զպատուիրական կոնդակս և զԹուղթս գրեաց յայն կողմունսն։ Ընդ յորս և զայլ ողջխութիւնս համախառնելով։ Որք են այսոքիկ։

Կոնդակ ի Բաղդատ՝ ի Ղարաչօրան՝ ի Բասրա ի Բանտարբուշեռ՝ ի Բանտարըռիկ՝ ի Բանդարաբաս, և ի շրջակայսն նոցին, վասն նորատիպ տօնացուցին։

Կոնդակ ևս ի Մատրաս՝ ի Մչլիբանտար՝ ի Ղաքնահուռ՝ ի Փեկու, ի Թանկու և ի շրջակայս նոցին, նոյնպէս վասն տօնացուցին։

Կոնդակ մի ևս ի վերայ երկրին Բանկալուայ. այսինքն՝ ի վերայ Կալկաթու. Չինչրայու. Սէյտապատու և շրջակայիցն նոցին։ Եւս վասն տօնացուցին։

Կոնդակ մի ևս ի Սուրաթ. ի Բումբայի և ի շրջակայսն նոցին, նոյնպէս վասն տօնացուցին պատուէր։

Թուղթ ևս ի Բաղդատ՝ առ ս. Աթոռս զանձապետ և գործակալ պարոն Ալէքսանն։ Ծանուցանելով նմա զորպէսն նորատիպ տօնացուցին։ Եւ վասն եկեղեցւոյն նոցա Ա. հատ տօնացոյց յղեաց առ նա, զի տեղւոյ քահանայիցն տացէ։ Եւ զկոնդակն ևս ընթեռնուլ տացէ յեկեղեցւոջն՝ և տացէ տէր Գէորգին, զի ընդ իւր ի Բասրա տարցէ, զի անդ ևս ընթերցին։ Տեղւոյ քահանայիցն իշխանացն և ժողովրդոցն ողջոյն գրեաց։ Այլ և՝ Ջուղայեցի Ղուկաս վարդապետին ամանաթ դրամ (6) գոյր առ Խալղարենց Աւետքի որդի պարոն Աղայ Մարգարն։ Եւ դրամն այն առ ս. Աթոռս և առ սրբ. վեհն պարտ էր հասանիլ։ Որոյ աղագաւ և Ղուկաս վարդապետն ղսանատ մի դրեալ և կնքեալ, և բաղմաց ևս կնքեցուցեալ ետ սրբ. վեհին, յղել առ ս. Աթոռոյս զանձապետ պարոն Ալէքսանն, զի նա ԻԱ օր վատայով առցէ դրամն յԱղայ Մարգարէն։ Վասնորոյ և սրբ. վեհն առեալ ղսանատն ի Ղուկաս վարդապետէն, եդ ի մէջ Թղթոյս, և առ պարոն Ալէքսանն յղեաց, որ յետ ԻԱ օր վատային առեալ զդրամն յԱղայ Մարգարէն, առ Զաքարիա վարդապետն յղեսցէ ի Պօլիս, զի նա անտի առ մեզ հասուսցէ։ Այսր աղագաւ Ղուկաս վարդապետն ևս գրեաց զԹուղթս առ պ. Ալէքսանն և առ Աղայ Մարգարէն զորս ի մէջ Թղթոյս եդեալ, առ սոյն պարոն Ալէքսանս յղեցաք։ Ա. հատ տօնացոյց ևս տէր Գէորգին ետուք, մինչ երթայր աստի ի Բաղդատ և ի Բասրա։

Թուղթ ևս ի Սուրաթ՝ առ ս. Աթոռոյս զանձապետ Քանաքեռցի պարոն Նիկողայոսն։ Ծանուցանելով նոյնպէս զորպէսն տօնացուցին։ Եւ Ա. հատ տօնացոյց ևս վասն եկեղեցւոյն նոցա յղեաց ընդ կոնդակին։ Եւ պատուէր՝ զի յետ ընթեռնլոյն զկոնդակն, յղեսցէ ի Բումբայի։ Եւ վասն ԻՃ. ռուփոյն կրկին միամտութիւն գրեաց նմա։ Եւ խոստացաւ՝ զի յետոյ ի խաղաղ ժամանակի նորոգել տացէ զտանիս Քանաքեռու եկեղեցւոյն իւրեանց։ Զի զիւղացիքն այժմ ի զբաղանս կային։ Տեղւոյ քահանայիցն՝ իշխանացն և ժողովրդոցն ողջոյն։

Թուղթ ևս ի Սէյտապատ՝ առ ս. Աթոռոյս զանձապետ Աէթ Աղայն։ Ծանուցանելով նմա զորպէսն տօնացուցին։ Եւ Ա. հատ տօնացոյց ևս վասն եկեղեցւոյն նոցա յղեաց։ Եւ պատուէր՝ զի զտօնացուցի կոնդակն ի Կալկաթու քահանայիցն խնդրեսցեն։ Տեղւոյ քահանայիցն՝ իշխանացն և ժողովրդոցն ողջոյն գրեաց։

Թուղթ ևս ի Դաքա՝ առ ս. Աթոռոյս զանձապետ Միքայէլ Աղայն. Որում ևս ծանոյց զորպէսն տօնացուցին։ Եւ Ա. հատ

տօնացոյց ևս վասն եկեղեցւոյն նոցա յղեաց։ Եւ պատուէր՝ զի զկոնդակն ի Սէյտապատու քահանայիցն խնդրեսցեն։ Միւսոցն ողջոյն։

Թուղթ ևս առ Կալկաթու և Չինչրու բոլոր քահանայսն գրեաց։ Ծանուցանելով նոցա զորպէսն տօնացուցին։ Եւ Բ հատ տօնացոյց ևս վասն եկեղեցեացն նոցա յղեաց։ Եւ զկոնդակն ի ձեռս Կալկաթու քահանայիցն յղեաց։ Պատուիրելով նոցա՝ զի նախ ինքեանք ընթերցեալ, յղեսցեն ի ձեռն Չինչրայու քահանայիցն. և գրեսցեն նոցա, զի և նոքա ևս ընթերցեալ, յղեսցեն ի Սէյտապատ, և նոքա ևս ընթերցեալ, յղեսցեն ի ի Դաքա, և յայլուր ուր. և պիտոյիցէ։ Եւ իշխանաց և ժողովրդոց տեղեացն ողջոյն գրեաց։

Թուղթ ևս մխիթարութեան պ. Սէթն և նորին եղբայր պարոն Թօրոսն գրեաց ի Մատրաս վասն մահուան հօրն իւրեանց տէր Աւետիքին։ Եւ պատուէր՝ զի ըստ հօրն իւրեանց միշտ հարազատ լիցին ս. Աթոռոյս, և ի վերայ բանիցն իւրեանց արի մնասցեն։

Թուղթ ևս առ Շահմիր Աղայն գրեաց ի Մատրաս։ Ծանուցանելով նմա զորպէսն տօնացուցին։ Եւ Ա հատ տօնացոյց ևս առ նա յղեաց։ Եւ Միքայէլ Աղայն ի Բասրայու գրեալ էր սրբ. վեհին թէ՝ Շահմիր Աղայն Բ գիրք է յղեալ առ մեզ, զմինն վասն քոյ, և զմիւսն վասն Մէլիք Յովսէփին։ Եւ խոստանայր ընդ հաւատարմի յղել առ մեզ։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն խոստացաւ սմա, զի երբ յղեալ գիրքն առ մեզ հասանիցի, յայնժամ. շնորհակալութիւն գրեսցէ ինքեան։ Եւ ի Մաարաս տպագրատուն էր հաստատեալ սա, և զգրեանս տպել տայր։ Զոր ի լսելն սրբ. վեհին պատուիրեաց սմա, զի թէ կարելի է՝ ի տպել տալն զգիրք ինչ, նախապէս ինքեան ծանուսցէ, և ապա տպել տացէ։ Զի մի գուցէ անարհեստ և անվայել լինիցի տպեցեալ գիրքն ըստ շարադրութեանն և ըստ դիտմանն՝ ի տեղի տալ ժպտման թշնամեաց։ Կամ. նորաձոյծ և արտուղի բան ինչ գտանիցեն ի նմա աւրերօղ զպակասութիւն և զխոչ ազգիս՝ եկեղեցւոյս՝ և հաւատոյս և կրօնիս մերոյ։ Եւ կամ. թէ զվատարանութիւն և զվատանկարեր ասութիւնս ունիցի առ այլազգական իշխանութիւնն։ Եւ վասն Մէլիք Յովսէփին յղեալ ընծայիցն և թղթոցն իւրոց միամտութիւն գրեաց նմա սրբ. վեհն, զի զայն Բ լուլաւոր հրաձիգն, Բ ատպանչայքն և չալթուկն առ նա հասեալ իմասցի՝ և միամտեսցի։ Զի զայնս սրբ. վեհըն յառաջագոյն ընդ դահբաշի Ալամխանին առ Մէլիք Յովսէփն յղեաց ընդ թղթոյն։ Եւ Մէլիք Յովսէփն զպատասխանին նորին թղթոյն գրեալ, ընդ նոյն Ալամխանին յղեալ էր առ սրբ. վեհն, յղել առ նա։ Զոր և սրբ. վեհն ի թղթոջս եդեալ յղեաց նմա։ Եւ զըղեկն թղթոյն ծանոյց նմա։

Փուսուլայ ևս գրեաց առ նա, որում. և պատուիրեաց, զի զթուղթսն զորս գրէր ի Ղարատաղ առ Մէլիք Յովսէփն, զվնասն նորին մտածելով, այլ մի ևս գրեսցէ։ Զի ի նոցանէ ոչ գոյր օգնութիւն ինչ. այլ միայն պատահմամբ թուղթն իւր ի ձեռն տաճկաց անկանէր, և վնաս բերէր ազգիս մերոյ։

Թուղթ ևս առ Պետրոս Աղայն գրեաց ի Կալկաթա։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ ի սեպտ. ելն զթուղթ գրելն առ ինքն։ Եւ պատուէր՝ զի ի նմա գրեցելոցն լսօղ և կատարօղ լիցի, և գրեսցէ զպատասխանին։ Եւ Սաղիմայ նուիրակ Յովաննէս վարդապետն՝ ըստ խնդրոյ սրբ. վեհին քան զայս յառաջ եկն ի ս. Աթոռս։ Զոր սրբ. վեհն բերեալ յատեան եպիսկոպոսաց, ընդ տէր Ղուկասին երկարօրէն հարցումն արարեալ, խօսեցոյց զերկոսեանն. յամենայնի վերահասու եղև ամենայն անցիցս Կալկաթու և Չինչրու։ Վերջապէս Բ կողմունքն ևս գտան պարտաւորեալ։ Զի Յովաննէս վարդապետն ըստ այնմ. պարտաւորեցաւ, զի քան զչափն իւր առաւել բարձրավզութեամբ գործեալ էր զայնպիսիսն։ Եւ նոքա այնու գտան պարտաւոր, զի ի պատճառս ի մէնջ հեստելոցն էին վիճեալ ընդ նմա։ Եւ մինչ այսպէս վճռեցաւ դատաստանն, տէր Ղուկասն յոտին կացեալ յատենին, ասաց թէ՝ եթէ զմեզ վասն այն խաբեբայիցն պարտաւորես, զի ընդ նոսա սէր եմք արարեալ, մինչև ցայժմ. մեք անգիտութեամբ և միամտութեամբ եմք արարեալ զայդ։ Ես ահա իբր վէքիլ բերանն և երաշխաւոր լինիմ. ասաց մեր ամենայն ժողովքեանն Կալկաթու և Չինչրու, զի այսուհետև մի ևս ընդունեցին զնոսա իբրև զկարգաւոր, և կամ. սէր արասցեն ընդ նոսա իբրև

ընդ բարեկամի՝ այլ իբրև ընդ այլազգւոյ. միայն վասն առ և տրոց և այլոց մարմնաւոր իրակութեանց խօսակցիցին եթէ հարկն պահանջիցէ։ Եւ մինչ տէր Ղուկասն այսպէս ասաց, ապա և Յովաննէս վարդապետըն ասաց թէ՝ եթէ այդպէս է, և ես զղջամ յիմ չափազանց խօսից. և հաշտեցոյց ընդ միմեանս հանդերձ ժեղայիւ։ Եւ երկուցն ևս ողորմեսցի և պահպանեսա ասաց. ընդ նոցին և Կալկաթու և Զինչրու ժողովրդեաննս։ Վասն որոյ՝ և հարկեաց Յովաննէս վարդապետին, զի զգիր օրինաւորութիան և արձակման գրեսցէ նոցա։ Եւ տէր Ղուկասին ևս հարկեաց, զի զայս ամենայն անցքս ծանուսցէ նոցա։ Որք և գրեցին իսկ։ Զորս ի թղթոջս եդեալ յղեաց առ նոսա, զի տեսցեն, և ինքեանք ես միամտեալ, զանցեալսն ամենայն անհետ աւնիցեն և խաղաղասցին։ Զոր և ծանոյց նմա։ Իսկ քահանայքն նոցա զորս Յովաննէս վարդապետն ընդ բանիւ էր արարեալ, մինչև ցայսօր անխտիր պատարագ մատուցանէին և զխորհուրդս եկեղեցւոյ կատարէին։ Վասն նոցա գրեաց նմա սրբ. վեհըն թէ՝ դոցա ապաշխարանքն մնասցէ ասէ, մինչև զպատասխանիս դրոց մերոց առնուցումք ի ձէնջ։ Որում և ծանոյց քան զայս յառաջ զպատուէր գրելն իւր Սաղիմայ պատրիարք Պօղոս վարդապետին, զի ի սևագլխաց իւրոց զով ոք յղելոց իցէ յայն կողմն, զգուշացուսցէ նմա, զի մի և նա ևս այնպէս խստութեամբ վարիցի ընդ ժողովրդեաննս։ Զոր և ծանոյց նմա։ Եւ զորպէսն տօնացուցին և՛ս ծանոյց նմա։ Եւ զՄատրասու և այնց կողմանց տօնացուցի կոնդակն ընդ Գ հատ տօնացուցի յղեաց առ նա։ Զմինն վասն իւր. զմինն վասն եկեղեցւոյն իւրեանց, և զմիւսըն վասն Զինչրայու եկեղեցւոյն։ Որում և պատուիրեաց՝ զի թէ նուիրակն անդ ոչ իցէ, զկոնդակն ինքն ընթեռնուլ տացէ յեկեղեցւոջն, և ընդ միոյ տօնացուցին յղեսցէ ի Զինչրա. և գրեսցէ նոցա, զի նոքա ևս ընթերցեալ, յղեսցեն ի Աէյաապատ՝ և անտի ի Դաքա։ Զայս պատուէրս տեղւոյ քահանայիցն ես գրեաց։ Եւ Մշու սրբոյ Կարապետի վանից Առաջնորդ Յօնան վարդապետըն՝ ըստ պատուիրի սրբ. վեհին վասն Է թօփ րաւթայ կտաւոյն և Ի ռուփոյն շնորհակալութեան գիր գրեալ ի վերայ նորա, յղեալ էր առ սրբ. վեհն, յղել առ նա։ Զոր ի թղթոջս եդեալ, առ նա յղեցաք։ Եւ որդւոյ նորին Յարութիւնին ողջոյն գրեաց։ Իսկ և՝ Հնդկաց նուիրակ Փիլիպպոս վարդապետն՝ ի վերայ բարեպաշտ անձանց ոմանց Գ օրհնութեան թուղթ էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Զորս ահա դրեալ յղեաց առ նա։ Որք են։

Թուղթ շնորհակալութեան և միամտութեան առ Ջուղայեցի Աղալարի որդի պարոն Ռաֆայէլն գրեաց ի Սուրաթ։ Զի ի կենդանութեան իւրում՝ վասն իւր և ննջեցելոցն իւրոց իբր հոգեբաժին և քառասնից Ղ թուման էր խոստացեալ Փիլիպպոս վարդապետին յանուն ս. Աթոռոյս։ Եւ դրեալ էր ի Բասրա, զի զայն դրամն՝ ս. Աթոռոյս գանձապետ Միքայէլ Աղային հասուսցեն։ Եւ թուղթ ևս էր գրեալ սրբ. վեհին։ Որոյ ազգաւ և սրբ. վեհն շնորհակալութիւն և միամտութիւն գրեաց նմա, զի զայն Ղ թումանն առ ս. Աթոռս և առ մեզ հասեալ իմացի՝ և միամտեսցի։

Թուղթ ևս մխիթարութեան և՚ շնորհակալութեան առ պ. Զաքարիայն և նորին կողակից Խաթունն գրեաց ի Բումրայի։ Զի վասն հանգուցեալ որդւոյն իւրեանց Յարութիւնին՝ Ա սկիհ պ. Զաքարիայն էր տուեալ Փիլիպպոս վարդապետին յանուն ս. Աթոռոյս, և մէկ կարմիր զառ քիմխայ շուրջառ ևս Խաթունն։ Եւ վասն Փիլիպպոս վարդապետին յանձնարարութիւն գրեաց նոցա։ Եւ Ա հատ տօնացոյց ևս վասն եկեղեցւոյն նոցա յղեաց։ Եւ պատուիրեաց պ. Զաքարիային, զի զտօնացուցի կոնդակն ի Սուրաթու խնդրեալ տարցեն առ իւրեանս։

Թուղթ ևս շնորհակալութեան՝ առ պ. Յովսէփն գրեաց ի Բումրայի։ Զի զՓիլիպպոս վարդապետն ի սէր ընկալեալ էր և շահեալ, և զտեղւոյ նուիրակութիւնն առատութեամբ տալ տուեալ նմա, և ի Բասրա ուղևորեալ զնա։ Եւ պատուէր՝ ի նոյն հարազատութեան մնալ առ ս. Աթոռս և առ մեզ, և թղթոց մերոց երթևեկութեան մուղայէթ լինիլ, և փութով առ Միքայէլ Աղայն յղել ի Բասրա։ Զայն պատուէրն զոր վասն տօնացուցի կոնդակին առ պ. Զաքարիայն գրեաց, զնոյնն սմա ևս գրեաց։

Թուղթ ևս առ Հնդկաց նուիրակ Փիլիպպոս վարդապետն գրեաց։ Ծանուցանե-

լով նմա ի ՌՄԻԲ թուոջն և ի յապր. ԺԹ: Ի ՌՄԻԳ թուոջն և ի փտր. Գ գրեցեալ թղթոց իւրոց հասանիլն առ ինքն: Եւ ինքն ևս յանցեալ թուոջն յապր. Ե՝ ի սեպտ. և ի մրտ. ելման զթուղթս գրելն առ ինքն: Եւ Գ օրհնութեան թուղթսն ըստ խնդրոյ Նորին գրեալ և ի թղթոջս եղեալ յղեաց առ նա, զի յիւրաքանչիւր տեղիսն յղեսցէ: Եւ կրկին պատուէր՝ զի որքան գրամ առ ձեռն բերցէ, ընդ գրոյն իւրոյ առ Միքայէլ Աղայն յղեսցէ ի Բասրա, զի նա անտի առ մեզ հասուսցէ: Զի մինչև ցայժմ յայլ տեղեաց արդիւնք չէր հասուցեալ առ պ. Միքայէլ Աղայն՝ բաց ի Սուրաթուքանի հարիւր ռուփոյն: Եւ զգիրն իւր ևս ի ձեռն այլոց յղէր առ մեզ: Զգալն թղթաշէն փռանկացն ի ս. Աթոռս ի ձեռն Գրիգոր Աղային, և զշինումն թղթատանն ծանոյց նմա: Ծանոյց ևս զորպէսն տօնացուցին՝ զկոնդակսն և զվերոյիշեալ դանձապետաց և այլոց թուղթսն առ Միքայէլ Աղայն յղելն, զի առ ինքն հասուսցէ: Եւ պատուէր՝ զի թէ աւարտեալ իցէ զգործն իւր և ի ճանապարհի իցէ, բարի է: Իսկ թէ չիցէ աւարտեալ զգործն իւր և տակաւին ի վիճակսն իցէ, ի յղելն Միքայէլ Աղային զկոնդակսն զթուղթսն և զտօնացոյցսն առ ինքն, յիւրաքանչիւր տեղիսն հասուցանել, և զպատուականութիւն և զհարկաւորութիւն տօնացուցին և որպէս ընկալնուլն զնա՝ ի կոնդակէն իմանալ, թէ բանիւ և թէ գրով ծանուցանել ամենեցուն: Զի թէպէտ ընծայապէս շնորհեալն ոչ գնահատի ասէ, սակայն՝ զանդրադարձ պահանջէ: Եւ տեղւոյ քահանայից՝ իշխանաց և ժողովրդոցն, և սպասաւորացն նորին ողջոյն գրեաց: Յղեցաւ այս առ Բասրայու Միքայէլ Աղայն ընդ վերոյիշեալ թըղթոցն, յիւրաքանչիւր տեղիսն հասուցանել:

Թուղթ ևս սիրոյ և շնորհակալութեան՝ առ Մուսի Ալէքսանդր Տլաշն գրեաց ի քաղաքն Փունթշերի: Զի զերկոսին թղթաշէն փռանկսն ըստ խնդրոյ Զաքիկենց Գրիգոր Աղային սա էր յղեալ ի ս. Աթոռս: Որք ի վերայ Պօլսոյ եկեալ, ի փետր. ԺԳ մտին յԱթոռս: Եւ ահա ձեռնարկեալ շինեցուցանեն զթղթատունն: Զոր և ծանոյց նմա: Առ որ յղեաց ընդ թղթոյս օծեալ փոքրիկ ոսկեայ և մինալու ս. նշան մի: (Որոյ կշիռն էր Թ մսխալ.) յորում էր և մասն մի ի նշխարաց սրբոյն Գէորգայ զօրավարին: Որոյ զգիրն և զսուրբ նշանն ի թղթոջ Գրիգոր Աղային եղեալ յղեցաք առ նա, զի զթուղթն թարգմանել տայցէ, և ընդ ս. Նշանին առ նա յղեսցէ:

Թուղթ ևս առ Զաքիկենց Գրիգոր Աղայն գրեաց ի Մատրաս: Յիշեցուցանելով նմա քան զայն յառաջ ի մրտ. ելն զթուղթ գրելն մեր առ ինքն, և ի վերայ Պօլսոյ առ Էֆնիազենց մհ. Յարութիւն Աղայն յղելն ի Բասրա, զի անտի առ ինքն հասուսցէ: Եւ զմիտս այն թղթոյն ի կարճոյ ծանոյց նմա: Եւ որքան գիր էր գրեալ նա սրբ. վեհին, և սրբ. վեհն որքան գիր էր գրեալ նմա, զամենայն ի սեպտ. ելն ի վերայ Շիրազու գրեալ թղթոջն միըստմիոջէ ծանոյց նմա: Զոր և այժմ իսկ յիշումն էած: Որպէս ի մարտի ելն խոստացաւ նմա սրբ. վեհն զկատարեալ որպէսն թղթաշէն փռանկացն յետոյ գրել ինքեան, ըստ խոստմանն իւրոյ ահա այժմ գրեաց. զի երկոքին թղթաշէնքն (որոյ միոյն անունն Յովսէփ էր, և միւսոյն Յովաննէս.) ըստ խնդրոյ Մուսի Տլաշին և այս Գրիգոր Աղայիս, և գիտութեամբ Մուսի Գէվոյին ի ՌՋՀԳ թուոջ Փրկչին և յապրիլին ելեալ յերկրէն իւրեանց, ի սոյն թուոջս և ի փտրվ. ԺԳ եկեալ մտին ի ս. Աթոռս: Եւ ճանապարհի խարճն ըստ լատինացւոց հաշուին մինչև ի Պօլիս եղեալ էր 1674 լիւռն. որ ըստ մեր հաշուին լինի 920 ղռուշի չափ: 1612 լիւռն Մուսի Գէվոյի գրովն էին առեալ յիւրեանց երկրումն, և մնացեալն ի Պօլիս սրբ. վեհն տալ ետ նոցա: Եւ ի Պօլիս 600 ղռուշ թաթարին էին տուեալ, որ երեր զնոսա մինչև ի Կարին: 422 ղռուշ ևս իւրեանք էին խարճեալ: 200 ղռուշի չափ ևս ի Պօլիս՝ ադանելոյ՝ ձիոյ այարի և այլ պիտանեաց էին խարճեալ: Եւ մինչ ի Կարնոյ եկին ի Կարս, փաշայն լրտես կարծելով նոցա, ըմբռնեալ էր զնոսա: Զոր լուեալ սրբ. վեհին, գիր գրեաց փաշային և մեծամեծացն տեղւոյն, և ԳԾ ղռուշի չափ դրամ խարճեաց վասն նոցա, մինչև ի Կարսայ բերել ետ զնոսա ի ս. Աթոռս: Որ մինչև յԱթոռս մտանելն, բաց ի յիւրեանց երկրի խարճէն որ Մուսի Գէվոյին գրովն էին առեալ, ի ս. վեհէն առեալն և այլ մասրաֆն եղև 1550 ղռուշ: Եւ յայս յապրիլիս որ տարին լրացաւ, ետ սրբ. վեհն երկուց վարձն 1550 ղռուշ: Յովսէփին վարձն

որ ժեծն էր՝ տարին 950 ղուրուշ էին վարձ կտրեալ, և Յովաննէսն որ փոքրն էր՝ 600 ղուրուշ էին կտրեալ։ Այնպէս էին պայմանեալ նոքա, որ Գ ամիս Գ ամիս առնուցուն իւրեանց վարձն։ Որ մինչև ցայժմ, թէ ճանապարհի խարճն և թէ տարեկան վարձն, սրբ. վեհն 3100 ղուրուշ հասոյց նոցա։ Եւ ազանելի շոր՝ ուտելիք և այլ ինչ որ պիտոյ էր նոցա, սրբ. վեհն տայր նոցա յօժարութեամբ։ Իսկ զԹարճիման Ստեփաննն որ ընդ սոցա յղեալ էին, յայտնի չէր թէ ի՞նչ էին վարձ խոստացեալ նմա։ Եւ սրբ. վեհն գրեաց պատրիարքին, գրել առ ինքն։ Որում և խոստացաւ՝ զայն ևս իմանալ և յետոյ գրել ինքեան։ Ահա ի գարունս ի մրտ. ամսոյն սկսեալ զքարխանայն և զայլ տունսն և զգործիսն շինեցուցանեն։ Տակաւին չեն աւարտեալ։ Մեծ տունն մէկ մեծ եկեղեցւոյ չափ կլինի. տաշեալ քարամբք և կրով։ Երկայնութիւն Ի գազ է, և լայնութիւնն Թ գազ։ Զոր և ծանոյց նմա։ Որում և խոստացաւ, յաւարտելն՝ զանունն իւր և իւրայնոցն գրեցուցանել ի ճակատ քարին որպէս տպագրատաննն։ զՄուսի Գլաշի գիրն և զս. Նշանն յղեաց առ սա, զի զգիրն թարգմանել տացէ, և ընդ ս. Նշանին առ նա յղեսցէ։ Ծանոյց նմա զաւարտումն տօնացուցին։ Եւ Ե հատ տօնացոյց յղեաց առ նա վասն իւր։ Եւ բաց ի սոցանէ՝ զմասն ի ս. Գէորգեայ եդեալ ի մէջ փոքրիկ ոսկեջրեալ արծաթեայ տփոջ, և իւր փոքր կնքոմն և ի թղթոջս եդեալ ևս յղեաց առ նա ի նշան սիրոյ։ Եւ պատուիրեաց նմա, զի զայն մասն իւր ձեռամբն խաչ շինեցուցեալ օծել տացէ, և իւր յիշատակն ի վերայ նորա գրեցուցեալ դիցէ յեկեղեցւոջն իւրեանց ի յաւիտենական յիշատակ իւր և իւրայնոց։ Զայսոսիկ ձեռամբ Էմինազեան մհ. Յարութիւն Աղային յղեաց առ նա։ Իսկ զՄատրասու կոնդակն՝ ընդ Բ հատ տօնացուցի՝ ձեռամբ Միքայէլ Աղային յղեաց առ նա։ Զմին հատն վասն եկեղեցւոյն իւրեանց, և զմիւսն վասն Փեկուայ եկեղեցւոյն։ Եւ պատուիրեաց նմա զկոնդակն ընթեռնուլ տալ յեկեղեցւոջն իւրեանց, և ընդ մին հատ տօնացուցին առ Փեկուայ ժողովուրդսն յղել, զի անդ և՛ս ընթեռնուցուն։ Այլ և՝ ընծայքն զորս վասն սրբ. վեհին յղեալ էր նա առ Էմինազեան մհ. Յարութիւն Աղայն, տակաւին ոչ հասին առ մեզ։ Եւ որպէս ի սեպտ. ելն, և այժմ եւս ծանոյց նմա սրբ. վեհն զհասանելն ընծայիցն իւրոց առ մեզ։ Վասն Ջուղայեցի Աւետիք վարդապետին զանգատ էր գրեալ նա սրբ. վեհին թէ՝ այսպէս և այնպէս է։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ առանց քանօնի և մանկանայի մնացօղն՝ ի հարկէ այնպէս լինի ասէ. բայց ի մտանելն ի մանկանայ, ուղղի։ Վասն Առաջնորդին իւրեանց Մկրտիչ վարդապետին ևս էր զանգատ գրեալ թէ՝ անհոգութիւն առնէ զմէնջ։ Եւ սրբ. վեհն գրեաց թէ՝ ձեր առաջնորդի որպէսն ես լսելոց ես ասէ՝ յայս մօտ աւուրքս, այժմ մնասցէ։ Զի վասն անհնազանդութեան նորին բարկացեալ ի վերայ նորա, գրեաց վէքիլին յղել զնա ի ս. Աթոռս, զի դատեսցէ ըստ արժանւոյն։ Վասն դպրատան՝ աղքատանոցի և եկեղեցւոյ կրկին խնդրեալ էր ի սրբ. վեհէն առ ի հոգալ։ Եւ սրբ. վեհն որպէս ի սեպտ. ելն և այժմ ևս զաղքատութիւն և զանտիրութիւնն երկրիս պատճառելով, անկարելի եցոյց զխնդիրսն նորին։ Քանզի գրէր թէ՝ դպրատուն հաստատեա և գրեա յամենայն տեղիս, որ զմանկունս իւրեանց յուսումն տայցեն։ Եւ այս Որպէս լինի, զի իշխանութիւնն ոչ է ի ձեռս մեր։ Եւ զայլսն այսպէս իմա։ Եւ բաց ի սոցանէ երկու. նորապէս խնդիր ևս էր արարեալ ի սրբ. վեհէն։ Եւ սրբ. վեհէն զայնս ևս անկարելի եցոյց։ Առաջին խնդիրն էր այս թէ՝ յունաց և ասորոց կարգաւորք գան առ մեզ, և կամին յեկեղեցիս մեր մտանել և պատարագ առնել, թողցո՞ւք թէ ոչ։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց ամենևին ոչ ընդունել զնոսա, և ոչ թողուլ պատարագ առնել յեկեղեցիսն իւրեանց։ Զի նոքա զմեզ յեկեղեցին իւրեանց մտանել ոչ թողուն, ո՛ւր մնայ պատարագ առնել։ Երկրորդ խնդիրն նորին էր այս, թէ ի Մատրաս բնակեալ ժողովուրդքն ի շողոյն նեղացեալք, խնդրեն ամենեքեան՝ զի Զատկի և ծննդեան խման աւուրց պատարագն ի կէս աւուրն լիցի։ Եւ որովհետև ի նախնեաց հետէ այն երկուց աւուրց պատարագն ի ճրագալուցին պարտի լինել, վասն որոյ՝ և սրբ. վեհն ոչ ետ նոցա հրաման։ Զի այս խնդիրս ընդդէմ էր Հայրապետաց կանոնին։ Եւ զորպէսն Փիլիպպոս վարդապետին էհարց՝ թէ ո՞ւր է, և ո՞րպէս։ Զի ի վաղուց հետէ դիր ոչ առնումք ի նմանէ։ Վասն

մահուանն տէր Աւետիքին մխիթարութիւն գրեաց նմա։ Եւ որդւոցն նորին զմխիթարութիւն գրելն ես ծանոյց։ Ցղեցաւ այս մհ. Ցարութիւնին յղել առ նա։

Թուղթ ես առ Էֆիազեան մհ. Ցարութիւն Աղայն ղրեաց։ Ծանուցանելով նմա քան զայս յառաջ յապր. Ա և ի Իէ վասն հանգուցեալ շօոօթեցի Ղազարի բանին ի վերայ Պօլսոյ զթուղթս գրելն առ ինքն, և առ Միքայէլ Աղայն։ Վասն մարգարաեայ թասպեհին կրկին միամտութիւն գրեաց նմա, զի առ մեզ հասեալ իմացի՝ և միամաեսցի։ Զի ընգ ս. Երուսաղէմայ նուիրակ Ցովաննէս վարդապետին ղոր յղեալ էր, առ մեզ հասոյց նա։ Գրեաց Միքայէլ Աղային՝ զգիրն տալ նմա։ Զոր ե ծանոյց նմա։ Եւ խոստացեալ էր սրբ. վեհին զղակասն թասպեհի ես յղել, բայց սրբ. վեհն ոչ խնդրեաց, զի կարի թանգագին էր յղեալն։ Եւ վասն Գրիգոր Աղայի յղեալ ընծայիցն ի սեպա. ելն գրեաց նմա յղել ի Շիրազ առ Աւեախս վարդապետն, զի ընդ իւր բերցէ։ Որոյ աղագաւ կրկին գրեաց նմա, զի թէ յղեալ է առ Աւեախս վարդապեան, բարի է. և թէ ոչ՝ ի ձեռն հաւատարիմ եկողաց առ՝մեզ հասուսցէ։ Գրիգոր Աղայի գիրն ե Ե հատ տօնացոյցն ի մէջ մուշամբայի եդեալ ե կնքեալ, ձեռամբ տէր Գէորգին յղեցաք առ սա, առ նա յղել։ Մէկ հատ տօնացոյց վասն Բասրայի եկեղեցւոյն յղեցաք, ե Ա հատ ես վասն սորա։ Եւ որդւոյ նորին պ. Ստեփանին ես ողջոյն գրեաց։

Թուղթ ես ի Բասրա՝ առ ս. Աթոռոյս գանձապետ ե վէքիլ Միքայէլ Աղայն գրեաց։ Եւ ծանոյց նմա քան զայս յառաջ ի յապր. Ա ե ի Իէ վասն շօոօթեցի հանգուցեալ Ղազարի կայիցն զթուղթս գրելն առ ինքն և առ մհ. Ցարութիւն Աղայն, զի տիրեսցեն ընչիցն նորա, ե ի ս. Աթոռս հասուսցեն։ Եւ պատուէր՝ գրել զպատասխանիս այն թղթոցն ի միամտութիւն իւր։ Վասն հոգեբաժնին, Փիլիպպոս ե Ցովսէփ վարդապետաց արդեանցն՝ (Ա) զոր ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն էր հասուցեալ, կրկին միամտութիւն գրեաց նմա, զի առ մեզ հասեալ իմացի՝ և միամտեսցի։ յԱղօթից գրեանցն քանի մի վեր էր առեալ վասն որդւոյն իւրոյ Ցովսէփին, և գրեալ էր սրբ. վեհին։ Եւ Սրբ. վեհն հաճեցաւ ընդ այն։ Եւ պատուիրեաց նմա՝ զգինն մարգարտեայ թասպեհին տալ Ցարութիւն Աղային, և զորքանութիւն տուեալ ղրամոյն գրել ինքեան։ Եւ տէր Գէորգի ճանապարհի խարճին կողմանէ կարի տարակուսեալ էր նա. ե սրբ. վեհն միամտեցոյց զնա թէ միայն այն Զ թումանն է հասեալ առ տէր Գէորգին ի քէն. զոր դու տուեալ ես առ է, և գրեալ ի դէվթէրդ։ Այլ փող չէ առեալ առ է նա ի քո մարգկանցն։ Զի Բաղդատու գիւմրիւկն ե այլ խարճն ԳՃԿԱ ղռշ. էր եղեալ ձեռամբ պ. Մանուկին։ ԲՃԶԲ ղռուշին քսուր էին վեր առեալ ի մեր քսրէն, ե ԽԳ ղռուշն տէր Գէորգն էր տուեալ պ. Մանուկին։ Զոր դրեալ էին սրբ. վեհին։ Իսկ և՝ ձեռամբ տէր Գէորգին Խ հատ տօնացոյց յղեցաք ի Հնդիկս։ Որոց Ժ հատն Ժ եկեղեցեացն, այսինքն Ա հատն Բաղդատու եկեղեցւոյն, Ա Բասրայու, Ա Մատրասու, Ա Փեկուայ, Ա Սուրաթու, Ա Կալկաթու, Ա Զինչրայու, Ա Դաքուայ, Ա Սէյտապատու, Ա Բանկալուայ, Ե հատն Զաքիկենց Գրիգոր Աղային, Ե հատն Ցարութիւն Միքայէլ Պետրոս և Շամիր Աղայիցն և Փիլիպպոս վարդապետին, ե Ի հատն վասն ծախելոյ։ Գրիգոր Աղայի գիրն ե Ե հատ տօնացոյցն ի ձեռն Ցարութիւն Աղային յղեցաք ընգ գրոյն և Ա հատ տօնացուցին։ Բաղդատու և Բասրայու կոնդակն ե Ա տօնացոյց ի ձեռն Ալէքսան Աղային յղեցաք ի Բաղդատ։ Եւ գրեցաք նմա, որ յետ ընթեռնլոյն զկոնդակն յղեսցէ ի Բասրա։ Եւ զմնացեալ տօնացոյցսն՝ զկոնդակսն, ե զայլ գրեանսն ի ձեռն Միքայէլ Աղային յղեցաք, զի տեղւոյ կոնդակն յեկեղեցւոջն ընթեռնուլ տացէ, և ձեռամբ քահանայիցն։ Ա հատ տօնացոյց տացէ եկեղեցւոյն իւրեանց։ Մատրասու կոնդակն ընդ Բ հատ տօնացուցի ի ձեռն Զաքիկենց Գրիգոր Աղային յղեսցէ, զԱ հատն վասն տեղւոյ եկեղեցւոյն, և զմիւսն վասն Փեկուայ, Սուրաթու կոնդակն և Ա հատ տօնացոյց ի ձեռն մեր գանձապետ պ. Նիկողայոսին յղեսցէ ընդ գրոյն։ Կալկաթու կոնդակն և Ա տօնացոյց ի ձեռն տեղւոյ քահանայիցն յղեսցէ ընգ գրոյն իւրեանց, և գրեսցեն նոցա զի յետ ընթեռնլոյն զկոնդակն, յղեսցեն ի Զինչրայ. և ի Զինչրայու ի Սէյտապատ, ե անտի ի Դաքա։ Մէկ մէկ տօնացոյց և Ա Ա գիր ես ի Սէյտապատ և ի Դաքա մեր գանձապետ Սէթ և

Միքայէլ Աղայիցն յղեսցէ վասն եկեղեցեացն իւրեանց, և գրեսցէ նոցա, զի զկոնդակն ի հալկաթու քահանայիցն խնդրեալ առցեն առ իւրեանս, և անդ ե՛ս ընթեռնուցումն։ Իսկ թէ յայն կողմունսն չէն եկեղեցիք գոն, նոցա ես Ա Ա հատ յղեսցէ։ Բ գիր և Ա տօնացոյց ի Բումպայի պ. Զաքարիային և պ. Ցովսէփին յղեսցէ վասն եկեղեցւոյն իւրեանց։ Իսկ թէ յայն կողմունսն չէն եկեղեցիք գոն որպէս զայլսն, նոցա ես Ա Ա հատ յղեսցէ։ Ա հատ ես վասն իւր վեր առցէ։ Ա գիր և Ա տօնացոյց ի Մատրաս պ. Շամիրին, Ա գիր և Ա տօնացոյց ի Կալկաթայ Պետրոս Աղային, Ա գիր և Ա տօնացոյց ես Փիլիպպոս վարդապետին յղեսցէ։ Իսկ թէ Փիլիպպոս վարդապետն տակաւին յայն կողմունսն իցէ, զտեղւոյ կոնդակսն և զտօնացոյցսն ի ձեռն նորա յղեսցէ։ Եւ զՄնացեալ տօնացոյցսն առ ինքն պահեալ ծախեսցէ, և ուրոյն պահեսցէ, և մի խառնեսցէ ընդ այլ արդեանցն ս. Աթոռոյս։ Վասն տէր Գէորգին կրկին յանձնարարութիւն գրեաց, Ցղեցան այսոքիկ ընդ տէր Գէորգին։ Որ եւ ընդ Նախիջեւանու նորոգ նուիրակ Ահարօն վարդապետին, ի մայիսի ԻԶ։

Եկաւ հասաւ ի Ցուռումելին։

Թուղթ օրհնութեան գրեաց սրբ. վեհն առ Շահզատայ յանուն կին ոՒ։ Որ ընդ Թոմայ անուամբ ուխտաւորի միոյ ողորմութիւն էր յղեալ ի սուրբ Աթոռս։ (Ա.) Եւ Թոմային, ի մայիսի ԻԷ։

Ցղելն սրբ. վեհին զԵղեզածորցի Ահարօն վարդապետն նուիրակ ի Նախիջեան։

Կարդեաց սրբ. վեհն զՆախիջևանցի Ահարօն վարդապետն ի վերայ Նախիջեւանու երկրիս, ե Նուիրակական կոնդակաւ և Սրբալոյս Մեռոնաւ յղեաց անդ։ Կոնդակ ես ետ նմա վասն նորատիպ տօնացուցին։

Թուղթ մի ես առ Ագուլեաց ս. Թօմայի Առաքելոյ Վանից Առաջնորդ Թօմայ վարդապետն գրեաց։ Որ էր վասն Ահարօն վարդապետին յանձնարարութիւն, և վասն նոր տօնացուցի գործածութեան պատուէր։ Եւ Պետրոս վարդապետին ևս ոգջոյն գրեաց։

Թուղթ ես առ Երնջակու ս. Կարապետի Վանից Առաջնորդ Կարապետ վարդապետն, առ Նախավկայի Վանից Առաջնորդ Գրիգոր վարդապետն, և առ Աստապատու Առաջնորդ Միքայէլ վարդապետն գրեաց ըստ այսմ մտաց։ Եւ չորիցն Գ տօնացոյց յղեաց։ Ա տօնացոյց ես Ահարօն վարդապետին ետ ի գնալն աստի։ Որ եւ ընդ տէր Գէորգին ի մայիսի ԻԸ։

ՄԽԸ.

Ի Պօլիս եւ ի Կարին Թուղթք՝ վասն Թղթաշինաց բանից եւ այլ ինչ հոգալեաց։

Թղթաշէն ֆռանկքն վասն թղթաշինութեան գործեացն՝ և քսբոցն և տղային իւրեանց վերստին թուղթ դրեալ, ետուն սրբ. վեհին, զի ի Պօլիս և ի յերկիրն իւրեանց յղեսցէ։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն զթուղթ մի գրեաց ի վերայ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետին, և զֆռանկաց գրեանսն ի թղթոջս եդեալ յղեաց առ նա տալ Թօմայ Աղային, զի փութով յերկիրն նոցա յղեսցէ, և մուղայէթ լեալ զգործիսն նոցա բերել տացէ, և ընդ քսրոյն և ընդ տղային փութով ի ս. Աթոռս առաքեսցէ։ Վասն նոր ֆարմանացն ևս քանի մի սուրաթ հոգացեալ յղեսցէ։ Եւ զորպէսն թղթաշինաց հաշուին՝ թարճիմանի վարձուն, և զպատասխանիս թղթոցն ես դրեսցէ։ Նաև՝ մէկ նոր լաւ թարճիման ևս գտեալ յղեսցէ։

Թուղթ մի ևս առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն գրեաց, և զՊօլսոյ պահարանն յղեաց առ նա, զի ընդ մէնզիլի փութով առ պատրիարքն հասուսցէ։ Եւ վասն մուրչակտամացու քեաթանին զոր ըստ խնդրոյն մերոյ առեալ յղեալ էր առ մեզ, միամտութիւն գրեաց նմա, զի առ մեզ հասեալ իմացի՝ և միամտեսցի։ Զօրս տէր Գէորգին առ տէր Վահանն յղեցաք, և դրեցաք նմա, զի կամ ընդ հաւատարիմ մարդոյ, և կամ ընդ յատուկ փայեկի, ի Կարին առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն յղեսցէ։ Մէկ հատ տօնացոյց տէր Գէորգին ետուք. Ա հատ ևս ձեռամբ տէր Գէորգին՝ տէր Վահանին յղեցաք։ Հնդկաց գրեանքն թէպէտ մայիս ամսոյս ԻԶ գրեցան,

բայց տէր Գէորգն յետ երկուց աւուրց գնաց աստի ընդ Ահարօն վարդապետին։ Որք ելին ի միասին, ի մայիսի ԻԸ։

ԽՄԹ.

Ի Թիֆլիզ՝ առ տեղապահ Մկրտիչ վարդապետն պատուէր վասն տէր Ղազարի տալեացն, եւ այլ ինչ քանից։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Մկրտիչ վարդապետն։ Զի Հաշտարխանն հին նուիրակ Մինաս վարդապետն մինչ էր ի գործ նուիրակութեան ս. Աթոռոյս, ի նուիրական արդեանցն իւրոց Թիֆլիզեցի տէր Ղազարին դրամ էր փոխ տուեալ։ (2) Եւ այժմ լուաք թէ՝ տէր Ղազարն ի Հաշտարխանու ի դառնալն ի Թիֆլիզ կոտր է անկեալ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն գրեաց Մկրտիչ վարդապետին, զի ջանասցէ առնուլ զդրամն ի տէր Ղազարէն։ Իսկ թէ զբոլորն (2) ոչ կարիցէ առնուլ, զմասն (I) գոնէ առցէ։ Հերակլ Արքայն մերձ Հախպատու վանիցն արծաթահան էր գտեալ, ուստի՝ և խնդիր էր արծաթագործաց վասն նորա։ Վասնորոյ՝ և գրեալ ի Կիւմիշխանայն, արծաթագործ էր խնդրեալ։ Եւ ըստ խնդրոյ նորին՝ քանի մի արծաթագործ եկեալ ի Կիւմիշխանայու, երթային ի Թիֆլիզ։ Որք էին ազգաւ յոյն։ Եւ սրբ. վեհն մինչ լուաւ գդալն նոցա աստ, վասն խաթեր Արքային առ ինքն կոչեալ շահեաց զնոսա, և մեր Միրզայի բարեկամ տղային յանձնեաց զնոսա, զի տարեալ անվնաս ի Թիֆլիզ հասուսցէ։ Եւ զորպէսն նոցա գրեաց Մկրտիչ վարդապետին ծանուցանել Արքային։ Գրեաց և՝ զի մէկ լաւ թարճիման գտեալ բերցէ ընդ իւր։ Ցղեցաւ այս ընդ մեր Միրզայի բարեկամ տղային։ Որ ել ընդ արծաթագործացն ի մայիսի ԻԹ։

ՄՔ.

Բացասութիւն խնդրոյ իշխանացն Զմիւռնոյ վասն արգելմանն Ղուկաս պետին։ Եւ պատուէր Ղուկաս պետին գալ ի ս. Աթոռս։ Ընդ նոսին եւ այլ եւս թուղթք ի Թօխաթ եւ ի Կարին, վասն զանազան իրակութեանց։

Մինչև ցայժմ ԺԱ ամէ՝ յորս սրբ. վեհն զՂուկաս վարդապետն նուիրակ և Առաջնորդ է յղեալ ի Զմիւռին։ Եւ թէ զի՞նչ է պատճառն արգելման նորին անդ յայսքան ժամանակս, ահա ասացից։ Զի մինչ զառաջին գործն նուիրակութեան զերծաւնա, քաղաքացիքն բազմակնիք թղթով խնդրեցին ի սրբ. վեհէն թէ՝ յայս անգամ ևս զսա կացո մեզ նուիրակ և Առաջնորդ։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյ նոցին արար այնպէս։ Եւ ի վճարելն նորա զերկրորդ գործն, բազմիցս անգամ գրեաց սրբ. վեհին զաղերսանս, թէ զայլ ոք յղեա աստ, և ես եկից ի ս. դահդ։ Բայց որովհետև այն կողմունքն էին յայնժամ ի մեծի վրդովման, և ճանապարհք կողմանցն փակեցեալ էին, ոչ զայլ ոք կարաց յղել աստի, և ոչ զնա բերել կարաց. այլ գրեաց նմա ժամանակ մի համբերել, մինչև տեսցէ, թէ կարէ յղել անդ զնոր նուիրակ և Առաջնորդ, ապա ինքն եկեսցէ։ Եւ վասն յաճախելոյ խռովութեանցն մինչ ոչ կարաց սրբ. վեհն զայլ ոք յղել անդ, ապա երրորդ անգամ կարգեաց զնա նուիրակ և Առաջնորդ։ Եւ մինչ նա զայն գործն յաւարտիլ մերձեցոյց, դարձեալ գրեաց սրբ. վեհին զաղերսանս, թէ զիս տար աստի, և զայլ ոք յղեա։ Եւ սրբ. վեհն գրեաց առ նա զյուսադրութիւնս, թէ յորժամ զգործդ աւարտիցես, գրեա մեզ՝ զի նոր նուիրակ և Առաջնորդ յղեսցուք յայդ վիճակ, և դու եկ այսր։ Եւ որովհետև սրբ. վեհն զնա բերելոց էր ի ս. Աթոռս, վասնորոյ՝ այժմ զՆսայի վարդապետն նուիրակ և Առաջնորդ արարեալ Զմիւռնոյ, և զկոնդակն ղրեցուցեալ, մինչ կամէր յղել զնա անդ, յայսմ միջոցի բազմակնիք մահսար եկն առ սրբ. վեհն ի Զմիւռնոյ իշխանացն, որք բազմաւ թախանձանօք դրեալ էին սրբ. վեհին, զՂուկաս վարդապետն վերստին նուիրակ և առաջնորդ առնել ինքեանց։ Այսպէս դրելով թէ՝ որպէս զԶաքարիա վարդապետն Պօլսեցւոցն բաշխեցեր, զՂուկաս վարդապետն ևս մեզ բաշխեա։ Բայց սրբ. վեհն ոչ լուաւ նոցա, այլ զթուղթ ղրեաց Աստուածատուր Աւետիք՝ Գալուստ և Առաքել Աղայիցն։ Այլ և Խօջայ Ղուկասին, Խօջայ Դանիէլ, մհ. Կարապետ, Խօջայ Մալխաս, Խօջայ Երեմիա, մհ. Սէլում, և այլ ամենայն գլխաւոր իշխանացն։ Ծանուցանելով նոցա զխնդիր Ղուկաս վարդապետին առ ի գալ ի

ս. Աթոռս, և ղպատրաստութիւն նոր նուիրակին։ Որպէս ի վերդ ասացաք։ Գրեաց ևս թէ՝ էհաս առ մեզ բաղմակնիք թուղթն ձեր առ մեզ։ Որով խնդրէք ի մէնջ զՂուկաս վարդապետն վերստին ձեզ նուիրակ և Առաջնորդ առնել։ Զոր իբրև ընթերցաք առ մեզ, ոչ սակաւ զարմացաք։ Զի թէ դորա դիտութեամբն գրեցիք ղայս առ մեզ, ապա որպէս էր, որ դա քանիցս անգամ թախանձանօք խնդրեաց ի մէնջ զինքն բերել աստ, և զայլ ոք յղել, և այժմ այդպէս կամի։ Իսկ թէ ծածուկ գրեցիք ղայս և ինքն չիմացաւ, (որպէս և գրէին ևս թէ՝ մեք ծածուկ գրեցաք, ինքն չգիտէ.) վասն Ե՞ր այդպէս առնէիք։ Զի պարտ էր առ ձեզ նախ զիւր կամսն իմանալ, և ապա թէ այդպէս առնել։ Զի ակամայն ոչ արդիւնաւորել ջանայ առ զգործն։ Իսկ այն զոր գրէք առ, թէ որպէս զՋաքարիա վարդապետն Պօլսոյ քաղաքին բաշխեցեր, զսա ևս մեզ բաշխեա։ Առ այդ լուարուք առ։ Պօլսեցիքն չունելով առ զՊատրիարքութեան արժանաւոր անձն ոք, և մանաւանդ յայդ կողմնացի սևագլխացն հոգւով չափ ղղուեալ, և մերայնոցն կարօտեալ, խնդրեցին առ ի մէնջ զՋաքարիա վարդապետն շնորհել ինքեանց, զի պատրիարք լիցի. և մեք ևս կատարեցաք առ զխնդիրս նոցա։ Իսկ դուք ոչ էք առ նման Պօլսեցւոցն որ ի յօտար սևագլխաց ղղուեալ, ի ս. Աթոռոյս խնդրիցէք ձեզ Առաջնորդ։ Այլ ձեր Առաջնորդն ի ս. Աթոռոյս է եկեալ մինչև ցարդ, և այսուհետև ևս գալոց է։ Դեռ յայն տեղն չէք հասեալ առ որ լաւին կարօտիցէք, զի մինչև ցայժմ վատ մարդ չէ եկեալ առ առ ձեզ Առաջնորդ և նուիրակ։ Ով ոք որ եկեալ են, մին քան զմին լաւ են լեալ, և այսուհետև ևս այնպէս է լինելոց շնորհիւ Տեառն։ Զի եթէ զլաւն առ ձեզ չյղիցեմք առ, այլ Ձեր եմք յղելոց՝ որ քան զձեռ լաւ լիցի, զի ս. Աթոռոյս տէրունի վիճակն դուք էք։ Եւ այլք այսպիսիք բանք շատ։ Եւ վերջապէս հարկիւ պատուէր՝ դի դՂուկաս վարդապետն յղեսցեն ի ս. Աթոռս։ Եւ խոստացաւ նոցա՝ զկնի գալստեան Ղուկաս վարդապետին ի ս. Աթոռս, վասն ընծայեալ արդեանցն զթուղթ շնորհակալութեան և միամտութեան գրել ինքեանց։ Որոյ օրինակն է ի բոլորադրահամար աեարոջն, յերեսն ՇԻԵ, ՇԻԶ։

Թուղթ ևս յատկապէս առ Ալրօղլի Աստուածատուր Աղայն դրեաց ի պատասխանի թղթոյն։ Զի վասն Ղուկաս վարդապետին նա ևւս էր իրիջայի գիր դրեալ առ սրբ վեհն, վերստին նուիրակ և Առաջնորդ առնել զնա ինքեանց։ Բայց սրբ. վեհն զխնդիր նորին և՛ս բացասաց, պատուիրելով նմա զՂուկաս վարդապետն փութով յղել ի ս. Աթոռս առ մեզ։ (ՇԻԸ)։

Թուղթ ևս առ Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Ղուկաս վարդապետն գրեաց։ Ծանուցանելով նմա զմիտս բաղմակնիք մահսարին, զոր իշխանքն տեղւոյն գրեալ էին վասն իւր։ Եւ ինքն ևս զրացասաց պատասխանիս գրելն առ նոսա։ Եւ պատուէր՝ զի փութով աւարտումն տուեալ գործոյն, ելեալ եկեսցէ ի ս. Աթոռս։ Եւ յառաջագոյն խոստացեալ սրբ. վեհին, թէ ի փռանկաց թուղթ եմ բերելոց։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն գրեաց նմա, զի ի ղալն իւր եթէ թուղթն եկեալ իցէ ի Ֆռանկստանու, բերցէ ընդ իւր. իսկ թէ չիցէ եկեալ, ասասցէ Աստուածատուր Աղային, որ նա յետոյ յղեսցէ առ մեզ։ Ի ձեռս Զմիւռնոյ իշխանացն յղեցաւ այս տալ նմա (ՇԻԷ)։

Թուղթ ևս առ ս. Աթոռոյս գանձապետ մհ. Աղամջանի վէքիլ մհ. Աւետիսն գրեաց։ Հարցումն առնելով վասն Զմիւռնոյ ըեռանցն թէ զի՞նչ արար։ Զի մհ. Աիմէօնն զրեռինսն յանձնեալ էր նմա յղել ի Կարին առ մհ. Փիլիպպոսն. իսկ նա տակաւին չէր յղեալ։ Եւ գրագիր Յովաննէսն ըստ գրեցելոյն մերոյ ի Պօլսոյ եկեալ էր ի Թօխաթ, և անտի գալոց էր ի ս. Աթոռս, բայց խարճի չունէր։ Վասնորոյ ի սրբ. վեհէն խարճի էր խնդրեալ վասն իւր։ Եւ սրբ. վեհին գթացեալ ի նա, գրեաց մհ. Աւետիքին խարճի տալ նմա, (1) և ի ս. Աթոռս յղել։ Յղեցաւ այս առ մհ. Սիմէօնն տալ նմա։

Թուղթ ևս՝ ի Թօխաթ առ մհ. Սիմէօնն գրեաց ի պատասխանի ի մայիսի Ն գրեալ թղթոյն։ Զի Զմիւռնոյ իշխանքն ղրաղմակնիք մահսարն զոր վասն Ղուկաս վարդապետին գրեալ էին, յղեալ էին առ նա յղել ի ս. Աթոռս։ Եւ նա ևս ընդ Մշեցի Մուրատ յանուն փայեկի միոյ յղեալ էր առ սրբ. վեհն։ Եւ սրբ. վեհն զպատասխանի մահսարին և զայլ թուղթս ևս գրեալ, ընդ նոյն փայեկին յղեաց

առ նա՝ յղել ի Զմիւռին ի ձեռս տեղւոյ իշխանացն։ Եւ ի Զմիւռնոյ եկեալ Բ բեռանցն աղաղաւ գրէր թէ՝ մհ. Աղամջանի վէքիլ ժհ. Աւետիքին յանձնեցի ղրեոինսն, զի ի սուրբ Աթոռդ հասուսցէ։ Որոյ աղագաւ և միամտութեան գիր խնդրէր ի սրբ. վեհէն։ Բայց մհ. Աւետիքն դեռ ոչ էր յղեալ ղրեոինսն առ մեզ, զի սրբ. վեհն մհ. Սիմէօնին միամտութիւն գրիցէր։ Եւ խոստացաւ նմա՝ ի հասանիլ բեռանցն առ մեզ, յետոյ միամտութիւն գրել ինքեան։ Իսկ Ե՝ յետ գրեցման թղթոյս, գիր եկն առ սրբ. վեհն ի Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսէն. որ Զմիւռնոյ բեռանցն աղագաւ ղրէր թէ՝ ի Թօխաթու դեռ ոչ է հասեալ առ մեզ։ Եւ սրբ. վեհն գրեաց ժհ. Սիմէօնին թէ՝ դու ղրես ասէ թէ ի ժայիսի Է ուղևորեցի ղրեոինսն. իսկ ժհ. Փիլիպպոսն ի մյսի ԻԶ ըն գրէ, թէ տակաւին ոչ հասին առ մեզ Զմիւռնոյ ըեռինքն։ Զմէնջ ողջոյն տուր ասէ մհ. Աւետիքին, և ընդ միմեանս տեղեկացէք, թէ ուր մնացին և զի՞նչ եղեն ըեռինքն։ Մհ. Աղամջանին եւս ողջոյն տուր ասէ զմէնջ եթէ ի Պօլսոյ եկեալ իցէ յայդր։ Զմիւռնոյ ղրեանքն առ սա յղեցաւ ընդ փայեկին, յղել ի ձեռս իշխանացն տեղւոյն։ Եւ զմհ. Աւետիքի գիրն ևս եղեցաք առ սա, տալ նմա։

Թուղթ մի ևս առ Մուրտիկզատէ ժհ. Փիլիպպոսն, ի պատասխանի ի մյսի ԻԴ գրեալ թղթոյն։ Զոր ընդ Պօլսոյ նոր գրեանցն յղեալ էր առ մեզ։ Եւ սրբ. վեհն խոստացաւ նմա, թէ յետ աւուրց ինչ ընդ նոր Նուիրակին տեղւոյդ երկարապէս դրելոց եմք զպատասխանիս նոցին, և յղելոց առ քեզ։ Եւ դրէր թէ՝ Առաքելն մէկ թարճիման է բերելոց ընդ իւր։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց նմա, թէ գրեա Առաքելին, որ շուտով բերցէ զթարճիմանն և դու ևս յղեա ասէ զնա ի Բայազիտ առ տէր Վահանն, և պատուիրեա նմա, որ մի ումեք յայտնեսցէ զթարճիման գոլն իւր, այլ ուխտի անուամբ եկեսցէ ի ս. Աթոռս։ Այս ուրոյն յղեցաւ առ նա։ Ցղեցան այսոքիկ ընդ Թօխաթու եկեալ Մշեցի Մուբատ փայեկին։ Որ եկ ի ս. Աթոռոյս ի յնս. Գ։

ՄԹԱ.

Առաքելն սրբ. վեհին զՄեսրօպ վարդապետն նուիրակ ի Կարին, եւ վասն նորա զյանձնարարութիւն գրելն ի վերայ երկրին այնմիկ։ Ընդ նմին եւ թուղթք եւս ի Սաղիմ ի Պօլիս եւ ի Թօխաթ, վասն տօնացուցին, եւ այլ ինչ իրակութեանց։

Կարգեաց սրբ. վեհն զՄեսրոպ վարդապետն նուիրակ ի վերայ Կարնոյ քաղաքին և բոլոր շրջակայ վիճակացն նորին, և յղեաց անդ։ Եւ ընդ նմա որ ինչ թուղթք դրեցան ի Կարին և ի շրջակայսն նորին և յայլ տեղիս, կարգաւ ցուցանին ի ներքոյ։ Որք են։ Նուիրակական կոնդակ ետուք Մեսրոպ վարդապետին հանդերձ...հոխայ սրբալոյս Մեռոնաւ։ Տօնացուցի կոնդակ, և ԺԲ հատ տօնացոյց ե ետուք նմա։ Ցորոց մինն իւրեան. Ա Կարնոյ Առաջնորդ Ցարութիւն վարդապետին. Ա մեր վէքիլ տէր Մանուէլին. Ա Եփրիկեան մհ. Գրիգորին, Բ հատ Կարնոյ եկեղեցւոյն. Զ հատ Բաբերդու, Կիւմիշխանայու, Էրզնկանու, Թամզարայու, Շապինղարահիսարու՝ ե Տրապիզոնու եկեղեցեացն։ Զորս յիւրաքանչիւր տեղիսն ևս եմք յիշելոց։ Կոնդակ ևս պատուիրի վասն օրինազանցութեանց ոմանց առ Կարնոյ Աւագ քահանայսն ե գլխաւոր իշխանսն գրեցաւ։ Զի ոմանք բաշիբօշ եպիսկոպոսք և սեազլուխք ոչ ունելով զյատուկ վիճակս և զժողովուրդս, մտանէին ի մէջ նոցա, ե անխտիր զքահանայս ձեռնադրէին. ե այն ես ոչ ի յեկեղեցւոջ և ի հանդիսի, այլ ի տան, ի յանկիւնս, և ուր կամէին։ Եւ ի նոցանէ ձեռնադրեցեալ սուտ քահանայքն ես ուսեալք ի նոցանէ, ի տան՝ ի գիշերի և ի ծածուկ զխորհուրդս կատարէին։ Զոր իմացեալ աւագ քահանայիցն և իշխանացն տեղւոյն, ոչ խօսէին ընաւ. և րաց ի չխօսելոյն, այնպիսեաց խաբեբայ և սուտ եպիսկոպոսաց զգեստն և միւռոնն ինքեանք տային յեկեղեցւոյն իւրեանց։ Եւ այսպիսի անկարգութիւն գործողաց մինն էր Կարմիր Վանից միաբան Կարապետ վարդապետն. զի թողեալ զվանքն իւր, եկեալ էր ի քաղաքն. և ի տունս ընտանեաց իւրոց բնակէր. ե այսպիսի անկարգ ձեռնադրութիւնս առնէր։ Զորս ի լսելն սրբ. վեհին, հարկիւ պատուէր գրեաց աւագ քահանայիցն և

գլխաւոր իշխանացն տեղւոյն։ Զի՛ զայնպիսի անկարգութիւնսն և զգործօղսն ատեացեն, և միաբանութեամբ Առաջնորդին իւրեանց Յարութիւն վարդապետին հերքեսցեն զայնպիսիսն, և չթողուցուն ընաւ. և ի լինիլն, միաբանութեամբ վրէժխնդիր լիցին։ Եւ այսուհետև հոգևոր և մարմնաւոր իշխանութեամբ զինքն յատուկ Առաջնորդ իմասցեն իւրեանց, և զՅարութիւն վարդապետն իւրեան վէքիլ և փոխանորդ գիտասցեն։ Որում ներհակքն մեզ են ասէ ներհակք։ Եւ բաց ի դմանէ՝ այլ վանից և օտար վիճակի եպիսկոպոս, և կամ բաշիբօշ սևագլուխ ոչ ունի ասէ հրաման և իշխանութիւն ի քաղաքդ և ի վիճակդ յայդ ձեռնադրութիւն ինչ և կամ զեպիսկոպոսական գործ կատարել։ Նոյնպէս՝ և Թարց գիտութեան դորին ոչ պարտի ասէ խորհուրդ ինչ կատարել ի վիճակոջդ, կամ ի ծածուկ, և կամ յայտնի։ Այնպիսի գողունի խորհրդապղծօքն Թէպէտ են ասէ ընդ անիծիւք, սակայն՝ և ես ի լսելն իմ, այսուհետև վերստին նզովելոց եմ ասէ ըստ հոգւոյն և ըստ մարմնոյն. Եւ վասն Կարմիր վանից Կարապետ վարդապետին պատուէր գրեաց նոցա, զի յղեսցեն զնա ի ս. Աթոռս։ Եւ վասն Մեսրոպ վարդապետին ևս յանձնարարութիւն գրեաց նոցա։ Եւ ընդ Մեսրոպ վարդապետին Բ հատ տօնացոյց յղեաց նոցա վասն եկեղեցւոյն իւրեանց։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յեբեան ՌԽԶ, ՌԽԷ։ Յղեցաւ այս առ Առաջնորդն և իշխանսն տեղւոյն։

Թուղթ ևս պատուիրի՝ յատկապէս Կարնոյ համայն քահանայիցն գրեաց։ Զի զգուշացեալ, այսուհետև մի ևս զօրինազանցութիւնս և զանկարգութիւնս առնիցեն։ Եւ սպառնալիք՝ մինչ ոչ այսպէս արասցեն։

Թուղթ ևս առ Կարմիր վանից միաբան Կարապետ վարդապետն։ (Որ ի պատմ. ՌՄԻ թուոջն և ի դեկտ. ելն ի Թղթոջ Արբահամ վարդապետին յիշեցեալ է.) մեղադրանօք յիշեցուցանելով և առ երես բերելով զանցեալ չարիսն և զանկարգ արարմունս նորին։ Եւ ընդ նմին յուսադրախառն պատուէր՝ զի Թարց այլ և այլ պատճառադրութեանց ելեալ եկեսցէ ի ս. Աթոռս։ Զի ի գալդ՝ եթէ ի ս. Աթոռոջս և թէ արտաքին քեզ պատշաճ գործ ինչ խնդրեսցես ասէ, տաց քեզ։ Իսկ թէ յամառեալ ի չարիսդ ոչ եկեսցես ասէ ի ս. Աթոռս, լուծեցեալ ես ասէ յեպիսկոպոսական կարգէդ, և ոչ ունիս ասէ ի մէնջ հրաման եպիսկոպոսութիւն առնելոյ։ Տեղւոյ իշխանացն զգրելն վասն իւր, ծանոյց նմա։

Թուղթ ևս առ Կարմիր վանից Առաջնորդ Յակոբ վարդապետն։ Պատուէր՝ զի այսուհետև յԱխլցխա սևագլուխ և մարդ մի՛ յղեսցէ. և մի՛ ձեռնամուխ լիցի նմա, զի Ախլցխա ընդ Կարսայ Արքունական ֆարմանաւ տէրունի վիճակ վճռեցաւ։ (Որպէս եւ Կարին)։ Եւ պատուէր՝ զի զԿարապետ վարդապետն ի ս. Աթոռս յղեսցէ։ Իսկ թէ ոչ եկեսցէ ասէ նա յԱթոռս, լուծեալ է յեպիսկոպոսական կարգէն։

Թուղթ ևս առ Եփրիկեանց մհ. Գրիգորն։ Ծանուցանելով նմա զմիտս Յակոբ և Կարապետ վարդապետաց և քահանայից Թղթոցն երկուց կոնդակացն։ Եւ պատուէր՝ զի ընդ Առաջնորդին և նուիրակին զգլխաւոր քահանայսն և իշխանսն ի մի վայր ժողովեալ, զպատուիրի կոնդակն ի յունկս հասարակին ընթեռնուլ տացէ, և զգուշացուսցէ ամենեցուն, զի պահեսցեն զպատուէրս իւր։ Եւ վասն նուիրակին յանձնարարութիւն գրեաց։ Եւ եղբօրն նորին մհ. Կիրակոսին, և որդւոցն Մովսիսին և Գէորգին ևս ողջոյն գրեաց։ Եւ Ա հատ տօնացոյց յղեաց նմա։

Թուղթ ևս ըստ այսմ մտաց առ սրբոյ Աթոռոյս գանձապետ Մըսըլեան մհ. Գրիգորն գրեաց, և Ա հատ տօնացոյց յղեաց նմա։

Թուղթ մի ևս առ Կարնոյ իշխօղ Խալիլ փաշայն։ Սէր և յանձնարարութիւն վասն նուիրակին և երթևեկողացն մերոց։ Եւ Ա բեռն գինի յղեաց նմա. բայց ի Թղթոջն նորին քացախ գրեցաւ։

Թուղթ ևս առ սոյն փաշայի սարաֆ մհ, Կարապետն գրեաց, և հրաւիրեաց զնա իւրայնովքն գալ ի ս. Աթոռս յուխտ։ Եւ Ա հատ տօնացոյց և փոքր ինչ գինի յղեաց վասն նորա։ Եւ վասն նուիրակին յանձնարարութիւն գրեաց նմա։ Եւ պատուէր՝ զի տեղւոյ ֆարմանն (զոր ընդ նուիրակին առ մհ. Փիլիպպոսն յղեցաք), եթէ պատշաճ տեսցէ, ցուցանիցէ փաշային։ Յղեցաւ այս ընդ փաշայի գրոյն առ մհ. Փիլիպպոսն՝ տալ նոցա։

Թուղթ ևս առ Կարնոյ Առաջնորդ Յա-

բութիւն վարդապետին։ (Որ ի մարտի ԻԳ գնաց աստի)։ Ծանուցանելով նմա զորպէսն տօնացուցին, և զմիտս իշխանաց և քահանայից Թղթոցն, և պատուիրելով նմա, զի զգլխաւոր քահանայսն և իշխանսն ի մի վայր ժողովեալ, ընդ նուիրակին զիշխանաց զիրն ծանուցմամբ ընթեռնուլ տացէ ի լուր հասարակին, զզուշացուսցէ զամենեսեան զի զդաստասցին յանկարգ արարմանցն իւրեանց, և ըստ օրինին վարեսցին։ Եւ յոչ լսելն նոցա, միաբանութեամբ իշխանացն վրէժխնդիր լիցի։ Նաև՝ օտար վիճակի եպիսկոպոսաց և բաշիրօշ սևագլխաց մի թողուցու ի վիճակին իւրում ձեռնադրութիւն ինչ առնել։ Եւ զԿարմիր վանից Կարապետ վարդապետն ի ս. Աթոռս յղել տացէ։ Եւ նուիրակի գործոյն և ինքեան ձեռնտու և մուղայէթ լիցի։ Եւ Ա հատ տօնացոյց յղեաց նմա։ Եւ վասն տեղւոյ Բց եկեղեցեացն Բ հատ տօնացոյց յղելն և տօնացուցի կոնդակ գրելն ծանոյց նմա։ Եւ պատուիրեաց հարկել ամենեցուն, զի այսուհետև զնոր տօնացոյցն ի գործ ածեցին։ Ծանոյց և զտեղւոյ ֆարմանն առ մհ. Փիլիպպոսն յղելն, զի ցուցցէ հասարակին, և յետս դարձուսցէ առ մեզ։ Եւ խոստացաւ նմա՝ թէ ֆարմանի սուրաթն երբ գայցէ ի Պօլսոյ, յղելոց եմ ասէ ձեզ, զի միշտ ընդ ձեռ պահիցէք։ Զի յառաջագոյն գրեաց պատրիարքին, զի Կարնոյ և Կարսայ ֆարմանացն Գ Գ սուրաթ փութով հոգացեալ յղեսցէ։ Եւ պատուէր՝ զի վասն Թղթաշինութեան նիւթոյն հին քաթան ժողովեալ յղեսցէ։ Որպէս և տէր Մանուէլին գրեաց։

Թուղթ ևս առ մհ. Մկրտիչն՝ պարոն Յակոբն և մհ. Ստեփաննի։ Մխիթարութիւն վասն մահուան հօրն իւրեանց մհ. Սաֆռազին, և շնորհակալութիւն վասն նորին հոգերաժնին. (Ի) զոր նոքա տուեալ էին ս. Աթոռոյս գործակալ տէր Մանուէլին, և նա ևս յանձնեալ էր մհ. Փիլիպպոսին, զի ի ս. Աթոռս յղեսցէ։ Զայս գիրս ի ձեռն տէր Մանուէլին յղեցաք տալ նոցա ի միամտութիւն իւրեանց։

Թուղթ ևս առ ս. Աթոռոյս գործակալ տէր Մանուէլն։ Ծանուցանելով նմա զնոր քաթանի առ մեզ հասանելն։ Զոր ընդ մհ. Փիլիպպոսի մարդոյն առ մեզ էր յղեալ։ Եւ պատուէր զի հին քաթան ևս հոգացեալ յղեսցէ։ Եւ հանգուցեալ մհ. Սաֆռազի որդւոց գիրն ըստ խնդրոյ նորին գրեալ յղեաց առ նա, տալ նոցա։ Որում և ծանոյց զյղելն գրոյն։ Եւ վասն քահանայից և եպիսկոպոսաց և այլ անկարգաբար ընթացողաց առ քահանայսն և իշխանսն զԹուղթս պատուիրելի գրելն ծանոյց սմա։ Ծանոյց և վասն տօնացուցին զկոնդակ գրելն ի քաղաքն։ Եւ Ա հատ տօնացոյց յղեաց նմա։ Այլ և՝ ընդ նուիրակին ԾԱ հատ տօնացոյց յղեաց ի Կարին առ մհ. Փիլիպպոսն, որում և գրեաց, զի Թ հատն ի Թօխաթ առ մհ. Աղամջանն յղեսցէ. Ա հատն ինքն վերառցէ վասն իւր, Ա հատն փաշայի սառաֆ մհ. Կարապետին տացէ, և զմնացեալ Խ հատն սոյն տէր Մանուէլիս յանձնեսցէ առ ի ծախել։ Զոր և ծանոյց սմա և պատուիրեաց, թէ ի յանձնելն քեզ մհ. Փիլիպպոսին զտօնացոյցսն, ծախեա ասէ նորա գիտութեամբն, և զարդիւնսն նորին ընդ այլ արդեանց մի խառներ, այլ յատուկ դաւթարով գրեա և մհ. Փիլիպպոսին տուր, և մեզ գրեա։ Եւ դայս գիրս մհ. Փիլիպպոսի մօտն կարգա ասէ, զի նա և՛ս գիտասցէ։ Եւ վասն գնոյն գրեաց թէ՝ եթէ տօնացուցի Ա հատն Դ ոսկւով տայցէք ասէ խնդրողացն, հազիւ թէ մեր խարճն հանէ։ Ես այսպէս պատշաճ տեսի ասէ. իսկ դուք փոքր ինչ աւելի և պակաս գնով տայք ասէ, դուք գիտէք։ Եւ վասն նուիրակին յանձնարարութիւն գրեաց նմա։

Թուղթ ևս առ քահանայսն՝ իշխանսն և ժողովուրդս քաղաքին Թամզարայու։ Ծանուցանելով նոցա զորպէսն տօնացուցին։ Եւ պատուիրելով՝ զի ամենեքեան ստասցին ի նմանէ, և այսուհետև զնա ածիցեն ի գործ։ Եւ վասն եկեղեցւոյն նոցա Ա հատ տօնացոյց յղեաց։ Եւ վասն նուիրակին յանձնարարութիւն գրեաց նոցա։ Եւ տեղւոյ Առաջնորդ Միքայէլ վարդապետին թէպէտ գիր գրել կամէր, բայց լուաք թէ յԵրուսաղէմ գնացեալ. վասնորոյ՝ ոչ գրեաց զգիր առ նա։ Եւ ծանոյց նոցա զկամս իւր վասն նորա։

Թուղթ ևս առ Կիւմիշխանայու՝ Երզնկանու՝ Շապինգարահիսարու և Տրապիզոնու քաղաքաց քահանայսն՝ իշխանսն և ժողովուրդսն։ Նոյնպէս յանձնարարութիւն վասն նուիրակին, և պատուէր վասն տօնացուցին։ Եւ վասն իւրաքանչիւր եկեղեցեացն

նոցա մէն մի տօնացոյց յղեաց։ Եւ ծանոյց նոցա զորպէսն տօնացուցին։ Եւ չգիտացաք թէ առաջնորդ ունին նոքա, թէ ո՞չ. վասնորոյ Առաջնորդի անուամբ յատուկ թուղթ ոչ ղրեաց։ Զոր և ծանոյց նոցա։

Թուղթ մի ևս առ քահանայսն քաղաքին Ուրհայուս Նոյնպէս յանձնարարութիւն վասն նուիրակին, և պատուէր վասն տօնացուցին։ Եւ վասն եկեղեցւոյն նոցա Ա հատ տօնացոյց յղեաց։ Եւ իշխանացն և ժողովրդոցն ողջոյն ղրեաց։ Եւ Ուրհայու Առաջնորդ Յօնան վարդապետն յորժամ ժողովուրդքն հանին զնա յԱռաջնորդութենէ, գնացեալ աստ և անդ տարագիր շրջեցաւ ժամանակ մի։ Եւ սրբ. վեհն ղրեաց նմա թէ՝ տարտղիր մի՛ շրջիր եկ ի ս. Աթոռս, որպէս որ մեր կանօնն է, և պատուիրեալ եմք քեզ ի ժամ ձեռնադրութեանդ, և այնու պայմանաւ ձեռնադրեալ։ Աստ շտհելոց ես ի մէնջ։ (Որպէս ասացեալ է ի յօգ. ելն), իսկ նա չանսալով հրամանի սրբ. վեհին, պատասխանի գրոյն ե՛ս ոչ գրեաց։ Եւ այժմ լուաք թէ՝ վերստին եկեալ է անդ, և թարց հրամանի սրբ. վեհին Առաջնորդութիւն առնէ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն բարկացեալ ի վերայ նորա, ղրեաց ժողովրդեանն թէ՝ զԱռաջնորդդ ձեր դուք յառաջագոյն յղեցիք աստ առ մեզ մահսարաւ, և, եպիսկոպոս ձեռնադրել եաուք։ Ապա անընդունակ արարեալ ի միջոյ ձերմէ հանիք։ Որ գնացեալ աստ և անդ տարագիր շրջեցաւ։ Եւ մեք ղրեցաք աստ իւրեան թէ եկ, և նա ոչ եկն։ Եւ այժմ թարց մերոց հոգևոր հրամանին դարձեալ եկեալ է աստ առ ձեզ, և Առաջնորդութիւն առնէ։ Ասացէք աստ դմա գալ ի ս. Աթոռս, և առնուլ ի մէնջ զհոգևոր հրաման, և ապա գալ յայդր, և Առաջնորդութիւն առնել ձեզ։ Եթէ եկն աստ, բարի է. և թէ ո՛չ, ոչ ունի աստ ի մէնջ հրաման եպիսկոպոսութիւն առնելոյ։

Թուղթ ևս առ Բաբերդու Առաջնորդ Սարգիս վարդապետն։ (որ ի պատմութեան ՌՄ ամին, և ի . . . յիշեցեալ է.) նոյնպէս վասն նուիրակին յանձնարարութիւն, և վասն տօնացուցին պատուէր գրեաց նմա։ Եւ վասն տեղւոյ եկեղեցւոյն Ա հատ տօնացոյց յղեաց։ Եւ քահանայից՝ իշխանաց և ժողովրդացն ողջոյն գրեաց։ Զայս գրեանքս ուրոյն պահարանեալ, նուիրակին ետուք, զի ընդ իւր տարեալ, իւրաքանչիւր տեարցն տացէ։

Կոնդակ ի վերայ Թօխաթու և բոլոր վիճակի նորին վասն տօնացուցին։ Զոր առաքեաց առ նուիրակն։

Թուղթ ևս առ Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետն։ Ծանուցանելով նոյնպէս զորպէսն տօնացուցին։ Եւ վասն կոնգակին պատուիրելով նմա, թէ ընթեռնուլ տուր յեկեղեցիսն, և ծանո աստ ամենեցունց, զի զդա ի զործ ածիցեն այսուհետև։ Եւ յետ այդր ընթեռնուլ տալոյդ՝ շուտով յղեա աստ ի Կարին առ մհ. Փիլիպպոսն, զի նա տացէ անդ նոր նուիրակին տեղւոյդ՝ (զոր յետ քանի աւուրց հանելոց եմ աստի.) զի նա ևս տարցէ ընդ իւր ի միւս վիճակսն այդր կողման, և ընթեռնուլ տացէ։ Եւ Ի հատ դիրք առաքեաց անդ առ ս. Աթոռոյս զանձապետ մհ. Աղամջանն, Է հատն վասն Է եկեղեցեացն, Ա հատն ինքեան, և Ա հատն սոյն Պետրոս վարդապետիս։ Զոր և ծանոյց սմա։ Կամէաք աստ այժմ ի յԱմասիա, ի Մարսուան, և ի Աերաստիա ես յղել, բայց որովհետև աստ նուիրակ ոչ դոյ ի նոսա, ոչ յղեցաք։ (զի սա զայն տեղիսն այժմ աւարտեալ և ելեալ էր.) ուստի ընդ նոր նուիրակին յղելոց եմ աստ վասն նոցա ևս։ Եւ թէպէտ պիտոյ էր աստ տեղւոյդ Առաջնորդացն ևս գիր գրել, բայց որովհետև ինքեանք զմեզ չճանաչեն, և ոչ մեք զինքեանս դիտեմք, ոչ ղրեցաք։ զՄարսուանու Յովաննէս վարդապետէն աստ բողոք ինչ եկն առ մեզ, և մեք թուղթ ղրեցաք ինքեան՝ հարցանելով զորպէսն, լոկ պատասխանի և՛ս գրեաց մեզ։ Զայդպիսիդ աստ յետոյ տեսցուք։ Եւ զի՝ պատուէր՝ գրեաց քահանայից քաղաքին, զի մի՛ թողուցուն վարդապետաց և աբեղայից թագիւ ժամ առնել։ Ամա ևս գրեաց՝ զի պատուիրեսցէ ամենեցունց յատեանն՝ այսպէս առնել։ Եւ պատուէր՝ զի զՄիացորդս գործոյն հոգացեալ, դիմեսցէ ի ս. Աթոռս. զի հարկաւորապէս պիտոյ ես մեզ աստ։ Ցրղեցաւ այս առ մհ. Աղամջանն տալ նմա։

Թուղթ ևս առ քահանայսն քաղաքին Թօխաթու։ Ծանուցանելով զորպէսն տօնացուցին, և պատուիրելով զի ամենքեան ստասցին ի նմանէ, և այսուհետև զնա ածիցեն ի գործ։ Ծանոյց և զյղելն Է հատ տօ-

Նացոյց եօթնից եկեղեցեաց տեղւոյն։ Եւ վասն Առաջնորդին դարձեալ զնոյն ըսն՝ որպէս և առ Նուիրակն, թէ որովհետև զմեզ ոչ ճանաչէ, և ոչ մեք զինքն, ոչ տեսութեամբ և ոչ գրով. վասնորոյ՝ թուղթ ոչ գրեցաք իւրեան, յետոյ ի ճանաչելն մեր, յայնժամ տեսցուք։ Եւ որպէս ասացաւ ի վերոյ, գրեաց սոցա սաստիկ պատուէր, թէ լսեմք, թէ Աբեղայք որք չին եպիսկոպոսաք, ի լինելն ձեզ Առաջնորդ՝ թագիւ և եպիսկոպոսական ձևով պատարագեն, և չդիտեմ յիրաւի է թէ ոչ։ Վասնորոյ՝ գրեմ ձեզ հարկիւ, զի ընաւ ոչ կամիցիք, և ոչ թողուցուք այսուհետև այդպէս լինիլ։ Զի թէ անդամ մի ես լուայց, ոչ միայն զլրբարար պատարագիչսն, այլ և զնորին կցորդսն և զհազորդակիցսն ես պաաժելոց եմ չարաչար։ Եթէ դպիրն կարէ ուրար առնուլ, և սարկաւագն զփիլոն, ապա և Աբեղայն զթագ։ Որ թէ այսպէս անհնարին և անկարգ է և ընդդէմ եկեղեցւոյ, զինչ է այս ապա որ զձէնջ լսեմ։ Զհոգևոր իշխանութիւնն և զեպիսկոպոսական կարգն յԱթոռոյս պարտին առնուլ, դոքա ի յօտարուստ զան. և մարմնաւոր հրամանաւ լինին ձեզ Առաջնորդ։ Ուրեմն զմարմնաւորն միայն կարեն ածել ի գործ, հեռի մնալով յամենայն հոգևոր կարգաց և իշխանութեանց՝ որոց վասն չունին զհրաման։ Այս ես յղեցաւ առ մհ. Աղամջանն՝ տալ նոցա։

Թուղթ ես առ մհ. Աղամջանն, թէ յետ դնալոյն քո ի Պօլիս, գիրս եմք գրեալ քեզ և քոյ վէքլին քանիցս անդամ, և զպատասխան ինչ ոչ եմք ընկալեալ։ Ծանոյց և զմհ. Սիմէօնի գրելն վասն Զմիւռնոյ Բ բեռանցն, թէ յանձնեցի մհ. Աղամջանի վէքիլ մհ. Աւետիքին, զի յղեսցէ։ Իսկ բեռինքն առկաւին ոչ եկին։ Ուստի և հարկեաց՝ զի թէ մինչև ցայժմ չիցեն յղեալ՝ յղեսցեն շուտով ի Կարին առ մհ. Փիլիպպոսն, և ինքեան ծանուսցեն։ Եւ որպէս ի վերոյ ասացաւ՝ Թ հատ տօնացոյց յղեաց առ նա, Է հատն վասն եօթնից եկեղեցեաց տեղւոյն. Ա հատն ինքեան, և Ա հատն վասն նուիրակին։ Զայսոսիկ ես ի մի պահարան եդեալ, ընդ նուիրակին առ մհ. Փիլիպպոսն յղեցաք, զի նա անտի առ մհ. Աղամջանն յղեսցէ։

Կոնդակ ես ի Պօլիս և ի շրջակայսն նորին, վասն տօնացուցին։

Թուղթ ես առ ս. Երուսաղեմայ պատրիարք Պօղոս վարդապետն, (որ ի փտր. ԻԵ յիշեցաւ,) ծանուցանելով զորպէսն տօնացուցին, և հարկադրելով նմա՝ թէ գրեա զպատուէր առ մերազնեայ ժողովուրդսն որք կան ցայդ կողմունսդ, զի ամենեքեան ստասցին ի սմանէ, և այսուհետև զսա ածիցեն ի գործ, զի բարձցի անհամաձայն տօնակատարութիւնն յազգէս մերմէ։ Եւ Գ հատ տօնացոյց յղեաց առ նա, Բ հատն վասն սրբոց Յակոբեանց վանիցն, և Ա հատն ինքեան։ Ծանոյց նմա և ընդ Սարգիս վարդապետին ի փտր. ԻԵ զթուղթ գրելն առ ինքն։ Եւ խնդրեաց զպատասխանին։ Գրեաց ես թէ՝ թէպէտ զպատասխանին այն թղթոյն մինչ ոչ առնուի ի քէն, զայլ ոչինչ ունէի ասէ գրելոյ քեզ, սակայն՝ առ ժամս պահանջեաց հարկն։ Եւ միաբանիցն նորին ողջոյն գրեաց։ Զայս թուղթս և Գ հատ տօնացոյցն ի մէջ մուշամբայի եդեալ և կնքեալ, ուրոյն պահարանու ի ձեռն Զաքարիա վարդապետին յղեցաք, Յովակիմ վարդապետին տալ, զի նա ի սուրբ Երուսաղեմ յղեսցէ։

Թուղթ մի ես ս. Երուսաղեմայ վէքիլ Յովակիմ վարդապետն։ Ծանուցանելով նոյնպէս զորպէսն տօնացուցին և վասն նոցա զկոնդակ դրևլն ի Պօլիս և ի շրջակայսն. և սակս եկեղեցեացն զտօնացոյցս յղելն ի ձեռն Զաքարիա վարդապետին։ Եւ Ա հատ տօնացոյց յղեաց նմա։ Եւ Աղիմայ պատրիարքի գիրն և Գ հատ տօնացոյցն ձեռամբ Զաքարիա վարդապետին ի ձեռն սորա յղեցաք, զի սա անտի առ պատրիարքն իւր յղեսցէ յԵրուսաղէմ։

Թուղթ ես առ. Պօլսոյ գլխաւոր իշխանսըն։ Ծանուցանելով նոյնպէս զորպէսն տօնացուցին, և ի մայիս ամսոյն՝ վասն ֆէրմանացն զթուղթ շնորհակալութեան գրելն առ ինքեանս։ Որոց և զմէն մի հատ տօնացոյցս յղեցաք։ Որոյ օրինակն է ի բոլորադրեհամար աեաբոջն, յերեսն ՇԼԱ։

Թուղթ ես առ Պաղտասար և Գասպար Ամիրայսն։ Նոյնպէս ծանուցանելով զորպէսն աօնացուցին։ Որոց և զմէն մի հատ տօնացոյցս յղեցաք։ Եւ որպէս Զաքարիա վարդապետին և Գասպար Ամիրային և՛ս դրեաց, զի Կարնոյ և Կարսայ ֆարմանացն Գ Գ Սուրաթ հոգացեալ յղեսցեն։ Որոյ օրի-

նակն է ի բոլորագրահամաք տետրոջն, յերեսն ՇԼ։

Թուղթ ևս առ. Գաղատիոյ Նուիրակ Յովաննէս վարդապետն, (որ յանցեալ ամին, և ի յԱպր. Ե յիշեցեալ է.) հարկ՝ զի եկեսցէ ի ս. Աթոռս. որովհետև աստ զգործդ զերծեալ ես ահա, և պիտոյ ևս ես մեզ հարկաւորապէս։ Զոր ինչ ղրեալ եմք քեզ յառաջ՝ առնուլ և բերել ընդ քեզ, զօֆ՝ շալի, և այլ այսպիսիք, հոգացեալ ընդ քեզ բերցես։ Եւ առ այս բաղում հարկ։

Թուղթ ևս առ. Պօլսոյ Նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետն, ծանուցանելով նոյնպէս զորպէսն տօնացուցին։ Եւ ԼԲ հատ տօնացոյց յղեաց առ նա յորոց ԺԵ եկեղեցեացն քաղաքին. Դն Թաքիրտաղու, Պրուսայու, Ատրանայու և Իզնիմիտու եկեղեցեացն, Ա իւրեան, Ա ս. Երուսաղէմայ վէքիլ Յովակիմ վարդապետին, Գ Երուսաղէմայ պատրիարք Պօղոս վարդապետին. Ա Նազարէթին Ա Բաղտասար, Ա Գասպար, Ա մհ. Յարութիւն, Ա Պետրոս, Ա Հովուեան Մարտիրոս, Ա Տաքէս, և Ա Առաքել Ամիրայիցն։ Զորս և յանուանէ ծանոյց սմա և պատուիրեաց, զի Է հատն Է գլխաւոր իշխանացն տացէ, Ա հատ ինքն վեր առցէ. Ա հատ Յովակիմ վարդապետին տացէ, և Աղիմայ պատրիարքին ևս տացէ նմա, զի առ նա յղեսցէ, Ա հատ ևս Նազարէթին, և ԺԵ հատ տեղւոյ եկեղեցեացն տացէ. և զկոնդակն ընթեռնուցու յեկեղեցիսն. և՞ ծանուցմամբ պատուիրեսցէ ամենեցունց, զի զհին տօնացոյցն և զօրացոյցն ի բաց թողեալ, այսուհետև զնոր տօնացոյցն ի գործ ածիցեն։ Եւ յետ ընթեռնլոյն զկոնդակն յեկեղեցիսն, ընդ Դ տօնացուցին առաքեսցէ ի միւս վերոյյիշեալ Գ քաղաքսն, զի անդ և՛ս ընթեռնուցուն։ Եւ որպէս յառաջ, և այժմ ևս գրեաց, զի Կարնոյ ֆարմանացն ԳԳ սուրաթ հոգացեալ յղեսցէ։ Այլև ի յԱրապկեր ոչ Առաջնորդ յղեմ աստ, և ոչ Առաջնորդական արդեանցն (ա) աղագաւ զբան ինչ յիշեմ, ես յետոյ ղրելոց եմ աստ քեզ։ Եւ վասն չգրելոյն զպատասխանիս հարկաւոր ղրեցելոցն իւրոց, մեղադրութիւն ղրեաց նմա, և հարկեաց գրել։ Եւ ի մարտին հաղիւ թէ գիր մի ընկալաք ի նմանէ ընդ ֆարմանացն։ Յոբում գրեալ էր թէ՝ ֆռանկաց և թարճիմանի որպէսն Գէորգն ղրելոց է քեզ. իսկ նա ի մարտին ղրեալ էր, ի յունիսիս էհաս։ Առ այս ղրեաց նմա թէ՝ այսուհետև ղհարկաւոր հոգալիսն և ղգրելիսն առ մեզ եթէ այդպիսեացդ ես յանձնելոց, շատ դժուար է աստ մեր բանն։ Եւ ղորպէսն թըղթաշէն ֆռանկացն ծանոյց նոցա. զի զևռ զտունսն և ղղործիսն շինեցուցանեն։ Եւ որպէս յառաջ, և այժմ ևս ղրեաց սմա, զի զխնդրեցեալսն և զպատասխանիս գրոց ֆռանկացն առեալ յղեսցէ, զի կարի վրդովէին և տարակուսէին վասն ոչ ընկալնլոյն զպատասխանիս գրոցն իւրեանց։ Եւ զորպէսն Զմիւռնոյ Նուիրակ և Առաջնորդ Ղուկաս վարդապետին ծանոյց նմա. զի իզմիրցիք խնդրեալ էին ի սրբ. վեհէն զՂուկաս վարդապետն վերստին Նուիրակ և Առաջնորդ կարգել ինքեանց. իսկ սրբ. վեհն բացասաց զխնդիրս նոցին. և գրեաց Ղուկաս վարդապետին գալ ի ս. Աթոռս. և զՆսայի վարդապետն Նուիրակ և Առաջնորդ արարեալ Զմիւռնոյ, յայսմ միջոցի յղելոց էր անդ։ Եւ վասն Գաղատիոյ Նուիրակ Յովաննէս վարդապետին գրեաց սմա, եթէ եկեալ է անդ, յղեսցէ ի ս. Աթոռս։ Զի պիտանի է աստ մեզ։ Որպէս և իւրեան ևս գրեաց, որոյ և զգիրն յղեաց առ սա, տալ նմա։ Եւ զորպէսն Ուռումելու որպէս յառաջ, և այժմ ևս խնդրեաց գրել։ Քանզի՝ կամէր իմանալ եթէ ճանապարհք կողմանցն բացեն, Նուիրակ յղեսցէ անդ։ Եւ Պօլսոյ Նուիրակութեան որպէսն ևս խնդրեաց գրել զի գիտասցէ թէ ձրտեղ է մնացեալ առանց Նուիրակելոյ, և երբ իցէ աւարտելոց։ Զի ահա Թ տարի եղև աստ Բ Նուիրակութիւնն տեղւոյդ. ոչ հնոյ Նուիրակութեան որպէսն դրեցեր աստ մեզ, և ոչ երկրորդին, զի գիտասցուք։ Գրեա աստ մեզ զորպէսն, զի գիտասցուք, թէ այլ Նուիրակ առաքելոց եմք յայդ քաղաքդ՝ և կամ երբ իցեմք առաքելոյ։ Ահա ԺԲ տարին էանց, Բ Նուիրակ եմ աստ առաքեալ ի քաղաքդ, և ղմինն ոչ եմ տեսեալ. (որոյ մինն էր բասենցի Յարութիւն վարդապետն, որ աւարտեալ զգործն իւր, ոչ եկն ի ս. Աթոռս, և միւսն էր սա, որ զկնի Գրիգորին պատրիարք եղև տեղւոյն։ Որոց լիովին որպէսն յանցեալ ամին և ի յԱպ. Ե ասացաւ և ցուցաւ) և արդիւնք թէ հասեալ է առ մեզ ի

քաղաքէդ թէ ոչ, զայն ևս դիտես ասէ լաւապէս։ Եւ Ցակոբ վարդապետն եթէ աւարտեալ է ասէ զգործն իւր, հանդերձ Բ նուիրակութեանց ամենայն արդեամբքն յԱթոռս առաքեա։ զՑտմթայ Կարապետ վարդապետն բան գրեցի ասէ քեզ որպէ՞ս արարեր. եթէ յատուկ ֆարմանն և՛ս հանցես ասէ վասն սորա այն վանից վիճակին վերայ, զծախսն հողալոց է, միամիտ լեր։ Եւ վասն Նոր տօնացուցին գրեաց թէ՝ այղոքիկ զորս այժմ առաքեցաք ասէ ամենայն եկեղեցեաց, իբր ընծայապէս առաքեցաք. վասն այսորիկ և զգին ինչ ոչ յիշեցաք. բայց այսուհետև զորքան առաքեմ, գնով պարտի ասէ վաճառիլ. քանզի՝ ոչ ՌԵԾ հատ Աղօթից գիրքն ամենևին ձրի բաժանեցաք. այն բաւական է ասէ, յայս քանի տարիս յորս աշխատիմք ասէ այս գործոյս վերայ, ՋՌ ղռուշ աւելի խարճեալ եմք, և մէկ փարայ գեռ չեմք առեալ։ Աթոռոյս ևս մեղք է։ Ահա զորա գինն եթէ հարցանիցես ասէ, Նազարէթին գրեալ եմ. ինմանէ իմա, և դու ծանո խնդրողացն։ Ցղեցան այսոքիկ առ Նազարէթն, տալ սմա։

Թուղթ ևս առ Նազարէթն և Թաղէոսն, ի պատասխանի ի յԱպ. Իէ թղթոյն իւրեանց։ Ցիշեցուցանելով նոցա զֆերմանաց հասանիլն, և որ Կարսայ և Կարնոյ ֆարմանացն սուրաթ չէին յղեալ. խնդրելն յառաջ քան զայս և այժմ ևս՝ զի յղեսցեն։ Եւ սորին եղբայր մհ. Փիլիպպոսն որ թարճիման էր գրեալ և յղելոց էր աստ, (որպէս ասացաւ յամսոյս Գ,) ծանոյց սմա։ Եւ տիրացու Գէորգն դաւթար էր արարեալ զթղթաշինաց և թարճիմանի ծախսն, և մինչև ցայժմ յամեցուցեալ, և այժմ յղեալ, որոյ սակս զդժգոհութիւնս երևեցոյց սմա զնմանէ, և գրեաց թէ՝ յետոյ գրելոց եմ։ Ծանոյց և զշինուած թղթատանն։ Եւ վասն մհ. Ցօնանին որ գնացեալ էր ի Ցուրուսջուղ, (որպէսն յանցեալ ամին և ի յԱպ. Ե ասացեալ է,) գրեաց թէ՝ ընդէ՞ր այսքան ժամանակ յամեցաւ, շրջելով աստ և անդ, և թողլով զտունն անտէր և ի մէջ խղճութեան, գրեա ի Ցուրուսջուղ առ նա հարկիւ, զի ելեալ եկեսցէ, և մի ևս յամեսցի։ Եւ վասն Ուռումելու թէ՝ քանիցս գրեցի պատրիարքին, զի զորպիսութիւնս գրեսցէ, թերևս կաբասցուք նուիրակ յղել, իսկ դա ոչ գրեաց, և յայսքան ժամանակս երկիրն այն մնաց այնպէս։ Ուստի՝ ընդ պատրիարքին խօսեցեալ, կատարեալ որպիսութիւն մի գրեա մեզ զերկրէն Ուռումելու, զի տեսցուք թէ որպէ՞ս է, նուիրակ յղեսցուք եթէ կարելի է։ Եւ զորպիսութիւնս տօնացուցին և՛ս գրեաց սմա, և թէ քանի՞ հատ յղեաց առ պատրիարքն, և վասն ո՞յր ուրուք. զամենն ծանոյց սմա։ Ա հատ ևս ինքեան յղեաց։ Եւ թէ՝ յետոյ ևս յղելոց եմ առ մհ. Փիլիպպոսն, զի ծախեսցէ անդ և յայդր ևս յղեսցէ առ քեզ՝ որ դու ևս ծախեսցես։ Եւ վասն գնոյն գրեաց օրինակ զՎէնէտիկցւոց օրացոյցն. թէ նոքա որպէ՞ս դիւրագին թղթով և ամենայն պարագայիւք՝ հեշտութեամբ առ ձեռն բերեն. Թապագայ և կէս թուղթ է ասէ, անկող՝ անպատկեր, անծաղիկ և անկազմ, և տան զայն Ե փարայի. որ յետ միոյ ամի ի՞չանայ։ Իսկ մերս ասէ՝ յոյժ ծանրագին թղթով և պարագայիւք, (որք ամենքն յօտար և ի հեռաւոր յերկրէ են). մեծաւ տաժանմամբ ի ձեռն բերեմք. որ է մշտնջենական. և ո՛չ միայն տօնացոյց՝ այլ և օրացոյց և պարզատօմար ևս է, ծաղկօք՝ պատկերօք, խորանօք և տեսակ տեսակ պատկերօք և գեղեցկատես տառիւք շքեղ, հաստատուն կազմով, և ԼՋ տարիցն մերոց՝ որպէս թէ՝ ԼՋ տօնացոյց է, և մշտնջենական։ Այսու ենթադատմամբ ասէ հաշուեա զգին զորա, տե՛ս թէ զի՞նչ առնէ։ Ես ասէ իմ ենթադատմամբս Դ ոսկի եղէ՛ գին. դուք ևս ենթադատեցէք ասէ, և եթէ քան զԴ ոսկին աւելի կամ պակաս ևս ենթադատեալ տայցէք, դուք գիտէք։ Պօլսոյ պահարանն ի ձեռն սորա յղեցաք տալ պատրիարքին։

Թուղթ ևս առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն։ Զի վասն Մարտիրոսի մեզ ասլիք դրամոյն քան զայս յառաջ քանիցս անգամ գրեաց նմա սրբ. վեհն՝ առնուլ։ Իսկ նա գրեալ էր թէ՝ Մարաիրոսն չէ աստ. զի հայրն մեռեալ էր, գնաց զի աիրեսցէ ընչիցն նորա։ Երբ գայցէ աստ, առնելոց եմք ի նմանէ զդրամն։ Որոյ աղագաւ ե սրբ. վեհն կրկին պատուիրեաց սմա, ի գալն նորա անդ, առնուլ ի նմանէ զդրամն. և յոչ տալն, ծանուցանել ինքեան։ Եւ տեղւոյ ֆարմանն ընդ Մեսրոպ վարդապետին յղեաց առ սա, զի ցուցանիցէ փաշային և այլոցն ամենեցուն, ե յետս դարձուսցէ առ մեզ։ Որում ե խոս-

տացաւ, թէ սուրաթն յետոյ որ գայ, կուղարկեմ ասէ, որ տեղդ ՃՃայ։ Զայս բանս առաջնորդին ես գրեաց. և ծանոյց սմա զգրելն։ Եւ վասն նուիրակին յանձնարարութիւն գրեաց սմա։ Եւ Բ բեռն գինի յղեաց առ սա, զի որքան և կամիցի՝ փաշային, նորին սառաֆ մհ. Կարապետին և մհ. Գրիգորին տացէ, և զմնացեալն ինքն վերառցէ։ Փաշայի և մհ. Կարապետի յղեաց առ սա՝ տալ նոցա։ Եւ փաշային աղագաւ մուրապայ էր խնդրեալ. գրեաց թէ՝ չգտանեցաւ որ յղէի, յետոյ ի ·լինիլն յղելոց եմ։ Ծանոյց սմա և վասն ·օրինազանցութեանց և անկարգութեանց ոմանց զթուղթ մի պատուիրիւ ի վերայ գլխաւոր քահանայիցն և իշխանացն, և զթուղթ մի ևս յատկապէս ի վերայ քահանայից գրելն։ Որում և պատուիրեաց, զի տեսցէ զգրեանսն և իմասցի, և վերակացու լեալ կատարել տալ ջանասցէ զպատուէրս և զհրամանս իւր։ Եւ վասն Թամզարայու Առաջնորդ Միքայէլ վարդապետին դրեալ էր թէ՝ Երուսաղէմայ նուիրակ եղև։ Գրեաց թէ՝ ապա Թամզարայու ձվ եղև ասէ Առաջնորդ, և կամ Թամզարացիքն որպէս զաւլուլ արարին ասէ որ նա յիւրեանց Առաջնորդութենէն ձեռքն քաշէ։ և կամ որ նա այդպէս եղե, այժմ Թամզարացիք զինչ առնեն, և ով կամին ասէ որ իւրեանց Առաջնորդ լինի։ Այս բանիս որպէսն լաւ իմացեալ մեղ գրեա ասէ։ Եւ վասն Երուսաղէմայ նուիրակ համադանցի Յովաննէս վարդապետին դրեաց թէ՝ կարծեցաք թէ գնացեալ կլինի, դիր չգրեցաք, եթէ յայդր է, գրեսցես ասէ մեզ։ Եւ վասն հին քաթանին գրեաց թէ՝ դեռ մեղ ոչ էհաս. մուղայէթ լեր և ժողովեալ տուր ասէ։ Եւ զմիտս կարմիր Վանից Առաջնորդ Յակոբ վարդապետի թղթոյն ծանոյց սմա։ Ծանոյց և զորպէսն տօնացուցին։ Եւ ԾԱ հատ տօնացոյց յղեաց նմա, զի Թ հատն ի Թօխաթ առ մհ. Աղամջանն յղեսցէ. Ա հատ փաշայի սառաֆ մհ. Կարապետին տացէ. Ա հատ ինքն առցէ, և զմնացեալ Խ հատն տէր Մանուէլին յանձնեսցէ, որ իւր դիտութեամբն ծախեսցէ։ Եւ պատուիրեաց սմա, զի զգինսն տօնացուցին ի տէր Մանուէլի թղթոյն իմացեալ, այնպէս արասցէ։ Քանզի՝ զգինս և զլիովին որպէսն տօնացուցին նմա գրեաց։ Այլև՝ Պօլսոյ պահարանն ևս յղեսցէ առ սա, յղել առ եղբայրն իւր Խօջայ Նազարէթն, զի պատրիարքին տացէ։

Եկաւ հասաւ ի Կարին։

Իսկ և՝ ի Կարնոյ քանի մի ուխտաւորք էին եկեալ ի ս. Աթոռս, և ի բարեպաշտ անձանց ոմանց զողորմութիւնս բերեալ։ Եւ սրբ. վեհն առ նոսա զթուղթս օրհնութեան գրեաց։ Որք են.

Թուղթ օրհնութեան առ մհ. Ղուկասն Սարգիսն և Աբրահամն, (ԺԵ) ձեռամբ Կիրակոսին։

Թուղթ ևս առ Թագւոր անուամբ այր ոմն, (Ա) ձեռամբ եղբօրն իւրոյ Կարապետին։

Թուղթ ևս առ մհ. Անդրէասի կողակիցն, (Ա) ձեռամբ Աննային։ Այս Աննայս Անդրէասի կնոջ զանունն մոռացեալ էր, վասնորոյ՝ և մեք ևս զայս թուղթս առանց անուան դրեալ, ետուք նմա։ Եւ Մեսրոպ վարդապետին ասացաք, որ անդ իմասցի զանունն, և գրեալ ի թղթոջն, տացէ նմա։ Եւ Կարնոյ նոր նուիրակ Մեսրոպ վարդապետն ընդ Կարնոյ ուխտաւորացն, ի յունիսի Ժ։

Առ Թօփրախղալայու Ալիբէկն միամտութիւն վասն Կարնոյ ուխտաւորացն։

Թուղթ դրեաց սրբ. վեհն առ Թօփրախղալայու Ալիբէկն ի պատասխանի թղթոյն։ Զի Մակարի որդի մհ. Յովաննէսն՝ նորին Բ եղբօր որդիքն, և Կարնոյ փաշայի քիւրքչիբաշի պ. Մուրատն և Ակնցի պ. Սարգիսն ընդ այլ արանց եկին ի ս. Աթոռս յուխտ։ Եւ Կարնոյ փաշայն վասն նոցա գրեալ էր Ալիբէկին, թէ մարդ դի՛ր ընդ արանցդ, որ անվնաս տարեալ ի յԷւճքիլիսայն հասուսցէ։ Եւ նա ևս ըստ գրեցելոյ փաշային յանձնեալ էր զնոսա իւր մարդոյն բերել ի ս. Աթոռս։ Զորս և նա բերեալ անվնաս ի ս. Աթոռս հասոյց։ Որոց աղագաւ և Ալիբէկն ընդ իւր մարդոյն յանձնարարութիւն էր դրեալ սրբ. վեհին առ. ի շահել զնոսա։ Եւ նորին գրաբերն փութով դառնայր յետս։ Եւ խնդրեաց ի սրբ. վեհէն գրել զպատասխանի թղթոյն։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն վասն ուխտաւորացն զթուղթ մի միամտութեան գրեաց առ. Ալի-

րէկն ի պատասխանի թղթոյն։ Թէ ուխտաւորքն անփաս հասին ի ս. Աթոռս, և ես սակս խաթեր փաշային և քո շահելոց եմ զնոսա։ Եւ նորին ղրարերն ի յունիսի ԺԳ։

ՄԺԲ.

Ի Թիֆլիզ՝ առ Հերակլ Արքայն շնորհակալութիւն վասն վրէժխնդիր լինելոյն Ախթարմայիցն, եւ յորդորմունք՝ ի գլուխ տանիլ զնոյն յառաջադրեալ բանն։ Եւ առ տեղապահն եւս վասն այսր, եւ վասն տալեացն տէր Ղազարին։ Վասն Ախթարմայիցն բան եւ առ Մկրտումն եւս։

Ի Թիֆլիզ քաղաքն և ի շրջակայս նորին և մանաւանդ ի Գեօրի կարի յոյժ բազմացեալ էր չար աղանդն Ախթարմայութեան։ Եւ տեղապահ Մկրտիչ վարդապետն վասն շնորհաւորելոյ զհարսանիս Արքայորդւոյ Լեւոն Միրզային մինչ հրամանաւ սրբ. վեհին գնացեալ էր ի Թիֆլիզ և տակաւին անդ էր, (որպէս ի մայիսի ԺԶ ասացեալ է)։ Ցայնժամ մեծահաւատ Արքայն Հերակլէս ազդմամբ ամենատնօրինողին Աստուծոյ ի վրէժխնդրութիւն շարժեալ, խորհեալ էր ի մտի իւրում զանուն Ախթարմայութեան ի բաց բառնալ յերկրէն իւրմէ։ Վասնորոյ՝ և յաւուր միում մեծահանդէս ժողով արարեալ, զամենայն նախարարսն և զիշխանսն իւր կոչեալ առ ինքն, կացուցեալ էր առաջի իւր զԱխթարմայսն տեղւոյն, և բազում ողոքանօք և սպառնալեօք կամեցեալ էր վերստին ի յուղիղ հաւատս մեր դարձուցանել զնոսա։ Եւ մինչչեւ էր բանն կատարումն առեալ, տեղապահն ի ներկայութեան գոլով, երկուցեալ էր՝ զի մի՞ գուցէ Արքայն չարաբարոյ անձանց ոմանց ունկնդիր լինելով, զանց արասցէ զհոգեշահ և զԱստուածահաճոյ բանիւս։ Վասնորոյ՝ փութանակի գրով ծանուցեալ էր. սրբ. վեհին զեղելութիւնսն։ Եւ խնդրեալ էր ի սրբ. վեհէն այսր աղագաւ Բ թուղթ գրել առ Արքայն։ Զմինն շնորհակալութեան, և զմիւսն խնդրանաց, զի ի գլուխ տարցէ զբանն։ Բայց սրբ. վեհն անպատեհ համարեցաւ Բ գիր գրել առ Արքայն։ Այլ զերկու միտսն ի մի խառնեալ, զթուղթ մի գրեաց առ Նա։ Նախապէս շնորհակալութիւն, թէ շնորհակալեմք զմեծութենէ, որ այդպէս վրէխնդիր ես եղեալ Ախթարմայիցն, և սաստկապէս թամբեհ առնես։ Ապա և խնդիր՝ թէ զայդ բանդ ի գլուխ տար վասն խաթեր մերոյ և ի փառս Աստուծոյ։ Եւ արմատախիլ արա իսպառ զանուն դոցա յայդ երկրէդ՝ և յիշխանութենէ քումմէ, որ այլ Ախթարմայ անուն չլինիցի յօրհնեալ երկրոջդ քում։ Ցորմէ և խնդրեաց ես՝ զի զԱխթարմայից բանն փութով և լաւապէս տեսեալ, զՄկրտիչ վարդապետն օր մի յառաջ վերադարձուսցէ ի ս. Աթոռս։ Ցղեցաւ այս առ տեղապահն տալ նմա։

Թուղթ ևս առ երեցփոխան պ. Մկրտումն գրեաց (որ ի մայիսի ԺԳ յիշեցեալ է)․ ի պատասխանի թղթոյն։ Զի զորպիսութիւնս Ախթարմայիցն և զվրէժխնդրութիւն առնելն Արքային սա ևս էր ղրեալ սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց սմա՝ յորդորել Արքային, զի զանուն Ախթարմայիցն արմատախիլ արասցէ յերկրէն իւրմէ։ Եւ զՄկրտիչ վարդապետն փութով ի ս. Աթոռս յղել տացէ։

Թուղթ ևս հրամանաւ սրբ. վեհին Մինաս վարդապետն գրեաց առ Թիֆլիզեցի տէր Ղազարն ի պատասխանի թղթոյն, զի փութով տացէ զդրամն ս. Աթոռոյս։ (Բ) զի ինքն Մինաս վարդապետն մինչ էր ի Հաշտարխան ի գործ նուիրակութեան ս. Աթոռոյս, փոխ էր տուեալ նմա Բ ամ. պայմանաւ։

Թուղթ ևս առ տեղապահ Մկրտիչ վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն։ Զի զորպիսութիւնս Ախթարմայիցն և զվրէժխնդիր լինելն Արքային ղրեալ էր սրբ. վեհին։ Զորմէ և խնդրեալ էր Բ գիր գրել առ Արքայն զմինն շնորհակալութեան, և զմիւսն խնդրանաց. իսկ սրբ. վեհն Բ գիր ոչ գրեաց նմա. այլ ըստ մտաց նորին զմի ղիր ղրեալ, յղեաց առ սա, տալ Արքային, և ասել նմա, զի ի գլուխ տացէ զԱխթարմայից բանն։ Եւ յետ այսպէս առնելոյն, հրաման առեալ Արքայէն, փութով եկեսցէ ի սրբ. Աթոռս, և մի՛ յամեսցի անդ։ Եւ զմիտս թղթոյ Արքային ծանոյց սմա։ Եւ թէ՝ վասն քոյ գրեցաք ասէ Արքային, որ զքեզ շուտով մուրախաս արասցէ։ Եւ թէպէտ յառաջագոյն գրեաց սմա սրբ. վեհըն զթարջիման մի գր-

տանել և բերել ընդ իւր բայց այժմ գըրեաց ոչ բերել, զի մհ. Փիլիպպոսն զմինն յԱրարկերու գտեալ յղեալ էր ի սրբ. Աթոռըս։ Որոյ անունն մհ. Ղազար կոչիւր։ Եւ վասն Թիֆլիզեցի աէր Ղազարի մեզ տալեաց դրամոյն՝ (Բ) քան զայս յառաջ ի մայիսի ԻԹ գրեաց սմա սրբ. վեհն առնուլ ի աէր Ղազարէն զդրամն։ Եւ սա ես ըստ հրամանի սրբ. վեհին խնդրեալ էր ի նմանէ զդրամն։ Իսկ նա չէր տուեալ, ասելով թէ՝ վատայէն յառաջ ոչ կարեմ տալ։ Զոր դըրեալ էր սա սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն առ. այս բարկացեալ ի վերայ նորա, կամէր այլ իմն կերպիւ առնուլ ի նմանէ զդրամն։ Իսկ տէր Ղազարն այսր աղագաւ գերիս Թուղթ էր գրեալ աստ։ Զմինն սրբ. վեհին՝ զմինն Մինաս վարդապետին, և զմիւսն Թիֆլիզեցի պարոն Ստեփանին։ Եւ գրեալ բանն այն էր թէ՝ ես չեմ աղաչեալ որ տան ինձ զայն դրամն. այլ ինքեանք աղաչեցին ինձ և ետուն զայն դրամն։ Այժմ վատայէն յառաջ ես ոչ կարեմ տալ, թող կամ ապրանք առնուն այժմ փողին թանխայ, կամ զամուն տամ, կամ թէ ԳԾ թումանի գրաւ տամ, մինչև որ վատայն լրասցի, և ես զդրամն տաց՝ և զիմ գրաւն առեց։ Եւ սրբ. վեհըն զայսոսիկ ծանոյց սմա, և պատուիրեաց՝ զի կամ զգրամն առցէ ի տէր Ղազարէն, կամ զինքն բերցէ ի սրբ. Աթոռս, և կամ ԳԾ թումանի գրաւն առեալ բերցէ ընդ իւր։ Բայց պարտիս ասէ զգրաւն այնպէս պայմանաւ և գրով-առնուլ, որ թէ ի լրանալ վատային զդրամն մեր չտայցէ, գրաւն մեզ լիցի։ Ապա թէ ոչ արասցէ ասէ զմին ի սոցանէ, յայնժամ չարաչար բանադրելոց եմ ասէ զգա։ Փուսուլայ մի ևս գրեաց առ սա։ Զի լուաք թէ՝ ի գնալն նուիրակ Մարտիրոս վարդապետին ի Գեօրի, առաջնորդն զոմն ի Հախպատու սևագլխացն սպասաւոր է տուեալ նմա։ Զոր ի լսելն սրբ. վեհին, պատուիրեաց սմա ասել Առաջնորդին, զի զՀախպատու սևագլուխն մի շրջեցուսցէ ընդ նուիրակին մերոյ, և մի երբեք տացէ նորա։ Զայս գըրեանքս ի մի պահարան եդեալ, ընդ միոյ զինակրի մերոյ առ Թիֆլիզեցի Ստեփանն յԵրևան, զի և նա ի ձեռն հաւատարմի առ յղեցաք տեղապահն յղեսցէ ի Թիֆլիզ։ Ի յունիսի ԺՆ։

Եկաւ հասաւ ի Պօլիս ընդ Ակնցի պարոն Սարգսին։ Որք յամսոյս ԺԸ և ի Ի գրեցան։

Կարնոյ ուխտաւորքն՝ (որք ի վերդ յամսոյս ԺԳ յիշեցան))․ քան զայս քանի մի աւուրբք յառաջ մինչ եկին ի ս. Աթոռս յուխտ, Ակնցի պ. Սարգիսն որ ընկերն էր նոցա, ի Պօլսոյ գայր. և ի Պօլիս եդեալ բարեպաշտ անձանց ոմանց ողորմութիւնս էր բերեալ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն առ տուօղս ողորմութեանց ի ձեռն նոյն պ. Սարգսին զԹուղթս օրհնութեան յղեաց։ Որք են։

Թուղթ օրհնութեան առ պ. Գրիգորն, (1 Ղզ փարայ) ձեռամբ պ. Սարգսին։

Թուղթ ևս առ Յովաննէսն, (Ա) ձեռամբ նորին։

Թուղթ ևս առ Ալէքսանն, (Կ փարայ)։ Եւ պ. Յօնանն, (Բ) ձեռամբ նորին։

Թուղթ մի ևս մխիթարութեան և օրհնութեան առ մհ. Ալմազ կինն և իւր որդի տիրացու Յակոբն, (Ժ) վասն հանգուցեալ առն իւրոյ մհ. Մանուկին։ Ձեռամբ նոյն Սարգսին։

Թուղթ ևս առ Ռեթէոսն, Գէորգն, մհ. Վարդանն, Յարութիւն, Գրիգորն, Յակոբն, Յովաննէսն, և մհ. Նուիրայ կինն, (ՂԵ փարայ) եւս ձեռամբ Անկցի պ. Սարգսին։ Իսկ և՝ Կարնոյ ուխտաւորքն մինչ աստ էին, ի Յամթայ ևս բազում ուխտաւորք եկին ի ս. Աթոռս։ Եւ ոմանք ի նոցանէ, ի բարեպաշտ անձանց ոմանց զողորմութիւնս և զյիշատակիս էին բերեալ։ Ուստի և սրբ. վեհն առ տուողս նոցին, ընդ բերողացն զԹուղթս օրհնութեան գրեաց։ Որքեն։

Թուղթ օրհնութեան առ Թումաջանն։ Որ ընդ մհ. Սողովմէին Ա արծաթեայ խաչ յիշատակ էր յղեալ ս. Աթոռոյս։

Թուղթ մի ևս առ Աննա կինն։ Որ Ա ջուխտ փոքր արծաթեայ քեամար իւր ղօլանովն, ձեռամբ նոյն մհ. Սողովմէին յիշատակ էր յղեալ ս. Աթոռոյս։

Թուղթ մի ևս առ Ամասիա և Սառա կանայքն։ Որք ձեռամբ մհ. Գաւթ/ն Ա լաւ սկհւոյ խալիչայ յիշատակ էին յղեալ ս. Աթոռոյս։

Թուղթ մի ևս առ Վառվառ կինն։ Որ ձեռամբ Իւղաբեր կնոջն Ա ալաջայ և Կ փարայ ողորմութիւն էր յղեալ ս. Աթոռոյս։

Բ Թուղթ ևս առ Տօնին, (Գ) և Հազր-

վարդ կլինն, (Գ) ձեռամբ նոյն Իուղաբերին։

Թուղթ մի ևս առ Աննա կլինն, (Ե) ձեռամբ Շուշանին։

Գ Թուղթ ևս առ Հռիփսիմէ կլինն, (Ա) տիրացու Մինասն, (Ա) և Սողոմէ կլինն, (Ա) ձեռամբ Աննային։

Գ Թուղթ ևս առ Եղիսա՝ (Ա) Մարգարիտ՝ (Ա) և Մարիամ կանայքն, (Ա) ձեռամբ մհ. Նուպարին։

Բ Թուղթ ևս առ մհ. Յօհանն՝ (Ա) և Նազլու կլինն, (Լ փետր.) ձեռամբ մհ. Եղիսէին։

Թուղթ մի ևս առ մհ. Գուհար կլինն, ձեռամբ Կաքաւ կնոջն։

Թուղթ ևս առ Մահպուպ՝ և Խանում կանայքն, ձեռամբ մհ. Ղարագեզօնին։

Թուղթ ևս առ Մելքոնն, ձեռամբ Ոսկանին։

Թուղթ մի ևս առ Սոփիա կլինն, ձեռամբ տիրացու Յովաննէսին։

Թուղթ մի ևս առ Մահրի կլինն, ձեռամբ Մարիամին։

Բ Թուղթ ևս առ Ամասիա և Սողոմէ կանայքն, ձեռամբ մհ. Հեղինէին։

Թուղթ մի ևս առ Գասպարն, ձեռամբ մօրն իւրոյ մհ. Մարիամին։

Թուղթ մի ևս առ Կարնոյ Ալի փաշայն։ Սէր և յանձնարարութիւն վասն մեր մարգկանցն։ Է ճերմակ մոմ, և փոքր ինչ վարգեջուր յղեաց նմա։

Թուղթ մի ևս սիրոյ օրհնութեան առ սոյն փաշայի սառաֆ մհ. Կարապետն գրեաց. և փաշայի գիրն և ընծայն՝ ընդ մհ. Մուրատին ի ձեռն սորա յղեաց, տալ նմա։ Եւ զդարձն եղբօր իւրոյ մհ. Յովաննէսին և Բ որդւոցն մի ըստ միոջէ ծանոյց նմա։ Եւ զմիտս թղթոյ փաշային ծանոյց նմա։

Թուղթ մի ևս մխիթարութեան և օրհնութեան առ մհ. Թումայն և նորին եղբայր պ. Պօղոսն։ Զի վասն հանգուցեալ հօրն իւրեանց Գաւթին, յիշէք (Ա) էին յղեալ ընդ մհ. Մելքոնին։

Թուղթ մի ևս մեղադրութեան առ Բալուայ Առաջնորդ Գէորգ վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն։ (Որ ի պատմութեան ՌՄԻԱ թուոջն և ի մարտի ԺԲ յիշեցեալ է), զի վասն օրինազանցութեանց գրեալ էր սրբ. վեհին թէ՝ մեր ժողովուրդքս զմեզ նեղեն թէ՝ յայլ տեղիս օրինազանցութիւն առնեն. մեզ ևս հրաման տուր որ մեք ևս առնեմք։ Գրեաց թէ՝ զայդ ասելովդ հրաման խնդրես ասէ ի մէնջ, թէ հրաման տուր, որ կոյս ընդ այրւոյ պսակիցի։ Այդ խնդիրդ անկարելի է ասէ։ Զի մինչև ցայժմ դուզայդ ժողովուրդսդ վայելես, իսկ զցաւս դոցա ի վերայ մեր ձգես, և կամիս պատճառ շինել զմեզ դոցին մեղացն։ Եւ մանաւանդ՝ մինչև ցայժմ զինչ կերպիւ և կամեցեալ ես, կթեալ ես ասէ զգոսա։ Այժմ երևի թէ՝ կամիս, զի այդու կերպիւ ևս կթիցես զգոսա, և բացցես վասն քոյ զդուռն մի ևս արդեանց. իսկ պատճառն մեղաց մեք լիցուք իգուր։ Այլ ոչ այդպէս. դի այդ ժողովուրդդ և վիճակդ քեզ է ասէ հաւատացեալ յԱստուծոյ, ուրեմն՝ ի չլինիլ քեզ բարւոքապէս կառավարիչ դոցին, զարիւնս դոցա ի ձեռաց քոց խնդրելոց է Աստուած։ Ուրեմն՝ յոր կոչումն կոչեցեալ ես, կաց ի նմին. և զոր ինչ հարկ և պատշաճ է Առաջնորդութեանդ, խոհեմարար ընտրեա և հոգա. և զցաւն քո մի արկաներ ի վերայ մեր։ Ապա թէ ոչ, այլ ոյր աղագաւ ես ասէ կարգեցեալ դու դոցա Առաջնորդ։ Իսկ թէ կամիս զի կոնդակ յղեսցուք ասէ, որ այնու կանոնաւ կառավարիցես զժողովուրդսդ, ահա յառաջագոյն ևս զկոնդակ խնդրեցեր, և մեք յղեցաք. (որ ի պատմութեան ՌՄԺ երորդ ամին, և ի… յիշեցեալ է). զոր ինչ կանոնս ի նմա գրեալ եմք, յառաջ տար, և ըստ այնմ կանոնի կառավարեա ասէ զժողովուրդսդ։ Ապա թէ զայն կանոնսն յայդր յառաջացուցանել ոչ կարես ասէ, այլ զինչ խնդրես ասէ ի մէնջ. տարին մի անգամ կոնդակ չեմք դրելոց ասէ։ Եւ այլ այսպիսի բանք շատ։ Այլ և՝ ընդ փեսային իւրոյ Աջահամբոյր էր յղեալ վասն սրբ. վեհին։ Եւ թէպէտ սրբ. վեհն ոչ կամէր առնուլ, բայց յետոյ խնայելով ի նա էառ. սակայն գրեաց նմա թէ՝ զյղեալդ ընդ բերողացն յետս դարձուցի առ քեզ, զի ի վերայ աղքատ վանիցդ խարճևսցես։ Ցղեցաւ այս ընդ փեսային իւրոյ առ նա։ Կարնոյ և Ցամթայ ուխտաւորքն եկին ի միասին ի ս. Աթոռոյս, ի յունիսի ԻԲ։

Թուղթ ևս օրհնութեան ի Թօխաթ բնակեալ Ուռումելու վաճառականացն գրեաց։ Զի ի մէջ իւրեանց զանձանակ էին հաստատեալ յանուն ս. Աթոռոյս. և զմհ. Ցարու-

թիւն ոմն գանձապետ էին կարգել ս. Աթոռոյս, և զարդիւնս գանձանակին ընդ Կարբեցի մհ. Յովաննէսին 'յղել էին ի ս. Աթոռս։ Եւ գանձապետին 'յատուկ պատուէր գրեաց։ Զի ամ 'յամէ ժողովեալ զգանձանակագրամն, ի ս. Աթոռս հասուսցէ։ Զայս գիրս Կարբեցի մհ. Յովաննէսին ետուք, տանիլ ընդ իւր, և տալ նոցա։

Իսկ և՝ Կարնոյ փաշայի սարաֆ մհ. Կարապետի եղբայր մհ. Յովաննէսին և Բ, որդւոցն Ա հատ տօնացոյց՝ Ա Աղօթից գիրք, և Ա Տաղարան ետուք։ Ա հատ տօնացոյց ևս Կարբեցի մհ. Յովաննէսին ետուք։ Որ ընդ սոսա 'յուխտ էր եկեալ ի Թօխաթու։

ՄԺԳ.

Առաքելն սրբ. վեհին զԵսայի վարդապետն նուիրակ եւ Առաջնորդ ի Զմիւռնին։ Ընդ նմին եւ թուղթք ի Զմիւռին՝ ի Պօլիս ի Գաղատիա եւ ի Կարին, սակս սորա եւ այլ զանազանից իրակութեանց։

Կարգեաց սրբ. վեհն զԵսայի վարդապետն նուիրակ և Առաջնորդ ի վերայ Զմիւռնոյ և համայն վիճակացն նորին, և նուիրակական կոնդակաւ և սրբալոյս Մեռոնաւ 'յղեաց անդ։ Ա Կոնդակ ես ի վերայ Զմիւռնոյ և շրջակայիցն նորին գրեցաւ վասն տօնացուցին։ ԼԲ հատ տօնացոյց ետուք Եսայի վարդապետին տանիլ ընդ իւր։ Յորոց մինն վասն իւր էր։ Ա Ապրոյեան Աստուածատուր Աղային։ Բ Զմիւռնոյ քաղաքի եկեղեցւոյն, Բ վասն Ամստերգամու։ Իսկ մնացեալ ԻԶ ըն, վասն Զմիւռնոյ շրջակայ քաղաքաց և ղասապայից եկեղեցւոյն։ Ա հատ ևս Պօղոս վարդապետին ետուք։ Որ ընդ Եսայի վարդապետին սպասաւորութեան աղագաւ ի Զմիւռին գնաց։

Թուղթ մի ևս առ Զմիւռնոյ գլխաւոր իշխանսն գրեաց։ Ծանուցանելով նոցա զԵսայի վարդապետն նուիրակ և Առաջնորդ առնելն ինքեանց և 'յղելն անդ, և զՂուկաս վարդապետն խնդրելն գալ ի ս. Աթոռս։ Որոց և պատուիրեաց՝ զի զԵսայի վարդապետն ի սէր ունիցին, և զգործն նորին արդիւնաւոր առնել ջանասցեն, և զՂուկաս վարդապետն սիրով 'յետս դարձուսցեն ի ս. Աթոռս։ Եւ վասն եկեղեցւոյն նոցա Բ հատ տօնացոյց 'յղեաց ընդ Եսայի պետին։

Թուղթ ևս առ Ապբօգլի Աստուածատուր՝ Գալուստ և Առաքել Աղայսն գրեաց և զորպիսութիւնս տօնացուցին և թղթատանն ծանոյց նոցա։ Եւ Ա հատ տօնացոյց 'յղեաց նոցա։ Եւ վասն նոր նուիրակին իւրեանց Եսայի վարդապետին 'յանձնարարութիւն գրեաց։

Թուղթ մի ևս առ Զմիւռնոյ քաղաքի բոլոր քահանայսն և համայն եկեղեցականսն գրեաց։ Նախ վասն Եսայի վարդապետին 'յանձնարարութիւն, և վասն տօնացուցին պատուէր՝ զի այսուհետև զնա ի գործ ածիցեն։ Եւ վասն եկեղեցւոյն նոցա Բ հատ տօնացոյց 'յղեաց։ Եւ քահանայիցն սիրով մեղադրեաց։ Զի զբազմակնիք թուղթն զոր վասն Ղուկաս վարդապետին կրկին նուիրակ և Առաջնորդ խնդրելոյն 'յառաջագոյն գրեալ էին սրբ. վեհին, զանուանս իւրեանց ի լուսանցն՝ հանդէպ անուան կաթուղիկոսին էին գրեալ։

Թուղթ մի ևս առ Զմիւռնոյ հին նուիրակ և Առաջնորդ Ղուկաս վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն։ Զի իշխանքն 'յորժամ բազմակնիք թուղթ էին գրեալ սրբ. վեհին վասն սորա, և խնդրեալ էին ի սրբ. վեհէն վերստին նուիրակ և Առաջնորդ կարգել զսա ինքեանց, 'յայնժամ գիր ոչ էր գրեալ սա սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն ի կարծիս անկաւ վասն սորա։ Բայց 'յետոյ գիր եկն ի սմանէ. որով բարձաւ կարծիքն սրբ. վեհին։ Քանզի՝ կրկին անգամ աղաչանօք գրեալ էր սրբ. վեհին խնդրել զինքն, զի եկեսցէ ի ս. Աթոռս. և սրբ. վեհն գրեաց նմա գալ։ Եւ զԵսայի վարդապետն ի տեղի իւր նուիրակ և Առաջնորդ առնելն ի վերայ Զմիւռնոյ ծանոյց նմա։ Եւ պատուիրեաց նմա, զի զտէր Ստեփաննն բերցէ ընդ իւր։ Գրեաց ևս՝ զի ի հարկաւոր պէտս ս. Աթոռոյս, Գ հատ դեղին սահաթ, և Զ հատ ճերմակ սահաթ առեալ բերցէ։

Թուղթ մի ևս ի վերայ Ամստէրգամու հայազուն ժողովրդոցն գրեաց, և զԵսայի վարդապետն նուիրակ և Առաջնորդ 'յղելն ի Զմիւռին, և զՂուկաս վարդապետն խնդրելն ծանոյց նոցա։ Որոց և պատուիրեաց, զի

զարդիւնս իւրեանց ի ձեռն Եսայի վարդապետին 'յղեսցեն, և առ ս. Աթոռս հասեալ իմասցին։ Եւ զորպիսութիւնս տօնացուցին ծանոյց նոցա։ Եւ Բ հատ տօնացոյց ևս ստացա եկեղեցւոյն ազգաւ ետուք Եսայի վարդապետին, զի ընդ թղթոյս յղեսցէ առ նոսա։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, 'յերեսն ՇԼԲ, ՇԼԳ։ Հաւալայ փարմանի սուրաթ ևս ետ Եսայի վարդապետին ի գնալն աստի ի վիճակն իւր։

Թուղթ ևս առ Գաղատիոյ նուիրակ Յովաննէս վարդապետն։ Կրկին հարկ' զի եկեսցէ ի սուրբ Աթոռս։ Զի թէ գործ ինչ խնդրեսցես ասէ, աստէն 'յղելոց եմ։ Գրեաց ևս' զի ի գալն իւր, զօֆ' շալի և վեղարացու առեալ բերցէ ընդ իւր։ Յղեցաւ այս առ պատրիարքն 'յղել առ նա։

Թուղթ մի ևս առ Պօլսոյ նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետն։ Ի պատասխանի երկոքին թղթոցն իւրոց ի մայիսի Ժ գրեցելոց։ Որում և ծանոյց քան զայս յառաջ 'յամսոյս Ժ թուղթ և տօնացոյց 'յղելն առ ինքն։ Եւ պատուիրեաց' զի զհարկաւոր պատասխանիս թղթոցն մերոց գրեսցէ մեզ։ Եւ վասն մհ. Յօնանին (որ գնացեալ էր ի 'յՈւռուսչուգ)։ Գրեաց թէ' ընդէ՞ր այսքան ժամանակ 'յամեցաւ անդ. գրեա առ նա հարկիւ, զի եկեսցէ։ Եւ վասն Պրուսացւոցն գրեալ էր թէ' զմեր թղթոց պատասխանին ոչ գրեն մեզ։ Գրեաց թէ' այն երկիւղն որ նոքա են տեսեալ ասէ ի նմանէ, զիա՞րդ իշխեն գրել. ոչ ապաքէն երկնչին ասէ 'յԱխթարմայիցն զիսկն գրելն։ Եւ վասն առաջնորդաց յառաջագոյն գրեալ էր նմա սրբ. վեհն թէ զով ոք 'յուրեք Առաջնորդ կացուսցես, հարկեա նմա նախապէս գալ ի ս. Աթոռս և առնուլ ի մէնջ զհոգևոր հրաման, և ապա երթալ ի վիճակն իւր։ Եւ նա ևս խոստացեալ էր սրբ. վեհին այնպէս առնել։ Կրկին գրեաց նմա զնոյն պատուէր, զի մի՛ այնու զանց արասցէ։ Գրեաց ևս ծանուցանել ինքեան, զի գիտասցէ թէ ի Կիւմիշխանայն' ի յԵրզնկան. և ի Տրապիզոն Առաջնորդք գոն, և Առաջնորդ է յղեալ, թէ ոչ։ Եւ զթղթաշինութեան աեաերսն զոր 'յառաջագոյն յղեալ էր թարգմանել տալ, այժմ խնդրեաց 'յետս 'յղել։ Զի այլ ո՞չ էր պիտոյ մեզ։ Քանզի թղթաշէնքն եկեալ շինեցուցանէին զթղթատումնն։ Եւ զի' Ագուլեցի մհ. Աբրահամի սուտ թամասուկն և բարաթագիրն, որ յառաջագոյն առ մհ. Յարութիւն Ամիրայն գոյր, 'յետոյ նա ձեռամբ Զաքարիա վարդապետին յղեալ էր առ սրբ. վեհն։ (Զորմէ ի ՌՄԺԹ և ի դեկա. Իէ ասացեալ է)։ Բայց սրբ. վեհն մոռացմամբ այնպէս կարծէր թէ' դեռ չէ յղեալ։ Վասնորոյ քան զայս 'յառաջ ի փետր. ԻԶ գրեաց Յարութիւն Ամիրային, առ ի 'յղել։ Եւ Զաքարիա վարդապետին և Գասպար Ամիրային ևս գրեաց, զի առեալ 'յղեսցեն։ Իսկ Զաքարիա վարդապետն այժմ գրեալ էր թէ' առեալ յղեալ եմ։ Եւ սրբ. վեհն գտեալ զնոսա միամտեցաւ, և Զաքարիա վարդապետին գրեաց, զի ինքեանք ևս միամտեսցին։ Եւ ի կողմանէ Ուռումելու ճանապարհացն գրէր թէ' բա՛ց է. իսկ թէ խաղաղ է այն կողմն. և կարելի է անդ նուիրակ 'յղելն, զայն ոչ գրէր։ Ուստի պատուիրեաց գրել։ Եւ զՅովհաննէս վարդապետն խնդրելն ծանոյց սմա։ Եւ զգիրն նորին յղեաց առ սա, առ նա 'յղել։ Կրկին գրեաց' զի Կարնոյ և Կարսայ փարմանացն Գ Գ սուրաթ հոգացեալ 'յղեսցէ։ Եւ վասն Յամթայ առաջնորդ Կարապետ վարդապետին գրեաց թէ' մեք զնա ի Յամիթ և կամ 'յԱրղնու վիճակն առաջնորդ չեմք 'յղելոց. և զԱրղնու վանքն ի Յամթայ չեմք բաժանելոց, այլ զնա ի սուրբ Աթոռոջս եմք ասէ պահելոց, և որպէս զմիաբան մեր է համարելոց։ Եւ թէ ի գործ ինչ յղիցեմք ասէ զնա, 'յանուն ս. Աթոռոյս եմք յղելոց։ Զի մեք ասէ զմիտս ժողովրդոցն տեղւոյն քեզ ի ծանուցանել գրեցաք, ժողովուրդքն իւրեանք գիտեն։ Գրեաց ևս' զի թղթաշինաց քսուրն' տղայն, և գործիսն փութով յղել տացէ։ Եւ վասն հանգուցեալ Ղազար Աղայի ընչիցն որպէս յառաջ' և այժմ ևս պատուիրեաց հոգալ։ Զի վարիսն նորա ս. Աթոռս է ասէ. և կայքն նորա դիւրաձեռն է մեզ հասանելն։ Գրեաց ևս' զի ԺԵ հատ նոր և լաւ սահաթ առեալ, ի ձեռն Նազարէթին առ մեզ յղեսցէ։ Որոց ութն ճերմակ լինիցին ասէ, և եօթն դեղին։ Այլ և' ընդ մհ. Յօնանին և վասն առնլի իրաց Բ գաւթար 'յղեաց սմա սրբ. վեհն։ Զի առեալ 'յղեսցէ։ Իսկ սա ոչինչ յղեաց։ Վասնորոյ' և սրբ. վեհն զսաւաաս նոյն գաւթարացն առեալ յղեաց առ Նազարէթն, զի նա հոգացեալ յղես-

ցէ։ Զոր և ծանոյց սմա, և պատուիրեաց զի զայնս Նազարէթին առնուլ և յղել տացէ։ Փուսուլայ մի ևս սրբ. վեհն իւր ձեռամբն գրեաց առ Զաքարիա վարդապետն. ասելով թէ՝ Մուրտիկեանքն փութով ոչ դրամ հասուցանեն մեզ։ Եւ դու ի ձեռն Ղուկաս վարդապետին, կամ քո Յակոբ և Յովաննէս վարդապետն, և կամ այլ հաւատարիմ եկողաց մեզ դրամ հասո։

Թուղթ մի ևս առ Նազարէթն և Թագէոսն գրեաց ի պատասխանի ի մյսի Ժ գրեալ թղթոյն իւրեանց ։ Ծանուցանելով նոցա քան զայս յառաջ յամսոյս Ժ թուղթ և տոմսացոյց յղելն իւր առ ինքեանս։ Եւ պատուիրեաց դրել զպատասխանի թղթոյն։ Եւ վասն թղթաշինաց ընչիցն գրեալ էին թէ՝ ծովով յղելոց եմք։ Կրկին գրեաց թէ՝ զքսուրն և զտղայն որպէս և յղելոց են, փութով յղեսցեն։ Եւ սոսա եղբայր մհ. Փիլիպպոսն որ թարճիման էր գտեալ և յղելոց էր աստ, այժմ յղեալ էր։ Ծանոյց սմա։ Եւ թղթաշէնքն վասն յամենալոյն պատասխանւոյ թղթոցն իւրեանց յոյժ տարակուսէին։ Վասնորոյ գրեաց Նազարէթին, թէ ասա Թօմայ Աղային, կամ սոցա թղթոց պատասխանին փութով բերել տացէ, և կամ միամտութիւն գրեսցէ։ Այլ և՝ զմհ. Յօնանի տարեալ դաւթարաց զերեսն առնուլ ետ սրբ. վեհն և յղեաց առ Նազարէթն, զի հոգացեալ յղեսցէ։ Զի առաջին դաւթարսն որ ընդ մհ. Յօնանին առ պատրիարքն յղեաց, չիմացաք թէ զի՞նչ արար նա, զի մինչև ցայժմ ոչինչ առեալ յղեաց, այլ զանց արար։

Թուղթ մի ևս առ մհ. Աղամջանի վէքիլ մհ. Աւետիքն։ Զի սրբ. վեհն այնպէս կարծէր թէ՝ մհ. Աղամջանն եկեալ է ի Պօլսոյ. յառաջագոյն գիր գրեաց նմա ի Թօխաթ և մինչ ուխտաւորքն եկին աստ, ի նոցանէ իմացաք, որ դեռ չէ եկեալ ի Պօլսոյ, վասնորոյ՝ պատուիրեաց սմա, թէ զոր ինչ գրեալ եմք մհ. Աղամջանին, դու հոգա։ Եւ զմիտս տեղւոյ իշխանաց թղթոյն (որ էր վասն Սարգիս վարդապետի դըչեայ գրեանցն, որք ի մարտի ԻԳ և ի հոկտ. ԻԳ ի թղթոջ Թօխաթու նուիրակին և Գրիգոր Աղային յիշեցան). Ծանոյց սմա։ Եւ պատուիրեաց սմա, զի Զմիւռնոյ բեռանցն ուր լինելն ծանուսցէ մեզ։ Այս ուրոյն յղեցաւ առ նա։

Թուղթ մի ևս առ մհ. Աղայեկն գրեաց ի Թօխաթ։ Զի տպագիր մհ. Մարկոսն՝ զպայմանագիրն զոր յԻզմիր տուեալ էին ինքեան, բերեալ ընդ իւր ի Թօխաթ իբր ամանաթ յանձնեալ էր նմա, և ինքն եկեալ ի ս. Աթոռս։ Եւ զկնի բաց ամաց աստ վախճանեցաւ և պայմանագիրն մնաց ի ձեռն սորա։ Յանցեալ թուղթն Եսայի վարդապետն վասն բանիցն իւրոց ի Թօխաթ էր գնացեալ։ Զայն պայմանագիրն առեալ ի նմանէ, և բերեալ ետ սրբ. վեհին, և գիր խնդրեաց ի վերայ նորա։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն զշնորհակալութեան և միամտութեան թուղթս դրեալ ի վերայ նորա, Եսայի վարդապետին ետ, զի տարեալ ընդ իւր, տացէ նմա։

Թուղթ մի ևս առ մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն գրեաց։ Ծանուցանելով նոցա քան զայս յառաջ յամսոյս Ժ ընդ Մեսրոպ վարդապետին թուղթ և տոմսացոյց յղելն առ ինքեանս։ Եւ պատուէր՝ զի կատարող լինիցին գրեցելոցն, և զպատասխանին գրեսցեն ինքեանս։ Գրեաց ևս՝ զի թէ Իզմիրու բեռինքն հասեալ իցեն ինքեանց, Գ և կամ Ե հատ ջորի առեալ, բեռամբքն ի ս. Աթոռս յղեսցեն։ Եւ մհ. Փիլիպպոսն յառաջագոյն խոստացեալ էր սրբ. վեհին, թէ զհաշիւն մեր դրելոց եմ և յղելոց։ Բայց ոչ յղեաց։ Եւ սրբ. վեհն պատուիրեաց յղել։ Եւ պատուիրեաց նոցա դրել Նազարէթին, զի ինեք դաւթարոջ գրեալ զիրսն փութով հոգացեալ յղեսցէ։ Եւ զի՝ պ. Գէորգն և Կօշտօն ի կողմանէ սոցա գեռ այսքան դրամ էին հասուցեալ մեզ ձեռամբ Առզումին։ (Բ) Եւ մնացեալն թէ ո՞րքան էր և որր էին հասուցանելոց մեզ, չգիտէաք։ Վասնորոյ՝ պատուիրեաց դրել նոցա, զի փութով դրամ հասուսցեն մեզ։ Այլ և՝ սոքա որք զթարճիման մհ. Ղազարն յղեալ էին աստ, ԳՃ ղուրուշ տարեկան վարձ էին կտրեալ։ Որոյ ԱՃԽ ղուրուշն անդ տուեալ էին նմա, և մնացեալն մեք էաք տալոց աստ։ Ուստի՝ և սրբ. վեհն տուեալ դրամոյն հաճութիւն դրեաց նոցա։ Եւ Պօլսոյ պահարանն ընդ Եսայի վարդապետին ի ձեռս սոցա յղեցաք, յղել առ Նազարէթն։ Եւ Եսայի վարդապետն վերոյիշեալ թղթովքս, ի յնսի ԻԳ։

ՄԺԴ.

Աւարտ գործոյն Կարսայ նուիրակին, եւ խնդրելն սրբ. վեհին գալ ի ս. Աթոռս։

Կարսայ նուիրակ Գրիգոր վարդապետն աւարտեալ էր զգործն իւր, և զարդիւնսն նուիրակութեան ըստ դրեցելոյ սրբ. վեհին յանձնեալ էր պ. Գէորգին։ Ուստի՝ և սրբ. վեհն շնորհակալութիւն և միամտութիւն գրեաց նմա։ Այլ և՝ Մկրտիչ և Գալուստ վարդապետացն գրեալ էր հարցանել սրբ. վեհին, զի թէ յԱխլցխա գնալն իւր կամիցի՝ ծանուսցեն իւրեան, որ ելեալ երթիցէ։ Եւ թէ ոչ, ի տեղի իւր զԱրտահանցի Գրիգոր վարդապետն յղեսցէ անդ։ Բայց սրբ. վեհն զնորին յԱխլցխա գնալն ոչ ետես պատշաճ. այլ զԱրտահանցի Գրիգոր վարդապետի գնալն կամեցաւ։ Վասնորոյ՝ և պատուէր գրեաց նմա, Արտահանցի Գրիգոր վարդապետին Մեռոն և գիր տալ, և յղել անդ։ Եւ ասել նմա՝ զի յԱխլցխա քաղաքն ամենևին մի երթիցէ, այլ գնասցէ ի Գեօլայու և յԱրտահանու կողմունսն, և յԱխրքեալաք, և այլ ևս ուր որ ձեռնտու լիցի գնալն, և տացէ զսրբալոյս Մեռոնն մերազնեայ ժողովրդոցն, և առցէ ի նոցանէ զնուիրակութիւնն։ Իսկ ի չարափառացն հեռի կացցէ։ Եւ յԱխլցխա քաղաքն եղեալ մերազնեայ ժողովրդոցն ծանուսցէ՝ զի նոցին քահանայքն եկեսցեն առ ինքն, և Մեռոն առեալ տարցէ, և նուիրակական արդիւնքն նոցին ևս ի ձեռն նոյն քահանային առցէ։ Նոյնպէս՝ և ուր որ մերազնեայ ժողովուրդք լինիցին՝ առ որս ինքն գնալ ոչ կարիցէ, թող ծանուսցէ նոցա, որ նոցին քահանայն առ ինքն եկեսցէ, և սրբալոյս Մեռոն առեալ տարցէ, և զնուիրակական արդիւնսն ևս ժողովեալ առ ինքն բերցէ։ Եւ յորժամ աւարտեսցէ նա զգործն, առեալ զնուիրակութիւնն եկեսցէ՝ ի ս. Աթոռս։ Այսու մտօք զթուղթ մի ևս առ Արտահանցի Գրիգոր վարդապետն գրեաց, և յղեաց ի ձեռն նորա՝ տալ սմա, և սրբալոյս Մեռոնաւ և թղթով յղել ի կողմունսն Ախլցխայու, և ինքն ևս յետ այսպէս առնելոյն իւրոյ՝ ընդ Գահրաշի Սողոմոնին ելանել և գալ ի ս. Աթոռս։ Եւ պ. Գէորգն ըստ մեր դրեցելոյն ամանաթ գրամ էր տալոց սմա։ (4) Եւ պատուիրեաց սմա՝ առնուլ զայն ի պ. Գէորգէն, և ընդ իւր բերեալ առ մեզ հասուցանել ամբողջապէս։

Թուղթ ևս առ պ. Գէորգն։ Զի ըստ մեր դրեցելոյն՝ ի մհ. Փիլիպպոսէն առ ինքն հասեալ դրամոյն փոքր մասն ընդ Գահրաշի Սողոմոնին յղեալ էր առ մեզ։ Որոյ աղագաւ և սրբ. վեհն շնորհակալութիւն և միամտութիւն գրեաց նմա։ Գրեաց ևս՝ զի զմնացեալն այն դրամոյն ընդ նուիրակին յղեսցէ առ մեզ։ Նա և՝ ընդ պ. Կարապետին խորհեսցի, և մէկ քանի հազար ղռուշ ևս յինքեանց աւելի տացեն նուիրակին բերել ընդ իւր առ մեզ։ Եւ յետոյ ըստ որքանութեան յղեալ դրամոյն ձեր փօլիցայագիր եմք գրելոց ասէ ձեզ, զի ի մհ. Փիլիպպոսէն առնուցուք։ Այլ և պատուիրեաց՝ զի ի հարկաւոր պէտս ս. Աթոռոյս զոր ինչ Գալուստ վարդապետն դրեալ է ինքեան, փութով հոգացեալ, ընդ զինակրացն մերոց յղեսցէ։ Փուսուլայ մի ևս գրեաց առ սա։ Զի լուաք թէ՝ Քեարիմ խանն յայս միջոցի բազում զօրս յղեալ է ի վերայ Բաղդատու. և տեղւոյ փաշայն կարի նեղեցեալ ի նորին զօրացն, մարդ էր յղեալ առ նա, և հաշտութիւն խնդրէր։ Եւ նա ևս հաշտութիւն առնել կամելով ընդ նմա, գրեալ էր զօրացն իւրոց՝ զի յետս դարձցին ի պաշարելոյ զքաղաքն։ Այլ և՝ Ֆաթալի խանն ի լափլիզացն յոյժ նեղեցեալ, յԱրքայէն Ռուսաց օգնութիւն էր խնդրեալ ինքեան։ Զորս գրեաց սմա, զի ի դիպօղ ժամու ծանուսցէ Իբրահիմ Աֆանտուն։

Թուղթ ևս մեղադրութեան առ Ղօշավանից առաջնորդ Աւքիաս վարդապետն գրեաց։ Զի ի դեկտ. Գ մինչ վերադարձաւ աստէն, ի մէջ քաղաքացւոցն պարծելով ասացեալ էր թէ՝ այսքան կաշառ ետու, և զխօսս իմ յառաջ տարայ։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ վասն քոյ ախտիդ այլոց կաշառ տաս ասէ, և ի վերայ մեր բարդես։ Եթէ ճիշտ մարդ էիր, ընդէ՞ր ասէ ոչ ասէիր մեզ զճիշտն, քան թէ ինձ մօտ կեղծաւորէիր, և այլոց կաշառ տայիր։ Վասն այն գրեմ ասէ, զի գիտասցես թէ գիտեմ, բայց զանց առնեմ։ Մեր մէկ քանի տաւարն քոյացուցեր ասէ, և տասնէն մէկն բերեալ մեզ ետուր և գնացեր։ Գիտուք թէ մեք ոչ խօսիմք. դու զի՞նչ մտածես ասէ։ Այդ վիճակդ իմ է, զի՞նչ

տաս ինձ ի տարին։ Եւ զկնի մեղազրելոյն՝ պատուիրեաց նմա, զի ընդ մեր տղայոցն քանի մի լծկան ե մսացու տաւար, և քանի մի տիկ իւղ ե պանիր յղեսցէ ի պէտս ս. Աթոռոյս։ Սողոմոնն ե զինակիրքն ելին ի միասին ի յունիսի ԻԸ։

ՄԺԵ.

Կարգելն սրբ. վեհին զՂազախեցի Աւետիք վարդապետն ի վերայ Բամբակաձորու ի կողմանէ իւրմէ իբր վէքիլ եւ փոխանորդ,

Բամբակաձոր որովհետև տէրունի էր ս. Աթոռոյս. և ժողովուրդքն տեղւոյն Թարց հովուի էին մնացեալ, վասնորոյ՝ և սրբ. վեհն գթացեալ ի նոսա, զՂազախեցի Աւետիք վարդապետն ըերեալ առ ինքն՝ ի կողմանէ իւրմէ իբր վէքիլ և փոխանորդ կարգեաց նոցա և առաջնորդական կոնդակաւ յղեաց անդ, զի երթեալ նստցի ի մէջ նոցա, և ըստ հաճոյից և կամացն Աստուծոյ հովուեսցէ և կառավարեսցէ զնոսա։ Եւ ի կոնդակոյն պատուէր գրեաց ժողովրդեանն, զի զԱւետիք վարդապետն ի կողմանէ իւրմէ իբր վէքիլ և փոխանորդ իմացեալ, և ս. Աթոռս իւրեանց առաջնորդարան՝ և ի սմա նստող Հայրապետն իւրեանց առաջնորդ գիտացեալ, ըստ ամենայնի հնազանդ լիցին նմա, և զչհասութեան և օրինազանցութեան գործս որք գոն ի միջի իւրեանց՝ իսպառ անհետասցեն, և ըստ Աստուածային օրինացն վարեսցին։ Եւ զամենայն առաջնորդական և զվանքական հասս և զիրաւունս անթերի տացեն նմա, զի և նա ի ս. Աթոռս առ մեզ հասուսցէ։ Եւ մանաւանդ յատուկ իմտատիայս արասցեն ս. Աթոռոյս՝ տալով նմա զիւղս՝ զպանիրս և զմատաղացուս ի լցուցումն պակասութեանն՝ ս. Աթոռոյս։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՇԼԳ, ՇԼԴ։ Ժողովարարութեան կոնդակ ևս ի վերայ Բամբակաձորու և Ղազախու գրեալ, ետ Աւետիս վարդապետին։ Ցորում պատուէր գրելով ժողովրդեանն, զի թէ յանուն ս. Գեղարդին մատաղ լիցին խոստացեալ, յանձնեսցեն նմա։ Նաև՝ զիւղս՝ զպանիրս և զմատաղացուս ևս տացեն նմա, զի բերեալ զպակասութիւն ս. Աթոռոյս հոգասցուք։

Թուղթ մի ևս շնորհակալութեան առ Բարաբէկն դրեաց, զի ի բերելն մերայնոցն ի Բամբակաձորու զԹղթատան փայտսն, վասն խաթեր սրբ. վեհին ձեռնտու լեալ նոցա։ Եւ վասն Աւետիք վարդապետին յանձնարարութիւն ևս դրեաց նմա։

Թուղթ ևս առ Մելիք Շաքարօն գրեաց ըստ սոյն ոճի։

Թուղթ մի ևս առ Մանուէլ վարդապետն գրեաց. պատուիրելով նմա յորդորել զժողովուրդսն, զի յանուն ս. Աթոռոյս առատութեամբ տացեն Աւետիս վարդապետին զիւղս՝ զպանիրս՝ զմատաղացուս և զայլ ինչս։ Ա տօնացոյց Աւետիս վարդապետին ետուք։ Ա տօնացոյց ևս Մանուէլ վարդապետին յղեցաք ընդ նմա։ Աւետիս վարդապետն և Ջալքէվխայն ելին ի միասին ի ս. Աթոռոյս, ի յունիսի ԻԷ։

ՄԺԶ.

Առաքելն սրբ. վեհին զՔեաֆայեցի Աստուածատուր ի Գաղատիա նուիրակ։

Կարգեաց սրբ. վեհն զՔեաֆայեցի Աստուածատուր վարդապետն նուիրակ ի վերայ Գաղատիոյ, և յղեաց անդ։ Ա նուիրակական և Ա տօնացուցի կոնդակ, և Ա քէրաթի սուրաթ ետ նմա։ ԻԱ հատ տօնացոյց ևս ետ նմա։ Ցորոց մէկն իւրեան, մէկն Գաղատիոյ Առաջնորդ Ստեփաննոս վարդապետին, և ԺԹ հատն տեղւոյ բոլոր եկեղեցեացն։

Թուղթ մի ևս առ Գաղատիոյ Առաջնորդ Ստեփաննոս վարդապետն։ (Որ ի պատմութեան ՌՄԺԹ երորդ ամին և ի դեկտ. ԻԷ յիշեցեալ է). յանձնարարութիւն վասն նուիրակին, զի միշտ ի սէր ունիցի զնա, և գործոյ նորին ձեռնտու լիցի։ Եւ պատուէր վասն յղեալ տօնացուցիցն զի մուղայէթ լեալ՝ ընդ նուիրակին իւրաքանչիւր եկեղեցեացն տեղւոյն մէն մի հատ տացեն, և պատուիրեսցէ ամենեցուն, զի այսուհետև զնա ի գործ ածիցեն։ Եւ ով ոք ի նոցանէ ստանալ կամի-

ցի՝ ծանուսցէ նմա, որ ի Մուրաճկեանցն առցէ։ Եւ հարկ՝ զի զսիրոյ գիրն անպակաս արասցէ ի մէնջ. զի սղացուցեալ էր զգիրն։ Նլ Աստուածատուր վարդապետն ի յունիսի Գ։

ՄԺԷ.

Ի Թիֆլիզ՝ առ Թաղօյնց սլ. Մկրտումն պատուէր՝ զի Թղթատանն աղագաւ Բ փայտատաշ խառատ յղեսցէ։ Նաեւ՝ զքանս Ախթալումայիցն լաւալէս հոգասցէ։

Թուղթ գրեաց սրբ. վեհն ի Թիֆլիս առ երեցփոխան պ. Մկրտումն՝ ի պատասխանի թղթոյն, զոր ընդ Թասալուի Յարութիւնին յղեալ էր։ Եւ գրեալ էր սրբ. վեհին թէ՝ ահա Բ խառատ ի պատրաստի կան, եթէ կամիս՝ յղեցից։ Գրեաց՝ զի փութով Բ փայտատաշ խառատ յղեսցէ։ Վասն այն չարխաքաշ խառատ ոչ խնդրեաց ի նմանէ, զի թղթաշէն ֆռանկաց գործոյն փայտատաշ խառատ էր պիտոյ այժմ։ Եւ վասն Ախթարմայից բանին գրեալ էր թէ՝ հրամանաւ Արքային հաստատուն պայմանադրութեամբ թուղթ առաք ի նոցանէ, զի այլ մի եւս Ախթարմայութիւն արասցեն։ Եւ սրբ. վեհն շատ հաւանեցաւ արարելոցն նոցին, և գրեաց նմա, զի ի գլուխ տարցեն զբանն, և զՄկրտիչ վարդապետն վճռահատ համբաւով յետս դարձուսցեն առ մեզ։ Զայս գիրս Թասալուի Յարութիւնին ետուք յղել առ նա։ Գրեցաւ ի յունիսի Գ։

Ժողովարարութեան թուղթ տուաւ Թիֆլիզեցի Ղարաղաշէնց Փարսադանի որդի տիրացու Յովսէփին, որ էր պարտատէր։ Ի վերայ Թիֆլիզու և Գեանջայու Ա ամ. պայմանաւ։ Որ եւ ի յուլ. ԺԳ։

Առ Թիֆլիզու նուիրակ Մարտիրոս վարդապետն պատուէր՝ նախապէս զքաղաքն նուիրակել, և ապա զվիճակսն նորին։ Եւ քահանայիցն ևս պատուէր՝ զի առատութեամբ տալ տացեն զնուիրակութիւն։

Ի մայիսի ԺԴ յորժամ. սրբ. վեհն զՄարտիրոս վարդապետն ի Թիֆլիզ նուիրակ յղեաց, պատուիրեաց նմա՝ զի նախապէս զշրջակայ վիճակսն և զգիւղօրայսն նուիրակեսցէ, և ապա զքաղաքն։ Իսկ այժմ. զվիճակսն նուիրակելն անձեռնտու էր. զի յայժմ. միջոցի շրջակայ վիճակաց շինական և հողագործ մարդիկքն ոչ լինէին ի տան. այլ իւրաքանչիւր ոք ի բանս և ի գործս իւր պարապեալ կայր։ Զոր Մարտիրոս վարդապետն գրեալ էր սրբ. վեհին, թէ զինչ արասցէ։ Եւ սրբ. վեհն զթուղթ գրեաց առ նա. և պատուիրեաց նմա, զի նախապէս զքաղաքն նուիրակեսցէ, և ապա զվիճակսն։ Եւ քահանայիցն զյանձնարարութիւն գրելն վասն իւր, ծանոյց նմա։ (Զոր յետոյ ասելոց եմք)։

Թուղթ մի եւս առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց։ Պատուիրելով նմա՝ զի Մարտիրոս վարդապետի գործոյն ըստ ամենի ձեռնտու և մուղայէթ լիցի։

Թուղթ մի ես պատուիրի ի վերայ Թիֆլիզու բոլոր քահանայիցն գրեաց։ Պատուիրելով նոցա, զի իւրաքանչիւր քահանայ զծուխն իւր յորդորեսցէ առատութեամբ տալ Մարտիրոս վարդապետին զնուիրակութիւնն իւրեանց։ Յղեցան այսոքիկ առ Թասալուի Յարութիւնն" առ Մարտիրոս պետն յղել ի Թիֆլիզ։ Գրեցաւ ի յուլիսի ԺԳ։

ՄԺԸ.

Առ Նուխեցիսն շնորհակալութիւն վասն յղեալ զանձանակադրամին իւրեանց։ Եւ Բայազիտու նուիրակին եւսմիամտութիւն, վասն առ մեզ հասուցեալ նուիրական արդեանցն։

Նուխեցիք զզանձանակադրամն իւրեանց (ԻԶ) ձեռամբ ս. Աթոռոյս գանձապետ մհ. Մկրտչի եղբայր պ. Նիկողայոսին այժմ. առ մեզ էին հասուցեալ։ Եւ սրբ. վեհն շնորհակալութեան և միամտութեան թուղթ գրեաց նոցա, զի զզանձանակադրամն իւրեանց առ մեզ հասեալ իմասցին՝ և միամտեսցին։ Եւ պատուէր՝ զի ի նոյն հարազատութեան մնասցեն առ ս. Աթոռս և առ մեզ։

Թուղթ մի ևս շնորհակալութեան և միամտութեան առ ս. Աթոռոյս գանձապետ մհ. Մկրտչի եղբայր պ. Նիկողայոսն գրեաց վասն

զանձանակադրամին։ (ԻԶ) Զի ի Նուխու եկեալ էր ի Յօյ. և զզանձանակադրամն բերեալ ընդ իւր՝ Ագուլեցի պ. Թումանի որդի պ. Գրիգորին էր յանձնեալ։ Եւ նա ես բերեալ ընդ իւր ի Բայազիտ, տէր Վահանին էր տուեալ, և տէր Վահանն դրեալ էր Մկրտիչ վարդապետին զհասանիլն զանձանակադրամին առ ինքն։ Եւ սրբ. վեհն գրեաց պ. Նիկողայոսին, զի զզանձանակադրամն զոր տուեալ էր պ. Գրիգորին, առ ս. Աթոռս և առ մեզ հասեալ իմասցի՝ և միամտեսցի։ Եւ վասն նեղութեան զոր կրեալ էր ի Թարվէզ մխիթարութիւն գրեաց նմա։ Եւ զՆուխեցւոց գիրն ի թղթոջս եգեալ յղեաց առ սա, տանել ընդ իւր, և Նուխեցւոցն տալ, զի միամտեսցին նոքա։ Միամտական զապգ ես առ Բայազիտու Նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց, զի ի Նուիրակական արդեանցն իւրոց ձեռամբ տէր Վահանին յետ և յառաջ նաղտ և վէճ որքան դրամ է հասուցեալ սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին, առ ս. Աթոռս և առ մեզ հասեալ իմասցի՝ և միամտեսցի։ Ցղեցան այսոքիկ ընդ գինակրացն մերոց առ տէր Վահանն, իւրաքանչիւր տեարցն յղել։ Որք ելին ի յունիսի ԺԶ։

ՄԺԹ.

Առ Կարնոյ Առաջնորդ Յարութիւն պետն՝ վասն անցիցն Մուտուրկու վանիցն։ Եւ ի Պօլիս եւ ի Թօխաթ եւս թուղթք՝ վասն զանազան իրակութեանց։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Կարնոյ Առաջնորդ Յարութիւն վարդապետն՝ ի պատասխանի Բց թղթոցն իւրոց ի յունիսի ԻԹ, և յամսոյս Ա գրեցելոց։ Զի ի վանսն Մուտրկու տաճիկ ոմն զաղտ յարուցեալ ի դիշերի՝ զհայ ոմն սպանեալ էր, զոր իմացեալ փաշայն՝ զմիաբանսն վանիցն ըմբռնեալ, ի բանտ էր արկեալ, և զյոլով դրամս խնդրէր ի նոցանէ։ Եւ զորպէսն եղելութեան գրեալ էր սա սրբ. վեհին, և խնդրեալ, իբրիջայի թուղթ գրել փաշային, զի ի բաց թողուցու զմիաբանսն։ Բայց սրբ. վեհն գիր ոչ գրեաց փաշային, ասելով թէ՝ փաշային զասարկ իբրիջայ գրելն անօգուտ է. այլ ընծայ է պիտոյ ասէ նմա։ Եւ մանաւանդ՝ վանից եղելութեան մեք չեմք տեղեակ ասէ, զինչ գրեսցուք փաշային։ Ծանոյց նմա քան զայս յառաջ ի յունիսի Ժ ընդ Մեսրոպ վարդապետին զտեզւոյ ֆարմանն՝ զկոնդակս և զայլ թուղթս յղելն ինքեանց։ Եւ պատուիրեաց՝ զի զոր ինչ դրեալ է ի նոսա, այնպէս արասցեն, և զինչ առնելն իւրեանց գրեսցեն ինքեան։ Եւ Գ Ախթարմայք կային ի քաղաքն. որք միտս միամիտ ժողովրգոցն վրդովէին։ Վասն նոցա բանիւ իշխանաց դրեալ էր սա սրբ. վեհին ընդ բանիւ առնել զնոսա. բայց սրբ. վեհն բանիւ ոչ արար նոցա. ասելով թէ՝ յորժամ բանադրիցեմ ասէ զդոսա, և քեզ գրիցեմ, որ զօրէնս նոցա ոչ կատարիցես, և քահանայիցն ես ոչ տայցես թոյլ կատարել. յորժէ եթէ վէճ իմն ծնանիցի, և տաճիկքն ի վրէժխնդրութիւն յարիցեն, և դրամավատնութիւն լիցի, եթէ յանձն առնուք ասէ որ վասն այդ բանիդ որքան դրամավատնութիւն լիցի դուք տալ, թղթով հաւատացուցէք ասէ մեզ, որ մեք եւ հոգևոր և մարմնաւոր պատժօք վրէժխնդիր լիցուք նոցա։ Եւ վասն յղեալ հին քեաթանին մեղադրութիւն գրեաց սմա. զի սորա առեալ հիսապոմն՝ թղթի Ա դաստայն Բ զռուշի աւելի նստէր ի մեր վերայ։ Վերոյիշեալ Բց բանիցս աղագաւ յատուկ փայեակ էր յղեալ սա առ սրբ. վեհն։

Թուղթ ես մեղադրութեան առ ս. Աթոռոյս գործակալ տէր Մանուէլն գրեաց։ Զի յառաջագոյն դրեաց սմա և Առաջնորդին, եթէ անպէտ քեաթան գտանիցի, որոյ հօխայն Բ և Գ փարայսվ տացեն, առէք։ Իսկ նոքա ԾԳ փարայով էին առեալ զքեաթանի հօխայն և յղեալ մեզ. և երբ կշռեցաք, Գ հօխայ պակաս եղև։ Եւ նոցա տուեալ գինն հիսապ արարաք, որ թող զխարճն և զջաֆայն, ի մէկ հօխայէն Գ դասաայ թուղթ ելանէր. և Ա դաստայն կէս ղռուշ նստէր։ Վասնորոյ՝ և պատուիրեաց սմա, զի թէ մեր առեալ գնոմն հին քեաթան տուօղ լիցի, առցեն. իսկ իւրեանց առեալ գնոմն մի ես առցեն։ Պատուիրեաց ես՝ զի զորպէս ծանոյց դիրն իւր անպակաս արասցէ ի մէնջ, և ի գրելն ես պարզապէս գրեսցէ. քանզի՝ ի գրոց նորին ոչինչ իմացեալ լինէր. զի անհեթեթ գրէր։

Ծանոյց սմա քան զայն 'յառաջ ընդ Մեսրոպ վարդապետին գիր գրելն առ ինքն, և զտօնացոյց 'յղելն, զի ծախեսցէ։ Եւ պատուիրեաց՝ զի զոր ինչ գրեալ է ինքեան ի 'յայն Թղթոջն, թարց զանցառութեան կատարեսցէ, և զպատասխանի Թղթոյն գրեսցէ ինքեան։ Եւ վասն Թօխաթու եկեղեցեացն՝ ընդ Մեսրօպ վարդապետին տօնացոյց 'յղեցաք սմա, առ մհ. Աղամջանն յղել։ Բայց յետոյ լուաք թէ Աղամջանն դեռ ի Պօլիս է, և գրեաց սմա, զի զտօնացոյցսն և կոնդակն ի ձեռն Նուիրակին 'յղեսցէ։

Թուղթ մի ես առ Խօջայ Նազարէթն ե պ. Թագէոսն, ի պատասխանի ի մայիսի Իէ դրեալ Թղթոյն իւրեանց։ Եւ ըստ ձեր դրեցելոյն՝ խոստացեալ էին Նոքա, զի վասն Կարնոյ ե Կարսայ փարժանացն Զ հատ սուրաթ հոգացեալ 'յղեսցեն։ Գրեաց նոցա՝ փութով հոգացեալ 'յղել։ Եւ վասն հարկաւոր առնլի իրաց ե Մեռոնի նիւթոց ի 'յունիսի ԻԳ Բ դաւթար 'յղեաց սոցա։ (Որ էր մհ. Յօնանի տարեալ դաւթարաց օրինակն), ե այժմ ծանոյց սոցա զյղելն դաւթարացն։ Եւ պատուիրեաց՝ զի փութով հոգացեալ 'յղեսցեն։ Եւ ֆսանկաց քսուրն՝ և թէ 'յերկրէն նոցա թուղթ լինիցի եկեալ, ե՛ս յղեսցեն։ Եւ վասն հանգուցեալ Շոռօթեցի Ղազարի րանին ղրեալ էին թէ՝ գրեանս գրեցաք ի Բասրա։ Գրեաց՝ զի մուղայէթ լիցին, ե զպատասխանին առեալ, ծանուսցեն ինքեան։ Գրեալ էին թէ՝ Ցամթայ մահսարի սուրաթն[34]) ի Կարին 'յղեցաք, զի առ քեզ 'յղեսցեն։ Բայց չէր հասեալ մեզ։ Զոր և ծանոյց նոցա։ Նւ ըստ սոցա դրեցելոյն՝ պատրիարքն վասն Ցամթայ Կարապետ վարդապետին ի կասկածանս կայր և վիրաւորեալ էր ի սրր. վեհէն, իրր թէ սրր. վեհն զիւր եղեալ Առաջնորդ Պետրոս վարդապետն հանելոց իցէ յԱռաջնորդութենէն, ե զԿարապետ վարդապետն վերստին ի Ցամիթ Առաջնորդ իցէ յղելոց։ Եւ սրր. վեհն ծանոյց սոցա քան զայս 'յառաջ այսր աղագաւ առ պատրիարքն զմիամտութիւն գրելն։

Թուղթ մի ես առ Գազատիոյ Նուիրակ Յովաննէս վարդապետն։ Զի թէպէտ ի 'յունիսի Ժ և ի ԻԳ գրեաց նմա գալ ի ս. Աթոռս, բայց 'յետոյ զայլ իմն մտածելով, այժմ կրկին Նուիրակ արար զնա։ ի վերայ Ուռումելու. ե գրեաց նմա, զի զհաշիւն իւրոյ Նուիրակութեան պատրիարքին տացէ, և զԹիւ Ուռումելու կոնդակին փոխեսցէ, և 'յՈւռումելին Նուիրակ երթիցէ։ Գրեաց ևս՝ եթէ Մեռոնդ պակաս իցէ ասէ, ի պատրիարքէն առ։ Եւ թէ գիր ինչ պիտոյասցի ընդ քեզ տանելոյ, խնդրեա ասէ ի մէնջ, զի հոգացեալ 'յղեսցուք։ Այլ և՝ խոստացաւ նմա թէ՝ զկնի քանի մի աւուրց տօնացոյց եմ ասէ 'յղելոց քեզ, և վասն երկրիդ։ Զի այժմ անձեռնհաս եղաք 'յղել։ Ցղեցաւ այս առ Նազարէթն՝ տալ նմա։

Թուղթ մի ևս առ Պօլսոյ Նուիրակ և պատրիարք Զաքարիա վարդապետն ի պատասխանի ի մայիսի Իէ գրեալ փոքրիկ Թղթոյն։ Եւ խոստացեալ էր սրր. վեհին թէ՝ ամենից գրեցելոցն քոց կատարումն եմ տալոց։ Բայց սրր. վեհն այսու չեղև միամիտ. զի զհարկաւոր գրեցելովքն իւրով զանց առնէր նա։ Գրեաց ևս՝ զի ի Յովաննէս վարդապետէն զնուիրակութեան հաշիւն առցէ, և Մեռոն տացէ նմա, ե յՈւռումելին 'յղեսցէ։ Եւ վասն Ցամթայ Կարապետ վարդապետին քան զայս յառաջ ի յունիսի ԻԳ միամտութիւն գրեաց նմա՝ թէ չեմք 'յղելոց զնա ի Ցամիթ. այլ ի ս. Աթոռոջս եմք պահելոց։ Բայց գիրն այն դեռ չէր հասեալ նմա, զի միամտիցէր, ուստի ի կարծիս անկանելով, կարի վիրաւորեալ էր զսրր. վեհէն. իրր թէ սրր. վեհն զիւր եդեալ Առաջնորդ Պետրոս վարդապետն հանելոց իցէ յԱռաջնորդութենէն, ե զԿարապետ վարդապետն վերստին ի Ցամիթ Առաջնորդ իցէ 'յղելոց։ Զոր Նազարէթն գրեալ էր սրր. վեհին։ Եւ սրբ. վեհն սիրախառն մեղադրութիւն գրեաց պատրիարքին, ասելով թէ՝ վասն Ցամթայ Կարապետ վարդապետին յառաջագոյն միամտութիւն եմ գրեալ ասէ քեզ. բայց գիրն այն դեռ չէ հասեալ քեզ. վասնայսորիկ զմեզ այնքան տմարդի կարծելով, համարեալ ես թէ՝ զԿարապետն յղելոց եմ ի Ցամիթ, և զքոյդ կարդեցեալն դրելոց, առ այս ե այդքան վիրաւորեալ ես։ Ապա ձեր հրամանն ե իշխանութիւնն որ քանիցս ոտնակոխ եղե ե լինի, մեք որքան պարտիմք ասէ վիրաւորիլ։ Գրեմ ասէ, զի մտածիցես։ Եւ զկնի այսքան մեղադրելոյն զնա, զամենայն անցսն Ցամթայ քաղաքին որ վասն Կարապետ ե Պետրոս վարդապետացն երկարապէս ծանոյց նմա։ Ծանոյց ես զմիտս

ղրեցեալոցն իւրոց, զոր ինչ գրեաց Ցամթեցւոցն, և Պետրոս վարդապետին։ Ցղեցաւ այս առ Նազարէթն, տալ նմա։

Թուղթ ես առ Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետն, ի պատասխանի յամսոյս Ն ղրեալ թղթոյն. զի Սարգիս վարդապետի գրեանցն աղագաւ կրկին բանս էր ղրեալ սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն որպէս ի մարտի ԻԳ, և այժմ ես պատուիրեաց սմա, զի մի ես խառնիցի ի բանս նորին. ինքեանք գիտասցեն ասէ։ Զի նորին ինչքն պատրիարքն էր կնքեցուցեալ։ Մեռոն էր խնդրեալ ի սրբ. վեհէն։ Եւ ի նուիրակացն մերոց աւելորդ Մեռոն գոյր առ տէր Իսրայէլն ամանաթ եդեալ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ի վերայ տէր Իսրայէլին զզապղ մի գրեալ յղեաց ի ձեռն սորա, զի տացէ նմա, և զՄեռոնն առեալ ի նմանէ, ի պէտս նուիրակութեան իւրոյ ի գործ ածցէ, և փութով աւարտեալ զգործն իւր, եկեսցէ ի ս. Աթոռս։ Ծանոյց նմա այժմ առ տէր Մանուէլն զպատուէր գրելն, զի զտօնացոյցսն և զկոնդակն տեղւոյն ի ձեռն իւր յղեսցէ։ Եւ որպէսն ի յունիսի Ժ, և այժմ ես պատուիրեաց նմա, թէ յորժամ տօնացոյցքն և կոնդակն առ քեզ հասանիցեն, զտօնացոյցսն բաժանեա ասէ, և զկոնդակն ծանուցմամբ ընթեռնուլ տուր յեկեղեցիսն, և պատուիրեա ամենեցունց՝ զի այսուհետև զսա ի գործ ածիցեն, և յետոյ զորպէսն գրեա ասէ մեզ։ Վասն գրագիր Ցովաննէսին՝ (որ եկեալ էր ի Թօթախ), յառաջագոյն գրեաց մհ. Աղամջանի վէքիլ պ. Աւետիքին, զի խարճի տացէ նմա, (I) և ի ս. Աթոռս յղեսցէ։ Զոր և ծանոյց սմա։ Այլ և պատուիրեաց նմա, զի յառաջագոյն յղեալ կոնդակի պահելոյ և չընթեռնլոյ պատճառն գրեսցէ ինքեան։ Ցղեցաւ այս առ մհ. Փիլիպպոսն, յղել առ նա։

Թուղթ մի ես առ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսն և նորին եղբայր Խօջայ Առաքելն ի պատասխանի երկուց թղթոցն իւրեանց։ Որոց զմինն ընդ ուխտաւորացն էին ղրեալ, և զմիւսն ընդ երիցու միոյ։ Բքն ես անթիւ։ Թօխաթու Բ բեռն ընդ Ցարութիւն և Ստեփանին յղեալ էին առ մեզ։ Եւ տղայքն ի բերելն ղբեռինսն, ջուրն էին ձգեալ և ապականեալ։ Եւ ի բեռանցն ԿԸ չախու և քանի մի լաւ մահրամայք ես պակաս էին։ Զոր ի կլւմրուկուՖն էին վեր առեալ։ Զորս ծանոյց նոցա ասելով թէ՝ զկեօմրուկն և զայլն՝ Բ բեռն 195 ղռուշ գրէք ասէ, աւելի տալով կեօմրուկն. և քորէն ես վեր առնուն միշտ։ Դուք իմացա՛ք ասէ, թէ ո՛չ։ Այլ և՝ ի կարին Աստուածատուր անուամբ տղայ մի կայր, որ ի Թուրքալու խանն...*)

ՌԿ.

...ցի կոնդակ յղեցի այդ կողմանցդ աղագաւ, բայց կոնդակն այժմ անձեռնհաս եղաք հասուցանել. վասնորոյ՝ զՑովաննէս կաթուղիկոսի և Աբրահամ վարդապետի գիրն և տօնացոյցն ընդ Ղուկաս տղային առ տէր Վահանն յղեցաք, և ղրեցաք նմա պահել առ ինքն, մինչև կոնդակն ես ղրեալ յղեսցուք առ ինքն, և ապա ի միասին յղեսցէ ի տեղի իւր։

Թուղթ ես սրբ. վեհն սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին գրեցոյց առ տէր Վահանն։ Եւ զվերոյիշեալ ղրեանսն և զտօնացոյցսն յղեաց առ նա յղել ի տեղիս իւրեանց։ Եւ Ծ հատ տօնացոյց ես յղեաց առ նա, ղի գնովն ծախեսցէ, (Բ) և զգինն առ մեզ հասուսցէ։ Գ հատ տօնացոյց ես ուրոյն յղեաց առ նա, զի Ա հատն Մարդար Աղային տացէ, և Բ հատն Բայաղիտու Բ եկեղեցեացն։

Թուղթ մի ես առ Թարվիզու նուիրակ Գրիգոր վարղապետն գրեցոյց նոյն Մկրտիչ վարղապետին։ Պատուիրելով նմա՝ զի մի՛ գուցէ առաջին ղրեալն հարկ իմասցի ի վերայ իւր, և զգործն իւր թէ վէքէլի Սողոմօն վարղապետին յանձնեսցէ և ինքն եկեսցէ յԱթոռս։ Այլ թէ գործն իւր շատ իցէ Ֆնացեալ, ինքն աւարտեալ եկեսցէ յԱթոռս։ Ցղեցաւ այս առ տէր Վահանն, փութով յղել առ նա։

Թուղթ ես Ուէշտու և Սնգալուայ քահանայիցն գրեաց ծանուցանելով զորպէսն աօնացուցին։ Եւ վասն Բ եկեղեցեացն նոցա Բ հատ տօնացոյց յղեաց։ Եւ պատուիրեաց նոցա, զի այսուհետև զնոսա ի գործ ածիցեն։ Եւ վասն նուիրակին շնորհակալութիւն գրեաց, զոր շահեալ էին և ի սէր ընկալեալ։ Եւ գլխաւոր իշխանացն և ժողովրդոցն ողջոյն գրեաց։

---

*) Մէջ տեղը դատարկ թերթեր լինելով բնագրում՝ ոչ այս թուղթն էր վերջացած և ոչ յաջորդի սկիզբը կար։

Թուղթ մի ևս առ Դիլանու նուիրակ Պետրոս վարդապետն ղրեաց։ (որ յանցեալ ամին և ի յուլ. ԻԸ յիշեցեալ է.) ի պատասխանի Բց թղթոցն իւրոց ի մարտի Ժ և ի յԱպ. ԺԶ գրեցելոց։ Եւ պարոն Դաւիթն որ ըստ մեր խնդրոյն քանի մի կտոր շիմշատ փայտ էր յղեալ ընդ երևանցի տէր Յովաննէսին, ծանոյց նմա։ Ծանոյց նաև վասն Ռէշտու և Անզալուայ եկեղեցեացն զնոր տօնացոյց յղելն ի ձեռն պարոն Դաւթին։ Եւ պատուիրեաց նմա՝ զի թէ ինքն ի ճանապարհի իցէ, բարի է. իսկ թէ տակաւին ի վիճակն իցէ, ծանուցժամբ պատուիրեսցէ ամենեցուն, զի այսուհետև զնոր տօնացոյցն ի գործ ածիցեն, և ինքն ևս զմնացեալ գործն իւր աւարտեալ, եկեսցէ յԱթոռս։ Եւ Ուսումելու կոնդակն և գրեանքն բերցէ ընդ իւր։

Թուղթ մի ևս ի Ռէշա առ պարոն Դաւիթն գրեաց. ի պատասխանի Բց թղթոցն իւրոց ի մրտ. Զ, և ի յԱպ. ԺԶ գրեցելոց։ Ընդ երևանցի տէր Յովաննէսին քանի մի կտոր շիմշատ փայտ էր յղեալ ըստ մեր խնդրոյն։ Եւ խոստացեալ էր ևս յղել։ Վասն որոյ և սրբ. վեհն շնորհակալութիւն գրեաց նմա։ Եւ պատուիրեաց՝ զի թէ շիմշատ փայտ ևս յղելոց լիցի, ի յաշնանն կտրել տացէ, և ի գարնանն յղեսցէ, զի ամբողջ և անճեղ մնասցին. զի այսոքիկ զորս այժմ յղեալ էր, ճեղքեալ էին և ըստ մեծի մասին անպիտանացեալ։ Եւ քահանայից և նուիրակի գիրն ի թղթոջս եդեալ ի ձեռն սորա յղեաց՝ տալ նոցա։ Եւ ընդ գբեանսն Դ հատ տօնացոյց և՛ս յղեաց առ նա, զի զերկուսն Ռէշտու և Անզալուայ եկեղեցեացն տացէ, և զմինն վասն իւր առցէ։ Եւ վասն նուիրակին շնորհակալութիւն գրեաց, զի գործոյ նորին ձեռնտու լեալ։ Եւ. պատուիրեաց ևս՝ զի թէ նուիրակն ի ճանապարհի իցէ, բարի է. և թէ ոչ՝ զմնացեալ գործն նորին աւարտել տացէ, և փութով ի ս. Աթոռս յղեսցէ զնա։ Պատուիրեաց ևս՝ զի Յովսէփ վարդապետի և տեղւոյ Շահրանտարի որպէսն գրեսցէ մեզ։ Զի թէպէտ Շահրանտարի որպէսն գրեալ էր սրբ. վեհին, բայց պարզապէս չէր գրեալ։ Այսոքիկ ևս առ տէր Վահանն յղեցան ընդ քարտաշ Դասպարի եղբօրն։ Որ ելի յօգ. Դ։

Օրհնութեան թուղթ ետ սրբ. վեհն Ղաղախեցի Յովաննէս անուամբ ծերունի ժառգոյ միոյ, ի վերայ իւր և կնոջն իւրոյ Խանումին, զի ի տեղի հոգեբաժնին իւրեանց՝ Ա լաւ եզն երեր ի ս. Աթոռս և յանձնեաց մեզ, և ի սրբ. վեհէն օրհնութեան գիր խնդրեաց ի վերայ իւրեանց. և սրբ. վեհն զայս գիրս ետ նմա։ Զորս և առեալ գնաց ի օգոստոսի Դ։

ՄԿԱ.

Յղելն սրբ. վեհին զՂազար պետն ի Յամլթ նուիրակ։ Եւ կատարելն զխնդիր հալապցի Պետրոս պետին։

Կարգեաց սրբ. վեհն զգիւղորէից Առաջնորդ Ղազար վարդապետն նուիրակ ի վերայ Յամթայ, և ընդ յամթեցի մհ. Դաւթին յղեաց ի վիճակն իւր։ Եւ ի յղելն զայս ինչ ետ նմա։ Որ էր աւելի։ Եւ սրբ. վեհն հազիւ լռեցոյց զնա։ Եւ այժմ ևս զԱլիբէկն էր յարուցեալ ի վերայ նուիրակին։ Քանզի նուիրակն աւարտեալ էր զԲայազիտու գիւղորայսն. և գնացեալ էր ի Թօփրախղալայն, զի զնա ևս նուիրակեսցէ. իսկ Ալիբէկն՝ ի սադրելոյ Զաքարիա վարդապետին, ԴԾ ղուռշ էր խնդրեալ ի նուիրակէն, թէ մինչև ԴԾ ղուռշ չտաս, ոչ թողից զքեզ նուիրակել զերկիրն իմ։ Եւ նուիրակն առ այս կարի յուսահատեալ, գնացեալ էր ի յԻւչքիլիսայն։ Զոր իմացեալ տէր Վահանն, ղրեալ էր սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն բարկացեալ ի վերայ Զաքարիա վարդապետին, զթուղթ մի մեղադրութեան գրեաց ի վերայ նորա։ Ասելով թէ՝ ահա յայտնի եղև ասէ ամենեցունց՝ որ քո մեծութիւնդ ոչ սիրեցեր զնուիրակդ մեր, և ոչ հաշտեցար ընդ նմա։ Եթէ մեք զգործն դորա կիսակտուր թողեալ ասէ բերէաք, Աթոռոյս անուանն և մեր պակասութիւն էր. և թէ ոչ, դու ոչ դադարիս ասէ. զի զփաշայն յարուցեր ասէ հազիւ լռեցուցաք. և այժմ ևս զԱլիբէկն յարուցեր։ Եթէ դորա ևս գըրեալ լռեցուցանեմ, զմիւս բէկն յարուցանելոց ես ասէ։ Դոնէ եթէ զմերն ոչ, Աթոռոյս պատիւն ևս ոչ բերես ասէ ի միտ։ Եւ վերջապէս պատուիրեաց նմա թէ՝ կամ Ծ ղուռշի ընծայիւ գնացեալ ասէ տես զբէկն,

և հրաման առ. վասն Նուիրակին, զի զԹօփրախզալյան ևս Նուիրակեալ դարձցի յԱթոռս, և կամ թէ՝ զՆուիրակն մեր զանելով և խայտառակելով առ. մեզ դարձո, որ թօպալ լինի, որ այլ Նուիրակ չմտանէ ասէ ի վիճակն քո։ Յղեցաւ այս առ Նուիրակն, տալ նմա։

Թուղթ մի ես առ Բայազիտու Նուիրակ Գալուստ վարդապետն գրեաց։ Եւ զմիտս թղթոյ Զաքարիա վարդապետին ծանոյց սմա։ Որում և պատուիրեաց թէ՝ զի թէ Զաքարիա վարդապետն Ծ ղուռուշով կու շինէ ասէ զայդ բանդ, Ծ ղուռուշն տուր ասէ, և գնացեալ զԹօփրախզալյան ես Նուիրակեա։ Եւ թէ ոչ, փութով ելեալ ասէ եկ ի սուրբ Աթոռս։ Այլև՝ ընդ թղթոյս Ա բէրաթի սուրաթ յղեաց նմա, զի թէ ձեռնտու և պիտոյ լիցի, ցոյց տացէ բէկին և այլոց, և ի գալն՝ ընդ իւր բերցէ։ Զայս գրեանքս առ տէր Վահանն յղեցաք, զի ի ձեռն Նուիրակին յղեսցէ։

Թուղթ ես մեղադրութեան առ. Վանայ Նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վարդապետն գրեաց իւր ձեռամբն. զի քանիցս անգամ գրելով խաբեաց սրբ. վեհին թէ՝ այնքան տաւար կուղարկեմ, որ վանքն լցուի։ Յետոյ գրեաց թէ՝ մինչև ի Համբարձումն կուգամ։ Յետոյ գրեաց թէ՝ մինչև ի Վարդավառն կուգամ։ Ահա՝ յինունքն։ Համբարձումն. Վարդավառն և Աստուածածինն ես անցին. ոչ մէկ տաւար յղեաց յԱթոռս, և ոչ ինքն եկն։ Յետոյ ընդ մհ. Սուքիասին գրեալ էր թէ՝ պարոն Պապօյին դրամ ետու, որ բերէ յԱթոռդ։ Նա ևս ոչ եկն։ Մհ. Սուքիասն Գ ամիս մնաց աստ, և յետոյ ելեալ գնաց։ Յայս տարի ի ցրտէն տաւար չմնաց մեզ. և տաւարաց պիտանաւորութեան ժամանակն ևս այս էր. իսկ սա ոչ յղեաց. և մեք ևս սորա առաքմանն սպասելով, յայլուստ չհոգացաք։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն կարի մեղադրեաց զսա, ասելով թէ յայս հարկաւոր ժամանակիս որ տաւար չուղարկեցիր ասէ, պէտք է ասէ որ յաշունն ուղարկես, որ դատարկ կանգնեն և խոտ ուտեն։ Ո՞ւր է ասէ քո առաջին սէրն և հարազատութիւնն. բարով չէիր ասէ Առաջնորդ եղեր։ Ահա այսքան ժամանակ ոչ մէկ փարայ, և ոչ մէկ ուլ չտեսաք ասէ ի քէն։ Եւ այլ այսպիսի բանք։ Թուղթ մի ևս առ Մուշարիւբցի տէր Յովաննէսն և յորդի նորին տիրացու Ստեփաննն գրեաց։ Եւ զՊաղտասար վարդապետի գիրն ընդ քարտաշ Գասպարի եղբօրն յղեաց նոցա, զի տացեն նմա։ Այլև՝ Ա նոր տօնացոյց յղեաց նոցա յընծայ։

Թուղթ մի ևս առ. սրբ. Թադէոսի Առաքելոյ վանից Առաջնորդ Եսայի վարդապետն գրեաց։ Ծանուցանելով նմա զորպէսն տօնացուցին։ Եւ Ա հատ տօնացոյց յղեաց նմա վասն վանիցն իւրոց։

Թուղթ մի ևս առ Մշու սրբոյ Կարապետի Առաջնորդ Յօնան վարդապետն գրեաց. և Ա հատ տօնացոյց յղեաց նմա վասն վանիցն իւրոց։

Թուղթ մի ևս ի Գանձասար Յովաննէս կաթուղիկոսն գրեաց։ (որ յիշեցաւ ի յԱպ. ԺԷ.) և Բ հատ տօնացոյց յղեաց նմա, զմինն վասն իւր, և զմիւսն Գանձասարու եկեղեցւոյն իւրոյ։ Յղեցաւ այս առ Աբրահամ վարդապետն, յղել առ նա։

Թուղթ ևս Տաթևու Առաջնորդ Աբրահամ վարդապետին գրեաց։ (որ ի յԱպ. Ա յիշեցեալ է.) և Բ հատ տօնացոյց յղեաց նմա զմինն վասն վանիցն իւրոց, և զմինն իւրեան։ Եւ վասն Ահարօն վարդապետին յանձնարարութիւն գրեաց։ Եւ Յովաննէս կաթուղիկոսի գիրն և տօնացոյցն ի ձեռն սորա յղեաց, զի առ նա յղեսցէ։ Եւ զորպէսն տօնացուցին և թղթատանն ծանոյց նմա։

ՄԿԲ.

Առ Հախըակու Սալահըէկն, որ խնդրեալ էր զՍողոմոն վարդապետն վերստին յղել անդ Առաջնորդ։ Բացասութիւն խնդրոյն։

Ի սա որում գրեաց սրբ. վեհն ի յնվ. Ի առ Սալմաստցիսրն և Որմեցիսն վասն Սողոմոն վարդապետին թէ՝ որքան որ յայդր մնայցէ՝ լուծեցեալ է ի կարգէն, զի այլ ոչ է դա ձեզ Առաջնորդ և ընդունօղքն բանադրեալք են, և այսուհետև ես չեմ յղելոց վասն ձեր Առաջնորդ՝ որքան որ դուք այդպէս յամառեալ էք։ Զայսոսիկ լսելով Սողոմոն վարդապետին, ապա յակամայ կամս եկեալ եկն ի ս. Աթոռս, և կայր աստ ի կարգս հասարակ միաբանիցն։ Եւ մնաց թեմն այն՝ և վանք սրբոյ Առաքելոյն Բարդուղիմէոսի թարց Առաջնորդի։ Իսկ այժմ Հախբակու Սալահրէկն գիր էր գրեալ առ սրբ. վեհն աղերսանօք՝ ի ձեռն քրդոյ միոյ Իբրահիմ անուամբ, և . մհ. Ցարութիւն անուամբ հայոց միոյ (որք յառաջագոյն ես եկեալ աստ վասն սոյն Առաջնորդութեա խնդրոյ քանիցս անգամ) և խնդրեալ էր, զի զՍողոմոն վարդապետն յղեսցէ անդ դարձեալ առնել Առաջնորդութիւն։ Գիր մի ես վայր ի վերոյ և սակաւ կնքովք Հախբակու հայքն էին գրեալ ըստ հրամանի բէկին վասն սոյն խնդրոյ՝ և ընդ մհ. Ցարութիւնին յղեալ։ Իսկ առ Բայազիտու Իսաղ փաշայն ես գրեալ էր Սալահրէկն զաղերսանս, զի նա ես մարդ դիցէ ընդ իւր մարդկանցն և յղեսցէ սրբ. վեհին զիրիջայս, առ ի կատարել զխնդիրս իւր։ Եւ նա ըստ նորին խնդրոյն թուղթ էր գրեալ առ սրբ. վեհն, և զքուրտ մի ես յղեալ Միրզա անուամբ ընդ մարդկանց Սալահրէկին։ Որք ի միասին եկին աստ։ Եւ զձի մի ես Սալահրէկն ընծայ էր յղեալ սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն գրեաց զթուղթ առ Սալահրէկն ի պատասխանի թղթոյն, թէ Առաջնորդն որ գայցէ յայդր, հայոց պարտի լինիլ Առաջնորդ. իսկ այդ վիճակիդ հայքն միշտ անմիաբան են, որպէս բազմիցս տեսաք և փորձեցաք. զի զՍալմաստցւոց կամեցեալն և ընկալեալն՝ դու և Հախրակցիք ոչ ընդունիք, և զձեր կամեցեալն, Սալմաստցիք և Ահմատխանն ոչ ընդունին։ Ուստի՝ ով ոք և իցէ Առաջնորդ՝ յայդ վիճակոջն Առաջնորդութիւն առնել և նստիլ ոչ կարէ։ Այժմ դու զՍողոմոն վարդապետն խնդրես, և քո հախրակցի հայերդ ես մէկ վայր ի վերոյ և սակաւակնիք թուղթ են գրեալ, բայց ի Սալմաստցւոցն ոչ թուղթ էր եկեալ և ոչ մարդ. ուստի թէ յղիցեմք զԱռաջնորդն, դուք ընդունելոց էք, և սալմաստցիքն չեն ընդունելոց նման առաջնոյն, և դարձեալ ցաւելոց է գլուխ մեր։ Վասնորոյ՝ այժմ ոչ յղեցաք զԱռաջնորդ, և ոչ որքան որ այդպէս անմիաբան է այդ վիճակդ, յղելոց եմք յայդր զոք Առաջնորդ։ Այլ յորժամ երկու կողմունքն կատարելապէս միաբանիցին, և միաբանութեամբ խնդրիցեն ի մէնջ զԱռաջնորդ, յայնժամ և մեք զխնդիրս նոցին կատարելոց եմք, և զով ոք որ խնդրիցեն, տալոց եմք իւրեանց Առաջնորդ։ Գրեաց և զշնորհակալութիւնս վասն ձիոյն զոր ընծայ էր յղեալ։

Թուղթ ևս առ Իսաղ փաշայն գրեաց ի պատասխանի թղթոյն, և զոր ինչ գրեաց

Ալահրէկլին, ծանոյց նմա, և խնդրեաց ևս՝ զի ինքն ես նմա գրեսցէ, որ ինքն մի խառնիցի ի բանս Առաջնորդութեան. այլ թողցէ հայոցն, զի նոքա միաբանիցին, և զԱռաջնորդ խնդրեալ առցեն։ Զի որքան աւէնա՝ և Խօյայ Ահմաախանն խառնին ի բանս Առաջնորդին, զովոք ինքեանք կամին, ընդունել տան, և զովոք ոչ կամին անընդունակ առնել տան, անդ Առաջնորդ նստել ոչ կարէ։ Զսոյն բերանով եկողացն ես ասաց՝ ասել առաքողացն իւրեանց։ Եւ հախբակցւոց թղթոյն պատասխանի ոչ գրեաց վասն ղոլոյն վայր ի վերոյ, և կնքողաց աննշան լինելոյն։ Ելին ի օգոստոսի Ը։

Ժողովարարութեան թուղթ ետ սրբ. վեհն խօյեցի տէր Խաչատուր անուամբ երիցու. միոյ, այսու անուամբ, թէ աղքատ է և պարտատէր։ Ի վերայ Խօյայ և Ալմաստու միայն գրեցաւ։ Զի սա ընդ Ասորւոյ միոյ վասն հարկաւոր իրաց ինչ գնացեալ էր առ Հերակլ Արքայն. և ի դառնալն երկուցեալ էր, թէ հարցանիցէ ոք զգնալոյ պատճառն։ Ուստի՝ խնդրեալ էր ի Հերակլ Արքայէն գրել առ սրբ. վեհն, զի տացէ ինքեան զթուղթ մի ժողովարարութեան. զի այնու անուամբ զինքն երևեցուսցէ եկեալ յայս կողմունքս։ Եւ Արքայն ևս գրեալ էր։ Եւ սրբ. վեհն ևս ետ։ Ի օգոստոսի Ը։

ՄԿԳ.

Ի յԱտանայ քաղաքն վասն նոր տօնացուցին, եւ ի Թօփրախղալայ եւս՝ վասն նոր հաստատեալ զանձանակին օրհնութիւն։

Ի յԱտանայ քաղաքէն Գ ուխտաւորք էին եկեալ՝ որ է Թեմ. Սսայ. որոց անուանքըն էին՝ մհ. Աբրահամ, և տիրացու Սաեփան։ Եւ զի մինչև ցարդ ի նոր տօնացուցէն մերմէ տակաւին չէաք յղեալ յայն կողմունսն, ուստի՝ այժմ ի ձեռն սոցա տօնացոյց յղեաց վասն Ատանայու քաղաքի երկուց եկեղեցեացն, ս. Աստուածածնին, և ս. Ստեփաննոսին։ Եւ ղրեաց զթուղթ օրհնութեան հասարակապէս առ ժողովուրդ քաղաքին, թէ մինչև ցարդ եկօղ ոչ պատահեցաւ ի ձէնջ աստ, կամ ի մէնջ յայդկոյս, որ վասն ձեր զնոր տօնացոյցս յղէաք, այժմ որովհետև այս ուխտաւորքս եկին աստ ձեռամբ սոցին Բ տօնացոյց յղեցաք վասն ձեր Բց սբրոց եկեղեցեացդ, զոր պարտիք ի գործ ածել՝ և համաձայնելով ամենից եկեղեցեաց ազգիս մերոյ՝ յորս սփռեալ եմք զնոր տօնացոյցս, կատարեսջիք համաձայնութեամբ զտօնս սրբոցն Աստուծոյ։ Զի վասն այսր իսկ յարմարեցաք զնոր տօնացոյցս, զի համաձայն եղիցին տօնակատարութիւնք ազգիս մերոյ, և անհամաձայնութիւնն բարձցի։ Եւ այլ առ այս բանք։ Գրեաց ևս՝ զի ում և պիտոյասցի նոր տօնացոյց, ի Կարնոյ ի Մուրտիկղատէիցն խնդրեալ տարցեն։ Կին մի ևս էր եկեալ անտի ընդ սոսա յուխտ, մհ. Ալթուն անուամբ։ Որք ի ճանապարհին անցեալ ընդ Հիւսէյնիկ գեօղն՝ որ է ի Խարբերթ, Բ կանայք ի ձեռն նոյն կնոջն ԱՃԵ փարայ դրամ էին յղեալ աջահամբոյր, որոց զանուանսն ոչ գիտէր բերօղ կինն։ Վասն որոյ դրեաց սրբ. վեհն թուղթ առանց անուան առ տուօղ կանայսն, զոր տուաք նոյն կնոջն տանել տալ նոցա։ Իսկ և Բայազիտու հին նուիրակ Գալուստ վարդապետն՝ (որ յիշեցեալ է ի դեկտ. ԺԸ և ի վերոյս նորին.) հազիւ թէ աւարտեալ զնուիրակական գործն եկն ի ս. Աթոռս ի Յունիս ամսեանն, բերեալ զլիալիր արդիւնս քան զառաջինսն։ Եւ զի ի Թօփրախղալայ մինչև ցայժմ զանձանակ չէր հաստատեցեալ վասն սրբոյ Աթոռոյս, իսկ սա հաստատեալ էր յորդորմամբ. և զՈւստայ Սահակն կարգեալ էր ս. Աթոռոյս զանձապետ, և զտէր Սարգիս և տէր Սիմէօն քահանայսն կարգեալ էր շրջեցուցանօղ զանձանակին։ Վասնորոյ՝ այժմ խնդրեաց ի սրբ. վեհէն զգիր օրհնութեան առ նոսա։ Ուստի զթուղթ գրեաց սրբ. վեհն առ Թօփրախղալայու ժողովուրդսն, շնորհակալութիւն վասն սիրով ընդունելոյն զԳալուստ վարդապետն, և զնուիրակութիւնսն առատօրէն տալոյն, և զզանձանակն հաստատելոյն։ Եւ պատուէր զի միշտ հաստատուն պահեսցեն զզանձանակն։ Եւ վասն զանձապետութեան ուստայ Սահակին, և զանձանակ շուրջածելոյ տէր Սարգիս և տէր Սիմէօն քա-

հանայիցն դրեաց զհաստատութիւն, և պատուէր՝ զի արի լիցին ի գործս իւրեանց։

Թուղթ մի ես գրեաց ի յԱշղալայ գիւղն առ. Մէհրօն, շնորհակալութիւն և օրհնութիւն վասն տալոյն ս. Աթոռոյս զմէկ որձ ձագ, ի ձեռն Գալուստ վարդապետին։ Ցղեցաք զայսոսիկ առ տէր Վահանն ի Բայազիտ, յղել առ Նոր նուիրակ Ներսէս վարդապետն, զի հասուսցէ ի տեղիսն ի ձեռն Կարմիր Կոնտցի տէր Նիկողայոսի որդի Գրիգորին, որ զվերոյգրեալ ուխտաւորսն բերեալ էր, և տարաւ ի օգոստոսի ԺԵ։

ՄԿԴ.

Առ Խօջայ Խանն եւ Սալմաստու Մէլիքսըն, վասն Առաջնորդութեան Բարդուղիմէոսի Առաքելոյ վանիցն։

Որպէս ի վերդ յամսոյս Ը ասացաւ, թէ Հախրակու Սալահրէկն զՍողոմոն վարդապետն խնդրեալ էր ի սրբ. վեհէն դարձուցանել անդրէն յետս՝ առնել առաջնորդութիւն սրբոյ վանից Բարդուղիմէոսի Առաքելոյն, զնոյն բանս լսելով Սալմաստու Մէլիքացն և Խոյայ Ահմատ Խանին, այնպէս էին կարծեալ թէ սրբ. վեհն զխնդիր նորին կատարելով՝ յղէ անդ զՍողոմոն վարդապետն։ Վասնորոյ՝ դրեալ էին զբազմակնիք թուղթ առ սրբ. վեհն համայն գլխաւորք երկրին Ալմաստու, թէ մի կատարեր զխնդիր Սալահրէկին, զի մեզ չէ ընդունելի, և Հախրակու ժողովրդոցն ևս ոչ է ընդունելի։ Զի Սալահրէկն անխնայօրէն կեղեքէ զսուրբ վանքն, կամի անդ այնպիսի Առաջնորդ Նըստել՝ որ ըստ իւր կամացն լիցի. և զոր ինչ կամիցի, անարգել առցէ։ Որպէս զՍողոմոն վարդապետն ըստ իւր կամացն էր գտեալ. զոր ինչ կամէր՝ առնոյր, և յետ գնալոյն ևս զոր ինչ կամեցաւ, էառ, մինչև զայն ձին զոր վասն քոյ ընծայ էր յղեալ՝ ի վանիցն յետս է առեալ, ղզօմէշսն և զեզինսն ծախել տալով և զգինս նոցին որ լեալ է Ջ թուման, առնլով, ասելով թէ՝ ես ձեր Խալիֆային Ա ձի յղեցի ընծայ՝ Ջ թուման արժէր։ Որում թէպէտ և ասացեալ ես են թէ, Խալիֆայն ի քէն ձի ոչ խնդրէր, թող չյղէիր, այլ չէ ինչ օգտեալ։ Եւ զայս ամենայն մեր Խանն յորժամ լուաւ, զմեզ կոչեաց թէ՝ գրեցէք Խալիֆային որ Առաջնորդ չյղէ յայն վանքն, ես ևս կու գրեմ։ Զի այն քիւրտն որքան որ անդ սևագլուխ տեսանէ, սկսանի զայն վանքն քակել. և զկայսն կողոպտել. իմ ռայաթն [35]) ինչ պարտականութիւն ունի քրտոյն, որ վանքի անուամբն արդիւնք տայ, և քիւրտն խլէ և ուտէ։ Զայսոսիկ այսպէս դրեալ էին, և խնդրեալ՝ թէ ժամանակ ինչ Առաջնորդ մի յղեր անգ. այլ թողասցէ վանքն առանց Առաջնորդի, զի այն քիւրտն փոքր ինչ ճնշեսցի և զմեզ աղաչեսցէ. ապա և մեք ընդ Հախրակցւոց միաբանեալ, հաստատնապէս կանոն և պայման դիցուք ընդ նմա, որ բաց ի յիւր բնական դարմանայէն [36]) զոր յառաջ առեալ է ի վանիցն այլ աւելի պահանջմունս մի արասցէ։ Եւ յորժամ այսպէս հաստատուն կանոն դիցուք ընդ նմա և միամտիցուք, ապա ի մեր երկրէս զվարդապետ մի կամ զայրի քահանայ մի առեալ բերցուք առ ոտս սրբութեանդ, որ մեզ Առաջնորդ արասցես, և տարեալ նստուսցուք ի վանսն մեր։ Զի օտարական և դարիպ սևագլուխն անդ նստիլ և Առաջնորդութիւն առնել ոչ կարէ։ Զի որքան զանընտել Առաջնորդս տեսանէ անդ քիւրտն այն, ևս առաւել զպահանջմունսն առաւելացուցանէ։ Ուստի՝ ի մեր երկրէս պարտի լինիլ Առաջնորդն, զի մի կարասցէ շատ ճնշել նմա, այլ կարող լիցի Առաջնորդն փոքր ինչ դիմակայիլ նմա, և ի շատ նեղացուցանելն նորին, խոյս տալ ի նմանէ ժամանակ ինչ՝ և դալ առ մեզ ի Սալմաստ, մինչև նա աղաչանօք յետս դարձուսցէ ի վանքն, և այլ մի կարասցէ զաւելի պահանջմունս առնել, որով ապա և շինութիւն վանիցն առնուցու զկայ։ Զնոյն բանս Ահմատ Խանն ևս գրեալ էր ի կարճոյ առ սրբ. վեհն. թէ մի յղեր անդ Առաջնորդ, մինչև լաւ և հաստատուն կանոն իմն հաստատեսցի, և ապա զով ոք Առաջնորդ խնդրեսցեն ի քէն Ալմաստցիքն, զնա արա իւրեանց Առաջնորդ, և յղեա ի վանքն։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն դրեաց առ Ալմաստու Մէլիքսն զթուղթ համաբականպէս, ի պատասխանի թղթոյն իւրեանց. հաճութիւն և հաւանութիւն ամենից գրեցելոցն

իւրեանց։ Եւ թէ՝ դուք այնպէս էք իմացեալ, թէ մեք փութով յղեմք անդ Առաջնորդ ըստ խնդրոյ Ալահրէկին, այլ ոչ յղեցաք, զի մեք ես դիտեմք, որ մինչև դուք և հախրակցիք չմիաբանիցիք, և այն քիւրտն լաւապէս չճնշիցի, և հաստատուն կանօն չդնիցէք ընդ նմա, որ զաւելի պահանջմունս չառնիցէ, անդ Առաջնորդ նըստիլ ոչ կարէ։ Ուստի՝ մինչև այդպէս ոչ առնիցէք, և մանաւանդ՝ մինչև ոչ թողուցուք և ի բաց բառնայցէք դուք ի միջոյ ձերմէ զայգ անկարգ և օրինաղանց արարմունսդ, զորս ընդդէմ կամացն Աստուծոյ և հակառակ կանոնաց սրբոց գործէք դուք, ես ոչ եմ տալոց ձեզ զօք Առաջնորդ, և ոչ ուղղի առ ձեզ սիրտ եմ կատարելապէս, որպէս յառաջ ես գրեալ եմ ձեզ։ (որ ասացեալ է ի յնվ. Ի։) Իսկ յորժամ հնազանդելով օրինացն Աստուծոյ՝ զայգ օրինազանց արարմունսդ բարձջիք ի միջոյ ձերմէ՝ և զսիրտս մեր շահեսջիք, և յետ այսր՝ դուք և Հախբակցիք լաւապէս միաբանիցիք, և հաստատուն ուխտիւ և միաբանութեամբ խնդրիցէք ի մէնջ զԱռաջնորդ՝ զովոք զոր դուք կամիցիք, յայնժամ և մեք զխնդիրս ձեր կատարելոց եմք։ Օրինակ սորին է ի բոլորագրահամար տետրն. յերեսն՝ ՈԹ, ՈԺ։

Թուղթ ևս առ Խոյայ Ահմատ Խանն գրեաց ի պատասխանի թղթոյն, ըստ սոյն ոճի և ի կարճոյ։ Թէ մինչև Բ կողմունքն լաւապէս չմիաբանիցին, և Ալահրէկի անկարգ պահանջմանն կանոն չլինիցի, և դու զխնամսդ ի վերայ սրբոյ վանիցն ոչ ունիցիս, մեք անդ զԱռաջնորդ ոչ եմք յղելոց։ Իսկ յորժամ այսոքիկ այսպէս լիցին, ապա և մեք յղելոց եմք անդ զառաջնորդ։ Զի դու գրես թէ՝ մինչև հաստատուն կանօն իմն չլինիցի՝ անդ զԱռաջնորդ մի յղեր, նոյնպէս և մեք կամիմք, զի հաստատուն կանօն լինիցի, մանաւանդ թէ քոյգ խնամքն ևս լինիցի ի վերայ այն վանիցն, որ շինութիւն նորին զկայ առնուցու, և քեզ ևս վարձք լինիցի։ Եւ. այլ առ այս բանք։ Զորս նոցին գրաբեր Առաքելն առեալ տարաւ, որ էր Զազտոյիրջի Խանին։ Ի օգոստոսի ԻԱ։

ՄԿԵ.

Առ ս. Երուսաղէմի միաբան Համադանցի Յովաննէս վարդապետն, եւ առ նոցին նուիրակ Կարապետ վարդապետն ի Կարս, ի պատասխանի թղթոցն նոցին։

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ ս. Երուսաղէմի միաբան Համադանցի Յովաննէս վարդապետն, (որ յիշեցեալ է յանցեալ թուոջն ի մայիսի ԻԶ։) ի պատասխանի քանիցս անգամ գրեալ թղթոցն նորին։ Որոց զպատասխանիսն մինչև ցարդ յետացուցանելն՝ նախ վասն անձեռնհաս լինելոյն իւրոյ ի բազմակերպ զբաղմանց, և երկրորդ՝ սակս ղնացօղ ոչ դիպելոյն յայնկոյս՝ գրեաց այնպէս եղեալ։ Եւ վասն առ ս. Աթոռս և առ ինքն հարազատութեան և սիրոյն՝ շնորհակալութիւն և օրհնութիւն։ Այլև՝ վասն Բասրայու պաշարմանն ի զօրաց Քեարիմ Խանին՝ (որպէս յամսոյս Ե և՝ յԹ ասացեալ է,) գրէր զտարակոյսս, թէ բոլոր արդիւնքս նուիրակութեան և ինչքս, անդ մնացին։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա դիւրն ևս զտարակուսանս, որ յայնմանէ շփոթմանէ յառաջացեալ էր, զարգելանիլն Փիլիպպոս վարդապետին ի Բանդարբուշեռ, (որպէս ասացեալ է ի յԱպ. ԺԹ, և ի վերոյս նորին,) նա և՝ սա մինչ ի Հնդիկս էր լեալ՝ անդ Ջուղայեցի Խաչիկ Աղային լսելով զհաստատելն սրբ. վեհին ի ս. Աթոռոջս զտպագրատուն, ասացեալ էր սմա, զի ի դիմաց իւրոց ասասցէ սրբ. վեհին տպել տալ յանուն իւր զՆերսիսի Լամբրոնացւոյ մեկնութիւնն Սաղմոսին, և ինքն խոստացեալ էր տալ զծախսն, (Ե)։ Եւ սրբ. վեհըն յանձն էառ յայնժամ զկնի միջոցաց ինչ ի պարապիլ տպարանին ի հարկաւոր տպելեաց՝ զայն ևս տպել տալ։ Զոր գրեաց Յովաննէս վարդապետն առ Խաչիկ Աղայն։ Այժմ ի յիշումն էր ածեալ զայն սրբ. վեհին, թէ որպէ՞ս արարեր։ Զի Խաչիկ Աղայն ստիպեալ էր զնա գրով. և զայս ևս էր ծանուցեալ՝ թէ ընդ Փիլիպպոս վարդապետին ևս ձրղ եմ արարեալ սրբ. վեհին։ Իսկ Փիլիպպոս վարդապետն գեռ չէր եկեալ ահա որպէս ասացաք, և ոչ բան ինչ զնմանէ գրեալ։ Վասնորոյ՝ գրեաց սմա սրբ. վեհն, թէ յոր-

ժամ. եկեսցէ Փիլիպպոս վարդապետն, և իմասցուք զրանս Խաչիկ Աղային, յայնժամ. որպէս և առնիցեմք, քեզ դրելոց եմք։ Ի լուսանցն ես ողջոյն գրել ետ առ պատրիարք Յովակիմ. վարդապետն, և զայս ես թէ որովհետև և հարկաւոր դրելի ինչ ոչ ունէաք առ ինքն, և մանաւանդ՝ յինքենէ ևս թուղթ չէաք ընկալեալ, վասն այնորիկ ոչ դրեցաք առ. ինքն զթուղթ, յետոյ ի դիպօղ ժամու դրելոց եմք։

Թուղթ մի ևս գրեաց առ ս. Երուսաղէմի նուիրակ Կարրեցի Կարապետ վարդապետն ի պատասխանի թղթոյն։ (Առ որ դրեցեալ է ևս թուղթ ի սեպտ. ԺԶ և ի նոյեմ. Իե)։ Որ այժմ. զԿարին աւարտեալ եկեալ էր ի Կարս, և դրեալ էր սրբ. վեհն զորպիսութենէ գործոյն։ Որոյ գրեցեալ սիրոյ և հարազատական բանիցն գրեաց զպատշաճաւոր պատասխանիս։ Ապա և զայս, զի զնուիրակութեան արդիւնս եթէ ունի ի պատրաստի, տացէ մեզ և մեք գրեսցուք ի Պօլիս, զի տացեն անդ ս. Երուսաղէմի վէքիլին։ զԹուղթ Յովաննէս վարդապետին ես առ սա յղեաց յղել առ նա ի Սաղիմ։ Ընդ տղային, ի յօդ. ԻԲ։

Թուղթ մի ես վասն սորա յանձնարարութեան առ Ղօշավանից Առաջնորդ Կարապետ վարդապետն գրել ետ որր. վեհն սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին, զի որքան անդ է, ամենայն բանից և գործոցն օժանդակ լիցի։ Զոր և ինքն ծանոյց նմա յիւրում. թղթոջն. թէ ահա վասն քո զյանձնարարութիւնս գրել ետու Առաջնորդին։

ՄԿԶ.

Վկայական թուղթ՝ զոր ետ Աշտարակցի Գէորգին վասն այգւոյ միոյ։

Թուղթ ետ սրբազանն Աշաարակցի Գէորգին, վասն այգւոյ միոյ՝ զոր նորին հանգուցեալ եղբայր Ահարօնի որդի Զօրաբաբէլի կին Նազլուխանի հայր Գեամրիսեցի Յաբութիւնի որդի Ֆռանկլիւլն և իւրեանց ազդական Թօբոսի որդի Ստեփանն բաշխեալ էին իւրեանց դստերն, առ ի վայելել յորդւոց յորդիս։ Զի իւրեանք ի Կարս բնակէին, և այգին էր յԱշտարակ, ուր և դուստրն իւրեանց Նազլուխանն հարսն էր ի տան վերոյիշեալ Թօրոսենց Գէորքին։ Ուստի և զրազմակնիք թուղթ էին տուեալ Գէորքին կնքեցուցանելով Կարսայ գլխաւոր մարգկանցն և Առաջնորդին, վասն հաստատութեան բաշխմանն իւրեանց զայն այգին իւրեանց դստերն, յորում. ըստ տաճկական ասութեան գրէին թէ՝ հիպայ[37]) արարաք մեր դուստր Նազլուխանին զայգին մեր, որ և թուղթն ըստ տաճկաց ասութեան հիպանամայ[38]) կոչի։ Եւ Գէորգն զայն հիպանամայն բերեալ ցոյց ետ սրբ. վեհին, և ազգականք աղջկանն ևս եկեալ աստ իւրեանց բերանովն ասացին թէ՝ մեք մեր կամաւն զայգին մեր հիպայ եմք արարեալ մեր աղջկանն։ Եւ խնդրեաց Գէորքն ի սրբ. վեհէն, զի տացէ ինքեան զթուղթ կկայական վասն այս բանիս, առ ի յաւելել հաստատութիւն։ Ուստի՝ և սրբ. վեհն զվերոյիշեալ վկայական թուղթն ետ նմա, գրելով թէ՝ ես վերահասու եղէ, որ ստուգիւ հիպայ արարին Գեամբիսեցի Թօրոսի որդի Ստեփանն, և Յաբութիւնի որդի Ֆռանկիւլն զայգին իւրեանց որ է ի յԱշտարակ՝ իւրեանց դուստր Նազլուխանին որ է Աշաարակցի Թօրոսենց Գէսրգի հարսն, և նորին եղբայր Ահարօնի. որգի Զօրարաբէլի կինն։ Ուստի՝ և զայս թուղթս գրեալ ետու Գէորգին վասն առաւել հաստատութեան սոյնոյ բանիս, և ի հաճութիւն տեսողաց։ Ուրեմն, մի՛ ոք իշխեսցէ դաւի առնել այն այգւոյն, զի Գէորքի հարսինն է ստուգիւ։ Զայս թէպէտ այժմ. յամսույս ԻԲ ետուք, բայց վասն յառաջագոյն հիպայ լինելոյն, զամսաթիւն դրեցաք փետրուարի։ Օդ. ԻԲ։

Փօլիցայ ի Կարին ի վերայ Մուրտիկեանցն

Փօլիցայագիր գրեաց սրբ. վեհն ի Կարին՝ ի վերայ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսին, և իւր եղբայր Խօջայ Առաքելին, զի ացեն անդ յարգեանց ս. Աթոռոյս որ առ ինքեանս՝ Գեանճեցի Յակոբ վարդապետին զդրամս, (ՇԽ) որ բնիկ տեղեաւ էր Ղափանցի, և միաբան Խութավանիցն։ Զի ինքն աստ ետ մեզ՝ որ ի Կարին առեալ դնասցէ ի ս. Երուսաղէմ։ Ի օգոստոսի ԻԴ։

ՄԿԸ․

Ի Թիֆլիզ՝ առ Միրզայ Գեօրգին և Միսայէլն, նա և առ Յովհաննէս՝ և Մարտիրոս վարդապետսն վասն ժողովք առնելոյ անդ ս. Կարապետի ժողովարար Մկրտիչ վարդապետին։ Եւ առ Արքայն ևս թուղթ վասն այլ բանից։

Սրբոյ Կարապետի ժողովարար Մկրտիչ վարդապետն գնացեալ ի Թիֆլիզ առ մեր նուիրակ Մարտիրոս վարդապետն, ձեռամբ նորին փոքր ինչ խարճի էր առեալ անտի՝ որպէս գրեցաւ նմա յայնժամ։ Եւ գնացեալ ի կողմանս Խամսայու և Գեանջայու, այժմ դարձեալ էր ի Թիֆլիզ, և կամէր անդ ժողովք առնել, զոր արգելուին Առաջնորդ Յովաննէս և նուիրակ Մարտիրոս վարդապետքն։ Ուստի՝ նա ես անկեալ առ Միրզայ Գեօրգին և Միրզայ Միսայէլն, աղաչեալ էր զնոսա գրել առ սրբ. վեհն զիրիջայս, զի կոնդակ յղեսցէ, և հրաման տացէ ժողովարարութեան։ Եւ նոքա՝ որովհետև բարեկամ ևս էր նոցա ի մօր կողմանէ, բազմօք աղերսանօք գրեալ էին զայս խնդիր առ սրբ. վեհն։ Ո՛ւստի՝ և սրբ. վեհն զթուղթ գրեաց առ նոսա ի պատասխանի թղթոյն իւրեանց, և ծանոյց նոցա զայն բանսն, զորս յայնժամ գրեցաք վասն սորա և զչխնդրելն յինքենէ Յօհան վարդապետին վասն նորա զկոնդակ ժողովարարութեան մեծամտութեամբ, այլ թէ՝ Ա. թուղթ տաս՝ որ ի Թիֆլիզ խարճի փէյտակ առնէ։ Եւ զլրբութիւն այլ սևագլխին, որ յորժամ կոնդակ խնդրեաց ասա՝ և սրբ. վեհն ոչ ետ, բարբանջեալ էր թէ, ես կոնդակ ունիմ, որ Գ զորա կոնդակին չափ, կոնդակի չեմ կարօտ։ Ապա ասէ՝ որովհետև դա մեր կոնդակին չէ կարօտ, այլ ի՞նչ խնդրէ ի մէնջ, իսկ թէ կարօտ է, ապա այն ի՞նչ բարբանջմունք է՝ զոր աստ արարեալ է, և կամ իւր մեծաւորն ընդէ՞ր ոչ խնդրէր ի մէնջ կոնդակ։ Կամ թէ՝ զզորա կոնդակն առէք և տեսէք, թէ ո՞րքան չափազանցօրէն զարդարեալ են և երկարեալ, զոր մեք մեր նուիրակացն ոչ տամք։ Դմա ո՞րպիսի կոնդակ տացուք, որ իւր կոնդակին համեմատ լիցի, զի մեք զայդպիսի կոնդակ ոչ տամք ումեք, ի հարկէ եթէ ըստ մեր սովորութեանն զկոնդակ տացուք, և դա ընդ իւր Առաջնորդի կոնդակին յատեան հանցէ, զմերն քամահելոց են վասն անչքեղութեանն։ Այժմ ասէ ի ձեզ է անկեալ և դուք զորպէսն զոցա լաւ չգիտելով՝ միամտաբար զիրիջայ գրէք։ Որում թէպէտ չէր պիտոյ խնայելն, բայց վասն խաթեր ձերոյ ահա գրեցաք Յովաննէս և Մարտիրոս վարդապետացն, զի թոյլ տացեն դմա ժողովք առնել։ Փուսուլայ մի ևս գրեաց առ սոսա, թէ յառաջ ընդ Պաաայ բէկին զոր ինչ գրեցաք ձեզ՝ դեռ ոչ գրեցիք մեզ զպատասխանիսն։ Այժմ զնոյն բանսն Արքային գրեցաք, զինչ լինելն մեզ գրեցէ՛ք։

Զթուղթ մի ևս առ Յովաննէս և Մարտիրոս վարդապեասն գրեաց որպէս ի վերոյ ասացաւ, զի թոյլ տացեն նմա ժողովք առնել։ Փուսուլայ մի ևս դրեաց առ սոսա և պատուիրեաց ոչ թողուլ նմա, զի զկոնդակն Առաջնորդին իւրոյ հանցէ՝ և յատեան ընթեռնուլ տացէ։ Զի Առաջնորդաց կոնդակ ոչ է օրէն ասէ գրել ընդհանրապէս, և կամ յամենայն եկեղեցիս յատեան ընթեռնուլ տալ. այլ միայն հայրապետին ասէ վայել է այդ։ Եթէ իւրեանց կոնդակ էր պիտոյ՝ թող ի մէնջ խնդրէին և առնուին։ Եւ գրեաց՝ զի խօսողացն զսոյն պաաասխանեսցեն, մանաւանդ՝ Միրզայ Գեօրգուն և Միրզայ Միսայէլին։ Զի նոքա էին գրեալ մեզ վասն նորա ասէ զիրիջայս։ Ասացէք, զի անպատեհ բանի պատճառ մի լիցին ասէ, մինչ նոքա զձեզ ստիպեսցեն վասն կոնդակին ընթեռնլոյ։ Այլ թող ասէ ծանուցմամբ ժողով արասցէ։ Եւ եթէ ինքն զծանուցումն չգիտէ, դուք ծանուցումն արասցիք յամենայն եկեղեցիս տեղւոյդ ի սէր ս. Կարապետին, զի տացեն նմա զառատ ողորմութիւնս։ Եգ զայս ի թղթոջ Միրզայ Միսայէլին և Միրզայ Գեօրգուն, զի տացեն նոցա, և վասն սևագլխին զժողովս արասցեն։

Թուղթ ևս առ Հերակլ Արքայն գրեաց տաճկերէն, սէր և օրհնութիւն, և վասն համբաւոց և որպիսութեանց կողմանցն Օսմանցւոց՝ (որք ասացան յամսոյս Ե և յԹ)։ Մանաւանդ զայն, զոր այժմ լսէաք թէ՝ Կարսայ և Ախլցխայու գլխաւորքն արզայ գրեն առ թագաւորն, խափանել յայսկուսէ զյարձակումն զօրաց, զի հազիւ ասեն խաղաղութիւն եմք արարեալ ընդ դրացիս մեր, ընդ

Վիրս և ընդ Կարմրագլուխս այս կողմանց, և ի հանգստեան կամք։

Թուղթ մի ևս վրացերէն գրեաց առ սա վասն իրաց ինչ։ Զորս տուաք վրացի Դաւիթ բէկին, զոր յառաջագոյն յղեալ էր Արքայն ընդ Նսնուսեցի մհ. Սարգսի որդի Ստեփանին, երթալ ի Բայազիտ, և առնուլ զինչս հանգուցեալ փեսային իւրեանց Մարկոսին։ Զոր և առեալ էին որպէս թէ, և այժմ դարձեալ գնայր ի Թիֆլիզ։ Որ եղ ի օգոստոսի ԻԶ։

ՄԿԸ.

Ի Դարբանդ՝ վասն ընչից հանգուցեալ Պետրոսին Անկիւրեցւոյ։

Այր ոմն Գաղատացի՝ Բարղամօղլի կոչեցեալ Պետրոս անուամբ, Ի ամաւ յառաջ գնացեալ ի կողմանս Դարբանդու՝ Գիլանու և Հաշտարխանու՝ սակս վաճառականութեան։ Եւ մնացեալ անդ յայսքան միջոցս, Գ ամաւ յառաջ քան զայս ի Դարբանդ մեռեալ էր ի տան Թիֆլիզեցի Պատի որդի Ստեփանին։ Եւ նախ քան զվախճանիլն, կոչեալ զքահանայս և զիշխանս տեղւոյն, կտակ էր արարեալ, և զինչսն դաւթար առնել տուեալ. և կտակաւ յանձնեալ նոյն Ստեփանին, և վէքիլ արարեալ ինքեան՝ զի հասուսցէ զայնս ընտանեաց իւրոց ի յԱնկիւրիա։ Եւ ի Հաշտարխան ևս ինչս էր ունեցեալ նա առ Թիֆլիզեցի Զօլախի որդի Յովաննէսն, զորս ի հիւանդանալն անդ՝ յանձնեալ էր նմա, և ինքն եկեալ ի Դարբանտ, և վախճանեալ։ Զորս ևս նոյն Ստեփանն գնացեալ առեալ էր ի Յովաննիսէն։ Իսկ ըստ կտակի հանգուցելոյն, յերկար ժամանակս ոչ էր գրեալ Ստեփանն առ ընտանիսն նորին, տալ և տիրել ընչիցն։ Ուստի՝ այլ ոմն գրեալ ի Պօլիս առ ծանօթ ոք զթուղթ՝ ոչ զիւր անունն էր դրեալ՝ և ոչ զթիւ և զտեղի, այլ. միայն զորպէսն սոյն իրակութեան լրիւ ծանուցեալ էր նմա։ Եւ նա զնոյնս ընտանեաց հանգուցելոյն էր ծանուցեալ ի Գաղատիա։ Ուստի՝ հանգուցեալ Պետրոսի եղբայր մհ. Յարութիւնն, հանդերձ դստերօք եղբօրն իւրոյ հանգուցելոյ, վէքիլ էին արարեալ ինքեանց զիւրեանց փեսայ Սարգսի որդի Պետրոսն, և բազմակնիք վեքիլլամայ [89]) տուեալ նմա, զի երթեալ ի Դարբանդ տիրեսցէ կայից հանգուցելոյն։ Նա և ի Մեծն Պօլիս եղեալ Անկիւրեցիքն և այլ վաճառականք, բազմակնիք մահսարական թուղթ էին տուեալ վէքիլ Պետրոսին, վկայելով թէ սա ստոյգ վէքիլ է ընտանեաց հանգուցեալ Պետրոսին, զոր և պատրիարք Զաքարիա վարդապետն ևս կնքեալ էր, և Ռուսաց էլչին որ անդ, ձեռագրեալ էր։ Եւ յԱնկիւրիոյ և ի Պօլսոյ գրեալ էին սրբ. վեհին. զի ինքն ևս վասն այսր թուղթ գրեսցէ ի Դարբանդ առ ի տալ զինչս հանգուցելոյն՝ վէքիլ Պետրոսին։ Ուստի ի գալն աստ Պետրոսին թուղթ գրեաց սրբ. վեհն ի Դարբանդ առ ժողովուրդսն տեղւոյն, և զայս ամենայն վերոյգրեալքս ի կարճոյ գրեաց նոցա յիշեցուցանելով զանցս հանգուցելոյն, և ծանուցանելով զորպէսն և զառ ինքն գրեալ աղերսն ընտանեաց նորին։ Եւ մեծաւ պատուիրմամբ հարկ, զի զամենայն ինչս հանգուցելոյն առեալ ի Ստեփանէն, թէ ի Դարբանդ եղեալն, զորս նա դաւթեալ էր անդ, և թէ զայն՝ զոր ի Հաշտարխանու ի Զօլախ Յովաննիսէն առեալ և բերեալ էր, և զամենայն ի դաւթար արկեալ, յանձնեսցեն վէքիլ Պետրոսին, և դապդ առեալ ի նմանէ, զօրինակն աստ յղեսցեն հանդերձ դաւթարաւ և կտակիւ հանգուցելոյն։ Եւ ուր և դիպիցեն ես թէ գոյ ապրանք նոյն հանգուցելոյն, ասասցեն Պետրոսին, որ երթեալ առնուցու։ Եւ յետ այսպէս առնելոյն, զնոյն Պետրոսն և զընկերն իւր Յարութիւնն ընդ հաւատարմի աստ ուղեորեսցեն։ Իսկ եթէ նոքա ընդ այլ ճանապարհ կամիցին գնալ, և կամ աստ չկամիցին գալ, ապա՝ ըստ ոքքանութեան ընչիցն՝ զրաժինս հանցեն վասն ս. Աթոռոյս, իբր հոգեբաժին հանգուցելոյն։ Առ Պատի որդի Ստեփանն ևս յատուկ պատուէր գրեցաւ ի թղթոջս։ Զի զամենայն ինչսն հանգուցելոյն՝ Պետրոսին յանձնեալ, զապդ առցէ ի նմանէ, և զօրինակն ընդ կտակագրին աստ յղեսցէ, որպէս ի վերոյ գրեցաւ։ Եւ հասարակապէս պատուէր զի բանից այս տղայոցս մուղայէթ լիցին։

Թուղթ առ գանձապետ Իւզբաշի Եսային՝ պատուէր՝ զի առանց իւրոյ հրամանին զսեւագլուխ ոք կամ զայլ կարգաւոր որ չունիցի յինքենէ թուղթ կարմրակնիք, մի թողցէ

յերկիրն Ռուսաց մտանել. և ամենեցունց ես ծանուցանել անդ ի Դարբանդ, զի այսպէս արասցեն, զի ի նոցանէ ասէ վնասք ծնանին անդ՝ և դայթակղութիւնք բազմաց։ Եւ վասն վերոյիշեալ Պետրոս ե Ցարութիւն տղայոցն յանձնարարութիւն, և պատուէր, զի որպէս ե հասարակ թղթոյն դրեալ է հոգալ դրանս նոցա, (զորս ե սմա համառօտ դրեաց). այնպէս արասցեն։ Եւ յանցեալ ամին ի յօդոստոսի ԺԱ որ դնոր տօնացոյց յղեաց վասն սոցին եկեղեցւոյն ե ղօրհնութեան կոնդակ գրեաց, ծանոյց սմա։ Եւ գրեաց, զի թէ առ ինքեանս չիցէ հասեալ, ի Ցովաննէս կաթողիկոսէն խնդրեսցեն։ Եւ ղհասանիլն առ ինքեանս, ծանուսցեն ինքեան։

Թուղթ մի ես ի Բաքու առ պ. Եղիազարն գանձապետն մեր գրեաց, ի պատասխանի թղթոյ նորին՝ զոր այժմ դրեալ էր։ Նախ՝ Ցովսէփ վարդապետն գրեալ էր սմա ի Ղզլարու՝ չթողուլ մտանել յերկիրն Ռուսաց սևագլուխ կամ կարգաւոր առանց գրոյ սրբ. վեհին. սա այժմ գրէր սրբ. վեհին, թէ դու ես այսպէս հրամայեալ. և սրբ. վեհն գրեաց թէ՝ մեք եմք հրամայեալ Ցովսէփ վարդապետին, գրել առ քեզ և յամենայն տեղիս, զի այդպէս լիցի։ Եւ ինքն ևս նորապէս հրամայեաց այնպէս առնել, որպէս և ի վերոյ առ պ. Եսային։ Երկրորդ՝ վասն ի Մոսկով թափեցեալ Ա ջուխտ զանկակացն՝ գրէր ե խոստանայր, թէ յորժամ եկեսցէ աստ ծովով (զի Ցովսէփ վարդապետն դրեալ էր նմա), յղելոց եմ ասէ ի Շամախի, որ հասցի ի ս. Աթոռդ, և սրբ. վեհն գրեաց այնպէս առնել։ Երրորդ՝ վասն Ցովսէփ երիցու՝ զոր վասն խռովասէր բարուցն բանադրել ետ յառաջ, և յետոյ արձակել եա, այժմ գանդատ գրէր թէ՝ դարձեալ դայն չարութիւնսն առնէ։ Ուստի գրեաց թէ՝ սաստ նմա զմէնջ՝ զի ղգաստասցի, և զառաջին անցսն, և զպատուէրսն մեր զոր գրեցաք ինքեան յետ արձակմանն՝ ի միտ բերցէ և զգուշասցի, զի մի՛ դարձեալ խայտառակեսցի։ Եւ պատուէր ինքեան, թէ ահա գրեցաք առ նա սաստ և մեղադրութիւն, դու ևս՝ որովհետև նա կարգաւոր է, երթ խոնարհեաց նմա և մեղայ ասա, զի և նա ողորմեսցի ասասցէ քեզ, և հաշտեցարուք կատարելապէս, և բարձէք զխռովութիւնն, որ այլ չլսեմք։ Չորրորդ՝ Քանաքեռցի դազար Ցովաննէսն որ ի... գնաց ի Նուխի, այժմ եկն, սա փոքր ինչ զաֆրան էր յղեալ ընծայ սրբ. վեհին, զոր ի Նուխի տուեալ էին Ցովաննէսին։ Վասնորոյ՝ գրեաց զշնորհակալութիւն։ Եւ վասն նոր տօնացոյց յղելոյն զոր ինչ ի վերոյ առ իւզբաշի Եսային զնոյն և առ սա գրեաց։ Իսկ և՝ որպէս ասացաւ, մեղադրութեան թուղթ գրեաց առ վերոյիշեալ Ցովսէփ երէցն, վասն նոյն խռովասիրութեանն որպէս ասացաւ, յոյժ սաստիկ։ Որ և զայն նորընծայ երէցն՝ զոր հրամանաւ սրբ. վեհին Եղիազարն նոր ձեռնադրել եա ի Գանձասար Ցովաննէս կաթուղիկոսին, որոյ ես անունն էր Ցովաննէս. արարեալ էր իւրեան համախոհ, և նա ևս ընդ Եղիազարին և ընդ այլս խռովութեամբ վարիւր։ Նաև՝ զաջահամբոյրն զոր ետ յայնժամ ձեռամբ Եղիազարին՝ այժմ ի բերան առեալ բարբրանջէր, թէ ջարիմայ առինյինէն, զոր մինչև տաճկաց ևս ասէր։ Զայս ամենայն յիշեաց սրբ. վեհն ի մեղադրանսն. և սաստիկ սպառնացաւ, թէ ըստ կայէնեան զոհին դարձուցի՞ց առ քեզ զտուեալդ՝ հանդերձ քեզավայել խիլայի՞ւք, թէ ոչ։ Եւ պատուէր սաստիւ, զի ինքն և նորընծայն թողեալ զխռովասիրութիւնն, ընդ ամենեսեանսն խաղաղութեամբ վարիցին այսուհետև և բազում առ. այս պատուէր և խրատ։ Մանաւանդ դրեցի ասէ պ. Եղիազարին, որ գայ առ քեզ և մեղայ ասէ, դու ևս ողորմեսցի ասա նմա, և կատարելապէս հաշտեցարուք և բարձէք ի միջոյ զխռովութիւն՝ զի այլ մի՛ ևս հասցի յականջս մեր։ Ապա թէ ոչ, զկարգս երկոցունցդ ևս առնլոց եմ ասէ, որ ոչ ես տաց ձեզ դարձեալ, և ոչ յետագայ Հայրապետք. այլ յաւիտենականապէս անկջիք ի քահանայութենէ։ Օրինակ սորին է ի բոլորադրահամար տետրն, յերեսն՝ ՌԺԱ, ՌԺԲ։ Զոր առ Եղիազարն յղեաց տալ նմա, և զթուղթ Եղիազարին եդ ի թղթոջ իւզբաշի Եսայուն, և գրեաց և նմա հասուցանել առ նա։ Բ փուսուլայս ևս գրեաց առ Եսային և Եղիազարին և վասն ռուսաց անդ եկանելոյն, զոր լսէաք, խնդրեաց գրել զստոյգ որպէսն։ Այսք ևս եդան ի թուղթս իւրաքանչիւրոցն։ Եւ Եղիազարի թուղթն եդաւ ի թղթոջ Եսայուն և գրեցաւ նմա յղել ի Բաքու առ Եղիազարն։ Իսկ թուղթ Եսայուն գրեցաւ նոյն Անկիւրեցի Պետրոս և

Ցարութիւն տղայոցն հասուցանել առ նա։ Իսկ զհասարակ թուղթն ուրոյն զմոեալ ետուք իւրեանց, որք գնացին յԵրեւան սպասել ի Գեանջայ գնացող կարաւանի, և ընդ նոսա երթալ։ Ի օգոստոս ԻԸ։

ՄԿԹ.

Ի Տաթեւ եւ ի Ղափան, վասն կացուցանելոյն Աբրահամ վարդապետին ի տեղի իւր Առաջնորդ զԿարնեցի Ցակոբ վարդապետն, եւ կոնդակ վասն նորա։

Սաաթէի ս. Առաքելոյ վանից Առաջնորդ Աբրահամ վարդապետն անկեալ ի սաստիկ հիւանդութիւնս, և այտուցեալ ևս, երկուցեալ էր, թէ վախճան հասցի ինքեան, և տունն այն դարձեալ անկցի ի ձեռս աւերիչ արանց՝ որպէս էրն յառաջ։ Ուստի՝ զԿարնեցի Ցակոբ վարդապետն՝ (զոր Կօտօշ Սիմօնի որդի կոչէին), հաւանեցուցեալ զամենայն երկրացիսն և զխանն, նստուցեալ էր ի տեղի իւր Առաջնորդ, զի որքան ինքն կենդանի է, անունն Առաջնորդութեան ի վերայ նորին կայասցի, զի և յետ մահուանն նա մնասցէ Առաջնորդ, և մի այլ ոք ձեռնամխել կարիցէ։ Ուստի և յԻբրահիմ խանէն զթալզայ [40]) և յերկրականացն զմահսար՝ առեալ և տուեալ էր նմա։ Որոց պայմանն էր այսպէս, զի որքան կենդանի է Աբրահամ վարդապետն՝ կացցէ նմա հնազանդ։ Եւ ինքն Աբրահամ վարդապետն՝ և երկրականքն՝ և Իբրահիմ խանն գրեալ էին առ սրբ. վեհն զթուղթս աղերսանաց, և զարարեալն իւրեանց հանդերձ պայմանադրութեամբքն ծանուցեալ էին սրբ. վեհին, և խնդրեալ էին զԱռաջնորդական կոնդակ վասն Ցակոբ վարդապետին։ Ուստի՝ զԱռաջնորդական կոնդակ գրեաց սրբ. վեհն ի վերայ ամենայն թեմիցն Տաթեւու՝ վասն Ցակոբ վարդապետին՝ ըստ խնդրոյ նոցա։ Եւ յատուկ պատուէր ի նմա, զի որքան կենդանի է Աբրահամ վարդապետն, Ցակոբ վարդապետն զինքն մի վարկցէ ինքնագլուխ Առաջնորդ, այլ կացցէ առ նա հնազանդ յամենայն կողմանէ որպէս որդի առ հայր, և ոչ միով իմիք կերպիւ առաջի նորա զինքնագլխութիւն ցուցցէ։ Ժողովրդեանն ևս զսոյն պատուիրեաց, յառաջ զԱբրահամ վարդապետն գիտել ինքեանց և նոր Առաջնորդին՝ հայր՝ և խրատիչ և տէր վանիցն, և ապա զՑակոբ վարդապետն ճանաչել ինքեանց Առաջնորդ և կառավարիչ ի ներքոյ հրամանաց նորին։ Եւ երկուց կողմանցն ևս սպառնալիք՝ մինչ այսպէս ոչ առնիցեն։ Այս յատուկ պատուէրս է ի շարադրանաց տետրն, ի համարն ՈԿԹ, ՈՀ։ Գրեաց և առ Ցակոբ վարդապետն զթուղթ, ըստ նոյն պատուիրին, զոր ի հասարակ թղթոյն գրեաց, որդիական հնազանդութեամբ ծառայել Աբրահամ վարդապետին։

Թուղթ մի ևս առ Իբրահիմ խանն գրեաց վասն այսր ի պատասխանի թղթոյն, թէ զխնդիրսդ կատարեցաք, և զՑակոբ վարդապետն Առաջնորդ արարաք։

Թուղթ ևս առ Աբրահամ վարդապետն գրեաց ի պատասխանի թղթոյն, ծանուցանելով զկատարելն զխնդիրն, և զյղելն կոնդակին, և գրելն զպատասխանի թղթոյ խանին, և զպատուէրն՝ զոր ի հասարակ կոնդակոյն և առ Ցակոբ վարդապետն գրեաց հնազանդ մնալ ինքեան, զոր խանին ևս գրեաց, ես սմա ծանոյց զգրելն, Եւ վասն Ը հատ տօնացուցին և կոնդակին, զորս յանցեալ ամին յղեաց առ սա ուղարկել առ Ցովաննէս կաթողիկոսն, զի և նա յղեսցէ ի վիճակսն Աղուանից՝ որպէս ասացաւ յանցեալ ամին ի յօղոստոսի ԺԱ, որ և ի վերն՝ ի ԻԸ ըն ամսոյս յիշեցաւ), գրեաց թէ՝ գիտեմ զի ղու յղեալ ես առ նա, այլ նա ոչ գիտեմ թէ՝ յինչ միտս չէ յղեալ ի վիճակսն։ Գրեա, զի թէ տակաւին չէ յղեալ, յղեսցէ, և որպէս լինելն մեզ ծանո։ Զայս ամենայն ի մի պահարան եդեալ, ի ձեռս Աբրահամ վարդապետին և մէլիքացն ղրեցաք, և ընդ նոցին թղթաբեր աէր Գէորգ քահանային յղեցաք ի օգոստ. ԻԹ։

ՄՀ.

Ի Նուխի, վասն հասանելոյն առ մեզ կտակաց հանգուցեալ Ներսէսին, եւ վասն զանձանակին, հոգեբաժնի՝ կտակի, եւ այլ այսպիսեաց պատուէր։

Վասն կտակաց Քանաքեռցի հանգու-

ցեալ Ներսէսին սրբ. վեհն որ զՔտնաքեոցի ղազազ Յովաննէսն յղեաց ի բերել՝ (որպէս ասացաւ յապրիլի...) այժմ եկն, և երբ զկտակսն՝ որ վասն սրբոյ Աթոռոյս, և Բջնու վանիցն, և Քանաքեռու Բ եկեղեցեացն: Իսկ զՍ. Երուսաղէմայ կտակն՝ նորին նուիրակին էին հասուցեալ: Եւ այս աղագաւ ղրեալ էին զթուղթս, Մալխասն և Գասպարն ուրոյն, և այլ իշխանքն ուրոյն: Ուստի՝ և սրբ. վեհն առ ամենեսեանսն զմի թուղթ գրեաց, այսինքն՝ առ մհ. Բէժանն, մհ. Առաքելն, մհ. Իշխանն, զանձապետ մհ. Մկրտիչն, և առ պ. Գասպարն, և պ. Մալխասն: Ի պատասխանի թղթոցն իւրեանց: Շնորհակալութիւն և օրհնութիւն վասն վերոյիշեալ կտակաց առ մեզ հասուցանելոյն: Եւ յատկապէս շնորհակալութիւն առ Գասպարն և Մալխասն, որք ի ս. Աթոռոյս կտակի դրամոյն ԻԳՌ գն. դրամ տուեալ՝ Բ արծաթեայ փոքրիկ շամդանս էին գնեալ ի լէկզեաց՝ և ընդ նոյն ղազազ Յովաննիսին աստ յղեալ: Յորոց վերայ գրեցեալք էին յիշատակք ս. Աթոռոյս, զոր ի Հաշտարխանու էին տուեալ ս. Աթոռոյս ի վաղ ժամանակի՝ ի ձեռն Փառակեցի Բարսեղ վարդապետին, և տուօղքն ես էին Փառակեցիք: Որք թէ ուստի՞ էին անկեալք ի ձեռս լէկզեացն, չէր յայտ: Եւ նոյն հանդուցեալ Ներսէսն զթուղթս և զարալայս էր ունեցեալ ի Քանաքեռ եղեալ մլքիցն իւրոց, զորս սոքա յղեալ էին առ սրբ. վեհն, տալ ընտանեաց նորին: Եւ սրբ. վեհն խոստացաւ այնպէս առնել: Եւ վասն նոր տօնացուցին և նորին կոնդակին՝ զոր ինչ ի վերն յամսոյս ԻԸ առ Եսային և Եղիազարն՝ զնոյն և առ սոսա գրեաց, թէ վասն ձեր տօնացոյց եմք յղեալ առ Յովաննէս կաթողիկոսն՝ առ ձեզ հասուցանել, եթէ չէ հասուցեալ, ի նմանէ խնդրեցէք, և զառ ձեզ հասանելն մեզ գրեցէք: Իսկ ե՝ վերոյիշեալ զանձապետ մհ. Մկրտիչն Ա թուղթ էր դրեալ առ սրբ. վեհի սպասաւոր Մկրտիչ վարգապետն, թէ աստ ի ննջեցելոց ընչից հոգեբաժինս ոչ տան ս. Աթոռոյդ, և կտակ ոչ առնեն յանուն դորին, ասա սրբ. վեհին զի օրհնութեան և յորդորանաց թուղթ գրեսցէ առ ժողովուրդսն տեղւոյս, և քահանայիցն ես յատկապէս պատուէր՝ զի առնուցուն վասն ս. Աթոռոյդ զայսպիսի արդիւնս: Եւ սրբ. վեհն գրեաց զթուղթ առ Նուխու ժողովուրդսն ըստ ասացելոյ մտացն, տալ ս. Աթոռոյս զհոգեբաժինս, և քահանայիցն պատուէր՝ զի յորդորմամբ առնուցուն զհոգեբաժին, զկտակ՞ զքառասնից, զխոստմունս, և զայլ այսպիսի տուրս յանուն ս. Աթոռոյս, և յանձնեսցեն զանձապետին: Եւ զանձապետին ևս պատուէր՝ մուղայէթ լինիլ այսպիսեաց բանից, և ձեռամբ քահանայիցն առնուլ, և մեզ հասուցանել:—Օրինակն է ի շարադրանացն տետրն, յերեսն ՌԺ, ՌԺԱ:

Թուղթ ևս առ Թիֆլիղեցի տէր Ներսէսի որդի Պետրոսն դրեաց ըստ խնդրոյ զանձապետին, որ տուեալ էր սրբոյ Աթոռոյս հոգեբաժին՝ օրհնութիւն և շնորհակալութիւն: Զոր առ դանձապետն յղեցաք տալ նմա: Եւ զայս Գ թուղթս ի մի պահարան եդեալ դրեցաք ի ձեռս չորից մահտեսեացն վերոյդրելոց. և տուաք զայս պահարանս ևս նոյն Ղափանցի տէր Գէորգին զի ի Շուշու յղեսցէ ի Նուխի: Ի օգոստոսի ԻԹ:

ՄՀԱ·

Ի Թօխաթ եւ ի Զմիւռին, ընդ մհ. Մկրտչին

Ի Թօխաթու մհ. Մկրտիչ անուամբ այր մի՝ որ էր Արևելցի՝ և ծանօթ մեր զանձապետ մհ. Աղամջանին, եկն ի ս. Աթոռս յուլիս, որ ունէր ի նմանէ գիր առ սրբ. վեհն, նաև ի նուիրակ Պետրոս վարդապետէն, և ի Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Եսայի վարդապետէն՝ զոր մհ. Աղամջանն էր յղեալ: Ուստի՝ և սրբ. վեհն թուղթ գրեաց առ ս. Աթոռոյս զանձապետ և վէքիլ մհ. Աղամջանն, ի պատասխանի թղթոյն իւրոյ՝ զոր ի յունիսի ԻԵ էր գրեալ: Նախ՝ վասն սրբալոյս Մեռոնին՝ զոր վասն Ուռումելու նուիրակ Յովհաննէս վարդապետին յղեալ էաք. (որպէս ասացաւ յապրիլի ԺԹ, և ի մայիսի ԻԵ): Եւ սմա դրեալ էաք թէ՝ ի հասանիլն առ քեզ յղեա առ Նազարէթն: Իսկ Մուրտիկեան մհ. Փիլիպպոսն՝ ինքն ի Պոլիս առ Նազարէթն էր յղեալ, և նա առ Յովաննէս վարդապետն էր հասուցեալ: Իսկ սա այժմ տարակուսէր, թէ ինձ ոչ է հասեալ: Ուստի՝ գրեաց զմիամտութիւն: Երկ-

րորդ՝ յիշեցոյց թէ՝ Վահանն ի Բայաղիտու Ի հատ տօնացոյց է առ քեզ յղեալ մերով հրամանաւ։ (Որպէս ասացեալ է ի մայիսի ԻԵ ումն). Կ հատ տօնացոյց ևս այժմ ընդ մհ. Մկրտչին յղեաց առ նա, և գրեաց, զի Լ հատ յղեսցէ յԻզմիր առ Եսայի վարդապետըն, և մնացեալ Ծ հատն, Դ կամ Գ ղռուշով ծախեսցեն, Գ ղռուշից պակասով չծախեն։ Երրորդ՝ գրեցի ասէ նուիրակին, որ զկնի ս. Խաչին չմնացէ յայդր, ելեալ եկեսցէ. զու ևս մուղայէթ լեր զի շուտով զգործըն աւարտեալ եկեսցէ։ Չորրորդ՝ յիշեցոյց զգալն աստ յուխս որդւոցն իւրոց՝ և փեսային իւրոյ պ. Աւետիքին, և բերելն զՋուղայեցի հանգուցեալ Յակոբ վարդապետի գըրամն, (որպէս ասացաւ ի յունիսի Ը)։ Եւ իւր փեսայի ԱՃ ղրուշ պարտք առնելն ի մէնջ՝ որ անդ սմա տացէ։ Եւ զխոստումն կնոջ միոյ ընդ նոսա եկելոյ՝ զոր անդ տալոց էր սմա, զորս ասէ յառաջին գրոյն երկարապէս իմացեալ՝ այնպէս առնելոց ի հարկէ։ Հինգերորդ՝ վասն փօլիցայից գրեալ էր սմա սրբ. վեհն, առնուլ ի նուիրակաց, և մեզ հասուցանել։ (Որպէս ասացաւ յապրիլի ԺԹ). գրէր թէ՝ այդ դժանջ ժարգոյ բան է՝ ես ծեր եմ, իմ բանն չէ։ Եւ կամէր հրաժարիլ։ Ուստի գրեաց սրբ. վեհն թէ՝ քեզ ի՞նչ ծանրութիւն գոյ յայդմ, որ զծերութիւնդ պատճառես, նուիրակքն մեր քեզ կու հասուցանեն, և դու ում որ գրեմք՝ նմա կուտաս, կամ թէ հաւատարմաւ աստ կու յղես, և կամ կուպահես առ քեզ՝ և որպէս գրեսցուք այնպէս կառնես։ Այս ի՞նչ բեռն է քեզ. եթէ քեզ չգրեմք, ապա ո՞ւմ գրեմք։ Եթէ դու ծեր ես ասէ, մեր հոգևոր որդի Յովսէփն գեանջ է, (որ էր որդին իւր). նմա յանձնեա, թող նա հոգասցէ զբանսն ս. Աթոռոյս։ Եւ տօնացուցիցն ևս ասէ հոգ տարեալ ծախեսցէ։ Գրեաց ևս թէ՝ մհ. Մկրտչին պատուէր ետու, որ յայսպիսի բանըս ձեզ օգնական լիցի, և ինքն ևս յանձն էառ։

ԶԹուղթ մի ևս առ Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Եսայի վարդապետն գրեաց, ի պատասխանի ի յունիսի Գ գրեալ թղթոյն, որ էր պատասխանի այնմ թղթոյ սրբ. վեհին, զոր Զալիկեան մհ. Կարապետն տարաւ, (որպէս ասացաւ ի յունուարի ԻԵ) որ սակս ձեռնարկելոյն ի գործն, և զյաջողութեանցն գրէր։ Սրբ. վեհն ևս գրեաց նմա զօրհնութիւն և զշնորհակալութիւն և զքաջալերութիւնս։ Եւ թէ՝ մինչև ցարդ զոր ինչ թուղթս գրեալ ես առ մեզ, ընկալեալ եմք և զպատասխանիս նոցին գրեալ եմք առ քեզ (որպէս ասացեալ է ի յապրիլի ԺԹ, և ի յունիսի ԻԹ և ի յուլիսի ԻԸ ևս)։ Եւ զի հարցեալ էր՝ թէ առ ձվ հասուցից փօլիցայիւք զդրամս, գրեաց առ մհ. Աղամջանն հասուցանել ի Թօխաթ այսուհետև։ Եւ թէ՝ մհ. Աղամջանին գրեաց Լ հատ տօնացոյց յղել առ քեզ. պատուիրեա ամենեցունց՝ զի զայդ ստացեալ ածցեն ի գործ. և գնով տուր խնդրողացն, Ե, կամ Դ, և կամ Գ ղռուշով, այլ պակասով չտաս։ Եւ թէ և՛ս պիտոյասցի ասէ, ի մհ. Աղամջանէն խնդրեա, և մեզ ևս ծանո, ի թղթոջ Աղամջանին եղաք զայս առ նա հասուցանել։ Գրեաց և զողջոյն առ Ապրօղլիսն որք զթուղթ էին գրեալ սրբ. վեհին ի պատասխանի Զալիկեան մհ. Կարապետի տարեալ թղթոյն։ Որում սրբ. վեհն զպատասխանի ոչ գրեաց, և սմա գրեաց թէ՝ վասն անձեռնհասութեան չգրեցաք և հարկաւոր գըրելի ևս ոչ գոյր։

Թուղթ մի ևս առ Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց, ի պատասխանի ի յունիսի ԻԷ գրեալ թղթոյն։ Որ գնացեալ էր այժմ ի ս. Սարգիս եկեղեցին, որ այն միայն էր մնացեալ, և խոստանայր զայն ևս աւարտել և զկնի ս. Խաչին ելանել և գալ։ Գրեաց ըստ խստմանն իւրոյ շուտով աւարտել զգործն, և այնպէս առնել։ Եւ վասն տօնացուցին փոքր մի մեղադրութիւն թէ՝ մինչև ցայժմ բան ինչ ոչ գրեցեր մեզ՝ թէ զայն գործ ածեն, թէ ոչ, և չպատուիրեցեր ամենեցունց զի զայդ ստացեալ ի գործ ածցեն։ Եւ պատուէր՝ զի այնպէս արասցէ։ Ծանոյց և զյեղն առ մհ. Աղամջանն ղՋ հատ տօնացոյցս։ Զայս ևս առ Աղամջանն յղեցաք տալ նմա։

Օրհնութեան թուղթ ես առ Թօխաթցի Սահակն գրեցաւ, որ Կ փարայ աջահամբոյր էր յղեալ ընդ մհ. Մկրտչին։ Այս մհ. Մկրտիչ՝ և որդին իւր տիրացու Յովհաննէսն, խոստացան յամենայն ամի Գ ոսկի յղել՝ վասն հոգւոց ննջեցելոց իւրեանց։ Որք ելին ի ս. Աթոռոյս ի օգոստոսի ԻԹ։

Առ Բայազիտու նուիրակ Նիրսէս վարդապետն՝ և. ի Պօլիս՝ վասն սորին։

Բայազիտու նուիրակ Ներսէս վարդապետն՝ (որ յիշեցեալ է ի յուլիսի Բ), զԴիւատին ես աւարտեալ՝ կամէր երթալ ի Մանազկերտ։ Ուստի՝ վասն տեղւոյ Ալի փաշային՝ (որ յիշեցաւ յապրիլի ԺԷ)· խնդրեալ էր ղթուղթ։ Եւ սրբ. վեհն ղթուղթ սիրոյ գրեաց առ նա, և զառաջին դրեալ զթուղթն ես ի յիշումն էած, և վասն Ներսէս վարդապետին զյանձնարարութիւն գրեաց։ Ա. փոքրիկ ամանով գիւլապ ևս յղեցաք ընծայ նմին։ Եւ ԱԾ աւելի մատաղս էր ժողովեալ, զոր և յղեալ էր ի ձեռն իւր սպասաւոր տիրացու Ղազարին։ Նմանապէս՝ և զառձեռն պատրաստ եղեալ դրամն ևս էր յղեալ. որոյ աղագաւ զմէկ միամտական զապզ գրեաց առ սա։ Այլ և՝ սորա հօրեղբօր որդի Մկրտիչն մեռեալ էր ի Պօլիս, և բարեկամք գրեալ էին սմա զորպէսն ընչից նորին։ Ուստի՝ ըստ նոցին գրեցելոյն՝ խնդրեալ էր ի սրբ. վեհէն դրել զթուղթ մի առ մհ. Կարապետն, մհ. Դաւիթն, և մհ. Ղազարն, զոր և գրեաց սրբ. վեհն, և վէքիլ արար զնոսա (որպէս և գրեալ էին անդուստ Ներսէս վարդապետին)· որպէս զի՝ գնացեալ առնուցուն ի բոյվատայէ տեղւոյն զդրամ հանգուցելոյն. (քանզի բոյվատայն զաւթեալ էր, զի թէ վարիս[41]) ոչ ելցէ՝ ինքն կերիցէ)· և զոր ինչ պարտս ունի՝ տացեն, քանի մի ղոուշ ևս կնոջն խարճի տացին, և զմնացեալ -նաղտ դրամն, նա և զոր ինչ վէջ ապրանս ունի՝ զայնս ևս ծախեալ և զդրամ շինեալ՝ փօլիցայ արասցեն ի Կարին ի վերայ Մուրտիկզատէ մհ. Փիլիպպոսին, կամ թէ հասցեն ի Թօխաթ ի ձեռն մեր գանձապետ մհ. Աղամջանին՝ ղի նոքա ի ս. Աթոռս հասուսցեն։ Գիտէք ասէ՝ զի այդ հանգուցեալդ բաց ի մեր որդի Ներսէս վարդապետէն այլ ուրիշ վարիս չունի. ապա՝ զոր ինչ ունի՝ սմա պարտի հասանիլ։ Ահա ինքն Ներսէս վարդապետն ևս զձեզ վէքիլ արար ասէ՝ և վէքիլլամայ յղեաց. պարտիք այսպէս առնել՝ որպէս դրեցաք։ Յղեցաք զայս առ Ներսէս վարդապետն զի ինքն յղեսցէ ի Պօլիս։ Եւ անդուստ Սառա անուամբ կին մի Ա ղոուշ էր յղեալ առ Ներսէս վարդապետն ի ձեռն ուխտաւոր Բաղդասարին՝ (որ ընդ մեծ ուխտաւորացն յուխտ էր եկեալ աստ)· զի մատուսցէ սրբ. վեհիս, և օրհնութեան գիր առեալ յղեսցէ, վասնորոյ զՕրհնութեան թուղթ գրեալ առ սա յղեաց հասուցանել առ նա։ Զորս ի ձեռն նորին սպասաւոր Ղազարին յղեցաք, որ ել ի օգոստոսի ԻԹ։

Առ Սարասկեար Ալի փաշայն Թուղթ, և առ Փիլիպպոսն ևս ընդ Մուսա Թաթարին:

Որպէս յօգոստոսի Թ ասացաք, թէ Սարասկեար Ալի փաշայի յղեալ Մուսա թաթարընյերեան նստեալ սպասէր Հերակլ Արքայի թղթոյ պատասխանւոյն, այժմ եկեալ էր ի Հերակլ Արքայէն պատասխանի թղթոյ Սարասկեարին, որ դրեալ էր յամենայն կողմանէ զմիամտութիւն և զբարեմտութիւն առ Սարասկեարն, թէ մեք ընդ ձեզ զվէճ և զխռովութիւն ինչ ոչ ունիմք, այլ բարի մըտօք վարիմք առ տէրութիւնդ ձեր։ Եւ որ վասն Քարիմ խանին վրդովիք, նա ևս ոչ է սիրող կռուոյ և խռովութեան, այլ խաղաղասէր է, ի հարկէ նա ևս ոչ է կամելոց լինել խռովութեան։ Եւ այլ սոցին նման միամըտական բանս էին դրեալ նա՝ և խանն մեր։ Ուստի՝ և սրբ. վեհն զթուղթ մի գրեալ առ Սարասկեար Ալի փաշայն, ծանոյց զբարեմտութիւն և զսէր Հերակլ Արքային և խանին մերոյ՝ և առ տէրութիւնն իւրեանց, որպէս և ինքեանք գրեալ են ասէ։ Եւ զայլ բանս սիրոյ, և զխնդիր՝ ունել ի վերայ ս. Աթոռոյս և մեր զխնամս։

Թուղթ մի ևս առ Իբրահիմ Աֆանտին գրեաց, որ էր ի Կարին. (որպէս ասացաւ յօգոստոսի Թ). ըստ նոյն մտացն՝ զոր գըրեաց առ Սարասկեարն, զի ինքն ևս ասասցէ նմա զնոյնս։ Եւ բանք սիրոյ։ Եւ խնդիր՝ զի գալն Սարասկեարին ընդ ինքեան ի Կարս, ծանուսցէ իւրեան զգալուստն։ Գրեաց և զթուղթ առ մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն, ծանուցանելով ըզգրելն յառաջ քան զայս երիցս անգամ զթուղթըս որպէս սա ծանոյցս, ընդ Եսայուն, ընդ իւրեանց յղեալ Ալէքսան փայեկին, և ընդ Օսման Աֆանտուն։ (որք ասացան ի յուլիսի ԻԸ, յօգոստոսի Ե, և յԹ)։ Զկնի նոցին ասէ այլ հարկաւոր որպիսութիւն ինչ ոչ գոյ զի գրիցեմք։ Եւ զոր ինչ Սարասկեարին և Իբրահիմ Աֆանտուն գրեաց զնոյնս սոցա

ևս գրեաց, զի ի հարցանելն փաշային ասասցեն։ Եւ ի Բասրայու կողմանէն բաց ի յառմանէ որն ստոյգ է, այլ որոշ ստոյգ ձայն ոչ գոյ։ Եւ հարկ՝ զի զպատասխանիս բանից ի յուլիսի ԻԸ գրեալ թղթոյն շուտով գրեսցեն։ Եւ զբութայի հողն զոր յօգոստոսի Ե խընդրեցաք, շուտով յղեսցեն։ Ընդ նոյն Մուսա թաթարին յղեցան ի սեպտեմբերի Բ։

ՄՀԲ.

Ի Կարս, առ Իբրահիմ Աֆանտին եւ Գէորգն, ընդ Ալի Աղային։

Կարսայ Իբրահիմ Աֆանտին որ գնացեալ էր ի Կարին՝ (որպէս ասացաւ յօգ. Թ), այժմ դարձեալ էր ի Կարս։ Եւ որպէս յօգ. ԻՁ ասացաւ, արզայ էին գրեալ առ թագաւորն, և զՍարասկեարի գալն ի Կարս՝ խափանեալ էին։ Բայց յետ գալոյ Իբրահիմ Աֆանտոււն ի Կարս կրկին հրաման էր եկեալ ի թագաւորէն առ Սարասկեարն երթալ ի Կարս, քանզի չէր կամեցեալ խափանել զպատերազմն, որպէս խափանել խընդրէին Կարսեցիք և Ախլցխացիք։ Ուստի՝ պատրաստեցեալ էր Սարասկեարն ի գալ ի Կարս, և գրեալ էր Իբրահիմ Աֆանտոււն։ Բայց որպէս յօգ. Թ ասացաւ, այժմ ևս ըստ նոյն կերպի գրեալ էին Սարասկեարն և Իբրահիմ Աֆանտին զթուղթս առ խանն մեր, թէ ահա ընդ Քարիմ խանին պատերազմ ունիմք մեք, դուք եթէ ի նմանէ ի բաց կացեալ մեզ հետևիք, գրեցէք միաբանութեամբ զթուղթ հնազանդութեան առ թագաւորն մեր՝ դու և Հերակլն, և Գեանջայու խանն և այլք մերձակայք ձեր, որ ապա և մեք ի ձէնջ միամտեցեալ դիմեսցուք ի վերայ Քարիմ խանին։ Եւ Իբրահիմ Աֆանտին զայս թուղթքս յղեալ էր ի ձեռն Ալի Աղային Կարսեցւոյ, որում մականուամբ Քեարտիկեայ կոչէին։ Եւ առ սրբ. վեհն ևս զթուղթ էր գրեալ վասն այսց բանիցս, և զորպիսութիւնս խնդրեալ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն գրեաց առ Իբրահիմ Աֆանտին ըզթուղթ մի՝ ի պատասխանի թղթոյն, և որպէս ի վերդ յամսոյս Բ, նոյնպէս և այժմ ծանոյց նմա զպատշաճաւոր որպիսութիւնս զոր ինչ այժմ լսէաք յայսմ կողմանէ։

Թուղթ մի ևս սիրոյ՝ առ Ղարախան օղլի Ահմատ Չէլէպին գրեաց ի պատասխանի սիրոյ թղթոյն նորա, զոր այժմ ընդ Ալի Աղային գրեալ էր։ Իսկ և գրեաց զթուղթ առ պարոն Գէորգն ի պատասխանի թղթոյն, որ գրէր թէ ինձ թուղթ ոչ հասանի ի քէն։ Ուստի ծանոյց զգրելն առ ինքն զթուղթ ընդ Օսման Աֆանդուն՝ (որպէս ասացաւ յօգոստոսի Թ)։ Եւ զորպիսութեանց ևս գրեաց սմա ասել Աֆանտոււն. և առ Աֆանտին գրելն զթուղթ ծանոյց սմա։ Փուսուլայ ևս գրեաց առ սա, զի յառաջագոյն մինչ ի մայիսի ԺԸ առ Իբրահիմ Աֆանտին ընծայ յղեցաք, նորին մեծ որդին ևս էր գրեալ առ սրբ. վեհն զթուղթ շնորհակալութեան վասն առ հայրն յղեալ ընծային։ Եւ ի թագաւորէն ֆարման էր եկեալ ի վերայ նորա, լինել Մուտաուիս ի Կարս, զայն ևս ծանուցեալ էր նա սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհըն գրեաց առ նա յայնժամ զշնորհաւորութեան թուղթ, բայց ընծայ ոչ յղեաց։ (Որպէս ասացաւ ի յունիսի ԻԷ)։ Իսկ այժմ վասն փոքր որդւոյն ևս Ղափուճիբաշութեան [42]) ֆարման էր եկեալ, զոր գրէր Գէորգն առ սրբ. վեհն։ Ուստի՝ գրեաց սմա թէ՝ այդ երկուցդ ևս ընծայ է պիտոյ վասն նոր մանսուպիցն [48]), այլ այժմ յղել ոչ կարեմք ասէ, որոյ պատճառն գրեալ եմ յառաջ, զի փաշային ևս ընծայ է պիտոյ՝ եթէ դոցա յղեցից, նմա ևս պարտիմք յղել. բայց այժմ ոչ կարեմք յղել. զի յառաջ մեր իշխօղն պարտի մարդ յղել առ նա և ընծայ յղել, որ ապա մեք ևս յղեսցուք, զի մի նեխեսցի ընդ յառաջ յղելն մեր. (որպէս և յօգոստոսի Թ ևս գրեաց)։ Գիտեմ զի փաշայն ևս ի մէնջ բետամագէ վասն այսր, այլ պատճառն այս է ասէ՝ զոր գրեցի, հարցանողացն այսպէս պատասխանեա։ Բայց վասն այդ երկուցդ եթէ դու պատշաճ տեսցես ժամանակ ինչ ևս թիալ՝ ծանիր մեզ։ Ապա թէ դու յայդր զպատշաճաւոր իբրս առեալ՝ մեզ գրեսցես զի մեք զթուղթս գրեսցուք առ դոսա, և դու ընդ թղթոցն մատուսցես իւրեանց, այս որպէս լինի, եթէ պատշաճ տեսանես ասէ՝ այսպէս արա։ Գրեաց ևս զփուսուլայ առ սա իւր ձեռամբն, թէ զի՞նչ է այդ՝ զոր գրեն

դոքա առ սոսա քանիցս, թէ ընդ մեզ միաբանեցարուք և առ թագաւորն միաբանութեամբ գիր գրեցէք, և այլն որ ի վերն ասացաւ։ Զի սոքա ընդ իրեարս չունին զկատարեալ միաբանութիւն որ այդպէս արասցեն։ Եւ ոչ միմեանց լսեն կամ հաւատան։ Ընդ դոսա առանձին առանձին զսէր առնել կարեն, այլ ի Քեսարիմէն ի բաց կալ ամենեւին ոչ կարեն. և ընդ դոսա զթշնամութիւն առնել ևս ոչ կամին և ոչ իսկ կարեն։ Զայսպիսի գիր զոր դոքա խնդրեն, սոքա գրել ոչ կարեն, բայց Հերակլն ինքն միայն գրել՝ և զդոսա յիւրոյ կողմանէն միամտեցուցանել կարէ։ Եւ այլ սոյնպիսիս գրեաց առ սա ասել Աֆանտուն առանձնօրէն։ Զորս եղեալ ի թղթոջ սորին, տուաք Ալի Աղային, տանել և տալ նմա։ Որ եւ ել ի սեպտ. ԺԳ։

ՄՀԳ.

Առ Գէօրկի միրզայն յորդին Հերակլ արքային, բացասութիւն խնդրոյն, որ ջորի խնդրէր։

Թուղթ վրացերէն գրեաց սրբ. վեհն առ որդի Հերակլ Արքային Դեօրկին Միրզային, ի պատասխանի թղթոյն՝ զոր ընդ ձեռնատ Շաքարօյին գրեալ էր, և Ա ղաթար ջորի խնդրեալ։ Առ որ գրեաց զբացասութիւն, թէ չունիմք, զի զքանի մի հատս զոր ունիմք, հազիւ թէ զմեր գործս յառաջ տանեն, և դեռ չբաւականանան ևս, զի բերող ոչ գոյ։ Եւ թէ՝ դիցուք թէ ասէ ունիմք, միթէ դու ոչ գիտես զորպէսն մեր, որք միշտ ճնշիմք պէսպէս կերպիւ ի բծախնդիր կեղեքչացս մերոց։ Եթէ մեք զայդ արասցուք, և քեզ ղաթարով ջորի յղեսցուք, այլ կարեմք զերծանիլ ի բերանոց սոցին։ Այլ և՝ լուեալ էր նա թէ՝ իշխօղն մեր խեթիւ վարի ընդ սրբազան վեհին, ուստի գրեալ էր առ նա վասն այսր զիրիջայս, որ էր անպատեհ իմն։ Եւ թղթաբերն, որ էր նոյն ձեռնատ Շաքարօն, ի յԵրեան աստ և անդ հըռչակեալ էր։ Զոր լուեալ սրբ. վեհին, գրեաց սմա թէ՝ զայդ բանդ ընդէ՞ր գրէիր դու առ սա, որով առաւելապէս նեխի՝ քան թէ շինի ընդ մեզ։ Եւ զայն ընդ Շաքարօյին նըման մարդոյ, որ յԵրեան աստ և անդ հըռչակեալ էր զայդ բանդ, որ է ամենայնիւ ֆնաս մեզ։ Ել Շաքարօն ի սեպտեմբերի ԺԴ։

Մխիթարական թուղթ ի Բայազիտ առ Մարզար Աղային

Մխիթարական թուղթ գրեաց սրբ. վեհըն ի Բայազիտ առ Մարդար Աղային, վասն մահուան հօրեղբօրն իւրոյ Թագէոսին, զոր յղեցաք առ տէր Վահանն տալ նմա։ Ի ձեռըն Ջուլհակ Աստուածատուրին։ Ի յամսոյս ԻԲ։

ՄՀԴ.

Ի Թիֆլիզ՝ առ Հերակլ Արքայն ընդ Ջազաբէկին․ եւ Աւագերիցութիւն տէր Փիլիպպոսին։

Որպէս ի վերդ յամսոյս ԺԴ որդի Հերակլ Արքային, նոյնպէս և այժմ ինքն իսկ Արքայն գրեալ էր առ խանն՝ զի հաշտեսցի ընդ սրբ. վեհին։ Եւ այսր աղագաւ յղեալ էր առ նա զՋազաբէկն, և զՍուլխան Դիւանն։ Որոց ի գալն յԵրեան և ի ծանուցանելն Խանին զհրաման Արքային, Խանն դրեալ էր առ սրբ. երթալ առ ինքն յԵրեան։ Գրելով այսպէս, թէ պիտոյ ես մեզ վասն ումանց ինչ բանից, և փոքր ինչ խօսք և զրոյց ևս ընդ քեզ առնելոց եմք։ Եւ սրբ. վեհն գնաց առ նա յԵրեան։ Իսկ նա ըստ գրեցելոյն խօսք և զրոյց ոչ ինչ արար. այլ ի գնալն առ ինքն սրբ. վեհին, սիրով ընկալաւ և խօսեցաւ, և զպատասխանի թղթոյ Հերակլ Արքային գրեալ՝ զՋազաբէկն և զՍուլխան Դիւանն առ նա ուղևորեաց։ Իսկ յայսմ միջոցի՝ գործ շինութեան թղթատանն աւարտեալ էր, և նոր թուղթն ելեալ, ուստի՝ կամէր սրբ. վեհըն մեծարել զԽանն ի ս. Աթոռս, ի տեսանել զթղթատունն։ Զսոյն դիտումն և ինքն Խանն ևս ունելով ի մտի, դրան մարդիկքն ասէին մեզ իբրու յինքեանց, թէ Խալիֆայն թող մեծարեսցէ զԽանն ի տեսութիւն թըղթատանն։ Զի կամէր աստ ցուցանել սրբ. վեհին զստոյգ սէր և զհաշտութիւն։ Բայց

որովհետև Զաղարէկն երթայր որպէս ասացաք, վասնորոյ՝ գրեաց սրբ. վեհն զթուղթ մի տաճկերէն առ Հերակլ Արքայն, ի պատասխանի տաճկերէն թղթոյն զոր ղրեալ էր ընդ Զաղարէկին, և զորպիսութիւն սրբ. վեհին հարցեալ, և զորպիսութիւնս խնդրեալ, և շատ բանք սիրոյ։ Որոց և սրբ. վեհն գրեաց զպատշաճաւոր պատասխանիս։

Թուղթ մի ևս դրեաց առ Արքայն Հերակլ՝ ի պատասխանի վրացերէն թղթոյն։ Նախ շնորհակալութիւն վասն անքակ սիրոյն որ առ ս. Աթոռս և առ ինքն։ Երկրորդ՝ գրեալ էր նա զխնդիր վասն երկուց մերազնեայ Ախթարմայից որք էին ի Գեօրի, թէ յԱխթարմայութենէ զձեռն ոչ առնուն ի վեր. և մեք որովհետև դատաստանաւ վճռահատեալ եմք տուգանել զայնպիսիսն, և չթողուլ առնել զԱխթարմայութիւն, (որպէս ասացեալ է այս ի հոկտ. ելն։) ուստի՝ զմեր դատաստանն քակել չկամելով՝ չներեմք նոցա։ Իսկ նոքա խորհին փախչիլ յԱխլցխա, և եթէ նոքա գնասցեն անտի, մեծ վնաս է լինելոց Գեօրու քաղաքին. զի տեղւոյ նշանաւորքն նոքա են։ Ուստի՝ ակամայ կամօք թողում զնոսա ի կամս իւրեանց։ Բայց ի սրբութենէ քումմէ խնդրեմ, զի մի՛ կարծիցես թէ ես զիմ վճռահատեալ դատաստանն քակեմ. այլ յանճարութենէ այսպէս առնեմ, խնդրեմ զի ներեսցես։ Եւ Զաղարէկն և Սուլխան Դիւանն ևս բանիւ Արքային բազմօք թախանձանօք աղաչեցին զսրբ. վեհն, զի մի՛ դժուարասցի վասն այսր յԱրքայէն։ Եւ սրբ. վեհն իբրև զկորուսեալս համարելով զնոսա անհաւատութեամբ և ուրացութեամբ, եթող ի բաց, որպէս և Արքայն կամէր, Երրորդ՝ տէր Փիլիպպոսն որ ի ՌՄԻԲ թուոջն և ի նոյեմբերի ԺԷ խնդրեաց ի սրբ. վեհէն տալ ինքեան զԱւագ քահանայութիւն Բերդի կաթուղիկէ եկեղեցւոյն, և սրբազան վեհն ասաց նմա, զի ի ժողովրդենէ տեղւոյն զմահսար առեալ յղեսցէ առ ինքն, որ ապա և ինքն տացէ նմա զԱւագ քահանայութիւն տեղւոյն, (որպէս անդ ասացաւ։) Իսկ ժողովուրդք տեղւոյն և բոլոր իսկ քաղաքին, չկամեցան զայս, և չխնդրեցին ի սրբ. վեհէն մինչև ցայժմ, վասն բծաւոր կարծեացն զոր ունէին զնմանէ՝ (որպէս անդ՝ և ի ՌՄԻԳ և ի յուլիսի ԺԸ ևս՝ ասացեալ է։) իսկ նա այժմ զմեծագոյն թախանձ առ Արքայն արկեալ գրեցուցեալ էր նմա զխնդիր բազմօք աղերսանօք առ սրբ. վեհն, շնորհել ինքեան զԱւագ քահանայութիւն Կաթուղիկէ եկեղեցւոյն Բերդի։ Եւ սրբազան վեհին զսոյն խնդիր Արքային ևս բացասել ոչ կաբելով՝ գրեաց զմէկ կոնդակ Աւագ քահանայութեան առ ժողովուրդսն Բերդի եկեղեցւոյն, թէ ահա ըստ խնդրոյ Արքային կարգեցի ձեզ Աւագ քահանայ զտէր Փիլիպպոսն, դուք ևս հնազանդեցարուք դմա ըստ կարգի և ընդ օրինի։ Եւ իւրեան ևս պատուէր գրեցաք ասէ՝ քաղցրութեամբ և արիութեամբ զձեզ կառավարել։ Եւ ընդ սմին գրեաց զթուղթ ևս առ ինքն տէր Փիլիպպոսն, յիշեցուցանելով նմա թէ՝ գիտես ահա, թէ զի՛նչ էանց վասն քոյ յայնժամ մինչ ի ս. Աթոռս եկիր, և յայնմ օրէ մինչև ցայժմ։ Այժմ ասէ ըստ խնդրոյ Արքային կարգեցի զքեզ Աւագ քահանայ, բայց զերկուս պատուէրս գրեմ քեզ։ Նախ պարտիս ասէ զկեղտ անունն զոր ասեն զքէն բարեկամք և չարակամք քո՝ ի բաց բառնալ ի քէն իսպառ, զի այլ մի՛ երևեսցի ի քեզ նշանն, և ասողացն պատճառս տացէ ասելոյ։ Երկրորդ՝ պարտիս ասէ ընդ ժողովրդեանդ և ընդ ընկերակից քահանայիցդ, նա և ընդ ամենայն Աւագ քահանայսն և ընդ գործակալսն մեր սիրով և քաղցրութեամբ վարիլ, և Առաջնորդին հնազանդ կալ յամենայնի. զի մի՛ տրտունջ և գանգատ ինչ հասցի զքէն յականջս իմ. և զլխացաւութիւն ինչ յաւելցի վասն իմ ի քոյդ կողմանէ։ Եւ մանաւանդ՝ որովհետև օրհնեալ Արքայն խնդրեաց ի մէնջ կացուցանել զքեզ յայդ գործ և մեք կացուցաք, պարտիս ապա զգոյշ լինիլ, զի գլուխ նորին ևս ազատ մնասցէ ի ցաւոց, և մեք անքասիր մնասցուք ի բերանոց հասարակութեան քաղաքիդ։ Եւ զկոնդակն հանդերձ այսու թղթով՝ բաց եղաք ի թղթոջ Արքային, զի ընթեռնուլ տացէ, և իմասցի, և ապա տացէ նմա։ Եւ որպէս յԱպրիլի ԺԹ և այլ յառաջ խոստացաւ Հաշտարխանունուիբակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետին հոգալ զքանս եղբարցն, այժմ ասաց Զաղաբէկին խնդրել յԱրքայէն ի դիմաց իւրոց, զի ի գլուխ տարցէ զխոստումն, զոր վասն նոցա խոստացեալ էր սրբ. վեհին։ Եւ զսոյն խնդիր համառօտ ի թղթոջն գրեաց ի լու-

սանցին, և ասաց՝ զոր ինչ ասասցէ Ջագարէկն յայսմ կողմանէ, խնդրեմ հոգալ։ Եւ որովհետև նոր թուղթն եկեալ էր, Բ գաստայ յղեաց վասն Արքային ընդ նոցա, զի տեսեալ ուրախասցի։ Զոր և գրեաց ի թղթոյն։ Եւ Յովսէփ վարդապետի եղբայր Բէժանն աստ էր եկեալ ընդ ձիածախ Ջերքեզաց։ Որոյ աղերսանօքն գրեաց առ Արքայն զխնդիր նոր վասն նոցա, Եկին Ջագարէկն և Սուլխան Դիւանն ի հոկտեմբերի ԻԵ։

ՄՀԵ.

Գալն խանին ի ս. Աթոռս ի ալատիւ, եւ թուղթք ի Կարին։

Եւ յետ գնալոյ Ջագարբէկին և Սուլխան Դիւանին ի Թիֆլիզ, ապա գնաց սրբ. վեհն վերստին առ Խանն, և ըստ որում ունէր զդիտումն հրաւիրելոյ զնա ի ս. Աթոռս՝ (որպէս ասացաւ ի վերոյ.) հրաւիրեաց զնա։ Եւ նա խոստացաւ գալ։ Եւ մեք օր մի յառաջ ի ս. Աթոռս եկեալ՝ տեսաք զպատրաստութիւն. և ի վաղիւն որ էր ուրբաթ՝ և ելն սեպտեմբերի, եկն Խանն, և մեք ընդ առաջ գնացեալ հանդիսիւ, բերեալ իջուցաք ի վեհարանն, քանզի Ղազարապատի որմն հարաւակողման փլաւ յայսմ ամի, հանդերձ քանի մի տամբք, որք դեռ կիսաշէնք էին։ Եւ յառաւօտուն և յերեկոյին ի ծաղկեալ վեհարանոջն կերեալ զհացն, գնաց ի բարձրաւանդակ մեծ այվանն, որ ի վերայ միջին բքոյ պարսպին ի ներսս, և անդ օթեցաւ զգիշերն։ Որ և գնացեալ ի թղթատունն և ի տպագրատունն, ետես, և թղթաշինացն պարգևս ետ Ժ թումանս։ Եւ ի նոյն ուրբաթ օրն յղեաց սրբ. վեհին զընծայս, որք էին, Բ պատուական ձի, որոց մինն թամբով, յորոյ վերայ էր սրմայագործ ազնիւ բուրտայ մի մեծագին։ Նաև՝ Ա բաշաբօշ, Ա գարպապ կապայ, և Ա լաւ թիրմայ շալ։ Ա բաշափօշ և Ա կապայ ևս Աթոռակալին ետ։ Ա գաբայի կապայ մեծ Մկրտիչ վարդապետին, Ա դարայի կապայ Միրզային, Ե մահուա կապայք ևս քեարվանբաշուն, լուսարարին, ներսիս դռնապանին, և գիւղի Բ քեանդխուտայիցն։ Եւ սրբ. վեհն ևս ըստ օրինի ետ զպատկանաւոր ընծայս, իւրեան, և Աղայիցն, և դրան մարդկանցն ամենից։ Եւ այսպէս շահեալ զմիմեանս Խանն և սրբ. վեհն, ի շաբաթ առաւօտուն որ էր տօն ՀԲ Աշակերտացն Քրիստոսի, ել խանն և գնաց։ Իսկ յայս աւուրքս թուղթ էին եկեալ առ սրբ. վեհն, ի Պօլսոյ՝ յՈւռումելու, ի Կարնոյ՝ և յայլ տեղեաց. զորս մհ. Փիլիպպոսն յղեալ առ տէր Վահանն ի Բայազիտ, և նա յղեալ էր աստ ի ձեռն Աբրահամ անուամբ խենթ փայեկի միոյ։ Եւ սրբ. վեհին չունելով այժմ զժամանակ գրել ամենիցն զպատասխանիս, մանաւանդ՝ զի հարկաւոր գրելիք ևս ոչ գոյին։ Գրեաց միայն զթուղթ ի Կարին առ մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն, ի պատասխանի ի սեպտ. Ժէ դրեալ թղթոյն։ Որք տուեալ էին զփօլիցայսն, զորս արար ի վերայ նոցա սրբ. վեհն ի ձեռն Գ երևանցի տաճկաց, և ի ձեռն գետնջեցի Յակոբ վարդապետին. (որք ասացան ի յօդ. ԺԱ, ԺԳ, և ի ԻԴ։) առ որս դրեաց զշնորհակալութիւն, և պատուիրեաց զփօլիցագիրսն կիսապատառ առնել և առ ինքն յղել աստ։ Եւ ինքեանք տուեալ էին անդ զդրամ այս գեղացի Եսայուն՝ (որ յիշեցաւ ի սեպտ. Բ) և թամասուկ էին առեալ ի նմանէ, զի նա աստ տացէ մեզ։ Եւ գրեալ էին սրբ. վեհին առնուլ ի նմանէ, և դրել ի հաշուի դաւթարն։ Եւ սրբ. վեհն գրեաց նոցա, զի զթամասուկն նորին յղեսցեն առ մեզ, որ զդրամն առցուք ի նմանէ և զթամասուկն տացուք իւրեան։ Եւ վասն Թօխաթու նոր նուիրակ Սահակ վարդապետին դանդատ գրէին թէ՝ մեզ դրամ ոչ հասուցանէ. գրեաց թէ՝ մինչև ցայժմ զոր ինչ ունեցեալ է հասուցեալ է ձեզ. այսուհետև ևս եթէ դրամ ունիցի, ի հարկէ հասուցանելոց է ձեզ. ընդէ՞ր գժուաբանայք փութով և գանգատէք։ Այլև՝ Կարնոյ նուիրակ Մեսրոպ վարդապետն՝ բաց յայնմանէ՝ զոր յառաջ հասուցեալ էր նոցա. (որպէս ասացաւ ի յուլիսի ԻԸ,) այժմ ևս նորապէս դրամ էր հասուցեալ նոցա, զոր գրէին սրբ. վեհին։ Առ այս ևս գրեաց թէ՝ զայդ ևս մեզ հասուսջիք։ Եւ վասն Կարնոյ Առաջնորդ Յարութիւն վարդապետին որ դրեաց նոցա ի յուլիսի ԻԸ և այլ յառաջ՝ զի ասասցեն նմա զգաստանալ, և արիանալ ի գործն, և սիրով

վարիլ ընդ ժողովրդեանն, սոքա այժմ գրէին թէ՝ ոչ ինքն ժողովրդեանն հաճոյանայ, և ձչ ժողովուրդքն ինքեան. զի սա այս երկրիս կեօրէ մարդ չէ, ե ոչ կարէ ժողովուրդ հովուել աստ։ Ուստի՝ գրեաց սոցա սրբ. վեհն թէ՝ որովհետև ոչ դա զժողովուրդսն կարաց շահել և ոչ ժողովուրդքն զդա, ասացէք զի եկեսցէ ի ս. Աթոռս, մեք զայլ Առաջնորդ յղեսցուք յայդր։ Միամտեցուցէք ասէ զդա, զի առանց իրիք կասկածանաց եկեսցէ աստ, մեք որպէս և իցէ, շահելոց եմք զդա աստ, զի որդի մեր է, և յայլ գործս կացուցանելոց եմք զդա ըստ իւր պատշաճին։ Իսկ եթէ ոչ եկեսցէ ասէ, զնոր Առաջնորդ կարգեալ յղելոց եմք յայդր, և յայնժամ ինքն թեթևանալոց է։

Թուղթ ևս առ նոյն ինքն Կարնոյ Առաջնորդ Ցարութիւն վարդապետն գրեաց ըստ նոյնոյ դիտման, և հարկեաց գալ ի սուրբ Աթոռս, յուսադրելով ըստ ամենայնի, թէ աստ շահելոց ես։ Ապա թէ ոչ եկեսցես ասէ, նոր Առաջնորդ եմք յղելոց յայդր, և դու թեթևանալոց ես, և ստրջութեամբ գալոց։ Եւ զի գրէր սա թէ՝ մինչև զվանքն և զքաղաքն ի միմեանց ոչ որոշեսցես, ոչ լինի շինութիւն այն վանիցն։ Գրեաց թէ՝ այդ ոչ մինչև ցարդ եղեալ է. և ոչ ես առնել կարեմ. դու որովհետև կառավարել ոչ կարես, ե՛լ և եկ։ Եւ զի գրէր թէ՝ ֆարմանի ԳԾ ղուռուշն լցուցի։ Գրեաց թէ, ում ես հասուցեալ զայդ որ այդպէս գրես, ոչինչ հասկացաք ի դրելոցդ, երբ եկեսցես, բերանով հասկացուցանելոց ես։ Եւ այլ առ այսոսիկ բանք։ Ցղեցաք զայս առ Մուրտիկեանսն տալ նմա, և զոր ինչ գրեցաք ինքեանց՝ ասել նմա, և յղել աստ։

Փուսուլայ ևս գրեաց սրբ. վեհն առ մհ. Փիլիպպոսն վասն որպիսութեանց, որպէս և ի սեպտ. Բ, և ի վերոյսն։ Որք գրէին թէ՝ երիցս անգամ զոր ինչ փուսուլայով դրեալ ես մեզ, փաշայն զօրինակսն առեալ յղեալ է առ Թագաւորն, և գրեալ է թէ՝ Խալիֆայն մեզ այսպէս բարեկամ է և հաւատարիմ տէրութեան քում, որ միշտ զայսպիսի որպիսութիւնս մեզ գրէ։ Եւ ի նորոյ ևս զորպիսութիւնիս էին խնդրեալ հրամանաւ փաշային, քանզի՝ լուեալ էին թէ՝ Քեարիմ Խանն զՁաքի Խանն ԽՌ մարդով յղեալ է ի կողմն Թարվիզու. որ էր սուտ։ Զոր սրբ. վեհն էհարց խանին մինչ եկն աստ՝ (որպէս ասացաւ ի վերն,) և խանն ասաց թէ՝ Զաքի խանն այժմ յԱստարապատու կողմն է, այդ սուտ է։ Ուստի՝ զայս ծանոյց սոցա զի ասասցեն փաշային։ Եւ գրեաց՝ թէ՝ ամենայն այդպիսի փառ և փուչ ձայնից մի հաւատայք։ Զի թէ լինիցի ինչ ասէ, մեք դրելոց եմք։ Մանաւանդ՝ Քեարիմն ասէ ի յայս կողմանցս իշխողացն միամիտ ոչ է, որ այս կողմամբքս զօրս արձակեսցէ ի վերայ այդ երկրացդ, այդ ամենևին ի խելաց հեռի է։ Ասա փաշային զի միամտեսցի։ Առ տէր Վահանն յղեցաք զայսոսիկ ի Բայազիտ, յղել ի Կարին առ մհ. Փիլիպպոսն և Խոջայ Առաքելն։ Բայց տէր Վահանի յղեալ Աբրահամ փայակն որ ի վերն յիշեցաւ, աստ խենթութիւն ինչ արար, ուստի զթուղթսն նմա չետուք։ այլ Իսաղ փաշայն Բայրամ անուամբ քիւրտ մի յղեալ էր աստ վասն բանից ինչ զոր ասելոց եմ, ընդ նմա յղեցաք։ Ի հոկ. Գ։

ՄՀԶ.

Առ Հախրակու Սալահ բէկն եւ Իսաղ փաշայն, վասն Առաջնորդ յղելոյ անդ։

Իբրև հասեալ էր թուղթ սրբ. վեհին առ Հախրակու Սալահբէկն, որ գրեցաւ առ նա յօգոստոսի Ը և գիտացեալ էր ստուգիւ զկամս սրբ. վեհին, որ առանց միաբանութեան Սալմաստու և Հախրակու ժողովրդեանն՝ անդ ոչ է յղելոց Առաջնորդ, ապա գրեալ էր այժմ առ սրբ. վեհն թէ՝ Բարդուղիմէոսի Առաքելոյ վանքն ինձ հայրենական մուլք է, և բաց յինէն այլ ոք իլախայ [41]) ինչ ոչ ունի ընդ այն վանքն։ Ուստի՝ զոր ոք ես կամիմ նստել անդ Առաջնորդ՝ զնա խնդրեմ ի քէն։ ԶՍողոմոն վարդապետն խնդրեցի, և դու չյղեցեր, այժմ ևս խնդրեմ ահա, յղեա զնա աստ։ Ապա թէ ոչ յղիցես, ստոյգ իմա, զի տաճիկ մօլլայ եմ դնելոց ի մէջ այն վանիցն, և ջամի եմ շինելոց։ Այնուհետև մեղքն Բարդուղիմէոսի Առաքելոյն ընդ քեզ լիցի։ Գրեալ էր և առ Բայազտոյ Իսաղ փաշայն՝ (որպէս և յայնժամ ի յօգ. Ը,)

զի ղրեսցէ առ սրբ. վեհն յղել անդ Առաջնորդ, զոր ե նա դրեալ էր, և ի ձեռն Բայրամ յանուն քրտի միոյ՝ հանդերձ Սալահբէկի թղթովն յղեալ էր առ սրբ. վեհն։ Իսկ ի Սալահբէկէն մարդ ոչ եկն աստ։

Ուստի և սրբ. վեհն դրեաց զթուղթ առ Սալահբէկն ի պատասխանի թղթոյն, թէ զայն որ գրես թէ՝ վանքն իմ մուլքն է, և այլն, թէպէտ քո մուլքն է, բայց հայոց վանք է, և ոչ տաճկի։ Եւ դորին թեմ և վիճակն թէպէտ Հախբակ եւ է, բայց շատն ե արդիւնատուն Սալմաստու երկիրն է, յայդր նստօղ Առաջնորդն եթէ Սալմաստացւոց խնդրանօքն չնստիցի, նոքա ոչ են հնազանդելոց նմա, ե ոչ են տալոց զտուրս ինչ, ոչ վանիցն, ե ոչ Առաջնորդին։ Իսկ Հախբակու ժողովուրդքն այնքան ոչ են, զի կարիցեն չէն պահել զվանքն, ե Առաջնորդ պահել ի մէջ նորա իւրեանց տրօքն։ Վասնայնորիկ ասէ դրեցի քեզ յառաջ թէ՝ մինչև այդ Բ երկրացդ հայքն չմիարանիցին, յայդր Առաջնորդ նստիլ ոչ կարէ, և այդ վանքդ ևս զշինութիւն ոչ ստանայ։ Այժմ ևս զնոյն գրեմ ասէ ահա. մինչև այդ Բ երկրացիքդ չմիարանիցին և ի մէնջ միաբանութեամբ Առաջնորդ խնդրիցեն, ոչ կարէ ոք յայդր Առաջնորդութիւն առնել, և ոչ մեք յղելոց եմք, և ոչ իսկ սևագլուխ ոք ցանկայ լինիլ յայդր Առաջնորդ։ Դու զՍողոմօն վարդապետն ասէ խնդրես, այլ Սալմաստցիքն ոչ զնա խնդրեն, և ոչ զայլս զորս դու առնել տաս Առաջնորդ, ընդունին նոքա։ Այլ թէ կամիս ասէ յիրաւի, զի այդ վանքդ շինութիւն ստասցի, և Առաջնորդ նստցի յայդր, և ամենայն թեմքն դմա արդիւնք տայցեն, դու միայնակ առանց թեմից կամակցութեանն մի խնդրեր ի մէնջ Առաջնորդ, այլ հարկեա ասէ ղընդ ձեռամբ քով եղեալ Հախբակու գլխաւոր ժողովուրդսն, զի երթեալ ի Սալմաստ, լաւապէս միարանիցին ընդ նոսա, և զսիրտս նոցին ի ձեռն բերեալ՝ միաբանութեամբ խնդրեսցեն ի մէնջ Առաջնորդ զով ոք որ կամին, և մեք յղեսցուք։ Որ յայնժամ ապա բոլոր թեմքն ընդունիցին միաբանութեամբ զայն Առաջնորդն, և վանիցն արդիւնք տացեն՝ որ զշինութիւն ստասցի կատարելապէս. և քեզ ևս օգուտ լիցի։ Եւ բազում առ այս բանք։

Թուղթ ևս առ Բայազիտու Իսաղ փաշայն գրեաց, և զայս դրեալքս ամենայն նմա ևս դրեալ ծանոյց, զի նաևս գրեսցէ զսոյնս Ալահբէկին առնել այսպէս։ Նա և զայս թէ՝ դու տաճիկ ևս, և այդ բանդ հայոց օրինաց բան է. դու ընդէ՞ր խառնիս ի բանս օրինաց նոցին, թող հայքն ըստ օրինաց իւրեանց զովոք կամին, զնա արասցեն Առաջնորդ, որ վանքն ի շինութեան մնասցէ, և քեզ ևս օգուտ լիցի։ Զայսոսիկ բերանով ևս ասաց սրբ. վեհն գրաբեր Բայբամ քրտոյն ասել Իսաղ փաշային։ Որ եւ ի հոկտեմ. Դ։

ՄՀԷ.

Ի Պոլիս, ի յՈւռումէլի, յԶմիւռին, ի Թօխաթ, ի Կարին եւ յայլ տեղիս թուղթք։ Վասն հարկաւոր իրաց, բազմազան մտօք։

Զպատասխանիս թղթոցն ի Պօլսոյ ի Կարնոյ և յայլուստ եկելոց՝ զորս վասն անձեռնհասութեան ոչ գրեաց յառաջ սրբ. վեհըն, որպէս ասացի ի վերն։ Այժմ գրեալ զամենայնն, յղեաց յիւրաքանչիւր տեղիս։ Որք են այսք։ Ջուղայեցի և ի Վան բնակեալ տէր Յովաննէսի որդի տիրացու Ստեփաննն՝ (որ յիշեցեալ գոյ ի նոյ. ԻԵ,) յառաջ ի Խոյայ, և յետոյ ի Կարնոյ՝ դրեալ էր զթուղթս աղերսանաց առ սրբ. վեհն, թէ երթամ ես ի մեծն Պօլիս, գրեա վասն իմ առ պատրիարքն, զի թէ ինձ դրամ պիտոյասցի անդ, տացէ։ Ուստի՝ զթուղթ գրեաց սրբ. վեհն առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, յանձնարարութիւն վասն նոյն տիրացու Ստեփաննին, և պատուէր՝ զի թէ դրամ պիտոյասցի նմա և խնդրեսցէ յինքենէ, տացէ նմա զդրամս որքան նա խնդրեսցէ, մինչև ցմյս ինչ թիւ, (բ) և սանատ առեալ ի նմանէ յղեսցէ աստ առ ինքն, զի ի գալն Ստեփաննին աստ, առնուցու ի նմանէ։ Այլ և՝ ի մայիսի ամսոյն մինչև ցայժմ, զոր ինչ դրեալ էր առ սա սրբ. զպատասխանիս դեռ չէր ընկալեալ ի նմանէ։ Ուստի՝ գրեաց զհարկ, զի զդրեալսն իւր լաւապէս ընթերցեալ՝ հոգասցէ զհոգալիսն, և դրեսցէ ինքեան։

Իսկ՝ (որպէս ի սեպտեմբ. ԻԵ ասացաւ.) գործ շինութեան Թղթատանն աւարտեցեալ էր, և զԹուղթն հանին ֆռանկքն։ Բայց էր Թուղթն վատ և անպիտան, որ ոչ սակաւ տրտմութիւն եղև սրբ. վեհին։ Եւ տարակուսեալ ոչ գիտէաք թէ՝ չգիտե՞ն զլաւն հանել, թէ գիտեն, և նենգութեամբ չհանեն։ Ուստի՝ ի հարցանելն մեր ստիպմամբ, թէ լաւ Թուղթ ընդէ՞ր ոչ հանէք, զայլ և այլս պատասխանէին, վերջապէս զայս, թէ մինչև ոչ միամտեցուսջիք զմեզ ի կողմանէ վարձուն մերոյ և պայմանին, մեք ո՛չ մխեմք զձեռս մեր ի գործ ինչ։ Իսկ յորժամ հարցանէաք զորպիսութիւն պայմանի աստ գալոյն իւրեանց, ցուցանէին զԹուղթ իւրն ֆռանկերէն, զոր բաց յինքեանց ընթերցող ոչ գոյր, զոր ինքեանք մինչ ընթերցեալ ասէին մեզ զպայմանն ի նմա գրեցեալ, տեսանէաք զի անհամեմատ էր պայմանին, զոր Գրիգոր Աղայն ի Հնդկաց գրեալ էր առ մեզ։ Իսկ զօրինակ նոյն ֆռանկերէն պայմանագրին, ասէին թէ՝ հայերէն թարգմանեցուցեալ տուեալ եմք պատրիարքին ի Պօլիս։ Ուստի՝ և սրբ. վեհն գրեաց այժմ ի կարճոյ զորպիսութիւնս Թղթատանն, և զնենգութիւն ֆռանկացն, և զԹապաղայ մի Թուղթ եղեալ ի Թղթոջս յղեաց զի տեսցէ։ Եւ խոստացաւ զլիովին որպէսն նոցա յետոյ գրել. քանզի այժմ փոքր ինչ ճմլեցաք ասէ զկզակս նոցին, ինքեանք ապա խոստացան մեզ լաւ Թուղթ հանել։ Եւ մեք զեռ հետևիմք իւրեանց յամենայնի, և խստապէս չխօսիմք, հայելով ի վախճանն։ Ուստի՝ եթէ յիրաւի տուեալ են քեզ զհայերէն օրինակն պայմանագրին իւրեանց, յղեա առ մեզ, զի տեսցուք, և խօսեսցուք ընդ սոսա։ Զմեր ունեցեալ պայմանն ասէ այնքան ոչ ցուցանեմք սոցա, դի զիւրեանցն ստոյգ իմասցուք։ Շուտով յղեա ասէ։ Իսկ եթէ չեն տուեալ քեզ Թուղթ ինչ այսպիսի զոր ասեն, զայն ևս գրեա մեզ շուտով։ Եւ թէ ըստ իւրեանց ասիցն զլաւ Թուղթ հանիցեն, բարի է, ապա թէ ոչ, յղելոց եմ յերկիրն իւրեանց։ Եւ զայլ այսպիսի գժգոհանս զնոցունց գրեաց ի կարճոյ։ Կրկին ևս հարկ՝ իբրու աղաչելով, թէ գրեցելոց իմոց զպատասխանիսն գրեա. եթէ զստորասութիւնս ո՛չ գրես, գոնէ զբացասութիւնն գրեա, զի և ես իսպառ միամտեցայց։

Եւ վասն Յակոբ և Անդրէաս վարդապետացն որպէս ի յնս. ԻԹ և այլ յառաջ, նոյնպէս և այժմ գրեաց զհարկ՝ մուղայէթ լինել՝ զգործսն աւարտել տալ, և ի յեկօղ գարնանն գոնեայ՝ ի ս. Աթոռս ուղևորել։ Եւ զոր ինչ ի յուլ. ԻԸ վասն Յամթայ Առաջնորդ Պետրոս վարդապետին գրեաց, այժմ ևս հարկեաց գրել զնոյն բանի որպէսն։ Եւ որպէս ի յուլիսի ԻԸ և այլ յառաջ, այժմ ևս գրեաց զհարկ՝ տալ Նազարէթին զգին քսրոցն, և գրել ինքեան։ Իշխանացն ևս ողջոյն գրեաց։

Թուղթ ևս առ վերոյիշեալ Ջուղայեցի տէր Յովաննէսի որդի տիրացու Ստեփաննոսն դրեաց ի պատասխանի երկուց Թղթոցն, ծանուցանելով զկատարումն խնդրոյն իւրոյ՝ որ գրեաց առ պատրիարքն տալ սմա զդրամն ի խնդրելն՝ մինչև ց (ք)։ (որպէս ասացաւ ի վերն։) Նազարէթին և Թադէոսին ևս յանձնարարութիւն գրեաց վասն սորա, (զոր յետոյ ասելոց եմ։) զայն ևս ծանոյց սմա։ Այլ և Ա Թուղթ գրել ետ առ սա սպասաւորին իւրոյ Մկրտիչ վարդապետին, առնուլ անտի զԺ հատ մեծ՝ լայն և հաստ բաղայ սանդր, սև՝ և խաս ամանով, կամ ինքն ընդ իւր բերել, կամ թէ ինքն յետասցի, տալ Նազարէթին, զի նա մենզիլով 45) յղեսցէ առ եղբարսն իւր ի Կարին՝ հասուցանել աստ՝ զի թերևս մինչև ցտաճկաց Նաւռուզն աստ հասցի։ Զնոյն և ինքն սրբ. վեհն գրեաց սմա ի կարճոյ՝ այսպէս առնել։ Եւ Նազարէթին (որպէս ի յունիսի ԻԹ,) նոյնպէս և այժմ գրեաց ժիւայի մորթի յղել. սմա ևս դրեաց ինքն, և Մկրտիչ վարդապետին ևս գրեցոյց, զի Նազարէթին առնուլ տացէ, կամ ընդ իւր բերցէ, և կամ թէ ինքն յամեսցի, Նազարէթն մէնզիլով յղեսցէ։ Եւ հարկ՝ զի ի կողմանցն Բաղդատու և Բասրայու և զՓիլիպպոս վարդապետէն, անդ զորպիսութիւնս իմացեալ գրիցէ մեզ։

Փուսուլայ ևս գրեաց առ նոյն տիրացու Ստեփաննոսն, և առանձնօրէն զամենայն որպիսութիւնս որոց սակս ունէր զմտմտանս, հարկեաց իմանալ զստոյգն, և խոստովանաբար գրել ինքեան։ Զոր ուրոյն գրմռեալ եղաք ի Թղթոջն, գրելով թէ՝ ի Վանայ էր եկեալ քեզ յղեցաք։ Հասցէն ևս անծանօթ։

Թուղթ ևս առ Մուրտիկզատէ Խօջայ Նազարէթն և Թադէոսն գրեաց ի պատաս-

խանի Թղթոյն իւրեանց՝ որ ի յօգ. էր գրեցեալ։ Վասն Թղթաշինացն՝ ե տիրացու Ստեփանին Ջուղայեցւոյ զոր ինչ առ պատրիարքն՝ զնոյնս ե առ սոսա գրեաց. ե հարկեաց մուղայէթ լինի և այնպէս առնել տալ։ Եւ զզժգոհանսն որ զԹղթաշինացն, սոցա ես գրեաց համառօտ։ Եւ Ա Թապաղտոյ նոր Թուղթ ևս սոցա յղեաց ի տեսանել, և զլաւն խոստացաւ յետոյ յղել եթէ ելցէ։ Տիրացու Ստեփանի գիրն առ սոսա յղեաց տալ նմա, և յատուկ յանձնարարութիւնս ևս վասն նորա գրեաց սոցա։ Եւ վասն քսրոց զնոյն զոր ինչ գրեաց պատրիարքին, ծանոյց սոցա, և գրեաց խնդրել և առնուլ։ Իսկ թէ ոչ տայցէ ասէ, մեզ գրեցէք մեք կուտամք։ Գրեալ էին թէ նոր նուիրակ յղեա։ Գրեաց թէ՝ անգամ մի դրեցաք պատրիարքին թէ՝ շուտ աւարտել տուր զգործն, որ նոր նուիրակ յղեմք, դեռ ոչ բժշկի սիրտն. այժմ եթէ գուք զհինն չաւարտեալ՝ զնորն յղիցեմք, իսպառ սրտահատ է լինելոց։ Ուրեմն՝ մինչև զհինն չաւարտեն, նոր նուիրակ չեմք յղելոց։ Ժիւայի մորթւոյ աղագաւ վասն տպագրատանն՝ որպէս ի յնս. Իթ, նոյնպէս և այժմ գրեաց Ի հատ առնուլ ձեռամբ հին տպագիր Յովաննիսին, և յղել, (որպէս ի Թղթոջ Ստեփանին ևս ասացաւ։) Վասն բասենցի Յարութիւն վարդապետին որ ի յօդ. Ե լուաք թէ ի տուն տաճկի է անկեալ, այժմ հաւաստի լուաք՝ որ ի տուն Լամսայի էլչուն էր անկեալ, և յայտնապէս ցուցեալ զհերձուածն և զուրացութիւնն իւր ի միարնադաւան խոստովանութենէ Հայաստանեայցս հաւատոյ սրբոյ։ Ո՛ւստի՝ գրեաց սոցա գրել զորպէսն նորին։ Զի և սոքա էին դրեալ զայն ի կարճոյ, այլ այնպէս դրեցաք, իբր թէ ինքեանք չիցէն դրեալ։ Քան զայս յառաջ ընդ այլ դրեցելոց դրաղում հարկաւոր բանս գրեաց սոցա, մանաւանդ՝ վասն նոր և աղճատեալ օրացուցին՝ զոր ի Պօլիս տպեալ էին, և հարկեաց գրել զպատասխանն, զոր ոչ գրէին։ Ուստի գրեաց թէ՝ ընդէ՞ր ոչ գրէք զպատասխանիս մեր գրեցելոցն. կարծեմ թէ ասէ երկնչիք ի գրելոյ։ (Որ և այնպէս էր յիրաւի)։ Զի ի պատրիարքէն և յայլոց կասկածէին։ Եւ վասն տօնացուցիցն մինչ քանիցս անգամ հարկեաց զսոսա գրել զորպէսն, այժմ գրէին թէ՝ առնօղ չկայ։ Ուստի՝ գրեաց սրբ. վեհն թէ՝ եթէ ի մեր ազգէն փափագանօք խնդրօղ լիցի, ծախեցէք, ապա թէ ոչ, պահեցէք առ ձեզ։ Եւ ընգ այգ մի ինչ տարակուսիցիք ասէ, քանզի յայս ժամանակս Արրայեցւոց Վինչիսկոսի, Յունաց Բանայիրների, Տաճկաց Ղուրպան Բայրամի և Հրէից Տատլու Բայրամի տօնից տօնացոյցն կուրանի հարկաւորապէս, ե մեր հայոց տօնքն ևս նոցա իրրու եամազ են, և ոչ թէ հարկաւոր։ (Զայս վասն ի Պօլիս տպեալ օրացուցին դրեաց՝ զոր յայսմ ամի տպեալ էին, որ յիրաւի այսու ոճիւ էր)։ Մեք այնպէս կարծէաք ասէ թէ՝ մեր ազգն զիւրեանց Աթոռոյ տիպն Լուսաւորչի անուամբ՝ (որ մինչև ցայժմ չէր եղեալ). տեսանելով ուրախանան, և փափագանօք վայելեն. և զայլոց ապականեալ օրացոյցն խոտեն։ Այսու աղագաւ է ջանքն մեր ասէ, և ոչ վասն փարայի։ Այժմ որ ընդ դէմ մերոյ հրամանին քան զԱրայեցւոցն ևս խայտառակ հնարեցին, և զտօնս եկեղեցւոյս մերոյ ապականեցին, և զայսքան ամեայ աշխատութիւնս մեր ոտնակոխ արարին, և զԹշնամիսն ծիծաղեցուցին, ես ոչ ինչ խօսիմ. միայն Թողում ասէ սրբոյ Լուսաւորչին մերոյ, զի նա տեսցէ զխզճութիւն միամիտ հօտին իւրոյ՝ և պահեսցէ յօտար աղանդից. որպէս պահեալ է և պահէ յայլ երկիրս։ Քանզի՝ եթէ պատրիարքն և գլխաւոր իշխանքն տեղւոյդ՝ որք այսօր երևելիք են ի մէջ ազգիս մերոյ՝ այդպէս կամին, ես զի՞նչ կարեմ առնել ասէ, որ միայն եմ, և յանտէր երկրում։ Դուք ևս հարցանողաց այսպէս պատասխանեցէք ասէ ի մերոյս կողմանէ։

Թուղթ ևս առ Ուռումելու նուիրակ Յովաննէս վարդապետն դրեաց ի պատասխանի Թղթոյն՝ որ ի յուլիսի Ը էր գրեցեալ ի Քիլի։ Առ որ հասեալ էին սրբալոյս Մեռոնն, և ԻԱ հատ տօնացոյցն, և կոնդակներն, որք ի յուլիսի ԻԸ, ի յունիսի ԻԹ, և ի մայիսի ԻԵ և այլ յառաջ յիշեցեալք են։ Վասն Իսմայելցւոց պարտուցն որ ի յունվարի Ա գրեաց սմա սրբ. վեհն առնուլ՝ (ը) չէր կարացեալ առնուլ, զի մհ. Յակոբն ևս մեռեալ էր, և նոր իշխանք էին յառաջացեալ անդ՝ տղայաբարոյք և անկատարք, որք զայլ և այլս խօսելով չէին տուեալ։ Վասնորոյ՝ զԹուղթ սպառնալեաց և բարկութեան ըստ խնդրոյ Յովաննէս վարդապետին դրեաց սրբ.

վեհն ի վերայ Իսմայիլու ժողովրդեանն տալ զայն դրամն։ Քանզի ասէ՝ զայդ ձեր եկեղեցւոյ շինութեան աղագաւ պարտք արարին ի մեր նուիրակ Գէորգ վարդապետէն իշխանքն ձեր՝ և ոչ վասն ինքեանց, այժմ նոքա մեռան, և մնաց ի պարտքն ի վերայ ձեր՝ և ձեր եկեղեցւոյդ, զոր պարտիք տալ յարդեանց ձեր եկեղեցւոյդ։ Այլ և՝ մհ. Մաղաքիայն և մհ. Յակոբն Ա խան էին ունեցեալ ի յԻսմայիլ քաղաքոջն, և յետ մահուան մհ. Մաղաքիային մինչ մհ. Յակոբն ևս մինչ մեռանել էր ի վախճանիլ, կտակ էր արարեալ թէ՝ զմեր խանն վաճառեցէք, և նախ զսրբոյ Էջմիածնի պարտքն առէք, և ապա զայլ պարտսն, զորս արարեալ եմք վասն եկեղեցւոյն։ Իսկ նոքա զկտակ նորին խափանելով, վասն եկեղեցւոյն էին զաւթեալ զայն խանն, և ի տարւոջն ՌՃ ղռուշ քիրայ առնուին, որ այժմ Գ տարի է։ Յորմէ տուեալ էին զպարտս Պօլսոյ իշխանացն, և զմերն ոչ տային։ Վասնորոյ գրեաց՝ զի խանն զայն վաճառեալ զմեր դրամն (Բ) տացեն, և կամ յեկեղեցւոյ արդեանցն՝ և որպիսի կերպիւ և իցէ, տացեն զայն Յովաննէս վարդապետին, և զղապզ առեալ ինմանէ առ ինքն յղեսցեն, զի գրեսցէ առ ինքեանս զթուղթ օրհնութեան և շնորհակալութեան։ Իսկ եթէ ոչ տայցէք ասէ, զներհակն օրհնութեան գրելոց եմ առ ձեզ. և Յովաննէս վարդապետին ևս գրելոց եմ, որ յետս տայցէ ձեզ զի ի ձէնջ առեալ նուիրակութեան արդիւնսն։ Եւ այնուհետև՝ երբ և իցէ, կարէ ս. Աթոռս հանել ի ձէնջ զիւր դրամն։ Օրինակն սորին է ի շարագրանաց տետրն, յերեսն՝ ՌԺԳ, ՌԺԳ։ Զոր յղեաց առ Յովաննէս վարդապետն առնուլ զայն դրամն։ Եւ վասն Ղափանու Քրտիկանու գիւղի ս. Աստուածածնի եկեղեցւոյ ԲՇԻ ղռուշին որ ի փետր. ԺԷ յիշեցաւ ի թղթոջ պատրիարքին, քանիցս անգամ պատրիարքն, և քանիցս սոյն Յովաննէս վարդապետն՝ գրէին սրբ. վեհին, զի գրեսցէ զթուղթ ղապզանման առ Վառնացի տիրացու Գրիգորն, և զայն դրամն առնուցու։ Իսկ սրբ. վեհն որպէս և յայնժամ, նոյնպէս և յայսմ նուագի ոչ կամեցաւ առնուլ զայն դրամն։ Այլ գրեաց Յովաննէս վարդապետին թէ՝ ես ոչ կամիմ զայն աղքատ եկեղեցւոյ փողն առնուլ, զի թերևս շինեսցին այն գեօղն և եկեղեցին, և գիւղականքն ի խնդիր ելցեն այդ դրամոյդ, մեզ ոչ է պիտոյ այդ։ Բայց որովհետև այդքան գրէք ասէ դու և պատրիարքն, ես ոչ եմ դրելոց առ նա իմ կարմիր կնքովս զղապզ. դու ղապզ տուր և առ, և ընդ քեզ բեր, եթէ տեարքն խնդրեն, տամք իւրեանց, և թուղթ առնումք ի նոցունց և յղեմք առ Գրիգորն, և զքո ղապզն բերեմք։ Իսկ եթէ խնդրօղք չլինիցին, և մնասցէ ս. Աթոռոյս, յայնժամ գրեսցուք մեք առ Գրիգորն զթուղթ, և զքո ղապզն յետս բերեալ քեզ տացուք։ Առ Նազարէթն յղեցաք զայս հասուցանել առ նա յՈւռումէլին։

Թուղթ ևս առ Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Եսայի վարդապետն գրեաց, ի պատասխանի ի յուլիսի ԻԸ դրեալ թղթոյն։ Առ որ գրեցեալ է ևս թուղթ ի յօգոստոսի ԻԹ։ Որ այժմ ի նուիրակական արդեանց իւրոց դրամ էր հասուցեալ առ Թօխաթու զանձապետ մհ. Աղամջանն՝ ըստ պատուիրի սրբ. վեհին։ (Գ) Բայց դեռ մհ. Աղամջանն չէր գրեալ առ սրբ. վեհն զհասանիլ դրամոյն, զի Եսայի վարդապետն զդրամն, և զթուղթ ևս առ սրբ. վեհն, կարաւանով էր յղեալ ի Թօխաթ. իսկ զայս թուղթս յետ այն թղթոյն գրեալ՝ յղեալ էր ի Պօլիս, զոր մէնզիլով յղեալ էին անտի ի Կարին. և անտի աստ։ Ուստի գրեաց այժմ զմիամտութիւն, և զայս ևս թէ՝ երբ մհ. Աղամջանն գրեսցէ առ մեզ զհասանիլն դրամոյն, (Գ) յայնժամ զղապզ եմ յղելոց առ քեզ։ Այլ և՝ ի Մսրդամ տօնացոյց էր յղեալ ըստ պատուիրի սրբ. վեհին, գրեաց զհաւանութիւն. և պատուիրեաց մուղայէթ լինիլ նոցա, և միշտ մխիթարել զրով։ Իսկ և՝ տպիչ մհ. Մարկոսն որ եկեալ աստ վախճանեցաւ, ունէր անդ զհրէից տպագրութեան գիր՝ և զայլ գործիս տպարանի։ Որոց աղագաւ յառաջ գրեաց սմա սրբ. վեհն վաճառել, իսկ սա այժմ գրէր թէ՝ ճ̄ ղռուշ հագիւ տան, և հարցեալ էր, թէ զինչ արասցէ։ Ուստի՝ գրեաց սրբ. վեհն, թէ որքան գնոյ և կարես վաճառել, վաճառեա, և մի թողուր։ Ապրօղատէիցն, և այլ քահանայից և իշխանացն ողջոյն գրեաց։ Առ Նազարէթն յղեցաք զայս ևս, առ նա հասուցանել։

Թուղթ ևս առ Թօխաթու նոր նուիրակ Սահակ վարդապետն գրեաց ի պատասխանի

ի յուլիսի ԺԷ գրեալ թղթոյն։ Առ որ դրեցեալ է ևս թուղթ ի յուլիսի ԻԸ, և այլ յառաջ։ Որ՝ (յամսոյս Գ ասացաւ). գրամ էր հասուցեալ Մուրտիկեանցն․ ի ձեռն նոցին վէքիլ մհ. Եղիայի որդի Ցարութիւնին։ Որոյ սակս զմիամտութիւն գրեաց, և պատուիրեաց, զի զայս թուղթս իւր զգապզ առ ինքն պահեսցէ, և զ՚ի նոցունց առեալ ղապզն յղեսցէ իւրեանց։ Ծանոյց սմա և զտրտունջն նոցա, որք գրէին թէ՝ մեզ դրամ ոչ հասուցանէ։ (Որպէս ասացաւ յամսոյս Դ)։ Եւ զի խնդրեալ էին նոքա գրել սմա, զի դրամ տացէ ինքեանց․ իսկ սրբ․ վեհն սմա գրեալ էր առ Մսրլեան մհ. Գրիգորն և առ Խօջայ Ղուկասն հասուցանել զգրամ։ Ուստի՝ այժմ առ ի չխրտուցանել զՄուրտիկեանսն, գրեաց թէ՝ ես որ յառաջ գրեցի քեզ՝ զի թէ հաւատարիմ բերող չլինիցի դրամոյ՝ Մուրտիկեանցն հասո, յայն սակս գրեցի, զի նոքա ի մէջ քաղաքաց մեծաց զոլով՝ անձեռնհաս լինին ի հարկաւոր ժամանակի մերում դրամ հասուցանել մեզ։ Եւ մեք վասն դրամոց վնեզութիւնս կրեմք։ Ուստի՝ եթէ այլ հաւատարիմ մարդ գտանիցի՝ որ շուտով առ մեզ գրամ հասուսցէ, նոցա տուր․ ապա թէ ոչ, հոգ չէ, Մուրտիկեանցն հասո ի խնդրելն նոցա, և մեզ գրեա։ Այսպէս պատրուակաւ գրեցաւ, զի այլոց ևս տացէ։

Թուղթ ևս առ Կարնոյ նուիրակ Մեսրոպ վարդապետն գրեաց սրբ․ վեհն, ի պատասխանի ի սեպտեմբերի Դ դրեալ թղթոյն։ Առ որ գրեցաւ ի յուլիսի ԻԸ ղապզանման թուղթ վասն առ մհ. Փիլիպպոսն հասուցեալ դրամոյն․ (որ և յամսոյս Դ յիշեցաւ), զոր և այժմ վերայիշեաց նմա։ Եւ զի յայնժամ ի յուլիսի ԻԸ սմա ևս գրեաց հասուցանել զարդիւնսն ի ձեռս Մսրլեան մհ. Գրիգորին, և Ղուկասին, ուստի՝ վասն չդժուարելոյ Մուրտիկեանցն, զոր ինչ ի վերն Սահակ վարդապետին գրեաց, ղնոյն և սմա գրեաց, զի որոց ի նոցանէ կամիցի ինքն, նոցա հասուսցէ զդրամ, կամ նոցա, և կամ Մուրտիկեանցն։ Եւ զի զԷրզնկանու Առաջնորդ Կարապետ վարդապետէն, և զՏրապիզոնցի հեստելոց ոմանց գանգատ գրէր, գրեաց թէ՝ որքան յայդ կողմունսդ ես, անպատեհ է գրել ինչ նոցա․ այլ յորժամ ի Կարին եկեսցես, յայնժամ դրելոց եմք։ Եւ վասն Գրիգոր վարդապետի ումեմն Առաջնորդութեան բանս էր գրեալ, գրեաց թէ՝ մեք զայդ ոչ գիտեմք։ Եւ որպէս ի յուլիսի ԻԸ, նոյնպէս և այժմ գրեաց առնուլ զգօշամայս [46]) ըստ ձեռնհասութեան, և յղել։

Թուղթ մի ևս առ Ցամթայ նուիրակ Ղազար վարդապետն գրեաց ի պատասխանի ի յուլիսի Թ դրեալ թղթոյն։ Առ որ դրեցաւ ևս թուղթ ի յուլիսի ԺԲ։ Վասն արդեանցն որովհետև ի յունիսի գրեաց Մսրլեան մհ. Գրիգորին և Խօջայ Ղուկասին հասուցանել, այժմ զոր ինչ վասն այսր Սահակ և Մեսրոպ վարդապետացն գրեաց, զնոյնս և սմա գրեաց, զի կամ նոցա՝ և կամ Մուրատիկեանցն, ում ումեք և կամիցի ինքն, նոցա տացէ աներկբայապէս, զի ի ս. Աթոռս հասուսցեն։ Այլ և՝ ի Բալուայ և ի Ջարսանջաղու երկիրսն աստ և անդ զգանձանակունսն էր հաստատեալ յանուն ս. Աթոռոյս, և վասն գանձապետացն զթուղթս խնդրեալ․ իսկ սրբ․ վեհն վասն անձեռնհասութեան այժմ զթուղթս ոչ դրեաց, այլ պատուիրեաց՝ զի զբոլոր նոր գանձապետաց անուանսն կրկին դաւթար աբարեալ յղեսցէ, զի յայնժամ ապա առ ամենեսեանսն զթուղթս օրհնութեան գրեսցէ։ Եւ առ ինքն ևս զշնորհակալութիւն վասն գանձանակացն գրեաց։ Իսկ վասն Բէշքիւթիւրին գրէր թէ՝ թուղթ գրէ ինձ, և հրաւիրէ երթալ անդ, երթամ, թէ ոչ։ Եւ սրբ․ վեհն զամենայն բանսն զորս վասն նորա գրեաց ի յուլիսի ԻԸ, սմա ծանոյց, և գրեաց՝ զի գրեսցէ առ իշխանսն Խարբերդու, եթէ յղեսցեն ղնա աստ ըստ պատուիրի իւրոյ՝ գնասցէ ապա յերկիրն նոցա, ապա թէ ոչ, մի երթայցէ։

Թուղթ ևս առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն գրեաց ի Կարին, և զՊօլսոյ գրեանսն յղեաց առ նոսա, յղել ընդ մէնզիլի փոսթով։ Այլ և զթուղթս Սահակ՝ Մեսրոպ և Ղազար վարդապետացն ևս առ սոսա յղեաց յղել առ նոսա, զի դրեալ եմ ասէ, որ ձեզ դրամ հասուցանեն։ Եւ ղդժգոհանսն զորս զԹղթաշինացն գրեաց առ պատրիարքն և Նազարէթն, փոքր ինչ ևս սոցա դրեաց, և զԱ թապաղայ նոր թուղթ յղեաց զի տեսցեն։ Եւ ծանոյց սոցա թէ՝ սոցա պայմանագրի օրինակն պատրիարքի մօտն է, գրեցի զի շուտով յղեսցեն, եթէ ձեզ

հասուսցեն, շուտով առ մեզ յղեսջիք։ Փուսուլայ մի ևս գրեաց առ սոսա թէ՝ մեք քաղաքիդ եկեղեցեացն տօնացոյց յղեցաք ընծայ, ինչ լինէր եթէ՝ տեղւոյդ քահանայքն ևս հին քեաթան յղէին վասն թղթատանն ժերոյ, Ա Ա րեռն, կամ. ոըքան և կարէին։ Ցղեցաք զայս պահարանս ի Բայազիտ առ. տէր Վահանն, զի յատուկ փայեկաւ յղեսցէ ի Կարին առ մհ. Փիլիպպոսն, կամ. այլ հաւատարիմաւ։ Զոր Խաչատուր և Եսայի Թուանկչիքն մեր տարան. զորս յղեցաք յԻւչքիլիսայն և յԱլաշկերտ վասն մշակ բերելոյ։ Եւ լին ի հոկտեմբերի ԺԱ։

ՄՀԲ.

Առ Կարսայ նոր փաշայն և Իբրահիմ էֆէնտին և յայլս, ընծայիւք։

Որպէս ի սեպտեմբերի ԺԳ և այլ յառաջ ասացաք, կամէր սրբ. վեհն, զի երբ իշխօղն մեր զմարդ և զընծայս յղեսցէ առ Կարսայ նոր փաշայն, ապա և ինքն յղեսցէ։ Իսկ յառաջ քան զայս՝ խանն զիւր ընծայն յղեաց ի ձեռն Ջաման խանին, որ աարաւ, և դարձեալ եկն աստ։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն պատրաստեալ զընծայս վասն փաշային Իբրահիմ Աֆանտուն և այլոցն, զսեագլուխ ոչ յղեաց առ ի չլինիլ անդ ծանրութեան, այլ ի ձեռն Մինախոռ Առղոմօնին յղեաց՝ զի Ղօշավանից Առաջնորդ Կարապետ վարդապետն և պ. Գէորգն՝ ընդ Առղոմօնին տարեալ ընծայեսցեն։ Վասնորոյ՝ և գրեաց սրբ. վեհն զթուղթ առ փաշայն մեր՝ և յորդորումն ի սէր և ի բարեկամութիւն առ ինքն և առ ս. Աթոռս։

Թուղթ ես առ Իբրահիմ Աֆանտին ըստ նոյն ոճին։ Այլ և՝ Բ թապաղայ նոր... *)։

ՄՀԹ. **)

Թուղթ ի Ղզլար առ պ. Բալին, որ Ա չիւթիշի և ոսկեջրեալ խաչ էր տուեալ մեծագին։

Թուղթ մի առ պ. Նըքէլն ի Ղզլար, որ Ա ձեռաց ոսկեջրեալ խաչ էր տուեալ, վասն իւրեան, և ծնողացն, և որդւոցն։ Եւ տուրք ևս որիշ։

Թուղթ առ ժողովուրդսն Մօզտօքու, շնորհակալութիւն վասն հարազատութեամբ ծառայելոյն իւրեանց ս. Աթոռոյս և զՑովսէփ վարդապետն շահելոյն և առատ տուրս տալոյն։ Եւ վասն չիւթիշի և ոսկեջրեալ արծաթեայ խաչին, որ էր յարևնման Բալու տուեալ խաչին վերոյգրեցելոյ։ Զոր հասարակութեամբ առեալ և տուեալ էին յիշատակ ս. Աթոռոյս։ Նաև՝ ի սոսա ևս նոր հաստատեալ էր Ցովսէփ վարդապետն, զի պտղի տացեն ս. Աթոռոյս՝ (որպէս ի Ղզլար ևս էր հաստատեալ, որ ասացաւ յապրիլի ԺԹ)։ Եւ զոր ինչ կանոնեալ էր՝ սիրով յանձն էին առեալ։ Որոց շնորհակալութիւն և օրհնութիւն։ Եւ յերկուս եկեղեցիս տեղւոյն ևս՝ գվէքիլ և դանձապետս էր կարգեալ վասն ս. Աթոռոյս, զպ. Պապայն՝ և զպ. Պօղոսն, որոց աղագաւ զհաստատութիւնս գրեաց, և իւրեանց ևս պատուէր։

Թուղթ ևս առ Մօզտօքու գանձապետ և վէքիլ պ. Պապայն, որ վասն եղբօրն իւրոյ պատահական մահուամբ հանգուցելոյ՝ զհոգեբաժինս էր տուեալ յատակ մանէթ։ Շնորհակալութիւն և օրհնութիւն, և պատուէր վասն գործոյն, և մխիթարութիւն ևս։

Թուղթ մի ևս առ Մօզտօքու միւս գանձապետ և վէքիլ պ. Պօղոսն, նոյնպէս պատուէր վասն գործոյն, և օրհնութիւն և շնորհակալութիւն վասն հարազատութեանցն։ Եւ զի գրեալ էր Ցովսէփ վարդապետն զթուղթսն առ սա յղել՝ զի սա հասուսցէ առ ինքն ի Հաշտարխան։ Ուստի՝ և մեք առ սա յղեցաք։ Բայց զՄօզտօքու հասարակ թուղթն, և զՊապայի թուղթն առ սա յղեցաք, զի զՊապայի թուղթն նմա տացէ, և զհասարակ թուղթն ի միասին յեկեղեցիսն ընթեռնուլ տացեն։ Մէկ պահարան ևս Ղզլարու կայր՝ զայն ևս առ սա յղեաց՝ յղել անդ առ տէր Մարդարն։

Թուղթ ևս առ Սառաֆան գիւղի ժողովուրդսն, նմանապէս օրհնութիւն և շնորհակալութիւն վասն հաստատելոյն զպտղի, զոր սահմանեալ էին տալ յամյամէ յայգեաց և անդաստանաց իւրեանց։ Նաև հոգեբաժին, և պսակադրամ, թէ ս. Աթոռոյս և թէ Առաջ-

*) Բնագիրը թերի էր։ **) Ակիզրը թերի էր։

նորդին՝ յանձն էին առեալ զի տացեն։ Օրհնութիւն անդաստանացն, և վերոյիշեալ Ներսէս Աղային ես, որ էր տէր գեղջն։

Թուղթ ես առ նոյն Սառաֆան գիւղի նոր վէքիլ պ. Յակոբն, նոյնպէս օրհնութիւն և շնորհակալութիւն, և պատուէր՝ մինչև ի մահն մնալ վէքիլ ս. Աթոռոյս։ Զի այսպէս էր խնդրեալ Յովսէփ վարդապետն վասն յոյժ յաւութեան նորին։ Որև խոստացեալ էր տալ ս. Աթոռոյս յամենայն տարի հինգ բաղրայ գինի, Եւ Ե սապոյ՝ (որ է սոմար) ցորեան ես սանել վասն ս. Աթոռոյս յամենայն ամի, և զոր ինչ արդիւնս հանցէ սերմն, թէ շատ և թէ սակաւ, զամենայնն տալ ս. Աթոռոյս։ Եւ խոստացեալ էր որդւոցն ես կտակել՝ զի այսպէս արասցեն յետ իւր մահուաննն։

Թուղթ մի ես ի Բօրաղան գիւղն առ Թիֆլիղեցի Թամար կինն, և առ ծերունի այրն իւր ուստայ Յարութիւնն, Որք ի Ղլլար Ա այգի ունէին Կ թումանի, զոր հաստատուն կտակաւ և սիգելիւ տուեալ էին յիշատակ ս. Աթոռոյս ի կենդանութեան իւրեանց։ Այսու պայմանաւ, զի որքան կենդանի են ինքեանք վայելեսցեն. և յետ մահուաննն իւրեանց՝ ս. Աթոռոյս լիցի։ Որոյ զսիգէլսն ես տուեալ էին Յովսէփ վարդապետին, և նա զհայերէնն յղեալ էր առ սրբ. վեհն. իսկ զռուսերէնն թողեալ էր առ ինքն, զի թարգմանել տացէ՝ և ապա յղեսցէ։ Որոց օրհնութիւն և շնորհակալութիւն և պատուէր՝ զի հաստատուն կացցեն յուխտին իւրեանց։

Թուղթ ես առ Յովհաննէս ոմն, զոր մականուամբ Ջիկլիտ կոչէին։ Որ էր ի մէջ այն Չէրքեզացն, որ Հաշտարխանու նուիրակին էր վիճակ։ Օրհնութիւն և շնորհակալութիւն, որ վասն հոգւոց հանգուցեալ եղբօրն իւրոյ Ասկէնտին և քոյր Հոփսիմէին զհոգեբաժինս էր տուեալ։

Թուղթ մի ես ի Մօզտօք առ Ստեփան ոմն, որոյ հայր Յովսէփին Բ թուման տալիք էր լեալ Բալամ անուամբ մարդոյ միոյ, և Բալամն վախճանեալ էր, և Յովսէփն ես էր վախճանեալ։ Եւ Բալամին չէր մնացեալ յիշատակ ոք։ Ուստի՝ զայն Բ թումանն յորդորմամբ Յովսէփ վարդապետին տուեալ էր ս. Աթոռոյս։ Օրհնութիւն և շնորհակալութիւն։

Թուղթ ես ի Հաշտարխան առ ս. Աթոռոյս գանձանակ շուրջածօղ պ. Ալէքսանն և պ. Աբրահամն մխիթարութիւն վասն մահուան հօրն իւրեանց Դաւթին, և շնորհակալութիւն վասն հոգեբաժնի նորին՝ զոր տուեալ էին Յովսէփ վարդապետին։

Թուղթ ես առ ինքն Յովսէփ վարդապետն, ի պատասխանի երկուց թղթոցն որք ի վերն յիշեցան, յապրիլի Լ և ի յուլիսի ԺԵ գրեցելոց։ Որում ծանոյց զգրելն առ ինքն զթուղթս ի յապրիլի ԺԹ և ի յուլիսի ԻԸ, (որպէս ասացեալ է ի նոյն տեղիսն). համդերձ ամենիւք խնդրեալ թղթովքն և կոնդակօքն։ Եւ զոր ինչ այժմ էր խնդրեալ, ծանոյց զգրելն և զյղելն այժմ առ ինքն։ Եւ պատուէր՝ զի ամենայն մարդոյ շուտով մի հաւատասցէ և զդրամս տացէ։ Այլ զով ոք փորձելով գիտիցէ թէ հաւատարիմ է, նմա տացէ։ Եւ վասն եղբարց Ելին որպէս ի յուլիսի ԻԸ, նոյնպէս և այժմ գրեաց զմիամտութիւն, և զոր ինչ սեպտեմբերի ԻԵ պատուիրեաց Ջազարէկին վասն նոցա, զնոյնս սմա ծանոյց։ Եւ վասն Պետրպօլքու տէր Յովաննէսին, որ քանիցս զլրրարար թուղթս էր գրեալ առ սրբ. վեհն, սա զլրբութիւնսն նորին գրեալ էր Եղիազար Աղային վերոյյիշեցելոյ։ Եւ նա դրեալ էր սմա թէ՝ զայդ և այլ տեղւոյս իշխանացն գրեա, զի միաբանութեամբ յանդիմանեացուք զնա. եթէ խոնարհեսցի և զմեղայ գրեսցէ առ սրբ. վեհն, բարի է, և թէ ոչ, յայնժամ մեք գիտեմք։ Զայս սա ծանուցեալ էր սրբ. վեհին։ Եւ սրբ. վեհն դրեաց թէ՝ եթէ քո գրեցելոցդ դոքա ոչ հաւատան, գրեա ինձ, զի զթուղթն զոր դրեալ է նա առ իս, յղեցից զի տեսցեն։ Իսկ և փոքր Դշխուհին Նատալիէ՝ կին որդւոյն Կայսերուհւոյ՝ վախճանեալ էր, և սուգ էին զգեցեալ երկիրն ամենայն։ Դրեաց թէ՝ մեք մինչ զթուղթս գրեմք առ Կայսերուհին և յիւրայինսն սիրով և ըղձիւ ընդունեն, թէ հարևանցի, ի մերային հարազատիցն իմացեալ ծանո մեզ զի գիտասցուք։ Քանզի՝ կամէր զայս ասել թէ՝ եթէ զմխիթարութեան թուղթս գրեսցուք առ Կայսերուհին և յՈրդին իւր, հաճելի լինի նոցա, թէ ոչ։ Եւ որպէս ի թղթոջ Յովաննէս Աղային ասացաք, կամէին տանիլ զսա ի Պետրպօլք՝ յօծանել զնորակերտ եկեղեցին։ Իսկ զմեծութիւն ծախուցն ոչ ոք գոյր կրօղ, այլ առէին

թէ՝ թող զայն քան ծախսն (ձ) արարեալ եկեսցէ ասա, և տեսցէ զմեծագոյն փառաւորութիւնն։ Գրեաց թէ՝ զքեզ խնդրողացն ընդ Ճր ոչ գրես, թէ զիս խնդրողն իմ խարճն ես կու. քաշէ։ Այլ և վասն Քեապուլու ժողովրդեանն գրէր սա թէ՝ ի Բուխարայու կողմանցն վաճառականք եկին աստ, և զաղէտս նոցա պատմեցին, որք ասացեալ են թէ՝ Ը տարի է որ մկրտութիւն չէ եղեալ ի միջի մերում, և մեք սրբ. վեհին քանիցս գիր եմք գրեալ, և զպատասխանի ինչ ոչ եմք ընկալեալ։ Եւ թէ՝ ՃԾ տուն են հայք և վրացիք. վրացիքն ես հայութիւն առնեն անդ։ Եւ թէ՝ անքահանայ լինելն նոցա հուչակեցեալ է, և ֆռանկ պատրիք մտագրեալ են երթալ անդ, և այլ առ այս րանք։ Եւ սրբ. վեհն գրեաց թէ՝ զայդ հոգսդ մեք միշտ ունիմք, և մաշիմք, այլ զհնարն գտանել ոչ կարեմք։ Զի յերկրոջս դեռ ըստ բաւականին ոչ գոյ քահանայ, անդ ուստի՞ յղեսցուք. մանաւանդ՝ սակս հեռաւորութեան ոչ ոք իսկ ախորժի անդ երթալ։ Մեք զպատասխանիս թղթոյն նոցա դրեալ եմք, և Ա տիրացու ունին որպէս դրեալ էին ինքեանք, հարկեցաք, զի յղեսցեն ի Ջուղայ առ Առաջնորդն տեղւոյն, զի նա քահանայ ձեռնադրեալ գարձուսցէ անդ։ Ուստի՝ թէ այսի զնացօղ դիպեսցի, դու զայս գրեա նոցա, և մխիթարեա, և թէ կարես, զճար իմն հոգա այտի և քահանայ յղեա անդ։ Մեք և՛ս առնելոց եմք աստի զհոգս։ Գրեաց և զորպիսութիւնս թղթատանն, և Գ թապաղայ թուղթ յղեաց ի տեսանել։ Եւ վասն հին քեաթանի դրեաց զպատուէր՝ զի թէ հնար է, և կարէ, զհին քեաթանս տացէ ժողովել և աստ յղել։ Եւ վասն Կայսերուհւոյն դովութեան բանս էր խընդրեալ ի պիտառութիւն ինքեան. զոր շարադրեալ յղեաց։ Եւ սրբ. վեհին մէկ հօր եղբօր որդի գոյր ի Ղզլար քաղաքն Ելլիազ անուամբ, որ անդ զնեղութիւնս կրէր, և առ սրբ. վեհն թուղթ էր դրեալ, զոր սա յղեալ էր, որպէս զի՝ դրեսցէ իշխանացն Ղզլարու ապահով պահել զինքն։ Ուստի՝ և սրբ. վեհն գրեաց զթուղթ առ Ղզլարու իշխանսն, և պատուիրեաց՝ զի ապահով պահեսցեն զնա։ Զի նա երկուս վիշտս ունէր անդ, մի՝ զի անկար էր, և զմանունս ունէր, այնքան ո՛չ կարէր վաստակս առնել, զի զհարկն տացէ, և զերեխայսն ես պահեսցէ։ Եւ երկու՝ զի զտունն առնուին երբեմն, և տային հիւրից։ Որոց վասն գրեաց սրբ. վեհն զխնդիր առ իշխանսն քաղաքին, զի զհարկ մի՛ առցեն, և զտունն մի տացեն հիւրից։

Թուղթ մի ես առ Ելլիազն գրեալ՝ ծանոյց զայս, և գրեաց՝ զի զոր ինչ այսպիսի ցաւս ունիցի՝ տէր Մարգարին ասասցէ։

Թուղթ մի ես առ ս. Աթոռոյս գործակալ տէր Մարգարն դրեալ զայս ծանոյց, և զթուղթ Ելլիազին և զհասարակն յղեաց առ սա տալ նմա։ Եւ պատուիրեաց՝ զի ինքն ես վասն այսց բանիցս մուղայէթ լիցի նմա։ Եւ զայս պահարանս յղեաց առ Մօզտօքու գանձապետ Գօգոսն՝ (որպէս ի թղթոջ նորին ես ասացաւ) յղել առ տէր Մարդարն ի Ղզլար քաղաքն։ Եւ զսոյն բանս ծանոյց Յովսէփ վարդապետին, և պատուիրեաց, զի ինքն ես լիցի նմա մուղայէթ. ծանոյց ես ըստ խընդրոյն իւրոյ զթուղթսն առ գանձապետ Գօղոսն յղելն այժմ. ի Մօզտօք, զի նա յղեսցէ առ ինքն Հաշտարխան։

Փուսուլայ ես գրեաց առ Յովսէփ վարդապետն առանձնօրէն, թէ վասն այս գեղացի Եսայուս որ գրէիր քանիցս յղել յայդր՝ (որպէս ի յուլիսի ԻԸ և ի վերոյս ասացաւ). նա ո՛չ եկն։ Իսկ վասն Թիֆլիղեցի Իւզբաշի Յարութիւնի որդի Եսայուն, (որ յիշեցաւ ի յամսոյս ԺԷ). գրեաց թէ՝ ահա նա եկն յայդր։ Եւ դրեաց՝ զի դրամ տացէ նմա յարդեանցն ս. Աթոռոյս, և զթամասուկ առեալ՝ կամ. զօրինակն յղեսցէ առ ինքն աստ, և կամ. զիսկն, զի ի նմանէ առնուցու։ Եւ գրեաց թէ՝ զվատայն մեք Ե ամիս ասացաք, և նա Ը. գու որպէս և լաւ գիտես, այնպէս վատայով տուր։ Գրեաց ես՝ զի Բ զարտաւայ քիւրք վասն իւր, այլ և կռզէթ՝ և այլ իրս հարկաւորս առեալ յղեսցէ ընդ Եսայուն, կամ. ընդ այլ շուտով եկող հաւատարմի։ Այնպէս իրք լինիցին ասէ՝ զորս դիտիցես դու՝ թէ մեզ պիտանի է, և Ղզլբաշից կամ Օսմանցւոց ընծայելի, բայց դոցին գինն ասէ ուրո՛յն լիցի, ի մէջ Եսայու հաշուին չլինիցի։ Գրեաց ես առնուլ զլաւ լաճվարդ՝ և ղոսկի վարաղ, և զլաւ ղրմզ ես եթէ դտանիցի, և ընդ նոյն իբացն յղել։

Փուսուլայ մի ևս որիշ իւր ձեռամբն գրեաց սմա սրբ. վեհն։

Թուղթ ևս ի Թիֆլիզ առ Առաջնորդ Յովաննէս՝ և առ Նուիրակ Մարտիրոս վարդապետսն գրեաց, և հարկեաց, զի զդիւրագոյն իմն հնարս գտցեն և զհնոտի քեաթանս ժողովեալ տացեն, թէ ՚ի Վրաստանու՝ և թէ ի Բաշաչխու, և յղեսցեն ի ս. Աթոռս, այնպիսի կերպիւ, որ փոխանակ շահուց զվնաս մի կրեսցուք։ Եւ վերոյիշեալ Եսային մինչ մատ էր, վասն այս բանիս ընդ նմա խօսեցաւ։ Ուստի գրեաց սոցա, զի նմա հարցցեն, և նա որպիսի հնարս և ցուցանիցէ՝ այնպէս արասցեն։

Թուղթ մի ևս առ վերոյիշեալ պ. Եսային գրեաց, և պատուիրեաց, զի վասն հին քեաթանի զդիւրագոյն իմն հնարս ցուցցէ Յովսէփ՝ Յովաննէս և Մարտիրոս վարդապետացն որպէս աստ խօսեցաք ասէ, և նոցա ևս գրեալ եմք։ Այնպէս լիցի ասէ, զի վնաս չկրեսցուք։ Այլ և՝ որպէս ընդ քեզ խօսեցաք ասէ, ահա գրեցաք Յովսէփ վարդապետին տալ քեզ զդրամ։ Եւ գրեցաք ևս զոմանս հարկաւոր իրս առնուլ, դու ևս տես խոհեմութեամբ, և զոր ինչ մեզ պիտանի դիտես, զայն առնուլ տուր, զորս կամ ընդ քեզ յղեսցէ, կամ ընդ այլ հաւատարիմ շուտով եկողի։ Եւ վասն Հաշտարխանու թղթոցն զոր ինչ գրեաց տէր Աբրահամին՝ (զոր ասելոց եմ ի ներքոյ) սմա ծանոյց։ Եւ պատուիրեաց՝ զի թէ ինքն շուտով գնասցէ և տարցէ ընդ իւր զթուղթսն, ի Մօզտօք զարտաքին պահարանն բացեալ՝ զՊօղոսի և զՊապայի և զհասարակ ժողովրդոց թուղթսն տացէ Պօղոսին, (որպէս ի Պօղոսի թղթոջն ևս ասացաւ). և զՂզլարու պահարանն ևս որիշ տարեալ տացէ անդ մեր վէքիլ տէր Մարգարին։ Իսկ զմնացեալսն՝ տարեալ տացէ Յովսէփ վարդապետին ի Հաշտարխան իւր ձեռամբն։

Թուղթ մի ևս առ տէր Աբրահամն գրեալ ի Թիֆլիզ՝ զՀաշտարխանու գրեանսն յղեաց առ նա, զի թէ Եսային շուտով գնալոց լիցի, նմա տացէ զի տարցէ ընդ իւր։ Իսկ թէ նա յետանալոց լիցի, որիշ հաւատարիմ մարդով յղեսցէ ի Մօզտօք առ ս. Աթոռոյս վէքիլ և գանձապետ պ. Պօղոսն, զի և նա առ Յովսէփ վարդապետն հասուսցէ ի Հաշտարխան։ Եւ զթուղթս Յովաննէս և Մարտիրոս վարդապետացն և Եսայուն յղեաց առ սա՝ տալ նոցա։ Զորս ընդ Բէժան տղային, (որ ի վերն յամսոյս ԺԷ յիշեցաւ), յղեցաք ի Թիֆլիզ առ տէր Աբրահամն։ Փուսուլայ ևս վրացերէն առ Առլխան դիւանն գրեալ՝ (որ ի սեպտեմբերի ԻԵ յիշեցաւ), ուրոյն ետուք Բէժանին տանել տալ նմա։ Որ գնաց աստի յԵրևան, և անտի ի Թիֆլիզ։ Ի հոկտեմբերի ԻԷ։

ՄԶ.

Ի Պօլիս, ի Կալին, եւ ի Կարս թուղթք, ընդ թղթաշէն փոքր ֆռանկին։

Ի հոկտեմբեր ամսոյս ԺԳ յղեցեալ տղայքն մեր ի Կարս, դարձան անտի և եկին, որք ընդ Կարապետ վարդապետին և Գէորգին զընծայսն մեր ընծայեալ էին փաշային՝ Իբրահիմ Աֆանտուն և այլոցն, որք ամենեքեանքն զթուղթս շնորհակալութեան գրեալ էին առ սրբ. վեհն, և զտղայսն ևս խիլայեալ և շահեալ։ Իսկ ս. Երուսաղէմի Նուիրակ Կարբեցի Կարապետ վարդապետն՝ (ըստ որում գրեաց առ նա սրբ. վեհն ի յօգոստոսի ԻԲ), յարդեանց իւրոց զդրամս էր տուեալ անդ Գէորգին, որ ի ս. Աթոռս հասուսցէ, և գրեալ էին ինքն և Գէորգն առ սրբ. վեհն, զի գրեսցէ առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, տալ անդ ս. Երուսաղէմի վէքիլ տիրացու Սարգսին։ Ուստի և սրբ. վեհն զղապզ գրեաց առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, զի զայս զդրամս (ա) տացէ անդ ս. Երուսաղէմի վէքիլին, և կամ ում և գրեսցէ Կարապետ վարդապետն, և զայս ղապզս առնուցու ի նմանէ։ Զի որովհետև ասէ մեզ մերձ էր Կարապետ վարդապետն, և իւրեան ևս թեթևութիւն էր, առաջ զայս դրամս աստ, զոր ի Նուիրակական արդեանցն ս. Աթոռոյս տացես ասէ։ Գրեաց և զթուղթ առ ս. Երուսաղէմի Նուիրակ Կարապետ վարդապետն, և զղապզն որ առ պատրիարքն, յղեաց առ նա, զի յղեսցէ առ ով և կամի, զի առնուցուն անդ ի պատրիարքէն զդրամն։ Նաև գրեաց՝ զի թէ այլ ևս դրամ այսուհետև ի ձեռն բերցէ, տացէ մեզ, և այսպէս զղապզ առեալ ի Պօլիս յղեսցէ

անդ առնուլ, զի քեզ ևս է ասէ գիւրաձեռնութիւն։

Թուղթ ևս առ Գէորգն գրեալ՝ զԹուղթ Երուսաղէմի նուիրակ Կարապետ վարդապետին եղաք ի մէջ թղթոյն, զի տացէ նմա, և զի՞նչ գրելն պատրիարքին վասն փօլիցային, սմա ևս ծանոյց։ Այլ և՝ շնորհակալութիւն յոլով և օրհնութիւն, որ զընծայսն լաւապէս տնօրինմամբ հասուցեալ էր յիւրաքանչիւր տեղիսն։ Եւ որ յայնժամ վասն Գալուստ վարդապետին ղրանս գրեաց նմա, հա ևս զմեզայ գրելով. խնդրէր ներել. մեք ասէ վասն սիրոյ ս. Աթոռոյդ և սրբ. վեհիդ զնա սիրեմք։ Ուստի՝ և սրբ. վեհն գրեաց նմա զմիամտութիւն։ Խնդրէր ըստ հարկի էֆէնտուն դրել զօրպիսութիւնս, գրեաց թէ՝ այժմ. ժէկ այնպէս համբաւ և զօրաց ձայն ոչ գոյ։ Իսկ և՝ Իբրահիմ էֆէնտին շատ չափազանց ուրախացեալ էր ընդ ելանել նոր թղթոյն, և զսրբ. վեհն գովեալ, և կամեցեալ ևս՝ զի զնոր թուղթն զոր մեք իւրեան յղեցաք, յղեսցէ առ Սարասկեարն ի Կարին, առ ի տեսանել։ Եւ սրբ. վեհն ևս զշնորհակալութիւնս յոլովս գրեաց վասն Աֆանտուն։ Այլ և՝ Կարապետ վարդապետն Առաջնորդն Ղօշավանից դնալ կամէր յԱխլցխայ. զի նոքա ես ակնադէտ էին գնալոյ նորա. և գրեալ ևս էին ումեմն ի Կարս թէ Կարապետ վարդապետն ընդէ՞ր ոչ գայ աստ։ Եւ նա գրեալ էր նոցա՝ թէ՝ եթէ հնազանդի՞ք սրբ. վեհին գալոց է առ ձեզ, և թէ ոչ. և՛ս գալոց է առ ձեռ յաշնանն։ Եւ նոքա պատասխանեալ էին վերստին թէ՝ մեք յամենայնի հնազանդ եմք կամաց սրբ. վեհին, թող եկեսցէ, որ ինչ եղե բաւական է։ Ուստի՝ ե սրբ. վեհն հաճեցաւ զի գնասցէ։ Այնր աղագաւ, Ա. Թուղթ գրեաց ի Կարս առ Իբրահիմ Աֆանտին, զի վասն Կարապետ վարդապետին ղյանձնարարութեան թուղթ գրեսցէ յԱխլցխայ առ Սուլէյման փաշայն, որպէս զի՞ յամենայն կողմանէ տիրութիւն արասցէ անդ նմա, զի թերևս կարասցէ նա ի ձեռն բերել զապստամբսն զայնոսիկ։ Զի մեք թէ զի՞նչ կրեցաք ասէ վասն Ախլցխայու՝ գիտես, փաշայքն զմեծամեծ կաշառս առնելով ի նոցունց. վասն մեր ղրան ինչ ոչ հոգացին, և զհրաման թագաւորին յառաջ ոչ տարան։ Այժմ վասն խաթեր մերոյ գրեա նմա ասէ, որ Ախթարմայիցն ունկն մի՛ դիցէ. և կաշառակեր միջնորդաց մի լուիցէ, այլ սաստեսցէ Ախթարմայիցն, զի հնազանդեսցին Կարապետ վարդապետին։ Քանզի ասէ թագաւորական ֆարմանով զԱռաջնորդութիւն տեղւոյն մեք եմք վերառեալ, որ մեք եմք տեղւոյ Առաջնորդն, և զԿարապետ վարդապետդ վէքիլ եմք առարեալ մեզ. (որպէս ասացեալ է ի դեկտ. Դ)։ Ուստի ասէ դմա հնազանդիլ պարտին։ Եւ խնդիր շատ առ այս, զի լաւ յանձնարարութիւն գրեսցէ։ Զայսոսիկ Գէորգին ևս դրեալ ծանոյց, և պատուիրեաց, զի ինքն ևս մուղայէթ լիցի, և զլաւ յանձնարարութիւնս գրել տացէ Աֆանտուն առ Սուլէյման փաշայն վասն Կարապետ վարդապետին։ Իսկ և՝ ըստ որում. ասացաւ յամսոյս ԺԱ. թղթաշէն ֆռանկքն տակաւին զլաւ իմն թուղթ ոչ հանին, զի և մեք միամտէաք և ուրախանայաք։ Ո՛ւստի՝ ի մեծ տարակուսանս կալով մեր, ստիպէաք զնոսա միշտ, զի թէ զլաւ թուղթս հանել գիտեն, հանցեն, ապա թէ ոչ, տացեն մեռ ստոյդ իմն պատասխանի։ Իսկ փոքր թղթաշէն ֆռանկն՝ որոյ անունն էր Մուսի Դէյսօր, զոր և Յովաննէս կոչէին. գեռ մինչև ցարդ մեզ ոչ պիտոյացաւ։ Քանզի՝ զթղթատունն համայն պարագայիւքն մեծ թզթաշէնն՝ որ Մուսի Բէյսօն՝ Յովսէփ ևս կոչիւր, շինեցուցեալ ի գլուխ եբեր, ցուցանելով զչափսն, և զձեւսն, և յօրինելով զամենայն յոյժ հաստատնագոյն։ Իսկ փոքր ամենևին բանի իմեք չպիտոյացաւ, զի ասէին թէ՝ սա միայն լաւ թուղթ հանել գիտէ, և յորմէ հետէ եկին աստ, մինչ ցայժմ. կայր պարապ և դատարկ։ Իսկ յորժամ. թուղթ հանելոյ ժամանակն եկն, յայնժամ, բաց ի յոչ հանելոյն զլաւ թուղթ, սկսաւ ևս մեծաւ գժտութեամբ վարիլ առ ընկերն՝ և առ Թարջիմանն իւրեանց, որ և եդ ի մտի գնալ յերկիր իւր, և ոչ ետ հանգստութիւն ընկերացն, տաղակացուցանելով և զլսելիս սրբ. վեհին ի ձեռն նոցին, թէ թէ զիս յղեա յերկիրն իմ։ Եւ սրբ. վեհին տեսեալ թէ՝ ոչ է իմիք պիտանացու, և զընկերն ևս ոչ թողացուցանէ միամտութեամբ հետևիլ գործոյն՝ վասնորոյ՝ թոյլ ետ նմա գնալ. զոր և յղեաց ի Կարս, և գրեաց Իբրահիմ Աֆանտուն, զի տարեալ իւր գիտեցեալ հաւատարիմ թաթարի միոյ ուղևորեսցէ զնա ի մեծն Պօլիս, զի տարեալ հասուսցէ

առ պատրիարքն, և զիւր վարձն անդ առնուցու ի նմանէ, Եւ շատ հարկիւ խնդիր՝ զի անտի յղեսցէ ի Պօլիս։ Ապա թէ անտի գնացող Թաթար ո՛չ հանդիպեսցի, յղեսցէ ի Կարին, զի անտի ընդ Թաթարի յղեսցէ մհ. Փիլիպպոսն։

Թուղթ ես առ Գէորգն գրեաց վասն սոյն փռանկիս բանին, ե պատուիրեաց՝ զի ինքն ևս ասացէ Աֆանտուն, և Ա հաւատարիմ Թաթարի յանձնեալ՝ յղեսցեն ի Պօլիս։ Եւ սմա ևս հարկ՝ զի ջանասցէ անտի գտանել զԹաթար, որ մինչև ցմեծն Պօլիս տարցէ զնա։ Իսկ եթէ անդ ի Պօլիս գնացող Թաթար չլինիցէ, յղեսցէ զնա հաւատարմաւ ի Կարին առ Փիլիպպոսն, զի նա անտի յղեսցէ։ Եւ եթէ անտի տանօղ Թաթար գացի, պայմանեսցէ նմա դիւր վարձն, որքան և իցէ պատշաճ։ Նա և դրոլոր ծախսն փռանկին արկցէ ի վերայ Թաթարին, զի ի ճանապարհին, եւ զորքանութիւն խարճին ես կտրեսցէ ընդ Թաթարին, թէ այսքան ևս դորա ճանապարհի խարջն, և այս ինչ քո վարձն։ Եւ այսպէս հաստատուն եղեալ զպայման վարձու Թաթարին և փռանկի խարջին, զԹուղթ մի գրեսցէ ինքն առ պատրիարքն, զի յորժամ Թաթարն զփռանկն տարեալ նմա յանձնեսցէ, և զգիրն իւր տացէ նմա, զպայմանեալ դրամն տացէ Թաթարին ղապզ տացէ վասն առ ինքն հասանելոյն փռանկին, զի Թաթարն զայն ղապզն յղեսցէ առ ինքն ի Կարս, և ինքն ևս աստ յղեսցէ առ ինքն սրբ. վեհն, զի տեսեալ միամտեսցի։ Բայց պատրիարքն անդ փռանկին ի կողմանէ ճանապարհական ծախուց զդրամ ինչ մի՛ տայցէ, այլ ամենայն ի վերայ Թաթարին լիցի և Թաթարն առցէ անդ զդրամ, որպէս ի վերն ասացաւ։ Եւ պատուէր՝ շուտով ճանապարհել զփռանկն, զի՛նչ՝ և որպէս առնելն դրեալ ծանուսցէ ինքեան օր մի յառաջ։

Ըստ սոյն ոճի, Թուղթ ևս ի Կարին առ մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն գրեաց, զի թէ Գէորգն ի Կարսայ չկարասցէ ճանապարհել ընդ Թաթարի ի Պօլիս, այլ յղեսցէ առ ինքեանս ի Կարին, ինքեանք ճանապարհեսցեն զփռանկն ի Պօլիս ընդ հաւատարիմ Թաթարի, ըստ նոյն ոճի և պայմանին՝ որ առ Գէորգն գրեցաւ, զոր սոցա ևս գրեալ ծանոյց։ Եւ զայս Թուղթս առ Գէորգն յղեաց՝ զի թէ ի Կարին իցէ յղելոց առ մհ. Փիլիպպոսն զփռանկըն, զի նա յղեսցէ, ապա զայս Թուղթս ևս յղեսցէ առ նա, որ նա ըստ այսմ գրելոյ զնա յղեսցէ։ Իսկ եթէ ինքն յղեսցէ զփռանկն ի Պօլիս, ապա՝ այլ մի՛ ևս յղեսցէ զայս Թուղթս առ մհ. Փիլիպպոսն, այլ յետս յղեսցէ առ մեզ։ Ակայն՝ ինքն գրեալ ծանուսցէ մհ. Փիլիպպոսին զայս բանս։

Թուղթ ևս առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն գրեաց վասն այսր, և ծանոյց զչպիտոյանալն մեզ փռանկին, և դառնալն յերկիր իւր։ Եւ պատուիրեաց՝ զի ի գնալն փռանկին առ ինքն, տացէ նմա ԱՌԷԾ ղուռուշ դրամ, որ էր նմա երեք տարւոյ վարձ, զի ԱԾ ղուռուշ ևս ասէ մեք ետուք աստ՝ և ղապզ առաք։ Քանզի՝ ուղարկօղքն նորին՝ պայմանեալ էին նմա ի տարւոյն ՋԾ ղուռուշ, որ լինէր յերեք տարին՝ ԱՌԸԾ ղուռուշ։ Իսկ նա յելեալ էր յերկրէն իւրմէ ի ՌՄԻԳ Թուոյն, և ի յԱպրիլի ելն։ Եւ եկին աստ ի ՌՄԻԳ, և ի փետրվարի ԺԳ։ Այժմ մինչ երթայր՝ որ էր ամսոյս ԻԸ, էր Բ տարի և կէս՝ յելանելոյն յիւր երկրէն, և յաստ մտանելոյն, Ա տարի և Թ ամիս։ Այլ մեք յիւր յերկրէն յելանելոյն հաշուելով՝ ըստ որում պայմանն էր իւրեանց, Բ տարւոյ և կիսոյ վարձ կամէաք տալ։ Իսկ նա հանդերձ միւս ընկերով աղաչեաց՝ զի երեք տարւոյ վարձ տացուք, զի ի վեց ամիսն ևս ասեն հազիւ ի տեղին իւր հասանի, և գեռ հասանիլ ոչ կարէ, և զպայմանագիրն իւրեանց ևս առաջադրէին, թէ. այսպէս են պայմանեալ մեզ, ե պայմանագիրն փռանկերէն էր, զոր մեք ընթեռնուլ ոչ կարէաք։ Ապա յակամայ կամս հաւանեալ սրբ. վեհին, ետ նմա զերեք տարւոյ վարձ ԱՌԸԾ ղուռուշն, որոյ ԱԾ ղուռուշն աստ ետ, և ԱՌԷԾ ղուռուշն գրեաց պատրիարքին զի տացէ, որպէս ի վերն ես ասացաւ։ Եւ զոր ինչ Գէորգին ե Փիլիպպոսին գրեաց՝ զայն ես սմա ծանոյց, ե պատուիրեաց՝ զի որքան որ գրեսցեն նոքա ինքեան, թէ այսքան դրամ եմք պայմանեալ Թաթարին՝ տուր, ինքն ես տացէ զայն Թաթարին, և ղապզ առնուցու ի նմանէ, ե փռանկին դրամ մի՛ տացէ յայսմ կողմանէ։ Եւ ինքն ես Թաթարին ղապզ տացէ վասն առ ինքն հանելոյն փռանկին, զի Թաթարն յղեսցէ զայն առ իւր ուղարկօղն, ե նա աստ

առ ինքն, զի զհասանիլն անդ փռանկին՝ իմացեալ միամտեսցի։ Նա և պատուէր՝ զի օր մի յառաջ հանցէ զնա անտի, որ շատ մնասցէ անդ, և ի փռանկսզի նաւ մի դիցէ, այլ որիշ ազգի նաւով յղեսցէ։ Իսկ եթէ որիշ ազգի նաւ ի պատրաստի չգտանիցի, ի Զմիւռին յղեսցէ անտի շուտով. զի նա անդ յայլ նաւ մտեալ երթիցէ յորիշ երկիր՝ և անտի իւր քաղաքն, որպէս և իւր աղերսանքն էր։ Քանզի ասէին թէ՝ զմեզ ուղարկօղքն թղթաշինութեան անուամբ չյղեցին, այլ որիշ պատճառաւ՝ և այլ անուամբ, ի ծածուկ պահելով զթղթաշինութեան անունն առ երկիւղի։ Արդ թէ իմասցին ասէ՝ թէ ես այսու անուամբ եմ եկեալ աստ, զչարիս հասուցանեն ինձ, և մեր ուղարկողացն։ Եւ գրեաց ևս՝ զի ի յուղևորիլն անտի՝ զնաւու վարձն և զայլ ծախսն ճանապարհական՝ տացէ նմա։ Եւ պատուէր՝ զի յորժամ զմէկ հազար եօթն հարիւր ղռուշն՝ և զնաւու վարձն և զծախսն ճանապարհին՝ (որ ի Պօլսոյ մինչև ցերկիրն ուր,) տացէ, յայնժամ, զերկուս ղապզս առնուցու ի նմանէ, այսու դիտմամբ թէ՝ ես զիմ երեք տարուայ վարձս, և գալոյս և գնալոյս խարճն բոլորապէս առի, և այլ չմնաց ինձ առնլիք ի ս. Էջմիածնէ։ Որոց զմինն ասէ առ մեզ յղեա, և զմինն առ քեզ պահեա ի միամաութիւն ինձ՝ և ի հաստատութիւն բանին։ Բաց յայգցանէ այլ որիշ դրամ չտայցես դմա ասէ։ Եւ յղելդ զնա այտի և զորպէսն՝ գրեա մեզ շուտով։

Փուսուլայ ևս գրեաց առ սա թէ՝ թէպէտ Գրիգոր Աղայի պայմանն ոչ էր այսպէս ընդ ուղարկողացն դորին, որ մեք դորա գալոյն և գնալոյն ևս վարձ տացուք, որպէս որ մեզ գրեալ է, բայց որովհետև շատ աղաչեցին զմեզ, և զիւրեանց ունեցեալ պայմանագիրն ևս ցուցին՝ որ այլ էր ի գրեցելոց Գրիգորին, վասնորոյ՝ մեք ևս ետուք։ Ցետոյ Գրիգոր Աղային կու գրեմք, թող նա ընդ դորա ուղարկողացն զիւր հիսապն տեսցէ։ Զայս յղեաց առ Նազարէթն տալ պատրիարքին։

Թուղթ ևս առ Նազարէթն և Թադէոսն գրեաց՝ զայս ամենայն զոր առ պատրիարքն գրեաց՝ նոցա ևս ծանոյց։ Եւ պատուիրեաց՝ զի ինքեանք ևս մուղայէթ լեալ այս բանիցս, շուտով ուղևորեսցեն անտի, և գրեսցեն ինքեան օր մի յառաջ։ Այլ և՝ տեսակ մի ճերմակ շալ՝ պիտոյ էր Թղթատանն, որ ի Պօլիս գտանիւր։ Ուստի հրամանաւ սրբ. վեհին Թարճիմանն գրեաց եղբօրն իւրում, զի ցուցցէ զայնն Նազարէթին։ Եւ սրբ. վեհն գրեաց սոցա, զի Ծ հալապի առեալ ի նմանէ՝ յղեսցեն շուտով աստ։ Նաև՝ բարակ պղնձեայ թել էր պիտոյ վասն թղթոյ մաղին՝ քանի մի տեսակ, զօրինակսն յղեաց Թարջիմանն առ իւր եղբայրն, և սրբ. վեհն գրեաց Նազարէթին առնուլ ի նմանէ ևս՝ և յղել, որչափ որ Թարջիմանն գրեալ է իւր եղբօրն։ Զայս պահարանս, և զԳէորգինն ևս որ վասն փռանկի յղելոյն էր, տուաք փռանկին, զի ինքն տարեալ տացէ նոցա։

Թուղթ ևս առ Կաբսայ փաշայն գրեաց, որ ընդ մեր տղայոցն գրեալ զպատասխանին թղթոյ սրբ. վեհին հանդերձ շնորհակալութեամբ, խնդրէր ևս զօրպիսութիւնս, զի լուեալ էին թէ՝ Հերակլ Արքայն զզօրս ժողովէ։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ որիշ օրպիսութիւն ինչ ոչ գոյ զի գրեցից։ Իսկ Հերակլի զօրք ժողովելն յիրաւի է, բայց թէ ինչ անուամբ է՝ չէ յայտ։ Այլ հաւաստեաւ գիտեմք, զի ընդ ձեզ բան ինչ ոչ ունի։ Բայց թէ դուք նմա դիպիցիք, ի հարկէ ինքն ևս ձեզ դիպի։ Զայս թուղթս ևս հանդերձ թղթովք Իբրահիմ Աֆանտուն և Երուսաղէմի նուիրակին, որիշ պահարան շինեալ ընդ միւս թղթոյ Գէորգին որ չէր վասն բանից փռանկին, ետուք Ղօշավանցի Ստեփանին, որ զԿարապետ վարդապետի յղեալ տաւարն՝ իւղն և պանիրն բերեալ էր, տանիլ տալ Կարապետին, զի և նա հասուսցէ Գէորգին։ Որ ի մէջ Կարապետ վարդապետի թղթոյն եդաւ։ Գրեաց և զփուսուլայ ևս առ Գէորգն սրբ. վեհն վասն օրպիսութեանց մերոց, խօսիլ ընդ Աֆանտուն և գրել ինքեան։ Եւ վասն Հերակլի զօրք ժողովելոյն զոր ինչ առ փաշայն, զնոյն և սմա գրեաց ասել Աֆանտուն։

Ա Թուղթ ևս Մկրտիչ վարդապետն գրեաց առ սա՝ առնուլ և յղել վասն թղթատանն, Դ հօխայ թօրթու, որ է գինւոյ չոր բրոր, որ յայլ տեղեաց գայ, և ոսկերինչք ի գործ արկանեն։ Դ հօխայ նոր և լաւ առչասպ, Դ հօխայ պղնձի բարակ մաւթուլ, Գ հօխայ ևս քան զայն փոքր մի հաստ։ Իսկ

թէ այսչափ չլինիցի, Բ Բ հօխայ, կամ փոքր մի աւելի։ ԱՃ դրամ սիմ։ ԱՃ դրամ ևս փոքր մի հասա սիմ։ Եթէ յայդր չդաանիցին ասէ գրեա ի Կարին, և անտի բերել տուր։ Որոց զօրինակսն ևս յղեաց, այսինքն՝ ղԹեւլիցն պղնձեայ, զի զնմանն առցէ։

Թուղթ ևս առ Ղօշավանից Առաջնորդ Կարապետ վարդապետն դրեաց սրբ. վեհն, ի պատասխանի Թղթոյն՝ զոր դրեալ էր առ Մկրտիչ վարդապետն։ Շնորհակալութիւն վասն հարազատութեանցն, և զընծայսն մատուցանելոյն փաշային և այլոցն, և ղտաւարս ԺԶ։ Ն։ զԲ տիկ իւղ՝ և զԴ տիկ պանիր յղելոյն։ Ծանուցանելով ևս զոր ինչ դրեաց վասն իւր առ Իբրահիմ Աֆանտին և Գէորգն, առ ի գրել զԹուղթ յանձնարարութեան առ Սուլէյման փաշայն։ Եւ պատուէր՝ զի երթեալ յԱխլցխա, ջանասցէ կերպիւ ինչ ի ձեռն բերել զնոսա։ Եւ որքան և կարիցէ՝ թէ ճնշելով, թէ սիրով, ածցէ զնոսա ի հաւանութիւն, և ի հնազանդութիւն ս. Աթոռոյս և ինքեան։ Որ եթէ ուղղեսցին ասէ՝ բարի է, և թէ ոչ, արիւն իւրեանց ի գլուխս իւրեանց, այնուհետև ես գիտեմ ասէ թէ զինչ եմ առնելոց։ Եւ զի հարցանէր թէ՝ Մարտիրոս վարդապետն յայն ժամանակն որ գնացեալ է անդ՝ փաշային ինչ է տուեալ։ Գրեաց թէ՝ Մարտիրոս վարդապետն քեզ նման ոչ էր, այլ նուիրակ էր անդ, և անդէն պատահմամբ ինչ անկաւ ի մէջ կռուոյն Ախթարմայից, մեք ևս գիր գրեցաք փաշային, և մարդ և ֆարման յղեցաք, և զԳ չիք կարգաւորսն աստ բերել տուաք, և այսց աղաղաւ զմեծամեծ դրամս վատնեցաք։ Այժմ քո բանդ այն բանին նման չէ, և Մարտիրոս վարդապետն քեզ օրինակ չէ, այնպէս եռա խոհեմութեամբ, ոլ փարայի դուռն չբանաս։ Եւ վասն չարագլուխ չիք Ցովաննէս պետին՝ որ մի էր ի չորից աքսորելոցն, (որ յիշեցեալ է) պատուիրեաց՝ զի վասն նորա զհնար իմն գտցէ կորուսանելոյ՝ կամ յղելոյ, և կամ յայլ տեղիս վարելոյ։ Զի այժմ նա էր անդ չարագլուխ և մոլորեցուցիչ։ Եւ վասն Կարմիր վանից Առաջնորդ Ցակոբ վարդապետին դրէր թէ՝ ի քանի տեղեաց զԱռաջնորդական իրաւունս է առեալ, և զՕքբօպաերտու զանձանակն ևս կամեցեալ է առնուլ։ Գրեաց թէ՝ ես նմա գրեալ եմ ձեռնամուխ չլինի Ախլցխայու երկրին։ Այժմ նա զայդ ընդէ՞ր արարեալ։ Զստոյգն իմացեալ դրեա ինձ ասէ։ Եւ յառաջ որ գրեաց հին քեաթան ժողովել տալ ի Կարսայ և յղել, գրեալ էր թէ՝ աստ ոչ ազանին ղքեաթան։ Այժմ ղրեաց թէ՝ ահա յԱխլցխա երթաս, որոյ գաւառաց բոլոր բնակիչքն քեաթան ղգեցօղք են, անտի զճար իմն հոգա, և ժողովել տուր և յղեա։ Մանուանդ ասա անդ՝ զի աստ երթև եկս արասցեն, (զի առ երկիւղի ոչ գային։) Եւ եթէ ոք ի նոցունց հին քեաթան ժողովեալ աստ բերցէ, մեք բամբակ և բրինձ՝ և այլ զինչ կամիցին, տամք և առնումք։ Եւ վասն Թրղթաշէն փոքր ֆռանկին սմա ևս գրեաց, զի մուղայէթ լեալ՝ օր յառաջ յղել տացէ։

Փուսուլայ ևս դրեաց առ սա և վերստին զգուշացոյց, զի յԱխլցխայ այնպէս բան մի առնիցէ, որ նորապէս վասն մեր կռուոյ և փարայի դուռն բացցի, այլ ըստ ամենայնի խոհեմութեամբ շարժեսցի։ Զպահարանն Գէորգին առ սա յղեաց հասուցանել նմա, որպէս ի վերն ևս ասացաւ, ընդ Ղօշավանցի Ստեփանին։ Որ ղֆռանկն ևս ընդ իւր տարաւ ի Կարս, Ա ձի ևս ֆռանկն հեծեալ գընաց, և Մկրտիչ վարդապետն գրեաց Գէորգին յղել անտի յետս։ Ելին ի հոկտեմբերի ԻԸ։

ՄՋԱ.

Ղապզ՝ զոր տուաք Բամբկուձորեցի ծեր տէր Առաքելին վասն հոգեբաժնին։

Քահանայ մի ծերունի Առաքել անուամբ ի Բամբկաձորու՝ և ի Դարվաս անուամբ գեղջէն, բերեալ ի կենդանութեանն եաստ զիւր հոգւոյ բաժինն ս. Աթոռոյս, որ էր Ի նորահաս գոմէշ. Ի եզն, Ի կով, և Ա սայլ։ Եւ խնդրեաց ի սրբ. վեհէն՝ զի Ա ղապզ տացէ ինքեան, զի ի ժամ վախճանին այլ մի խնդրեսցեն զհոգեբաժինս։ Քանզի՝ ինքն ոչ ունէր որդի և ժառանգ մարմնաւոր, այլ զորբ մի ի մանկութենէ պահեալ և սընուցեալ որդեգիր էր արարեալ իւրեան, ուսուցեալ՝ և քահանայ ձեռնադրել տուեալ. և նա ևս ծերացեալ էր, և ունէր որդիս և

ընտանիս, և նա էր ժառանգ այս քահանայիս։ Ուստի՝ բարւոք խորհրդով՝ զիւր հոգւոյ բաժինն ի կենդանութեան բերեալ ետ։ Վասնորոյ՝ զթուղթ գրեաց սրբ. վեհն ի վերայ Բամրկաձորու ժողովրդեանն, թէ հոգերաժինն սորա ինձ էհաս. ի ժամ սորա վախճանին այլ մի ոք խնդրեսցէ հոգերաժին։ Զոր և ետ նմա, և գնաց աստի ի նոյեմբերի Դ։

ՄՁԲ.

Ի յԶմիւռնին, ի Պօլիս, ի Թօխաթ եւ ի Կարին թուղթք, նա եւ ի Վան։

Ի հոկտեմբերի ԺԱ ի թղթոջ Եսայի վարդապետին որ յիշեցաւ թէ՝ թուղթ մի ևս դրեալ առ սրբ. վեհն յղեալ էր ընդ դրամոյն (գ) առ մհ. Աղամջանն, այժմ այն թուղթն էհաս. որ էր անթուական։ Վասնորոյ՝ և սրբ. վեհն ի պատասխանի նմին գրեաց զթուղթ առ նոյն Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Եսայի վարդապետն, ընդ որում և զղապղ ևս դրեալ առ նա վասն յղեալ դրամոյն առ մհ. Աղամջանն, (գ) յղեաց առ նոյն մհ. Աղամջանն յղել առ նա։ Զոր և ծանոյց իւրեան։ Նա և շնորհակալութիւն վասն արիութեանն ի գործն և հարազատութեան։ Եւ ողջոյն Երևանցի տէր Ստեփանոսին, (որ յիշեցեալ է ի յունվարի ԻԵ.) հարցանելով զորպէսն։ Դ թապաղայ ևս նոր թուղթ յղեաց, և Ա փուսուլայ ևս այնր աղագաւ գրեցաք. զի ցուցցէ իշխանացն ի յուրախանալ նոցին։ Զոր յետոյ որիշ պահարան արարեալ ետուք Եսայուն ի տանել։ Իսկ և Մասեհեան Եսային որ յիշեցաւ ի հոկտեմբերի ԻԷ, այժմ դառնայր յԶմիւռին։ Եւ որովհետև (որպէս ասացեալ է ի յունվարի ԻԷ,) Քիլամանկլի Պալիօզն յանձնարարութիւն էր դրեալ վասն սորա, վասնորոյ՝ այժմ ի դառնալն սորին՝ գրեաց ի պատասխանի նմին զթուղթ առ նոյն Քիլամանկլի Պալիօզ Դանիէլ Աղաֆ դ՛ Հօշիպիէ Քօնսօլօզն ծանուցանելով զհոգտանելն ըստ խնդրոյն բանից Եսայուն։ Այլև՝ շնորհակալութիւն վասն սիրոյն և խնամոցն, որ առ մերազնեայսն, և առ ս. Աթոռս և առ ինքն սիրոյն և բարեկամութեան։ Եւ վերստին խնդիր զնոյս առնել։ Եւ վասն Առաջնորդին ևս յանձնարարութիւն։ Սորին օրինակն է ի բոլորադրահամար տետրն, երեսն ՈՀԵ։ Եւ վասն նոյն Եսայուն և յանձնարարութիւն յատուկ։ Թուղթ ևս առ Ապրօյեան Աստուածատուր՝ Դալուստ և Առաքել Աղայսն։ Ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Վասն սիրոյ և հարազատութեանց իւրեանց օրհնութիւն և շնորհակալութիւն, և վասն Եսայեայ վարդապետին յանձնարարութիւն։ Եւ որովհետև վասն բանից Եսայուն Մասեհեանք ևս էին դրեալ զյանձնարարութիւնս առ սրբ. վեհն. ուստի սոցա ևս ծանոյց զհոգտանիլն բանից նորին, և վասն նորա ևս յանձնարարութիւն՝ ի խնամս իւրեանց ունիլ միշտ, որպէս և Պալիօզին դրեաց։ Զորս ուրոյն ետուք Եսայուն, տանել նոցա։ Այլև՝ Ղուկաս վարդապետն որ ի յունվարի ԻԵ զթուղթս օրհնութեան ետ գրել սրբ. վեհին առ առւօղս յիշատակաց, միոյ ումեմն մնացեալ էր՝ զոր չէր ասացեալ յայնժամ։ Զոր այժմ ծանոյց սրբ. վեհին, և գրել ետ զմէկ թուղթ առ մհ. Ահարօնն՝ որ էր ի Ցօզամիշ. որ Ա արծաթեայ ազնիւ սկիհ էր տուեալ։ Զայս թուղթս Ղուկաս վարդապետն առեալ յղեաց ընդ նոյն Եսայուն։ Թուղթ մի ևս ի Թօխաթ առ ս. Աթոռոյս, հին նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց։ Որ զգործն աւարտեալ էր, և դալ ոչ կարէր։ Զի լսէր զհամբաւ Օսմանցւոց սաֆարին՝ զոր բանալ կամէին ի վերայ այսց կողմանցս՝ (որպէս ասացեալ է ի սեպտեմբերի ԺԳ և յայլուր։) և դալ ոչ կարէր, այլ կասկածեալ մնայր անդ։ Ուստի՝ գրեաց նմա սրբ. վեհն զմիամտութիւն առ նա, թէ դեռ այժմ սաֆար ոչ գոյ, եկ միամտութեամբ, զի փաշայքն ամենեքեան բարեկամք են մեզ, և քեզ ինչ ոչ գոյ փնաս, եկ և եկ շուտով։ Եւ յոյժ հարկ առ այս, որպէս և ի յօգոստոսի ԻԹ։

Թուղթ մի ևս առ ս. Աթոռոյս վէքիլ և գանձապետ մհ. Աղամջանն. ի պատասխանի թղթոյն զոր այժմ գրեալ էր, այլ ոչ գրեաց լիով զպատասխանին այլ խոստացաւ յետոյ գրել։ Միայն թէ՝ ծանոյց զհասանիլն թղթոյ Եսայի վարդապետին՝ զոր սա յղեալ, որպէս ի թգթոջ Եսայի վարդապետին ևս ասացաւ։ Եւ զայն զապզն զոր ի վերն յիշեցաք. (գ) առ սա յղեցաք հասուցանել առ

Եսայի վարդապետն։ Եւ զոր ինչ առ նուիրակ Պետրոս վարդապետն գրեաց, զնոյնս և սմա գրեաց, և պատուիրեաց հարկել զնա ուղևորել յայսկոյս։ Եւ զթուղթն ևս առ սա յղեաց տալ նմա։ Այլև՝ Թօխաթու ժողովուրդքն ևս բազմակնիք թուղթ էին գրեալ առ սրբ. վեհն վասն բանի ինչ, սմա գրեաց թէ՝ այժմ անձեռնհաս եղէ գրել զպատասխանիս նոցին, յետոյ գրելոց եմ։ Որ թէ զի՞նչ էր վասն Առաջնորդի էին գրեալ, զոր յետոյ ի գրել պատասխանւոյն լիապէս եմ գրելոց։

Թուղթ ևս առ Թօխաթու նոր նուիրակ Սահակ վարդապետն, ի պատասխանի ի սեպտեմբերի Ժ գրեալ թղթոյն, այլ սորին լիով պատասխանին ևս խոստացաւ յետոյ գրել՝ Միայն այժմ վասն դրամոյն զոր հասուցեալ էր առ մհ. Փիլիպպոսն՝ (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԺԱ.) այժմ զղապղ գրեալ յղեաց առ մհ. Փիլիպպոսն հասուցանել առ նա՝ զի միամտեսցի վասն դրամոյն։ (5ա) զի թէպէտ յայնժամ ևս ի հոկտեմբերի ԺԱ գրեաց նմա՝ թէ այս թուղթս քեզ ղապղ լիցի, այլ նա յատուկ ղապղ խնդրէր, զոր և գրեալ յղեաց։ Եւ պատուիրեաց՝ զի զղապղն զոր ի մհ. Փիլիպպոսէն առեալ էր, յետոյ տացէ նմա։ Եւ պատուէր վասն գործոյն՝ շնորհակալութեամբ հանդերձ։

Թուղթ ևս առ Կարնոյ նուիրակ Մեսրոպ վարդապետն ի հոկտեմբերի ԺԴ գրեալ թղթոյն։ Որ այժմ զԺէ հատ մեծ գօշամայ կարպետս գեղեցիկս՝ զորս գնով էր առեալ։ (5թ։ժ) որոց սակս յոյժ շնորհակալութիւն։ Եւ զի սակս առաջին հասուցեալ դրամոցն՝ (ր) (3հ) որք ի հոկտեմբերի ԺԱ և ի Դ յիշեցան,) սա զյատուկ ղապղս խնդրէր՝ (թէպէտ վասն բուն առաջնոյն (ր) ղապղանման թուղթ գրեցաք ի յուլիսի ԻԸ. զոր նա բնաւ չյիշէր այժմ, և նոր ղապղ խնդրէր։) ուստի՝ և սրբ. վեհն զղապղ գրեաց վասն սորա, թէ վասն առաջին դրամոցն, (բ) (3հ) և թէ վասն գնոց գօշամայիցն։ (5թ։ ժ) զոր և յղեաց առ մհ. Փիլիպպոսն յղել առ նա, և նմա գրեաց առնուլ զղապղն զայս և տալ Փիլիպպոսին յետս զ՚ի նմանէ առեալ ղապղն։ Եւ որպէս Թօխաթու նուիրակ Պետրոս վարդապետն, սա ևս տարակուսէր վասն ձայնից պատերազմացն ուստի՝ և սմա գրեաց զմիամտութիւն։ Զայս թուղթս առ մհ. Փիլիպպոսն յղեաց հանդերձ թղթով Սահակ վարդապետին հասուցանել նոցա։։

Եւ զթուղթ մի ևս առ մհ. Փիլիպպոսն և Խոջայ Առաքելն գրեաց, ի պատասխանի ի հոկտեմբերի ԻԱ գրեալ թղթոյն։ Որք ըստ որում գրեաց սրբ. վեհն ի հոկտեմբերի Դ. զփօլիցայագիրսն հնգեսին որք անդ յիշեցան, կիսապատառ արարեալ և յետս էին յղեալ աստ։ Նաև՝ վերոյիշեալ Մեսրոպ վարդապետի գօշամայիցն աղագաւ՝ որք են Գ թայ, գրէին թէ՝ քիրային և կիւմրիւկն և ճանապարհի խարճն մեք ետուք և գրեցաք ի մեր դաւթարն, իսկ զորքանութիւն՝ ոչ գրէին։ Ուստի հարկեաց զի գրեսցեն, և որ ինչ այսպիսի բան լիցի, շուտով գրեսցեն, զի մեք ևս ի մեր դաւթարն գրեսցուք աստ։ Եւ զվերոյիշեալ թուղթսն և զղապղսն Սահակ և Մեսրոպ վարդապետացն յղեաց առ նոսա՝ զիւրեանց տուեալ ղապղերն ի նոցունց առցեն, և զայսոսիկ առ նոսա հասցեն։ Այլև՝ Կարնոյ Առաջնորդ Յարութիւն վարդապետն որ յառաջ գրեալ էր թէ՝ ֆարմանի ԴՇ ղռուշն լրացուցի, մեք չհասկացաք, (որպէս ասացաւ ի հոկտեմբերի Դ։) այժմ սոքա գրէին թէ՝ ԲՇ ղռուշ մեզ հասուցեալ. և ԱՇ ղռուշի ևս նա յառաջ արայ էր յղեալ, և այսպէս լրացեալ էր ԴՇ ղռուշն։ Ծ ղռուշ ևս վէքիլ տէր Մանուէլն էր հասուցեալ սոցա։ Եւ սոքա զերկոսեանն ևս յիւրեանց դաւթարն գրեալ՝ ծանուցեալ էին սրբ. վեհին. սրբ. վեհն ևս յիւր դաւթարոջն գրեալ՝ սոցա ծանոյց։ Եւ պատուիրեաց՝ զի որպէս յառաջ գրեալ է՝ ասասցեն Առաջնորդին գալ աստ։ Այլև՝ սրբոյ Երուսաղէմի պատրիարք Յովակիմ վարդապետն, և Կեսարիոյ Առաջնորդ Մատթէոս վարդապետն՝ զընծայ էին յղեալ վասն սրբազան վեհին, և գրեալ էին թէ՝ առ մհ. Փիլիպպոսն եմք յղեալ քեզ հասուցանել։ Եւ այս էր յօգոստոս ամսեանն։ Իսկ սոքա մինչև ցայժմ ոչ զիրսն յղէին, և ոչ զորպէսն գրէին, ուստի՝ և սրբ. վեհն էհարց զորպէսն։ Եւ զհարկաւոր գիր մի առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն, իւր ձեռամբ գրեալ, յղեաց առ սոսա հասուցանել ի Պօլիս առ Նազարէթն՝ (առ որ մեք անձեռնհաս եղաք աստ գրել զթուղթ։) զի և նա տացէ

պատրիարքին, և զպատասխանի առեալ ի նմանէ՝ յղեսցէ առ ինքեանս, և ինքեանք աստ։ Այլև՝ վասն վերոյիշեցեալ Մասեհեան Եսայուն (որ զԹուղթքս տարաւ,) դրեաց յանձնարարութիւն ի սէր ունիլ՝ և ընդ հաւատարմի ուղևորել։ Եւ զի գրէին թէ՝ զդաւթար հաշուին մերոյ յղելոց եմք, գրեաց թէ՝ յոյժ բարւոք առնէք. յղեցէք, հաշիւն վերջացի, և զնոր հաշիւ սկսեալ փօլիցայ արասցուք ձեր ձեռամբդ ի վերայ Նուիրակաց որքան և կամիցիք դուք։

Փուսուլայ մի և իւր ձեռամբն գրեաց առ մհ. Փիլիպպոսն։

Թուղթ և դրեաց առ մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն՝ յատկապէս վասն Խարբերդու Բէշքիւթիւրին։ Զի որ գրեաց սրբ. վեհն իյուլիսի ԻԸ զԹուղթ առ Ցոյն Կիւրակէ Աղայն՝ և առ Խարբերդցիսն, և առ սոսա՝ դի յղեսցեն զնա, (որպէս յօգոստոսի Ե և գրեաց սոցա զնոյն հարկն։) Կիւրակէ Աղայն ընդ այն խոժոռեալ՝ գրեալ էր սոցա, զի գրեսցեն սրբ. վեհին Առաջնորդութեան կոնդակ յղել վասն նորա, և մի խնդրել։ Եւ սոքա և դրէին սրբ. վեհին այժմ, և աղաչէին առնել ըստ կամաց նորա, զի երկնչիմք ասեն թէ՝ մեզ վնաս ինչ հասուսցէ նա։ Եւ սրբ. վեհըն գրեաց թէ՝ նա որովհետև ապօրինութեամբ ապականէր զայն երկիրն, մեք խնայելով այն երկրին և նորին իսկ հոգւոյն՝ կամեցաք բերել աստ՝ զսուտ եպիսկոպոսութիւնն ճշմարիտ առնել՝ ի բանադրանացն արձակել՝ ածել յուղղութիւն, և ապա օրինաւոր Առաջնորդութեամբ յետս ուղևորել։ Կիւրակէ Աղայն վասն այսր Էր պիտի խաթրամնայ լինի։ Զի մեք ղայսոսիկ դրեալ եմք իւրեանց յառաջ, ինքն և Քրիստոնեայ է՝ և զկանոնս քրիստոնիցն գիտէ։ Եթէ իւրեանց պատրիարքն մէկ այդպէսներհակ և օրինազանց լինի. ձվ վասն նորա իրիջայ առնէ՝ թէ վերստին կոնդակաւ փառաւորեա զնա առանց ուղղելոյ։ Այլ մեք ասէ զայս գրեալ եմք Նմա. և դիտեմ, զի նա այսպիսի անտեղի իրիջայս ոչ առնէ, այլ դուք առնէք զայս ասէ, զի Թերևս անգամ մի խօսք էք տուեալ նմա թէ մեք կու հոգամք, այժմ ամօթ համարիք ասել թէ՝ այդ անկարելի է, և ոչ կարեմք գրել հոգևոր տիրին։ Արդ մեք կամէաք ասէ ղյամենայնի Թիւրեալն զայն բերել աստ՝ և յուղղութիւն ածել. այժմ մինչ այդպէս խաթրամնայութիւն լինի, այլ մի եկեսցէ նա աստ, և ոչ զկոնդակ խնդրեսցէ ի մէնջ. այլ որպէս մինչև ցարդ մնացեալ է, այլ այնպէս մնասցէ։ Զի ոչ կարեմք ասէ մեր կարմիր կնքոմն և կոնդակաւն դնորին սուտ կարգն հաստատել, և վկայ լինել ստութեան։ Զի այնպէս լինի ասէ՝ իբր թէ՝ մինչև ցայժմ զոր ինչ արարեալ է՝ օրինաւոր է և ըստ կարգի և մեր կոնդակն և վերահաստատօղ լինի արարելոցն՝ և ստութեան վկայ։ Իսկ եթէ սիրելին մեր Կիւրակէ Աղայն վասն այսր խաթրամնայ լինի ասէ՝ դուք զայս Թուղթս յղեցէք առ նա, զի ղայսոսիկ իմացեալ՝ մի լիցի խաթրամնայ։ Օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն ՈԻ, ՈԻԱ։

Փուսուլայ և գրեաց առ սոսա վասն այսր դարձեալ, թէ գիտեմ ես, զի նա զձեզ միշտ Թախանձէ և նեղացուցանէ գրել մեզ. ուստի՝ զայդ Թուղթդ այդպէս գրեցաք իբրու զձեզ մեղադրելով, դի յղեսջիք առ նա՝ թէ՝ մեք զի՞նչ արասցուք, ահա մեր հոգևոր տէրն այնպէս իմանայ թէ մեք առնեմք, և մեզ մեղադրութիւն գրէ, և ասէ թէ՝ այդ անկարելի բան է, ես կոնդակ ոչ կարեմ յղել. և ոչ հաւատայ թէ դու Թախանձես։ Ուստի՝ այլ ոչ կարեմք վասն այդր բանս գրել հոգևոր տիրին մերոյ, Թողութիւն արա ի մէնջ։ Եւ փոքր մի տրտունջ և թէ՝ ուստի՞ ծանօթացուցիք զդա մեզ, որ այդքան նեղացուցանէ զմեզ անկարելի խնդիրս առնելով։ Ո՞չ գիտէք ասէ՝ զի Ուռում է, եթէ սակաւ մի երես տաս, շուտով կատաղի։ Այնքան հպարտ է ասէ որ մեք երկիցս գիր գրեցաք իւրեան, ինքն զպատասխանի մի ոչ գրեաց մեզ։ Այժմ գրեցէք նմա ասէ թէ՝ նա այնքան օրինազանց՝ բանադրեալ և յանցանաց աէր, մեք վասն նորա որպէս կարեմք զանկարելի խընդիրս դրել առ մեր հոգևոր տէրն, թէ այսքան յանցանաց տէր օրինազանց մարդոյս՝ կոնդակ և տուր։ Դու կարե՞ս ձեր պատրիարքին զայդ գրել։ Ո՛չ կարեմք մեք զայդ գրել, Թողութիւն արա ի մէնջ։ Այսպէս գրեալ ասէ՝ հանէք ի գլխոյ մեր և ձեր։

Թուղթ և իւր սպասաւոր Մկրտիչ վարդապետին գրել ետ սրբ. վեհն առ Պօլսոյ պատրիարքի սպասաւոր Ցակոբ վարդա-

պետն. ի պատասխանի թղթոյն նորին ի սեպտեմբերին դրեցելոյն առ սոյն Մկրտիչ վարդապետս։ Հարկ՝ զի դրեսցէ միշտ զորպէսն գործոյն, ե ընդ Անդրէաս վարդապետին փութացեալք՝ լի արդեամբքն իւրեանց ի ս. Աթոռս եկեսցեն։ Որպէս ե առ պատրիարքն ես ինքն սրբ. վեհն գրեաց զսոյն բանս ի հոկտեմբերի ԺԱ։ Զայս·ես առ մհ. Փիլիպպոսն յղեցաք յղել առ նա ի Պօլիս։ Եւ զպահարանն Փիլիպպոսին եսուք վերոյիշեալ Մահեսեան Եսայուն տանիլ ե տալ նմա ի Կարին։ Իսկ զմհ. Ազամջանի պահարանն ուրոյն եսուք Եսայուն. զի յերթալն ի Թոխաթ՝ իւր ձեռամբն տացէ նմա։

Իսկ ե՝ Ջուղայեցի տէր Յովաննէս քահանայն վախճանեալ էր ի Վան, յետ գնալոյ որդւոյն իւրոյ տիրացու Ստեփաննոսին ի մեծն Պօլիս, (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԺԱ։) ուստի՝ դրեալ էին դդիր առ Ջուղայեցի Ստեփաննոս վարդապետդ աստ՝ նորին տան հոգաբարձու Յարութիւն ե Երեմիա աղայքն, զի ծանուսցէ սրբ. վեհին, ե խնդրեսցէ դրել վասն ինքեանց զյանձնարարութիւնս առ Վանայ Առաջնորդն ե իշխանն. զի մի՛ ոք զինքեանս նեղացուսցէ, կամ զաւելի խարճս պահանջեսցէ։ Վասնորոյ՝ ե սրբազանն ըստ նոյն մտաց զթուղթ մի գրեաց առ Վանայ Առաջնորդ Պաղտասար վարդապետն ե առ իշխանսն, զի յամենայն կողմանէ ապահով պահեսցեն զնոսա։

Թուղթ ես առ նոյն Յարութիւն ե Երեմիա աղայսն գրեաց. ե ծանոյց զգրելն յիշեալ թղթոյն ըստ խնդրոյ իւրեանց։ Այլե զայն դրամն զոր տիրացու Ստեփանն խնդրեաց, ե սրբ. վեհն փօլիցայ արար ի վերայ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետին զի տացէ նմա անդ, (ը) (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԺԱ,) այժմ սոքա ես խնդրէին, զի թէ չիցէ տակաւին տուեալ՝ յղեսցէ զփօլիցագիր առ Ստեփանն առնուլ ի Պօլիս։ Եւ գրէին ևս՝ թէ մինչև ցգալն նորին՝ մեք աստ վաճառելի իրս ունիմք, վաճառելոց և տալոց եմք։ Ուստի՝ և սրբ. վեհն զմիամաութիւն գրեաց, թէ զփօլիցագիրն յղեալ եմք. իսկ դուք թէ յիրաւի կարէք տալ զդրամն նորա, բարի է, ապա ոչ, մնասցէ մինչև ինքն եկեալ տացէ։ Այլ և մխիթարութիւն և օրհնութիւն ևս գրեաց։

Թուղթ ևս յատկապէս առ Վանայ Առաջնորդ Պաղտասար վարդապետն դրեալ՝ պատուիրեաց զհասարակ թուղթն ընթեռնուլ ի մէջ իշխանացն, և յորդորել զամենեսեանսն առ ի յատկապէս խնամել զնոսա։ Եւ զողջոյնից թուղթն ևս յղեաց առ սա՝ տալ նոցա, և ինքն ևս յատկապէս մուղայէթ լինիլ։ Այլ և՝ գրէր զհարազատութեանց իւրոց։ զաշխատութեանցն զորս առնէր անդ վասն Աթոռոյս։ Գրեաց թէ՝ բարւոք գրես՝ և ես հաւատարիմ, բայց զնշանն ոչ երեեցուցանես որպէս յառաջն։ Զի յայսմ ամի՝ ոչ մսացու յղեցեր ասէ, ոչ իւղ՝ և ոչ զպանիր։ Մանաւանդ ասէ՝ Անապատաց հարքն ի ձեռն քո աստ զմեծամեծ խոստմունս արարին յղել զիւղ և զգօմէշս, որոց նշանն դեռ ոչ երևեցաւ. ասէ՝ քանիցս դրեցաք քեզ այնց աղագաւ, (որպէս ասացեալ է ի յուլիսի ԺԲ. ի յունիսի ԺԶ, ե ի մայիսի ևս ԺԶ։) իսկ դու զպատասխանի և՛ս ոչ գրեցեր ասէ։ Այս ևս ի ձեռն նոյն Եսայուն յղեցաք ի Բայազիտ առ տէր Վահանն յղել ի Վան ի նոյեմբերի Թ։

ՄՁԳ·

Ի Կարս, առ Իբրահիմ Աֆանտին և Գէորգն։

Ի հոկտեմբերի ԻԸ դրեցեալ թուղթն առ Իբրահիմ Աֆանտին, հասեալ էր առ նա ընդ թղթաշէն փռանկին։ Իսկ այժմ Բ թաթարք եկին առ խանն, մինն ի մեծէն Պօլսոյ՝ Օսման անուամբ, և մինն ի Կարնոյ Սարասկեարէն՝ Իւսուֆ անուամբ։ Ընդ որոց դրեալ էր Իբրահիմ Աֆանտին զպատասխանի թղթոյ սրբ. վեհին, խոստանալով՝ զի ընդ հաւատարիմ թաթարի զփռանկն ի Պօլիս յղեսցէ, և զԿարապետ վարդապետն յԱխլցխա։ Վասնորոյ՝ զթուղթ գրեաց սրբ. վեհըն առ Իբրահիմ Աֆանտին. շնորհակալութիւն վասն խոստմանցն՝ հանդերձ սուղ ինչ որպիսութեամբք։

Փուսուլայ մի ևս սրբ. վեհն իւր ձեռամբն դրեալ առ Գէորգն եդաք ի թղթոջ Աֆանտուն և զմռեցաք, և ի ձեռն նոյն թա-

Թաբացն յղեցաք։ Ելին ի նոյեմբերի Թ։

Նկաւ հասաւ ի Բատնոյ։

Օրհնութեան Թուղթ գրեցաւ ի Բատնոց առ Խաչատուր ոմն, որ ի ձեռն Գասպար անուամբ ուխտաւորի միոյ անդուստ եկելոյ՝ յղեալ էր Ա ղռուշ աջահամբոյր։ Ի նոյեմբերի ԺԵ։

ՄՋԴ·

Ի Կարին եւ ի Կարս Թուղթք՝ ի վերայ Կարսայ։

Թուղթ գրեաց սրբ. վեհն ի Կարին առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն, որ չէր պատասխանի Թղթոյ նոցին, այլ յիշեցոյց նոցա ղգրելն յառաջ քան ղայս յամսոյս Թ ընդ Մասեհեան Եսայուն զպատասխանիս գրեալ բանիցն իւրեանց։ Իսկ այժմ այս էր հարկաւորութիւն այս Թղթոյս, զի Էրէց ոմն ծեր և այրի՝ տեղեաւ Ղափանցի, և ի Պօլիս բնակեալ, ուխտադիր էր լեալ անձինն, գալ ի ս. Աթոռս, միաբան լինել աստ, և աստէն վախճանիլ։ Եւ եկեալ հասեալ ի Թօխաթ՝ անդ վախճանեալ էր։ Եւ չարախօս և Թոզարերան անձինք ոմանք մերաղնեայք, զինչս նորա մատնեալ էին տեղւոյ Բօյվատային, և նա իւրովի գնացեալ ի տուն եկեղեցպանին, բռնութեամբ առեալ էր զինչս հանգուցելոյն, որք լեալ էին, ԵԾ ոսկի, և ԵԾ ղռուշ ճերմակ դրամ։ Եւ բազում Թամասուկք ևս ղրամոց՝ զորս առնուլ պարտ էր յայլոց, ի մէջ որոց և փօլիցագիր մի ԱՌ ղռուշի, զոր տուեալ էր ի Պօլիս Մուրտիկեանց Նազարէթին, և փօլիցագիր առեալ ի նմանէ՝ զի եկեալ ի Կարին առնուցու ի նորին եղբայր մհ Փիլիպպոսէն և ի Խօջայ Առաքելէն։ Եւ Թօխաթցիք զայս գրեալ էին պատրիարքին ի մեծն Պօլիս, և նա ֆարման էր հանեալ ի Թագաւորէն, և կամէր յետս առնուլ զայն ի Բօյվատայէն։ Ուստի՝ զայս գրեալ ծանոյց սոցա սրբ. վեհըն, և պատուիրեաց՝ զի առանց իւրեան կամ պատրիարքին գիտելոյ՝ ոչ տալ ումեք զայն ԱՌ ղռուշն։ Զայս ասէ ի զգուշութիւն ձեզ գրեցի, և նայիմ տեսանել՝ Թէ զի՞նչ առնէ պատրիարքն, և զի՞նչ գրէ, յայնժամ և մեք հետևելոց եմք վասն այդր, և զոր ինչ պատշաճն է՝ այնպէս եմ առնելոց։ Նազարէթին և պատրիարքին ղուք զայս գրեսջի՞ք ասէ։ Եւ վասն ի Կարին չունելոյն մեր զլաւագոյն վէքիլ ոմն և հոգտցօղ մերոց մանր հոգալեաց՝ բանս գրեաց Եփրիկեան մհ. Գրիգորին, և մեր գանձապետ Մսրեան մհ. Գրիգորին, (զորս ասելոց եմ ի ներքոյ) զորս ծանոյց սոցա, և գրեաց զպատուէր՝ զի զվէքիլութեան կոնդակն տէր Մանուէլ երիցուն առցեն ի նմանէ. և յղեսցեն աստ. և զտօնացոյցսն, նաև զայլ ամենայն Թուղթսն զորս գրեալ է առ նա մինչև ցարդ՝ ի ձեռացն առեալ յղեսցեն աստ։ Զի որովհետև մեզ բանի իմիք չպիտոյացաւ դա ասէ, ապա ոչ է մեզ պիտոյ զորա վէքիլութիւնն։ (զորոյ որպիսութեանցն ասացաք ևս ի..)Այլև գրեաց, զի Ալաւ սափրիչ յղեսցեն անտի վասն իւր, Թէ տնաւոր Թէ անտուն, և զվարձն կամ իւրեանք անդ կտրեսցեն, և կամ յղեսցեն աստ՝ զի ինքն կտրեսցէ։ Եւ վասն Արապկերցի Մարտիրոսին՝ գրեաց զսպառնալիս, Թէ որովհետև և զմեր դրամն տայ՝ և միամտեալ է, մէկ քանի աւուրց յետն ես զդա մէկ փառաւոր բազրկեան շինեմ յաշխարհի մէջ, որ գիտասցէ Թէ զկաթուղիկոս խաբելն և զԱթոռոյ դրամ ուտելն որպէ՞ս կուլինի։ Նաև յիշեցոյց սոցա զյղելն առ ինքեանս զԹամասուկն Թարջիման Ղազարին, և էհարց՝ Թէ զի՞նչ արարիք, առի՞ք զդրամն (լե) Թէ ոչ։ Եւ վասն Կարնոյ Առաջնորդ Յարութիւն վարդապետին էհարց Թէ՝ գալի՞ց է Թէ ոչ, (որում գրեաց զհրաման գալ աստ ի . . .) Թուղթ մի ևս առ ս. Աթոռոյս գանձապետ Մսրեան մհ. Գրիգորն գրեաց ի պատասխանի Թղթոյն ի հոկտեմբերի ԺԶ գրեցելոյ։ Առ որ յղեալ էր ի Թօխաթու ս. Աթոռոյս գանձապետ մհ. Աղամջանն. զայն դրամն, զոր Զմիւռնոյ նուիրակ և Առաջնորդ Եսայի վարդապետն, (գ) հանդերձ այլ ևս որիշ դրամով (1խա։ ժ) որ գրէր Թէ՝ ղապզ յղեա, զի յղեցից առ մհ. Աղամջանն ի Թօխաթ՝ ի միամտութիւն նմին։ Ուստի՝ ծանոյց սմա զյղելն յառաջ քան զայս յամսոյս Թ ընդ Մասեհեան Եսայուն առ նա զղապզ վասն սոյն դրամոյս։ (գ) և գրէր Թէ՝

փոլիցայ արա ի վերայ իմ։ Զի ասացից զայս զրամս։ Գրեաց թէ՝ աստ փոլիցայ տուող ո՛չ գոյ. գու չրխրն 47) արա, և ընդ հաւատարիմ եկողի առ մեզ յղեա, կամ ի Բայազիտ առ տէր Վահանն հասո, զի և նա առ մեզ հասուսցէ։ Եւ գրէր թէ՝ ոսկին գլխով տան, և մանէթն Ը փարայով տան, և զայլ այսպիսի բանս գրէր։ Առ որս գրեաց նմա թէ՝ կարծեմ թէ՝ միտս ո՛չ ունի ի բանս մեր զտանիլ, վասն այն զայդպիսի ծանր բանս գրես մեզ՝ զի այլ չխառնեսցուք զքեզ ի բանս մեր։ Ի հարկէ մեծ մեղք և ամօթ է եղեալ Էջմիածնի բանից հող տանելն, մէկ չիք երէց մի յայդր վէքիլ կարգեցաք, որ զոմանս բանս մեր յայդր հոգասցէ, նա ես ծաղր արար զհրամանս մեր, և չպիտոյացաւ մեզ։ Վասն որոյ ահա գրեցի աստ մհ. Փիլիպպոսին առնուլ ի նմանէ զկոնդակն մեր, և այլ մի՛ լիցի մեզ վէքիլ։ Քեզ ևս գրեմ, զի ընդ նմա այսպէս արասջիք, և զթուղթսն մեր առջիք ի նմանէ։ Վանորէից վէքիլ և գործակալ կայ յայդ քաղաքոջդ, էջմիածնի վէքիլ չկայ։ Վէնէտիկցիք յամենայն քաղաքս վէքիլ ունին, որք զիւրեանց խաբէական դրեանսն ծախեալ են յայդ քաղաքդ մեզ վէքիլ մի՛ ո՛չ գտանեցաւ, որ զմեր ազգաօգուտ տպեալ դրեանսն մօտն պահէ և ծախէ։ Եւ վասն դրամոյն հարկ՝ հանդերձ մեղադրութեամբ թէ զկէչար դրամս ընդէ՞ր ո՛չ յղես, զայն դրամսն դրես յղել՝ որ յայս երկիրս ո՛չ անցանի։ Եւ պատուէր, զի զոուշ, վատսունմանոց, ընաիր փարայ և Մսրու ոսկի յղեսցէ որք աստ անցանին։ Եւ շատ բանք առ այսոսիկ։

Գրեաց և զթուղթ առ Նփրիկզատէ մհ. Գրիգոր Աղայն, ի պատասխանի ի հոկտեմբերի ԺԶ դրեալ թղթոյն։ Որոյ կողակիցն վախճանեալ էր, դրեաց զմխիթարութիւն։ Եւ զնորին հողեբաժինն յղեալ էր, դրեաց զշնորհակալութիւն։ Եւ զնեղութեանց տեղւոյն գրէր, գրեաց զմխիթարութիւն։ Եւ ահա հանդերձ ոմամբք իւրովք ներքսակրական ցաւովք, գրեաց և ծանոյց նմա զնոյն բանսն, զորս վասն անդ վէքիլ չլինելոյ մեզ՝ գրեաց մհ. Գրիգոր զանձապետին մերոյ ի վերդ։ Իբրու տրտնջելով զայն քաղաքէն, թէ ի Պոլսոյ զմեծագոյն իմն բեռն մուննաթի առեալ ի վերայ մեր՝ տէրունի արարաք իրբու, առ ի գտանել գոնեայ զփոքր մի թեթևութիւն և սրտազիւրութիւն մեզ այտի։ Ցորմէ րաց ի գլխացաւութեանց զոչինչ շահեցաք։ Եւ այլ առ սոյնս լանք յոլովք։ Եւ ողջոյն եղբօրն իւրոյ մհ. Կիրակոսին, և որդւոցն՝ Հաճի Պապային և մհ. Ցակորին։ Եւ եղբօր որդւոցն Մովսէսին և Գէորգին։

Փուսուլայ մի ևս գրեաց առ մհ. Փիլիպպոսն և սրտազիւր արար և միամտեցոյց, զի մի՛ յայլ և այլ կարծիս անկցի վասն գրելոյն զթուղթս առ երկու մհ. Գրիգորեանսն, և վասն վէքիլի զայնպիսի բանս գրելոցն առ նոսա և առ ինքն։ Քանզի ստուգիւ ասէ խնայեմ ի ձեզ՝ զամենայն բանս և զհոգալիս մեր արկանել ի վերայ ձեր։ Զի դուք եսբազում զբաղմանց տէր էք, զայն բանսն մեր որք ձեզ զապատշաճք են, հազիւ թէ հոգալ կարէք։ Իսկ մեք ասէ դայս գործարանքս աշխատելով հաստատեցաք աստ, որոյ հարկաւոր և պիտանացու իրքն յայդրուստ ճարօղ և մեզ ուղարկօղ ըստ ժամանակին, կամ թէ ի սոցանէ ելեալ գիրքն և թուղթն տեղդ ծախօղ՝ մէկ յատուկ անձն պիտոյ է, ձեր բանն չէ։ Մեք ո՛չ ասեմք ասէ թէ՝ շուտով ծախեն և դրամս մեզ յղեն, այլ պահեն յիւրեանց մօտն, և ըստ ժամանակին ծախեն ի վերայ խնդրողացն։ Այս է ասէ մեր միտքն, զոր զանձապետ Մսրեան մհ. Գրիգորին ես դրեցաք։ Ուրեմն՝ ընդ նմա խորհրդակցեալ ասէ՝ մէկ պատշաճաւոր անձն գտջիք, որ մեր այսպիսի բանիցս հոգացօղ լիցի։ Եւ եթէ պատշաճ տեսջիք ասէ, վարձ ևս կտրեսջիք նմա, զի մեր վարձուն մեզ ծառայեսցէ։ Զնոցին թուղթսն ես առ սա յղեաց տալ նոցա։

Թուղթ մի ևս ի Կարս առ Գէորգն գրեալ զթուղթ մհ. Փիլիպպոսին առ նա յղեաց, հասուցանել շուտով ի Կարին առ նա։ Եւ Գրիգոր տղայն ի հոկտեմբերի ԺԳ յղեցաք ի բերել զփայտս, երեր այժմ։ Ընդ որում գրեալ էր Գէորգին զպատասխանի թղթոյ սրբ. վեհին, զոր դրեցաք ի հոկտեմբերի ԻԸ. ընդ թղթաշէն փոքր ֆռանկին։ Որոյ սակս գրէր թէ՝ Աֆանտին խօսեցեալ է ընդ Օսման թաթարին ի Պոլսոյ եկելոյ՝ (որ յիշեցաւ յամսոյս Թ,) զի յորժամ եկեսցէ այտի, առեալ տարցէ ի մեծն Պոլիս։ Եւ սրբ. վեհն գրեաց նմա, զի զերբ գնալն ֆռանկին, և զի՞նչ դրբելն իւր վասն նորա առ պաարիարքն, ծանուսցէ ինքեանս։ Նոյնպէս և վասն Կարապետ

վարդապետին ես հարկեաց, զի երբ գնալն յԱխլցխա՝ գրեսցէ։ Որոյ սակս Իբրահիմ Ախանտին գրեալ էր զթուղթ յանձնարարութեան առ Սուլէյման փաշայն, և փաշային ևս էր գրեցուցեալ վասն նորա դյանձնարարութեան թուղթ։ Հարկեաց ևս՝ զի զպատասխանի այն թղթոյն զոր ընդ թաթարացն գրեաց յամսոյս Թ, գրեալ յղեսցէ շուտով։ Թէ ինքն՝ և թէ Աֆանտին։

Թուղթ մի ևս Մկրտիչ վարդապետն գրեաց առ Գէորգն, զի զայն իրսն զորս ի հոկտեմբերի ԻԸ խնդրեցաք, յայնցանէ յղեալ էր այժմ, Գ հօխայ առչասպ, Ա հօխայ և կէս թօրթու, և զմնացեալն խոստանայր ի Կարնոյ բերել տալ և յղել։ Սիմ, Բ կապ՝ վասն օրինակի, հաստ և բարակ։ Իսկ մաւթուլ անդ չէր գտանեցեալ, ուստի նոր քաշել տուեալ և յղեալ էր, որ էր անյարման և անհաւասար։ Որում չհաւանեալ փոանկին, գրեաց զի այլ մի քաշել տացէ յայնմանէ։ Այլ թէ ի Կարին մաւթուլ գտցի՝ առեալ յղեսցէ հանդերձ սմով, և թէ անդ ևս ոչ գտցի, մի յղեսցէ զսիմ, զի առանց մաւթուլի անպէտք է սսէ։ Զայսոսիկ ընդ փայտից բերող քիրաջի Մանասին յղեցաք ի նոյեմբերի ԻԱ։

ՄՋԵ.

Ի Բայազիտ՝ առ Ինիւզ բէկի որդի Սալման բէկն։

Թուղթ գրեաց սրբ. վեհն ի Բայազիտ առ Ինիւզ բէկի որդի Սալման բէկն ի պատասխանի թղթոյն, որ Ա սհաթ էր յղեալ՝ և գրեալ սրբ. վեհին թէ՝ կամէի Ա սհաթ խնդրել ի քէն, այլ ամօթ համարելով չխնդրեցի. զայս սհաթս յղեցի՝ զի յայդր սհաթսազին սարքել տաս և յղես։ Գրեաց թէ՝ սահաթն յՕսմանցւոց երկրէն գայ՝ զոր մեք տաժանմամբ բերեմք, զի եկօղ չունիմք. իսկ ձեզ մօտևոր է՝ և եկողն անպակաս չունէաք որ յղեմք։ Եւ սահաթսազ ևս ոչ գոյ աստ։ Զոր տուաք նորին մարդոյն։ Եւ ի նոյեմբերի ԻԲ։

ՄՋԶ.

Ի Բայազիտ առ տէր Վահանն վասն Արապկերցի Սահակին։

Ի յուլիսի ԻԸ յիշեցեալ տաճիկն՝ որ գնաց ի Թիֆլիզ վասն Ջիմշիտ բէկի պարտուցն, այժմ անտի դարձաւ, և կամէր ի Բայազիտ գնալ, զի անդ ևս ունէր Ջիմշիտ բէկին առնլիս ի յԱրապկեցրի Սահակէն։ Իսկ այս Տաճկիս ընկերք ևս գոյին ի Թիֆլիզ՝ որք ի մօտակայքս գալոց էին, և սրբ. վեհն կամէր մարդ յղել ընդ սոսա ի Շիրազ առ Քեարիմ խանն։ Ուստի՝ զայն Տաճիկն արգել աստ, և գրեաց զթուղթ առ տէր Վահանն ի Բայազիտ, և հարկեաց զի զԱրապկերցի Սահակն յղեսցէ աստ վասն կտրելոյ զհաշիւն ընդ Տաճկին։ Զի ոչ կամեցաք ասէ յայդր գալ և ծանրանալ դմա, թող ինքն եկեսցէ։ Եւ զօրինակն թամասուկին ևս առնուլ ետ և յղեաց առ սա ցուցանել նմա։ Զոր նոյն Սահակն՝ որ էր Յակոբի որդի, և մհ. Աբրահամի որդի քէշիշն ի ՌՄԺ թուոջն մերում դրեալ ի Թավրիզ տուեալ էին Ջիմշիտ բէկին, և առեալ ի նմանէ ԱՃԼԳ թուման, զի ի Բայազիտ հասուսցեն նորին մարդոյն՝ ումն և գրեսցէ։ Յետոյ նոյն թուոջն և յօգոստոսին, Ուզումչեցի Եղիազարի որդի Մարգարն՝ որ լեալ էր վէքիլ Ջիմշիտ բէկին, առեալ էր ի նոցունց ի Բայազիտ՝ ԱՃԺԴ թուման և ԵՌ դիան, և ի յետկոյս սանատին գրեալ։ Եւ զմնացեալն՝ որ էր ԺԹ թուման և ԵՌ դիան, այս տաճիկս կամէր այժմ առնուլ։ Եւ հարկեաց՝ զի մինչև ի Դ և ի Ե օրն աստ յղեսցէ շուտով զՍահակն։ Զոր յղեցաք ընդ յատուկ փայեկի վարձելոյ։ Ի նոյեմբերի ԻԲ։

Ժողովարարութեան թուղթ ետ սրբ. վեհն Գաբրիէլ անուամբ մարդոյ միոյ, որ էր Վրաստանցի և Սուրամեցի. որոյ կինն՝ որդին, քոյրն, փեսայն և քեռորդին անկեալք ի գերութիւն, էին ի յԱխլցխա առ այլազգի ոմն։ Գին կնոջն և որդւոյն էր ԻՉ թուման, իսկ քեռն և փեսային և քեռորդւոյն՝ Լ թուման։ Որ վասն վկայութեան և ըստ աղերսանաց Թիֆլիզեցւոցն եկն աստ ընդ Մասեհեան Եսայուն որ յիշեցաւ ի հոկտեմբերի ԻԷ թէ եկն անտի. և մնաց աստ մինչև ցայժմ,

իսկ այժմոյս ողորմեալ նմա սրբ. վեհն, եւ զայս թուղթս ի վերայ Թիֆլիզու և Վրաստանու և Կախէթու, այլ և Գեանջայու՝ Շամախու, Շաքու, Երեւանու, Բաքուայ և Դարբանդու։ Զունէր յումեքէ զթուղթ վկայական. այլ Եսային վկայեաց ստուգութեանն։ Ի նոյեմբերի ԻԹ։

ՄՁԷ.

Առ Հերակլ Արքայն, եւ առ Գէօրգի որդին իւր.

Թուղթ գրեաց սրբ. վեհն առ Արքայն Հերակլ ի Թիֆլիզ. ի պատասխանի երից թղթոց նորին որք քան զայս յառաջ և այժմ եկլին։ Որոց զմինն գրեալ էր վասն երկուց արանց՝ որոց մինն էր յոյն և մինն հայ. զորս յղեալ էր երթալ ի յԵգիպտոս, և գրեալ էր սրբ. վեհին ընդ հաւատարմի ուղևորել զնոսա յայս երկրէ, զորս և ուղարկեցաք ի Բայազիտ առ տէր Վահանն՝ յղել անտի դէպ 'ի Մուշ, զորս նա յղեալ էր։ Իսկ զերկրորդ գիրն գրեալ էր ընդ Նեստորական Եսայուն, և ընդ Եզղի Նարի Աղային, որք քանիցս երթևեկս առնէին առ նա, և կամէին բազում տամբք գալ՝ և երթալ առ նա ի Վրաստուն։ Որոց սակս գրեալ էր ուղևորել աստի, զորս և ուղևորեցաք։ Իսկ զերրորդն յղեալ էր աստ ի ձեռն Թիֆլիզեցի պ. Մէհրապին՝ որ երթայր ի Խօյ, որով խնդրեալ էր ողորմութիւնս սրբ. վեհին։ Եւ զոր ինչ յառաջ խնդրեալ էր ի նմանէ սրբ. վեհն, վասն Յովսէփ վարդապետի եղբարցն՝ (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԻԷ ի թղթոջ Յովսէփ վարդապետին, և ի սեպտեմբերի ԻԵ) եւ այլ նոյնպիսի բանից։ Որոց աղագաւ գրէր զամենն ի Մէհրապէն իմանալ։ Եւ վասն նոյն Յովսէփ վարդապետի եղբարցն դարձեալ զնոյն խոստմունսն զորս յառաջ, այժմ ևս խոստացեալ էր, թէ վասն խաթեր քոյ զայն էլն տալոց եմ նոցա, բայց տակաւին ունիմ ես զնայելիս, թող ժամանակ ինչ ևս մնասցէ։ Եւ այս Գ թղթոցս զպատասխանիսն այժմ միանգամայն գրեաց նմա, և ծանոյց զկատարումն տալն գրեցելոցն. և սակաւ մի զիւրոց ողորմութեանցն. զորոց լիապէսն Մէհրապն գրեալ գնաց ի Խօյ։

Զթուղթ մի ևս վրացերէն էր գրեալ առ սրբ. վեհն, և զսրբոյն Կիւրղի Աղէքսանդրացւոյ զանձուց գիրքն խնդրեալ աղերսանօք։ Զի կամէր թարգմանել տալ յիւրեանց լեզուն։ Զի անդ մինն գոյր որ ի սրբոյ Աթոռոյս միաբան և տեղւոյն Առաջնորդ Աւետիք վարդապետէն էր մնացեալ. զի թէ զնորին գրեանսն, և եթէ զԹիֆլիզեցի Զաքարիա վարդապետի գրեանսն, նոքա զաւթեցին։ Բայց այն գրէին թէ սխալագիր է և անարհեստ գրեալ, և պակաս, յորմէ ոչ լինի հասկացումն բանի ինչ, զի և թարգմանեսցի։ Գրէր և զաղերսանս, թէ դու գիտես իսկ՝ զի լուսաւորութիւն ազգիս մերոյ ի ձէնջ է լեալ, և որ ինչ գիտութիւնք են ի մեզ ի ձեր վարդապետացն սերմանեցան յազգս մեր։ Արդ՝ մի՛ յապաղեր այժմոյս ևս դու առնել ազգիս մերում զնոյնպիսի բարերարութիւնս, զի և քեզ լիցի պարծանք, և քոյդ անունդ ևս յիշեսցի յապագայս։ Եւ խոստանայր ևս երդմամբ թէ յորժամ թարգմանեսցուցից ըզգիրքն, այլ անդրէն յետս եմ յղելոց ի ս. Աթոռդ։ Եւ սրբ. վեհն սակս այսչափ նորին աղերսանացն, չկարաց բացասել զխնդիրսն, այլ ըստ խնդրոյն յղեաց առ նա զգիրսն զանձուց, ընդ որում էր և Պարապմանցն նոյնոյ սրբոյն Կիւրղի։ Զոր կարմիր կնքով գրեանցն ս. Աթոռոյս կնքեցաք ի հինգ տեղիս, և դրեցաք ևս առ ընթեր կարմիր կնքոցն՝ կարմրաւ թէ գիրքս այս ս. Էջմիածնի է, և ապա յղեցաք։ Եւ վասն թուղթ ևս վրացերէն գրեաց առ նա սրբ. վեհն ի պատասխանի նոյն յիշեալ վրացերէն թղթոյն, թէ ահա յղեցի ըստ խնդրոյդ զգիրքն, բայց վասն խրթնութեանն չհաւատամ թէ կարիցեն թարգմանել յայդր ուղղապէս։ Այլ չհասկացեալսն աղարտելոց են ի հարկէ, և զոր ինչ ինքեանք հաճեսցին զայն են գրելոց։ Որով գիրքն ապականի, անունն հեղինակին աղճատի, և մեղք ես լինի. զի սուրբ գիրք է, և վասն հաւատոյ վիճումն ընդ դէմ Արիանոսաց՝ և Մակեդոնի՝ և այլ հերձուածոց։ Ուստի խնդրեմ ասէ յԱրքայէդ, զի պատուիրեսցես սաստկապէս թարգմանողացն, և վերահասու ես լիցիս։ Զի լաւ հասկասցին, և ապա թարգմանեսցեն։ Իսկ զոր ինչ ոչ հասկասցին ասէ, թող գրեալ ծանուսցեն մեզ, և մեք զնոյն տեղին պարզեալ՝ գրեսցուք դոցա, և ապա թարգմանեսցեն։ Եւ յետ

թարգմանելոյն՝ խնդրեաց անդրէն յետս յղել առ զգիրքն՝ որպէս և խոստանայր։ Այլ և ի սոյն միջոցի, որդի Արքային Հերակլայ Գեօրկին Միրզայն, գժուարացեալ էր ի մեր խանէն վասն պատճառաց ինչ։ Ուստի՝ զԹիֆլիզեցի Մոնթոյենց Յովսէփն յղեալ էր առ խանն, և զկիրս սրտի իւրոյ ասացեալ էր նմա ասել խանին։ Ուստի՝ զգիր մի ես առ սրբ. վեհն էր գրեալ այսր աղագաւ։ Վասնորոյ զԹուղթ ես տաճկերէն առ նա գրեաց սրբ. վեհն, մինչ Յովսէփն գնաց առ խանն և դարձաւ, ծանուցանելով նմա զգալն Յովսէփին, և ասելն զբանսն իւր խանին, և այլ սիրոյ բանք։ Զի ոչ նա էր գրեալ ի Թղթոջն զմիտսն, և ոչ սրբ. վեհն գրեաց։ Զվերոյիշեալ գրեանսն Արքային, և զգիրքն Գանձուց և Մէհրապի գրեալ թուղթն զոր ի վերն յիշեցաք, նա և զանծանօթ իմն պատկեր ծովային մեծ և նորատես գազանի, (զոր ի Բաղդատու յղեալ էին առ, և Արքայն լուեալ և խնդրեալ էր), յղեցաք ընդ նոյն յիշեալ Թիֆլիզեցի Մոնթօյենց Յովսէփին։ Որ եկ ի դեկտեմբերի Ա։

ՄՁԸ·

Ի Ցամիլթ, ի Կարին, ի Բաղդատ, եւ յՈւռումէլի թուղթք։

Առաջնորդն Ցամթայ Պետրոս վարդապետն՝ (որ յիշեցաւ ի յուլիսի ԺԲ), գրեալ էր այժմ առ սրբ. վեհն զԹուղթ, և յատուկ փայեկաւ յղեալ։ Ի պատասխանի որոյ՝ թուղթ գրեաց առ նա սրբ. վեհն։ Քանզի՝ գրէր նա գանգատ զքաղաքէն և զժողովրդոցն, որք յոյժ հակառակեալ նմա, տուեալ էին զմեծամեծ վնասս, և արկեալ էին ի ներքոյ ծանր պարտուց։ Ուստի՝ նա ի քաղաքէն ելեալ էր ի վանքն, և զանգատ գրէր սրբ. վեհին, և զպատուիրական կոնդակ խնդրէր ի վերայ քաղաքին։ Նաև մտադրեալ էր երթալ ի մեծն Պօլիս, և զգրեանսն խնդրէր ի սրբ. վեհէն։ Եւ սրբ. վեհն գրեալ յիշեցոյց նմա զառաջին անցսն՝ որք ի նոյեմբերի ԻԵ և ի վերոյս նորին յիշեցեալ եղեն, թէ ոչ ապաքէն մինչ ես գրէի քեզ յառաջ չհաւատալ դոցա, և դալ առ, իսկ դու այնքան հաւատայիր դոցա, մինչ զի, զգրեցելովք մերովք զանց արարեալ՝ ոչ կամէիր գալ, կարծելով զգոսա հաստատուն իմն յեցուկս՝ յորս յենուիր։ Զորոց զփորձն մեք յառաջագոյն առեալ յաւուրց առաջին Կարապետ վարդապետին, քեզ գրէաք թէ մի հաւատար դոցա. զի վասն այնորիկ կամին դոքա դոչ զալդ աստ՝ զի յորժամ նման միւս նախանցեալ Առաջնորդացն և զքեզ խոտեսցեն և ձաղեսցեն, յայնժամ, զզօրեղ պատճառ մի ևս գայդ ունիցին ինքեանց՝ թէ ապստամբ է յԱթոռոյն։ Զի թէ մինչ եկիր՝ և զկոնդակ հաստատութեան ի մէնջ առեալ դարձար՝ այդքան արարին, ապա մինչ ոչ էիր եկեալ, որքան առնէին։ Քանզի՝ ոմանք իբր իշխանք քաղաքիդ՝ են որպէս այլասէր բոզ կին, որք միշտ զիւրեանցն խոտելով՝ յայլս սիրահարին, և յորժամ զնա ևս որսան, այնուհետև զնա ևս ատելով ատեն, և յայլս մոլեգնին, որպէս ահա արարին Գ և Ե Առաջնորդաց։ Բայց դու մեզ չհաւատալով՝ դոցա հետևէիր, որք հոտեալ բանիւք լցեալ զթուղթս՝ յղէին ի Պօլիս և յայլս տեղիս, զի զԿարապետէն գանգատելով, զմեզ կաշառակեր համարելով, և զքէն լաւութիւն՝ և ճշմարիտ վարդապետ հռչակելով։ Որոց հոտածութեան ծուխն դեռ տևէ ի մէջ մեր և Պօլսոյ։ Իսկ դու զմեզ թողեալ՝ դոցա հաւատայիր։ Ա՛րդ՝ կթեա զպտուղն։ Եւ զկոնդակն զոր խնդրէր՝ չյղեաց գրելով թէ՝ օն անգրէ ի մէնջ գրել յայդ քաղաք զթուղթ այդպիսի։ Բայց ըստ ժամանակին ի պահանջմանէ հարկին, դրելոց եմ առ ոմանս արժանաւորս ըստ արժանւոյն։ Եւ ի Պօլիս գնալ որ կամէր և զթուղթս խնդրէր, պատճառն ոչ այլ ինչ էր՝ եթէ ոչ բազմութիւն պարտուցն որ ասացաւ ի վերոյ։ Բայց նա զնոտի իմն առիթ առաջադրէր, և այնր աղագաւ երթալ ցուցանէր, և զթուղթս խնդրէր, իբր վասն Ասայ հոգալ ինչ, և այս ոչ յայտնապէս, այլ պատրուակաւ գրելով։ Այլ սրբ. վեհն չկամեցեալ գրեաց թէ՝ արդէն մեք կամք ի մեծի վտանկաւորութեան, և զհարկաւորսն մեր չգրեմք ի Պօլիս. զի ամենեքեան ի ցաւս իւրեանց կան պաշարեալք, ոչ լսօղ գոյ և ոչ կատարօղ. դու զերազ պատմես ասէ. չէ ժամանակ այդպիսեաց մտածմանց՝ այլ լռելոյ։ Եւ վասն այնզապ զին զոր ի յու-

լիսի ԺԲ յղեցաք առ նա․ (ձ̅) (որ և ի հոկտեմբերի ԺԱ և ի յուլիսի ԻԸ ես յիշեցաւ ի Թղթոջ պատրիարքին) գրէր թէ՝ յղեցի պատրիարքին, և զպատասխանի ոչ ընկալնում։ Գրեաց թէ՝ այժմ մեք ես չառնումք զպատասխանի ձեր գրելոցն, դու ընդ քոյն մի զարմանար․ բայց այն զապզն հասեալ է առ պատրիարքն հանդերձ մեր գրովն, զորս ընկալեալ և ղապուլ է արարեալ և մեզ գրեալ թէ էհաս ձեզ։ Եւ զքէն ես փոքր ինչ թօհմաթ էր գրեալ, այլ մեք գրեցաք սիրոյ թուղթ գրել քեզ և միամիտ առնել։ Ուրեմն և դու միամիտ լեր, զի այլ ոչ կարէ զայն դրամն ի քէն պահանջել։ Եւ որովհետև ինքն ի Պօլիս երթալ կամէր որպէս դրեցաք, ուստի՝ գրէր թէ՝ պատուիրելոց եմ վէքիլին իմոյ, զի զոր ինչ իրաւունս ժողովեսցէ ի վիճակէն, քեզ հասուսցէ, զի լրասցի պարտն իմ։ Գրեաց թէ՝ մեծ տմարդութիւն է այդ․ զի թէ դու չհատուցանիցես զպարտս քո, (ձ̅) վէքիլդ իսպառ ոչ կարէ հատուցանել։ Մեք յայս նեղ ժամանակիս ի պակասութեան գոլով ի խաթրդ նայելով ազատեցաք զքեզ ի պարտուց, դու գրեցեր թէ նուիրակին տամ, այժմ այդպէս գրես, որ է մեծ ամօթ։ Ուրեմն՝ կամ փօլիցայիւ և կամ չըխընով պարտիս հասուցանել զայդ դրամդ ի Կարին առ մհ․ Փիլիպպոսն, կամ ի Բայազիտ առ տէր Վահանն․ և մեզ գրել․ զի և մեք զմուրհակն քո պատառեալ առ քեզ յղեսցուք։ Եւ առ այս շատ հարկ։ Նոր թուղթ յղեաց սմա ի տեսանել։

Թուղթ ևս առ Ցամթայ նուիրակ Ղազար վարդապետն գրեաց, (Առ որ գրեցաւ ևս թուղթ ի հոկտեմբերի ԺԱ)։ Ի պատասխանի ի հոկտեմբերի ԻԱ գրեալ թղթոյն։ Ցորում գրէր զորպիսութենէն Խարբերդու՝ թէ ժողովուրդքն կարի յոյժ ստիպմամբ տարան զիս ի մէջ իւրեանց, որք զԲէշքիւթիւրն ոչ ընդունին, և զպտղիս և զարդիւնս ոչ տան նմա։ Եւ զնորին ժանտութիւնն ևս գրէր՝ և զստութիւնն փորձեալ էր՝ խնդրելով զվկայական, զոր չէր ունեցեալ։ Բայց զի յառաջ սա ի վերայ նորա զթուղթ խնդրէր, այժմ ապաշաւէր մինչ տեսեալ էր, և գրէր մի արձակել։ Եւ սրբ․ վեհն գրեալ ծանոյց նմա ի կարճոյ զխնդրելն մհ․ Փիլիպպոսին և այլոց առ ի յարձակել՝ և իւր ոչ լսելն և զարձակելն, և զպատասխանիս դրելն առ նոսա, (որպէս ասացաւ ի նոյեմբերի Թ) որ մինչ ոչ եկեսցէ աստ ի ս․ Աթոռս, ոչ եմք արձակելոց աստ զնա։ Բայց որովհետև ի հոկտեմբերի ԺԱ գրեաց սմա չերթալ ի Խարբերդ, և սա այժմ գնացեալ էր, և զշնորհակալութիւնս գրէր զժողովրդոցն՝ թէ զԲէշքիւթիւրն առեն, (որպէս ասացաւ ի վերոյ), ուստի գրեաց թէ՝ եթէ այդ գրելդ յիրաւի է՝ դու ևս զսրբալոյս Մեռոն տուր չունողացն զնա, և արժանացո օրհնութեան ս․ Աթոռոյս։ Իսկ որք ընդունին զնա՝ մի տար նոցա Մեռոն։ Եւ որպէս ի հոկտեմբերի ԺԱ, այժմ ևս խնդրէր վասն գանձապետաց և այլոց զթուղթս օրհնութեան, գրեաց թէ՝ երբ աւարտեալ զգործդ եկեսցես, յայնժամ գրելոց եմք առ ամենեսեանսն զթուղթս օրհնութեան, որոց և իցէ պատշաճ։ Իսկ վասն արդեանցն ոչինչ գրէր, գրեաց թէ՝ գուցէ ընդ քեզ շրջեցուսցես, և փորձութեանց դիպեցուսցես, որպէս յառաջ գրեալ եմ և բերանով ասացեալ քեզ՝ յղեա ի ձեռն հաւատարմաց ի Կարին առ մահտեսի Փիլիպպոսն, կամ ի Բայազիտ առ տէր Վահանն, և մեզ ծանո։ Նոր թուղթ սմա ևս յղեաց ի տեսանել։ Նա և՝ Փասուլայ ևս գրեաց առ սոսա, յիշեցուցանելով զպատուէրն՝ զոր ի գնալն աստի տուեալ էր նմա վասն Գիարէքըրու քաղաքի գանձապետացն, և այժմ ևս պատուիրելով առնել այնպէս։ Որպէս զի՝ հաւատարիմ մարդկանց հարցանելով, մէկ լաւ և գանձապետութեան յարմար մարդ դացէ՝ և գրեալ ծանուսցէ ինքեան․ զի և ինքն զգանձապետութեան թուղթ յղեալ՝ հաստատեսցէ զնա ս․ Աթոռոյս գանձապետ։ Ապա և ինքն զգանձանակն առեալ՝ ի հին գանձապետացն, տեսցէ թէ զինչ հասուցանեն ս․ Աթոռոյս կամ զհարազատութիւնս ինչ ունին առ ս․ Աթոռս, թէ ոչ։ Նա և՝ թէ երբ իցէ գնալոց ի քաղաքն, գրեսցէ։ Եւ Առաջնորդ Պետրոս վարդապետն յայդր է Թալոց աստ, թէ գնալոց է յայլուր, և ընդ ժողովրդեանն որպէս վարի․ և ժողովուրդքն ընդունին թէ ոչ։ Զորս շուտով գրել հարկեաց հանդերձ որպիսութեամբք գանձապետացն Ցամթայ։ Զայս թուղթս առ Պետրոս վարդապետն յղեցաք հասուցանել առ Ղազար վարդապետն։ Այլ և՝ որովհետև այս փայակս ի վերայ Կար-

նոյ էր գնալոց։ Վասնորոյ՝ գրեաց սրբ. վեհն Թուղթ առ մհ. Փիլիպպոսն և Առաքելն, ի պատասխանի ի Նոյեմբերի Թ և ի ԺԳ գրեալ Բ թղթոցն։ Զորս յղեալ էին ի ձեռն Կարնոյ Առաջնորդ Ցարութիւն վարդապետին՝ որ եկն այժմ ի ս. Աթոռս ի հարկեցմանէ սրբ. վեհին, (որպէս ասացաւ ի Նոյեմբերի ԻԱ և այլ յառաջ)։ Նաև ի միաբանից սրբոյ Կարապետին Կարապետ ոճն ևս եկն աստ միաբան լինել, որոց սակս գրէին զյանձնաբարութիւնս, և սրբ. վեհն միաժամութիւն գրեաց՝ թէ շահելոց եմք։ Եւ զի գրէին թէ՝ տեղւոյս մաքսապետին ըստ օրինի ընծայել ինչ արժան է. սրբ. վեհն ևս հրամայեաց Ծ կամ Կ ղռուշի ընծայս հոգալ և ընծայել, և ոչ աւելի։ Եւ զինչ ընծայելն գրել ինքեանն։ Զի և մեք աստ Թուղթ գրեսցուք առ նա, և ի թղթոջն զորքանութիւնս և զանուանս ընծայիցն գրեալ՝ առ ձեզ յղեսցուք, զի ընդ ընծայիցն մատուսջիք նմա։ Եւ զի գինի խնդրէին, գրեաց թէ՝ բերօղ չգտանի, եթէ դուք զաթրջի յղեսջիք մինչև ցԲայազիտ, մեք անդ յղելոց եմք առ Վահանն, զի ընդ նոսա յղեսցէ։ Ցայս մօտ աւուրքս աստ յղելոց եմք առ տէր Վահանն, զի նա ընդ հաւատարմի յղեսցէ եթէ գտցի ոք։ Եւ զոր ինչ ի վերն գրեաց Պետրոս վարդապետին վասն տալեացն մեզ՝ ծանոյց սոցա։ Եւ պատուիրեաց՝ զի թէ նա յետացուսցէ՝ և չյղեսցէ առ ինքեանս, (ձ) ինքեանք փոլիցայ արարեալ յղեսցեն ի վերայ զբարաթ՝ և ստիպմամբ խնդրեալ առնուցուն շուտով։ Իսկ և՝ Ուռումէլու Նուիրակ Ցովաննէս վարդապետն՝ (որ յիշեցաւ ի հոկտեմբերի ԺԱ, հասուցեալ էր սոցա ի ձեռն Նաղարէթին զդրամս, (Ա) ուստի՝ սոքա զղապզ խնդրէին։ Վասնորոյ՝ զղապզ գրեաց սրբ. վեհն առ նուիրակ Ցովաննէս վարդապետն, և միամիտ արար վասն դրամոյն՝ թէ առ մեզ է հասեալ. (ա) և յղեաց առ սոսա՝ յղել առ նա զի միամտեսցի։

Թուղթ ևս գրեաց դարձեալ առ նոյն Ուռումելու Նուիրակ Ցովաննէս վարդապետն, յորում ոչ այլ ինչ՝ բայց միայն վասն նոյն դրամոյն (ա) առ մեզ հասանելն և զղապզ յղելն իւր առ Մուրտիկեանսն՝ ծանոյց։ Որ յորժամ այս բարևագիրս առ քեզ հասցի աստ, ընկալեալ լիցիս միամիտ, Բ թապաղայ նոր Թուղթ յղեաց սմա ի տեսանել։ Զայս Թուղթս ևս առ մհ. Փիլիպպոսն և Առաքելն յղեաց ընդ ղապզին յղել առ նա։ Եւ որպէս ի Նոյեմբերի Թ ևս ասացաւ, խոստանային սոքա զիւրեանց հաշուի դաւթարն յղեալ՝ այլ և զդրամ ևս ուղարկել։ Ո՛ւստի՝ էհարց թէ ընդէ՞ր ոչ յղեցիք, և հարկեաց այնպէս առնել, զի հին հաշիւն վերջասցի աստ, և նոր փոլիս արասցուք։ Մանաւանդ զդրամ յղել, զի պակասութիւն ունիմք աստ։ Եւ որ ի վերն գրեաց Ցամթայ Նուիրակին դրամ յղել առ սոսա, ծանոյց սոցա։ Եւ հարկեաց կրկին, զի մյս փայեկաւս փոլիցայ արասցեն ի վերայ Ցամթայ Առաջնորդ Պետրոս վարդապետին՝ (որպէս ասացաւ ի վերոյ)։ Եւ տրտունջ սակաւ մի զԿարնեցւոցն, զի Բ մահսար էին գրեալ՝ զանգատանաց հակառակ միմեանց, մինն քահանայքն՝ զիշխանաց տեղւոյն և զԱռաջնորդէն, և մինն իշխանքն՝ զքահանայիցն։ Ուստի գրեաց գրել զորպէսն ղայսոսիկ գրողացն, մանաւանդ զպատասխանի թղթոյն, զոր ի Նոյեմբերի ԻԱ գրեաց սոցա։ Եւ զի՝ յառաջ Թօխաթցիք գրեցին թէ՝ զԹամզարայու Առաջնորդ Միքայէլ վարդապետն Առաջնորդ արարաք մեզ, և կոնդակ խնդրէին, (որպէս ի Նոյեմբերի Թ ի թղթոջ մհ. Աղամջանին ծայրիւ ինչ յիշեցաւ)։ Իսկ այժմ լսէաք թէ՝ եկեալ է ի Թամզարա։ Ուստի՝ գրեաց սոցա թէ՝ այս որպէս բան է, և հարկեաց գրել զորպէսն եթէ գիտիցեն։ Զհամբաւս խնդրէին, գրեաց թէ համբաւ ոչ դոյ։ Եւ Իբրահիմ Աֆանտին մանդ էր գնացեալ առ Սարասկեարն, խնդրեաց գրել զինչ երթալն, հանդերձ այլ մեզապատաշաճ որպիսութեամբք։ Եւ զի Իբրահիմ Աֆանտին և Գէորգն զփոքր Թղթաշէն ֆռանկն յղեալ էին ընդ Թաթարի ի Պօլիս ըստ խոստմանն իւրեանց, որ ասացաւ ի Նոյեմբերի ԻԱ, յորժ թեթև ծախու, որ բոլորապէս էր ՁԵ դռ.։ Զոր ծանոյց սոցա սրբ. վեհն։ Իսկ և տէր Գէորգն որ յիշեցաւ յԱպրիլի ԺԹ ի թղթոջ Գրիգոր Աղային, ասկաւին արգիլեցեալ գոլով ի Բազգազ, գրեալ էր այժմ զԹուղթ առ սրբ. վեհն, և ծանուցեալ զորպէսն իւր։ Ուստի՝ զԱ Թուղթ գրեաց առ նա սրբ. վեհն, ի պատասխանի յօգոստոսի Թ գրեալ թղթոյն, ծանուցանելով զհասանելն աստ թղթոցն իւրոց՝ զոր ինչ մինչև ցարդ գրեալ է։ Եւ զի գրէր Մկրտիչ վարդապետին թէ՝ ես աստ արգելեալ մնացի վասն ճանապարհաց

փակելոյն, և այլս Թուղթքս և տօնացոյցքս ևս ընդ իս։ Արդ ասեմ սրբ. վեհին զի թէ կամիցի, հրամայեսցէ ինձ ի վերայ Շիրազու գնալ ի Բուշեռ, կամ ուր և կարիցեմ դտանել զՄիքայէլ Աղայն, զի թերևս հնարիւ ինչ հասուցանել կարացից զայսոսիկ ի տեղիս իւրեանց։ Եւ սրբ. վեհն գրեաց թէ՝ զայգ հրամանդ դու ընդէ՞ր այժմ յինէն խնդրես, զի յայնժամ հրամայեցի ես քեզ զայդոսիկ ի տեղիս իւրեանց հասուցանել, մինչ յղեցի զքեզ, արդ՝ որպէս և ձեռնտու է, այնու ոճիւ ջանացեալ հասո, ի տեղիս իւրեանց։ Եթէ մինչև ցհասանելն առ քեզ այս թղթոյս յղեալ իցես, բարի է, և թէ ոչ, թէ առ Միքայէլ Աղայն կարես հասուցանել՝ հաս, իսկ թէ անկարելի լիցի, ապա ինչ կերպիւ և է՝ ջանա՝ զի զայնոսիկ որք ի Հնդիկս պարտին երթալ՝ առ Գրիգոր Աղայն հասուսցես, զի աչքն ի ճանապարհի է։ Եւ թէ այսպէս լիցի և զՄիքայէլ Աղայն չտեսանիցես, զայն աւելի Ի հատ տօնացոյցն ևս, զորս պարտ էիր տալ Միքայէլ Աղային վասն ծախելոյ՝ յղեսցես առ Գրիգոր Աղայն ընդ թղթոյն և տօնացուցիցն միւսոց։ Եւ առ այս շատ պատուէր։ Իսկ և՝ Ջուղայեցի Ղուկաս վարդապետն՝ (որ յիշեցաւ յանցեալ ամին՝ ի ի մայիսի ԻԶ, յանցեալ ձմռանս վախճանեցաւ, զոր ծանոյց սմա, և պատուիրեաց հետևիլ և իմանալ զտեղիս ընչից նորին, և գրել ինքեան։ Այլ և՝ ի ՌՄԻԳ թուոջն և ի սեպտեմբերի ելն որ գրեաց սրբ. վեհն Խօջայ Ալէքսանին վասն ի տան տէր Մարկոսին մնացեալ ընչից Փիլիպպոս վարդապետին՝ զի տեղեկասցի նոցա, և առեալ առ ինքն պահեսցէ, սա զայն ինչսն՝ (որ լեալ էր Ա բօղչայ և այլ քանի մի իրք). առեալ էր անտի ի դառնալն Ի Բասրայու ի ՌՄԻԲ թուոջն, և բերեալ ի Բայազիա, և եդեալ ի տան տէր Վահանին։ Ուստի ի հասանիլն անդ թղթոյ սրբ. վեհին որ ի վերն յիշեցաւ. (զի հազիւ թէ նոր էր հասեալ անդ ի Բասրայու վասն փակութեան ճանապարհացն) Ալէքսանն ցուցեալ էր զայն թուղթն տէր Գէորգին։ Եւ նա այժմ գրէր զիւր բերելն զայն ի Բայազիտ, և ներումն խնդրէր վասն չասելոյն մեզ։ Ուստի՝ սակաւ մի մեղադրութիւն գրեաց նմա սրբ. վեհն սակս չասելոյն։ Վասն շատաշրջիկ քահանայից կանոն գրեաց ի Բաղտատ՝ (զոր ի ներքոյ ասելոց եմ), սմա ևս ծանոյց։ Ի Շիրազ մարդ յղելն ընծայիւք առ վէքիլն, և ընդ նմա զթուղթ գրելն ի Հնդստան և ի Բասրա՝ ևս ծանոյց սմա, որպէս և ի նոյեմբերի ԻԲ ևս ասացաւ, զոր դեռ յետ քանեաց աւուրց էաք յղելոց։ Այլ և ի ՌՄԻԳ թուոջն և ի սեպտեմբերի ելն որ զօրհնութեան թուղթս դրեալ յղեցաք ի վերայ Շիրազու ի Բասրայ և Հնդիկս վասն ողորմութեան և յիշատակաց տուողաց, զորս սոյն տէր Գէորգիս և հանգուցեալ Յովսէփ վարդապետին էին տուեալ, և առ երեր, և զթուղթսն ղրեցոյց, յայնժամ զերկուց տուրք տուողաց անուանս բարւոքապէս դիտել ոչ կարաց, զի թուղթ դրէաք, ուստի չգրեցաք։ Իսկ այժմ իմացեալ և դրեալ էր՝ և զթուղթս խնդրեալ։ Որք են, Ա թուղթ առ հանգուցեալ մհ. Ալվանտի քոյր Սողովմէն, և իւր որդի Խըտըրն և Յովաննէսն, որք զնոյն մհ. Ալվանտի հոգաբաժինն տուեալ էին, որ էր դրամ։ (ԽԵ)։

Թուղթ առ Գաղու որդի հանգուցեալ Զօրու քեռորդի Բաղդասարն, և քոյր Հեղինէն, որք զնոյն Զօրու և իւր կողակից հոգեբաժինն տուեալ էին, դրամ (ԻԶ) նաև՝ Ա սուզանի դօտի, Ա գեղին շամագան իւր մաղաշոմն, Ա դեղնապղնձեայ իպրուղ, և Ա հին խալիչայ։

Թուղթ մի ևս առ տէր Յակոբի որդի հանգուցեալ պ. Պետրոսի քեռորդի պ. Նիկողայոսն, որ զհոգեբաժինս նոյն Պետրոսին՝ և նորին քուերցն, յղեալ էր ձեռամբ տէր Գէորգին։ Որ էր դրամ զմրութ (ԲԺ) և Ա մատանի։ Այլ սմա յառաջ ևս էաք դրեալ թուղթ ի ՌՄԻԳ թուոջն, և ի սեպտեմբերի ելն, այլ մնացեալ էր ի Բասրա, և առ ինքն չէր հասեալ, զոր ծանոյց սմա սրբ. վեհն։ Զոր և յղեցաք առ տէր Գէորգն, տալ ի տեարսն։ Ա թապաղայ թուղթ ևս առ տէր Գէորգին յղեցաք։

Թուղթ ևս առ ս. Աթոռոյն զանձապետ և վէքիլ Խօջայ Ալէքսանն գրեաց, ի պատասխանի ի մայիսի ԻԷ, և ի յունիսի Ա գրեալ Բ թղթոցն, նախ մխիթարութիւն վասն վըշտացն՝ զոր կրեալ էին, և կրէին տակաւին։ Իսկ և՝ զայն գրամն Ղուկաս վարդապետին՝ որոյ վասն յանցեալ ամին ի մայիսի ԻԶ

գրեաց սմա սրբ. վեհն առնուլ ի յԱղայ Մարգարի վէքիլ պ. Մանուկէն և գրել ի մեծն Պօլիս առ իւր եղբայր պ. Ասլանն, զի տացէ պատրիարք Զաքարիա վարդապետին, այնպէս էր արարեալ, և գրեալ սրբ. վեհին։ Ուստի՝ և սրբ. վեհն զշնորհակալութիւն գրեաց առ նա։ Բայց զեռ ոչ է գրեալ ինձ ասէ Զաքարիա վարդապետն զհասանելն դրամոյն առ ինքն, երբ գրեսցէ թէ էհաս ինձ, յայնժամ և ես գրելոց եմ քեզ զի միամիտ լիցիս։ Ծանոյց և զմահ Ղուկաս վարդապետին, (որպէս և ի վերոյ տէր Գէորգին ծանոյց)։ Եւ գրեաց թէ՝ Նա դատարկ եկն Աթոռս, և եղև միաբան, և փափագանացն ևս հասեալ եղև վարդապետ և եպիսկոպոս։ Բայց որովհետև լի աւուրք էր և ի ճանապարհին ևս ցաւագարեալ էր, վախճանեցաւ, և փառաւորապէս թաղեցաւ։ Սակայն՝ անձեռնհաս եղև առնել զկտակ, և չկարացաք իմանալ թէ՝ ապրանք նորին ո՛ւր, և առ ո՛վ մնացին։ Եւ. պատուիրեաց թէ՝ մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայիցն ևս գրեցի ի Բասրա ի վերայ Շիրազու, (զոր յետոյ եմք յղելոց)։ քեզ ևս գրեմ, զի հետևեալ իմասջիք թէ ո՛ւր մընացին կայք նորա, և առ ո՛վ, կամ զինչ ունի։ Եւ մեզ գրեսջիք։ Եւ զի Ղուկաս վարդապետին ևս գիր էր գրեալ սա, զոր սրբ. վեհն բացեալ ընթերցաւ։ Յորում գրէր թէ՝ զդրամն առի ի պ. Մանուկէն, բայց բաղին և անցեալ մուտաթն մնաց։ Ուստի՝ գրեաց զայնս հետևիլ և առնուլ և գրել ինքեան զստոյգ որպէսն կայից նորին։ Այլև՝ զայն հրամանն զոր գրեաց առ քահանայսն Բաղդատու ի ՌՄԻԳ թուոջն և ի սեպտեմբերի ելն, զի կարգ դիցեն յինքեանս, և քահանայ մի յինքեանց երթեալ հովուեսցէ զժողովուրդսն Ղարատաղու։ Այժմ մինչ յայսմ ամի թուղթն այն հասեալ էր անդ՝ քահանայքն սկսեալ էին մաքառել և հակառակել ընդ իրեարս, և չէին կատարեալ զհրաման սրբ. վեհին, զի ասէին թէ՝ Թող այն քահանայն գնասցէ՝ ի Ղարատաղ՝ որ անտի եկեալ է. որոյ անունն էր տէր Յովսէփ։ Որոյ սակս այժմ իրիջայ գրէին սրբ. վեհին սոյն պ. Ալէքսանն, և Աւագէրէց տէր Աւետիսն, զի ներեսցէ՝ և մի՛ բարկասցի։ Նոյնպէս ի Համատանու ևս էրէց մի Յովաննէս անուանի թողեալ զժողովուրդսն թարց քահանայի, գնացեալ էր անդ։ Ուստի՝ թէ համատանցիք գրէին աղաչանօք առ սրբ. վեհն, և բողոքելով զքահանայ խնդրէին։ Ուստի՝ գրեաց սրբ. վեհն կոնդակ ի վերայ Բաղդատու ժողովրդեանն, նախ մխիթարութիւն վասն վշտացն՝ զորս եկեալ էին և կրէին սակս վրդովման կողմանցն։ Եւ ապա ծանոյց զանկարգ արարմունս այն Յովաննէս և Յովսէփ երիցանցն, և գրեաց թէ՝ մինչև ո՛չ երթիցեն իւրաքանչիւրքն յիւրեանց տեղիս՝ ի Համատան և ի Ղարատաղ, և զժողովուրդս իւրեանց հովուեսցեն, ոչ ունին իշխանութիւն պաշտելոյ զկարգս իւրեանց, լուծեալ են ի կարգացն և բանադրեցեալք։ Իսկ եթէ երթիցեն ի տեղիսն իւրեանց՝ զժողովուրդսն հովուելոց են, և ժողովուրդքն վասն ինքեանց դիրիջայս գրեսցեն աստ առ ինքն առ արձակել զնոսա, յայնժամ՝ ապա արձակելոց եմ ասէ։ Իսկ եթէ չհնազանդեալք հրամանաց մերոց ոչ երթիցեն, այնուհետև չեմ արձակելոց զդոսա մինչև ցելս շնչոյն իւրեանց։ Դուք ևս պարտիք ասել զդոսա իբրև զչար դևս, զի որ ոք ընդունիցի զդոսա նա ևս հաղորդ լինի մեղաց և պատժոց դոցին։ Եւ բաց յայս Բ երիցանցս, Գ երիցունք ևս ի Կարնոյ՝ ի Թարվիզու և ի Յամթայ գնացեալ էին անդ։ Ուստի գրեաց զի թէ զնոսա, և թէ այլ նոյնպիսի շրջաշրջիկ երիցունք՝ վարեսցեն ի միջոյ իւրեանց, և մի՛ ընդունիցեն, զի թէ լաւ լինին ասէ՝ զիւրեանց բնական տեղիսն և զժողովուրդսն ոչ թողուն և յայդր դան։ Զի գոլով աղտաւորք և չարաբարոյք, ի մէջ իւրեանց ժողովրդեանն կառավարել ոչ կարեն, ուստի դան յայդր առ ի ծածկել զախտս իւրեանց։ Եւ իւրեանց ժողովուրդքն թերևս վասն աղքատութեան զորկորս դոցա ըստ իւրեանց աղքատաբարոյ ագահութեան յագեցուցանել ոչ կարեն, վասն այն ելեալ դան յայդր արածել զորկորս իւրեանց, մինչ տեսանեն զքաղաքդ բարեկլի, և դուք ևս սիրով մեծարէք և շահէք։ Ուստի՝ մի՛ ընդունիցիք ասէ զայնպիսիսն, այլ վարեսջիք այտի, զի ձեր Բ քահանայքն ձեզ բաւականք են։ Եւ յոյժ պատուէր՝ առնել այսպէս։ Օրինակ այս թղթոյս ի բոլորագրահամար տետրոջն է յերեսն ՈՂԳ, ՈՂԳ։ Արդ՝ զայս թուղթս յղեաց առ Ալէքսանն, և պատուիրեաց այսպէս առնել։

Բ Թապաղայ ևս նոր Թուղթ յղեաց սմա։ Այլ և՝ որպէս ի Թղթոջ աէր Գէորգին և ի նոյեմբերի ԻԲ ասացաք, որովհետև զմարդ յղել կամէր սրբ. վեհն ի Շիրազ, և ի ձեռն նորա՝ Թուղթ գրեալ ի Հնդիկս՝ և ի Բասրայ, վասն որոյ՝ սմա ծանոյց զայս։ Եւ մտածելով թէ՝ Թերևս կարասցէ սա Թուղթ յղել ի Բասրա, վասն որոյ՝ զմէկ Թուղթ գրեաց ի Բասրա առ մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայսն, և ծանոյց զհասանելն սոտ Թղթոյն իւրեանց՝ զոր ի յունիսի Ի գրեալ էին ընդ Թիֆլիզեցի Կակալօյին, և զգրելն իւր զպատասխանի նորին հանդերձ այլ Թղթովք ի Հնդիկս, և յղելն ի Շիրազ՝ զի անտի առ ինքեանս հասուսցեն։ Բայց որովհետև այժմ ի Բաղդատ Թուղթ գրեցաք ասէ՝ զայս Թուղթս ևս ի Կարնոյ գրեալ առ Ալէքսանն յղեցաք, զի Թերևս այս շուտ հասանիցի ձեզ, և իմասջիք Թէ՝ ձեր՝ Թուղթն մեզ էհաս, և մեք զպատասխանին գրեալ առ քեզ յղեցաք ի վերայ Շիրազու։ Բ Թապաղայ ևս սոցա յղեցաք։

Եւ զայս Թուղթս ևս առ Ալէքսանն յղեաց՝ յղել առ նոսա ի Բասրա. եթէ կարելի իցէ։ Իսկ զայս պահարանս յղեաց ի Կաբին առ մհ. Փիլիպպոսն և Առաքելն, զի ընդ գնացող Թաթարի՝ յղեսցեն ի Բաղդատ առ Ալէքսանն։ Եւ զպահարանն մհ. Փիլիպպոսին՝ ետուք նոյն փայեկին վերոյյիշելոյ՝ որ ի Ցամթայ էր եկեալ, տանիլ տալ մհ. Փիլիպպոսին և Առաքելին ի Կաբին։ Անուն փայեկին էր Շահէն։ Որ եւ ի սրբոյ Աթոռոյս ի դեկտեմբերի Գ։

ՄՉԹ.

Ցրելն սրբ. վեհին զՄարկոս վարդապետն ընծայիւք ի Շիրազ առ Քարիմ Խանն, եւ ընդ նմա թուղթք ի Շիրազ, ի Ջուղա՝ ի Բասրա, ի Բուշեռ, ի ի Հնդիկս, ի Քեաքուլ եւ ի Գիլան եւ ի Համադան, զանազան որպիսութեամբք։

Մարկոս վարդապետն որ յանցեալ ամին ի նոյեմբերի Ժ յղեցաւ առ Քեարիմ Խանն ի Շիրազ՝ յայսմ ամի ի յուլիսի ելն եկն ի ս. Աթոռս՝ Թղթովք նորին և փառաւոր խիլայիւք։ Բայց սրբ. վեհին յայսմ ամի խիլայ չէր յղեալ Քեարիմ Խանն, որպէս և յանցեալ տարւոջն տեղւոյս Խանին չէր յղեալ։ Այլ սրբ. վեհն յայսմ ամի ևս պատրաստեալ ըստ արժանւոյ նորին ընծայս՝ նման անցելոյ ամին, յղեաց ի ձեռն նոյն Մարկոս վարդապետին։

Թուղթ աբզայական ևս գրեալ առ նա՝ եղև շնորհակալ զգթոյն և զխնամոցն՝ զորս ունէր առ ս. Աթոռս և առ ինքն և առ ազգս մեր, խնդրելով ևս ունիլ միշտ զնոյնս, և զընծայսն սիրով ընդունել։ Եւ զոմանս բանըս գրեաց Ջիմշիդ բէկին և Ասլանբէկին արզ առնել ինքեան՝ (զորս ասելոց եմ ի ներքոյ). ուստի՝ գրեաց ի յայս արզայոջ՝ Թէ զոմանս խնդիրս մեր գրեալ եմք Ջիմշիդ բէկին և Ասլան բէկին արզ առնել մեծութեանդ քում։

Թուղթ ևս տաճկերէն՝ գրեաց առ Ջիմշիդ բէկն և Ասլան բէկն, մի և նոյն օրինակաւ։ Նախ շնորհակալութիւն վասն սիրով ընդունելոյն և շահելոյն զՄարկոս վարդապետն, և զընծայսն մատուցանելոյն վէքիլին, և խնդիր, զի այժմ ևս զնոյնս արասցեն։ Ծանոյց և զպակասաւորութիւն մեր սակս խառնակման Օսմանցւոց երկրին, և խնդրեաց՝ Թէ ի տեղի շատի զսակաւն մեր ետուք հաճել վէքիլին, և դուք ևս հաճեցարուք, զի այս օջաղս և մեք՝ իւրն եմք, և ձերն ևս։ Այլ և՝ որովհետև զԲասրա առեալ էր Քեարիմ խանն, և կամէր զՋուղայեցիս բերել յետս՝ ի Ջուղայ. իսկ նոքա երկնչէին, և գալ ոչ կարէին։ Վասն որոյ՝ գրեաց սոցա սրբ. վեհն, և ծանոյց զայս, Թէ որովհետև Աստուծով զօրացեալ վէքիլն զԹշնամիս իւր յաղԹեալ յաջողմամբն Աստուծոյ՝ տիրեաց Բասրայու, որ եղև մեզ ցնծութիւն մեծ։ Եւ կամի զՋուղայեցիսն որք անդ՝ ի բնիկ տեղիս իւրեանց բերել. ուստի՝ մեծ ցնծութիւն է նոցա գալն ի հայրենիս իւրեանց։ Այլ սակայն՝ որովհետև ի յաւուրս Նադըր շահին զմեծագոյն վիշտս և զաւերութիւնս կրեալ ի դուռն մահու հասեալ, իբր մազապուրծ փախեան այտի, ուստի՝ այժմ զնոյն կասկածանսն բերելով ի միտ, երկնչին Թէ՝ յորժամ եկեսցեն յայդր, այլ ևս դիպեսցին երբէք փորձութեանց անպիտեաց։ Վասն որոյ այս է իղձն նոցա, զի Թէ մեծա-

զօր վէքիլն զթուղթ իմն ողորմութեան և յուսադրութեան շնորհեսցէ նոցա, առ ի ապահովս պահել զնոսա յամենայն դիպուածոց յորոց նոքա կասկածին, ապա և ինքեանք միամտութեամբ և ուրախութեամբ ելեալ եկեսցեն՝ ի տեղիս իւրեանց։ Զայս ասէ մեզ դրօղք ևս գոն։ Ուստի՝ մերս դիմաց արզ արասջիք ի սպասու Նարաբ վէքիլին, զի միամտեցուսցէ զնոսա իւր ողորմութեան հրովարտակաւն յամենայն կողմանէ, զի ե նոքա առանց իմիք կասկածանաց եկեսցեն ի տեղիս իւրեանց՝ և օրհնօղք լիցին ինքեան։

Փուսուլայ ես մեծ ե հայերէն գրեաց առ նոյն Ջիմշիդ բէկին և Ասլան բէկին՝ զկարմիր կնիքն փոքրիկ եղեալ ի գլուխն ըստ կարգի։ Որ էր վասն Ջուղայու Առաջնորդ Մկրտիչ պետին։ Քանզի՝ (որպէս ասացաւ յանցեալ ամին ի նոյեմբերի Ժ), նա գրով և բանիւ զզրոյցս հասուցանէր յականջս սրբ. վեհին, թէ թող զիս սիրով խնդրեսցէ, ես երես ի քարշ երթայց յոտս նորին. զի՞նչ վայել է մեծութեան իւրում, որ գրէ վէքիլին կապանօք յղել զիս առ ինքն։ Արր. վեհին ես հաւատալով կեղծաւորական ասութեանց նորին գրեաց առ նա ընդ Մարկոս վարդապետին զթուղթ սիրոյ՝ միամտութեամբ ելանել և գալ աստ ընդ Մարկոս վարդապետին։ Իսկ նա բաց ի յոչ գալոյն՝ (որ պատճառէր թէ՝ վէքիլն զիս ոչ թողու), զդատարկ պատասխանի մի ես ոչ էր գրեալ թղթոյ սրբ. վեհին։ Այլ խաբեալ էր զՄարկոս վարդապետն, թէ դու գնա ի Ջուղայ, ես ևս գալոց եմ անդ՝ և ի միասին երթիցուք։ Իսկ նա ի Ջուղայ եկեալ՝ և յերկար ժամանակս սպասեալ՝ չէր եկեալ նա, պատճառելով թէ՝ վէքիլն ոչ թողու։ Եւ Մարկոս վարդապետն այսպէս ծմըր եղեալ ի նմանէ, ելեալ եկեալ էր միայն։ Ուստի՝ այժմ գրեաց սոցա սրբ. վեհն թէ՝ դուք գիտէք՝ զի թէ կարգաւորք և թէ աշխարհականք ազգիս մերոյ՝ յամենայն կողմանէ հնազանդք են մեզ և սրբոյ Աթոռոյս, մանաւանդ թէ կարգաւորքն, որովհետև զկարգըս իւրեանց ի սրբոյ Աթոռոյս առնուն։ Իսկ այդ հիք Մկրտիչ սևագլուխդ ահա Ժ տարի է որ ի մէնջ կարգ է առեալ, յայսքան ամս միշտ ընդ դէմ մեզ զներհակութիւնս առնէ՝ նոյնպէս և մեր մարդկանցն, և զմեզ պէս պէս կերպիւ վիրաւորէ։ Մեք մինչև յե՞րբ համբերեմք։ յԱնցեալ տարին գրեցաք ասէ Նարաբ վէքիլին յղել աստ, դուք գրէք թէ՝ պիտի թաւթիշ[48]) առնեմք տեսանեմք ի՞նչ է սուղն, և ապա յղեմք։ Ո՞ւմ պիտի հարցանէք և թաւթիշ առնէք։ Զի Ջուղայու հայքըն ի դմանէ երկնչելով զիրաւն չասեն, որովհետև դա նոցա քեալանթար է, և ի ներքոյ փայտի զնոսա մաշէ, և զտունսն աւերէ։ Որք ոչ կարեն ասել զճշմարիտն, և այդ դրանդ մարդիկքն ևս կաշառովլցեալ պահեն զկողմն նորա, մանաւանդ՝ Սպահանու քաղաքապետն։ Ապա՝ այլ ո՞վ պիտի վկայէ ինչ զնմանէ՝ որ դուք թաւթիշ առնէք. մի՞թէ մեզ ոչ հաւատայք, և կամ մեք սուտ ասեմք ի վերայ դորա։ Եւ ո՞րպէս կաթուղիկոս եմք մեք, որ զմէկ մէկ լըրի կոխան առնէք։ Երբ այդպէս զպատիւն մեր լըրի միոյ ծախէք, ապա այլ ի՞նչ է յայդքան տեղաց մեզ խալաթ յղելն։ Եթէ այնքան մարդ եմք ասէ՝ որ թագաւոր մի զմեզ խիլայով մեծարէ՝ և մեծ խալիֆայ կոչէ, ապա մէկ լիրբ աբեղայ որպէ՞ս ներհակի մեզ և վիրաւորէ, և զմեզ և զմեր մարդիկքն վատաբանէ։ Ցանոյց և զվերոյիշեալ բանն, որ գիր գրեաց գալ՝ և նա զպատասխանի ևս ոչ գրեաց, և զՄարկոս պետն ծաղր արարեալ յետս յղեաց։ Այժմ ես զի՞նչ առնեմ ասէ. վայելէ այս ձեզ և մեզ։ Մի՞թէ սևագլուխն հատաւ ի հայոց ազգէն, կամ քան զդա լաւ այլ ոք ոչ գտանի, որ այդ քաղաքիդ և այդ դրանդ վայե՞լ իցէ։ Դա յիմ թագաւորի երկրում որ այդպէս ինձ ներհակի, ապա այլ տեղաց սևագլուխքըն զի՞նչ առնեն։ Մանաւանդ՝ եթէ յայլ երկրաց զցաւս ինչ ունիցիմք, կամ մեզ ներհակօղ ոք լինիցի՝ դմա պարտիմք գանգատել որովհետև այսօր դա է մեր թագաւորն, այժմ որ դորա դրան մարդն՝ այն ևս օրհնածըն, որ ինձ ներհակէ՞, ես ո՞ւմ գրեմ։ Ահա Զ տարի է ասէ՝ որ նուիրակ չեմ յղեալ երկիրդ, և ոչ ևս յղելոց եմ, որքան դա յայդ քաղաքդ է, զի զամէն եկօղ սևագլուխն մեր ռագիլ[49]) առնէ։ Իմացաւ որ մեք խնդրեցաք՝ և վէքիլն չյղեաց, իսպառ կատաղեցաւ։ զԱւետիս վարդապետն մեր ո՞րպէս ռագիլ արար յայդր, Սպահանու քաղաքապետ բըռնել տալով, և մինչ ի դուռն ծեծել տալոյ

ես առնելով, այն ևս յայտնի է ասէ, զոր քաղաքն ամէն գիտեն։ Այժմ ես այլ ծրպէս մարդ յղեմ յայդ կողմդ, կամ եկօղն որպէս գայ։ Դուք ասէ՝ թէ այդ Աստուծով զօրացեալ վէքիլիդ առ մեզ խիլայ յղելն, և մեր առ գա մարդ ուղարկելն վասն զմեզ փառաւորելոյ արարիք, ապա այս ոտզիլութիւնս բ՞նչ է։ (Քանզի՝ սոքա ևս կաշառակուռ լեալք ի նմանէ՝ չկամէին գալ նմա ատտ, վասն այն այսպէս գրեաց)։ Իսկ եթէ զմեզ ծաղր առնելոյ սակս արարիք, ես ձեզ զի՞նչ էի արարեալ. թէ մեզ չխնայեցիք ասէ, գոնէ ի ս. Աթոռս խնայէիք։ Եթէ ղուլլուղ շատ առնէ զա ասէ, մեք ևս եթէ աւելի չառնեմք, պակաս ևս ոչ եմք առնելոց։ Ցայս անգամ ևս ասէ զձեր սիրելութիւն փորձելոյ աղագաւ գրեցի, եթէ այժմ ևս զմնց առնիցէք, յայնժամ գրելոց եմ ասէ մեծազօր վէքիլին, և լաւ եմ դրելոց, որ ամէն բանի լաւ վերահասու լինի։ Այժմ միայն այսքան դրեցի ասէ թէ Ջիմշիտ բէկին և Ասլան բէկին մէկ քանի բան եմ դրեալ արդ են առնելոց ի սպասու քումդ։ Նա և թէ՝ ես կարեմ զկարգըն դորա առնուլ և խայտառակ առնել ի մէջ աշխարհի։ Բայց կամիմ որ՝ Դօլվաթլու վէքիլն յղէ գգա առ մեզ՝ զի լսօղքն իմասցին թէ՝ խնամք ունի ի վերայ մեր։ Եւ լըսեմ ասէ թէ՝ յղելոց էք ի Բասրայ՝ զի զՋուղայեցիսն միամտեցուցեալ բերցէ։ Ջուղայեցիք զերեսս սատանայի յօժար են տեսանել՝ քան զդորինն։ Դուք զխեղճ հայսն Ջուղայու լաւ միամտեցուցէք ասէ՝ որ ի նմանէ չերկնչին, և ապա հարցուցէք, և տեսէք թէ զի՞նչ ասեն։ Եւ զայլս ըստ սոցին բանս գրեաց։ Եւ ի վերջոյ խնդիր՝ զի արդ արասցեն վէքիլն զայս ցաւս իւր, և յղել տացեն ատտ զայն լիրբն։ Մեք ևս ասէ զդա խրատեսցուք, և թէ կամի վէքիլն, վերստին յետս յղեսցուք յայդր սիրով, և թէ ոչ, քան զգա լաւն յղեսցուք յայդր, որ այդ քաղաքիդ և այդ դրանդ վայել լինի։ Եւ առ այս յոյժ թախանձանօք խնդիր։ Զի որքան ուրախացուցանէ զմեզ ասէ Նաբար վէքիլին խնամքն և խիլայն, կրկին այնքան վիրաւորեն զմեզ լրբութիւնքն դորա։ Թող այս օջախիս և մեզ խնայէ ասէ վէքիլն, և մէկ կեատայի կոխան չառնէ։ Եւ յայսմ միջոցի՝ Ռաջար անուամբ տաճիկն՝ որ վասն Ջիմշիտ բէկի պարտուցն գնաց ի Թիֆլիզ՝ (որպէս ասացաւ ի յուլիսի ԻԸ), դարձաւ և եկն անտի, որպէս ի նոյեմբերի ԻԲ ասացաւ, և ընդ Մարկոս վարդապետին երթայր ի Շիրազ։ Ուստի զայսոսիկ բերանով ևս ասաց Ռաջարին, և դրեաց սոցա, թէ զերկարապէսն բանիցս ի ձեր հարազատ Ռաջաբէն և ի մեր Մարկոս վարդապետէն իմացեալ կատարումն տուք գրեցելոցս։ Եւ թէ չկատարիցէք, զայս թուղթս ես պատառեցէք, ասէ, և մի իմասցի ոք։ Զայս թուղթս ետուք Մարկոս պետին, զի ընթերցեալ ծանուսցէ նոցա լաւապէս, և թէ չկատարիցեն, առնուցու դարձեալ զայս ի նոցանէ, և կամ պատառել տացէ։ Գրեաց նաև սրբ. վեհն զթուղթս տաճկերէն առ Աղատ խանն, առ Սպահանու քաղաքապետ Հաճին, և առ երևանցի Ահմադ բէկն։ Շնորհակալութիւն վասն բարեկամութեանցն՝որ առ ս. Աթոռս և առ ինքն։ Եւ վասն սիրով մեծարելոյն զՄարկոս վարդապետն։ Եւ խնդիր մշտապէս ունիլ զբարեկամութիւնս, և սիրով ընդունիլ զընծայսն զորս յղեաց. և յանձնարարութիւն վասն Մարկոս վարդապետին։

Թուղթ առ Ղարիպ կինն գրեաց, ի պատասխանի՝ ի մարտի ի գրեալ թղթոյն ընդ Մարկոս վարդապետին։ Շնորհակալութիւն վասն յղեալ Ա աման մուրապայ ընծային. և վասն սիրով ընդունելոյն զՄարկոս վարդապետն, և բանիցն ձեռնտու լինելոյն, և զընծայսն յարգանօք ածելոյն առաջի վէքիլին. և այժմ և զնոյնս պատուիրելով առնել։ Եւ աղերսել վէքիլին, զի զսակաւն մեր՝ ի տեղի շատի ընկալցի, զի Օսմանցւոց երկիրն խառնակեցեալ է ասէ, և ոչ որպէս զյառաջագոյն՝ գան մեզ ասէ անտի արդիւնք։ Եւ այլ առ այսոսիկ բանք, և օրհնութիւն յղելով։ Ինքեան՝ և որդւոցն, և թոռանցն։

Թուղթ մի ևս առ Մէրմէբ կինն ի պատասխանի թղթոյն։ Շնորհակալութիւն վասն յղեալ Ա զառ ճոթ՝ և Ա աման մուրապայ ընծայիցն։ Եւ այն ըստ մտաց Ղարիպի թըղթոյն՝ անպակաս։ Եւ օրհնութիւն ինքեան և դստերն։ Եւ պատուէր ասել ամենից հարցանողաց զպակասութիւնս մեր։

Թուղթ առ Գեօրկին սուլթանն, ըստ մտաց վերոյգրեալ թղթոցն։ Որում և ծա-

նոյց թէ առանձին իմն փուսուլայ գրեցաք Ջիմշիտ բէկին և Ասլան բէկին, դու ևս մուղայէթ լեր առ ի կատարել տալ զգրեալսն մեր։

Թուղթ մի ևս առ Սամբէկն, նոյնպէս շնորհակալութիւն՝ և յանձնարարութիւն վերստին վասն Մարկոս վարդապետին։ Եւ ի պատասխանի մարտի ԻԱ գրեալ թղթոյն առ ինքն։

Թուղթ ևս առ տէր Խաչատուր էրէցն Շիրաղու, ի պատասխանի յապրիլի Ե գրեալ թղթոյն, շնորհակալութիւն վասն Ա լալ ոսկեայ մատանի ընծային, և վասն շահելոյն զՄարկոս վարդապետն, և վերստին յանձնարարութիւնս ծանուցանելով և ղպակասաւորութիւնսն մեր՝ ասել որոց ի դէպ է։ Եւ այլ ըստ սոցին բանք։

Թուղթ մի ևս առ Թիֆլիզեցի մհ. Աստուածատուրն, որ ի Բասրայու էր եկեալ անդ։ Ի պատասխանի թղթոյն՝ զոր գրեալ էր առ սրբ. վեհն ըստ դրդման Մկրտիչ պետին։ Արդարացուցանելով թէ զխաս ինչ ոչ է տուեալ Աթոռոյդ, և քեզ հնազանդ ծառայէ, և ի հրամանացդ ոչ ելանէ, միայն թէ՝ դու խնդրես զսա, իսկ վէքիլն գալ ոչ թողու, զի կամի յղել ի Բասրա՝ առ ի բերել զՋուղայեցիսն։ Եւ ի վերայ այսոցիկ խնդիր՝ առ ի դրել առ նա զթուղթս սիրոյ և շահել։ Որում գրեաց սրբ. վեհն թէ՝ դա որ այդպէս անմեղ ձևացուցանէ զինքն, և հնազանդ որդի խոստովանի զինքն մեզ, չունիմ ես ժամանակ զամենայն վէրսն մեր որ ի դմանէ՝ գրել քեզ, այլ միայն զայս հարց ցդա թէ՝ դու որ զքեզ այդպէս հնազանդ որդի խոստովանիս, նա թէ քոյդ մեծաւորն է՝ և դու նմա հնազանդ, ապա՝ նա քեզ թուղթ գրեաց ընդ Մարկոս վարդապետին և սիրով խնդրեաց, խոստանալով ի սէր ունիլ՝ և զանցեալսն ամենայն մոռանալ, դու դիցուք թէ ոչ գնացեր, ընդէ՞ր զլոկ պատասխանի մի ոչ գրեցեր գոնեայ՝ քո մեծաւորին։ Տես զի՞նչ պատասխանէ քեզ։ Այդ որպէ՞սի հնազանդութիւն է, որ ինքն գիտիցէ զիւր մեծաւորի վիրաւորեալ գոլն զինքնէ, և այն վիրաւորեալ մեծաւորն խոնարհեալ՝ զսիրոյ գիր գրեսցէ առ ինքն, և զանցեալսն մոռանալ՝ և վերստին ի սէր հաստատել խոստանալով՝ խնդրեսցէ առ ինքն գալ, իսկ ինքն բաց ի յոչ գալոյն՝ զդատարկ պատասխանի մի ևս ոչ գրեսցէ, այլ ծաղր արարեալ զառաքեալսն նորին՝ դատարկ յետս յղեսցէ։ Երևի ուրեմն՝ զի դա ոչ զմեզ մեծաւոր ընդունի, և ոչ զինքն հնազանդ և կարգընկալ որդի խոստովանի։ Եւ որովհետև այսպէս է, ոչ գա մեր որդի է և շնորհընկալ այսուհետև, և ոչ մեք դորա հայր և շնորհատու։ Այլ է ինքնագլուխ բռնաւոր ումն։ Կացցէ ուրեմն ըստ կամացն որպէս և գիտէ, այլ մեր թուղթ գրելն առ դա զի՞նչ օգուտ. և ի՞նչ կարօտութիւն ունի մեր թղթոյն։ ԶԲասրայու՝ և զմերայնոցն որպէսն որք անդ՝ դրեալ հարկեաց։ Եւ ի Բասրա և ի Հնդիկս գրեաց զթուղթ՝ (զորս գրելոց եմ ի ներքոյ)։ Զորս ետ Մարկոս վարդապետին, և գրեաց սմա, զի ընդ որ և պատշաճ տեսցէ, թէ ի վերայ Բասբայու՝ և թէ ի վերայ Բուշեռու, խորհրդակցեալ ընդ Մարկոս վարդապետին՝ յղեսցեն ի Հնդիկս հաւատարմաւ։ Այլ և՝ որպէս ի վերն յամսոյս Դ ի թղթոջ Բաղդատու գանձապետ Ալէքսանին յիշեցաւ վասն Համադանու ժողովրդեան՝ թէ մնացեալ են առանց քահանայի, բազում անգամ բողոքէին նոքա առ սրբ. վեհն յղել վասն իւրեանց զքահանայ։ Որք ի յերկու աւուր ճանապարհաւ հեռի տեղիս գնացեալ բերէին զքահանայս ի կատարել զօրէնս իւրեանց։ Ուստի՝ և սրբ. վեհն հոգացեալ վասն նոցին, գրեաց զթուղթ առ նոյն ժողովուրդսն Համադանու քաղաքին. և երիցփոխանն նոցա պարոն Յովսէփին Քանաքեռցի վասն սոյն խնդրոյս զմէկ թուղթ էր գրեալ առ սրբ. վեհն, զոր յիշեցոյց։ Եւ գրեաց թէ՛ դու՛ք գիտէք՝ զի վասն հեռաւորութեան տեղւոյդ՝ քահանայ ոչ կարէ գալ յայդր զի զտունս և զընտանիս իւրեանց ոչ թողուն և գան։ Ուստի՝ թէ դուք զքահանայացու ունիք, յղեցէք աստ՝ զի քահանայ ձեռնադրեալ յղեսցուք յայդր՝ առ ի հովուել զձեզ։ Եւ ի Փէրիայ՝ որ է՝ ի նահանգացն Ասպահանու, ի Գուլիզարդ գեղջըն, էր քահանայ մի Յօհան անուամբ։ Որում հարցմամբ տեղեկացեալ սրբ. վեհին, թուղթ գրեաց առ նա՝ զի. երթեալ ի Համադան հովուեսցէ զնոսա։ Որ երկու աւուրք էր հեռի ի նոցանէ։ Եւ Համադանցւոցն գրեաց, զի տարցեն զնա ի մէջ իւ-

րեանց առ ի հովուել զինքեանս, և զարդիւնսն քահանայական լիալիր տացեն, և զպատիւն պահեսցեն, առ. ի մնալ ի մէջ իւրեանց ուրախ սրտիւ։ Զի թէ այսպէս չառնիցէք ասէ, յայդր քահանայ ոչ կարէ մնալ։ Զայս գրեալքս տէր Յօհանին ծանոյց՝ զի ուրախութեամբ երթեալ հովուեսցէ զնոսա։ Քանզի որպէս և լսէաք, ոչ տային քահանայից զտուրս, և անպատիւ եւս առնէին։ Եւ սակաւ ինչ մեղադրութիւն, թէ ընդէ՞ր զտղայս ոչ տայք յուսումն, զի վերջապէս քահանայացին ձեզ։ Եւ հարկ՝ զի Բ կամ Գ տղայս՝ թէ տնաւոր թէ անտուն, յղեսցեն ի ս. Աթոռս, զի ժամանակ ինչ աստ մնացեալ՝ հետեւեսցին ուսման, և քահանայ լիցին ինքեանց։ Զի օտար քահանայն ասէ յայդր եթէ գայցէ եւս՝ միշտ ոչ մնայ ի միջի ձերում։ Զանացարուք, զի ձեր քահանայն ի միջոյ ձերմէ լինիցի։ Եւ յատկապէս պատուէր երիցփոխան Յովաննէսին՝ (որ և զանձապետ էր ս. Աթոռոյս.) արի լինիլ ի գործս իւր և այս գրեցելոցս հոգացօղ և կարօղ լինիլ, զզանձանակն ս. Աթոռոյս անխափան շրջեցուցանել և արդիւնաւոր առնել։ Մանաւանդ՝ որովհետև տէրունի էր քաղաքն այն ս. Աթոռոյս, նորին ամենայն արդեանցն՝ որք ս. Աթոռոյս են հասանելիք, տիրեսցէ, և յերթալն անդ նուիրակին ս. Աթոռոյս՝ նմա յանձնեսցէ։ Եւ բաց ի տէր. Յօհանէն՝ պատուիրեաց այլ որիշ քահանայ չթողուլ անդ, զի լսէաք թէ՝ խարբերայք՝ կախարդք և դիր առնօղք են, որք զժողովուրդս իւրեանց թողեալ՝ զխաբեբայութիւնս առնելով շրջէին յայն կողմունսն, և զսրբոյ Աթոռոյս արդիւնսն եւս առնուին ի ժողովրդոցն և կորուսանէին։ Եւ առ այս շատ պատուէր։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրոջն, յերեսն՝ ՌՂ, ՌՂԱ։ Զորս ետուք Մարկոս վարդապետին, հասուցանել առ նոսա ի Համադան։ Այլ և՝ որովհետև Քեաբուլու ժողովուրդքն եւս էին թարց քահանայի, որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԺԷ, ի թղթոջ Յովսէփ վարդապետին։) վասնորոյ՝ վասն նոցին եւս հոգայր սրբ. վեհն սակս քահանայի։ Ուստի՝ գրեաց զթուղթ առ Քեաբուլու խղճալի ժողովուրդսն։ Որոց ծանուցանելով՝ թէ թուղթ ոչ ընկալնումք ի ձէնջ ի շատ ժամանակս, և ոչ մեք գրել կարեմք վասն եկօղ չլինելոյ։ Բայց դուք մինչ գրեցիք մեզ ասէ զմահ Գրիգոր վարդապետին, և զբանադրելն քահանային ձերոյ ի նմանէ, մեք եւս գրեցաք առ ձեզ զթուղթ մխիթարութեան, և զքահանայն ձեր արձակեցաք առ ի հովուել զձեզ։ Եւ որ գրեալ էիք ասէ թէ՝ Ա տիրացու ունիմք, գրեցաք զի յղեսջիք զնա առ ի ձեռնադրել քահանայ ի Ջուղա՝ և գալ և հովուել զձեզ։ Եւ ոչ գիտացաք թէ էհաս առ ձեզ այն թուղթն մեր՝ եթէ ոչ։ Արդ՝ թէ տակաւին գոյ ասէ այն քահանայն, թող զձեզ հովուեսցէ՝ պաշտելով զկարգն, զի արձակեցեալ է ի բանադրանացն։ Եւ զայն տիրացուն եւս որպէս և գրեալ եմք, եկեսցէ առ մեզ ի ս. Աթոռս, զի զորպէսն ձեր ի նմանէ իմացեալ՝ ձեռնադրեսցուք զնա քահանայ և յայդր յղեսցուք։ Իսկ եթէ աստ գալ ոչ կարիցէ, թող ի Ջուղայ եկեալ անդ ձեռնադրեսցէ։ Եւ զայն որպիսութիւնսն՝ զորս Յովսէփ վարդապետն գրեալ էր զնոցունց՝ և ինքն գրեաց նմա՝ զի թէ կարիցէ յղել առ նոսա զքահանայ մի՝ յղեսցէ, (որպէս ասացաւ ի հոկտեմբերի Իէ,) զայն եւս ծանոյց սոցա։ Եւ զՄարկոս վարդապետի ի Շիրազ յղելն եւս ծանոյց սոցա. և ե ձեռն որոյ յղելն զայս թուղթս։ Զի առ ինքեանս հասուսցէ։ Իցէ թէ ասէ տիրացուն ձեր այնպէս եկեսցէ ի Ջուղա, զի մարդոյն մերոյ հանդիպեսցի անդ զոր յամենայն ամի յղեմք, և ի նմանէ ձեռնադրեսցի։ Եւ պատուէր՝ անպակաս առնել զթուղթս իւրեանց։ Ցաւիմք թէպէտ ասէ՝ որ այդպէս անայցելու էք մնացեալ, բայց զինչ օգուտ, զի աստի եկօղ ոչ լինի յայդր ի կարգաւորաց վասն հեռաւորութեան, մանաւանդ՝ մինչ զդիպուածս Գրիգոր վարդապետին եւս լուեալ են։ Եւ շատ մխիթարութիւն և օրհնութիւն։ Որոյ օրինակն է ի բոլորագրահամար տետրն, յերեսն՝ ՌՂԲ։ Զայս եւս ետուք Մարկոս վարդապետին, զի յղեսցէ ի Քեաբուլ ընդ գնացողաց։

Թուղթ եւս առ նոր Ջուղայու քահանայսն իշխանսն և ժողովուրդսն, և առ միաբանս սրբոյ Ամենափրկչի վանիցն նոցին։ Ի պատասխանի Մահսարական թղթոյն իւրեանց՝ զոր ընդ Մարկոս վարդապետին գրեալ էին, խնդրելով ներել ինքեանց՝ և Առաջնորդին իւրեանց, և չըարկանալ ի վերայ նորա վասն չգալոյն աստ։ Զի առանց հրամանի Նաբաբ

վէքիլին ասեն գալ ոչ կարէ, իսկ նա ոչ Թողու, զի կամի ի Բասրա յղել, և այլ ըստ սոցին աղերս։ Առ որս գրեաց սոր. վեհն թէ՝ ափսոս՝ հազար ափսոս Ջուղայու քաղաքիդ՝ որ էհաս յայդ աստիճան։ Զի գրօղն ըստ իւր ախտաւորութեանն զԹուղԹն լցեալ՝ առաջի ձեր արկանէ առ ի կնքել, և դուք ևս Թարց խոկալոյ կնքէք, և չգոյ ի ձեզ հանճարեղ ոք քահանայ կամ իշխան, որ ասիցէր ցձեզ թէ՝ եթէ մեղուցեալ էք դուք Հայրապետին ձերոյ՝ ընդէ՞ր ոչ յանձնառնուք զյանցանս ձեր և մեղայ գրէք, զներումն խնդրէք ապա։ Իսկ եթէ չէք մեղուցեալ, այլ զինչ խնդրէք ի նմանէ, և կամ նա ի զուր որպէս դատէ զձեզ։ Եւ եթէ գիտողք ևս դոր ի ձեզ ասէ, այլ զճշմարտութիւն ընդ քողով ծածկեալ՝ ոչ խօսիք զուզիգն։ Զոր և դուք ևս գիտէք՝ զի ոչ խօսիք ճշմարտօրէն։ Իսկ զմեզ ի զուր և ընդ վայր վիրաւորեալս զոլ ցուցանելով՝ դրէք Թէ մեք երկիցս զԹուղԹս գրեցաք, և զպատասխանի մի ոչ ընկալաք։ Իսկ Թէ ո՞յր աղագաւ է վիրաւորութիւնս մեր, Թէպէտ և գիտէք, այլ ոչ դրէք զճշմարիտն, այլ միայն աղաչէք ներել ձեզ և Առաջնորդիդ ձերում։ Արդ՝ դուք քահանայքդ և ժողովուրդքդ՝ նա և բոլոր միաբանք վանիցդ ոչի՞նչ էք մեղուցեալ առ մեզ, և ո՛չ մեք բարկացեալ ինչ եմք ի վերայ ձեր, այլ ամենեքեան հարազատ որդիք էք սրբոյ Աթոռոյս և մեր։ Իսկ վասն Առաջնորդիդ ձերոյ եթէ խնդրէք ներել՝ զայդ ո՛ ետես և ո՛ լուաւ, Թէ մեղանչօղն ամենևին զնշան զղջման և խոնարհութեան ոչ ցուցանիցէ, իսկ այլք վասն նորա աղաչիցեն և զներումն խնդրիցեն։ Զի ինքն պարտի խոկալ և զղջալ՝ և զներումն խնդրել, որ մեղուցեալ է առ մեզ մեծապէս, և միշտ մեղանչէ, և ի վաղուցհետէ արժանի է պատժոց որպէս և դուք դիտէք, և ոչ եթէ դուք։ Իսկ Թէ ասիցէք ասէ Թէ՝ և Առաջնորդն մեր զի՞նչ է մեղուցեալ, սաէք յայտնապէս որպէս գրեցաք։ Արդ՝ չունիմ ասէ ես զժամանակ, և ոչ իսկ համարիմ արժան գրել մի ըստ միոջէ զչար արարմունսն դորին, այլ այսքան միայն գրեմ, զի յօրէն յայնմանէ՝ յորմէ հետէ յուղայանման զաւակդ այդ եկեալ աստ՝ էառ զպատառն և գնաց՝ ոչ դադարեաց ի վիրաւորելոյ զմեզ պէսպէս կերպիւ։ Աստ զմեզ վիրաւորեաց պէս պէս լրբութեամբ և վշտացոյց, և յայղր զգործակալսն մեր։ Որում մինչ ասացեալ են ոմանք Թէ՝ ընդէ՞ր այդքան լրբութիւնս առնես դու ընդդէմ Աթոռոյն և Հայրապետին քոյ՝ յորմէ առեր զշնորհս։ Դա անօրինակ լիրբդ պատասխանեալ է Թէ՝ ես զայս շնորհն դրամով եմ առեալ և ոչ ձրի։ Այսուհ գիտացէք ասէ զհաւատն դորա։ Զի ի գալն աստ՝ զաջահամբոյրն զոր ետ մեզ, զայն ևս զոր ի յազգէս մերմէ յանուն սուրբ Երուսաղէմի էր առեալ, զի՞ն համարի անգին շնորհացն, զոր ընկալաւ ի պատիժ հոգւոյն և մարմնոյն իւրոյ։ Ինչ ՚և իցէ՝ մեք յայսքան ամս տարաք լրբութեանց դորա, սպասելով զզղջմանն, Թէպէտ և ևս լրբանայր։ Ապա մինչ ետես Թէ՝ Աստուծով զօրացեալ Նարաբ վէքիլն յիշեաց և զմեզ խիլայ յղեաց, ինքն ևս բռնադատեցեալ ի յերկիւղէ և ի կարծեաց՝ գրեաց առ մեզ զգիր մի շողոքորԹական, ըստ որում և զմահսար մի ձեզ գրեցուցեալ յղեաց առ մեզ ընդ տէր ԴաւԹին։ (որպէս այս ի պատմուԹեան ՌՄԻԳ ամին, և ի յունիսի . . .) Ապա մինչ ետես Թէ՝ այնու ոչ կարաց զմեզ խաբել, ապա՝ սկսաւ սուտ գրովք և բանիւք լնուլ զականջս մեր՝ գրելով մեր միաբանից՝ և ասելով յայղրուստ եկողաց Թէ՝ սրբազանն Թող ինձ մէկ մատն գիր գրէ, ես յերեսս վերայ գնացից յոտս նորա։ Մեք ևս հաւատալով ստութեան դորին, զսիրոյ գիր գրեալ ընդ Մարկոս վարդապետին՝ խնդրեցաք գալ երկու մտօք։ Մի զի զապստամբական անունն բարձցուք, և երկրորդ՝ զի որովհետև մերձ է ի դուռն այդ Աստուածազօր իշխողիդ, և մեք հեռի եմք, զվայրենացեալդ զայդ ընտանի արասցուք և ի պատահիլ մեզ բանից ինչ, մի յղեսցուք յայդր դժուարութեամբ զմարդն մեր, այլ դմա գրեսցուք զի հոգասցէ։ Իսկ այդ խաբեբայդ բաց ի յոչ գալոյն, լոք պատասխանի ևս ոչ գրեաց մեր ԹղԹոյն։ Այլ զՄարկոս վարդապետն ծաղր առնելով՝ դատարկ յետս յղեաց։ Այժմ դուք գրէք Թէ՝ սորա գալն յիւր ձեռին չէ, եթէ յիւր ձեռին չէր՝ ընդէ՞ր զմեզ խաբեաց՝ Թէ Թող զիս խնդրեսցէ, ևս յերեսս վերայ գնացից։ Եւ կամ մի՞Թէ այդ մեծազօր իշխողիդ դուռն մէկ ժանտ աքեղայի է մնացեալ կարօտ։ Ուրեմն՝ սուտ ասէ ինքն,

և ձեզ ևս գրեցուցանէ, և զգրունսն ևս կաշառափակ առնէ՝ թէ զիս մի՛ թողուք երթալոյ։ Արդ՝ որովհետև դա զիւր լրբութիւնսն ի ծայր հասոյց՝ մեր համբերութիւն ևս վերջացաւ։ Ուրեմն՝ և դուք եթէ Հայրապետ ընդունիք ձեզ՝ և յանիծից մերոց երկնչելով՝ զօրհնութիւնս մեր կամիք ժառանգել, ահա մեք մերով հայրապետական իշխանութեամբն բարձաք ի դմանէ զմեր տուեալ հոգևոր կարգն և զիշխանութիւնն, այսուհետև կոչեսցի դա Քեալանթար Մկրտիչ և մարխաւոր իշխօղ ձեզ։ դուք ևս այսպէս ընդունել պարտիք զդա, եթէ մեզ և ս. Աթոռոյս հնազանդ և հարազատ որդիք էք դուք։ Եւ դուք ամենեքեան՝ վարդապետք՝ քահանայք՝ իշխանք, և առ հասարակ ժողովուրդք արք և կանայք, օրհնեալ էք յԱստուծոյ և ի մէնջ։ Եւ այսուհետև եթէ սրբալոյս Մեռոն պիտոյասցի ձեզ ասէ՝ զքահանայ մի յղեցէք առ մեզ հասարակ գրով, զի նովաւ առաքեսցուք։ Զի զոր ինչ կրեցին նուիրակունքն մեր ի դմանէ մինչև ցայսօր՝ բաւականք են, ես շնորհակալ եմ զամենիցդ։ Սորին օրինակն ի բոլորագրահամար տետրոջն է յերեսն ՈԺԸ, ՈԺԹ, ՈԻ։ Տուաք զայս Մարկոս վարդապետին այսու պատուիրանաւ, զի թէ յղեսցեն զնա ըստ հրամանաւ վէքիլին, այլ մի՛ ցուցցէ զայս թուղթ։ Ապա թէ ոչ, ի դառնալն ի Շիրազու ի Սպահան, տացէ ժողովրդոց տեղւոյն և միաբանից վանիցն, և եկեսցէ յայսկոյս։ Այլ և՝ ի Գիլանու յառաջ քան զայս թուղթք էին եկեալ առ սրբ. վեհն, ի ս. Աթոռոյս վէքիլ պարոն Ալէքսանէն, և ի Դաւիթ Աղայէն։ Ուստի՝ և սրբ. վեհն գրեաց այժմ զթուղթ մի առ ս. Աթոռոյս վէքիլ պարոն Ալէքսանն, ի պատասխանի թղթոցն։ Որ գրեալ էր զվախճանիլն տէր Աբրահամ քահանային, (որ յիշեցաւ ի մարտի Է,) և զորպէսն ընչից նորին՝ թէ ի Հաշտարխան է։ Եւ սրբ. վեհն կամէր գրէր ի Հաշտարխան վասն այն ընչիցն. ուստի՝ գրեաց սմա թէ՝ ահա գրեցի ի Հաշտարխան մեր Յովսէփ վարդապետին՝ վերահասու լինիլ այն ընչիցն։ Դու ևս մուղայէթ լեր ասէ, և ի գալն յայդր այն ընչիցն, զորպէսն և զորքանն իմացեալ գրեսցես մեզ շուտով։ Ծանոյց զյղելն առ Քեաբիմխանն զմարդ, և ընդ նմա գրելն զայս թուղթ՝ զի դհասանիլն ըստ թղթոցն իւրոց՝ իմացեալ միամտեսցի։ Եւ խոստացաւ ի մօտակայ աւուրքս զնուիրակ յղել անդ։ Բ թապաղայ նոր թուղթ ևս յղեաց։

Թուղթ ևս առ Դաւիթ Աղայն գրեաց՝ ի պատասխանի երից թղթոցն՝ զորս զկնի միմեանց ընկալաւ։ Որ դրեալ էր զձախոզակի դիպուածս ժողովրդոց տեղւոյն և Հաշտարխանու՝ վասն մեծի նաւակոծութեանն, որ յիշեցաւ ի յուլիսի ԻԸ։ Առ որ զմխիթարութիւնս գրեաց, Բ թապագայ նոր թուղթ ևս սմա յղեալ՝ ծանոյց թէ՝ յետ աւուրց զնուիրակ եմ յղելոց յայդր, և զերկար պատասխանիսդ յայնժամ գրելոց, նա և զմարդ յղելն ի Շիրազ՝ որպէս և Ալէքսանին գրեաց։ Այլ և՝ բանիւ տեղւոյ Հատայազ խանին, զբան իմն ասացեալ էր երևանցի Բաբիջանի որդի Սիմօնին, ասել սրբ. վեհին, զոր և նա եկեալ ասաց, որ էր այս, զի խանն այն խնդրեալ էր ի սրբ. վեհէն զարծաթահան վարպետ մի ճարել և յղել առ ինքն։ Ուստի՝ այժմ անորոշապէս գրեաց նմա թէ՝ զի՞նչ էր այն բանն զոր ասպարեալ էիր, զի վասն զբաղմանցս՝ բարւոքապէս չկարացի իմանալ, ուստի՝ գրեա պարզապէս՝ զի իմացայց։ Գրեալ էր և զորպիսութեանց Յովսէփ վարդապետին, այլ Յովսէփ վարդապետն ինքն ևս էր գրեալ որոյ զպատասխանին գրեաց ի հոկտեմբերի ԻԷ, զոր ծանոյց սմա։ Իսկ և՝ Ա արծաթեայ ազնիւ սկիհ՝ և Ա արծաթեայ խաչ էր յղեալ։ որք էին....։ Որոց վասն գրեաց զշնորհակալութիւնս և զօրհնութիւնս։ Զերկոսեանն ի մի պահաբան եղեալ ի ձեռն Դաւիթ Աղային, դրեցաք, և տուաք Մարկոս վարդապետին, յղել առ նա ի Թարվիզու։ Այլև՝ որպէս ասացեալ է բազմիցս ի յօգոստոսի ԻԲ, և յԱպրիլի ԺԹ վասն արգելման Հնդկաց Փիլիպպոս վարդապետին ի Բանդարբուշեռ։ Որքան անդ կայր նա՝ յամենայն կողմանէ շահեալ և մեծարեալ էին զնա քանի մի աղքատ տունքն՝ որք գոն անդ յազգէս մերմէ։ Որոց սակս գրէր քանիցս աղաչանօք Փիլիպպոս վարդապետն, գրել զթուղթ օրհնութեան առ նոսա։ Իսկ ինքն Փիլիպպոս վարդապետն ելեալ անտի յայսմ ամի՝ եկեալ էր ի Շիրազ, և անդրուստ գրեալ էր առ Մկրտիչ վարդապետն զթուղթ՝ ծանուցանելով զգալն իւր,

որ և այժմ ի ճանապարհի էր դեռ։ Այլ սրբ. վեհին գթացեալ խղճալի ժողովրդոցն այնոցիկ՝ թուղթ գրեաց առ նոսա, այսինքն՝ առ տէր Կարապետ քահանայն, առ պարոն Աւէտն, և առ պարոն Աբրահամն՝ առ այլ անդ ի Բանգերբուշեո եղեալ անձինսն։ Շնորհակալութիւն և օրհնութիւն յոյժ յոլով վասն շահելոյն և մխիթարելոյն իւրեանց զՓիլիպպոս վարդապետն, և վասն սիրոյն և հարազատութեանցն որք առ ս. Աթոռս։ Եւ պատուէր՝ ի նոյնս մնալ միշտ։ Նա և մխիթարութիւն ես վասն միայնութեան իւրեանց ի վայրոջն յայնմիկ, և վասն վշտացն՝ զորս կրէին ի խառնակութենէ կողմանցն։ Այլև որպէս յամսոյս Գ, նա և ի վերն ի թղթոջ մհ. Աստուածատուրին ասացաւ վասն թղթոցն Հնդկաց երկրի, (զորս ի ներքոյ գըրելոց եմ.) գրեալ ծանոյց սոցա։ Զի թէ այնպէս գիպեսցի, որ Մարկոս վարդապետն առ ինքեանս յղեսցէ զայն թուղթսն, ինքեանք ես կամ ի Բասրա առ մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայսն յղեսցեն՝ առ ի յղել ի Մատրաս. և կամ թէ այս ձեռնտու չլինիցի, և այսպէս ոչ արասցեն, ինքեանք իսկ ի ձեռն հաւատարիմ գնացողի յղեսցեն ի Մատրաս առ Գրիգոր Աղայն զիւր պահարանն, և զԲասրայու թուղթն յղեսցեն ի Բասրա առ մհ. Յարութիւն և Միքայէլ Աղայսն։ Իսկ՝ որպէս յանցեալ ամին ի մայիսի ԻԶ ասացաւ, թէ Շամիր Աղայն զտպագրատուն էր հաստատեալ ի Մատրաս, և սրբ. վեհն գրեաց նմա զգուշանալ ի տպելոյ զվտանգաւոր բանս, այժմ գրեալ այն ի գլուխն եկն, և յառաջացաւ գիրք մի ի տպարանէ անտի, որ կործանիչ էր ազգիս խղճալոյ։ Քանզի էր անդ խաբեբայ ոմն Մովսէս անուամբ, որում ասէին կացեալ առ հանգուցեալ Առաջնորդն Ջուղայու Գէորգ վարդապետն, և ի նմանէ սակաւ մի տեղեկացեալ ուսմանն։ Եւ էր տեղեաւ Ղարաբաղցի։ Որ թէպէտ սակաւ մի տեղեկացեալ էր ուսման և արհեստի, այլ էր մտաթափ՝ և պակաս ի խելաց, առանց շըրջահայեցութեան, և տղայաբարոյ։ Զսա յարգանօք ունէին անդ ի Մատրաս առ ինքեանս, իբր զնշանաւոր գիտուն ոմն, և որդի Շամիր Աղային Յակոբն՝ ի նմանէ ուսանէր զուսումն։ Եւ Շամիր Աղայն հաստատեալ զտպարան, զորդին իւր կացուցեալ էր ի վերայ նորա, և զայն դիւաբանն՝ ես՝ իբր կարգաւորօղ և սրբագրիչ տպեցելոցն ի տըպարանին։ Եւ զի էին սոքա ի հանգստութեան և յազատութեան սնեալք՝ և յիշխանութեան Քրիստոնէից, չկրեալք զվիշտս տաճկական, և ոչ զնեղութիւնս տեսեալ երբէք. մանաւանդ թէ՝ դրամոց տէր, վասն այնորիկ ի վեր քան զչափն իւրեանց ձըգտեալք, խորհէին հոգալ զհոգս ինչ, զի նորոգեսցի կործանեալ թագաւորութիւն հայոց ազգիս։ Ուստի՝ տուեալ շարադրել դիւաբանին այնմիկ զգիրք մի՝ կոչելով զանունն՝ Յորդորակ մանկանց Հայկազունեաց, առ ի սթափիլ ի վեհերոտեալ ծուլութենէ։ Գիտումն այս՝ իբր զի՝ երիտասարդք հայոց ազգիս ուսանիցին զպատերազմ, սիրով ընդ միմեանս միաբանիցին, և տացեն ընդ տաճիկս պատերազմ, և զսեփական երկիրն իւրեանց առնուցուն ի նոցանէ, և զթագաւորութիւն Հայոց ազգիս նորոգեսցեն։ Եւ կարգաւորեաց ազգիս՝ և իշխանաց՝ ծերոց՝ պառաւանց՝ նաև հարց և մարց խրատ և յորդորակ՝ առ ի յորդորիչ լինիլ մանկանց և երիտասարդաց ի սոյն, և ամենեքեանքն զսոյն մտածել՝ և յառաջացուցանել ջանալ։ Ի վերայ այսց՝ զնախնեաց մերոց թագաւորաց և իշխանաց զքաջութիւնսն բերէին օրինակ, և զամենայն երկիրս և զկալուածս հայոց՝ սահմանօք և պարագայիւք իւրեանց բացայայտէին, և ենթագատեալ իբրու օրինակի աղագաւ, թէ այսքան հարկս և զայլ ամենայն առս զորս առնուն տաճիկք յայսքանեաց գաւառաց և յայսքանեաց անձանց, եթէ ի միոյ գաւառէ և ի միում տարւոջ այսքան, ապա ի յայսքան գաւառաց և յայսքան ամս որքան։ Զամաչելով զթիւն ես դնէին, և աւաղէին թէ՝ եղուկ՝ որ անմտութեամբ տուաք յայսքան ամս զայսքան ինչս մեր օտար ազգի, և յորդորէին թէ՝ քաջացարուք առնուլ զերկիր ժառանգութեան մերոյ, զի մեզ մնասցին այսք։ Եւ զսոյն դիւաշունչ գիրս սփռէին յազգս մեր, չմտածելով ընաւ բախելոցն յիմարութեամբ, թէ կորուստ բերէ այս ազգիս։ Եւ առ Մէլիքսն Խամսայու ես վասն սոյն անհիմն դիտման գրէին բազմիցս զթուղթս, և յղէին զընծայս, (որպէս յանցեալ ամին ի մայիսի ԻԶ յիշեցեալ եղև։) որք և այժմ նորապէս գրեալ առ նոսա

զԹուղԹս՝ 'յայն գրքոյն ևս 'յղեալ էին, և անզուսպ յանդգնութեամբ գրէին զսոյն բանս ուր և կամէին։ Է՛ր և Գրիգոր Աղայն Խօջաջանեան՝ առուօղն ծախուց տպագրատան մերոյ և Թղթատան՝ կամակից նոցին։ Այլ Թէ կամաւ, Թէ ի նոցին Թախանձելոյ՝ չէր'յայտ։ Եւ ի յայս մինքան էին հաստատնապէս եգեալ զմիտս իւրեանց, մինչ դի, և առ սրբ. վեհն համարձակեալ դրեալ էին դայս, և Գրիգոր Աղայն ևս ձեռն էր եդեալ ի վերայ Թղթոյն։ Ցորում նախ պաղատէին կամակից լինիլ ինքեանց, ապա՝ զպէս պէս և զծիծաղելի առաջագրութիւնս գրէին սրբ. վեհին, Թէ այսոքիւք հնար է՝ զի մտադրութիւնս մեր ի գլուխ ելցէ, այսինքն է՝ միաբանեցուցանել նախ զՎրաց իշխանն ընդ Աղուանից իշխանացն։ Եւ Թուղթ դրել առ կայսերուհին Ռուսաց, և զօրինակ Թղթոյն ևս գրեալ էին, Թէ այսու օրինակաւ պարտիս գրել։ Ուսուցանէին և զկերպ իմանալոյ զհամար և զօրքանութիւն ազգիս, և հարկադրելոյ ի ձեռն . . . նուիրակաց՝ առ ի ուսանել զպատերազմ։ Եւ վասն նոցին զԹոշակս ժողովել տալոյ ի ձեռն Առաջնորդաց և խոստովանահարց ի ծածուկ, որպէս զի ամենայն անձն յամենայն կիւրակէս զմի մի փարայս տացեն։ Եւ ըստ Եւրոպացւոցն զկանոն և զսահման գնել ազգիս՝ Թարգմանեցուցանելով ի նոցունց, վասն աշխարհավարութեան՝ և զինուորութեան արհեստի, և կարգադրութեան դատաստանաց և այլոց, և նախարար մի կացուցանել բոլոր ազգիս, որ Թարց խորհրդոյ ծերակուտին և աւելի կամ պակաս քան զսահմանն Թէ արասցէ ինչ՝ կորուսցէ զգլուխ իւր։ Եւ այն նախարարն ժամանակաւոր լիցի, և ի միւս ամին՝ որիշ նախարար կացուսցի։ Ուսուցանէին ի վերայ այսց և զկերպ ի հաւան ածելոյ զբոլոր ազգս, ընտրել 'յամենայն գաւառաց ՃԲ արս խոհեմս, որք ի Ղարաբաղ առ Մէլիքսն երԹեալք՝ տացեն նոցա զընդունելութիւնս իւրեանց, և ընդունելին նոցա՝ բոլոր գաւառացն լիցին ընդունելիք։ Եւ բազում այսպիսի բանք, որ ո՞չ այլ ինչ էին, եԹէ ո՛չ բանք խելացնորից, որք չմտածելով զորպիսութիւնս ազգիս՝ Թէ ո՞ւր կան, ի ձեռս որոց, և ո՞րպիսի կերպիւ, զայսոսիկ մտածէին և գրէին։ Զորս իբրև ետես սրբ. վեհն և վերահասու եղև դիտմանցն, մեծ ցաւ և տրտմութիւն եղև ինքեան, հայելով ի 'յապագայ վնասն։ Վասնորոյ՝ առ ի խափանել զայս վնասաւոր գիտմունս նոցին, և ազատել զազգս ի կորստենէ, զԹուղԹ գրեաց առ նոսա յոյժ մեծագոյն և երկար, սաստիկ յանդիմանութեամբ և մեծագոյն մեղադրութեամբք. վասն չմտածելոյ զվախճան վնասաւոր դիտմանց իւրեանց, և առանց խոկացման 'յայսպիսի վնասաւոր իրս ձեռնարկելոյ։ Եւ մեծաւ նախատանօք ցուցանելով նոցա զանկարելութիւն առաջադրութեանցն, Թէ այգք ո՞րպէս են կարելիք լինիլ այժմու ժամանակիս. ծանուցանելով և զվնասն՝ որ 'յառաջանալոց էր ի նոցանէ։ Եւ՝ զի որպէս վերոյ ասացաք, զգիրքն զայն այն խելացնոր Մովսէսն էր շարադրեալ, այլ երկընչելով ի պատժոց սրբ. վեհին Թերևս, ոչ զիւր անունն էր մակագրեալ իբր շարադրող գրքոյն, այլ զանունն Ցակոբայ՝ որդւոյ Շահամիր Աղային։ Ուստի՝ յայսմանէ գիտացէք, զի առաջադրութիւնս այս և շարադրութիւն գրքոյն ի դիւաբախէն յայնմանէ էր 'յառաջացեալ, և նա էր 'յորդորեալ զնոսա 'յայս խորհուրդ, գովելով առաջի նոցա զքաջութիւնս Խամսայու մէլիքացն, որովհետև և ինքն Խամսայեցի էր, և հաւատացուցեալ էր նոցա, Թէ յորժամ միաբանիցին ընդ նոսա բոլոր ազգն հայոց՝ կարեն նոքա վճարել ինչ։ Վասնորոյ՝ առ այս մանաւանդ 'յոյժ մեղադիր եղև նոցա սրբ. վեհն, որք գոլով իշխանք փառաւորք՝ անուանիք և մեծատոհմք, այնպիսւոյ դիւաբախի դիտմանցն և խելացն հետևելով՝ Թարց մտածելոյ զվնասն ապագային, զայսոսիկ տպեալ և գրեալ էին։ Իսկ մեղադրութիւնքն էին յոյժ բազմազանք և պէսպիսակերպք՝ առ մի մի իւրաքանչիւր միտս վերոյգրեալ բանից տպեալ գըրքոյն՝ և առ սրբ. վեհն դրեալ Թղթոյն։ Զորս մի ըստ միոջէ աստէն գրելն՝ 'յոյժ երկարի։ Ուստի՝ Թողում խոհեմ մտաց՝ իմանալ վերոյգրեալ դիտմամբք Թղթոյն և գրոյն, Թէ զի՞նչ առ այնս գրել յարմարի։ Մանաւանդ՝ Թէ ընԹեռնուլ իսկ զնոյն ինքն դշարագրեալ բանն կամիցիս՝ ո՞վ գերարգոյ խնդրակդ բանիս, տես ի բոլորագրահամար շարագրանաց տետրոջն, յերեսն՝ ՈՀԶ, ՈՀԷ, ՈՀԸ, ՈՀԹ, ՈՁ, ՈՁԱ, ՈՁԲ, ՈՁԳ,

ՈՁԴ, ՈՁԵ, ՈՁԶ, ՈՁԷ, ՈՁԸ, ՈՁԹ, և ըդլիապէսն անդուստ իմա ընթերցմամբ։ Այլ զսակաւն որ ի վերջոյ՝ համառօտ ասացից աստէն։ Զի զկնի զերկոսեանն ի միասին մեզադրելոյ՝ դարձոյց զբանն յատկապէս առ Շամիր Աղայն վասն տպագրատանն, թէ տպագրատուն հաստատօղն կամ պարտի լինիլ ազգի գլուխ և հասարակաց հոգածու, որ զնախնեաց երանելեաց գրեանս տպիցէ ի լուսաւորութիւն ազգին, որպէս Զուղայեցի Յակոբ կաթողիկոսն։ Կամ պարտի լինիլ իմաստուն այր՝ անուանի և հռչակեալ գիտութեամբ, որ յինքէնէ զօգտաւէտ գրեանըս շարադրեալ տպեսցէ ի յօգուտ հասարակութեան։ Եւ կամ թէ՝ ե՛ն ես ոմանք, որք թէպէտ չե՛ն գիտուն, և ոչ հասարակաց գլուխ, այլ զտպագրատուն հաստատեալ՝ զհասարակաց ընդունելի գրեանս հրամանաւ մեծաւորաց տպեն և վաճառեն, առ ի գտանել այնու զապրուստ։ Արդ՝ դու ոչ հասարակաց տէր և հոգածու ես ասէ, ո՛չ նշանաւոր իմաստուն ոք, և ո՛չ ապրուստի կարօտ հասարակ անձն ոք, այլ ե՛ս դու ասէ ազնուատոհմ իշխան, և յամենայնի փարթամ և ունևոր, և գլխաւոր վաճառական մի աշխարհական՝ պարապեալ ի հոգս մարմնականս։ Ապա ի՞նչ հարկ էր քեզ, և կամ զի՞նչ վայել էր քումդ անուանն՝ տաժանմամբ մեծաւ գիր բերել տալ ի Ֆռանկստանոյ, և զտպագրատուն հաստատել, և զիշխանազուն որդի տպագրիչ կարգել՝ որ է գործ գռեհկի և յետին աղքատի։ Եւ տպեալ զայնպիսի գիրս, որ իցէ կործանիչ ազգի, շարադրեցեալ յումեմնէ ոչինչ և աննշան իմաստակէ։ Եւ առ այս ևս յանդիմանութիւն յոյժ յոլով։ Եւ ի վերջոյ այս թէ՝ պահեցի այժմ զպատիւդ խնայելով ի քեզ, թէպէտ դու ոչ ի մեզ խնայեցեր և ոչ ի քեզ։ Եւ զի ի թղթոջն իւրեանց յետ ամենայն զրեցելոցն գրէին թէ՝ ներեա մեզ, և համարձակախօսութեան և անառակութեան մերում մի բարկանար, և այլն։ Ուստի գրեաց թէ՝ այդ ձեր արարմունք և գրեցեալքդ եթէ իրաւամբ են, ընդ էր կոչէք չափազանցութիւն և անառակութիւն։ Երևի թէ՝ դուք ևս բռնադատեցեալ ի բնական խոհեմութենէ ճանաչէք զգոլն անիրաւամբ, վասնայնորիկ և զներումն խնդրէք։ Այլ չափազանց անառակութիւնն և հասարակամնաս մեղքն ոչ թողանի ասէ թարց գըլխաւոր ապաշխարութեան։ Ուրեմն՝ զորինչ ապաշխարութիւնս դնեմ քեզ ասէ՝ պարտիս կատարեալ յօժարութեամբ, զի ընկալցիս զկատարեալ ներումն և զթողութիւն։ Եւ ապաշխարանքն էին այսք։ Նախ՝ զի զգիրքն զայն այրեսցէ իսպառ, և զորս ցրուեալ է աստ և անդ՝ ջանասցէ և հնարեսցէ զայնս ևս այրել։ Երկրորդ՝ զի տպագրատունն զայն խափանեսցէ իսպառ։ Զի՛ ի Պօլիս՝ և երբեմն յԱմստրդամ, երբեմն ևս ի Զմիւռին մինչ զգրեանս տպեցին և տպեն, թարց հրամանի ոչ տպեն, իսկ դու զայդ նոր հաստատեցեր ասէ, և առանց զմեզ հարցանելոյ՝ զայդ կորստաբեր գիրքդ տպեցեր։ Իցէ թէ կամ դու՝ և կամ յետագայք քո այլ ևս այդպիսի բանս տպիցէք՝ չհարցանելով մեզ վասն սաստիկ հեռաւորութեան տեղւոյդ։ Ուրեմն, այն է լաւ՝ զի խափանիցէք, զի արհեստագէտ ևս չունիք, որ զմիտս բանին խոկացեալ՝ զօգտաւէտն և զանօգուտն ընտրիցէ։ Իսկ այդ իմաստակդ որ իբր տրհեստագէտ ձևացուցանէ զինքն, ոչ գիտէ զի՞նչ առնելն։ Ո՛ւստի՝ թարց արհեստի և խոկացման արպեցեալն ձեր, բաց ի յամօթոյ և ի վնասուց ոչինչ օգուտ բերէ ազգիս։ Եւ առ այս ևս յոյժ հարկ։ Երրորդ՝ այդպիսի վնասաւոր բանիւք այլ մի գրէք ասէ զթուղթս առ մէլիքսն Խամսայու։ Զի յերթևեկութենէ թղթոցն ձերոց ձայն ինչ ի վեր ելանէ ասէ թերևս, և կամ թուղթն ձեր ի ձեռս տաճկաց անկանի, որ լինի վնաս ազգիս։ Չորրորդ՝ պատուէր՝ զի այն անօգուտ մտածմունսն այլ մի ևս արասցեն, և մի հետևեսցին զկնի նորին, որ անօգուտ է և ի նանիր։ Հինգերորդ՝ զի զխաբեբայ Մովսէսն այն կամ վարեսցեն ի միջոյ իւրեանց, և կամ ի տեղի ոչընչի համարելով՝ մի մերձեցուսցեն առ ինքեանս, զի ամօթ մեծ է ձեզ ասէ՝ այդպիսւոյ մտաթափի մոլեկան խելացն հետևիլ և անկանիլ ի բերան ազգի։ Վերջապէս բանադրանք այն չիք Մովսիսին, և պատուէր՝ զի մի ոք հաղորդեսցի նմա բանիւ կամ գործով. և կցորդեսցի անիծից և դատապարտութեանց նորին։ Եւ ապա այս թէ՝ զայս հնգեսին պատուէրս մեր որք յամենայնի օգտաւէտք են, եթէ առնիցէք, օրհնեալ էք, և և՛ս լիջիք օրհնեալք յԱստուծոյ և ի մէնջ։ Ապա թէ զանց

արարեալ ո՛չ կատարեցէք, հարկ է ինձ այնուհետև հասարակածանոյց կոնդակաւ գրել յամենայն երկիր զանօրինակ արարմունս ձեր, և զիս անսլարտ և անմեղադրելի առնել։

Թուղթ ևս առ Գրիգոր Աղայն ի Մատրաս՝ յատկապէս։ Ի պատասխանի թղթոյն՝ զոր գրեալ էր ի ՌՄԻԳ թուոջն և ի փետրվարի ԻԳ, և ընդ Փիլիպպոս վարդապետին յղեալ, բայց որպէս ասացաւ ի վերոյ՝ Փիլիպպոս վարդապետն ի Բանդարբուշեռ արգելեցեալ՝ ոչ կարէր գալ. ուստի զթուղթսն յղեալ էր, որ էհաս աստ ի սոյն ամի, ի հոկտեմբերի Ե։ Տես ասէ այսու, զի յանցեալ ամին և ի մայիսին ելեալ է ի Բուշեռ, մինչև ցայս թիւս՝ որ է նոյեմբեր ամիսս, դեռ ևս լսեմք թէ անդ է։ Եւ այսու իմա զճանապարհաց որպէսն, և անմեղադիր արա զմեզ վասն ոչ հասանելոյն առ քեզ թղթոցն մերոց։ Քանզի՝ այս թուղթս զոր նա գրեալ էր, էր պատասխանի այնր թղթոյ սրբ. վեհին, որ գրեցաւ առ նա ի ՌՄԻԹ թուոջն մերում, և ի յօգոստոսի Լ։ Իսկ յետ այնորիկ որ ինչ գրեցեալք էին, չէին հասեալ առ նա։ Որք էին, ի ՌՄԻԳ, յԱպրիլի Ե, և ի սեպտեմբերի ելն։ Ի ՌՄԻԳ, յապրիլի Ա, և ի մայիսի ԻԶ՝ որ ընդ տէր Գէորգին յղեցաւ։ Որք ոչ էին հասեալ առ նա։ Զորս ծանոյց նմա պարագայիւք, նաև որ յայսմ ամի ի յապրիլի ԺԹ գրեաց ի վերայ Մարչիլիոյ՝ զայն ևս ծանոյց։ Ընդ սոսին ծանոյց և զարդելանիլն տէր Գէորգին ի Բաղտատ յանցեալ ամի Մայիսէն հետէ, հանդերձ թղթովքն և նորատիպ տօնացուցիւքն որք ընդ նմա։ (Որպէս ասացաւ յամսոյս Գ)։ Այլ զի նա յոյժ մեղադիր լինէր սրբ. վեհին վասն թուղթ ոչ հասուցանելոյն առ ինքն, գրելով թէ՝ եթէ ընդ Օսմանցւոց երկիրն ճանապարհ ոչ գոյ, Պարսից երկրաւն յղեա, կամ Բ մշակ վարձեա թուղթ տանօղ և բերօղ՝ վարձն ի վերայ իմ հաշուեա։ Ուստի՝ ծանոյց նմա սրբ. վեհն և զՊարսից երկրի խառնակիլն։ Զի մինչև ցարդ ռուսաց վրդովումն էր ի միջի, այժմ Օսմանցիք և Պարսիկք ընդ միմեանս ոգորին. եթէ զմեր կողմանց որպէսն չգիտես ասէ։ Բասրա ահա մերձ է ձեզ՝ և լուեալ ես թէ զինչ կրեաց, ըստ այնմ իմա և զայս կողմունքս։ Զի մինչ աշխարհ ամենայն ի խաղաղութեան կայր՝ պարսիկքն ի խռովութեան կային, այժմ որ ամենայն տեղիք խառնակեցեալք են, պարսիկքն ձրպէս լինին խաղաղ։ Բասրայու և Բաղդատու ճանապարհքն այնպէս փակեցան, որ ամենայն երթ և եկք հատան. փայակն ձրպէս էր անցանելոց և թուղթ բերելոց։ Եւ զայս ըստ սոցին բանս գրեաց՝ ծանուցանելով և զառաջիկայ գարնանս շփոթումն՝ զոր առնել սկսանէին Օսմանցիք և Պարսիկք։ Եւ ի վերայ երեր այսմ թէ՝ դուք ի հանգստեան և յապահովութեան գոլով ոչ գիտէք և ոչ տեսանէք զխզճութիւնս այս կողմնականացս, որք երանեն զմեռեալս։ Զի թէ գիտէիք ասէ, ապա՝ ոչ կամէիք և ոչ տայիք թոյլ այդ դիւաշունչ պղծոյդ զայդ կորստաբեր գիրքդ շարադրել և տպել՝ և ի մէջ ազգիս տարածանել. անիծեալ լիցի ասէ ծնունդն զորա, որ խայտառակ արար զմեզ և զազգս մեր ի մէջ ազգաց, և քակեաց իսպառ զտունս Հայոց։ Զորոյ զզժնեայ պտուղն յետոյ էք ասէ տեսանելոց օրստօրէ։ Այսքան գրեաց, և զերկարապէսն ասաց ի վերոյ գրեցեալ թղթոյն իմանալ, զոր ի վերայ Շամիրին և իւրեան գրեաց վասն այսր։ Եւ առ ի շահել զայս ևս գրեաց թէ՝ այս թօհմաթս քեզ չէ սիրելիդ իմ. գիտեմ միամիտ ես դու։ Այլ որովհետև դու ևս էիր ձեռն եդեալ ի վերայ այդ խելառական գրոյն, վասնայսորիկ ի վերայ երկուցդ գրեցի։ Եթէ այն դիւաբախ շարադրօղն ի ձեռս անկանէր, ձեզ ամենևին ոչինչ գրէի, զինչ օգուտ՝ որ ի ձեռս ոչ անկանի։ Յետ զայսոսիկ գրելոյ՝ ապա ի պատասխանիս բանից թղթոյն դարձոյց զբանսն. և գրեալ ծանոյց զհասանիլն առ ինքն յղեալ դրամոյն՝ որք մինչև ի ՌՄԻԳ թիւն մեր՝ և յելն սեպտեմբերի զորս անդ ևս գրեցաք։ Եւ յայն թղթոյն իմանալոց ես ասէ։ Իսկ յետ այնոբիկ՝ ի ՌՄԻԳ նոյն թուոջն և ի դեկտեմբերին դրամ էր յղեալ ասէ մհ. Յարութիւն Աղայն ի Մեծն Պօլիս, (ԲՃ) որ մեզ է հասեալ. (որպէս ասացեալ է այս ի ՌՄԻԳ և յապրիլի Ա)։ Այնուհետև ոչ գիր եմք տեսեալ ասէ՝ և ոչ այլ ինչ։ Եւ զի որպէս յառաջ՝ (որ մասամբ ինչ ասացեալ է յանցեալ ամին ի մայիս ԻԶ). նոյնպէս և այժմ խնդրէր հաստատել զդրամատունս, և Լատինացւոց լեզու և զգիր

տալ ուսանել։ Ուստի՝ եցոյց զանկարելի
գոլն. զի սակս ցան ե ցիր և անհանգիստ ե
վշտաբէկ լինելոյն միշտ՝ զինքեանս և զգիրս
ե զլեզուս իւրեանց ես մոռանան ասէ ազգն
մեր. այժմ ով է յամենայնի անզբաղ և ա-
զատ ի ցաւոց որ հեռևեալ ուսցի և զայլոցն։
Եւ առ այս կրկին գրեալ ծանոյց նմա զցաւս
ե զնեղութիւնս ազգիս մերոյ, թէ որք ի
Պարսկաստանս կան, և թէ որք ի Յունաս-
տանս, առ ի յիմանալ թէ ասացեալք և ա-
ռաջադրեալքն իւր անկարելիք են աստ և
յայս կողմունքս հաստատել և մնալ ի կայի։
Քանզի նա զոր ինչ տեսանէր անդ՝ ի մէջ
եւրոպացւոց կամ լսէր, փափագէր, զի յազ-
գի մերում ևս հաստատեսցի, ըստ երկրին և
ազգին նոցա հանգիստ և ապահով կարծելով
զազգս մեր և զերկիրս։ Ուստի և գրէր սրբ.
վեհին թէ՝ յԵւրոպա այսպէս և այնպէս
կարգ և կանոն են եղեալ նորապէս, և օր-
ըստօրէ պայծառացուցանեն զազգն իւրեանց։
Վասնորոյ և սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ շատ
ամօթ իւրեանց՝ որ զեռ շատ տգէտ են.
դու զնոցա կացութիւն մեզ տուր և զմեր
խղճութիւն նոցա, տես յայնժամ թէ ով լի-
նի իմաստուն։ Միայն մէկ ամիս ընդ իշ-
խանութեամբ տաճկաց անկանին։ Տես դու
յայնժամ, թէ զբանականութիւնն ևս կորուսա-
նեն, թէ ոչ։ Ի հարկէ թագաւորութիւն ունին
նոքա և հանգստութիւն, զոր ինչ և կամի-
ցին, կարեն կանոնել՝ հաստատել և
պահել տալ. և զոչ հնազանդօղս և զչր-
պահօղսն պատժեն չարաչար։ Մեր ազգն
ձեր, և ընդ ձեռամբ որոց, և յո՞նչ կացու-
թեան կան, գիտես արդեօք, մեք ում վերայ
դիցուք կանոն, և որպէս զամենեսեանս ընդ
նոյն կանոնաւ պարաւանդեսցուք. որք յոր-
քան ազգս տարածեալ կան, այնքան կեր-
պիւ բարս և բնութիւնս, զկանոնս և զվա-
րեցողութիւնս են ուսեալ։ Եւ այսու մտօք
շատ բան, առ ի զիջուցանել յանօգուտ դիտ-
մանցն։ Յետ այսոցիկ՝ ապա լիալիր շնոր-
հակալութիւն և օրհնութիւն վասն գերա-
զանցագոյն բարերարութեանց և շահեցո-
ղութեանցն, զոր ցուցեալ էր Փիլիպպոս վար-
դապետին. զոր նա գրեալ էր ի Բանգար-
րուշեռու։ Գրեաց ապա և զորպէսն թզթա-
շինացն, (զորոց և ի հոկտեմբերի ԻԸ և ի
վերոյս նորին ասացաք), թէ որպէս յամե-
նայնի ճնշեցին զմեզ ի շինել գործարանին,
և զոր ինչ ասացին՝ արարաք, և յորժամ
պարտ էր՝ զի զթուղթ հանեալ ուրախացու-
ցանէին զմեզ, սկսան զվատ թուղթ հանել
և զմեզ տրտմեցուցանել։ Միանգամ հանին՝
չհաւանեցաք, սկսան զնոր մազ կազմել, զի
այնու զլաւն հանցեն։ Հանին և այնու, այն
և՛ս չնմանեցաւ Ֆռանկստանու թղթոյն։ Եւ
մինչ ասէաք թէ՝ լաւ չէ այս, կատաղէին և
զսուտ պատճառս յօրինեալ ասէին։ Եւ թէ
զիարդ մինչ ասաց նոցա սրբ. վեհն թէ՝
որովհետև այդ է ձեր շնորհքն՝ ելէք գնացէք,
մեզ չէք պիտոյ, կամ թէ արհեստ ինչ ու-
նիք, ցուցէք մեզ. սկսան ասել թէ՝ մեզ ա-
սացին թէ՝ յայն երկրոջն այսպէս և այնպէս
լաւ իրք գոն, և առևտուր լինի, և լաւ
վաստաք առնէք, վասն այն իսկ յօժարեալ
եկաք։ Եւ թէ զիարդ (որպէս մասամբ ինչ
ի հոկտեմբերի ԺԱ ասացաւ). ցուցանէին
զպայմանագիր իւն Ֆռանկերէն, թէ զվեց
տարւոյ վարձս պարտիմք առնուլ ի քէն,
թէպէտ և այսօր յետս դարձցուք յետ հաս-
տատման գործարանին և ուսանելոյ աշա-
կերտացն։ Զի զմեզ այսպէս են պայմանեալ,
բաց ի ծախուց գալոյ և գնալոյ ճանապար-
հին։ Զոր թէ ոչ տայցէք ասէին, մեք ոչ
հանեմք զլաւ թուղթ՝ կամ զաշակերտս ու-
սուցանեմք։ Վեց տարւոյ վարձուց գիրն
տուք մեզ, որք ապա միամտեալք դայսոսիկ
արասցուք։ Եւ էր վարձ փոքերն՝ զոր
Յովաննէս և Մուսի Դէսիոռ կոչէին, ի տար-
ւոյն ՋԾ ղռուշ, (որպէս և ի հոկտեմբերի
ԻԸ ասացաւ), իսկ մեծին՝ զոր Յովսէփ և
Մուսի Բէյսօն կոչէին, ՌԾԾ ղռուշ։ Ըստ
իւրեանց ասիցն՝ որք ասէին թէ՝ ի պայմա-
նագրոջն մերում այսպէս է գրեցեալ։ Եւ դա-
սելն մեր նոցա թէ՝ զգալոյ ծախսն տուեալ
եմք, գնալոյն ևս տացուք. իսկ վեց տարւոյ
վարձ վասն է՞ր տամք, դուք զձեր արհեստն
ցուցէք, որքան և մնայք աստ, զվարձն ձեր
օրըստօրէ տամք, ապա թէ ձեր շինած թուղթն
այս է, մեզ պիտոյ չէ՝ ելէք և գնացէք։ Զայս
ամենայն գրեալ ծանոյց նմա։ Ապա և զգնալն
փոքր թղթաշինին՝ (որպէս ասացաւ ի հոկ-
տեմբերի ԻԸ). և առնուլն ի մէնջ զԳ ամաց
վարձն հանդերձ ծախիւք ճանապարհին։ Եւ
զնորին բարուց ժանտութիւնն և անպիտա-
նութիւնն ամենայնիւ։ Ծանոյց և զինչ ծա-

խւլն ի վերայ Նոցա ի Փաբիզու մինչև աստ։ Որք անդէն առեալ էին ի Լնուար Դրալէ կոչեցելոյն՝ 702 ղռուշ։ Ի Պօլիս ի պատրիարքէն՝ 960 ղռուշ։ Բերօղ Թաթարի վարձն 600 ղռուշ։ Թարջիմանի տարեկան վարձն 500 ղռուշ։ Ի Կարնոյ մինչև ցաստ՝ հանդերձ տուգանօքն զոր վասն Նոցա ետուք Կարսայ փաշային, 552 ղռուշ։ Որք յանցեալ ամին ի մայիսի ԻԶ ևս գրեցեալք են, թէպէտ փոքր ինչ այլապէս։ Ի Փարէզ առեալն ասէ՝ ի հարկէ քեզ վերայ հաշուեալ է ասէ Մուսի Դէւօն, բայց յայնմանէ ասէ՝ այլ ղրամ չտաս դու դոցա յայդր, զի մեք զամենն տուեալ եմք, թէ զվարձսն, և թէ զճանապարհածախսն։ Ցետոյ որքան լինիլն և որպէս լինիլն՝ լիովին գրելոց եմ քեզ ասէ։ Եւ աստ սակաւ մի աւաղեաց թէ՝ ափսոս դրամոյդ և աշխատանաց քո և մեր, որ ըստ յոլութեան դրամոյն և ըստ մեծութեան ջանից մերոց՝ զլաւագոյն արհեստ ոչ ցուցին աստ։ Նաև՝ զանգատ, որ Զ տղայս էաք տուեալ աշակերտ, զի ուսուսցեն զարհեստ և զլեզու, և ոչ ուսուցին։ Ի քէն ասէ զհաստատուն զիր ոչ ունիմ թէ զինչ էք պայմանեալ․ ինքեանք զանզգամութիւնս առնեն, մեք ոչ խօսիմք, զի մի ասիցեն թէ տարաւ և չկարաց շահել։ Ծանոյց և զգրելն առ ինքն ղգիր յայսմ ամի յապրիլի ԺԹ, և յղելն առ Շահրիմանենց Մարգարն։ Եւ զայս թուղթս ի վերայ Շիրազու յղելն ի ձեռն Մարկոս վարդապետին որ զընծայս տարաւ Քեարիմ խանին։ Եւ զայն թէ նա մեզ յամենայն ամի խալաթ յղէ, և մեք զընծայս։ Եւ զգրելն առ վէքիլի դրան մարդիկմն իրիջայս վասն Բասրայու ժողովրդոցն արզ առնել վէքիլին։ Եւ վասն այս թղթոցս գրելն զթուղթ առ Բուշեռցիսն, և առ մհ. Ցարութիւն և Միքայէլ Աղայսն, զի ի ձեռս որոց և հասցի՝ շուտով առ ինքն հասուսցեն։ Որք ամենեքեանքն ի վերն ասացան։ Եւ թէ՝ յայս Բ ամս թղթաշինօքն զրաղեալ՝ դիրք ոչ տպեցաք, այսուհետև ապեալ՝ յղելոց եմք առ քեզ զնոր դիրք։ Դ թապաղայ ևս նոր թուղթ յղեցաք, Բ յառաջին հանեալ փոքր տեսակէն, և Բ ի յետին հանեալ մեծ տեսակէն, Բ ևս ի նմանէ՝ տպեալ, մի թապաղայ ևս ի Ասպահանու թղթաշէնի հանեցելոյն։ Ար ի տեսանել՝ զի ոչ կարացին ֆռանկքն զլաւ թուղթ հանել։ Զի այդ է ասէ ֆռանկաց հանեալ լաւ թուղթն, այլ քան զայդ լաւն չկարացին հանել։ Վասնորոյ՝ ի մօտ աւուրքս զմեծ թղթաշէնն ևս ճանապարհելոց։ Եւ միամտութիւն թէ՝ թէպէտ ինքեանք մեր տղայոցն բան ոչ ցուցին, այլ տղայքն իմացան զկերպն, և քան զնոսա լաւ թուղթ են հանելոց, միամիտ լեր։ Տես ահա էջմիածնի անուամբն և նշանաւն՝ և քո արդեամբք և աշխատանօքդ զնոր թուղթ՝ և ուրախ լեր։ Ի ճակատ թղթատանն ևս տալոց եմ ի դրել զյիշատակդ, որպէս և ի վերայ տպագրատանն զի յաւիտեան փառաւորեսցի անուն քո։ Քանի հատ մուրհակաց օրինակս թարգմանեալ յԻնկլիզաց լեզուէ, յղեալ էր ի սրբագրել, և տպել՝ և յղել առ ինքն վասն օրինակի։ Զոր այնպէս արար, Ե հատ էր, յիւրաքանչիւրոցն Դ Դ հատ տպեալ յղեցաք։ Եւ գրեաց՝ զի թէ ընդունելի է անդ՝ շատ տպել տացէ՝ և յղեսցէ առ ի ծախիլ անդ։ Ծանոյց և զձրի բաժանելն յեկեղեցիս զտօնացոյցսն, նոյնպէս և Զբօսարանսն, և չծախելն բնաւ, թող այսպէս լիցի ասէ ի յիշատակ քոյ։ Այսուհետև և զոր ինչ և տպիցեմք, ոչ միայն զտպեցումն, այլ և զթուղթն ևս քոյդ արդեամբք և ջանացողութեամբք յառաջացեալ արձանագրելոց եմք ի յիշատակարանսն։ Զի անուն քո փառաւորեսցի, և մեք մասամբ ինչ թեթևասցուք ի պարտուց քոց։ Դու միայն միամիտ և ուրախ լեր, և մի կարճամտիր, զի և այսք փոքր յիշատակ չեն քեզ։ Որք եւս լաւապէս յառաջանալոց են։ Ցայս անյաջող երկրօջս այսքան ևս որ յառաջանայ, ի քո սերտ հաւատագոյն է։ Ուրեմն՝ տուր փառս Աստուծոյ։ Ծանոյց և չհասանիլն աստ չինեզինաց և ճոթեղինացն՝ զորս յղեալ ի Բասրա առ մհ. Ցարութիւն Աղայն յղել աստ։ (Որ յանցեալ ամին ի մայիսի ԻԴ ևս յիշեցաւ)։ Եւ զելանելն Փիլիպպոս վարդապետին ի Բուշեռու, և ի ճանապարհի լինիլն՝ (որպէս ասացաւ ի վերն)։ Խոստանալով ի գալն նորա ևս գրել զլիագոյն ուրախութիւնս։ Ծանոյց և զմահ Զուղայեցի Ղուկաս վարդապետին, որպէս և յամսոյս Դ Ալէքսանին և տէր Դէորգին։ Եւ չառնելն զկտակ, և զչերևիլն ուրեք կայից նորին։ Սակաւ ինչ և վասն Զուղայու Առաջնորդին, թէ Քեալանթար է և Տառուզայ, և ոչ վարդապետ և հոգևոր Առաջնորդ, (զորմէ ի վերն լիագոյն ասացաւ)։ Զկատարեալն

յետոյ իմանալոց ես ասէ։ Եւ զի Համաղանցի Յովաննէս վարդապետն որ ի վերն յօգոստոսի ԻԲ յիշեցաւ, մինչ ի Հնդիկս վիճեալ էր ընդ Ախթարմայից՝ (որպէս յանցեալ ամին ի մայիսի ԻԶ ե ի վերոյսն ասացաւ) գիրք էր շինեալ ընդդէմ նոցա. զոր և ընթեռւլ ցոյց ետ որբ. վեհին։ Բայց զի սակս անարհեստ լինելոյն խոտելի իմն էր, վասնորոյ՝ սա գրէր սրբ. վեհին թէ՝ խոտելի է այն, զի մեր ազգին ամօթ բերէ։ Առ որ գրեալ թէ՝ խոտեցի ե ես, և այրելի է, իւրեան ես ասացի։ Այդպիսի անկատարից մի հաւատայք ասէ և հետեւիք, ափսոս է ձեր անուանն. եթէ ամէն այդպիսեաց տղայաբարոյից և անկատարից շինեալ գիրքն գիրք լինէր ասէ, Ղուրաք և Դաւրիշք յօրն զհարիւրն կուշինէին։ Զայս և վասն վերոյիշեալ չիք Մովսէսի շինեալ գրքոյն ևս ասէր, և ոչ միայն վասն Յովաննէս վարդապետի դրքոյն։ Տեղւոյ քահանայից և իշխանացն ողջոյն գրեաց. և խոստացաւ ի գալ Փիլիպպոս վարդապետին զյատուկ յատուկ թուղթս գրել։ Օրինակն սորին ի բոլորագրահամար տետրոջն է։ Յերեսն ՈԻԲ, ՈԻԳ, ՈԻԴ, ՈԻԵ։ Փուսուլայ ևս գրեաց առ սա ըստ ձևոյ հաշուագրի և կարմիր կնքով։ Եւ ծանոյց զորքանութիւնս ծախուց թղթատանն՝ և թղթաշինացն՝ ամենայն պարագայիւք։ Թէ զայնս՝ որք մինչև ցարդ լեալ էին, (ԺԳ5ԾԷ) *) ե թէ որք ի յուղևորելն զմիւս թղթաշէնն ես՝ լինելոց էին։ Զոր իբր ենթադատմամբ գրեաց՝ թէ ինարկէ այսքան ևս մինչ յիւր երկիրն երթալն լինի։ Եւ թէ ցայժմ եղեալսն՝ թէ զենթադատեալսն վասն յետադայ ծախուցն, միացուցեալ գրեաց նմա, թէ այսքան ծախք եղեն ի վերայ թղթատանն, (ԺԶ)։ Քանզի իբրև ետես սրբ. վեհն թէ՝ մեծ թղթաշէնն ևս որ աստ մնաց՝ այլ ոչ հանէ զլաւ թուղթ՝ (որպէս ասացաւ ի վերն). սկսաւ ապա մտադրել՝ զի զնա ևս ուղևորեսցէ։ Ուստի՝ խօսեցաւ ընդ նմա և զճանապարհն առաջի եդ, թէ որովհետև այլ ոչ հանես զլաւ թուղթս՝ գնա յերկիր քո, և զԳ տարւոյ վարձն խոստացաւ տալ նմա ի Պօլիս՝ գրելով առ պատրիարքն, որ էր ԲՌՂՃԾ զոուշ։ Հանդերձ բոլոր ծախօք ճանապարհին մինչև յերկիր իւր։ Զոր ևս դրեալ ծանոյց սմա, հանդերձ ամենիւք նենգաւորութեամբքն, զորս արարին ընդ մեզ Բ թղթաշէնքն, միստմիոջէ, որպէս և ի հասարակ թղթոջն։ Եւ զի որպէս ի վերն ասացաք, զվեց տարւոյ վարձ խնդրէին թղթաշէնքն, իսկ մեք Գ տարւոյ վարձ ետուք. վասնորոյ՝ խնդրեաց այժմ մեծ թղթաշէնն ի սրբ. վեհէն թէ՝ այս պայմանագիրս ինձ Մուսի Գէւօն է տուեալ. դու որովհետև Գ տարւոյ վարձ տաս, մէկ թուղթ գրեա Մուսի Գէւօյին թէ՝ սա վեց տարւոյ վարձ խնդրէր՝ իբր թէ դու իցես այնպէս պայմանեալ. իսկ Գ տարւոյ վարձ ետուք։ Զի պայմանագիրն ֆռանկերէն էր, մեք չիմացաք զքո պայմանն. արդ՝ դու թէ զինչ ես պայմանեալ սմա, յայտնի դու տես։ Եւ սրբ. վեհն ևս խոստացաւ գրել, զոր և գրելոց իսկ յետ քանի աւուրց ի յուղևորելն զնա։ Ո՛ւստի՝ գրեալ ծանոյց սմա. ասելով թէ՝ ի քէն զհաստատուն գիր իմն ոչ ունէի, զի ոչ էիր գրեալ մեզ պարզապէս թէ զինչ են պայմանեալ սոցա։ Զի դու որովհետև մեզ Ղ տարի էիր դրեալ, թէպէտ նոքա Գ տարի չմնացին աստ, այլ Ի ամիս, սակայն մեք Գ տարւոյ վարձն ետուք։ Զի յիւրեանց յերկրէն յելանելոյն մինչև անդրէն յիւրեանց երկիրն հասանելըն՝ հազիւ թէ Գ տարի լինի ասէ, մեք Զ տարւոյ վարձ Ճը պիտի տամք։ Այժմ չգիտեմ ասէ թէ՝ ընդ Մուսի Գլաշին և այլոցն զորս զովէիր և հաւատարիմ ասէիր, զինչ պիտի խօսիս, կամ թողուս որ այնքան դրամս որ տուաք նոցա կորնչի իզուր։ Զի թէ սոքա լաւ վարպետք էին վասն այն յղեցին, ապա լաւ թուղթ ընդէ՞ր չհանին։ Իսկ եթէ վատ, ընդէ՞ր յղէին, այդ ծրպէս բարեկամութիւն է ասէ։ Վերջապէս ասէ՝ այն էր չար միտքն սոցա, զի այս արհեստս աստ մի յառաջասցի, այլ քան զիւրեանց գիտեցեալն լաւ հաստատելոց է ասէ Աստուծով որպէս տիպն, լեր միամիտ։ Ծանոյց նա ևս թէ՝ մինչ դոքա յետացան ի գալն աստ, մեք կարծեցաք թէ՝ այլ ոչ գան, ուստի՝ ի Քեարիմ խանէն զթղթաշէնս խնդրեցաք։ Յետոյ յանկարծ եկին ֆռանկքն, և նոքա ևս եկին, ուստի՝ այլ չկարացաք ջուղապ առնել, այլ նոցա ևս շինել ետուք զգործարանն։ Որք միամտութեամբ շինեալ յաւարտ հասուցին, զթուղթ հանին, և զաշակերտս ուսուցին և

*) Պայմանական նշաններ են։

դարձան. (որպէս ասացաւ այս յապրիլի ԺԶ)։ Որոց թէ տարեկան վարձ՝ (որ էր ԽՆ թուման Բ հոգւոցն). և թէ քեարխանի շինութեան և իւրեանց խարճ, ընդ ամենն եղև ԱԾԺ թուման։ Տե՛ս ասէ զտաճկաց միամտութիւնն, և զնորին չարամտութիւնն։ Որք միշտ ծաղր առնէին նոցա։ Իսկ նոքա զիւրեանցն յառաջացուցին որքան կարէին, և ֆռանկքն այսպէս նենգութիւնս արարին։ Եւ շատ բան առ այսոսիկ գրեալ ծանոյց նմա, ի Տաճկաց թղթոյն և յղեաց ի տեսանել։

Թուղթ ևս ի Բասրա առ Նէմիրաղեան մհ. Յարութիւն՝ և ս. Աթոռոյս վէքիլ Միքայէլ Աղայսն գրեաց, ի պատասխանի թղթոյն իւրեանց՝ զոր յայսմ ամի ի յունիսի Դ գրեալ և յղեալ էին ընդ Թիֆլիզեցի Կակալօյին՝ (որպէս յամսոյս Դ ևս ասացաւ)։ Որք մասամբ ինչ գրեալ էին զվիշտս իւրեանց զոր կրեալ էին յառմանէն Բասրայու։ Ուստի՝ գրեցաք առ նոսա զմխիթարութիւնս։ Եւ զի թուղթն այն՝ որ յանցեալ ամին ի յապրիլի ԻԵ գրեցաւ, առ նոսա վասն ընչից Շօռօթեցի հանգուցեալ Ղազարին, հասեալ էր առ նոսա. իսկ որքան զայն յառաջ յապրիլի Ա գրեցաւ այն տակաւին չէր հասեալ առ նոսա։ Այլ յետին գրովն զմիտս առաջնոյն ևս իմացեալ, գրեալ էին այժմ սրբ. վեհին զիւր գրեցելոցն զմիտսն, ապա և զպատասխանին։ Զի զոր ինչ ունի նա ասեն, ի ձեռս Ինկլիզաց է, և ի քաղաքս նոցա, աստ ոչինչ գոյ։ Մանաւանդ՝ ունի զխոստովանագիր՝ զոր արարեալ է ի ժամ մահուանն, որ է այժմ յԻնկլիզաց դատաստանատանն։ Իսկ այն Մկրտիչն զոր ի Պօլիս վարիս են շինեալ և մահսարաւ յղեալ, դեռ աստ ոչ էհաս։ Այլ թէ հասանիցի ևս աստ, նորա վարիսութիւնն, կամ ինչ թուղթ որ ունի ընդ ինքեան, ամենեքեան անընդունակ լինէն յԻնկլիզաց դատաստանումն, զի ի խոստովանագիրն հանգուցելոյն հայրն, և զոր ինչ դրեալ իցէ, այնպէս առնեն։ Արդ թէ ի խոստովանագիրն վարիսի համար բան լինի գրած, կամ թէ վասն ս. Աթոռոյդ կտակ լինիցի արարեալ, տալոց են նոքա առանց կարծեաց. իսկ թէ ոչ, ոչինչ տան ամենևին, և թէ խօսիցիմք ևս, անպատեհ և ընդ վայր լինի։ Բայց որքան կարեմք, մուզայէթ եմք լինելոց, զի թէ կտակ լինիցի վասն ս. Աթոռոյդ, առնուցումք և հասուցանիցեմք ի ս. Աթոռդ։ Ուստի և սրբ. վեհն գրեաց նոցա թէ՝ մեք յառաջ ուրիշ կերպիւ իմացեալ՝ այնպէս գրեցաք, այժմ թէ յընչից նորին բան ինչ հասանիցի ս. Աթոռոյս, բարի է, և թէ ոչ, ևս է բարի։ Իսկ և՝ զայն թուղթքն՝ զորս ի ՌՄԻԳ և ի սեպտեմբերի ելն գրեալ յղեցաք անդ ի վերայ Շիրազու ընդ Աւետիս վարդապետին, հասեալ էին անդ, յորոց այնք որք ի Բաղդատ պարտ էին հասանիլ՝ հասեալ էին. (որպէս ամսոյս Գ ևս ասացաւ)։ Իսկ սոքա զոչինչ գրէին բնաւ զայնցանէ։ Ուստի՝ տարակուսեալ առ այս սրբ. վեհին գրեաց առ նոսա գրել զորպէսն այն թղթոցն, և թէ՝ այնք որք ի Հնդիկս պարտ էին երթալ առ Գրիգոր Աղայն, յղեցի՞ն թէ ոչ։ Ծանոյց և ընդ աէր Գէորգին ևս գրելն զթուղթս, և յղելն զտօնացոյցս յանցեալ ամին ի մայիսի ԻԶ. և զարգելանիլն նորա ի Բաղդատ։ Եւ հարկ՝ զի թէ մինչև ցհասանիլն այս թղթոյս առ ինքեանս՝ այն թուղթքն և տօնացոյցքն հասեալ իցեն առ ինքեանս, և ինքեանք զԳրիգոր Աղայինն առ ինքն իցեն յղեալ, բարի է, և թէ ոչ, երբ առ ինքեանս հասցին, շուտով յղեսցեն։ Եւ ընդ այսց ծանոյց և զտարակոյսս Գրիգոր Աղային վասն ոչ ընկալնելոյն աստի զթուղթս, և գրելն իւր առ նա զթուղթ վասն այնր միամտութեան ի ձեռն Մարգար Աղային Շահրիմանեան ի վերայ Մարչիլիոյ՝ (որպէս ասացաւ յապրիլի ԺԹ)։ Նա և՝ այժմ ևս որ ընդ Մարկոս վարդապետին դրեաց զթուղթս՝ (որպէս ասացաւ ի վերն), ծանոյց սոցա, և պատուիրեաց՝ զի թէ առ ինքեանս յղեսցէ, յղեսցեն շուտով առ Գրիգոր Աղայն։ Եւ առ վէքիլն ընծայ յղելն, և արզայ գրելն, և վասն ինքեանց ևս գրելն զաղերսանս՝ գրեաց սոցա։ Գրեաց ի կարճոյ և զորպէսն թղթատանն, և զթղթաշինացն, և Բ թապաղայ նոր թուղթ ևս յղեաց ի տեսանել՝ որպէս և յամսոյս Գ։ Եւ վասն Փիլիպպոս վարդապետի սուրաթու արդեանցն զոր հասուցեալ էր առ ինքեանս, և ինքեանք յղեալ էին ի Պօլիս, (որպէս ասացաւ ի սեպտեմբերի ԺԶ, ի մայիսի ԻԶ և յապրիլի Ա յանցեալ ՌՄԻԴ թւոջն). այժմ գրէին թէ՝ ի Պօլիս հասանելոյ գիրն ունիմք, ի հարկէ առ քեզ է հասեալ մինչև ցայժմ։ Եւ սրբ. վեհն գրեաց զմիամտութիւն, թէ հասեալ է։ Եւ

զորպէսն Փիլիպպոս վարդապետին ևս ծանոյց՝ որ այժմ ի ճանապարհի էր, որպէս ի վերն ասացաւ։ Եւ խոստացաւ ի գալն նորա դրել զլիագոյն որպիսութիւնս զի և այժմ թէպէտ ունէի ասէ զբազում գրելիս, այլ զորպէսն ձեր ոչ գիտեմ, թէ յայդր էք տակաւին, թէ յայլուր տարան։ Եւ հարկեաց դրել զորպէսն իւրեանց. և թէ ուր կայացաւ վրդովումն տեղւոյն։ Եւ վասն Գրիգոր Աղայի յղեալ չինեղինացն և ճոթիցն՝ (որք ի Նորին թղթոջն ևս յիշեցան). էհարց մհ. Ցարութիւն Աղային յատկապէս՝ թէ զինչ արարիք յղեցիք՝ և մնացին ուրեք ի ճանապարհին սրդելեալք, կամ կորեան, թէ առ ձեզ է տակաւին։ Զմահ Ղուկաս վարդապետին ևս ծանոյց. (որպէս և ի վերն Գրիգոր Աղային, և յամսոյս Գ Ալէքսանին և տէր Գէորգին). և հարկեաց գրել զորպէսն և ուր լինելն կայից նորին թէ գիտիցեն։ Հարկեաց ևս գրել թէ՝ ոսկին զոր փոլիցայ առնեն ի Պոլիս ի ձեռն Ասլանին կամ Պօղոսին՝ զի տացեն Զաքարիա վարդապետին, ինչ ոսկի պիտի տային, Մսրայ զարմահպուպ՝ թէ Ստամբոլու, կամ քանի փարայով պիտի տային։ Զի այլ և այլ գնով երթայ ասէ ոսկին։

Փուսուլայ ևս գրեալ առ սոսա, ծանոյց զբան դիւաշունչ գրքոյն՝ զոր ի Մասրաս տպեալ էին, և թէ այնր աղագաւ զինչ էին գրեալ առ ինքն Շահամիր և Գրիգոր Ակայքն, և ինքն զինչ գրեաց նոցա։ Որպէս ի վերն ցուցաւ։ Զորս ի կարճոյ ծանոյց նոցա. զի ինքեանք զոր ինչ ըստ իւրեանց խոհեմութեանն տնօրինեսցեն, գրեսցեն նոցա այսր աղագաւ, գիտելով զխնամն մեծ։ Զայս ի հասարակ թղթոջն նոցա եղեալ, եւ Մարկոս վարդապետին ուրոյն, զի որպէս ի վերն ասացաւ, կամ ընդ Հնդկաց թղթոցն ի միասին, և կամ ուրոյն, անտի իսկ կամ ի վերայ Բուշեռու հասուսցէ առ նոսա։ Օրինակ փուսուլային է ի բոլորագրահամար տետրն, յերեսն ՌՁԹ, ՌՂ։ Իսկ Ե՝ փայակն այն որ վասն բանից Ջիմշիտ բէկին յղեցաւ ի Բայազիտ առ տէր Վահանն, զի զԱրապկերցի Սահակն յղեսցէ, (որպէս ասացաւ ի նոյեմբերի ԻԲ), դարձաւ անտի այժմ։ Սահակն ունելով զկասկած իմն աստ՝ չէր եկեալ, այլ տէր Վահանին գրեցուցեալ էր առ սրբ. վեհն զթուղթ թէ՝ այդ յիրաւի է, և մնացեալ ԺԹ թուման և կէսն իմ պարտքս է. զի քէշիշն ի Պօլիս է այժմ, և ես պարտիմ տալ, սակայն՝ մինչ ետուք մեզ զԱՃԺԳ թուման և կէսն նոցին վէքիլ Մարգարին, մնացեալ ԺԹ թուման և կիսոյն ևս Ա սանատ ետուք նմա, թէ Աստամբօլցի Գրիգորն մեզ տալոց է, զայս թամասուկս տուր և առ ի նմանէ ի Թարվէզ, եթէ տացէ, յայնժամ զայդ սանատղ նմա տուր, և մեր տուեալ ԱՃԼԳ թումանի սանատն ևս յղեա, և մեզ զքո ղապզն առ քեզ յղեցուք։ (Քանզի՝ մինչ տուեալ են նմա զԱՃԺԳ թուման և կէսն, և զԺԹ թուման և կէսի թամասուկն, զապզ են առեալ ի նմանէ, զի յորժամ զբոլոր դրամն տացեն, զթամասուկն առնուցուն, և զղապզն առ ինքն յղեսցեն։ Իսկ եթէ Գրիգորն ոչ տացէ զայն դրամն, ապա՝ զայդ ԺԹ թուման և կիսոյդ թամասուկն առ մեզ յղեա, և մեզ զայն ԺԹ թուման և կէսն ևս տուեալ զերծցուք։ Արդ՝ թէ Մարգարն զայն դրամն առեալ է ասեն ի Գրիգորէն, այլ զինչ խնդրեն ի մէնջ. թող մեր ԱՃԼԳ թուման սանատն մեզ տան։ Իսկ եթէ չէ առեալ, թող զայն ԺԹ թուման և կիսոյ թամասուկն բերեալ մեզ տան, հանդերձ մեր թամասուկովն և մեզ զայն դրամն ևս տամք։ Ուստի՝ և սրբ. վեհն զայս ծանոյց վերոյիշեցեալ Ռաջաբ տաճկին։ Եւ զի ընկերք սորա չեկին ի Թիֆլիզու՝ ըստ որում ի նոյեմբերի ԻԲ ասացաւ, և Մարկոս պետն ևս մնայր ընդ նոսա գնալ՝ և յուշացաւ։ Վասնորոյ՝ յղեաց այժմ սրբ. վեհն զՄարկոս պետն ևս զՌաջաբն ի Բայազիտ, և պատուիրեաց անդ ընդ տէր Վահանին և ընդ Սահակին խօսել վասն այս բանիս, և որպէս պատշաճն է՝ այնպէս հոգալ, և մնալ անդ աւուրս ինչ, եթէ ընկերքն եկեսցեն, ընդ նոսա երթալ, ապա թէ ոչ, միայն երկուքն գնալ։

Վասնորոյ՝ թուղթ ևս գրեաց առ տէր Վահանն և Սահակն, թէ ահա Ռաջաբն եկն, զայդ բանդ որպէս պատշաճն է՝ այնպէս հոգացէք։ Եւ զի ասաց այս տաճիկս թէ՝ բաց յայս դրամոյս, Ա թամասուկով ևս են դրամ տալոց Ջիմշիտ բէկին՝ Սահակն և ընկերք իւր, որ է ԲԾ թուման։ Յորմէ Կ թուման տուեալ են. և մնացեալ է ԱՃԽ թուման։ Բայց զթամասուկն վասն երկիւղի ճանապարհին ոչ բերի, թող զայն թամասուկի բանն ևս

սաղացուսցէ։ Ուստի՝ զայս ևս գրեալ ծանոյց սոցա սրբ. վեհն. զի թէ այսր աղագաւ ունի զրան ինչ ասելոյ՝ ասասցէ։ Ապա թէ ոչ, երթեալ բերցէ Ռաջարն զայն թամասուկն ևս, և նա զդրամն տացէ։ Եւ զորպէսն տոմսըն գրեսցեն։

Թուղթ ես Մկրտիչ վարդապետն հրամանաւ սրբ. վեհին գրեալ առ Փիլիպպոս վարդապետն, ետ Մարկոս վարդապետին, զի ի ճանապարհին ուր և հանդիպեսցի, տացէ նմա, որպէս զի ի վերայ Բայազիտու եկեսցէ ասա, և մի ի վերայ Մակուայ և Երևանու։ Գրեաց ևս սրբ. վեհն զթուղթ առ պ. Մէհրապն ի Խոյ, յանձնարարութիւն վասն Մարկոս վարդապետին, զի ընդ հաւատարիմ գնացողաց ուղևորեսցէ ի Թարվէզ։ Եկին Մարկոս վարդապետն և Ռաջարն ի ս. Աթոռոյս ի նոյեմբերի Զ։

Եկաւ հասաւ ի Գիատին, ի Մօլլաղարայ։

Օրհնութեան թուղթ գրեաց սրբ. վեհն ի Գիատին ի Մօլլաղարա գիւղն, առ կին ոմն Խաթուն անուամբ, որ ի ձեռն որդւոյն իւրոյ տէր Պօղոսին զհոգեբաժինն յղեալ էր՝ (Գ, Ժ)։ Ի դեկտեմբերի ԺԲ։

ՄԳ.

Առ Կարնոյ իշխանսն վասն ընդ միմեանս վիճոյն։

Կարնոյ Առաջնորդ Յարութիւն վարդապետն ըստ հրամանի սրբ. վեհին եկն ի ս. Աթոռս, (որպէս ասացաւ յամսոյս Ի, ի թղթոջ մհ. Փիլիպպոսին)։ Իսկ քահանայքն և իշխանքն տեղւոյն՝ ունելով ընդ միմեանս զվէճ և զխռովութիւնս վասն առաջնորդին, և այլ իրաց. մանաւանդ՝ վասն արդեանց և իրաւանց վանիցն և Առաջնորդին, գրեալ էին առ սրբ. վեհն դրադմակնիք թուղթս զանգատանաց ուրոյն. իշխանքն զքահանայիցն, ի ձեռն Առաջնորդին, ջատագով լինելով Առաջնորդին, և զհինգ քահանայս բանադրել խնդրելով. և քահանայքն զիշխանացն ի ձեռն յատուկ փոյեկի։ Եւ սրբ. վեհին ընթերցեալ զերկաքանչիւրոցն գրեալս, կարի զզուեցաւ զանհամութեանց նոցին, և անպատասխանի առնել կամեցաւ, քանզի՝ և յետ միջոցաց ինչ՝ ի հարկէ զնոր Առաջնորդ էր յղելոց անդ։

Ուստի՝ թուղթ գրեաց առ քահանայս և առ իշխանսն Կարնոյ ի կարճոյ։ Ծանուցանելով թէ՝ թուղթքն ձեր ինձ հասին, որոց թէպէտ չէի գրելոց զպատասխանիս, բայց ի ստիպմանէ փայեկին զայսոսիկ ի կարճոյ գրեցի. զի իմասջիք թէ՝ մեզ են հասեալ թուղթք ձեր։ Իսկ յորժամ ժամանակ գտեալ զնոր Առաջնորդ յղեսցուք, յայնժամ դրելոց եմք ընդ զկանոնս և զպատուէրս վասն այդպիսեաց անկարգութեանց, առ ի բառնալ ի միջոյ։ Եւ սակաւ ինչ մեղադրութիւն, որք չմտածելով զխառնակութիւն և զվրդովումն ներկայիս՝ որովք և ինքեանք իսկ տոչորէին, այսպիսեաց տարաձայնութեանց պարապեալք՝ զգլուխ իւր ևս ցաւեցուցանէին։ Իսկ ի քահանայից թղթոյն զայս ևս դրեաց ի լուսանցն թէ՝ զայսքանս այժմ առ հասարակութիւնդ ձեր գրեցաք, յետոյ առ ոմանս յատկացեալս յատկապէս եմք դրելոց։ Փուսուլայ ևս փոքրիկ առ մհ. Փիլիպպոսն գրեաց սրբ. վեհն, զի այժմ լուաք թէ՝ Պարսիկք առեալ են զԲաղդատ, ուստի՝ գրեաց սմա, զի ծանուսցէ փաշային, որովհետև միշտ զորպիսութիւնս խնդրէր նա ի սրբ. վեհէն։ Եւ թէ որպէս ասէին զկերպ առմանն, զայն ևս ծանոյց, գրելով թէ՝ այժմ այսպէս ասացին հաւաստելով, թէ յետոյ սուտ լինիցի, ոչ գիտեմք, սակայն՝ այսու ոճիւ զոր ասեն, երևի գոլ հաւաստի։ Զայս և զվերոյգրեալ Բ թուղթսն ուրոյն զմռեալ, ետուք Խլօ փայեկին անդուստ եկելոյ։ Տանիլ տալ իւրաքանչիւրոցն։ Որ եւ ի դեկտեմբերի ԺԳ։

ՄԳԱ.

Ի Թիֆլիզ՝ վասն տէր Աբրահամի եղբօր որդւոյ արարեալ չհասին, առ քահանայսն։

Ի Թիֆլիզու թուղթք ժամանեցին առ սրբ. վեհն, ի յԱռաջնորդէն և ի քահանայից բազմակնիք մահսար՝ միաբանութեամբ

երիցփոխան Մկրտումին, որ էր գանգատ զտէր Աբրահամէն, որ արարեալ էր զչհասիմն, զի եղբօր որդի նորին զոր Բարօ կոչէին, առեալ էր ղաղջիկ ոմն՝ որ էր չհաս։ Որում ընդդիմացեալ էին Առաջնորդն և քահանայքն առ ի խափանել, իսկ նոքա ի ձեռն Գեօրկի Արքայորդւոյն բռնութեամբ պսակեցուցեալ էին։ Ուստի՝ գրէին զգանգատ, և բանադրել խնդրէին զտէր Աբրահամն, իսկ Գեօրկի որդի Արքային որովհետև տիրութիւն էր արարեալ նոցա և պսակել տուեալ, տեսեալ թէ՝ Առաջնորդն և քահանայք գանգատ են դրեալ զտէր Աբրահամէն, ինքն ևս դնոցունց դրեալ առ սրբ. վեհն զգանգատ ըստ սաղրելոյ աէր Աբրահամին, առաքեալ էր ասա ի ձեռն Բամբակաձորու Մէլիք Շաքարօյին, գանգատն էր այս թէ՝ սոքա միշտ զչհաս և զօրինազանց բանս առնեն՝ խօսող և ղատօղ ոչ գոյ։ (Որ և գրեալ էր ղքանի կերպ օրինազանցութիւնս՝ թէ զայսոսիկ արարեալ են սոքա, միաբանութեամբ և խորհրդակցութեամբ Մկրտումին)։ Զի առաջնորդն և տէր Եսային և Մկրտումն միաբանեալ՝ զայսպիսի բանս յոլովս առնեն։ Իսկ այս՝ որ չէ ինչ օրինազանց, որպէս մեք քննեցաք կանոնագրովքն, սոքա օրինազանց վճռեն առ նախանձու տէր Աբրահամին։ Զի աէր Աբրահամն միշտ յանդիմանէ զտէր Եսային և զՄկրտումն վասն Հախպատու արդեանցն զորս ուտեն նոքա միշտ, նոքա ևս առ նախանձու այսպէս առնեն։ Եւ ինձ թէպէտ անվայելուչ էր խառնիլ ի բանս օրինացն ձերոց, այլ որովհետև և Արքայորդի եմ գաանեցեալ՝ և այս առ նախանձու էր եղեալ, և եկեալ բողոքեցին առ մեզ, վասնորոյ՝ հարկ էր մեզ հետևիլ այսմ, որ և հետևեցաք, և գրել առ քեզ զայս։ Եւ խնդրեալ էր չբարկանալ տէր Աբրահամին, և մանաւանդ գրեմ ասէ զթուղթ բարկութեան առ առաջնորդն և առ Մկրտումն, զի մի ևս զայսպիսի օրինազանց բանս արասցեն։ Եւ յայսմ կիտոջ ի Հաշտարխանու նուիրակ և Առաջնորդ Յովսէփ վարդապետէն թուղթ էր եկեալ ի ձեռն տէր Աբրահամին. նա զայն թուղթն յղեալ առ սրբ. վեհն, զիւր անցսն ևս գրէր, ամենայնիւ նոյն՝ զոր ինչ Արքայորդին գրեալ էր։ Եւ երդնոյր, թէ անտեղեակ եմ այս բանիս, և բնաւ ամենևին չեմ իմացեալ մինչև ցպսակելն՝ զոր Արքայի որդին է պսակեցուցեալ ի մէջ իւրոյ սենեկին։ Որ էր յայտնի ստութիւն և ուրացութիւն։ Ուստի և սրբ. վեհն զթուղթ գրեաց առ Աւագ քահանայսն Թիֆլիզու, յոյժ բարկութեամբ և մեղադրութեամբ ի պատասխանի թղթոյն իւրեանց։ Ըստ այսմ թէ՝ այդ ձեր վկայութիւնդ զոր վկայէք զտէր Աբրահամէն՝ եթէ ճշմարիտ է անախտ, յիրաւի պատժելի է նա՝ և ի կարգէն մերկացուցանելի։ Բայց ես և առ ամենայն Աւագ քահանայող ասեմ ըստ Քրիստոսի հրամանին թէ՝ անմեղն ի ձէնջ՝ նախ նա ընկեսցէ զքար ի վերայ դորա։ Զի թէ զամենիցդ արարմունսն ևս դրիցեմ, ամենեքեանքն սևերես ելանելոց էք ի յատենէ եթէ գիտիցէք զամօթ։ Զի՞նչ օգուտ, որ ոչ ես գրելոյ ժամանակ ունիմ և ոչ դուք զամօթ գիտէք։ Եւ ընդ այս յարակցեալ յիշեցոյց նոցա զառաջին անցսն ի կարճոյ, այսինքն՝ զչափազանց լրբիլ և օրինազանցիլն իւրեանց, և որոց աղագաւ բերելն իւր աստ զնոսա։ Եւ խրատելն, և առնուլն զձեռագիրս յամենիցն, և կանոնական կոնդակ գրելն ի քաղաքն, և փառաւորութեամբ յետս դարձուցանելն։ (որպէս ասացեալ է այս ամենայն երկարօրէն ի ՌՄԻԲ թուոջն, և ի նոյեմբերի ԺԷ։) Նաև զայն ամենայն նզովսն՝ որք ի ձեռագիրսն իւրեանց և ի կանոնական թուղթսն դրեցան յայնժամ։ Զորս գիտէք ասէ ամենեքեանքն, և միայն Քեալանթար իղիդ Եսային ոչ գիտէ զայս, որ ի վաղուցհետէ ուրացեալ է զսուրբ Աթոռս, և արտաքսեցեալ ի գաւթէ սորին, ի կարգէն լուծեալ, և ի Քրիստոնէական կրօնիցն մերկացեալ։ (պատճառ այսպէս դրելոյն էր՝ զի նա յայնժամ ոչ եկն ընդ այլ քահանայիցն, և ոչ անտի զձեռագիր յղեաց ընդ հասարակ քահանայից տեղւոյն, նա և ի ներքոյ յատուկ բարկութեան ևս էր, որպէս անդ և այլ յառաջ ասացեալ է։) Իսկ դուք մինչ զայսոսիկ գիտէք ասէ՝ այլ զի՞նչ պիտոյ է նորապէս զնզովս և զանէծս գրել առ Աբրահամն, և առ ձեզ ուխտազանցողդ։ Զի յօրէն յայնմանէ յորում ետուք դուք զայն ձեռագիրսն սաստիկ նզովիւք, և մեք զայն կանոնսն դրեցաք, դուք ոչ երբէք կացիք մնացիք ի ներքոյ սոյն ուխտիցն, այլ ամենեքեանքն օրինազանցեալք՝ անկայք ի ներքոյ

նզովից և դատապարտութեանց։ Եւ սո այս յոյժ ազդու. բանք և մեղադրութիւնք, որք ոչ երբեք ետուն ինքեան զհանգստութիւն, դրելով միշտ զայսպիսի զգլխացաւութիւնս, և առնելով օրըստօրէ զմեծամեծ օրինազանցութիւնս և զլրբութիւնս։ Ահա ասէ ամենեքեան խոտորեալ էք ի միասին և անպիտանացեալ։ Ընդ ձեզ և Առաջնորդդ ձեր, զի զդա առաքեցաք յայդր՝ զի սակաւ մի թեթեւացուք ի մշտաբուղխ անզգամութեանց ձերոց։ Արդ՝ դա ունի ի ձեռին զհայրապետական հրամանն մեր, ունի և զհրաման Աստուածազօր Արքային։ Եթէ ոչ է ընդ ձեզ ախտակցեալ՝ ընդէ՞ր ոչ զատէ զդատելին։ Իսկ եթէ անախտ է, և ոչ կարէ, ուրեմն՝ շատ անզգամ. և անամօթ է՝ որ ժամ. մի մնայ յայդըր։ Ուստի և դա ընդ ձեզ՝ ամենեքեանքն էք ապականեալք և անամօթք։ Վերջապէս այս թէ՝ եթէ Քրիստոնեայք էք, և ունիք հաւատս, և աւետարանին Քրիստոսի հաւատայք, և Քրիստոսի պատարագինչք քահանայք էք, և եթէ զիս Հայրապետ ձեզ ընդունիք, յանիծից իմոց երկնչիք՝ և օրհնութեան իմոյ ցանկայք. ապա՝ զայն կանոնականն զոր ետու ձեզ, և զձեռագիրսն զորս ետուք մեզ՝ (որոց օրինակքն ընդ ինքեանսն էին,) լաւապէս ընթերցեալ ի մէտ առջիք։ Ցորս պարզաբար իբր ի հայելւոջ տեսանէք զարժանին օրհնութեան և անիծից, և այլ ո՛չ կարօտիք վերակրկնելոյ. և ոչ ես դրելոց եմ առ ձեզ զպատասխանի ինչ՝ զոր ինչ և գրիցէք դուք։ Մանաւանդ՝ եթէ անգամ մի ես զայդպիսի սրտամաշական բանս գրիցէք մեզ՝ և կամ. ի պատճառս ձեր այլք գրեսցեն, յայնժամ, սեաւ կնիք թղթով յաակացուցանելոց եմ. զիւրաքանչիւրսդ ըստ արժանոյն։ Այժմ ասէ որ դուք զմիոյ ուրուք ապօրինաւորութիւնն էիք դրեալ ևնզովելի վճռեալ, նոքա ևս զձեր արարեալ քանի ապօրինաւորութիւնսն էին դրեալ ևնզովելի վճռեալ։ Զոր ահա առաքեցի առ ձեզ ասէ, զի տեսջիք և սևերես լինիջիք։ Արդ՝ և ես վճռեմ. ասէ և եզրափակեմ, զի որպէս ի ձէնջ գրեցեալ և ի նոցանէ արարեցեալ պսակն՝ ընդ նզովիւք են պսակօղն և պսակեցեալքն, պսակօղքն և հրամանատուքն։

Թուղթ մի ևս առ Թիֆլիզու Առաջնորդ Յովաննէս վարդապետն գրեաց սաստիկ մեղադրութեամբ և բարկութեամբ։ Եւ զի իբրս առաջադրեաց նմա, և պատուիրեաց առնել զմին յերկուցն, այսինքն՝ կամ զքաղաքն զայն բարեպէս կառավարել՝ ըստ որում ունի յինքենէ զկոնդակ կանոնական, և զհոգևոր հրաման, և յԱրքայէն ևս զհրաման. և զօրինազանցսն սանձել։ և զամենայն աւանդութիւնս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց պահել ի կարգի։ Եւ կամ. ելանել և գալ ի ս. Աթոռս առանց յամեցման։ Եւ թէ ոչ, անգամ. մի ևս եթէ զգլխացաւական գիր ինչ ընկալայ ի քաղաքէդ՝ ի քահանայից կամ. ի ժողովրդոց, զյետինն ասացից ասէ, ի մէջ քաղաքիդ խայտառակ եմ. առնելոց զքեզ՝ և ապա բերելոց ասա։ Եւ այլ բանք առ այս։ Զքահանայից թուղթն առ սա յղեաց զի զամենեսեան առ ինքն ժողովեալ, բացցէ, և ընթեռնուլ տացէ ի լուր ամենիցն։ Զոր ի ձեռն իւրեան յղեալ Ուլուխան փայեկին յղեցաք։ Գրեաց ևս վասն այսր զթուղթ առ Արքայորդի Գեօրգին Միրզայն, ի պատասխանի թղթոյն։ Նախ թէ՝ գրես դու թէ ձեր օրինաց և հոգևոր բան էր և Առաջնորդի գործ՝ դու է՞ր խառնեցար, թող Առաջնորդն հոգայ զիւր գործն։ Երկրորդ՝ որ գրես ասէ թէ՞ կանոնագրովք քննեցաք չհասութիւն ոչ գոյ, միթէ ի քաղաքդ այլ կանոնագիրք գոյ ասէ՝ զոր մեք չիցեմք ընթերցեալ։ Այլ գիտեմ ասէ և ընթերցեալ եմք, և մեծ օրինազանցութիւն է այդ, որպէս և դուք և ինքեանք գիտէք և վկայէք։ Երրորդ՝ գրես ասէ թէ՝ ի նախանձու արարին զայդ ընդ տէր Աբրահամին վասն Հալպատու արդեանցն, (որպէս ի վերն գրեցաւ։) այդ է մեծ զարմանք ասէ՝ որ դու այդքան իմացար, և տէր Աբրահամն ունի յայդմ. զմեծ իրաւունս, և վրէժխնդիր չեղեր՝ որ կարօղ էիր. այլ զայդ իրաւունքդ թողեալ ասէ՝ մէկ չհաս և օրինազանց պսակի աղագաւ տիրութիւն առնես տէր Աբրահամին, և գրես ևս զքանի չար օրինակս՝ թէ շատ է եղեալ այդպէս. վկայելով և դու ինքնին, թէ և այդ չհաս է։ Լաւ չէ՞ր ասէ՝ զի նոցա արարելոցն ևս վրէժխնդիր լինէիր և մեզ գրէիր ի պատժել. քան թէ՝ զնոցա արարեալ չարութիւնս օրինակ բերեալ՝ դու ևս պատճառ լինիս վերստին առնելոյ, և մեզ ևս գրես թոյլ տալ։ Զի՞նչ առնեմ. ասէ, մեք ի մէջ յօղնատեսակ ցաւոց. իսկ դոքա ելով ի ներքոյ տէրութեան և խնամոց ձերոց՝ աղատ

յամենայն ցաւոց, այդպիսի անկարգութեանց պարապին, վասն ախտից իւրեանց առ ձեզ անկանին, և դուք չգիտելով զորպէսն՝ մեզ իրիջայ դրէք։ Բոլոր ազգին մերոյ ցաւն զոր ասնիմք՝ այգ քաղաքիդ քահանայից մեզ հասուցեալ ցաւոցն ոչ լինի տասանորդ։ Մինչ կամիմք ասէ միոյն վրէժխնդիր լինիլ գան առ ձեզ անկանին, և դուք տէր կանգնեալ՝ իրիջայ գրէք մեզ՝ ե պատժել ոչ թողուք։ Վասնայսորիկ յօրէյօր կատաղին, և ի վատ անդր ընթանան։ Եւ զի խնդրէր բարկութեան թուղթ դրել Առաջնորդին և Մկրտումին որպէս ասացաւ, վասնորոյ դրեաց թէ՝ այն կանոնականն զոր սաստիկ նզովիւք դրեալ եմք յայդ քաղաքդ, այն բաւական է դոցա նզովք ե պատիժ, այլ վերստին գրել ինչ ոչ է պիտոյ։ Ծանոյց և դդրելն առ քահանայսն ևս զթուղթ, և գրեաց՝ զի զԱռաջնորդն ե զքահանայսն կոչեալ առ ինքն՝ առաջի իւր ընթեռնուլ տացէ։ Մէլիք Շաքարօյին ետուք զայս, որ ընդ վերոյիշեալ Ուլուխան փայեկին ել ի դեկտեմբերի ԺԵ։

ՄՂԲ.

Առ Իպիշ Բայրաղտարն ի Կարս։

Թուղթ գրեաց սրբ. վեհն ի Կարս առ Իպիշ Բայրաղտարն ի պատասխանի թղթոյն, որ դրեալ էր զանդէպ խնդիր իմն առ սրբ. վեհն։ Զի տղայքն մեր՝ որք ի հոկտեմբերի ԺԳ գնացին ի Կարս՝ և ի ԻԸ դարձան անտի, եկեալ էին ընդ նոսա քանի մի անձինք ի յուխտ, որք դարբին էին, և կարնեցիք։ Այժմ սա գրէր թէ՝ ձեր տղայքն որք զայն դարբին Մհին բերեալ են յայդր՝ շուտով յետս յղեա, զի ընդ նմա հաշիւ ունին մեր մարդիկքն։ Եւ տղայոցն թամբեհ արա, զի այդպէս բանս մի արասցեն. զի ի դալն աստ՝ վասն քոյդ խաթերն ոչ ոք ասէ նոցա ինչ։ Արդ մինչ այդպէս առնեն, լաւ չառնեն. մտածեա, ե որ ինչ լաւ է՝ զայն արա։ Վասնորոյ և սրբ. վեհն գրեաց նմա թէ՝ այս Աթոռոյս եկօղ և գնացօղն ով որոնէ՝ թէ դու ով ես, կամ ուստի ես եկեալ, զի այս ուխտատեղի է, և դրունքն բաց, ընդ մի դուռն եկօղն մտանէ՝ և ընդ միւսն գնացօղն ելանէ։ Զայդպիսի անպատեհ բանս մեր մարգիկքն ոչ արարեալ են, և ոչ առնեն։ Ի գալն այտի ուխտաւոր անուամբ եկեալ են ընդ նոսա, և աստ զուխտն իւրեանց արարեալ և ի Բայազիտ գնացեալ։ Ի՞նչ գիտէին թէ ով են և ի՞նչ մարդ։ Այգ կարծիքդ ի զուր է և ի մեր մարդկանցն հեռի։ Այսպէս գրեալ՝ յղեցաք առ նա ընդ նորին գրաբեր Թալնցի տաճկին, ի դեկտեմբերի ԻԱ։

ՄՂԳ.

Առ Բայազիտու Իսաղ փաշայն, եւ Խամուրայ Հասան բէկն, եւ Նուիրակ Ներսէս վարդապետն։

Բայազիտու նուիրակ Ներսէս վարդապետն գնացեալ ի Մանազկերա ի Մարմուս գիւղն, ի գիշերի միում գողք մտեալ ի տունն յորում լեալ էր նա, զառ ինքն գտանեցեալ ի պատրաստի եղեալ արդիւնսն դողացեալ և տարեալ էին։ Որ լեալ էր իբրու ԲՃԻ ղուռշ՝ թէ նաղտ ե թէ վէջ։ Եւ յորժամ Ներսէս վարդապետն ընդ տեղականացն գնացեալ առ տեղւոյ իշխօղ Ալի փաշայն՝ (որ յիշեցեալ է յօգոստոսի ԻԹ) ծանուցեալ էր նմա, նա սակաւ մի հետաքրքիր էր լեալ՝ և թոյլ տուեալ, զի յինքենէ էր լեալ բանն, որպէս հաւաստիւ կարծէին։ Ապա՝ մուբաշիր էր եղեալ ի վերայ նոյն գիւղականացն՝ առնուլ ի նուիրակէն ԱԾ ղուռշ, իբր ի տեղի զխասու, և զայն ես ի ծածուկ առեալ էր ինքն, և Բ ղուրախ տուեալ նուիրակին, թէ ահա զմնասդ ես տամ, զի աղքատ են, չունին որ տան։ Զորս թէպէտ չէր կամեցեալ առնուլ, այլ բռնութեամբ տուեալ էր։ Եւ նա յղեալ էր զայնս ի յԻւչքիլիսայն, և անգ մինն վասն յոյժ պառաւ լինելոյն՝ սատակեալ էր։ Իսկ անդ Բ նշանաւոր տաճիկք էին լեալ ի Կարնոյ, որք ասացեալ էին թէ՝ դու գրեա Խալիֆային, զի ղայդ բանդ գրեսցէ ի Կարին մհ. Փիլիպպոսին, զի և նա Սարասկեարին արզ արասցէ, և մուբաշիր հանեալ ի վերայ սորա՝ առնուցու։ Ահա մեք ևս վերահասու եմք, անդ ասելոց եմք։ Ուստի և նա գրեալ էր մհ. Փիլիպպոսին զայս բանս ըստ ասից

այն տաճկացն, և աստ ևս գրեալ և ծանուցեալ էր սրբ. վեհին զայս ասացեալ եղելութիւնքս, և խնդրեալ գրել զթուղթ իմն սաստի առ Մանազկերտու Ալի փաշայն՝ տալ յետս զայն գողացեալ դրամն և ինչսն. նա և գրել Սարասկեարին և մհ. Փիլիպպոսին ի Կարին, զի Սարասկեարն ևս մուրաշիր յղեսցէ ի վերայ նորա տալ զայն ինչսն։ Ո՛ւստի՝ և սրբ. վեհն զթուղթ մի գրեաց առ Ներսէս վարդապետն, խոստանալով առնել զխնդիրսն։ Եւ յուսադրելով ևս՝ զի մի՛ յուսահատիցի վասն այնր։ Եւ զի եկեալ էր այժմ ի Բայազիտ՝ և զարդիւնս ինչ տուեալ անդ տէր Վահանին (Ժ) առ ի հասուցանել ի ս. Աթոռս, և զղապզ էր խնդրեալ։ Վասն որոյ և սրբ. վեհն զայս թուղթս իբր զապզ գրեաց նմա, զի պահեսցէ առ ինքն վասն հաշիւ տալոյ։ Այլև՝ երթալոց էր այժմ ի Խամուր, վասնորոյ՝ խնդրէր ի սրբ. վեհէն գրել զթուղթ յանձնարարութեան վասն իւր առ բէկն տեղւոյն։ Եւ սրբ. վեհն ըստ խնդրոյն գրեաց զթուղթ յանձնարարութեան վասն նորա առ Հասանբէկն Խամուրու, ունիլ խընամս առ նա։ Զոր եղեալ ի մէջ թղթոյն՝ յղեցաք առ Ներսէս վարդապետն։ Այլև՝ ի յօգոստոսի ԺԵ Ա օրհնութեան թուղթ գըրեաց սրբ. վեհն ի Նահիա ի յԱշղալայ գիւղն առ Մէհրօ անուամբ այր ոմն, որ Ա որձ ձագ էր տուեալ ս. Աթոռոյս ի ձեռն Նուիրակ Գալուստ վարդապետին. զոր յղեցաք առ Ներսէս վարդապետն հասուցանել առ նա։ Եւ նա տուեալ ումեմն՝ տանիլ և տալ նմա, կորուսեալ էր տանօղն ի ճանապարհին, ուստի՝ վերստին խնդրեալ էր գրել։ Եւ սրբ. վեհն զՕրհնութեան թուղթ վերստին գրեալ առ նա՝ յղեցաք ի ձեռն Ներսէս վարդապետին առ նա հասուցանել։

Օրհնութեան թուղթ ևս ի Թարվէզ առ Համազանցի պարոն Յովաննէսն գրեաց սրբ. վեհն, որ լուսագին էր յղեալ վասն սրբոյ Աթոռոյս (գ) ի ձեռն ի Բայազիտ բնակեալ Մակար անուամբ առն միոյ՝ որ բերեալ անդ՝ տուեալ էր տէր Վահանին, և նա մեզ հասոյց։ Զայս յղեցաք առ տէր Վահանն հանդերձ թղթովք Ներսէս վարդապետին, հասուցանել առ իւրաքանչիւրսն։ Նախանցեալ Նուիրակ Գալուստ վարդապետի դաւթարն ևս խնդրեալ էր Ներսէս վարդապետն, զոր և յղեցաք, զի զընդ իւր ունեցեալն՝ (որ էր օրինակեալ ի նմանէ) դողքն տարեալ էին։ Իսկ այժմ՝ Բայազիտու Իսաղ փաշայն ընծայ էր յղեալ վասն խանին մերոյ ի ձեռն Ինիւղ բէկի որդի Մահմատբէկին, Ա ձի ևս սրբ. վեհին էր յղեալ ընծայ, և սիրոյ գիր ևս գրեալ։ Թուղթ ևս սիրոյ սրբ. վեհըն գրեաց առ նա, և շնորհակալ եղև վասն ձիոյն։ Զոր նոյն Մահմատ բէկի ձեռամբն յղեցաք։ Իսկ զԲայազիտու թուղթսն առ տէր Վահանն յղեցաք ընդ Ենկօյին՝ որ ընդ Մահմատ բէկին էր։ Ի դեկտեմբերի ԻԳ։

ՄԳԴ.

Ի յԱխլցխա առ Կարապետ վարդապետն, եւ ի Կարս եւ ի Կարին։

Ղօշավանից Առաջնորդ Կարապետ վարդապետն որ գնաց ի յԱխլցխայ՝ (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԻԸ, և ի նոյեմբերի ԻԱ ևս։) գրեալ էր այժմ զանցից տեղւոյն և զորպէսն իւր առ սրբ. վեհն, զի թէպէտ ընկալեալ էին զնա սիրով, այլ ոչ որպէս յառաջ խոստացեալ էին Կարապետ վարդապետին՝ ցուցեալ էին այժմ զհնազանդութիւնս հրամանաց սրբ. վեհին։ Եւ փաշայն ակնադէտ լինէր՝ զի Կարապետ վարդապետն բացցէ անդ զդուռն կռուոյ ընդ նոսա։ Զի յերկուց կողմանցն ևս առնուցու զդրամս։ Այլ որովհետև զգուշացուցեալ էր զնա սրբ. վեհըն (որպէս ասացաւ ի հոկտեմբերի ԻԸ,) վասնորոյ՝ չէր ինչ խօսեցեալ անդ։ Եւ գըրեալ էր զթուղթ առ սրբ. վեհն, զի զոր ինչ հրամայեսցէ՝ այնպէս արասցէ։ Ուստի՝ գրեաց առ նա սրբ. վեհն, ի պատասխանի թղթոյն, և ըստ որում նա կամէր և գրեալ էր սրբ. վեհին, այնպէս գրեաց։ Որպէս զի թէ հնազանդեսցին հրամանաց իւրոց՝ և զկանոնս և զաւանդութիւնս սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց յանձն առնուցուն, ապա՝ հովուեսցէ զնոսա որպէս Առաջնորդ, և զիրաւունս նոցա առնուցու։ Ապա թէ ոչ, ելցէ ի միջոյ նոցա և բան ինչ ոչ խօսեսցի։ Յետոյ ասէ զոր ինչարդարութիւնն պահանջէ՝ այնպէս եմք առնելոց։ Եւ թէ՝ դու մեզ գրեցեր թէ՝ ինձ

դիր են գրեալ և յանձն առեալ հնազանդիլ յամենայնի ս. Աթոռոյդ և հրամանաց քոց, և ի մէնջ հրաման խնդրեցեր գնալ։ Ապա զի՞նչ է այժմ զոր գրես։ Ուրեմն՝ եթէ հնազանդիլն հրամանաց մերոց, և քանի մի տուն խղճալի մերայնոցն ես եթէ թարց գիտելոյ և խառնելոյ Տաճկացն զպատշաճաւոր ժամատեղի իմն ցուցանեն, բարի է, ապա և ինքեանք եկեսցեն աստ և գնասցեն չմնալով ի մէնջ օտար, զի սիրելի որդիք են մեր։ Ապա թէ այսպէս ոչ արասցեն, ելեալ եկեսցես ասէ որպէս դրեցաք։ Գրեաց ես առ սաղփուսուլայ առանձնօրէն, պատուէր՝ զի թէ դէպ լիցի, դհասարակ թուղթն ցուցցէ նոցա։ Իսկ ինքն թէ կարիցէ սիրով ուղղել՝ լաւ է, և թէ ոչ, խստագոյնս ինչ մի խօսիցի, այլ ջանասցէ կերպիւ մի ելանել անտի։ Զի գիտես ասէ այժմ զորպէսն Օսմանցւոց՝ որ խօսելոյ ժամանակ չէ. խառնեցեալ են յամենուստ, և եթէ զդուռն իմն բացցուք յայդր, փաշայն այնքան տայ տեղիք, մինչև զդրամս մեր առնուցու ի զուր, այնուհետև այլ ոչ ինչ է առնելոց դոցա։ Եւ՝ զի գրէր թէ՝ փաշայն թօհմաթ արար՝ թէ Խալիֆայն ընդ այլ փաշայսն սէր առնէ՝ և ընդ մեզ ոչ։ Գրեաց թէ՝ եթէ այլ ևս ասասցէ զայդ, դու ևս ասա թէ՝ յիրաւի է, Խալիֆայն ընդ Կարսայ՝ Կարնոյ՝ Բայազիտու՝ և Վանայ փաշայիցն բարեկամութիւնս առնէ, և ընդ այլ իշխօղս։ Որոյ պատճառն է՝ զի նոքա միշտ գրեն և բարեկամութիւնս առնեն, ինքն ևս առնէ, և իրերաց ընծայս ևս յղեն։ Մանաւանդ՝ զոր ինչ խնդիրս գրէ նոցա, անյապաղ կատարեն։ Իսկ դու նման նոցա ոչ առնես։ Մանաւանդ՝ քեզ գիր է գրեալ խնդրանօք, զի Ա եկեղեցի տայցես քանի մի տուն խեղճ հայերին, դու ոչ տուեալ ես, և ոչ թղթոյն պատասխանի գրեալ։ Եւ քո մարդիկքն ևս մինչ գնան անդ առ խանն՝ անդ ևս հանդիպին, և նա ըստ արժանեացն պատուէ և մեծարէ, և զխնդիրսն իւր նոցա ևս բերանով ասացեալ է ասել քեզ, իսկ ի քէն ոչ թղթով և ոչ բերանով բան ինչ չէ լուեալ։ Ահա նա յիւրոյ կողմանէն որ ինչ պարտն է՝ առնէ զբարեկամութիւնս, իսկ դու ոչ առնես։ Զայս յղեցաք առ նա ի ձեռն Գեամալմազին՝ զոր նա յղեալ էր անտի յատկապէս վասն այսր։ Իսկ և Իբրահիմ Աֆանտին գնացեալ էր ի Հասանղալայ առ Սարասկեարն, զի և նա ի Կարնոյ իբր խռովեալ՝ և ի չարագլխաց տեղւոյն անընդունակ լեալ՝ ելեալ ի Կարնոյ անդ էր եկեալ։ Եւ այժմ ի մեծէն Պօլսոյ Զ հազարապետք եկեալ զօրօք՝ նստէին ի Բասէն. և Սարասկեարն կոչեալ էր զնա անդ՝ տալ նոցա զռոճիկս։ Եւ ի սոյն միջոցիս զՍարասկեարի Սարասկեարութիւնն կատարեալ Արքային Օսմանցւոց խնդրեալ էր ի Պօլիս երթալ. և զՋանիկցի Հաճի Ալիփաշայն արարեալ էր Սարասկեար՝ և զփաշայութիւնն Կարնոյ տուեալ նմա, գալ ծանր բազմութեամբ զօրաց, զչարագլուխսն Կարնոյ կոտորել, և գալ ի Կարս, ժողովել զբազմութիւնս զօրաց շրջակայ երկրացն ամենից, և ի յեկօղ գարնանն ելանել ի վերայ Պարսից ի պատերազմ։ Եւ զի այս այսպէս էր լեալ, և ձայն ելանէր՝ թէ պարսիկքն առեալ են զԲաղդատ, (որպէս ասացաւ յամսոյս ԺԳ։) վասնորոյ՝ գրեալ էր Իբրահիմ Աֆանտին ի Կարս առ որդիսն իւր զթուղթ, զի զդիր գրեալ առ սրբ. վեհն, հարցցեն զորպիսութիւնս և գրեսցեն ինքեանն։ Վասնորոյ՝ և նոքա գրեալ էին, և Գէորկին ևս գրեցուցեալ, և զյատուկ փայակ յղեալ։

Ուստի՝ և սրբ. վեհն գրեաց զթուղթ առ Նաման և Մուստաֆայ որդիս Իբրահիմ աֆանտուն, և ծանոյց զասութիւնն ներկայիս ի կարճոյ, և զերկարապէսն գրեաց ի Գէորգէն իմանալ։

Իսկ զփուսուլայ առ Գէորգն դրեաց իւրով ձեռամբ, և երկարապէս ծանոյց զասութիւնն ներկայիս վասն առմանն Բաղդատու, և թէ՝ հաւաստին դեռ չէ յայտնի։ Եւ զայս կողմանցս որպէսն ևս դրեաց ի կարճոյ՝ զի խնդրէին։ Եւ զնոցին թուղթն ևս առ սա յղեաց՝ տալ նոցա, և ասել զգրեալքս։

Թուղթ մի ևս գրեաց դարձեալ առ Գէորգն, ի պատասխանի թղթոյն՝ զոր ընդ Գեամալմազին էր գրեալ Բ օր յառաջ։ Զի ի Կարնոյ մհ. Փիլիպպոսն դրամ էր յղեալ ի Կարս առ Կօշտօ Կարապետն. (ա͞ծ) հասուցանել ի ս. Աթոռս։ Եւ նա ծանուցեալ էր Գէորգին, և Գէորգն գրեալ էր սրբ. վեհին զթուանկչիս յղել ի Ղօշավանք, զի յղեսցեն անտի առ նոսա, և նոքա բերցեն աստ։ Եւ սրբ. վեհն վասն այսր փուսուլայ գրեաց առ նա՝ զի թարց հուչակելոյ առ ինքն պահեսցէ մինչև զմարդ յղեալ բերցուք։ Եւ զի տեղ-

ւոյն փաշայն յառաջ կամէր զՋորիս յղել աստ, առ ի տանել զհազար Թիլանի բրինձ։ Եւ մեք յառաջ գրեցաք Դէորգին, թէ այժմ չալթուկն դեռ չեն ծեծեալ երկրացիքս, և բրինձ թանկ է, թող յառաջ մարդ ղայ առնու և պատրաստէ, ապա թէ Ջորիքն ղան և տանեն։ Վասնորոյ՝ այժմ Դէորղն երկնչելով թէ՝ թերևս ի գնալն անդ Թուանկչոյն, փաշայն իմասցի, և զՋորիսն ընդ նոսա յղեսցէ, վասն այն գրէր թէ՝ Թուանկչիքն աստ չգան։ Այլ սրբազան վեհն ղրեաց ի փուսուլայոջս թէ՝ եթէ կամին առնուլ, թող յառաջ մարդն գայ և պատրաստէ՝ ապա Ջորիքն դան և տանեն, որպէս դրեցաք աստ յառաջ։ Ծանոյց և զհասանիլն առ ինքն Բց այլ ևս թղթոց իւրոց քան զայս յառաջ եկելոց։ Եւ շնորհակալեցաւ վասն Թզթաշէն փոքր ֆռանկին, զոր յղեալ էին ընդ թաթարաց ի Պօլիս՝ (որպէս ասացաւ ի նոյեմբերի ԻԱ)։ Եւ տուեալ էին թաթարին ԶԷ ղռուշ. զտասն ղռուշն անդ էր տուեալ Դէորղն, և ՀԵ զըռուշն պատրիարքին էր դրեալ զի տացէ։ (Ընդ որում գրեցաւ առ նա պատուէր ի հոկտեմբերի ԻԸ)։ Ծանոյց և զանցսն Ախըլցխայու, որ ի վերն գրեցաւ, զի ասցէ Աֆանտուն և տղայոցն, զի իմասցին թէ՝ Սուլէյման փաշայն իւրեանց գրեցելոյն չէ անսացեալ. այլ ագահ մտօք աչքն առ արծաթն է յառեալ՝ զի թէ մեք բան ինչ բացցուք անդ՝ փող առնուցու զմեզ խաբելով՝ և թուլատրեսցէ։ Նաև գրէր թէ՝ այս. դրէս յառաջ՝ այն թուղթն զոր դրեալ էիր առ մհ. Փիլիպպոսն՝ առ նա յղեցի։ Ուստի գըրեաց սրբ. վեհն,զի այն թուղթն է լեալ՝ զոր ի նոյեմբերի ԻԱ ղրեցաք, ծանուսցէ։ (Մըկրտիչ վարդապետն ևս Դ հոխայ առչասպ խնդրեաց)։ Այլ և ի մհ. Փիլիպպոսէն ևս թուղթ էր եկեալ՝ զոր Գէորգն էր յղեալ աստ։ Վասնորոյ՝ զթուղթ գրեաց առ նոյն մհ. Փիլիպպոսն և Խօջայ Առաքելն, ի պատասխանի այնր թղթոյն, զոր ի նոյեմբերի ԻԹ էին գրեալ։ Նախապէս պատուէր՝ զի յորժամ գրեսցեն զպատասխանի թղթոյն իւրոյ, զայն յատկապէս գրեսցեն թէ՝ մեր ձր թուղթն է հասեալ առ ինքեանս, գրելով թէ՝ այս ինչ ամսոյ յայսքանումն դրեալ թուղթդ էհաս, զի գիտասցուք աստ թէ՝ մեր ո՞ր թուղթն է հասեալ առ ձեզ՝ և ձրն ոչ։ Եւ զի ի նոյեմբերի Թ և ի ԻԱ, ի դեկտեմբերի Դ և ի ԺԴ թուղթքն որք գրեցան առ սոսա՝ դեռ և ոչ մինն՝ չէին հասեալք նոցա։ Ծանոյց զգրելն նոցին։ Եւ զի չէին հասեալք, խնդրէին վասն նուիրակացն Թօխաթու՝ Ուռումէլու և Կարնոյ, գրեաց զյղելըն զայնս ի նոյեմբերի Թ, և ի դեկտեմբերի Դ։ Եւ վասն վերոյիշեալ ղրամոյ ի Կարս յղելոյն գրէին, գրեաց զմիամտութիւն, թէ մարդ յղելոց և բերելոց եմք։ Եւ զի Թօխաթու հին նուիրակ Պետրոս վարդապետն (որ յիշեցաւ ի նոյեմբերի Թ), եկեալ էր այժմ ի Կարին, և դրեալ էր սրբ. վեհին, թէ յետ քանի աւուրց գալոց եմ։ Վասնորոյ՝ դրեաց սոցա սրբ. վեհն թէ՝ կարծելով թէ յայդբուստ ելեալ իցէ յայսկոյս՝ թուղթ ոչ գըրեցաք. այլ թէ դեռ յայդր է, ողջոյն տուք զմէնջ և ընդ նմա զգրամ յղեցէք։ Յիշեցոյց ևս նոցա զայն՝ զոր ի դեկտեմբերի Դ գրեանց ինքեանց վասն Յամթայ Առաջնորդ Պետրոս վարդապետին։ Եւ որպէս յայնժամ, նոյնպէս և այժմ հարկեաց փօլիցայ առնել ի վերայ նորա. (ձ) զի մեք հասուցեալ եմք աստ Պատրիարքին ըստ աղաչանաց իւրոց։ Եւ թամասուկն նորին առ մեզ է աստ, երբ և խնդրիցէք, յղելոց եմք առ ձեզ։

Փուսուլայ ևս գրեաց առ մհ. Փիլիպպոսն վասն Թօխաթու նուիրակ Պետրոս պետին. Փուսուլայ ևս դարձեալ առ սոսա՝ գրել զորպէսն Սարասկեարին՝ թէ փոխիլն իրա՞ւ է, և նոր Սարասկեար գալո՞ց է յիրաւի։ Էհարց և զորպէսն Բաղտատու թղթոցն որք յղեցան առ սոսա ի դեկտեմբերի Դ, զի թէ յղեալ են, ծանուսցեն։ Իսկ և՝ Թաժզարայու Առաջնորդ Միքայէլ վարդապետն (որ յղեցաւ ի յամսոյս Դ). այժմ եկեալ ի Կարին էր առ սոսա,և սոքա գրէին թէ՝ քաղաքացիքն մեր և մեք զսա Առաջնորդ խնդրեմք մեզ, կոնդակ յղեա սմա Առաջնորդութեան և առաջնորդ արա ի վերայ քաղաքին մերոյ։ Վասնորոյ գրեաց զթուղթ ևս առ սոսա վասն այսր յատկապէս՝ սրբազան վեհն, սուղ ինչ մեղադրելով վասն այսպիսի բանից գրելոյն։ Զի դուք գիտէք աստ զորպէսն Պօլսոյ և անդ նստողին, մանաւանդ գիտէք զայն, որ այդ երկրի Առաջնորդք ֆարմանով նստին, և ոչ մեր կոնդակաւն, յետ ֆարմանով նստելոյն, եթէ ի նեղ ինչ անկանին, կամ ունին պա-

կասութիւն, յայնժամ ապա զԿաթողիկոսն ի միտ բերեն ճարակտուր, և կոնդակ խնդրեն։ Եթէ ոչ, ով է կաթուղիկոս ճանաչօղն։ Դուք ասէ դիտելով զայս, մանաւանդ՝ զորպէսն մերոցն որ ի Պօլիս, որպէս գրէք թէ՝ զայս ոմն մեղ Առաջնորդ արա։ Մոռացայք ասէ զքահանայից ձերոց վէքիլութեան բանն։ Որ էր այն, որ ըստ խնդրոյ սոցին վէքիլ կարգեաց անդ սոր. վեհն դքահանայս՝որպէս ասացաւ ի...յետոյ զԱռաջնորդական իրաւունսն նա դաւթեաց, (որպէս ասացաւ ի մայիսի ԻԵ ի թղթոջ Նազարէթին, և ի վերոյս նորին ասացեալ եղև)։ Երբր օրինակ ե զայն՝ որ Յակոբ կաթողիկոսն զԳեանջեցի Պետրոս վարդապետն՝ Առաջնորդ յղեաց ի Գիւմիշխանայ, յետոյ ի Պօլսոյ փարմանով Առաջնորդ յղեցին և հանին անտի զնա բռնութեամբ։ (Որպէս ասացաւ ի սկզբան յիշատակարանիս, ի ՌՄԺԲ թուոջն, ի սեպտեմբերի ԻԸ)։ Նաև զանցսն Յամթայ Առաջնորդ Պետրոս վարդապետին, (որպէս յամսոյս Գ և ի վերոյսն ասացաւ)։ Այժմ ասէ եթէ ես ըստ ձեր խնդրոյդ զդա ձեզ Առաջնորդ կարգեցից, և նա զայլ ոմն յղէ փարմանով զլօթի մի, յայնժամ կուծանրանայք դուք կամ մեք։ Գոնէ՝ յառաջ փարման բերել տուք, յետոյ և ի մէնջ կոնդակ խնդրեցէք։ Կամ թէ՝ վասն էր է ասէ այդ սևագլուխդ զիւր ժողովուրդն և զվիճակն թողեալ և աստ և անդ անկեալ թէ՝ զիս առաջնորդ խնդրեցէք։ Դա ի վերայ Թամզարայու է պսակեցեալ ասէ ուխտիւք և նզովիւք, (որպէս ասացեալ է ի...) զինչ յուզէր ի Պօլիս և ի Թօխաթ։ Զթօխաթցիսն յորդորեալ Առաջնորդ խնդրել ետ զինքն. եթէ և մեք կարգեալ էաք, զինչ լինէր այժմ։ Յետոյ լուաք թէ՝ Կարնեցիք կամին խնդրել Առաջնորդ։ Իսկ այժմ դուք խնդրէք։ Զայլս յորդորէ և խնդրել տայ ասէ՝ և ինքն իբրու սուտ խուլ եղեալ, բնաւ չգրէ թէ՝ զիս Առաջնորդ խնդրեն։ Արա կամ մի առներ։ Այժմ և ես եթէ ըստ իրաւանցն ըստ արժանւոյն տամ զվարձն, ունիմ զիրաւունս, թէ ոչ սակայն ասէ ի խաթրն ձեր նայեցայ, և յայս անգամ ես ներեցի։ Իսկ թէ դա կարէ ասէ զԹամզարն և զԱրապկեր ի միասին հովուել և դուք և Թամզարացիք կամիք, նախ փարման բերել տուք, և ապա մեք կոնդակաւ հաստատեսցուք։ Իսկ եթէ մեք կարգիցեմք, յետոյ յայն կողմէն մէկ ձայն ելանէ, յայնժամ դուք սկսանելոց էք կեղծաւորիլ չքմեղութեամբ և ստորարկել զհրամանս մեր. որպէս ձեր քաղաքի վէքիլութեան, (քանզի անդ ես այսպիսի ինչ եղև)։ Եւ մեք յայնժամ ոչ կարեմք ասէ տանիլ։ Եւ զի գրէին թէ՝ Պատրիարքն զայլ ոմն կամի յղել Առաջնորդ ի մեր քաղաքն, այլ չեն ընդունելոց, և կու փոանկանան։ Գրեաց թէ՝ ես զինչ առնեմ, այդ երկրիդ իշխանքն այդպէս են կամեցեալ՝ որ այդ երկրիդ Առաջնորդքն Պատրիարքն կարգէ փարմանով. կաթողիկոսն կարէ՞ արգելուլ։ Կաթողիկոսն այդ երկրիդ միայն ցաւն կուկրէ, այլ ինչ իշխանութիւն որ կայ՝ Պատրիարքինն է։ Զայդ ընդէ՞ր Պատրիարքին ոչ գրէք ասէ թէ՝ ուղարկած Առաջնորդդն զժողովուրդսն փռանկացուցանէ։ Զայդ ոչ գիտեմ չգիտելով դրէք մեզ՝ թէ ինչ մտօք։ Այդ կեղծաւոր սևագլուխդ ասէ զոր դուք Առաջնորդ կամիք լինել ձեզ՝ և ի մէնջ կոնդակ խնդրէք, հարցէք ցդա թէ՝ եթէ գու կաթողիկոսին հնազանդ ես և հարազատ, և թարց նորին կոնդակին Առաջնորդ ոչ լինիս, ապա հանգուցեալ տէր Մատթէոսի զայլ ինչսն թողումք, միայն հազար դռուշի թամասուկն որ քեզ ետուն էջմիածնի անուամբն ի Թօխաթ, ընդէր Կաթողիկոսին ոչ յղեցեր զայն թէմէսուկն, քան թէ Պատրիարգին յղեցեր։ Այսպէս ցաւեր ունիմք ասէ, սակայն՝ տանեմք զոցա խայինութեան և ոչ խօսիմք, ի դառնութիւն ժամանակիս հայելով։ Եւ վասն սոյն հանգուցեալ տէր Մատթէոսիս բանիցն որ գրեաց սոցա ի նոյեմբերի ԻԱ վերահասու լինիլ, այժմ յիշեցոյց, և պատուիրեաց այնպէս առնել։ Եւ էհարց թէ՝ Թօխաթու իշխօղն զայնքան դրամս այն հանգուցելոյն և զծ քսակի մուրհակսն ի զուր դաւթեալ լափէ, որ յԱթոոս պարտ էր գալ, մեք զինչ արասցուք ասէ. տեղդ Սարասկեարին կասէ՞ք, կամ մեք գրեմք, բան մի կարէ՞ առնել, թէ ոչ։ Եւ խնդրեաց դրել զայս հանդերձ այլ որպիսութեամբք։ Զայս թուղթքս ես առ Գէորգն յղեցաք, յղել առ մհ. Փիլիպպոսին ի Կարին։ Զորս վերոյյիշեալ փայակն տարաւ, զոր Գէորգն էր յղեալ։ Որ ընդ Գեամալմաղին ելեալ գնաց ի դեկտեմբերի ԻԵ։

ՄԴ.Ե.

Ի Սալմաստ եւ ի Հախբակ եւ ի Խօյ, վասն իւրեանց ընտրեալ Առաջնորդացուն հաւանութիւն.

Ըստ որում ի յօդոստոսի Ը և ի ԻԱ, և ի հոկտեմբերի Դ գրեաց սրբ. վեհն առ Հախբակցիսն և Սալմաստցիսն և առ իշխօղս նոցին, միաբանիլ ի միասին հաստատուն վճռաւ, և ապա զմի ոմն զոր ինքեանք կամին՝ միաբանութեամբ խնդրել ինքեանց Առաջնորդ, այժմ նոքա միաբանեալ էին, թէ Հախբակու ե Սալմաստու. ժողովուրդքն, ե թէ Խօյայ խանն ե Սալահբէկն, ե ընտրեալ էին զէրէց ոմն Ստեփաննոս անուամբ ի Հաֆթուան դեղջէ՝ լինիլ իւրեանց Առաջնորդ. Եւ զամենայն եւ ե զմուտ վանիցն յանձնեալ էին նմա. Եւ Բ երկրականքն ի միասին դրեալ էին զմահսար առ սրբ. վեհն, կացուցանել զնա ինքեանց Առաջնորդ. Եւ աղաչեալ էին չղժուարանալ վասն աստ չբերելոյն զնա. Զի այժմ չկարացաք ասեն. դու զԱռաջնորդութեան թուղթ յղեա. ե հրամայեա սմա՝ զի երթեալ առ մերձակայ եպիսկոպոս ոմն՝ առնուցու զվեղար ե տիրեսցէ վանիցն, ե յորժամ զարուն լիցի, առեալ բերելոց եմք առ ոտս սրբութեանդ. Եւ Խօյայ Ահմատ խանն ե Ալահբէկն ես դրեալ էին զխնդիր՝ հաւանիլ այսմ. Վասնորոյ՝ ե սրբ. վեհն զթուղթ գրեաց առ Ալմաստու և Հախբակու Մէլիքսն, թէ ըստ միաբանութիւնդ ձեր հաճեցայ, բայց որ գրէք զկոնդակ մեր յղել առ ոտս ընտրեցելոյդ ի ձէնջ, ընդ այդ ոչ հաճեցայ. Այլ ըստ խնդրոյ ձերոյ՝ ահա հրամայեցի դմա երթալ առ Թադէոսի Առաքելոյ Առաջնորդն, ե վեղար առնուլ ի նմանէ, ե լինիլ վէքիլ վանիցն, ե զամենայն հոգալիսն հոգալ. Եւ ի գարնանն առեալ բերջիք աստ ըստ խոստման ձերոյ, զի արասցուք ձեզ Առաջնորդ, ե կոնդակաւ ե փառաւորութեամբ յետս դարձուսցուք յայդր. Ըստ սմին, գրեաց ե զթուղթ առնոյն Առաջնորդացու տէր Ստեփաննոս. տիրել վանիցն վէքիլաբար, և ամենայն եկամտիցն և ամենից գործոցն հոգ տանիլ, երթալ ի Թադէոս Առաքելոյ վանսն, և յԱռաջնորդէն զվեղար առնուլ. Կամ թէ՝ մեր Հնդկաց նուիրակ Փիլիպպոս վարդապետն գալոց է աստ, եթէ ի մօտակայս եկեալ հանդիպեսցի ի Խօյ՝ ի նմանէ առնուցու, Եւ ի գարնանն եկեսցէ աստ ընդ իշխանացն, ե ըստ օրինի Առաջնորդ լեալ՝ դարձցի անդ. Եւ թէ սմա՝ թէ մէլիքացն գրեաց զպատուէր՝ զի բաց յայսցանէ յորոց հրամայեաց առնուլ զվեղար, յայլ օտար եպիսկոպոսէ մի առնուցու. Մանաւանդ յատուկ պատուէր ինքեան, զի մի թողուցու օտար եպիսկոպոսաց դձեռնադրութիւնս առնել ի վիճակի անդ. Զի լսէաք թէ՝ Ախթամարու եպիսկոպոսունք գոն անդ Բ, յորոց մինն դձեռնադրութիւն ևս էր արարեալ ի Սալմաստ. Եւ էին ի վանսն Բտրղուղիմէոսի Առաքելոյն իբր միաբան. Վասնորոյ գրեաց, զի թէ իբրև զմիաբան մնասցեն անդ՝ պահեսցէ, բայց զգործս եպիսկոպոսութեան մի թողուցու նոցա գործել. Եւ առ այս շատ պատուէր. Գրեաց և զթուղթս առ Խօյայ Ահմատ խանն, և առ Սալահբէկն, ծանոյց զայս զոր գրեաց մէլիքացն և տէր Ստեփաննոսին. Թէ ահա ըստ խնդրոյ ձերոյ հաւանեցաք, որովհետև միաբանութեամբ էին ընտրեալ. Եւ խնդիր՝ զի խնամս ունիցին ի վերայ վանիցն, առ ի ստանալ զկատարեալ շինութիւն.

Թուղթ ևս ի Խօյ առ պարոն Մէհրապն գրեաց, և առ հայրն նորին Ենոքն. Զի Ենոքն Ժ տարի աւելի էր՝ որ եկեալ ի Թիֆլիզու անդ էր գնացեալ, և ի տուն ոչ դառնայր. Իսկ այժմ կամէր յԵրուսաղէմ գնալ. Եւ Մէհրապն մինչ եկն աստ, ի յամսոյս Ա, խնդրեաց ի սրբ. վեհէն գրել առ նա զհարկ՝ զի երթիցէ ի տունն, և ապա թէ կամիցի, երթիցէ յԵրուսաղէմ. Այժմ ևս ի Խօյայ գրեալ էր աղաչանք՝ առնել այնպէս. Վասնորոյ՝ գրեաց սրբ. վեհն Ենոքին թէ՝ պարտականութիւն է ամեն մարդոյ՝ նախ զպարտս իւր վճարել՝ ապա թէ ողորմութիւն տալ. Իսկ թէ դու դներհակն առնես, թողեալ զպարտականութիւնդ՝ կամիս ողորմութիւն տալ. Զի պարտական ես նախ երթալ ի տուն քո, ժամանակ ինչ անդ մնալ, շահել զընտանիսդ, և ապա թէ կամիցիս, գնալ յԵրուսաղէմ. Այլ և՝ ըստ որում գրեցաւ յամսոյս Զ առ Մէհրապն, զի զՄարկոս վարդապետն հաւատարմաւ ուղևորեսցէ, նա ևս արարեալ էր այնպէս, և դրեալ սրբ. վեհին. Ուստի զշնորհակալութիւն գրեաց նմա, և պատուիրեաց, զի

զնոյն լաւութիւնն Հնդկաց Նուիրակ Փիլիպպոս վարդապետին ևս արասցէ ի ղալն անդ, և հաւատարմաւ ուղևորեսցէ աստ, ղի լսէաք թէ գայ (որպէս ասացաւ յամսոյս Զ)։ Եւ ղի՝ (որպէս յօգոստոսի Ը ասացաւ), Սօղոմօն վարդապետն եկն աստ։ Իսկ ինչք նորին մնացեալ էին ի Ալմաստ ի տան Մէլիք Խուաավէրտուն. ղի ոչ էին թողեալ ընդ իւրեան բերել։ Ուստի՝ աղաչեաց զսրբ. վեհն տալ ղայն ինչսն։ Եւ սրբ. վեհն հրամայեաց Աթոռակալ Դաւիթ վարդապետին գրել մէլիքացն ղի յղեսցեն։ Իսկ նոքա չէին տուեալ, և յետ ուղարկելոյ այն թղթոյն որ վասն Առաջնորդղացուին իւրեանց, զթուղթ մի ևս ի ձեռն որիշ փայեկի վասն սոյն բանիս յատկապէս ղրեալ և յղեալ էին առ սրբ. վեհն թէ՝ յայն ընչիցն շատն մեր վանիցն է. ղի յանուն մեր վանիցն ժողովեալ՝ իւրեանն է արարեալ. և կամի բերել և ուտել յայդր։ Այլ թէ կամիս հրամանքդ՝ առ քեզ յղեսցուք, թող ս. Աթոռոյդ լիցի, և մի՛ նա կերիցէ։ Ուստի և սրբ. վեհն գրեաց Մէհրապին ի սոյն թզթոջս, ղի մարդ յղեսցէ անդ, և զայն ինչսն որ էր Բ թամբալիթով կապեալ անդ, բանալ տացէ. եթէ վանիցն ինչք լինիցին անդ՝ վեր առնուցուն մէլիքն. և զմնացեալ ինչսն ինքն ի ձեռն հաւատարմի յղեսցէ աստ։ Եւ ղոր ինչ վասն Առաջնորդացուին գրեաց նոցա, զայն ևս սմա ծանոյց։

Թուղթ ևս գրեաց առ Սալմաստու Մէլիքսն՝ յատկապէս վասն ընչից Սողոմօն վարդապետին, ղի որպէս և գրեաց Մէհրապին, բացցեն. եթէ իցէ ինչ ի մէջ նոցին՝ որ իւրեանց վանիցն իցէ՝ վեր առնուցուն, և մնացեալն յանձնեսցեն Մէհրապին, ղի յղեսցէ աստ։ Զայս թուղթս առ Մէհրապն յղեցաք, ղի ինքն յղեսցէ առ նոսա, և զայն ինչսն անտի հանեալ յղեսցէ աստ։ Գրեաց ևս առ Մէհրապն զփուսուլայ, ի պատասխանի բանից նորին, որ գրէր թէ՝ խանն ընդ քեզ շատ սէր ունի, և կամի՝ ղի դու ևս ընդ ինքեան սէր առնելով՝ զգիրդ անպակաս արասցես. մանաւանդ՝ զորպիսութեանց կողմանցն Օսմանցւոց գրեալ ծանուսցես։ Եւ սրբ. վեհն ևս ծանոյց նմա զփոխիլն Սարասկեարին, և զգալն նոր Սարասկեարին ի Կարին (որպէս ասացաւ յամսոյս ԻԵ. որ դեռ չէր եկեալ, և գալոց էր)։ Եւ այլ ըստ սմին զորպիսութիւնս. զոր իւր ձեռամբն գրեաց։ Եւ թէ՝ մեք ընդ ղմա միշտ կամիմք սէր առնել, բայց գա թէ կամի բարեկամութիւն և սէր առնել ընդ մեզ, ընդէ՞ր օրինազանց բանից ջատագով լինի ընդդէմ մեզ. մեք զանկարգսն և զօրինազանցսն մեր սանձել կամիմք, գա տիրութիւն առնէ՝ և մեր գրեցելոցն ոչ լինի լսօղ։ Եւ այլ ըստ սմին թօհմաթս գրեաց առ այսոսիկ։ Զմահսարն և զթուղթս իշխօղացն բերօղքն Բ փայակք էին, մինն ի Սալմաստու՝ անունն Յօհան, և մինն ի Հախրակու՝ անունն Լալազար։ Եւ ամենայն վերոյգրեալ թուղթքն գրեալ և դերծեալ էաք, և զփայակսն ուղևոբեալ, յետոյ այն փայակն որ վասն ընչից Առղոմօն վարդապետին եկեալ էր, ի ճանապարհին յայս կոյս Երասխայ հանդիպեալ գնացող Բ փայեկացն և դարձուցեալ յետս աստ, խնդրէր զպատասխանի իւր բերեալ թղթոյն։ Այլ ղի գրեալ էաք մեք ընդ այն Բ փայեկացն, այլ ոչ գրեցաք նորապէս։ Այլ ասացաք փայեկին թէ՝ ահա զպատասխանի բերեալ թղթոյդ դրեալ և տուեալ եմք այդ փայեկացդ։ Քանզի՝ Սողոմօն վարդապետն մարդ էր յղեալ վասն բերելոյ ընչիցն, և նա դատարկ եկեալ ասացեալ էր նմա թէ ոչ ետուն։ Մեք ևս ըստ խնդրոյ Առղոմօն վարդապետին զայն թուղթսն գրեցաք, յետոյ եկն այն փայակն, ուստի և մեք ոչ ետուք նմա թուղթ։ Ելին ի միասին Գ փայակքն ի դեկտեմբերի ԻԸ։

Վախճան պատմութեան ՌՄԻԵ-երորդ ամի թուականութեանս հայոց։

Նւ Քրիստոսի Յուսոյն Մերոյ փառք՝ ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից

ԱՄԷՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Իթլախ.—ազատութեան թուղթ, արձակուրդ.
2. Սատրիաթ.—սատր՝ արար. նշ. վերին, փոխանորդ արքայի, իւրաքանչիւր իրի առաջինը, մարդու կուրծք. այստեղ նըշանակում է՝ արքայի փոխանորդ և միևնոյն ժամանակ ամեն իրի առաջինը, անդրանիկը, որ ժողովուրդը ստիպուած էր նուիրաբերել կալուածատիրոջ, իշխողին։
3. Բացագլուխք կամ բաշաչուխ.—այսպէս էին կոչում աբխազներին։
4. Քէսիմ.—քէսիպ,—աղքատ, չքաւոր։
5. Զտրիմահպուպ ոսկի,—զէր՝ նշ. ոսկի,և դրամ, իսկ մահպուպ—գեղեցիկ, սիրուն, զարիմահպուպ՝ սիրուն ոսկի-դրամ. դրամի մի տեսակն է։
6. Քեաթիպ.—գրագիր.
7. Իրիճա. նոյն և ըէճա.—աղերս, խնդիր, հայցուած, բարեխօս, պաշտպան, միջնորդ։
8. Մուբաշիր.—ոստիկան, գործակալ, արնտես, ջատագով, փաստաբան։
9. Թաւջի.—միջնորդ.
10. Հուճէթ.—թուղթ, ստորագրութիւն.
11. Զտխիրա արարաք.—վճարման մասին ծանօթութիւն.
12. Սօտաթ. սխալ է, պէտք է լինի՝ սուրէթ, այսինքն՝ պատճէն.
13. Մախկամայ, մահքէմէ.—դատակոչութիւն,
14. Զաշուա.—լրաես, լրատու.
15. Զաքեաթ.—նուէր, ողորմութիւն.
16. Խայինութիւն.—վատութիւն, դէշութիւն,
17. Մանի.—արգելք
18. Հաւս, հափս.—բանտարկել.
19. Մուրախաս.—արձակել, արձակուրդ.
20. Բոյրուլթու.—հրամանագիր.
21. Մուհասիլ.—հարկահան, ոստիկան.
22. Իջարայ.—կապալ.
23. 30. Տիւշալիկ.—բաժին, մասնադրամ.
24. Ախլաթ.—խակ.
25. Ղուզ.—ստացական տոմս, անդորրագիր.
26. Մուճալլամայ.—բողոքագիր մի քանի անձանց ստորագրութիւններով.
27. Օրթախ.—ընկեր.
28. Նասախ.—արգելեալ.
29. Ճառմայ.—տուգանք.
31. Սարմայայ.—դրամագլուխ.
32. Թօհմաթ.—յանցանք.
33. Վէքիլխարճ.—վերակացու, ծախսարար.
34. Սուրաթ.—օրինակ, պատճէն, պատկեր.
35. Ռայաթ.—հպատակ.
36. Դարմանա.—տուրք
37. Հիպայ.—նուէր.
38. Հիպանամայ.—ընծայագիր.
39. Վէքիլլամայ.—փոխանակագիր տալ, փոխանորդ կարգել։
40. Թալղայ.—հրաման, հրովարտակ, մակագրութիւն.
41. Վարիս միրասխօր.—ժառանգ.
42. Ղափուջիբաշի.—դռնապանապետ, սենեկապետ։
43. Մանսուպ, մանսըպ.—պաշտօն.
44. Իլախայ.—իրաւունք, յարաբերութիւն.
45. Մէնզիլ.—տարածութիւն, ճանապարհ, սուրհանդակ։
46. Դօշամայ.—կահ կարասիք։
47. Զըխըն.—ծրար.
48. Թութիշ, թէֆթիշ.—քննիչ.
49. Ռազիլ.—խայտառակ.

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

1767

ՇԺԵ. Առ Ռահիմ խանն Նախիջեւանու վասն Աստապատու։ Առ Մշու Մախսուա բէկն վասն իթլախին, և առ Բաղդասար վարդապետն։

ՇԺԶ. Առ մահտեսի Յօհանն իւյԱխլցխայ՝ վասն բանին ախթարմային։

ՇԺԷ. Առ Համադանցիսն, վասն տուեալ արդեանցն շնորհակալութիւն, և վասն հերձուածողի ումեմն և այլ բանից պատուէր։

ՇԺԸ. Առ Մելքոնն և առ այլս ոմանս թուղթք ի Կարին։

ՇԺԹ. Առ ժողովուրդսն Բայազիտու, մխիթարութիւն վասն հարուածոյ ժանտամահին։

ՇԻ. Առ Ղազախեցիսն, վասն սրբոյ Աթոռոյս տաւարին՝ որք յղեցան անդ։

ՇԻԱ. Առ Պաղտասար վարդապետն ի Վան, և առ Տէր Վահանն ի Բայազիտ։

ՇԻԲ. Առ Եւդոկիոյ նուիրակ Եսայի վարդապետն, վասն փօլիցային։

ՇԻԳ. Առ Շուշեցիսն, վասն գանձանակին զոր հաստատեալ էին և զի ըչԻսրայէլն մի ընկալցին։

ՇԻԴ. Առ Տէր Վահանն ի Բայազիտ, վասն Թիֆլիզեցւոյ ուրուք աւանդի։

ՇԻԵ. Առ Զմիւռնոյ առաջնորդ Ղուկաս վարդապետն վասն ապագրչին, և առ այլս ոմանս։

ՇԻԶ. Հասանիլն ի Հաշտարխան Դաւիթ վարդապետին, և առնելն անդ գխազաղութիւն։ Եւ որոյ աղագաւ գրելն անդ սրբազան վեհին գնեղութիւն և գշնորհակալութիւն։

ՇԻԷ. Առ Յօհաննէս կաթուղիկոսն և Մելիքսն Խամսայու, պատուէր հաշաիլ ընդ չիք Իսբայէլին։ Խանին ես գիր։

ՇԻԸ. Առ Իբրահիմ էֆէնտին ի Կարս, մխիթարութիւն վասն վշտակրութեանցն։

ՇԻԹ. Առ Մարդար աղայն մխիթարութիւն, և առ Տէր Պետրոսն ի Կարին վասն փօլիցային։

ՇԼ. Փօլիցայ արար սրբազանն ի Կարին ի վերայ Մելքոնին ընդ ոմանց ուղտս վաճառողաց։

ՇԼԱ. Առ Հերակլ Արքայն և յորդին, վասն ժանտամահին երեելոյ։

ՇԼԲ. Առ Հերակլ արքայն, աղերս վասն Բօռչալուի միոյ շնորհել զխասն։

ՇԼԳ. Առ Վանեցիսն, որք յանձն էին առեալ զՔէսիմ անունն բառնալ։

ՇԼԴ. Փօլիցայս արար սրբազան վեհն ի Կարին, ընդ Հաճ գնացօղ տաճկաց այս երկրացւոց։

ՇԼԵ. Ցղելն սրբազան վեհին զՏէր Սիմօնն ի Ղօշավանք, վերակացու իրաց սրբոյ Աթոռոյս և թեակից Մինաս պետին։

ՇԼԶ. Խնդրելն սրբազան վեհին գնուիրակն Հաշտարխանու Յովաննէս վարդապետն գալ յետս ի սուրբ Աթոռս, որովհետև ոչ եղև անդ ի մէջ նորա և ժողովրդեան սէր և խաղաղութիւն։ Իսկ և ըանաղրելն զչիք Սողոմօնն չԻսրայէլեան, և արձակելն զբանադրեալն ի Նմանէ զպարոն Ամրակումն։ Եւ զօրինակ բանադրանաց չիք Իսբայէլին յղելն ի Հաշտարխան և ի Ղզլար։ Եւ յոյժ բազում բանք ընդ սոցին։

ՇԼԷ. Առ Բազիշու խանն և բաղիշեցիսն, վասն խնդրոյն իւրեանց։

ՇԼԸ. Ցաղագս Բաղիշու խանին թուղթք ի Պօլիս։

ՇԼԹ. Առ գանձապետ Եղիկն ի Կարս, վասն Ղօշավանից գանձանակին։

ՇԽ. Առ Քեօրօղլուայ ժողովուրդսն, շնորհակալութիւն վասն յղեալ մատաղացն։

ՇԽԱ. Առ Մինաս վարդապետն և առ այլս թուղթք ի Կարին, վասն փօլիցայական բանից։

ՃԽԲ. Առ Վանայ նուիրակ Բաղդասար վարդապետն ի Կարմիր Կոնդ։

1769

ՃԽԳ. Առ Զարքեղօղլի Ցօնանն ի Կարին։ Եւ առ Նմնուսեցի Մահտեսի Յովհաննէսն վասն հիսապից։

ՃԽԴ. Առ Իւչքիլիսայի Առաջնորդ Զաքարիա վարդապետն պատուէր՝ շուտով բերել զախթարմայ երիցունսն, զորս ըմբռնեալ էր։

ՃԽԵ. Բերելն Զաքարիա վարդապետին զախթարմայ երիցունս Ալաշկերտու ի սուրբ Աթոռս։

ՃԽԶ. Առ Աբրահամ վարդապետն ի Թիֆլիղ, վասն փօլիցայ առնելոյ։

ՃԽԷ. Գալն Վանայ նուիրակ Պաղտասար վարդապետին ի սուրբ Աթոռս, և դառնալն անդ վերստին։

ՃԽԸ. Առ որդի Փանահխանին, և առ Յովհաննէս կաթողիկոսն։

ՃԽԹ. Առ Ախլցխայու ժողովուրդսն երիցս, դառնալ յուղղութիւն, և առ փաշայն, և յայլս։

ՃԾ. Առ Կարսայ փաշայն թուղթ սիրոյ, ընդ Իւսուֆ չուխատարին։

ՃԾԱ. Ի Կարին, վասն դրամոց ինչ, և ի Բայազիտ թուղթք, և միամտութիւն նուիրակին վասն հասուցելոցն։—Ի Թիֆլիղ և ի Ղլլար թուղթք, վասն ընչից անհաղորդ մեռելոյ ուրուք։

ՃԾԲ. Ի Պօլիս առ Զաքարիա վարդապետն, դրել կերպիւ ինչ զպատերազմէն Ռուսաց։

ՃԾԳ. Ուղղութիւն Ախթարմայ Քահանայիցն Ալաշկերտու։ Եւ վասն նոցին աստ յղելոյն, շնորհակալութիւն առ Բայազիտու իշխօղմն։

ՃԾԴ. Ի Ջուղայ վասն նուիրակին բանից, և Գիլան ևս թուղթք, ընդ Աստուածատուր վարդապետին։

ՃԾԵ. Առ Արքայն Հերակլ և յայլս, ի Թիֆլիղ, և յայլ տեղիս։

ՃԾԶ. Ի Կարին, առ նուիրակն և առ այլս թուղթք, մաքսապետին ևս։

ՃԾԷ. Առ Թարվիրու նուիրակ Գրիգոր վարդապետն, դժողովեալ տաւարսն և զայլ ինչսն տալ և գոմէշս առնուլ։

ՃԾԸ. Առ Ղօշավանից Առաջնորդ Կարապետ վարդապետն, զի զվանսն յանձնեալ Մինաս վարդապետին, ինքն եկեսցէ աստ։

ՃԾԹ. Առ Մելիք Ռուստամն ի Գեանճայ, որ զփախուցեալ Յարութիւն պետն կալեալ յղեալ էր աստ։

ՃԿ. Առ Կարսայ փաշայն, որ վերստին զպորինջան էր խնդրեալ։

ՃԿԱ. Առ արքայն Հերակլ և յայլս՝ վասն առեցեալ և առնյի դրամոցն յերկրէս։

ՃԿԲ. Առ Պօլսոյ՝ Զմիւռնոյ՝ և Հնդկաց և Կարնոյ նուիրակունսն, սակս հնոց և նորոց փօլիցայից։ Եւ այլ ևս բազմաց բանից։ Եւ մխիթարութիւն քաղաքին Պօլսոյ՝ սակս նեղութեանցն, որ ի մեծ պատերազմէն Ռուսաց։ Եւ վասն Ախթարմայիցն Ախլցխայու, և այլ ևս բազում թուղթք սակս զանազանից իրակութեանց։

ՃԿԳ. Ի Կարս վասն գալստեան Հերակլ Արքային։ Եւ զի՝ զինչսն Ղօշավանիցն ի քաղաքն տարեալ՝ ժամանակ ինչ թողցեն ամայի։—Առ Բամբակաձորու Մէլիք Գէմօն՝ վասն փախուցեալ երկուց տանցն Մողնեցւոց, զի յետս յղեսցէ սիրով։

ՃԿԴ. Առ Ղօշավանից վէքիլ Մինաս վարդապետն փախուցեալ զի գայցէ. եւ առ Մարդար աղայն վասն նորին։—Ի Ջուղա, առ Սարգիս Քալանթարն վասն Զաման խանին յանձնարարութիւն և այլ ինչ բանք։

ՃԿԵ. Առ Ախլցխայու փաշայն եւ նուիրակն, եւ յաքսորեալ պատրիս, վասն իրակութեանց ախթարմայիցն։

ՃԿԶ. Ի Թիֆլիս, վասն սրբոյ Գեղարդեանն՝ որ նորապէս անդ յղեցաւ և վասն Դաւիթ և Յովաննէս վարդապետացն որք եկեալ էին ի Հաշտարխանու։

ՃԿԷ. Ի Կարսայ գիւղորայսն, վասն առնլեաց մերոց զի տացեն, զնուիրակի ժողովեալ ցորեանս յղեսցեն։

ՃԿԸ. Ի Պօլիս՝ ի Գաղաաիա՝ եւ ի Կարին, վասն բազմաց զանազանից իրակութեանց։

1770

ՃԿԹ.—Առ մայր Գեօլայու փաշային՝ միամտութիւն վասն խնդրոյ։

ՃՀ. Ի Կարին՝ առ մահտեսի Յովհաննէսն և նորին եղբայր. Սարգիսն խոստումն՝

զի ըստ խնդրոյ իւրեանց զգաւին զոր առնէր ընդ ինքեանց Մէլիք Աւէտիքն, ի մի կողմն կտրեսցէ։—Ի Կարս՝ առ Սարասկեար փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն, որ վասն փաշային սպիտակ մոմ էր խնդրեալ ի սրբաղան վեհէն։ Զոր յղեաց ըստ խնդրոյ նորին։

ՃՀԱ. Առ Վանայ նուիրակ Պաղտասար պետն վասն Առաջնորդին Վանայ, զոր խնդրեցին ոմանք աննշանք լինել առաջնորդ։ Եւ առ յայլս ես վասն բանից ինչ։

ՃՀԲ. Ի Խօյ՝ առ Ահմատ բէկն և վրացի Մեհրապն վասն Ախլցխայու Բ Ախթարմայ տղայոց՝ որք անդ էին որք էին որդիք չարագլխաց. զի ըմբռնեալ յղեսցեն աստ։

ՃՀԳ. Առ Պօլսոյ նուիրակ Զաքարիա պետն վասն ընչից Զարքեազօղլի Յօհանին, զի յղել տացէ առ ինքն։—Առ սարասկեար Մուստաֆայ փաշայի սառաֆ մահտեսի Փիլիպպոսն ի Կարս ի պատասխանի թղթոյն։

ՃՀԴ. Առ Մէլիք Աւետիքն Թիֆլիզ, վասն արգելեալ բեռանցն Կարնեցւոց։

1772

ՃՀԵ.

ՃՀԶ. Առ Պօլսոյ և Զմիւռնոյ նուիրակունսն ի պատասխանի նոցին։

ՃՀԷ. Ի Կարս առ սարասկեարն վասն հանելոյն աքսորելոց իթլախին։ Եւ առ յայլս ես սակս բանից ինչ։—Առ Նոնուսեցի Յովաննէսն և նորին եղբայր մահտեսի Սարգիսն, միամտութիւն վասն երկիցս անգամ առ մեզ յղեալ ամանաթիցն և խաչին։

ՃՀԸ. Առ Հաշտարխանու նուիրակ Մինաս պետն միամտութիւն վասն այլ և այլ ընծայի կարծեացն իւրոց։

ՃՀԹ. Առ Արապկերու ժողովուրդսն պատուէր վասն Առաջնորդին իւրեանց, և առ յայլս ես սակս բանից ինչ։

ՃՁ. Ցղելն սրբազան վեհին դԱխլցխայեցի չորեսին աքսորեալսն ի տեղիս իւրեանց։

ՃՁԱ. Խնդիր ի սարասկեարէն. վասն ըմբռնեցեալ նուիրակին մերոյ և իշխանացն որ ընդ նմա ի Մատեն։

ՃՁԲ. Ի Պօլիս, ի Կարին ի Ցամիթ և յայլ տեղիս թուղթք վասն այլ և այլ որպիսութեանց։

ՃՁԳ. Ի Բասրա և ի Բաղգատ, վասն ընչից հանգուցեալ նուիրակ Յովսէփ վարդապետին՝ զի յղեսցեն ի սուրբ Աթոռս։

ՃՁԴ. Վասն անցիցն նուիրակին Թօխաթու, զոր իբրև զչաշուտ էին ըմբռնեալ ի յԱրապկեր հանդերձ այլ ոմամբք։

ՃՁԵ. Ընդ Նախիջևանու նոր նուիրակ Պետրոս պետին, մինչ հին նուիրակ Մեսրոպ պետն վախճանեալ էր։

ՃՁԶ. Ի Շամախի վասն աբարմանց չիք Իսքայէլին։—Առ Բայազիտու Իսաղ փաշայն շնորհաւորութիւն վասն թուղիցն իւրոց որ նոր եկեալ է ի թագաւորէն իւրեանց։—Առ Վէթու և Արկուռոյ ժողովուրդսն պատուէր՝ վասն սրբոյն Խորվիրապայ վանից վէքիլ աէր Կարապետին, զի նմա տացեն զԱռաջնորդական հասս մինչև ի գալ Առաջնորդին։ — Առ Թիֆլիզու Առաջնորդ Ռէթէոս պետն պատուէր, վասն Փարսատանենց Ասմուէլի պարտուցն զի առցէ։—Առ Սալմաստու մէլիքսն պատուէր՝ վասն Առաջնորդին իւրեանց, զի ի սուրբ Աթոռս յղեսցեն։—Առ Հախրակցիսն պատուէր վասն Սարգիս պետին զի ի սուրբ Աթոռս յղեսցեն։ Եւ վասն Առաջնորդին իւրեանց գրեաց ի Սալմաստ առ տէր Մարգարն, զի նա ևս զնա առեալ եկեսցէ աստ։—Ի Կարին և ի Թօխաթ թուղթք՝ վասն այլ և այլ իրակութեանց։—Ցղելն սրբազան վեհին ղԱհարօն պետն ի Թիֆլիզ վասն ժողովելոյ զմոմս։

ՃՁԷ. Առ Վանայ իշխանսն՝ բացասելով զխնդիրս նոցին՝ որ վասն Սազազասուն։

ՃՁԸ. Ի Կարին՝ առ մեծամեծ տաճիկսն տեղւոյն, և առ մերայինսն։ Բացասելով զխնդիրս նոցին որ վասն ուղտուցն։

ՃՁԹ. Ի Կարս՝ առ նուիրակն և Առաջնորդն և առ յայլս պատուէր՝ զի զեթեաղի առեալ յղեսցեն ի նիւթ սրբալոյս Մեռոնին։—Փօլիցայ ի Կարին ի վերայ մահտեսի Փիլիպպոսին, ի ձեռն տաճկի։

ՃՂ. Ի Բայազիտ՝ և ի Կարին՝ առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն, և առ Բայազիտու իշխանսն վասն առնլի դրամոց մերոց, և վասն բանի ինչ։

ՃՂԱ. Ի Թիֆլիզ՝ առ չիթճոց Ասնաֆն շնորհակալութիւն, վասն յանուն սրբոյ Աթոռոյս նոր գանձանակ հաստատելոյն ի միջի իւրեանց։—Առ Հաշտարխանու նուիրակ

Մինաս պետն ի պատասխանի թղթոյն։—Առ Նախիջեւանու Հաճիխանն ի պատասխանի թղթոյն։—Ի Բայազիտ՝ առ Նոնուսեցի մահտեսի Յովհաննէսն՝ վասն առնլի դրամոյն իւրեանց ի հաճի Բաղրէն, և նորին թէմէսուկացն։

ՃՂԲ. Ի Պօլիս՝ ի Զմիւռին՝ և ի Կարին թուղթք վասն այլ և այլ իրակութեանց։—Առ Բայազիտու Իսաղ փաշայն թուղթ սիրոյ։

ՃՂԳ. Ի Խօյ՝ առ Նուիրակ Մեսրոպ պետն և առ վրացի Մեհրապն վասն Բց ժառմառ քարտնց և լեզակից զի հոգացեալ յղեսցեն։

ՃՂԴ. Ի Կարին՝ առ պարտատեարսն մեր հարկ զի տացեն զդրամս մեր։

ՃՂԵ. Ի Կարին՝ ի յԱրապկեր՝ ի Վան և յայլ տեղիս առ նուիրակունսն մեր և առ այլս վասն բանից ինչ, և առ Արապկերցիսն միամտութիւն վասն ի նուիրակէն առեալ դրամոյն, և մխիթարութիւն՝ վասն նեղութեանցն այսր աղագաւ։—Եկաւ հասաւ ի Ֆիլիպէ։—Առ Կարսայ Նուիրակ Յակոբ պետն միամտութիւն վասն իւրոյ խարճեալ դրամոյն։—Կարգելն սրբազան վեհին զՄարկոս պետն յԱռաջնորդութիւն սրբոյն Խորվիրապայ վանից։—Զհաղարծնոյ վանից Առաջնորդ Մանուէլ պետն իւղի և պանրի ժողովարար կարգեաց սրբազան վեհն ի վերայ երկրին իւրոյ և մերձակայ երկրացն։—Կրկին փօլիցայ ի վերայ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսին։—Եկաւ հասաւ ի Կարին։—Առ Թիֆլիզու Առաջնորդ Ռէթէոս պետն վասն ծերոյ ումեմն Թիֆլիզեցւոյ։

ՃՂԶ. Առ Ագուլեաց վանից Առաջնորդ Թօմայ պետն պատուէր վասն սրբոյն Քրիստափորի Աջոյն զոր յղեաց առ նա, զի արծաթապատել տացէ։—Առ Բայազիտու ժողովուրդսն շնորհակալութիւն վասն գանձանակադրամին։

ՃՂԷ. Ի Պօլիս՝ ի Կարին՝ և ի Ցամիթ վասն փօլիցայից և այլ իրակութեանց։—Առ Հաշտարխանու նուիրակ Մինաս պետն ի պատասխանի թղթոյն։—Առ Նախիջևանու Հաճիխանն ի պատասխանի թղթոյն։—Ի Բայազիտ առ Նոնուսեցի մահտեսի Յովաննէսն վասն առնլի դրամոյն իւրեանց ի Հաճիբաղրէն, և նորին թէմէսուկացն։—Ի Պօլիս՝ ի Զմիւռին՝ ի Կարին և ի Բայազիտ թուղթք վասն հաշուից և այլ իրակութեանց։

ՃՂԸ. Առ Բայազիտու Իսաղ փաշայն խնդիր՝ վասն ընչիցն Իսպիրու Առաջնորդ հանգուցեալ Յովաննէս վարդապետին, զոր ի բերելն աստ ի ճանապարհէն յետս էր դարձուցեալ, որոյ աղագաւ և մեր մարդկանցն շատ նեղութիւն տուեալ։—Թուղթ ժողովարարութեան միոյ դերետէրի։

ՃՂԹ. Ի Թօխաթ և ի Կարին թուղթք վասն Գեօրեցի Աիմօնի հիսապին զոր ունէր ընդ Ծատուրին։

Մ. Վերադառնալն Եսայի պետին ի Բայազիտու ի սուրբ Աթոռս, և գրելն սրբազան վեհին առ Իսաղ փաշայն զմիամտութիւն։—Ի Կարս՝ Առ սարասկեարն պատրիջան յղեցաք ընծայ։

ՄԱ. Առ Հերակլ Արքայն և որդի նորին Գեօրկին բէկն վասն չիսրայէլին։

ՄԲ. Փոխումն Այգւոյն մերոյ ընդ Թասալուի որդի Յարութիւնի այգւոյն։—Փօլիցայ ի վերայ Ակնցի Խօջայ Յովաննէսին։—Յղելն սրբազան վեհին առ Սարասկեարն և առ մեծամեծսն նորին զմրգեղէն զընծայս ի Կարս։

ՄԳ. Առ Թիֆլիզու Առաջնորդ Ռէթէոս պետն յանձնարարութիւն վասն երկու հրէիցն։

ՄԴ. Ի Պօլիս՝ ի Կարին, ի յԱմիթ ի յԱկն և յայլ տեղիս, վասն փօլիցայից և այլ իրակութեանց։

1774

ՄԵ.—Ի Պօլիս՝ թուղթ օրհնութեան, առ բարեկամսն քարտաշ Սարգսին։—Ըստ խնդրոյ քիւրտ Ապտալ Աղային դինի և օղի յղեցաք առ նա վասն դեղոյ։—Ի Կարս՝ Առ Ղարախան օղլի Հաճի Ջալալին, ի պատասխանի թղթոյն։

ՄԶ. Ի Շիրազ՝ և յԱսպահան, առ Ջուղայու Քեալանթար Սարգիսն և առ նուիրակ Ստեփաննոս պետն ի պատասխանի թղթոցն իւրեանց, և վասն Աստապատեցւոց բանիցն։

ՄԷ. Ի Կարս՝ ի Կարին, և ի Ցամիթ։ Առ Մուստաֆայ փաշայն և առ ոմանս անձինս վերստին թուղթք, վասն ընչիցն Արապկերու Առաջնորդ հանգուցեալ Պետրոս վարդապետին։ Եւ առ Ղարաբէկն շնորհակալութիւն՝ վասն յղեալ ընծայիցն։—Փօլի-

ցայ՝ ի վերայ Կարնոյ նուիրակ Իսահակ պետին, ձեռամբ մահտեսի Ցովասափին։

ՄԸ. Ի Կարս և ի Ցամիթ։ Կատարումն Իբրահիմ Էֆէնտիի խնդրոյն։ Եւ ընծայ յաղագս գլխաւոր տաճկացն Կարսայ, և առ ոմանս թուղթք, վասն ընչիցն Պետրոս վարդապետին։—Ի Ցամիթ՝ առ Մարիամ կինն՝ միամտութիւն վասն որդւոյն իւրոյ։

ՄԹ. Ի Թիֆլիզ՝ առ տեղւոյ Առաջնորդ Ցովաննէս պետն. առ տէր Նիկողայոսն և տէր Մէլքիսէթն, և առ Մէլիք Աւետիքն. վասն բարբանջման չիք Մկրտումին, և վասն գործոցն իւրեանց։

ՄԺ. յԱլաշկերտ՝ առ Բայազիտոյ հին Իսաղ փաշայն ի պատասխանի թղթոյն իւրոյ։

ՄԺԱ. Հանել Պօլսեցւոցն զԳրիգոր վարդապետն ի պատրիարքութենէն, և կացուցանելն պատրիարգ զսրբոյ Աթոռոյս Նուիրակ Զաքարիա վարդապետն։ Եւ որոց աղագաւ թուղթք առ սրբազան վեհն յայլոց, և պատասխանիք ի սրբազան վեհէն։ Եւ այլ ևս իրակութիւնք համախառն ընդ սոսա։—Առ Ղօշավանից Առաջնորդ Սուքիաս պետն մեղադրութիւն՝ վասն չհասութիւն առնելոյն։

ՄԺԲ. Առ Դիատինու և Խամուրայ իշխօղսն թուղթ սիրոյ, և առ Բայազիտու նուիրակ Գալուստ պետն միամտութիւն, վասն Նորապէս առմեզ հասուցեալ արդեանցն։

ՄԺԳ. Ի Բայազիտ՝ ի Խօյ՝ և ի Վան. առ տիրացու Ստեփաննոսն ի պատասխանի թղթոյն։ Եւ առ հայր Նորին տէր Ցովաննէսն զմիամտութիւն վասն գալստեան Նորա. և առ պարոն Մեհրապն ևս զյանձնաբարութիւն վասն Նորա։

ՄԺԳ. Ի Կարս առ Ղօշավանից Առաջնորդ Սուքիաս պեան, առ Ղարախանօղլի և առ պարոն Գէորգին կրկին վասն չհասութեան, և այլ ինչ բանից։

ՄԺԵ. Ի Կարին՝ առ Մուրտիկեանց մահտեսի Փիլիպպոսն վասն դարձման տէր Վահանին ի տեղի իւր։ Եւ առ մահտեսի Թումանն և եղբայրն իւր շնորհակալութիւն՝ վասն յղեալ հողեբաժնին։—Ի Թիֆլիզ՝ առ տեղւոյ Առաջնորդ Ցովաննէս պետն և առ Իւանէ Գիւանբէկն վասն անկարգ արարմանց չիք Մկրտումին և տէր Եսայուն և տէր Խաչատուրին։

ՄԺԶ. Ի Վան՝ ի Մուշ՝ և ի Բաղէշ։ Առ ոմանս անձինս յանձնարարութիւն վասն Վանայ նուիրակ և Առաջնորդ Պաղտասար վարդապետին, և վասն Ցօնան պետի հաշուին։

ՄԺԷ. Ի Բայազիտ՝ առ տէր Վահանն և Մարդար Աղայն զբացասաց պատասխանի սակս խնդրոյն իւրեանց, որ վասն սրբոյն Թադէոսի Առաքելոյ Աջոյն։

ՄԺԸ. Կացուցանելն Պօլսեցւոց զԶաքարիա վարդապետն պատրիարք տեղւոյն, և զրազմակնիք մահսար յղելն առ սրբազան վեհն սակս Նորա, և խնդրելն զկոնդակ հաստատութեան և շնորհաւորութեան վասն Նորա։ Եւ առ Զաքարիա վարդապետն և իշխանսն զմիամտութիւն վասն կոնդակին և այլ թղթոցն։ Եւ առ Մեհրապն ևս զպատուէր՝ վասն համբաւոյ գալստեան զօրացն Քեարիմխանին։—Ի Կարս՝ առ Եաղուպ Աղայն՝ ի պատասխանի որպիսահարց թղթոյն։—Եկաւ հասաւ ի Թօխաթ։

ՄԺԹ. Առաքելն սրբազան վեհին ի Պօլիս զկոնդակ հաստատութեան և շնորհաւորութեան վասն տեղւոյ Նորոգ պատրիարգ Զաքարիա վարդապետին ընդ այլ թղթոց։ Ընդ նոսին և այլ ևս թուղթք՝ ի Զմիւռին՝ ի Գաղատիա՝ ի Հնդիկս՝ ի Թօխաթ՝ ի Ցամիթ՝ ի Կարին, և ի Կարս. վասն այլ և այլ իրակութեանց։

1775

ՄԻ.

ՄԻԱ. Ի Պօլիս՝ ի Կարին և ի Կարս թուղթք։ Առ պատրիարք Զաքարիա պետն և մհ. Գասպար և Պաղտասար Ամիրայսն միամտութիւն վասն սրբոյն Սաղիմայ ժամօրհնօղ Սարգիս վարդապետին, և ի նորին պատրիարգէն գանգատ։ Եւ առ Իբրահիմ Էֆէնտին, մհ. Փիլիպպոսն և Գէորգն ևս զմիամտութիւն՝ վասն Հաճոնց տուեալ դրամոյն։

ՄԻԲ. Ի Հաշտարխան և ի Թիֆլիզ։ Առ Հաշտարխանու նուիրակ Ցովսէփ պետն վասն խնդրոց ոմանց։ Եւ առ Ցովհաննէս վարդապետն ևս վասն զրպարտելոյն զինքն չիք քահանայից ոմանց ընդ բանիւ առնելն զնոսա։ Եւ վասն երեցփոխութեան և այլ ինչ բանից։—Եկաւ հասաւ ի Կարին։

ՄԻԳ. Ի Բայազիտ՝ Համաղանցի Ցովաննէս վարդապետին պատուէր՝ զի գայցէ

ի սուրբ Աթոռս։

ՄԻԳ. Ի Շիրազ՝ Առ Մահմատ Էմինն վասն թղթաշինի։

ՄԻԴ. Ի Բաղդատ և ի Բասրա։ Առ մհ. Յարութիւն՝ Միքայէլ՝ Ալէքսան և Մարգար Աղայսն, յանձնարարութիւն՝ վասն տէր Գէորգինն։—Փօլիցայ ի վերայ Կարսայ Նուրիբակ Գրիգոր պետին ի ձեռն Կարսեցի Գէորգինն։

ՄԻԶ. Ի Կարս՝ առ Ալի փաշայն՝ առ Իբրահիմ Աֆանտին և առ յայլս։ Խնդիր՝ վասն թղթաշէն ֆռանկացն, զի յղեսցեն ի սուրբ Աթոռս։—Թուղթ օրհնութեան ի վերայ անձանց ոմանց, ըստ խնդրոյ Բայազիտու Նուրիբակին։ Առ որ և միամտութիւն՝ վասն նորապէս յղեալ արդեանցն առ մեզ։—Թուղթ ժողովարարութեան ի վերայ Թիֆլիզու՝ յանուն սրբոյ Խորվիրապայ վանիցն։ Որ տուաւ նորին Առաջնորդ Մարկոս պետին։—Առ Ռէս պարոն Գիլանն շնորհակալութիւն՝ վասն յղեալ ընծայիցն։

ՄԻԷ. Ի Կարին՝ առ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսն, միամտութիւն վասն յղեալ ընչիցն, և վասն գալստեան թղթաշէն ֆռանկացն ի սուրբ Աթոռս։

ՄԻԸ. Առ վրաց Անտօն կաթողիկոսն գրացասաց պատասխանի վասն անպատշաճ խնդրոյն։ Եւ շնորհակալութիւն վասն գալստեանն։

ՄԻԹ. Առ պատրիարդն և իշխանսն Պօլսոյ ըստ խնդրոյ Վանեցւոցն, վասն Թամուր փաշային։

ՄԼ. Առ Հերակլ Արքայն և առ որդի նորին Գէօրկին միրզայն թուղթ՝ սիրոյ՝ ի պատասխանի սիրոյ թղթոյն իւրեանց։

ՄԼԱ. Առ Աաղիմայ պատրիարգ Պօղոս վարդապետն սիրով մեղադրութիւն, որ ի զուր վատահամբաւէր զսրբ. վեհս մեր։ Եւ առ Պօլսոյ իշխանսն ես թուղթ վասն Սարգիս վարդապետին։ Թէ ահա ըստ խնդրոյ ձերոյ եպիսկոպոս արարեալ վերադարձուցի։—Եւ այլ ես թուղթք առ այլս։—Եկաւ հասաւ ի Թրակիա՝ ձեռամբ նորին Առաջնորդ Յակոբ վարդապետին։

ՄԼԲ. Ի Պօլիս՝ ի Կարին և ի Կարս։ Առ Պօլսոյ պատրիարք Զաքարիա վարդապետն՝ առ մհ. Գասպարն և առ այլս միամտութիւն վասն զհաճնցի Սարգիս վարդապետն եպիսկոպոս ձեռնադրելոյն, և վասն թղթաշինաց գալստեանն ի սուրբ Աթոռս։ Եւ այլ այլս ես վասն այլ ինչ բանից։

ՄԼԳ. Գանգատ կեսարացւոցն զԱռաջնորդէն իւրեանց Գաւիթ վարդապետէն, և խնդրելն նոցա ի սրբ. վեհէն տանել զնա առ ինքն։ Եւ գրելն առ նա սրբ. վեհին, զի եկեսցէ ի սուրբ Աթոռս։

ՄԼԴ. Խնդիր Կարնեցւոցն ի սրբ. վեհէն վասն Ճռասօնօղլի Յարութիւն պետին, զի Առաջնորդ արասցէ զնա ինքեանց։ Եւ սրբ. վեհին. ի ձեռն մհ. Փիլիպպոսին խոստանալ նոցա կատարել զխնդիրս իւրեանց։

ՄԼԵ. Խնդիր Հերակլ Արքային՝ վասն տէր Մէլքիսէթին։

ՄԼԶ. Պատուէր յամթեցւոցն վասն Հալապու Առաջնորդ Պետրոս պետին, մի ընդունիցին զնա Առաջնորդ ինքեանց՝ մինչև ոչ եկեսցէ ի սուրբ Աթոռս, և զանունն Ասայ բարձցէ յինքենէ։ Եւ թէ զԿարապետ պետն խնդրեն, գրեսցեն ինքեան զստոյգն։

ՄԼԷ. Վերստին Առաջնորդ կարգելն սրբազան վեհին զԹօխաթցի Յարութիւն պետըն ի վերայ Կարնոյ քաղաքին, և յղելն ի վիճակն իւր։ Ընդ նմին և թուղթք ի Կարին՝ ի Պօլիս, և յայլ տեղիս վասն նորա և վասն այլ ինչ իրակութեանց։—Ի Բամբակաձոր՝ առ Բարաբէկն՝ Գամղուլին և Մահմատ Աղայն, յանձնարարութիւն վասն թղթաշինացն։

ՄԼԸ. Ի Պօլիս և ի Հնդիկս։ Առ պատրիարք և մահտեսի Յարութիւն և Միքայէլ Աղայն և առ ոմանս անձինս, վասն ընչիցն հանգ. շօռոթեցի պարոն Ղազարին։

ՄԼԹ. Ի Տաթև՝ ի Վան և ի Բայազիտ։ Առ Աբրահամ Պաղտասար և Յօնան վարդապետսն ի պատասխանի թղթոցն, և ի միամտութիւն վասն կատարման խնդրոցն իւրեանց։ Եւ առ այլս ես՝ վասն այլ ինչ իրակութեանց։

ՄԽ. Խնդիր Մէլիք Ադամին ի սրբազան վեհէն վասն եղբօրն իւրոյ՝ զի խրատեալ յետս դարձուսցէ առ ինքն։

ՄԽԱ. Յղելն սրբազան վեհին զԽաչատուր վարդապետն ի Բամբկուձոր վասն թղթաշինութեան փայտիցն։ Ընդ նմին և թուղթք յանձնարարութեան վասն նորա առ գլխաւորսն տեղւոյն։

ՄԽԲ. Ի Պօլիս՝ ի Կարին և ի Կարս։ Շնորհակալութիւն զպատրիարքէն և զիշխանացն Պօլսոյ՝ վասն կաթուղիկոսութեան ընթրաթին և ֆարմանացն զորս հոգացեալ Ղազարի ընչիցն։ Եւ առ Կարսայ փաշայն և Իրբահիմ Աֆանտին թուղթ սիրոյ և ընծայ։

ՄԽԳ. Առ Բայազիտու Աւտի փաշայն խնդիր՝ զի բարձցէ զքեասիմ անունն, և Նուիրակին բոյրուլթու տացէ։ Եւ առ տէր Վահանն՝ Մարգարէ Աղայն և պարոն Մուրատն պատուէր՝ զի այսպէս առնել տացեն փաշային։—Եկաւ հասաւ ի Թիֆլիզ։—Փօլիցայ ի վերայ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին։—Կրկին փօլիցայ ի վերայ Մուրտիկեանց մհ. Փիլիպպոսին։—Առ Կարսեցի պ. Գէորգն պատուէր վասն Չրազացի Նաւաղնոյն և ողորմութեանն։—Առ Թիֆլիզու Առաջնորդ Յովհաննէս պետն պատուէր վասն արգելման առաքմանն յատուկ հրաւիրակի, և վասն առնլեացն պ. Աաֆարին։

ՄԽԴ. Յղելն սրբ. վեհին զտեղապահ Մկրտիչ վարդապետն առ Հերակլ Արքայն, առ ի շնորհաւորել զհարսանիսն որդւոյ նորին։ Եւ զՄարտիրոս վարդապետն եւ նուիրակ առաքելն ի Թիֆլիզ։ Նաև՝ գալն Հաշտարխանու՝ հին նուիրակ և Առաջնորդ Մինաս վարդապետին ի ս. Աթոռս սրբ. վեհին առ ժողովուրդսն զշնորհակալութիւն գրելն վասն նորա։—Ի Հաշտարխան քաղաքն։—Առ Կախ կոչեցեալ գաւառպայի ժողովուրդսն շնորհակալութիւն և միամտութիւն վասն յղեալ գանձանակադրամին իւրեանց։

ՄԽԵ. Առ Զաքարիա վարդապետն պատուէր վասն Թղթաշինաց գործեացն։ Եւ առ մհ. Փիլիպպոսն եւ վասն այսր, և այլ ինչ բանից։—Ի Կարս՝ առ պարոն Գէորգն պատուէր վասն առ ինքն յղեալ դրամոյն, զի ընդ դահըաշի Առզումօնին յղեսցէ առ մեզ։

ՄԽԶ. Առ յամթեցիսն մեղադրութիւն՝ վասն նախապէս ոչ յղելոյն զնորոգ Առաջնորդն իւրեանց Պետրոս պետն ի ս. Աթոռս։ Եւ կրկին պատուէր՝ զի փութով յղեսցէ զնա։

ՄԽԷ. Ի Խամսա՝ առ Մէլիք Յովսէփն՝ բացասութիւն վասն անպատշաճ խնդրոյն ի սրբազան վեհէն։—Ի Բաղդատ՝ ի Բասրա և ի Հնդիկս թուղթք և նորատիպ տօնացոյցք յղեցան ընդ տէր Գէորգին։—Եկաւ հասաւ ի Յուռումելին։—Յղելն սրբ. վեհին զՆղեգաձորցի Ահարօն վարդապետն նուիրակ ի Նախիջևան։

ՄԽԸ. Ի Պօլիս և ի Կարին թուղթք՝ վասն Թղթաշինաց բանիցն և այլ ինչ հոգալեաց։

ՄԽԹ. Ի Թիֆլիս՝ առ տեղապահ Մկրտիչ վարդապետն պատուէր վասն տէր Ղազարի տալեացն, և այլ ինչ բանից։

ՄԾ. Բացասութիւն խնդրոյ իշխանացն Զմիւռնոյ վասն արգելմանն Ղուկաս պետին։ Եւ պատուէր Ղուկաս պետին գալ ի ս. Աթոռս։ Ընդ նոսին և այլ ես թուղթք ի Թոխաթ և ի Կարին, վասն զանազան իրակութեանց։

ՄԾԱ. Առաքելն սրբ. վեհին զՊետրոս վարդապետն նուիրակ ի Կարին, և վասն նորա զյանձնարարութիւն գրելն ի վերայ երկրին այնմիկ։ Ընդ նմին և թուղթք ես ի Սաղիմ ի Պօլիս և ի Թօխաթ, վասն տօնացուցին, և այլ ինչ իրակութեանց։—Եկաւ հասաւ ի Կարին։—Առ Թօփրախղալայու Ալիբէկն միամտութիւն վասն Կարնոյ ուխտաւորացն։

ՄԾԲ. Ի Թիֆլիզ առ Հերակլ Արքայն շնորհակալութիւն վասն վրէժխնդիր լինելոյն Ախթարմայիցն, և յորդորմունք՝ ի գլուխ տանիլ զնոյն յառաջադրեալ բանն։ Եւ առ տեղապահն ես վասն այսր, և վասն տալեացն տէր Ղազարին։ Վասն Ախթարմայիցն բան և առ Մկրտումն ես։

ՄԾԳ. Առաքելն սրբ. վեհին զՆսայի վարդապետն նուիրակ և Առաջնորդ ի Զմիւռին։ Ընդ նմին և թուղթք ի Զմիւռին՝ ի Պօլիս ի Գաղատիա և ի Կարին, սակս սորա և այլ զանազանից իրակութեանց։

ՄԾԴ. Աւարտ գործոյն Կարսայ Նուիրակին, և խնդրելն սրբ. վեհին գալ ի ս. Աթոռս։

ՄԾԵ. Կարգելն սրբ. վեհին զՂազախեցի Աւետիք վարդապետն ի վերայ Բամբկաձորու ի կողմանէ իւրմէ իբր վէքիլ և փոխանորդ։

ՄԾԶ. Առաքելն սրբ. վեհին զԲաֆայեցի Աստուածատուր ի Գաղատիա նուիրակ։

ՄԾԷ. Ի Թիֆլիզ առ Թաղօյենց պ. Մկրտումն պատուէր՝ զի Թղթատանն ադագաւ Բ փայտատաշ խառատ յղեսցէ։ Նաև՝ զքանս Ախթարմայիցն լաւապէս հոգասցէ։—

Առ Թիֆլիզու նուիրակ Մարտիրոս վարդապետն պատուէր՝ նախապէս զքաղաքն նուիրակել, և ապա զվիճակն նորին։ Եւ քահանայիցն ևս պատուէր՝ սի առատութեամբ տալ տացեն զնուիրակութիւն։

ՄԾԸ. Առ Նուխեցիսն շնորհակալութիւն վասն յղեալ դանձանակադրամին իւրեանց։ Եւ Բայազիտու Նուիրակին ևս միամտութիւն, վասն առ մեզ հասուցեալ նուիրակական արդեանցն։

ՄԾԹ. Առ Կարնոյ Առաջնորդ Յարութիւն պետն՝ վասն անցիցն Մուստուբկուվանիցն։ Եւ ի Պօլիս և ի Թօխաթ ևս թուղթք՝ վասն զանազան իրակութեանց։

ՄԿ.

ՄԿԱ. Յղելն սրբ. վեհին զՂազար պետն ի Յամիթ։ Եւ կատարելն զխնդիր հալապցի Պետրոս պետին։

1776

ՄԿԲ. Առ Հախբակու Սալահբէկն, որ խնդրեալ էր զՍողոմոն վարդապետն վերստին յղել անդ Առաջնորդ։ Բացասութիւն խնդրոյն։

ՄԿԳ. Ի յԱտանայ քաղաքն վասն նոր տօնացուցին, և ի Թօփրախղալայ ևս՝ վասն նոր հաստատեալ դանձանակին օրհնութիւն։

ՄԿԴ. Առ Խօյայ խանն և Սալմաստու Մէլիքսն, վասն Առաջնորդութեան Բարդուղիմէոսի Առաքելոյ վանիցն։

ՄԿԵ. Առ ս. Երուսաղէմի միաբան Համադանցի Յովաննէս վարդապետն, և առնոցին նուիրակ Կարապետ վարդապետն ի Կարս, ի պատասխանի թղթոցն նոցին։

ՄԿԶ. Վկայական թուղթ՝ զոր ետ Աշտարակցի Գէորգին վասն այդւոյ միոյ։—Փոլիցայ ի Կարին ի վերայ Մուրտիկեանցն։

ՄԿԷ. Ի Թիֆլիզ՝ առ Միրզայ Գեօրկին և Միսայէլն, նա և առ Յովաննէս՝ և Մարտիրոս վարդապետսն վասն ժողովք առնելոյ անդ սուրբ Կարապետի ժողովարար Մկրտիչ վարդապետին։ Եւ առ Արքայն ևս թուղթ վասն այլ բանից։

ՄԿԸ. Ի ՙՌարրանդ՝ վասն ընչից հանգուցեալ Պետրոսին Անկիւրեցւոյ։

ՄԿԹ. Ի Տաթեւ և ի Ղափան, վասն կացուցանելոյն Աբրահամ վարդապետին ի տեղի իւր Առաջնորդ զԿարնեցի Յակոբ վարդապետն, և կոնդակ վասն նորա։

ՄՀ. Ի Նուխի, վասն հասանելոյն առ մեզ կտակաց հանգուցեալ Ներսէսին, և վասն դանձանակին, հողերաժնի՝ կտակի, և այլ այսպիսեաց պատուէր։

ՄՀԱ. Ի Թօխաթ և ի Զմիւռին, ընդ մահտեսի Մկրտչին։—Առ Սարասկեար Ալի փաշայն թուղթ, և առ Փիլիպպոսն ևս ընդ Մուսա թաթարին։

ՄՀԲ. Ի Կարս, առ Իբրահիմ Աֆանտին և Գէորղն, ընդ Ալի Աղային։

ՄՀԳ. Առ Գեօրկի միրզայն յորդին Հերակլ արքային, բացասութիւն խնդրոյն, որ Ջորի խնդրէր։—Մխիթարական թուղթ ի Բայազիտ առ Մարդար Աղայն։

ՄՀԴ. Ի Թիֆլիզ՝ առ Հերակլ Արքայն ընդ Զազաբէկին. և Աւագերիցութիւն տէր Փիլիպպոսին։

ՄՀԵ. Գալն խանին ի սուրբ Աթոռս ի պատիւ, և թուղթք ի Կարին։

ՄՀԶ. Առ Հախբակու Սալահ բէկն և Իսաղ փաշայն, վասն Առաջնորդ յղելոյ անդ։

ՄՀԷ. Ի Պօլիս, ի յՌուռումէլի, յԶմիւռին, ի Թօխաթ, ի Կարին և յայլ տեղիս թուղթք։ Վասն հարկաւոր իրաց, բազմազան մտօք։

ՄՀԸ. Առ Կարսայ նոր փաշայն և Իբրահիմ Էֆէնտին և յոյլս, ընծայիւք։

ՄՀԹ.

ՄՁ. Ի Պօլիս, ի Կարին, և ի Կարս թուղթք, ընդ Թղթաչէն փոքր ֆռանկին։

ՄՁԱ. Ղապզ՝ զոր տուաք Բամբկուծոբեցի ծեր տէր Առաքելին վասն հողերաժնին։

ՄՁԲ. Ի յԶմիւռին, ի Պօլիս, ի Թօխաթ և ի Կարին թուղթք, նա և ի Վան։

ՄՁԳ. Ի Կարս, առ Իբրահիմ Աֆանտին և Գէորգն։—Եկաւ հասաւ ի Բատնոց։

ՄՁԴ. Ի Կարին և ի Կարս թուղթք՝ ի վերայ Կարսայ։

ՄՁԵ. Ի Բայազիտ՝ առ Ինիւզ բէկի որդի Սալման բէկն։

ՄՁԶ. Ի Բայազիտ առ տէր Վահանն վասն Ալաբկերցի Սահակին։

ՄՁԷ. Առ Հերակլ Արքայն, և առ Գեօրկի որդին իւր։

ՄՁԸ. Ի Յամիթ, ի Կարին, ի Բաղդատ, և յՌուռումէլի թուղթք։

ՄՁԹ. Յետն սրբազան վեհին զՄարկոս

վարդապետն ընծայիւք ի Շիրազ առ Քարիմ Խանն, և ընդ նմա թուղթք ի Շիրազ, ի Ջուղա՝ ի Բասրա, ի Բուշեռ, ի Հնդիկս, ի Քեարուլ և ի Գիլան և ի Համադան, զանազան որպիսութեամբքւ—Եկաւ հասաւ ի Դիւանն. ի Մօլլադարայւ

ՄՂ. Առ Կարնոյ իշխանսն վասն ընդ միմեանս վիճոյնւ

ՄՂԱ. Ի Թիֆլիզ՝ վասն տէր Աբրահամի եղբօր որդւոյ արարեալ չհասին, առ քահանայսնւ

ՄՂԲ. Առ Իպիշ Բայրաղդարն ի Կարսւ

ՄՂԳ. Առ Բայազիտու Իսաղ փաշայն, և Խամուրայ Հասան բէկն, և նուիրակ Ներսէս վարդապետնւ

ՄՂԴ. Ի յԱխլցխա առ Կարապետ վարդապետն, և ի Կարս և ի Կարին.

ՄՂԵ. Ի Սալմաստ և ի Հախրոկ և ի Խօյ, վասն իւրեանց ընտրեալ Առաջնորդացուին հաւանութիւնւ

Ծանօթութիւնք,

Ցանկ նիւթոցւ

Ցանկ յատուկ անուանցւ

ՑԱՆԿ ՑԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ

Աբբայեցիք 512
Աբեղայ սպասաւոր 171
Աբէլ ղլլարեցի 518
Աբրահամ 245 392
— Ագուլեցի 273 454
— Ամիրայ 345 47
— գանձապետ 395
— փայակ 504 6
— սպասաւոր ս. Գեղարդայ 70 82 83 37
— վարդ. 85 98 135 69 225 56 69 304 5 468
— » Աստապատցի 211 26
— » Ստաթէի վանից 371 72. 489 90
— » Թիֆլիսի 70
— » Տաթեւի 472
Աղուլիս 261 63 398
Ագուլեցիք 174 220 23 74 304
Աղամ 113
Ազատ խան 564
Ազատ խան Աղուանի 398
Ալամ խան 375 76 410 11
Ալաշկերտ 65 86 95 97 116 217 67 516
Ալէքսան 108 26 61 65 309 26 27 43 411 12
— աղայ 422
— Ակնեցի 59
— Համազանցի 95
— ղասապ 11
— փայակ 496
Ալէքսանդր Ֆէգօտիչ Իվանով Մոզդոկի պօլ-կովնիկ 396
Ալի աղայ 498 99
— » Ղայսարցի 33
—փաշա Կարնոյ 131 328 29 31 82 443
— » Սարասկեար 496
Ալիբէկ Թոփրախղալայու 444 70
Ալլահղուլիբէկ 376
Ալլահվերդի իւզբաշի 82
Ալմաս 448
Ալուխղ պատր 121
Ախալցխա 4 6 9 64 73 81 84 87 93 110 12 20 28 36 45 51—3 91 289 311 77 452 57 84 525 32 600 7
Ախալցխացիք 121 46 497
Ախրքեալակ 457
Ախթամար 608
Ախթամարցիք 64 136 93 453 61
Ախթարմայ 73 75 84 86 95 97 106 36 51 52 464 526 85
Աճգուր 311
Ակլ 356
Ակն 10 25 154
Ակոռ 14
Ահարոն 219 481
— վարդ. Եղեգաձորեցի 185 423—5 72
Ահմատ բէկ 136 37 80
— » Երեւանի 564
— Էֆէնտի Ղարախանօղլի 152
— խան Խօյու 475 77 79 98 607 8
— Միրզա մօլլա 155
— Չէլէպի 104
— փաշայ 194 289
— » Կարսի 152
Աղարաք 200 32
— որդի Պօղոս դերձակի 178
Աղալար Ջուղայեցի 416
Աղալօ 34 97
Աղամալ 392
— մահտեսի 183 392
Աղամջան 346 49 61 62 428 29 34—37 55 65 67 92 94 514 33

Աղայեկ 136
— կարնեցի 131
— մահտեսի 19 21
Աղասի էմին Մասեհի 169 70
— ենիչարի 64 76 78 244
— Ֆաթայ սուլթան 255
Աղէքսանդր վրացի 599
Աղթարմայք 445 46
Աղուանից տուն 241 371 575
Ամասիա 437
Ամրակում 41 43—46 48 52
— Թիֆլիսեցի 24 42
— Ղլլարու գանձապետ 49
Ամստերդամ 109 451 52 578
Այվազ 79
— Դաստակերտցի 16
Անանիա 237
Անապատ 99 167
Անատօլ 362
Անատօլու երկիր 372
Անգալի 94 95 468
Անկիւր 100
Անկիւրիա 65 81 102
Անկիւրեցիք 486
Աննա 443
— խաթուն 392 93
— մահտեսի 17
Անդրիա 219
Անտօն աղայ 237
— ամիրայ 55
— կաթուղիկոս Վրաց 34 96 124 332 89
— մահտեսի 71
— Յովսէփի եղբօր որդի 137
Աշղալայ գիւղ 477 599
Աշտարակ 482
Աշչի Իսպիրն 79
Ապաղ պարոն 37
Ապտալ փայեկ 224 28
Ապտիւլլահբէկ 38
Ապրօզատէ 514
Առաքել 322
— աղայ 426
— աղազադայ 306
— ամիրայ 302
— գրաբեր 479
ս. — եկեղեցի 36
— Մսրզամու 109
— տիրացու 216
— քահ. Բամբկուձորեցի 532
Ասլան 25 73 557
— աղայ 161
— բէկ 560 61 63
Ասնաֆ 99
Ասորի 475
Ասորիք 25
Ասպահան 388
Աստապատ 260 75
Աստարարատ 506
Աստաբապատեցիք 1
ս. Աստուածածնի Անկուններաց եկեղեցի 36
Աստուածապահ տիրացու 305
Աստուածատուր 392
— աղայ Ապրօղլի 428
— Ազազատայ 301 426
— Ապրօյեան 451 52 534
— գանձապետ 36
— Թիֆլիսեցի 568
— մահտեսի 108
— Ջէլէպի 21
— Ջուլհակ 500
— քեաֆայեցի 460
— վարդ. 94 96
Աւազ 289
Աւղի փաշայ 283
— » Բայազիտու 69 86 384
Աւգիւլլաբէկ Թոփրախղալայու 86
Աւետ պարոն 35
— կարբեցի 394
Աւետիս 271
— առաջնորդ Հոփսիմէի վանից 250
— վարդ. 14 292 326 69
— » առաջնորդ Խորվիրապի 157 68 77 87 211 17
— » Ղազախեցի 459
— » Նուիրակ Գիլանի 166
Աւետիք 9
— աղայ 426
— գլաւա 396
— Խալղուտենց 412
— վարդ. 94 368
— » Ջուղայեցի 419
Ատանա 76 475
Ատրանա 439
Արապկեր 25 149 68 210 65 331 605
— ցիք 170 71 204
Արեւելքի վաճառականք 378

Արեշաա փայակ 276 77
Արիանոս 548
Արիստակէս ամիրայ 302
— կարնեցի 125
Արկուռ 177
Արղն 356 407 54
Արղութեանց Բէջան 123 25
Արաաղաքան գիւղ 31
Արտահան 457
Արքայ Օսմանցւոց 16
Աֆթանդիլ 241 46

Բաբաբէկ 366 76
Բաբերդ 115 84 430
Բաբիջան Երեանցի 572
Բաբօ 593
Բադու 487—88 547
Բալամ 519
Բալասան 79
Բալի 518
Բալու 25 226 516
Բաղդատ 411 22 57
Բաղտասար 22 112 19 59 61 62 65—7 73
207 94 309 26 27 83 495 566 79 88
92 602 4
— ամիրայ 439
— ղէրսեցի 95
— Կարնոյ առաջնորդ 114
— վարդ. 1 47
— » Նուիրակ Վանայ 66 82 286
Բաղէշ 36 54 55 67 71 135 286 88 90 373
Բաղիշեցիք 53
Բաղչաղիւլ քոյր Մելիք Սարդիսջանի 56
Բաղր տաճիկ 200
Բաղրուն հաճի 196
Բամբակաձոր 118 88 218 366 76 459 532 93
Բայազիտ 4 13 15 59 60 69 79 102 45 48
94 200 04 06 18 21—3 31—3 79 80
83 84 92 98 305 17 24—7 43 71 78
88 463 68 70 74 85 93 504 06 46 51 601
Բայազիտցիք 232
Բայրամ քուրդ 508
Բանկալու 422
Բանդարարաս 96 411
Բանդարբուշեռ 411 80 572 73 79 81—84
Բանդարռիկ 411
Բաշաչուխ 76 289 523
Բասրա 90 96 107 8 12 19 41 59 64 67 259
309 26 27 69 77
79 80 83 411 12 17 18 21 22 65 80
97 556—9 66 69 73 79 80 83 84
Բատնոց 541
Բարթուղ 44 394 97
Բարդուղիմէոս 24 50 51
ս. — առաքեալի վանք 472 77 506 608
Բարսեղ 157 226
վարդ. փառակեցի 491
— » 127—30
— ուստայ 253
Բարսօն ժաքսապետ 234 35
Բէգլար 410
Բէժան 524
Բէշքիւթուր 516
Բէջան Աղալօի եղբայր 84
Բէրիձէ 388
Բէրքով Նիկիտա Աֆանասիչ 24
Բէքիր բէկ 270
Բերդի Կաթուղիկէ եկեղեցի 501 2
Բորաղան 519 90
Բումբայ 411 16 23
Բունիաթ Սսաապատցի 210
Բուշեր 555 59 66
Բուխարա 521 22
Բջնի 491
Բրաբիօն 239
Բռնչալու 33 34 218

Գաբրիէլ 322 23 34
— Սուրամեցի 546
Գալուստ 86 125 47 231 383
— արեղայ 324
— աղայ 423 52
— աղաղաայ 306
— Թիֆլիսեցի 95
— մահտեսի 21
— վարդ. 66 123 24 35 265 319 463 509 471
— » Նուիրակ Բայազիտու 278 79 30 85
476 77
— » Ջուղայեցի 168
Գաղատիա 66 99 126 50 299 307 62 79
ս. Գայիանէի վանք 373
Գանձասար 27 28 34 47 72 99 110 175 472
Գառնի 231
Գասպար 491
— ամիրայ 111 302 13 17 44—777 438
— խօջայ 157 283
— Ծաղկնուձորեցի 395

— վարդ. ս. Առաքելոյ վանքի 286
— քարտհաա 280
— քարաաշ 469
Գեամալմասի 319 20 87 601 2 6
Գեանճա 82 175—8 283 461 89 97
Գեղարդ ս. 33 123 24 386
Գեօյա 457
— փաշա 132 40
Գետարգելու վանք 242
Գէորգ 163 238 41
— Խալաֆենց 391
— Խօջայ Ակնեցի 247
— Աշտարակցի 481
— Թորոսեան 481
— Կարսեցի 328 87
— վարդ. 59 90 94 212
— վարդ. Բալուայ առաջնորդ 449
— » Ջուղայի 574
— « Ուսումնելու Նուիրակ 272
— վէքիլխարջ 264 82 319 20
— տիրացու Ագուլեցի 304
Գեօրի 445—47
Գէօրկի բէկ 388 593 96
— Միրզայ որդի Հերակլ արքայի 33 241 311 12 83 483 84 98 47 59
— Վրացի 72 73
Գիլան 7 96 166 78 321 22 42 43 72 88 559 71
Գիւ խան 314 16
Գիօ Շանշենց 106
Գրիգոր 216 305
— աղայ 24 320 22 417 21 22 530 54 73 88
— » Զաքիկենց 307 9 16 28 29 368 69 73 417 18 22
— » Խօջաջանեան 575
— » Մատրասու 579
— Եփրիկեան 542 43
— Թորոսեան Թաւրիզեցի 393
— Կարնեցի 178
— Լուսաւորիչ 76
— սուրբ 30
— մահտեսի 15 21 65 66 190 204
— » Եփրիկեանց 9
— » Եփրիկզատէ 64 361 430 432
— » Մսրլեան 432 515 16 42 44
— որդի Զաքիկենց Միրայէլի 161 62
— պատրիարք Կ. Պօլսոյ 54 145 268 69 94 359
— վարդ. 35 250
— Արտահանցի 457
— » Թարվիզու նուիրակ 102 468
— » Կարսայ 457
— » Նախավկայի 423
— » Վանայ առաջնորդ 70
— տիրացու վառնայի 513
— Ստամբոլցի 589
— քահանայ 174
Գիւլգիւլ 392
Գիւլիղարդ գիւղ 566
Գիւմիշխան 605
Գօրի 332

Դալի 556
Դամղուլի 369 76
Գամղուլի 366 76
Գանիէլ Խօջայ 21
— սեագլուխ 36
— վարդ. 36 54 71
Գարրանգ 42 321 403 85—87 547
— Գիլան 485
Դաւիթ 94 95 148 322 36 469 572
— Բաշխայ Ֆայուստ 79
— որդի Ասա. Թիֆլիսեցւոյ 108
— աղայ Թիֆլիսեցի 343
— առաջնորդ Կեսարիոյ 350 52
— ղաթրճի 386
— վարգ. 22—4 41 42 44 46 49 50 84 98 123 24 25 241 84
— » Աթոռակալ 609
— » Առաջնորդ Զմիւռնիոյ 313
— Վրացի բէկ 5 485
Դարէճան Բայրամի կին 391
Դարւաս գիւղ 531
Գաւրիշք 585
Դաքա 412 15 22
Գիատին 278 331
Դիարբէքրու 25
Գիլան Ռէս 331
— տանուտէր Ծուճանի 279
Գիլօ 278
Գիւան Էֆէնտի 76 78

Եայ 392
Եաղուպ աղայ 150 28 98
Եզր կաթողիկոս 76

Ելքեան բէկ 61
Եկատերինա Կայսրուհի Ռուսաց 333
Եղեգաձոր 198 99 230
Եղիա 352
Եղիազար 394 520
— աղայ 320
— » Պետրպօրկ 396
— Կաթուղիկոս 398
— վարդ. 29
Եղիկ գանձապետ 6 57
Ենկօ 180 600
Ենովք ղազանչի 97
Ենոք 608
Եսայի 225 38 305 22
— Գէօրեցի 285
— Զմիւռնիոյ 451 93 533
— Իւզբաշի 488
— համազանցի 393
— Մասեհեան 533 37 39 41 46
— Նեստորական 547
— վարդ. 15 19 198 347 48 453
— » Բայազիտու 239
— » Զմիւռնիոյ 514
— » Թադէոս Առաքելոյ 293 472
— » Նուիրակ Եւդոկիոյ 11 15 16 21 38
— վրացի 229
Եսաուլբաշի խան 37 38
Երանոս քարտաշ 15
Երապօլիս 149 53 54
Երեւան 8 57 131 33 36 37 39 49 55 95 232 46 63 324 75 87 98 447 89 91 95 99 524 91
Երուսաղէմ 16 90 168 336 400 30 79 81 82 680
— փեսայ Գալուստ վարդ. 223 224
Երեմիա վարդ. 252 74 325 72
Եւդոկիա 127 214
Եւրոպացիք 575
Եփրիկեանց Գրիգոր 208

Զագարէկ 105 25 500 1 3 20
Զալ քեվխայ 83 96 97
Զալիբէգ 36 37
— վրացի 88
Զաման խան 119 39 517
Զարիֆ 392
Զաքարիա 226 416
— Բաբիջանի որդի 178
— Գիւլնազու որդի 125
— վարդ. 8 10 16 26 29 30 53 54 69 80 84 87 88 92 98 105—8 10—12 24 33 42 61 62 202 5 17 25 28 33 35 36 59 60 74 307 10 18 33 41 70 77 401 23 26 39 71 86 524 36
— » Ամբաօլու առաջնորդ 54 288
— » Էջմիածնի նուիրակ 99
— » Թիֆլիսու առաջնորդ 42 52
— » Ինչքիլիսէի առջն. 69 116 228 74 54
— » Նուիրակ Կ. Պօլսոյ 120 26—8 37 38 55 59 64—6 203 22 24 93 97 301—4 13—5 29 46 62 65—8 79 426 39 53 54 65 524 36
— Պատրիարք 402 24
Զաքի խան 505 6
Զէյնալ 194
— Հաճի 196
Զմիւռնիա 1 20 21 106 9 40 201 33 99 336 65 425 26 37 52 92 508 78
Զօհրապ 18 391
— խան Թիֆլիսեցի 314
Զօրաբարէլ 481
Զօրայ 556

Էլիազ 521
Էլօ 57 81 87 195
Էջմիածին 30 47 91 251 88 96 360 67 400 5 6 513 29 43 84 605 6
Էմին աղա Մատէնի 152 54
Էրզնկան 150 430 53
Էրզրում 318
Էրմաս գիւղ Կարնոյ 252

Ըողվան աղա 177 228 35

Թագւոր 444
Թադէոս 132 95 303 45 441 65
— առաքեալ 117 18
— » աջ 232 33
— » վանք 607
— Երէց 50
— տիրացու 256
Թալնցի տաճիկ 598
Թալպիղ 195
Թահմազ 93 99
— շաթիր 96
Թամար Թիֆլիսեցի 519
Թամզարայ 430 34 43 554 605 6
Թամուր աղայ Քեարքիւտու 333 34

Թարխան աղայ 322 94
Թարճիման օղլի 202
Թարւէզ, Թաւրիզ 95 129 62 65 67 204 7 98 324 87 88 463 506 58 72 90 99
Թաքիրաազ 439
Թիֆլիս 14 17 30 42 50 52 70 82--4 96 97 105 7 23 29 31 32 49 78 79 85 89 96 219 29 41 55 25 45 61 83 546 67 311 20 331 87—90 399 401 69 90 92 07
Թիֆլիզեցիք 18
Թոմաս ամիրայ 345
Թուման 81 283
Թուժաջան 237 448
Թումա Արուլեցի 463
Թուրքալու խան 467
Թորոս 219 413
— գեամբրիսեցի 482
— Խօջայ 247
Թօխաթ 19 21 80 110 12 50 57 68 83 95 202 12 23 24 33 36 47 99 306 42 46 50 53 62 66 425 28—30 34 36 43 50 55 56 67 92 94 95 508 14 32 41 604 5 6
Թօմայ աղայ 347 424
— Ագուլեցի 305
— Առաքեալ 221
— Առաքելոյ վանք 251 52
— մահտեսի 35 36 70 225
— վարդ. 274 305
— » առաջնորդ Ագուլեաց ս. Առաքելոյն 174 220 21 49 53 372 423
Թօփրախղալայ 278 470 71 75 76

Իբրահիմ Աղիղի որդի 386
— էֆէնաի 40 116 51 55 263 65 82 318 49 76 77 83 84 458 95 98 517 24 25 30 31 40 45 54 601 2
— » ի Կարս 31 32 243 328—30
— Խալիլ խան 26 34 72
— խան 489—90
— տաճիկ 180 382 410
Իզմիր 456
Իզմիրցիք 441
Իզնիմիտ 439
Ինկլիզ 584 87
Ինճասա գիւղ 147
Իշխան 491
Իպիշ բայրախտար 597
Իսահակ 28
— ամբարտար 250
— ամիրայ 344 45
— Կաթուղիկոս 61
— Նուիրակ Կարնոյ 203 62 70
— վարդ. 249
— սպասաւոր 134
— փառակեցի 360
Իսաղ աղայ 35 71 134
— աղայ Վանայ 333
— բէկ 86
— փաշայ 226 35 67 83 506 8
— » Բայազիտու 177 206 34 39 40 43 474 598 99
Իսմայիլ 513
Իսպիր 79
Իսպիր բաշի Խօջայ Շինիկչի 79
Իսրայէլ 17 23—9 41—4 48 49 52 72 175 241 45
— Կաթուղիկոս 359
Իսրայէլեան Սողոմօն 41
Իւան 105
— Իւանիչ Կաւալեր իշաինտերն Ղզլարու պօլկովնիկ 395
Իւանէ Դիւանբէկ 242 84
— Թուանկչի 137
Իւղաբեր կին 448
Իւնուս բէկ 545
Իւսուֆ 79 540

Լալազար Հախբակեցի 610
Լաքնահուր 411
Լազդի 236
Լեոն միրզա արքայորդի 387 88 89 445
Լընուար Դ'բալէ 583
ս. Լուսաւորչի վանք 358
Լեկզիք 491
Լիժ 211 25
Լօճկ 356

Խաթուն կին 219
Խալիլ աֆանտի 86
— փաշայ Կարնոյ 361 432
Խամսայ երկիր 45 410
— մելիքներ 26 574 76
Խամսեցիք 17 28 99
Խամուր 278 79
Խաժփերի 225

Խանում 239 449 469
ս. Խաչ վանք 147
Խաչատուր 22 56 57 60 62 235 71 393 95
— Գիմիշխանցի 215
— զինակիր 384
— մահտեսի 101 14
— Մելքոնենց 19 129 30
— վարդ. 376
— վարդ. Ջուղայի առաջնորդացու 92
— աիրացու 21
Խաչիկ աղայ ի Պեարպօրկ 396
— Ջուղայեցի 480 81
Խաղիւզ 128
Խարբերդ 476 516 37
Խրարրն 556
Խնձորէսք գիւղ 173
Խոսրով խօջայ Աղուլեցի 398
Խորվիրապ 57 177 217 331
— վանք 339
Խութավանք 482
Խուդաւիրս Մէլիք Ծալմասաի 180
Խօջայ Առաքել 456 67 504 6 16 27 36 41 603
— Ալէքսան 556
— Բարսեղ 289
— Գասպար 356
— Գրիգոր 288
— Դանիէլ 426
— Երեմիա 426
— Թումօյ 288
— Խոսրով 398
— Ղուկաս 426 515 16
— Մալիկ 288
— Մալխաս 426
— Միլաօն 288
— Նազարէթ 297 303 66—19 444 65 510
— Սիրուն 288
Խոյ 136 37 207 10 36 55 79 81 98 388 475 547 607 8
Խօյախան 477

Ծատուր 272 73
Ծատուր Ղուլիջանի որդի 236 38
ս. Ծիրանաւոր եկեղեցի 36

Կաթնաղբիւր եկեղեցի 16
Կալկաթա 370, 411 13 15 23
Կախ 401
Կակալօ Թիֆլիսեցի 399 559 87
Կայէն 113
Կապ գիւղ 388
Կարապետ 8 82 127 226 39
ս. — 62
— Աբեղայ 217
— Ամիրայ 342 49
— Առաջնորդ Ղօշավանից 112 17 481 524 600
— Էջմէջճի 79
— Լուսիկ 404
— միաբան Լիմ անապատի 212
— վարդ. 122 408 80 524
— Երնջակի ս. Կարապետի 199 230 31 423
— » Երզնկացի 169 515
— » Կարբեցի 313 35 60 481 525
— ս. Կարապետի 174 77 99
— » Կարմիր վանից 61 431
— » Նուիրակ Ցամթայ 224 357 63 441 66
— » Ջալիկեան 494
— » սուտ միաբան Կարմիր վանից 65
Կարին 4 8 11 15—8 20 22 33 37 56 60 61—64 67 76 82 99—101 6 10 12 16 21 26 32 33 37 38 42 50 55 56 69 70 83—5 88—90 93 94 208 10 15 19 21 24 33 36 69 71 75 303 13 17 18 24 43 47 48 53 57 60 62 65 76 78 79 82 83 87 418 24 33 38 39 44 50 65 76 81 97 503 4 8 24 31 32 58 83 98 99 601 4 10
Կարնեցիք 276 361 63 597
Կարմիր Կոնդ 66 69 234 35
— Վան 61 199
Կարս 4 14 34 57 79 104 16 17 22 25 45 46 51 52 68—70 88—90 219 43 44 61 63 89 313 19 43 47—9 53 76—9 82 83 418 33 38 81 84 97 524 583 601
Կարսեցիք 117
Կարսայ փաշայ 517 30
Կաքաւ կին 449
Կեսարիա 25 353 62
Կիրակոս 444
— մահտեսի 21 71 361
— քանքանչի 82
Կիւրակէ աղայ Ցոն 537
Կիւրեղ Աղեքսանդրացի 584
Կիւմիշխանայ 31 425 30 34 53
Կ. Պօլիս 2—5 10—13 18 21 53—67 75

76 82 84 99 106 26 140 42 45 54—9 62 65 220—23 60 71 96 305 7 13 14 19 28 36 38 42 43 46 51 53 57 66 76 83 99 412 18 24 28 30 42 48 81 504 8
Կ. Պոլսեցիք 56 297 427
Կոստանդին 76
— Կաթուղիկոս 76
Կոստանդինոս Ղուլ պարոն 93
Կօշտօ 319 83 456
— Կարապետ 602

Հագրի փաշայ 235
Հագրվարդ 448
Հալապ 150 317 55 82 404
Հախրակ 207 11 388 473 507 607
Հախրակեցիք 179—83 478 79
Հախրաա 25 284 425 593 96
Հաճ 37 59
— արապ 204 14
— բաղր 231 32
— խան Նախիջեւանու 192 230 31
— Ջալալի 254 77 78
Հաճին քաղաքապետ Սպահանու 564
Համադան 558
Համադանցիք 7
Հայոց ազգ 154 72 76 384
— տուն 580
Հայրապետ 281
Հայք 113 21 220
Հաշտարխան 22 41—5 52 123 24 49 68 324 43 71 72 88 90 91 99 425 85 91 519 23
Հաշտարխանցիք 23 95
Հաջի Ալի փաշայ Ջանիկցի 602
— խան ազգակից Նախիջեւանու խանի 1
— ֆահրատ 331
Հասան աղայ 177 264
— բէկ 279
— » Խամուբայ 598 99
— խան 326
— Ղալա 601
Հատայաա խան 572
Հաֆթուան գիւղ 607
Հերակլ Արքայ 6 33 34 72 76 83 96 104 12 16—18 23 24 31 32 38 76 88 89 241 66 311 33 34 54 55 87—89 425 45 75 96 97 99 500 1 30 47
Հերապեա հեքիմ 242
— Աբրահամի որդի 273
Հերոնիմոս պատր 121
Հիւսէին Ալի խան 283
— Ղարահիւսէյնի փաշայ 198
Հիւսէյնիկ գիւղ 476
Հիւսիբէկ 125
Հիւքիւլաբէկ 230
Հնդիկներ 10 90 106 7 299 310 25—27 44 66 74 411 21 24 80 509 59 66 73 88
Հնդստան 556
Հուփսիմէ 82

Ղազախ 14 218 459
Ղազախեցիք 14
Ղազանչեցիք 174
Ղազանչեցի Հայք 17
Ղազար 59 324 73 76 81
— Ախսախալու 117
— առաջնորդ Ջորադեղու 340
— եղբայր Գէորգ վարդ. 61—2
— Յամթայ նուիրակ 470 511 52
— Շօրոթեցի 366 68 78—80 421 65 587
— վարդ. Տաթեւու 174
— » Փարպեցի 225
— տիրացու 495
— Օլուսանենց 240 349 74
Ղազարապատ 503
Ղալաթիա 128
Ղայիպ զուլի բէկ եղբայր Թամիրխան բէկի 37—9
Ղադր աղայ 33
Ղարաբէկ 145 91 240 44 60—65 329 83
Ղարաղաղ 28 236 414 557—58
Ղարախանօղլի 281 82
Ղարակէօղ 79
Ղարաչորան 411
Ղարիպ կին 564
Ղարտաշ 107
Ղափան 28 173 236 489 518
Ղափուջիրաշի 498
Ղեւոնդ աղայ 322
Ղզլար 24 41—4 48 52 82 84 98 390 487 518 19 21—3
Ղզլրաշ 522
Ղուլիջան 272
Ղուկաս Թուանկչի 119
— վարդ. 10 20 21 38 109 12 15 201 2 452

— » Զմիւռնիայի Նուիրակ 18 142 222 33 305 6 426—8 40
— » Ջուղայեցի 412 584
Ղուրդք 585
Ղոի 209
Ղրիմ 31
Ղօշավանք 14 117—0 602

Մագրաս 307 69 411 13 15 18 20 22 573 89
Մաթօ աշխարհական 86
Մալխաս 491
— գիւղացի 57
— մահտեսի 71
Մախսուտ բէկ Մշու 1-3 73 135 289
Մակար 125 444 599
Մակեդոն 548
Մակու 388 591
Մահմադ աղայ 366 76
— Ախալցխայի փաշայ 136
— բէկ 153 236 78 90 600
— Էմին 326
— Հաջի 297
— Մանազկերտի իշխող 87
Մահմէդ 380
Մահմուդ փաշայ 228
Մահմուսան 25
Մահպուպ կին 449
Մահրի կին 449
Մաղաքիա մահտեսի 112 513
Մանազկերտ 495 598—9
Մանուէլ սրբաղան 216
— վարդ. առաջնորդ Հաղարծնոյ 74 218
Մանուկ 135 36 422
— Մանուչար Մկրտումի որդի Արտաւիւցի 393
Մաշկաթ 366
Մատեն 153—4
Մատթէոս մահտեսի 71
— վարդ. 220 22 49 53
— » Կեսարացի ս. Դանիէլի վանուց վանահայր 251—2
Մարաղա 388
Մարգար 109 18 95 216 34
— աղա 14 32 63 87 165 292 93 327 84 412 68 557
— » Բայազիտու 32 326 97 98
— Շահրիմանեան 583 88
— Ռէս 286
Մարգարէ 81
— աղայ 221 499
— որդի Եղիազարի Ուղումչեցի 546
Մարգարիտ 159
Մարիամ 392
— խաթուն 216 19
— խանում 392
Մարկոս 217 32
— առաջնորդ Խորվիրապայ 267 331
— ապաղրիչ 19 20 203 455 514
— փեսայ Յովհաննիսի 206
Մարմուղ գիւղ 598
Մարչիլիա 579 88
Մարտիրոս 194 207 8 26 348
— ամիրայ 126 302
— Արապկերցի 150 56 57 72 365 542
— Գիւմիշխանցի 215
— Երուսաղէմի պատրիարք 398—9
— Հովուեան 439
— մահտեսի 15 203—4
— Նեղղուռր 403
— վարդ. 3 74—6 78 79 84 103 20 22 36 91 388—90
— » Ակնայ առաջնորդ 9
— » Թիֆլիսի 462
— տիրացու 216
Մարսուան 273 437
Մելիք Աղամ 27 72 374
— Աւետիք 97 105 31 266 322 90
— » Թիֆլիսեցի 132 38—9
— Բէգ 14
— Գէմօն Բամբակաձորու 118
— Եսայի 26
— Խամսայու 576 78
— Խուտավերտի 182 609
— Ղարաբաղու 575
— Մահտեսի 183
— Մնացական 104
— Յովսէփ 374 410 14
— Շաքարօ 376 597
— Ռուստամ 82
— » Գեանճայու 103
— Սարգիս ջան 31
— Փօլ 173 74
Մէլիքսէթ 322 23 33
— վարդ. Յօհաննու վանից 286
Մելքոն Հաշտարխանցի 392
Մելքոն 8 11 22 32 33 56 59 63 66 123

269 281
— Վանեցի 279
Մեհրապ 279 81 94 98 608—9
— Թիֆլիսեցի 137 80 210 55 547
— Վրացի 136
Մեհրօ 477 599
Մեղրի 174 206
Մեղրեցիք 20
Մէհէմէա կենճ 350
Մէրմէր կին 564
Մեսրոպ 173 206
— վարդ. 182 83 206 431 42 44 65
— » Կարնոյ 430 504 15 35—6
— » Ղափանի 174
— » Նուիրակ Թաւրիզու 210 50
— » Նուիրակ Կարսայ 58
Միլաօն 71
Մինաս 93 103 219
— աղայ. 322
— զինակիր 384
— մահտեսի 35 70
— նուիրակ 320—21
— պետ 40
— » Հաշխարխանու նուիրակ 148 49 98 230 446
— վարդ. 10 11 22 28 39 58—63 83 117 281 324 388 90 92—97 99
— » առաջնորդ Ղօշավանից 6 32 40 57 116 18
— » նուիրակ Ցամթայ 157 58 291
— » նուիրակ Ռուումելու 16
Մինասեանց Խօջայ Ջուղայեցի 159
Միրզա 71 168 69 254 77—8 425
— Ասկեար 37 38
— Բարարէկ Քեալբալայի 194 218 23
Միրրշկեար Իւանէ 390
Միրըշքեար աղայ 34
Միսայէլ Միրզա 483
Միքայէլ 106—8 87 216 559
— աղայ 159 60 309—10 26 27 69 73 80 416 17 21 23 555 77 87
— Բասրայու 413 17
— » Էմիրազեանց 378
— » Մարտիրոսեան 367 70
— վարդ. Աստապատու առաջնորդ 224
— » Առաջնորդ Թամզարայի 159 443 554. 605
Միֆօտ արքեպիսկոպոս Ռուսաց 51
Մխիթար 34
Մկրտիչ 31 381
— աղայ 10 112
— Արևելցի 492
— Շօրօթեցի 107 378 80
— ղետ 89 468
— Ջուղայու առաջնորդ 562
— վարդ. 91 171 96 98 213 18 30 32 57 76 85 325 47—8 88—90 420 25
— » Պօլսոյ 297
— » աեղապահ 446
— Քեալանթար 571
— Մկրտում 204 6 66 84 85 323 34 597
— երեցփոխան 446 593
— Թաղոյենց 266 305 461
— Թիֆլիսեցի 18
— Ջուղայեցի 394
Մշլիրանտար 411
Մողդոկ 518 21 23
Մողնեցիք 118
Մոսկով 149 322 42 43 90 96 97
Մովսէս 343
— Աստապատցի 44 49
— Ղարաբաղցի 573 76 78
— մահտեսի 112
— տիրացու 95 238
— Փարաքարցի 391
Մութի տաճիկ 261 62
Մուհմաա աղայ 76
Մուշ 4 13 25 71 286 547
Մուսի Ալէքսանդր Դլաշ 308 69 417—9 586
— Բէյսոն (Յովսէփ) 525 82
— Դէյսոր (Յովհաննէս) 526
— Դէվօ 418 583 86
Մուսայ Թաթար 496 7
Մուսուլլայ 102
Մուստաֆայ 602
— աղայ Սազաղասի 186
— Թագաւոր Օսմանցւոց 297
— տաճիկ 6
— փաշայ 133 36 38—40 45 46 51 54 240 44 50 61 63 64 89 357 381
Մուսաբիս 498
Մուտրկու վանք 377 464
Մուրատ 195 234 384 85 444
— իշխան 57
— խառնակիչ 403
— մշեցի 428

Մուրտիկեան Առաքել 22 32 38 60
— Խօջայ Առաքել 150
— » Նազարէթ 155 56 202 314 45 54 78 541
— Կարապետ 13
— Փիլիպպոս 80 114 156—7 183—5 194—6 202 9 12—6 18 19 222 224 305
Մուրտիկեանք 9 11 68 133 363 71 455 76 505 15 41 50
Մուրտիկզադէ Փիլիպպոս մահտեսի 203
Մսըր 275 90
Մստրդամ. 321 514
Մսրդամ. 142
Մօլարթխուցէս 335
Մօլլայ մուսայ 86
Մօլլադարա 591
Մօսկով 24 44 166 320 487
Մօրիկ կայսր 76

Յախճալաղ 34
Յակոբ 22 314
— Ակնցի 137 41
— ամիրայ 126 42 56
— Գրիգորի որդի 11
— Իսմայիլցի 272 76
— Կաթողիկոս Շամախեցի 205
— » Ջուղայեցի 398—400 577
— Կարմիր վանից 110
— Մահտեսի 156 57 84
— Յովհաննէսի որդի 137
— Նոր Նահատակ 225
— Շահմիրեան 576
— Պօլսեցի 224
— վարդ. 135 74 91 226 318 47
— » Գեանջեցի 482
— » Թէքիրտաղու (Թրակիոյ) 315 340 41 44
— — Կարմիր վանից 110 431 531
— » Կարնեցի 250
— » Կարսայ Նուիրակ 190 217 489 90
— Ջուղայեցի 493
— տիրացու 244 89
— Փիւրքչի օղլի 137
ս. Յակոբայ վանք 35 336 438
Յամիթ 135 55 219 21 26 38 61—3 65 99 355 57 405 48 50 54 65 553—4 58
Յամթեցիք 356 64 403
Յարութիւն 79 85 103 4 6 62 97 228 41 305
— աղայ 259 309 26 70 421 559 80 84
— ամիրայ 302 44 47
— Գեամրիսեցի 481
— Եղիայի որդի 515
— Երևանցի Թասալուի որդի 20 178 242
— Էմիրաղեան 367 78 79 418 19 21 22 587
— Խօջայ 21
— Կարնոյ առաջնորդ 269 463 504 -5 91
— մահտեսի 15 160 87
— Ջաւահիրզադէ 305
— ջուլհակ 198 230
— ուստա 519
— ուստաբաշի 229
— վարդ. 10 20 163—65 222 316
— » Բասենցի 315 511
— » Թիֆլիսեցի 14 82 103 13 14 28 462
— » Թօխաթու 357
— » Կարնոյ 430
— » Զմիւռնիոյ 365
— » Ճռասօն 317 48 53
— տիրացու Համազանցի 7 8
Յովհաննէս 222
— Աբրահամեանց Օքսուզ օղլի Կարնեցի 387
— ամիրայ Ակնցի 142 224
— Էլչու տղայ 242
— խաղաղորդ Կարնեցի 387
— Խօջայ Ակնցի 243 47—8
— կաթողիկոս 176 375
— Համադանցի 165 66 480
— մահտեսի 15 38 70 100 15 56
— պաամաղիր 225
— պետ 249
— վարդ. 76 83 98 123—5 323—5 39
— » Ղափանցի 205
— տիրացու 61 64 216
Յովակիմ վարդ. 438
— պատրիարգ Երուսաղէմի 537
Յովասափ մահտեսի 262—3
Յովհաննէս 95 116 391 92
— աղայ 320 80
— » Պետրպօրկի 326 520
— գանձապետ 36
— կաթողիկոս 17 72 98 99 110
— » Գանձասարու 472 88
— Կարբեցի 450—1
— Թիֆլիսու առաջնորդ 266—7 84 85

322 23 54 523
— Թղթաշէն 328 87 419 595
— Համադանցի առաջ. Սաղիմայ 324 30 37 40 67 69 414 15 585 99
— Ղազար Քանաքեռցի 488—91
— Ղազախեցի 469
— մահտեսի 115 32 212
— » Նմուսեցի 11 15 16 22 32 67 79 81 114 38—40 47 48 96 200 31 32 40 43
— Ջոլախի որդի Թիֆլիսեցի 485—6
— Ջիկիթ 519
— Սահաթպազ 405
— վարդ. 8 24 41 51 56 57 151 234 35 88
— » Գաղատիոյ 307 439—40 453
— Երուսաղէմի 421
— » Իսպիրու առաջնորդ 234 40
— » Հաշտարխանու նուիրակ 40 41 392
— » Յամթայ 534
— » Ուռումելու նուիրակ 107 216 512
— տիրացու 391
— տպագիր 511
— քահ. Պետրպօրկի 520
— » Ջուղայեցի 540
Յովնաթան 125
Յովնաթանէս 106
Յովսէփ 93
— Երէց 488
— Թիֆլիսեցի 399
— Թղթաշէն 328
— Խօջայ 71
— Մունթոենց Թիֆլիսեցի 549
— նուիրակ Ուռումելու 280
— վարդ. 94 95 108 59 61 67 87 389 93 94 96 97 421
— » Հաշտարխանու 320 22 42 72 97 502
— » Հնդկաց նուիրակ 22 56 141 159 234 55 309 27
— փայակ 260
Յորմի (կամ Ուրմիա) 388
Յօզամիշ 534
Յօհան 216 19 610
— Զարքեազ օղլի 133 37 38
— վարդ. 80
— » Ուրհայու 435
— տիրացու 158
— Քռնեցի 76
Յօհանավան 202 305
Յօհաննէս 25
— Կաթուղիկոս 27-9 31 33-4
— տիրացու 36
Յօնան 132 190-92 266 67 73
— մահտեսի 4 6 9 35 40 63 66 78 138 45 46 52 69 93 302 7 465
— պետ ս. Կարապետի առաջն. 2 3 11 12 211 76 88 86 88 362 72 415
— վարդ. 13 36 187 225 90
— որդի Նազարէթի 391

Նարար վէքիլ 561 63 70
Նարի աղայ եղդի 547
Նազար 216 466
— Ադուլեցի 392
Նազարէթ 150 223 346 49 65 82 441 54 55 92 527 605
— ամիրայ 439
— եղբայր Փիլիպպոսի 110
— Խօջայ 113 275 76
Նազլու (կին) 216 449
Նազլու խան 481
Նախիջեան 236 423
Նախիջեանցիք 174
Նահիա 599
Նատալիա փոքր դշխուհի 520
Նասիպ 107 112
Նաւասարդ ներկարար 207
Ներսէս աղայ 397 98
— Լամբրոնացի 76 480
— Կաթողիկոս 29 47
— Կլայեցի 76
— վարդ. 477
— » Բայազիտու 495 598—9
Նէֆիս օղլի Յովսէփ կոչեցեալ 136
Նիազ 25
Նիկիտա Աֆտնասիչ Բէդքով 24
Նիկողայոս 61 219 462
— Մասեհի որդի 21 305
— Ջուղայեցի 298
— Քանաքեռցի 163 412
ս. Նշան եկեղեցի 36
Նուիրա (կին) 448
Նուխի 463
Նուխեցիք 462 63
Նուռուզ 97

Նուրիջան 396

Շահբանտար 469
Շահին մահտեսի 79
Շահնազար Ագուլեցի 392
Շապաղ տաճիկ 180
Շահվերդի 107
Շամ 289
Շամախի 28 29 48 175 547
Շամախեցիք 31
Շամիր աղայ 370 75 413 22 23 573 76 77 89
Շամտին աղայ 253 68
Շամու 261
Շապին Ղարահիսար 430 34
Շարափ խան 289
Շատրլու 72
Շաքարօ 500
Շաքու 547
Շրխըլղատէ ուստաբաշի 247
Շիրազ 1 25 88 119 39 62 64 66 202 96
326 68 69 84 88 403 555—9 64 68
71 83
Շիրակ 76
Շիրվան 547
Շիպքիւլարէկ ազգական Հաճխանին 199 230 31
Շիօշ բէգ Մօլարէթխուցէս 333
ս. Շմաւոն Առաքեալ 221
Շուշի 17 174 492
Շուշեցիք 17
Շրուան 72
Շօշ 26
Շօշեցիք 17

Ոսկան 93
Որմեցիք 473
Ուլուխան փայակ 597
Ուխտանէս Լ. 225
Ուռում 538
Ուռումելու 31 307 48 63 73 97 423 41 50
54 65 66 92 504 8 50 604
Ուստայ Սահակ 476
Ուրհայ 25 434
Ուրուսճուղ 441

Ջալիկեան Կարապետ մահտեսի 142 493—4
Ջարքեազօղլի 145 55
Ջեարքեազօղլի Յօհան Կեսարացի 81 137 141
42 303
Ջարսանջաղ 516
Ջաքիկեանց Միքայէլ 161—68
Ջէլէպի Ահմատ 104
— Աստուածատուր 21
Ջէրքէզ 399 519
Ջիչրա 411 13 15
Ջօպան աղայ 37
— պէկ Ապաղու 54

Պալիող Դանիէլ Քիլամանկ խրաֆ Դրհօշի-
պիէ քօնսոլոս 533—4
— ինկլիզի 166 368
Պաղտասար 116 95 216 65 93 377 495
— ամիրայ 302 13 14 44
— մահտեսի 343
— նալբան 79
— նուիրակ Վանայ 134 68 211 81 90 471
540
— պետ 289
— վարդ. 3 12 14 37 71—2 101 4 36 213
26 87 88 373 74 91
— » Կարնոյ առաջնորդ 39
— » Վանի 15 70 158 86—8 225 86
Պապա 83 84 289 518 23
— մահտեսի 135
Պապիկ 32 75 77 79
— Արապկերցի 38
Պապօ 471
Պատաբէկ 484
Պարապմանց գիրք 548
Պարիկ 10 11 59 61 70 121—3
Պաքսամ 299
Պարսիկք 579 80 92 602
Պետերսպօրկ 149 320 42 90
Պետրոս 147 56 94 209 36
— ամիրայ 302 42
— Անկիւրեցի 485 88
— Բարղամ օղլի Դաղստացի 485
— Կալկաթայի աղայ 161 414
— Կօնդցի 284
— Հալապու առաջնորդ 355 63 470
— Հնդկաց 22 340
— մահտեսի 70 82 107
— Նախիջեանու 173
— նուիրակ Ուռումելու 250 80
— ուզուն 172 73 224
— պարոն 36 79
— Պուպուզեանց 137

— Ջուղայեցի Տէր-Յակոբի որդի 160
— վարդ. 2 3 12 13 16 149 50 71 247 61--4 69 81 88 321—2 73 405 406
— » Առաջնորդ Արապկերու 172 210 14 15 60
— » Գիլանու 397 469
— » Եռապօլսի առաջնորդ 149 212
— » Թադէոս Առաքելոյ 292
— » Թօխաթու նուիրակ 153 56 57 68 83—85 207 8 13 37 72—3 353 61
— » Թօմա Առաքելոյն վանքի 251
— » Հալապցի առաջն. Ցամթայ 403 549 604—5
— վէքիլ Մշու ս. Կարապետի 135
— Տէր-Ներսեսեան Թիֆլիսեցի 492
— Տլոտ 330
— տիրացու 168
Պետօյ 22
Պէօտոր Գրեչետնիկով 395
Պտպայ Բաղիշու գանձապետ 36
Պօլիս. 495
Պօղոս 219 65
— աղայ 197 8 12
— ամիրայ 342
— գանձապետ 36
ս. — եկեղեցի 36
— Երուսաղէմայ պատր. 130 438
— Ղարայավաղ օղլի 314
— մահտեսի 151 216
— պատրիարք 313 15
— վարդ. 74 76 78 89 91 93 120 22 53 220
— » Արղնու վանից 357
— » Սաղիմայ 415
— տիրացու տպագիր 304
Պրուսա 316 439
Պրուսացիք 341 47
Պրուսայ պատր Սաղիմայ 335

Ջալապ Իւղէիր մրտեսի տաճիկ 370 71
Ջամճի օղլի Թարճիման 347
Ջապայիրջի խան 480
Ջերմուկ 356
Ջիմշիդ բէգ 546 60—3 89 90
Ջուղայ 88 92 93 96 119 64 66 260 521 59 60 68 69
Ջուղայեցիք 383

Ռահիմ բէկ 37 38
— խան Նախիջեւանու 1 2
Ռանկու 411
Ռաջար տաճիկ 563—4 90—1
Ռափայէլ քահ. 24—5
— ջուղայեցի 416
Ռաֆա 344
Ռէթէոս առաջնորդ Թիֆլիսի 156 78 86 219 220 44—5
— վարդ. 7 8 197—8 229 250
Ռէշա 94 343 88 468
Ռէս Խաչատուր 288
Ռէվաղ 147
Ռուսաց երկիր 48 117 396 487 8 575
— թագաւոր 148 30 396 457
Ռուսք 84 85 95 106

Ստլախրէկ 189 318—20
— Հախրակու 473 75 77
Սալահ աղայ 328
Սալման բէգ Իւնուզ բէգի որդի 546
Սալմաստ 25 179 181—2 236
Սալմաստացիք 473
Սալմաստու մելիքք 477—8
Սահակ 31 273 373
— Արարկերցի 546 89
ս. — Եկեղեցի 36
— Թոխաթցի 494 504
— Ղոթրջի 102
— տիրացու 135 88
— սպասաւոր 37 42
— վարդ. 362
— » Թօխաթու նուիրակ 535
— » Փառակեցի 374
— Ուստայ 330
Սաղաթէլ 109
Սաղաթիէլ Շամրեցի 326
Սաղաղաս 180
Սաղիմ 90 481
Սամրէկ փեսայ Քեալանթարի 93—4 565
Սամուէլ առաջնորդ 134
— պրուսացի 295
— Փարսատանեաց 387
Սառա 216 488 95
Սառաֆ Գաբրիէլ փաշայ 9
Սառօ 330
Սարասկեար թաթար 147 204
Սարաֆան 390 517 19
Սարգիս 49 52 106 273

— Ակնցի 448
— տղայ 320 22 94 96
— » Ջուղայու. Բեալանթար 254 56
— Կեսարացի 295
— ղասաբ բաշի Խօջայ 79
— մահտեսի 16 81
— Յովհաննիսի եղբայր 132 147—8 388 475 78 507 607 9 10
— Նանուսեցի 485
— Շամախեցի 48 95
— պետ Թօխաթու 273 362
— վարդ. 59 66—8 181—2 237 313 15 18 25 37—9 41 347
— » Բարերդի առաջնորդ 80 114 84 435
— » Երուսաղէմի միաբան 315
— » Կարնոյ առաջնորդ 61 190
— » Կարնոյ նուիրակ 38 65 100 1 15 224 310
— » Կեսարացի 85
— » Հաճնցի 336 43—4 81
— » Հնդկաց 337
— Քալանթար 119
— քարաաշ պօլսեցի 253
Սարխօշ 10 19 32
— Ագուլեցի 38
Սարուխան 126
— գանձապետ 36
Սաֆար 226 387
Սաֆիր 239
Սաֆրաղ 432—4
Սերաստախտ 2 3 12 25 437
Սելում. մահտեսի 21 426
Սէթ 101 413 22
Սէյդապատ 411 13 15 22
Սէյդիբէգ 278
Սէվօ 330
Սրնօ 330
Սիմէօն Երեանցի Աւագի որդի 392
— կաթողիկոս 29 141 2
— մահտեսի 36 70 71 107
— » գանձապետ Բագիշու 36
— սարկաւագ 160
Սիմօն Գեօրեցի 236—8
— Ջոհրաբի որդի 236
— Կօսօշ 489
Սիս 336 55 56 405—6 409—10 25 549
Սիսիան 38
Սիրամարգ 392
Սմբատ 7 8 136
Սողոմ. 456
Սողոմէ 448
— քոյր Ալվանտի 556
Սողոմօն 24 42 48 49 156 263 385—6
— Գաղբաշի 200 1 32—4 42 65 402—3 457
— մինախոր 517
— վարդ. 477 609 10
— » Բուրթուղիմէոս առաք. վանք 280
— » Մեծոփայ 291
— սպասաւոր Արրահամ. պետի 222
Սուլէյման 136 51
— փաշայ Ախալցխայի 152 93 289 311—2 525—6 31 45 603
Սուլթան 239
Սուլթան Համիդ 297 381
Սուլխան Գիւտն 500 1 3 24
Սուրաթ 411—2 16
Սուքիաս 471
— վարգ. 147 91 349
— » Ղօշավանից առաջնորդ 147 91 277 78 81 458
— » Մատնավանից 286
Սպահան 7 88 162 563 66 71
Ստաթէի վանք 372
Ստամբօլ 589
Ստեփան 49 105 56 58 207—8 16 331 69
— Ագուլեցի 15
— Գրիգորեան Էդիլեան 393
— Թարճիման 364 402
— Թիֆլիսեցի 51 97 447
— Ղօշավանցի 530 32
— Ջամճի օղլի 328
— Վրացի 324
Ստեփաննոս Աղազատէ 164
— առաջնորդ Սօղակաթի 340
— որդի Մկրտումի 18
— » Տէր Յովհաննիսի 119
— սլետ վարժապետ 271
— վարդ. 7 18 66 203 57 326
— » առաջնորդ ս. Բարդուղիմէոս վանքի 179—80 88
— » առաջնորդ Գաղատիոյ 65 66 480
— » նուիրակ Ջուղայի 164 259
— տիրացու 169 87 280—81 298 508 10 11.
Սրաբիօն 79

Սրբուհի 216

Վասիլիյ Վլօդիմիրովիչ Կալիտովսկի—Ղլարու Պլացմայօր 395
Վահան 76
Վաղարշակերտ 112
Վան 15 25 35 37 119 58 69 73 77 80 86 210 17 76 79 85 333 73 77 508
Վանեցիք 35 338
Վանքի եկեղեցի 321 24
ս. Վարդանանց եկեղեցի 36
Վարդան ղաւուշչի 79
Վարդան մահտեսի 71
— վարդ. Խնդրակատար վանից 288
Վէթ 177
Վենետիկ 85
Վիչինցիոս պլաար 121
Վինչիսկոս 512
Վրաստան 84 117 523 47
Վրաց արքայ 305
Վրացիք 86
Վիրք 485 575

Տաթև 28 62 176 489
— վանք 37
Տաղստան 236
Տաճիկներ 123 587 601
Տատա աղայ 69 87
Տարուզայ 584
Տարսօն 76
Տաքէս ամիրայ 439
Տէաիկ 374
Տէր Աբրահամ 52 149 86 322 24 523—4 92—4
— Աւետիք 413 21
— Գէորգ 234 80 327—8 411 71
— » Ղափանցի 492
— Գրիգոր 86
— Դաւիթ 326
— Եսայի 284—5
— Խաչատուր 86 284—5 391
— » Խօյեցի 475
— Կիրակոս 73 77
— Ղազար Թիֆլիսեցի 86 332 34 425 45 47
— Ղուկաս 325 73 414—5
— Մանուէլ 430 43
— » Հիւլպայի 110 324 82
— Մալդար 180—82 522
— Մարկոս 107—8 162 65
— Մելիքսէթ 266 67 85 354
— Մովսէս 125
— Յակոբ 36 76 122 51 216
— Յարութիւն 86
— Յովաննէս 159 279
— Յովհաննէս Բջնեցի 391
— » Երևանցի 343
— Մուշարիւրցի 472
— » Շահրիարցի 110
— » Ջուղայեցի 119 58 67—70 87 88 228 373
— Յովսէփ աւագ քահ. Պրուսայու 342
— Նիկողայոս 83 98 106 86
— Ոսկան Երևանցի 391
— Պաղտասար 36
— Պետրոս 9 11 22 32 39 58 60 61 64 65 68 80 101 14 15 86
— » Բաբերդի առաջնորդ 115
— » Գիլանու 342
— » 'Ի Կարին 32
— Պօղոս 86
— Սահակ 332
— » Գէօրեցի 390
— Սարգիս Կարնեցի 127—8
— » Ջուղայեցի 212
— » Վանեցի 281
— Սիմէօն 393
— » Ալիբէկլուի երեց 40
— » Ղօշավանքի 40
— Ստեփան 76 151
— Վահան 13 32 60 62 81 82 102 45 50 96 200 1 4 6 9 23 31—36 43 83 85 429
— » Բայազիտի 15—18 53 119 66 205 6 48 80 92—3 97—8 317 30 65 81 84 463 68 546 99
— Վարդան 302—3
— Փիլիպպոս 95 166 501—2
ս. Տիրամայր եկեղեցի 36
Տուզախ 99
Տուզախի անապատ 110
Տուխուրզան 388
Տրտպիգոն 31 430 34 53
Տրապօլիս 150
Տօլպանտճիք 99
Տօնի 448

Փանահխան 17 26 27 33 72 98
Փառակեցիք 491
Փարիզ 317 28 583
Փարսադան 83—84
— Ղարաղաշենց Թիֆլիսեցի 461
Փարսադանեանց Սամուէլ 178
Փեկու 411 19 22
Փէրիայ նահ. 566
Փիլիպպոս մահտեսի Մուրտիկեանց 68 81 99 100 1 33 38 46 52 69—73 83 90 93—4 203 8 33 38 40 44 45 48 61 65 69 71 74 75 79 83—4 86 97 303 4 15—19 31 46—8 54 57 62 64 70 71 74 81 86 87 402 24 29 42 67 92 95 516
— մահտեսի 428 32—36 42 47 55 82 504 28 35 41 51 53 98 603
— վարդ. 191 370 80 81
— » Բայազիտու նուիրակ 81
— » Հնդկաց 307—10 416 20 22 23 80 81 572 79 85—9 607 9
Փունթշերի 417
Փոքր Փարկիթ գիւղ 277

Քալանթար Սարգիս 164.
Քանաքեռ 266, 67. 412, 91.
Քեարայ, Քեապայ 22, 318
Քեալանթար 70, 88—90, 92, 93, 95,2 59. 60, 397.
— Սարգիս աղայ 88, 96, 139, 40.
Քեապուլ 521, 59, 67 69 83
Քեարիմ խան 1 25 92 69 119 39 25Ϭ 56 58 96 98 383 458 80 97 505 6 59 60 71
Քեարաիկեայ 497
Քեարբիւտ 333
Քեօռօղլու ժողովուրդ 58
Քիտեսի 386
Քիւրախստան 78
Քրիստափոր սուրբ 220, 23
— 305
Քրտիկան գ. 513

Օսման աղայ 311 12 540
— աֆանտի 496 98
Օսմանցիք 5 6 33 85 117 86 369 484 522 45 64 79 80 601
Օքրօպաերտ 531

Ֆռանկիւլ 109 481
Ֆաթալի խան 25 457
Ֆաթալի խան իշխող Շամախու և Դարրանտու 175 76
Ֆայատօղլի 317
Ֆեդերիկօ պատր 121
Ֆռանկք Թղթաշէնք 317 28 45 47 402 10 11 18 24 28 40 509 21 24 26 27 29 40 44 54 83 86 87
Ֆռանկստան 295 411 577 81
Ֆռաֆօռթօնատօ պատր 121

48	Պեստալոցցի, Լէնհարդ և Գերտրուդ. 1896	1	50
49	Մելքիսեդեկ արքեպ. Մուրադեան Պետրոս Շանշեան պատկերով. 1897	—	5
50	Թ. Ա. Խոհարարուհի, բ. տպ. ճոխացրած 1904	—	50
51—63	Լումայ, գրական հանդէս 1891—1901 իւր. գիրքը	2	—
63—5	Լումայ երկամսեայ հանդէս 1902—1904 տարեկան.	6	—
66—7	Լումայ ամսագիր 1905—1906 իւր. տար.	8	—
68	Լումայ ամսագիր 1907 2 գիրք.	2	—
69	Լումայ ամսագիր 1908 տար	6	—
70	Յ. Գարանեան, Ծիծաղ, պատկերով, 1899	1	25
71	» Արեւել. աստղաբաշխ կատակ. 1901	—	50
72	» Քաղաքավար. ձեռները, 1901	—	75
73	Ստեփանոս Պալասանեան	—	25
74	Ն. Տէր-Կարապետեան, Խաչատուր Աբովեան (պատկ.)	—	60
75	Աշակերտի յուշատետր	—	30
76	Զգացմունքների աշխարհ.	—	30
77	Յարութիւն Թումանեան, Մելիք-Իսաւի	—	25
78	Մ. Նօկայի, Որբացողը,	—	20
79	1901 Ս. Էջմիածնի ՃԶ դարադարձը.	—	25
80	Եր. Շահազիզ, Մկրտիչ Էմին	—	60
81	Կորոլենկօ, Կոյր երաժիշտը. Թարգմ. Մուշէ վարդ.	—	60
82	Զարթորդ դարու հայ եկեղեցին	—	20
83	Եր. Շահազիզ, Նոր-Նախիջեւանի ս. Խաչ վանքը	—	40
84	Իմ օրագիրը	—	20
85	Մեծ Ներսէս	—	25
86	Դ. Խաչկոնց, Հայոց կրօն. բանաստեղծութիւնը	—	60
87	Կին վիպագիր Ն. Սալերի	—	10
88	Օր. Ն. Աղանեանց, (Թարգմ.) Սև հացեր, բ. տ.	—	5
89	Կորոլէնկօ, Դատաստանի օրը. Թարգմ. Մուշէ վարդ.	—	40
90	Կ. Կոստ. Շարժի տարեգրութիւնը Հայոց մէջ. 1902	—	20
91	Գ. վ. Յովսէփեան, Մանրանկարչութեան արուեստը. Հայոց մէջ 1902	—	
92	Ներսէս Մեծի յաջորդներ 1902	—	25
93	Մ. Գօյրկի. Չէլկաշ. Թարգմ. Մուշէ վարդ.	—	20
94	Քուչակ Նահապետի երգերը, Յով. Թադ.	—	15
95	Սահակ Պարթեւ	—	25
96	Ապուշը, Ժորժ Էսպարրէի, Թար. օր. Ն. Աղանեանց, բ. տ.	—	5
97	Վարժապետը. Թարգմ. Լ. Մ.-Ա.	—	5
98	Հազարան Բլբուլ. Յ. Թումանեանց	—	30
99	Պատմական պատկերներ, Եր. Շահազիզ 1903	—	50
100	Ժ. Ժ. Ռուսսօ. Էմիլ. 1. Թ. Իս. Յարութիւնեան 1904	—	50
101	Խորէն արք. Գալֆայեան և Նալբ. Աղցմիքը, Եր. Շահ. 1904	—	60
102	Հերոստրատ. Լ. Ֆուլդայի, Թարգմ. Տ. Վ. 1904	—	50
103	Կանոնք ժողովոց. Մ. Ա. 1904	—	55
104	Ուղեղի նորոգումը. Ֆ. Դիկմերի Թ. Օր. Ն. Աղան. 1904	—	20
105	Գթութիւն » » 1904	—	5
106	Գ. Ն. Սրուանձտեանի երկերը 1 Համով-հոտով 1904	1	25
107	Ալեմգիր. վէպ Վ. Փափազեանի, 1904	—	50
108	Սուտի հոգեբանութիւն. Գար. Ենդ. 1904	—	10
109	Հայրեր և զաւակներ Ի. Տուրգ. Թ. Մուշէ վ. 1904	—	75
110	Կոնան Դոյլ. Բանակն ինչպէս ազատեցի. Թ. Տ. Վ. 1904.	—	15
111	Աղերֆինգա. վէպ Վ. Փափազեանի, 1904	—	50
112	Ֆր. Գըկիւրէլ. Նոր Կուպք, Թարգմ. Տ. Վ. 1905	—	30
113	Կար. Եղեան. Ս. Էջմ. Մ. Աթ. և Ռուսաց կառ. յարաբերութիւնների ծագումը. 1905	—	40
114	Զ. Ռիչարդսոն. Գրքերի ընթերցումը Թարգմ. Բենիկ վարդ. 1905	—	60
115	Իսլամ. տաճկ. Թարգմ. Գր. Եղ. 1905	—	20
116	Հոգեկան վարակումը և նրա նշանակութիւնը. բժշկ. Կ. Աղաջանեանց 1905	—	
117	Խանդադէ, մեր արիւնոտ անցեալից 1907	—	20
118.	Ժ. Ժ. Ռուսսօ. Էմիլ. II 1906	—	50

պատկերներ

119	Ս. Լուսաւորչի իւղաներկ մեծադիր պատկեր	3	—
120	Նոյնը կտաւի վերայ	15	—
121	Պետրոս Շանշեան	—	10
122	Յակոբ Պարոնեան	—	10
123	Արդար Յովհաննիսեան.	—	10
124	Աւետիք Ղուկասեան	—	10
125	Գարեգին եպս. Սրուանձտեանց	—	10
126	Լումայի պատկերը.	—	5

9(47.925)
Դ-52

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԺՈՂՈՎԱԾՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԱՒԵՐԱԳՐԱՑ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԳԻՒՏ Ա. ՔՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

(Սկսուած է հրատարակուիլ 1893 Թուից)

Մինչեւ այժմ լոյս են տեսել ութեւտասն հատորները

Գիրք Ա.—Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՆՑԻՑ 1780—1834 ԵՒ ԾԱԳՄԱՆ ՍԻՒՆՀՈԴՈՍԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ։

« Գ. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *մասն* I. *Սիմէոն կ. ընդարձակ կենսագրութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով։*

« Դ. ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ *մասն* I. *1780—1800 կենսագրական յօդուածով, յաւելուածներով եւ ծանօթութիւններով։*

« Ե. ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ *1800—1808. յաւելուածներով եւ ծանօթութիւններով։*

« Զ. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ. *մասն* I. *1801—2. յաւելուածներով եւ ծանօթութիւններով։*

« Է. ԴԱՒԻԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ, *մասն* II. *1803—4. յաւելուածներով եւ ծանօթութիւններով։*

« Ը. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *մասն* II. *1767—1776։*

Բոլոր հատորներին կից՝ լուսանկար պատկերներ, վիմատիպ կոնդակներ կամ ֆիրմաններ, նկարներ եւայլն։

Պատրաստ են տպագրութեան համար եւ սպասում են բարերարների նպաստին

Գիրք Թ. ՄԱՆՐ ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ԺԶ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

1. Թովմայ Մինասենց։—2. Յովհաննէս Արճիշեցի։—3. Գրիգոր Վարագեցի։—4. Դաւիթ Բաղիշեցի։—5. Բարսեղ Վարագեցի։—6. Բարդուղիմէոս Շուշանցի։—7. Մեծն Վարդան Բաղիշեցի։—8. Անցք Վասպուրական աշխարհի։—9. Պատմութիւն մեծ սովոյն Տիգրանակերտի։—10. Ինչ ինչ ժամանակագրութիւնք։—11. Իսահակ Սահրատեան։—12. Յովհաննէս Շահխաթունեան։—13. Պատմութիւն աւերման Տփխիս քաղաքի։—14. Սիմէոն Ուշասունցի։—15. Ղեւոնդ Տոսպեցի։—16. Վէպ դպարսից։—17. Գօղոս Կաղզուանցի։—18. Յաջորդութիւնք Վանայ բդեշխից։—19. Յարութիւն Ջուլֆայեան։—20. Յովհաննէս Սեբաստացի։—21. Ղազար Արեւելցի։—22. Յաջորդութիւնք կաթողիկոսաց Հայոց։—23. Հատուածք յանծանօթ ժամանակագրութենէ։—24. Վարք Յովհաննէս Աղար Մակացւոյ։—25. Յակովբ դպիր։—26. Գաղթ Սենեքերիմայ Արծրունւոյ 'ի Սեբաստիա։

Գիրք Ժ. ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ *մասն* III *եւ վերջին։*

« ԺԱ. ՂՈՒԿԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ *մասն* II.

« ԺԲ. « « « III.

« ԺԳ. « « « IV.

« ԺԴ. ՅՈՎՍԷՓ ԱՐՂՈՒԹԵԱՆ *մ.* I.

« ԺԵ. ԵՓՐԵՄ ԿԱԹՈՂԻԿՈՍ « I.

« ԺԶ. ՄԱՆՈՒԷԼ ԿԻՒՄԻՒՇԽԱՆԵՑԻ։

« ԺԷ. ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ԺԳ—ԺԸ ԴԱՐՈՒՑ։

« ԺԸ. ԻՆՆԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐ։

Այս 9 հատորներից իւրաքանչիւրը բաղկացած կլինի 500—700 էջերից «Դիւան»-ների դիրքով։